

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XIV

ԵՐԵՎԱՆ – 2024

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագիր՝

Լիլիթ Թադևոսյան

**Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ,
Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Խմբագրակազմ՝

Էմիլյա Աբրահամյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Ժենյա Ստեփանյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու

Վարազդատ Սուքիասյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Տաթևիկ Սուջյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Արման Բարախանյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի
2022-2023 թվականների որոշումների ընտրանի Հ. XIV (Խմբագրությամբ՝
ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Զ. Թադևոսյանի**) –
Եր.: «Անտարես» հրատ., 2024. – 1024 էջ:

ՀՏԴ 343.1

ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-98-258-8

Գիրքը վաճառքի ենթակա չէ

Համաֆինանսավորվում
է Եվրոպական
միության կողմից



Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում
և իրականացվում
է Եվրոպայի խորհրդի
կողմից

Գործընկերություն հանուն լավ կառավարման

Աջակցություն դատախիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում

Սույն տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության
և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի
շրջանակներում: Սույն տպագրության մեջ ներկայացված տեսակետները
դրևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2022-2023 թվականների նախադեպային որոշումները քրեական վարույթներով	7
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2022-2023 թվականների որոշումների առարկայական դասակարգում	14
Աղբյուրների ցանկ թիվ 1	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	26
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներ	28
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ.....	33
1. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0150/06/20	34
2. Վ.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0591/06/20	49
3. Ա.Մնացականյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0001/14/18, ԱՐԱԴ/0001/15/18	63
4. Մ.Բանդիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0803/11/19	93
5. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0315/01/17.....	103
6. Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0025/01/15	116
7. Ս.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0012/01/09.....	132
8. Ա.Բաբաջանյանի վերաբերյալ որոշում, 1-274/06, Ջ-10-581/07, ՎԲ-121/07	148
9. Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/16	164
10. Գ.Կարախանյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0021/01/20.....	182
11. Հ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0055/01/18.....	190
12. Ս.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0071/01/17	207
13. Ա.Շահնազարյանի վերաբերյալ որոշում, Բ-3683/20	219
14. Ա.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0034/06/20	238
15. Ն.Մանուկյան վերաբերյալ որոշում, ԵԴ/0605/11/19.....	251
16. Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0101/01/14.....	258
17. Վ.Բադալյանի վերաբերյալ որոշում, ԳԴ4/0004/11/20	266
18. Ռ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0008/01/20.....	274

19. Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ1/0016/01/17	285
20. Ն.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0721/01/20.....	302
21. Ե.Ամիրջյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/11/20	317
22. Ա.Քալաշյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0653/01/19.....	329
23. Ա.Շաբոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0483/11/20	340
24. Ա.Բաղիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0134/07/21	351
25. Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0044/01/09.....	362
26. Ռ.Բալոյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0144/01/20	379
27. Կ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0543/11/21.....	392
28. Հ.Ղամարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0688/06/21	404
29. Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0112/11/19.....	418
30. Ա.Սողոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2598/07/20	438
31. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1194/06/21	447
32. Մ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16.....	469
33. Ա.Ամինիի վերաբերյալ որոշում, ԵԴ/0752/06/22	492
34. Ա.Խաչիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0577/11/20	503
35. Ա.Ավետիսյան վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0172/01/16.....	515
36. Հ.Չամսարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2848/07/19	543
37. Բ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0114/01/18	555
38. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0047/01/22.....	572
39. Ժ.Բրուտյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0137/01/22	590
40. Վ.Գազանճյան վերաբերյալ որոշում, ԵԴ/1241/01/22	608
41. Ի.Միխայիլովի վերաբերյալ որոշում, ՏԴ/0044/01/19.....	618
42. Ա.Շահնազարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0034/13/20.....	629
43. Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2640/07/18	636
44. Է.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0209/06/16	651
45. Ա.Գյուլնազարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0376/11/20.....	666
46. Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0864/01/20	675
47. Գ.Ասրյանի վերաբերյալ որոշում, ՄԴ/0006/13/22	701
48. Մ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0088/01/08.....	714
49. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0001/07/21.....	726
50. Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0153/01/16.....	738
51. Ա.Բոշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0244/01/17	746
52. Ա.Արաբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0040/01/21	758

53. Հ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/09/19	766
54. Մ.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0163/01/12	779
55. Շ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/11	792
56. Վ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0026/01/12	803
57. Ն.Կարապետյանի վերաբերյալ որոշում, Մ-5739	814
58. Ա. Բաղդազյույանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0060/01/19	831
59. Բ.Բախշիյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0062/06/22.....	849
60. Կ.Եղնուկյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0039/01/17.....	878
61. Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0203/11/20.....	884
62. Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1424/01/21	894
63. Վ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0129/01/20	910
64. Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18 ...	925
65. Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0536/01/19	974
66. Հ.Մանուկյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՏԴ/0117/01/11	991



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ**

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը՝ Վճռաբեկ դատարանը, հավատարիմ մնալով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու իր սահմանադրական առաքելությանը, դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում հետևողականորեն վերանայելու միջոցով, շարունակում է ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված և դրանց հիման վրա գործող մարմինների կողմից ձևավորված բարձր չափանիշների ներքո ապահովել օրենքի իրավական մեկնաբանությունը՝ ուղղված իրավունքի գերակայության գերնպատակի նվաճմանը:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման և մասնավորապես իրավունքի զարգացման գործառույթի իրացման շրջանակում, Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը չի սահմանափակվում զուտ օրենքների՝ դրանց տառին խիստ համապատասխան իրավամեկնաբանությամբ, ինչը դատարանի գործունեությունը կդարձնեք ինքնանպատակ: Վճռաբեկ դատարանը, խնդիր ունենալով ոչ թե սուկ վեր հանելու օրենսդրական կարգավորման և գործնականում առկա խնդիրները, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առաջարկում է իրավական լուծումներ՝ կանխելով իրավական վակուումի առաջացումը, ապահովելով անձի իրավունքների և ազատությունների իրական պաշտպանություն:

Կրելով Հայաստանի Հանրապետությունում կանխատեսելի արդարադատության միջավայր ձևավորելու պատասխանատվությունը՝ Վճռաբեկ դատարանը, ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում է նաև միջազգային չափանիշների տեղայնացումը՝ հայրենական իրավունքի ոգուն և էությանը համապատասխան:

2022-2023 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը ևս ահեղի աշխատանք է կատարել՝ հաղթահարելով նաև 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի գործողության պայամաններում առաջացած նոր մարտահրավերները:

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի կատարած

աշխատանքի և իրականացրած դատական իրավաստեղծագործության արդյունքը՝ կայացված որոշումներն են, որոնք տարիների ընթացքում ձևավորված ավանդույթի ժողովրդական հրատարակվել են ներկայացվող նախադեպային որոշումների ժողովածուներում՝ ապահովելու համար հանրության իրազեկվածությունը, դատարանի գործունեության թափանցիկությունն ու մատչելիությունը, ինչը կանխատեսելի արդարադատության և դատական համակարգի նկատմամբ ամուր վստահության ձևավորման գրավականներից մեկն է:

Ներկայացվող ժողովածուն իրենից ներկայացնում է 2022-2023 թվականների ընթացքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված որոշումների ընտրանի և ներառում է նախադեպային նշանակություն ունեցող 66 որոշում, որոնցում բարձրագույն դատական ատյանի կողմից մշակվել և սահմանվել են նյութական և դատավարական իրավունքի մեկնաբանման ուղենիշային նշանակություն ունեցող արժեքավոր իրավական դիրքորոշումներ ու չափորոշիչներ:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության հիման վրա ստացված՝ *«Ըստ էության խոշտանգման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման և պարժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ»* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, *Հովհաննես Մովսիսյանի և Արմեն Արսենյանի* վերաբերյալ գործով, 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԱՎԴ/0009/01/18 որոշմամբ քննարկման առարկա է դարձրել այն հարցը, թե արդյո՞ք 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և այդ պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավարար իրավական հիմքեր է նախատեսում խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու համար: Արդյունքում, հիմնվելով խոշտանգումների, անարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի՝ որպես միջազգային իրավունքի համապարտադիր կամ *jus cogens* նորմի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված հիմնարար միջազգային պայմանագրերի և դրանց հիման վրա գործող մարմինների ձևավորած դիրքորոշումների վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ արարքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները կիրառելի չեն: Այսպես, Վճռաբեկ դատարանը, ժամանակագրական առումով

վերլուծելով խոշտանգումների բացարձակ արգելք նախատեսող հիմնարար միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված, այդ պայմանագրերի բաղկացուցիչ մասը կազմող դրանց հիման վրա գործող միջազգային մարմինների ձևավորած փաստաթղթերում, մասնավորապես Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում, Եվրոպական դատարանի վճիռներում խոշտանգում կամ դրան հավասարեցված արարքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման արգելքի ամրագրման գործընթացը, Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա ստացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ «Ըստ էության խոշտանգման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման և պատժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ» խոհրդավական կարծիքը, խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցմանն ուղղված գործընթացը և դատական պրակտիկան, արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը նախատեսելով որպես իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և վավերացնելով խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային փաստաթղթերը, հստակ հանձնառություն է ստանձնել օրենսդրորեն և գործնականում արդյունավետ մեխանիզմներ նախատեսել խոշտանգումների և դրանց հավասարեցված արարքների քրեականացման, դրանց վերաբերյալ դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ այնքանով, որքանով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում էր միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք, իսկ Հայաստանի Հանրապետությունը խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային պայմանագրերի վավերացմամբ պարտավորվել է հետևել նաև այդ պայմանագրերի դրույթների մեկնաբանությանն ու կիրառությանն ուղղված՝ կոնվենցիոնալ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում ամրագրված պահանջներին, հետևաբար, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ուժով, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային իրավունքի նորմերի հիման վրա կարելի է փաստել, որ *ստնվածն ՀՀ քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա՝ 2003 թվականի*

օգոստոսի 1-ի դրությամբ, առկա է եղել խոշորանգման կամ դրան հավասարեցված հանցանք կատարելու դեպքում քրեական պարասիանսարկության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելք:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների սույն ընտրանին իր մեջ է ամփոփել նաև մի շարք այլ ուղենիշային նշանակություն ունեցող նախադեպային իրավական դիրքորոշումներ պարունակող որոշումներ: Այսպես. անդրադառնալով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը կարգադրող որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակին, Վճռաբեկ դատարանը՝ 2022 թվականի հունիսի 30-ի թիվ Բ-3683/20 նախադեպային որոշմամբ, *Արա Շահնազարյանի* վերաբերյալ գործով միջազգային չափանիշներին համապատասխան, դիրքորոշում է արտահայտել տևական ժամանակ իրավակիրառ պրակտիկայում հակասական լուծումների տեղիք տվող՝ առաջին ատյանի դատարանների կողմից կարգադրված օպերատիվ-հետախուզական գործունեության միջոցառումների վերաբերյալ որոշումները վերադասության կարգով վիճարկելու սուբյեկտային հարցի շուրջ: Հաշվի առնելով, որ դրանք *«թիրախավորում»* են ոչ միայն այն անձանց, ովքեր ուղղակի առնչություն են ունեցել հանցավոր դեպքին, այլ նաև անուղղակի առնչություն ունեցողներին, Վճռաբեկ դատարանը հստակեցրել է այդ երկու խումբ անձանց նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգը և այն չափանիշը, որի պայմաններում այդ կառուցակարգը կարող է գործադրվել:

Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարել, որ քրեական գործի ըստ էության քննության շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը վիճարկելու հնարավորությունը չի կարող դիտարկվել *«արդյունավետ վերահսկողության»* մեխանիզմ: Մի շարք իրավական դոկտրինների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծության հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման նկատմամբ *«արդյունավետ վերահսկողություն»* կարող է դիտարկվել բացառապես դրա իրավաչափությունը վերադաս դատական ատյանում վիճարկելը:

Լուծելով իրավակիրառ պրակտիկայում հակասական մեկնաբանման ու իրարամերժ լուծումների հանգեցրած խնդիրը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը ստուգելու *«արդյունավետ վերահսկողության»* մեխանիզմը կարող է գործադրվել դրա իրավաչափությունը վերադաս դատական ատյանում վիճարկելու ճանապարհով, այն դեպքում, երբ այդ միջոցառման արդյունքում անձը դարձել է մասնավոր կյանքի անձենմխելիության իրավունքի ենթադրյալ խախտման գոհ:

Ուշադրության է արժանի միակողմանի հայտարարության (unilateral

declaration)՝ որպես գործերի վերանայման և վերաբացման հիմքի առնչությամբ Վճաբեկ դատարանի՝ *Գրիգոր Ոսկերչյանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԵԿԴ/0044/01/09 որոշումը, որով դատարանը, հիմք ընդունելով *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը, իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը ևս հիմք է նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու համար: Միևնույն ժամանակ, անդրադառնալով վերանայման արդյունքում գործերի վերաբացման հարցին, Վճաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը չպետք է միանշանակ կերպով դիտարկվի որպես գործերի վերաբացման անվերապահ հիմք: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ներպետական դատարանը պետք է գնահատի, թե արդյոք գործով կայացված վերջնական դատական ակտի բեկանումը *restitutio in integrum* ապահովելու լավագույն միջոցն է:

Մեկ այլ՝ *Հովհաննես Չամսարյանի* գործով 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/2848/07/19 որոշմամբ, Վճաբեկ դատարանի քրեական պալատն իրավական դիրքորոշում է արտահայտել փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու փաստական հիմքի վերաբերյալ: Մասնավորապես, Վճաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փաստաբանի գործունեության երաշխիքներն ամրագրելիս հաշվի է առել արդար դատաբնության իրավունքի իրացման, մասնավորապես, փաստաբանական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ հիմնարար իրավունքների պաշտպանության հարցում փաստաբանի ունեցած դերակատարմամբ է պայմանավորված նրան պատկանող կամ վերջինիս կողմից օգտագործվող շինություններում (տարածքներում) խուզարկության նկատմամբ հատկապես խիստ հսկողության նախատեսումը: Առհասարակ, փաստաբանին խուզարկելու արգելքն ուղղված է վստահորդի, այդ թվում՝ պաշտպանյալի իրավունքների իրականացման ապահովմանը, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր այն դեպքերում, երբ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործողությունների արդյունքում այն կարող է վտանգվել:

Արդյունքում, Վճաբեկ դատարանն արձանագրել է, որ կոնկրետ գործով ստորադաս դատարանները փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայության հարցը պարզելիս, պետք է հաշվի առնեն այն հանգամանքները, որոնք միջազգային իրավական դրույթների և ձևավորված նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ չեն տալիս հաղթահարված համարելու փաստաբանի գրասենյակում խուզարկություն կատարելու սահմանափակումները:

Վճաբեկ դատարանը, 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՄԴ/0006/13/22 որոշմամբ, *Գարուն Ասրյանի* վերաբերյալ գործով, իրավական դիրքորոշում է

ձևավորել ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված՝ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կարգավորմանը հետադարձ ուժ տալու հնարավորության հարցի առնչությամբ: Մասնավորապես, տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու ինստիտուտը դիտարկելով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորման համատեքստում, ըստ որի՝ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում էր հանրային աշխատանքներով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բռնագանձման պարագայում պատժատեսակի փոփոխություն, որպես այդպիսին, տեղի չի ունենում: Այլ կերպ՝ նախքան չվճարված տուգանքն ավելի խիստ պատժատեսակով փոխարինելը, օրենսդրորեն նախատեսվել է միջանկյալ հնարավորություն՝ տուգանքի կատարումն ապահովող ինքնուրույն գործիք, որը թույլ է տալիս հասնելու դատարանի դատավճռով նշանակված պատժի կատարմանը: Արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարված փոփոխությունն ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է, քանի որ թույլ է տալիս տուգանքն անմիջաբար չփոխարինել ավելի խիստ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով, հետևաբար օրենսդրական նշված փոփոխությանը պետք է հետադարձ ուժ տրվի:

Միշտ Մուրադյանի վերաբերյալ գործով 2023 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ԵԴ-1424/01/21 որոշմամբ, Վճռաբեկ դատարանը վերանայել և զարգացրել է գենքը կամովին հանձնելու վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով որ եթե նախկինում գործող իրավակարգավորումների պայմաններում անձն ազատվում էր քրեական պատասխանատվությունից՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները կամովին հանձնելու դեպքում, ապա գործող իրավակարգավորումների դեպքում, անձը կազատվի քրեական պատասխանատվությունից, եթե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածում նշված առարկաները հանձնի մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը:

Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նոր իրավակարգավորումների պայմաններում, քննարկվող խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից, *օրենսդիրն այսուհետ կարևորում է օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող հանգամանքները (իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալը)*՝ *այլևս էական նշանակություն չհրապարակված գենքը կամավոր կերպով հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալմանը (այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը գիտակցելուն)*: Նման պայմաններում, կիրառելով նյութական նորմի տառացի մեկնաբանման կանոնը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *այլևս էական նշանակություն չունի նաև գենքի գործադրմանը որևէ արարք կատարած լինելու փաստը, եթե գենքը հանձնելու*

պահին իրավասու մարմինները դրա գլխավելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն այդ որոշման շրջանակներում վերանայել և զարգացրել է նաև քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանների վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով, որ եթե կատարված փոփոխությունների արդյունքում քրեական օրենսդրությամբ քրեական պատասխանատվությունից ազատում նախատեսող նորմի կիրառման շրջանակներն ընդլայնվում են, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական նորմը դիտարկվում է որպես իմպերատիվ, ինչպես նաև նախատեսվում է քրեական պատասխանատվությունից անվերապահ կերպով ազատում նախատեսող նոր նորմ, ապա վերոնշյալ փոփոխությանը, որպես ըստ էության պարիօր մեղմացող օրենսդրության, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է հեղադարձ ուժ տրվի: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե օրենսդիրը եզրափակիչ դատավարական ակտի բացակայության պայմաններում երաշխավորել է պատիժը մեղմացնող քրեական օրենսդրությանը հետադարձ ուժ տալու հնարավորությունը՝ առանց որևէ բացառության, ապա վերոնշյալն առավել ևս պետք է կիրառելի լինի՝ իր բովանդակությամբ և ծավալով ավելի լայն և համընդգրկուն երևույթի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի որոշումների սույն ընտրանու հրատարակումը կյանքի է կոչվել մեր միջազգային գործընկեր Եվրոպայի խորհրդի հետ շարունակական համագործակցության շրջանակներում, ինչն իր հերթին իրավունքի գերակայության սպահովմանը և կանխատեսելի արդարադատության հայեցակարգի զարգացմանը միտված կառուցողական փոխգործակցությանը մեր պատրաստակամության վկայությունն է:

Հուսով եմ, որ Վճռաբեկ դատարանի քրեական պարարի՝ ինչպես վերը ներկայացված, այնպես էլ սույն ընտրանիում ընդգրկված մյուս՝ դարձյալ կարևոր իրավական ու նախադեպային նշանակություն ունեցող ուղենիշային դիրքորոշումներ պարունակող որոշումները կնպաստեն հասարակության անդամների կողմից դատարանի պաշտպանության ու դատարանի մարչելիության իրենց իրավունքն առավել արդյունավետ իրացնելուն, կծառայեն մեր հասարակության լայն շերտերի իրավական դատարարականը, իրավունքի բովանդակության ընկալմանը, իսկ որպես ակնկալվող վերջնարդյունք՝ բացարձակ կանխատեսելի արդարադատություն սպահովելու մեր հավակնոտ տեսլականի իրագործմանը:

Լ.Զ.ԹԱԳԵՎՈՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ,

ՀՀ վաստակավոր իրավաբան,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ.

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդված)

Ն-I-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18 925

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-II-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18 925

Ն-II-2 Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0101/01/14 258

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների համակցությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված)

Ն-III-1 Հ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0055/01/18 190

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության նախապատրաստությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված)

Ն- IV-1 Մ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16469

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակցության հասկացությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդված)

Ն- V-1 Մ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16.....469

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ անհրաժեշտ պաշտպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդված)

Ն- VI-1 Բ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0114/01/18555

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի հասկացությունը և նպատակները (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդված)

Ն- VII-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում,
ԱՎԴ/0009/01/18925

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուգանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդված)

Ն- VIII-1 Ա.Շահնագարյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0034/13/20629
Ն- VIII-2 Գ.Ասրյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0006/13/22..... 701

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)

Ն- IX -1 Ս.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0071/01/17 207
Ն- IX -2 Ռ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0008/01/20 274
Ն- IX -3 Ն.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0721/01/20 302
Ն- IX -4 Մ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16..... 469
Ն- IX -5 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18 925

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը (ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)

Ն- X-1 Ա.Շարոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0483/11/20340

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն- XI-1 Մ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16469

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն- XII-1 Մ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16.....469

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)

Ն- XIII-1 Ա.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0034/06/20 238

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավագակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված)

Ն- XIV-1 Մ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16469
Ն- XIV-2 Վ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0129/01/20..... 910

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)

Ն- XV-1 Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0864/01/20 675
Ն- XV-2 Վ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0129/01/20 910

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)

Ն- XVI-1 Ռ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0008/01/20..... 274

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ յուրացնելը կամ վատնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված)	
Ն- XVII-1 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0315/01/17.....	103
Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով գնք, ոսգմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)	
Ն- XVIII-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0071/01/17	207
Ն- XVIII-2 Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/1424/01/21	894
Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ համակարգչային սաքոտաժը (ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդված)	
Ն- XIX-1 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0172/01/16	515
Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդված)	
Ն- XX-1 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0172/01/16	515
Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)	
Ն- XXI-1 Հ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0055/01/18.....	190
Ն- XXI-2 Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0536/01/19.....	974
Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված)	
Ն- XXII-1 Ս.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0071/01/17.....	207
Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական լիազորություններն անցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդված)	
Ն- XXIII-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0009/01/18	925
Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված)	
Ն- XXIV-1 Ն.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0721/01/20	302
Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը (ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդված)	
Ն- XXV-1 Ռ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0008/01/20.....	274
Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)	
Ն- XXVI-1 Ա.Բարաջանյանի վերաբերյալ որոշում, 1-274/06, Զ-10-581/07, ՎԲ-121/07	148

Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի ձերբակալելը կամ կալանավորելը (ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդված)
Ն- XXVII-1 Բ.Բախշյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0062/06/22.....849

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

Ն-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենսդրության հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդված)
Ն- XXVIII-1 Գ.Ասրյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0006/13/22.....701
Ն- XXVIII-2 Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1424/01/21..... 894

Ն-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուգանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդված)
Ն- XXIX-1 Գ.Ասրյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0006/13/22.....701

Ն-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդված)
Ն- XXX-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում,
ԱՎԴ/0009/01/18 925

Ն-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավագակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդված)
Ն- XXXI-1 Մ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0046/01/16469

Ն-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդված)
Ն- XXXII-1 Վ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0129/01/20 910

Ն-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդված)
Ն- XXXIII-1 Ռ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0008/01/20 274

Ն-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հրագենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդված)
Ն- XXXIV-1 Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1424/01/21.....894

Ն-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդված)
Ն- XXXV-1 Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0536/01/19 974

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ.

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրք

Գ²-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)

- Գ- I-1 Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/16 164
- Գ- I-2 Ա.Խաչիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0577/11/20 503

Գ- II Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)

- Գ- II -1 Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0047/01/22..... 572
- Գ- II -2 Ժ.Բրուսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0137/01/22 590

Գ- III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)

- Գ- III-1 Վ.Գազանճյան վերաբերյալ որոշում, ԵԴ/1241/01/22 608
- Գ- III-2 Ի.Միխայիլովի վերաբերյալ որոշում, ՏԴ/0044/01/19 618

Գ- IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

- Գ- IV-1 Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/16 164
- Գ- IV-2 Ա.Խաչիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0577/11/20 503
- Գ- IV-3 Ա.Բաղդասյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0060/01/19 831

Գ- V Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

- Գ- V-1 Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0112/11/19..... 418

Գ- VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)

- Գ- VI-1 Ա.Բարաջանյանի վերաբերյալ որոշում, 1-274/06, Զ-10-581/07, ՎԲ-121/07 148
- Գ- VI-2 Մ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0088/01/08..... 714

² Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Գ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)	
Գ- VII-1 Վ.Գազանճյան վերաբերյալ որոշում, ԵԴ/1241/01/22.....	608
Գ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդված)	
Գ- VIII -1 Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0864/01/20	675
Գ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական հետապնդումը հանրային և մասնավոր մեղադրանքի գործերով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդված)	
Գ-IX -1 Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0203/11/20	884
Գ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)	
Գ- X -1 Ա.Բաբաջանյանի վերաբերյալ որոշում, 1-274/06, Զ-10-581/07, ՎԲ-121/07	148
Գ- X -2 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0071/01/17	207
Գ- X -3 Ն.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0721/01/20.....	302
Գ- X -4 Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0864/01/20	675
Գ- X -5 Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0203/11/20 ...	884
Գ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ նախագահողը և նրա լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդված)	
Գ-XI -1 Ա. Բաղդազյույանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0060/01/19.....	831
Գ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդված)	
Գ-XII -1 Հ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/09/19.....	766
Գ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննիչը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդված)	
Գ-XIII -1 Հ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/09/19.....	766
Գ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդված)	
Գ-XIV -1 Ե.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/11/20	317

Գ-ХV Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդված)
Գ-ХV -1 Ե.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/11/20.....317

Գ-ХVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդված)
Գ-ХVI -1 Ե.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/11/20317

Գ-ХVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ընթերական (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդված)
Գ-ХVII -1 Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ1/0016/01/17285

Գ-ХVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդված)
Գ-ХVIII -1 Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0281/01/16 164

Գ-ХIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չընդունվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)
Գ-ХIX -1 Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ1/0016/01/17285

Գ-ХХ Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)
Գ-ХХ -1 Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0150/06/20.....34
Գ-ХХ -2 Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0047/01/22..... 572
Գ-ХХ -3 Ժ.Բրուտյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0137/01/22590
Գ-ХХ -4 Բ.Բախշիյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0062/06/22849

Գ-ХХI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանավորումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդված)
Գ-ХХI -1 Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0150/06/2034

Գ-ХХI Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալին կալանքից ազատելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդված)
Գ-ХХI -1 Վ.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0591/06/20..... 49
Գ-ХХI -2 Հ.Ղամարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0688/06/21..... 404

Գ-ХХII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)
Գ-ХХII -1 Վ.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0591/06/2049

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդված)	
Գ-XXIII -1 Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2640/07/18.....	636
Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդված)	
Գ-XXIV -1 Ա.Քալաշյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0653/01/19.....	329
Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդված)	
Գ-XXV -1 Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0203/11/20	884
Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)	
Գ-XXVI -1 Մ.Բանդիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0803/11/19	93
Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ նախնական քննության ավարտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդված)	
Գ-XXVII -1 Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/16	164
Գ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուզարկություն կատարելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդված)	
Գ-XXVIII -1 Ա.Բաղիկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0134/07/21	351
Գ-XXVIII -2 Հ.Համսարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2848/07/19.....	543
Գ-XXVIII -3 Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0001/07/21	726
Գ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հեռախոսային խոսակցությունները լսելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդված)	
Գ-XXIX -1 Հ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/09/19	766
Գ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի որոշումը մեղադրական եզրակացությամբ ստացված գործով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդված)	
Գ-XXX -1 Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/16	164
Գ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործը դատարան ուղարկելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդված)	
Գ-XXXI -1 Ի.Միխայիլովի վերաբերյալ որոշում, ՏԴ/0044/01/19.....	618

Գ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործը դատարան ուղարկելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդված)

Գ-XXXII -1 Ի.Միխայիլովի վերաբերյալ որոշում, ՏԳ/0044/01/19 618

Գ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործը դատարան ուղարկելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)

Գ-XXXIII -1 Ա.Սողոյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/2598/07/20.....438

Գ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդված)

Գ-XXXIV -1 Ա.Շահնազարյանի վերաբերյալ որոշում, Բ-3683/20219

Գ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդված)

Գ-XXXV -1 Մ.Բանդիկյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0803/11/19 93

Գ-XXXV -2 Վ.Բաղդալյանի վերաբերյալ որոշում, ԳԳ4/0004/11/20.....266

Գ-XXXV -3 Ա.Շաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0483/11/20340

Գ-XXXV -4 Կ.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0543/11/21.....392

Գ-XXXV -5 Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0112/11/19 418

Գ-XXXV -6 Ա.Գյուլնազարյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0376/11/20 666

Գ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական տուգանք կիրառելու առանձնահատկությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.3-րդ հոդված)

Գ-XXXVI -1 Ռ.Բալոյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0144/01/20 379

Գ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների հետազոտման սահմանափակումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդված)

Գ-XXXVII -1 Շ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0184/11/11792

Գ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)

Գ-XXXVIII -1 Վ.Բաղդալյանի վերաբերյալ որոշում, ԳԳ4/0004/11/20.....266

Գ-XXXVIII -2 Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0153/01/16.....738

Գ-XXXVIII -3 Ա.Արաբյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0040/01/21.....758

Գ-XXXVIII -4 Կ.Եղևուկյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0039/01/17878

Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)

Գ- XXXIX -1 Ա.Քալաշյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0653/01/19 329

Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)

Գ- XL -1 Գ.Կարախանյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0021/01/20 182

Գ- XL -2 Ն.Մանուկյան վերաբերյալ որոշում, ԵԳ/0605/11/19 251

Գ- XL -3 Ա.Բոշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0244/01/17 746

Գ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդված)

Գ- XLI -1 Ի.Միխայիլովի վերաբերյալ որոշում, ՏԳ/0044/01/19 618

Գ- XLI -2 Ա.Բոշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0244/01/17 746

Գ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդված)

Գ-XLII -1 Ա.Մնացականյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0001/14/18,
ԱՐԱԳ/0001/15/18 63

Գ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)

Գ-XLIII -1 Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15 116

Գ-XLIII -2 Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/01/09 362

Գ-XLIII -3 Վ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0026/01/12 803

Գ-XLIII -4 Ս.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/12 779

Գ-XLIII -5 Ս.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0012/01/09 132

Գ-XLIII -6 Հ.Մանուկյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՏԳ/0117/01/11 991

Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդված)

Գ-XLIV -1 Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15 116

Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)

Գ-XLIV -1 Ս.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0012/01/09 132

Գ-XLIV -2 Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0044/01/09 362

Գ-XLIV -3 Ս.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/12 779

Գ-XLIV -4 Վ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0026/01/12803
Գ-XLIV -5 Հ.Մանուկյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՏԴ/0117/01/11991

Գ-XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդված)

Գ-XLVI -1 Է.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0209/06/16 651
Գ-XLVI -2 Վ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0026/01/12803

Գ-XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդված)

Գ-XLVII -1 Ա.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0153/01/16738

Գ-XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.8-րդ հոդված)

Գ-XLVIII -1 Ն.Կարապետյանի վերաբերյալ որոշում, Մ-5739 814

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք

Գ-XLIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)

Գ-XLIX -1 Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1424/01/21894

Գ-L Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդված)

Գ-L -1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1194/06/21447

Գ-LI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի իրավաչափության առանձնահատկությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդված)

Գ-LI -1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1194/06/21447

Գ-LII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերանայման կառուցակարգերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդված)

Գ-LII -1 Ա.Արաբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0040/01/21758

Գ-LIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճարել դատարանում հատուկ վերանայման արդյունքով կայացվող դատական ակտերը և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդված)

Գ-LIII -1 Ա.Ամինիի վերաբերյալ որոշում, ԵԴ/0752/06/22.....492

Գ-LIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ բացառիկ վերանայման վարույթները և բացառիկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդված)

Գ-LIV -1 Մ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1424/01/21.....894

Գ-LIV -2 Շ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/11.....792

Գ-LV Մեկնաբանվող իրավադրույթ՝ անցումային դրույթներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդված)

Գ-LV -1 Ն.Կարապետյանի վերաբերյալ որոշում, Մ-5739..... 814

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված)	(64)
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (2005 թվականի փոփոխություններով)	(64)
ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(64)
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(34), (46)
ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(41)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (14), (33), (38), (39), (59)
ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3)
ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(24), (36), (49)
ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(26)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (13), (17), (22), (50), (58)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (13), (17), (40), (58)
ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(29)
ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3)

ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(6), (8), (48)
ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(16)
ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (50)
ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (64)
ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(50)
ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(53)

Աղբյուրների ցանկ թիվ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Abdulkhakov v. Russia*, 2012 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռ (3)
2. *Adiletta and others v. Italy*, 1991 թվականի փետրվարի 19-ի վճիռ (58)
3. *Affaire Versini-Campinchi Et Crasnianski c. France*, 2016 թվականի հունիսի 16-ի վճիռ (13)
4. *Aganikyan v. Armenia*, 2018 թվականի ապրիլի 5-ի վճիռ (58)
5. *Albert and Le Compte v. Belgium*, 1983 թվականի փետրվարի 10-ի վճիռ (34)
6. *Ali Osman Özmen v. Turkey*, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (40)
7. *Allenet de Ribemont v. France*, 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռ (29)
8. *Amihalachioaie v. Moldova*, 2004 թվականի ապրիլի 20-ի վճիռ (26)
9. *Amine Guzel v. Turkey*, 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ (64)
10. *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (64)
11. *Ashlarba v. Georgia*, 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռ (39)
12. *B. v. the Republic of Moldova*, 2013 թվականի հուլիսի 16-ի վճիռ (38)
13. *Barberà, Messegué and Jabardo v. Spain*, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (56)
14. *BAŞ v. Turkey*, 2020 թվականի մարտի 3-ի վճիռ (40)
15. *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ (64)
16. *Becciev v. Moldova*, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (39)
17. *Beck v. Norway*, 2001 թվականի հունիսի 26-ի վճիռ (64)
18. *Bekos and Koutropoulos v. Greece*, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ (64)
19. *Belilos v. Switzerland*, 1988 թվականի ապրիլի 29-ի վճիռ (46)
20. *Bevacqua and S. v. Bulgaria*, 2008 թվականի հունիսի 12-ի վճիռ (38)
21. *Boddaert v. Belgium*, 1992 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռ (58)
22. *Boicenco v. Moldova*, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ (64)
23. *Bratyakin v. Russia*, 2006 թվականի մարտի 9-ի որոշում (48)
24. *Buckley v. the United Kingdom*, 1996 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռ (43)
25. *Bulea v. Romania*, 2013 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռ (31), (39)
26. *Buscarini v. San Marino*, 2000 թվականի մայիսի 4-ի որոշում (40)
27. *Bykov v. Russia*, 2009 թվականի մարտի 10-ի վճիռ (48)
28. *Cam v. Turkey*, 2016 թվականի փետրվարի 23-ի վճիռ (3)
29. *Capetti and Maimut v. Romania*, 2012 թվականի մայիսի 15-ի որոշում (12)
30. *Caraian v. Romania*, 2015 թվականի հոկտեմբերի 19-ի որոշում (12)
31. *Čeferin v. Slovenia*, 2005 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (26)
32. *Cereale Flor S.a. And Rosca v. Moldova*, 2017 թվականի փետրվարի 14-ի վճիռ (25), (44)
33. *Coëme and Others v. Belgium*, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ (40), (46)
34. *Cuscani v. the United Kingdom*, 2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռ (41)
35. *Daktaras v. Lithuania*, 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռ (29)
36. *Davydov v. Russia*, 2014 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռ (25), (44)

37. *Davtyan v. Armenia*, 2015 թվականի մայիսի 31-ի վճիռ (1)
38. *De Geouffre de la Pradelle v. France*, 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (50)
39. *DMD GROUP, a.s. v. Slovakia*, 2010 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռ (40)
40. *Eckle v. Germany*, 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռ (58)
41. *Enver Sahin v. Turkey*, 2018 թվականի հունվարի 30-ի վճիռ (3)
42. *Eremia v. the Republic of Moldova*, 2013 թվականի մայիսի 28-ի վճիռ (38)
43. *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (64)
44. *Eroğlu and Akdemir v. Turkey*, 2019 թվականի ապրիլի 2-ի որոշում (25), (44)
45. *Fabris v. France [GC]*, 2013 թվականի փետրվարի 7-ի վճիռ (3)
46. *Frumkin v. Russia*, 2016 թվականի հունվարի 5-ի վճիռ (48)
47. *Frydender v. France [GC]*, 2000 թվականի հունիսի 27-ի վճիռ (58)
48. *Gabor Nagy v. Hungary (No. 2)*, 2017 թվականի ապրիլի 11-ի վճիռ (31)
49. *Garycki v. Poland*, 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռ (29), (56)
50. *Gelfmann v. France*, 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (1)
51. *Glor v. Switzerland*, 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռ (3)
52. *Gorguiladzé v. Georgia*, 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռ (40), (46)
53. *G.S.B. v. Switzerland*, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ (43)
54. *Gul v. Turkey*, 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (64)
55. *H. v. France*, 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռ (58)
56. *Hakimi v. Belgium*, 2010 թվականի հունիսի 29-ի վճիռ (25), (44)
57. *Hakobyan and Others v. Armenia*, 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռ (7), (48)
58. *Hirschhorn v. Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (50)
59. *Hugh Jordan v. the UK*, 2001 թվականի մայիսի 4-ի վճիռ (64)
60. *Huseyn and Others v. Azerbaijan*, 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռ (48)
61. *Igranov and others v. Russia*, 2018 թվականի մարտի 20-ի վճիռ (25), (44)
62. *Janowski v. Poland*, 1999 թվականի հունվարի 21-ի վճիռ (26)
63. *Januškevičienė v. Lithuania*, 2019 թվականի սեպտեմբերի 3-ի վճիռ (29)
64. *Jhangiryan v. Armenia*, 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռ (7), (48)
65. *Jorgic v. Germany*, 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռ (40), (46)
66. *Kamasinski v. Austria*, 1989 դեկտեմբերի 19-ի վճիռ (41)
67. *Karner v. Austria*, 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռ (64)
68. *Kart v. Turkey*, 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռ (58)
69. *Kasparov and Others v. Russia*, 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ (48)
70. *Khadzhaliyev and Others v. Russia*, 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (64)
71. *Khanzadyan v. Armenia*, 2014 թվականի մարտի 11-ի որոշում (31)
72. *Kiyutin v. Russia*, 2011 թվականի մարտի 10-ի վճիռ (3)
73. *Kolesnichenko v. Russia*, 2009 թվականի ապրիլի 9-ի վճիռ (49)
74. *Konig v. Germany*, 1978 թվականի հունիսի 28-ի վճիռ (58)
75. *Kononov v. Latvia*, 2010 թվականի մայիսի 17-ի վճիռ (64)
76. *Kovalev v. Russia*, 2007 թվականի մայիսի 10-ի վճիռ (3)
77. *Kronfeldner v. Germany*, 2012 թվականի հունվարի 19-ի վճիռ (3)
78. *Kruglov and others v. Russia*, 2020 թվականի փետրվարի 4-ի վճիռ (36)

79. *Kurt v. Austria*, 2021 թվականի հունիսի 15-ի վճիռ (ՄՊ) (38)
80. *Kyprianou v. Cyprus*, 2005 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (26)
81. *Labita v. Italy*, Մեծ պալատի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ (64)
82. *Lambert v. France*, 1998 թվականի օգոստոսի 24-ի վճիռ (13)
83. *Lavents v. Latvia*, 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (40)
84. *Leotsakos v. Greece*, 2018 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (36)
85. *Luedicke, Bekacem and Koc v. Germany*, 1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (41)
86. *Luordo v. Italy*, 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (13)
87. *Lutz v. Germany*, 1978 թվականի օգոստոսի 25-ի վճիռ (34)
88. *M. v. Germany*, 2009 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ (3)
89. *M. and Others v. Italy and Bulgaria*, 2012 թվականի հուլիսի 31-ի վճիռ (38)
90. *Malininas v. Lithuania*, 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ (25), (44)
91. *Mamikonyan v. Armenia*, 2010 թվականի մարտի 16-ի վճիռ (13)
92. *Manukian v. Georgia*, 2016 թվականի մայիսի 3-ի որոշում (25), (44)
93. *Matheron c. France*, 2005 թվականի մարտի 29-ի վճիռ (13)
94. *Matijasevic v. Serbia*, 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռ (29), (56)
95. *Mazanashvili v. Georgia*, 2014 թվականի հունվարի 24-ի որոշում (25), (44)
96. *Mehmet Emin Yuksel v. Turkey*, 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռ (64)
97. *Mihalache v. Romania*, 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռ (6), (8), (48)
98. *Mikayelyan v. Armenia*, 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռ (7)
99. *Mikheev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ (64)
100. *Minelli v. Switzerland*, 1983 թվականի մարտի 25-ի վճիռ (56)
101. *Molla Sali v. Greece [GC]*, 2018 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ (3)
102. *Morice v. France*, 2015 թվականի ապրիլի 23-ի վճիռ (26)
103. *Mouisel v. France*, 2002 թվականի նոյեմբերի 14-ի վճիռ (1)
104. *M.S. v. Ukraine*, 2017 թվականի հուլիսի 11-ի վճիռ (43)
105. *Mugoša v. Montenegro*, 2016 թվականի հունիսի 21-ի վճիռ (56)
106. *Müller-Hartburg v. Austria*, 2013 թվականի փետրվարի 19-ի վճիռ (34)
107. *Mushegh Saghatelian v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ (7), (25), (48)
108. *Myasnik Malkhasyan v. Armenia*, 2020 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ (25)
109. *Navalnyy and Yashin v. Russia*, 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (48)
110. *Nesták v. Slovakia*, 2007 թվականի փետրվարի 27-ի վճիռ (29)
111. *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (31), (58)
112. *Nicolae Virgiliu Tanase v. Romania*, 2019 թվականի հունիսի 25-ի վճիռ (38)
113. *Nikula v. Finland*, 2002 թվականի մարտի 21-ի վճիռ (26)
114. *Ognyanova and Choban v. Bulgaria*, 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ (64)
115. *Ogur v. Turkey*, Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի վճիռ (64)
116. *O.H. v. Germany*, 2011 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ (3)
117. *Ohlen v. Denmark*, 2005 թվականի փետրվարի 24-ի վճիռ (64)
118. *Okkali v. Turkey*, 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (64)
119. *Opuz v. Turkey*, 2009 թվականի հունիսի 9-ի վճիռ (38)

120. *Öztürk v. Germany*, 1984 թվականի փետրվարի 21-ի վճիռ (34)
121. *Panchenko v. Russia*, 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռ (39)
122. *Pandjigidzé and Others v. Georgia*, 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ (40), (46)
123. *Paul and Audrey Edwards v. The United Kingdom*, 2002 թվականի մարտի 14-ի վճիռ (13), (29)
124. *Pedersen and Baadsgaard v. Denmark*, 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ (58)
125. *Petropavlovskis v. Latvia*, 2015 թվականի հունվարի 13-ի վճիռ (13), (29)
126. *Philis v. Greece*, 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռ (50)
127. *Phillips v. the United Kingdom*, 2001 թվականի հուլիսի 5-ի վճիռ (56)
128. *Popov v. Russia*, 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռ (25), (44)
129. *Posokhov v. Russia*, 2003 թվականի մարտի 4-ի վճիռ (40)
130. *Richert v. Poland*, 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ (40), (46)
131. *R.M.D. v. Switzerland*, 1997 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռ (40)
132. *Rozhin v. Russia*, 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (25), (44)
133. *Sarban v. Moldova*, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (1)
134. *Scoppola v. Italy*, 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ (62)
135. *Scozzari and Giunta v. Italy*, 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռ (7), (25), (54), (55), (56)
136. *Selcuk and Asker v. Turkey*, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռ (7), (25), (54), (55), (56)
137. *Shtukaturov v. Russia*, 2008 թվականի մարտի 24-ի վճիռ (3)
138. *Smbat Ayyvazyan v. Armenia*, 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռ (7), (48)
139. *Smirnov v. Russia*, 2007 թվականի հունիսի 7-ի վճիռ (49)
140. *Sokurenko and Strygun v. Ukraine*, 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռ (40)
141. *Stanev v. Bulgaria*, 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ (13), (50)
142. *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռ (13)
143. *Stephens v. Malta (no. 1)*, 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռ (40)
144. *Storck v. Germany*, 2005 թվականի հունիսի 16-ի վճիռ (3)
145. *Stvrtecky v. Slovakia*, 2018 թվականի հունիսի 5-ի վճիռ (39)
146. *Tabagari v. Georgia*, 2013 թվականի հունիսի 18-ի որոշում (25), (44)
147. *Tahsin Acar v. Turkey*, 2003 թվականի մայիսի 6-ի վճիռ (25), (44)
148. *Taktakishvili v. Georgia*, 2013 թվականի հունիսի 18-ի որոշում (25), (44)
149. *Talpis s v. Italy*, 2017 թվականի մարտի 2-ի վճիռ (38)
150. *Tanda-Muzinga v. France*, 2014 թվականի հուլիսի 10-ի վճիռ (43)
151. *Tanrkulu v. Turkey*, Մեծ պալատի 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռ (64)
152. *V. v. The United Kingdom*, 1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (58)
153. *Vashakidze v. Georgia*, 2014 թվականի հունվարի 28-ի որոշում (25), (44)
154. *Vaudelle v. France*, 2001 թվականի հունվարի 30-ի վճիռ (3)
155. *Verein Gegen Tierfabriken Schweiz (vgt) v. Switzerland (No. 2)*, 2009 թվականի հունիսի 30-ի վճիռ (64)
156. *Virabyan v. Armenia*, 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռ (29), (64)
157. *Vojtěchová v. Slovakia*, 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռ (25), (44)
158. *Volodina v. Russia*, 2019 թվականի հուլիսի 9-ի վճիռ (38)
159. *Walchli v. France*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (13)

160. *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (58)
161. *Zelilof v. Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռ (64)
162. *Zimmermann and Steiner v. Switzerland*, 1983 թվականի հուլիսի 13-ի վճիռ (58)
163. *Դավթյանն ընդդեմ Հայաստանի*, 2022 թվականի մարտի 1-ի վճիռ (54)
164. «Ըստ էության խոչընդունման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման և սպառժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ» թիվ P16-2021-001 խորհրդատվական կարծիք (64)
165. «Լեռնիկ Ասարյանն ընդդեմ Հայաստանի և Ց այլ գանգադերի» գործ, 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշում (44)
166. *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի*, 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (14), (33), (59)
167. *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի*, 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռ (13)
168. *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի*, 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ (66)
169. *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի*, 2023 թվականի հունվարի 24-ի վճիռ (55)
170. *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի*, 2021 թվականի հունիսի 15-ի վճիռ (56)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(50)
2. ՄԴՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(46)
3. ՄԴՈ-731, 2008 թվականի հունվարի 21	(3)
4. ՄԴՈ-766, 2008 թվականի հոկտեմբերի 14	(34)
5. ՄԴՈ-827, 2009 թվականի սեպտեմբերի 12	(3)
6. ՄԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(53)
7. ՄԴՈ-881, 2010 թվականի մայիսի 4	(3)
8. ՄԴՈ-936, 2011 թվականի փետրվարի 8	(50)
9. ՄԴՈ-947, 2011 թվականի ապրիլի 5	(35)
10. ՄԴՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(17)
11. ՄԴՈ-1062, 2012 թվականի դեկտեմբերի 18	(17)
12. ՄԴՈ-1074, 2013 թվականի փետրվարի 5	(58)
13. ՄԴՈ-1099, 2013 թվականի մայիսի 31	(7), (25), (44), (55), (56)
14. ՄԴՈ-1134, 2013 թվականի դեկտեմբերի 24	(57)
15. ՄԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(50)
16. ՄԴՈ-1197, 2015 թվականի ապրիլի 7	(3)
17. ՄԴՈ-1222, 2015 թվականի հունիսի 26	(6)
18. ՄԴՈ-1224, 2015 թվականի հուլիսի 7	(3)
19. ՄԴՈ-1236, 2015 թվականի նոյեմբերի 17	(53)
20. ՄԴՈ-1249, 2015 թվականի դեկտեմբերի 22	(17), (22), (24)
21. ՄԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(50)
22. ՄԴՈ-1348, 2017 թվականի փետրվարի 14	(16)
23. ՄԴՈ-1394, 2017 թվականի դեկտեմբերի 8	(17)
24. ՄԴՈ-1396, 2017 թվականի դեկտեմբերի 26	(26)
25. ՄԴՈ-1420, 2018 թվականի հունիսի 19	(13)
26. ՄԴՈ-1431, 2018 թվականի հոկտեմբերի 23	(8), (48), (62)
27. ՄԴՈ-1480, 2019 թվականի հոկտեմբերի 15	(3)
28. ՄԴՈ-1561, 2020 թվականի նոյեմբերի 24	(35)
29. ՄԴԱՈ-89, 2021 թվականի մայիսի 4	(3)
30. ՄԴԱՈ-10, 2022 թվականի հունվարի 14	(6)
31. ՄԴՈ-1680, 2023 թվականի մարտի 24	(64)
32. ՄԴՈ-1690, 2023 թվականի մայիսի 30-ի	(52), (60)

1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0150/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ԵԴԱՆԻԵԼՅԱՆԻ
ԱՊՈՂՈՍՅԱՆԻ
ՍՕՀԱՆՅԱՆԻ

2022 թվականի հունվարի 27-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արմեն Արտաշեսի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի մարտի 4-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) հարուցվել է թիվ 58205120 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով ու 329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 7-ի որոշմամբ Արմեն Արտաշեսի Պողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 8-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և 329-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մարտի

8-ի որոշմամբ Նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ա.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ բավարարվել է մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը ևս 2 (երկու) ամսով երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ մերժվել է այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանների միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել, մեղադրյալ Ա.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխել է և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել գրավը՝ 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից մեղադրյալ Արմեն Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով ու 329-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «[Ա.Պողոսյանը] շահադիտական դրողումներով, պատվերով՝ 190.000 ԱՄՆ դոլարի վարձարժեքի դիմաց սպանվելով կազմակերպել ՀՀ քաղաքացի Արսեն Բենիկի Չիչյանի սպանությունը, վերջինիս դիտարկությանը սպորինսաբար կյանքից զրկելու շուրջ նախնական համաձայնության է ելել ՀՀ քաղաքացի Լևոն Բուբենի Խոտրյանի հետ՝ խոստանալով վարձարժեքի կեսը հարկացնել հանցանքի կատարումից հետո և սպանություն իրականացնելու համար տրամադրելով հրազեն հանդիսացող 5.6 մմ տրամաչափի փամփուշուներ կրակելու համար նախատեսված արժանակ և ռազմամթերք հանդիսացող փամփուշուներ,

ինչպես նաև 1000 ԱՄՆ դոլար: Ի կատարումն Արմեն Պողոսյանի ցուցումի, վերջինիս անմիջական կազմակերպմամբ և ղեկավարմամբ Լևոն Խոտոյանը, վերահսկելով Արսեն Բենիկի Չիչյանի տեղաշարժը, 2014թ. հունիսի 23-ին ժամը 01:25-ի սահմաններում, Երևան քաղաքի Գյուլբենկյան փողոցի 31-րդ շենքի բակում հրազենից կրակոցներ է արձակել զրոսանքի դուրս եկած Արսեն Բենիկի Չիչյանի ուղղությամբ, պատճառելով վերջինիս մարմնական վնասվածքներ, սակայն կազմակերպչի գործողությունները չեն հաջողվել կամքից անկախ պատճառներով: Չբավարարվելով արդյունքով արագված պատվերով սպանությունն ավարտին հասցնելու և հանցավոր մեղադրությունն իրագործելու նպատակով Արմեն Պողոսյանը ցուցում է րվել Լևոն Խոտոյանին շարունակել վերահսկել Արմեն Չիչյանի տեղաշարժը և առաջին իսկ հնարավորության դեպքում իրականացնել վերջինիս սպանություն: Բացի դրանից, նպատակադրվելով դիտարկողությամբ սպորինաբար կյանքից զրկել նաև ՀՀ քաղաքացիներ Ժան Հակոբի Նազարի-Դեհնավիրին, Սարգիս Վարդգեսի Մկրտչյանին, Լևերտ Վանիկի Կարապետյանին, Արամայիս Լևոնի Կիրակոսյանին և Գագիկ Վարդանի Միրզոյանին, Լևոն Խոտոյանին հանձնարարել է վերահսկել նաև թվարկված անձանց տեղաշարժը, նույն առաջադրանքը Սարգիս Մկրտչյանի և Արամայիս Կիրակոսյանի դեպքում րադով նաև Տիգրան Հովակիմյանին պատվերով սպանության իրականացման դյուրին պայմանների և ժամանակի ընտրությունը թողնելով իր հայեցողությանը: Հիշյալ անձանց տեղաշարժը վերահսկելու, սպանությունը նախապատրաստելու և իրականացնելու համար Արմեն Պողոսյանը Լևոն Խոտոյանի համար ծանոթի Արմեն Խաչատրյանի միջոցով, Երևան քաղաքի Հրաչյա Քոչարի փողոցի 1-ին շենքում վարձակալել է բնակարան, վճարել է դրա վարձավճարը և հոգացել վերջինիս ամենօրյա ծախսերը, րբանադրել է րբանապորտային միջոց «OPEL» մակնիշի, 36DG494 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, քողարկման և անձանաչելի դառնալու համար նախատեսված շպարման պիտույքները կեղծամներ, բեղեր, ինչպես նաև սպորինի կերպով ձեռք է բերել և րվել հրազեն հանդիսացող գործարանային համարները ջնջված 7.62 մմ րբանաչափի «SS» րեսակի արբանակ, իւացուցիչով ու նշանոցով ինքնաշեն արբանակ-ինքնաձիգ և դրանց համապատասխանող, ուզմամթերք հանդիսացող րանմիուշրներ, որոնք մինչև 2020 թվականի րետրվարի վերջը նախնական համաձայնությամբ սպորինի պահել են Լևոն Խոտոյանի համար վարձակալած բնակարանում: Թիրախավորված անձանց դիակները սպանությունից հերո հողարկավորելու և հանցագործության հեքքերը թաքցնելու նպատակով Արմեն Պողոսյանը և Լևոն Խոտոյանը քննարկել և ընտրել են համապատասխան վայրեր, սակայն Արմեն Պողոսյանը հանցավոր նպատակին չի հասել կամքից անկախ հանգամանքներով, քանի որ ի վերջո Լևոն Խոտոյանը նախապատրաստվող սպանությունների մասին հաղորդել է իրավապահ մարմիններին:

Բացի դրանից, Արմեն Պողոսյանը, քննությանը դեռևս չպարզված հանգամանքներում ձեռք բերելով իր լուսանկարով, սակայն 19.02.1970թ. ծված Արմեն Ռազմիկի Ասրոնյանի րվյալներով ՌԴ քաղաքացու N754664894 իրավունք վերապահող ակնհայտ կեղծ անձնագիրը, դրա օգրագործմամբ 2018 թվականի

հոկտեմբերի 8-ին ՌԴ Մոսկվա քաղաքից ինքնաթիռով թիվ 477 չվերթով, ժամանել է «Զվարթնոց» օդանավակայան և ապօրինի հասել ՀՀ պահպանվող պետական սահմանը, իսկ հոկտեմբերի 13-ին նույն ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ նույն անցակետով կրկին ապօրինի հասել է ՀՀ պահպանվող պետական սահմանը և թիվ 906 չվերթով լքել Հայաստանի Հանրապետությունը»¹:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ բավարարելով մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը եզրահանգել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականության վտանգը շարունակում է բարձր մնալ²:

7. Առաջին ատյանի դատարանը, մերժելով այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Որպես նոր ի հայտ եկած հանգամանք պաշտպանական կողմը Միջնորդությանը հայտնել է մեղադրյալ Արմեն Պողոսյանի մուր առողջական խնդիրների առկայությունը, և այդ խնդիրների հետ կապված արգելանքի տակ գրնալելու ժամանակ համապարասխան բուժօգնություն չցուցաբերելը:

Մինչդեռ, առկա չէ կալանքը կրելուն խոչընդոտող մեղադրյալի մուր առողջական հիվանդության վերաբերյալ բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջնորդագիր, որը կարող էր հիմք հանդիսանալ Արմեն Պողոսյանի նկատմամբ կիրառված կալանքը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոփոխելու համար:

Ինչ վերաբերում է Միջնորդությանը նշված՝ Մեղադրյալի առողջական վիճակի վարթարացմանը, դրա հետ կապված՝ նշանակված բժշկական խորհուրդներն ի կարար չափվելու մասին պաշտպանական կողմի պնդումներին, որպիսի հանգամանքները հայրնի չեն եղել Արմեն Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննության առնելու ժամանակ, [Առաջին ատյանի դատարանն արձանագրում է հետևյալը. (...) [առողջական վիճակի վարթարացումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ Արմեն Պողոսյանին կալանքից այլ խափանման միջոցի կիրառմամբ ազատ արձակելու համար, վերջինս առողջական կոնկրետ վիճակի վարթարացման դեպքում կալանքի տակ գրնալելու պայմաններում իրավունք ունի սրանսլ անհետաձգելի բժշկական օգնություն, այդ թվում՝ զնալել իր ընտրած բժշկի կողմից, իսկ մասնագիտացված բուժօգնության կարիք ունենալու դեպքում՝ փոխադրվել հայրուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհասարարություն: Ամփոփելով (...) արձանագրվածը՝ [Առաջին ատյանի դատարանը գրնում է, որ առկա չեն այնպիսի նոր հանգամանքներ, որոնց հիման

¹ Տն նյութեր, հատոր 1, թերթեր 124-127:

² Տն նյութեր, հատոր 3, թերթեր 59-86:

վրա կարող է թույլատրելի ճանաչվել այլ խախտանան միջոցների կիրառանանր մեղադրյալ Արմեն Պողոսյանին կալանքից ազար արձակելու հնարավորությունը, հերևարար Միջնորդությունը ենթակա է մերժանան»³:

8. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ արձանագրել է հետևյալը. «(...) [Թ]եև [Առաջին արյանի դատարանի] հիմնավորումներն ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար, այնուամենայնիվ, ներկայացված նյութերում առկա է «Էրեբունի» բժշկական կենտրոնից րրված րեղեկանք, համաձայն որի հայրնվել է, որ որոշվել է Արմեն Պողոսյանին դուրս գրել սրացիոնարից՝ արրահիվանդանոցային պայմաններում բուժումը շարունակելու, ԼՕՌ մանանագելի մուր 4 օր անց կրկնակի այց իրականացնելու և 20 օր անց քթի հարակից խոռոչների [համակարգչային շերտագրություն] հերագրություն իրականացնելու պայմանով, սակայն ՀՀ ԱԾ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի կողմից րրված րեղեկանքի համաձայն «Էրեբունի» բժշկական կենտրոնի կողմից խորհուրդներում նշված [համակարգչային շերտագրություն] հերագրություն չի իրականացվել համաձայն ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 3345-Ա հրամանի: Այսինքն վերոգրյալից հերևում է, որ պեպությունը ի դեմս քրեակարարողական ծառայության, չի կարարել ազարությունից գրված անձ Արմեն Պողոսյանի առողջությունը պաշրպանելու իր պոզիիվ պարրականությունը հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 3345-Ա հրամանը, ինչն անընդունելի է:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Արմեն Պողոսյանին անհրաժեշտ և անհասպաղ բժշկական օգնություն չրրանադրելը և այդ պայմաններում շարունակական կալանավորված պահելը կարող է հանգեցնել ՄԻԵԿ 3-րդ հոդվածով նախարետված իրավունքի խախտանան, ուարի նախաքննության մարմինը, դարախագրությունը և քրեակարարողական ծառայությունը պարրավոր էին և պարրավոր են ապահովել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու» մասին ՀՀ օրենքի 13-րդ և 21-րդ հոդվածներով սահմանված անագարության մեջ գրնվող մեղադրյալի իրավունքը սրանալու անհրաժեշտ և պարշաձ բուժօգնություն պեպության միջոցների հաշվին կամ բժշկի կողմից իր դրանական միջոցների հաշվին, ընդ որում՝ ինչպես ՔԿՀ-ում, այնպես էլ հարուն մանագիրացված կամ քաղաքացիական բուժհասարարությունում, ինչը սույն դեպքում փասարացի ժամանակին չի կարարվել: Վերաքննիչ դատարանը փասարում է, որ այս իրավունքից որևէ նահանջ չի կարող լինել և իրավասու մարմիններն ու պաշրոնարար անձինք պարրավոր են ապահովել մեղադրյալի անհրաժեշտ և պարշաձ բուժօգնություն սրանալու հնարավորությունը չգրկելով նրան նակ իր նախընարած հարուն մանագիրացված կամ քաղաքացիական բուժհասարարությունում և բժշկի մուր բուժում սրանալու իրավունքից:

Այսպիսով Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալ եզրահանգումները, մանավորապես Արմեն Պողոսյանին անհրաժեշտ և

³ Տեև նյութեր, հատոր 3, թերթեր 92-97:

անհասպաղ բժշկական օգնություն չստանալու, նրա ներկայիս ստորջական վիճակը, գրնում է, որ ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հնարավոր է հասնել մեղադրյալ Արմեն Պողոսյանի նկատմամբ այլ խափանման միջոցի գրավի կիրառմամբ և փոխադրված 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով գրավի ի զորու է չեզոքացնել կալանավորման հիմքերի առկայությունը»⁴:

9. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետ Ա.Պողոսյանի կողմից ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին հասցեագրված՝ 2020 թվականի նոյեմբերի 25-ի գրության համաձայն՝ «(...) «Էրեբունի» բժշկական կենտրոնից սրացված գրության համաձայն՝ [Ա.Պողոսյանը] դուրս է գրվել դեղորայքային բուժման խորհուրդներով, որոշվել է [նրան] դուրս գրել արագհիվանդանոցային պայմաններում բուժումը շարունակելու, ԼՕՌ մասնագետի մոտ 4 օր անց կրկնակի այց իրականացնելու և 20 օր անց քթի հարակից խոռոչների [համակարգային շերտագրություն] հետազոտություն իրականացնելու պայմանով: Հայտնել՝ կարարվել են արդյոք [Ա.Պողոսյանի] հետագա բուժման վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթղթերում նշված բոլոր, այդ թվում՝ հիշյալ ցուցումները, եթե այո, ապա բժշկական ինչպիսի՞ միջամտություններ են կարարվել. եթե ոչ, ապա ինչ պարճատարանությամբ: **Բժշկի ցուցումները կարարված չլինելու դեպքում անհասպաղ միջոցներ ձեռնարկել դրանց կարարումն ապահովելու և Ա.Պողոսյանի մոտ առկա վերջնական ստորջական վիճակի վերաբերյալ փոխանցված հայտնելու ուղղությամբ**»⁵:

9.1. Նշված գրությանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարության «Քրեակատարողական բժշկական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վարդաշեն» ստորաբաժանման բժիշկ Ն.Վանյանը 2020 թվականի դեկտեմբերի 2-ի գրությամբ հայտնել է. ««Էրեբունի» ԲԿ-ից դուրս գրվելուց հետո «Դատարանային կենտրոնից» ԲԿ հիմնարկ Ա.Պողոսյանին փոխանցվելու անհրաժեշտություն չի եղել և ներկայումս առկա չէ: (...) [Վ]երոնշյալ բժշկական կենտրոնից դուրս գրվելուց հետո արագհիվանդանոցային պայմաններում Ա.Պողոսյանը սրացել է և արանում է «էրեբունի» ԲԿ-ում նշանակված (...) դեղերը՝ (...) [Ա.Պողոսյանի] ստորջական վիճակը ներկայումս բավարար է: (...) «Էրեբունի» ԲԿ-ի կողմից խորհուրդներում նշված [համակարգային շերտագրություն] հետազոտություն չի իրականացվել համաձայն ՀՀ ստորջականության [նախարարի] 27 սեպտեմբերի 2020թ. թիվ 3345-Ա հրամանի: **Հնարավորինս արագ կկազմակերպվի [համակարգային շերտագրություն] հետազոտություն և Ա.Պողոսյանի մոտ առկա վերջնական ստորջական վիճակի վերաբերյալ կարարված փոխանցված փոխանցված հայտնելու ուղղությամբ**»⁶:

9.2. 2021 թվականի օգոստոսի 4-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արմեն Արտաշեսի

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 97-107:

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 86-87:

⁶ Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 89-90:

Պողոսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և Ա.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը թողնվել է անփոփոխ⁷:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում: Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է անձի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 137-րդ և 143-րդ հոդվածների կարգավորումների համատեքստում Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Այսպես, բողոքաբերի պնդմամբ՝ այն, որ Ա.Պողոսյանին մեղսագրվում են առանձնապես ծանր, ինչպես նաև ծանր, միջին և ոչ մեծ ծանրության ենթադրյալ հանցագործություններ, ինչպես նաև գործի նյութերից բխող մյուս հանգամանքները վկայում են, որ գրավը չի կարող լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Ա.Պողոսյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման վտանգը չեզոքացնելու համար:

10.1. Բողոքաբերը փաստարկել է, որ մեղադրյալ Ա.Պողոսյանի պատշաճ վարքագիծն ավելի մեղմ խափանման միջոցի՝ գրավի ընտրությամբ ապահովելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը պայմանավորված է գուտ նրա առողջական վիճակով, մինչդեռ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 21-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածների համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ բացառապես կալանավորված անձի առողջական վիճակը որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու հիմք դիտարկելու համար իրավասու մարմնի տրամադրության տակ առնվազն պետք է լինեն՝ բժշկական հանձնաժողովի եզրակացությունը, որը կհաստատի կալանավորված անձի մոտ ծանր հիվանդության առկայությունը, և դրա վրա հիմնված՝ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջնորդագիրը, որպիսիք սույն գործով չեն ներկայացվել:

Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի, ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով չի բացառվել անազատության մեջ պահվող անձանց անհրաժեշտ՝ առողջական համապատասխան վիճակով պայմանավորված պահանջվող բուժօգնության տրամադրումը, այլ ընդհակառակը՝ համապատասխան ցուցումների առկայության դեպքում այն եղել է երաշխավորված, ու կալանավորված անձանց կյանքին ընհանուր

⁷ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ-1035/01/21 քրեական գործը:

առմամբ, նշված ակտի ուժով, վտանգ սպառնալ չէր կարող: Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ՝ գործի նյութերը որևէ տվյալ չեն պարունակում նաև կոնկրետ դեպքում մեղադրյալ Ա.Պողոսյանի առողջությանը սպառնացող վտանգի և դրանց չեզոքացմանը խոչընդոտելու մասին:

Բողոքաբերը նշել է նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով պայմանավորված՝ կալանավորված անձանց ազատ արձակելու ընդհանուր պարտավորություն առաջացնող դրույթ:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք մեղադրյալ Ա.Պողոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուց հետո ի հայտ են եկել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք կարող էին հիմք ծառայել գրավի կիրառմամբ նրան կալանքից ազատ արձակելու համար:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«(...) Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառված լինելու դեպքում դատարանը հետազոտում պաշտպանության կողմի միջնորդությանը կարող է թույլատրելի ճանաչել այլ խափանման միջոցների կիրառմամբ մեղադրյալին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը: Նման միջնորդություն կարող է ներկայացվել, եթե սուկա են այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայրնի չէին կամ չէին կարող հայրնի լինել»:*

Նույն օրենսգրքի 151-րդ հոդվածի 3.1-րդ կետի համաձայն՝ *«Դատարանը կամ դատախազը կարող է փոփոխել կամ վերացնել որպես խափանման միջոց ընտրված կալանքը, եթե սուկա է կալանքը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություն: Ծանր հիվանդությանը փառասպող անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի հարցը լուծելիս դատարանը կամ դատախազը հաշվի է առնում վերագրվող հանցագործության ծանրությունը, մեղադրյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ»:*

Մեջբերված դատավարական նորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը, հաշվի առնելով կալանավորման՝ անձի անձնական ազատության իրավունքին ինտենսիվ միջամտության բնույթը, սահմանել է կալանավորումը կիրառելուց հետո այն առավել մեղմ խափանման միջոցով փոխարինելու հարցը քննարկելու ինքնավար ընթացակարգ: Մասնավորապես, քրեական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար կալանավորման միջոցով անձի անձնական ազատությունը սահմանափակված լինելու դեպքում դատարանը հետազոտում կարող է թույլատրելի ճանաչել անձի հիմնական իրավունքները

և ազատություններն առավել նվազ սահմանափակող այլ խափանման միջոցի ընտրությամբ մեղադրյալին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը՝ պայմանով, որ՝

– ի հայտ են եկել այնպիսի նոր հանգամանք(ներ), որոնք անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս անհայտ էին կամ չէին կարող հայտնի լինել դատարանին,

– այդ հանգամանք(ներ)ն իր(ենց) որակական հատկանիշներով ինքնին կամ գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություն անել քրեադատավարական ներգործության ավելի մեղմ միջոցով անձի պատշաճ վարքագիծն ապահովելու հնարավորության մասին: Այսինքն, խոսքն այն հանգամանքների մասին է, որոնք կալանավորված անձի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոններ կարող են համարվել՝ հնարավորություն տալով ապահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելուց հետո դատարանը, նոր հանգամանք(ներ) ի հայտ գալու կամ հայտնի դառնալու հիմքով քննության առնելով անձի պատշաճ վարքագիծը վերջինիս հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակող խափանման միջոցի կիրառմամբ ապահովելու հնարավորության հարցը, պետք է հաշվի առնի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանգամանքները:

13.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝*

- 1) *վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.*
- 2) *կասկածյալի կամ մեղադրյալի անձը.*
- 3) *(...) առողջական վիճակը. (...):»:*

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար

նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր ու գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁸:

13.2. Անդրադառնալով քրեական դատավարության ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով նրա նկատմամբ խափանման միջոցի կիրառման և դրա տեսակի ընտրության իրավաչափության տեսանկյունից առողջական վիճակը գնահատելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդիրն անձի մոտ ծանր հիվանդության առկայությունը նախատեսել է որպես խափանման միջոց ընտրված կալանքից նրան ազատելու ինքնուրույն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված հիմք՝ սահմանելով հատուկ ընթացակարգ, այնուամենայնիվ, կարևորել է խափանման միջոց կիրառելու ու դրա տեսակի ընտրության իրավաչափության համատեքստում անձի առողջական վիճակի պատշաճ գնահատումը, ինչը նաև բխում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելքի սահմանադրական ու կոնվենցիոն պահանջից: Մասնավորապես, ազատությունից զրկելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) շարունակաբար ընդգծել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով կալանավորված անձին ազատ արձակելու կամ նրան քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու ընդհանուր պարտավորություն սահմանող դրույթ, անգամ եթե նա տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հատկապես դժվար է բուժել⁹: Այնուամենայնիվ, այն պետության համար առաջացնում է ազատությունից զրկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով պաշտպանելու պարտականություն¹⁰: Այդ հանգամանքը Եվրոպական դատարանը շեշտել է նաև *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրած վճռում՝ նշելով, որ ազատությունից զրկված բոլոր անձանց համար պետք է ապահովվեն այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրանց արժանապատվությունը հարգելու հետ, նրանք չպետք է ենթարկվեն այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որոնք գերազանցում են անազատության մեջ գտնվելուն ներհատուկ տառապանքի

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահագն Պողոսյանի* գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴԻ/0062/06/12 որոշումը:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gelfmann v. France* գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 25875/03, կետ 50:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sarban v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 3456/05, կետ 77:

անխուսափելի աստիճանը, նրանց առողջությունն ու բարեկեցությունը պետք է պատշաճորեն պահպանվի, ի թիվս այլ միջոցների՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով՝ հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված գործնական պահանջները¹¹:

Ծանր հիվանդ անձի ազատագրելուը Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխանելու հարցը քննարկելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում տարբեր հանգամանքներ, այդ թվում՝ անձի առողջական վիճակի տեսանկյունից նրա կալանքի տակ գտնվելու նպատակահարմարությունը¹²:

Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ ներպետական օրենսդրությամբ երաշխավորված է կալանավորման եղանակով ազատությունից զրկված անձանց ֆիզիկական առողջության պահպանությունը՝ պահանջվող բժշկական օգնություն տրամադրելու միջոցով, ընդ որում՝ նաև իր կողմից ընտրված բժշկի կողմից գնսվելու, հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն փոխադրվելու միջոցով¹³: Ուստի այն դեպքում, երբ անձի մոտ կհաստատվի հիվանդության առկայությունը, էական նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքների գնահատումը, որոնք կարող են վկայել կալանքի տակ գտնվելու պայմաններում նրա ֆիզիկական առողջությունը պատշաճ պահպանելու խոչընդոտների, հետևապես նաև՝ կալանավորման եղանակով անձի ազատությունը սահմանափակելու աննպատակահարմարության մասին:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Ա.Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով ու 329-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, մեղադրանք է առաջադրվել՝ ա) շահադիտական դրդումներով երկու և ավելի անձանց սպանությունը նախապատրաստելու, բ) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ սպօրինի կերպով հրազեն և ռազմամթերք պահելու, գ) ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու և դ) Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու համար¹⁴:

– Առաջին ատյանի դատարանը, քննարկելով այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը, ներկայացված նյութերի հետազոտմամբ գտել է, որ թեև Ա.Պողոսյանի առողջական առկա վիճակի վերաբերյալ տեղեկությունները հայտնի չեն եղել վերջինիս կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս,

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Davtyan v. Armenia* գործով 2015 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 29736/06, կետ 81:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mouisel v. France* գործով 2002 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 67263/01, կետեր 40-42, *mutatis mutandis* Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Օսիպյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԿԴ/0046/01/16 որոշումը:

¹³ Տե՛ս «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 21-րդ հոդվածները:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ասկայն առկա չէ կալանքը կրելուն խոչընդոտող հիվանդության վերաբերյալ բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա կալանավորված անձանց պահելու վարչակազմի միջնորդագիրը, որը կարող էր ընտրված կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու հիմք լինել: Մինևույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով մեղադրյալ Ա.Պողոսյանի առողջական վիճակի վատթարացման, ցուցված բժշկական խորհուրդները կատարված չլինելու պնդմանը, նշել է, որ վերջինիս առողջական վիճակի վատթարացումն ինքնին չի կարող հիմք լինել այլ խափանման միջոցի կիրառմամբ նրան կալանքից ազատ արձակելու համար, քանի որ Ա.Պողոսյանը կալանքի տակ գտնվելու պայմաններում իրավունք ունի ստանալ անհետաձգելի բժշկական օգնություն, այդ թվում՝ զննվել իր ընտրած բժշկի կողմից, իսկ մասնագիտացված բուժօգնության կարիք ունենալու դեպքում՝ փոխադրվել հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ առկա չեն այնպիսի նոր հանգամանքներ, որոնք կարող էին հիմք լինել ընտրված կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու համար¹⁵:

– Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է, որ իրավաչափ է կալանքի տակ գտնվելու պայմաններում անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումը, այնուամենայնիվ, գտել է, որ մեղադրյալ Ա.Պողոսյանին ցուցված համակարգչային շերտագրություն հետազոտությունը սահմանված ժամկետում չի կատարվել: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ անհրաժեշտ և անհապաղ բժշկական օգնություն չտրամադրելը և այդ պայմաններում շարունակական կալանքի տակ գտնվելը կարող է հանգեցնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված արգելքի խախտման:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով մեղադրյալ Ա.Պողոսյանի առկա առողջական վիճակը, անհրաժեշտ և անհապաղ բժշկական օգնություն վերջինիս տրամադրված չլինելը, գտել է, որ 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով գրավն ի գործ է երաշխավորելու մեղադրյալ Ա.Պողոսյանի պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում¹⁶:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 13-13.2-րդ կետերում վկայակոչված իրավական նորմերի և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ նախ և առաջ անհրաժեշտ է արձանագրել, որ ինչպես իրավացիորեն նշել է Առաջին ատյանի դատարանը¹⁷, յուրաքանչյուր դեպքում առողջական վիճակով պայմանավորված՝ անձի նկատմամբ ընտրված կալանավորումը կարող է փոխվել բժշկական հանձնաժողովի համապատասխան եզրակացության և դրա հիման վրա կալանավորված անձանց պահելու վարչակազմի կողմից միջնորդագրի առկայության դեպքում: Սակայն, քանի որ նշված եզրակացության

¹⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

և միջնորդագրի բացակայությունն ինքնին չէր բացառում առողջական վիճակով պայմանավորված պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում չտրամադրելու հիմքով կալանքն այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ հարցի քննարկումը, ուստի Ա.Պողոսյանի նկատմամբ ընտրված կալանավորումն ավելի մեղմ խափանման միջոցով փոխարինելու հարցի քննարկումն իրավաչափ էր:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առողջական վիճակով պայմանավորված անհրաժեշտ բժշկական հետազոտությունը սահմանված ժամկետում կատարված չլինելու պայմաններում Ա.Պողոսյանին շարունակական կալանքի տակ պահելու դեպքում Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված արգելքի հնարավոր խախտման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողությունը կառուցված չէ գործի փաստական տվյալներից բխող հետևությունների վրա: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի վկայակոչել որևէ փաստական տվյալ առ այն, **որ սահմանված ժամկետում համակարգչային շերտագրություն հետազոտությունն իրականացված չլինելը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել մեղադրյալ Ա.Պողոսյանի առողջական վիճակի վատթարացման:**

Վերագրյալի հետ մեկտեղ, Վերաքննիչ դատարանը, սահմանափակվելով մեղադրյալ Ա.Պողոսյանի առկա առողջական վիճակի ընդհանրական վկայակոչմամբ՝ առանց դրա վերաբերյալ կոնկրետ տվյալ մատնանշելու, վերլուծելու և գնահատելու, որևէ հիմնավորում չի ներկայացրել առ այն, որ տվյալ պարագայում մեղադրյալ Ա.Պողոսյանին համակարգչային շերտագրություն հետազոտության չենթարկելը բացասաբար է անդրադարձել կամ կարող էր անդրադառնալ նրա առկա առողջական վիճակի վրա, ինչն էլ իր հերթին կարող էր հիմք հանդիսանալ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված արգելքի հնարավոր խախտման վերաբերյալ հետևության գալու համար: Այդպիսի փաստական տվյալ(ներ) առկա չէ նաև ներկայացված նյութերում:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետի և ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանման բժշկի միջև տեղի ունեցած թղթակցության համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի կողմից հրահանգվել է անհապաղ միջոցներ ձեռնարկել Ա.Պողոսյանին ցուցված և չկատարված հետազոտությունների կատարումն ապահովելու ուղղությամբ, և նրա առողջական առկա վիճակի վերաբերյալ տրամադրել լրացուցիչ տվյալներ, ինչին ի պատասխան հայտնվել է, որ հնարավորինս արագ կկազմակերպվի համակարգչային շերտագրություն հետազոտությունը և Ա.Պողոսյանի առողջական առկա վիճակի վերաբերյալ կտրամադրվեն լրացուցիչ տվյալներ¹⁸, այսինքն՝ Ա.Պողոսյանի առողջական վիճակի պահպանության հարցը գտնվել է քրեական հետապնդման մարմնի հատուկ հսկողության ներքո:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 9-րդ և 9.1-րդ կետերը:

Մինևույն ժամանակ, սույն գործում առկա փաստական հանգամանքները հիմք չեն տալիս եզրահանգելու նաև, որ մեղադրյալ Ա.Պողոսյանին անհրաժեշտ բուժօգնությունը չի կարող պատշաճ կազմակերպվել անազատության մեջ գտնվելու պայմաններում:

15.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն առանցքային է համարում այն հանգամանքը, որ մեղադրյալ Ա.Պողոսյանին ցուցված հետազոտություններից՝ համակարգչային շերտագրությունը ժամանակին չկատարելը, արձանագրված փաստական տվյալների հաշվառմամբ, չի կարող դիտարկվել որպես բավարար չափով համոզիչ և հիմնավորված փաստարկ այլ խափանման միջոցի կիրառմամբ մեղադրյալ Ա.Պողոսյանին կալանքից ազատ արձակելու հնարավորությունը թույլատրելի ճանաչելու համար:

16. Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Ա.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու հարցի քննարկման արդյունքում այն թույլատրելի ճանաչելիս չի պահպանել Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները և անտեսել է սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք իրենց համակցության մեջ, բավարար էին մեղադրյալ Ա.Պողոսյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար: Մեղադրյալ Ա.Պողոսյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ակնկալվող պատժի խստությունը, ենթադրյալ հանցավոր արարքները հանցակիցների ներգրավմամբ կատարելը, հանցակցությամբ կատարված ենթադրյալ հանցագործությունների մեխանիզմում ունեցած դերակատարումը, ենթադրյալ հանցագործությանը նրա մասնակցության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև ի սկզբանե ենթադրյալ հանցավոր արարքները՝ դրանք թաքցնելուն ուղղված գործողություններով զուգակցելը և սույն գործի մյուս փաստական հանգամանքների համակցությունը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ գործի քննության տվյալ փուլում մեղադրյալ Ա.Պողոսյանի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի պատշաճ քննությանը խոչընդոտելու հավանականության ռիսկը շարունակում է բավականին բարձր լինել: Սակայն, վերոնշյալ փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար, համակողմանի գնահատման չեն ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Ա.Պողոսյանին 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով գրավի կիրառմամբ կալանքից ազատելու հնարավորությունը թույլատրելի ճանաչելով, հաշվի չի առել, որ կոնկրետ դեպքում խափանման միջոց գրավն ի գործու չէ հակակշռելու մեղադրյալ Ա.Պողոսյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով սպահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը:

17. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մեղադրյալ Ա.Պողոսյանի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով կալանավորմանը նախապատվություն տալուց հետո ի հայտ չեն եկել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք կարող էին հիմք ծառայել այլ խափանման միջոցի կիրառմամբ՝ նրան կալանքից ազատ արձակելու համար:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 137-րդ և 151-րդ հոդվածների պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, և Ա.Պողոսյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում¹⁹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արմեն Արտաշեսի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

¹⁹ Տե՛ս սույն որոշման 9.2-րդ կետը:

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0591/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

4 մարտի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Վոլոդյա Արմենի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի հունվարի 20-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնում հարուցվել է թիվ 17154520 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով, և նույն օրն ընդունվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան ու Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ռ.Ղասաբյանի վարույթ:

1.1. 2020 թվականի հունվարի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 12101520 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի փետրվարի 3-ի և 14-ի որոշումներով թիվ 12101120 ու 12126319 քրեական գործերը միացվել են թիվ 12101520 քրեական գործին:

2020 թվականի փետրվարի 4-ին Վոլոդյա Արմենի Սուքիասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունվարի 22-ի, փետրվարի 17-ի, մարտի 2-ի, 3-ի և 11-ի որոշումներով թիվ 17100820, 17100620, 15999519, 16161620, 12101520, 16155320, 14105120, 27180319, 17104820, 10891519, 10894819, 13170620 ու 17154520 քրեական գործերը միացվել են թիվ 17154520 քրեական գործին:

1.3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մարտի 30-ի որոշմամբ բավարարվել է մեղադրյալ Վ.Սուքիասյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը: Մինևույն ժամանակ, մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, և գրավի չափ է սահմանվել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

Գրավի գումարը չվճարելու պատճառով նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Վ.Սուքիասյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ մերժվել է մեղադրյալ Վ.Սուքիասյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը:

2. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել գրավը՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով: Մինևույն ժամանակ, մինչև գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ներկայացնելը, մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

3. Գրավի գումարը չվճարելու պատճառով նախաքննության մարմինը կրկին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի հունիսի 5-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, մերժվել է:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 5-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճարելի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ սահմանվել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Նախաքննության մարմնի կողմից Վոլոդյա Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Վ.Սուքիասյանը] *նորիշի գույքի զաղտնի հափշտակություն կատարելու դիրավորությամբ, 2020թ. հունվարի 20-ին՝ ժամը 21:00-ից մինչև հունվարի 21-ը՝ ժամը 07:45-ն ընկած ժամանակահատվածում, տեխնիկական միջոցների գործադրմամբ կտրել է Երևան քաղաքի Նոր Արեշ 22-րդ փողոցի 117/7-րդ հասցեում գործող «Բարի Սամարացի» մթերային խանութի մուտքի դռան փականը, ապօրինի մուտք է գործել ներս և սրահից զաղտնի հափշտակել է 400.000 ՀՀ դրամ արժողությամբ վճարահաշվարկային փերմիտայր՝ 117.000 ՀՀ դրամ պարունակությամբ մեյրադադրամներ՝ Գոռ Արամի Թանգյանին պարճատելով խոշոր չափերի՝ 517.000 ՀՀ դրամի գույքային վնաս:*

Բացի այդ, Վոլոդյա Արմենի Սուքիասյանը, նախնական համաձայնության գալով Ռուբեն Խաչատրյանի Իսկանդարյանի հետ նորիշի գույքի զաղտնի հափշտակություն կատարելու վերաբերյալ, խնդիր կազմում, մեկը մյուսի գործողությունները փոխյրացնելով, 2020թ. հունվարի 30-ին՝ ժամը 06:20-ի սահմաններում, Ռուբեն Իսկանդարյանի կողմից շահագործվող «Մերսեդես Բենց» մակնիշի, 36 QV 097 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ուղևորվել են Երևան քաղաքի Նուբարաշեն 11-րդ փողոցի 1-ին շենքի մուտք, որտեղ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են հիշյալ հասցեին կից մթերային խանութի մուտքի դուռը, ապօրինի մուտք են գործել սրահ և զաղտնի հափշտակել 400.000 ՀՀ դրամ արժողությամբ վճարահաշվարկային փերմիտայր՝ 200.000 ՀՀ դրամ

կանխիկ գումարի պարունակությամբ, Արամ Գեղամի Զերոբյանին պարճատելով խոշոր չափերի՝ 600.000 ՀՀ դրամի գույքային վնաս»¹:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մայիսի 26-ի որոշման համաձայն՝ «Դադարանը դեռևս 2020 թվականի մարտի 30-ի՝ Վոլոդյա Սուքիասյանի նկարմամբ խափանման միջոց կալանավորման ժամկետը երկարացնելու որոշմամբ գրել է, որ վերջինիս պարզաճ վարքագիծը հնարավոր է ապահովել գրավի կիրառմամբ և գրավի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամ, սակայն մինչ այժմ մեղադրյալը չի մոծել գրավը և գրնվում է անսզարության մեջ:

(...)

Տվյալ դեպքում Դադարանն արդեն իսկ գրել է, որ Վոլոդյա Սուքիասյանի նկարմամբ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպարակներին հնարավոր է հասնել մեղադրյալի նկարմամբ այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ, ինչը վկայում է, որ կալանավորման ժամկետի երկարացման անհրաժեշտությունը ներկայում քացակայում է: (...) [Հարկ է նկարել, որ (...) օրենսդրական փոփոխությունների արդյունքում դադարանները սույն փուլում և այս ընթացակարգով չի կարող անդրադարձնալ գրավի չափի նվազեցման կամ այլ խափանման միջոց ընարելու հարցին, քանի որ դա դեռևս վարույթն իրականացնող մարմնի լուծման ենթակա ինդիք է: Հեղևարար, կալանավորման ժամկետի երկարացումը մերժվելուց հետո վարույթն իրականացնող մարմինը, ըար էության, պետք է քննարկի Վոլոդյա Սուքիասյանի նկարմամբ ազարությունից գրկելու հետ չկապված խափանման միջոց ընարելու, իսկ գրավի կիրառման պայմաններում՝ արդեն իսկ նշանակված չափից նվազ գումարի թույլարելիության հարցը»²:

8. Առաջին ատյանի դատարանը, մերժելով մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընարելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը, 2020 թվականի հունիսի 5-ի որոշմամբ փաստել է. «(...) Հաշվի առնելով, որ նախկինում՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դադարանի՝ 26.05.2020 թվականի որոշմամբ մեղադրյալ Վոլոդյա Արմենի Սուքիասյանի նկարմամբ որպես խափանման միջոց ընարված կալանավորման ժամկետը 2 ամիս ժամկետով երկարացնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը մերժվել է, իսկ համաձայն ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի՝ կալանքը որպես խափանման միջոց ընարելու նպարակով հարուցված միջնորդությունը դադարավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դադարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայր գալու դեպքում, սակայն վարույթն իրականացնող մարմինը չի ներկայացրել որևէ փասարակ այն մասին, որ չեղանալու մասին արորագրությունը որպես

¹ Տն նյութեր, հատոր 1, թերթեր 101-105:

² Տն նյութեր, հատոր 1, թերթեր 268-275:

խախտանման միջոց կիրառված լինելու պայմաններում Վոլոդյա Արմենի Սուքիասյանը կարարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք: Հետևաբար կալանքը որպես խախտանման միջոց ընտրելու քննարկվող պայմանն առկա չէ:

Ընտրված խախտանման միջոցը փոխելիս կալանավորումը որպես խախտանման միջոց ընտրելու դեպքում՝ օրենսդիրն, ի թիվս կալանավորման մնացած պայմանների, որպես լրացուցիչ պայմաններ նախատեսել է անձի կողմից՝

– ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելը, կամ

– նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 2-7-րդ կետերով նախատեսված խախտանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելը:

Հիշարևակված պայմաններից մասնավորապես առաջինի կապակցությամբ [Առաջին արյանի դ/ատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ այլ խախտանման միջոց ընտրված լինելու դեպքում այն փոխելու և կալանավորումը որպես խախտանման միջոց կիրառելու համար պետք է հիմնավորվի անձի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներից որևէ մեկը փաստացի կատարելը, այլ ոչ թե դրա հավանականությունը:

Քննիչի միջնորդությունը մերժելիս [Առաջին արյանի դ/ատարանը միաժամանակ հաշվի է առնում նաև ՀՀ-ում կորոնավիրուսի համաճարակի տարածման վրանգը:

Վերոգրյալից ելնելով՝ [Առաջին արյանի դ/ատարանը գտնում է, որ կալանավորումը որպես խախտանման միջոց ընտրելու մնացած պայմանների և հիմքերի քննարկումն առարկայազուրկ է, իսկ քննիչի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման»³:

9. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ Աղասի Հովսեփյանի, Արամ Ճուղուրյանի և Ասյան Ավետիսյանի գործերով արտահայատած իրավական դիրքորոշումները, անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ արձանագրելով հետևյալը. «(...) [Առաջին արյանի դ/ատարանի կողմից արված վերլուծություններն ու դրանց վրա հիմնված եզրահանգումը բխում են գործի նյութերում առկա փաստական տվյալներից և ընդունելի են նաև Վերաքննիչ դատարանի համար:

Բողոքաբերի պատճառաբանությունները հակառակի մասին հիմնավորված չեն և չեն բխում գործի նյութերում առկա փաստական տվյալներից: Գրավի գումարը չվճարելը ինքնին հիմք չի կարող հանդիսանալ Վոլոդյա Սուքիասյանի նկատմամբ որպես խախտանման միջոց կալանավորում կիրառելու համար:

Անփոփոխելով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Վոլոդյա Սուքիասյանի նկատմամբ որպես խախտանման միջոց կալանավորումն ընտրելու

³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 42-58:

վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս Առաջին սարյանի դ/արարանի կողմից քրեադատարավարական նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել ճիշտ դատական սկզբ կայացնելու վրա, թույլ չեն տրվել»⁴:

10. 2021 թվականի մայիսի 19-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Վոլոդյա Արմենի Սուքիասյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և Վ.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝ չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը, վկայակոչելով և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ և 285-րդ հոդվածների դրույթները, նշել է, որ օրենսդիրը սահմանել է դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելուց հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելու հետևյալ կառուցակարգերը, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքը, երբ ի հայտ են եկել կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքներ, և նույն օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված դեպքը, երբ չեն կատարվել գրավի կիրառման համար անհրաժեշտ գործողությունները, մասնավորապես՝ սահմանված ժամանակահատվածում չի վճարվել որպես խափանման միջոց ընտրված գրավի գումարը:

11.1. Բողոքաբերի պնդմամբ՝ սույն գործով մեղադրյալը սահմանված ժամկետում վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացրել գրավի գումարը վճարած լինելու վերաբերյալ ապացույցներ, ուստի վարույթն իրականացնող մարմինը կալանավորումը կրկին որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացրել դատարան, ինչը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի պահանջից: Մինչդեռ, ինչպես փաստել է բողոքաբերը, Առաջին ատյանի դատարանը, ներկայացված միջնորդությունը մերժելով, ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրավակարգավորմամբ, որը, ըստ բողոքի հեղինակի, սույն գործով կիրառելի չէ: Հակառակ պարագայում, բողոքաբերի կարծիքով, գրավի կիրառումը որպես խափանման միջոց դառնում է առարկայագուրկ, քանի որ գրավի գումարը չմուծելը մեղադրյալի համար չի առաջացնի որևէ իրավական հետևանք:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 29-38:

⁵ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0635/01/21 քրեական գործը:

11.2. Բողոքի հեղինակի պնդմամբ, Առաջին ատյանի դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը: Որպես հիմնավորում՝ բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով առկա է եղել ընտրված խափանման միջոցը փոփոխելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար նշված հոդվածով նախատեսված պայմաններից մեկը, այն է՝ գրավի կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելը, ինչը, ըստ բողոքի հեղինակի, հիմք է ծառայել Առաջին ատյանի դատարան համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:

12. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 5-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 17-ի որոշումը ու մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելու իրավական կառուցակարգերի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք գրավի գումարը մուծված չլինելու պայմաններում ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելն այն հիմնավորմամբ, որ կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող նոր հանգամանքներ չեն ներկայացվել:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Կալանքից ազատված անձը չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին»:*

Նույն օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«[Կալանավորումը որպես] խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում»:*

15.1. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ի ապահովումն անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքի՝

օրենսդիրը լրացուցիչ պայմաններ է նախատեսել կալանքից ազատված կամ այն անձի նկատմամբ նույն մեղադրանքով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը դատարան կրկին ներկայացնելու համար, ում վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է: Այսպես, նշված միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել միայն բացառիկ դեպքում, երբ ի հայտ են եկել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելիս կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելիս, և որոնք հիմնավորում են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ *«6. Սույն օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասին համապարասխան որպես խափանման միջոց ընտրված գրավը չմոծելու հերկանքով վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալին կալանավորման միջնորդություն դատարան ներկայացվելու դեպքում դատարանն իրավասու է նաև նվազեցնելու գրավի չափը:*

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում դատարանի կողմից գրավի չափը նվազեցնելու և այն փոփոխելու վերաբերյալ որոշում կայացվելուց հետո մեղադրյալը երկօրյա ժամկետում պարտավոր է մոծել դատարանի ասհմանած գրավը, իսկ չմոծելու դեպքում քրեական հետապնդման մարմնի միջնորդության հիման վրա կարող է կալանավորվել»:

Նույն օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել:*

Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու կամ սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 2-7-րդ կետերով նախատեսված խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու դեպքում վարույթն իրականացնող մարմնին իրավունք ունի կիրառելու սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նպարակներն ապահովելու համար անհրաժեշտ և պիտանի խափանման միջոց, իսկ անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդման մարմնիները կարող են դիմել դատարան անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ»:

16.1. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ դրանք ասհմանում են օրենքով նախատեսված խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու, մասնավորապես, որպես խափանման միջոց ընտրված գրավի գումարը չվճարելու դեպքում անձին կալանավորելու հարցը դատարանի առջև բարձրացնելու ինքնավար ընթացակարգ: Մասնավորապես, անձի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց ընտրելուց հետո երկօրյա ժամկետում գրավը մոծված լինելու մասին ապացույցներ ներկայացված չլինելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է դիմել դատարան՝ անձի նկատմամբ

կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ: Ընդ որում, անհրաժեշտ և պիտանի խափանման միջոց ընտրելու պահանջն ապահովելու համար՝ քննարկվող դեպքում դատարանն իրավասու է ոչ միայն բավարարելու կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը, այլ նաև գրավը թողնել անփոփոխ՝ քննարկելով գրավի չափը նվազեցնելու հարցը:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող քրեադատավարական նորմերը բովանդակում են անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու երկու տարբեր իրավական ընթացակարգեր: Առաջինը ենթադրում է կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող նոր էական հանգամանքներ ի հայտ գալու դեպքում այն անձին կալանավորելու միջորդությունը դատարան կրկին ներկայացնելու հնարավորություն, ով ազատվել է կիրառված կալանքից կամ ունենկատմամբ նշված խափանման միջոցը կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Նշված ընթացակարգի շրջանակում կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող նոր էական հանգամանքներ ներկայացնելու օրենսդրական պահանջը ելնում է իրավաչափ այն գաղափարից, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման համատեքստում դատարանի կողմից չի կարող բավարարվել այն միջնորդությունը, որում ներկայացված՝ կալանավորման պայմանների և հիմքերի առկայության վերաբերյալ նույն հիմնավորումները դատարանի կողմից արդեն իսկ մեկ անգամ բավարար չեն գնահատվել նույն գործով նույն անձի քննարկվող իրավունքը սահմանափակելու համար:

Երկրորդ ընթացակարգը ենթադրում է խափանման միջոցի կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու, մասնավորապես՝ որպես գրավ սահմանված գումարը չվճարելու դեպքում դատարան անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն՝ առանց հիմնավորելու նոր հանգամանքների առկայությունը: Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը լիազորված է գրավի գումարը վճարած չլինելու հանգամանքի ուժով դատարանի առջև բարձրացնելու անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը՝ առանց նոր հանգամանքների առկայությունը հիմնավորելու անհրաժեշտության: Նոր հանգամանքների առկայությունը հիմնավորելու պահանջի բացակայությունը պայմանավորված է այն գաղափարով, որ ավելի մեղմ խափանման միջոցի կիրառման պայմանները չապահովելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը լիազորված է անձի պատշաճ վարքագծի և վարույթի բնականոն ընթացքի ապահովման իրավաչափ նպատակին հասնելու համար դատարանի առջև բարձրացնելու անձի կալանավորման հարցը, ինչը ենթակա է դատական քննության: Դատարանն իր հերթին լիազորված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում քննարկման առարկա դարձնել գրավի գումարը չվճարելու պատճառները և ըստ այդմ՝ քննարկելու նաև գրավի գումարի նվազեցման հարցը, ինչպես նաև կալանավորման պայմանների և հիմքերի

առկայությունը՝ արդյունքում կայացնելով միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշում:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին նույն մեղադրանքով կրկին կալանավորելու միջնորդությամբ դատարան դիմելու առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ և 285-րդ հոդվածի 6-րդ մասերով սահմանված ընդհանրական պահանջն այն է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակումը նույն մեղադրանքով կարող է կրկին հայցվել միայն նոր էական հանգամանքներ ի հայտ գալու դեպքում:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 7-րդ և 151-րդ հոդվածի 1-ին մասերը սահմանում են գրավը որպես խափանման միջոց կիրառելու համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու իրավական հետևանքը, որից բխում է, որ այն դեպքում, երբ քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով գրավի՝ որպես խափանման միջոցի ընտրությունը հաջորդել է դատարանի կողմից անձին կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելուն, վարույթն իրականացնող մարմինը, գրավի գումարը մուծված չլինելու դեպքում, լիազորված է դատարանի առջև բարձրացնել նույն մեղադրանքով անձի ազատությունը կալանավորման կիրառմամբ սահմանափակելու հարցը: Նշված դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կառուցակարգի կիրառումը կարող է հանգեցնել կամայականության, քանի որ գրավի գումարը չվճարելը մեղադրյալի համար չի առաջացնի որևէ իրավական հետևանք: Արդյունքում հնարավոր չի լինի հասնել խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին և կբացառվի տվյալ փուլում քրեական դատավարության խնդիրները լուծելու հնարավորությունը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վ.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով, մեղադրանք է առաջադրվել՝ ա) տեխնիկական միջոցների գործադրմամբ շինություն ապօրինի մուտք գործելով՝ ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն և բ) խմբի կազմում, նախնական համաձայնությամբ տեխնիկական միջոցների գործադրմամբ շինություն ապօրինի մուտք գործելով՝ ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար⁶,

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ մերժել է մեղադրյալ Վ.Սուքիասյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը՝ արձանագրելով, որ դատարանը՝ 2020 թվականի մարտի 30-ի որոշմամբ արդեն իսկ գտել է, որ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել

⁶ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, ինչը վկայում է, որ կալանավորման ժամկետի երկարացման անհրաժեշտությունը ներկայում բացակայում է: Դատարանն արձանագրել է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատարանն իրավասու չէ քննարկելու գրավի չափի նվազեցման կամ այլ խափանման միջոց ընտրելու հարցը, քանի որ, կոնկրետ դեպքում, այդպիսիք վարույթն իրականացնող մարմնի կողմից լուծման ենթակա հարց են, ուստի միջնորդությունը մերժելուց հետո վարույթն իրականացնող մարմինը, ըստ էության, պետք է քննարկի մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոց ընտրելու, իսկ գրավի ընտրության պայմաններում՝ արդեն իսկ նշանակված չափից նվազ գումարի թույլատրելիության հարցը⁷,

- Վ.Սուքիասյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մերժելու մասին որոշումից հետո նախաքննության մարմինը 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել գրավը՝ դրա չափը նվազեցնելով մինչև 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը⁸,

- գրավի գումարը չվճարելու պատճառով նախաքննության մարմինը կրկին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին⁹,

- Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի հունիսի 5-ի որոշմամբ մերժելով նախաքննության մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը, գտել է, որ չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը, այն է՝ կալանավորման եղանակով մեղադրյալ Վ.Սուքիասյանի անձնական ազատությունը նույն մեղադրանքով կրկին սահմանափակելու անհրաժեշտությունը հիմնավորող նոր հանգամանքներ չեն ներկայացվել: Մինևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու հիմքում դրել է նաև Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի (COVID-19) համավարակի տարածման վտանգը¹⁰,

- Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ *Աղասի Հովսեփյանի*, *Արամ Ճուղուրյանի* և *Ասյան Ավետիսյանի* գործերով իրավական դիրքորոշումները, անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ արձանագրելով նաև, որ գրավը չմոծելն ինքնին հիմք չէ մեղադրյալ

⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար¹¹:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես խափանման միջոց ընտրված գրավի կիրառման համար անհրաժեշտ գործողությունները կատարված չլինելու դեպքում կալանքից ազատված անձի նկատմամբ նույն մեղադրանքով կալանքը որպես խափանման միջոց կրկին կիրառելու միջնորդության քննության արդյունքում ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 7-րդ և 151-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված և կոնկրետ դեպքում կիրառման ենթակա քրեադատավարական ընթացակարգային առանձնահատկությունները:

21. Ինչ վերաբերում է Առաջին աստիանի դատարանի այն դիրքորոշմանը, որ անձի նկատմամբ ընտրված խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու դեպքում պետք է հիմնավորել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներից որևէ մեկի փաստացի կատարումը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ինչպես իրավաչափորեն փաստել է բողոքաբերը¹², Առաջին աստիանի դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի կարգավորումները: Մասնավորապես, քննարկվող հոդվածով սահմանված են ընտրված խափանման միջոցը փոփոխելու ինքնավար հիմքեր, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն ինքնին բավարար է անձի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու հարցը քննարկելու համար: Սույն գործով կալանավորման եղանակով մեղադրյալ Վ.Սուքիասյանի անձնական ազատությունը սահմանափակելու միջնորդության հիմքում դրված է եղել ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու, այլ ընտրված խափանման միջոցի կիրառման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածով սահմանված հիմքը:

21.1. Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ Առաջին աստիանի դատարանը, մի կողմից նշելով, որ չի հաղթահարվել նույն գործով, նույն մեղադրանքով կալանավորման եղանակով անձի անձնական ազատությունը սահմանափակելու դատավարական պահանջը, մյուս կողմից արձանագրել է, որ միջնորդությունը մերժելու հիմքում դնում է նաև Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի (COVID-19) համավարակի տարածման վտանգը: Վերոշարադրյալի համատեքստում տեղին է մեջբերել Վճռաբեկ դատարանի՝ *Գեղամ Ղազարյանի* վերաբերյալ և այլ գործերով արձանագրված

¹¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 11.2-րդ կետը:

այն դիրքորոշումը, որ դատարանի պատճառաբանությունները ոչ միայն պետք է կառուցվեն տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, այլև դատական ակտի կառուցվածքային տարբեր մասերում արված դատողությունները պետք է համապատասխանեն միմյանց, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ: Դատական ակտում պետք է բացառվեն ներքին հակասությունները, միմյանց բացառող դատողությունները, քանի որ հակառակ դեպքում այդպիսի դատական ակտի տրամաբանությունը կխաբխվի, իսկ քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի¹³:

22. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից Վճռաբեկ դատարանի՝ *Աղասի Հովսեփյանի*, *Արամ Ճուղոյանի* և *Ալյան Ալեքիսյանի* գործերով կայացված որոշումների շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները վկայակոչելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գործերով ձևավորած իրավական դիրքորոշումները սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն՝ հաշվի առնելով, որ դրանք ձևավորվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ նախկին խմբագրությամբ 143-րդ հոդվածի 7-րդ և 151-րդ հոդվածի 1-ին մասերի կարգավորումների պայմաններում:

22.1. Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշման առնչությամբ, որ որպես խափանման միջոց ընրված գրավի կիրառման համար անհրաժեշտ գործողությունների չկատարումը ինքնին հիմք չէ մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև գրավի կիրառման համար անհրաժեշտ գործողությունների չկատարումն ինքնին չի ենթադրում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը բավարարելու անխուսափելիությունը, սակայն առնվազն հիմք է դատարան կալանավորման նոր միջնորդություն ներկայացնելու համար՝ առանց նոր հանգամանքների առկայությունը հիմնավորելու պարտադիր պահանջի, ինչը, սակայն անտեսվել է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից:

23. Նման պայմաններում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ գրավի գումարը մուծված չլինելու պայմաններում ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելն այն հիմնավորմամբ, որ կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող նոր հանգամանքներ չեն ներկայացվել:

¹³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գեղամ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11, *Աննա Հարությունյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԴ/0110/01/11, *Արթուր Մաղոյանի* գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0303/01/15, *Նարինե Ղազարյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ՇԴ/0008/11/18 որոշումները:

24. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով մեղադրյալ Վ.Սուքիասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանն էլ, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ և 151-րդ հոդվածների պահանջների խախտում, որն իր բնույթով էական է ու համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 5-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 17-ի որոշումները բեկանելու համար: Մակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, Վ.Սուքիասյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում¹⁴, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վոլոդյա Արմենի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

¹⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ1/0001/14/18

ԱՐԱԴ1/0001/15/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

29 մարտի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի որոշումների դեմ Արթուր Ավագի Մնացականյանի պաշտպան Ա.Ներսիսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 29173117 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ Արթուր Մնացականյանը նեգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով: Նույն օրը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 8-ի որոշմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և նույն օրը Ա.Մնացականյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացվել է:

2. 2018 թվականի մայիսի 11-ին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև Առաջին ատյանի դատարան) նախաքննության մարմնի միջնորդության հիման վրա Ա.Մ՛նացականյանին ճանաչել է անգործունակ:

Առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ հաստատվել է Ա.Մ՛նացականյանին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառումը:

3. Նշված որոշումների դեմ Ա.Մ՛նացականյանի պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հուլիսի 18-ի որոշումներով բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի որոշումները թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումների դեմ Ա.Մ՛նացականյանի պաշտպան Ա.Ներսիսյանը վճռաբեկ բողոքներ է բերել, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և միացվել մեկ վարույթում:

5. Վճռաբեկ դատարանը 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) միջնորդելով որոշելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ և 78-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 22-ի թիվ ՍԴԱՌ-132 որոշմամբ գործն ընդունել է քննության:

Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի ՍԴԱՌ-89 որոշմամբ գործի վարույթը կարճվել է:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

7. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ հաստատվել է, որ Ա.Մ՛նացականյանն անմեղսունակության վիճակում կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված արարքը և նա ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից: Միաժամանակ, Ա.Մ՛նացականյանի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ բնակության վայրի հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում¹:

¹ Տե՛ս www.datalex.am տեղեկատվական համակարգ, թիվ ԱԲԱԴ/0014/01/18 գործը:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Արթուր Մնացականյանի վերաբերյալ ամբուլատոր դատափոփոխության փորձագիտական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ «(...) Ա.Մնացականյանը տառապում է «Օրգանական զտանցական (շիզոֆրենիան) խանգարում» խրոնիկ հոգեկան հիվանդությամբ: Որպես խրոնիկական հոգեկան հիվանդությամբ տառապող անձ, իրեն մեղադրվող արարքը կատարելու ժամանակ նա չէր կարող հասկանալ իր գործողությունների փաստացի բնույթը և հասարակական վրանգավորությունը և ղեկավարել դրանք: Ուստի Ա.Մնացականյանին հարկ է կատարածի համար ճանաչել **անմեղսունակ**: Հաշվի առնելով կատարած իրավախախտման առաջնակի բնույթը, կոնկրետ անձի նկատմամբ ուղղված զտանցական միջոցների բացակայությունը, նա **նվազ սոցիալական վրանգ է ներկայացնում** շրջապայի համար և կարիք ունի հարկադրական բուժման բնույթի հսկողության հոգեբուժական սրացիոնարի պայմաններում: Իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է հայտնել որոշ արտաքին նկարագրական տեղեկություններ, դեպքերի որոշ հանգամանքներ, սակայն չի կարող հասկանալ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և տալ ճշմարտացի ցուցմունքներ, չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին»²:

9. Առաջին աստիճանի դատարանը, հիմք ընդունելով քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին Ա.Մնացականյանի՝ անմեղսունակության վիճակում գտնվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, նրան անգործունակ ճանաչելու որոշմամբ փաստել է. «(...) Հաշվի առնելով, որ Ա.Մնացականյանի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պարզապես չի կարող մասնակցել գործի վարույթին, որի մասին կազմված է արձանագրություն, ուստի նման պայմաններում Ա.Մնացականյանին հարկ է ճանաչել անգործունակ:

Ինչ վերաբերում է պաշտպանի դիրքորոշմանն այն մասին, որ մինչև եզրակացություն արանալը առկա է եղել քրեական հետապնդումը բացառող հանգամանք, քանի որ տուժողը հայտնել է, որ բողոք կամ պահանջ չունի, որի պայմաններում քննիչը պետք է որոշում կայացնի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, դատարանը գտնում է, որ այն անիմո է, քանի որ տվյալ փուլում այդ հարցը քննարկման ենթակա չէ դատարանում հաշվի առնելով, որ Արթուր Մնացականյանի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, ավելին սույն նյութերում բացակայում է հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համաժամանակյա պայմանները

² Տե՛ս թիվ ԱՐԱԴ/0001/15/18 դատական գործը, թերթեր 18-22:

րուժողի և մեղադրյալի կամավոր և փոխադարձ համաձայնությունը միմյանց հեղ հաշրվելու մասին, ինչի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայրնել Աշոր Մինոնի Բարայանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԲԴ/0157/01/10 որոշմամբ»³:

10. Առաջին ատյանի դատարանի՝ Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու վերաբերյալ որոշումը հաստատելու մասին որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, լսելով միջնորդությունը ներկայացրած քննիչին, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձին, նրա օրինական ներկայացուցչին և պաշտպանին, ծանոթանալով ներկայացված նյութերին, այդ թվում՝ ամբուլատոր դարահոգեբուժական փորձաքննության թիվ 117/18 եզրակացությանը և նկարի ոնենալով, որ Ա.Մնացականյանը ներկա հոգեկան վիճակով չի կարող օգրվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, նա **նվազ սոցիալական վրանգ է ներկայացնում շրջապարի համար** և կարիք ունի հարկադրական բուժման ընդհանուր հսկողության հոգեբուժական սրացիոնարի պայմաններում, գրնում է, որ քննիչի որոշումը ենթակա է հատարաման»⁴:

11. Վերաքննիչ դատարանը, ևս հիմք ընդունելով Ա.Մնացականյանի հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, Առաջին ատյանի դատարանի՝ նրան անգործունակ ճանաչելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելիս փաստել է. «(...) Առաջին արյանի դատարանը հանգել է ճիշդ հերևության: Տվյալ դեպքում առկա է Ա.Մնացականյանի նկատմամբ անգործունակ ճանաչելու պայմանները և հիմքերը, (...) լսալ չի կարող օգրվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, ինչպես նաև հարուցված է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և կազմվել է համապարասիան արձանագրություն, որը ներկայացվել է դատարանին:

(...) [Անդրադառնալով ներկայացված հիմնական փաստարկին առ այն, որ մինչև անմեղսունակության վարույթ հարուցելը վարույթն իրականացնող մարմինն ոնենցել է քրեական հերասալողումը բացատող հանգամանք, սակայն շարունակել է քրեական գործի վարույթը և նշանակել համապարասիան փորձաքննություն, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված հանգամանքը առյն դատական գործի շրջանակներում մինչդարական վարույթի նկատմամբ նախնական դարական վերահսկողության առարկա չի հանդիսանում և այն կարող է քննության առարկա հանդիսանալ մինչդարական վարույթի նկատմամբ հերագա դարական վերահսկողության շրջանակներում: Բացի այդ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքում բերված հերևությունը պաշտպանի կողմից ձևավորվել է ՀՀ քրեական դատավարության օրենագրքի 35-րդ հողվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված իրավակարգավորումների լույսի

³ Տն թիվ ԱՐԱԴ/0001/15/18 դատական գործը, թերթեր 32-33:

⁴ Տն թիվ ԱՐԱԴ/0001/14/18 դատական գործը, թերթեր 34-35:

ներքո և որպես փաստական հիմք նշվել է այն, որ դիմողը (տուժողը) հայրնել է, որ որևէ բողոք կամ պահանջ չունի, իսկ Ա.Մնացականյանը որպես մեղադրյալ հայրնել է գործի բոլոր հանգամանքները և ընդունել է մեղքը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տուժող Արման Մնացականյանը հայրնել է, որ բողոք կամ պահանջ չունի, բայց ցանկանում է, որ Արթուր Մնացականյանը արանս համապատասխան բուժում: (...) Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանին ներկայացված նյութերից երևում է, որ առերևույթ բացակայում է համապատասխան քրեական հետապնդումը բացառող հանգամանքը»⁵:

12. Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կիրառելու՝ Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը նշել է. «(...) Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության: Մասնավորապես, տվյալ դեպքում առկա է Ա.Մնացականյանի նկատմամբ համապատասխան անվտանգության միջոց կիրառելու պայմանները և հիմքերը և այն հետապնդում է (...) իրավակարգավորումներով սահմանված իրավաչափ նպատակ: Մասնավորապես, առկա է քրեական օրենքով չթույլատրված ենթադրյալ արարքի հետ Ա.Մնացականյանի օբյեկտիվ կապը հաստատող բավարար տվյալներ, քրեական օրենքով չթույլատրված ենթադրյալ արարքի ենթադրաբար կատարման պահին Ա.Մնացականյանը ենթադրաբար չի կարողացել գիտակցել իր գործողության վրանգավորությունը կամ ղեկավարել դա և Ա.Մնացականյանը որոշակի սոցիալական վրանգ է ներկայացնում շրջապատի համար և համեմատյալ վերը նշված փորձագիտական եզրակացության՝ կարիք ունի հարկադրական բուժման ընդհանուր հսկողության հոգեբուժական սրացիոնարի պայմաններում: Ի դեպ, հարկ է նշել, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածում նշված «վրանգ» բառը պետք է հասկանալ համապատասխան վրանգը իր բոլոր դրսևորումներով՝ **նվազից մինչև առավելագույնը** (...):

[Անդրադառնալով ներկայացված հիմնական փաստարկին առ այն, որ մինչև անմեղանակության վարույթ հարուցելը վարույթն իրականացնող մարմինն ունեցել է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, սակայն շարունակել է քրեական գործի վարույթը և նշանակել համապատասխան փորձաքննություն, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված հանգամանքը սույն դատական գործի շրջանակներում մինչդարակալական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում և այն կարող է քննության առարկա հանդիսանալ մինչդարակալական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում: Բացի այդ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքում բերված հետևությունը պաշտպանի կողմից ձևավորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված իրավակարգավորումների լույսի ներքո և որպես փաստական հիմք նշվել է

⁵ Տե՛ս թիվ ԱՐԱԲ/0001/15/18 դատական գործը, թերթեր 77-87:

այն, որ դիմողը (տուժողը) հայրնել է, որ որևէ բողոք կամ պահանջ չունի, իսկ Ա.Մնացականյանը որպես մեղադրյալ հայրնել է գործի բոլոր հանգամանքները և ընդունել է մեղքը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տուժող Արման Մնացականյանը հայրնել է, որ բողոք կամ պահանջ չունի, բայց ցանկանում է, որ Արթուր Մնացականյանը սրանա համապարասիան բուժում: (...) Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանին ներկայացված նյութերից երևում է, որ առերևույթ բացակայում է համապարասիան քրեական հետաախոյունը բացառող հանգամանքը»⁶:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

13. Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու մասին ստորարաս դատարանների դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքում պաշտպան Ա.Ներսիսյանը նշել է, որ թույլ է տրվել դատական սխալ նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու վերաբերյալ կայացվել է սխալ դատական ակտ, որը բեկանելու անհրաժեշտ և բավարար հիմքեր են առկա: Բողոքաբերը նաև նշել է, որ Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելիս կիրառված նորմերի կապակցությամբ առկա է միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր:

13.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը, և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

14. Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելու վերաբերյալ ստորարաս դատարանների դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքում պաշտպան Ա.Ներսիսյանը նշել է, որ թույլ է տրվել դատական սխալ նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել են ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Ա.Մնացականյանի նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու մասին կայացվել է սխալ դատական ակտ, որը բեկանելու անհրաժեշտ և բավարար հիմքեր են առկա: Բողոքաբերը նաև նշել է, որ Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելիս կիրառված նորմերի կապակցությամբ առկա է միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր:

14.1. Միաժամանակ, բողոքաբերն ընդգծել է, որ տվյալ դեպքում առկա է քրեական հետաախոյունը բացառող հանգամանք՝ ախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով առաջադրված է եղել մասնավոր մեղադրանք, իսկ տուժողը հայտնել է, որ բողոք և պահանջ չունի: Ընդ որում,

⁶ Տե՛ս թիվ ԱԲԱԴ/0001/14/18 դատական գործը, թերթեր 74-84:

բողոքաբերը նշել է, որ տուժողի կողմից բողոք և պահանջ չունենալու մասին տեղեկատվությունը վարույթն իրականացնող մարմնին հայտնի է դարձել մինչև Ա.Մ'նացականյանի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության ստացումը: Նման պայմաններում, բողոքաբերի պնդմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվեր և գործի վարույթը՝ կարճվեր:

14.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Ա.Մ'նացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը, և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

Սահմանադրական դատարանում Վճռաբեկ դատարանի դիմումի քննությունը.

15. Վճռաբեկ դատարանը, հղում կատարելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնարար իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշներին, միջազգային «փափուկ իրավունքի» աղբյուրներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին, դիմել է Սահմանադրական դատարան միջնորդելով որոշելու՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ քրեական դատավարությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունների առումով տարբերակված մոտեցում է ենթադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ՝ հանգեցնելով քրեական վարույթին լիարժեք մասնակցելու և հիմնարար սահմանադրական իրավունքներից օգտվելու երաշխիքների անհամաչափ սահմանափակման,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ այնքանով, որքանով հասարակության համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու և ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցի բացակայությունը, ինչպես նաև ազատությունից զրկելու իրավաչափության պարբերական վերանայման ընթացակարգի և առավելագույն ժամկետի բացակայությունը վտանգում են անձնական ազատության սահմանադրական իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիքները⁷:

⁷ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթ 106:

16. Ներկայացված դիմումի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը բացատրություն է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ ընդգծելով անձին անգործունակ ճանաչելու գործող օրենսդրության անկատարությունը: Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի համատեքստում ամրագրված անձին անգործունակ ճանաչելու քրեադատավարական հիմքի սահմանադրականությունը պետք է դիտարկման առարկա դառնա առհասարակ «անգործունակության» ինստիտուտի իրավական բովանդակության, այդ ինստիտուտի անկատարության արդյունքում իբրև հետևանք անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման համատեքստում:

Անդրադառնալով բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման առավելագույն ժամկետների բացակայության և դատարանի որոշման պարբերական վերանայման խնդիրներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել է, որ օրենսդրական կարգավորման բացակայությունը հանգեցնում է անվտանգության միջոցի հիման վրա անձանց երկար ժամանակ հոգեբուժական հաստատությունում պահելուն՝ առանց դատարանի կողմից բուժման նկատմամբ համապատասխան վերահսկողության: Նշվածի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգել է, որ օրենսդրական այս խնդիրներն առաջ են բերում անձի իրավունքների անհամաչափ և շարունակական սահմանափակումներ⁸:

17. Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովը, ներկայացված բացատրությունում հղում կատարելով հայրենական ակադեմիական աղբյուրներին, նշել է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետք է օգտվեն իրենց համար սահմանված երաշխիքներից: Միաժամանակ, Ազգային ժողովը գտել է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ վերջինս ունակ չէ մասնակցելու գործով վարույթին:

Բացի այդ, անդրադառնալով անձին բժշկական հաստատությունում տեղավորելու առավելագույն ժամկետների և պարբերական դատական վերահսկողության խնդիրներին՝ ներկայացված բացատրությունում նշվել է, որ դիմողի կողմից բարձրացված հարցը ենթակա է լուծման հիմք ընդունելով անձի ազատության իրավունքի սահմանափակման, մասնավորապես՝ կալանքի կիրառման կանոնները: Հղում կատարելով իրավակիրառ պրակտիկայում կայացված դատական ակտերին՝ ՀՀ Ազգային ժողովը գտել է, որ տվյալ պարագայում ենթակա է կիրառման կալանքի՝ որպես խափանման միջոցի երկամսյա ժամկետը⁹:

⁸ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 161-167:

⁹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 123-136:

18. Սահմանադրական դատարանը, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՍԴԱՈ-89 որոշմամբ կարճելով գործի վարույթը, գտել է, որ բարձրացված հարցերը դուրս են գտնվում վճռաբեկ բողոքի քննության սահմաններից: Սահմանադրական դատարանը նշել է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից չեն կիրառվելու իր վարույթում գտնվող գործը լուծելիս, վճռաբեկ բողոքում բարձրացվել է դատական սխալի հարց, որն ազդել է գործի ելքի վրա: Հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 406-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 415-րդ հոդվածի 1-ին մասին, Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից Սահմանադրական դատարանում վիճարկվող դրույթները՝ դիմումում բարձրացրած հարցերի ենթատեքստով, չեն ազդելու իր վարույթում գտնվող գործի լուծման վրա, չեն կիրառվելու Վճռաբեկ դատարանի կողմից, ուստի՝ վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցով վերջինս Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն չունի¹⁰:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

19. Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ սույն գործերով բողոքները վարույթ են ընդունվել Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման գործառույթների իրացման նկատառումներով, որպիսի հիմքերը, դատական սխալի հետ մեկտեղ, ուղղակիորեն նշվել են բողոքաբերի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքներում:

Այս առումով Մարդու իրավունքների պաշտպանի՝ սույն որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի ընդունումից հետո, ավելի քան երկու տասնամյակների ընթացքում, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներն օրենսդրական մակարդակով էական փոփոխության չեն ենթարկվել: Ավելին, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովման առումով բացակայում է միասնական իրավակիրառ պրակտիկա: Մինչդեռ, այս ընթացքում Հայաստանի Հանրապետությունը միացել է մի շարք միջազգային պայմանագրերի, ընդունվել են մի շարք միջազգային չափանիշներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը զարգացրել է իր նախադեպային իրավունքը, ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք, որպիսի պայմաններում նշված ոլորտում իրավունքի զարգացման միտումը հրամայական է դարձնում գործող կարգավորումների համատեքստում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների

¹⁰ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 198-206:

պաշտպանության այնպիսի երաշխիքների ապահովումը, որոնք համահունչ կլինեն այդ միտմանը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անգործունակ ճանաչելու և նրանց նկատմամբ բժշկական հաստատությունում տեղավորելու ձևով անվտանգության միջոց կիրառելու քրեադատավարական կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր: Ոստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ նույնաբնույթ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

I. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելը.

20. Նկատի ունենալով, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելու միակ իրավական հիմքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասում, որով էլ ղեկավարվել են ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս, սույն գործի վարույթում այն օբյեկտիվորեն չկիրառվել չի կարող: Ոստի, օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման գործառնությունների իրացման շրջանակներում սույն գործով Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. *Արթուր Մասցականյանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ անգործունակ ճանաչելու արդյունքում իրավաչափ է արդյո՞ք նրա՝ քրեական վարույթի ընթացքում դատական պաշտպանության, արդար դատաքննության, մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներն իրացնելու հնարավորությունների սահմանափակումը:*

21. ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ *«Ըտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հարկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պարկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկվելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

21.1. Անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները¹¹,

- Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն

¹¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հունվարի 21-ի թիվ ՍԴԽ-731 որոշման 10-րդ կետը:

կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից¹²,

– խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք գրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ¹³:

21.2. Անդրադառնալով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության առարկային՝ Մահմանադրական դատարանը նշել է, որ այն ներառում է դատարանում լավելու և դատական քննությանը լիարժեք մասնակցություն ունենալու իրավունքները¹⁴:

22. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «*Խտրականություն հաշմանդամության պարճատով*՝ նշանակում է՝ հաշմանդամության պարճատով ցանկացած րարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպարակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազարությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգրվելը քաղաքական, րնարեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորում մյուսների հեար հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների րրամնարրման մերժումը»:

Նույն կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «*Մասնակից պարությունները պարրավորվում են ապահովել և օճանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազարությունների լիակարար իրականացմանը առանց հաշմանդամության պարճատով որևէ խտրականության: Այս նպարակով մասնակից պարությունները պարրավորվում են*

ա. ձեռնարկել համապարասիան օրենսդրական, վարչական և այլ միջոցներ սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների իրականացման համար

*բ. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ օրենսդրության ընդունումը, փոփոխելու կամ չեղյալ հայրարարելու համար գործող այն օրենքները, կանոնակարգերը, սովորույթները և գործելակերպերը, որոնցում առկա է խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկարմամբ. (...)*¹⁵:

¹² Տնն Մահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ՄԴՌ-881 որոշման 5-րդ կետը:

¹³ Տնն Մահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի թիվ ՄԴՌ-1224 որոշման 22-րդ կետը:

¹⁴ Տնն Մահմանադրական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՄԴՌ-1197 որոշման 6-րդ կետը:

¹⁵ Տնն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հոգեկան հիվանդների մասին» հանձնարարականի համաձայն՝ դատարանի որոշումները չպետք է բնութագրվեն միայն բժշկական փաստաթղթերի հիման վրա, ինչպես այլ անձի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի համար ևս պետք է լիարժեք երաշխավորվի լաված լինելու իրավունքը¹⁶:

Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» բանաձևի համաձայն՝ հոգեկան հիվանդություն ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա իրականացնելու բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում¹⁷:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն այնպիսի կառուցակարգերի գոյությունը, որոնք կպաշտպանեն հոգեկան խանգարումներ ունեցող խոցելի անձանց, մասնավորապես այն անձանց, ովքեր համաձայնություն տալու կարողություն չունեն կամ չեն կարող դիմակայել մարդու իրավունքների խախտմանը¹⁸:

23. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրելոված անկախ ու անսաշտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ *«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգրվելը սպառնալից է առանց խորականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:*

Եվրոպական կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ *«1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգրվելը պետք է*

¹⁶ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հոգեկան հիվանդների մասին» 1977 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 818 (1977) հանձնարարականի 17-րդ կետը:

¹⁷ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 5-րդ մասը:

¹⁸ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ի «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» թիվ REC(2004)10 հանձնարարականի 7-րդ հոդվածի 1-ին մասը:

ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պարկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խորականության:

2. Ոչ մեկի նկարմամբ պերական մարմնի կողմից խորականություն չպերք է դրսևորվի սույն հոդվածի 1-ին կերում նշված որևէ հիմքով»:

23.1. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ բժշկական քնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման գործընթացում նրանց մասնակցելու իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– հոգեկան հիվանդություն ունեցող անձը դատավարությունում ունի երկքնույթ դեր, մասնավորապես՝ նա կ՝ շահագրգիռ անձ է, կ՝ դատաքնության օքյելու: Հետևաբար նրա մասնակցությունն անհրաժեշտ է ոչ միայն գործն անձամբ ներկայացնելու, այլ նաև դատավորին հնարավորություն տալու համար իր անձնական կարծիքը ձևավորել գործի կ այդ անձի հոգեկան վիճակի վերաբերյալ¹⁹: Դատավորի համար կարևոր է առնվազն հոգեկան հիվանդություն ունեցող անձի հետ կարճ հանդիպում ունենալը կ նախընտրելի է նրան հարցեր ուղղելը: Եվրոպական դատարանը գտնում է, որ դատավորի կողմից գործի լուծումը միայն փաստաթղթավորված ապացույցների հիման վրա, առանց տեսնելու կամ լսելու անձին, հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում²⁰,

– Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, եվրոպական դատարանը ելնում է այն հանգամանքից, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց գործերով ներպետական դատարանները նույնպես օժտված են հայեցողության հարաբերական ազատությամբ: Օրինակ՝ նրանք կարող են ընդունել դատավարական համապատասխան միջոցներ՝ արդարադատության պատշաճ կազմակերպման, անձի առողջության պահպանման համար կ այն: Սակայն այդպիսի միջոցները չպետք է խաթարեն անձի արդար դատաքնության իրավունքի բուն էությունը՝ երաշխավորված Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Անձի մասնակցությունը բացառող կոնկրետ միջոցի կիրառման անհրաժեշտությունը քննարկելիս Եվրոպական դատարանը հիմք է ընդունում բոլոր համապատասխան հանգամանքները (ինչպիսիք են՝ ներպետական դատարանների կողմից քննարկվող հարցերի քնույթն ու բարդությունը, անձի համար դրանց կարևորությունը, նրա անմիջական մասնակցության պարագայում այլ անձանց կամ իր համար որևէ վտանգ ներկայացնելը կ այն)²¹,

¹⁹ Տեն, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kovalev v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 78145/01, կետեր 35-37:

²⁰ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Shtukatorov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետեր 72-73:

²¹ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Shtukatorov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետ 68:

- արդարադատության պատշաճ կազմակերպման շահերից ելնելով, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ միջոցներ ձեռնարկելով (հոգեբույժի հետ հանդիպում, գործի քննությանը ներկայություն, օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցության ապահովում), պետք է ապահովվի հոգեկան հիվանդություն ունեցող անձի կողմից դատավարությունը հասկանալու հնարավորությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով մեղսագրվող արարքի (մեղադրանքի) բնույթի և պատճառների մասին մանրամասն տեղեկացումը, որը կապահովվի դատարանի կողմից կայացվող որոշման արդարացիությունը²²:

23.2. Միևնույն ժամանակ, խտրականության արգելքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ոչ բոլոր դեպքերում է տարբերակված մոտեցումը կամ համապատասխանաբար տարբեր իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում չդրսևորելը համարվում խտրականություն, այլ այն դեպքերում, որոնք չունեն օբյեկտիվ հիմք և ողջամիտ արդարացում²³:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի և 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի շրջանակը ներառում է նաև խտրականությունը՝ հիմնված բժշկական պայմանների վրա²⁴: Դատարանը նշել է, որ ձևավորված է եվրոպական և համաշխարհային կոնսենսուս՝ պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց խտրականությունից²⁵: Այն ներառում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու ողջամիտ պայմաններ՝ թույլ տալով հաշմանդամություն ունեցող անձանց ամբողջությամբ իրացնել իրենց իրավունքները, որի չապահովումը հավասարազոր է խտրականության²⁶: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ հաշմանդամության վերաբերյալ գործերով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրավական տարբերակված մոտեցում դրսևորելու հայեցողության լուսանցքն էականորեն նեղ է²⁷:

²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Vaudelle v. France* գործով 2001 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 35683/97, կետ 65:

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Fabris v. France [GC]* գործով 2013 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 16574/08, կետ 56, *Molla Sali v. Greece [GC]* գործով 2018 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 20452/14, կետ 135:

²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kiyutin v. Russia* գործով 2011 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 2700/10, կետ 57:

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Glor v. Switzerland* գործով 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռը, գանգատ թիվ 13444/04, կետ 54:

²⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cam v. Turkey* գործով 2016 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 51500/08, կետեր 65-57, *Enver Sahin v. Turkey* գործով 2018 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 23065/12, կետեր 67-69:

²⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Glor v. Switzerland* գործով 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռը, գանգատ թիվ 13444/04, կետ 84:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Եթե անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պարճատով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը կամ դատախազն այդ մասին կազմում են արձանագրություն, որն ուղարկվում է դատավորին՝ համապատասխան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ «*Անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: (...)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Եթե հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձն առողջական վիճակի պարճատով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը, դատախազը դրա մասին պետք է կազմեն արձանագրություն*»:

24.1 Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանությանն ուղղված միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված պահանջները, նրանց իրավական երաշխիքների կապակցությամբ կայուն նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝

– բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի ընթացքում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք, չհանդիսանալով մեղադրյալ, օգտվում են մեղադրյալի իրավունքներից²⁸,

– անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի իրավավիճակն ընդգրկում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքները (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված), այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածը նույնպես ամրագրում է, որ անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձն օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից²⁹: Նշված պահանջն օրենսդրի կողմից նախատեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածում՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների նկատմամբ տարբերակված մոտեցումը բացառելու նպատակով³⁰:

²⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սերգեյ Սյրեխանյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԳԴ5/0014/01/13 որոշումը, կետ 23:

²⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արա Շուշանյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/15 որոշումը, կետ 14:

³⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Գասպարյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԳԴ1/0058/01/16 որոշումը, կետ 15:

25. Գործող քրեական դատավարության օրենսգիրքը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անգործունակ ճանաչելու ընթացակարգի վերաբերյալ կարգավորում է նախատեսել 451-րդ հոդվածի 4-րդ մասում: Նշված կարգավորման ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդիրը, հիմք ընդունելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի կողմից իր վերաբերյալ ընթացող վարույթին հոգեկան վիճակի պատճառով մասնակցելու անհնարինությունը, քննիչի կամ դատախազի կողմից այդ մասին կազմված արձանագրության հիման վրա նախատեսում է նրան անգործունակ ճանաչելու ընթացակարգ: Այսինքն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ իր վերաբերյալ վարույթին մասնակցելու հնարավորության մեկնագամյա գնահատման արդյունքում քննիչի կամ դատախազի արձանագրությունը հիմք է այդ անձին անգործունակ ճանաչելով, նրա մասնակցությունը վարույթին, ի սկզբանե՝ մինչդատական փուլից սկսած սահմանափակելու համար: Արդյունքում, վարույթն իրականացնող մարմինն իր իսկ կողմից կազմված արձանագրության հիման վրա հնարավորություն է ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցություն պահանջող քննչական կամ այլ դատավարական գործողություններն իրականացնել առանց նրա մասնակցության ապահովման:

Վերոնշյալ դեպքում, Վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթի իրացման շրջանակներում գտնում է, որ պատճառաբանությունն առ այն, որ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու պայմաններում անձն ի վիճակի չէ մասնակցելու իր վերաբերյալ ընթացող դատավարությանը, պարունակում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի ենթադրվող խտրական վերաբերմունք: Մինչդեռ, սույն որոշման 21-24.1-րդ կետերում վկայակոչված միջազգային չափանիշներից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում կանխավարկածը պետք է լինի ոչ թե հոգեկան հիվանդությամբ տառապելու հիմքով վերջիններիս մասնակցության և իրավունքներից օգտվելու հնարավորությունների սահմանափակումը, այլ ընդհակառակը՝ լրացուցիչ միջոցառումների ձեռնարկմամբ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցության խրախուսումը՝ իրենց իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն առնչվող վարույթին: Ուստի, միջազգային չափանիշների հաշվառմամբ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք առողջ անձանց հետ հավասար հիմունքներով, լրացուցիչ երաշխիքների տրամադրմամբ, պետք է հնարավորություն ունենան լիարժեք մասնակցություն ունենալու իրենց վերաբերյալ ընթացող վարույթին:

26. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բարձրացված հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ինչպես սույն գործով, քրեական դատավարությունում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման

վարույթի շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքում դրվում է փորձագիտական եզրակացությունն այն մասին, որ «(...) իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը չէր կարող հասկանալ իր գործողությունների փաստացի բնույթը և հասարակական վրանգավորությունը և ղեկավարել դրանք: Ուարի նրան հարկ է ճանաչել անմեղսունակ (...):» Արդյունքում, անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագետի եզրահանգումը գործող օրենսդրական կարգավորման և ձևավորված պրակտիկայի պայմաններում դրվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելու և առանց նրա մասնակցության քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարումը կազմակերպելու հիմքում³¹:

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ անգործունակությունը քրեական դատավարությունում դատարանի կողմից չի կարող ճանաչվել՝ հիմքում դնելով անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության հետևությունները: Մասնավորապես, անմեղսունակությունն անձին անգործունակ ճանաչելու պայման չէ: Ավելին, հարկ է ընդգծել, որ անմեղսունակության և անգործունակության վիճակները համարժեք չեն, կրում են ինքնավար բնույթ և որոշվում են տարբեր բանաձևերով, մեկի առկայությունը չի կարող նախապայման դիտարկվել մյուսը հաստատելու համար: Եթե մեղսունակությունը որոշվում է ռետրոսպեկտիվ կարգով (անցյալ ժամանակում կատարված) և միայն անհատի կյանքի որոշակի ժամանակաշրջանի նկատմամբ՝ մեղսագրվող արարքի համատեքստում, ապա գործունակությունը կապված է անձի քննադատական ունակությունների հետ, շատ թե քիչ երկարատև ժամանակի ընթացքում, և ընդգրկում է անհատի սոցիալական գործունեության բոլոր կողմերը, այդ թվում՝ հեռանկարները: Այլ կերպ, եթե անմեղսունակությունը վերաբերում է անձի՝ հոգեկան առողջության անցյալ ժամանակաշրջանին, ապա անգործունակությունը վերաբերում է անձի՝ հոգեկան առողջության ապագա ժամանակաշրջանին:

Հետևաբար, անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացությամբ անձը քրեական դատավարությունում չի կարող ճանաչվել անգործունակ և զրկվել համապատասխան գործողություններին մասնակցելու հնարավորությունից:

27. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության հիման վրա անձին անգործունակ ճանաչելու քրեադատավարական ընթացակարգը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու իրավունքներից օգտվելու հնարավորությունների անհամաչափ

³¹ Տես, ի թիվս այլնի, օրինակ՝ թիվ ԵԿԴ/0098/15/17, ԱԲԱԴ/0025/15/17, ԱԲԱԴ/0026/15/17 գործերը:

սահմանափակման: Ընդ որում, նույնիսկ այն բացառիկ դեպքերում, երբ անձի հոգեկան հիվանդությունն օբյեկտիվորեն արգելք է հանդիսանում նրան քննչական կամ այլ դատավարական գործողությանը մասնակից դարձնելու համար, ապա Վճռաբեկ դատարանը, օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառնության շրջանակներում արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է սահմանափակվի այդ մասին համապատասխան արձանագրության մեջ կատարվող նշմամբ՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման, որի պայմաններում կարող է ապահովվել նրա իրավունքների լիարժեք պաշտպանությունը, որի կարևորությունն ընդգծվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված բացատրություններում³²: Հակառակ պարագայում, անգործունակ ճանաչելու պահից կվերանա այդ անձի՝ վարույթին մասնակցելու կարողության վերագնահատման հնարավորությունը, նրան որևէ քննչական կամ այլ դատավարական գործողության կատարմանը մասնակից դարձնելու անհրաժեշտությունը և կլեգիտիմացվի առանց վերջինիս մասնակցության նշված գործողությունների կատարումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առանց անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ իր վերաբերյալ ընթացող վարույթին մասնակցության հարցի լուծման գաղափարն ընդունելի է նաև օրենսդրի կողմից: Այդ մասին է վկայում անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթների օրենսդրական կարգավորումների համեմատական ուսումնասիրությունը: Այսպես, եթե անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը նախատեսված է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451-րդ հոդվածի 4-րդ մասում, ապա այդպիսի կարգավորում օրենսդրի կողմից չի նախատեսվել դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխի՝ 466-րդ հոդվածի 3-րդ մասում: Այդ դեպքում օրենսդիրը նախատեսել է միայն քննիչի կամ դատախազի կողմից համապատասխան արձանագրություն կազմելու կարգավորում՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման: Այսինքն՝ օրենսդիրը, որպես այդպիսին, ընդունելի է համարում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մասնակցության հարցի լուծումը նաև առանց նրան անգործունակ ճանաչելու ընթացակարգի: Ուստի, եթե նշված մոտեցումը կիրառելի է դեպքից հետո

³² Տե՛ս սույն որոշման 16-17-րդ կետերը:

հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ, ապա տվյալ դեպքում բացակայում է օբյեկտիվ հիմքն ու իրավաչափ նպատակը՝ նույն մոտեցումը նաև անմեղսունակ անձանց նկատմամբ չկիրառելու համար:

28. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին և միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված չափանիշներին համապատասխան՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու համար, որպես կանոն պետք է մասնակցություն ունենան իրենց վերաբերյալ ընթացող վարույթին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, բացառություն կարող են լինել այն դեպքերը, երբ նրանց վարքագիծը, հոգեկան կամ ֆիզիկական վիճակն օբյեկտիվորեն խոչընդոտ են վերջիններիս մասնակցությունը վարույթին սպահովելու համար: Այսինքն՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցության իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող վարույթի անցկացումը պետք է լինի որպես վերջին միջոց (*last resort*), երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հոգեկան վիճակի գնահատման արդյունքում պարզ կդառնա, որ վերջինս օբյեկտիվորեն ի վիճակի չէ մասնակցելու իրեն առնչվող կոնկրետ գործողությանը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքներից օգտվելու հնարավորությունը երաշխավորելու համար, նրանց մասնակցությամբ կատարման ենթակա յուրաքանչյուր քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ պետք է վերագնահատվի նշված անձանց՝ վարույթին մասնակցելու կարողությունը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ ինչպես արտասահմանյան մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերում³³, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում³⁴, նախատեսված չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգ:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– նախաքննական մարմնի միջնորդության հիման վրա Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին Ա.Մ՛նացականյանի՝ անմեղսունակության վիճակում գտնվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, նրան ճանաչել է անգործունակ՝ փաստելով, որ Ա.Մ՛նացականյանի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու

³³ Տնն, օրինակ, Լատվիայի, Էստոնիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքերը:

³⁴ Տնն www.arlis.am կայքը:

վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով նա չի կարող մասնակցել գործի վարույթին, որի մասին կազմված է արձանագրություն³⁵,

– Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ նշելով, որ առկա են Ա.Մ.Նազականյանին անգործունակ ճանաչելու պայմանները և հիմքերը, նա չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, ինչպես նաև հարուցված է բժշկական քնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և կազմվել է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվել է դատարանին³⁶:

30. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 21-28-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ա.Մ.Նազականյանին անգործունակ ճանաչելու հիմքում մեխանիկորեն դրվել է փորձագիտական եզրակացության հետևությունն այն մասին, որ «*իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է հայտնել որոշ արտաքին նկարագրական տրեղելություններ, դեպքերի որոշ հանգամանքներ, սակայն չի կարող հասկանալ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և չսպճանարարացի ցուցմունքներ, չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին*»³⁷: Սույն գործի փաստական հանգամանքների գնահատումը ցույց է տալիս, որ ստորադաս դատարանների կողմից չի հիմնավորվել, որ Ա.Մ.Նազականյանին անգործունակ ճանաչելու ընթացակարգով գործի վարույթին նրա մասնակցության սահմանափակումը եղել է վերջին միջոց (*last resort*), և Ա.Մ.Նազականյանը հոգեկան առողջության խնդիրների պատճառով տվյալ պահին օբյեկտիվորեն ի վիճակի չէր մասնակցելու իրեն առնչվող գործողություններին: Հետևաբար, Ա.Մ.Նազականյանի վերաբերյալ կազմված արձանագրության և անմեղսունակության մասին վկայող փորձագիտական եզրակացության հիման վրա նրան մեխանիկորեն անգործունակ ճանաչելու ընթացակարգը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, սահմանափակելով դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հնարավորություններից, հանգեցրել է նրա իրավունքների խախտման: Իրավակիրառ պրակտիկայում հետագա նմանատիպ դեպքերը բացառելու նկատառումներով Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի շրջանակներում սույն որոշմամբ ձևավորած նախադեպային մոտեցումը, փաստում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով վարույթն իրականացնող մարմիններն այսուհետ պետք է ձեռնպահ մնան

³⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³⁶ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

³⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնումից:

Ամփոփելով վերոգրյալը, սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Արթուր Մնացականյանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ անգործունակ ճանաչելու արդյունքում նրա՝ քրեական վարույթի ընթացքում դատական պաշտպանության, արդար դատաքնության, մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներն իրացնելու հնարավորությունների սահմանափակումն իրավաչափ չէ:

II. Հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման իրավական երաշխիքների ապահովումը.

31. Օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման գործառույթների իրացման շրջանակներում սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև հետևյալ իրավական հարցին. Արթուր Մնացականյանի նկատմամբ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման ընթացքում արդյո՞ք ստորադաս դատարանների կողմից ապահովվել են ազատության իրավունքի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքները:

32. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների փրսածոմը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բիտղ վրանգը կանխելու նպատակով.

(...)

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սերմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությամբ»:*

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում*

ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

32.1. Ազատության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատավարական հարկադրանքի միջոցներից՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն՝ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ.

– կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այս տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները³⁸,

– կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (*ultima ratio*), **միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա**: Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմինն փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը: Մինևույն ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը³⁹:

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած, սակայն հասարակության համար վրանգ չներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նաև կարող է հանձնվել ազգականների, ինսամակալների, հոգաբարձուների հսկողությանը՝ այդ մասին տեղյակ պահելով առողջապահության մարմիններին:

2. Տվյալ միջոցն ընտրելու մասին քննիչը, դատախազը, դատարանը կայացնում են պարճատարանված որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վրանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նաև կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում:

2. Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պարճատարանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը»:

³⁸ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՌ-827 որոշումը, կետ 6:

³⁹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշումը, կետ 7.4:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Եթե անձը հասարակության համար մեծ վրանգ չի ներկայացնում և կարիք չունի իր նկարմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման, դատարանը կայացնում է գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: (...)»:*

34. Նախորդ կետում մեջբերված իրավադրոյթներից հետևում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում կարող է որպես դատավարական հարկադրանքի միջոց նշանակվել ազատությունից զրկելու հետ չկապված ընտանեկան հսկողություն (ազգականների, խնամակալների և հոգաբարձուների հսկողությանը հանձնելու դեպքում) և ազատությունից զրկելու հետ կապված բժշկական հսկողություն (հոգեբուժական հաստատությունում տեղավորվելու դեպքում) անվտանգության միջոցները: Ընդ որում, օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ՝

– ընտանեկան հսկողության կիրառման հիմքն անձի՝ հասարակության համար վտանգ չներկայացնելն է,

– բժշկական հսկողության կիրառման հիմքն անձի՝ հասարակության համար վտանգ ներկայացնելն է:

Այսինքն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ նշված անվտանգության միջոցներից կոնկրետ տեսակի ընտրությունը պայմանավորվում է այն հանգամանքով, թե արդյո՞ք անձը հասարակության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ: Ստացվում է, որ հասարակության համար վտանգ ներկայացնելու դեպքում՝ **անկախ դրա աստիճանից**, անձի ազատության իրավունքը անվերապահ ենթակա է սահմանափակման՝ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառմամբ՝ այլընտրանքային միջոցի բացակայության պատճառով: Մինչդեռ, այդպիսի բացարձակ մոտեցումն ընդունելի լինել չի կարող, այն խաթարում է ազատության իրավունքի էությունը և զրկում դատական ատյանին՝ իրեն բնորոշ՝ գործն ըստ անհատական փաստական հանգամանքների գնահատման ենթարկելու գործառույթը պատշաճ իրացնելու հնարավորությունից: Ուստի, պետք է արձանագրել, որ ինչպես կալանավորումը, այնպես էլ բժշկական հսկողություն անվտանգության միջոցը, լինելով դատավարական հարկադրանքի վերջին, բացառիկ միջոց, պետք է ունենա անձին ազատությունից զրկելու այլընտրանք:

Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակության համար բարձր և նվազ վտանգ ներկայացնող անձանց նկատմամբ միևնույն մոտեցումը մեխանիկորեն կիրառվել չի կարող: Նրանց նկատմամբ ազատությունից զրկելու դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու և իրավունքները նույն ծավալով սահմանափակելն արդարացված լինել չի կարող առնվազն համաչափության սկզբունքից ելնելով:

Ավելին, հաշվի առնելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը՝ ստացվում է, որ օրենսդիրը մի կողմից հասարակության համար մեծ վտանգ չներկայացնող անձի նկատմամբ,

ատանց ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոցի կիրառման հնարավորության, անվերապահորեն սահմանում է հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցը կիրառելու պահանջ, մյուս կողմից՝ նախատեսում, որ հասարակության համար մեծ վտանգ չներկայացնող անձի նկատմամբ դատարանը գործի վարույթը կարճում է և քրեական հետապնդումը դադարեցնում, եթե բացակայում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման կարիքը: Այլ կերպ՝ հասարակության համար նվազ վտանգ ներկայացնող անձը գործի մինչդատական վարույթում, ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցների բացակայության պատճառով, պարտադիր կարգով ենթակա է տեղավորման բժշկական հաստատությունում, այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում օրենսդիրը դատարանին համանման պայմաններում լիազորում է գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, եթե անձը նաև չունի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման կարիք: Մինչդեռ, սովյալ դեպքում, ընտանեկան հսկողությունը, օրինակ, կարող է դիտարկվել որպես անձին ազատությունից զրկելու հետ կապված անվտանգության միջոցի այլընտրանք: Ավելին, հաշվի առնելով, որ ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցը նաև դատավարական հարկադրանքի միջոց է, ուստի այն ևս պետք է ուղղված լինի անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի կանխմանը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում այն կարող է ուղղված լինել անձի՝ հասարակության համար նվազ վտանգ ներկայացնելու հանգամանքից բխող ոչ իրավաչափ վարքագծի կանխմանը:

Վերոգրյալի հիման վրա, օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության շրջանակներում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ ազատության իրավունքի արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անվտանգության միջոցների կիրառումը պետք է պայմանավորվի ոչ թե հասարակության համար առհասարակ վտանգ ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքով, այլ՝ **այդպիսի վտանգի աստիճանի գնահատմամբ**, որպիսի մոտեցման պայմաններում ընտանեկան հսկողությունը կարող է դիտարկվել որպես ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոց՝ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառելիության հարցը լուծելիս: Այլ կերպ, նվազ վտանգ ներկայացնելու դեպքում, անձի նկատմամբ ազատության իրավունքի սահմանափակմամբ զուգորդված՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու հարկադրանքի միջոցը պետք է կիրառվի ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցի կիրառման աննպատակահարմարության մասին եզրահանգման գալուց հետո:

35. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին ազատությունից զրկելու հետ կապված՝ բժշկական հսկողություն

անվտանգության միջոցի պարբերական վերանայման և անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետների բացակայության խնդրին: Գործող օրենսդրական կարգավորումներով բացակայում է բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման իրավաչափության դատական պարբերական վերանայման կառուցակարգը և այն կիրառվում է առանց առավելագույն ժամկետների սահմանման:

Մինչդեռ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ բժշկական հսկողության պարբերական և ինքնավար դատական վերանայման համակարգը, ինչպես կալանքի դեպքում, հնարավորություն է ստեղծում երաշխավորելու Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված պահանջը⁴⁰, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձն իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելն անօրինական է: Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձի «վտանգավորության» հիմքով անժամկետ, առանց ազատազրկման օրինականության պարբերական դատական ստուգման անձին անազատության մեջ պահելն անհամատեղելի է համարում Եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ⁴¹: Նշված խնդրին անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը և նշել, որ օրենսդրական կարգավորման նման թերությունները հանգեցնում են այս անվտանգության միջոցի հիման վրա անձանց երկար ժամանակ հոգերուժական կազմակերպությունում պահելուն՝ առանց դատարանի կողմից բուժման նկատմամբ համապատասխան վերահսկողության⁴²: Այդ պատճառով էլ արտասահմանյան մի շարք երկրներում օրենսդրորեն նախատեսվում են կարգավորումներ, որոնք սահմանում են անձին բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման առավելագույն ժամկետ և պարբերական վերանայման հնարավորություն⁴³: Այդպիսի ընթացակարգը գործում է նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կանոններն այս անվտանգության միջոցի նշանակման նկատմամբ տարածելու

⁴⁰ Տե՛ս *Abdulkhakov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 14743/11, կետ 209:

⁴¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *M. v. Germany* գործով 2009 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 19359/04, *Storck v. Germany* գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 61603/00, *O.H. v. Germany* գործով 2011 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 4646/08, *Kronfeldner v. Germany* գործով 2012 թվականի հունվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 21906/09:

⁴² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ հոգեկան կազմակերպություններում հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձանց իրավունքների սպառնալու վերաբերյալ 2018 թվականի արտահերթ գեկույցը, էջ 28, ինչպես նաև 2022 թվականի արտահերթ գեկույցը, էջ 26:

⁴³ Տե՛ս Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 599-րդ հոդվածը, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 395.1-րդ հոդվածը, Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 490-րդ հոդվածը, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 508-րդ հոդվածը:

դեպքում: Նշված տրամաբանությամբ է կառուցվել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը⁴⁴, որի կարգավորումներից ենթադրվում է, որ անձին բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցը կիրառվում է երկու ամիս ժամկետով և ենթակա է յուրաքանչյուր անգամ վերանայման:

Առանց ժամկետային սահմանափակման անձին բժշկական հաստատությունում տեղավորելու խնդրին անդրադարձել է նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Պ որոշմամբ և փաստել, որ անձի՝ բժշկական հաստատությունում գտնվելու ժամանակահատվածը չի կարող լինել անորոշ, դատարանները պետք է նշեն այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը պետք է ստացիոնար ձևով գտնվի բժշկական հաստատությունում, ըստ անհրաժեշտության երկարացնելով այն՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու քրեադատավարական կանոնների կիրառմամբ⁴⁵:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու հետ կապված բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման ընթացակարգի նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պետք է կիրառելի լինեն կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման կանոնները: Այլ կերպ, այն պետք է ենթակա լինի պարբերական վերանայման և սահմանափակված լինի երկամսյա ժամկետով: Հարկ է նկատել, որ նշված մոտեցումն ընդունելի է համարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ Սահմանադրական դատարան ներկայացված բացատրություններում⁴⁶:

Միաժամանակ, նշվածը նաև ենթադրում է, որ բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման շրջանակներում դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության հարցը: Մասնավորապես, քրեական դատավարությունում անձի ազատության իրավունքի սահմանափակումը չի կարող վերացական լինել, այն մշտապես պայմանավորված է քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու կասկածի հետ, որի բացակայությունը նաև բացառում է ազատության իրավունքի սահմանափակման հնարավորությունը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման ողջ գործընթացը քրեական դատավարությունում ամանցվում է անձի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստից: Ուստի, մինչ այդ փաստի վերջնական հաստատումն անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման համար էական նշանակություն ունի

⁴⁴ Տե՛ս www.arlis.am, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 140:

⁴⁵ Տե՛ս ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 435-րդ հոդվածի վերաբերյալ ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Պ որոշման եզրափակիչ մասի 1-ին կետը:

⁴⁶ Տե՛ս սույն որոշման 16-17-րդ կետերը:

անձի՝ քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատումը: Եթե բացակայի իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածը, ապա դատավարական հարկադրանքի միջոց կիրառվել չի կարող: Նշվածը երաշխիք է անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կամայական կիրառումը բացառելու համար:

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ստյանի դատարանը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունն այն մասին, որ Ա.Մ՝նացականյանը նվազ սոցիալական վտանգ է ներկայացնում շրջապատի համար, հաստատել է քննիչի՝ Ա.Մ՝նացականյանին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու որոշումը՝ առանց ժամկետի նշման և այլընտրանքային միջոցի կիրառման հնարավորության քննարկման⁴⁷,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի որոշումը, փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածում նշված «վտանգ» բառը պետք է հասկանալ համապատասխան վտանգն իր բոլոր դրսևորումներով՝ նվազից մինչև առավելագույնը⁴⁸:

37. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 32-35-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարաններն Ա.Մ՝նացականյանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված անվտանգության միջոց, այն է՝ բժշկական հաստատությունում տեղավորելու հարկադրանքը կիրառելիս քննարկման առարկա չեն դարձրել քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության հարցը: Բացի այդ, փորձագիտական եզրակացությամբ նվազ վտանգավորություն ներկայացնելու պայմաններում ստորադաս դատարանների կողմից անդրադարձ չի կատարվել այդ վտանգն այլընտրանքային միջոցի կիրառմամբ չեզոքացնելու հնարավորության հարցին: Ավելին, դատարաններն իրենց որոշումները կայացրել են առանց սահմանելու ժամկետային որևէ սահմանափակում և երաշխավորելու ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության պարբերական վերանայման հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Արթուր Մ՝նացականյանի նկատմամբ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման ընթացքում չեն ապահովվել ազատության իրավունքի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքները:

38. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով պաշտպանի՝ սույն որոշման 14.1-րդ կետում վկայակոչված խնդրին՝ ՀՀ քրեական դատավարության

⁴⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁴⁸ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ Արթուր Մնացականյանի նկատմամբ մասնավոր մեղադրանքի շրջանակներում իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու մասին տեղեկատվության առկայության պայմաններում անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումն այդ հիմքի կիրառմամբ դադարեցվել չի կարող: Մասնավորապես, այդ հիմքի կիրառման համատեքստում անհրաժեշտ է ազատ կամահայտնության ունակություն ունեցող և հոգեպես առողջ անձի համաձայնություն, որպիսի պայմանն առերևույթ բացակայում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում⁴⁹: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ սկսած այն պահից, երբ տվյալներ են ստացվում անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու և դրանով պայմանավորված՝ անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու հնարավորության մասին, հանրային շահի պաշտպանությունը պահանջում է շարունակել գործի վարույթը և միջոցներ ձեռնարկել այդ վտանգը կանխելու համար՝ անկախ այն հանգամանքից, որ տուժողն այլևս հետաքրքրված չէ իր մասնավոր շահի պաշտպանությամբ և հայտնում է բողոքի կամ պահանջի բացակայության մասին:

39. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշվածը հիմք է ստորադաս դատարանի դատական ակտերը բեկանելու համար: Մինչույն ժամանակ, հաշվի առնելով, որ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ գործի վարույթն ավարտվել է. հաստատվել է, որ Ա.Մնացականյանն անմեղսունակության վիճակում կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված արարքը և վերջինս ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում բողոքարկված դատական ակտերի բեկանումը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքները պետք է բավարարել մասնակիորեն, ճանաչել Արթուր Մնացականյանի իրավունքների խախտման փաստը, իսկ ստորադաս դատարանի որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

⁴⁹ Տե՛ս *mutatis mutandis* Վճռաբեկ դատարանի՝ *Սերգեյ Սյրեփանյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԳԳ5/0014/01/13 որոշումը, որտեղ Վճռաբեկ դատարանը սահմանել է ուղենիշային մոտեցում առ այն, որ համաներման ակտի կիրառման հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել միայն մեղսունակ անձի նկատմամբ:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Արթուր Ավագի Մնացականյանի իրավունքների խախտման փաստը:
3. Արթուր Ավագի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հինք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0803/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

1 ապրիլի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հուլիսի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) Մասիս Բանդիկյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Երևանի կայազորի գինվորական դատախազ Ա.Անտոնյանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ դիմող Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Ս.Աղվանյանի բողոքը մերժվել է, և հաստատվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին վերոհիշյալ որոշման օրինականությունը:

2. Դատախազ Ա.Անտոնյանի որոշման դեմ դիմող Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Ս.Աղվանյանը 2019 թվականի հոկտեմբերի 4-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել այն, պարտավորեցնել հարուցել քրեական գործ և իրականացնել նախաքննություն:

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշմամբ դիմողի ներկայացուցիչ Ս.Աղվանյանի բողոքը բավարարվել է, և Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը վերացվել է:

3. Դատախազ Ա.Անտոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հունիսի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Երևանի թիվ 1 գինվորական կոմիսարիատի գինվորական կոմիսարի պարտականությունների ժամանակավոր կատարող Կ.Հովհաննիսյանի՝ 2019 թվականի մայիսի 30-ի զեկուցագրի համաձայն՝ Վարդգես Վաչագանի Չարխիֆալակյանն ընդգրկված է Երևանի թիվ 1 գինվորական կոմիսարիատի 1992 թվականին ծնված քաղաքացիների Ձև 3 ամփոփացուցակում, սակայն դեռևս չի ներկայացել գինվորական հաշվառման¹:

5.1. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված գրության համաձայն՝ Վ.Չարխիֆալակյանին մինչև 16 տարին լրանալը՝ 2000 թվականի օգոստոսի 7-ին անձնագրային և վիզաների վարչության կողմից տրվել է ՀՀ քաղաքացու ԱԷ սերիայի թիվ 0604280 անձնագիրը: Նշված անձնագիրը, վավերականության ժամկետը լրանալու կապակցությամբ, 2006 թվականի հուլիսի 26-ին փոխանակվել է ԱԳ սերիայի թիվ 0583862 անձնագրով, որը վավերական է եղել մինչև 2008 թվականի մարտի 31-ը (մինչև 16 տարին լրանալը)²:

5.2. ՀՀ պաշտպանության նախարարության Երևանի թիվ 1 գինվորական կոմիսարիատի աշխատակից Գևորգ Աբրահամյանի բացատրության համաձայն՝ Երևան քաղաքի բնակիչ, 1992 թվականի մարտի 31-ին ծնված Վ.Չարխիֆալակյանը թեև ընդգրկված է 1992 թվականին ծնվածների ձև

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 41:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 60-63:

3 ամիտիացուցակում, սակայն չի ներկայացել զինվորական հաշվառման կանգնելու համար, և տվյալ դեպքում վերջինս չի համարվում կցագրված³:

6. Նախաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2019 թվականի հուլիսի 8-ի որոշման համաձայն՝ «(...) Վարդգես Վաչագանի Չարիփֆալսկյանը «Ջինսպարություն մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտավոր լինելով զինվորական հաշվառման և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներկայանալ հաշվառման (փաստացի բնակության) վայրի զինկոմիսարիատ, չի ներկայացել, ու նյութերի նախապարտապահման ընթացքում, թեև ձեռք են բերվել որոշակի փաստական փյուռներ այն մասին, որ Վարդգես Վաչագանի Չարիփֆալսկյանը դուրս է մնացել զինվորական հաշվառումից, սակայն նա «Ջինսպարություն մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով սահմանված կարգով չի ներկայացել զինկոմիսարիատ, նահանսական կցագրում չի անցել, 1992թ.-ի ծավաճ արական սեռի ներկայացուցիչների հաշվառման այբբենական գրքում չի ընդգրկվել, բժշկական հանձնաժողովի կողմից զինծառայության համար նրա պիտանիության հարցը չի որոշվել, ուստի Վարդգես Վաչագանի Չարիփֆալսկյանի կողմից զինհաշվառումից դուրս մնալու պարագայում Արաբկիրի զինկոմիսարիատի առանձին աշխատակիցները դիտարկություն կամ անփութություն չեն դրսևորել, քանի որ մինչև Վարդգես Վաչագանի Չարիփֆալսկյանի զորակոչային փարիքի լրանալը՝ 27 փարեկան հասակը, վերջինս զինկոմիսարիատ չի ներկայացել և զինկոմիսարիատը նրա վերաբերյալ համապարտասխան մարմիններից տեղեկություններ չի ստացել, 1992թ. ծավաճ արական սեռի ներկայացուցիչների հաշվառման այբբենական գրքում ընդգրկված չէ, սակայն անցնում է զինկոմիսարիատի ձև 3 ամիտիացուցակով, որպիսի պայմաններում հիշյալ փաստով բացակայում է հանցակազմը (...)»⁴:

7. Դատախազի՝ 2019 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ «(...) [Կ]ցագրման ենթակա են 16 փարիքի լրացած արական սեռի քաղաքացիները, կցագրման պահից սկսված փյուռ անձը կարող է հանդիսանալ ՀՀ զինված ուժերի կոմպլեկտավորման ասպահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների ասպահովմանը միջոցառումներով իրավահարաբերությունների սուբյեկտ:

Բացի այդ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ անձը կարող է ենթարկվել քրեական պարտասխանավորության սույն հոդվածի դիտարկից հայտնի նախատեսված արարքներից մեկը կատարելու դեպքում՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում: Իսկ նախազորակոչային փարիքի հասած արական

³ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 101-102:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 10-11:

սեռի քաղաքացու կողմից զինկոմիսարիսար չներկայանալը և չկցագրվելը չի կարող դիրվել վերոգրյալ հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորում (...)⁵:

8. Առաջին առյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշման համաձայն. «(...) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 53-րդ և 185-րդ հոդվածների իրավակարգավորումներից հեարևում է, որ Դատարիսագր քրեական գործի հարուցումը մերժելու մասին հեարքնության մարմնի և քննիչի որոշման օրինականությունը արուգելիս լիագորված է հասարարել կամ վերացնել այդ որոշումը, վերջին դեարքում նաս հարուցել քրեական գործ, և լիագորված չէ ինքնուրույն պարձատարանել, առավել ևս իրավական գնահատման արձանացնել այն արարքները, որոնց վերարերյալ ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ նախապարարարարված նյութերով վարույթն իրականացնող [մարմինն] իրավական գնահատական չի արվել, մասնավորապես, ենթարրյալ դեարքի առկայության կամ բացակայության, դրանով պայմանավորված նաս հանցակազմի բացակայության մասին:

Այսպիսով, նյութերի նախապարարարության ընթացքում ձեռք բերված փաստական արլյալների բավարարության, ինչպես նաս նյութական և դատարարական օրենսդրության պահանջների պահպանման րեասնկյունից քրեական գործ հարուցելը մերժելու մասին վիճարկվող՝ Քննիչի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելով, Դատարանը հանգում է հեարևության, որ դիմողի ներկայացուցչի՝ Հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ իրականացված նախնական արուգման արրյունքում վարույթն իրականացնող մարմինը ենթարրյալ հանցագործության, ինչպես նաս դրա կատարման հանգամանքները բացահարերլու ուղղությամբ միջոցատումներ չի ձեռնարկել, նշված հանցագործության դեարքի առկայության կամ բացակայության, դրանով պայմանավորված արարքում հանցակազմի առկայության մասին իրավական գնահատական չի արվել:

Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն իրականացվել անհրաժեար միջոցներ (քննչական և դատարարական գործողություններ), որոնց պարգման նպարակով վարույթն իրականացնող մարմինն առաջին հերթին պերք է օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի գնահատման ենթարկի Հաղորդմամբ հայրնած րեղեկությունները հիմնավորող և հերքող փաստական արլյալները և ձեռնասնուի լինի գործի հանգամանքները բազմակողմանիորեն հիմնավորող փաստական արլյալների ձեռք բերմանը, ինչն իրավական հիմք կարեղծի առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը, հաղթահարելով համապարասիսան որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների անհրաժեար «շեմը», կայացնի լիարժեք հիմնավորված որոշում (...)⁶:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 4-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկարել, որ

⁵ Տն նյութեր, հատոր 1-ին, թերթեր 12-16:

⁶ Տն նյութեր, հատոր 1-ին, թերթեր 156-168:

Վարդգես Չարիֆֆալականի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու վերաբերյալ նախնական արուգում չի իրականացվել և հանցագործության մասին հաղորդմամբ նշված ենթադրյալ այդ հանցավոր արարքի հանցակազմի ստեղծության կամ բացակայության հանգամանքին իրավական գնահատական չի տրվել: Այդ մասին Առաջին աստիճանի դադարանում սույն բողոքի քննության ընթացքում փաստել է նաև քննիչը նշելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նյութեր նախապայարարաբերելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ հիմքեր չեն եղել:

Վերաքննիչ դադարանը անդրադառնալով Երևանի կայագրի գինվորական դադարանագ Ա.Ասրունյանի «Բողոքն ամբողջությամբ մերժելու և քրեական գործ հարուցելը մերժելու որոշման օրինականությունը հաստատելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմանը, գրնում է, որ ՀՀ քրեական դադարանության օրենսգրքի 53-րդ և 185-րդ հոդվածների իրավակարգավորումներից հետևում է, որ Դադարանագը քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի և քննիչի որոշման օրինականությունը արուգելիս լիազորված է հաստատել կամ վերացնել այդ որոշումը, վերջին դեպքում նաև հարուցել քրեական գործ, և լիազորված չէ ինքնուրույն պատճառաբանել, ստավել ևս իրավական գնահատման արժանացնել այն արարքները, որոնց վերաբերյալ ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ նախապայարարված նյութերով վարույթն իրականացնող մարմինը իրավական գնահատական չի տրվել (...):

Վերաքննիչ դադարանը ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ չորրորդ կայագրային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Թադևոսյանի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 2019 թվականի հուլիսի 8-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելով, գալիս է այն եզրահանգման, որ դիմողի ներկայացուցչի հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ իրականացված նախնական արուգման արդյունքում վարույթն իրականացնող մարմնին ենթադրյալ հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու ուղղությամբ միջոցառումներ չի ձեռնարկել, նշված հանցագործության դեպքի ստեղծության կամ բացակայության, դրանով պայմանավորված արարքում հանցակազմի ստեղծության մասին իրավական գնահատական չի տրվել (...):⁷:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

⁷ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 34-42:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում չեն պատճառաբանել, թե որ անձի որ իրավունքն է խախտվել և ինչու է այն դրսևորվել, ինչպես նաև որպես իրավունքի խախտում արձանագրելով վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշակի գործողություններ չկատարելը՝ դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտի շրջանակներից՝ արդյունքում կայացնելով չհիմնավորված և անօրինական դատական ակտեր:

Ավելին, բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները, վարույթն իրականացնող մարմնի համար սահմանելով քրեական գործ հարուցելու պարտականություն, հաշվի չեն առել, որ նյութերի նախապատրաստման ընթացքում քննիչի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, որոնք իրենց ամբողջության մեջ բավարար են եղել Վ.Չարխիֆալակյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայությունը փաստելու համար:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, վերլուծելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրերը և գնահատելով սույն քրեական գործում առկա փաստական տվյալները, նշել է, որ նախագորակոչային տարիքի հասած արական սեռի քաղաքացու կողմից գինևումիաարիատ չներկայանալը և չկցագրվելը չի կարող դիտվել վերոգրյալ հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորում, ուստի Վ.Չարխիֆալակյանը չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ:

Անդրադառնալով Վ.Չարխիֆալակյանի արարքը գնահատականի չարժանացնելու մասին ստորադաս դատարանների պնդումներին, բողոքաբերն ընդգծել է, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում տրված ձևակերպումներից ակնհայտ է, որ քննիչի կողմից քննարկվել է Վ.Չարխիֆալակյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը, և վերջինիս անունը որոշման եզրափակիչ մասում չշեշտելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ նշված որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու համար:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ՝ հաստատելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք քրեական գործի հարուցումը

մերժելու մասին Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝
«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Վճռաբեկ դատարանը Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Դ]ատարանը մինչդարձևական վարույթի նկատմամբ դատարանական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատարանական ակտում պետք է հստակ պարզաբանում»

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեատարավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչու է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել⁸:

13.1. Մինևույն ժամանակ անդրադառնալով քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանը Միրվարդ Գևորգյանի գործով նշել է, որ պայմանավորված դատական վերահսկողության խնդիրներով դրանք ընդգրկում են հետևյալ հարցադրումները.

«ա) արդյոք պահպանվել են «Քրեական գործ հարուցելը» վերառությունը կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զեպրեղված պահանջները,

բ) արդյոք վիճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված րվյալների ամբողջությանը,

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱԲԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

զ) արդյոք ձեռք են բերվել ողջամրորեն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար,

դ) վեր հանված խախտումներն արդյոք հանգեցրել են անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտման»⁹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Նախաքննության մարմինը Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Վ.Չարխիֆալակյանի կողմից գինեհաշվառումից դուրս մնալու պարագայում Արաբկիրի գինկոմիսարիատի առանձին աշխատակիցները դիտավորություն կամ անվտանգություն չեն դրսևորել, քանի որ մինչև Վ.Չարխիֆալակյանի գորակոչային տարիքը լրանալը՝ 27 տարեկանը, վերջինս գինկոմիսարիատ չի ներկայացել, և գինկոմիսարիատը նրա վերաբերյալ համապատասխան մարմիններից տեղեկություններ չի ստացել, վերջինս 1992 թվականի ծնված արական սեռի ներկայացուցիչների հաշվառման այբբենական գրքում ընդգրկված չէ, որպիսի պայմաններում հիշյալ փաստով բացակայում է հանցակազմը¹⁰:

– Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքն Առաջին ատյանի դատարանը բավարարել է այն հիմնավորմամբ, որ վարույթն իրականացնող մարմինը ենթադրյալ հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չի ձեռնարկել, նշված հանցագործության դեպքի առկայության կամ բացակայության, և դրանով պայմանավորված արարքում հանցակազմի առկայության մասին իրավական գնահատական չի տվել: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է նաև, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի գնահատման ենթարկի հաղորդմամբ հայտնած տեղեկությունները և ձեռնամուխ լինի գործի հանգամանքները բազմակողմանիորեն հիմնավորող փաստական տվյալների ձեռքբերմանը, ինչն իրավական հիմք կհանդիսանա լիարժեք հիմնավորված որոշում կայացնելու համար¹¹:

– Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, իր հերթին փաստել է, որ Վ.Չարխիֆալակյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործություն կատարելու վերաբերյալ նախնական ստուգում չի իրականացվել և հանցագործության մասին հաղորդմամբ նշված ենթադրյալ հանցավոր արարքի հանցակազմի առկայության կամ բացակայության հանգամանքին իրավական գնահատական չի տրվել¹²:

⁹ Տնն Վճռաբեկ դատարանի՝ Միլիարդ Գևորգյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:

¹⁰ Տնն սույն որոշման 6-րդ կետը:

¹¹ Տնն սույն որոշման 8-րդ կետը:

¹² Տնն սույն որոշման 9-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում հստակ չեն պատճառաբանել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումն ինչու է դրսևորվել և Նախաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2019 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ դիմող Մ.Բանդիկյանի ո՞ր իրավունքները կամ ազատություններն են խախտվել:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ ներկայացված բողոքը բավարարելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելիս, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ձեռք բերված տվյալները, մասնավորապես ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ու համապատասխան տարածքային գինկոմիսարիատ կատարված հարցման արդյունքները, գինվորական կոմիսարիատի աշխատակցի բացատրությունը, որոնք հիմք են տալիս փաստելու, որ Վ.Չարխիֆալակյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ հատկանիշներ, այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր առկա չեն: Հետևաբար, այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկին, որ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար են եղել Վ.Չարխիֆալակյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության մասին հետևության հանգելու համար, ինչի մասին իրավաչափորեն նշել է նաև Նախաքննության մարմինը՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ¹³:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության ու հիմնավորվածության ստուգման ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ

¹³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հողվածի՝ հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Միննույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Ս.Աղվանյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Մասիս Բանդիկյանի ներկայացուցիչ Ս.Աղվանյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դիմող Մ.Բանդիկյանի ներկայացուցիչ Ս.Աղվանյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0315/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

8 ապրիլի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Արսեն Վարդգեսի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 1. 2016 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնում «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրինության կողմից առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 83181816 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել նույն մարմնի քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Արսեն Վարդգեսի Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք

է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի հուլիսի 26-ին նախաքննության մարմնի կողմից որոշում է կայացվել Ա.Ավետիսյանին և «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև բանկային հաշվեհամարների վրա 683.723.073 ՀՀ դրամի չափով կալանք դնելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2017 թվականի նոյեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարշալ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 26-ի դատավճռով Ա.Ավետիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցադեպի բացակայության հիմքով: Նույն որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրող Դ.Կարապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից *Արսեն Ավետիսյանին* ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա հանդիսանալով օրային բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ոլորտում ծառայությունների մատուցման գործունեություն իրականացրած, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՀ թիվ 3-րդ բաժնում

(նախկին Կենտրոնի ՀՏ) հաշվառված և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գևորգ Քոչար փողոցի թիվ 21 հասցեում գործունեություն ծավալած «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենն ու ղեկավարելով այդ կազմակերպության գործունեությունը, համաձայն ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պարտիրակելու կարգը հաստատելու մասին» 2009 թվականի մարտի 12-ին ընդունված թիվ 268-Ն որոշման և դրան կից Հայաստանի Հանրապետության օդային ուղևորների ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պարտիրակելու մասին կարգի, որպես «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն պարտավորված լինելով գանձել ՀՀ-ից մեկնող ֆիզիկական անձանց վաճառված ավիատոմսերից առաջացած պետական տուրքի գումարները ու դրանք վճարել պետական բյուջե, 2014 թվականի ընթացքում իրականացրել է ուղևորափոխադրումներ, գանձել 681.923.052 դրամի չափով պետական տուրքի գումար և պետության կողմից իր ղեկավարած կազմակերպությանը փաստացի վարահված առանձնապես խոշոր չափերի՝ 681.923.052 դրամ գումարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական բյուջե վճարելու փոխարեն յուրացման եղանակով համաշրջակ է այն սեփական հայեցողությամբ տնօրինելով ամբողջ գումարը»¹:

6. Առաջին առյուծի դատարանը 2019 թվականի հուլիսի 26-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Առաջադրված մեղադրանքով խեղաթյուրվել է մի շար կարևոր փաստ, այն է՝ այս դեպքում ոչ թե պետությունն է այս դեպքով ինչ որ գույք վարահել Ա.Ավերիսյանին, այլ ավիաընկերության գործունեության արդյունքում է հենց առաջացել այդ արժեքը, ակտիվը՝ գույքը, որը հանդիսանում է օրի տուրքի գումար՝ ելքակա վճարման պետությանը:

Անբասարանյալ Արսեն Ավերիսյանի վարահությանը հանձնված գույքն իր կամ մեկ այլ անձի սեփականությունը չի դարձրել, այդ գույքը դուրս չի բերել սեփականատիրոջ գույքային ընդհանուր ֆոնդից և չի ընդգրկել իր սեփական գույքային ֆոնդի մեջ և վերջապես շահադիպական դրողումներով այն չի յուրացրել, ինչպես իր, այնպես էլ մեկ այլ անձի օգրին: Ավելին՝ հայտնվելով ֆորամատորային իրավիճակում անբասարանյալ Արսեն Ավերիսյանը բանկում գրավադրել է իր և իր ընտանիքի անդամներին պարկանող անշարժ և շարժական գույքը և ողջ գումարը ուղղել ընկերությունը պահպանելուն, իսկ ինչու ոչ նաև նախկինում ներդրած մեծ գումարները չկորցնելու համար: Ավելին յուրացման հանցակազմի սուբյեկտի կողմը դրսևորվում է միմիայն ուղղակի դիմավորությամբ: Վերոգրյալի լույսի ներքո՝ Դատարանը արձանագրում է, որ քրեական գործի քննությամբ ավելի քան հիմնավորված է, որ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ում գեթ մեկ լույս չի ելքագրվել ընկերության դրամարկից կամ հաշվարկային հաշվից՝ առանց նպատակային նշանակության և վերջինս հիմնավորող փաստաթղթերի:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 268-269:

Մեղադրանքի հիմքում ընկած է առաջին հերթին հենց պետության իսկ կողմից ընկերության հանդեպ սրանձնած պարտավորությունների չկատարումը համաձայն 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1248Ա կառավարության որոշման: Դա է վկայում ամբաստանյալ Արսեն Ավերիսյանի կողմից բարձրաստիճան պաշտոնատար անձանց հղած բազմաթիվ դիմումները կապված առաջացած ինտրի հետ և դրա արդյունքում էլ պետական լիազոր մարմնի կողմից «Էյր Արմենիա» ընկերության հետ կնքած պարտքի մարմնան ժամանակացույցը և դրա մի մասի կատարումը ընկերության կողմից:

(...)

Շարադրվածից հնարավոր է կատարել միայն մեկ հետևություն, որ այս գործով բացակայում է ՀՀ Վճռաբեկ դատարանի (...) նախադեպային որոշումներով սահմանված՝ ամբաստանյալ Արսեն Ավերիսյանի մեղքը հիմնավորող, հիմնավոր կասկածից վեր սպացույցների բավարար համակցությունը, մասնավորապես՝ դատաքննությանը հետազոտված սպացույցներով չի հիմնավորվել ամբաստանյալ Արսեն Ավերիսյանին մեղաազրվող արարքի հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի մեջ մտնող և սպացուցման ենթակա հանգամանքներից ոչ մեկը, այն, որ.

– օգրագործելով իրեն վարսահված գույքի նկարմամբ ունեցած լիազորություններն այդ գույքը դուրս է բերում սեփականատիրոջ գույքի ընդհանուր ֆոնդից և դարձնում իր գույքի մաս, փաստորեն հանցավորը նախապես այդ գույքն առանձնացնում է սեփականատիրոջ գույքային ֆոնդից և ընդգրկում իր գույքային ֆոնդի մեջ (...):

Այսպիսով, սրուգելով ամբաստանյալ Արսեն Ավերիսյանի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ գործով ձեռք բերված սպացույցները դրանց վերլուծության, այլ սպացույցների հետ համադրելու միջոցով, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ Դատարանը գրնում է, որ պետք է ճանաչել և հոշակել ամբաստանյալ Արսեն Ավերիսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում՝ հանցադեպի բացակայության հիմքով (...):²:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանի կողմից դատաքննությամբ հետազոտված սպացույցների հիման վրա գնահատելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ փյլյալ պարագայում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ ի դեմս հանցակազմի օբյեկտիվ, հետևարար նաև սուբյեկտիվ կողմի (...): Ոստի Վերաքննիչ դատարանը վերը նշված և ամբաստանյալի նկարմամբ

² Տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 87-124:

արդարացման դատավճիռ կայացնելու մասով իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դատարանի հետևություններին:

Տվյալ դեպքում առերևույթ առկա է համապարասիան կազմակերպության կողմից իր սրանձնած քաղաքացիաիրավական պարտականությունները չկատարելու մասով քաղաքացիաիրավական բնույթի վեճ և սրանձնած գույքային պարտավորությունների չկատարումը չի կարող հիմք հանդիսանալ քրեադատարանական կառուցակարգի կիրառման (...):

(...) Ինչ վերաբերվում է Առաջին արյանի դատարանի այն հետևություններին, որոնք վերաբերվում են համապարասիան գույքը անձին հանձնված չլինելու և հանցադեպի բացակայության վերաբերյալ փաստարկներին, թեև դրանք էության մեջ անհիմն են, սակայն այն փաստի հաշվառմամբ, որ տվյալ դեպքում բացակայում է համապարասիան հանցակազմը, մասնավորապես հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմը, տվյալ դեպքում բավարար չեն արդարացման դատական ակտը բեկանելու համար: Եվ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալը պետք է արդարացվի միայն հանցակազմի բացակայության հիմքով:

(...) Անհոտիելով (...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ բողոքարկված դատական ակտով ամբաստանյալին համապարասիան հորվածով արդարացնելու վերաբերյալ Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնավորված են ու բավարար չափով պարճատարանված, Առաջին արյանի դատարանի կողմից թույլ չի տրվել այնպիսի դատական սխալ, որն ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա: Ուստի բողոքարկված դատական ակտը բեկանելու իրավաչափի հիմքեր չկան, (...) այն պետք է թողնել անհոտիելու, իսկ դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել (...)³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դրանով թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որպիսի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» 2009 թվականի մարտի 12-ի թիվ 268-Ն որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը, ինչպես նաև դրա վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ *Մուսկ Լսկավյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ Հայաստանի Հանրապետության և «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 102-121:

ընկերության միջև ծագած իրավահարաբերությունը կրում է ոչ թե մասնավոր՝ քաղաքացիաիրավական բնույթ, ինչպես նշվել է ստորադաս դատարանների դատական ակտերում, այլ հանրային՝ վարչաիրավական բնույթ, քանի որ հիշյալ իրավահարաբերությունը ծագել է պետության գործադիր-կարգադրիչ գործունեության բնագավառում, և Հայաստանի Հանրապետությունը տվյալ դեպքում հանդես է եկել ոչ թե հավասար հիմունքներով, այլ որպես իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որը մյուս կողմի հետ իր հարաբերության բովանդակությունը որոշել է միակողմանի կամահայտնությամբ, ուստի Ա.Ավետիսյանի արարքին անհրաժեշտ էր իրավական գնահատական տալ՝ հաշվի առնելով ոչ թե քաղաքացիաիրավական, այլ վարչաիրավական հարաբերությունների առանձնահատկությունները:

8.1. Վերոնշյալի հիման վրա, անդրադառնալով յուրացման հանցակազմի օբյեկտիվ կողմին՝ բողոք բերած անձը հայտնել է, որ տվյալ դեպքում պետության կողմից իր բացառիկ՝ պետական տուրքի գանձման լիազորության պատվիրակման արդյունքում «հիմնական» գույքային ֆոնդից բացի ձևավորվել է նաև վերջինիս մասը կազմող, սակայն առանձնացված «միջանկյալ» գույքային ֆոնդ, որի նպատակը պետության գույքը, տվյալ դեպքում՝ պետական տուրքը, պետության «հիմնական» գույքային ֆոնդ ուղղելն է: Մինչդեռ, Ա.Ավետիսյանը, իրավական ակտի ուժով պարտավորված լինելով պետության «միջանկյալ» գույքային ֆոնդում եղած գույքը պետական տուրքը, սահմանված ժամկետում փոխանցել պետության «հիմնական» գույքային ֆոնդ, չի կատարել դա՝ այդպիսով առանձնացնելով այն պետության գույքային ֆոնդից, այնուհետև միացնելով այն կազմակերպության գույքային ֆոնդին՝ վերջինիս հետ միասին իր հայեցողությամբ որոշել է դրա փաստացի ճակատագիրը, այսինքն՝ տնօրինել է այն՝ ուղղելով «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ընթացիկ ծախսերը հոգալուն: Ընդ որում, հիշյալ գործողությունները կատարվել են կազմակերպությունը պահպանելու և նախկինում ներդրած մեծ գումարները չկորցնելու նպատակով, ինչն էլ վկայում է հիշյալ գործողությունները շահադիտական դրդումներով կատարելու մասին, քանի որ վերջինիս դիտավորությունն ուղղված է եղել կազմակերպության բնականոն ձեռնարկատիրական գործունեությունն ապահովելուն, իսկ ցանկացած ձեռնարկատիրական գործունեության նպատակը շահույթ ստանալն է:

8.2. Բացի այդ, բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ Ա.Ավետիսյանի ֆորսմաժորային իրավիճակում հայտնվելը, պետության կողմից ընկերության հանդեպ ստանձնած պարտավորությունները չկատարելը, ինչպես նաև պարտքի մարման ժամանակացույց կազմելը որևէ իրավական նշանակություն չեն կարող ունենալ ամբաստանյալի արարքում յուրացման հանցակազմի հատկանիշների բացակայությունը հաստատելու հարցում, և կարող են վկայել ընդամենը «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնտեսական գործունեության վատթարացման և դրա պատճառների, ինչպես նաև հանցանքն ավարտելուց հետո հանցավորի բարեխիղճ վարքագծի մասին:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 25-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում Ա.Ավետիսյանին արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«1. Յուրացնելը կամ վարսնելը՝ հանցավորին վարսահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝ [պարծվում է համապարասիսան պարժաչափով]:*

(...)

3. *Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝*

1) *առանձնապես խոշոր չափերով՝ [պարծվում է համապարասիսան պարժաչափով]:»:*

12. Յուրացման հանցակազմի և դրա հատկանիշների մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Սևակ Լսկալյանի* գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) Յուրացումը սեփականության անվրանգությունն սպասողող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործություն է, որը դասվում է հափշտակությունների շարքին: Յուրացման օբյեկտիվ կողմն արտահայտվում է հանցավորի կողմից իր լիազորությունների գործադրմամբ վարսահված գույքն սպորինի, անհատույց, շահադիտական նպատակով իրենք կամ մեկ ուրիշինը դարձնելով: Այսինքն՝ յուրացման դեպքում հանցավորը գույքն առանձնացնում է դրա սեփականատիրոջ գույքային ֆոնդից և միացնում իր կամ մեկ ուրիշի գույքային ֆոնդին՝ օգտագործելով այն լիազորությունները, որոնք նրան վերապահված են եղել այդ գույքի նկատմամբ: Այդ հանգամանքն ունի առանձնահատուկ նշանակություն անձի արարքում յուրացման հանցակազմի օբյեկտիվ կողմի հարկանիշների առկայության հարցը քննարկելիս: Այդ համարեքարում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հափշտակության առարկան հանցավորի ունեցած լիազորությունների ուժով առնվազն պետք է հանձնված լինի հանցավորի տիրապետությանը: Ընդ որում, այդ լիազորությունները պետք է բխեն որոշակի փաստական փյուռներից և պայմանավորված լինեն հանցավորի պարտականություններով, հատուկ հանձնարարություններով կամ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի դրույթներով:*

Սուբյեկտիվ կողմից հանցավորի դիտարկությունն ուղղված է լինում իրեն վարսահված գույքը հափշտակելուն: Հանցավորը գործում է ուղղակի դիտարկությամբ և շահադիտական դրոշմներով: Այսինքն՝ հանցանք կատարող անձը գիտակցում է իր կողմից ուրիշի գույքը յուրացնելու հանրության համար վրանգավոր բնույթը, նախատեսում և ցանկանում է իրեն վերապահված

լիազորությունների գործադրմամբ նյութական արժեքները սեփականատիրոջ գույքային ֆոնդից միացնել իր գույքային ֆոնդին (...)⁴:

13. Վերահաստատելով վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ յուրացումը՝ որպես հափշտակության եղանակ, բնութագրվում է հափշտակության ընդհանուր հատկանիշներով, մասնավորապես՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց և շահադիտական նպատակով հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով, եթե վերջինս գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել⁵:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ յուրացումը համարվում է ավարտված, երբ հանցավորը, օգտագործելով իր օրինական տիրապետման ներքո գտնվող ուրիշի գույքի նկատմամբ իրեն վերապահված լիազորությունները, այն դարձնում է իրենը, ներառում իր սեփականության ֆոնդի մեջ: Այլ խոսքով՝ յուրացումն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորին վստահված գույքի օրինական տիրապետումը դառնում է ապօրինի, հանցավորն առանց դրա օրինական հիմքերի և սեփականատիրոջ համաձայնության այն ներառում է իր գույքային ֆոնդի մեջ՝ իրական հնարավորություն ունենալով ազատորեն և սեփական հայեցողությամբ տնօրինել կամ օգտագործել այն, որոշել դրա «ճակատագիրը»: Ընդ որում՝ յուրացման հանցակազմի համար նշանակություն չունի, թե գույքն իր սեփականության ֆոնդի մեջ ներառելուց հետո անձն ինչպես և ինչ նպատակով է այն տնօրինելու կամ դրա հետ վարվելու. այդպիսիք կարող են էական նշանակություն ունենալ, օրինակ, արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու հանցավորի անձը գնահատման ենթարկելիս: Ավելին՝ արարքի որակման համար պարտադիր չէ նաև, որ հանցավորը գույքն անձնապես տնօրինի:

14. Միևնույն ժամանակ, անդրադառնալով յուրացման հանցակազմը մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարումից սահմանազատելու անհրաժեշտությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանցավորի կողմից իրեն վստահված գույքի հափշտակմամբ բնութագրվող յուրացման հանցակազմը չի կարող նույնացվել մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարման հետ, երբ կնքված պայմանագրով սահմանված կարգին համապատասխան քաղաքացիական իրավունքի օբյեկտը պարտավորական իրավահարաբերության մի սուբյեկտի կողմից չի հանձնվում մյուսին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքի սեփականատիրոջ իրավունքների ենթադրյալ խախտումների կապակցությամբ

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սևակ Լսկավյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0303/01/16 որոշման 12.1-րդ կետը:

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Ղամբարյանի և մյուսների* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12, *Գրիգոր Ղլիջյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ5/0005/01/14 որոշումները:

քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմերի գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու, քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտի շուրջ ձևավորված վեճը լուծելու համար⁶:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, որպես «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, պարտավորված լինելով գանձել և պետական բյուջե վճարել Հայաստանի Հանրապետությունից մեկնող ֆիզիկական անձանց վաճառված ավիատոմսերից առաջացած պետական տուրքի գումարները, 2014 թվականի ընթացքում իրականացրել է ուղևորափոխադրումներ, գանձել 681.923.052 դրամի չափով պետական տուրքի գումար և պետության կողմից իր ղեկավարած կազմակերպությանը փաստացի վստահված առանձնապես խոշոր չափերի՝ 681.923.052 դրամ գումարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական բյուջե վճարելու փոխարեն յուրացման եղանակով հափշտակել է՝ սեփական հայեցողությամբ տնօրինելով այն⁷:

Առաջին ատյանի դատարանը, առաջադրված մեղադրանքում Ա.Ավետիսյանին արդարացնելով, արձանագրել է, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել ամբաստանյալին մեղսագրվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի մեջ մտնող և ապացուցման ենթակա հանգամանքներից ոչ մեկը, այն, որ Ա.Ավետիսյանն օգտագործելով իրեն վստահված գույքի նկատմամբ ունեցած լիազորությունները՝ նախապես այդ գույքն առանձնացրել է սեփականատիրոջ գույքային ֆոնդից և ընդգրկել իր գույքային ֆոնդի մեջ⁸:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավորված են ու բավարար չափով պատճառաբանված, Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չի տրվել այնպիսի դատական սխալ, որն ազդել կամ կարող էր ազդել գործի ելքի վրա:

Վերաքննիչ դատարանը նաև արձանագրել է, որ տվյալ դեպքում առերևույթ առկա է համապատասխան կազմակերպության կողմից իր ստանձնած քաղաքացիաիրավական պարտականությունները չկատարելու մասով քաղաքացիաիրավական բնույթի վեճ, և ստանձնած գույքային

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սևակ Լսկավյանի* գործով վերը հիշատակված որոշման 12-12.3-րդ կետերը:

⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

պարտավորությունների չկատարումը չի կարող հիմք հանդիսանալ քրեադատավարական կառուցակարգի կիրառման համար⁹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-14-րդ կետերում մեջբերված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքում արդարացնելով, պատշաճ վերլուծության և իրավական գնահատականի չեն արժանացրել սույն քրեական գործով հաստատված փաստական տվյալների ամբողջությունը:

Այսպես՝ սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև ծագած իրավահարաբերություններն իրենց բնույթով հանրային են, դրանք ծագել են ոչ թե կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված պայմանագրից կամ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պարտավորական իրավահարաբերությունների ծագման այլ հիմքերից, այլ ՀՀ Կառավարության կողմից 2009 թվականի մարտի 12-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» թիվ 268-Ն որոշումից: Այսպես՝ վերոնշյալ որոշմամբ պետությունն իր՝ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձման լիազորությունը Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողների կողմից օդային փոխադրումների իրականացման դեպքում պատվիրակել է Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողներին՝ վերջիններիս պարտավորեցնելով հաշվարկել և սահմանած կարգով ու ժամկետում պետական բյուջե փոխանցել պետական տուրքի գումարները: Այսինքն՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավահարաբերության սուբյեկտ, ավիափոխադրողի հետ հանդես է եկել ոչ թե հավասար հիմունքներով, այլ որպես իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որն իրավական նորմի ուժով՝ միակողմանի կարգադրությամբ որոշել է մյուս կողմի հետ իր հարաբերության բովանդակությունը:

Վերոնշյալ հանգամանքը ցույց է տալիս, որ «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության՝ ի դեմս տնօրեն Ա.Ավետիսյանի և Հայաստանի Հանրապետության միջև ծագած իրավահարաբերությունն ունեցել է հետևյալ բովանդակությունը. Ա.Ավետիսյանը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած ավիափոխադրող «Էյր Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենը, ենթաօրենսդրական ակտի ուժով պարտավորված

⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

է եղել գանձել և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում պետական բյուջե փոխանցել ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գումարները: Այսինքն՝ Ա.Ավետիսյանին պատկանող ավիաընկերությունը տվյալ իրավահարաբերության շրջանակներում կատարել է բացառապես միջնորդական դեր, այն է՝ ի կատարումն պետության կողմից իրեն պատվիրակված լիազորության, ապահովել է ավիատոմսի վճարի բաղկացուցիչ մասը կազմող և իր կողմից գանձվող պետական տուրքի վճարը պետության ֆոնդ ուղղելու պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով ստորադաս դատարանների այն դատողությանը, թե ամբաստանյալ Ա.Ավետիսյանի վստահությանը հանձնված գույքը դուրս չի բերվել սեփականատիրոջ գույքային ընդհանուր ֆոնդից և չի ընդգրկվել իր սեփական գույքային ֆոնդի մեջ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրացման հանցակազմի օբյեկտիվ կողմի արտաքին հատկանիշների դրսևորման տեսանկյունից սույն գործով էական համարվել չի կարող այն փաստը, թե տվյալ գույքը դուրս է բերվել արդեն իսկ պետության գույքային ֆոնդում գտնվող միջոցներից, թե ենթաօրենսդրական ակտի ուժով պարտադիր կերպով հոգուտ պետության գանձման ենթակա պետական տուրքերից, որոնցից էլ գույացած միջոցները փաստացի կազմում են պետությանը պատկանող ֆոնդին պարտադիր կերպով փոխանցման ենթակա գումարներ: Այլ խոսքով՝ այն պայմաններում, երբ պետության կողմից ավիափոխադրողին պատվիրակված է եղել հավաքագրելու և պետությանը փոխանցելու վաճառված ավիատոմսերից գանձված պետական տուրքերը, դա նշանակել է, որ դրանց հանրային սկզբունքները գտնված է եղել կազմակերպության հաստիքից, և թեև ուղղակիորեն չի ներառվել պետական ֆոնդի մեջ, սակայն ենթակա է եղել փոխանցման պետության ֆոնդին, իսկ մուտքագրված միջոցները չէին կարող տնօրինվել այլ կերպ, քան պետության ֆոնդ ուղղելու ձևով:

16.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, սույն որոշման 13-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից մատնանշված՝ Ա.Ավետիսյանի ֆինանսական բարդ իրադրության մեջ հայտնվելու, պետության կողմից ընկերության հանդեպ ստանձնված պարտավորությունները չկատարելու, «Էյր Արմենիա» ընկերությունում առանց նպատակային նշանակության «գեթ մեկ լումա» չելքագրվելու, ինչպես նաև պետական լիազոր մարմնի կողմից «Էյր Արմենիա» ընկերության հետ պարտքի մարման ժամանակացույց կազմելու և դրա մի մասն ընկերության կողմից կատարելու հանգամանքներին, Վճռաբեկ դատարանը դրանց առնչությամբ իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի՝ սույն որոշման 8.2-րդ կետում հայտնված փաստարկներին և գտնում, որ դրանք որևէ իրավական նշանակություն չէին կարող ունենալ ամբաստանյալի արարքում յուրացման հանցակազմի հատկանիշների առկայությունը բացառելու համար:

17. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել վերջինին պատկանող՝ «Էյր Արմենիա» ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև ձևավորված իրավահարաբերությունների բնույթն ու այդ համատեքստում տվյալ կազմակերպությանը՝ ենթաօրենսդրական ակտի ուժով վստահված ու փաստացի պետության ֆոնդին ուղղման ենթակա միջոցների տնօրինման հանգամանքները՝ նյութաիրավական նորմի մեկնաբանման հարցում հանգելով սխալ եզրահանգման:

Ուստի, հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

18. Անփոփելով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստի դատարանի դատական ակտը, թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, մասնավորապես, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը, ինչն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում, Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Ա.Ավետիսյանի արարքի քրեաիրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արսեն Վարդգեսի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արսեն Վարդգեսի Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0025/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

8 ապրիլի 2022 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռով Վահրամ Ֆիոդորի Մկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով: Վճռվել է նաև տուժողի իրավահաջորդ Ֆերդինանտ Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Դազարյանի ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն և պատասխանող «Ռոսգոստորախ Արմենիա» ՓԲԸ-ից բռնագանձել 5.033.376 ՀՀ դրամ, որից 1.776.000 ՀՀ դրամը՝ որպես

ավտոմեքենային պատճառված վնասի, իսկ 3.257.376 ՀՀ դրամը՝ տուժող Արտյոմ Ֆերդինանտի Նիկոյանի առողջության վերականգնմանն ուղղված ծախսերի հատուցում: Հայցի մնացած մասը թողնվել է առանց քննության:

2. Վերոնշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Մկոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճել է և Վ.Մկոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Տուժողի իրավահաջորդ Ֆերդինանտ Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ՝ քաղաքացիական հայցի մասով, տուժողի իրավահաջորդ Ֆերդինանտ Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշմամբ վարույթ ընդունելը մերժվել է:

4. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Վ.Էլքալյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հաղորդման հիման վրա՝ առ այն, որ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 2017 թվականի ապրիլի 5-ին, տուժող Արտյոմ Նիկոյանը մահացել է, Արագածոտնի մարզի դատախազության դատախազ Վ.Ղազարյանի՝ 2017 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ, նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցվել է վարույթ, որով քննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությանը:

5. Արտյոմ Նիկոյանի մահվան վերաբերյալ նոր երևան եկած հանգամանքի քննության արդյունքներով Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազ Վ.Մելքոնյանի կողմից 2019 թվականի օգոստոսի 26-ին կազմված եզրակացության հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը 2019 թվականի սեպտեմբերի 16-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ խնդրելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով Առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցվել է դատական ակտի վերանայման վարույթ և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

6. Վճռաբեկ դատարանն ղիմում է ներկայացրել Վահրամ Մկոյանը՝ խնդրելով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

7. Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 26-ին որոշում է կայացրել ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու մասին:

Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 14-ի թիվ ՄԴԱՌ-10 աշխատակարգային որոշմամբ «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժվել է:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Առաջին առյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռով Վահրամ Մկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքի համար, որ նա «2014 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, իր վարած «Տոյոտա 4 Ռոնեո» մակնիշի 34 ՍՄ 551 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով դեպի Գյումրի քաղաք երթևեկելիս Արմավիր-Գյումրի ավտոճանապարհի 44-րդ կմ հասրվածում իր երթևեկության համար վրանգավոր իրադրության առաջացման, այն է՝ շուրջ 80-150մ հեռավորությունից հայրնաբերելով, որ հանդիպակաց երթևեկող Արյոյոմ Նիկոյանի վարած «Օպել Վեկորա» մակնիշի 34 ՆԶ 198 հաշվառման համարանիշի ավտոմեքենան երթևեկում է իր երթևեկելի դեպի Գյումրի ուղեմասով, այդ պահից սկսած ժամանակին չձեռնարկելով անհրաժեշտ համապարասխան միջոցներ, առանց իր երթևեկության ուղղությունը փոխելու ժամանակին կարարած արգելակումով իր ավտոմեքենայի ընթացքի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ այն կանգնեցնելու ուղղությամբ, այլ իր երթևեկության համար վրանգավոր իրադրությունը հայրնաբերելով շարունակել է երթևեկությունը, ուշացած դիմել է արգելակման, մանևրել է դեպի ձախ, դրանով իսկ թույլ տրվել ՃԵԿ-ի 67-րդ պահանջին հակասող գործողություն, ինչի արդյունքում իր վարած ավտոմեքենան դուրս է բերել հանդիպակաց՝ դեպի Արմավիր երթևեկելի գուրի, որտեղ ընդհարվել է Արյոյոմ Նիկոյանի վարած «Օպել Վեկորա» մակնիշի 34 ՆԶ 198 հաշվառման համարանիշի ավտոմեքենային և Ա.Նիկոյանի առողջությանն անգոռչությամբ պարճառովել է ծանր մարմնական վնասվածք՝ կյանքին վրանգ սպառնացող»¹:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշման համաճայն՝ «Վերաքննիչ դատարանը, նկարի ունենալով, որ Վահրամ Մկոյանին մեղաազրվող ոչ մեծ ծանրության հանցագործությունն ավարտված համարելու օրվանից անցել է ավելի քան 2 տարի և Վերաքննիչ դատարանի տրամադրության տակ առկա չէ փաստական որևէ տրվալ այն մասին, որ քրեական սպարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքն ընդհարվել է նրա կողմից միջին ծանրության, ծանր կամ առանճասպես ծանր նոր հանցանքի կարարումամբ, ինչպես նաև Վահրամ Մկոյանը չի առարկում վաղեմության ժամկետներն անցնելու

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 122-123:

հիմքով իր վերաբերյալ քրեական գործի կարճմանն ու քրեական հետապնդման դադարեցման դեմ, գրնում է, որ պեք է թիվ ԱԲԱԴ/0025/01/15 քրեական գործի վարույթը կարճել և Վահրամ Մկրյանի նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցնել քրեական պարասիանարվոյան ենթարկելու վաղեմոյան ժամկետներն անցնելու հիմքով»²:

10. 2014 թվականի հունիսի 18-ին ավտովթարի ենթարկվելուց ու ծանր մարմնական վնասվածք ստանալուց հետո Ա.Նիկոյանը տարբեր ժամանակահատվածներում բուժում է ստացել «Իզմիրյան» և «Արմենիա» բժշկական կենտրոններում ու դեպքից շուրջ երեք տարի անց՝ 2017 թվականի ապրիլի 5-ին մահացել է³:

11. Նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում 2019 թվականի հունիսի 27-ին ստացվել է կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննույան թիվ 18-0374 եզրակացույթունը, համաձայն որի՝ «(...) «Խրոնիկական օարեումիելիդ, երկկողմանի րոուրալ թոքաբորբ՝ միկրոարքեաների սուաչացումով, էտրոգեն ինրոքսիկացիա, երկկամների ոլրոուն խողովակների ծանր դիարրոֆիա և նեկրոզ, լարդի հյուավածքում նեկրոզի րարածուն օաիաներ, րրամկանի ալրուց, անհավասարաչաի արյունալեցում՝ կարդիոմիոցիրների ֆրանգմենրացիայի և միոլիզի բազմաթիվ օաիաներով, թոքերի ալրուց, ամիլոիդոզ՝ երկկամների և փայծաղի աիարահարումով, Էրոզիդ գասրիիդ, «Անասարկա» աիարաբանական փոփոխույթունների համակցույթունն ինքնին կարող էր հանգեցնել Ա.Նիկոյանի մահվանը և աղայիսիք, երկելով ներկայացված բժշկական փաստաթղթերի րվյալներից, գրնելում են պարանտահերևանրային կապի մեջ 2014թ. արացված և թիվ 37/հ «Փորձագերի եզրակացույթուն» մեջ նշված մարմնական վնասվածքների և դրանց արդյունքում զարգացած հերվնասվածքային բարդույթունների հեր (...))»⁴:

12. Նույն օրը՝ 2019 թվականի հունիսի 27-ին, ստացվել է նաև լրացուցիչ հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննույան թիվ 18-1051 եզրակացույթունը, համաձայն որի՝ «Ա.Նիկոյանի դիակի աիարաբանասանարումիական ուսումնասիրույան ընթացքում կարարված հերագրույթունները՝ աղ թելում՝ դիահերձումը, իրականացվել է ճիշտ, թիվ 169 «Եզրակացույթուն» մեջ նկարագրված «Խրոնիկական օարեումիելիդ, երկկողմանի րոուրալ թոքաբորբ՝ միկրոարքեաների սուաչացումով, էտրոգեն ինրոքսիկացիա, երկկամների ոլրոուն խողովակների ծանր դիարրոֆիա և նեկրոզ, լարդի հյուավածքում նեկրոզի րարածուն օաիաներ, րրամկանի ալրուց, անհավասարաչաի արյունալեցում՝ կարդիոմիոցիրների ֆրանգմենրացիայի և միոլիզի բազմաթիվ օաիաներով, թոքերի ալրուց: Ամիլոիդոզ՝ երկկամների և փայծաղի աիարահարումով, Էրոզիդ գասրիիդ, «Անասարկա» աիարաբանական

² Տեն քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 31-36:

³ Տեն նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 14-18, 86:

⁴ Տեն նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 175-194:

փոփոխությունների համակցությունն ինքնին կարող էր հանգեցնել Ա.Նիկոյանի մահվան: (...)

Համադրելով ներկայացված՝ Ա.Նիկոյանի վերաբերյալ լրացված բժշկական փաստաթղթերի տվյալների, նրա դիակի ախտաբանաանատոմիական հետազոտության թիվ 169 «Եզրակացության» և սույն փորձաքննության իրականացման շրջանակներում կատարված հյուսվածքաբանական հետազոտությամբ ձեռք բերված տվյալների վերլուծության արդյունքները, հաշվի առնելով նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 37/հ «Փորձագետի եզրակացության» մեջ արձանագրված 18.06.2014թ. Ա.Նիկոյանի սրտացած մարմնական համակցված վնասվածքների բնույթը, տեղակայություններն ու ծանրության աստիճանը, մասնավորապես ծայրահեղ ծանր համակցված զանգուղեղային վնասվածքը և վնասվածքները սրանալու հաջորդող՝ մինչ 05.04.2017թ. նրա մահն ընկած ժամանակահատվածում հիմնականում դրանով և զույգ ազդրերի կոտրվածքներով պայմանավորված զարգացած ախտաբանական կայուն փոփոխությունների բնույթը, ընթացքի առանձնահատկությունները ու արտահայտվածության աստիճանները, գրնում ենք, որ հիմքեր չկան համարելու, որ «Արմենիա» ՀԲԿ-ում և «Իզմիրյան» ԲԿ-ում տարբեր ժամկետներում Ա.Նիկոյանին ցուցաբերված բուժօգնության ընթացքում թույլ են տրվել այնպիսի թերություններ կամ բացթողումներ, որոնք գրնվելին պատճառահետևանքային կապի մեջ նրա մահվան հետ»⁵:

Սահմանադրական դատարանում Վճռաբեկ դատարանի դիմումի քննությունը.

13. Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ փաստել է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը որպես նոր հանգամանք դիտարկելու իրավական հնարավորության բացակայությունն առաջացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության խնդիր: Ուստի առկա օրենսդրական բացի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել դիմել ՀՀ Սահմանադրական դատարան նշված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Դիմելով Սահմանադրական դատարան՝ Վճռաբեկ դատարանը միջնորդել է որոշել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 2-րդ մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը հաշվի առնելով, որ առկա օրենսդրական բացը սրեղծում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքի, սոցիալական արդարության վերականգնման և

⁵ Տե՛ս նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 197-216:

հասրուցում սրանսպու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մտադրու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման»:

14. Սահմանադրական դատարանը 2022 թվականի հունվարի 14-ի թիվ ՄԴԱՈ-10 աշխատակարգային որոշմամբ մերժելով Վճռաբեկ դատարանի դիմումով գործի քննությունը՝ փաստել է. «(...) Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «նոր երևան եկած» և «նոր» հանգամանքներով դատական ակտերի վերանայման/

հիմքերի փոքրերակումը րեսական մակարդակում միանշանակ չէ, ավելին՝ **վիճելի է**: Ընդ որում, այն, որ այդպիսի փոքրերակումը և, մասնավորապես, նոր երևան եկած հանգամանքի օբյեկտիվ իրականությունում մինչև դատական ակտի կայացումը գոյություն ունենալու հասկանալիչը ոչ միանշանակ է ընդունվում քրեական դատավարագիտության մեջ, ուղղակիորեն արտահայտվում է նաև Դիմողի մարանանշած աշխարհություններից մեկում՝ այլ աշխարհանքներից մեջբերվող րեսարանների «նոր երևան եկած» հանգամանքների սահմանումներում:

Որոշ գիտնականներ փոքրերակման հիմքում դնում են Դիմողի՝ վերը շարադրված մոտեցումը: Գիտնականների երկրորդ խումբը, հարելով այդ մոտեցմանը, այնուամենայնիվ, նկատում է, որ նոր երևան եկած հանգամանքները «որպես ընդհանուր կանոն» պետք է լինեն նոր ոչ թե ծագման ժամանակով, այլ նոր՝ քննիչի, դատախազի, դատարանի համար, երրորդ խումբն այդ հանգամանքների՝ դատարանին հայրնի չլինելը դիտարկում է և՛ որպես նոր, և՛ որպես նոր երևան եկած հանգամանքների հասկանալիչներ, չորրորդ խումբը՝ ելնելով կոնկրետ երկրի օրենսդրական կարգավորումներից՝ րարանջարման այլ րրամանություն է որդեգրել՝ նկատելով, որ ի փոքրերություն նոր երևան եկած հանգամանքների՝ նոր հանգամանքները չեն վկայում կայացված դատական ակտի արարավոր լինելու մասին, քանի որ դրանք կապված չեն որևէ մեկի հանցավոր շարաշահումների հետ: Միևնույն ժամանակ հեղինակների այս խումբն ընդգծում է, որ նոր հանգամանքները չեն հանդիսանում րացահայրված, այսինքն, թեև դրանք անմիջականորեն չեն բիւել գործի ներկայացված նյութերից, րայց և այնպես դրանք մինչ այդ ամբողջությամբ և խորքային թաքցված չեն եղել: Դրանք դատարանի համար նոր են համարվում, քանի որ նա չէր կարողացել դրանք ժամանակին հայրնաբերել, չնայած կողմերի րարձր ակտիվության կամ դատարանի խորաթափանցության և որակավորման պայմաններում դրա պրակտիկ հնարավորությունը կար: Հինգերորդ խումբը նոր երևան եկած հանգամանքներով վերանայումը պայմանավորում է գործի ճիշտ լուծման համար Էական նշանակություն ունեցող փաստի ի հայտ գալով և նկատում, որ, ի փոքրերություն դրանց՝ նոր հանգամանքները վերաբերում են իրավունքին: Նրանք ընդգծում են. եթե նոր երևան եկած հանգամանքով վերանայման համար

ատաջնային էր նոր ի հայտ եկած փաստը, սպա նոր հանգամանքով վերանայման համար կարևոր է փաստին փրված իրավական գնահատականը:

(...)

Վերոշարադրյալ պայմաններում Սահմանադրական դատարանի գնահատմամբ որևէ սահմանադրահրավական խոչընդոր սուկա չէ և չի ատաջանա Դիմողի կողմից բարձրացվող հարցն իր իրավունքի զարգացման և օրենքի միարեասկ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում լուծելու դեպքում»⁶:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

15. Ըստ բողոքաբերի՝ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութերից երևում է, որ ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած հանգամանքներ, որոնք ինքնին, ինչպես նաև՝ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալ Վ.Մկոյանի կատարած հանցանքի ավելի ծանր լինելը:

16. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի ընթացքում նշանակված և 2019 թվականի հունիսի 24-ին ավարտված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից երևում է, որ Ա.Նիկոյանի մահը գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ 2014 թվականին ստացած (փորձագետի թիվ 37/հ եզրակացության մեջ նշված) մարմնական վնասվածքների և դրանց արդյունքում զարգացած հետվնասվածքային բարդությունների հետ: Բողոքաբերը գտել է, որ հիշյալ հանգամանքն առերևույթ ապացուցում է, որ Վ.Մկոյանը կատարել է ավելի ծանր հանցանք, քան այն, որը նախկինում վերջինիս մեղաագրվել է: Այսինքն՝ ըստ բողոքաբերի՝ Վ.Մկոյանը կատարել է հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, այլ ոչ թե նույն հոդվածի 1-ին մասով, հետևաբար քրեական գործը նոր քննության նպատակով պետք է ուղարկվի առաջին ատյանի դատարան՝ Վահրամ Մկոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդման առումով համապատասխան գործընթաց իրականացնելու համար:

17. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ տուժող Ա.Նիկոյանը մահացել է քրեական գործով կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ինչը նշանակում է, որ դրանք կայացրած դատարանները, ինչպես նաև քրեական հետապնդման մարմինները չեն իմացել և չեն կարող իմանալ նշված հանգամանքի մասին:

18. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիորը և Վերաքննիչ դատարանի՝

⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 14-ի թիվ ՍԴԱՌ-10 աշխատակարգային որոշման 3.3-րդ, 3.4-րդ, 3.5-րդ կետերը:

2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

19. Արձանագրելով, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վրա հասած հետևանքները՝ որպես դատական ակտի վերանայման հիմք դիտարկելու առկայությամբ ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ դրանց հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան միանշանակ չեն, ինչը վտանգ է ստեղծում տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության, սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքների իրացման համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վրա հասած հետևանքների հիման վրա այդ դատական ակտի վերանայման հիմքի որոշակիացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր: Ուստի, նաև Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 14-ի թիվ ՄԴԱՌ-10 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ նույնաբնույթ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

I. Վճռաբեկ դատարանի որոշման վերանայումը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո տուժող Արտյոմ Նիկոյանի մահվան փաստը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշումը վերանայելու համար:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտնած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝*

(...)

4) ի հայր են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայր մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների

հեյր սպացուցում են դարսպարյայի անմեղոյոյունը կամ նրա կարարած հանցանքի նվազ ծանր կամ սվելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դարսպարյվել է, ինչպես նաև սպացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորոյոյունը, որի նկարմամբ քրեական հեյրասվորումը դարարեցվել է, կամ գործով վարոյթը կարմվել է (...):»:

21.1. Վճռաբեկ դատարանն անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին՝ իր նախադեպային իրավունքի շրջանակներում նշել է, որ այն, լինելով օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման բացառիկ եղանակ, հնարավորոյոյուն է տալիս ուղղել թոյլ տրված հնարավոր դատական սխալները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատոյոյունները: Նշված նպատակի կենսագործման համար նոր երևան եկած հանգամանքները, ի թիվս այլոց, հիմնականում բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

ա) պետք է հայտնի եղած չլինեն դատարանին դատական ակտ կայացնելիս՝ վերջինիս կամքից անկախ պատճառներով,

բ) պետք է գործի համար ունենան էական նշանակոյոյուն՝ պայմանավորված գործի ելքի վրա դրանց անմիջական ազդեցոյոյան հնարավորոյոյամբ,

գ) պետք է առերևոյթ կասկածի տակ դնեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափոյոյունը:

Նշված հատկանիշներին համապատասխանող նոր երևան եկած հանգամանքները, հանգեցնելով դատական ակտի վերանայման, կարող են իրենց ազդեցոյոյունն ունենալ անձի մեղավորոյոյան, մեղսագրված արարքի հանցավորոյոյան կամ դրա ծանրոյոյան որոշման վրա⁷:

22. ՀՀ Սահմանադրոյոյան 68-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 1. Ոչ ոք չի կարող կրկին դարսվել նոյն արարքի համար:

2. Սոյն հոդվածի 1-ին մասի դրոյթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապարասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննոյոյան ժամանակ տեղ են գտել հիմնարար թերոյոյուններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա: (...):»:

22.1. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքներն արդար և արդյունավետ դատաքննոյոյամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակոյոյան բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման ինդիքներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում⁸: Դատական ակտերի վերանայման նոր երևան եկած հանգամանքների համատեքստում Սահմանադրական դատարանը նշել է, որ՝

– նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականոյոյան և հիմնավորվածոյոյան ստուգումն իրավական լորջ

⁷ Տեն Դավիթ Հարոյոյունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ՍԴ3/0070/01/16 որոշումը, կետ 16:

⁸ Տեն Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴԻ-1222 որոշումը, կետ 6:

երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական պխախներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ⁹,

– այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում՝ **նորահայտ են**¹⁰:

23. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ որ չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կատակցությանը, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատարարվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապարասիան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդորում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապարասիան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

23.1. Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն, և քրեական գործերով դրանք պետք է գնահատվեն թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, ինչը հստակորեն թույլատրում է պայմանավորվող պետություններին վերաբացել գործը նոր հանգամանքների առկայության դեպքում կամ երբ տեղ են գտել վարույթի էական թերություններ¹¹:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «նոր կամ նոր երևան եկած» հանգամանքներ եզրույթը ներառում է նոր ապացույցներ, որոնք վերաբերում են նախկինում գոյություն ունեցող փաստերին¹²: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցման համաձայն՝ վարույթի վերաբացումը հիմնավորող հիմքերն ըստ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի, պետք է այնպիսին լինեն, որ կամ հօգուտ անձի կամ ի վնաս վերջինիս **ազդեն գործի ելքի վրա**¹³:

⁹ Տեն նույն տեղում:

¹⁰ Տեն նույն տեղում:

¹¹ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 129:

¹² Տեն նույն վճիռը, կետեր 131-133:

¹³ Տեն նույն տեղում:

24. Սույն որոշման 21-23.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկին փաստում է, որ ի տարբերություն նոր երևան եկած հանգամանքների, որոնց ցանկը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում թվարկված է ոչ սպառիչ, նոր հանգամանքների ցանկը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասում ներպետական կարգավորումների մակարդակով ըստ էության ունի սպառիչ թվարկում: Մասնավորապես, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ *«միջազգային պայմանագրերով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերով»* ձևակերպումը ենթադրում է ոչ սպառիչ թվարկում, սակայն այն վերաբերում է բացառապես միջազգային փաստաթղթերով նախատեսված հիմքերին, ներպետական մակարդակով նախատեսված հանգամանքների մասով օրենսդրի կողմից ձևակերպված ցանկը սպառիչ է և հնարավորություն չի ընձեռում քննարկման առարկա դարձնել այլ՝ օրենսդրի կողմից ուղղակիորեն չնախատեսված նոր հանգամանքները որպես դատական ակտի վերանայման հիմք դիտարկելու հարցը:

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ թեև նոր և նոր երևան եկած հանգամանքների մեկնաբանությունը որոշակիորեն կարող է տարբերվել միջազգային կարգավորումների համատեքստում այդ հանգամանքների վերաբերյալ տրված մեկնաբանությունից, սակայն իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից աներկբայորեն կարևոր է ապահովվել դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վրա հասած հետևանքներն քրեաիրավական գնահատականի արժանացնելու հնարավորությունը:

Ուստի, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում որպես նոր երևան եկած հանգամանք՝ ոչ սպառիչ ձևով *explicit* հղում է պարունակվում դատական ակտ կայացնելիս անհայտ մնացած այլ հանգամանքների վրա, հետևաբար դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վրա հասած հետևանքները կարող են քրեաիրավական գնահատականի արժանանալ այս կետի ներքո՝ ապահովվելով անձի իրավունքների պաշտպանության երաշխիքները: Այս առումով Վճռաբեկ դատարանը նաև հաշվի է առնում Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 14-ի թիվ ՄԴԱՈ-10 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները¹⁴:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նկատի է ունենում նաև այն, որ սույն թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում նոր և նոր երևան եկած հանգամանքների տարբերակման տրամաբանությունը որոշակիորեն փոխվել է, որպիսի պայմաններում այդ

¹⁴ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

հանգամանքների տարբերակման մեկնաբանությունները կարող են ստանալ նոր իրավական արժեք նաև նոր օրենսգրքի կիրարկման շրջանակներում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վրա հասած հետևանքները (նոր ի հայտ եկած փաստը) պետք է քննարկման առարկա դարձվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ներքո՝ որպես դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած նոր երևան եկած հանգամանքներ: Այդ եղանակով պետք է լեգիտիմացվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման բացառիկության հատկանիշի և դատական ակտի կայունության սկզբունքի հաղթահարումը:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վահրամ Մկոյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2014 թվականի հունիսի 18-ին ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու արդյունքում Ա.Նիկոյանի առողջությանն անզգուշությամբ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք պատճառելու մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ¹⁵,

- Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել և Վ.Մկոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով¹⁶,

- Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է¹⁷,

- տուժող Արտյոմ Նիկոյանը 2017 թվականի ապրիլի 5-ին մահացել է¹⁸,

- տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի հաղորդման հիման վրա, 2017 թվականի օգոստոսի 18-ին, նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցվել է վարույթ, կատարվել է քննություն և քննության արդյունքներով ներկայացվել է վճռաբեկ բողոք¹⁹ գործով կայացված դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքի հիմքով բեկանելու խնդրանքով²⁰:

26. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութերը գնահատելով սույն որոշման 21-24-րդ կետերում վկայակոչված դրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2014 թվականի հունիսի 18-ին ավտովթարի ենթարկվելուց ու կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս ստանալուց հետո, Արտյոմ Նիկոյանը տարբեր ժամանակահատվածներում

¹⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 15-18-րդ կետերը:

բուծում է ստացել «Իգմիլյան» և «Արմենիա» բժշկական կենտրոններում ու դեպքից երեք տարի անց՝ 2017 թվականի ապրիլի 5-ին մահացել է: Նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում նշանակվել են կրկնակի և լրացուցիչ հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություններ, որոնց արդյունքում կազմված եզրակացությունների համաձայն՝ առկա է պատճառահետևանքային կապ 2014 թվականի հունիսի 18-ին ավտովթարի հետևանքով Արտյոմ Նիկոյանին պատճառված մարմնական վնասվածքների և 2017 թվականի ապրիլի 5-ին նրա մահվան միջև: Այսինքն՝ արձանագրվել է Ա.Նիկոյանի մահվան և Վ.Մկոյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը²¹:

27. Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով, որ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում ստացված փորձագիտական եզրակացություններով առերևույթ հաստատվում է Վ.Մկոյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում տուժող Ա.Նիկոյանի ստացած մարմնական վնասվածքների և նրա մահվան միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո տուժող Արտյոմ Նիկոյանի մահվան փաստը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշումը վերանայելու համար:

II. Ստորադաս դատարանների դատական ակտերի բեկանման հիմքերը.

28. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյոք սույն գործով առկա նոր երևան եկած հանգամանքը, որն առերևույթ վկայում է Վ.Մկոյանին մեղազրկված արարքի ավելի ծանր լինելու մասին, կարող է հիմք հանդիսանալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանելու համար:

29. ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզուրկությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը (...):»*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պարասխանարկությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

(...)

²¹ Տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը:

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, (...) եթե՝

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»:

29.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արամ Սարգսյանի գործով որոշման մեջ, արձանագրելով, որ «(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են խնկերարիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում»²²:

30. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Արդարացման դատավճռի և գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում»:

31. Արարքի կատարման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգոչությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուսարյուրասպարիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որն անգոչությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: (...):»:

31.1. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված արարքն անգոչյ՝ հանցագործություն է, որի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում հինգ տարին,

²² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արամ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

ուստի այն դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցավոր արարք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է հինգ տարի:

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տուժողի մահը վրա է հասել **2017 թվականի ապրիլի 5-ին**²³, հետևաբար՝ եթե անգամ տուժողի մահը վրա է հասել Վ.Մկոյանի արարքի հետևանքով, ապա այն ավարտվել է այդ օրը: Ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու ժամկետը լրացել է **2022 թվականի ապրիլի 5-ին**:

33. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 29-31.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը բացառող հանգամանք: Կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում²⁴ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դիրքորոշումը կիրառելի է նաև **գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած** որոշումները վերանայելու ընթացակարգի նկատմամբ, արձանագրելով, որ այդպիսիք նույնպես կարող են բեկանվել միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը չեն կարող բեկանվել՝ նկատի ունենալով, որ Վ.Մկոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում իրականացնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրացել է և Վ.Մկոյանը վաղեմության ժամկետը կիրառելու համաձայնություն է տվել²⁵:

34. Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ **քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած**

²³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մխիթար Էլոյանի և այլոց գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

²⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

լինելու պայմաններում, սույն գործով առկա նոր երևան եկած հանգամանքը, որն առերևույթ վկայում է Վ.Մկոյանին մեղսագրված արարքի ավելի ծանր լինելու մասին, չի կարող հիմք հանդիսանալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426³-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վահրամ Ֆիոդորի Մկոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

7.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴԻ/0012/01/09

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

8 ապրիլի 2022 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սասուն Մելիակի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ ներկայացուցիչ Մ.Շուշանյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին աստիանի դատարան)՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Սասուն Մելիակի Միքայելյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ի մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և նա այդ մեղադրանքով արդարացվել է:

Նույն դատավճռով Ս.Միքայելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով

նախատեսված հանցանքներում և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ս.Միքայելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով:

2. Ս.Միքայելյանի պաշտպան Հ.Արսենյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ս.Միքայելյանի և նրա պաշտպան Հ.Արսենյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

4. Ս.Միքայելյանի գանգառի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), հանդես գալով Կոմիտեի կազմով, *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Ս.Միքայելյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 11-րդ հոդվածի խախտման փաստը:

5. 2021 թվականի դեկտեմբերի 22-ին Ս.Միքայելյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2022 թվականի մարտի 31-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը դատական նիստում քննության առնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Սատուն Մեխակի Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, այն բանի համար, որ «(...) [Նա] մի խումբ անձանց հետ կազմակերպել է զանգվածային անկարգություններ, (...) որպիսի գործողություններն արդարահայրվել են հետևյալում.

Ալեքսանդր Արզումանյանը, Հակոբ Հակոբյանը, Մյասնիկ Մալխասյանը, Շանթ Հարությունյանը, Գրիգոր Ոսկերչյանը, Սուրեն Սիրունյանը, Նիկոլ Փաշինյանը, Խաչատուր Սուքիասյանը, Համլետ Հովհաննիսյանը, Վիրաք Մանուկյանը և մյուսները երկրում ներքաղաքական վիճակն ապակայունացնելու և զանգվածային անկարգություններ հրահրելու դիրավորությամբ կազմակերպել

ու անմիջականորեն իրականացրել են հանցավոր մերսորությունն ի կատար ածելուն ուղղված գործողություններ:

Հասարակության լայն շրջաններում դժգոհություն առաջացնելու, մարդկանց նոր զանգվածներ ներգրավելու մղումով, ինչպես նաև, որպես պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ ուժ գործադրելու պարբերականության դրսևորում, Սասուն Միքայելյանը և մյուսները րարբեր միջոցներով իրենց շրջապարի նկատմամբ անձնական և ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խտարումների և որոշակի վարձարության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններիս ներգրավել են 2008թ. փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որրեղ ամբոխավարական կրքեր հրահրելու եղանակով բազմությանը րրամնդրել, նախապարասրել են անհնազանդության և զանգվածային բռնարարքների:

Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ իրագործելու մերսորությամբ խմբի անդամներն ինչպես անձամբ, այնպես էլ իրենց հետ համագործակցող այլ անձանց միջոցով կազմավորել են զանգվածային բռնարարքների կատարմանը պարբերական անձանց խմբեր և կազմակերպել նրանց շրջանում ապոհիսի կերպով ձեռք բերված հրազենի, ոսղնամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ պարձատելու համար հարմարեցված րարարետասկ առարկաների բաշխում:

Սասուն Միքայելյանը, նյութապես շահագրգռելով, Հրազդան քաղաքից և հարակից գյուղերից հավաքագրել է մարդկանց նոր խմբեր և ապահովել նրանց րեղափոխումն ու մասնակցությունը օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող զանգվածային միջոցառումներին, անմիջականորեն դեկավարել և առաջնորդել է նրանց: Օգրագործելով Արցախի ազարագրական պայքարի ընթացքում ձեռք բերված հրամանարարական իր հեղինակությունն ու փորձը, ազարամարտիկների շրջանում ունեցած իր ազդեցությունը հավաքված բազմությանը դրդել է բռնարարքների հարարարելով, որ պայքարելու են մինչև վերջ, պահանջել է ցանկացած պահի պարբերական լինել վճռական քայլերի և պայքարի իշխանություններին ցույց րալ, թե ովքեր են իրական կոլողները, ցույց րալ ուժը և ապացուցել դա, չենթարկվել ոարիկաններին, պայքարել նրանց դեմ ու չլքել րարածքը: Հավաքված բազմությանն առավել ողորդելու նպարակով, ի նշան ուժի ցուցարողության, Ազարության հրապարակում պարբերաբար շրջել է թիկնապահների և զինակիցների ուղեկցությամբ:

Զանգվածային անկարգություններ հրահրելու նպարակով 2008թ. փետրվարի 27-ից 29-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել է նաև փայրե և երկպթե մահակների, ամրանների, րարաներով բենզինի փոխարողում Ազարության հրապարակ, որոնք թաքցվել են հրապարակում րեղակայված «Հրազդան», «Կոճոռ» և «Վանարող» ցուցանակներով վրաններում:

2008թ. մարտի 1-ի վաղ առավոյան, երբ ոարիկանության աշխարակիցները, իրացնելով Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպարակով հրազենի, ոսղնամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ

սարքերի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված այլ առարկաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկությունը, փորձել են Ազատության հրապարակում հայտնաբերել և ազդարարել դրանք, զանգվածային միջոցառման կազմակերպիչների հրահանգով հրապարակում գրնվող բազմության մի արվար զանգված, հանրավարանգ հիշյալ պարագաների օգրագործմամբ, դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ուրիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վրանգավոր բնություն գործադրել վերջիններիս նկարմամբ:

Այնուհետև, զանգվածային միջոցառման մասնակիցները Մասուն Միքայելյանի և վերը թվարկված մյուսների ուղղորդմամբ ու հրահանգով տեղափոխվել և Վիրաբ Մանուկյանի ու այլոց կազմակերպմամբ հասարակական և մասնավոր տրանսպորտային միջոցները դիտավորությամբ վնասելով, շահագործումից դուրս բերելով և արգելապարնեշներ կառուցելով, դիրքավորվել են Մյաննիկյանի արձանի հարակից տարածքում, որտեղ վերջիններս հրահրել, կազմակերպել, անմիջականորեն դեկավարել են զանգվածային անկարգությունները. մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված և ձեռնասհաս այլ միջոցներով զինվելու և հասարակական կարգի պահպանություն իրականացնող ուրիկանության աշխատակիցների նկարմամբ բնություն գործադրելու, վերջիններիս օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու հրահանգներ են տվել, իրենց իսկ հավաքագրած անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց, ամբոհի առավել ագրեսիվ զանգվածին բաժանել զենքեր, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ ու ավերումներ առաջացնելու համար հարմարեցված մետաղական ձողեր, մսահակներ, ամրաններից պատրաստված «ոզնի» կոչվող սրածայր մետաղական կոնստրուկցիաներ, բենզինով լցված շերտ «Մոլոտովի կոկրեյլ» և այլ պարագաներ:

Արդյունքում 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյաննիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում, Երևանի Գր. Լուսավորիչ, Մաշտոց, Լեռ և Պարոնյան փողոցներում հրագեն, ուզմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով, կարարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ուրիկանության աշխատակիցներին, ՀՀ ուրիկանության գորքերի զինծառայողներին, տարբեր ծանրության աստիճանների մարմնական վնասվածքներ են սրացել ՀՀ ուրիկանության գորքերի զինծառայողներ և ուրիկանության աշխատակիցներ, ընդհանուր թվով 187 մարդ, 32 քաղաքացիական անձ, ջարդերի, գույքի դիտավորյալ ոչնչացման, վնասելու և թալանելու հետևանքով ՀՀ ուրիկանությանը պատճատվել է 25.980.093 ՀՀ դրամի վնաս, Երևան քաղաքին և Կենտրոն թաղային համայնքին 69.288.760 ՀՀ դրամի վնաս, իրավաբանական անձանց՝ 339.954.866 ՀՀ դրամի վնաս, հրկիզվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց, որի հետևանքով ՀՀ ուրիկանությանը, քաղաքացիներին և ուղևորափոխադրող ընկերություններին պատճատվել է ընդհանուր առմամբ 70.854.525 ՀՀ դրամի վնաս:

Տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում սրացած մարմնական վնասվածքներից մահացել է 10 անձ:

Զինված հարձակումները և զանգվածային անկարգությունները դադարել են միայն արտակարգ դրություն հայտարարելուց և իրավասահների կողմից դրանք կանխելուց հետո:

Բացի այդ, քննությանը չպարզված ժամանակահատվածում Սասուն Միքայելյանն սպորինի կերպով ձեռք է բերել, նույն կերպ Հրազդան քաղաքում գրնվող «Վանսպոր» ռեսորանի ձկնաբուծարանի պահեստ է փոխադրել, սպա նահնական համնձայնության գայով նույն ձկնաբուծարանի պահակ Էդիկ Խաչատրյանի հետ, 2007թ. հոկտեմբերից մինչև 2008թ. մարտի 8-ն ընկած ժամանակահատվածում սպորինի կերպով պահել ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության 4995 հայր 5.45 մմ, 8208 հայր 7.62 մմ, 343 հայր 12.7 մմ րրամնչայի ակոսափող հրազենի փամփոշրներ, 16 «Ֆ-1», 3 «ՌԳ-42», 1 «ՌԳԴ-5», 15 «ՌԿԳ-3» րեսակի նոնակի իրաններ, նոնակի 8 րոնակ, «ՈՒԶՌԳՄ» րեսակի 13 պայթուցիչ, 2 ինքնաշեն եղանակով պարրասրված «Շանթ» կոչվող նոնակաների և 73 մմ րրամնչայի 15 «ՊԳ-15Պ» րեսակի արրամղիչ լիցքեր (...):¹

7. Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]երլուծելով ամբաստանյալ ՍՄիքայելյանին առաջադրված մեղադրանքը, գործով ձեռք բերված սպացույցները դարարանը գրնում է, որ ամբաստանյալ ՍՄիքայելյանի մեղավորությունը զանգվածային անկարգություններ կազմակերպելու, սպորինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու և նահնական համնձայնությանը պահելու մեջ հիմնավորված և սպացույցված է: Ինչ վերաբերում է կարարված արարքների որակումներին, սպա դարարանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին և 2-րդ մասերի դիսպոզիցիաների վերլուծությունից հանգում է այն հետևության, որ ՍՄիքայելյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին մասով որակելու հիմքեր չկան, քանի որ քրեաիրավական առումով այն ներառվում է նույն հողվածի 2-րդ մասում, որն ավելի ծանր պարասիանսարվություն է նահասարետում: Այդ րեսակերից դարարանը գրնում է, որ ՍՄիքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին մասով քրեական պարասիանսարվության չպետք է ենթարկվի: ՍՄիքայելյանի կարարած արարքները պետք է որակել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հողվածի 1-ին մասով (...):²

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, 2009 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երլուծելով գործի փաստական րվյալները, գնահատելով ինչպես յուրաքանչյուր սպացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությանը վերաքննիչ դարարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Սասուն

¹ Տն քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 172-176:

² Տն քրեական գործ, հատոր 9, թերթեր 213-233:

Մեխակի Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով մեղաազրված արարքները որակված են ճիշտ և նա պետք է քրեական պարասահմանադրության և պարտի ենթարկվի:

Նման պայմաններում, պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքում շարադրված պարճատարանություններն անհիմն են և այն բավարարելու դատական ակտը բեկանելու, ամբաստանյալ Մասուն Մեխակի Միքայելյանի նկարումամբ արդարացման դատավճիռ կայացնելու հիմք համարվել չեն կարող (...):»³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը փաստել է, որ Միքայելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռը նոր հանգամանք է՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը վերանայելու համար:

Բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Ս.Միքայելյանի՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի խախտում, որն ուղղակիորեն առնչվում է Ս.Միքայելյանի վերաբերյալ կայացված դատական ակտերով թույլ տրված սխալներին:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտմանը, ապա այդ մասով Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ քննել է գանգատում բարձրացված հիմնական իրավական հարցը և չկա առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն:

9.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է Մասուն Միքայելյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը, և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ճանաչելով ու հռչակելով Մասուն Միքայելյանի անմեղությունը մեղաազրված արարքներում:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

I. Ներպետական դատական ակտերի վերանայումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Միքայելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռն արդյո՞ք Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը վերանայելու հիմք է:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 69-96:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-ին հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հերևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությանը գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:(...):»:

12. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

13. Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Միքայելյանն ընդդեմ Հայաստանի գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճռով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– «Խարարանն անհրաժեշտ է համարում նախևառաջ հաշվի առնել այս կոնկրետ գործի հանգամանքների ընդհանուր համարեքայրը: Այն նշում է, որ դիմումատուն եղել է խորհրդարանի ընդդիմադիր պարզամտավոր և պարոն Տեր-Պետրոսյանի առավել ակտիվ աջակիցը, որը մասնակցել է Հայաստանի մայրաքաղաքում 2008 թվականի փետրվարի 19-ի ենթադրյալ ոչ արդար նախագահական ընտրություններից հետո սկսված և 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձություններով ավարտված հանրահավաքներին (...): Իշխանությունների՝ դրան հետևող արձագանքը, այդ թվում՝ ընդդիմության րանյակ աջակիցների ձերբակալումն ու կալանավորումը, դատարարությունը է ԵԽԽԿ-ի կողմից և նկարագրվել է որպես «ընդդիմության նկարմամբ փաստացի դաժան հերաստում», մինչդեռ ենթադրվում է, որ նրանց դեմ հարուցված մեղադրանքներից շարերը, հարկապես՝ ԲՕ-ի 225-րդ և 300-րդ հոդվածներով

առաջադրվածները, «պայմանավորված են եղել արհեստական և քաղաքական շարժառիթներով»: Ինչպես ԵՖԽԲՎ-ն, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակարարն արտահայտել են կրկնվող մերստոգություններ այդ հողվածներով առաջադրված մեղադրանքների բնույթի վերաբերյալ՝ մի քանի անգամ՝ նշելով դիմումատուի կոնկրետ գործը (...): Թեև Դատարանը կոչված չէ դատական գնահատական տալու ընդհանուր համարեքստի վերաբերյալ, այնուամենայնիվ, այն համարում է, որ այս երկրորդային տեղեկությունները չստիպանց կարևոր են սույն գործի համար, և պահանջում է հատկապես մանրամասն ուսումնասիրել դիմումատուի դատապարտման պարճատ համարվող փաստերը (տե՛ս համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) նույն տեղում՝ § 70, որտեղ դիմումատուն ընդդիմադիր յոթ նշանավոր գործիչներից մեկն է եղել, որը սույն գործով դիմումատուի հետ Դատարանի առջև է կանգնել այսպես կոչված «Յոթի գործով») մինչև նրանց գործերի առանձնացումը (տե՛ս վերևում 25-րդ և 27-րդ պարբերությունները): Ավելին, ինչպես նշվել է վերևում, Դատարանն արդեն քննել է մի շարք գանգապներ, որոնք վերաբերում են Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հողվածների խախտմանը և քաղաքական շարժառիթներով քրեական հետապնդումներին՝ կապված Հայաստանում 2008 թվականի փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցած հետընտրական բողոքի ակցիաների հետ: Թվում է, որ սույն գործով ընդդիմադիր աջակիցների նկատմամբ դրսևորվում է քրեական հետապնդման վարքագիծ, ինչը Դատարանը գրնում է տազնապայի, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուն խորհրդարանի պարզամակոր է: Արդուհանդերձ, ինչպես նշված է Մոզեղ Մաղաթելյանի գործում, Դատարանն իրավատու չէ և ոչ էլ պարտականություն ունի որոշելու, թե արդյոք դիմումատուին առաջադրված մեղադրանքները հիմնավորված են եղել, այլ ներպետական դատարանների պարտականությունն է արուգել դրանց հիմքում ընկած փաստերի հավաստիությունը (...): Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ ներպետական դատարանների՝ սույն գործի համարեքստում իրենց որոշումների համար հիմնավորումներ ներկայացնելու պարտավորությունը մեկնաքանակում է որպես 10-րդ և 11-րդ հողվածներով սահմանված հատուկ պարտավորություններ՝ ներպետական դատարաններից պահանջելով ներկայացնել միջամտության համար «համապատասխան» և «քավարար» հիմնավորումներ»⁴,

– «Այս առնչությամբ Դատարանը նշում է, որ դիմումատուն՝ որպես ընդդիմության առաջնորդներից մեկը, մեղավոր է ճանաչվել ԲՕ-ի 225-րդ հողվածի 1-ին մատով՝ 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած Երևանում տեղի ունեցած հետընտրական բողոքի ակցիաների, այդ թվում՝ Ազատության հրապարակի հավաքի կապակցությամբ գանգվածային անկարգություններ կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է վերևում, Դատարանը գրել է, որ Ազատության հրապարակում անցկացված հանրահավաքները եղել են խաղաղ հավաքներ և փաստացի, քաղաքական նշանակություն ունեցող հասարակական

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Mikayelyan v. Armenia գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 58:

այնպիսի հարցի մասին արտահայտվելու հարթակ, որն ուղղակիորեն կապված է ժողովրդավարության իրականացման հետ և լուրջ մտահոգության առարկա է եղել Հայաստանի հասարակության լայն հատվածի համար (...): Պետելով, որ դիմումատու Ազատության հրապարակում հավաքված ամբոխին նախապարտաբեր է բռնարարքների և անհնազանդության, ներպետական դատարանների կողմից շար ընդհանուր նկարագրված նման վարքի, այդ թվում՝ իշխանությունների դեմ պայքարելու՝ դիմումատուի ենթադրյալ կոչերի օրինակները բավարար չեն, որպեսզի Դատարանը դրանք բնութագրի որպես բռնության հրահրում կամ եզրակացնի, որ դրանք ոչ այլ ինչ են, քան դիմումատուի կողմից նախազահական ընտրությունների անցկացման վերաբերյալ հանրային քննարկումների համարեքստում խաղաղ հավաքների կամ կարծիք հայտնելու, այդ թվում՝ դրա վերաբերյալ քննադատություն հնչեցնելու իր իրավունքներն իրավաչափ կիրառելու օրինակներ (...): Երկրորդ այն եզրահանգումը, որ դիմումատուն ցուցարարներին կոչ է արել չհնազանդվել ուսրիկանությանը, հիմնավորված չի եղել ենթադրաբար արված այդ կոչերի մեջբերումներով կամ այն հանգամանքների մասին հարուկ մանրամասններով, որոնց պայմաններում ենթադրաբար արվել են այդ կոչերը»⁵,

– «Ինչ վերաբերում է այն եզրահանգմանը, որ այն անձանց խումբը, որի հետ դիմումատուն ենթադրաբար նախապես եկել է իշխանությունը զավթելու հանցավոր համաձայնության, Ազատության հրապարակում բողոքի ակցիայի որոշ մասնակիցներին տրամադրել է զենք, և որ դիմումատուն ինքն ինքնաշեն զենք է տեղափոխել և դրանք թաքցրել հրապարակում կանգնեցված մի քանի վրաններում, Դատարանը հաշվի է առնում, որ արդեն պարզվել է, որ չկան համոզիչ ապացույցներ՝ եզրակացնելու, որ Ազատության հրապարակում հավաքվել են զենքի պաշարներ, և մերժել է այն պնդումները, որ ուսրիկանությունը տեղակայվել է հրապարակում զենքի առկայությունը ստուգելու համար, քանի որ գրնում է, որ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան ուսրիկանության գործողությունների հիմնական նպատակը, եթե ոչ միակը, եղել է հավաքը ցրելը (...):»⁶,

– «Անվիճելի է այն փաստը, որ խաղաղ բողոքի ակցիաներից ինն օր հետո՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին, Երևանում բռնությունը բռնկվեց, երբ ցուցարարներին դուրս հանեցին Ազատության հրապարակից, և մեծ բազմություն հավաքվեց Մյասնիկյանի արձանի տարածքում և հարակից մի շարք փողոցներում, որտեղ պարզվում է, որ բախումներ են տեղի ունեցել բողոքի ակցիայի որոշ մասնակիցների և իրավապահ մարմինների միջև, ինչպես նաև վնասվել է պետական և մասնավոր գույք (տես վերևում 14-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, դիմումատուի՝ տվյալ բռնության համար ենթադրյալ պատասխանատվության վերաբերյալ ներպետական դատարանների եզրահանգումները կազմվել են շար ընդհանրական և վերացական եզրույթներով՝

⁵ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 59:

⁶ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 60:

առանց որևէ կոնկրետ փաստական մանրամասների, որոնք համոզիչ կերպով կմատչանան ղեկի դիմումարտուի կողմից կատարված որևէ իրավահարգում: Այդ առնչությամբ հարկ է նշել, որ ՔՕ-ի 235-րդ հոդվածի 2-րդ կետով՝ ռազմական ծանաչելի և պայթուցիկ նյութեր սպորինի պահելու համար դիմումարտուին մեղավոր ճանաչելիս ներպետական դատավճիռներում ոչինչ չի վկայել այն մասին, որ այս արարքը, որը, ինչպես պարզվում է, քննվել է որպես առանձին հանցանք, որևէ կերպ կատարված է եղել դիմումարտուի դեմ զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար առաջադրված մեղադրանքների հետ: Ոչ գործի նյութերում և ո՛չ էլ կառավարության դիրարկումներում չի եղել որևէ բան, որը կարող է Դատարանին ստիպել հանգելու այն ենթադրության, որ ներպետական դատավճիռներում առկա է այդպիսի անտողակի կապ»⁷,

– «Ընդհանուր առմամբ ներպետական դատարանները չեն փորձարկել բողոքի շարժմանը և նախագահական ընտրություններից հետո Հայաստանում տեղի ունեցած հանրահավաքներին ներգրավված լինելու ընթացքում դիմումարտուին վերագրվող որևէ դատապարտելի արարքի, այդ թվում՝ բռնության հրահրման կամ դրդման կոնկրետ օրինակներ (...): Որպես այդպիսին, դիմումարտուն պարզի է ենթարկվել ընդդիմության ակտիվ անդամ լինելու և խաղաղ հավաքների ազարության իրավունքից օգրվելու համար, այլ ոչ թե դատապարտելի արարքներ կատարելու համար (...):»⁸,

– «Վերջապես Դատարանը հաշվի է առնում այն, որ, ինչպես նշված է Մյանիկ Մայիսյանի գործում, ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի կողմից լուրջ կասկածներ են հնչել այն վարկածի վերաբերյալ, համաձայն որի՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձություններն ընդդիմության առաջնորդների՝ պետական իշխանությունը բռնի կերպով զավթելու կամ, այլ կերպ ասած, հեղաշրջում իրականացնելու ծրագրված և կազմակերպված փորձի մասն էին կազմում, և փաստորեն այդ քրեական հետապնդումներն ամենայն հավանականությամբ համարվել են քաղաքական շարժառիթներ ունեցող: Ավելին, մի շարք արժանահավասար գեկույցներում հայտնվել է այն տեսակետը, որ Մյանիկյանի արձանի փարսաձքում մարդկանց հավաքվելը, այդ թվում՝ հերագայում՝ նրանց զինված լինելը, ինքնաբերական և չկազմակերպված զարգացումներ էին, և որ նույն օրը բռնության ծավալումը կարող էր լինել ավելի վաղ՝ Ազարության հրապարակից ցուցարարներին ցրելուն ի պատասխան, այդ թվում՝ հաշվի առնելով դրա կոչը բնույթը, ինչպես նաև մի շարք այլ նմանապիսյ կամ անվերահսկելի իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել այդ նույն օրը (նույն տեղում՝ § 80): Դատարանը նշում է, որ Կառավարությունը սույն գործով չի փորձարկել որևէ ասպացույց, որը կարող էր իրենց ստիպել կասկածի փակ դնել վերոնշյալ գեկույցները կամ այդ գործում ձեռք բերված եզրակացությունները»⁹:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 61:

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 62:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021

Վերոգրյալի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ ներպետական դատարանները չեն կատարել իրենց որոշումների համար հիմնավորումներ ներկայացնելու իրենց պարտականությունը, և դիմումատուի՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքին միջամտությունն արդարացնելու համար ներկայացված հիմնավորումները «համապատասխան և բավարար» չեն եղել¹⁰:

Արդյունքում, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

14. Հիմք ընդունելով *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման փաստի արձանագրումը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական արյանների կողմից կայացված սկրեթի բեկանման ու փոփոխման հիմքերը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմք է:

16. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:*

Սկոցցարին և Ջունյանն ընդդեմ Իրապիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասիանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով րրամատրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ*

թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 63:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikayelyan v. Armenia* գործով 2021 թվականի օգոստոսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 1879/10, կետ 64:

պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանաձևաձև իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարելու են Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ»¹¹:

Մելչոնկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պարտասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարտասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...)»¹²:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտի սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատչանումը հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չեն կարող ազդել գործի ելքի վրա (...)»:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՄԴՈ-1099 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասն անփոփոխ թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիռ փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի ազդում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ նոր հանգամանքն ըստ էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, ուստի դրա հիման վրա գործի կրկին քննությունը չի կարող ծառայել իր «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու՝ նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին¹³:

19. Դատական ակտի վերաբացումը կամ գործի նոր քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

¹³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՄԴՈ-1099 որոշման 6-րդ կետը:

անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաքացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաքացմամբ:

20. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղատելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) առկա չեն բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք թույլ կտան եզրակացնել, որ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի կազմակերպիչները և մասնակիցները, բռնի մտադրություններ են ունեցել, և որ տվյալ հավաքը խաղաղ չի եղել¹⁴,

բ) առանց բավարար հիմնավորման և ակնհայտորեն առանց ցրելու մասին նախազգուշացման, ինչպես նաև չհիմնավորված և չափից ավելի ուժի օգտագործմամբ Ազատության հրապարակի հավաքը ցրելն անհամաչափ միջոց է եղել, որը իշխանությունների կողմից հավաքների ազատությունը սահմանափակելիս անցել է ողջամտության սահմանները¹⁵,

գ) դիմումատուների դատապարտումը կապված է եղել նրանց՝ ընդդիմության կողմից ղեկավարվող բողոքի շարժմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հետ: Հետևաբար, դատարանը ենթադրել է, որ փաստերի ամբողջությունը, որոնց վրա հիմնված էին վերջիններիս քրեական հետապնդումը և դատապարտումը, վիճելի հիմքերով կարող են համարվել որպես իրենց՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի նկատմամբ «միջամտություն»¹⁶,

¹⁴ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 233:

¹⁵ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 248:

¹⁶ Տես, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 49021/08, կետ 129, *Jhangiryan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատներ 44841/08 և 63701/09, կետ 123, *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի

դ) խաղաղ հավաքների ազատությանը վիճարկվող միջամտությունը կարող էր որակվել որպես ակնհայտ կամայական և համապատասխանաբար՝ անօրինական, Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի նպատակների համար¹⁷:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Ս.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել մի խումբ անձանց հետ զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար¹⁸,

- Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով սպացուցված է համարել Ս.Միքայելյանի մեղավորությունը զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեղադրանքում և արձանագրել, որ նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին¹⁹,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ ամբաստանյալ Սասուն Մելիակի Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղազգրված արարքը որակված է ճիշտ և նա պետք է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվի²⁰:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-19-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների, ինչպես նաև սույն որոշման 13-րդ և 20-րդ կետերում նշված՝ համապատասխանաբար՝ *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի և Մոլդեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի շրջանակներում միջազգային դատարանի կողմից Ս.Միքայելյանին առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները և կատարված արձանագրումները *prima facie* ստվերում են նրան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը, նկատի ունենալով նաև մեղադրանքի փաստական հանգամանքների անմիջական փոխկապակցվածությունը հավաքների ազատության իրավունքի հետ՝ երաշխավորված Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով:

վճիռը, կետ 234:

¹⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով վճիռը, կետ 132, *Jhangiryan v. Armenia* գործով վճիռը, 126-րդ կետը, ինչպես նաև *Hakobyan and Others v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 34320/04, կետ 107:

¹⁸ Տե՛ս մանրամասն սույն որոշման 6-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

23. Ասպիտով, ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով Եվրոպական դատարանի՝ սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ս.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների ամբողջությունը բավարար չէ նրան՝ մի խումբ անձանց հետ զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչած դատական ակտերն օրինական ուժի մեջ թողնելու համար, նկատի ունենալով, որ դրանք անհամատեղելի են Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հետ:

24. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *Միքայելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռն Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմք է:

25. Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի առումով Եվրոպական դատարանը որևէ խախտում չի արձանագրել, ուստի այդ մասով դատական ակտերը բեկանելու հիմքերը բացակայում են²¹:

26. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս վերանայելու Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը և մասնակիորեն բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Ս.Միքայելյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

27. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

²¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և փոփոխել: Սասուն Մելիսակի Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

1-274/06

Զ-10-581/07

ՎԲ-121/07

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

20 մայիսի 2022 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արման Շամիրի Բաբաջանյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հունվարի 12-ի դատավճռի դեմ Ա.Բաբաջանյանի և պաշտպան Ն.Նորիկյանի հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2006 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Ա.Բաբաջանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում:

Նույն դատավճռով Ա.Բաբաջանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

2. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2007 թվականի հունվարի 12-ի դատավճռով

մեղադրողի բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ պաշտպանի բողոքը՝ բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճիռը պատժի մասով փոփոխվել է, և Ա.Բաբաջանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Պաշտպան Հ.Ալույանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ վերադարձվել է:

Պաշտպան Ն.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վերադարձվել է:

4. 2020 թվականի ապրիլի 18-ին Ա.Բաբաջանյանը և պաշտպան Ն.Նորիկյանը հիմնարար խախտման հիմքով բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանը, Ա.Բաբաջանյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ապացուցված է համարել, որ նա, 2002 թվականի աշնանը, փաստաթուղթ կեղծելու ճանապարհով խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում¹:

6. 2006 թվականի հոկտեմբերի 16-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է Երևանի Շենգավիթի զինվորական կոմիսարին հասցեագրված՝ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթներն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ Ա.Բաբաջանյանի դիմումի պատճենը²:

2006 թվականի նոյեմբերի 20-ին պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ Ա.Բաբաջանյանի համապատասխան դիմումի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող միջգերատեսչական հանձնաժողովը դիմելու վերաբերյալ³:

Նույն օրվա դատական նիստի արձանագրության համաձայն՝ «(...) [Բ] պարարանը տեղում խորհրդակցելով որոշեց մերժել [վերոնշյալ] միջնորդությունը՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 181-184:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 20:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 213-215:

նկարի ոնենարով, որ (...) դարական նիարի նախապարասարական փուլում կողմերն իրավունք ոնենն դարարանին ներկայացնել նոր սպացույցներ՝ պահանջելով դրանք կցել գործին, հելրևասպես միջնորդությունն արված է ոչ ժամանակին, դարարնությունը սույն գործով դեռևս չի սկսվել, [դարարանը] գրնվում է (...) դարական նիարի նախապարասարական փուլում: Բացի այդ, «Մահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգն առնչություն չունի սույն քրեական գործի հելր, դարարանին չի ներկայացվել բավարար հիմքեր, այն մասին, թե հանձնաժողովից սպարասիան սրացվել է թե ոչ, եթե սպարասիանը չի սրացվել կամ չի րրվում, սպա առանձին ընթացակարգով պաշտպանական կողմը զրկված չէ հանձնաժողովի գործողությունները [կամ անգործությունը] դարարանում բողոքարկելու հնարավորությունից»⁴:

7. Վերաքննիչ դատարանում պաշտպանության կողմը միջնորդել է քրեական գործին կցել և որպես սպացույց ճանաչել յուրաքանչյուր գորակոչին չգորակոչվելու դիմաց «Մահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարն Ա.Բարաջանյանի կողմից կատարված լինելու վերաբերյալ անդորրագիրը⁵:

2006 թվականի նոյեմբերի 30-ի դատական նիստի արձանագրության համաձայն՝ «(...) [Դիարարանը րեղում խորհրդակցելով որոշեց [նշված] միջնորդությունը մերժել՝ նկարի ոնենարով, որ (...) սույն քրեական գործի վարույթի ընթացքում այդ] փաստաթուղթն սպացույց հանդիսանալ չի կարող՝ նկարի ոնենարով, որ Ա.Բարաջանյանի վերաբերյալ հանձնաժողովը պելր է որոշում կայացնի, եթե կողմը գրնում է, որ հանձնաժողովի որոշումը ոչանում է, և օրենքով սահմանված կարգով իրեն սպարասիան չի րրվում, սպա (...) վարչական վարույթի մասին օրենքի համաձայն կողմը կարող է դիմել դարարան (...) եթե դարարանը կգրնի, որ (...) պելր է ճանաչվի իրավաբանական փաստն Ա.Բարաջանյանի վերաբերյալ դիմումը հարգելու կապակցությամբ, այս փաստաթուղթն էլ հիմք կհանդիսանա, և նրա վերաբերյալ համապարասիան որոշում կկայացվի»⁶:

7.1. Վճռաբեկ բողոքին կից ներկայացվել է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 7-ին տրամադրված տեղեկանքը, ըստ որի 2006 թվականի նոյեմբերի 30-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Շենգավիթ» մասնաճյուղում քաղաքացի Արշակ Ավետիսյանի կողմից Արման Բարաջանյանի համար թիվ 900018113010 գանձապետական հաշվին մուտքագրվել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 129 անդորրագրի ուսումնասիրությունից երևում է, որ գումարը վճարվել է Արշակ

⁴ Տեն դատական նիստի ձայնային արձանագրության լագերային կրիչը, հատոր 3-րդ, թերթ 254:

⁵ Տեն քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 65:

⁶ Տեն դատական նիստի ձայնային արձանագրության լագերային կրիչը, հատոր 3-րդ, թերթ 254:

Ավետիսյանի կողմից, իսկ այն հանգամանքը, որ այդ գումարը վճարվել է Ա.Բաբաջանյանի համար, ավելացվել է ձեռագրով⁷:

2006 թվականի դեկտեմբերի 19-ի դատական նիստի արձանագրության համաձայն՝ «(...) ԼՊ/աշտպանության կողմը միջնորդել է վերսկսել դատական քննությունը՝ նկարի ունենալով, որ այսօր պրացվել է ՀՀ պաշտպանության նախարարության վարչական ապարատի իրավաբանական վարչության պետի գրության պարձենը, առ այն, որ Ա.Բաբաջանյանի փաստաբանի դիմումը՝ Ա.Բաբաջանյանի նկարումը «Սահմանված կարգի խախտումներ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելու վերաբերյալ, ուղարկվել է ՀՀ զինվորական կոմիսար Ա.Հարությունյանին օրենքով սահմանված կարգով ընթացք քաղապարտ համար, ինչպես նաև սույն վարչության մեկ այլ գրություն, համաձայն որի՝ սահմանված կարգի խախտումներ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը նախարարական է անցկացնել 2006 թվականի դեկտեմբերի 27-ին, այսինքն՝ այդ երկու գրություններից հետևում է, որ նշված օրը միջգերատեսչական հանձնաժողովը քննության է առնելու Ա.Բաբաջանյանի դիմումը, որպիսի հանգամանքն էլ պահանջում է լրացուցիչ հետազոտություն:

(...) ԼՊ/ապարտանք տեղում խորհրդակցելով որոշեց մերժել քրեական գործը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը՝ նկարի ունենալով, որ սույն գրություններն առնչություն չունեն սույն քրեական գործի հետ (...)»⁸:

8. 2007 թվականի հունվարի 11-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է պաշտպանության կողմի միջնորդությունը՝ մինչև սահմանված կարգի խախտումներ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից Ա.Բաբաջանյանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելը 2007 թվականի հունվարի 12-ին նշանակված հերթական դատական նիստը հետաձգելու վերաբերյալ՝ նկատի ունենալով, որ դիմումի հնարավոր բավարարումը հանգեցնելու է Ա.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնելուն⁹:

Վերոգրյալ դիմումին կից Վերաքննիչ դատարան է ներկայացվել սահմանված կարգի խախտումներ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահի՝ 2006 թվականի դեկտեմբերի 28-ի՝ սույն գործով մեղադրողին ուղղված գրության պատճենը, որով նա խնդրել է Ա.Բաբաջանյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտումներ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառելիության վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնել¹⁰:

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 36 և 66:

⁸ Տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լագերային կրիչը, հատոր 3-րդ, թերթ 254:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 231:

¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 232:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Պ]աշտպանական կողմի, պաշտպանական ճառում բերված միջնորդությունն ամբաստանյալ Արման Բաբաջանյանի նկարումը քրեական հետապնդումը ՀՀ քր. օր-ի 327 հոդ. 2-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ քր. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և ՀՀ քր. օր-ի 74 հոդվածի հիման վրա դադարեցնելու մասին անհիմն է, չի բխում գործող օրենսդրական պահանջներից և չի կարող հիմք հանդիսանալ դատավճիռն այդ մասով բեկանելու համար (...):

(...) Վերաքննիչ դատարանը դատական քննության ընթացքում իր կողմից կայացրած որոշումներով անդրադարձել է այդ հարցին և մերժել պաշտպանների համապարասիան միջնորդությունները:

(...) [Ս]ույն քրեական գործի դատական քննությունն անմիջականորեն կապված չէ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից Ա.Բաբաջանյանի դիմումի քննարկման ընթացքի հետ»¹¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակները, վերլուծելով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները, եզրահանգել են, որ դրանք կիրառելի են եղել Ա.Բաբաջանյանի նկատմամբ: Ըստ բողոքաբերների՝ Ա.Բաբաջանյանը, օգտվելով այդ օրենքով իրեն ընձեռած հնարավորությունից, դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, և ըստ վերը նշված օրենքի կիրառման ապահովող միջոցառումների մասին ՀՀ Կառավարության՝ 2004 թվականի մարտի 4-ի N 264-Ն որոշման՝ Ա.Բաբաջանյանի դիմումը ենթակա էր քննարկման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, սակայն վերջինս օրենքով սահմանված ժամկետում Ա.Բաբաջանյանի դիմումի վերաբերյալ բացասական որոշում չի կայացրել և այդպիսի որոշում Ա.Բաբաջանյանին չի տրամադրվել: Նման պայմաններում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով Ա.Բաբաջանյանը ձեռնամուխ է եղել իր իրավունքների իրականացմանը՝ կատարելով «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով նախատեսված վճարումները: Այնուհետև, պաշտպանության կողմը, առաջնորդվելով վերը նշված օրենքի 6-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության նշված որոշման համապատասխան դրույթներով, միջնորդություն էր ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ ընդգծելով, որ վճարումը կատարելու պահից Ա.Բաբաջանյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է եղել դադարեցման, իսկ Վերաքննիչ դատարանը, որպես այդ պահին քրեական վարույթն իրականացնող մարմին,

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 255-260:

պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի հիմքերով Ա.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել և գործի վարույթն այդ մասով կարճել:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, խախտելով վերը շարադրված իրավական նորմերի պահանջները, Ա.Բաբաջանյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու մասին որոշում չի կայացրել՝ թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերները խնդրել են մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հունվարի 12-ի դատավճիռը ու կայացնել նոր դատական ակտ՝ Ա.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

13. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի

հայր են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էպես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից գուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է այն իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հօգուտ դատասպարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատասպարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, in fine, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա» կամ հօգուտ անձի, կամ հակառակը¹²:

13.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Նույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

13.3. Վճռաբեկ դատարանը, Մկրտիչ Մարգարյանի գործով որոշման շրջանակներում անդրադառնալով նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմքին, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) [Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշդ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹³:

13.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճառահերկանքային կասկի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հեք: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րոծած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճառված վսասր հարուցելուն: Այսինքն՝ առերկույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը արացել է ակնհայր սխալ իրավական գնահատական»¹⁴:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաճայն՝ «1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)»

¹³ Տնս, Վճռաբեկ դատարանի՝ Մկրտիչ Մարգարյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

¹⁴ Տնս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՄԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

12) անձը Հայասարանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազարման քրեական սարասահանարվույթունից, (...)

5. Դարարանը, հայրնարերելով քրեական հետարանդունը բացառող հանգամանքներ, լուծում է ամբարարանյալի նկարմամբ քրեական հետարանդունը դարարեցնելու հարըը (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հողվաժի համաժայն՝ «Առաջին անգամ ոչ մեժ կամ միջին ժանրության հանցանք կարարած անձը կարող է ազարվել քրեական սարասահանարվույթունից, եթե սարզվի, որ իրարողության փուփոխման հերևանքով այդ անձը կամ նրա կարարած սրարքը դարարել է հանրության համար վրանգավոր լինելուց»:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվաժով սահմանվաժ հինքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրարարժել է Արամ Սարգսյանի գորժով որոշմամբ, արժանագրելով հետևյալը՝ «(...) [Թ/են [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվաժով սահմանվաժ] հինքերն իրենց բովանդակությանբ, կիրառման իրավական հերևանքներով սարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են ինկերարիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն սրղեն իսկ բացառում է քրեական գորժի վարույթը քրեական դատավարության ցանկացաժ փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայրնարերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվաժի 1-ին մասում ամբարզվաժ հանգամանքներից որևէ մեկը, սպա գորժի վարույթը ենթակա է կարժման»¹⁵:

15. Վերահաստատելով սույն որոշման 13.1-րդ և 14.1-րդ կետերում մեջբերվաժ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվաժում թվարկվաժ են օրենքով սահմանվաժ այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետարանդուն հնարավորությունը, այնպես էլ քրեական գորժի վարույթը: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գորժի վարույթը ենթակա է կարժման, իսկ քրեական հետարանդունը՝ դարարեցման: Նշվաժն արդար դատական քննության իրավունքի ապահողման կարևորագույն նախապայման է, ուստի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ գորժի փաստական հանգամանքներից, դատական քննության իրականացումն առանց քրեական հետարանդուն ու քրեական գորժի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության կամ առկայության փաստի սարզման ուղղությանբ անհրաժեշտ միջոցների ձեռնարկման, նշանակում է գորժի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օրլեկտիվ հետագոտման դատավարական սահանջի առարկայագրկում, ըստ այդմ՝ արդար դատական քննության երաշխիքի խախտում:

¹⁵ Տեն Արամ Սարգսյանի գորժով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

16. Ա.Բարաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված քրեական հետապնդման պահին գործող խմբագրությամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքի գործողության ոլորտն ընդգրկում է 1992 թվականի աշխատային գորակոչից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը [2004 թվականի մարտի 1-ը] օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետրման իրավունք ստանալու հիմքեր ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին»¹⁶:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետրման հիմքեր ձեռք բերած քաղաքացուն, սույն օրենքով սահմանված վճարը մուծելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տրվում է իր նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը (...)»¹⁷:

Նշված օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 264-Ն որոշման N 3 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվում է սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի հիման վրա»¹⁸:

16.1. Վերոնշյալ օրենքի և ենթաօրենսդրական ակտի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ **1992 թվականի աշխատային գորակոչից մինչև 2004 թվականի մարտի 1-ը**, օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացու նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով, ենթակա է դադարեցման, եթե լրացել է նրա 27 տարին կամ, մեջբերված իրավական ակտերով սահմանված հատուկ ընթացակարգի պահպանմամբ, անձն ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից կամ ձեռք է բերել տարկետրման իրավունք¹⁹:

¹⁶ Ծանոթություն. Վերոնշյալ օրենքը գործել է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

¹⁷ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1367>:

¹⁸ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=47393>:

¹⁹ Մանրամասն տե՛ս իրավափոփոխության ժամանակ գործող խմբագրությամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին»

16.2. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին է ներկայացնում այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է:

Դիմումին կից ներկայացվում են պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ րարկելունան իրավունք սրանալու հիմքերը:

(...)

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու դիմումը սահմանված կարգով գրանցվելուց հետո փոխանցվում է համապարասիանն մարմիններին»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումը քննարկվում է, և քաղաքացուն պարասիանը րրվում է մեկ ամսվա ընթացքում: Լրացուցիչ ուսումնասիրություն և սրուզում պահանջող դիմումները քննարկվում են, և քաղաքացուն պարասիանը րրվում է երկու ամսից ոչ ուշ:

(...)

Դիմումի պարասիանի հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացին իրավունք ունի պարասիանն սրանալու օրվանից մեկամսյա ժամկետում դա րողքարկել դատարանն օրենքով սահմանված կարգով»:

ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 264-Ն որոշման N 2 հավելվածի համաձայն՝ «(...) 4. Զինվորական կոմիսարիատը քաղաքացու ներկայացրած կամ դիվանագիտական մարմնի կողմից ուղարկված դիմումն ու կից փաստաթղթերն սրանալուց հետո եռօրյա ժամկետում գրանցում է դրանք և քաղաքացու անձնական գործի հետ միասին ներկայացնում միջգերարեսչական հանձնաժողովի քննարկմանը: Եթե քաղաքացու անձնական գործը գրնվում է դարասիագությունում, սպա ներկայացման ժամանակ նշվում է դրա մասին:

5. Միջգերարեսչական հանձնաժողովն սրացված դիմումները քննարկում է 15-օրյա ժամկետում: Լրացուցիչ ուսումնասիրություն և սրուզում պահանջող դիմումները քննարկվում են մեկ ամսվա ընթացքում: Եթե դիմում ներկայացրած քաղաքացու անձնական գործը գրնվում է դարասիագությունում, սպա միջգերարեսչական հանձնաժողովը պահանջում է այն:

6. (...) Ընդունված որոշումը և մյուս փաստաթղթերը եռօրյա ժամկետում ներկայացվում են հանրապետական հանձնաժողով:

Հանրապետական հանձնաժողովը մեկամսյա ժամկետում քննարկում է ներկայացված փաստաթղթերը: Հանրապետական հանձնաժողովը միջգերարեսչական հանձնաժողովի ընդունած որոշմանը չհամաձայնելու դեպքում գործն ուղարկում է լրացուցիչ քննարկման:

ՀՀ օրենքը և այդ օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության՝ 2004 թվականի մարտի 4-ի N 264-Ն որոշումը:

Քաղաքացու դիմումը քննարկելու և դրան պատասխանելու ժամկետը չի կարող գերազանցել 2 ամիսը:

7. Քաղաքացու դիմումի վերաբերյալ բացասական որոշում ընդունվելու դեպքում դիմումատուին ուղարկվում է պատասխան գրություն, որում նշվում են դիմումի մերժման հիմքերը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ «Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝

ա) վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը. (...):»:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճռով ապացուցված է համարել, որ Ա.Բաբաջանյանը 2002 թվականի աշնանը փաստաթուղթ կեղծելու ճանապարհով խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում²⁰:

2006 թվականի հոկտեմբերի 16-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է Երևանի Շենգավիթի զինվորական կոմիսարին հասցեագրված՝ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթներն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ Ա.Բաբաջանյանի դիմումի պատճենը²¹:

Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություններ է ներկայացրել՝

- Ա.Բաբաջանյանի վերոգրյալ դիմումի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող իրավասու մարմնին դիմելու վերաբերյալ²²,

- Ա.Բաբաջանյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելու մասին դիմումը սահմանված կարգով ընթացք տալու համար ՀՀ զինվորական կոմիսարին ուղարկված լինելու և սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող իրավասու մարմնի հերթական նիստի օրվա մասին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական ապարատի

²⁰ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

իրավաբանական վարչության պետի գրությունները հետազոտելու նպատակով դատական քննությունը վերսկսելու վերաբերյալ²³,

– 2007 թվականի հունվարի 12-ին նշանակված հերթական դատական նիստը հետաձգելու և այն՝ սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող իրավասու մարմնի կողմից Ա.Բաբաջանյանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո վերսկսելու վերաբերյալ²⁴: Միջնորդությանը կից ներկայացվել է սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննող իրավասու մարմնի նախագահի գրության պատճենը, որով վերջինս, սույն գործով մեղադրողին, խնդրել է պարզաբանումներ տրամադրել՝ Ա.Բաբաջանյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների» մասին ՀՀ օրենքի դրույթների կիրառելիության վերաբերյալ²⁵:

Վերաքննիչ դատարանը, Ա.Բաբաջանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական պատասխանատվության ենթարկելու մասով անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ինչպես արձանագրային որոշումներում, այնպես էլ դատական ակտում նշել է, որ սույն քրեական գործի դատական քննությունն անմիջականորեն կապված չէ իրավասու մարմնի կողմից Ա.Բաբաջանյանի դիմումի քննարկման ընթացքի հետ²⁶:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ սույն գործի դատական քննությունն անմիջականորեն փոխկապակցված չէ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ Ա.Բաբաջանյանի նկատմամբ կիրառելիության հարցի քննության ընթացքի հետ, չի ապահովել Ա.Բաբաջանյանի արդար դատաքննության իրավունքի երաշխիքը:

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Ա.Բաբաջանյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառելիության հարցի քննության ընթացքն անմիջականորեն կապված չէ սույն գործի քննության հետ, պատշաճ գնահատման չի ենթարկել այն, որ Ա.Բաբաջանյանը դատապարտվել է **2002 թվականի աշնանը փաստաթուղթ կեղծելու ճանապարհով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու համար**: Այսինքն՝ վերը նշված օրենքի գործողությունն առերևույթ

²³ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

²⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

²⁵ Տե՛ս սույն տեղում:

²⁶ Տե՛ս սույն որոշման 6-րդ, 7.1-րդ և 9-րդ կետերը:

ընդգրկում է Ա.Բաբաջանյանին մեղսագրվող արարքի ժամանակահատվածը: Ընդ որում, պաշտպանության կողմն ըստ էության Վերաքննիչ դատարանին տեղեկացրել է Ա.Բաբաջանյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելու խնդրանքով իրավասու մարմնին դիմելու, այդ հարցը սահմանված կարգով քննարկման համար ՀՀ զինվորական կոմիսարիին ներկայացված լինելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից Ա.Բաբաջանյանի նկատմամբ նշված օրենքի կիրառելիության հարցը լուծելու նպատակով պարզաբանումներ ներկայացնելու խնդրանքով քրեական հետապնդման մարմնին դիմելու վերաբերյալ:

Այսպիսով, գործում առկա վերոնշյալ փաստական տվյալների համակցությունից բխում է, որ Առաջին առյանի դատարանի դատական ակտի իրավաչափության հարցի քննարկման ընթացքում պաշտպանության կողմը ներկայացրել է 2002 թվականին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առերևույթ առկայության և Ա.Բաբաջանյանի նկատմամբ դրա կիրառելիության առնչությամբ իրավական պատշաճ գործընթաց նախաձեռնած լինելու մասին վկայող տվյալներ:

Վերոշարադրյալ գործոնների հաշվառմամբ, ինչպես նաև կրկնելով, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կարող է համարվել օրինական միայն քրեական հետապնդումը բացառող հանգամանքների բացակայության դեպքում, Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ Ա.Բաբաջանյանի նկատմամբ կիրառելիության հարցի քննությունն անմիջականորեն փոխկապակցված է սույն գործի հետ: Այլ կերպ, քրեական վարույթի արդարացիության ապահովման հիմնարար երաշխիքներից՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները ստուգելու դատավարական պահանջի կենսագործումն ապահովելու տեսանկյունից, ելնելով սույն գործի փաստական հանգամանքներից, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր միջոցներ ձեռնարկել պարզելու Ա.Բաբաջանյանին առաջադրված մեղադրանքում նկարագրված արարքի ժամանակահատվածն առերևույթ ընդգրկող վերոնշյալ օրենքի՝ վերջինիս նկատմամբ կիրառելիության հարցը:

18.1. Նման պայմաններում, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն պարզելու այն հարցը, թե իրավահարաբերության ժամանակ գործող խմբագրությամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը՝ որպես օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը բացառող առերևույթ հանգամանք, արդյո՞ք կիրառելի

է Ա.Բաբաջանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղսագրվող արարքի նկատմամբ, ինչն ուներ առանցքային նշանակություն գործով ճիշտ որոշում կայացնելու տեսանկյունից:

Հետևաբար, «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի՝ որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առերևույթ առկայության և Ա.Բաբաջանյանին մեղսագրվող արարքի նկատմամբ դրա հնարավոր կիրառելիության հարցը Վերաքննիչ դատարանի կողմից քննության չառնելը հանգեցրել է վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ Ա.Բաբաջանյանի արդար դատաքննության իրավունքի խախտման:

19. Սույն որոշման 13.1-13.4-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ է տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

20. Վերոգրյալի համատեքստում, անդրադառնալով սույն գործով Ա.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը բացառող հանգամանքի հնարավոր առկայության հարցին՝ մի կողմից նկատի ունենալով, որ սույն գործով քրեական հետապնդումը բացառող հանգամանքի քննարկման ուղղությամբ չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, մյուս կողմից՝ հաշվի առնելով վճռաբեկության գործառույթային առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ տրված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Արման Շամիրի Բաբաջանյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճիռն ու ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հունվարի 12-ի դատավճիռը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ Ա.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական

հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու ուղղությամբ²⁷ և արդյունքում հանգի համապատասխան հետևության:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արման Շամիրի Բաբաջանյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճիռն ու ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հունվարի 12-ի դատավճիռը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով բեկանել, ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

²⁷ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ և 16.2-րդ կետերը:

9.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0281/01/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

27 մայիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Կարեն Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունվարի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ս.Նազարյանի (այսուհետ՝ նաև Քննիչ) որոշմամբ հարուցվել է թիվ 13103416 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2016 թվականի ապրիլի 15-ին Կարեն Սամվելի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև

Առաջին ատյանի դատարան՝ 2018 թվականի մայիսի 30-ի դատավճռով Կ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել մինչև 2016 թվականի մայիսի 16-ը գործող խմբագրությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով: Կ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, ու նա ազատվել է քրեական պատասխանատվությունից՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի պաշտպան Հ.Բաբայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունվարի 10-ի որոշմամբ բողոքը բավարարել է. Կ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անմեղ ու արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 10-ի որոշման դեմ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. 2016 թվականի ապրիլի 15-ին Քննիչը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը 15 օրով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանը (այսուհետ՝ նաև Դատախազ) նախաքննության ժամկետը երկարացրել է 5 օրով՝ մինչև ապրիլի 23-ը¹:

5.1. 2016 թվականի ապրիլի 19-ին կազմվել է արձանագրություն՝ նախաքննության ավարտման վերաբերյալ մեղադրյալ Կ.Հովհաննիսյանին հայտնելու մասին²:

2016 թվականի ապրիլի 19-ին կազմվել է արձանագրություն՝ քրեական գործի նյութերին մեղադրյալ Կ.Հովհաննիսյանին և պաշտպանին ծանոթացնելու մասին³:

2016 թվականի ապրիլի 19-ին քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում մեղադրյալ Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպանը Քննիչին բացարկ են հայտնել: Մասնավորապես, Կ.Հովհաննիսյանը հայտարարել է, որ իր միջնորդությունը մերժելով, Քննիչը ցուցաբերել է կանխակալ վերաբերմունք: Իսկ Կ.Հովհաննիսյանի պաշտպանը նշել է, որ. «Առանց քրեական գործի

¹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 119-121:

² Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 124:

³ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 125:

բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարելու, խստարելով մրցակցության և արդար դատական քննության սկզբունքը, լիովին անհիմն մերժելով մեղադրյալի միջնորդությունը, քննիչ Ս.Նազարյանը հայրարարում է նախաքննության ավարտի մասին, ինչը վկայում է քննիչի կանխակալ և ոչ օբյեկտիվ վերաբերմունքի մասին»⁴:

2016 թվականի ապրիլի 21-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, և նույն թվականի ապրիլի 22-ին քրեական գործն ուղարկվել է Դատախազին⁵:

5.2. 2016 թվականի ապրիլի 26-ին Դատախազը որոշում է կայացրել թիվ 13103416 քրեական գործով մեղադրական եզրակացությունը չհաստատելու և քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին⁶:

5.3. Քննիչի՝ 2016 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Կ.Հովհաննիսյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով⁷:

5.4. 2016 թվականի հոկտեմբերի 26-ին թիվ 13103416 քրեական գործը նոր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան⁸:

6. Դատաքննության ընթացքում մեղադրողի՝ «Առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին» 2017 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ Կ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նոր մեղադրանք է առաջադրվել այն բանի համար որ. «(...) [Ն]ա 2012 թվականի դեկտեմբերի 11-ից հանդիսանալով ձեռնարկարհրական գործունեություն ծավալող «Դրիմթիմ 1» ՍՊ ընկերության 75% բաժնեմասերի բաժնետեր և ընկերության րնօրեն չի կատարել ՀՀ ֆինանսների նախարարության «Կենտրոն» հարկային րեսչության կողմից կայացված թվով չորս որոշումներով արձանագրված, ընկերության կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու, ինչպես նաև դրանց վրա արգելանք դնելու մասին որոշումներով արձանագրված, պերության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունները: Նշված որոշումների հիման վրա ՀՀ ԱԵ ԴԱՀԿ ծառայությունում հարուցված կարարողական վարույթի շրջանակներում 2015 թվականի մարտի 19-ին և նույն թվականի հունիսի 10-ին արգելանք է դրվել պարտապան հանդիսացող «Դրիմթիմ 1» ՍՊ ընկերության դրամարկղային մեքենա մուքրագրվող դրամական միջոցների վրա, միաժամանակ ընկերության րնօրեն Կարեն Հովհաննիսյանը զգուշացվել է հսկիչ դրամարկղային մեքենա մուքրագրվող դրամական միջոցները ԴԱՀԿ ծառայությունում կանխիկ

⁴ Տն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 124-125:
⁵ Տն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 132-136, 140:
⁶ Տն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 142-146:
⁷ Տն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 240-243:
⁸ Տն քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 1:

վճարելու կամ Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունքի 900013288015 հաշվեհամարին փոխանցելու պարտավորության մասին ինչպես նաև զգուշացվել է. այդուհետև հսկիչ դրամարկղային մեքենա մուրքագրվող դրամական միջոցներն ինքնուրույն փոփոխելու դեպքում սահմանված պարտասանավորության մասին: Այսինքն՝ Կարեն Հովհաննիսյանը գիրակցելով «որ պահանջն է ընկերության հսկիչ դրամարկղային մեքենա մուրքագրվող դրամական միջոցները ԴԱՀԿ ծառայությունում կանխիկ վճարելու կամ Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունքի 900013288015 հաշվեհամարին փոխանցելու պարտավորություն «միաժամանակ գիրակցելով «որ իրեն է վստահվել արգելանքի փակ գրնվող դրամական միջոցները վճարելը «իր՝ որպես գործադիր մարմնի ղեկավարի լիազորություններն իրականացրել է ձևականորեն և ստանց ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության թույլտվության՝ դրամարկղային մեքենա մուրքագրված 2.559.852 ՀՀ դրամի չափով դրամական միջոցները հանձնել է այլ անձանց՝ այդ կերպ կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություններից մեկը այն է՝ արգելանքի փակ գրնվող խոշոր չափերով գույքը սպորինսաբար մեկ ուրիշին հանձնելն այն անձի կողմից ում այդ գույքը վստահված է եղել (...):»⁹:

7. Առաջին առյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «Դատարանը, (...) վերլուծելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն ու համակցության մեջ գնահատելով դատաքննությանը հետազոտված սպացույցները, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմանը հանգում է հետևության, որ քրեական գործի դատարանի կողմից գնահատված սպացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմանը, և սույն քրեական գործին վերաբերվող փոփոխական կազմակերպչական սպացույցների բավարար ամբողջությամբ հաստատվում է, որ ամբաստանյալը կատարել է իրեն մեղաագրվող արարքը, այսինքն՝ կատարել է հանցագործություն նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 345-րդ հոդվածի 1-ին մասով, որով և պետք է պարտասանավորության ենթարկվի:

(...)

Դատարանը, անդրադառնալով քրեական գործի նախաքննությունը քրեական դատավարության սկզբունքների էական խախտումներով կատարված լինելու մասին պաշտպանի ներկայացրած գրավոր ձևով նշված պարճատաքանություններին և հանցակազմի բացակայության ու քրեական դատավարության օրենսգրքի պահանջների մի շարք խախտումների, այդ խախտումներով անթույլատրելի սպացույցներ ձեռք բերելու, ինչպես նաև իրավական հետևանքներ չստանալու դատավարական որոշումներ կայացնելու հիմքով ամբաստանյալին արդարացնելու մասին նրա միջնորդությանը, գրնում է, որ նրա կողմից նշված խախտումները, այդ թվում՝ ենթադրյալ խախտումները, չեն կարող ամբաստանյալին արդարացնելու հիմք հանդիսանալ:

⁹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 10-14:

Այսպես (...) քննիչը պարտավոր չէ դատախազի կողմից լրացուցիչ նախաքննության վերադարձված գործը կրկին ընդունել վարույթ, այլ այն սրանապուց հետո պետք է նախաքննությունն ավարտի մեկամյա ժամկետում, իսկ դատախազը պարտավոր է ոչ թե նախաքննության համար սահմանված ժամկետում, այլ մեղադրական եզրակացությամբ գործն սրանապուց հետո 5 օրվա ընթացքում, կայացնել որոշում ինչը նշանակում է, որ 5-օրյա ժամկետը չի հաշվարկվում նախաքննության համար օրենքով սահմանված ժամկետի մեջ: Հետևաբար անհիմն են պաշտպանի այն պատճառաբանությունները, որ քննիչ Մ.Նազարյանը կատարել է իր վարույթում չգրնվող ավարտված գործով նախնական քննություն, դատախազը մեղադրական եզրակացությունը չհասարարելու և գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու վերաբերյալ որոշում է կայացրել նախաքննության ժամկետներն անցած լինելուց հետո, ուստի դատախազի՝ գործի քննության ժամկետներից դուրս որոշում կայացնելը դրան հաջորդող ցուցումներ տալը քննիչի ոչ իր վարույթում գրնվող գործով կատարված քննչական գործողությունները և կայացված դատավարական որոշումները չեն կարող որևէ իրավական հետևանք առաջացնել:

Անդրադառնալով պաշտպանի այն պատճառաբանությանը, որ 19.04.2016թ. քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում մեղադրյալի և իր կողմից քննիչին բացարկ է հայտնվել, որը սակայն 20.10.2016թ. դրությամբ քննարկված չի եղել և այդ պայմաններում քննիչը կրկին անգամ ավարտել է նախաքննությունը, այսինքն՝ լինելով բացարկման ենթակա անձ, քննիչը 6 ամիս շարունակել է նախաքննություն կատարել ժամկետներ սրանապուց դատախազից, դատարանն արձանագրում է, որ ի պատասխան պաշտպանի միջնորդության (իրազեկման), նա 28.10.2016թ-ին արացել է դատախազ Ս.Անդրեասյանի որոշումը, որով անդրադառնալով բացարկը քննարկելու հարցին, դատախազը գրել է, որ այն նպատակահարմար չէ քննարկել, քանի որ այն հայտնվել է նախաքննության ավարտին և բացարկը քննարկելու մասին դատախազի որոշումը կլիներ հիմնադրակ և կլրեր ձևական բնույթ»:

(...) Դատարանը, համաձայնվելով պաշտպանի պատճառաբանության հետ, գրնում է, որ (...) քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելուց և նախաքննության կատարումը նույն քննիչի կողմից շարունակելու դեպքում դատախազը պարտավոր էր ըստ էության քննության առնել քննիչին հայտնված բացարկը, սակայն հարկ է համարում քննարկել այն հարցը, թե արդյոք սույն գործով նշված խախտումը քրեադատավարական սկզբունքի այնպիսի էական խախտում է, որը կարող է ինքնին վերցված բավարար լինել ամբաստանյալին արդարացնելու համար, նկատի ունենալով, որ պաշտպանի նշած քրեադատավարական մյուս ենթադրյալ խախտումների վերաբերյալ դատարանն արդեն իսկ հայտնել է իր դիրքորոշումը:

Քրեական գործի նյութերի համաձայն՝ լրացուցիչ նախաքննության ընթացքում քննիչի կողմից չեն հավաքվել «ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում չեն նշվել և մեղադրական եզրակացությամբ չեն գնահատվել այնպիսի սպառնույթներ «որոնք կարող են հիմք հանդիսանալ եզրահանգելու «որ

խախտվել են ամբաստանյալի հիմնական իրավունքներն ու ազատությունները: Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքերը՝ նրան առաջադրված մեղադրանքը հիմնավորող սպացույցները «նախաքննության ձեռք են բերվել մինչև դատախազի կողմից գործը լրացուցիչ քննության վերադարձնելը:

Դատարանը հարկ է համարում նաև նշել «որ դատաքննությամբ նույնպես չհիմնավորվեց «որ քննիչն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է եղել գործի ելքով «չի իրականացրել գործի արդարացի քննություն «ուստի և չէր կարող մասնակցել քրեական գործով վարույթին:

Դատարանը գրնում է, որ դատաքննությամբ նաև չհաստատվեց որ նախաքննության ընթացքում սպացույցներ ձեռք բերելիս թույլ են տրվել քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի այնպիսի էական խախտումներ որոնցով խախտվել են քրեական դատավարության մասնակիցների մասնավորապես՝ ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի հիմնական իրավունքներն ու ազատությունները կամ քրեական դատավարության սկզբունքները: Այսպիսով դատարանը հանգում է եզրակացության, որ թեև քննիչին հայտնված բացարկի չքննարկմամբ թույլ է տրվել քրեադատավարական օրենքի պահանջի խախտում, «ասկայն այն իր բնույթով և առաջացրած հետևանքներով չի կարող համարվել օրենքի ու դատավարական սկզբունքի այնպիսի էական խախտում, որն ազդել է կամ կարող էր ազդել սրացված փաստական փյույաների հավաստիության վրա և առաջացրել է ամբաստանյալի հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտում, որի արդյունքում նախաքննությամբ ձեռք բերված փաստական փյույաները որպես սպացույց պետք է համարվեն անթույլարդելի և այդ հիմքով ամբաստանյալը պետք է արդարացվի (...):»¹⁰:

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) ԽՔՆԻՉՆ, ըստ էության, պարտավոր է դատախազի կողմից լրացուցիչ նախաքննության վերադարձված գործը ոչ միայն կրկին ընդունել վարույթ, այլ այն սրանսույուց հետո պետք է նախաքննությունն ավարտի մեկամյա ժամկետում, իսկ դատախազին մեղադրական եզրակացությամբ գործն սրանսույուց հետո որոշում կայացնելու համար վերապահված 5-օրյա ժամկետն ինքնին պետք է դիրարկել նախաքննության համար օրենքով սահմանված ժամկետի մեջ: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը: Անդրադատնալով նաև պաշտպանի այն պարճատարանությանը, որ 19.04.2016թ. քրեական գործի նյութերին ճանթանալու ընթացքում մեղադրյալի և իր կողմից քննիչին բացարկ է հայտնվել, որը սակայն 20.10.2016թ. դրությամբ քննարկված չի եղել և այդ

¹⁰ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 63-70:

սայաններում քննիչը կրկին անգամ սվարել է նախաքննությունը, այսինքն՝ լինելով բացարկյան ենթակա անձ, քննիչը 6 ամիս շարունակել է նախաքննություն կարարել ժամկետներ սրանսարով դատահագից, սպա վերաքննիչ դատարանը գրնում է, որ բոլոր դեպքերում, (այդ թվում նաև քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելուց և նախաքննության կարարումը նույն քննիչի կողմից շարունակելու դեպքում) դատահագը սարարավոր էր ըստ էության քննության առնել քննիչին հայրնված բացարկը, ինչը չի արվել: Սույն գործով, նշված խահարումն իր հերթին հանգեցրել է քրեադատարավարական սկզբունքի այնպիսի էական խահարման, որն ինքին ազդել է վարույթի հերագա ընթացքում քննիչի կողմից կայացված դատավարական որոշումների, այդ թվում նաև (քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու արդյունքում) կազմված նոր մեղադրական եզրակացության իրավաչափության վրա: Բացի այդ, դատահագը մեղադրական եզրակացությունը չհասարարելու և գործը լրացուցիչ քննության վերադարձնելու վերաբերյալ որոշում է կայացրել նախաքննության ժամկետներն արդեն իսկ լրացած լինելու սայաններում: Հերևար, դատահագի կողմից քննիչի բացարկյան հարցը չլուծելու, գործի նախնական քննության ժամկետներից դուրս, նման որոշում կայացնելու, դրան հաջորդող ցուցումներ տարու, այնուհետև քննիչի կողմից գործն իր վարույթ չընդունելու սարագայում, կարարված քննչական գործողությունները և կայացված դատավարական որոշումներն, այդ թվում նաև քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու արդյունքում կազմված նոր մեղադրական եզրակացությունը չեն կարող դիրարկվել իրավաչափ: Այլ կերպ սասած, կոնկրետ դեպքում, թույլ են տրվել քննչական կամ դատավարական գործողությունների կարարման կարգի այնպիսի էական խահարումներ, ինչի արդյունքում խահարվել են քրեական դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ ամբասարանյալ Կ.Հովհաննիսյանի հիմնական իրավունքներն, այդ թվում նաև իր սաշտականությունը քննիչին բացարկ հայրնելու եղանակով իրացնելու առնչությամբ:

Վերաքննիչ դատարանի դիրարկմամբ, նշված քրեադատարավարական խահարումներն իրենց բնույթով էական են, ազդել են և չէին կարող չազդել սույն քրեական գործով վարույթի արդարացիության, այդ թվում նաև նոր կազմված մեղադրական եզրակացությամբ տեղ գրած փաստական տվյալների թույլարելիության վրա:

Քննարկվող դեպքում, նշվածի առնչությամբ, դատարանը հանգել է չհիմնավորված հերևությունների, արդյունքում թույլ է տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խահարում, որն իր հերթին հանգեցրել է նաև նյութական իրավունքի խահարման:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործում առկա սպացույցների համակցությունը, դրանց թույլարելիության տեսանկյունից, արդեն իսկ բավարար հիմք չի կարող հանդիսանալ հիմնավոր կասկածից վեր սպացուցողական չափանիշին համասարասիսան հատարարված համարելու,

որ ամբաստանյալ Կարեն Սամվելի Հովհաննիսյանը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք (...)¹¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 10-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, և այն կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումը վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը նախաքննության ավարտման պահի վերաբերյալ դիրքորոշման հանգեղիս չի կատարել համակարգային և համապարփակ վերլուծություն, հաշվի չի առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ և 197-րդ հոդվածների միջև առկա հակասությունները, առաջնորդվել է բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի կարգավորումներով, և մեղադրական եզրակացության կապակցությամբ դատախազի համար նախատեսված հնգօրյա ժամկետը դիտարկելով նախաքննության ժամկետի մեջ՝ եկել է եզրահանգման, որ Դատախազը 2016 թվականի ապրիլի 26-ի որոշումը կայացրել է նախաքննության ժամկետներն արդեն իսկ լրացած լինելու պայմաններում:

Բողոքաբերի կարծիքով՝ քրեադատավարական իրավանորմների համալիր վերլուծությունը միանգամայն վկայում է, որ նշված հնգօրյա ժամկետը որևէ կերպ չի կարող համարվել նախաքննության ժամկետ:

9.1. Անդրադառնալով Դատախազի կողմից լրացուցիչ քննության ուղարկված քրեական գործը Քննիչի կողմից կրկին վարույթ ընդունելու հարցին՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի չի նախատեսել այնպիսի դրույթ, որի ուժով դատախազի կողմից լրացուցիչ քննության ուղարկված քրեական գործով քննիչը պարտավոր է կայացնել քրեական գործը կրկին վարույթ ընդունելու մասին որոշում:

9.2. Բողոքաբերի պնդմամբ՝ անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Դատախազի կողմից Քննիչի բացարկման հարցը չլուծելը տվյալ դեպքում հանգեցրել է քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի էական խախտումների, ինչի արդյունքում խախտվել են քրեական դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի հիմնական իրավունքները, այդ թվում նաև՝ իր պաշտպանությունը Քննիչին բացարկ հայտնելու եղանակով իրացնելու առնչությամբ:

Ի հիմնավորումը վերոշարադրյալի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված դատական ակտում որևէ կոնկրետ

¹¹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 4-րդ, թերթեր 65-136:

հանգամանք կամ փաստական տվյալ չի նշել այն մասին, թե ինչոմ է արտահայտվել այդ էական խախտումը, քրեական գործով ապացուցման գործընթացի վրա ինչպես է այն ազդել, ինչոմն է դրսևորվել ամբաստանյալի իրավունքներին և օրինական շահերին հասցված վնասը:

10. Ելնելով վերոնշյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի որոշումը՝ ամբաստանյալ Կարեն Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով անմեղ ճանաչելու և արարքում հանցակազմի բացակայության հիմքով արդարացնելու վերաբերյալ:

I. Նախաքննության ժամկետի ավարտը.

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործով մինչդարական վարույթը՝ քրեական գործով վարույթը քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըսր էության քննելու համար դատարան ուղարկելն է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական քննության միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը»:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, ինչպես նաև կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ համապարասիսանարար գործի նախաքննությունը վերսկսելու մասին որոշում կայացնելու, լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից սրանսալու, գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած: Այդ ժամկետի հետագա երկարացումը կարող է կատարվել սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գատրահազր մեղադրական եզրակացությամբ գործն սրանսալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել հետկյալ որոշումներից մեկը՝

1) հասարարել մեղադրական եզրակացությունը

(...)

3) իր ցուցումներով գործը վերադարձնել քննիչին լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հասարարելով մեղադրական եզրակացությունը՝ դատարիսազը գործն ուղարկում է այն դատարան, որին գործն ընդրարյա է»:

13. Քրեական գործով մինչդատական վարույթի վերաբերյալ վերոնշյալ քրեադատավարական նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե մինչդատական վարույթն ավարտվում է **գործն ըար էության քննության ստնելու համար դատարան ուղարկելով**, ապա նախաքննությունը, ինչպես ուղղակիորեն սահմանել է օրենսդիրը, ավարտվում է, ի թիվս այլնի, **մեղադրական եզրակացություն** կազմելով: Մեղադրական եզրակացություն կազմելը որպես նախաքննության ավարտ դիտարկելը բխում է նաև նախնական քննության այս ձևի դատավարական բովանդակությունից: Մեղադրական եզրակացությունն այն դատավարական փաստաթուղթն է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները և ստաննում դատավարական ամրագրում: Նշված փուլին հաջորդում է մինչդատական վարույթի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից այդ մեղադրական եզրակացության ստուգման գործընթացը, որի ընթացքում ապացույցների հավաքմանն ուղղված քննչական կամ այլ դատավարական գործողություններ չեն իրականացվում, ինչը բնորոշ է նախաքննությանը: Հետևաբար, մեղադրական եզրակացությամբ ստացված գործով որոշումներ կայացնելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածով նախատեսված հնգօրյա ժամկետը պետք է հաշվարկվի նախաքննության ավարտից հետո: Նշված մոտեցման մասին են վկայում նաև քրեադատավարական մի շարք ինստիտուտների այլ կարգավորումներ: Օրինակ՝ համագործակցության վարույթի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.12.-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ **նախաքննության ավարտից հետո** քննիչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով, քրեական գործը հանձնում է հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդություն կազմելու համար: Վկայակոչված նորմն ուղղակիորեն ամրագրում է, որ մեղադրական եզրակացությունը հսկող դատախազի կողմից հաստատվում և կոնկրետ ղեկքում համապատասխան միջնորդությունը կազմվում է նախաքննության ավարտից հետո, այլ ոչ թե նախաքննության ժամկետի ընթացքում:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթին, որ նախաքննության ժամկետը, ի թիվս այլնի, ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելու օրը, ապա այս առնչությամբ հարկ է նշել, որ նույն հոդվածի 7-րդ մասի

համաձայն, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու դեպքում, նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու օրվանից սկսած: Վերոնշյալ նորմով, կոնկրետ ժամկետում նախաքննությունն ավարտելու պահանջի նախատեսումը վկայում է այն մասին, որ օրենսդիրը ելնում է այս դեպքում ավարտված նախաքննությունը վերսկսելու գաղափարից: Հակառակ դեպքում, եթե նախաքննության ժամկետը ներառել նաև մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազի կողմից որոշումներ կայացնելու համար սահմանված ժամկետը, ապա գործը լրացուցիչ քննության վերադարձնելու դեպքում, նախաքննության ժամկետը պետք է պարզապես շարունակեր հոսել:

Այսպիսով, քրեադատավարական վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախաքննության ժամկետի հաշվարկն ավարտվում է մեղադրական եզրակացություն կազմելով: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածով սահմանված՝ մեղադրական եզրակացությամբ ստացված գործով որոշումներ կայացնելու համար դատախազի համար սահմանված հնգօրյա ժամկետը նախաքննության ժամկետի մեջ չի հաշվարկվում:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.

– թիվ 13103416 քրեական գործի նախաքննության ժամկետը Քննիչի՝ 2016 թվականի ապրիլի 15-ի համապատասխան միջնորդության արդյունքում, Դատախազի կողմից երկարացվել է հինգ օրով՝ մինչև 2016 թվականի ապրիլի 23-ը¹²,

– 2016 թվականի ապրիլի 21-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, որը նույն թվականի ապրիլի 22-ին ուղարկվել է Դատախազին¹³,

– 2016 թվականի ապրիլի 26-ին Դատախազի կողմից որոշում է կայացվել թիվ 13103416 քրեական գործով մեղադրական եզրակացությունը չհաստատելու և քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին¹⁴,

– Առաջին ատյանի դատարանը գտել է, որ մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո, դատախազի կողմից համապատասխան որոշում կայացնելու 5-օրյա ժամկետը ենթակա չէ հաշվարկման նախաքննության ժամկետի մեջ¹⁵,

– Վերաքննիչ դատարանը գտել է, որ մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո, դատախազի կողմից համապատասխան որոշում կայացնելու 5-օրյա ժամկետը ենթակա է հաշվարկման նախաքննության ժամկետի մեջ¹⁶:

¹² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ դատախազին վերապահված 5-օրյա ժամկետը պետք է դիտարկել նախաքննության համար օրենքով սահմանված ժամկետի մեջ, հիմնավոր չէ:

II. Լրացուցիչ քննության վերադարձված գործը քննիչի կողմից վարույթ ընդունելը.

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատախազի լիազորություններն ամրագրող 53-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ *«Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է վերադարձնել քրեական գործերը քննիչին լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով»:*

17. Դատախազի լիազորություններն ամրագրող՝ վերոշարադրյալ քրեադատավարական նորմից, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ գործը դատախազի կողմից քննիչին վերադարձնելու վերը հիշատակված քրեադատավարական նորմի ձևակերպումից բխում է, որ օրենսդիրն ամրագրել է լրացուցիչ քննություն կատարելու և մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար գործը կոնկրետ քննիչին վերադարձնելու օրենսդրական պահանջ: Այսինքն, տվյալ դեպքում գործը վերադարձվում է այն քննիչին, ում վարույթում այն գտնվել է, և ով արդեն իսկ գործը վարույթ ընդունելու մասին որոշում է կայացրել՝ ելնելով նման որոշում կայացնելու պարտադիր օրենսդրական պահանջից՝ որպես քրեական գործով նախաքննություն իրականացնելու իրավասություն ձեռք բերելու և պատշաճ սուբյեկտ հանդիսանալու իրավական հիմք: Վերոշարադրյալ գաղափարի հաշվառմամբ էլ օրենսդիրը չի նախատեսել գործը լրացուցիչ քննության վերադարձվելու դեպքում քննիչի կողմից կրկին այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրենսդրական պահանջ: Գործը լրացուցիչ քննության վերադարձվելու դեպքում այն ենթակա կլինի կրկին վարույթ ընդունման, եթե լրացուցիչ քննությունը հանձնարարվի ոչ թե այն քննիչին, ում վարույթում տվյալ գործը գտնվել է, մեկ այլ քննիչի, ով տվյալ քրեական գործը երբևիցե իր վարույթ ընդունելու մասին որոշում չի կայացրել, և հետևաբար չի կարող տվյալ գործով նախաքննություն իրականացնելու իրավասու սուբյեկտ հանդիսանալ:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը չհաստատելուց և քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելուց հետո լրացուցիչ քննությունն իրականացվել է սույն Քննիչի կողմից¹⁷:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը:

19. Սույն որոշման 17-րդ կետում ներկայացված իրավական դիրքորոշման հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ առանց գործը կրկին վարույթ ընդունելու կատարված քննչական գործողությունների և կայացված դատավարական որոշումների արդյունքում կազմված նոր մեղադրական եզրակացությունն ոչ իրավաչափ է:

III. Քննիչին հայտնած բացարկի լուծումը.

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները հայտարարվում են քրեական դատավարությանը համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:*

(...)

3. *Դատավարության մասնակիցն իրավունք ունի դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին քրեական գործով վարույթի ցանկացած պահի բացարկ հայտնելու: (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննիչը կամ հետաքննության մարմնի աշխատակիցը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե սույն օրենսգրքի՝ դատավորի ինքնաբացարկը սահմանող 90 հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը:*

(...)

3. *Քննիչին կամ հետաքննության մարմնի աշխատակցին հայտնված բացարկը լուծում է քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը կամ վերադաս դատախազը»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանող՝ 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ (...):»:

21. Բացարկի ինստիտուտի նախատեսմամբ օրենսդիրն ամրագրել է այն դատավարական երաշխիքը, որը հնարավորություն է տալիս քրեական գործի ելքով ուղղակի կամ անուղղակի շահագրգռված դատավարության սուբյեկտին հեռացնել քրեական գործի վարույթն իրականացնելուց կամ գործի վարույթին մասնակցելուց: Այն անձի արդար դատաքննության, իր

իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի, ինչպես նաև իրավունքի գերակայության ապահովման գրավականն է¹⁸: Հետևաբար, վարույթն իրականացնող մարմնին հայտնած բացարկյալ լուծելը և վերջինիս՝ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելը կոնկրետ վարույթով պատշաճ սուբյեկտի կողմից քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման և դատավարական որոշումների ընդունման, և ըստ այդմ՝ դրանց օրինականության ապահովման նախապայման է: Այս իրավաչափ գաղափարից է բխում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումը, համաձայն որի՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ **բացարկման ենթակա անձի մասնակցությամբ**, եթե նա իմացել է կամ պետք է իմանար քրեական գործով վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին: Հետևաբար, եթե քրեական գործով ձեռքբերված ապացույցների թույլատրելիությունը վիճարկվում է նշված հիմքով, ապացույցների գնահատում իրականացնող սուբյեկտը պետք է քննարկման առարկա դարձնի վարույթին՝ ապացույցներ ձեռք բերած սուբյեկտի **մասնակցությունը բացառող կոնկրետ հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը**:

21.1. Վերոշարադրյալ օրենսդրական նորմերի վերլուծությունից բխում է, որ քննիչի՝ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներից մեկը կողմի նկատմամբ ունեցած կանխակալ վերաբերմունքն է: Սակայն նշված հիմքով քննիչին բացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելիս, միջնորդություն հարուցող սուբյեկտը պետք է կոնկրետ փաստերի վկայակոչմամբ հիմնավորի նշված հիմքի առկայությունը, որն անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ողջամիտ կասկած հարուցել քննիչի անաչառության վերաբերյալ: Իր հերթին բացարկյալ լուծող կամ բացարկման ենթակա անձի կողմից ձեռքբերված լինելու հիմքով վիճարկվող ապացույցի թույլատրելիությունը գնահատող սուբյեկտը պետք է հիմնավորված հաստատի կամ հերքի նշված հիմքի առկայությունը: Ինչ վերաբերում է քննիչի կայացրած որոշումների հետ դատավարության մասնակցի անհամաձայնությանը կամ սուսկ այն հանգամանքի վկայակոչմանը, որ դրանք չեն բխում կոնկրետ մասնակցի շահերից, դեռևս բավարար չեն քննիչի ոչ անաչառ լինելու վերաբերյալ ողջամիտ ենթադրություն անելու համար:

22. Սույն գործի նյութերի համաձայն՝

– 2016 թվականի ապրիլի 19-ին քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում մեղադրյալ Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպանը Քննիչին բացարկ են հայտնել: Կ.Հովհաննիսյանը հայտարարել է, որ միջնորդությունը մերժելով՝ քննիչը ցուցաբերել է կանխակալ վերաբերմունք: Իսկ Կ.Հովհաննիսյանի պաշտպանը նշել է, որ. «*Առանց քրեական գործի բազմակողմանի և օբյեկտիվ*

¹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրաչյա Ներսիսյանի և Էդգար Ամիրյանի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴԵ2/0005/01/16 որոշման 14-րդ կետը:

քննություն կատարելու, խահարելով միջակցության և արդար դատական քննության սկզբունքը, լիովին անհիմն մերժելով մեղադրյալի միջնորդությունը, քննիչ Ս.Նազարյանը հայտարարում է նախաքննության ավարտի մասին, ինչը վկայում է քննիչի կանխակա և ոչ օբյեկտիվ վերաբերմունքի մասին»¹⁹,

– 2016 թվականի ապրիլի 26-ին Դատախազի կողմից որոշում է կայացվել թիվ 13103416 քրեական գործով մեղադրական եզրակացությունը չհաստատելու և քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին²⁰,

– վերադարձված քրեական գործով քննությունն իրականացվել է նույն Քննիչի կողմից, ով 2016 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Կ.Հովհաննիսյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով²¹,

– 2016 թվականի հոկտեմբերի 26-ին թիվ 13103416 քրեական գործը նոր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան²²,

– Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ թեև Քննիչին հայտնված բացարկի չքննարկմամբ թույլ է տրվել քրեադատավարական օրենքի պահանջի խախտում, սակայն այն իր բնույթով և առաջացրած հետևանքներով չի կարող համարվել օրենքի ու դատավարական սկզբունքի այնպիսի էական խախտում, որն ազդել է կամ կարող էր ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա և առաջացնել ամբաստանյալի հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտում, որի արդյունքում նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալները որպես ապացույց պետք է համարվեն անթույլատրելի և այդ հիմքով ամբաստանյալը պետք է արդարացվի²³.

– Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով պաշտպանի այն փաստարկին, որ 2016 թվականի ապրիլի 19-ին քրեական գործի նյութերին ծանոթանալու ընթացքում մեղադրյալի և իր կողմից Քննիչին հայտնված բացարկը 2016 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ քննարկված չի եղել, և այդ պայմաններում Քննիչը կրկին անգամ ավարտել է նախաքննությունը, այսինքն՝ լինելով **բացարկման ենթակա անձ**, քննիչը 6 ամիս շարունակել է նախաքննություն կատարել՝ ժամկետներ ստանալով Դատախազից, գտել է, որ բոլոր դեպքերում (այդ թվում նաև քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու և նախաքննության կատարումը նույն քննիչի կողմից շարունակելու դեպքում) Դատախազը պարտավոր էր ըստ էության քննության առնել քննիչին հայտնված բացարկը, ինչը չի արվել: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ նշված խախտումն իր հերթին հանգեցրել է քրեադատավարական սկզբունքի այնպիսի

¹⁹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:

²¹ Տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը:

²³ Տե՛ս նույն տեղում:

էական խախտման, որն ինքնին ազդել է վարույթի հետագա ընթացքում քննիչի կողմից կայացված դատավարական որոշումների, այդ թվում նաև (քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու արդյունքում)՝ կազմված նոր մեղադրական եզրակացության իրավաչափության վրա²⁴:

23. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները վերլուծելով սույն որոշման 21-21.1-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատախազը, չքննարկելով Քննիչին հայտնած բացարկը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի խախտում:

23.1. Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննիչին բացարկ հայտնելը և հայտնած բացարկը չլուծելն ինքնին չեն ենթադրում բացարկ հայտնելու հիմքի՝ գործի ելքով քննիչի շահագրգռված լինելու փաստի առկայություն: Այլ կերպ՝ քննիչին հայտնած բացարկը չլուծելը չի ենթադրում, որ քննիչը ինքնաբերաբար դառնում է **բացարկման ենթակա անձ**, որի ուժով էլ նրա կողմից ձեռք բերված ապացույցները պետք է համարվեն անթույլատրելի:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Քննիչին հայտնած բացարկը չլուծելը տվյալ դեպքում քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտում չէ, որ կարող էր մեխանիկորեն հանգեցնել քրեական գործով վերջնիս կողմից ձեռք բերված փաստական տվյալները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության: Եվ տվյալ դեպքում, ստորադաս դատարանները, Քննիչի կողմից ձեռքբերված ապացույցները գնահատելիս, պետք է քննարկելին վերջնիս՝ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչը և փաստացի արվել է Առաջին ատյանի դատարանի կողմից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն Քննիչին դիտարկել է **բացարկման ենթակա անձ**՝ բացառապես պայմանավորված վերջնիս բացարկ հայտնված լինելու և Դատախազի կողմից այն քննարկված չլինելու հիմքով:

23.2. Ինչ վերաբերում է Քննիչի՝ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայությանը, ապա սույն գործի նյութերից բխում է, որ Քննիչին բացարկ է հայտնվել պաշտպանության կողմի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալու հիմքով՝ իբրև հիմնավորում վկայակոչելով մեղադրյալի հարուցած միջնորդությունը մերժելը և առանց բազմակողմանի ու օբյեկտիվ քննություն իրականացնելու նախաքննության ավարտ հայտարարելը:

23.3. Սույն որոշման 21.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Քննիչի կայացրած որոշման հետ կողմի անհամաձայնությունը, առանց Քննիչի անաչառությունը կասկածի տակ դնող բավարար փաստերի վկայակոչման, չի կարող բացարկի հիմք լինել, **բացառել վարույթին վերջնիս մասնակցությունը**: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշումը, որ թեև Քննիչին հայտնված բացարկի չքննարկմամբ

²⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Դատախազը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, սակայն այն իր բնույթով և առաջացրած հետևանքներով չի կարող համարվել քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտում, որն ազդած լինի գործով ձեռքբերված փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության վրա:

24. Ուստի, նշվածի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չեն Քննիչին հայտնած բացարկյր Դատախազի կողմից չուծելու պարագայում վերադարձված քրեական գործով կատարված քննչական գործողությունների, կայացված դատավարական որոշումների և դրանց արդյունքում կազմված նոր մեղադրական եզրակացության ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները:

25. Այսպիսով, ամփոփելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ ամբաստանյալ Կարեն Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով անմեղ ճանաչելու և արարքում հանցակազմի բացակայության հիմքով արդարացնելու վերաբերյալ, իրավաչափ չէ:

26. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 92-րդ, 105-րդ և 274-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 30-ի դատավճիռն՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Կարեն Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 10-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան

քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 30-ի դատավճիռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

10.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԴ/0021/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

27 հունիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Գոռ Վրույրի Կարախանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշման դեմ պաշտպան Հ.Ղարաքեշիշյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի հունվարի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 68101120 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով: ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետի տեղակալի՝ 2020 թվականի հունվարի 27-ի որոշմամբ նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին և նույն օրը քրեական գործն ընդունվել է նշված վարչության ավագ քննիչ Գ.Թորոսյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) վարույթ: 2020 թվականի հունվարի 27-ին Գոռ Վրույրի Կարախանյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Գոռ Կարախանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշմամբ Գ.Կարախանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 4-ի որոշմամբ Գ.Կարախանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2020 թվականի մարտի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան): Դատական քննության նախապատրաստական փուլում Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշմամբ Գ.Կարախանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2020 թվականի հունիսի 18-ի դատավճռով Գ.Կարախանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 4 (չորս) ամիս 22 (քսաներկու) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 69-րդ հոդվածների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է արգելանքի տակ գտնվելու ժամկետը և ամբողջությամբ գումարվել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ նշանակված հանրային աշխատանքների չկրած մասն ու Գ.Կարախանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և հանրային աշխատանքներ՝ 1.906 (հազար ինը հարյուր վեց) ժամ տևողությամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Գ.Կարախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 4 (չորս) տարի ժամկետով՝ մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն ղնելով:

Գ.Կարախանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է չեռանալու մասին ստորագրությամբ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մարտի 15-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի դատավճիռը մասնակիորեն բեկանել է և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Գ.Կարախանյանի պաշտպան Ը.Ղարաբեշիջյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում դատախազը փաստել է. «(...) Գրնում եմ, որ [Առաջին արյանի դատարանը] դատական սկրի պարճատարանական մասում ճիշտ չի գնահատել գործի փաստական հանգամանքները և հաշվի չի առել ամբաստանյալ Գոռ Վրոյրի Կարախանյանի կարարած հանցավոր արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը, ինչպես նաև նախկինում կարարված համաստեո հանցագործության հանգամանքը, ինչի արդյունքում հանգել է սիսալ հերևության առ այն, որ աույն գործով առկա են ամբաստանյալ Գոռ Վրոյրի Կարախանյանի նկարմամբ ազարագրման ձևով նշանակված պարիճը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու օրյեկրիվ հիմքերը»: Արդյունքում բողոքաբերը խնդրել է. «Վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Գոռ Վրոյրի Կարախանյանի վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի կողմից թիվ ՇԳ/0021/01/20 քրեական գործով 2020 թվականի հունիսի 18-ին կայացված դարարվճիոը՝ Գ.Կարախանյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմը համարելով անթոյյարբելի»¹:

6. Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիոը մասնակիորեն բեկանելու մասին որոշման համաճայն՝ «(...) Ամբաստանյալ Գոռ Կարախանյանի նկարմամբ պարիճ նշանակելիս [Առաջին արյանի դատարանը սիսալ է կիրառել քրեական օրենքը, ինչն արարահայրվել է հերևյաում:

(...) Ի խախտումը ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի (...) պահանջների [Առաջին արյանի] դատարանն իր 2020 թվականի հունիսի 18-ի դարարվճիոը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կերով Գոռ Կարախանյանին դարարարբելով ազարագրկման 4 արի 4 ամիս 22 օր ժամկերով, ոչ միայն պարիճ է նշանակել օրերով, այլև անբեեսելով պարիճների հաշվակցման կանոնները, ըստ որի հանրային աշխարանքները հաշվակցվում է ազարագրկման ձևով նշանակված պարիճին՝ մեկ օրը հաշվելով երեք ժամի դիմաց, նշանակված պարիճին լրիվ գումարել է նրա նկարմամբ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի փերովարի 22-ի

¹ Տե՛ս քրեական գործ, հասոթր 3-րդ, թերթեր 50-60:

որոշմամբ նշանակված 2200 ժամ հանրային աշխատանքների չկրած մասը 1.906 ժամ րևողությամբ և Գոռ Կարախանյանի նկատմամբ վերջնական պարիժ սահմանել ազատազրկում 4 փարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և հանրային աշխատանքներ 1.906 ժամ րևողությամբ:

Շիրակի մարզի դատախազության դատախազ Դ.Զիլֆինյանը վերաքննիչ բողոք բերելով [Առաջին ասրյանի] դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի դատավճռի դեմ՝ միջնորդել է բեկանել այն և Գոռ Կարախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը համարել անթույլարդելի՝ առանց անդրադատման դատարանի կողմից թույլ տրված քրեական օրենքի վերոնշյալ խախտումներին, որի պայմաններում վերաքննիչ դատարանը կաշկանդված լինելով դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերանայելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջով, իրավասու չէ ավելի լայն ծավալով քննելու գործը՝ վերջնաորոշում Գոռ Կարախանյանի նկատմամբ պարիժ նշանակելով ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի վերոշարադրյալ պահանջների պահպանմամբ, ինչը ինքնին կարող է հանգեցնել նաև ամբաստանյալի վիճակի վարթարացման:

(...) [Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ առաջին ասրյանի դատարանի կողմից թույլ են տրվել քրեական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված դատավճռի կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, դատական ակտը բեկանելու հիմք է, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մասնակիորեն բավարարել, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը նախ և առաջ փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է դատական ակտը վերանայեր դատախազի բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, որոնք վերաբերում էին Գ.Կարախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությանը, այլ ոչ թե Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված՝ պատժի ժամկետները հաշվարկելու ու պատիժը հաշվակցելու խնդրին, ինչը հիմք է տալիս եզրահանգելու, որ վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս գալու օրենսդրությամբ հստակեցված հիմքերի բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 145-160:

Ըստ բողոքաբերի, վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս արձանագրված խախտումն ուղղելու նպատակով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելը և նոր քննության ուղարկելը հանգեցնելու է Գ.Կարախանյանի վիճակի վատթարացման: Այս համատեքստում բողոքի հեղինակը նշել է նաև, որ Գ.Կարախանյանի համար կանխատեսելի չէր Վերաքննիչ դատարանի համապատասխան դիրքորոշումը և վերջինս գրկված է եղել վերաքննիչ բողոքի պատասխանում այդ առնչությամբ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունից, ուստի, ըստ բողոք բերած անձի, խախտվել է նաև արդար դատաքննության իրավունքը:

7.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ և 69-րդ հոդվածների պահանջների մեկնաբանման հարցում եկել է սխալ եզրահանգման: Ըստ բողոքաբերի նշված և վերաբերելի իրավական նորմերի համակցված վերլուծությունը հիմք չի տալիս եզրահանգելու, որ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժն ազատագրկման ձևով նշանակված պատժին հաշվակցելու իմպերատիվ պահանջ է նախատեսված: Ըստ բողոքաբերի այս հարցում դատարանն օժտված է հայեցողությամբ, այսինքն՝ օրենսդիրը նախատեսում է ինչպես այն առանձին ի կատար ածելու, այնպես էլ ազատագրկման ձևով նշանակված պատժին հաշվակցելու հնարավորությունը:

Անդրադառնալով ազատագրկման ժամկետը հաշվարկելու կանոնների խախտման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պնդմանը, բողոքաբերը նշել է, որ թեև Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել խախտում, սակայն այն իր բույթով ձևական է:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կանոնների խախտման հիմքով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մասնակիորեն բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

Վերաքննության գործառության առանձնահատկությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է ստորադաս ատյանի դատական ակտի հիմնավորվածությունն ու իրավաչափությունը: Վերաքննիչ

բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում, այլև նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները. վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն: Վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս գալու հիմքերի սահմանափակ և խիստ որոշակի շրջանակը կոչված է բացառելու վերադաս դատական ատյանի կողմից բողոքում չնշված, անկանխատեսելի հանգամանքներով սահմաններից դուրս գալը: Հակառակ պարագայում, վերադաս դատարանը կիրականացնի գործի լրիվ ծավալով ըստ էության քննություն, ինչն անհամատեղելի կլինի մրցակցության սկզբունքից բխող՝ սահմանափակ վերանայման՝ օրենսդրորեն ամրագրված գաղափարի հետ³:

10. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով վերաքննիչ բողոք է բերել դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը՝ փաստարկելով, որ ամբաստանյալ Գ.Կարախանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է սխալ հետևության⁴:

– Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու մասին՝ փաստարկելով, որ դատարանն ամբաստանյալ Գ.Կարախանյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելիս ոչ միայն ազատագրկման ժամկետը հաշվարկել է օրերով, այլև խախտել է պատժի հաշվակցման կանոնը. որոշակի ժամկետով

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Մաքունցի* բողոքի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10, *Գեղամ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11, *Արթուր Խորշոռյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԲԳ/0065/01/11, *Լուկաշ Վերանյանի* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԳ/0074/01/17, *Հենրիկ Բարսեղյանի ու Արման Մարջանյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԳ/0259/01/16 և *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԳ/0426/11/18 որոշումները:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

նշանակված ազատագրվանը չի հաշվակցել հանրային աշխատանքների ձևով նշանակված պատժի չկրած մասը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ակտի վերանայման օրենսդրական պահանջով, իրավասու չի ուղղել նշված խախտումները, քանի որ վերաքննիչ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես ազատագրվման ձևով նշանակված պատժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգման իրավաչափ չլինելու հիմնավորումներով: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, առանց անդրադառնալու վերաքննիչ բողոքում բարձրացված հարցին, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել պատժի ժամկետները հաշվարկելու և պատժը հաշվակցելու կանոնների խախտում, ուստի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության⁵:

11. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն որոշման 9-րդ կետում նշված հիմքերի բացակայության պայմաններում, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ ի վնաս ամբաստանյալ Գ.Կարախանյանի: Այսինքն՝ անդրադառնալով պատժի ժամկետները հաշվարկելու և հաշվակցելու կանոնների խախտման հարցին՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով հանդերձ, որ կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, իր կողմից կայացված դատական ակտը ոչ իրավաչափորեն հիմնավորել է այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն եղել վերաքննիչ բողոքում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել Գ.Կարախանյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատժը կրելու նպատակահարմարության հարցի առնչությամբ Առաջին ատյանի դատարանի կողմից տրված լուծման հիմնավորվածությանը և իրավաչափությանը, այսինքն, ներկայացված վերաքննիչ բողոքն ըստ էության քննարկման առարկա չի դարձրել: Նման պայմաններում, խախտվել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապը, դատավարության մասնակցին տրված երաշխիքն առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի դատավարական հակառակորդի գործառնություն, ինչն անհամատեղելի է մրցակցության սկզբունքից բխող՝ սահմանափակ վերանայման՝ օրենսդրորեն ամրագրված պահանջի հետ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սահմանափակված լինելով բողոքի առարկայով և սահմաններով, իրավասու չէր բողոքի սահմաններից դուրս գալով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ վատթարացնելով ամբաստանյալ Գ.Կարախանյանի վիճակը:

⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ընդհանրացնելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կանոնների խախտման հիմքով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մասնակիորեն բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

13. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, պետք է քննության առնի մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավասու չէ անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 7.1-րդ կետում նշված փաստարկին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գոռ Վրույրի Կարախանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գոռ Վրույրի Կարախանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

11.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԴ/0055/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

27 հունիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Համլետ Լեոնիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ պաշտպան Ա.Թումասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնում 2018 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 52157218 քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 30-ից թիվ 52157218 քրեական գործի նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ Համլետ Լեոնիկի Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 (երկու) դրվագով:

2.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Հ.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 (երկու) դրվագով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով:

2.2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումներով առանց իրացնելու նպատակի մանր չափով «կանեփ» տեսակի թմրամիջոց պատրաստելու և պահելու կապակցությամբ Հ.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2.3. 2018 թվականի հոկտեմբերի 27-ին Հ.Ավետիսյանի և Ա.Զախարյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագ, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 273-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատժին մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման ձևով նշանակված պատժից 6 (վեց) ամիսը, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման ձևով նշանակված պատժներից 3-ական ամիս, և Հ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է նախաքննության ընթացքում Հ.Ավետիսյանի անազատության մեջ գտնվելու երեք օրը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 5 (հինգ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

4. Ամբաստանյալ Հ.Ավետիսյանի պաշտպան Վ.Սուդյանի և մեղադրող Ա.Ավագյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հունիսի 29-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Ավետիսյանի պաշտպան Ա.Թումասյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Համլետ Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագ, մեղադրանք է առաջադրվել, և Առաջին ատյանի դատարանի դատավճռով նա մեղավոր է ճանաչվել հետևյալ արարքի համար. «(...) 2018 թվականի մայիս ամսին Հարթագյուղ համայնքի 15-րդ փողոցի 2-րդ փակուղու 2-րդ հասցեի իր տնակներձ հողամասում ցանել և աճեցրել է շրջանառությունն արգելված, թմրամիջոց տեղադրված հողամասերում պարունակող, խոշոր չափերով՝ 14 հար կանեի տեսակի բույսեր, որոնք հայտնաբերվել և վերցվել են 2018 թվականի օգոստոսի 30-ին կատարված խուզարկությանը:

Բացի այդ, Համլետ Ավետիսյանը, (...) չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմեկտր նյութերի շրջանառություն իրականացնելու թմրամիջոց պարարտարելու և պահելու թույլտվություն, կանեի տեսակի բույսի տերևները և գլխամասերը պոկելու, այնուհետև մանրացնելու և գազօջախի վրա մետաղական տարրայով չորացնելու եղանակով, 2018 թվականի ամռանը Հարթագյուղ համայնքում գրավող իր տանը, առանց իրացնելու նպատակի, սպորինի պարարտարել ու նույն տան ննջարանում և խոհանոցում սպորինի պահել է խոշոր չափերով՝ 24,18 գրամ ընդհանուր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել է 2018 թվականի օգոստոսի 30-ին հիշյալ ընակարանում կատարված խուզարկությանը:

Համլետ Ավետիսյանը, (...) չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմեկտր նյութերի շրջանառություն իրականացնելու թմրամիջոց պահելու և իրացնելու թույլտվություն, 2018 թվականի օգոստոսի 29-ին ժամը 16:00-ի սահմաններում, Հարթագյուղ համայնքում գրավող իր տանը հյուրընկալած Արեդր Սարգսի Ջախարյանին տվել սպորինի իրացրել է զգալի չափերով՝ 4,51 գրամ հասարարուն քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը նույն օրը հայտնաբերվել և վերցվել է վերջինիս անձնական խուզարկությանը:

Համլետ Ավետիսյանը, (...) չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմեկտր նյութերի շրջանառություն իրականացնելու թմրամիջոց պահելու և իրացնելու թույլտվություն, 2018 թվականի օգոստոսի 29-ին ժամը 16:00-ի սահմաններում, իր տանը հյուրընկալած Ռաֆիկ Սամվելի Պողոսյանին տվել սպորինի իրացրել է մանր չափ չկազմող՝ 0,33

գրամ հաստատարուն քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը նույն օրը հայտնաբերվել և վերցվել է վերջինիս անձնական խուզարկությանը»¹:

6.1. Ալբերտ Զախարյանը որպես կասկածյալ 2018 թվականի օգոստոսի 30-ին տվել է հետևյալ ցուցմունքը. «(...) Վերջերս նրան [Արթուրին] տեսել էի Վանսաձոր քաղաքում, ասել, որ աշխատանք եմ փնտրում, նա էլ ասել էր, որ կհետաքրքրվի, այդ պատճառով սույն թվականի օգոստոսի 29-ին, կեսօրին մոտ գանգահարեցի Արթուրին և հետաքրքրվեցի հնարավոր աշխատանքի մասին: Արթուրն ասաց, որ ինքն Արևաշող գյուղի տակ, ճանապարհին է, գնում է Հայթախչի (Հարթագյուղ) գյուղ, իր մի լավ ընկերոջ մոտ, առաջարկեց միասին գնանք, հնարավոր է այնտեղ անսանսպահոության գործ լինի: Ես համաձայնվեցի և ժամը մոտավորապես 14:00-ի սահմաններում, մի պատահական տաքսիով գնացի Արթուրի մոտ՝ Արևաշողի տակ, այնտեղից էլ միասին գնացինք Հայթախչի, որտեղ մերանք տուն, որտեղ միայն մի տղամարդ էր: Արթուրը ծանոթացրեց մեզ, այդ տղան ներկայացավ «Համելը», սակայն ասաց, որ իրեն բոլորը «Մրե» են ասում: Արթուրն իր հետ օղի, ջերմուկ, պանիր, վարունգ-պոմիդոր և սարդելկա էր վերցրել: Մրեն էլ օղի հանեց, սեղան գցեց և երեքով սկսեցինք խմել և հաց ուրել՝ զրուցելով տարբեր թեմաներով: **Հետո խոսք բացվեց ուռելուց:** Մրեն իր տանից, ուշադրություն չդարձրեցի թե որտեղից, կանտիֆի գլխամասեր բերեց, կրորեց մի թավայի մեջ, գազի վրա չորացրեց, հետո նա այդ չորացրած կանտիֆը լցրեց դարարկած սիգարետի գլանակների մեջ, վառեց ու ծխեց, հետո րվեց Արթուրին, մի երկու մուխ էլ ես ծխեցի: **Մրեն ասաց, որ հայտնում կանտիֆի թփեր ունի ցանած, եթե պետք է կարող է տալ նաև ինձ:** Ես կանտիֆ չեմ օգտագործում, սակայն քանի որ հաճախակի սիգարետի գոմար չեմ ունենում, իսկ այդ երկու մուխից էլ ինձ արդեն լավ էի զգում, **Մրեի առաջարկից չհրաժարվեցի:** Մի երկու ժամ մնացինք Մրենց տանը: Հետո Արթուրը որոշեց դուրս գանք, որ լույսով տուն հասնենք: Պետք է պատահական ավտոմեքենայով տրասից տուն գայինք: Միասին Մրեի չորացրած կանտիֆը ծխելուց հետո, նա թավայի մեջ չորացրած կանտիֆի մնացած մասը լցրեց մի թերթի կտորի մեջ ու րվեց Արթուրին, իսկ երբ ես էլ ուզեցի, գնաց ու իր բակից բերեց կանտիֆի գազաթային մասեր, որոնք ձեռքի մեջ փրորեց, փոքրացրեց, փաթաթեց թերթի երեք փաթեթների մեջ ու րվեց ինձ: Դուրս գալուց առաջ Արթուրն իր սլանի փաթեթը, իսկ ես էլ իմ երեք փաթեթները դրեցինք ասեն մեկս մեր գուլպաների մեջ, որ տեսնողներ չլինեն (...)»²:

6.2. Ա.Զախարյանը որպես մեղադրյալ 2018 թվականի սեպտեմբերի 5-ին տվել է հետևյալ ցուցմունքը. «(...) 2018 թվականի օգոստոսի 29-ին, ընկերոջս՝ Ռաֆիկ Պողոսյանի հետ գնացել էինք Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի բնակիչ Համելը Ավետիսյանի բնակարան: Համելի տանը երեքով հաց կերանք, օղի խմեցինք, ինչից հետո երեքով կանտի (սլան) ծխեցինք: **Պանը ծխելուց հետո Համելն ինձ ասաց, որ իր տան բակում՝ հողամասում, կանտիֆի թփեր ունի**

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 124:

² Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 36:

ցանած և եթե ես ցանկանում եմ կարող է ինձ րալ իր ցանած կանեփի թփերից: Ես Համլեարի առաջարկն ընդունեցի և ինդրեցի, որ ինձ րա կանեփի թփեր, որ ծխախոտը չունենայու ժամանակ դրանից ծխեմ: Համլեարը րան րակից րերեց և ինձ րվեց կանեփի րերներ, որոնք նա նախապես փաթեթավորեց երեք առանձին թղթե փաթեթների մեջ: Այդ երեք փաթեթները ես դրեցի աջ ու ձախ գուլպաներիս մեջ, որպեսզի երբ Համլեարի րանից դուրս գամ ինձ մարդ չրեննի (...)³:

6.3. Վկա Ռաֆիկ Պողոսյանի ցուցմունքների համաձայն՝ «(...) Արոն մի րարքույլ եկավ Արևաշողի րակ ու այնրեղից երկուսույլ գնացինք Հարթապոտը՝ Մրենեց րուն: Մրեն րանը մենակ էր, նրան ու Արոյին ծանոթացրեցի, հերոս սեղան գցեցին իմ րարածույլ, Մրեն էլ օղի դրեց ու երեքույլ նարեցինք ճաշեցինք, մի րանի րածակ օղի իմեցինք: Ես գիրեի, որ Մրեն րանը «պլան» ոնի, նա իր րակում կանեփի թփեր է աճեցնում ու ծխում, մի րանի անգամ էլ իր րանն ինձ հյուրասիրել է: Այդ օրն էլ Մրեն ննջարանի սերվանարի մեջից րերեց կանեփի գլխամաս, կրորեց, լցրեց թավայի մեջ ու գազի վրա րարացնելույլ չորացրեց: Հերոս երկու կասյակի մեջ լցրեց ու երեքույլ ոռեցինք՝ ծխեցինք: Մրեն Արոյն առաջարկեց, որ եթե ուզում է՝ կարող է նրան պլան րալ: Արոն սասց, որ ուզում է պապիրոս չեղած ժամանակ կծխի: Ես սասցի, որ մի կասյակ էլ ես եմ ուզում՝ իրիկույնը րնելուց առաջ կծխեմ: Մրեն թավայի մեջ մնացած չորացրած կանեփի մնացած մասը, մի կասյակի չափ կլինեք, փաթաթեց գազերի թղթի մեջ ու րվեց ինձ, իսկ Արոյն րարու համար գնաց իր րակի կանեփների թփերից րարեց թաց գլխամասեր ու րերեց, փաթաթեց դարձյալ գազերի երեք կրորների մեջ ու րվեց Արոյն: Մի երկու ժամից ալելի կլինեք, ինչ Մրեի րանն էինք, հերոս որոշեցինք դուրս գալ, որ լոյսույլ րեղ հասնեք (...)⁴:

6.4. Համլետ Ավետիսյանը որպես կասկածյալ լրացուցիչ հարցաքննվելիս սվել է հետևյալ ցուցմունքները. «(...) Սեղան գցեցինք հաց կերանք, օղի էլ իմեցինք: Հերոս խոսք գնաց ոռելու՝ կանեփի ծխելու մասին: Ես էլ սսեցի, եթե ուզում եք՝ հիմա կարող եք ծխել, նրանք էլ համաձայնեցին: Ես կրկին իմ ցանած կանեփի թփերից ու գլխամասերից րերեցի, մանրացրի, կրորեցի, լցրեցի թավայի մեջ ու գազօջախը վառեցի, թավան դրեցի վրա որպեսզի այն չորանա: Չորանալուց հերոս, դրանք լցրեցի դարարկ ծխախոտի գլանակի մեջ ու ես, Ռաֆիկը և Ալբերարը միասին ծխեցինք: Հերոս ես Ալբերարին սսեցի, եթե դուրը եկավ կարող եմ իրեն էլ կանեփի թփեր և գլխամասեր րալ, երբ ուզի ծխի: Ալբերարն էլ սսաց ուզում է, որ եթե սիգարեք չունենա, այդ կանեփից կծխի: Այդ ժամանակ Ռաֆիկն ինձ սսաց, որ մի կասյակ էլ իրեն րամ, երբ գնա րուն, րնելուց առաջ կծխի: Քանի որ թավայի մեջ մի փոքր մնացել էր, ես դա լցրեցի գազերի թղթի մեջ ու րվեցի Ռաֆիկին, իսկ Ալբերարին գնացի իմ ցանածից րերեցի ու րվեցի: Մինչև Ալբերարին րարը ես իմ րերած կանեփի թփերը և գլխամասերը լցրեցի երեք առանձին գազերի թղթի մեջ, փաթաթեցի ու նոր րվեցի Ալբերարին: Ալբերարը և Ռաֆիկը մի րիչ էլ մնացին իմ րանը և սսացին, որ ցանկանում են րուն գնալ⁵:

³ Տեն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 141-142:

⁴ Տեն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 40-41:

⁵ Տեն քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 117-118:

6.5. Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Հ.Ավետիսյանը տվել է նույնաբովանդակ ցուցմունքներ և միաժամանակ խնդրել է հիմք ընդունել որպես կասկածյալ տված ցուցմունքները՝ ընդունելով առաջադրված մեղադրանքը⁶:

7. Առաջին առյուծի դատարանն իր դատավճռում արձանագրել է հետևյալը. «(...)Դատարանը գրնում է, որ սույն գործով ձեռք բերված հավասարի ապացույցների համակցությունը բավարար է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի կողմից մեղավորությանը, դիտարկությանը առանց իրացնելու նպատակի խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի պատրաստելն ու ապօրինի պահելը, երկու դրվագ թմրամիջոցներ ապօրինի իրացնելը, խոշոր չափերով թունավոր նյութեր պարունակող բոյսեր ապօրինի ցանելն ապացուցված է, նրա արարքները ճիշտ են որակված և համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին:

(...)

Դատարանն ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նրան մեղսագրված հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը այդ թվում՝ հանցանքի կարարման հանգամանքները և եղանակը, հանցագործությանը պարձատված վնասի չափը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը:

Դատարանն ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նաև նրա անձը բնութագրող վրվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Մասնավորապես, Դատարանը, որպես Համլետ Լեոնիկի Ավետիսյանի անձը բնութագրող վրվյալ հաշվի է առնում այն, որ նա բնակության վայրում բնութագրվում է դրական:

Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

Դատարանը գրնում է, որ կարարած արարքի համար ամբաստանյալ Հ.Ավետիսյանը ենթակա է պատժի: Դատարանը հաշվի առնելով ամբաստանյալ Հ.Ավետիսյանի կարարած արարքների հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող վրվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին, 48-րդ հոդվածի 2-րդ մասերի և 61-րդ հոդվածի պահանջները՝ գրնում է, որ ամբաստանյալ Համլետ Լեոնիկի Ավետիսյանն իր կարարած ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ

⁶ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 165-166:

մասի 2-րդ կերով, 266-րդ հողվածի 1-ին մասով և 266-րդ հողվածի 1-ին մասով նահարեալած հանգագործություններից յորաքանյորի համար ենթակա է պարժի ազարագրկման ձևով:

Վարարանը գրնում է, որ ամրարանյալ Համլեր Լեոնիկի Ավերիայանը իր նկարմամբ նշանակված պարիժը պերք է կրի, քանի որ դրան խոչընդորոող հանգամանքներ առկա չեն»⁷:

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) [Վերաքննիչ դարարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դարարանը բազմակողմանի և օրյեկրիվ սրուզման է ենթարկել դարաքննության ընթացքում հերագրված ապացույցները, յորաքանյոր ապացույց գնահարել վերաբերելիության, թոյլարրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությանը գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, ինչի արդյունքում իրավաչաի եզրահանգում է կարարել առ այն, որ ամրարանյալ Համլեր Ավերիայանը կարարել է 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենագրքի 266-րդ հողվածի 1-ին մասով նահարեալած հանգանք: Վերաքննիչ դարարանը գրնում է, որ ամրարանյալ Համլեր Ավերիայանի կողմից 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենագրքի 266-րդ հողվածի 1-ին մասով նահարեալած հանգանք կարարելու հանգամանքն Առաջին արյանի դարարանը հարարված է համարել մեղարդական դարավճռի հիմքում դրված քրեական գործին վերաբերող փոհկապակցված հավարի ապացույցների բավարար ամբողջությանը (...):

Ինչ վերաբերում է Համլեր Ավերիայանին 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենագրքի 266-րդ հողվածի 1-րդ մասով մեղագրված արարքները մեկմիասնական դիարավորությանը կարարված լինելու վերաբերյալ պաշրպանի վերաքննիչ բողոքի փարարկներին, ապա Վերաքննիչ դարարանը դրանք ընդունելի չի համարում նկարի ոնենալով, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել փոհկապակցված հավարի ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամրարանյալ Համլեր Ավերիայանի մուր առկա է եղել Արերտ Զահարյանին և Ռաֆիկ Պողոյանին «Մարիտանա» րեսակի թմրամիջոց իրացնելու միասնական դիարավորություն և նպարակ: Այլ կերպ ասած քրեական գործում բացակայում են րվյալներ այն մասին, որ ամրարանյալ Համլեր Ավերիայանը նահանական մրարություն է ոնեցել կարարելու կոնրեր հանգանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով:

Այսպիսով, Վերաքննիչ դարարանը գրնում է, որ Առաջին արյանի դարարանի կողմից ամրարանյալ Համլեր Ավերիայանին ՀՀ քրեական օրենագրքի 266-րդ հողվածի 1-ին մասով՝ 2 (երկու) դրվագով մեղավոր ճանաչելու անհրավաչաիության վերաբերյալ պաշրպանի կողմից բերված վերաքննիչ բողոքի փարարկները հիմնավոր չեն:

(...)

[Մնորդառնալով ամրարանյալ Համլեր Ավերիայանի նկարմամբ պարիժ նշանակելու և այն կրելու անհրաժեչրության վերաբերյալ Առաջին արյանի

⁷ Տն քրեական գործ, հատոր 3, թերթեր 124-125:

դատարանի հիմնավորումներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Համլետ Ավետիսյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու անհրաժեշտությունը որոշելիս Առաջին արյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, նրա պարասխանաբարությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ամբաստանյալի կողմից կատարված հանցագործությունների բնույթն ու վրանգավորության աստիճանը, որպիսի պայմաններում ամբաստանյալի նկատմամբ նշանակել է համաչափ ոեղակա (իրական) պատիժներ (...)⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, այն է՝ խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ, 70-րդ, 266-րդ հոդվածների պահանջները: Բողոքաբերը փաստարկել է, որ Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագով մեղադրանքի առաջադրումը և մեղավոր ճանաչելն օրինական չէ:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոք բերած անձը փաստել է, որ եթե նույնիսկ Հ.Ավետիսյանն իրացրել է թմրամիջոց, ապա դատարանում հետազոտված ապացույցներով, մասնավորապես՝ Հ.Ավետիսյանի, Ա.Զախարյանի և Ռ.Պողոսյանի ցուցմունքներով, հաստատվում է, որ այդ գործողությունները կատարվել են նույն վայրում և նույն ժամանակահատվածում՝ մեկ միասնական դիտավորությամբ:

Բողոքաբերը գտել է, որ Հ.Ավետիսյանը գործել է մեկ միասնական դիտավորությամբ, հետևաբար նրա արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ մեկ դրվագով, որպես մեկ հանցագործություն:

10. Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ՝ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ, ինչպես նաև չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել ամբաստանյալին մեղազգրվող արարքների հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի վրա ազդող մի շարք հանգամանքներ, ինչի արդյունքում նրա նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ հանգել է սխալ հետևություն:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 124-127:

Դատարանները ոչ միայն հաշվի չեն առել Հ.Ավետիսյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, այլ նաև նշել են, որ այդպիսիք չկան:

Միևնույն ժամանակ, դատարանները Հ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չեն առել, որ նա երբևիցե դատապարտված չի եղել, ունի առողջական շատ լուրջ խնդիրներ, որով էլ պայմանավորված է թմրամիջոցի օգտագործումը՝ ցավերը մեղմելու համար, ինչպես նաև ընտանիքում տեղի է ունեցել դժբախտություն, որով էլ պայմանավորված մինչ օրս գտնվում է հոգեբանական շատ ծանր վիճակում, նախաքննության ընթացքում տվել է խոստովանական ցուցմունքներ, ընդունել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը, զոջացել է կատարածի համար և օժանդակել է գործի քննությանը:

Բողոքաբերը գտել է, որ նշանակված պատիժը ակնհայտ խիստ է, չի համապատասխանում հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը և չի բխում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 29-ի որոշումը և նշանակել համաչափ պատիժ, որը չի գերազանցի չորս տարի ժամկետով ազատազրկումը՝ կիրառելով «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը և Հ.Ավետիսյանին ազատել պատժի կրումից, իսկ եթե դատարանը գտնի, որ մինչև չորս տարի ազատազրկում նշանակելն ակնհայտ մեղմ պատիժ է, կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք Հ.Ավետիսյանի արարքում շարունակվող հանցագործության բացակայության և երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն. «1.Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքով (րարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ րարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել. (...)»:

Վճռաբեկ դատարանը, իր նախադեպային իրավունքում անդրադառնալով իրական համակցության և շարունակվող հանցագործությունների

տարբերակման հիմնախնդրին, ընդգծել է, որ իրական համակցություն են կազմում տարբեր, *միասնական դիրավորությանը չկապված* այնպիսի արարքները, որոնք պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր կամ միևնույն հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործությանը, ապա այն բարդ (եզակի) հանցագործության տեսակ է, որը թեպետ դրսևորվում է որոշակի ժամանակային ընդմիջումներով կատարվող մեկից ավելի հակաիրավական արարքներով, այնուամենայնիվ դիտվում է որպես մեկ հանցագործություն և որակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով: Վերոնշյալը պայմանավորված է կատարվող արարքների միջև *գոյություն ունեցող սերտ կապով, ինչը թույլ է տալիս դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն:*

Հետևաբար, սուբյեկտիվ հատկանիշի բացահայտումը կարևոր նշանակություն ունի հանցագործության ճիշտ քրեաիրավական որակման հարցում, քանի որ արարքների նույնականությունը, ոտնձգության օբյեկտի, աղբյուրի և եղանակի միասնականությունը դեռևս հիմք չեն կատարվածը շարունակվող հանցագործություն դիտելու համար: Մասնավորապես, իրական համակցությունը և շարունակվող հանցագործությունները տարանջատելու հիմնական չափանիշը հանցավորի մոտ համապատասխան *արարքները կատարելու միասնական դիրավորության ստկայության հավասարումն է և միաժամանակ դիրավորության ամեն արարքից հետո կրկին ծագած լինելու հավանականության բացառումը*, ինչը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտման արդյունքում⁹:

14. Սույն գործի նյութերի համաձայն՝

- Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, իր տանը Ա.Զախարյանին տվել՝ ապօրինի իրացրել է զգալի չափերով՝ 4,51 գրամ հաստատուն քաշով, մարիխուանա տեսակի թմրամիջոց¹⁰,

- Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, իր տանը Ռ.Պողոսյանին տվել՝ ապօրինի իրացրել է մանր չափ չկազմող՝ 0,33 գրամ հաստատուն քաշով, մարիխուանա տեսակի թմրամիջոց¹¹,

- Առաջին ատյանի դատարանի դատավճռով Հ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել երկու դրվագ 266-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ

⁹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Վ.Մկրտչյանի և այլոց վերաբերյալ գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ին կայացված թիվ ԿԴ3/0034/01/15 որոշումը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքները կատարելու համար¹²,

– Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ ընդգծելով, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի մոտ առկա է եղել Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին մարիխուանա տեսակի թմրամիջոց իրացնելու միասնական դիտավորություն և նպատակ: Այլ կերպ՝ քրեական գործում բացակայում են տվյալներ այն մասին, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանը նախնական մտադրություն է ունեցել կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով¹³:

15. Գործում առկա փաստական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2018 թվականի օգոստոսի 29-ին Հ.Ավետիսյանն իր տանը հյուրընկալել է Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին, և նրանք միասին ճաշել են, որից հետո խոսակցություն է եղել թմրամիջոց օգտագործելու մասին: Այդ ժամանակ Հ.Ավետիսյանը Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին առաջարկել է թմրամիջոց օգտագործել՝ ծխելու եղանակով, ինչին վերջիններս տվել են իրենց համաձայնությունը, և նրանք միասին օգտագործել են թմրամիջոց: Նշվածից հետո, երբ Հ.Ավետիսյանն Ա.Զախարյանին ասել է, որ, կարող է նրան կանեփի թփեր և գլխամասեր տալ, Ռ.Պողոսյանն այդ նույն պահին Հ.Ավետիսյանին խնդրել է, որ մի «կասյակ» էլ իրեն տա: Այնուհետև, Հ.Ավետիսյանը թավայի մեջ մնացած թմրամիջոցը լցրել է թղթի մեջ՝ տալով Ռ.Պողոսյանին, իսկ Ա.Զախարյանին տալու համար գնացել է բակ, կտրել կանեփի գլխամասեր ու թփեր, փաթեթավորել երեք առանձին թղթե փաթեթներում և տվել Ա.Զախարյանին¹⁴:

15.1. Վերոշարադրյալ փաստերից բխում է, որ Ռ.Պողոսյանի խնդրանքը՝ իրեն թմրամիջոց տալու վերաբերյալ, տեղի է ունեցել նախքան Հ.Ավետիսյանի կողմից Ա.Զախարյանին թմրամիջոց իրացնելը, այլ կերպ՝ նախքան ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք կատարելը: Մասնավորապես, թեև Հ.Ավետիսյանն ի սկզբանե նպատակ է ունեցել թմրամիջոց իրացնելու միայն Ա.Զախարյանին, ինչի վերաբերյալ նրան համապատասխան առաջարկություն էր արել, այնուամենայնիվ, հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն դեռևս չիրականացրած, լսելով Ռ.Պողոսյանի խնդրանքը և համաձայնելով դրան, նրա մոտ ձևավորվել է Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին թմրամիջոց իրացնելու միասնական դիտավորություն, ինչն էլ փաստացի ի կատար է ածել: Հետևաբար, Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին թմրամիջոց ապօրինի իրացնելու ժամանակ Հ.Ավետիսյանի դիտավորությունը եղել է նախապես ծագած և միասնական:

¹² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 6.1-6.5-րդ կետերը:

Նման պայմաններում ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի մոտ առկա է եղել Ա.Զախարյանին և Ռ.Պողոսյանին մարիխուանա տեսակի թմրամիջոց իրացնելու միասնական դիտավորություն և նպատակ, չի բխում սույն գործի փաստական տվյալների համակցությունից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նախքան ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված որևէ հանցավոր արարք կատարելը և օբյեկտիվ կողմը սկսելը, Հ.Ավետիսյանի մոտ արդեն իսկ ձևավորվել էր թմրամիջոց իրացնելու նախնական դիտավորություն, ուստի տվյալ դեպքում **արարքը կատարելուց հետո** դիտավորության՝ կրկին ծագած լինելը բացառվում է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Ավետիսյանի արարքում շարունակվող հանցագործության բացակայության և երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք և ելնելով *Միտիթար Էլոյանի և այլոց* գործով որոշմամբ արտահայտված դիրքորոշումից առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում¹⁵՝ անհրաժեշտ է գտնում քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

16.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)*

6) *անցել են վաղեմության ժամկետները, (...)*

¹⁵ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Միտիթար Էլոյանի և այլոց գործով* 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

5. Գադարաանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբասարանյալի նկարանամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախարեանված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու րարի ժամկետով ազարագրկումը, կամ որոնց համար նախարեանված է ազարագրկման հետ կապ չունեցող պարիժ, ինչպես նաև անգորչությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախարեանված առավելագույն պարիժը չի գերազանցում երեք րարի ժամկետով ազարագրկումը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մնան ազարվում է քրեական պարասահանարվորությունից, եթե հանցանքն ալարված համարելու օրվանից անցել են հերկյալ ժամկետները.

1) երկու րարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ալարված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ալարված համարելու օրվանից մինչև դարավճոի օրինական ուժի մեջ մրնելու պահը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Շրջանատությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիար ներգործող կամ թունաալոր կյութեր պարունակող բույսեր ցանելը կամ անեցնելը խոչոր չափերով՝

պարժվում է րուզանքով՝ նվազագույն աշխարավարձի երեքհարյուրապարիկից հինգհարյուրապարիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազարագրկմանը՝ առավելագույնը երկու րարի ժամկետով»:

18. Քրեական հետապնդումը բացառող քնարկվող հիմքի առնչությանը Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարման, եթե անցել են վաղեմության ժամկետները¹⁶:

ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված 1-ին մասով նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, որի համար նախատեսված է

¹⁶ Վաղեմության ժամկետների կիրառման պայմանների վերաբերյալ մանրամասն տեն Վճռաբեկ դատարանի՝ Մասիիր Սաղաթելյանի վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10, Սիրաժ Ղամբարյանի և այլոց վերաբերյալ գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11, Հրանար Մազմանյանի վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԳ/0121/11/14, Ֆարիդա Ավագիմյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԳ2/0016/01/14, Մադրանիկ Գրիգորյանի վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԳ/0180/01/15 որոշումները:

ազատագրվում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, վերոնշյալ հանցանքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազգրված արարքը՝ որպես տևող հանցագործություն, ավարտվել է **2018 թվականի օգոստոսի 30-ին**¹⁷: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է **2019 թվականի հուլիսի 31-ին**¹⁸, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2020 թվականի հունիսի 29-ին¹⁹: Նշված որոշման դեմ Հ.Ավետիսյանի պաշտպան Ա.Թումայանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ²⁰:

20. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-18-րդ կետերում վկայակոչված իրավաբանների և շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազգրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրացել է **2020 թվականի օգոստոսի 30-ին**, իսկ այդ պահի դրությամբ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

Հետևաբար, ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

21. Միաժամանակ, հիմք ընդունելով սույն որոշման 15.1-րդ կետում կատարված եզրահանգումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, գալով եզրահանգման առ այն, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի արարքում առկա է երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ և արարքը որակելով ու պատիժ նշանակելով հանցագործությունների համակցության կանոններով, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի սխալ կիրառում, ինչը հիմք է դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար:

Հետևաբար, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ

¹⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 29-ի որոշումը մասնակիորեն՝ ամբաստանյալ Հ.Ավետիսյանին երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու և ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է բեկանել և փոփոխել, ամբաստանյալ Հ.Ավետիսյանին մեղաազրված՝ երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով արարքները պետք է որակել և նրան մեղավոր ճանաչել մեկ դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով Հ.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Ավետիսյանին մեղաազրված երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները մեկ դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով որակելու արդյունքում, սույն գործի հանգամանքների պարագայում, Հ.Ավետիսյանի վիճակը չի վատթարանում և նրա պաշտպանության իրավունքը չի խախտվում:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Հ.Ավետիսյանի կատարած արարքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արձանագրում է, որ ամբաստանյալ Համետ Լեոնիկի Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկմանն անհրաժեշտ է մասնակիորեն գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման ձևով նշանակված 6 (վեց) ամիս պատժից 3 (երեք ամիսը), և վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 9 (ինը) ամիս ժամկետով:

22. Քննարկելով ամբաստանյալ Հ.Ավետիսյանին «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ պատժից ազատելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի 12-րդ մասի ուժով ամբաստանյալ Հ.Ավետիսյանը ենթակա չէ պատժից ազատման:

23. Բնչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացված՝ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունների՝ ոչ

հիմնավոր լինելու մասին փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս ստորադաս դատարանները, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, հանգել են հիմնավորված հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրագործմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Համլետ Լեոնիկի Ավետիսյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 29-ի որոշումը մասնակիորեն՝ երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով՝ բեկանել և փոփոխել:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ամբաստանյալ Համլետ Լեոնիկի Ավետիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատագրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ամբաստանյալ Համլետ Լեոնիկի Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրկման ձևով պատժին մասնակիորեն գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ազատագրկման ձևով նշանակված 6 (վեց) ամիս պատժից 3 (երեք) ամիսը, և պատիժ նշանակել ազատագրկում՝ 3 (երեք) տարի 9 (ինը) ամիս ժամկետով:

Համլետ Լեոնիկի Ավետիսյանի պատժի ժամկետի մեջ հաշվակցել նախաքննության ընթացքում՝ 2018 թվականի օգոստոսի 31-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 2-ն անազատության մեջ գտնվելու՝ երեք օրը, և Համլետ Ավետիսյանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 8 (ութ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվել ամբաստանյալ Համլետ Ավետիսյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0071/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2022 թվականի հունիսի 29-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Սարգիս Ալբերտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ Սարգիս Ալբերտի Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 3 (երեք) դրվագով և 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Ս.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացվել է:

2. Մեղադրող Ա.Սմբատյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

2020 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին աստանի դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 27-ի որոշումը թողնելով անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Նախաքննության մարմնի կողմից Մարգիս Ալբերտի Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով 3 (երեք դրվագ) և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա 29.09.1999 - 02.06.2008թթ. և 18.11.2008 - 15.11.2010թթ. գրադեցնելով ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պերական կոմիտեի աշխատակազմի Էրերունի տարածքային սորոսաբաժանման ղեկավար-անշարժ գույքի պերական ռեգիստրի պաշտոնը, հանդիսանալով պերական մարմնում մշրապետ կազմակերպական-տնօրինչական գործատույթներ իրականացնող պաշտոնատար անձ, պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգրագործելով և ծառայողական պարականությունները չկատարելով, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, քաղաքացիներին տրամադրել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման կեղծ վկայականներ, որն անգորչությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ դրանցով սահմանված առանձնապես խոշոր չափերով գույքերը վաճառելու և քանկերում գրավադնելու արդյունքում առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել անձանց և կազմակերպություններին:

Այսպես,

Մարգիս Ալբերտի Կարապետյանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահելով պաշտոնական լիազորությունները, 2003թ. մայիսի 30-ին Ռուզվելտ Մետրոպոլիտանի անվամբ սրեղծված կեղծ փաստաթղթերի, այն է՝ նոտարի 13.12.2001թ. թիվ 2-3291 անշարժ գույքի առքովաճառքի պայմանագրի հիման վրա, Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գրնվող Երևան քաղաքի Արին-Բերդի 6 նրբանցք 8 հասցեի 17.0 հա մակերեսով 58.582.000 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող հողամասի նկատմամբ տրամադրել է իրավունք վերապահող անշարժ գույքի իրավունքի պերական գրանցման թիվ 656650 կեղծ վկայականը՝ Ռուզվելտ Մետրոպոլիտանի անվամբ:

Վկայականը տրանսպորց հետո Հովհաննես Հայկի Մարգարյանը, խարդախությամբ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու շուրջ նախնական համաձայնության գալով իր ընկերության աշխատակից Սյրոպա Հովասապիանի հետ, գիտակցելով միմյանց գործողությունները և մեկը մյուսի

գործողությունները փոխարացնելով, ընդհանուր միասնական դիրավորությամբ, վերջինիս մյրերիմ և ազգական Ռուզվելյր Մերոոյանի անվամբ արեղծված կեղծ փասարթթերի այն է՝ հիշյալ սեփականության իրավունքի կեղծ վկայականի, 15.04.2010թ-ին Ռուզվելյր Մերոոյանի և Մոյոյա Նովասարիյանի միջև կնքված ներքին առուվաճարքի պայմանագրի, ինչպես նաև ՀՀ Լոոո մարզի Ոոոար համայնքի ղեկավար Մերգո Ջուլիակյանի կողմից րրված կեղծ րեղեկանքի օգրագործմամբ, դրանք Երևան քաղաքի Էրերունի և Նուրարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելով, Երևանի քաղաքապետարանի հաշվեկշոոմ գրնվող Երևան քաղաքի Արին-Բերդի 6 նրրանցք 8 հասցեի 17.0 հա հողամասի նկարմամբ 04.07.2013թ. դատարանի թիվ ԵԷԴ/0751/02/13 դատական ակրի հիմնն վրա գրանցվել է Մոյոյա Նովասարիյանի սեփականության իրավունքը, ապորիսի իրավունք ձեոք քերելով Երևանի քաղաքապետարանին պարկանող 17 հա մակերեսով հողամասի նկարմամբ, ինչի արդյունքոոմ Երևանի քաղաքապետարանին պարճատվել է առանձնապես խոշոր չափի՝ 58.582.000 ՀՀ դրամի գոյքային վնաս:

(...)

Բացի այդ Մարգիս Արերրի Կարապետյանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահելով պաշրոնեական լիազորությունները, 27.10.1998թ. ՀՀ պետական ոնեցվածքի հաշվաոմնն և ապապետականացմնն վարչության 20.11.1996թ. թիվ 352-2 սեփականաշորհիմն պայմանագրի և Երևանի քաղաքապետի 24.09.1998թ. թիվ 719 որոշմնն հիմնն վրա, «Նուրարաշենի խոգարոճական ֆարրիկա» ԲԲԸ-ին անշարճ գոյքի սեփականության իրավունքի թիվ 021453 վկայականով րրամնարված 94.4 հա մակերեսով հողաարաածքի 74.3 հա մակերեսով մշրական օգրագործմնն իրավունքով հողաարաածքին, առանց վճարելու կադասրային արճերը՝ 1.422.102.000 ՀՀ դրամ գոմարը, 2008թ. մարրի 07-ին Միիրան Մելրոնյանի անվամբ րրամնարել է իրավունք վերապահող անշարճ գոյքի իրավունքի պետական գրանցմնն թիվ 2261278 կեղծ վկայականը, ինչի արդյունքոոմ ապորիսի սեփականության իրավունք է ձեոք քերվել 1.422.102.000 ՀՀ դրամ կադասրային արճեր ոնեցող, Երևանի քաղաքապետարանին պարկանող, 74.3 հա մակերեսով հողամասի նկարմամբ: Հիշյալ սեփականության վկայականն օգրագորճելով, 26.03.2008թ. կնքված գրամի հիփոթեքի պայմանագրի հիմնն վրա Միիրան Գեղամի Մելրոնյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված «Նուրարաշեն խոգարոճական ֆարրիկա» հասցեի 74.3 հա մակերեսով անշարճ գոյքը գրավարրվել է «Էյ-Է-Բի-Մի Բանկ Հայասրան» ՓԲԸ-ոոմ, որպես վարկի ապահովմնն միջոց 743.300.000 ՀՀ դրամ գնահարված արճերով, որի արդյունքոոմ «Էրերունի գինու կոնյակի գորճարան» ՍՊԸ-ն, ի դեմն փասարացի սեփականատեր Նովհաննես Մարգարյանի, արացել է առանձնապես խոշոր չափի վարկ:

Այսինքն, Մարգիս Արերրի Կարապետյանը մեղարրրոմ է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հողվածի 2-րդ մասով նսփարեալված հանցավոր արարք կարարելու մեջ:

Բացի այդ Սարգիս Ալբերտի Կարապետյանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահելով պաշտոնական լիազորությունները, 27.10.1998թ. ՀՀ պետական ունեցվածքի հաշվառման և սպասարկման սցենարի վարչության 20.11.1996թ. թիվ 352-2 սեփականաշնորհման պայմանագրի և Երևանի քաղաքապետի 24.09.1998թ. թիվ 719 որոշման հիման վրա, «Նուբարաշենի խոզարուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ին անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 021453 վկայականով տրամադրված 94.4 հա մակերեսով հողադարձի մասը կազմող 74.3 հա մակերեսով մշտական օգտագործման իրավունքով հողադարձի համադրման արդյունքում, 2008թ. մարտի 03-ին Վաչագան Սարգսյանի անվամբ տրամադրել է բնության մեջ գոյություն չունեցող Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղի 105/25 հասցեի 32.012147 հա մակերեսով անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման իրավունք վերապահող թիվ 2438468 կեղծ վկայականը, որը 30.05.2011թ. կնքված գրավի հիփոթեքի պայմանագրի հիման վրա, Արարշես Ճոհիյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված, գրավադրվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում որպես վարկի ապահովման միջոցով 743.300.000 ՀՀ դրամ գնահատված արժեքով, ինչի արդյունքում «Էրեբունի գինու գործարան» ՍՊԸ-ն, ի դեմս փաստացի սեփականատեր Հովհաննես Մարգարյանի, ստացել է առանձնապես խոշոր չափի վարկ և հետագայում չի կարարել վարկային պարտավորությունները:

Բացի այդ Սարգիս Կարապետյանը «Նուբարաշենի խոզարուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ին անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 021453 վկայականով տրամադրված 94.4 հա մակերեսով հողադարձի մասը կազմող 74.3 հա մակերեսով հողադարձի համադրման արդյունքում, 2009թ. նոյեմբերի 11-ին Վաչագան Սարգսյանի անվամբ տրամադրել է բնության մեջ գոյություն չունեցող Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղի 105/30 հասցեի 33.7 հա մակերեսով անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման իրավունք վերապահող թիվ 2287976 կեղծ վկայականը, որը Հովհաննես Մարգարյանը օգտագործելով, 08.08.2011թ. խաբեությամբ և Սեդա Սարիբեկի Սյրեփանյանի վարահողությունը չարաշահելու եղանակով, առուվաճառքի պայմանագրով նշված անշարժ գույքը 140.000.000 ՀՀ դրամ գումարով վաճառել է վերջինիս և համաչափել առանձնապես խոշոր չափերի՝ 140.000.000 ՀՀ դրամ գումար:

Այսինքն, Սարգիս Ալբերտի Կարապետյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ:

Բացի այդ, Սարգիս Կարապետյանը քննությամբ չպարզված հանցանքներում և ժամանակահատվածում ապօրինի կերպով ձեռք է բերել և իր Երևան քաղաքի Մուվորով փողոցի 24-րդ բնակարանում ապօրինի պահել է գործարանային արտադրության կրակելու համար պիրանի ռազմամթերք հանդիսացող թվով 39 հատ 7.65*17 մմ, 8 հատ 5.45*18 մմ տրամաչափի և 7 հատ 7,62*25 մմ տրամաչափի փամփուշներ, որոնք 2015 թվականի հուլիսի 22-ին վերջինիս բնակության վայրում կայարարված խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել են:

Այսինքն, Սարգիս Արբերյի Կարասպետյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ (...)¹:

5. Առաջին ստյանի դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադառնալով մեղադրողի վկայակոչած այն փաստարկին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքների կատարման համար քրեական պարասխանաբնութային ենթարկելու վաղեմության ժամկետներն ընդհատվել են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարմամբ նկարի ունենալով, որ այդ վերջին արարքի համար քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման ոչ արդարացտող, այն է՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, [Առաջին ստյանի] դատարանն այն հիմնավոր չի համարում: Այսպես, Սարգիս Կարասպետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման փաստը չի կարող հաստատված համարվել նկարի ունենալով, որ սակայն չէ այն հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճիտ, իսկ նշված արարքը ենթադրաբար կատարելու համար մեղադրանք առաջադրելը դեռևս չի կարող վկայել հանցանքի կատարման և հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքներն ավարտված համարվելու օրվանից հաշվարկվող վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման մասին:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, նկարի ունենալով, որ Սարգիս Կարասպետյանին մեղաազրվող 3 (երեք) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքներից յուրաքանչյուրի ավարտված համարվելու օրվանից անցել են ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համապարասխանաբար 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ժամկետները, վաղեմությունն ընդհատված լինելու մասին փաստական րվյալներ սակայն չեն, ամբաստանյալը համաձայն է վաղեմության ժամկետը լրանալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու հետ, [Առաջին ստյանի] դատարանը գտնում է, որ Սարգիս Կարասպետյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով 3 (երեք դրվագ) և 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և թիվ ԵԷՆ/0071/01/17 քրեական գործի վարույթը կարճել քրեական պարասխանաբնութային ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով (...)²:

6. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ստյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է. «(...) Վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, [Առաջին ստյանի] դատարանը իրավացիորեն եկել է եզրահանգման այն մասին, որ ամբաստանյալ Սարգիս Արբերյի

¹ Տն քրեական գործ, հատոր 9-րդ, էջեր 269-272:

² Տն քրեական գործ, հատոր 10-րդ, էջեր 112-113:

Կարապետյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 2-րդ մասով (երեք դրվագ) և 235 հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և թիվ ԵԷ-Դ/0071/01/17 գործի վարույթը կարճել քրեական պարասիանաարվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: [Առաջին արյանի] դատարանի կողմից կարարված իրավական վերլուծությունները և դրանցից բխող եզրահանգումներն ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար: Դրանց հետ չհամաձայնվելու օրյելորիվ հիմքեր չկան (...)³:

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալ Ս.Կարապետյանի նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հետևանքով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ) դադարեցնելու մասին ստորադաս դատարանների եզրահանգումները սխալ են ու չեն բխում քրեական գործի նյութերից:

Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ ամբաստանյալ Ս.Կարապետյանը 2009 թվականին կատարել է ծանր հանցագործություն (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մաս), որից հետո նույն քրեական գործի շրջանակներում պարզվել է, որ 2015 թվականին կատարել է միջին ծանրության հանցագործություն (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս): Ս.Կարապետյանի վերաբերյալ քննվող քրեական գործը մեղադրական եզրակացությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար: Նման պայմաններում նույն դատարանն է պարտավոր քննել և ճանաչել անձի մեղավորությունը կատարած արարքում կամ հոչակել նրա անմեղությունը: Բողոքաբերի համոզմամբ, տվյալ պարագայում, եթե դատարանը հանգել է այն հետևության, որ ամբաստանյալ Ս.Կարապետյանն առերևույթ կատարել է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով, այնպես էլ նույն օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքները, ապա պետք է արձանագրեր, որ 2015 թվականի ընթացքում կատարված միջին ծանրության հանցագործությունն ընդհատել է 2009 թվականին կատարված ծանր հանցագործությունը, ուստի դրա համար վաղեմության ժամկետը պետք է սկսեր հոսել միջին ծանրության հանցագործության կատարման, այսինքն՝ ընդհատման պահից:

Բողոքի հեղինակը նշել է, որ եթե խորհրդակցական սենյակում դատարանը գտնի, որ ամբաստանյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքը, ապա այն պետք է ընդհատի ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված արարքի

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, էջ 49:

կատարման համար հաշվվող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

7.1. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք ստորադաս դատարանների կողմից Սարգիս Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (երեք դրվագ) և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)*

6) անցել են վաղեմության ժամկետները, (...)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

10. Վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում*

է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպես՝ նոր կարարված հանցագործությունն ընդհարում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հերկյալ պայմանների առկայության դեպքում՝

1. նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,

2. նոր կարարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է»⁴:

11. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վաղեմության ժամկետի ընդհատման հիմնահարցին այնպիսի քրեական գործերով, որոնք քննվում են տարբեր վարույթներով, փաստարկել է, որ նույն անձի վերաբերյալ մեկ այլ քրեական գործի քննության փաստը դեռևս չի կարող վկայել կոնկրետ քրեական գործով հաշվարկվող վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման մասին՝ հաշվի առնելով, որ տվյալ գործը դեռևս գտնվում է քննության ընթացքում և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դեռևս չի հաստատվել անձին մեղսագրվող արարքների կատարման փաստը⁵: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումն ըստ էության բխում է անձի անմեղության կանխավարկածը երաշխավորելու անհրաժեշտությունից. այսպես՝ վաղեմության ժամկետն ընդհատված լինելու հանգամանքն ի սկզբանե չի կարող կանխորոշվել, քանի որ մեկ այլ վարույթում քննվող քրեական գործով անձը կարող է ճանաչվել անմեղ և արդարացվել:

Վերոնշյալը, սակայն, վերաբերելի չէ այն դեպքերին, երբ միևնույն անձին մեղսագրվող մեկից ավելի հանցավոր արարքներով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան և քննվում է միևնույն վարույթի շրջանակներում: Տվյալ դեպքում դատարանը, եթե քրեական գործի քննության արդյունքում հաստատված է համարում անձին մեղսագրվող հանցավոր արարքները վերջինիս կողմից կատարելու փաստը, ըստ էության հաստատում է նաև վաղեմության ժամկետի ընդհատման հանգամանքը, ինչը հիմք է մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Վճռաբեկ դատարանի համոզմամբ, վերոնշյալ դեպքերում չի կարող ողջամտորեն վտանգվել անձի անմեղության կանխավարկածը:

11.1. Միևնույն ժամանակ, իրավիճակն այլ է այն դեպքերում, երբ անձին մեղսագրվող մեկից ավելի հանցավոր արարքներով քրեական գործը թեպետ քննվում է մեկ վարույթի շրջանակներում, սակայն վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատող արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկվելու ժամկետներն արդեն իսկ լրացել են, իսկ անձն էլ վաղեմության

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սիրած Ղամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը:

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հարությունյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԿԴ/0160/01/14 որոշումը:

ժամկետի կիրառման վերաբերյալ տվել է իր համաձայնությունը: Նշված դեպքում փաստացի առկա է քրեական գործով վարույթը բացառող հանգամանք, ինչն արգելք է քրեական գործի քննությունը շարունակելու համար, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով անձին մեղսագրվող արարքների կատարման փաստը չի կարող հաստատված համարվել:

Այլ կերպ, թեև տվյալ դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է ոչ արդարացնող հիմքով, այնուամենայնիվ, անձին մեղսագրվող հանցանքի կատարման փաստը չի հաստատվում օրենքով սահմանված կարգով, այն է՝ մեղադրական դատավճռի կայացմամբ: Վերոնշյալի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) ընդգծել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի գործողությունը չի սահմանափակվում միայն ընթացիկ դատավարությամբ, այլ նաև տարածվում է *քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների* կամ արդարացման դատական ակտերի նկատմամբ⁶: Մասնավորապես, *Բարայան ընդդեմ Ռումինիայի* գործով որոշմամբ Եվրոպական դատարանն արձանագրել էր Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում՝ այն պատճառաբանությամբ, որ դատախազության կողմից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ տրվել էին այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկած չէին թողնում նրա կողմից իրեն մեղսագրվող հանցանքները կատարելու վերաբերյալ: Մինչդեռ, Եվրոպական դատարանը փաստեց, որ տվյալ դեպքում չի կարելի համարել, որ դիմողն իրեն մեղսագրվող արարքներում մեղավոր է ճանաչվել *«օրենքով սահմանված կարգով»*, հետևաբար վերջինիս մեղավորության վերաբերյալ դատախազության և ներպետական դատարանների արտահայտած կարծիքն անմեղության կանխավարկածի խախտում է⁷:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Կարապետյանին՝

– ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երեք դրվագներով, մեղսագրվող արարքներից վերջինն ավարտվել է **2009 թվականի նոյեմբերի 11-ին**,

– ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքն ավարտվել է **2015 թվականի հուլիսի 22-ին**⁸,

⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Capetti and Maimut v. Romania* գործով 2012 թվականի մայիսի 15-ի որոշումը, գանգատներ թիվ 13043/05 և 23408/08, կետ 77:

⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Caraian v. Romania* գործով 2015 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումը, գանգատ թիվ 34456/07, կետեր 74-76:

⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- ամբաստանյալ Ս.Կարապետյանը և պաշտպան Ա.Թամրազյանը 2020 թվականի հուլիսի 24-ի դատական սիստում միջնորդություն են ներկայացրել՝ Ս.Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով⁹:

13. Այսպիսով, ամբաստանյալ Ս.Կարապետյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ՝ երեքդրվագներով, որը դասվում է ծանր հանցագործությունների թվին, հետևաբար վերջինս վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման, եթե կատարված հանցավոր արարքներից վերջինս ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, նրա նկատմամբ առկա չի եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր՝ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքով:

Մինևույն ժամանակ, Ս.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, որը համարվում է միջին ծանրության հանցագործություն: Վերոնշյալ արարքն ավարտվել է 2015 թվականի հուլիսի 22-ին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրանալու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռ առկա չի եղել: Այլ կերպ՝ վերոնշյալ հոդվածով առկա է քրեական գործի վարույթը բացառող հանգամանք, այն է՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետը լրացել է, իսկ ամբաստանյալը միջնորդել է իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի վաղեմության ժամկետի ընթացքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցանքով ընդհատվելու հանգամանքը չի կարող հաստատված համարվել, քանի որ քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի պայմաններում գործի քննությունը չի կարող շարունակվել և ամբաստանյալի մեղավորությունն իրեն մեղսագրվող հանցավոր արարքներում չի կարող հաստատվել դատարանի կողմից մեղադրական դատավճռի կայացմամբ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարեբի այն փաստարկը, որ եթե խորհրդակցական սենյակում դատարանը գտնի, որ ամբաստանյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքը, ապա այն պետք է ընդհատի ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման համար հաշվվող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, էջեր 90-92:

ժամկետները, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում հիմնավոր չէ:

14. Սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ս.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցավոր արարքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են: Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, որ Ս.Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման փաստը չի կարող հաստատված համարվել, իսկ նշված արարքը ենթադրաբար կատարելու համար մեղադրանք առաջադրելը դեռևս չի կարող վկայել հանցանքի կատարման և հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքներն ավարտված համարվելու օրվանից հաշվարկվող վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից Սարգիս Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ) և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումները՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, հիմնավոր են:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի վերոնշյալ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքն անհրաժեշտ է մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Սարգիս Ալբերտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020

թվականի նոյեմբերի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Բ-3683/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

30 հունիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ դիմող Արա Աշոտի Շահնազարյանի ներկայացուցիչներ Ռ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բավարարվել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը և թույլատրվել՝ 2 (երկու) ամիս ժամկետով Սուրեն Տարխանովի նկատմամբ իրականացնել «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

2020 թվականի սեպտեմբերի 26-ին Արա Շահնազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և 38-308-րդ հոդվածի 1-ին մասով:

Առաջին ստյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ Ա.Շահնազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. 2020 թվականի հոկտեմբերի 13-ին դիմող Ա.Շահնազարյանի ներկայացուցիչներ Բ.Ասլանյանը և Գ.Գևորգյանը վերաքննիչ բողոք են ներկայացրել Առաջին ստյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի՝ «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշման դեմ: Նշված բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

3. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցիչներ Բ.Ասլանյանը և Գ.Գևորգյանը վճռաբեկ բողոք են բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Քննարկելով թիվ 58226120 քրեական գործով մեղադրյալ Արա Շահնազարյանի պաշտպաններ Բ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը (...)՝ հարկ է նշել, որ տվյալ դեպքում Առաջին ստյանի դատարանի վերջին նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է բերվել այն անձանց կողմից, ովքեր սույն գործի շրջանակներում բողոք բերելու իրավունք չունեն: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը գործում է, որ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ բողոքարկման իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու պարզապարզությամբ:

Մասնավորապես, ինչպես բողոք բերելու իրավունք սահմանող ընդհանուր կանոնները, այնպես էլ հատուկ կանոնները սահմանել են համապատասխան դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավասությամբ օժտված սուբյեկտների ցանկը, ըստ որի մեղադրյալ Արա Շահնազարյանը կամ նրա պաշտպանները տվյալ դեպքում չունեն վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք: Բացի այդ, ինչպես երևում է սույն որոշման 1-ին կետում նշված փաստական տվյալներից, համապատասխան միջնորդությունը վերաբերվել է Սուրեն Թարխանյանի նկատմամբ «Ներքին դիտում» (վերջինիս՝ ք.Երևան, Նորք, 7-րդ փողոց, տուն 42Ա հասցեում) և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմանը և վիճարկվող դատական ակտով քննության է առնվել Սուրեն Թարխանյանի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցը: Ինչպես վերաքննիչ բողոքում,

այնպես էլ դատական գործի նյութերում բացակայում են համապատասխան բավարար փաստական փյույաներ առ այն, որ Առաջին արյանի դատարանի վիճարկվող դատական ակտն առերևույթ ուղղակիորեն վերաբերվել է Արա Շահնազարյանի իրավունքների սահմանափակմանը: Իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու կարարման արդյունքում այլ անձի հնարավոր իրավունքների առերևույթ սահմանափակման ենթադրյալ հանգամանքը մինչդատական վարույթի նկարմանը նախնական դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում և բավարար չէ փաստելու, որ հնարավոր այլ անձինք կարող են վիճարկել մեկ այլ անձի իրավունքների սահմանափակման վերաբերյալ դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վիճարկվող դատական ակտը վերաբերվել է Սուրեն Թարխանովի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակմանը, իսկ Արա Շահնազարյանի պաշտպաններ Բ.Ասլանյանը և Գ.Գևորգյանը վերաքննիչ բողոքով ըար էության վիճարկել են Սուրեն Թարխանովին վերաբերվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Ի դեպ, դատական ակտն ինքնին չի առնչվում Ա.Շահնազարյանի իրավունքներին և օրինական շահերին: Բացի այդ, հարկ է նշել, որ փյույալ դեպքում կոնկրետ անձի իրավունքների կամ ազարությունների ենթադրյալ խախտման տեսանկյունից Առաջին արյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական սրուգումը նախնական դատական վերահսկողության կարգով, անհնար է, քանի որ համապատասխան միջնորդությունը և դատարանի որոշումը վերաբերվում են մեկ այլ անձի իրավունքների սահմանափակմանը: Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքները կառնչվեն որևէ այլ անձի՝ մեղադրյալի, իրավունքներին և ազարություններին, ապա փյույալ պարագայում անձը՝ մեղադրյալը, զրկված չէ այլ ընթացակարգերով, այդ թվում վերաբերելի չախանիշների և պայմանների առկայության դեպքում հետագա դատական վերահսկողության կարգով կամ դատական քննության շրջանակներում արանալ արդյունավետ դատական պաշտպանություն (Տես, ՀՀ վճռաբեկ դատարանի 15.06.2018 թվականի թիվ ԵԿԿ/0189/01/17 որոշումը): Հետևաբար, վերը նշված հերևությունները վկայում են նաև այն մասին, որ փյույալ դեպքում չեն սահմանափակվում նաև անձի ՀՀ Մահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Անիտիելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հերևության, որ Արա Շահնազարյանի պաշտպաններ Բ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության բողոքարկման իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու պարճատարանությամբ¹:

¹ Տես նյութեր, հատոր 1, թերթեր 48-51:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերները, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, նշել են, որ Վերաքննիչ դատարանն առանց բավարար հիմքերի սահմանափակել է մեղադրյալ Ա.Շահնագարյանի՝ դատարան դիմելու, իր իրավունքները սահմանափակող ու իր մեղադրանքի և կալանավորման հիմքում դրված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների ձեռք բերման իրավաչափությունը վիճարկելու, այդ թվում՝ դրանք կատարելու թույլտվություն տալու մասին դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքները:

Ըստ բողոքաբերների՝ թեև դատարանի որոշմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կատարվել են Սուրեն Տարխանովի նկատմամբ, սակայն դրանց արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները դրվել են Արա Շահնագարյանի ինչպես մեղադրանքի, այնպես էլ կալանավորման հիմքում, ինչի մասին են վկայում Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ Ա.Շահնագարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման պատճառաբանությունները: Դրանցում որպես Ա.Շահնագարյանին վերագրվող հանցագործությունների հիմնավոր կասկածը հիմնավորող փաստական տվյալ, վկայակոչված են Ս.Տարխանովի նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները: Այդ պատճառով բողոքաբերները փաստել են, որ Ա.Շահնագարյանը հանդիսանում է շահագրգիռ անձ, քանի որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշումն անմիջականորեն առնչվում է նրա իրավունքներին ու օրինական շահերին:

Բողոքաբերները փաստել են նաև, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները:

6. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը, և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից կարգադրված օպերատիվ-հետախուզական գործունեության միջոցառումների վերաբերյալ որոշումները վերադատության կարգով վիճարկելու սուբյեկտային կազմի կապակցությամբ առկա է հակասական իրավակիրառ պրակտիկա: Ավելին, այդպիսի որոշումների իրավաչափության վիճարկման դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից բողոքն ըստ էության քննության առնելու իրավասության կապակցությամբ ևս առկա է անորոշություն, ինչը նաև արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռում: Մասնավորապես, անդրադառնալով ՀՀ կառավարության այն փաստարկին, թե *«դիմումատուն իրավունք է ունեցել բողոքարկելու դատարանի՝ իրեն գաղտնի դիտելը թույլ տվող որոշումը, երբ նա տեղեկացել է դրա մասին»*², միջազգային դատարանը փաստել է, որ *«ներպետական օրենսդրության որոշակի դրույթների բացակայության դեպքում բնավ պարզ չէ, թե արդյոք Վերաքննիչ դատարանն իրավասու էր քննել, թե վիճարկվող միջամտությունն արդյոք ծայրահեղ սոցիալական անհրաժեշտություն էր և արդյոք համաձայն էր հետապնդվող նպատակներին»*³:

Հետևաբար, նախնական դատական վերահսկողության ենթակա օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափության վիճարկման կառուցակարգի և սուբյեկտների շրջանակի հստակեցման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու և իրավունքի զարգացման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Ա.Տարխանովի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Ա.Շահնազարյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

9. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատարանական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր*

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, 45-րդ կետ:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, 46-րդ կետ:

գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

9.1. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ, ի թիվս այլի, նշել է.

– դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

– իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման⁴:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա արեղծված անկասի ու անսաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

10.1. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով⁵,

– պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը⁶,

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշման 4.1-րդ կետը:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

– ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա⁷:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումները տեղ են գտել նաև *Մամիկոնյանի ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռում, որտեղ ընդգծվել է. «Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամերող իրավական ակտը վիճարկելու հարակ և իրական հնարավորություն ունենա (...)»⁸:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ «Դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պարարանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիր սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիր ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»⁹:

12. Վճռաբեկ դատարանը, «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանն առնչվող օրենսդրական նորմերի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ կայացված *Գոռ Մարգայանի* վերաբերյալ որոշմամբ, բացահայտելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետախուզական-որոնողական բնույթը, արձանագրել է, որ դրանց արդյունքում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, որոնց առնչությամբ պետք է պահպանվեն պետության ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները¹⁰: Սույն որոշմամբ բարձրացված հարցի շրջանակներում, հարկ է փաստել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ իրականացվող

⁷ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁸ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mamikonian v. Armenia* գործով 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, 25-րդ կետ:

⁹ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

¹⁰ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Մարգայանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 որոշումը, 17.1-17.2 կետեր:

միջամտության ծավալներն անհամեմատ ընդարձակ են: Ավելին, որոշ դեպքերում դրանք նույնիսկ «թիրախավորում» են անորոշ թվով անձանց շրջանակի, ինչն էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումները, քննչական գործողությունների համեմատ, դարձնում է հանցավոր դեպքի բացահայտման առավել ծայրահեղ միջոց: Ուստի, օժտված լինելով հանցագործությունների բացահայտման բարձր արդյունավետությամբ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործիքակազմը գործնականում կարող է «թիրախավորում» ոչ միայն այն անձանց, ովքեր ուղղակի առնչություն են ունեցել հանցավոր դեպքին (օրինակ՝ հանդիսացել են հանցագործությանն օժանդակող), այլ նաև անուղղակի առնչություն ունեցողներին (օրինակ՝ դեպքի վայրով անցնող անձանց): Նման պայմաններում, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել այդ երկու խումբ անձանց նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգը և այն չափանիշը, որի պայմաններում այդ կառուցակարգը կարող է գործադրվել:

13. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարել ընդգծել օպերատիվ-հետախուզական միջոցառումների կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգի արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը: Այս առումով հատկանշական են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ: Մի շարք գործերով դատարանն ընդգծել է, որ այդ հոդվածը պահանջում է, որ ներպետական պաշտպանության միջոց առկա լինի Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի» բողոքի էությունը քննելու և համապատասխան օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույթով նախատեսված իրենց պարտականությունները¹¹: Բացի այդ, դատարանը կարևորել է, որ 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ, ընդ որում՝ դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պետության գործողություններով կամ բացթողումներով¹²: Ավելին, հարկ է նաև հիշատակել, որ ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդամ պետություններին հորդորել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերանայել իրենց

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Petropavlovskis v. Latvia* գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, 91-րդ կետ:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Paul and Audrey Edwards v. The United Kingdom* գործով 2002 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46477/99, 96-97-րդ կետեր:

իրավական համակարգերը և, ըստ անհրաժեշտության, օրենսդրության կամ դատական որոշումների միջոցով ամրագրել անհրաժեշտ և պատշաճ միջոցներ՝ երաշխավորելու համար Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պաշտպանության արդյունավետությունը¹³:

14. Խնդրո առարկա հարցով իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում նախնական դատական վերահսկողության ենթակա օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը թույլատրելու վերաբերյալ դատական որոշումները դատավարության մասնակիցները փորձում են վիճարկել կա՛ն այդ որոշման դեմ անմիջական բողոք ներկայացնելով վերաքննիչ դատարան, կա՛ն իրենց բողոքի հիմքում դրվող փաստական հանգամանքները բարձրացնել հետագայում՝ բուն քրեական գործի դատական քննության ընթացքում: Միաժամանակ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վերաքննիչ դատարանը բազմաթիվ դեպքերում քննության չի առնում բողոքը՝ պատճառաբանելով, որ բարձրացված հարցը հետագա քննության առարկա է կազմում, իսկ բուն քրեական գործի քննության շրջանակներում ևս դատական ակտը չի ենթարկվում վերահսկողության, քանի որ դատական քննության առարկան սահմանափակված է բացառապես մեղադրանքի հիմքում դրված ապացույցների հետազոտմամբ և գնահատմամբ:

Մինչդեռ, հարկ է նշել, որ այդպիսի իրավակիրառ պրակտիկան հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որդեգրած մոտեցումներին: Այսպես, *Klass and Others v. Germany* գործով դատարանը, դեռևս 1978 թվականին կայացված վճռով, արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում ժողովրդավարական հասարակության արժեքները պետք է հնարավորինս հավատարմորեն պահպանվեն վերահսկողության մեխանիզմներում: Դատարանը փաստել է, որ ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է իրավունքի գերակայությունը, որը վկայում է *inter alia*, որ **իշխանությունների կողմից անձի իրավունքների նկատմամբ միջամտությունը պետք է ենթակա լինի «արդյունավետ վերահսկողության» («contrôle efficace»):** Մինչդեռ, հայրենական իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը թույլատրելու վերաբերյալ դատական որոշումների ստուգման առումով ոչ բոլոր դեպքերում էլ ապահովվում այդպիսի «արդյունավետ վերահսկողության» մեխանիզմ:

15. Նման պայմաններում, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել «արդյունավետ վերահսկողության» կառուցակարգի որոշակիացման հարցը: Այդ նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրության արժանացնել սույն որոշման 7-րդ կետում հիշատակված՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

¹³ Տե՛ս Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածը, 4-րդ կետ:

կայացված վճռով օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու ընթացակարգի առնչությամբ տրված գնահատականները: Մասնավորապես, այդ գործով դատարանը համաձայնել է կառավարության հետ, որ դիմումատուին առաջադրված քրեական մեղադրանքի հարցը լուծող դատարանները չէին կարող Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի առնչությամբ նրա բողոքների մասով արդյունավետ պաշտպանության միջոցներ տրամադրել¹⁴: Ավելին, դատարանը փաստել է, որ թեև այս դատարաններն ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերը քննելու իրավասություն ունեցել են, նրանք իրավունք չեն ունեցել անդրադառնալ ըստ էության Եվրոպական կոնվենցիային առնչվող բողոքին առ այն, որ միջամտությունը դիմումատուի մասնավոր կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին «օրենքով նախատեսված» կամ «ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ» չի եղել. բողոքի մասով համարժեք իրավական պաշտպանություն տրամադրելու իրավունք նրանք առավել ևս չեն ունեցել¹⁵:

Վերոնշյալի հիման վրա, պետք է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը քրեական գործի ըստ էության քննության շրջանակներում վիճարկելու հնարավորությունը որպես արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չի դիտարկել:

16. Միննույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերահսկողության գաղտնի միջոցառումների դեպքում դատարանն այդ միջոցառումների վիճարկման արդյունավետությունը քննարկման առարկա է դարձրել վերադաս դատական ատյանի կարգով դրանց իրավաչափությունը ստուգելու ընթացակարգի շրջանակներում:

Այսպես, *Lambert v. France* գործով դիմումատուն վիճարկում էր, որ Վճռաբեկ դատարանի կողմից իր հեռախոսային խոսակցությունների վերահսկման դեմ բողոքը քննելուց հրաժարվելն այն պատճառով, որ երրորդ կողմի հեռախոսային խոսակցություն է վերահսկվել, միջամտություն է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքին: Դիմումատուն պնդել է, որ ցանկանում է վիճարկել այն փաստական հանգամանքները, որոնց հիման վրա դատարանը թույլատրել է վերահսկողությունը, սակայն Վճռաբեկ դատարանը զրկել է իրավական պաշտպանություն հայցելու որևէ հնարավորությունից: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տվյալ գործով դիմումատուն մինչ այդ վիճարկել էր վերահսկման իրավաչափությունը Վերաքննիչ դատարանում, որն ըստ էության քննել էր բողոքը և մերժել այն: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել էր, որ անձը բողոքարկման իրավունք չունի,

¹⁴ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, 43-րդ կետ:

¹⁵ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, նույն կետը:

ավելին՝ Վերաքննիչ դատարանը ևս իրավասու չէր քննության առնել բողոքը: Տվյալ գանգատով, **երբ Վճռաբեկ դատարանը հրաժարվել է դիմումատուի բողոքը քննության առնելուց և գտել, որ Վերաքննիչ դատարանը ևս չպետք է քններ այն**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում և փաստել, որ դիմումատուն չի ունեցել «արդյունավետ վերահսկողություն», որի իրավունքն ունեն քաղաքացիներն իրավունքի գերակայության ներքո և որը կարող էր սահմանափակել միջամտությունը նրանով, ինչն «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»¹⁶:

Բացի այդ, *Matheron c. France* գործով դիմումատուն բողոքել էր հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը վիճարկելու հնարավորությունից զրկված լինելուց: Տվյալ գործով դիմումատուն հանդիսանում էր երրորդ անձ, որը գաղտնալսվել էր քրեական գործով տրված թույլտվության շրջանակներում: Հետագայում, ըստ դիմումատուի՝ այդ գաղտնալսման արդյունքում ձեռքբերված տվյալներն օգտագործվել էին իր մեղադրանքի հիմքում: Գաղտնալսման թույլտվության դեմ ներկայացված բողոքը **քննության չէր առնվել ո՛չ վերաքննիչ դատարանի, ո՛չ էլ վճռաբեկ դատարանի կողմից**: Գործի փաստական հանգամանքների գնահատման արդյունքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում և կրկին փաստել, որ դիմումատուն չի ունեցել «արդյունավետ վերահսկողություն», որի իրավունքն ունեն քաղաքացիներն իրավունքի գերակայության ներքո և որը կարող էր սահմանափակել միջամտությունը նրանով, ինչն «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»¹⁷:

Նշված դիրքորոշումները Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահաստատել է նաև *Affaire Versini-Campinchi Et Crasnianski c. France* գործով, որտեղ ենթադրյալ հանցանք կատարած անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման շրջանակներում վերահսկվել և վերձանվել էր նաև նրա ու դիմումատու-փաստաբանի հետ ունեցած խոսակցությունը, ինչի հիման վրա հետագայում հարուցվել էր վերջինիս կարգապահական պատասխանատվության վարույթ: Տվյալ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ իրավական երաշխիքների առումով նշանակություն չունի այն հանգամանքը, որ փաստաբանը չի եղել «հեռախոսային գծի սեփականատերը», այսպիսի միջոցառումներն ըստ էության հանգեցնում են նաև երրորդ անձանց հետ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման և հետևաբար, ներառում են այն անձանց հայտարարությունների գաղտնալսումը, ովքեր չեն հանդիսացել դատավորի կողմից նշանակված միջոցառումների օբյեկտ¹⁸:

¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Lambert v. France* գործով 1998 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 23618/94, 23-41-րդ կետեր:

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Matheron c. France* գործով 2005 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 57752/00, 36-44-րդ կետեր:

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Affaire Versini-Campinchi Et Crasnianski*

17. Նախորդ կետում մեջբերված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը ստուգելու «արդյունավետ վերահսկողության» մեխանիզմ կարող է լինել բացառապես դրա իրավաչափության վիճարկումը վերադասության կարգով: Ուստի, *Համբարձունյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում արտացոլված այն մոտեցումը, որ քրեական գործի ըստ էության քննության շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը վիճարկելու հնարավորությունը չի կարող դիտարկվել «արդյունավետ վերահսկողության» մեխանիզմ, ընդունելի է նաև Վճռաբեկ դատարանի համար ներքոշարադրյալ պատճառաբանությամբ.

Նախևառաջ, ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քրեական գործի ըստ էության քննության ընթացքում դատարանները գնահատում են ապացույցների թույլատրելիությունը, նրանք իրավասություն չունեն գնահատականներ տալու այդ ապացույցների ձեռքբերման հիմք հանդիսացած՝ մեկ այլ դատարանի կայացրած դատական ակտի իրավաչափության վերաբերյալ: Այսպիսի դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը *Սամվել Բարսայանի և մյուսների* վերաբերյալ գործով կայացված որոշմամբ՝ արձանագրելով, որ հիմնական քրեական գործը քննող դատարանը գնահատական է տալիս օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդության քննման արդյունքում ընդունված դատարանի որոշմամբ ձեռքբերված ապացույցի թույլատրելիությանը, վերաբերելիությանը և արժանահավատությանը՝ **առանց այդ որոշման օրինականությունը կասկածի տակ դնելու**¹⁹: Այսինքն՝ անհրաժեշտ է սահմանազատել ապացույցի ձեռքբերման ընթացակարգի իրավաչափության ստուգումն այդ ապացույցը ձեռքբերելու թույլտվություն տվող դատարանի որոշման իրավաչափության ստուգման ընթացակարգից: Ավելին, կարևոր է փաստել, որ եթե, կախված խախտման բնույթից, դատական ակտի ոչ իրավաչափությունը կարող է ինքնին հանգեցնել նաև դրա արդյունքում ձեռքբերված ապացույցի անթույլատրելիության, ապա ապացույցի անթույլատրելի ճանաչումն ինքնին հիմք չէ դրա ձեռքբերումը թույլատրած դատական ակտը ոչ իրավաչափ որակելու համար:

Երկրորդ, հարկ է արձանագրել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափության ստուգման հնարավորությունը չի կարող կախվածության մեջ դրվել քրեական գործը դատարան ուղարկելու հանգամանքից և վերջինս

c. *France* գործով 2016 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 49176/11, 51-56-րդ, 62-64-րդ կետեր:

¹⁹ *Stin* Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Բարսայանի և մյուսների* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԳ/0189/01/17 որոշումը, 14-րդ կետ,

դիտարկել որպես իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգի պայման: Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ անձի վերաբերյալ հարուցված քրեական գործը գործնականում հնարավոր է, որ կարճվի նախաքննության ընթացքում և չուղարկվի դատարան: Մինչդեռ, անձը չի կարող զրկվել իր իրավունքների նկատմամբ միջամտող դատական ակտի իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունից: Հարկ է արձանագրել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատական ակտերի իրավաչափությունը որևէ կերպ փոխկապակցված չէ քրեական գործի ելքի հետ, համապատասխան միջոցառման անցկացումը քննարկվում և թույլատրվում է հատուկ այդ նպատակով իրականացվող դատական վարույթի շրջանակներում: Այլ կերպ, օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը թույլատրող դատաքննության, իսկ հետո՝ նաև դրա վերաքննության առարկան կամ *ratione materiae*-ու կրում է ինքնավար բնույթ, հիմնված է կոնկրետ փաստերի հետազոտման վրա, որոնց վերստուգման հնարավորությունն էլ հենց պայմանավորում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների առանցքը կազմող՝ վիճարկման արդյունավետության չափանիշը: Բացի այդ, օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափության ստուգման հնարավորությունը քրեական գործը դատարան ուղարկելու հանգամանքից կախվածության մեջ չի կարելի դնել նաև այն պատճառով, որ հակառակ դեպքում անհնարին կդառնա այդ որոշման իրավաչափության ստուգման հնարավորություն պահանջելը երրորդ անձանց կողմից, ովքեր ենթարկվել են միջամտության, սակայն քրեական գործով որպես մեղադրյալ չեն ներգրավվել, նույնիսկ չեն հանդիսանում քրեական դատավարությանը մասնակցող անձ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ եթե դատավարության մասնակիցները հնարավորություն ունենան հիմնական քրեական գործի քննության ընթացքում բարձրացնելու իրենց նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրող դատարանի որոշման իրավաչափությունը, ապա կարող է առաջանալ նույն հարցի վերաբերյալ զուգահեռ դատաքննության իրականացման վտանգ: Այլ կերպ, դատավարության մասնակիցը կարող է և՛ այդ որոշման իրավաչափությունը վիճարկել վերաքննության կարգով, և՛ հնարավոր անհաջողության դեպքում այդ հարցը փորձել կրկին բարձրացնել քրեական գործի հիմնական դատական քննության ընթացքում, որպիսի մոտեցումն անընդունելի է իրավունքի ավանդական սկզբունքներից ելնելով: Մասնավորապես, *lis alibi pendens* (այս դոկտրինն արգելում է նույն կողմերի միջև, նույն հարցի վերաբերյալ զուգահեռ դատական վարույթի նախաձեռնումը), *res judicata* (այս դոկտրինը կողմերի համար պարտադիր կատարման ենթակա է համարում դատարանի կայացրած վերջնական որոշումը) և *electa una via* (այս դոկտրինի համաձայն, եթե ընտրվել է իրավական պաշտպանության կառուցակարգ, այն չի կարող փոխվել մեկ ուրիշով) կանոնների միասնության պայմաններում անընդունելի

է օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրող դատարանի որոշման իրավաչափությունը վիճարկելուն զուգահեռ ընթացակարգ նախաձեռնելու մոտեցումն ու այդպիսի հնարավոր պրակտիկան:

Ուստի, վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման նկատմամբ «արդյունավետ վերահսկողություն» կարող է դիտարկվել բացառապես դրա իրավաչափությունը վերադաս դատական ատյանում վիճարկելը: Այդպիսի կառուցակարգը կարող է լինել երաշխիք դեպքին ինչպես ուղղակի, այնպես անուղղակի առնչություն ունեցող անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ կամայական միջամտությունները բացառելու համար:

18. Վերոգրյալի հետ մեկտեղ, հաշվի առնելով, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրենց բնույթով կարող են «թիրախավորել» անորոշ թվով անձանց շրջանակի, ուստի Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում նախադեպային իրավական դիրքորոշում ձևավորել նաև դրանց իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը վերադաս դատական ատյան բողոքարկելու չափանիշի վերաբերյալ:

Մասնավորապես, որպես այդպիսի չափանիշ պետք է դիտարկել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման գոհի վիճակի հիմնավորումը: Օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափությունը վիճարկելիս **անձը պետք է հիմնավորի, որ իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն, որն ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառել իրեն կամ ազդեցություն է թողել իր լեզիտիմ շահերի վրա:**

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափության վիճարկման կառուցակարգի գործադրման երկաստիճան չափանիշը ենթադրում է հետևյալ հարցերի պարզում.

ա) արդյո՞ք անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն,

բ) եթե այո, ապա արդյո՞ք այդպիսի միջամտությունն ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառել անձին կամ ազդեցություն թողել իր լեզիտիմ շահերի վրա:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ վերոնշյալ վերջին չափանիշը իրավակիրառ պրակտիկայում չպետք է այն աստիճան ձևականացվի (*excessive formalism*), որ անձը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի ունեցած միջամտության պայմաններում, զրկվի օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափությունը ստուգման ենթարկելու հնարավորությունից:

Մյուս կողմից էլ, հարկ է նկատել, որ շահագրգիռ անձինք իրենց բողոքը ներկայացնելիս պետք է հիմնավորեն վերոնշյալ չափանիշների առկայությունը: Այս առումով, նաև հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը, Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում արձանագրել, որ **օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալների հիման վրա անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելն ինքնին չի կարող վկայել վերոնշյալ չափանիշները հաղթահարված գնահատելու համար:** Մասնավորապես, անձանց նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերված տվյալների հիման վրա կարող են որպես մեղադրյալ ներգրավվել երրորդ անձինք: Նշվածը խնդրո հարցի համատեքստում չի կարող դիտարկվել որպես լեգիտիմ շահի պաշտպանության մեխանիզմ, եթե այդ երրորդ անձանց որևէ իրավունք չի ենթարկվել միջամտության բուն օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման շրջանակներում: Նրանք կարող են հետագայում՝ հնարավոր քրեական վարույթի շրջանակներում վիճարկել մեղադրանքի հիմքում դրված այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալների թույլատրելիությունը:

19. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում նաև փաստել, որ շահագրգիռ անձի բողոքի քննության արդյունքում, դատական ակտի հիման վրա իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ անձի իրավունքի խախտման արձանագրումը մեխանիկորեն չի վկայում նաև այլ անձանց իրավունքի խախտման մասին: Այսպես, սահմանափակված լինելով բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, վերադաս դատական ատյանները քննարկման առարկա են դարձնում վիճարկվող որոշման իրավաչափությունը միայն բողոքաբերի իրավունքների խախտման մասով, այլ ոչ այն բոլոր անձանց, ովքեր ուղղակի կամ անուղղակի առնչություն են ունեցել օպերատիվ-հետախուզական միջոցառմանը կամ նույնիսկ միջամտության ենթարկվել այդ միջոցառումներով: Ավելին, շահագրգիռ անձի բողոքի քննության արդյունքում, իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ անձի իրավունքի խախտման արձանագրումը մեխանիկորեն չի հանգեցնում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռքբերված ապացույցի անթույլատրելիության: Նշված հանգամանքների փոխազդեցությունը ենթակա է մանրակրկիտ և համակողմանի գնահատման վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ համապատասխան եզրահանգման գալու համար:

20. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումը ստուգելու «արդյունավետ վերահսկողության» մեխանիզմը կարող է գործադրվել դրա իրավաչափությունը վերադաս դատական ատյանի կարգով վիճարկելու ճանապարհով **այն**

դեպքում, երբ այդ միջոցառման արդյունքում անձը դարձել է մասնավոր կյանքի անձենմխելիության իրավունքի խախտման գոհ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բավարարվել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը և թույլատրվել՝ 2 (երկու) ամիս ժամկետով **Ս.Տարխանովի** նկատմամբ իրականացնել «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ,

– 2020 թվականի սեպտեմբերի 26-ին Արա Շահնագարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և 38-308-րդ հոդվածի 1-ին մասով: Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ **Ա.Շահնագարյանի** նկատմամբ որպես խախտման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով²⁰,

– 2020 թվականի հոկտեմբերի 13-ին **Ա.Շահնագարյանի** ներկայացուցիչները վերաքննիչ բողոք են ներկայացրել Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշման դեմ, ինչը Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ թողնվել է առանց քննության²¹:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Արա Շահնագարյանը կամ նրա ներկայացուցիչները տվյալ դեպքում չունեն վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ վիճարկվող դատական ակտը վերաբերվել է Սուրեն Տարխանովի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակմանը, իսկ Արա Շահնագարյանի ներկայացուցիչներ Բ.Ասլանյանը և Գ.Գևորգյանը վերաքննիչ բողոքով ըստ էության վիճարկել են Սուրեն Տարխանովին վերաբերող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Դատարանն արձանագրել է, որ ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ դատական գործի նյութերում բացակայում են համապատասխան բավարար փաստական տվյալներ առ այն, որ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող դատական ակտն առերևույթ ուղղակիորեն վերաբերվել է Արա Շահնագարյանի իրավունքների սահմանափակմանը: Ուստի, նշվել է, որ տվյալ դեպքում կոնկրետ անձի իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման տեսանկյունից Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը նախնական դատական վերահսկողության կարգով, անհնար է, քանի որ համապատասխան միջնորդությունը և դատարանի որոշումը վերաբերվում են մեկ այլ անձի իրավունքների սահմանափակմանը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 1-րդ կետը:

²¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

Միաժամանակ, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Բարսայանի և մյուսների* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0189/01/17 որոշմանը, Վերաքննիչ դատարանը դիրքորոշում է հայտնել, որ եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքները կառնչվեն որևէ այլ անձի՝ մեղադրյալի, իրավունքներին և ազատություններին, ապա նա գրկված չէ այլ ընթացակարգերով, այդ թվում՝ վերաբերելի չափանիշների և պայմանների առկայության դեպքում, հետագա դատական վերահսկողության կարգով կամ դատական քննության շրջանակներում ստանալ արդյունավետ դատական պաշտպանություն: Հետևաբար, դատարանը գտել է, որ տվյալ դեպքում չեն սահմանափակվում նաև անձի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները²²:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-19-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, առհասարակ բացառելով օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրող որոշումը երրորդ անձանց կողմից վերադատության կարգով բողոքարկելու հնարավորությունը՝ հաշվի չի առել, որ այդ որոշումների հիման վրա կարող է տեղի ունենալ միջամտություն երրորդ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, արձանագրում է, որ թեև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվությունը տրվել է Սուրեն Տարխանովի նկատմամբ, սակայն նշված հանգամանքն ինքնին բավարար չէր եզրահանգելու, որ Արա Շահնագարյանը դա բողոքարկելու իրավունք չունի: Վերոգրյալի հետ մեկտեղ, սույն գործի փաստական հանգամանքների շրջանակներում գնահատելով դիմող Ա.Շահնագարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բողոքարկելու իրավասությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմողի ներկայացուցիչներ Բ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի կողմից չեն ներկայացվել փաստական տվյալներ և չի հիմնավորվել, որ այդ որոշման հիման վրա միջամտություն է տեղի ունեցել Ա.Շահնագարյանի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին, որն ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառել իրեն կամ ազդեցություն է թողել իր լեզվատիր շահերի վրա: Բողոքաբերներն իրենց փաստարկները հիմնավորել են միայն այն պատճառաբանությամբ, որ կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերված տվյալները դրվել են Ա.Շահնագարյանի մեղադրանքի և կալանավորման հիմքում²³: Մինչդեռ, ինչպես

²² Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

²³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

նշվել է սույն որոշման 18-րդ կետում, օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալների հիման վրա անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելն ինքնին չի կարող վկայել սույն որոշմամբ վկայակոչված չափանիշները հաղթահարված գնահատելու համար: Հետևաբար, թեև Վերաքննիչ դատարանը սխալ է պատճառաբանել իր դատական ակտը, սակայն, բողոքաբերների կողմից ներկայացված հիմնավորումների պայմաններում, հանգել է ճիշտ եզրահանգման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում դիմողը գրկված չէ այլ ընթացակարգերով, այդ թվում վերաբերելի չափանիշների և պայմանների առկայության դեպքում հետագա դատական վերահսկողության կարգով կամ դատական քննության շրջանակներում ստանալ արդյունավետ դատական պաշտպանություն, մասնավորապես՝ վիճարկել այդ ապացույցի ձեռք բերման թույլատրելիությունը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից Վճռաբեկ դատարանի՝ Սանվել Բարսայանի և մյուսների գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0189/01/17 որոշմանը կատարված հղմամբ արտահայտված այն պնդումը, թե տվյալ դեպքում չեն սահմանափակվում նաև անձի ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, հիմնավոր է:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ս.Տարխանովի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Ա.Շահնագարյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնավոր է:

23. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դիմող Արա Շահնագարյանի ներկայացուցիչներ Բ.Ապանյանի և Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելիս, թեև սխալ է պատճառաբանել դատական ակտը, սակայն թույլ չի տվել քրեադատավարական օրենքի խախտում, ուստի, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դիմող Արա Աշոտի Շահնազարյանի ներկայացուցիչներ Ռ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0034/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական սպայար
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

8 հուլիս 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արմեն Հրաչյայի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի օգոստոսի 4-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 48175320 քրեական գործը:

2020 թվականի օգոստոսի 6-ին քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խաչատրյանի վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Արմեն Հրաչյայի Շահինյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ նախաքննության

մարմնի միջնորդությունը բավարարվել է և մեղադրյալ Ա.Շահինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով՝ կալանքի սկիզբը հաշվելով Ա.Շահինյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից:

2021 թվականի հունվարի 18-ին Ա.Շահինյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Ա.Շահինյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի հունվարի 20-ին նախաքննության մարմինը մեղադրյալ Արմեն Շահինյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին միջնորդություն է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդությունը մերժվել է:

3. Արմավիրի մարզի դատախազության դատախազ Ա.Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 20-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք¹, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի հունիսի 30-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Արմեն Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, 2020թ. օգոստոսի 3-ին՝ ժամը 01-ի սահմաններում, Արմավիրի մարզի Հայկական գյուղի 28-րդ փողոցի 10-րդ հասցեում գրնվող իր տանը, իր ընկերներ Հովհաննես Մկրտչյանի և Արմեն Ղազարյանի հետ ոգելից խմիչք օգտագործելուց հետո, կենցաղային հարցերի շուրջ՝ Արմեն Ղազարյանի կողմից իր հասցեին սեռական բնույթի հայտոյանք տալու և վիրավորելու համար, վիճարանել է նրա հետ, որի ընթացքում, երբ Արմեն Ղազարյանը դանակով հարվածել է Արմեն Շահինյանին,

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

վերջինս դրանից կարճ ժամանակ անց, դեռևս չպարզված սուր ծակող-կրրող առարկայով դիրավորությանը 2 անգամ հարվածել է Արմեն Ղազարյանի կրծքավանդակի աջ և ձախ կեսերին՝ պարձառելով նրա առողջությանը ծանր վնաս՝ նշված հարվածների կրրած-ծակած թախանցող վերքերի և ձախակողմյան հեմոպնևնոթորասի ձևով»²:

6. Առաջին առյանի դատարանը 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Սույն գործի շրջանակներում մեղադրյալ Արմեն Հրաչյայի Շահինյանի նկարմամբ կայանավորումը որպես խախտման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացրած պաշտոնաարար անձը՝ ՀԳԳ քննիչ Ս.Խաչատրյանը, կասկածվող անձի կարարած գործողությունների (անգործության) վերաբերյալ չի ներկայացրել բավարար և լրացուցիչ տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմարնանշեն նրա առնությունը իրեն վերագրվող արարքում: Դատարանը գործի ուսումնասիրությանը հանգում է նաև նրան, որ Քննիչը միջնորդության հիմնավորման հիմքում չի դրել այնպիսի ապացույցների բավարար ամբողջություն, որը Դատարանի մուր վարահություն կհայրներ հիմնավոր կասկածի առկայության մասին, այն է՝

– գործով չի իրականացվել տուժող Արմեն Սուրիկի Ղազարյանի և ախանարեսս վկա Հովհաննես Ծորիկի Մկրրչյանի հարցաքննությունները,

– գործով վկաներ Սուրիկ Անդրանիկի Ղազարյանի, Վարդան Վարդգեսի Արրահամյանի, Մհեր Փաշայի Սարոյանից վերցված հարցաքննության արձանագրությունները, իրենց բովանդակությանը վերաբերելի չեն և չեն կարող դրվել ամենաիսար խախտման միջոցի կայանքի րնրման հիմքում,

– գործով առկա չէ նաև դատարժշկական փորձագետի եզարակացությունը՝ սրացված մարմնական վնասվածքի կամ վնասվածքների առկայության և դրանց ծանրության ասրհձանի մասին, ինչի արդյունքում դատարանը հանգում է նրան, որ բացակայում է հիմնավոր կասկածն առ այն, որ Արմեն Հրաչյայի Շահինյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 112 հորվածով սահմանված հանցակազմը: (...)»³:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշման համաձայն՝ «(...) [Ա]նդրադատնալով Արմեն Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հորվածի 1-ին մասով մեղաագրվող ետթադրյալ հանցագործությանը նրա առնության վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին Առաջին առյանի դատարանի հերևությանը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեն միջնորդությանը կից Առաջին առյանի դատարան ներկայացված նյութերով, մասնավորապես՝ վկա Վարդան Արրահամյանի ցուցմունքներով, դեպքի վայրի գննության արձանագրությունով հիմնավորվում է Արմեն Շահինյանի առնությունը դեպքին, այնուամենայնիվ դրանք ինչպես առանձին վերցված, այնպես էլ գործում առկա մյուս փաստական տվյալների հեր համակցության մեջ հնարավորություն չեն տալիս փաստելու, որ այդ դեպքն առերևոյթ համընկնում է ՀՀ քրեական

² Տեն նյութեր, հատոր 2, թերթ 52:

³ Տեն նյութեր, հատոր 2, թերթեր 76-79:

օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հարկանիշներին: Այլ կերպ գործի նյութերում առկա փաստական փյուռների վերլուծությունն ու համադրությունը հնարավորություն չի տալիս եզրակացնելու, որ Արմեն Շահինյանը հնարավոր է, որ կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղաագրվող ենթադրյալ հանցանքը:

Միաժամանակ Վերաքննիչ դապարանը գրնում է, որ Արմեն Շահինյանին վերագրվող հանցանքի դեպքի և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հարկանիշների շահմանկանան վերաբերյալ եզրահանգումը փյուռը դեպքում անհամապատասխան է մինչդարակալ վարույթի նկարմամբ դարակալ վերահսկողության նպարակային նշանակության հետը հաշվի առնելով հարկապես այն հանգամանքը, որ գործի նյութերում բացակայում է Արմեն Ղազարյանի առողջությանը ենթադրարար հասցված վնասի բնույթի և սարիճանի վերաբերյալ դարարժեկական փորձագետի եզրակացությունը, այն պայմաններում, երբ դեպքից անցել է ավելի քան 6 ամիս: Ավելին՝ գործի նյութերում առհասարակ առկա չէ բժեկական որևէ փասարթուղթ, որը հնարավորություն կրար հիմնավոր կասկածի սպացուցման չափանիշների շրջանակում Արմեն Ղազարյանի առողջությանը ենթադրարար հասցված վնասի բնույթի և սարիճանի վերաբերյալ որևէ եզրահանգում կարարելու համար:

Վերը նշվածից ելնելով Վերաքննիչ դապարանն արձանագրում է, որ Առաջին սարյանի դարարանը Քննիչի միջնորդության քննության ժամանակ քովանդակային առումով չի ոնեցել բավարար փասարակալ փյուռներ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղաագրվող ենթադրյալ հանցագործությանն Արմեն Շահինյանի առնությունը (հանցանք կարարած լինելու հիմնավոր կասկածը) հասարարված համարելու համար, որպիսի պայմաններում փասարելով դրա բացակայությունը հանգել է իրավաչասի հերևության:

(...) Վերաքննիչ դապարանը հանգում է այն հերևության, որ մեղադրյալ Արմեն Շահինյանի նկարմամբ ընարրված խափանման միջոց կալանավորումը վերահասարարելու մասին միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելիս Առաջին սարյանի դարարանի կողմից թույլ չի րրվել դարակալ սիսալ և գործով կայացվել է ճիշտ լուծող դարակալ սկր, ոսարի այն բեկանելու իրավաչասի հիմք չկա: (...)»⁴:

8. Սույն գործով Արմեն Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Արմավիրի մարզի առաջին սարյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվակալի դեկտեմբերի 17-ի որոշման համաձայն՝ «(...) Դարարանը (...) քնարկելով նախաքննության մարմնի միջնորդությունը մեղադրյալ Արմեն Հրաչյայի Շահինյանի նկարմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընարրելու վերաբերյալ, նախևառաջ հարկ է համարում անդարառնալ կալանավորման պայմաններից հիմնավոր կասկածի հարցին: Այդ առումով Դարարանն անհրաժեշտ է համարում նշել, որ իրեն վերագրվող արարքի կարարմանը մեղադրյալ Արմեն Հրաչյայի Շահինյանի

⁴ Տեն նյութեր, հատոր 2, թերթեր 114-121:

առնչվելու վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած, ինչը հավասարվում է միջնորդությանը կից ներկայացված նյութերով:

Ինչ վերաբերում է կալանավորման հիմքերին, ապա պետք է փաստել, որ ինչպես միջնորդությամբ, այնպես էլ դատարանի նիստի ընթացքում Քննիչը որպես այդպիսիք նշել է, որ վերջինս թաքնվում է քննությունից, և ազատության մեջ մնալով կարող է ազդել գործով անցնող մյուս անձանց վրա, ուստի գրնում է, որ կալանավորման հիմքերը բավարար են:

Անհրոտելով վերոշարտրյալը՝ Դատարանը գրնում է, որ տվյալ դեպքում առկա հիմնավոր կասկածը և կալանավորման հիմքերի հիմնավորումները բավարար են, որպեսզի մեղադրյալի նկարմամբ ընտրվի ամենափար խափանման միջոց կալանավորումը, նկարի ունենալով այն հանգամանքը, որ մեղադրյալ Արմեն Հրաչյայի Շահինյանն արդեն իսկ թաքնվում է և խուսափում է քննությունից»⁵:

8.1. 2021 թվականի մայիսի 19-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արմեն Հրաչյայի Շահինյանի վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ⁶:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 135-րդ հոդվածների պահանջները, Վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրված հետևություններն անհիմն են և չեն բխում գործով ձեռք բերված փաստական տվյալներից:

10. Բողոքաբերն ընդգծել է, որ ստորադաս դատարանները ներկայացված փաստերի ոչ պատշաճ գնահատման արդյունքում հանգել են սխալ հետևության հիմնավոր կասկածի բացակայության մասին:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ դատարանները, չհետևելով հանցագործությունը մեղադրյալ Ա.Շահինյանի կողմից կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի՝ որպես կալանավորման պայմանի, գնահատման չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին և սխալ գնահատելով դատարան ներկայացված՝ մեղազգրվող հանցագործությունն Ա.Շահինյանի կողմից կատարելու հիմնավոր կասկածը հաստատող տվյալները, կայացրել են անհիմն և անօրինական դատական ակտեր:

Ըստ բողոքաբերի՝ քրեական գործով ձեռք բերված և դատարան ներկայացված փաստական տվյալներն իրենց համակցության մեջ վկայում են, որ առկա է հիմնավոր կասկած, որ Ա.Շահինյանը կատարել է իրեն մեղազգրվող

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 48-50:

⁶ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԱՐԴ/0074/01/21 քրեական գործը:

արարքը և այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

11. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, առանց քրեական գործում առկա տվյալները պատշաճ գնահատելու, անհիմն եզրահանգման է եկել առ այն, որ թեև քննիչի միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերով հիմնավորվում է Ա.Շահինյանի առնչությունը դեպքին, բայց առկա չէ որևէ բժշկական փաստաթուղթ, որը հնարավորություն կտար ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման հիմնավոր կասկածի վերաբերյալ որևէ եզրահանգում կատարել:

Բողոքաբերն ընդգծել է, որ քննիչի միջնորդությանը կից ներկայացված նյութերում առկա է «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ Ա.Պողոսյանի կողմից 2020 թվականի օգոստոսի 3-ին տրված տեղեկանքն այն մասին, որ Արմեն Ղազարյանին բժշկական հաստատություն ընդունելիս, նրա մոտ ակտորոշվել է «կրծքավանդակի աջ և ձախ կետերի ծակած-կտրած թափանցող վերքեր, ձախակողմյան պնևմոթորաքս»: Բողոքի հեղինակը նշել է, որ հիշյալ վնասվածքները, ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի թիվ 860-Ն որոշմանը կից՝ «Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման» կարգը սահմանող թիվ 1 հավելվածի 45-րդ կետի 11-րդ և 12-րդ ենթակետերի համաձայն՝ դասվում են կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս առաջացնող մարմնական վնասվածքների շարքին: Ու թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը որպես առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը հիմնավորող ապացույց է դիտարկում բացառապես դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, այդուհանդերձ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ Ա.Պողոսյանի կողմից տրված տեղեկանքը, *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած չափանիշներով համարվում է փաստական հանգամանք (որի վրա, եզրակացություն կազմելու ժամանակ, հիմնվում է նաև դատաբժշկական փորձագետը), որն անաչառ դիտորդի մոտ համոզմունք է առաջացնում, որ առկա է հիմնավոր կասկած՝ տուժողի առողջությանը կյանքի համար վտանգավոր ծանր վնաս պատճառելու վերաբերյալ: Հետևաբար այդ, ինչպես նաև դատարանին ներկայացված մյուս փաստերը և տեղեկությունները հնարավորություն տալիս են եզրակացնելու, որ Ա.Շահինյանը հնարավոր է, որ կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, իսկ Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ որևէ բժշկական փաստաթուղթ չի ներկայացվել դատարանին՝ ակնհայտ հիմնագուրկ է:

11.1. Բողոքաբերն ընդգծել է, որ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունն ուշացմամբ պատրաստելը պայմանավորված է եղել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած պատերազմական գործողությունների ժամանակ տուժած անձանց բազմաթիվ դատաբժշկական փորձաքննությունների ենթարկելու կապակցությամբ գերծանրաբեռնված լինելու հանգամանքով:

11.2. Բողոքաբերը նշել է, որ դատաբժշկական փորձաքննության՝ 2021 թվականի մարտի 17-ի թիվ 254/հ եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինը ստացել է 2021 թվականի մարտի 24-ին, և այդ եզրակացության համաձայն՝ Արմեն Ղազարյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող՝ կրծքավանդակի աջ և ձախ կետերի՝ կրծքավանդակի խոռոչ թափանցող, ձախ թոքի վնասումով պնևմոթորաքսի զարգացումով զուգորդված, ծակած-կտրած թափանցող վերքերի ձևով:

12. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ դատարանին ներկայացված փաստերը և տեղեկությունները (մասնավորապես՝ Արմեն Շահինյանի և Արմեն Ղազարյանի հագուստների դատահետքաբանական փորձաքննությունների թիվ 300 և 301 եզրակացությունները, վկա Անահիտ Տեր-Հարությունյանի ցուցմունքի արձանագրությունը, դեպքին ակնատես Հովհաննես Մկրտչյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի զննության մասին արձանագրությունը) անաչառ դիտորդի մոտ հիմնավորում են այն կասկածը, որ Արմեն Շահինյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքին:

13. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ նույն դատավորի նախագահությամբ Առաջին ատյանի դատարանն Ա.Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննության առնելու և բավարարելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման մեջ անդրադառնալով Ա.Շահինյանի կալանավորման պայմաններից հիմնավոր կասկածի հարցին, նշել է, որ վերագրվող արարքի կատարմանը մեղադրյալ Ա.Շահինյանի առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածն առկա է: Իսկ այդ առումով թե ինչ հանգամանք է փոխվել մեղադրյալին հայտնաբերելուց հետո՝ վերջինիս նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու ժամանակ, թե՛ Առաջին ատյանի դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը որևէ հիմնավորում չեն բերել, այսինքն չեն պատճառաբանել, թե ինչու է 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը կայացնելու ժամանակ հիմնավոր կասկածը համարվել առկա, իսկ մեղադրյալին հայտնաբերելուց հետո՝ 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ արձանագրվել է հիմնավոր կասկածի բացակայությունը, հետևաբար՝ այդ մասով ստորադաս դատարանները կայացրել են ոչ պատշաճ պատճառաբանված դատական ակտ, ինչը նույնպես դատական ակտը բեկանելու հիմք է:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է կայացնել նոր դատական ակտ, այն է՝ ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 20-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշումը և բավարարել նախաքննության մարմնի՝ 2021 թվականի հունվարի 20-ի միջնորդությունը՝ մեղադրյալ Արմեն Շահինյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Արմեն Շահինյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

16. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...) գ) անձի օրինական կայանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»:

17. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ *Վահրամ Գևորգյանի*⁷, *Հարություն Խաչատրյանի*⁸ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, մինչև այն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ⁹:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴԶ/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝
– հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

– մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից¹⁰, ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միննույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել¹¹, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)¹²:

ԵԱԿԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԴ1/0003/11/08 որոշումը:

¹¹ Այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06:

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը Արմեն Շահինյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով¹³,

- Նախաքննության մարմինը հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացրել, որն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է: **Դատարանը գտել է, որ Արմեն Շահինյանին վերագրվող արարքի կատարմանը վերջինիս առնչվելու վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած, ինչը հավաստվում է միջնորդությանը կից ներկայացված նյութերով**¹⁴,

- Մեղադրյալ Արմեն Շահինյանին հայտնաբերելուց հետո, կալանավորման հարցը կրկին քննության առնելու ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, նույն դատավորի նախագահությամբ, 2021 թվականի հունվարի 20-ին որոշում է կայացրել քննիչի միջնորդությունը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ քննիչը միջնորդության հիմնավորման հիմքում չի դրել այնպիսի ապացույցների բավարար ամբողջություն, որը դատարանի մոտ վստահություն կհայտնեք հիմնավոր կասկածի առկայության մասին, ինչի արդյունքում դատարանը հանգում է նրան, որ բացակայում է հիմնավոր կասկածն առ այն, որ Ա.Շահինյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով սահմանված հանցակազմը¹⁵,

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ թեև միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերով, մասնավորապես՝ վկա Վարդան Աբրահամյանի ցուցմունքներով, դեպքի վայրի զննության արձանագրությունով, հիմնավորվում է Արմեն Շահինյանի առնչությունը դեպքին, այնուամենայնիվ դրանք ինչպես առանձին վերցված, այնպես էլ գործում առկա մյուս փաստական տվյալների հետ համակցության մեջ, հնարավորություն չեն տալիս փաստելու, որ այդ դեպքն առերևույթ համընկնում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Շահինյանին վերագրվող հանցանքի դեպքի և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների չհամընկնման վերաբերյալ եզրահանգումը տվյալ դեպքում անհամատեղելի չէ մինչդառական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության նպատակային նշանակության հետ՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ գործի նյութերում բացակայում է Ա.Ղազարյանի առողջությանը ենթադրաբար հասցված վնասի բնույթի և աստիճանի վերաբերյալ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, ավելին՝ գործի նյութերում առհասարակ առկա չէ բժշկական որևէ փաստաթուղթ,

ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 15:

¹³ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

որը հնարավորություն կտար հիմնավոր կասկածի ապացուցման չափանիշների շրջանակում Արմեն Ղազարյանի առողջությանը ենթադրաբար հասցված վնասի բնույթի և աստիճանի վերաբերյալ որևէ եզրահանգում կատարելու համար: Վերը նշվածից եխելով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդության քննության ժամանակ չի ունեցել բավարար փաստական տվյալներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող ենթադրյալ հանցագործությանը Ա.Շահինյանի առնչությունը (հանցանք կատարած ինելու հիմնավոր կասկածը) հաստատված համարելու համար, որպիսի պայմաններում փաստելով դրա բացակայությունը՝ հանգել է իրավաչափ հետևության¹⁶:

19. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-17-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Ա.Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց վերահաստատելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք առանցքային հանգամանքներ:

Նախևառաջ, հարկ է նկատել, որ թե՛ Առաջին ատյանի դատարանը (ընդ որում՝ նույն դատավորի նախագահությամբ), և թե՛ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Ա.Շահինյանի առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նրան առաջադրված մեղադրանքին չի հաստատվում, պատշաճ ուշադրության չեն արժանացրել քննիչի միջնորդության հետ դատարան ներկայացված հետևյալ փաստական տվյալները.

– դեպքի վայրի գննության մասին արձանագրությունը, համաձայն որի՝ Հովհաննես Մկրտչյանի մասնակցությամբ գննության է ենթարկվել դեպքի վայրը՝ Արմեն Շահինյանին պատկանող Արմավիրի մարզի Հայկական գյուղի 28-րդ փողոցի թիվ 10-րդ տան պատշգամբը: Հովհաննես Մկրտչյանը հայտարարել է, որ 2020 թվականի օգոստոսի 3-ին, ժամը 1-ի սահմաններում, նշված պատշգամբում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Արմեն Շահինյանը դանակով երկու անգամ հարվածել է Արմեն Ղազարյանի կրծքավանդակի շրջանին, **ինչին ինքն ականատես է եղել**¹⁷,

– Արմեն Շահինյանի և Արմեն Ղազարյանի հագուստների դատահետքաբանական փորձաքննությունների թիվ 300 և 301 եզրակացությունները, որոնց համաձայն՝ Ա.Շահինյանի և Ա.Ղազարյանի վերնաշապիկների վրա առկա են միջանցիկ վնասվածքներ, որոնք կարող էին առաջանալ մեկսայրանի կտրող-ծակող շեղք ունեցող դանակի, գործիքի կամ այլ առարկայի ներգործության արդյունքում¹⁸,

¹⁶ Տեն սույն որոշման 7-րդ կետը:

¹⁷ Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 10-11:

¹⁸ Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 33-35, 37-38:

- վկա Անահիտ Տեր-Հարությունյանի ցուցմունքն այն մասին, որ բնակվում է Արմեն Շահինյանի հարևանությամբ և աշխատում է Արմավիրի մարզի Արմավիր գյուղի առողջության կենտրոնում՝ որպես տնօրեն և ընտանեկան բժիշկ: 2020 թվականի օգոստոսի 3-ին՝ ժամը 1-ի սահմաններում, փողոցի կողմից աղմուկի, վիճաբանության, գոռգոռոցի ձայներ է լսել, դուրս է եկել փողոց և տեսել, որ հարևանությամբ բնակվող Արմեն Շահինյանի տան բակում քաղաքացիներ կան հավաքված, և աղմուկն այդ կողմից է գալիս: Մոտ 10 րոպե հետո իրենց տան դարպասը թակել է Արմեն Շահինյանը, որը, կրծքավանդակի ձախ կեսին առկա վնասվածքը ցույց տալով, խնդրել է, որ բուժօգնություն ցուցաբերի: Ինքն էլ տեսնելով նրա վնասվածքը՝ հասկացել է, որ այն կտրած-ծակած վնասվածք է և անմիջապես զանգահարել է շտապ օգնության ծառայություն: Հետագայում գյուղում տարածված խոսակցություններից իմացել է, որ Արմեն Շահինյանի տանը տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում համագյուղացիներ Արմեն Շահինյանը և Արմեն Ղազարյանը միմյանց հարվածներ են հասցրել և պատճառել մարմնական վնասվածքներ¹⁹,

- «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ Ա.Պողոսյանի կողմից 2020 թվականի օգոստոսի 3-ին տրված տեղեկանքն այն մասին, որ Արմեն Ղազարյանին բժշկական հաստատություն ընդունելիս, նրա մոտ ախտորոշվել է «կրծքավանդակի աջ և ձախ կեսերի ծակած-կտրած թափանցող վերքեր, ձախակողմյան պնևմոթորաքս»²⁰:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ Ա.Պողոսյանի կողմից տրված տեղեկանքը փաստական հանգամանք է, որն անաչառ դիտորդի մոտ կարող է համոզմունք առաջացնել, որ առկա է հիմնավոր կասկած՝ տուժողի առողջությանը կյանքի համար վտանգավոր ծանր վնաս պատճառելու վերաբերյալ:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի համաձայնությունն Առաջին առյուծի դատարանի մասնավորապես այն դատողության հետ, որ, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով հիմնավոր կասկածը բացակայում է, անհիմն է և չի բխում վարույթն իրականացնող մարմնի միջնորդությանը կից ներկայացված տվյալներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված տվյալների համակցությունը դատավարության տվյալ փուլում ողջամտորեն բավարար էր գալու այն եզրահանգման, որ մեղադրյալ Արմեն Շահինյանն առնչություն ունի իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը: Այլ կերպ՝ առկա փաստական տվյալները բավարար էին փաստելու, որ առկա է մեղադրյալ Ա.Շահինյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարման հիմնավոր կասկածը:

¹⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 26-29:

²⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 8:

20. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Ա.Շահինյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար, հիմնավոր չեն:

21. Անփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 135-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, և Ա.Շահինյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ու նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում²¹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Արմեն Հրայյայի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *արորագրություն*

Դատավորներ *արորագրություններ*

²¹ Տնն սույն որոշման 8.1-րդ կետը:

15.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0605/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

28 հուլիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի որոշման դեմ դիմող Նվեր Նիկողայի Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը¹,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Վ.Դովմազյանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ դիմող Նվեր Նիկողայի Մանուկյանի հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

2. Վերոգրյալ որոշման դեմ դիմող Նվեր Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի փետրվարի 2-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 31-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանը, մերժելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Ոստանաաիբելով դարարհազ Վ.Դոլմազյանի 17.12.2018թ-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը [Առաջին արյանի] դարարանն արձանագրում է, որ այն բիում է քրեական գործ հարուցելու հիմքը սրուգելու արդյունքում ձեռք բերված նյութերի արդյունքում սրացված տեղեկություններից:

(...) [Առաջին արյանի] դարարանը գրնում է, որ բողոքարկվող որոշումը կայացվել է օրենքին համապարասիան, անձի իրավունքների իսահարված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դարարանին չեն ներկայացվել, ուարի [Առաջին արյանի] դարարանը գրնում է, որ բողոքը ենթակա է մերժման»²:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը փաստել է. «(...) [Առաջին արյանի դարարանի] որոշումն անհիմն է և չպարճատարանված:

(...) Գրնում եմ, որ քրեական գործի հարուցման փուլում ձեռք չեն բերվել ողջամրորեն անհրաճեշտ փլյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարգելու համար»: Արդյունքում բողոքարբերը խնդրել է. (...) բավարարել վերաքննիչ բողոքը, բեկանել [Առաջին արյանի դարարանի] որոշումը և վերացնել ՀՀ գլխավոր դարարահազության ՀԿԳ քննության նկարմամբ հսկողության վարչության ավագ դարարահազ Վ.Դոլմազյանի՝ «քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 17.12.2018 թ. որոշումը»³:

² Տն նյութեր, հատոր 1, թերթեր 67-70:

³ Տն նյութեր, հատոր 1, թերթեր 74-75:

7. Վերաքննիչ դատարանի՝ բողոքը մերժելու մասին որոշման համաձայն՝ «(...) [Ե]րբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կայացվել է դատախազի կողմից, ապա միևնույն է՝ նշված որոշումը պետք է բողոքարկվի այն կայացրած դատախազի վերադասին և միայն դրանից հետո՝ դատարան:

(...) [Ե]րբ դատարանի որոշումն անհարգելի է համարվում, որ դիմող Նվեր Մանուկյանի և փաստաբան Լուսինե Ալանյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազության հարկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Վ.Բովնազյանի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին:

Վերագրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանը, առանց ներկայացված բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու, պետք է մերժեր այն, մինչդեռ դատարանն ըստ էության քննել է ներկայացված բողոքը՝ անտեսելով, որ դիմող Նվեր Մանուկյանի և փաստաբան Լուսինե Ալանյանի կողմից չի պահպանվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատավարական կարգը, մասնավորապես՝ վիճարկվող որոշումը սահմանված կարգով չի բողոքարկվել վերադաս դատախազին:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սահմանված կարգի խախտմամբ դիմող Նվեր Մանուկյանի փաստաբան Լուսինե Ալանյանի կողմից դատարան ներկայացված բողոքը ենթակա է եղել մերժման: Ընդ որում՝ թեև Առաջին արյանի դատարանը սխալ է պարճառաբանել իր որոշումը, այնուամենայնիվ, ըստ էության, կայացրել է գործի ելքը ճիշտ լուծող դատական ակտ, ուստի դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ»⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը, գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը վկայակոչելով վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու օրենսդրական պահանջն ու այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը ստուգելու դատավարական պահանջով, անկանխատեսելի հանգամանքով, վերաքննիչ վերանայման սահմաններից

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 44-51:

դուրս արձանագրել է դատական սխալ՝ ըստ էության քննարկման առարկա չդարձնելով վերաքննիչ բողոքը:

Ըստ բողոքաբերի, սահմանափակ վերաքննության մոդելի պայմաններում, Վերաքննիչ դատարանը դուրս գալով վերաքննիչ վերանայման սահմաններից չի ապահովել դատավարության մասնակցին տրված երաշխիքն առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում դատարանը չի կատարի դատավարական հակառակորդի գործառույթ:

8.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անդրադառնալով բողոքարկման դատավարական կարգի պահպանվածության հարցին, պետք է նաև քննարկման առարկա դարձներ քրեական հետապնդման մարմնի կողմից վիճարկվող որոշման բողոքարկման ընթացակարգը պարզաբանելու պարտականությունը կատարված լինելու հարցը: Հակառակ պարագայում, ըստ բողոքաբերի, խախտվում են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքները:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք վիճարկվող որոշման բողոքարկման դատավարական կարգը պահպանված չլինելու հիմքով դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում*»:

Վերաքննության գործառույթային առանձնահատկությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է ստորադաս ատյանի դատական ակտի հիմնավորվածությունն ու իրավաչափությունը: Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում, այլև նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները: Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր

դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն: Վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս գալու հիմքերի սահմանափակ և խիստ որոշակի շրջանակը կոչված է բացառելու վերադաս դատական ատյանի կողմից բողոքում չնշված, անկանխատեսելի հանգամանքներով սահմաններից դուրս գալը: Հակառակ պարագայում, վերադաս դատարանը կիրականացնի գործի լրիվ ծավալով ըստ էության քննություն, ինչն անհամատեղելի կլինի մրցակցության սկզբունքից բխող՝ սահմանափակ վերանայման՝ օրենսդրորեն ամրագրված գաղափարի հետ⁵:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը հաստատելու մասին դատական ակտի⁶ դեմ, դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով, վերաքննիչ բողոք է բերել դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը՝ փաստարկելով, որ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար ողջամտորեն անհրաժեշտ տվյալներ ձեռք բերված չեն⁷:

– Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին՝ փաստարկելով, որ դատախազական հսկողության գործիքակազմի սպառումը նախապայման է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրելու համար, մինչդեռ, տվյալ դեպքում, իրավունքների պաշտպանության արտադատական միջոցը սպառված չլինելու պայմաններում Առաջին ատյանի դատարանն ըստ էության քննարկել է ներկայացված բողոքը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, առանց անդրադառնալու վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերին և արձանագրելով, որ բողոքարկման կարգի խախտմամբ դատարան ներկայացված բողոքը ենթակա էր մերժման՝ առանց անդրադառնալու վիճարկվող որոշման իրավաչափության հարցին, սակայն հաշվի առնելով, որ Առաջին ատյանի դատարանը մերժելով դիմողի բողոքը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, գտել է, որ այն պետք է թողնել անփոփոխ⁸:

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Մաքունցի* բողոքի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10, *Գեղամ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11, *Արթուր Խորշոտյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԳ/0065/01/11, *Լուկաշ Վերանյանի* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԳ/0074/01/17, *Հենրիկ Բարսեղյանի ու Արման Մարջանյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԳ/0259/01/16 և *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԳ/0426/11/18 որոշումները:

⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

12. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն որոշման 10-րդ կետում նշված հիմքերի բացակայության պայմաններում, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Այսինքն՝ անդրադառնալով քրեական հետապնդման մարմնի որոշման բողոքարկման ընթացակարգային բնույթի խախտման հարցին՝ Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված դատական ակտը ոչ իրավաչափորեն հիմնավորել է այնպիսի փաստարկմամբ, որը ներկայացված չի եղել վերաքննիչ բողոքում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքն ըստ էության քննարկման առարկա չի դարձրել ու չի անդրադարձել Առաջին ատյանի դատարանի կողմից բողոքի առնչությամբ տրված լուծման հիմնավորվածությանը և իրավաչափությանը: Նման պայմաններում, խախտվել է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների միջև գործառնության կապը, դատավարության մասնակցին տրված երաշխիքն առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի դատավարական հակառակորդի գործառնություն, և սահմանափակվել է դիմողի՝ վերաքննության մատչելիության իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սահմանափակված լինելով բողոքի առարկայով և սահմաններով, իրավասու չէր անդրադառնալ քրեական հետապնդման մարմնի վիճարկվող որոշման բողոքարկման դատավարական կարգի պահպանված լինելու հարցին:

Ընդհանրացնելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշման բողոքարկման դատավարական կարգը պահպանված չլինելու հիմքով դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը, հիմնավոր չէ:

13. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի որոշումը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, ապահովելով անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները, ինչպես նաև դատական վերանայման սահմանների վերընթաց նվազման սկզբունքի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության⁹:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

դիրքորոշումը, պետք է քննության առնի դիմող Ն.Մանուկյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում վկայակոչված փաստարկին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Նվեր Նիկոլայի Մանուկյանի ներկայացուցչի Լ.Ասլանյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

16.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԴ/0101/01/14

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

29 հուլիսի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Սետ Ժորժիկի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճռով Սետ Ժորժիկի Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ մաքսանենգության առարկայի արժեքի՝ 24.512.824 ՀՀ դրամի բռնագրավմամբ: Ս.Գրիգորյանի պատժի կրման սկիզբը հաշվվել է 2013 թվականի նոյեմբերի 25-ից:

2. Դատախազ Ա.Փանոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոնշյալ դատական ակտը չի բողոքարկվել և 2015 թվականի հոկտեմբերի 16-ին մտել է օրինական ուժի մեջ:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ս.Գրիգորյանը: ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ վերջինիս բողոքը թողնվել է առանց քննության՝ վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկելու պատճառաբանությամբ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ս.Գրիգորյանի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին¹ նոր հանգամանքի հիմքով բերած վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, Ս.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել է անմեղ և արդարացրել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք², որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 2-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ս.Գրիգորյանը և վերջինիս պաշտպան Ս.Մանասյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել, իսկ վարույթ ընդունելու դեպքում՝ վճռաբեկ բողոքը մերժել՝ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Վերաքննիչ դատարանը, 2021 թվականի մարտի 16-ի որոշմամբ վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՆ-1348 որոշումը, արձանագրել է. «(...) Սույն գործով դատապարտվող Սեյր Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել:

Վերաքննիչ դատարանը գործի հանգամանքները ՀՀ Վճռաբեկ դատարանի նախատեսյալին որոշումներում արտահայտած դիրքորոշման և

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 10:

² Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

քրեադատարարական նորմերի համարեքստում վերլուծության ենթարկելով՝ գրնում է, որ կարարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատարարայրյալ Սեյր Գրիգորյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով կարարված արարքի հանցավորությունը վերացել է, արարքն ապարքեականացվել է:

Ուարի, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ կարարված օրենսդրական փոփոխությունները կիրառելի են Սեյր Գրիգորյանի նկարմամք, ինչի արդյունքում վերջինիս արարքում այլևս առկա չէ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված հանցակազմը, հեյրևարար, Սեյր Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով առաջարդված մեղադրանքով պեյրք է ճանաչել անմեղ և արդարացնել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով (...)³:

7. Ըստ գործում առկա՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված օպերատիվ տեղեկատու քարտադարանի տեղեկատվության՝ Ս.Գրիգորյանը ագատագրկում պատժատեսակի կրումից ագատվել է 2016 թվականի մայիսի 25-ին⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի այն անձանց նկատմամք, ովքեր քրեական օրենքով չթոյլատրված արարք կատարելու համար առնվազն ունեն դատվածություն: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը փաստել է, որ դատվածությունը համվելուց կամ մարվելուց հետո անձը համարվում է հանցանք չկատարած, նրա մասնակցությամք քրեաիրավական բողոք հարաբերությունները դադարում են, և վերջինս չի կարող, չգտնվելով քրեաիրավական հարաբերությունների մեջ, հավակնել այդ հարաբերությունների նոր, այդ թվում՝ նախկին կարգավորումների համեմատությամք բարենպաստ կարգավորման հետևանքներին:

Բողոքի հեղինակը նշել է, որ Ս.Գրիգորյանի դատվածության վերաբերյալ ձև 8 տեղեկանքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նա պատժի կրումից ագատվել է 2016 թվականի մայիսի 25-ին, և նրա՝ տվյալ արարքի համար դատվածության մարման ժամկետը չի ընդհատվել: Վերջինիս դատվածությունը մարվել է 2019 թվականի մայիսի 25-ին, այնինչ նրա վերաքննիչ բողոքը՝ իր նկատմամք օրինական ուժի մեջ մտած դատավճիորը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ, Վերաքննիչ դատարանում ստացվել է 2020 թվականի նոյեմբերի 16-ին, այսինքն՝ այն պայմաններում, երբ Ս.Գրիգորյանը համարվել է

³ Տնն քրեական գործ, հատոր 11, թերթ 52:

⁴ Տնն քրեական գործ, հատոր 11, թերթեր 94-95:

ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար դատվածություն չունեցող անձ:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 16-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

Վճռարեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՌ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է Մետ Գրիգորյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) Արարքի պարժեղությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

11.1. Արարքի պարժեղությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ թիվ ՄԴՌ-1348 որոշման շրջանակներում և արձանագրել, որ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պարժեղությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով⁵:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար⁶:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՌ-1348 որոշումը:

⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռարեկ դատարանի՝ Թաթուլ Պեյրոյանի գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԱՎԴ-4/0026/01/15 որոշումը:

11.2. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բարելավող օրենքը հետադարձ ուժով կիրառելու հնարավոր ժամկետային սահմանափակումներին, *Դավիթ Բարսայանի* գործով որոշմամբ ընդգծել է, որ անկախ սահմանված ժամկետում համապատասխան դատական ակտը չբողոքարկելու պատճառներից՝ անձը կարող է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու բողոք ներկայացնել, եթե նոր ընդունված օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը, մեղմացնում պատիժը կամ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը, **և եթե անձը շարունակում է կրել նախկինում գործող օրենքի քրեաիրավական հետևանքները, այսինքն՝ վերջինս պարիժ է կրում կամ կրել է, սակայն ունի դարվածություն**⁷:

11.3. *Մելիք Մեսրոպյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը, ընդգծելով դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքի կարևորությունը, արձանագրել է, որ օրենքի հետադարձության վերստուգիչ (ռևիզիոն) կարգի դեպքում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նոր օրենքի ընդունման հիմքով վերանայելու հնարավորությունը միջազգային սկզբունքներին համապատասխան՝ սահմանափակված է դատական ակտերի կայունության և որոշակիության սկզբունքների պահպանման անհրաժեշտությամբ: Օրենքի հետադարձության կանոնը վերստուգիչ (ռևիզիոն) կարգով կիրառելի է այն պարագայում, երբ օրենսդրական փոփոխության արդյունքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հակասում է օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքներին, որպիսի պայմաններում **դատարանի համար պարարադիր է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը և նոր օրենքի գործողության դարվածումն այն անձանց նկատմամբ, ովքեր կրում են պարիժը կամ կրել են այն, սակայն ունեն դարվածություն**⁸:

12. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակում արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հետադարձության կարգով կարող է վերանայվել միայն այն դեպքում, երբ անձը շարունակում է կրել նախկին օրենքի քրեաիրավական հետևանքները, այսինքն՝ պատիժ է կրում կամ կրել է այն, սակայն ունի դատվածություն, հակառակ դեպքում, դատական ակտերի կայունության սկզբունքից շեղումը որևէ պարագայում չի կարող արդարացված համարվել:

Ընդ որում, համանման կարագավորում է նախատեսվել նաև 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ *«Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պարիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած*

⁷ Տևն, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Բարսայանի* գործով 2021 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ԼԴ-2/0016/01/17 որոշումը:

⁸ Տևն, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մելիք Մեսրոպյանի* գործով 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԵԴԴ/0040/01/12 որոշումը:

օրենսդրությամբ նախատեսված պայրժի ստավելագոյն ժամկերից, կամ նշանակված պայրժարեսակն ավելի խիար է ուժի մեջ մարած օրենսդրությամբ նախատեսված ստավել խիար պայրժարեսակից: Նշված դեպքերում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մարնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կարարած այն անձանց վրա, որոնք կրում են պայրիժը կամ կրել են դա, սակայն ոնեն դարվածություն»:

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ տեղի ոնեցած օրենսդրական գարգացումների արդյունքում, 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված՝ անձին մեղսագրվող արարքի ապաքրեականացումը, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, որպես ռեարիլիտացնող հանգամանք չի դիտարկվել:

13. Սույն գորժի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Գրիգորյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատագրկման՝ երկու տարի վեց ամիս ժամկետով՝ մաքսանենգության առարկայի արժեքի՝ 24.512.824 ՀՀ դրամի բոնագրավմամբ, իսկ պատժի կրման սկիզբը հաշվվել է 2013 թվականի նոյեմբերի 25-ից⁹:

Վերաքննիչ դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ վերոնշյալ ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժել է՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն չի բողոքարկվել և 2015 թվականի հոկտեմբերի 16-ին օրինական ուժ է ստացել¹⁰:

ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված օպերատիվ տեղեկատու քարտադարանի տեղեկատվության համաձայն՝ Մ.Գրիգորյանը ազատագրկում պատժատեսակի կրումից ազատվել է 2016 թվականի մայիսի 25-ին, և տվյալ արարքի համար դատվածության մարման ժամկետը չի ընդհատվել¹¹:

Վերաքննիչ դատարանը 2021 թվականի մարտի 16-ի որոշմամբ Մ.Գրիգորյանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 16-ին նոր հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճիոր բեկանել և փոփոխել է, Մ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել է անմեղ և արդարացրել՝ պատճառաբանելով, որ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը վերացվել է, և արարքն ապաքրեականացվել է¹²:

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների

⁹ Տեն սույն որոշման 1-ին կետը:

¹⁰ Տեն սույն որոշման 2-րդ կետը:

¹¹ Տեն սույն որոշման 7-րդ կետը:

¹² Տեն սույն որոշման 4-րդ և 6-րդ կետերը:

և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը չի կարող նոր հանգամանք դիտարկվել՝ ՍԳրիգորյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու համար: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դիտարկող հանցագործություն էր, որի համար նախատեսված էր ազատազրկման ձևով պատիժ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, հետևաբար այն դասվում էր միջին ծանրության հանցագործությունների շարքին: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վերոնշյալ արարքի համար ՍԳրիգորյանի դատվածությունը կարող էր մարվել պատիժը կրելուց հետո երեք տարի անց՝ 2019 թվականի մայիսի 25-ին:

Ուստի, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդ ժամանակահատվածում բողոք ներկայացնելու դեպքում միայն կատարված օրենսդրական փոփոխությունները կարող էին դիտարկվել որպես նոր հանգամանք՝ ՍԳրիգորյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հետադարձության կարգով վերանայելու համար, քանի որ անձն այդ ընթացքում շարունակելու էր կրել նախկին օրենքի քրեաիրավական հետևանքները, այն է՝ քրեական օրենքով չթույլատրված հանցագործություն կատարելու համար համարվելու էր դատվածություն ունեցող: Մինչդեռ, ՍԳրիգորյանի վերաքննիչ բողոքը՝ իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ, Վերաքննիչ դատարան էր ներկայացվել 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ այն պայմաններում, երբ նախկինում կատարված արարքի համար դատվածությունն արդեն իսկ մարվել էր և քրեաիրավական բոլոր հարաբերությունները դադարել էին, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքն ապաքրեականացնող օրենքը ՍԳրիգորյանի նկատմամբ հետադարձության կարգով այլևս չէր կարող կիրառվել: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ արարքի հանցավորությունը վերացնող քրեական օրենքը դատական ակտի վերանայման համար հիմք կարող է լինել բացառապես այն դեպքում, երբ անձը քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու համար գտնվում է քրեաիրավական հարաբերությունների մեջ, այսինքն՝ առնվազն ունի դատվածություն:

15. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է՝ Սետ Գրիգորյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար, իրավաչափ չէ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, Սետ Գրիգորյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բեկանելով և փոփոխելով, թույլ է տվել դատական սխալ, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 16-ի որոշումը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սետ Ժորժիկի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 16-ի որոշումը բեկանել և Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 22-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ4/0004/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

26 օգոստոսի 2022 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 312-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 314-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ մասի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 58213819 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Վարդան Վասակի Բաղալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:

2019 թվականի հուլիսի 9-ից նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Վ.Բաղալյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 314-րդ հոդվածով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ, 2-րդ և 5-րդ կետերով:

2. Նախաքննության մարմինը 2020 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացրել մեղադրյալ Վարդան Բադալյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

3. Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Վ.Լազարյանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Վ.Բադալյանի պաշտպան Ա.Զաքարյանի բողոքը մերժվել է:

4. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2021 թվականի հունվարի 25-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ պաշտպան Ա.Զաքարյանի բողոքը բավարարել է, պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել մեղադրյալի իրավունքների խախտումները:

5. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Վ.Լազարյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Ա.Օրդակյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ դատարանի կիրառած դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

1-ին մասի 3-րդ կետի դրույթները: Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի ելակետ ստորադաս դատարանի որոշումը ստանալու (փաստացի հասու դառնալու) եզրույթը մեկնաբանել է խիստ լայն իմաստով, արդյունքում անհարկի սահմանափակելով վարույթն իրականացնող մարմնի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները:

Բողոքի հեղինակի կարծիքով, իրավաչափ և հիմնավորված չեն Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ դատախազ Վ.Լազարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի խախտմամբ:

8. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Առաջին ատյանի դատարանի կողմից ուղարկված՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշման օրինակը Գեղարքունիքի մարզի դատախազությունում ստացվել է 2021 թվականի փետրվարի 3-ին²:

9.1. Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Վ.Լազարյանի վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2021 թվականի փետրվարի 12-ին³:

10. Վերաքննիչ դատարանն իր՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին արյանի դատարանի բողոքարկվող թիվ ԳԴ4/0004/11/20 որոշումը դատախազության մասնակիցը՝ դիմող Վ.Բաղայանը, 2021 թվականի հունվարի 27-ին՝ կից դիմումով, ուղարկել է դատարանի որոշման դեմ բողոք քերելու իրավունք ունեցող դատախազության մասնակցին՝ դատախազ Վ.Լազարյանին, որն այն փաստացի սրացել է (հասու է դարձել) 2021 թվականի հունվարի 29-ին: Դատախազն իր հերթին Առաջին արյանի դատարանի ակտը 2021 թվականի փետրվարի 1-ին՝ գրությամբ ուղարկել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն:

Գեղարքունիքի մարզի դատախազությունում թիվ ԳԴ4/0004/11/20 գործով որոշման օրինակն Առաջին արյանի դատարանից սրացվել է 2021 թվականի փետրվարի 3-ին, դատախազ Վ.Լազարյանին հանձնվել՝ 2021 թվականի փետրվարի 4-ին:

Վերոնշյալ փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այս դեպքում վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը

² Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթ 70:

³ Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթ 8:

սկզբնապես է հաշվարկվել ոչ թե Առաջին արյանի դատարանի կողմից դատարանական ակտի Գեղարքունիքի մարզի դատարանագրություն ուղարկելու և այնպես ապացուցվելու պահից, այլ այն պահից, երբ համապատասխան փաստաթուղթը փաստացի հասու է դարձել դատարանագր. Վ.Լազարյանին, այսինքն՝ 2021 թվականի հունվարի 29-ից: Հերևաբար դատարանական ակտի բողոքարկման 10-օրյա ժամկետի վերջին օրը եղել է 2021 թվականի փետրվարի 8-ը, մինչդեռ Դատարանագր. Առաջին արյանի դատարանի վերոգրյալ որոշման դեմ վերաքննիչ բողոքը փոստային ծառայության է հանձնել 2021 թվականի փետրվարի 12-ին:

Վերոգրյալ իրավանդությունների, ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանագր. վերաքննիչ բողոքը ներկայացրել է դատարանական ակտի արանապուց (փաստացի հասու դատարան) հետո 10-օրյա ժամկետի խախտմամբ (...):»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին արյանի դատարանի 2021 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ Գեղարքունիքի մարզի դատարանի տեղակալ Վ.Լազարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատարանական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսաստ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետանոց քննության իրավունք»:

13. Մեջբերված սահմանադրական նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատարանական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատարանական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է ու երաշխիք: Սակայն խնդրո առարկա հիմնարար իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատարանական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթեր 17-19:

Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ⁵:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. *«Բողոքը ճանաչելով հիմնավորված դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պարճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին (...):»*

Նույն օրենսգրքի 376-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին արյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադատարախազը, րուժողը, նրաներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաշորը, իսկ սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերով նախատեսված ակտերի դեմ՝ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: (...) Կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը»⁶:*

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝*
(...)

5) առաջին արյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կասկակցությամբ կայացված որոշումները. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում են.*

⁵ Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Հովհաննիսյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12, Մինաս Մկրտչյանի և Միքայել Միքայելյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԷԴ/0110/01/12, Վահան Թորոյանի գործով 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԱԴԳ/0005/15/16, Նավասարդ Ալավերդյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԴՆ/0143/01/14 որոշումները:

⁶ Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ դատական վերահսկողության շրջանակում առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի վերաբերյալ տնս Վճռաբեկ դատարանի՝ Ժենիկ Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԱՐԴՆ/0002/11/18 որոշումը:

(...)

3) առաջին արյանի դատարանի կայանավորման, կայանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում (...):»:

16. Վերոնշյալ իրավադրույթների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը ստուգելիս ՀՀ Սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշմամբ արձանագրել է. «(...) [Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապարտապետելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պարճատարանել արորադաս դատարանի կողմից նյութական կամ դատարավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը (...):

Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, լրիվ ակտի բողոքարկման համար բավարար է համարել լրիվ ժամկետը, կոնկրետ դեպքում հնգօրյա (...) ժամկետ[ը], ապա նշված ժամկետ[ը] պետք է մեկնարկ[ի] բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից (...):»⁷:

17. Մեջբերված նորմերի և իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու կամ բողոքը մերժելու մասին որոշումը դատարանը պարտավոր է տրամադրել դատավարության մասնակիցներին: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը դատարանի համար սահմանել է որոշման պատճենը դիմողին և վարույթն իրականացնող մարմնին ուղարկելու պարտականություն: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված որոշումները դատարանը պետք է փաստացի հասու դարձնի բողոք բերած անձին, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնին՝ դատական ակտը նրանց հանձնելու կամ ուղարկելու եղանակով՝ կախված վերջիններիս՝ դատական նիստին ներկայացած լինելու կամ չլինելու հանգամանքից: Այլ խոսքով՝ Առաջին ատյանի դատարանն է կրում իր

⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշումը, 8-9-րդ կետեր: Նշված իրավական դիրքորոշումները վերահաստատվել են նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՌ-1062 որոշման 5-6-րդ կետերում, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՌ-1249 որոշման 7-րդ կետում, 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-1394 որոշման 8-10-րդ կետերում:

կայացրած դատական ակտը դատավարության կողմերին փաստացի հասու դարձնելու պարտականությունը, և նշված դատական ակտի բողոքարկման ժամկետները սկսում են հոսել **դատարանի կողմից այն պատշաճ կերպով դատավարության կողմին հանձնելու պահից**: Այդ համատեքստում վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև հաշվի առնելով այդ նորմի առնչությամբ նախկինում ձևավորած իրավական դիրքորոշումները⁸, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը ճիշտ որոշելու համար նախևառաջ պետք է պարզվի, թե երբ է **դատական ակտի պատճենը դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով հանձնվել դատավարության մասնակիցներին**:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Առաջին աստիճանի դատարանի կողմից ուղարկված՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշման օրինակն Գեղարքունիքի մարզի դատախազությունում ստացվել է 2021 թվականի փետրվարի 3-ին⁹:

– դատախազ Վ.Լազարյանն Առաջին աստիճանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ փոստին հանձնելու միջոցով վերաքննիչ բողոք է ներկայացրել 2021 թվականի փետրվարի 12-ին¹⁰:

– Վերաքննիչ դատարանը, դատախազ Վ.Լազարյանի վերաքննիչ բողոքը որպես ժամկետանց թողել է առանց քննության՝ բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբ դիտելով դիմող Վ.Բաղայանի ուղարկած որոշումը դատախազ Վ.Լազարյանի կողմից ստանալու օրը¹¹:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դրանց վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ դատախազի կողմից Առաջին աստիճանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել դատախազ Վ.Լազարյանի կողմից որոշումը դիմող Վ.Բաղայանի միջոցով ստանալու պահից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից քննարկվող որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ է հաշվել այն պահից, երբ համապատասխան որոշումը դատարանի կողմից պատշաճ կարգով հանձնվել է Վ.Լազարյանին:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին աստիճանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ Գեղարքունիքի

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նավասարդ Այվերդյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԳ1/0143/01/14, Վարդան Գրիգորյանի գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԿԳ3/0030/06/17, Սոֆիո Ասդրենայի գործով 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ԵԳ/0630/06/18 որոշումները:

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 10-րդ կետերը:

մարզի դատախազի տեղակալ Վ.Լազարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է, հիմնավորված չէ:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

18.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՐԴ/0008/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի պաշտպան Է.Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում 2019 թվականի հունիսի 3-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 57175919 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Խաչատրյանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

Վարույթն իրականացնող մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ Ռուզաննա Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ Ռ.Գևորգյանի գույքի վրա 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով կալանք է դրվել:

2020 թվականի հունվարի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Դատական քննության արագացված կարգի կիրառմամբ՝ Արմավիրի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին աստիանի դատարան)՝ 2021 թվականի հունվարի 18-ի դատավճռով ամբաստանյալ Ռուզաննա Գևորգյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ռ.Գևորգյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս ժամկետով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, և ամբաստանյալի նկատմամբ սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով: Ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2.1. Նույն դատավճռով որոշվել է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ամբաստանյալ Ռ.Գևորգյանից հօգուտ «Յունիքանկ» բաց բաժնետիրական ընկերության բռնագանձել 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում: Ռ.Գևորգյանի գույքի վրա դրված կալանքը պահպանվել է՝ մինչև քաղաքացիական հայցով գումարի ամբողջական մարումը:

2.2. Դատավճռով որոշվել է Ռ.Գևորգյանի նկատմամբ կիրառված սահմանափակումը՝ «ՄԷԿՏ» համակարգով, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Պաշտպան Է.Թովմասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին աստիանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի դատավճիռը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ռ.Գևորգյանի պաշտպան Է.Թովմասյանը վճարելի բողոք է բերել, որը

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունվարի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում առերևույթ թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

6.1. Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը չի բխում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը, չի համապատասխանում Ռ.Գևորգյանի կողմից կատարված հանցանքի հանրային վտանգավորությանը և նրա անձին: Ըստ բողոքաբերի, ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումները չեն բխում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ Մեյրան Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի, Ջոն Շիրվանյանի և Արսեն Մուրադյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի և այլ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներից: Բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, ճիշտ արձանագրելով Ռ.Գևորգյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, վերջինիս անձը քնուկազրկող հանգամանքները, կատարված արարքի հանրային վտանգավորությունը, ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժաչափի վերաբերյալ հանգել է սխալ հետևության:

7. Բացի այդ, բողոք բերած անձը նշել է նաև, որ ամբաստանյալ Ռ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 19-ի որոշումը, ամբաստանյալ Ռ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

կետով նշանակել ազատագրվում՝ 2 (երկու) տարի ժամկետով և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմնի որոշմամբ Ռուզաննա Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) Ռուզաննա Հենրիկի Գևորգյանը 2019թ. ապրիլ ամսի սկզբին դիմել է Երևան քաղաքի «Ավիապարանա» ՍՊ ընկերությանը՝ գրասենյակային աշխատանքի ընդունվելու նպատակով, վերջինս 5-ից 6 օր այցելել է նշված ընկերություն և անցել փորձաշրջան: Փորձաշրջան անցնելու ընթացքում՝ 2019թ. ապրիլ ամսի սկզբին, երբ գրնվել է «Ավիապարանա» ՍՊ ընկերության գրասենյակում՝ մրնելով հանգարի սենյակ նկարել է սեղանին դրված՝ նշված ընկերության աշխատակցուհի, ՀՀ քաղաքացի Անահիր Ենգիբարյանի պայուսակը, որի միջից գաղպնի հաիշրակել է վերջինիս պարկանող՝ 02.08.2014թ. րրված 004075016 համարի նոյնականացման քարրը և հեռացել: Այնուհետև 2019թ. ապրիլի 19-ին, իր կողմից հաիշրակված՝ ՀՀ քաղաքացի Անահիր Ենգիբարյանի 004075016 համարի նոյնականացման քարրով, հաիշրակություն կարարելու դիրավորությամբ դիմել է «Յունիբանկ» ԲԲ ընկերության Էջմիածին մասնաձյուղ, որրեղից իաբեության եղանակով, մասնավորապես՝ իեղաթյուրելով իրականությունը և ներկայանալով որպես ՀՀ քաղաքացի Անահիր Ենգիբարյան, վերջինիս փոխարեն վավերացրել և կնքել է թիվ 52670 վարկային պայմանագիրը, որից հետո սրացել և հաիշրակել է որպես վարկ րրամադրված 600.000 ՀՀ դրամի չաիով գումարը՝ «Յունիբանկ» ԲԲ ընկերությանը պարճառելով իոշոր չաիի գոյքային վնաս»²:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի դատավճռի համաձայն՝ «(...) Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գրնում է, որ ամբասարանյալ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանը կարարել է ՀՀ քրեական օրենագրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված հանցանք, որի համար էլ պետք է պարասահանարվություն կրի:

Պարիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ամբասարանյալ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի կարարած հանցագործության քնոյթն ու հասարակական վրանգավորության ասրիճանը:

Որպես պարասահանարվությունը մեղմացնող և անճր քնութագրող հանգամանքներ են դիրվում այն, որ ամբասարանյալ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կարարած հանցանքի համար և ակրիվորեն աջակցել հանցագործությունը բացահայրելուն՝ րալով ինքնահոտարվանական ցուցմունքներ, քնութագրվում է դրականորեն, չունի դարվածություն, ֆիզիկապես վարաոողջ է, աիպորոշվել է՝ «Արզանղի

² Տեն քրեական գործ, հատոր 1, թերթեր 196-201:

միտմա», «Կրծքագեղձերի՝ աջ BI-RADS 3 ֆիբրոզ օջախ, ձախ՝ BI-RADS 2 խտոր մասարուպաթիա» հիվանդություններ: (...)»³:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ տվյալ դեպքում, [Առաջին աղյանի դատարանն ամբաստանյալ Ռուզաննա Փորգյանի նկարումամբ, (...) ազատագրկման ձևով նշանակված պարժարեսակի և չափի, ինչպես նաև (...) նշանակված վերջնական պարժի առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումամբ սահմանված փորձաշրջանի ժամկետի հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևարար սույն գործով վիճարկվող դատարկան ակտր բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ռ.Փ.ևորգյանի նկատումամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)

6) անցել են վաղեմության ժամկետները, (...)

5. Դատարանը, հայրնարերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկարումամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությամբ կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախարեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատագրկումը, (...):

3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությամբ կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախարեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատագրկումը, ինչպես նաև անգուշությամբ կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախարեսված առավելագույն պարիժը չի գերազանցում տասր տարի ժամկետով ազատագրկումը(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պարասխանատվությունից, եթե հանցանքն ալարված համարելու օրկանից անցել են հետևյալ ժամկետները.

³ Տն քրեական գործ, հատոր 3, թերթեր 55-62:

⁴ Տն քրեական գործ, հատոր 4, թերթեր 51-59:

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհարվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Քաղաքացու անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ կարևոր այլ փաստաթուղթ համաշխարհային՝

պարտվում է (...) ազատագրվանք՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

14. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքն ավարտվել է **2019 թվականի ապրիլ ամսվա սկզբին**, իսկ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղաազրված արարքը՝ **2019 թվականի ապրիլի 19-ին**⁵: Առաջին առյանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է 2021 թվականի հունվարի 18-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել **2021 թվականի հուլիսի 19-ին**⁶:

16. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքի որպես ոչ մեծ ծանրության հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը ընդհատվել է Ռ.Գևորգյանի կողմից 2019 թվականի ապրիլի 19-ին կատարված միջին ծանրության հանցագործության կատարման փաստով, ապա լրացել՝

⁵ Տեն սույն որոշման 9-րդ կետը:

⁶ Տեն սույն որոշման 3-րդ կետը:

2021 թվականի ապրիլի 19-ին, իսկ այդ պահի դրությամբ, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ռ.Գևորգյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ իրավական հարցը* հետևյալն է. արդարության և պատժի անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ռ.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատժի համաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

19. Նախքան նշված հարցին անդրադառնալը, Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում քննարկել սույն գործով հետադարձության կարգով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կիրառելիության հարցը:

Մասնավորապես, նշված օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *«2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պարփոժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ: (...):»*

20. Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու համար վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, թե մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վերաբերյալ առկա է արդյոք օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, թե ոչ: **Եթե նման ակտ առկա չէ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ**, այսինքն տարածվում է մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վրա:

21. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Խարդախությունը, որը կատարվել է՝*

(...)

2) խոշոր չափերով,

(...)

պարժվում է փուզանքով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«Խարդախությունը, որը կատարվել է՝*

(...)

3) խոշոր չափերով՝

պատժվում է փոզանքով՝ քանասպարիկից հիանասպարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուներեք տարեկան, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարեկան ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ երկուսից հինգ տարեկան ժամկետով»:

22. Նախկին և նոր քրեական օրենսգրքերով խոշոր չափերով խարդախության համար նախատեսված պատիժների համեմատական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր ընդունված օրենսդրությունը համարվում է պատիժը մեղմացնող, քանի որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է նաև ազատագրումից առավել մեղմ այլընտրանքային պատժատեսակ՝ հանրային աշխատանքները, որը նախատեսված չէր 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքով⁷: Հետևաբար, դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձանց վրա:

23. Հինք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Գևորգյանին 2003 թվականի ապրիլի 18-ի ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը պետք է որակել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասով:

24. Վճռաբեկ դատարանը ձևավորել է կայուն նախադեպային իրավունք, համաձայն որի՝ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար, կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի⁸, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է

⁷ Ազատության սահմանափակում պատժատեսակի վերաբերյալ դրույթները ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:

⁸ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տեսնելով Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադայանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարար Ավագյանի* և *Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

ելի ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից⁹:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հանցանքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը ճիշտ գնահատելու և հանցավորի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլնի, հատուկ ուշադրություն դարձնել հանցավոր վարքագծի դրսևորման եղանակին, հանցագործության իրադրությանը, պատճառված վնասի բնույթին, արարքի նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքին, հանցագործության նպատակին և շարժառիթին¹⁰:

24.1. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի նշանակման համաչափության վերաբերյալ վերոհիշյալ դիրքորոշումները *mutatis mutandis* կիրառելի են նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ժամկետը որոշելիս, հաշվի առնելով նաև այդ ինստիտուտի գործադրման նպատակներն ու առանձնահատկությունները:

25. Վճռաբեկ դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, վերլուծելով ամբաստանյալ Ռ.Գևորգյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, պատճառված վնասի չափը, ինչպես նաև հաշվի առնելով Ռ.Գևորգյանի անձը բնութագրող տվյալները՝ այն, որ համարվում է դատվածություն չունեցող և բնութագրվում է դրական, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ վատառողջ է, տվել է խոստովանական ցուցմունքներ, ընդունել է մեղքը և գղջացել կատարածի համար¹¹, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Ռ.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատժաչափը և սահմանված փորձաշրջանի ժամկետը համաչափ չեն՝ նրա կատարած արարքին և չեն բխում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 24-25-րդ կետերում մեջբերված նորմերը և վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, Ռ.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատժի համաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

27. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել

⁹ Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանների վերաբերյալ, *mutatis mutandis*, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Գասնիկ Գալստյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, Էդվարդ Արամյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14, Սարապ Սարգսյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԱՐԴ/0144/01/12, Նարեկ Խաչատրյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14 որոշումները:

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գարսևան Ոսկանյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0119/01/13, Սարգիս Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշումները:

¹¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի որոշումը պետք է բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով Ռ.Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ: Միաժամանակ, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ռ.Գևորգյանին մեղսագրվող արարքը պետք է որակել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, և ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ¹² Ռ.Գևորգյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

28. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418.1-րդ 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի որոշումը բեկանել և փոփոխել:

¹² Անձի վիճակը վաղաքարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ ամբաստանյալ Ռ.Գևորգյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

2. Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ռուզաննա Հենրիկի Գևորգյանի նկատմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Փորձաշրջանի ընթացքում ամբաստանյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման վրա:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ1/0016/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

16 սեպտեմբերի 2022 թվական

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Գագիկ Դավթի Կարապետյանի և պաշտպան Լ.Պինգույցյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 1.1-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 53104116 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ Գագիկ Դավթի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա որոշմամբ Գ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 53104516 քրեական գործը, որը նույն թվականի դեկտեմբերի 22-ին միացվել է թիվ 53104116 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 6-ի որոշմամբ Գ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագ):

2017 թվականի ապրիլի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով՝ երկու դրվագով և նրա նկատմամբ յուրաքանչյուր դրվագով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ Գ.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Գ.Կարապետյանի և պաշտպան Վ.Սուդյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Գ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինվել է չհեռանալու մասին ստորագրությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշման դեմ ամբաստանյալ Գ.Կարապետյանը և պաշտպան Լ.Պինգուլյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ընդունվել են վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

1. Պաշտպան Լ.Պինգույցյանի բողոքի փաստարկները.

5. Պաշտպան Լ.Պինգույցյանի կարծիքով՝ սույն գործով ձեռք չի բերվել վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հաստատված համարել Գ.Կարապետյանի կողմից իրեն մեղսագրված արարքները կատարելու հանգամանքը:

5.1. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուրլարյանի, Է.Պողոսյանի և Գ.Սահակյանի ստորագրություններով կազմված քննչական գործողությունների արձանագրությունները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտմամբ, հետևաբար ինչպես այդ արձանագրությունները, այնպես էլ դրանց հիման վրա ձեռք բերված մյուս ապացույցներն անթույլատրելի են և չեն կարող դրվել Գ.Կարապետյանի մեղադրանքի հիմքում:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով ընթերակաների մասնակցությամբ կատարված քննչական գործողություններից 10-ին մասնակցել են Ն.Գրիգորյանը և Ա.Խուրլարյանը, իսկ 5-ին՝ Գ.Սահակյանը և Է.Պողոսյանը, մինչդեռ վերջիններս հայտնել են, որ սույն քրեական գործով որպես ընթերակա ներգրավված են եղել մեկ անգամ: Ավելին՝ բողոքաբերը փաստել է, որ վերջիններս դատաքննության ընթացքում չեն կարողացել հաստատել քննչական գործողությունների կատարման փաստը, բովանդակությունը և արդյունքները, ինչպես նաև պարզվել է, որ նրանք ունակ չեն լրիվ և ճշմարիտ ընկալելու իրենց ներկայությամբ կատարված գործողությունները, չունեն կրթություն, գրել-կարդալ չգիտեն, իսկ Է.Պողոսյանը տառապում է չափավոր դեբիլությամբ, ինչը հաստատված է թիվ ԼԴ2/0078/01/17 քրեական գործով:

5.2. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ պաշտպանության կողմը դատաքննության փուլում զրկված է եղել վկա Ժ.Համբարձումյանին հարցաքննելու հնարավորությունից, սակայն վերջինիս նախաքննական ցուցմունքը դրվել է մեղադրական դատական ակտի հիմքում, ինչով էլ Առաջին ատյանի դատարանը չի ապահովել ամբաստանյալ Գ.Կարապետյանի՝ հակընդդեմ հարցման իրավունքը:

5.3. Փաստելով, որ գործով էական նշանակություն ունեցող հանգամանքի վերաբերյալ վկա Հ.Վարոսյանի՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներն էական հակասություն են պարունակում՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել թե ինչու է արժանահավատ դիտարկել վերջինիս նախաքննության ընթացքում տված ցուցմունքը:

Բողոքաբերի պնդմամբ, վկա Կ.Բալայանի ցուցմունքը ևս անարժանահավատ է, քանի որ վերջինս ոստիկանության ծառայող է և որոշակի փոխհարաբերությունների մեջ է գտնվում քրեական հետապնդման մարմնի հետ: Բացի այդ, դատաքննության ընթացքում նա պաշտպանության կողմի հարցադրումներին տվել է հակասական պատասխաններ, իսկ վերջում առհասարակ հրաժարվել է պատասխանելուց:

Բողոքի հեղինակը նաև նշել է, որ Տ.Բրուտյանից առգրավում կատարելու մասին քննչական գործողության արձանագրությունը ևս անթույլատրելի է, քանի որ նշված չէ կատարման տարեթիվը և ժամանակը:

5.4. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ սույն գործի փաստական հանգամանքները բավարար են եզրահանգելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու:

5.5. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով ու հռչակելով Գ.Կարապետյանի անմեղությունը մեղսագրված արարքներում՝ ապացույցների անբավարարության հիմքով կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության կամ պատժի մասով բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը, Գ.Կարապետյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել ու «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառմամբ վերջինիս ազատել պատժից:

II. Ամբաստանյալ Գ.Կարապետյանի բողոքի փաստարկները.

6. Ըստ ամբաստանյալ Գ.Կարապետյանի վճռաբեկ բողոքի՝ Առաջին ստյանի դատարանն իր մեղավորության վերաբերյալ եզրահանգման հիմքում դրել է մի շարք ապացույցներ, որոնք ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, ուստի անթույլատրելի են:

Մասնավորապես՝ բողոքաբերն անդրադարձ է կատարել մեղադրանքի հիմքում դրված քննչական գործողությունների արձանագրությունների թույլատրելիությանը՝ ներկայացնելով սույն որոշման 5.1-րդ կետում շարադրված փաստարկները՝ ավելացնելով նաև, որ Ն.Գրիգորյանը, Ա.Խուրլարյանը, Է.Պողոսյանը և Գ.Սահակյանն այլ քրեական գործերով ևս ներգրավված են եղել որպես ընթերակա, ինչը վկայում է այն մասին, որ վերջիններս համագործակցում են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի և ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժինների աշխատակիցների հետ:

6.1. Բողոքաբերը նշել է նաև, որ ոստիկանության աշխատակից, վկա Կ.Բալայանը գործի ելքով շահագրգիռ անձ է, ուղղորդված է վերադասի կողմից,

բացի այդ նրա դատաքննական և նախաքննական ցուցմունքներում առկա են հակասություններ:

Անդրադառնալով վկա Հ.Վարոյանին՝ բողոք բերած անձը նշել է, որ վերջինս ոստիկանության կողմից ուղղորդված կեղծ վկա է, իսկ նրա ցուցմունքներն անարժանահավատ են, քանի որ կան հակասություններ վերջինիս նախաքննական և դատաքննական ցուցմունքներում:

6.2. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ վկա Ժ.Համբարձումյանի նախաքննական ցուցմունքը չէր կարող դրվել մեղադրական դատական ակտի հիմքում, քանի որ Առաջին ատյանի դատարանը չի ապահովել իր՝ հակընդդեմ հարցման իրավունքը:

6.3. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը և առաջադրված մեղադրանքում իրեն արդարացնել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նախաքննության մարմնի կողմից Գագիկ Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «(...) /Նյա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2016 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ից մինչև ժամը 22:50-ն ընկած ժամանակահատվածում, առարկայի գործարանում խոհանոցի մեքարապլաստիկ պարուհանասփեղկը բացելու եղանակով սպորինի մուրք է գործել Սրեպիանավան քաղաքի Չարենցի 28 հասցեում գրնվող, Միսակ Բարսայանին պարկանող առանձնատրոն և ննջասենյակի պահարանի վրա առկա զարդարուսից գաղտնի հափշտակել վերջինիս կնոջ՝ Անուշ Բասիրյանի զգալի չափերով՝ ընդհանուր շուրջ 203.000 ՀՀ դրամ արժողությամբ «Մվարովսկի» սպրանքանիշի բիժու զարդերը և դիմել փախուստի:

(...)

Բացի այդ, նա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2016 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, առանձնատրոն հյուրասենյակի լուսամտարի փեղկը հրել բացելու միջոցով սպորինի մուրք է գործել Սրեպիանավան քաղաքի Բաֆֆի 112-րդ հասցեում գրնվող, Հովհաննես Փիլիկյանին պարկանող առանձնատրոն ննջասենյակ և պահարանից գաղտնի հափշտակել խոշոր չափերով՝ ընդհանուր 2.043.700 ՀՀ դրամ արժողությամբ 16 կրորդ փարբեր փեսակի ոսկյա զարդեր՝ մասնավորապես 6 հար մալանի, 2 հար շղթա, թևնոց, 2 հար խաչ, վզնոց, 3 գույգ սկանջողեր, կախազարդ և 60.000 կանխիկ դրամ ու դիմել փախուստի (...):»²:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 167-168:

8. Սույն գործով, ի թիվս այլնի, կատարվել են հետևյալ քննչական գործողությունները՝

– 2016 թվականի նոյեմբերի 3-ին՝ հեռախոսահամարի վերծանումների գնություն, որին որպես ընթերակա մասնակցել են Գոհար Հոկտեմբերիկի Սահակյանը և Էդգար Զավենի Պողոսյանը³,

– 2016 թվականի նոյեմբերի 29-ին՝ առարկաները ճանաչման ներկայացնելու չորս քննչական գործողություն, որոնց որպես ընթերակա մասնակցել են Նարեկ Բորիսի Գրիգորյանը և Արսեն Ասլանի Խուրլարյանը⁴,

– 2016 թվականի նոյեմբերի 29-ին՝ Գ.Կարապետյանի անձնական խուզարկությունը, որին որպես ընթերակա մասնակցել են Նարեկ Բորիսի Գրիգորյանը և Արսեն Ասլանի Խուրլարյանը⁵,

– 2016 թվականի դեկտեմբերի 8-ին՝ երկու բնակարանի խուզարկություն, որոնց որպես ընթերակա մասնակցել են Նարեկ Բորիսի Գրիգորյանը և Արսեն Ասլանի Խուրլարյանը⁶,

– 2016 թվականի դեկտեմբերի 14-ին՝ դեպքի վայրի գնություն, որին որպես ընթերակա մասնակցել են Նարեկ Բորիսի Գրիգորյանը և Արսեն Ասլանի Խուրլարյանը⁷,

– 2016 թվականի դեկտեմբերի 15-ին՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գնություն, որին որպես ընթերակա մասնակցել են Գոհար Հոկտեմբերիկի Սահակյանը և Էդգար Զավենի Պողոսյանը⁸,

– 2016 թվականի դեկտեմբերի 16-ին՝ առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողություն, որին որպես ընթերակա մասնակցել են Նարեկ Բորիսի Գրիգորյանը և Արսեն Ասլանի Խուրլարյանը⁹,

– 2016 թվականի դեկտեմբերի 22-ին՝ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողություն, որին որպես ընթերակա մասնակցել է նաև Արսեն Ասլանի Խուրլարյանը: Նշված գործողությանը որպես ճանաչվող անձ մասնակցել է նաև Նարեկ Բորիսի Գրիգորյանը¹⁰,

– 2017 թվականի փետրվարի 8-ին՝ հեռախոսահամարի վերծանումների գնություն, որին որպես ընթերակա մասնակցել են Գոհար Հոկտեմբերիկի Սահակյանը և Էդգար Զավենի Պողոսյանը¹¹,

– 2017 թվականի փետրվարի 9-ին՝ հեռախոսահամարի վերծանումների գնություն, որին որպես ընթերակա մասնակցել են Գոհար Հոկտեմբերիկի Սահակյանը և Էդգար Զավենի Պողոսյանը¹²,

³ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 45-47:

⁴ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 72-75:

⁵ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթ 80:

⁶ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 180-181 և 187-188:

⁷ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 239-247:

⁸ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 215-217:

⁹ Տնն քրեական գործ, հատոր 2, թերթեր 18-19:

¹⁰ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 225-226:

¹¹ Տնն քրեական գործ, հատոր 2, թերթեր 119-120:

¹² Տնն քրեական գործ, հատոր 2, թերթեր 127-129:

– 2017 թվականի մարտի 15-ին՝ քննչական փորձարարություն, որին որպես ընթերակա մասնակցել են Գոհար Հոկտեմբերիկի Սահակյանը և Էդգար Զավենի Պողոսյանը¹³:

9. Վկա *Արսեն Խորջարյան* ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ ունի 8-ամյա կրթություն, գրել-կարդալ լավ չի կարողանում, մեկ անգամ մասնակցել է ոսկյա առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը¹⁴:

9.1. Վկա *Նարեկ Գրիգորյան* ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնում հաճախ է ներգրավվել որպես ընթերակա, իրեն ասել են, որ գա ստորագրի, ինչն էլ կատարել է, սակայն չի իմացել, թե ինչ է ստորագրում: Տառաճանաչ է, գրել գիտի, սակայն նորմալ չի կարողանում կարդալ: Նշել է նաև, որ Գ.Կարապետյանի գործով մեկ անգամ է մասնակցել որպես ընթերակա՝ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը, սակայն չի հասկացել, թե ինչ է կատարվում. ինքը ոստիկանների կանչով է գնացել, ասել են, որ թուղթ պետք է ստորագրի, և քանի որ կարդալ չի կարողանում, հնարավոր է, որ առանց հասկանալու ստորագրել է, Գ.Կարապետյանի գործով այլ գործողությունների չի մասնակցել: Վկան հայտնել է նաև, որ չի հիշում, որ մասնակցած լինի առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը, չնայած ստորագրությունն իրենն է և ինքը գնացել ստորագրել է քննիչ Լ.Պատավյանի մոտ, սակայն որևէ գործողության չի մասնակցել¹⁵:

9.2. Վկա *Էդգար Պողոսյան* ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ ունի միջնակարգ կրթություն, ավարտել է 3-րդ դասարանը, ոստիկանության բաժին գնացել է իր գործերով, երբ կանչել են, այդ ժամանակ էլ է գնացել, Գ.Կարապետյանի գործով չի հիշում որևէ քննչական գործողության մասնակցել է, թե ոչ, նրան ոստիկանության բաժնում չի հիշում տեսել է, թե ոչ, իր հետ չի հիշում որևէ գործողության մասնակցել է, թե ոչ: Հայտնել է նաև, որ եղել են դեպքեր, որ գնացել է միայն ստորագրել և դուրս եկել՝ առանց հետաքրքրվելու, թե ինչ է ստորագրում¹⁶:

9.3. Վկա *Գոհար Սահակյան* ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ չի հիշում, որ Ստեփանավանի քննչական բաժնում Գ.Կարապետյանի հետ կամ նրա վերաբերյալ քրեական գործով որևէ քննչական գործողության ինքը մասնակցած լինի որպես ընթերակա, առհասարակ, որևէ գործով քննչական գործողության մասնակցելը: Վկան հայտնել է նաև, որ չի հիշում, թե Ստեփանավանի բաժնում իր մասնակցությամբ հեռախոսահամարների վերծանումների գնումության մասնակցել է, թե ոչ, իրեն քաղաքից են բերել բաժին, չեն ստիպել, ասել են, որ գործ կա, ինքն էլ գնացել է՝ չիմանալով, որ ընթերակայի գործ է, սակայն չի հիշում, թե ինչ էին անում: Քննիչի մոտ է իմացել,

¹³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 195-196:

¹⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 196:

¹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 196:

¹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 196-197:

որ ընթերակայի գործ է, գրած պատրաստ է եղել, ինքը ստորագրել է: Վկան նշել է նաև, որ ինքն Էդգարի հետ է եղել, նա էլ է ստորագրել¹⁷:

10. Առաջին առյանի դատարանը 2019 թվականի մայիսի 24-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադատնալով պաշտպանական կողմի բարձրացրած (...) միջնորդությանը ընթերակաների մասնակցությամբ կարարված քննչական կամ դարարարական գործողություններն անթույլարելի սպացույց ճանաչելու մասին, (...) [Առաջին արյանի դարարանն արձանագրում է, որ գործի նյութերի ուսումնասիրությանից երևում է, որ սույն գործով քննչական կամ դարարարական գործողությունների մի մասին որպես ընթերականեր մասնակցել են Գոհար Սահակյանը և Էդգար Պողոսյանը:

[Առաջին արյանի դարարանն արձանագրում է, որ գործի նյութերում առկա չէ, ինչպես նաև դարարքնության ընթացքում ձեռք չբերվեցին այնպիսի փաստական րվյալներ, որով կհիմնավորվեր, որ այս ընթերականերն ունակ չեն լրիվ և ճշգրտեն ընկալելու իր[ենց] ներկայությամբ կարարվող գործողությունները կամ վարույթն իրականացնող մարմնից գրնվում [են] անձնական կամ ծառայողական կախվածության մեջ կամ առկա են ՀՀ քրեական դարարարության օրենսգրքի 90-րդ հոդվածով սահարետաված հիմքերը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ նրանց մասնակցությունը կրել է պարբերական բնույթ, սպա այդ հանգամանքն առանձին վերցրած չի կարող դիրվել էական խահարում և չի հանգեցնում այդ ընթերակաների մասնակցությամբ կարարված գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված սպացույցների անթույլարելիությանը:

Պաշտպանական կողմը միջնորդել է անթույլարելի ճանաչել վկա Տ.Բրուսյանից հեղազայում իրեղեն սպացույց ճանաչված առարկաներն աոգրավելու մասին արձանագրությունը, քանի որ բացակայում է արձանագրության կազման րարեթիվը:

Վերոհիշյալի կապակցությամբ Դարարանն արձանագրում է (...), որ առարկաներն աոգրավելու մասին արձանագրությունը կազմվիլել է առանց ժամի նշմամբ: (...) Դարարանը գրնում է, որ (...) քննիչի կողմից թույլ է րրվել խահարում, սակայն այդ խահարում իր բնույթով էական չէ և չի կարող հանգեցնել (...) ձեռք բերված սպացույցի անթույլարելիությանը:

Պաշտպանական կողմը միջնորդել է անթույլարելի սպացույց ճանաչել վկա Ժ.Համբարձումյանի սահարքնության ընթացքում րված ցուցմունքները, քանի որ նրան հնարավոր չի եղել ներկայացնել դարարան և անհրաժեշտ հարցադրումներ ներկայացնել:

(...)

Դարարանն արձանագրում է, որ Դարարանը միջոցներ է ձեռնարկել նշված վկայի ներկայությունը դարարքնությանն սպահովելու համար, նրան ողարկվել են ճանուցարներ, գրություններ և հարցումներ են ողարկվել ՀՀ ոարիկանության Երևան քաղաքի վարչություն և ՀՀ ոարիկանության քրեական հեղախուզության

¹⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 197:

գլխավոր վարչություն, որոնց հիման վրա պարզվել է, որ վկա Ժ.Համբարձումյանը բացակայում է ՀՀ-ից:

Դատարանն արձանագրում է, որ նախաքննության ընթացքում վկա Ժ.Համբարձումյանի և ամբաստանյալ Գ.Կարապետյանի միջև կարարվել է առերես հարցաքննություն, ամբաստանյալը, հրաժարվել է հարցեր տալուց, այսինքն պաշտպանական կողմը հնարավորություն է ունեցել հարցեր ուղղել ամբաստանյալի դեմ ցուցմունք տված վկային, հետևաբար այդ մասով միջնորդությունն անհիմն է: Դատարանն արձանագրում է նաև, որ ամբաստանյալ Գ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորումն և դրա արդյունքում հնարավոր դատապարտումն ամբողջապես կամ վճռական չափով հիմնված չէ Ժ.Համբարձումյանի ցուցմունքների վրա: Այսինքն, նշված վկայի ցուցմունքները վճռական կշիռ չունեն ամբաստանյալ Գ.Կարապետյանի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում, բացի այդ, վկայի բացակայության պայմաններում նրա ցուցմունքների հրապարակումը եղել է արդարացված (...):

Պաշտպանական կողմը միջնորդել է անթույլատրելի ապացույց ճանաչել վկա Հ.Վարդյանի ցուցմունքները, քանի որ դրանք իրականությանը չեն համապատասխանում, ցուցմունքներում առկա են հակասություններ, նրա վրա հնարավոր է ճշումներ գործադրված լինեն:

Վերոհիշյալի կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ (...) նախաքննության ժամանակ հարցաքննվելիս Հ.Վարդյանը տվել է մանրամասն ցուցմունք, ներկայացրել է մանրամասն փաստեր, որոնց մասին կարող էին տեղյակ լինել միայն անմիջապես ակնասարես անձը, ուստի այն վարկածը, որ Հ.Վարդյանն ամբաստանյալին չի տեսել և իր նկատմամբ իրականացված ճշումների ազդեցության տակ է նման ցուցմունք տվել մերացածին է, չհաստատվում:

Պաշտպանական կողմը միջնորդեց անթույլատրելի ապացույց ճանաչել վկա Կ.Բալայանի ցուցմունքը, քանի որ վերջինս հանդիսանում է ուսրիկան և գործի ելքով ունի շահագրգռվածություն:

Դատարանն արձանագրում է, որ դատարանում չներկայացվեցին որևէ փաստական տվյալ կամ հանգամանք, որը հնարավորություն կտար Դատարանին գալ եզրահանգման, որ վկա Կ.Բալայանը որպես ուսրիկան որևէ շահագրգռվածություն ունի գործի ելքով, ուստի Դատարանը գտնում է, որ առկա չէ որևէ հիմք վկայի ցուցմունքը որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու համար: (...)

Նախաքննության մարմինը [Գ.Կարապետյանի] մեղքը հիմնավորված է համարել տուժողներ Հ.Փիլիկյանի, Մ.Բաբայանի, վկաներ Ա.Ջուլյանյանի, Ա.Միտյանի, Կ.Բաբայանի, Հ.Վարդյանի, Ա.Իսախանյանի, Ե.Բարսեղյանի, Տ.Բրուսյանի ցուցմունքներով, դեպի վայրի զննության արձանագրություններով, դատախազարանական փորձաքննության եզրակացությամբ, առգրավում կատարելու մասին արձանագրությամբ, առարկաները ճանաչման ներկայացնելու մասին արձանագրություններով, անձին ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ, մեղադրագրական, հեմոլոգիական և ապրանքագիրական

փորձաքննության եզրակացությանը ու քննչական փորձարարության արձանագրությանը:

Վերոհիշյալ սպայացյցները, իրենեն սպայացյցները ճանաչելու մասին որոշումները հերսագրովել են դատաքննության ընթացքում:

[Առաջին սարյանի դատարանը, վերլուծելով ամբասարանյալ Գ.Կարսայելյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված և դատաքննության ընթացքում հերսագրովված վերոգրյալ սպայացյցները դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ սպայացյցներն իրենց համակցությանը գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմանը, ամբասարանյալի մեղավորության վերաբերյալ չփարարվող բոլոր կասկածները նրա օգրին մեկնարանելով, հասարարված է համարում [2 դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով որակված՝ Գագիկ Կարսայելյանին մեղսագրված արարքները կարարելու մեջ վերջինիս մեղավորությունը]¹⁸:

11. Վերաքննիչ դատարանը 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման արձանագրել է. «(...) Առաջին սարյանի դատարանը, սարշան իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված սպայացյցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր սպայացյց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ սպայացյցներն իրենց համակցությանը գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (2 դրվագ) ամբասարանյալ Գագիկ Կարսայելյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

Այսպիսով ամբասարանյալ Գագիկ Կարսայելյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (2 դրվագ) մեղսագրված արարքներում հասարարված է և նրա կարարած հանցանքներն սպայացուցված, իսկ սաշրյանի սարքատարանությունները հերքվում են քրեական գործով ձեռք բերված և սարշան իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին սարյանի դատարանում հերսագրովված փոխկասակցված սպայացյցների բավարար ամբողջությանը (...)»¹⁹:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյո՞ք սպայացյցների թույլատրելիության և արժանահավատության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

¹⁸ Տեն քրեական գործ, հատոր 6, թերթեր 175-212:

¹⁹ Տեն քրեական գործ, հատոր 8, թերթեր 79-93:

1. Ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուբլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունների թույլատրելիությունը.

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես սպացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...):

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել արացված փաստական րվյալների հավաստիության վրա»:

Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «(...) Ապացույցների թույլատրելիության հարկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է սպացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

– աղբյուրի օրինականություն՝ սպացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),

– ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն սպացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

– դատավարական ձևակերպում՝ սպացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

– լիազորված սուբյեկտ՝ այն պետք է արացված լինի սպացույց ձեռք բերելու լիազորությամբ օժրված սուբյեկտի կողմից:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հարակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով: (...)»²⁰:

13.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ որպես սպացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների

²⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.1-րդ կետը:

իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Ընդ որում՝ ապացույցների ձեռքբերման գործընթացում էական չեն կարող համարվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի այն խախտումները, որոնցով չեն սահմանափակվել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքները կամ այդ իրավունքներից նրանք չեն զրկվել, ինչպես նաև այն խախտումները, որոնք ստացված փաստական տվյալների հավաստիության վրա չեն ազդել կամ չեն կարող ազդել: Այլ խոսքով՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն՝ ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից: Ապացույցն անթույլատրելի ճանաչելը՝ որպես իրավական հետևանք, պետք է տեղի ունենա միայն քրեադատավարական օրենսդրության էական խախտման առկայության պարագայում: Հակառակ դեպքում ապացույցների թույլատրելիության հարցին կցուցաբերվի ձևական մոտեցում, ինչն էլ կհանգեցնի ապացուցողական նյութի անտեղի կորստի²¹:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի (մինչ 2018 թվականի մարտի 21-ին ընդունված ՀՕ-181-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. *Ընթերական քրեական գործով չշահագրգռված՝ Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացին է, որին քրեական հետապնդման մարմինը հրավիրում է մասնակցելու քննչական գործողության կատարման՝ հասարակելու համար դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները:*

2. *Ընթերական պետք է ունակ լինի լրիվ և ճշգրտորեն ընկալելու իր ներկայությամբ կատարվող գործողությունները: (...):»:*

Նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի (մինչ 2018 թվականի մարտի 21-ին ընդունված ՀՕ-181-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «(...) 2. *Ընթերական չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե գտնվում է քրեական վարույթի իրականացման մարմնից անձնական կամ ծառայողական կախվածության մեջ:*

3. *Ընթերակայի նախկին մասնակցությունը քննչական գործողությանը փոխադրված քրեական գործով այլ քննչական գործողությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանք չէ, բացի այն դեպքերից, երբ որևէ ընթերակայի մասնակցությունը կրում է պարբերական բնույթ: (...):»:*

15. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ ընթերակայի ինստիտուտը քրեական դատավարությունում ինքնանպատակ չէ, այն ապացույցների հավաստիության, դրանց ձեռք բերման օրինականության ապահովման յուրահատուկ միջոց է: Ընթերականների

²¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Սարգսյանի գործով 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԲԲԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը, Մարիբեկ Հարությունյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ0189/01/12 որոշման 20-րդ կետը:

պարտադիր մասնակցությունն առանձին քննչական գործողությունների կատարմանը նպատակ է հետապնդում ապահովել հանրային վերահսկողությունը նախաքննության նկատմամբ, երաշխավորել արժանահավատ և թույլատրելի ապացույցների ստացումը, բացառել ապացույցների կեղծման հնարավորությունը՝ այդպիսով ապահովելով նաև ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքների պաշտպանությունը մրցակցության սկզբունքի սահմանափակ կիրառություն ունեցող մինչդատական վարույթում: Վերոգրյալի հիման վրա, հարկ է փաստել, որ քրեական դատավարությունում ընթերակաների հիմնական դերն իրենց մասնակցությամբ կատարված քննչական գործողության փաստի, բովանդակության, ընթացքի և արդյունքների հաստատումն է, որպիսի հանգամանքով էլ պայմանավորված օրենսդիրը սահմանել է անձին որպես ընթերակա ներգրավելու համար այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են տարիքը, գործունակությունը և անաչառությունը: Մասնավորապես, օրենսդիրը հստակ ամրագրել է, որ քրեական գործով վարույթին որպես ընթերակա կարող է ներգրավվել գործի ելքով չշահագրգոված՝ Հայաստանի Հանրապետության այն չափահաս քաղաքացին, ով ունակ է լրիվ և ճշտորեն ընկալելու իր ներկայությամբ կատարվող գործողությունները: Մինևույն ժամանակ, օրենսդիրը, նպատակ ունենալով բացառել ընթերակայի անկողմնակալության և ըստ այդմ էլ՝ նրա պարտադիր մասնակցությամբ ձեռք բերված և մեղադրանքի հիմքում դրված ապացույցների օրինականության և հավաստիության վերաբերյալ կասկածները, ի թիվս այլնի, սահմանել է, որ քրեական գործով վարույթին անձը չի կարող մասնակցել որպես ընթերակա, եթե վերջինիս մասնակցությունը կրում է պարբերական բնույթ:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանը Գ.Կարապետյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) նախատեսված արարքների կատարման մեջ: Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործի նյութերը, գտել է, որ թեև կատարված մի շարք քննչական և դատավարական գործողություններին որպես ընթերակա մասնակցել են Գ.Սահակյանը և Է.Պողոսյանը, սակայն գործի նյութերում առկա չեն և դատաքննությամբ ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որով կհիմնավորվեր, որ այդ ընթերականերն ունակ չեն լրիվ ու ճիշտ ընկալելու իրենց ներկայությամբ կատարված գործողությունները կամ վարույթն իրականացնող մարմնից գտնվում են անձնական կամ ծառայողական կախվածության մեջ, իսկ քրեական գործով վարույթին նրանց մասնակցության պարբերական լինելն ինքնին չի կարող դիտվել էական խախտում և հիմք հանդիսանալ վերջիններիս մասնակցությամբ կատարված գործողությունները ու դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի գնահատելու համար: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանն առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Գ.Կարապետյանի մեղավորությունը հաստատված է համարել նաև մեղադրանքի հիմքում դրված քննչական գործողությունների արձանագրություններով²²,

²² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, Գ.Կարապետյանի մեղավորության հարցում հանգել է ճիշտ հետևության²³:

17. Սույն որոշման 8-9.3-րդ և 16.3-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընթերականներ Ն.Գրիգորյանի, Ա.Խուրլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը որոշելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել սույն գործով առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Այսպես՝

Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ գործի նյութերում առկա չեն և դատաքննությամբ ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին, որ այդ ընթերականներն ունակ չեն լրիվ ու ճիշտ ընկալելու իրենց ներկայությամբ կատարված գործողությունները կամ վարույթն իրականացնող մարմնից գտնվում են անձնական կամ ծառայողական կախվածության մեջ, ինչպես նաև սույն գործով վարույթին նրանց մասնակցության պարբերականությունն ինքնին չի կարող գնահատվել որպես էական խախտում, իսկ Վերաքննիչ դատարանն էլ ըստ էության համաձայնելով Առաջին ատյանի դատարանի այդ եզրահանգմանը, անտեսել են այս անձանց դատաքննական ցուցմունքներով հայտնաձև տվյալները: Մասնավորապես, ստորադաս դատարանները նշված անձանց մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունները մեղադրական դատական ակտերի հիմքում դնելիս առհասարակ ուշադրության չեն արժանացրել այն հանգամանքը, որ թեև սույն գործով Ա.Խուրլարյանը և Ն.Գրիգորյանը որպես ընթերակա ներգրավված են եղել համապատասխանաբար տասը և ինը քննչական գործողության, սակայն իրենց դատաքննական ցուցմունքներով հայտնել են, որ սույն գործով որպես ընթերակա մեկ անգամ են մասնակցել, ընդ որում՝ Ն.Գրիգորյանը նշել է, որ սույն գործով որպես ընթերակա մասնակցել է միայն անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը, սակայն համապատասխան արձանագրության համաձայն՝ վերջինս ներգրավված է եղել ոչ թե որպես ընթերակա, այլ որպես ճանաչվող անձ: Ավելին՝ Ա.Խուրլարյանը նշել է նաև, որ գրել-կարդալ լավ չի կարողանում, իսկ Ն.Գրիգորյանն էլ իր հերթին հայտնել է, որ գրել գիտի, սակայն նորմալ չի կարողանում կարդալ, և հավելել է, որ ՀՀ ոստիկանության

²³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնում հաճախ է ներգրավվել որպես ընթերակա՝ փաստաթուղթ ստորագրելու նպատակով, ինչն էլ կատարել է՝ առանց տեղեկանալու, թե ինչ է ստորագրում: Ստորագրու գատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել նաև դատաքննության ժամանակ Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի հայտնած տվյալները, ովքեր թեև սույն գործով որպես ընթերակա ներգրավված են եղել թվով հինգ քննչական գործողության կատարմանը, սակայն իրենց ցուցմունքներով հայտնել են, որ չեն հիշում՝ Գ.Կարապետյանի գործով որևէ քննչական գործողության մասնակցել են, թե ոչ: Ավելին՝ վերջիններս հայտնել են, որ եղել են ղեկավար, երբ առանց որևէ գործողության մասնակցելու փաստաթղթեր են ստորագրել:

18. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կատարված քննչական գործողություններին ընթերակաների մասնակցությունը ոչ միայն պարբերական բնույթ է կրել, այլև ողջամտորեն կասկածի տակ է դրվել վերջիններիս մասնակցությամբ կատարված և ստորագրող ստորագրողների դատական ակտերի հիմքում դրված քննչական գործողությունների արձանագրությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը: Մասնավորապես, վերոգրյալ փաստական հանգամանքների համակցությունը, անկողմնակալ դիտորդի տեսանկյունից, սովերում են ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուրլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի անաչառությունը և ընդհանրապես մասնակցությունն այդ քննչական գործողություններին և ողջամիտ կասկածներ առաջացնում այդ ապացույցների օրինականության և հավաստիության վերաբերյալ: Նման պայմաններում, ստորագրող գատարանները դատական ակտեր կայացնելիս, մինչ նշված անձանց մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունները՝ որպես Գ.Կարապետյանի մեղքը հիմնավորող ապացույցներ դիտարկելը, պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնեին վերոնշյալ հանգամանքների համակցությունը, որոնք հնարավորություն կտային պատշաճ երաշխավորելու վարույթի արդարացիությունը և ըստ այդմ՝ նաև ապահովելու Գ.Կարապետյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքը:

19. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները պատշաճ ուշադրության չարժանացնելը և ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուրլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի մասնակցությամբ կատարված մի շարք քննչական գործողությունների արձանագրությունները Գ.Կարապետյանի նկատմամբ կայացված մեղադրական դատական ակտերի հիմքում դնելը, եղել է ոչ իրավաչափ՝ հանգեցնելով վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուրլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի

մասնակցությամբ կատարված և մեղադրական դատական ակտերի հիմքում դրված քննչական գործողությունների արձանագրությունները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով, անթույլատրելի են և չէին կարող դրվել մեղսագրվող արարքներում Գ.Կարապետյանի մեղավորությունը հիմնավորող ապացույցների գանգվածում:

20. Վերոնշյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ընթերականեր Ն.Գրիգորյանի, Ա.Խուբլարյանի, Գ.Սահակյանի և Է.Պողոսյանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների ժամանակ թույլ չեն տրվել այնպիսի էական դատավարական խախտումներ, որոնք կարող են հանգեցնել այդ ապացույցների անթույլատրելիության, հիմնավոր չեն:

II. Բողոքաբերների բարձրացրած մյուս փաստարկները.

21. Անդրադառնալով Տ.Բրուտյանից առգրավում կատարելու մասին արձանագրության անթույլատրելիության վերաբերյալ բողոքաբերների փաստարկներին, Վճռաբեկ դատարանը իր համաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դատարանի դատողություններին²⁴ և գտնում, որ քննչական գործողության արձանագրության մեջ ժամի բացթողումն իր բնույթով էական խախտում չէ և բավարար չէ ապացույցն այդ հիմքով անթույլատրելի ճանաչելու համար:

Ինչ վերաբերում է պաշտպանական կողմի բարձրացրած այն փաստարկին, որ վկա Կ.Բալայանի ցուցմունքն անարժանահավատ է, քանի որ վերջինս ոստիկանության ծառայող է, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոստիկան լինելն ինքնին վկայի ցուցմունքն անարժանահավատ չի դարձնում, և այս առումով բողոքաբերների փաստարկները հիմնված են զուտ ենթադրական և սուբյեկտիվ դատողությունների վրա:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 13-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը և եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս ապացույցների գնահատման հարցում թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ, 94-րդ, 105-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատի քրեական գործում առկա այլ ապացույցները և հանգի համապատասխան հետևության՝ անդրադառնալով նաև բողոքաբերների կողմից բարձրացված՝ վկաների ցուցմունքների արժանահավատության և

²⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարության հարցերին, ինչպես նաև այդ համատեքստում *Արքունջ Դույլանի*²⁵ գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ քննարկի բողոքաբերների՝ սույն որոշման 5.2-րդ և 6.2-րդ կետերում բարձրացված փաստարկները և հանգի համապատասխան հետևության:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ սույն որոշման 5.4-րդ կետում բարձրացրած՝ Գ.Կարապետյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցին:

22. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել ամբաստանյալ Գ.Կարապետյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Գագիկ Դավթի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) Լոռու մարզի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գագիկ Դավթի Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

²⁵ Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկելու իրավունքի վերաբերյալ մանրամասն տես Վճռաբեկ դատարանի՝ *Արքունջ Դույլանի* գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԳԶ/0037/01/15 որոշումը:

20.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0721/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

7 հոկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ ամբաստանյալ Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի պաշտպան Կ.Մեծլումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 16895019 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ Վահագն Հովհաննիսյանը ճանաչվել է տուժող:

2020 թվականի փետրվարի 3-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության շտաբի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 59150120 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ Վ.Իգեն Պետրոսյանը ճանաչվել է տուժող:

2020 թվականի փետրվարի 27-ին թիվ 16895019 քրեական գործը միացվել է թիվ 59150120 քրեական գործին:

2020 թվականի փետրվարի 27-ին Նորայր Ներսեսի Հովհաննիսյանը ձերբակալվել է:

2020 թվականի փետրվարի 27-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 16171820 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Վիգեն Պետրոսյանը ճանաչվել է տուժող:

2020 թվականի փետրվարի 28-ին թիվ 16171820 քրեական գործը միացվել է թիվ 59150120 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ Ն.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 2 (երկու) դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ Ն.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 59103720 քրեական գործը, և նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել է թիվ 59150120 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Ն.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, վերջինս ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, 332-րդ հոդվածի 2-րդ մասով, 347-րդ հոդվածի 2-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2020 թվականի հուլիսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի հուլիսի 19-ի դատավճռով Նորայր Ներսեսի Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 316-րդ հոդվածի 1-ին մասով, 332-րդ հոդվածի 2-րդ մասով, 347-րդ հոդվածի 2-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով,

333-րդ հողվածի 1-ին մասով, 344-րդ հողվածի 1-ին մասով, 185-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հողվածի 1-ին մասով ազատագրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 332-րդ հողվածի 2-րդ մասով ազատագրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով, 347-րդ հողվածի 2-րդ մասով ազատագրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով, 185-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ կետով ազատագրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 333-րդ հողվածի 1-ին մասով ազատագրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով, 344-րդ հողվածի 1-ին մասով ազատագրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով, 185-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ազատագրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հողվածի կանոնների կիրառմամբ, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ն.Հովհաննիսյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Ն.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2020 թվականի փետրվարի 27-ից:

3. Մեղադրող Ծ.Մնացականյանի, ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի, նրա պաշտպան Կ.Մեծլումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը և ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Մեծլումյանը ներկայացրել են վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 28-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Մեծլումյանի բողոքն ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հողվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

5. Բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը Ն.Հովհաննիսյանի նկատմամբ պատժի տեսակը, դրա չափը և այն կրելու նպատակահարմարությունը որոշելիս պարտավոր էր պատճառաբանել, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների սանկցիայով նախատեսված տուգանքի ձևով պատիժը կամ ազատագրկման ձևով պատժի նվազագույն չափը չի կարող ապահովել պատժի նպատակների իրացվելիությունը կամ, որ Նորայր Հովհաննիսյանը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Դատարանները Ն.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ սահմանելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը որոշելիս հաշվի չեն առել և չեն գնահատել հանցագործության բոլոր հանգամանքները, արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող վերը նշված հանգամանքները:

6. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը, Ն.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակել հնարավորինս մեղմ պատիժ՝ նաև տուգանքի ձևով կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով, պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նախաքննության մարմինն ամբաստանյալ Նորայր Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, 332-րդ հոդվածի 2-րդ մասով, 347-րդ հոդվածի 2-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «(...) նա, համաձայն չլինելով 2019 թվականի հունիսի 1-ին իր վարած «ՎԱԶ 21074» մակնիշի 35 ZF 636 հաշվառման համարանիշի և Աշոտ Մաթևոսյանի վարած «ՕՊԵԼ ԱՍՏՐԱ» մակնիշի 35 NU 677 հաշվառման համարանիշի ավտոմեքենաների բախման դեպքի առթիվ հարուցված և ՀՀ իշխանության ներկայացուցիչ՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ՃՊԾ 1-ին սպայական գումարդարի ՃՏՊ գործերով հեղաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի տեսուչ Վահագն Գևորգի Հովհաննիսյանի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակներում նշանակված դարասավորորեհնիկական փորձաքննության եզրակացության և վարչական վարույթը կարճելու մասին 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կայացված որոշման հետ, իր համար բարենպաստ որոշում կայացնելու պահանջով 2019 թվականի նոյեմբերի 5-ին և նոյեմբերի 7-ին իշխանության ներկայացուցիչ՝ ՀՀ

նարիկանության «Ճանապարհային նարիկանություն» ծառայության ՃՊԾ 1-ին սպայական գումարարակի ՃՏՊ գործերով հերաքնության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի տեսուչ Վահագն Հովհաննիսյանի ծառայողական պարականությունների կարարման հեր կապված՝ վերջինիս և նրա մերձավոր ազգականի երեխայի, կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործարդելու սպառնալիք պարունակող դիմումներ է ներկայացրել ՀՀ նարիկանության «Ճանապարհային նարիկանություն» ծառայության պերին՝ սյրայիսով սպառնալով բռնություն գործարդել իշխանության ներկայացուցչի և նրա մերձավոր ազգականի նկարմամբ:

Բացի սյր, 2018 թվականի նոյեմբերի 8-ին ժամը 13:00-ի սահմաններում, Նորայր Հովհաննիսյանն իր վարած «Վազ 21074» մակնիշի 35 ZF 636 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքի Բասկով-Կրիկիս փողոցների հարման խաչմերուկից հերասպնդել է Վահագն Հովհաննիսյանի կողմից վարած «ՇԵՎՐՈՒԵՏ» մակնիշի 6666 HZ տարանցիկ համարանիշի ավտոմեքենան, որի ընթացքում դիրավորյալ ավտոմեքենան վարել է Վահագն Հովհաննիսյանի վարած ավտոմեքենայի դիմացով, կյրուկ արգելակումներ է կարարել, ճանապարհը ազար լինելու պայմաններում դիրավորյալ դանդաղ է վարել իր ավտոմեքենան, որի սպարճառով Վահագն Հովհաննիսյանը Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայով ընթանալիս Նորայր Հովհաննիսյանի հերասպնդումից իտասափելու նպարակով իր ավտոմեքենայով մուտք է գործել բնակելի շենքերից մեկի բակ և թաքնվել:

Դրանից հերո Նորայր Հովհաննիսյանի կողմից իրեն սպառնալու կապակցությամբ ՀՀ նարիկանության «Ճանապարհային նարիկանություն» ծառայության ՃՊԾ 1-ին սպայական գումարարակի ՃՏՊ գործերով հերաքնության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի տեսուչ Վահագն Հովհաննիսյանը ՀՀ նարիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում տվել է հաղորդում, որի կապակցությամբ նախապարրասարված նյութերով 2019 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հողվածի 1-ին մասով հարուցվել և ՀՀ քնչական կոմիտեի Երևան քաղաքի քնչական վարչության Մալաթիա-Մերասրիս վարչական շրջանի քնչական բաժնի քննիչի վարույթում քննվել է թիվ 16895019 քրեական գործը: Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը իտչրնորդելու նպարակով Նորայր Հովհաննիսյանը 2020 թվականի հունվարի 29-ին գնացել է Երևան քաղաքի Մերասրիս 37-րդ հասցեում գրնվող Մալաթիա-Մերասրիս վարչական շրջանի դարախազությունն թիվ 16895019 քրեական գործի նկարմամբ դարավարական դեկավարում իրականացող դարախազ Վիզեն Գարրիելի Պեպրոսյանի մուր ընդունելության: Վերջինիս աշխարասենյակում ազրեսիվ պահվածք դրսևորելով՝ Նորայր Հովհաննիսյանն ակնհայր սուր տեղեկություններ է հաղորդել իր վարած ավտոմեքենայի մանակցությամբ ավտոմեքարի դեպքի աղթիվ վարույթով ՃՊԾ 1-ին սպայական գումարարակի ՃՏՊ գործերով հերաքնության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի աշխարակցի կողմից կաշառք սրանալու և վարչական վարույթն սպորինի կարճելու մասին, դժգոհել է քննիչի կողմից իրեն

հարցաքննության կանչելու հանգամանքից, դատախազ Վ.Պետրոսյանին նույնպես զրպարել է կաշառք ստանալու մեջ՝ սպառնալով, որ քննիչի կողմից իրեն մոտենալու դեպքում «կիրկիզի նրան և այդ գործով իր համար ցանկալի որոշում կայացնելու համար պահանջ ներկայացնելով դատախազ Վ.Պետրոսյանին՝ ճնշում է գործադրել նրա նկատմամբ, վիրավորական արտահայտություններ հնչեցրել վերջինիս հասցեին՝ սպառնալով «քեզ մինչև երկուշաբթի ժամանակ, գործերս անես», որից հետո հեռացել է:

Այնուհետև 2020 թվականի փետրվարի 1-ին ժամը 18:30-ի սահմաններում, Նորայր Հովհաննիսյանն իր վարած «Օպել Աստրա» մակնիշի 36 QV 013 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կրկին գնացել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության մուր և ավտոկայանարեղիոմ սպասել է դատախազ Վ.Պետրոսյանին: Վերջինիս աշխատավայրից դուրս գալուց հետո Նորայր Հովհաննիսյանը մոտեցել է նրան և հարցրել՝ «ինչ արիք գործս», որին ի պատասխան՝ Վ.Պետրոսյանը հայտնել է, որ գործի ընթացքի մասին սահմանված կարգով կրեդեյալի քննիչի կողմից: Այդ ժամանակ Ն.Հովհաննիսյանը, Վ.Պետրոսյանի կողմից թիվ 16895019 քրեական գործի նստանական քննություն վարելու ընթացքում դատախազական լիազորություններն իրականացնելու հետ կապված՝ նրա գործունեությանը միջամրելու նպատակով սպառնալիքներ է հնչեցրել վերջինիս հասցեին ասելով՝ «քեզ վարի եմ րալու, քեզ մինչև երկուշաբթի ժամանակ»: Դրանից հետո, երբ Վ.Պետրոսյանը, վարելով իր անձնական օգրագործման «ՄԵՐՄԵԴԵՍ ԲԵՆՑ» մակնիշի 353 GG 01 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, հեռացել է, Նորայր Հովհաննիսյանն իր վարած «ՕՊԵԼ ԱՍՏՐԱ» մակնիշի 36 QV 013 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով հետապրել է նրան՝ Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում ավտոմեքենան վարել է նրա հետևից, ընթացքում ձայնային ազրանշաններ րալով և մանրոտներ կարարելով՝ Սեբաստիա փողոցում վազանց կարարելով՝ ավտոմեքենան կրրոկ քաշել է Վ.Պետրոսյանի ավտոմեքենայի դիմաց, որի հետևանքով Վ.Պետրոսյանն իր վարած ավտոմեքենան հարկադրարար մասամբ դուրս է բերել հանդիպակաց ողեմսս և կանգնել: Վ.Պետրոսյանի վարած ավտոմեքենան հարկադրարար կանգնեցնելուց հետո՝ Նորայր Հովհաննիսյանը, իջնելով իր ավտոմեքենայից, մոտեցել է Վ.Պետրոսյանի վարած «ՄԵՐՄԵԴԵՍ ԲԵՆՑ» մակնիշի 353 GG 01 հաշվառման համարանիշի ավտոմեքենային, փորձել է բացել ավտոմեքենայի դուրը, սակայն դրները եղել են փակված փճակում: Ն.Հովհաննիսյանը, տեսնելով, որ դրները փակված են, դատախազի ծառայողական պարրքը կարարելու հանգամանքով պայմանավորված՝ վերջինիս գուրքը վնասելու դիրավորությամբ իր հետ նստապես ավտոմեքենայից վերցրած պրուրակահանի սուր մասով հարվածներ է հասցրել վարորդի դոան սպակուն, առաջացնելով քերծվածքների տեսքով արտահայրված վնասվածքներ և հետքեր, այնուհետև ուրքով հարվածել է առջևի թափարգելին և վնասել դրա ձախ վերին հարվածում և կենրոնական հարվածում առկա ներկանյութի արտաքին շերտը՝ Վ.Պետրոսյանին պարճատելով զգալի չափի՝ 58.000 ՀՀ դրամի գուրքային վնաս, որից հետո նստելով իր ավտոմեքենան՝ հեռացել է: Բացի այդ, դատախազ

Վիզեն Պետրոսյանի ավերումքենան վնասելուց անմիջապես հետո՝ 2020 թվականի փետրվարի 1-ին ժամը 18:35-ին, Նորայր Հովհաննիսյանն իր 077-13-54-25 հեռախոսահամարից զանգահարել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնի «1-02» հեռախոսահամարին, գիրակցելով, որ իր տրամադրած տեղեկարկությունը կեղծ է, հանցագործության մասին սույր մատնություն կատարելով՝ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ՃՊԾ 1-ին սպայական գումարակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի տեսուչ Վահագն Հովհաննիսյանի կողմից Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարհագրի կաշառք տրալու մասին: Միևնույն ժամանակ, Նորայր Հովհաննիսյանը նախնական քննություն վարելու ընթացքում դատարհագրական լիազորություններն իրականացնելու հետ կապված՝ գրախարել է դատարհագր Վիզեն Պետրոսյանին, այն է՝ տեղեկություն է հաղորդել, թե իբր վերջինս կաշառք է վերցրել ՃՏՊ գործերով վարչական վարույթի իրականացման բաժանմունքի տեսուչ Վահագն Հովհաննիսյանից և հանձնարարել է գործը քննող քննիչին ձեռքակալել իրեն: Ահագանգի ժամանակ Ն.Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ ձայնագրել է դատարհագրին, ով ասել է. «լավ եմ արել, վերցրել եմ»: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատակցի հարցին, թե ենթադրո՞ւմ է, արդյոք, որ դատարհագր կաշառք է վերցրել, Ն.Հովհաննիսյանը, սրելով, պատասխանել է, որ այդ կապակցությամբ ունի ձայնագրություն, որպիսի հանգամանքը պնդել է նաև նախաքննության ընթացքում տված իր ցուցմունքներով:

Բացի այդ, Նորայր Հովհաննիսյանը թիվ 16895019 քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատարհագրի ծառայողական պարտքը կատարելու հետ կապված վերջինիս գույքը վնասելու դիմախոսությամբ 2020 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, կրկին գնացել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարհագրության շենքի մուտք և իր հետ նախապես վերցրած՝ ցինկի միացություն պարունակող համեմատաբար կոշտ կաղապար չունեցող /սովարաթոթյա/ պայթուցիկը նետել է վարչական շրջանների դատարհագրության դատարհագր Վիզեն Պետրոսյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի, 353 GG 01 հաշվառման համարանիշի ավերումքենայի վրա, վնասել դիմապակին պարճատելով նրան զգալի չափի 55.000 ՀՀ դրամի գույքային վնաս (...):»²:

8. Առաջին առյանի դատարանը 2021 թվականի հուլիսի 19-ի դատավճռով նշել է հետևյալը. «(...) Անբասարանյալ Նորայր Հովհաննիսյանի նկատմամբ պատրիժ սահմանների Դատարանը (...) հաշվի է առնում նրա կատարած հանցանքներից յուրաքանչյուրի հանրության համար վրանգավորության սատրիճանը, յուրաքանչյուր դեպքում նրա ինքնությունը և գործի ողջ հանգամանքները:

(...)

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 143-150:

Գալարարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ամբաստանյալ Նորայր Հովհաննիսյանի պարասխանաբերությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված հանգամանքները:

(...)

Որպես անձը բնութագրող այլ տվյալներ՝ Նորայր Հովհաննիսյանը կատարել է դիրավորյալ հանցագործություններ, ամերի է, չդատապարտված, ՀՀ Մյունխբի Մարզի Գորխի համայնքի ղեկավարի կողմից բնութագրվում է դրական, ըստ դատախոզերուժական փորձաքննության թիվ 35 եզրակացության նրա մոտ առկա է բնավորության գծերի շեշտվածություն, որն արտահայտված չէ այն ստիճանի, և չի ուղղեցվում հոգեախարանական ախտահիշներով, մտավոր, հիշողության կոպիտ հանգարումներով, որն ինչպես իրավախախտումը կատարելիս, այնպես էլ ներկայումս գրկեր և գրկի նրան գիտակցել իր գործողությունների բնույթը, նշանակությունը, վրանգավորությունը, հաշիվ տալ իրեն կատարած արարքների համար և ղեկավարել դրանք, իրավախախտումը կատարելիս նա չի գրկել նաև հոգեկան գործունեության որևէ ժամանակավոր հիվանդագին հանգարված վիճակում, որը կարող էր առաջացնել արդեն նկարագրված վիճակները, և իրեն մեղաագրվող արարքների նկարմամբ ճանաչվել է մեղսունակ (...):

Գալարարանը հաշի է առնում Նորայր Հովհաննիսյանի կողմից կատարված յուրաքանչյուր հանցավոր արարքի հանրային վրանգավորության բնույթին հանցագործության որակական կողմին բնորոշ հանգամանքները, մասնավորապես, մեղքի ձևը և տեսակը, հանցագործության նպատակը և շարժառիթը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման ստիճանը, սեփականության դեմ ուղղված հանցագործություններից յուրաքանչյուրով պարճառված վնասի չափը, հանցագործություններից յուրաքանչյուրի կատարումից հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, մասնավորապես, հանցագործությունների պարբերականությունն ու փոխկապակցվածությունը, տուժողին պարճառված վնասի հարուցման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը, որոնք իրենց համակցության մեջ էականորեն բարճրացնում են ինչպես յուրաքանչյուր հանցագործության, այնպես էլ այն կատարողի՝ Նորայր Հովհաննիսյանի անճի հանրային վրանգավորության ստիճանը՝ չանտեսելով քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների համարեքարում նաև ամբաստանյալի անճը բնութագրող, սոցիալական առանճնախարկությունների վերաբերյալ փաստական տվյալները:

(...)

Գալարարանը գրնում է նաև, որ ազարագրկման ձևով ամբաստանյալի նկարմամբ նշանակվող պարիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են, պարճի նպարակներն սպահովելու տեսանկյունից Նորայր Հովհաննիսյանն իր նկարմամբ նշանակվող պարիժը պետք է կրի, այն արդարացի է և անիրաճեշտ սոցիալական արդարությունը վերականգնելու, նրան ուղղելու

և նոր հանցագործությունների կատարումը կանխելու համար: Գաղափարների համոզմամբ ամբաստանյալի անձր բնութագրող դրական փոփոխությունը պետք է հաշվի առնել նրա նկատմամբ յուրաքանչյուր հանցավոր արարքի կատարման համար և հանցանքների համակցությամբ ազատազրկման ձևով նշանակվող պարժի չափը որոշելիս (...)³:

9. Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ նշել է հետևյալը. «(...) ամբաստանյալի նկատմամբ փոփոխություններով նախատեսված ավելի մեղմ պարժի նշանակելու կամ այն խստացնելու հիմքերը բացակայում են, և նրա նկատմամբ իրեն վերագրվող հանցագործությունների համար ազատազրկման ձևով վերջնական համապատասխան նշանակելու միջոցով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի, պաշտպան Գ.Մեծդրյանի և գործով մեղադրող, Երևան քաղաքի դատախազության դատախազ Ծ.Մնացականյանի վերաքննիչ բողոքները բավարարելու և դատավճիռը բեկանելու հիմքեր չկան, նկարի ունենալով, որ դատարանը դատավճիռը կայացնելիս՝ թույլ չի փոխել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ (...)⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Նախքան բողոքաբերի կողմից բարձրացված հարցին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք և ելնելով Միսիթար Էլոյանի և այլոց գործով որոշմամբ արտահայտված դիրքորոշումից առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում⁵ անհրաժեշտ է գտնում քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով և 347-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 212-218:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 81-99:

⁵ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Միսիթար Էլոյանի և այլոց գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

մասով և 347-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)

6) անցել են վաղեմության ժամկետները. (...)»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մեծ ազարվում է քրեական պարասխանարվությունից, եթե հանցանքն ալարված համարելու օրվանից անցել են հերկյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ալարված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ալարված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ալարված համարելու օրվանից.
(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ալարված համարելու օրվանից մինչև դարալճոի օրինական ուժի մեջ մրնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհարվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կարարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ալարված համարելու պահից (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության մասին սուր մարնությունը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկարվությունը կեղծ է՝

պարժվում է (...) ազարազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
(...):

ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դարասագին, քննիչին, հետաքննություն կարարող անձին կամ հարկադիր կարարողին զրարրելը՝ կապված նախնական քննություն վարելու, դարարանի դարալճոի, վճոի կամ դարական այլ սկտի կարարման հետ՝

պարժվում է (...) ազարազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
(...):

ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«1. Դատավորի կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պարճատելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ՝

պարժվում է (...) ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորի նկատմամբ կապված նահանական քննություն վարելու, գործը կամ նյութերը դատարանում քննելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը կատարելու հետ՝

պարժվում է (...) ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով (...):»:

13. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանին մեղաազրված վերջին արարքն ավարտվել է **2020 թվականի փետրվարի 27-ին**⁶: Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է 2021 թվականի հուլիսի 19-ին⁷, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2021 թվականի նոյեմբերի 3-ին⁸: Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ **2022 թվականի ապրիլի 19-ի** որոշմամբ ընդունվել է վարույթ⁹:

15. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ Ն.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով և 347-րդ հոդվածի 2-րդ մասով մեղաազրված արարքների՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրացել է **2022 թվականի փետրվարի 27-ին**, իսկ այդ պահի դրությամբ, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

16. Ելնելով վերոշարադրյալից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի

⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը

⁸ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը պետք է մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով և 347-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ Ն.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 332-րդ հոդվածի 2-րդ մասով մեղազգրված արարքների համար պետք է նշանակել նոր պատիժ՝ հետադարձ ուժ տալով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումներին: Մասնավորապես, նշված օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խարսցնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:*

2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտնած եզրափակիչ դատավարական ակտ (...):»:

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու համար վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, թե մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վերաբերյալ առկա է արդյոք օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, թե ոչ: **Եթե նման ակտ առկա չէ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ**, այսինքն տարածվում է մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վրա:

18. Սույն գործով ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղազգրվող հանրորեն վտանգավոր արարքը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, որի համար նոր օրենքը սահմանում է առավել մեղմ պատիժ: Մասնավորապես, եթե հանցանքը կատարելու պահին գործող օրենքով որպես ազատագրվման առավելագույն ժամկետ նախատեսված էր հինգ տարին, ապա ըստ նոր կարգավորումների ազատագրվում կարող է նշանակվել առավելագույնը երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալին մեղազգրվող արարքին՝ պետք է նշել, որ այն համապատասխանում է 2021 թվականի մայիսի

5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, որի համար նույնպես նոր օրենքն առավել մեղմ պատիժ է նախատեսում: Մասնավորապես, եթե նախկին կարգավորումներով որպես ազատազրկման ժամկետ սահմանված էր մեկից երեք տարին, ապա ըստ նոր օրենսգրքի՝ ազատազրկում կարող է նշանակվել առավելագույնը երկու տարի ժամկետով:

19. Ինչ վերաբերում է ամբաստանյալին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղսագրվող արարքներին, ապա պետք է նշել, որ դրանք շարունակվում են մնալ հանցավոր և համապատասխանում են 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, որի համար, սակայն, նոր օրենքն առավել խիստ պատիժ է նախատեսում, հետևաբար այն չի կարող հետադարձ ուժ ունենալ:

20. Անդրադառնալով ամբաստանյալ Ն.Հովհաննիսյանի նկատմամբ ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ բողոքաբերի՝ 8-րդ կետում նշված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված՝ Ն.Հովհաննիսյանի կողմից կատարված յուրաքանչյուր հանցավոր արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, մեղքի ձևը, հանցագործության նպատակը և շարժառիթը, հանցագործության կատարման եղանակը, պատճառով և վնասի չափը, ամբաստանյալի դրսևորած վարքագծի պարբերականությունը և փոխկապակցվածությունը, նաև ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ հիմնավորված և պատճառաբանված են ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ պատժի նպատակների իրացմանը հնարավոր է հասնել միայն ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու դեպքում:

21. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Նորայր Ներսեսի Հովհաննիսյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցավոր արարքը պետք է որակել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասին և պատիժ նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով, իսկ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալին մեղսագրվող արարքը՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասին և պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին

մասով և 486-րդ հոդվածի 1-ին մասով կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի համար ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ն.Հովհաննիսյանի նկատմամբ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկմանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով պետք է մասնակիորեն գումարել՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից՝ 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկումը, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասով՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից՝ 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկումը և Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Ն.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատժի կրման սկիզբը պետք է հաշվել 2020 թվականի փետրվարի 27-ից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել:

2. Ամբաստանյալ Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով, 344-րդ հոդվածի 1-ին մասով և 347-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ:

3. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով Նորայր Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակել

ազատագրկում՝ 1 (մեկ) տարի, իսկ 486-րդ հոդվածի 1-ին մասով՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով և 486-րդ հոդվածի 1-ին մասով կատարած հանցագործություններից յուրաքանչյուրի համար ազատագրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ն.Հովհաննիսյանի նկատմամբ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատագրկմանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով, պետք է մասնակիորեն գումարել՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրկման ձևով նշանակված պատժից՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրկումը, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով 1 (մեկ) տարի ժամկետով ազատագրկման ձևով նշանակված պատժից՝ 3 (երեք) ամիս ժամկետով ազատագրկումը, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասով՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրկման ձևով նշանակված պատժից՝ 3 (երեք) ամիս ժամկետով ազատագրկումը և Նորայր Ներսեսի Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատագրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվել 2020 թվականի փետրվարի 27-ից:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0306/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

7 հոկտեմբերի 2022 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ դիմող Եվա Միխայիլի Ամիրյանի փաստաբան, ներկայացուցիչ Ա.Մկրտչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Բարսեղյանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ թիվ 11194519 քրեական գործով վարույթը կարճվել է և Վարդան Մարգարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Արսեն Մկրտչյանի նկատմամբ նույն օրենսգրքի 333-րդ հոդվածով ու Եվա Ամիրյանի նկատմամբ նույն օրենսգրքի 338-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոգրյալ որոշման դեմ տուժող Ե.Ամիրյանի փաստաբան Ա.Մկրտչյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի 2020 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ առանց ըստ էության քննարկման առարկա դարձնելու բողոքը:

3. Վերոնշյալ որոշման դեմ փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի նոյեմբերի 24-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու ու Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ա.Մկրտչյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպես՝ բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները կառուցված են գործում առկա փաստական տվյալների միակողմանի, թերի և սուբյեկտիվ գնահատման վրա:

Ի հիմնավորումը նշված պնդման, բողոք բերած անձը նշել է, որ գործում առկա է 2020 թվականի փետրվարի 3-ին կազմված լիազորագիր, որով Ե.Ամիրջյանը լիազորել է փաստաբաններ Ա.Մկրտչյանին և Վ.Նիկողոսյանին իր շահերի պաշտպանությամբ հանդես գալու քրեական հետապնդման մարմիններում ու Հայաստանի Հանրապետության բոլոր դատական ատյաններում, ընդ որում այն տրված է 3 տարի ժամկետով: Նշված լիազորագրի ուժով նախաքննության մարմնի վիճարկվող որոշումը բողոքարկվել է դատախազին և վերջինս իր որոշմամբ կասկածի տակ չի դրել փաստաբանների՝ դիմողի ներկայացուցչությունն իրականացնելու իրավասությունը:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանում ներկայացվել է նաև 2020 թվականի փետրվարի 3-ին կազմված Ե.Ամիրջյանի դիմումը՝ նույն

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

փաստաբանների կողմից սույն քրեական գործի նյութերին ծանոթանալու և համապատասխան դիմումներ ու բողոքներ ներկայացնելու խնդրանքով:

Ընդհանրացնելով՝ բողոքաբերն արձանագրել է, որ հիշյալ փաստական տվյալների համակցությունը բավարար է արձանագրելու, որ փաստաբաններ Ա.Մկրտչյանը և Վ.Նիկողոսյանը լիազորված են եղել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացնելու դիմող Ե.Ամիրյանի օրինական շահերն ու այդ հանգամանքը կասկածի տակ չի դրվել դատավարության մասնակիցների կողմից:

Մինևսույն ժամանակ, բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում ներկայացվել էր նաև դիմող Ե.Ամիրյանի դատեր Զ.Ամիրյանին տուժողի իրավահաջորդանաչելու և գործի քննությանը ներգրավելու պահանջով միջնորդություն, որին կցվել է դիմող Ե.Ամիրյանի մահվան վկայականը և ժառանգությունն ընդունելու մասին Զ.Ամիրյանի հայտարարությունը: Նշվածն, ըստ բողոք բերած անձի, ինքնին բավարար էր Զ.Ամիրյանին որպես տուժողի իրավահաջորդ բողոքի քննությանը ներգրավելու համար: Ավելին, ՀՀ տարածքից դուրս կազմված լինելու և COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով Զ.Ամիրյանի տված լիազորագրի բնօրինակը ներկայացվել էր Վերաքննիչ դատարան, սակայն դատարանը ևս Զ.Ամիրյանին չի ներգրավել բողոքի քննությանը:

Ամփոփելով, բողոքաբերը եզրահանգել է, որ հիշյալ փաստական հանգամանքների անտեսմամբ արված Վերաքննիչ դատարանի եզրահանգմամբ խախտվել են տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքները և օրինական շահերը:

6. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Քրեական գործ հարուցելու առիթը՝ ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումը ներկայացրել է դիմող Ե.Ամիրյանի փաստաբան Ա.Մկրտչյանը, որին կցվել է նաև՝

– 2019 թվականի մայիսի 2-ին կազմված, դիմող Ե.Ամիրյանի ստորագրությամբ վավերացված և փաստաբաններ Ա.Մկրտչյանին ու Վ.Նիկողոսյանին հասցեագրված դիմումը՝ ենթադրյալ խարդախության արդյունքում, իր շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության դատախազության, ոստիկանության և քննչական մարմիններում իրականացնելու խնդրանքով,

– փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի փաստաբանական գործունեության արտոնագրերը²,

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 4-5, 7-9:

- նոտարական կարգով վավերացված, 2018 թվականի մարտի 21-ին կազմված կտակի պատճենը, համաձայն որի՝ Ե.Ամիրյանն իրեն պատկանող շարժական և անշարժ գույքը կտակել է Զինա Վազգենի Ամիրյանին³:

7.1 Առաջին ատյանի դատարանում՝ 2020 թվականի մարտի 23-ին ստացված բողոքի քննության ընթացքում ներկայացվել է՝

- 2020 թվականի փետրվարի 3-ին կազմված, դիմող Ե.Ամիրյանի ստորագրությամբ վավերացված և փաստաբաններ Ա.Մկրտչյանին ու Վ.Նիկողոսյանին հասցեագրված դիմումը՝ թիվ 11194519 քրեական գործի նյութերին ծանոթանալու, համապատասխան դիմումներ և բողոքներ ներկայացնելու խնդրանքով՝ ենթադրյալ հափշտակության արդյունքում, իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնելու նպատակով,

- մահվան մասին պետական վկայականը, համաձայն որի՝ Ե.Ամիրյանը մահացել է 2020 թվականի հունիսի 29-ին,

- փաստաբան Ա.Մկրտչյանի միջնորդությունը՝ Զինա Ամիրյանին թիվ 11194519 քրեական գործով տուժող Ե.Ամիրյանի իրավահաջորդ ճանաչելու, և գործի քննությանը ներգրավելու պահանջով, որին կից ներկայացվել է օտար լեզվով կազմված ու նոտարական կարգով վավերացված հայտարարության պատճենը, ինչպես նաև դրա հայերեն թարգմանված օրինակը, հետևյալ բովանդակությամբ. Զ.Ամիրյանը հայտարարություն է տարածել առ այն, որ որպես Ե.Ամիրյանի դուստր, ըստ օրենքի, հանդիսանում է նրա ժառանգը և բոլոր հիմունքներով ընդունում է ժառանգությունը⁴:

7.2. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 10-ի դատական նիստի արձանագրության համաձայն՝ նախագահող դատավորը հայտարարել է, որ նախորդ դատական նիստը հետաձգվել էր որպես դիմող Ե.Ամիրյանի ներկայացուցիչ հանդես եկող անձանց իրավավիճակը հաստատող լիազորագիրը ներկայացնելու պատճառով, ինչից հետո դատարանը տեղեկացվել է դիմող Ե.Ամիրյանի մահվան մասին: Որպես դիմող Ե.Ամիրյանի ներկայացուցիչ հանդես եկող անձը հայտարարել է, որ լիազորագիրը ներկայացնելու է Զ.Ամիրյանը, ինչին ի պատասխան նախագահող դատավորը հայտնել է, որ վերջինս իրավասու չէ ներկայացնելու լիազորագիր, այնուհետև փաստարկել, որ բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ դիմող Ե.Ամիրյանը ողջ էր, սակայն բողոքը վերջինիս կողմից չի բերվել, և նյութերում առկա չէ լիազորագիր, այդ պատճառով պահանջվել էր ներկայացնել այն, միաժամանակ հայտարարելով, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անհրաժեշտ է նոր լիազորագիր ներկայացնել՝ պատճառաբանելով, որ բողոքը դիմողի կողմից ստորագրված չլինելու դեպքում, հնարավոր է, որ վերջինս չի ցանկանում օգտվել բողոքարկման իրավունքից⁵:

Նույն դատական նիստի արձանագրության համաձայն՝ Առաջին ատյանի

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 12:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 77, 75, 85-87:

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 93:

դատարանն արձանագրային որոշմամբ մերժել է վերոհիշյալ միջնորդությունը, պատճառաբանելով, որ. «(...) [Բ]ողոքի շրջանակներում [դատարանը] չի կարող [Զ.Ամիրջյանին] բուժօգնություն իրավահաջորդ ճանաչել և բողոքը քննել նրա մասնակցությամբ կամ բացակայությամբ, ըստ էության Դուք [փաստաբանը] ներկայացրել էք Ե.Ամիրջյանի շահերը, հանդես եք եկել որպես վերջինիս ներկայացուցիչ ու Ե.Ամիրջյանն անգամ բողոքի փակ չի պորտագրել, ըստ էության Ձեր բողոքն է՝ եթե հիմք ընդունենք, որ առկա է լիազորագիր, օրենքով սահմանված կարգով, որն այդպես էլ դատարան չներկայացվեց (...)»⁶:

8. Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) Բողոքի քննության ընթացքում բողոքում որպես Եվա Ամիրջյանի ներկայացուցիչներ նշված և հանդես եկող Արսեն Մկրտչյանի ու Վարդան Նիկողոսյանի կողմից չի ներկայացվել լիազորագիր այն մասին, որ բողոքաբերի կողմից լիազորված են բողոքի քննության ընթացքում ներկայացնելու նրա շահերը:

Հետևաբար, [Առաջին ատյանի] դատարանը, նկատի ունենալով, որ բողոքաբեր Եվա Միխայիլի Ամիրջյանը մահացել է, իսկ Արսեն Մկրտչյանը և Վարդան Նիկողոսյանը լիազորված չեն դատարանում ներկայացնելու վերջինիս շահերը, այսինքն՝ չեն հանդիսանում բողոքի քննության համար պարզաձև սուբյեկտ, գտնում է, որ ներկայացված բողոքը պետք է մերժել՝ առանց անդադարառնալու բողոքի հիմքերին»⁷:

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Բ]ողոքին առնչվող նյութերում բացակայում է լիազորագիրը, որով Եվա Միխայիլի Ամիրջյանը լիազորել է Արսեն Մկրտչյանին և Վարդան Նիկողոսյանին իր անունից ու իր շահերի պաշտպանությամբ հանդես գալու սույն բողոքի դատական քննության ընթացքում, ուստի՝ Արսեն Մկրտչյանը և Վարդան Նիկողոսյանը լիազորված չեն սույն բողոքի դատական քննության ընթացքում ներկայացնելու Եվա Միխայիլի Ամիրջյանը շահերը:

Իսկ ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքին կից ներկայացված լիազորագրին, որով Զինա Ամիրջյանը լիազորել է Արսեն Մկրտչյանին և Վարդան Նիկողոսյանին իր անունից ու իր շահերի պաշտպանությամբ հանդես գալու ՀՀ դատական բոլոր արյաններում, ապա՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 17-ի որոշման կայացման օրվա դրությամբ այդ լիազորագիրը բացակայել է, հետևաբար Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել դատական սիսայ դատավարական իրավունքի խախտում, ինչը հիմք կրար Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 17-ի դատական ակտը բեկանելու համար»⁸:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 94-95:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 148-152:

հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ փաստաբաններ Ա.Մկրտչյանը և Վ.Նիկողոսյանը դատարանում իրավասու չէին ներկայացնելու դիմող Ե.Ամիրյանի օրինական շահերը:

11. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

(...)

8) ունենալ ներկայացուցիչ և դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները:

(...)

4. Տուժողն իրեն պարկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կարարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապարասխանում է համապարասխան իրավունքների և պարտականությունների քնույթին»:

Նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տուժողի, (...) ներկայացուցիչներ են հանդիսանում այն անձինք, որոնք դատավարության նշված մասնակցի/ կողմից լիազորված են քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնելու խրա՞ օրինական շահերը:

2. Քրեական դատավարությունում որպես տուժողի, (...) ներկայացուցիչներ կարող են մասնակցել փաստաբանները և դատավարությանը համապարասխան մասնակցի կողմից տրված լիազորագիր ունեցող այլ անձինք: (...)

Տուժողի իրավական վիճակի առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը⁹: Քրեադատավարական իրավահարաբերություններում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ կապված ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն վնաս պատճառված լինելու (կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության) հանգամանքի հետ, ունի որոշակի առանձնահատկություններ:

Հանցագործություններից տուժած անձի իրավունքների ապահովման անհրաժեշտությունը քննարկելով իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմների համատեքստում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժողի իրավունքների ու օրինական շահերի երաշխիք է հանդիսանում դատախազական հսկողությունը, միևնույն ժամանակ, տուժողը (տուժողի իրավահաջորդը) հանդիսանալով դատավարության ինքնուրույն սուբյեկտ օժտված է իր իրավաչափ շահերը ներկայացնելու հնարավորությամբ, որը կարող է իրացվել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սուսաննա Մարոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը:

11.1. Քրեական դատավարությունում ներկայացուցչություն է համարվում օրենքով սահմանված այն գործունեությունը, երբ մեկ անձը հանդես է գալիս մեկ այլ անձի շահերի պաշտպանությամբ: Այսինքն՝ տուժողի ներկայացուցիչը դատավարության հիշյալ սուբյեկտի կողմից լիազորված անձն է, ով իրավունք ունի գործով վարույթի ընթացքում ներկայացնելու տուժողի օրինական շահերը:

Տուժողի ներկայացուցիչ ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների վերլուծության արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է սուբյեկտների ընդհանուր շրջանակ, որոնք կարող են քրեադատավարական իրավահարաբերություններում ներկայացնել տուժողի օրինական շահերը: Տուժողի օրինական շահերի ներկայացուցչությունն իրականացնող սուբյեկտների շարքում ընդգրկված են փաստաբանները և տուժողի կողմից լիազորված այլ անձինք: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ներկայացուցիչը՝ որպես իրավահարաբերության սուբյեկտ, իր՝ ներկայացուցչությունն իրականացնելու իրավասությունը պետք է հիմնավորի կարգավիճակը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերով:

11.2. Քրեական գործի շրջանակներում պաշտպանի դատավարական կարգավիճակը հաստատելու հարցը լուծելիս՝ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարել ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի իմաստով պաշտպանի կարգավիճակը հաստատվում է նշված հոդվածով սպառիչ թվարկված ներկայացվելիք փաստաթղթերով. ցանկում ներառված՝ պաշտպանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը բովանդակային առումով պետք է պարունակի պաշտպանյալի համաձայնությունը կոնկրետ փաստաբանի կողմից իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու մասին, իսկ ձևական առումով պետք է ունենա փաստաթղթային ձևակերպում և հաստատված լինի պաշտպանյալի ստորագրությամբ: Նշված պահանջներին համապատասխանող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է գնահատվի որպես պաշտպանյալի կողմից տրված պատշաճ հաստատում, հակառակ դեպքում կխախտվեն ինչպես օրինականության սկզբունքը, այնպես էլ մեղադրյալի (կասկածյալի) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում պաշտպանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատման ձևին և բովանդակությանը վերաբերող վավերապայմաններ: Այդպիսի վավերապայմաններ նախատեսված չեն նաև համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերում, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում¹⁰:

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Քրիստինե Փաշինյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵՇԴ/0031/01/13 որոշումը:

12.3. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպանության իրավունքի համատեքստում ձևավորված վերոգրյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի մատվ (*mutatis mutandis*) կիրառելի է նաև քրեադատավարական իրավահարաբերություններում փաստաբանի՝ որպես տուժողի ներկայացուցչի կարգավիճակը հաստատելու հարցը լուծելիս:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– դիմող Ե.Ամիրյանի փաստաբան Ա.Մկրտչյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցված քրեական գործի վարույթը նախաքննության մարմնի որոշմամբ կարճվել է¹¹,

– որպես դիմող Ե.Ամիրյանի ներկայացուցիչ հանդես եկող փաստաբան Ա.Մկրտչյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ¹²,

– վերոնշյալ որոշումների դեմ փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի բողոքն Առաջին ատյանի դատարանի որոշմամբ մերժվել է՝ առանց ըստ էության քննարկման առարկա դարձնելու: Հիշյալ դիրքորոշումը հիմնավորվել է նրանով, որ ներկայացված չէր լիազորագիր առ այն, որ փաստաբանները լիազորված են դատարանում ներկայացնելու դիմող Ե.Ամիրյանի օրինական շահերը: Արդյունքում, նկատի ունենալով, որ դիմող Ե.Ամիրյանը մահացել է, իսկ փաստաբանները լիազորված չեն դատարանում ներկայացնելու նրա շահերը, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ փաստաբանները չեն հանդիսանում բողոքի քննության համար պատշաճ սուբյեկտ¹³: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանն արձանագրային որոշմամբ մերժել է դիմող Ե.Ամիրյանի դստեր Զ.Ամիրյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու և բողոքի քննությանը ներգրավելու վերաբերյալ միջնորդությունը¹⁴:

– Վերաքննիչ դատարանն իրավաչափ դիտարկելով Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրված վերոգրյալ պնդումը, արձանագրել է նաև, որ Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում իր անունից հանդես գալու իրավունքով փաստաբաններ Ա.Մկրտչյանին և Վ.Նիկողոսյանին օժտելու վերաբերյալ Զ.Ամիրյանի տված լիազորագիրը վիճարկվող դատական ակտը կայացնելիս բացակայել է, հետևաբար Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու հիմքեր չկան¹⁵:

1. Մինչև տուժող Ե.Ամիրյանի մահը փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի կարգավիճակը.

13. Տվյալ գործի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.3-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն

¹¹ Տե՛ս սույն որոշման 1-ին և 7-րդ կետերը:

¹² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել դիմող Ե.Ամիրյանի և փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի միջև ձևավորված իրավահարաբերությունների բնույթը՝ դատավարական նորմի կիրառման հարցում հանգելով սխալ եզրահանգման, որն արդեն իսկ Վճռաբեկ դատարանի կողմից բացահայտվել է սույն որոշման նախորդ կետերում: Մասնավորապես՝ գտնելով, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման դեմ բողոք բերելու իրավունքով օժտված է միայն լիազորագրի ուժով դիմողի օրինական շահերի պաշտպանությունն իրականացնելուն լիազորված սուբյեկտը, ստորադաս դատարանները հիշյալ փաստաբանների կարգավիճակը հաստատելու համար ներկայացրել են լրացուցիչ և որևէ իրավական հիմքից զուրկ պահանջ: Այլ կերպ՝ փաստաբանների՝ ներկայացուցչություն իրականացնելու իրավասությունը ոչ իրավաչափորեն պայմանավորելով լիազորագրի ձևով փաստաթղթային հաստատմամբ, ստորադաս դատարանները խախտել են օրինականության սկզբունքը և սահմանափակել դիմող Ե.Ամիրյանի՝ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշման կապակցությամբ դատական պաշտպանություն հայցելու իրավունքը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանում ստացված նյութերում, այդ թվում՝ Առաջին ատյանի դատարանում ձևավորված, առկա է Ե.Ամիրյանի ստորագրությամբ վավերացված և հիշյալ փաստաբաններին հասցեագրված դիմումներ՝ ենթադրյալ հափշտակության արդյունքով իր օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու խնդրանքով: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված դիմումներից վերջինը կազմված է նախաքննության մարմնի վիճարկվող որոշումը կայացնելուց հետո՝ նախքան փաստաբանների բողոքն Առաջին ատյանի դատարանում ստանալը: Ընդ որում, այդ դիմումով հիշյալ փաստաբաններին վերապահված էր նաև բողոքարկման իրավունքը¹⁶: Հատկանշական է նաև, որ Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ եղած նյութերում առկա չեն քննարկվող դիմումը կազմելուց հետո փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի՝ որպես դիմող Ե.Ամիրյանի ներկայացուցիչների լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ փաստական տվյալները:

Վերոգրյալ հանգամանքները ցույց են տալիս, որ առկա է սույն որոշման 11.2-րդ կետում շարադրված պահանջին համապատասխանող՝ դիմող Ե.Ամիրյանի համաձայնությունը, կոնկրետ փաստաբանների կողմից իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են նշված փաստաբանների՝ որպես դիմող Ե.Ամիրյանի ներկայացուցիչ կարգավիճակը հաստատելու համար օրենսդրի կողմից սպառիչ ցանկով նախատեսված ներկայացվելիք փաստաթղթերից՝ փաստաբանների

¹⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ և 7.1-րդ կետերը:

արտոնագրերը¹⁷ և Ե.Ամիրյանի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբաններ Ա.Մկրտչյանը և Վ.Նիկողոսյանը մինչև դիմող Ե.Ամիրյանի մահը լիազորված են եղել իրականացնելու վերջինիս օրինական շահերի ներկայացուցչությունը, այդ թվում՝ դատական բողոքարկման եղանակով:

II. Տուժող Ե.Ամիրյանի մահից հետո փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի դատավարական կարգավիճակը.

13.1 Հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության համատեքստում ձևավորված նախադեպային իրավունքի¹⁸, այդ թվում նաև դրանցում վկայակոչված միջազգային չափանիշների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ կրկնում է, որ դատարանի մատչելիության իրավունքի իրացմանն առնչվող դատավարական կարգավորումները դատարանների կողմից պետք է ճկուն մեկնաբանման ենթարկվեն՝ ելնելով դատարանի մատչելիության իրավունքի գերակայությունից՝ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ¹⁹: Դատարանի մատչելիության հիմնարար իրավունքի բաղադրատարրերից մեկն անձի դատական քննությանը մասնակցելու երաշխիքն է, որի ապահովման պարտականությունը կրում է դատարանը: Քրեական դատավարության սույն փուլում դատարանի՝ վերահսկողական գործառույթն ընդգծելով հանդերձ, հարկ է նշել, որ, տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանում ստացված նյութերում առկա փաստական տվյալների համակցությունն²⁰ առերևույթ բավարար է արձանագրելու Զ.Ամիրյանին՝ տուժող Ե.Ամիրյանի իրավահաջորդ ճանաչելու իրավական հիմքերը²¹: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանություն հայցելու հիմնարար իրավունքի ապահովման տեսանկյունից Առաջին աստիճանի դատարանը պարտավոր էր ողջամիտ միջոցներ ձեռնարկելու Զ.Ամիրյանի՝ բողոքի քննությանը ներգրավելու կամահայտնությունը պարզելու, ըստ այդմ՝ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով իրեն պատկանող իրավունքներից օգտվելու հարցերը լուծելու ուղղությամբ: Վերոնշյալը համահունչ է տուժողի (տուժողի

¹⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Քամայանի գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09, Մուսանա Ասրոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12, Մինաս Մկրտչյանի և Միքայել Միքայելյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԵԴ/0110/01/12 և Ռուզան Արանյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ՇԴ/0003/11/18 որոշումները:

¹⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Ղազարյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0018/11/17 որոշումը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ, 7.1-րդ և 9-րդ կետերը:

²¹ Տուժողի իրավահաջորդ ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների մեկնաբանությունը մասնաբանման տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մինաս Մկրտչյանի և Միքայել Միքայելյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԵԴ/0110/01/12 որոշումը:

իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև պայմանավորված է վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման տեսանկյունից:

Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, Զ.Ամիրյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու և բողոքի քննությանը ներգրավելու միջնորդությունը մերժելն իրավաչափ չի կարող համարվել:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, թե Զ.Ամիրյանի տված լիազորագիրը վիճարկվող դատական ակտը կայացնելիս առկա չէր, ուստի այն բեկանելու հիմքեր չկան, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտականության հատկանիշի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտության տեսանկյունից սույն գործով էական համարվել չի կարող այն փաստը, թե Զ.Ամիրյանի տված լիազորագիրն Առաջին ատյանի դատարանի տրամադրության տակ չի եղել, հատկապես այն պայմաններում, երբ գործի փաստական տվյալները հիմք են տալիս փաստելու, որ Առաջին ատյանի դատարանը տեղեկացված է եղել դիմող Ե.Ամիրյանի դատեր Զ.Ամիրյանի՝ իրեն պատկանող իրավունքներից փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի միջոցով օգտվելու և բողոքի քննությանը որպես տուժողի իրավահաջորդ մասնակցելու՝ մտադրության կամ ցանկության մասին²²: Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանի նման մոտեցումը հանգեցրել է Զ.Ամիրյանի՝ դատարանի մատչելիության իրավունքի այնպիսի սահմանափակման, որի արդյունքում խաթարվել է նրա՝ հիշյալ իրավունքի բուն էությունը՝ վերածվելով պատրանքայինի: Այդպիսի սահմանափակումը խախտել է նաև գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի վիճարկվող որոշման իրավաչափության դատական ստուգման շրջանակներում դիմող Ե.Ամիրյանի մահից հետո փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի՝ ներկայացուցչություն իրականացնելու իրավասությանը հնարավոր է անդրադառնալ Զ.Ամիրյանին դատավարությանը մասնակից դարձնելու պայմաններում:

14. Այսպիսով, ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, փաստաբաններ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի կարգավիճակը հաստատելու հարցի համատեքստում պատշաճ գնահատման չեն ենթարկել վերոնշյալ հանգամանքները:

²² Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ փաստաբաններ Ա.Մկրտչյանը և Վ.Նիկողոսյանը դատարանում իրավասու չէին ներկայացնելու դիմող Ե.Ամիրյանի օրինական շահերը, հիմնավոր չէ:

15. Անհովիտելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից դատական ակտեր կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար²³:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր քննության ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Եվա Միխայիլի Ամիրյանի ներկայացուցիչներ Ա.Մկրտչյանի և Վ.Նիկողոսյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 17-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

²³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0653/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

7 հոկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Արմեն Նորիկի Քալաշյանի պաշտպան Լ.Վարդապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի փետրվարի 27-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 324-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 10165419 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշմամբ Արմեն Նորիկի Քալաշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

2019 թվականի հունիսի 19-ին Արմեն Քալաշյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 324-րդ հոդվածի 1-ին մասով ու 38-325-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Ա.Քալաշյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքնության մարմնի՝ 2019 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ Ա.Քալաշյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 324-րդ հոդվածի 2-րդ մասով ու 38-325-րդ հոդվածի 1-ին մասով:

2019 թվականի սեպտեմբերի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ստյանի դատարան):

2. Առաջին ստյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Քալաշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ:

Առաջին ստյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Քալաշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ՝ ոչ ավել քան՝ 7.690.000 (յոթ միլիոն վեց հարյուր ինսուսն հազար) ՀՀ դրամը՝ պատժի սկիզբը հաշվելով 2019 թվականի հունիսի 19-ից: Ա.Քալաշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Լուսինե Հարությունյանը:

3. Ամբաստանյալ Ա.Քալաշյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ թողնվել են առանց քննության: Նույն որոշմամբ մերժվել է վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ա.Քալաշյանի պաշտպան Լ.Վարդապետյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ամբաստանյալը գրկվել է պաշտպանության իրավունքի՝ փաստաբանի միջոցով պաշտպանվելու դատավարական երաշխիքից:

Այսպես, բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանը, արձանագրելով Առաջին ատյանի դատարանում գործի քննությանը ներգրավված փաստաբան Գ.Լյուդվիգյանի՝ ամբաստանյալի շահերի պաշտպանությունն իրականացնելու իրավասությունը դադարեցված լինելու մասին փաստական տվյալների բացակայությունը, հանգել է սխալ եզրահանգման:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոք բերած անձը նշել է, որ դատավճիռը հրապարակվելուց հետո՝ 2021 թվականի օգոստոսի 3-ին, ամբաստանյալն Առաջին ատյանի դատարանին միջնորդել է վերաքննիչ բողոքարկման համար անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակից պահանջել նշանակել պաշտպան, որը ձևական խոչընդոտի՝ պաշտպան Գ.Լյուդվիգյանից հրաժարվելու մասին նշումի բացակայության հիմքով, նույն թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ մերժվել է: Այնուհետև, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բավարարվել է նույն թվականի օգոստոսի 25-ին ներկայացված ամբաստանյալի համաբնույթ միջնորդությունը և նույն օրը գործը հանձնվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանին:

Անփոփելով վերոգրյալը, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ նշված հանգամանքներից ակնհայտ է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռի հրապարակումից հետո փաստաբան Գ.Լյուդվիգյանը փաստացի չի իրականացրել ամբաստանյալի պաշտպանությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքաբերը նշել է, որ ամբաստանյալի ծնողի և փաստաբան Գ.Լյուդվիգյանի միջև կնքված պայմանագրով վերջինիս իրավասությունը սահմանափակված էր բացառապես Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի շահերի պաշտպանության իրականացմամբ՝ բողոքին կից ներկայացնելով այն հաստատող փաստաթուղթը:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Վերաքննիչ բողոքը վարույթն ընդունելու և գործը դատական քննության նշանակելու մասին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 10-ի դատավճիռն ամբաստանյալ Ա.Քալաշյանին հասու է դարձել 2021 թվականի հուլիսի 30-ին, իսկ

Առաջին ատյանի դատարանում վերջինիս պաշտպանությունն իրականացնող փաստաբան Գ.Լյուդվիգյանը ստացել է 2021 թվականի հուլիսի 9-ին²:

7.1. 2021 թվականի օգոստոսի 3-ին ամբաստանյալ Ա.Քալաշյանն Առաջին ատյանի դատարանին միջնորդել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջել նշանակել հանրային պաշտպան՝ դատավճիռը բողոքարկելու նպատակով³: 2021 թվականի օգոստոսի 12-ին քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով դատարան մուտքագրված⁴ հիշյալ միջնորդության կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը, նույն թվականի օգոստոսի 16-ին, որոշում է կայացրել այն մերժելու մասին՝ իր դատական ակտը պատճառաբանելով հետևյալ կերպ. «(...) [Հաշվի առնելով, որ ամբաստանյալ Ա.Քալաշյանը Դատարանին որևէ տեղեկություն չի ներկայացրել իր անվճարունակ լինելու մասին, հաշվի առնելով, որ քրեական գործի նախաքննության և դատական քննության ընթացքում Ա.Քալաշյանը փաստաբանի ծառայությունից օգրվել է մասնավոր կարգով՝ դատարանը գրնում է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման»⁵:

7.2. 2021 թվականի օգոստոսի 26-ին դատարանում ստացված ամբաստանյալ Ա.Քալաշյանի՝ նույն թվականի օգոստոսի 25-ով թվագրված նույնաբովանդակ միջնորդությունն⁶ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բավարարվել է և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջվել ամբաստանյալ Ա.Քալաշյանի պաշտպանությունն իրականացնելու համար նշանակել պաշտպան՝ պատճառաբանելով, որ. «[Ամբաստանյալ Ա.Քալաշյանը փաստորեն հնարավորություն չունի օգրվելու փաստաբանի վճարովի ծառայությունից (...) պաշտպան ունենալու իրավունքն սպառնվելու նպատակով անհրաժեշտ է այդ պահանջով դիմել ՀՀ փաստաբանների պալատ]»⁷:

7.3. Առաջին ատյանի դատարանի պահանջի հիման վրա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի՝ 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ գործը հանձնվել է հանրային պաշտպան Մ.Ֆարմանյանին⁸:

8. Դատական վերանայման բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և պաշտպանի բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «[Առաջին ատյանի դատարանի] դատավճիռը (...) ամբաստանյալ Ա.Քալաշյանին հանձնելու նպատակով ՀՀ ԱԾ «Արևավիր» քրեակատարողական հիմնարկ սրացվել և ամբաստանյալին հանձնվել է 2021 թվականի հուլիսի 14-ին, ինչը հավասարվում է նյութերում սուկա գրությունով և սրացականով:

² Տն քրեական գործ, հատոր 5, թերթեր 144 և 146:

³ Տն քրեական գործ, հատոր 5, թերթեր 147 և 148:

⁴ Տն քրեական գործ, հատոր 5, թերթ 147:

⁵ Տն քրեական գործ, հատոր 5, թերթ 150:

⁶ Տն քրեական գործ, հատոր 5, թերթեր 151 և 152:

⁷ Տն քրեական գործ, հատոր 5, թերթ 155:

⁸ Տն քրեական գործ, հատոր 5, թերթեր 174-175:

(...) [Ամբաստանյալը 2021 թվականի օգոստոսի 3-ին միջնորդել է Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար հանրային պաշտպանի ծառայություններից օգրվելու խնդրանքով, որը Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ մերժվել է:

2021 թվականի օգոստոսի 25-ին ամբաստանյալը կրկին միջնորդել է Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար հանրային պաշտպանի ծառայություններից օգրվելու խնդրանքով, որը Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բավարարվել է և նույն օրը ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշմամբ գործը հանձնվել է պաշտպան Մ.Ֆարմանյանին: Պաշտպան Մ.Ֆարմանյանը Վերաքննիչ դատարան վերաքննիչ բողոք է ներկայացրել 2021 թվականի սեպտեմբերի 10-ին:

(...) [Քրեական գործում առկա չէ որևէ տվյալ, որ ամբաստանյալը հրաժարվել է [պաշտպան Գ.Լյուրվիգյանից] կամ, որ Գ.Լյուրվիգյանը դադարել է ամբաստանյալի պաշտպանությունն իրականացնել:

(...) [Պաշտպան Գ.Լյուրվիգյանը] (...) [Առաջին արյանի դատարանի] դատավճիռը սրացել է 2021 թվականի հուլիսի 9-ին, ինչը հավաստվում է նյութերում առկա գրությունով և հանձնման մասին հավաստագրով: Ամբաստանյալի պաշտպան Գ.Լյուրվիգյանի կողմից Վերաքննիչ դատարան վերաքննիչ բողոք չի ներկայացվել:

(...) [Հաշվի առնելով, որ քրեական դատավարությանը պաշտպանն իրականացնում է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ուստի Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատավարության ընթացքում պաշտպանի փոփոխման կամ գործի քննությանը նոր պաշտպաններ ներգրավվելու դեպքում որոշումների և դատական ակտերի բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել նախկին պաշտպանի կողմից դրանք սրանապու պահից:

Հերևաքար, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ [Առաջին արյանի] դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի դատավճռի բողոքարկման ժամկետը պետք է հաշվել ոչ թե պաշտպան Մ.Ֆարմանյանի կողմից, այլ պաշտպան Գ.Լյուրվիգյանի կողմից առաջին արյանի դատարանի դատական ակտը սրանապու պահից:

Վերոնշյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ բողոքարկման ժամկետը պետք է հաշվել պաշտպան Գ.Լյուրվիգյանի կողմից Առաջին արյանի դատարանի դատավճիռը սրանապու հաջորդող օրվանից՝ 2021 թվականի հուլիսի 8-ից, ինչի պարագայում Առաջին արյանի դատարանի դատավճռի բողոքարկման ժամկետը պաշտպանի համար վերջանում է 2021 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 24:00-ին, որը ոչ աշխատանքային օր է, ուստի բողոքարկման ժամկետի ավարտ պետք է համարել դրան հաջորդող աշխատանքային օրը՝ 2021 թվականի օգոստոսի 9-ը՝ ժամը 24:00-ը: Հերևաքար, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ պաշտպան Մ.Ֆարմանյանի [Առաջին արյանի] դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի

դատարավճիոր բողոքարկելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը պետք է մերժել»⁹:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9 . Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ամբաստանյալ Ա.Քալաշյանի պաշտպան Մ.Ֆարմանյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց ինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Իր կողմից բաց թողնված ժամկետի վերականգնման համար (...) պաշտպանը (...) միջնորդությամբ կամ ինդրանքով դիմում [է] վարույթն իրականացնող մարմնին:

3. Հարգելի պարճատով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ»:

Նույն օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ասյանի դատարանների՝ գործն ըար էության լուծող դատական ակրերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում»:

Նույն օրենսգրքի 380-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հարգելի պարճատներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակրը կայացրած դատարանի առաջ միջնորդել վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիարում դատարավճիո կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին բացատրություններ տալու համար:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները: Վերաքննիչ դատարանը բողոք ներկայացրած անձի միջնորդության հիման վրա բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով համարում է հարգելի, եթե բողոք ներկայացրած անձը հիմնավորում է, որ դատական ակրն սրանապու պահից չեն լրացել բողոքարկման ժամկետները: (...)»

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1249 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ, ի թիվս այլի, նշել է.

⁹ Տեն քրեական գործ, հատոր 5, թերթեր 178-182:

– պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է ճանաչվի հարգելի:

10. Վճռաբեկ դատարանը, դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում մշտապես ընդգծել է, որ ինքնին իրավական պաշտպանության արդյունավետության չափանիշը փոխկապակցված է նաև այդ պաշտպանությունը հայցողի կողմից սահմանված ժամկետների պահպանման հետ¹⁰: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ժամկետն անցնելուց հետո կատարված գործողություններն առաջացնում են անբարենպաստ վարության ինտենսիվներ, եթե ժամկետը չի վերականգնվում: Անդրադառնալով դատական վերանայման բողոք բերելու բաց թողնված ժամկետի վերականգնման խնդրին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տարբերակված է ժամկետը վերականգնելու երկու իրավական ընթացակարգեր: Առաջինը ենթադրում է բողոքարկման ժամկետի բաց թողումն իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի համարելու հնարավորությունը, երբ վարության իրականացնող մարմնի գործողության կամ անգործության արդյունքում անձն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել պատշաճ բողոքարկելու դատական ակտը¹¹:

Երկրորդ ընթացակարգը ենթադրում է բաց թողնված ժամկետի վերականգնումը վարության իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ, երբ պատշաճ բողոքարկումը գործնականում անհնար էր իրավական պաշտպանություն հայցողի կամքից անկախ **այլ հատուկ և օբյեկտիվ հանգամանքով**¹²: Նշված դեպքում բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը պետք է ունենա որոշակի փաստական հիմք և կոնկրետ դրսևորում՝ հնարավորություն տալով վարության իրականացնող մարմնին ողջամտության սահմաններում գնահատելու բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառի և դատական ակտի վիճարկման հնարավորության հարաբերակցությունը, այսինքն՝ արդյո՞ք առկա է բողոքն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու հարգելի պատճառ, թե ոչ: Անդրադարձ կատարելով փոփոխված պաշտպանով դատական վերանայման բողոք ներկայացնելու դեպքում բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնմանն ուղղված դրույթների նպատակային և պատշաճ կիրառմանը, հաշվի առնելով նաև վարության ներգրավված մասնակիցների իրավունքները և պարտականությունները դատավարական կարգավիճակով սահմանազատված լինելը, Վճռաբեկ դատարանը կարևոր

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Նսիրա Գրիգորյանի գործով 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԴ/0684/11/18 որոշումը, կետ 17:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սևակ Սարգսյանի գործով 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ ԿԴ/0089/12/17 որոշումը, կետ 14:

¹² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վերգինե Բեկանյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԱԲԴ/0012/11/16 որոշումը, կետ 15:

է համարում արձանագրել, որ քրեական վարույթին նոր պաշտպանի մասնակցության պարագայում դատական ակտի բողոքարկման ժամկետը հաշվարկելիս, որպես կանոն ելակետ պետք է ընդունել նախկին պաշտպանի կողմից վիճարկվող որոշումը ստանալու օրը: Այսինքն՝ քրեական վարույթին նոր պաշտպանի մասնակցությունն **ինքնին** չի կարող վկայել քննարկվող ընթացակարգով բողոքարկման ժամկետի բացթողման հարգելիության չափանիշը հաղթահարված գնահատելու համար: Սակայն այս համատեքստում անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել վարույթին նոր պաշտպան ներգրավելու ուղղությամբ կողմի դրսևորած վարքագիծը, ձեռնարկված միջոցները և կատարված գործողությունները, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հիշյալ մոտեցումը կոչված է քրեական վարույթի ընթացքում երաշխավորել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– ամբաստանյալ Ա.Քալաշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հունիսի 10-ին կայացրել է մեղադրական դատավճիռ¹³,

– հիշյալ դատավճիռն ամբաստանյալ Ա.Քալաշյանին հասու է դարձել 2021 թվականի հուլիսի 30-ին, իսկ վերջինիս պաշտպանությունն իրականացնող փաստաբան Գ.Լյուդվիգյանը ստացել է 2021 թվականի հուլիսի 9-ին¹⁴,

– Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ, անվճարունակության վերաբերյալ տեղեկություններ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ, մերժվել է հիշյալ դատավճիռը բողոքարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից հանրային պաշտպան պահանջելու ամբաստանյալ Ա.Քալաշյանի՝ նույն թվականի օգոստոսի 3-ի միջնորդությունը, որը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով դատարանում ստացվել է 2021 թվականի օգոստոսի 12-ին¹⁵,

– ամբաստանյալ Ա.Քալաշյանի՝ 2021 թվականի օգոստոսի 25-ի նույնաբովանդակ միջնորդության քննության արդյունքում, Առաջին ատյանի դատարանը, վերջինիս անվճարունակությամբ պայմանավորված, 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջել է ամբաստանյալ Ա.Քալաշյանի պաշտպանությունն իրականացնելու համար նշանակել հանրային պաշտպան: Հիշյալ պահանջի հիման վրա նույն օրը գործը հանձնվել է հանրային պաշտպան Մ.Ֆարմանյանին¹⁶,

¹³ Տե՛ս, սույն որոշման 2-րդ կետը:

¹⁴ Տե՛ս, սույն որոշման 7-րդ կետը:

¹⁵ Տե՛ս, սույն որոշման 7.1-րդ կետը:

¹⁶ Տե՛ս, սույն որոշման 7.2 և 7.3 կետերը:

- Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ դատավճռի դեմ պաշտպան Մ.Ֆարմանյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ միջնորդելով վերականգնել բողոքարկման բաց թողնված ժամկետը,

- Վերաքննիչ դատարանը, բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնման հարցը լուծելիս, արձանագրել է, որ քրեական վարույթին նոր պաշտպանի մասնակցության դեպքում դատական ակտի բողոքարկման ժամկետը հաշվարկելիս, որպես ելակետ պետք է ընդունել նախկին պաշտպանի կողմից վիճարկվող որոշումը ստանալու օրը: Տվյալ դեպքում, ստորադաս դատարանում ամբաստանյալի պաշտպանությունն իրականացնող փաստաբան Գ.Լյուդվիգյանը վիճարկվող դատավճիռը ստացել է 2021 թվականի հուլիսի 9-ին: Ընդ որում, վերջինիս իրավասությունը դադարեցված լինելու վերաբերյալ փաստական տվյալներ գործի նյութերում բացակայում են և նրա կողմից վերաքննիչ բողոք չի ներկայացվել: Մինևույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանի պահանջի հիման վրա գործի քննությանը ներգրավված հանրային պաշտպան Մ.Ֆարմանյանը վերաքննիչ բողոք է բերել 2021 թվականի սեպտեմբերի 10-ին: Նշված լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ պաշտպան Մ.Ֆարմանյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է պաշտպանի համար սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո, իսկ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման¹⁷:

12. Սույն որոշման 10-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառելով նախորդ կետում վկայակոչված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման ժամկետն անցնելուց հետո Առաջին ատյանի դատարանի հիշյալ դատավճիռը բողոքարկելու պաշտպանի հնարավորությունը գնահատելիս Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ եզրահանգման: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ վարույթի արդարության ընդհանուր գնահատման շրջանակներում ստորադաս դատարանը պետք է գնահատեր, թե պաշտպանի համապատասխան միջնորդության փաստական հիմքի հետ սերտ փոխկապակցված ներքոհիշյալ հանգամանքների պայմաններում արդյո՞ք պաշտպան Մ.Ֆարմանյանին գործնականում ընձեռվել է պատշաճ բողոքարկման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը նախնառաջ արձանագրում է, որ չնայած ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կողմից կազմված ստացականում ամբաստանյալ Ա.Քալաշյանի կողմից վիճարկվող դատավճռի ստացման օր է նշվել 2021 թվականի հուլիսի 14-ը, սակայն այն վերջինիս փաստացի տրամադրվել է նույն թվականի հուլիսի 30-ին, ինչը հավաստվում է հիշյալ ամսաթվով թվագրված ամբաստանյալի ստորագրությամբ: Այսինքն, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 10-ի դատավճիռը ամբաստանյալ Ա.Քալաշյանին հասու է դարձել նույն թվականի հուլիսի 30-ին, սակայն այդ հանգամանքը հիմնավորող ապացույցը՝ հիշյալ ստացականը, Վերաքննիչ դատարանը պատշաճ չի ուսումնասիրել:

¹⁷ Տե՛ս, սույն որոշման 8-րդ կետը:

Միաժամանակ, ամբաստանյալ Ա.Քալաշյանը, ստանալով դատական ակտը, անմիջապես քայլեր է ձեռնարկել հանրային պաշտպանի միջոցով այն բողոքարկելու ուղղությամբ, ընդ որում՝ ոչ միայն իր, այլև պաշտպանի վերաքննիչ բողոքարկման ժամկետում: Մինչդեռ՝ 2021 թվականի օգոստոսի 3-ով թվագրված հանրային պաշտպան պահանջելու վերաբերյալ ամբաստանյալի միջնորդությունն Առաջին աստանի դատարանում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով ստացվել է նույն թվականի օգոստոսի 12-ին: Այդ կապակցությամբ, անվճարունակության վերաբերյալ տեղեկություններ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ, դատարանն օգոստոսի 16-ին մերժման որոշում է կայացրել: Ամբաստանյալի՝ 2021 թվականի օգոստոսի 25-ով թվագրված **նույնաբովանդակ** երկրորդ միջնորդությունն Առաջին աստանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բավարարվել է և նույն օրը գործը հանձնվել է հանրային պաշտպան Մ.Ֆարմանյանին:

Վերոշարադրյալ գործոնների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառի և դատական ակտի վիճարկման հնարավորության գնահատման տեսանկյունից սույն գործով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ պաշտպան Մ.Ֆարմանյանի կողմից դատական վերանայման բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը մեծապես ընդգրկում է պաշտպանության իրավունքը հանրային պաշտպանի միջոցով իրացնելուն ուղղված ամբաստանյալի գործողությունների ժամանակահատվածը: Տվյալ դեպքում, անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն իրացնելուն ուղղված ամբաստանյալ Ա.Քալաշյանի վարքագիծը գնահատելիս Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինս գործել է բարեխղճորեն և հանրային պաշտպանի ու ներգրավումը պայմանավորված չի եղել նրա վարքագծով: Հետևապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ժամանակին ապահովված չլինելը գործնականում անհնարին է դարձրել պաշտպանի՝ պատշաճ բողոքարկման հնարավորությունը:

Վերոգրյալ պայմաններում փաստել, որ պաշտպան Մ.Ֆարմանյանի կողմից բողոքարկման ժամկետի բացթողումը կապված չէր վարույթն իրականացնող մարմնի գործողությամբ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վտանգում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև ողջամիտ համամասնության պահպանման երաշխիքը:

Անդրադարձ կատարելով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, թե Առաջին աստանի դատարանում պաշտպանությունն իրականացնող փաստաբան Գ.Լյուդվիգյանի իրավասությունները դադարեցված լինելու վերաբերյալ փաստական տվյալներ բացակայում են, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստանի դատարանի դատավճիռը ստանալուց հետո ամբաստանյալ Ա.Քալաշյանի դոսևորած վարքագիծը բնութագրող թվարկված փաստական տվյալները բավարար են հակառակի վերաբերյալ ողջամիտ եզրահանգման համար:

14. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդար դատաքննության իրավունքի մասնավոր տարրը համարվող դատարանի մատչելիության իրավունքի ապահովման տեսանկյունից, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, պաշտպան Մ.Ֆարմանյանի՝ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելն իրավաչափ չի կարող համարվել, քանի որ առկա է բողոքարկման ժամկետի բացթողումն իրավունքի ուժով հարգելի համարելու օբյեկտիվ պատճառ:

Հիմք ընդունելով արված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Քալաշյանի պաշտպան Մ.Ֆարմանյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու ու գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

23.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/0483/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

17 հոկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արմեն Ռազմիկի Շաբոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հունվարի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2010 թվականի մայիսի 19-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58207510 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ Արմեն Շաբոյանի վերաբերյալ վերոնշյալ քրեական գործի վարույթը կարճվել է՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ՝ նաև Համաներման ակտ) 6-րդ կետի 2-րդ ենթակետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով:

1.1. 2020 թվականի ապրիլի 8-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի կողմից որոշում է կայացվել վերոնշյալ որոշման բողոքարկման ժամկետը վերականգնելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի՝ 2020 թվականի մայիսի 5-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հուլիսի 19-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու որոշման դեմ Ա.Շաբոյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Դիմող Ա.Շաբոյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Ա.Շաբոյանի իրավունքների խախտումը:

3. Դատախազ Ա.Փանոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հունվարի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից օրենքով սահմանված ժամկետում բողոքի պատասխան չի ներկայացվել²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, ուստի ենթակա է բեկանման: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները վիսալ են գնահատել գործով հաստատված հանգամանքները, ինչի արդյունքում անուղղակիորեն առաջացրել են Ա.Շաբոյանին քրեական պատասխանատվությունից կամ պատժից առանց

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

² Տե՛ս, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.4-րդ հոդվածը:

հիմքերի ազատելու պարտականություն, ինչը քրեադատավարական օրենքի խախտում է, որը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Այսպես՝ բողոքի հեղինակն ընդգծել է, որ ստորադաս դատարանները 2011 թվականին Ա.Շաբոյանի նկատմամբ համաներում կիրառելու արդյունքում նրա իրավունքների խախտման փաստը պայմանավորել են վերջինիս նկատմամբ 2009 թվականին համաներում կիրառված լինելու հանգամանքով, մինչդեռ վերջին հանգամանքը հենց Ա.Շաբոյանի ներկայացուցչի բողոքի հիման վրա մեկ այլ գործով դատարանների կողմից հաստատված չի համարվել, ինչն ինքնին բացառում էր 2011 թվականին նրա նկատմամբ համաներում կիրառելն անօրինական ճանաչելու հնարավորությունն այնքանով, որքանով փաստորեն նրա նկատմամբ 2011 թվականին համաներում կիրառելիս նախորդող 10 տարիների ընթացքում համաներում չի կիրառվել:

5.1. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշումն ընդհանրապես չի պատճառաբանել, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի փաստարկներին և միայն վերացականորեն արձանագրել է, որ Առաջին ստյանի դատարանը կատարել է գործով ձեռք բերված փաստական տվյալների ճիշտ վերլուծություն այն դեպքում, երբ դատական ակտից պարզ չէ, թե որ փաստական հանգամանքների մասին է խոսքը և ինչու են այդ փաստական հանգամանքները բավարար նման եզրահանգման գալու համար:

6. Վերոշարադրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 12-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի րնության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2011 թվականի հուլիսի 19-ի որոշման համաձայն. «(...) Արմեն Շաբոյանի (...) գործողություններում կան ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներ, սակայն նկարի ունենալով, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 26.05.2011թ. ընդունվել է համաներում հայրարարելու որոշում, որի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն անհրաժեշտ է կարճել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կարարած հանցագործությունների վերաբերյալ նախաքննության մարմինների վարույթում գրնվող քրեական գործերը, որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կարարելու մեջ, որոնց համար նախատեսված է պարիժ՝ ոչ ավելին, քան երեք արի ժամկետով ազարագրկում, Արմեն Շաբոյանը համաձայնվել է, որ իր նկարմամբ կիրառվի համաներում (...) որոշեցի Արմեն Ռազմիկի Շաբոյանի (...) վերաբերյալ թիվ 58207510 քրեական գործի վարույթը կարճել (...)»³:

³ Տես, նյութեր, թերթեր 62-63:

8. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ին կայացված և 2018 թվականի նոյեմբերի 14-ին օրինական ուժի մեջ մտած դատավճռով Արմեն Ռազմիկի Շաբոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու⁴:

9. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած՝ 2020 թվականի փետրվարի 7-ի թիվ ԵԴ/0092/11/19 որոշմամբ, որով բավարարվել է Արմեն Շաբոյանի իրավունքների խախտումը ճանաչելու վերաբերյալ փաստաբան Հ.Հարությունյանի բողոքը, արձանագրվել է հետևյալը. «(...) [2009 թվականի հունիսի 20-ի ՀՀ ազգային ժողովի համաներում հայրարարելու մասին որոշումից] պարզ է դառնում, որ համաներման կիրառման համար այլընտրանքային պայրիժների կատարման համապատասխան ստորաբաժանման ղեկավարը պետք է կայացներ որոշում, որն էլ իր հերթին անհրաժեշտ է հաստատվեր դատախազի կողմից: Իսկ րվյալ պարագայում Դատարանի փրամադրության րակ առկա է ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿՄ Շիրակի բաժանմունքի առաջարար մասնագետի կողմից կազմված միայն հաշվառման քարտ, որի վրա ձեռագիր լրացված է Արմեն Շաբոյանի անձնական րվյալները] և կատարված է նշում, որ վերջինը համաներման կիրառմամբ 2009 թվականի հուլիսի 18-ին հանվել է հաշվառումից, սակայն որևէ կերպ չի հարակցվում, թե համաներման սկսի որ դրույթն է կիրառվել, ում կողմից է որոշումը կայացվել, այն արդյոք հաստատվել է դատախազի կողմից և հանձնվել է Արմեն Շաբոյանին, թե ոչ: Ավելին՝ հաշվառման քարտը կազմվել է ոչ թե բաժնի ղեկավարի, այլ ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿՄ Շիրակի բաժանմունքի առաջարար մասնագետի կողմից, այն էլ՝ ձևաթղթի վրա ձեռագիր լրացնելով և առանց կնիքելու:

Այսինքն՝ համաներում կիրառելու մասին համապատասխան որոշման բացակայությունը կասկածի րակ է առնում դրա երևել գոյություն ունենալու հանգամանքը (...):

Ինչ վերաբերում է Արմեն Շաբոյանի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրում առկա րեղելկարվությանը, սպա Դատարանը (...) գրնում է, որ այս դեպքում միայն րեղելկանքը բավարար չէ հաստատելու համար 2009 թվականին համաներում կիրառված լինելու փաստը, բացի այդ, րեղելկանքում առկա են որոշակի անճշտություններ.

(...)

Պետք է նկատել, որ հաշվառման քարտում նշված է, որ Արմեն Շաբոյանի պարժի ժամկետի ավարտը համարվում է 2009 թվականի հուլիսի 18-ը, իսկ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրով նման ժամկետ է

⁴ Տե՛ս, www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, Արմեն Շաբոյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/0147/01/17 դատավճիռը:

նշված 2009 թվականի հուլիսի 8-ը, ինչից հետևում է, որ երկու փաստաթղթերից մեկում առնվազն առկա է անճշտություն:

Բացի այդ, 2011 թվականի մայիսի 26-ի ՀՀ ազգային ժողովի Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին որոշման 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված էր համաներումը չկիրառել կրկին դիտարկության հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ վերջին տարի տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա պարիժը կրելուց ազատել են: Հետևաբար, Դատարանն արձանագրում է, որ եթե 2009 թվականին ընդունված համաներումն Արմեն Շարոյանի նկատմամբ արդեն իսկ կիրառվել էր, ապա 2011 թվականի համաներման կիրառման համար, առերևույթ, առկա էր 10 տարվա կիրառելիության արգելք:

(...)

Այսպիսով՝ Դատարանը գալիս է այն հետևության, որ համաներում կիրառված լինելու վերաբերյալ ներկայացված տվյալները հակասական են և իրավական ուժի առումով ոչ բավարար, որպիսի պայմաններում այլ բան չի մնում, քան արձանագրելու, որ Արմեն Շարոյանի նկատմամբ 2009 թվականին համաներում կիրառված լինելու հանգամանքը չի հաստատվում (...)⁵:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշման համաձայն. «(...) Դատարանն արձանագրում է, որ թիվ 58207510 քրեական գործով Ա.Շարոյանի նկատմամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելը եղել է ոչ իրավաչափ, այն պարզապես անօրինակ էր, որ 2011թ. ԱԺ կողմից ընդունված համաներման սկզբը պարունակել է սահմանափակումներ, որոնք վերաբերելի են եղել նաև Ա.Շարոյանին, մասնավորապես՝ ԱԺՌ-277-Ն «Համաներում հայտարարելու մասին» որոշման 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 2-րդ կետը սահմանում էր, որ «Համաներումը չկիրառել կրկին դիտարկության հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ վերջին տարի տարվա ընթացքում պարիժը կրելուց ազատել են Հայաստանի Հանրապետության Նախագահի ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա», իսկ ինչպես պարզ է դառնում առկա նյութերի ուսումնասիրությունից Ա.Շարոյանը՝ 03.02.2009թ. դարավճռով նշանակված տուգանքի ձևով պարժից ազատվել է համաներման կիրառմամբ, հետևաբար 2011թ. թիվ 58207510 քրեական գործով համաներման հիմքով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման որոշմամբ խախտվել է անձի՝ 2018թ. ընդունված համաներման սկզբը իր նկատմամբ կիրառելու իրավունքը: (...)⁶»:

⁵ Տե՛ս, www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, Արմեն Շարոյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 7-ի թիվ ԵԴ/0092/11/19 որոշումը:

⁶ Տե՛ս, նյութեր, թերթեր 68-72:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 12-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ (...) Առաջին արյանի դատարանը կարարել է գործով ձեռք բերված փաստական փյուռքների ճիշտ վերլուծություն, ինչի կապակցությամբ հանգել է իրավաչափ ու հիմնավոր հետևության (...): Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ 2011 թվականի հուլիսի 19-ի դրությամբ, Արմեն Շաբոյանի նկարումներ առկա է եղել համաներման կիրառման սահմանափակում: Մասնավորապես՝ 2009 թվականի հունիսի 19-ին Արմեն Շաբոյանը համաներման կիրառմանը ազարվել է պարժի կրումից, հետևաբար 2011 թվականի մայիսի 26-ի Համաներման մասին թիվ ԱԺՈ-277-Ն որոշումը նրա նկարում կիրառելի չէ:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ միճարկվող դատական ակտը հակասում է Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 07-ի որոշմանը արձանագրված դիրքորոշումներին, ապա Վերաքննիչ դատարանն այն ընդունելի չի համարում և արձանագրում է, որ բողոքարկի հիշարակած դատական ակտով ընդամենը արձանագրվել է՝ Արմեն Շաբոյանի նկարում Համաներման մասին որոշման կիրառված լինել-չլինելու հանգամանքը հաստատելու հաստատության բացակայությունը (որպիսի հանգամանքը ներկայացված է հենց վերաքննիչ բողոքում): (...)»⁷:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք դիմող Ա.Շաբոյանի իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կարարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...)»:

14. Վերոնշյալ նորմի կապակցությամբ Վճարելի դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

⁷ Տե՛ս, նյութեր, թերթեր 101-107:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին⁸: Այլ խոսքով՝ մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է պարզի, թե պահպանվել են արդյո՞ք քրեադատավարական օրենսդրության պահանջները, եթե ոչ, ապա դրանց չպահպանման հետևանքով խախտվել են արդյո՞ք անձի իրավունքներն ու ազատությունները:

14.1. Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու փուլի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է, ի թիվս այլոց, քննարկման առարկա դարձնի նաև այն հարցը, թե արդյո՞ք ճիշտ է կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված այս կամ այն հիմքը և խախտում հայտնաբերելու դեպքում իր որոշմամբ արձանագրի վարույթը բացառող հանգամանքի սխալ կիրառման փաստը՝ հիմքեր ստեղծելով անձի խախտված իրավունքը վերականգնելու համար⁹:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման սկզբով կարող է ազատվել քրեական պարտասխանարվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը*»:

16. Համաներման ինստիտուտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ համաներման իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԳՆ/0003/11/08, Վլադիմիր Բաղդասարյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԳԿ/0002/01/11, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0016/11/15 որոշումները:

⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Լուրիս Զաքարյանի գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԱԲԳ/0086/11/17 որոշման 16-րդ կետը:

մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատվածությունը: Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսվում են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության¹⁰:

17. Համաներման ակտի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» կետի համաձայն՝ *«Համաներմումը չկիրառել կրկին դիտարկության հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, որոնց (...) վերջին տարր տարվա ընթացքում (...) պարտիժը կրելուց ազատել են Հայաստանի Հանրապետության Նախագահի ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներմում հայտարարելու մասին որոշման հիման վրա (...)»:*

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով Ա.Շաբոյանի վերաբերյալ թիվ 58207510 քրեական գործի վարույթը կարճվել է¹¹:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքն Առաջին աստիճանի դատարանը բավարարել է՝ գտնելով, որ Ա.Շաբոյանի նկատմամբ քրեական գործով վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը եղել է ոչ իրավաչափ՝ այն հիմնավորմամբ, որ 2011 թվականին ընդունված համաներման ակտը պարունակել է սահմանափակումներ, որոնք վերաբերելի են եղել նաև Ա.Շաբոյանին, մասնավորապես՝ վերջինս 2009 թվականի փետրվարի 3-ի դատավճռով նշանակված պատժից ազատվել է համաներման կիրառմամբ, հետևաբար 2011 թվականի մայիսի 26-ի Համաներման ակտը նրա նկատմամբ

¹⁰ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Վարուժան Ավերիսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԳ3/0013/01/11, *Գարիկ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ՏԳ/0088/01/11, *Լևոն Խոսրոյիսյանի* և *Արսյուն Ալեքսանյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԳ/0046/01/14, *Արիզ Տիգրանյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԳ/0501/01/18 որոշումները:

¹¹ Տե՛ս, սույն որոշման 1-ին և 7-րդ կետերը:

կիրառելի չէր, իսկ արդյունքում խախտվել է անձի՝ 2018 թվականին ընդունված համաներման ակտն իր նկատմամբ կիրառելու իրավունքը¹²:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը կատարել է գործով ձեռք բերված փաստական տվյալների ճիշտ վերլուծություն, ինչի կապակցությամբ հանգել է իրավաչափ ու հիմնավոր հետևություն: Մինևույն ժամանակ անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ վիճարկվող դատական ակտը հակասում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ արձանագրված դիրքորոշումներին, Վերաքննիչ դատարանն այն ընդունելի չի համարել՝ նշելով, որ հիշատակած դատական ակտով ընդամենն արձանագրվել է Ա.Շաբոյանի նկատմամբ համաներում կիրառված լինել-չլինելու հանգամանքը հաստատելու հնարավորության բացակայությունը¹³:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ ստորադաս դատարանները բողոքարկվող որոշման ոչ իրավաչափ լինելու մասին իրենց հետևություններն ըստ էության պայմանավորել են Ա.Շաբոյանի նկատմամբ 2009 թվականին համաներում կիրառված լինելու հանգամանքով:

19. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները բավարարել են դիմողի ներկայացուցիչների բողոքը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնել Ա.Շաբոյանի իրավունքների ենթադրյալ խախտումները՝ առանց պատշաճ իրավական գնահատականի արժանացնելու այն, որ վիճարկվող որոշումների պատճառաբանությունների հիմքում ընկած՝ Ա.Շաբոյանի նկատմամբ 2009 թվականին համաներում կիրառված լինելու հանգամանքը մեկ այլ գործով վիճարկվել և ի վերջո օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված չի համարվել: Այսպես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ 2020 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ արձանագրել է, որ Ա.Շաբոյանի նկատմամբ 2009 թվականին համաներման կիրառման հանգամանքը գործի քննության արդյունքում չի հաստատվել¹⁴: Ընդ որում՝ այս առումով Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում հատկապես ընդգծել, որ այդ հանգամանքը վիճարկվել ու հաստատված չի համարվել՝ հենց Ա.Շաբոյանի ներկայացուցչի բողոքի հիման վրա և պահանջով: Հետևաբար, երբ դիմողի կողմից վիճարկվելու արդյունքում կայացվել և օրինական ուժի մեջ է մտել դատական ակտ, որով 2009 թվականին Ա.Շաբոյանի նկատմամբ համաներում կիրառված լինելու հանգամանքը չի հաստատվել, ապա նման պայմաններում հերքվում են նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հուլիսի 19-ի՝ Ա.Շաբոյանի վերաբերյալ քրեական

¹² Տե՛ս, սույն որոշման 10-րդ կետը:

¹³ Տե՛ս, սույն որոշման 11-րդ կետը:

¹⁴ Տե՛ս, սույն որոշման 9-րդ կետը:

գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման ոչ իրավաչափ լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները: Եվ այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկին, որ Ա.Շաբոյանի նկատմամբ 2009 թվականին համաներում կիրառված լինելու հանգամանքը մեկ այլ գործով դատարանների կողմից հաստատված չհամարելն ինքնին բացառում էր 2011 թվականին նրա նկատմամբ համաներում կիրառելն անօրինական ճանաչելու հնարավորությունն այնքանով, որքանով փաստորեն նրա նկատմամբ 2011 թվականին համաներում կիրառելիս նախորդող տասը տարիների ընթացքում համաներում չի կիրառվել¹⁵:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դիմող Ա.Շաբոյանի իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Անփոփելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք են ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը քեկանելու համար: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով, որ 2009 թվականին Ա.Շաբոյանի նկատմամբ համաներում կիրառված չլինելու հանգամանքը հաստատված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ա.Շաբոյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Ա.Շաբոյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի

¹⁵ Տե՛ս, սույն որոշման 5-րդ կետը:

24-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հունվարի 12-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Դիմող Ա.Շարոյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0134/07/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

17 հոկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արտակ Ասպարիկի Բաղիկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությունում 2020 թվականի սեպտեմբերի 24-ին հարուցվել է թիվ 83192320 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2021 թվականի հունվարի 21-ին հարուցվել է թիվ 58200621 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 312-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2021 թվականի հունվարի 22-ին վերոնշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 83192320 համարով:

2. Նախաքննության մարմինը 2021 թվականի հունվարի 23-ին միջնորդություն է հարուցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով թույլատրել քրեական վարույթն իրականացնող մարմին, այդ թվում՝ քննչական խմբի քննիչներին, ազգային անվտանգության ծառայության օպերատիվ աշխատակիցների հետ, 2021 թվականի հունվարի 23-ից հունվարի 28-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում, խուզարկություն կատարել Արտակ Բաղիկյանի՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Է.Պետրոսյան փողոցի 1/1/5, 1/1/6, 1/1/7 հասցեի տարածքում գտնվող՝ «Էյ. Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատասենյակում, իսկ առկայության դեպքում՝ նաև դրա բաղկացուցիչ այլ մասերում:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 23-ի որոշմամբ, ներկայացված միջնորդությունը բավարարվել է, և թույլատրվել միջնորդությամբ նշված ժամանակահատվածում, մեկ անգամ խուզարկություն կատարել Արտակ Բաղիկյանի՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Է.Պետրոսյան փողոցի 1/1/5, 1/1/6, 1/1/7 հասցեի տարածքում գտնվող՝ «Էյ. Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատասենյակում, իսկ առկայության դեպքում՝ նաև դրա բաղկացուցիչ այլ մասերում:

4. Պաշտպան Հ.Ենոքյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մարտի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 23-ի որոշումը՝ հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումները:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի պահանջները,

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

քննության է առել խուզարկության մասին որոշման դեմ ժամկետանց բողոքը և անտեսելով բնակարանում խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդության մեջ ներկայացված՝ ստուգման և գնահատման հնարավորություն տվող փաստական տվյալները, արձանագրել է, որ Առաջին առյանի դատարանի որոշմամբ թույլ է տրվել խախտում:

6.1. Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ խուզարկությունը կատարվել է 2021 թվականի հունվարի 26-ին և կատարման պահից շահագրգիռ անձին հայտնի է եղել խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման մասին, նա ծանոթացել է որոշման ամբողջ տեքստին, այսինքն՝ որոշումը հրապարակվել է: Հետևաբար, նշված որոշման բողոքարկման տասնօրյա ժամկետը հոսել է 2021 թվականի հունվարի 26-ից, և 2021 թվականի փետրվարի 15-ին ներկայացված բողոքը եղել է ժամկետանց: Ուստի, ըստ բողոքաբերի՝ այն պետք է թողնվեր առանց քննության:

6.2. Անդրադառնալով խուզարկությունը թույլատրելու մասին որոշման օրինականությանը և հիմնավորվածությանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, Եվրոպական դատարանի վճիռներ, բողոքաբերը նշել է, որ խուզարկության կատարման փաստական հիմք կարող են հանդես գալ, որպես կանոն, քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին՝ բողոքաբերը նշել է, որ դրանք ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկաների կամ անձանց գտնվելու վերաբերյալ, հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 22-ի որոշումը մասնակիորեն՝ պատճառաբանական մասով բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հազամանքները.

8. 2020 թվականի նոյեմբերի 17-ի՝ ապրանքագիտական, հեմոլոգիական և հետքաբանական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ 2020 թվականի օգոստոսի 19-ին թիվ «FZ-717» ավիաչվերթով «Կարաբրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ Արաբական Միացյալ Էմիրություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված և

2020 թվականի օգոստոսի 20-ի թիվ 05100011/200820/0019679 ապրանքների հայտարարագրով հայտարարագրված՝ 0.355368 նետտո քաշով, 1776.84 մետր կարատ քաշով մշակված ադամանդների ընդհանուր շուկայական արժեքը, 2020 թվականի օգոստոսի 19-ի դրությամբ, կազմել է շուրջ 670.808.781 ՀՀ դրամ²:

8.1. 2020 թվականի նոյեմբերի 19-ի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի պետի գրության համաձայն՝ Արմեն և Արտակ Բաղիկյանները հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» և «Կարաբրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փաստացի սեփականատերերը:

8.2. Նույն գրության համաձայն՝ սույն գործով, ի թիվս այլնի, իրականացվել են նաև «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Արտաքին դիտում» և «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ³:

8.3. 2021 թվականի հունվարի 22-ի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի պետի գրության համաձայն՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում Կոտայքի մարզ, ք.Արովյան, Է.Պետրոսյան փողոց, շենք 1/1/5, 1/1/6 և 1/1/7 հասցեում, որտեղ գտնվում է նաև ընկերության սեփականատեր Ա.Բաղիկյանի աշխատասենյակը⁴:

9. Առաջին ատյանի դատարանի՝ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին որոշման համաձայն՝ «(...) [Արդյակ] Բաղիկյանի՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» ՍՊ ընկերության Կոտայքի մարզի Արովյան քաղաքի Է.Պետրոսյան փողոցի 1/1/5,1/1/6,1/1/7 հասցեի տարածքում գտնվող «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» ՍՊ ընկերության աշխատասենյակում, իսկ առկայության դեպքում նաև դրա բաղկացուցիչ այլ մասերում կարող [են] հայտնաբերվել ադամանդյա քարերի, դրանց հումքի վերաբերյալ հաշվապահական փաստաթղթեր, թանկարժեք քարերի ձեռքբերման, գնման, արժեքների վերաբերյալ փաստաթղթեր, դրանց ներմուծման, արտահանման, տեղափոխման, մաքսագերծման վերաբերյալ փաստաթղթեր, տարբեր գրառումներ, ինչպես նաև այլ առարկաների համակարգիչներ, էլեկտրոնային կրիչներ, բջջային հեռախոսներ, որոնց մեջ պարունակվում են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք քրեական գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն և այն հայտնաբերելու ու վերցնելու համար անհրաժեշտ է 2021 թվականի հունվարի 23-ից 2021 թվականի հունվարի 28-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի, իսկ անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ հեղափոխության մարմնի կողմից վերը նշված հասցեում կարարել խուզարկություն (...)»⁵:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 21-39:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 14-18:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 49:

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-9:

10. Վերաքննիչ դատարանը 2021 թվականի մարտի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը «(...) [Սույն] դատարան գործի նյութերը և (...) փաստական փյախները վկայում են այն մասին, որ Առաջին աբյանի դադարանին չեն ներկայացվել բավարար ապացույց կամ փաստական փյախ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ իրավաչափ հետևության հանգել այն մասին, որ անձի բնակարանի անձեռնախելիության իրավունքը սահմանափակելու մասին Քննիչի միջնորդությունն իրավաչափ է, դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ենթադրյալ հանցագործությունը բացահայտելու քրեական հետապնդման մարմնի պարտավորության կատարմամբ, նախատեսված է օրենքով և ենթակա է բավարարման:

Մասնավորապես նախ հարկ է նշել, որ Առաջին աբյանի դադարանի դատարան ակրը բավարար չափով պարճատարանված և կոնկրետացված չէ: Անհականախի է, ինչ փաստական փյախների հիման վրա է Առաջին աբյանի դադարանը հանգել համապարասիան հետևության: Տվյալ դեպքում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ որոշակի մասով խուզարկության փաստական հիմքի վերաբերյալ փյախներ են պարունակում ենթադրյալ օպերատրիվ հետախուզական միջոցառումները: Մակայն, փյախ դեպքում օպերատրիվ-հետախուզական գործունեության փյախի գնահատումն անհնար է (...) և այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ: Ի դեպ ներկայացված մյուս փաստական փյախները, խուզարկության հիմքին վերաբերվող փաստական փյախների մասով, բավարար չեն ենթադրյալ օպերատրիվ հետախուզական փյախները արուզելու և համապարասիան հանգամանքները հասարարված համարելու համար:

(...) Վարության իրականացնող մարմնի կողմից Առաջին աբյանի դադարան չեն ներկայացվել բավարար փյախներ, ապացույցներ, որոնք ողջամորոնեն կարող էին հանգեցնել նրան, որ համապարասիան վայրում հնարավոր է լինեն միջնորդության մեջ նշվածը, դրանք կարող են առնչություն ոնենալ քրեական գործին և խուզարկություն կարարելու հասարակական շահը գերակա է նրա բնակարանի անձեռնախելիության օրենքով երաշխավորված իրավունքից, այն արդարացված է, հետապնդում է օրինական նպարակներ և այդ նպարակներին հասնելը եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

(...)

Խուզարկություն կարարելը թույլարրելիս Առաջին աբյանի դադարանը չի պահպանել անձի բնակարանի անձեռնախելիության իրավունքի սահմանափակմանն առնչվող ներպերական օրենսդրությամբ և Հայասրանի Հանրապերության մասնակցությամբ գործող միջազգային իրավական ակերերով ամրագրված պահանջները: Մասնավորապես Առաջին աբյանի դադարանը, որպես խուզարկության կարարման բավարար հիմք գնահատելով քննիչի ներկայացրած գրությունում մարաննշված օպերատրիվ փյախները, չի կարարել խուզարկությունը թույլարրելու համար վերաբերելի և բավարար հիմքեր նշելու իր պարտականությունը, որի արդյունքում բնակարանի անձեռնախելիության իրավունքին միջամրությունը եղել է ոչ արդարացված և հանգեցրել է անձի

քննարանի անձեռնմխելիության իրավունքի անհարկի սահմանափակման և խախտման:

(...)

Այլ կերպ՝ Առաջին արյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ (...) որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...): Մակայն հաշվի առնելով, որ բողոքարկված դատական ակտի գործունեությունը կրել է ժամանակավոր բնույթ՝ 2021 թվականի հունվարի 23-ից 2021 թվականի հունվարի 28-ը ներառյալ (...), այլ կերպ՝ բողոքարկված դատական ակտը եղել է ժամանակավոր, կորցրել է իր իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել է իրավաբանորեն գոյություն ունենալուց, ուստի այն չի կարող բեկանվել (...): Հետևաբար վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ բողոքարկված դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանի՝ սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումները (...):»⁶:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդության փաստական հիմքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի քննարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ քննարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գրնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գրնելու և վերցնելու համար (...):»:

13. Վճռաբեկ դատարանը, Մեպոի Թադևոսյանի և Միրուն Նաջարյանի գործով անդրադառնալով բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքին, նշել է, որ խուզարկության կատարման փաստական

⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 107-113:

հիմք են «բավարար տվյալները», որոնց գնահատումը պետք է հանգեցնի ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա: Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել, և որպես այդպիսին, որպես կանոն, կարող են հանդես գալ քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին, ապա դրանք կարող են հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք բոլոր այն դեպքերում, երբ դրանք հնարավոր է գնահատման ենթարկել:

Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝

– կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված է **օպերատիվ-հետախուզական միջոցառումների որոշակի տեսակների նկատմամբ նախնական դատական վերահսկողության պահանջ, ինչը դրանց օրինականության գործուն երաշխիք է:** Այդպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են օրինակ՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկումը, ներքին դիտումը, արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին,

– արդյունքների ամրագրման եղանակը (օրինակ՝ տեխնիկական միջոցների կիրառման առկայությունը),

– աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն:

Իսկ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության

կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել⁷:

Վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ արձանագրել է նաև, որ միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ⁸:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան՝ Ա.Բաղիկյանին պատկանող՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տարածքում գտնվող աշխատասենյակում, իսկ առկայության դեպքում նաև դրա բաղկացուցիչ այլ մասերում քրեական գործի համար նշանակություն ունեցող աղանանդյա քարեր, դրանց հումքի վերաբերյալ հաշվապահական փաստաթղթեր, թանկարժեք քարերի ձեռքբերման, գնման, արժեքների վերաբերյալ փաստաթղթեր, դրանց ներմուծման, արտահանման, տեղափոխման, մաքսագերծման վերաբերյալ փաստաթղթեր, տարբեր գրառումներ, ինչպես նաև այլ առարկաներ՝ համակարգիչներ, էլեկտրոնային կրիչներ, բջջային հեռախոսներ, որոնց մեջ պարունակվում են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ և որոնք քրեական գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն, հայտնաբերելու նպատակով խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ⁹:

– Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հունվարի 23-ի որոշմամբ բավարարել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը՝ թույլատրելով մեկ անգամ խուզարկություն կատարել Արտակ Բաղիկյանի՝ «Էյ. Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Կոտայքի մարզի Արովյան քաղաքի Է.Պետրոսյան փողոցի 1/1/5,1/1/6,1/1/7 հասցեի տարածքում գտնվող՝ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆԴԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատասենյակում¹⁰:

– Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանին չեն ներկայացվել բավարար ապացույցներ կամ փաստական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ իրավաչափ հետևության հանգել այն մասին, որ անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունն իրավաչափ է, դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ենթադրյալ հանցագործությունը բացահայտելու քրեական հետապնդման մարմնի պարտավորության կատարմամբ, նախատեսված է օրենքով և ենթակա է բավարարման:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մեայոի Թաղևոսյանի և Միրուն Նասաբյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԳ/0073/07/15 որոշման 22-23-րդ կետերը:

⁸ Տե՛ս նույն որոշման 24-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Միննույն ժամանակ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է, պատճառաբանելով, որ բողոքարկված դատական ակտի գործողությունը կրել է ժամանակավոր բնույթ, կորցրել է իր իրավական նշանակությունը և որոշումը կայացնելու պահին դադարել է իրավաբանորեն գոյություն ունենալուց¹¹:

15. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական գնահատման ենթարկելով սույն գործի փաստական հանգամանքները, իրավաչափորեն եզրահանգել է, որ խուզարկություն կատարելու փաստական հիմքը բացակայում է:

Այսպես, Վճարելի դատարանը փաստում է, որ սույն գործի նյութերում առկա է 2020 թվականի նոյեմբերի 17-ի՝ ապրանքագիտական, հեմոլոգիական և հետքաբանական համալիր փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի՝ 2020 թվականի օգոստոսի 19-ին, թիվ «FZ-717» ավիաչվերթով, «Կարաբրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ Արաբական Միացյալ Էմիրություններից ՀՀ ներմուծված և 2020 թվականի օգոստոսի 20-ի՝ թիվ 05100011/200820/0019679 ապրանքների հայտարարագրով հայտարարագրված 0.355368 նետոտ քաշով, 1776.84 մետր կարատ քաշով մշակված ադամանդների ընդհանուր շուկայական արժեքը, 2020 թվականի օգոստոսի 19-ի դրությամբ, կազմել է շուրջ 670.808.781 ՀՀ դրամ¹²: Նյութերում առկա են նաև 2020 թվականի նոյեմբերի 19-ի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիոն հակազդման դեպարտամենտի պետի գրությունը, ըստ որի՝ Արմեն և Արտակ Բաղիկյանները հանդիսանում են ՀՀ-ում գործունեություն իրականացնող «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» և «Կարաբրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փաստացի սեփականատերերը, ինչպես նաև 2021 թվականի հունվարի 22-ի գրությունը, համաձայն որի՝ «Էյ. Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Է.Պետրոսյան փողոց, շենք 1/1/5, 1/1/6 և 1/1/7 հասցեում, որտեղ էլ գտնվում է ընկերության սեփականատեր Ա.Բաղիկյանի աշխատասենյակը¹³:

Վերոնշյալ փաստական տվյալների վերլուծությունից հետևում է, որ նախաքննության մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությամբ «Էյ.Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» և «Կարաբրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ենթադրյալ կապը, Ա.Բաղիկյանի՝ նշված ընկերությունների փաստացի սեփականատերը հանդիսանալը, «Էյ. Դի.Էմ. ԴԱՅՄՈՆ-ԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության հասցեն, Ա.Բաղիկյանի՝ այնտեղ աշխատասենյակ ունենալու

¹¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 8.1-րդ և 8.3-րդ կետերը:

հանգամանքները հիմնավորվել են բացառապես օպերատիվ տվյալներ պարունակող գրություններով, որոնց գնահատման հնարավորությունը, սակայն, դատարանին չի ընձեռվել: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, նախաքննության մարմինը տվյալ դեպքում կարող էր վերոնշյալ տեղեկությունների վերաբերյալ օբյեկտիվ փաստական տվյալներ ներկայացնել, ինչն էլ հնարավորություն կտար գնահատել Ա.Բաղիկյանի առնչության վերաբերյալ գրության մեջ նշված տեղեկությունները: Վերոնշյալի մասին է վկայում ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության և կոռուպցիոն հակազդման դեպարտամենտի պետի գրությունը, համաձայն որի՝ Ա.Բաղիկյանի առնչությունը ենթադրյալ հանցագործությանը, ի թիվս այլնի, հիմնավորվում է նաև «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Արտաքին դիտում» և «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներով¹⁴, որոնց արդյունքում ստացված փաստական տվյալները, սակայն, չեն ներկայացվել Առաջին ատյանի դատարան: Մինչդեռ, նախնական դատական վերահսկողության ենթակա նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված փաստական տվյալներն ունեն օբյեկտիվ բնույթ, ուստի նախաքննության մարմնի կողմից դատարանին տրամադրելու պարագայում հնարավոր կլիներ դրանց գնահատումը:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված խուզարկության թույլտվություն ստանալու մասին միջնորդության փաստական հիմքի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

17. Վճռաբեկ դատարանն անդրադառնալով վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու վերաբերյալ բողոքաբերի 6.1.-րդ կետում նշված փաստարկին՝ արձանագրում է, որ քննարկվող որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկը սկսում է հոսել ոչ թե խուզարկության փաստացի կատարման կամ որոշման առկայության մասին իրազեկվելու, այլ անձի կողմից համապատասխան որոշման պատճենը ստանալու պահից¹⁵: Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 23-ի որոշումը պաշտպան Հ.Ենոքյանը ստացել է 2021 թվականի փետրվարի 4-ին, իսկ վերաքննիչ բողոքը ներկայացրել է 2021 թվականի փետրվարի 15-ին (փետրվարի 14-ը եղել է ոչ աշխատանքային օր)՝ բողոքարկման տասնօրյա ժամկետի պահպանմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի վերոնշյալ փաստարկն անհիմն է:

18. Անվիտիելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի

¹⁴ Տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը:

¹⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՄԴՌ-1249 և Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Գրիգորյանի գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԿԴԳ/0030/06/17 որոշումները:

տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 22-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արտակ Ասպարիկի Բաղիկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 22-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

25.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0044/01/09

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Կ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

11 նոյեմբերի 2022 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով Գրիգոր Հարությունի Ոսկերչյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշման դեմ Գրիգոր Հարությունի Ոսկերչյանի այրի Մարինե Հարությունյանի ներկայացուցիչ Մուշեղ Շուշանյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Գրիգոր Հարությունի Ոսկերչյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 301-րդ հոդվածով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման

2-րդ կետի 6-րդ ենթակետի հիման վրա՝ Գ.Ոսկերչյանն ազատվել է պատիժը կրելուց:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Ոսկերչյանի և նրա պաշտպաններ Մ.Շուշանյանի ու Ս.Ոսկանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Գ.Ոսկերչյանի և նրա պաշտպան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ վերադարձվել է:

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), հիմք ընդունելով *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարությունը, 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ Գ.Ոսկերչյանի գանգատը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի հիման վրա հանել է իր կողմից քննվող գործերի ցուցակից:

5. 2022 թվականի ապրիլի 20-ին Գ.Ոսկերչյանի¹ այրի Մարինե Հարությունյանի ներկայացուցիչ Մուշեղ Շուշանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի որոշումը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ²:

Վճռաբեկ դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը դատական նիստում քննության առնելու մասին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

6. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը փաստել է, որ *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի որոշումը նոր հանգամանք է՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը վերանայելու, այն բեկանելու և Գ.Ոսկերչյանին արդարացնելու համար, քանի որ ՀՀ Կառավարությունը միակողմանի հայտարարությամբ ընդունել է, որ տեղի է ունեցել Գ.Ոսկերչյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով,

¹ Գրիգոր Հարությունի Ոսկերչյանը մահացել է 2021 թվականի ապրիլի 11-ին, տե՛ս մահվան վկայականը, քրեական գործ, հատոր 12, թերթ 9:

² Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Վճռաբեկ բողոքը քննվում է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա», «բ» և «դ» ենթակետերով և 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում, ինչի հիման վրա էլ Եվրոպական դատարանը որոշել է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը, և ճանաչել ու հռչակել Գ.Ոսկերչյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Գրիգոր Ոսկերչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Շա] մի խումբ անձանց հետ կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

Գրիգոր Ոսկերչյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Հակոբ Հակոբյանը, Մասուն Միքայելյանը, Մյաննիկ Մայխասյանը, Շանթ Հարությունյանը, Սուրեն Միրունյանը, Նիկոլ Փաշինյանը, Խաչատուր Սուքիասյանը, Համլետ Հովհաննիսյանը, Վիրաք Մանուկյանը և մյուսները երկրում ներքաղաքական վիճակն ապակայունացնելու և զանգվածային անկարգություններ հրահրելու դիտավորությամբ կազմակերպել ու անմիջականորեն իրականացրել են հանցավոր մտադրությունն ի կատար ածելուն ուղղված գործողություններ:

Հասարակության լայն շրջաններում դժգոհություն առաջացնելու, մարդկանց նոր զանգվածներ ներգրավելու մղումով, ինչպես նաև որպես պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ ուժ գործադրելու պատրաստակամության դրսևորում, Գրիգոր Ոսկերչյանը և մյուսները, Կարբեր միջոցներով իրենց շրջապարի նկատմամբ անձնական և ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խտրումների և որոշակի վարձարրության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններիս ներգրավել են 2008թ. փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրասարակային միջոցառումներին, որտեղ ամբոխավարական կրքեր հրահրելու եղանակով բազմությանը Կրամադրել, նախապատրաստել են անհասադության և զանգվածային բռնարարքների:

Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ իրագործելու մտադրությամբ խմբի անդամները, ինչպես անձամբ, այնպես էլ իրենց հետ համագործակցող այլ անձանց միջոցով, կազմավորել են զանգվածային բռնարարքների կատարմանը պատրաստ անձանց խմբեր և կազմակերպել նրանց շրջանում ապօրինի կերպով ձեռք բերված հրագետի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված Կրատարեսակ առարկաների բաշխում:

Մասնավորապես, Գրիգոր Ոսկերչյանը, նյութապես շահագրգռելով, անձամբ և Խաչիկ Մարտիրոսյանի միջոցով Արույան քաղաքից ու Կուրայքի մարզի Կարբեր բնակավայրերից հավաքագրել է Արիսարակես Վարդանյանին,

Խամոն Նամադյանին, Լուիզա Սրեպիանյանին, Պեպրոս Պեպրոսյանին, Սարգիս Բաղդկյանին, Կարեն Սրեպիանյանին, Սարգիս Խաչիկյանին, Ռոբերտ Սարգսյանին, Արրահամ Մաթևոսյանին, Ռոստամ Պեպրոսյանին, Կարինե Գասպարյանին, Հակոբ Աթաբեկյանին, Համլետ Հայրապետյանին, Վահագն Մանուկյանին, Շավարշ Մանուկյանին և մարդկանց նոր խմբեր, ապահովել նրանց տեղափոխումը Երևան՝ զանգվածային միջոցառումներին մասնակցելու համար, անմիջականորեն ղեկավարել ու առաջնորդել է նրանց:

Օգրագործելով Արուսյանի նախկին քաղաքապետի, ԱԺ նախկին պարզամամուրի աշխատանքային փորձը, համաքաղաքացիների շրջանում ունեցած իր ազդեցությունը՝ հավաքված բազմությանն առավել ոգևորելու, 2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ իրագործելու, դրանց կատարմանը մարդկանց ներկայությունն ապահովելու և նոր զանգվածներ ընդգրկելու նպատակով 2008թ. փետրվարի 29-ի երեկոյան դիմել է «Ազատության» հրապարակում հավաքված Կուրայքի մարզի քնակիչներին և նրանց հորդորել տուն չգնալ, գիշերել հրապարակի տարածքում՝ հայտարարելով, որ այս գիշերը կարևոր է բոլորի համար, շատ մարդ է պետք լինելու, դրա դիմաց խոստացել է նյութական փոփոխարուցում, իսկ առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար պարգևատրումներ՝ նույնիսկ պաշտոնների նշանակման ձևով:

2008թ. մարտի 1-ի վաղ առավոտյան, երբ ոստիկանության աշխատակիցները, իրացնելով Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված այլ առարկաների սպորինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկությունը, փորձել են Ազատության հրապարակում հայտնաբերել և ազդարարել դրանք, զանգվածային միջոցառման կազմակերպիչների հրահանգով հրապարակում գրնվող բազմության մի սրվար զանգված հանրավարանգ հիշյալ պարագաների օգրագործմանը դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործադրել վերջիններիս նկատմամբ:

Այնուհետև, զանգվածային միջոցառման մասնակիցները Գրիգոր Ոսկերյանի, Ալեքսանդր Արզումանյանի, Նիկոլ Փաշինյանի, Սուրեն Սիրունյանի, վերը թվարկված նրանց մյուս հանցակիցների ուղղորդմամբ և հրահանգով տեղափոխվել, Վիրաք Մանուկյանի և այլոց կազմակերպմամբ հասարակական և մասնավոր տրանսպորտային միջոցները դիտավորությամբ վնասելով, շահագործումից դուրս բերելով և արգելապարնետներ կառուցելով, դիքավորվել են Մյասնիկյանի արձանի հարակից տարածքում, որտեղ վերջիններս հրահրել, կազմակերպել, անմիջականորեն ղեկավարել են զանգվածային անկարգությունները. մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված և ձեռնասիաս այլ միջոցներով զինվելու ու հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, վերջիններիս օրինական պահանջներին ակտիվորեն չէնթարկվելու հրահանգներ են տվել, իրենց իսկ հավաքագրած անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց,

ամբոիի առավել ազրեսիվ զանգվածին բաժանել զենքեր, մարմնական վնասվածքներ պարճառելու, հրկիզումներ ու ավերումներ առաջացնելու համար հարմարեցված մերադական ճողեր, մահակներ, ամրաններից պարրասրված «ոզի» կոչվող սրածայր մերադական կոսարոկցիաներ, բենզինով լցված շշեր «Մոլոտովի կոկրելլ» և այլ պարագաներ:

Արդյունքում 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյաննիկյանի արճանի և Երևանի քաղաքապերարանի հարակից րարածքում, Երևանի Գր. Լուսավորիչ, Մաչրոց, Լեռ և Պարոնյան փողոցներում հրագեն, ոսկմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կարարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց րրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոսրիկանության աշխարակիցներին, ՀՀ ոսրիկանության զորքերի զինծառայողներին, րարբեր ծանրության սարիճանների մարմնական վնասվածքներ են սրացել 187 ՀՀ ոսրիկանության զորքերի զինծառայող ու ոսրիկանության աշխարակից, 32 քաղաքացիական անձ, ջարդերի, գույքի դիարավորյալ ոչնչացման, վնասելու և թալանելու հերևանքով ՀՀ ոսրիկանությանը պարճառվել է 25.980.093 դրամի վնաս, Երևան քաղաքին և Կենրրոն թաղային համայնքին 69.288.760 դրամի վնաս, իրավարանական անճանց՝ 339.954.866 դրամի վնաս, հրկիզվել և վնասվել է 92 րրանսարորային միջոց, որի հերևանքով ՀՀ ոսրիկանությանը, քաղաքացիներին և ուղևորափոխադրող ընկերություններին պարճառվել է ընդհանուր առմամբ 70.854.525 դրամի վնաս:

Տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում սրացած մարմնական վնասվածքներից մահացել է 10 անձ:

Զինված հարճակումները և զանգվածային անկարգությունները դադարել են միայն արրակարգ դրություն հայրարարելուց և իրավասահների կողմից դրանք կանխելուց հերոն»³:

9. Առաջին առյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճոով արճանագրել է. «(...) [Նյախարնության ընթացքում ճեռք բերված սպացույցներով հիմնավորվել է, որ Գ.Ոսկերչյանը հանդես է եկել իշխանությունը զավթելուն, սահմանադրական կարգը բոնի րասպալելուն ուղղված հրասարակային կոչերով, ինչը համսպարասիսնում է ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հողվածով նասարեալված հանցագործության հարկանիշներին: Մակայն, ճիշտ պարզելով գործի փաստական հանգամանքները, որոնք հասարարվել են նաս դարարնությանը ճեռք բերված և հերազորված սպացույցներով, նասարնության մարմինը Գ.Ոսկերչյանի գործողություններին րվել է ոչ ճիշտ քրեաիրավական գնահարական, ոսրի նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հողվածի 1-ին մասից պերք է վերարակել նույն օրենսգրքի 301-րդ հողվածով: (...)»⁴:

³ Տն քրեական գործ, հատոր 10, թերթեր 67-74

⁴ Տն նույն տեղում:

10. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Տվյալ դեպքում ընդհանուր իրավասության դատարանի կողմից մեղադրանքի վերադրակումը չի վարթարացրել ամբաստանյալի վիճակը, քանի որ նա մեղադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, որով սահմանվում է ազատազրկում 4-ից 10 տարի ժամկետով, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով նախատեսված արարքները պարժվում են առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկմամբ: Չի խախտվել նաև ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, քանի որ վերջինիս մեղավորության վերաբերյալ դատարանի հերքությունը հիմնված է միայն դատաքննության ժամանակ հերքագրված ապացույցների վրա, դատաքննության ընթացքում ամբաստանյալին բացատրվել են նրա իրավունքները, վերջինիս համար փաստացի ապահովվել է օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից պաշտպանվելու լիարժեք հնարավորությունը:

(...) [Գ]ախարավճիորը հիմնավորված է և պատճառաբանված, հերևաբար Գ.Ոսկերչյանին արդարացնելու, բերված վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան (...)»⁵:

11. Եվրոպական դատարանը Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի գործով 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ «(...) Կառավարությունը 2020 թվականի օգոստոսի 11-ի գրությամբ Դատարանին տեղեկացրել է, որ զանգալի այս մասով բարձրացված խնդրի լուծման նպատակով առաջարկում է միակողմանի հայտարարություն անել: Նրանք այնուհետև Դատարանից խնդրել են զանգալը հանել քննիող գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի:

Հայտարարության բովանդակությունը հետևյալն է.

«Ես՝ պրն Եղիշե Կիրակոսյանս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչս, սույնով հայտարարում եմ, որ Հայաստանի իշխանության մարմիններն ընդունում են, որ տվյալ գործում տեղի է ունեցել դիմումարուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով, 6-րդ հոդվածի 3 կետի «ա», «բ» և «դ» ենթակետերով և 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում:

Կառավարությունը, ընդունելով դիմումարուի իրավունքների խախտման փաստը, առաջարկում է դիմումարու Գրիգոր Ոսկերչյանին վճարել 12.150 եվրո (տասներկու հազար հարյուր հիսուն եվրո)՝ որպես նրա կողմից կրած ցանկացած և բոլոր վնասների, ինչպես նաև ծախսերի և ծախքերի հատուցում:

(...)

Դատարանը վերահասարարում է, որ Կոնվենցիայի 37-րդ հոդվածով սահմանվում է, որ Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել զանգալը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 189-197:

եզրակացություններից որևէ մեկին: 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Դատարանին մասնավորապես իրավունք է վերապահվում գործը հանել քննվող գործերի ցուցակից, եթե՝

«Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պարճատով գանգառի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

Այն վերահասարտում է նաև, որ որոշ հանգամանքներում Դատարանը կարող է գանգառը հանել գործերի ցուցակից՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ պարասիանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումարուն ցանկություն է հայտնում, որ գործի քննությունը շարունակվի:

(...)

Դատարանը մի շարք գործերով ձևավորել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «ա», «բ» և «դ» ենթակետերով և 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման վերաբերյալ բողոքների մասով իր գործելակերպը (րեն, օրինակ, Պելիսիեն և Սասին ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ] [Pélissier and Sassi v. France [GC]], թիվ 25444/94, §§ 51-54, ՄԻԵԴ 1999-II, Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Schatschaschwili v. Germany [GC]], թիվ 9154/10, §§ 110 - 131, ՄԻԵԴ 2015, և Սյուրեկն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) [ՄՊ] [Sürek v. Turkey (no. 1) [GC]], թիվ 26682/95, §§ 58 և 61, ՄԻԵԴ 1999- IV):

Հաշվի առնելով Կառավարության հայտարարության մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաև առաջարկվող փոփոխությունների գումարը, որը համապարասիանում է նմանաբայ գործերով շնորհված գումարի չափին, Դատարանը համարում է, որ գանգառի քննությունը շարունակելն այլևս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

Բացի այդ, հաշվի առնելով վերոնշյալ դիրարկումները և մասնավորապես այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող հարակ և ծավալուն նախադեպային իրավունքը՝ Դատարանը համոզված է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք դրսևորելու պարասիանությունը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգառի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ վերջում):

(...)

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Մկարի է առնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «ա», «բ» և «դ» ենթակետերի և 10-րդ հոդվածի մասով պարասիանող Կառավարության հայտարարության պայմանները, ինչպես նաև դրանցով սրանձնած պարասիանությունների կարարումն ապահովելու եղանակները:

Որոշում է գանգառը հանել իր կողմից քննվող գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի (...)⁶:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 12-18:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միակողմանի հայտարարությունը հաստատելու մասին Եվրոպական դատարանի որոշումը որպես նոր հանգամանք դիտարկելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուսջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Եվրոպական դատարանի՝ *Ֆրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը վերանայելու համար:

14. Եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել զանգապը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՛*

ա. դիմողը մրադիր չէ հեղամուր լինել իր զանգապին,

բ. վեճն արդեն կարգավորվել է,

գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պայմանով զանգապի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այրուհանդերձ, Դատարանը շարունակում է զանգապի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել զանգապը վերադին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գրնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա»:

14.1. Եվրոպական դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 62Ա՛ կանոնի համաձայն՝ *«1. (Ա) Եթե զանգապաբերը մերժում է Դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնով սահմանված բարեկամական կարգավորման պայմանները, Բարձր պայմանավորվող կողմը կարող է Դատարան ուղարկել խնդրանք՝ քննության ենթակա գործերի ցուցակից զանգապը հանելու վերաբերյալ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի:*

(Բ) Նման խնդրանքն ուղեկցվում է հայտարարությամբ, որով պայրասխանող պետությունը հարակ հասկանալի կերպով պերք է ընդունի, որ զանգապաբեր անձի գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում՝ միաժամանակ իր վրա վերցնելով պարականություն հարուցելու զանգապաբեր անձին պայրճառված մասները, և, եթե անհրաժեշտ է, նաև ձեռնարկելու միջոցներ խախտման հերևանքները վերացնելու համար (...):»:

14.2. Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի հիման վրա զանգապը գործերի ցուցակից հանելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները՝

– զանգապի բնույթը,

- նմանատիպ գործերով Եվրոպական դատարանի կողմից կախկինում կայացված վճիռների կատարման համատեքստում կառավարության կողմից ձեռնարկված միջոցների բնույթը, շրջանակը և դրանց ազդեցությունը խնդրո առարկա գործի վրա,

- միակողմանի հայտարարությամբ զիջումների բնույթը, մասնավորապես՝ Եվրոպական կոնվենցիայի խախտման ճանաչումը և նման խախտման համար համապատասխան փոխհատուցման վճարումը,

- խնդրի առնչությամբ համապատասխան կամ «հստակ և ծավալուն» նախադեպային իրավունքի առկայությունը, այլ կերպ՝ արդյոք բարձրացված հարցերը նույնական են Եվրոպական դատարանի կողմից նախկինում կայացված վճիռներով որոշված հարցերի հետ,

- այն եղանակը, որով Կառավարությունը մտադիր է փոխհատուցում տրամադրել դիմումատուին, և արդյոք դա հնարավոր է դարձնում վերացնել ենթադրյալ խախտման հետևանքները⁷:

14.3. Այս վերջին հանգամանքի առնչությամբ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ վճռով Եվրոպական կոնվենցիայի խախտում արձանագրելու դեպքում պետությանը խախտումը վերացնելուն և մինչև խախտումը եղած վիճակը վերականգնելուն պարտավորեցնելու սկզբունքը կիրառելի է նաև միակողմանի հայտարարության դեպքում⁸: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ գործի վերաբացումը որոշակի հանգամանքներում մինչև խախտումը եղած վիճակը՝ *restitutio in integrum*, վերականգնելու առավել արդյունավետ, եթե ոչ միակ միջոցն է⁹: Այսինքն՝ Եվրոպական դատարանը կարևոր է համարում, որ գործի վերաբացման առումով ներպետական օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունները Կառավարության միակողմանի հայտարարությունը հաստատելու մասին որոշման դեպքում համարժեք լինեն վճռի կայացման դեպքում նախատեսված հնարավորություններին¹⁰:

14.4. Այսպես, Եվրոպական դատարանը որոշ դեպքերում չի ընդունել պետության միակողմանի հայտարարությունն այն պատճառով, որ ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ ներպետական մակարդակով գործի վերաբացման հնարավորություն: Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության դեմ գործերից մեկով կայացված վճռով Եվրոպական դատարանը չի հաստատել Ռուսաստանի Դաշնության կառավարության միակողմանի

⁷ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tahsin Acar v. Turkey* գործով 2003 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26307/95, կետեր 75-77:

⁸ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cereale Flor S.a. And Rosca v. Moldova* գործով 2017 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատներ թիվ 24042/09 և 3159/10, կետեր 28:

⁹ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Davydov v. Russia* գործով 2014 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 18967/07, կետ 27, *Malininas v. Lithuania* գործով 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 10071/04, կետ 43, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, կետ 263:

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Igranov and others v. Russia* գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 42399/13 և այլ, 26-րդ կետ:

հայտարարությունը՝ իրավունքի խախտման փաստն ընդունելու և արդարացի փոխհատուցում տրամադրելու մասին՝ նշելով, որ Կառավարությունը չի պարտավորվել վերաբացել գործի քննությունը ներպետական մակարդակում կամ երաշխավորել նոր դատավարություն՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ապահովմամբ: Մինևն ժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գործով վկայակոչվող իրավունքի խախտման բնույթն այնպիսին է, որ դիմողի արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքները չեն կարող վերացվել առանց գործի վերաբացման, իսկ ներպետական օրենքը հնարավորություն է տալիս գործի վերաբացում միայն դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի խախտում գտնելու դեպքում: Արդյունքում, Ռուսաստանի Դաշնության Կառավարության միակողմանի հայտարարությունը չի ընդունվել, քանի որ գանգատը քննման ենթակա գործերի ցանկից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշման հիմքով գործի վերաբացման վերաբերյալ կարգավորում ներպետական օրենքը չի նախատեսել¹¹:

14.5. Համանման կերպով, մի շարք գործերով Եվրոպական դատարանը չի հաստատել Կառավարության միակողմանի հայտարարությունը՝ նշելով, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ գործի վերաբացման հնարավորություն¹²:

14.6. Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդունելի է համարում ոչ միայն ներպետական օրենքում բարեկամական կարգավորումը կամ միակողմանի հայտարարությունը հաստատելու մասին դատարանի որոշումը որպես գործի վերաբացման հիմք ուղղակի նախատեսելը¹³, այլ ձևավորված իրավակիրառ պրակտիկայում ներպետական օրենքի մեկնաբանությունն այն հաշվով, որ հնարավոր լինի գործի վերաբացումը միակողմանի հայտարարության հիմքով¹⁴:

14.7. Այսպես, օրինակ, Վրաստանի դեմ գործերից մեկով Եվրոպական դատարանը, անդրադառնալով դիմումատուի այն առարկությանը, որ Կառավարության միակողմանի հայտարարության դեպքում չի կարողանա ապահանջել կրկնակի քննություն և այդպիսով ամբողջական վերականգնել իր հեղինակությունը, նախ փաստել է, որ քրեական վարույթի վերաբացման

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Rozhin v. Russia* գործով 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 50098/07, կետ 23:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Vojtěchová v. Slovakia* գործով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 59102/08, 26-28-րդ կետեր, *Hakimi v. Belgium* գործով 2010 թվականի հունիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 665/08, 29-րդ կետ, *Davydov v. Russia* գործով 2014 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 18967/07, 31-32-րդ կետեր:

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Eroglu and Akdemir v. Turkey* գործով 2019 թվականի ապրիլի 2-ի որոշումը, գանգատ թիվ 6337/10:

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tabagari v. Georgia* գործով 2013 թվականի հունիսի 18-ի որոշումը, գանգատներ թիվ 70820/10 և 60870/11, *Mazanashvili v. Georgia* գործով 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 19882/07, *Vashakidze v. Georgia* գործով 2014 թվականի հունվարի 28-ի որոշումը, գանգատ թիվ 41359/08, *Manukian v. Georgia* գործով 2016 թվականի մայիսի 3-ի որոշումը, գանգատ թիվ 49448/08:

համատեքստում ներպետական օրենքի համապատասխան դրույթը հստակ նախատեսում է, որ ոչ միայն դատարանի վճիռը, այլև Եվրոպական կոնվենցիայի դրույթի խախտման մասին եզրակացություն պարունակող որոշումը կարող է գործի վերաբացման հիմք լինել: Հաշվի առնելով Եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաև Եվրոպական դատարանի կանոնակարգով սահմանված ընթացակարգերը՝ Եվրոպական դատարանն արդյունքում եզրահանգել է, որ միակ հնարավոր որոշումը, որը կարող է հղում պարունակել Եվրոպական կոնվենցիայի որևէ դրույթի խախտման, Կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա գործը ցուցակից հանելու որոշումն է¹⁵:

15. Վերոնշյալ կոնվենցիոնալ նորմի, Եվրոպական դատարանի կանոնակարգի 62Ա՝ կանոնի, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից բխում է, որ միակողմանի հայտարարությունը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ պետությունը հստակ ճանաչում է Եվրոպական կոնվենցիայի կոնկրետ դրույթի կամ դրույթների խախտումը և պարտականություն է ստանձնում միջոցներ ձեռնարկել խախտման հետևանքները վերացնելու և (կամ) մինչև խախտումը եղած վիճակը վերականգնելու համար: Ինչպես բխում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին որոշում կայացնելու հիմքը, ի թիվս այլնի, պետության կողմից Եվրոպական կոնվենցիայի խախտման փաստի ճանաչումն է, և այդ խախտման հետևանքները վերացնելու հանձնառություն ստանձնելը: Հետևաբար, Եվրոպական կոնվենցիայի որևէ դրույթի խախտման մասին հղում պարունակող, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը, ինչպես և վճռի պարագայում, հավասարապես պարտավորեցնում է պետությանը միջոցներ ձեռնարկել խախտման հետևանքները վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ գործը վերաբացելու եղանակով, ուստի այդ որոշման հիման վրա գործի վերաբացման հնարավորության բացառումն անհամատեղելի կլինի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

16. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը) 426.1-ին հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական սկզբը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական սկզբը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական սկզբերը՝ վճռաբեկ դատարանը»:

¹⁵ Տն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Taktakishvili v. Georgia* գործով 2013 թվականի հունիսի 18-ի որոշումը, գանգատ թիվ 46055/06, կետ 22:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝
«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնելով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը. (...):»:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք է ոչ միայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտնելով, այլ նաև որոշմամբ հիմնավորված անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

Սույն որոշման 14-15-րդ կետերում ներկայացված իրավական դիրքորոշման հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը ևս հիմք է նոր հանգամանքի հետևանքով դատական ակտի վերանայման համար:

18. Հետևաբար, Եվրոպական դատարանի՝ *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը վերանայելու համար:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ իրավական հարցը* հետևյալն է. արդյո՞ք *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի որոշումը հիմք է Առաջին ստյանի դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը բեկանելու համար:

20. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝
«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

Սկոցցարին և Ջոնսոնն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարտասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով փրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընդդեմ ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ

պերությունը ազար է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձսած իր պարավորությունների կարարման միջոցների ընարության հարցում պայմանով, որ դրանք համարեղելի են Դարարանի վճոի մեջ րեղ գրած եզրակացությունների հեար»¹⁶:

Մեղուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դարարանի վճոով պարասխանող պերության վրա պարավորություն է դրվում դարարեցնել խախտումը և դրա հերևանքների համար այնպիսի հարուցում րրամնդրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առսջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործականում հնարավոր չէ, ապա պարասխանող պերությունն ազար է վճիոր կարարելու միջոցների ընարության հարցում (...)»¹⁷:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դարարանը գործի քննության արդյունքում կայացնում է դարական ակր՝ սույն օրենսգրքով նախարեակված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դարական ակրում դարարանը կարող է չհիոհիսել վերանայված դարական ակրի եզրաիակիչ մասը, միայն եթե ծանրակշիո փասարկների մարաննշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախարեակված հանգամանքներն ըար Էության չէին կարող աղել գործի ելքի վրա (...)»:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՄԴՌ-1099 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրաիակիչ մասն անհիոհիս թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիո փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի աղում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ նոր հանգամանքն ըստ Էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, ուստի դրա հիման վրա գործի կրկին քնությունը չի կարող ծառայել իր *restitutio in integrum* հնարավորինս ապահովելու նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

23. Դատական ակտի վերաբացումը կամ գործի նոր քնությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, նախատեսված է նան Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիոների հիման

¹⁶ Տն Եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիոր, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

¹⁷ Տն Եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիոր, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

24. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մոտեցումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմքը՝ որպես նոր հանգամանք, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումն է: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը չպետք է միանշանակ կերպով դիտարկվի որպես գործերի վերաբացման անվերապահ հիմք: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ներպետական դատարանը պետք է գնահատի, թե արդյո՞ք գործով կայացված վերջնական դատական ակտի բեկանումը *restitutio in integrum* ապահովելու լավագույն միջոցն է:

25. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով և *Մյասնիկ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2020 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռներով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) Ազատության հրապարակում անցկացված ցույցերը եղել են խաղաղ հավաքներ և, ըստ էության, քաղաքական նշանակություն ունեցող հասարակական այնպիսի հարցի մասին արտահայտվելու հարթակ, որն ուղղակիորեն կապված է ժողովրդավարության իրականացման հետ և լուրջ մտահոգության առարկա է եղել Հայաստանի հասարակության լայն հատվածի համար¹⁸,

բ) ԵՆԽՎ մոնիթորինգի հանձնաժողովի կողմից լրջորեն կասկածի տակ է դրվել այն վարկածը, ըստ որի՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետեր 230-233 և 246, *Myasnik Malkhasyan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 49020/08, կետ 72:

ունեցած իրադարձություններն ընդդիմության առաջնորդների՝ պետական իշխանությունը բռնի զավթելու կամ այլ կերպ ասած՝ հեղաշրջում կատարելու ծրագրված և կազմակերպված փորձի մասն են կազմել, և փաստորեն այդ քրեական հետապնդումները համարվել են ամենայն հավանականությամբ զգալի քաղաքական շարժառիթներ ունեցող: Առկա չէ որևէ ապացույց, որը կատիպի Եվրոպական դատարանին կասկածի տակ դնել վերոհիշյալ զեկույցներով ձեռք բերված եզրահանգումների իսկությունը¹⁹:

զ) առկա չեն համոզիչ ապացույցներ առ այն, որ Ազատության հրապարակում զենք է կուտակվել՝ զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով²⁰:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Գ.Ոսկերչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել մի խումբ անձանց հետ զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար²¹,

– Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 10-ին կայացրած մեղադրական դատավճռով փաստել է, որ նախաքննության մարմինը, թեև ճիշտ է պարզել գործի փաստական հանգամանքները, որոնք հաստատվել են նաև դատաքննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցներով, սակայն Գ.Ոսկերչյանի գործողություններին տվել է ոչ ճիշտ քրեաիրավական գնահատական, ուստի նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակել է նույն օրենսգրքի 301-րդ հոդվածով²²,

– Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ ստորադաս դատարանի դատավճիռը հիմնավորված է և պատճառաբանված, հետևաբար Գ.Ոսկերչյանին արդարացնելու, բերված վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան²³:

27. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-24-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, ինչպես նաև սույն որոշման 25-րդ կետում նշված *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի և Մյասնիկ Մայիսայանն ընդդեմ Հայաստանի* գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ Գ.Ոսկերչյանին առաջադրված մեղադրանքի նույնական փաստական հանգամանքների վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում միջազգային դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները և կատարված արձանագրումները *prima facie* սովորում են նրան առաջադրված մեղադրանքը, նկատի ունենալով նաև մեղադրանքի

¹⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Myasnik Malkhasyan v. Armenia* գործով վերը հիշատակված վճիռը, կետ 80:

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով վերը հիշատակված վճիռը, կետեր 230 և 245:

²¹ Տե՛ս մանրամասն սույն որոշման 8-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

²³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

փաստական հանգամանքների անմիջական փոխկապակցվածությունը արտահայտվելու ազատության իրավունքի հետ՝ երաշխավորված Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

28. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Գ.Ոսկերչյանին առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքներիամբողջությունըբավարարչէնրան՝ իշխանությունըգավթելուն, սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու մեջ մեղավոր ճանաչած դատական ակտերն օրինական ուժի մեջ թողնելու համար, նկատի ունենալով, որ դրանք անհամատեղելի են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հետ:

29. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *Գրիգոր Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի որոշումը հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը բեկանելու համար:

30. Վերը նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս վերանայելու Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը և բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Գ.Ոսկերչյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

31. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը բեկանել և փոփոխել:

3. Գրիգոր Հարությունի Ոսկերչյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով առաջադրված

մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ/0144/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝
դիմողի ներկայացուցիչ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ռ.ԲԱԼՈՅԱՆԻ
Զ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

11 նոյեմբերի 2022 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշման դեմ դիմող Ռուբեն Բալոյանի և նրա ներկայացուցիչ Զ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ, թիվ ԿԴ/0144/01/20 քրեական գործի դատաքննության ընթացքում, ամբաստանյալ Ռոման Մելիքի Մովսիսյանի պաշտպան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա՝ դատական տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշմամբ դիմող Ռ.Բալոյանի և նրա

ներկայացուցիչ Զ.Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Ռ.Բալոյանը և նրա ներկայացուցիչ Զ.Վարդանյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի նոյեմբերի 7-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

4. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 313-րդ և 314.1-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը:

4.1. Ըստ բողոքաբերների՝ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշումն առանձին փաստաթղթի ձևով կայացրել է առանց խորհրդակցական սենյակ հեռանալու:

4.2. Բողոքի հեղինակները նշել են, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Ռ.Բալոյանի նկատմամբ դատական սանկցիա՝ դատական տուգանք կիրառելիս չի պատճառաբանել տուգանքի՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելու անհրաժեշտությունը, ինչպես նաև վերջինիս արտահայտվելու իրավունք չի տրամադրել և չի էլ պատճառաբանել այդ իրավունքից զրկելը:

5. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 22-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, կամ փոփոխել կայացված որոշումը և վերացնել Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ արձանագրել է. «(...) 2021 թվականի սեպտեմբերի 07-ին կայացած դարական նիստի ընթացքում, երբ դատարանի կողմից իրականացվել է վկա Ռ.Խաչատրյանի

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

հարցաքննությունը՝ պաշտպան Ռ.Բալոյանը ոչ պարզաճ վարքագիծ է դրսևորել դադարանի և դադարավարության մասնակիցների նկարմամբ, նախագահողի կողմից պաշտպան Ռ.Բալոյանին հայրարարվել է նկարողություն և վերջինիս պարզարանվել է, որ եթե շարունակի նման պահվածք դրսևորի դադարանի և դադարավարության մասնակիցների նկարմամբ՝ Դադարանը արիպված կլինի նրա նկարմամբ կիրառել իհար դադարական սանկցիա, սակայն պաշտպան Ռ.Բալոյանի կողմից շարունակվել է դրսևորվել ոչ պարզաճ վարքագիծ և անհարգալից վերարերմունք է ցուցարերել դադարավարության կողմերի և դադարանի նկարմամբ, մասնավորապես՝ դադարավարության կողմերի ներկայացրած առարկությունների և հայրարարությունների ժամանակ նարած րեղից ընդհարել է վերջիններիս, դրանով դրսևորել ոչ պարզաճ վարքագիծ»²:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշման համաճայն՝ «(...) Կապված վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկի հետ առ այն, որ Կորայքի մարզի ընդհանուր իրավասության դադարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը կայացրել է առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, վերաքննիչ դադարանն արճանագրում է, որ ՀՀ քրեական դադարավարության օրենագրքի 313-րդ հողվածի 2-րդ մասով րված է որոշումների սպառիչ ցանկը, որոնք դադարանը պարարավոր է կայացնել խորհրդակցական սենյակում: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դադարավարության օրենագրքի վկայակոչված նորմում ուղղակի ջնշված որոշումների կայացման ընթացակարգի ընրրությունը թողնված է դադարանի հայեցողությանը: Այս առումով անդրադառնալով վերաքննիչ բողոքի պարճառարանությանն առ այն, որ Կորայքի մարզի ընդհանուր իրավասության դադարանի որոշումը ճնակերպվել է առանճին փաստարթթի ճնով, ուարի այն ենթակա էր կայացման խորհրդակցական սենյակում, վերաքննիչ դադարանը գրնում է, որ քրեարարավարական օրենսդրությամբ դադարական ակրին բովանդակային առումով ներկայացվող պահանջների պահպանված լինելու պարագայում որոշման կայացման վերոնշյալ ընթացակարգը ջի կարող դադարական ակրը բեկանելու հիմք հանդիսանալ՝ հարկապես այն դեպքում, երբ դադարանն իրավասու էր այն կայացնել նաս րեղում՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու: (...)

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի մյուս պարճառարանությանը, վերաքննիչ դադարանը փասարում է հերկյալը:

(...) ՀՀ քրեական դադարավարության 314.1-ին մասի վերլուծությունից բիում է, որ դադարանը կայացնելով քրեական դադարավարությանը մասնակցող անճանց և դադարական նիարին ներկա գրնվող անճանց նկարմամբ րուգանք կիրառելու կամ անճին դադարական նիարերի դակլիճից հեռացնելու մասին որոշում, կարող է նրանց ջրրամարդել արրահայրվելու իրավունք, եթե դադարական սանկցիայի ենթակա անճն այն օգրագրծում է դադարական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու կամ նոր արարք կարարելու համար:

² Տե՛ս քրեական գործի հավելված, թերթ 34:

Վերոգրյալի համարեքստում դատական նիստի համակարգչային արձանագրման կրիչի ուսումնասիրության արդյունքում վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Կուրայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիմող Ռուբեն Բաղդասյանի՝ րվյալ գործով վկա Ռուզաննա Խաչատրյանին ուղղվող մեղադրանքից դուրս հարցը հանելուց հետո Ռ.Բաղդասյանը, դատարանի կողմից բազմիցս նախազգուշացվելով դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, շարունակել է նույն վարքագիծը, բարձր տոնով խոսել է դատավարության մասնակիցների, այդ թվում՝ դատական նիստը նախազահող դատավոր Գ.Մարգարյանի հետ, ընդհարել է դատավարության մասնակիցների կողմից ներկայացվող առարկությունները և հայտարարությունները, ինչի արդյունքում առաջին աստիճանի դատարանի կողմից Ռ.Բաղդասյանի նկատմամբ հայտարարվել է նկատողություն և վերջինս նախազգուշացվել է նման վարքագիծը շարունակելու դեպքում առավել խիստ դատական սանկցիա կիրառելու՝ դատարանի իրավասության մասին, ինչին ի պատասխան Ռուբեն Բաղդասյանն անհարգալից տոնով պատասխանել է՝ «Կիրառեք», ինչն արձանագրված է նաև Կուրայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վիճարկվող որոշման մեջ:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ վերոշարադրյալ փաստական հանգամանքները վկայում են դիմող Ռուբեն Բաղդասյանի կողմից դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու մասին, այսինքն՝ դիմողը չարաշահել է իր արտահայտվելու իրավունքը և շարունակել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող վարքագիծը, ինչպիսի պայմաններում դատական սանկցիա կիրառելիս Ռուբեն Բաղդասյանի արտահայտվելու հնարավորության որոշակի սահմանափակումն իրավաչափ է:

Աղդարառնալով Ռուբեն Բաղդասյանի նկատմամբ կիրառված դատական սանկցիայի 100.000 ՀՀ դրամ դատական տուգանքի չափի հիմնավորվածության վերաբերյալ վերաքննիչ բողոքում ներկայացված պարճառաբանություններին, վերաքննիչ դատարանը գրնում է, որ այն համարժեք է Ռուբեն Բաղդասյանի վարքագծի բնույթին և նրա կողմից թույլ տրված խախտմանը (...)³:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին աստիճանի դատարանը պաշտպան Ռ.Բաղդասյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս, թույլ տվել է արդյո՞ք քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտում:

9. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր որոշման իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: (...)

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության

³ Տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 2, թերթեր 31-32:

և բարոյականության կամ այլոց պարվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

9.1. Կարծիքի ազատ արտահայտման իրավունքի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է: Միաժամանակ, այն ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով և օրենքով սահմանված կարգով ենթակա է սահմանափակման՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության (հանրային շահերի) կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով⁴:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ (...) արդարադատության հեղինակությունն ու անաչտությունը պահպանելու նպատակով»:

10.1. Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ ազատ արտահայտվելու իրավունքը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ տարրերից մեկը, դրա զարգացման և անհատների ինքնիրացման հիմնական պայմաններից մեկը: Այս իրավունքը կարող է ենթարկվել սահմանափակման, որը, սակայն, պետք է մեկնաբանվի խիստ, իսկ դրա անհրաժեշտությունը պետք է լինի համոզիչ:

Նշված իրավունքի սահմանափակումը գնահատելիս պետք է պարզել, թե արդյո՞ք այն համարժեք էր հետապնդվող օրինական նպատակին՝ դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելուն⁵, ինչպես նաև անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք այդ միջամտության հիմնավորումներն անհրաժեշտ էին ու բավարար: Մասնավորապես, ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելիս, կիրառվող սանկցիաների բնույթն ու խստության աստիճանը

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՍԴԹ-1396 որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Amihalachioaie v. Moldova* գործով 2004 թվականի ապրիլի 20-ի վճիռը, գանգատ թիվ 60115/00, 34-րդ կետ:

հանգամանքներ են, որոնք պետք է հաշվի առնվեն սահմանափակման իրավաչափությունը որոշելիս: Անգամ կիրառվող տուգանքի համեմատաբար նվազ չափը չի կարող նվազեցնել ազատ արտահայտվելու իրավունքին միջամտության բացասական ազդեցությունը, հատկապես այն դեպքերում, երբ այդ միջամտությունը կիրառվում է փաստաբանի նկատմամբ, ով պետք է ապահովի իր վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը⁶:

Այս առումով հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի քննարկվող հոդվածի սահմանափակման իրավաչափությունը և համաչափությունը որոշելիս, գնահատում է վիճարկվող արտահայտությունների բնույթն ու բովանդակությունը և այն համատեքստը, որի շրջանակներում նշված արտահայտություններն արվել են⁷: Մասնավորապես, իր նախադեպային որոշումներից մեկով՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված՝ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը Եվրոպական դատարանը գնահատել է չհիմնավորված և ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին ոչ համարժեք՝ նշելով, որ.

– թեև դիմումատուի վիճարկվող արտահայտությունները կրել են բացասական երանգ և թշնամական բնույթ, դրանք հանդիսացել են գնահատողական դատողություններ և չէին կարող մեկնաբանվել իբրև անհիմն անձնական հարձակում, քանի որ չեն հետապնդել՝ որպես հիմնական նպատակ, փորձագետներին, դատախազին կամ դատարանին վիրավորելը,

– դիմումատուին հնարավորություն չի ընձեռվել արտահայտվել Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իր իրավունքը սահմանափակելու առնչությամբ: Մասնավորապես, կարևորվել է այն հանգամանքը, որ դիմումատուին որևէ հնարավորություն չի տրվել բացատրություն տալ կամ պաշտպանվել՝ դատարանի կողմից դատական տուգանքի կիրառման կապակցությամբ⁸:

11. Բարձր պահելով ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումների անհրաժեշտության շեմը՝ Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ հանրության առաջ արդարադատության իրականացման վերաբերյալ կարծիք արտահայտելու իրավունքի հետ մեկտեղ, փաստաբանների քննադատությունը չպետք է հատի որոշակի սահմաններ: Ավելին, փաստաբանի՝ դատարանում ազատ արտահայտվելու իրավունքն անսահմանափակ չէ, և բավականաչափ կարևորություն ունեցող որոշ շահերի պաշտպանության դեպքերում, ինչպես օրինակ դատարանի հեղինակությունն է, այդ իրավունքի սահմանափակումը

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Morice v. France* գործով 2015 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29369/10, 124, 127-րդ կետեր:

⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nikula v. Finland* գործով 2002 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 31611/96, 44-րդ կետ, *Janowski v. Poland* գործով 1999 թվականի հունվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 25716/94, 30-րդ կետ:

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Čeferin v. Slovenia* գործով 2005 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 73797/01, 59-66-րդ կետեր:

կարող է իրավաչափ համարվել: Այնուամենայնիվ, պաշտպանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը միայն բացառիկ դեպքերում կարող է ընդունելի լինել ժողովրդավարական հասարակությունում⁹:

Բացի այդ, Եվրոպական դատարանը նշել է, որ փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ կենտրոնական դիրք են զբաղեցնում արդարադատության իրականացման գործընթացում՝ հասարակության և դատարանի միջև հանդես գալով որպես միջնորդներ: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ որոշակի սահմանափակումների նախատեսումը: Հաշվի առնելով փաստաբանների առանցքային դերն այս համակարգում՝ իրավաչափ է ակնկալել, որ վերջիններս պետք է նպաստեն արդարադատության պատշաճ իրականացմանը՝ այդպիսով ապահովելով հանրային վստահությունը¹⁰:

Արդարադատության պատշաճ իրականացման համար առանցքային է իրավական գործընթացում ներգրավված բոլոր մասնակիցների կողմից ընդհանուր իրավական սկզբունքներն ու էթիկայի արժեքները կիսելը: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ փաստաբանը, որը ներկա է գտնվում կամ մասնակցում է դատարանում քննվող դատական գործին, պետք է պահպանի վարքագծի կանոնները: Փաստաբանների արտահայտվելու ազատությունն իր սահմանափակումներն ունի՝ պահպանելու համար Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված՝ դատական համակարգի հեղինակության և անաչառության մասին դրույթը: Մասնավորապես, պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից: Դատավորների և փաստաբանների մասնագիտական վարքից բխող հարաբերությունները պահանջում են միմյանց գործառույթների նկատմամբ հարգանք և դատավորների ու փաստաբանների միջև կառուցողական երկխոսություն¹¹: Փաստաբանները պետք է հարգանք դրսևորեն դատական իշխանության նկատմամբ և իրենց լիազորություններն իրականացնեն այնպես, որ այն համապատասխանի ներպետական իրավական նորմերին և մասնագիտական չափանիշներին (ստանդարտներին)¹²:

12. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանի սանկցիան կիրառվում է դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելու, ինչպես նաև դատարանի նիստի քննարկումն ընթացքն ապահովելու նպատակով:*

2. Դատարանը դատարանի սանկցիա կարող է կիրառել, երբ անձը՝

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kyprianou v. Cyprus* գործով 2005 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 73797/01, 174-րդ կետ:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nikula v. Finland* գործով վերը նշված վճիռը, 45-րդ կետ:

¹¹ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2013 թվականի թիվ 16 կարծիքը:

¹² Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման ազատության մասին» 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ Rec(2000)21 հանձնարարականը:

1) չարաշահում է իր դատավարական իրավունքները կամ չարամերորեն չի կատարում իր դատավարական պարտականությունները.

2) չի ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտում է դատական նիստի կարգը.

3) դատական նիստի դահլիճում անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ»:

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝«(...) 3. Դատական նիստերի դահլիճում ներկա անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս դատարանը, որպես կանոն, սպառնում է նրա լաված լինելու իրավունքը:

4. Դատական սանկցիան պետք է համաչափ լինի անձի վարքագծի բնույթին և հետևանքին»:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանը պարտավոր է (...)

2) ենթարկվել (...) դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

(...)

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի (մինչ 2022 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՕ-23-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերով դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գրնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

1) նկատողություն.

2) դատական նիստերի դահլիճից հեռացում.

3) դատական տուգանք.

2. Դատավորն անհրաժեշտության դեպքում հասկանալի ձևով նախազգուշացնում է դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, պարզաբանում է դատական սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները:

3. Դատական նիստերի դահլիճում ներկա գրնվող անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս դատարանն անհրաժեշտության դեպքում նրան տալիս է արդահայտվելու հնարավորություն: Տուգանք կիրառելիս կամ քրեական դատավարությանը մասնակցող անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելիս արդահայտվելու իրավունք չտրամադրելը պետք է հիմնավորվի դատարանի կողմից:

4. Եթե անձն ընդունում է իր արարքի հակաիրավականությունը և հայցում է դատարանի ներողամտությունը, սպա նշված անձի նկատմամբ դատական սանկցիա կարող է չկիրառվել:

5. Եթե դատական սանկցիայի ենթակա անձը չարաշահում է սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավունքը և արդահայտվելու իրավունքն օգտագործում է դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը

չարունակելու կամ՝ նոր արարք կատարելու համար, սպա դատարարին իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու առավել խիստ դատական սանկցիա (...):»

Նույն օրենսգրքի 314.3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական տուգանքը կիրառվում է առավելագույնը 100.000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով (...):»

14. Սույն որոշման 9-13-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդարադատության պատշաճ և արդյունավետ իրականացման հիմնական երաշխիքներից մեկը վարույթի բնականոն ընթացքի ապահովումն է, որի լիարժեք իրացման տեսանկյունից կարևորվում է դատավարությանը մասնակցող անձանց կողմից վարքագծի կանոնների պահպանումն ու դատավարության կողմերի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը: Միաժամանակ, օրենսդիրն անձի կողմից իր դատավարական իրավունքները չարաշահելու կամ դատավարական պարտականությունները չարամտորեն չկատարելու, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նախագահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու կամ որևէ այլ կերպ դատական նիստի կարգը խախտելու դեպքում դատարանին լիազորում է դատավարությանը մասնակցող անձանց, այդ թվում՝ պաշտպանի, ինչպես նաև դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառել դատական սանկցիա: Այլ կերպ՝ դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ դատական սանկցիայի կիրառումը հանդիսանում է դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված մասնակցի գործողություններին հակազդման միջոց՝ նպատակաուղղված դատական նիստերի ընթացքում կարգուկանոնի պահպանմանը և դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման ապահովմանը:

Մինևույն ժամանակ, դատական սանկցիա կիրառելու դատարանի լիազորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել անձի արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը, և հանրային ու մասնավոր իրավաչափ շահերը պետք է հավասարակշռվեն այնպես, որ դատական իշխանության հեղինակության պաշտպանությունը չհանգեցնի դատավարության մասնակցի, մասնավորապես պաշտպանության կողմի՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավանորմերով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքի անհիմն սահմանափակման:

14.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ դատական սանկցիայի կիրառման իրավաչափությունն ապահովելու և դրա կամայական կիրառումը բացառելու համար օրենսդիրը, ի թիվս այլնի, սահմանում է, որ անձի նկատմամբ կիրառվող սանկցիան պետք է համաչափ լինի նրա վարքագծի բնույթին և հետևանքներին, ինչպես նաև դատական նիստերի դահլիճում ներկա անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս, որպես կանոն, պետք է

ապահովվի նրա լաված լինելու իրավունքը: Այստեղից հետևում է, որ դատարանը, դատական սանկցիա կիրառելիս և դրա կոնկրետ տեսակն ընտրելիս, պետք է հաշվի առնի ոչ միայն դատական սանկցիայի հիմք հանդիսացող գործողության բնույթն ու բովանդակությունը, այլև անձի նկատմամբ դրա ներգործության առանձնահատկությունն ու աստիճանը համադրի նրա ոչ իրավաչափ վարքագծով այլ անձանց կամ արդարադատության շահերին հասցված վնասի հետ:

Դատական սանկցիա կիրառելուց առաջ անձին լաված լինելու հնարավորություն ընձեռելը նպատակ ունի մի կողմից՝ կանխել դատական սանկցիայի կիրառումը, քանի որ եթե դատավարության մասնակիցն ընդունում է իր արարքի հակաիրավականությունն ու հայցում դատարանի ներողամտությունը, ապա նրա նկատմամբ դատական սանկցիա կարող է չկիրառվել, մյուս կողմից՝ նպատակ է հետապնդում պարզել անձի նկատմամբ համաչափ սանկցիա կիրառելու բոլոր անհրաժեշտ հանգամանքները: Ընդ որում՝ հատկանշական է, որ քրեադատավարական օրենսդրությունը, հաշվի առնելով «դատական տուգանք» և «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիաների առավել խիստ բնույթը, նշված սանկցիաները կիրառելիս դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող մասնակցին արտահայտվելու հնարավորություն չտրամադրելու դեպքում դատարանի համար սահմանում է նշված իրավունքի սահմանափակումը հիմնավորելու պարտադիր պահանջ:

14.2. Անդրադառնալով «դատական տուգանք» սանկցիայի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն ունի դրամական բնույթ և հակաիրավական կոնկրետ վարքագծի դրսևորման դեպքում, որպես պատժիչ միջոց, քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ կարող է կիրառվել առավելագույնը 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ինչը նշանակում է, որ դատարանը, ելնելով համաչափության սկզբունքից, որոշում է, թե կոնկրետ դեպքում ի՞նչ չափով պետք է նշանակի տուգանքը, որպեսզի հնարավոր լինի հասնել դատական սանկցիայի կիրառման նպատակներին: Ընդ որում՝ դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ դատական տուգանք կիրառելիս, ինչպես նաև դրա չափը սահմանելիս, դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է իր որոշմամբ հիմնավորի, որ հարկադրանքի հենց այդ միջոցը և կոնկրետ այդ չափն է համարժեք անձի կողմից դրսևորած ոչ իրավաչափ վարքագծին:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատաքննության փուլում՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ի դատական նիստի ընթացքում, նիստը նախագահող դատավորի կողմից պաշտպան Ռ.Բալոյանին հայտարարվել է նկատողություն՝ դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, և վերջինիս պարզաբանվել է նշված վարքագիծը շարունակելու դեպքում ավելի խիստ դատական սանկցիա կիրառելու հնարավորության մասին: Նախագգուշացումից հետո պաշտպան Ռ.Բալոյանը շարունակել է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և անհարգալից

վերաբերմունք է ցուցաբերել դատավարության կողմերի և դատարանի նկատմամբ, մասնավորապես՝ դատավարության կողմերի ներկայացրած առարկությունների և հայտարարությունների ժամանակ ընդհատել է վերջիններիս, բարձր տոնով խոսել է դատավարության մասնակիցների, դատական նիստը նախագահող դատավորի հետ, ինչից հետո նրա նկատմամբ կիրառվել է դատական տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, դատական նիստի համակարգչային արձանագրման կրիչի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, Ռ.Բալոյանի նկատմամբ տուգանք կիրառելիս, վերջինիս չի տրամադրել արտահայտվելու հնարավորություն՝ առանց հիմնավորելու նման սահմանափակման անհրաժեշտությունը:

16. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-14.2-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Բալոյանի նկատմամբ նկատողություն հայտարարելուց հետո, նույն վարքագիծը շարունակելու պայմաններում, դատարանն իրավասու էր վերջինիս նկատմամբ կիրառել առավել խիստ՝ կոնկրետ դեպքում «տուգանք» դատական սանկցիան: Մինևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական տուգանքի ձևով սանկցիա կիրառելիս Առաջին ատյանի դատարանը խախտել է դրա կիրառման ընթացակարգային կանոնները, այն է՝ պաշտպան Ռ.Բալոյանին արտահայտվելու հնարավորություն չի տվել, և միաժամանակ չի հիմնավորել նման սահմանափակման անհրաժեշտությունը: Այս համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ դիմողը չարաշահել է իր արտահայտվելու իրավունքը և շարունակել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորել, որպիսի պայմաններում այդ իրավունքի սահմանափակումը եղել է իրավաչափ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական տուգանքի ձևով սանկցիա կիրառելիս արտահայտվելու հնարավորություն չտրամադրելու դեպքում, դատարանը բոլոր դեպքերում կրում է այդ իրավունքի սահմանափակումը հիմնավորելու պարտականություն:

16.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ռ.Բալոյանի նկատմամբ դատական տուգանքի՝ օրենքով սահմանված առավելագույն չափի կիրառումը առանց հիմնավորման, չի հանդիսացել նրա կողմից դրսևորած վարքագծին համաչափ միջամտություն:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, դիմող Ռ.Բալոյանի նկատմամբ դատական տուգանք կիրառելիս, վերջինիս այդ կապակցությամբ արտահայտվելու հնարավորություն չտալով և միաժամանակ չհիմնավորելով նշված իրավունքը չտրամադրելը, ինչպես նաև առանց հիմնավորման դրա առավելագույն չափը կիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի խախտում:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 4.1-րդ կետում մատնանշված փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի վերլուծության հիման վրա փաստում է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է դատական քննության ժամանակ լուծվող հարցերի կապակցությամբ դատարանի կողմից որոշումների կայացման երկու կարգ. կամ դատարանը որոշում է կայացնում առանձին փաստաթղթի ձևով՝ խորհրդակցական սենյակում, կամ որոշումը կայացնում է դատական նիստի ընթացքում՝ այն ներառելով դատական նիստի արձանագրության մեջ: Ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սպառիչ ամրագրել է այն որոշումների ցանկը, որոնք կարող են կայացվել միայն խորհրդակցական սենյակում՝ շարադրված առանձին փաստաթղթի ձևով՝ մյուս բոլոր որոշումները խորհրդակցական սենյակում կամ տեղում՝ դատական նիստի ընթացքում կայացնելու կարգի ընտրությունը թողնելով դատարանի հայեցողությանը:

Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է դատական սանկցիա կիրառելու մասին որոշում, որը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսինքն՝ նշված դատական ակտը խորհրդակցական սենյակում կայացնելու օրենսդրական պարտադիր պահանջ առկա չլինելու պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավասու էր այն կայացնել ինչպես խորհրդակցական սենյակում, այնպես էլ տեղում՝ դատական նիստի ընթացքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն այս առումով իր համաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի դատողություններին¹³ և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը կայացնելով առանձին փաստաթղթի ձևով՝ առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, օգտվել է օրենսդրորեն իրեն վերապահված հայեցողությունից և այս առումով որևէ խախտում թույլ չի տվել:

19. Անվիտվելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը պաշտպան Բ.Բալոյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելիս, թույլ են տվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «ՀՀ դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

¹³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով
Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Պաշտպան Ռ.Բալոյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին Կոտայքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշումը բեկանել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

27.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0543/11/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դիմող՝
շահագրգիռ անձ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԱԼԵԿՍԱՆՅԱՆԻ
Կ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
Ա.ՆԱԶԱՐՅԱՆԻ

11 նոյեմբերի 2022 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ դիմող Կարեն Աշոտի Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում 2021 թվականի հունվարի 8-ի որոշմամբ դիմող Կարեն Աշոտի Ստեփանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 71100121 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 332-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, որը հետագայում՝ ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ, թիվ 71100121 քրեական գործով վարույթը կարճվել է և Աննա Անդրանիկի Նազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ, 337-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Վերագրյալ որոշման դեմ դիմող Կարեն Ստեփանյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Մարտիրոսյանի՝ 2021 թվականի մայիսի 18-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Կ.Ստեփանյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 28-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և իրավունքների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2022 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումը բեկանելու և դիմող Կ.Ստեփանյանի բողոքը մերժելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Կ.Ստեփանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի նոյեմբերի 4-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Այսպես, ըստ բողոքի հեղինակի, ստորադաս դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել նախաքննության մարմնի վիճարկվող որոշմամբ իր իրավունքների խախտման հարցը լուծելու տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, ըստ բողոքարեբի՝ Ա.Նազարյանի արարքում՝ քննությանը խոչընդոտելու նպատակի բացակայության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումը չի հավաստվում վարույթի նյութերով,

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

որոնց համադրված վերլուծությունը՝ այդ թվում Ա.Նազարյանի՝ դեպքին նախորդող և ուղեկցող վարքագիծը բնութագրող փաստական տվյալները, վկայում են այդպիսի դիտավորության մասին:

Մինևոյն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ խափանված քննչական գործողությունը չէր կարող դիտվել քրեադատավարական կարգի խախտմամբ կատարվող: Այս համատեքստում, քննարկելով վարույթն իրականացնող մարմնի այդ եզրահանգման փաստական և իրավական հիմնավորումները, բողոք բերած անձը նշել է, որ համապատասխան քննչական գործողության կատարման պահին գործող իրավակարգավորումներով անչափահասի հարցաքննության տեսանկյնագրման ինպերատիվ պահանջ նախատեսված չէր:

Բացի այդ, բողոքի հեղինակը գտել է, որ նախաքննության մարմինը վիճարկվող որոշմամբ սխալ է մեկնաբանել քրեական վարույթի անչափահաս մասնակցի իրավունքների ու պարտականությունների պարզաբանման կարգին առնչվող իրավադրույթները:

Անդրադարձ կատարելով դատավարական կարգի խախտում դիտված՝ անչափահաս տուժողի և իր՝ որպես նրա ներկայացուցչի շահերի բախման առկայության վերաբերյալ դատողությանը, բողոքի հեղինակը նախ նշել է, որ այն նախաքննության փուլում գտնվող մեկ այլ քրեական գործի փաստական հանգամանքների հատվածաբար գնահատման արդյունք է, բացի այդ, տվյալ քրեական գործով մինչդատական վարույթը եզրափակող դատավարական ակտի բացակայության պայմաններում նման կատեգորիկ դատողությունն իրավաչափ չի կարող գնահատվել:

Մինևոյն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ սույն գործով քննության առարկան չի կարող փոխկապակցված լինել նշված հանգամանքներով: Այդ առնչությամբ բողոք բերած անձը փաստել է, որ քրեական գործը հարուցվել է արդարադատության դեմ ուղղված ենթադրյալ հանցագործության հատկանիշներով, ուստի քրեադատավարական կարգի էական խախտման ներքո պետք է հասկանալ վարույթի մասնակցի՝ տվյալ դեպքում անչափահաս տուժողի գործի արդարացի քննության իրավունքի խաթարմանը հանգեցնող խախտումը, ինչը, ըստ բողոքաբերի, տեղի է ունեցել Ա.Նազարյանի ոչ իրավաչափ գործողության արդյունքում, մինչդեռ այս առնչությամբ կատարված չէ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

6. Վերոշարադրյալի հիման վրա դիմող Կ.Ստեփանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունվարի 17-ի որոշումն ու օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

7. Շահագրգիռ անձ Ա.Նազարյանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ իր կողմից ենթադրյալ հանցագործությունը կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով իր անչափահաս որդու մասնակցությամբ

կատարված քննչական գործողությունները ոչ միայն տեղի էին ունենում դատավարական կարգի, այլև երեխայի իրավունքների առնչությամբ միջազգային փաստաթղթերում արձանագրված դրույթների խախտմամբ, որպիսի պայմաններում ինքը, որպես ծնող, ամեն կերպ փորձել է պաշտպանել որդուն՝ այդ կերպ նաև նպաստելով արդարադատության իրականացմանը: Նշվածի հետ մեկտեղ, վճռաբեկ բողոքի պատասխանի հեղինակը հատկանշական է համարել, որ որդու հարցաքննությունը կատարվում էր նրա կողմից հոր դեմ ներկայացրած հաղորդման շուրջ պարզաբանումներ ներկայացնելու կապակցությամբ, ուստի տվյալ քննչական գործողության խախտումը չէր բխելու իր շահերից: Ընդհակառակը, ինքը շահագրգռված էր որպեսզի որդին այդ կապակցությամբ հարցաքննվեր, իսկ վարույթն իրականացնող մարմինն այդ քննչական գործողությունը կազմակերպեր քրեադատավարական պահանջների պահպանմամբ՝ այդ թվում դիմող Կ.Ստեփանյանի բացակայությամբ, քանի որ առկա էր շահերի բախում՝ նկատի ունենալով, որ վերջինս միաժամանակ իրականացնում էր որդու և նրա հոր շահերի պաշտպանություն:

8. Վերոշարադրյալի հիման վրա շահագրգիռ անձ Ա.Նազարյանը խնդրել է մերժել դիմող Կ.Ստեփանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմինն Ա.Նազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ և 337-րդ հոդվածներով քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադատնալով քննչական գործողությունը քրեական դատավարությանը մասնակցությունը բացառող անձի՝ Կ.Ստեփանյանի ներկայացուցչի մասնակցությամբ իրականացնելու անթույլատրելիության մասին Աննա Նազարյանի պահանջին՝ պետք է արձանագրել, որ (...) [սխալ է հայտարարվում, հաշվի առնելով Կ.Ստեփանյանի՝ Հրանտ Նազարյանի կողմից ուղղակիորեն լիազորված լինելու, այդ թվում՝ Կ.Ստեփանյանի կողմից գործով Հրանտ Նազարյանին իրավաբանական օգնություն ցույց տալու, նրանց միջև առկա անձնական կախվածության այլ (գործնական) հարաբերությունները, ինչպես նաև՝ Կ.Ստեփանյանի ու նրան լիազորած անձի կողմից վստահորդի հետ, ըստ էության, ունեցած շահերի հակասությունը (Անդրանիկ Նազարյանի կողմից Հրանտ Նազարյանի դեմ 26 հանցագործության մասին ներկայացված հաղորդումը)՝ վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ, առերևույթ առկա է և Անդրանիկ Նազարյանի հաղորդումն սրանալու պահից եղել է գործով վարույթին որպես Կ.Ստեփանյանի ներկայացուցչի ներգրավված Կարեն Ստեփանյանի մասնակցությունը բացառող հանգամանք, Կ.Ստեփանյանի ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու դատավարական օրինական հիմք, ավելին՝ նման դատավարական պահանջ, ինչը հայտնի է եղել ինչպես պաշտպանության, այնպես էլ՝ հարկապես մեղադրանքի կողմին:

(...) Վերոգրյալից բացի, պետք է փաստել, որ անչափահաս Անդրանիկ Նազարյանի մասնակցությամբ 17.12.2020թ. կատարված քննչական գործողությունն անթույլատրելի, իսկ այդ կապակցությամբ մեղադրյալ Անաս Նազարյանի դիրարկումը օրինական է նաև այլ հանգամանքով պայմանավորված: Մասնավորապես, (...) [տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ 71200519 քրեական գործը հարուցվել է և ուղղակիորեն վերաբերել է ընտանիքում մոր կողմից որդու նկատմամբ առերևույթ բռնության դեպքի, բացի այդ անչափահաս փուժող Անդրանիկ Նազարյանը քննչական գործողության պահին եղել է 8 տարեկան, ուստի սույն է անչափահաս հիշյալ փուժողի հարցաքննությունը փաստաձայնագրումամբ իրականացնելու իմպերատիվ օրենսդրական պահանջ և վարույթն իրականացնող մարմնի պարտականություն: Այսինքն, վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ, հիշյալ քննչական գործողությունը սկսվել է շարունակվել է դատավարական կարգի էական խախտմամբ, ինչի արդյունքում ձեռք բերված ապացույցն ինքնին, այդ հիմքով ևս անթույլատրելի է և այն չէր կարող դրվել մեղաագրվող արարքում մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող ապացույցների զանգվածում:

(...) [Գողմի մասնակցությունը գործով վարույթին բացառող հանգամանքի առկայությունը, ինչպես նաև՝ պարտադիր փաստաձայնագրուման ենթակա քննչական գործողությունը հիշյալ կարգի էական խախտմամբ կատարելը կարող է հանգեցնել տվյալ գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների, ինչպես նաև՝ դրանց հետ «թունավոր ծառի պտուղների» կանոնով փոխկապակցված ապացույցների անթույլատրելիության:

(...) [Եշանակված դատարհոգեբանական փորձաքննության չկայացման պարճառ է հանդիսացել ոչ թե (...) Անաս Նազարյանի կողմից այդ գործընթացին խոչընդորոող գործողությունների կատարումը, այլ բացառապես փորձաքննության ներկայանալուց անչափահաս փուժող Ա.Նազարյանի հրաժարումը, ով, կողմերի ներկայությամբ, տրված բազմաթիվ հարցերին ի պարտահասն հայտնել է որևէ անձի, այդ թվում՝ Ա.Նազարյանի հետ փորձաքննության ներկայանալուց հրաժարվելու իր դիրքորոշումը:

(...) [Գործով ձեռք չեն բերվել փոխկապակցված թույլատրելի, վերաբերելի և արժանահավասար ապացույցների այնպիսի համակցություն, որոնք անկողմնակալ դիրքորդի մոր կճնավորեն համոզվածություն առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 71200519 քրեական գործով (...) Անաս Նազարյանը 2020 թվականի դեկտեմբերի 17-ին «Վանաձորի Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈՍԿ-ում անչափահաս փուժող, իր որդի Ա.Նազարյանի հարցաքննությունը միջամրելով՝ ունեցել է գործի բազմակողմնակի, լրիվ և օբյեկտիվ քննությունը խոչընդորդելու նպատակ: Ավելին՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ Ա.Նազարյանի միջամրությունն իրականացվել է գործի ճիշդ և օրինական քննությունն ապահովելու նպատակով և այդպիսի պահանջով, որպիսին իր հերթին ունեցել է իրական և իրավաչափ հիմքեր այդպիսով բացատրելով դատավարական կարգի, այդ թվում՝ անչափահաս փուժողի իրավունքների էական խախտմամբ և սխալներով պայմանավորված

իրավական բացասական հետևանքների առաջացումը: Այդպիսով, Ա.Նազարյանի (...) գործողությունները չեն պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ և 337-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հանցակազմեր»²:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի որոշման համաձայն՝ «(...) [Ա]նչափահաս փուժող Ա.Նազարյանի հարցաքննության օրվա՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ գործող քրեադատական օրենսդրությամբ անչափահաս վկայի կամ անչափահաս փուժողի հարցաքննության րեսաձայնագրատման պարտադիր պահանջ նախատեսված չէր: Հետևաբար, վարույթն իրականացնող մարմնի հետևությունն առ այն, որ Ա.Նազարյանն իր միջամտությամբ կանխել է քրեադատական կարգի էական խախտմամբ իրականացվող քննչական գործողությունը, անհիմն է:

(...) [Վ]արույթն իրականացնող մարմինը շահերի բախման րեսանկյունից որևէ քննարկման և վերլուծության չի ենթարկել այն հանգամանքը, թե հարկապես ինչ քրեական գործի քննությանն է Ա.Նազարյանը միջամտություն ունեցել: Մասնավորապես, ակնհայտ է, որ Ա.Նազարյանը միջամտել է այն քրեական գործի քննությանը, որը հարուցվել էր ենթադրաբար իր կողմից անչափահաս որդու՝ Ա.Նազարյանի նկատմամբ հանցավոր ուրնագության փաստի առթիվ և չի բացառվում, որ որդու հարցաքննությամբ սրացված փաստական րվյալը վկայեր իր կողմից հանցանք կատարելու մասին:

Անկողմնորոշ վերոգրյալը [Առաջին ատյանի դատարանը գրնում է, որ դիմող Կ.Սրեփանյանի հաղորդման կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել (...) լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն և արդյունքում կայացված (...) որոշումը չի բխում քննությանը ձեռք բերված փաստական հանգամանքների համակցությունից և համակողմանի ու օբյեկտիվ վերլուծությունից»³:

11. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է հետևյալ դատողությունը. «(...) Կ.Սրեփանյանի շահերին առնչվող ենթադրյալ հանցագործության դեպքով կատարվել է արդարացի քննություն, այն է՝ նախաքննության ընթացքում ձեռնարկվել են ՀՀ քրեական դատական օրենսգրքով նախատեսված բոլոր ողջամիր միջոցառումները՝ գործի հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու, Ա.Նազարյանի նկատմամբ կայացված վերջնական որոշման հետևությունների արժանահավատության վերաբերյալ Կ.Սրեփանյանի կասկածները փաստարելու համար:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ թեև անչափահաս փուժող Ա.Նազարյանի հարցաքննության օրվա՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ գործող քրեադատական օրենսդրությամբ անչափահաս վկայի կամ անչափահաս փուժողի հարցաքննության րեսաձայնագրատման պարտադիր պահանջ նախատեսված չի եղել, այնուամենայնիվ, նշված հանգամանքն ինքնին

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 22-54:

³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 142-153:

հիմք չէ և չէր էլ կարող հանդիսանալ կայացված որոշումն ըստ էության վերացնելու համար, քանի որ հարցաքննության կարգը սահմանող քրեադատավարական օրենսդրության պահանջները պահպանված լինելը դեռևս չի ենթադրում անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ և 337-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի առկայության մասին:

Անդրադառնալով Առաջին արյանի դատարանի այն պատճառաբանությանը, որ վարույթն իրականացնող մարմինը շահերի բախման տեսանկյունից որևէ քննարկման և վերլուծության չի ենթարկել այն հանգամանքը, թե հատկապես ինչ քրեական գործի քննությանն է Ա.Նազարյանը միջամտություն ունեցել՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ վարույթն իրականացնող մարմինը կայացված որոշմամբ վերլուծել և շահերի բախման տեսանկյունից ևս քննարկման առարկա է դարձրել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քննվող թիվ 71200519 քրեական գործի փաստական տվյալները, ավելին՝ առանց դրանց գրեթե անհնար կլինե՞ր որոշում կայացնելը⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք դիմող Կ.Ստեփանյանի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...):»

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 42-50:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը՝

– մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները (անգործությունը) ենթակա են դատական բողոքարկման), դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների (անգործության) օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված ու պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին⁵:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– նախաքննության մարմինն Աննա Նազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ և 337-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացրել՝ այն պատճառաբանությամբ, որ գործով ձեռք չի բերվել ապացույցների բավարար համակցություն՝ հաստատված համարելու, որ Ա.Նազարյանը, քննչական գործողության միջամտելով, ունեցել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակ, այլ ընդհակառակը՝ նրա արարքն ունեցել է իրավաչափ հիմք, այն է՝ բացառելու դատավարության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի էական խախտմամբ կատարվող քննչական գործողությունից բխող բացասական հետևանքների առաջացումը: Դատահոգեբանական փորձաքննությանն անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանի չներկայանալու պատճառը եղել է վերջինիս կամահայտնությունը, այլ ոչ թե Ա.Նազարյանի գործողության արդյունքը⁶,

– Առաջին ատյանի դատարանն արձանագրելով դիմող Կ.Ստեփանյանի իրավունքների խախտման փաստը, գտել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի կատարվել համակողմանի և անաչառ քննություն: Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանն ըստ էության արձանագրել է, որ քննչական գործողությունը դատավարական կարգի խախտմամբ կատարվելու վերաբերյալ Նախաքննության մարմնի դիրքորոշումը մի դեպքում՝ կառուցված չէ գործով նշանակություն ունեցող փաստական տվյալների համակցված վերլուծության

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԸԳՆ/0003/11/08, Վլադիմիր Բաղդասարյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Հեղինե Պևրոսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԿԴ/0043/11/14 որոշումները:

⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

վրա, մյուս դեպքում՝ չի բխում քննչական գործողությունը կատարելու պահին գործող օրենսդրական կարգավորումներից⁷,

– Վերաքննիչ դատարանն իր անհամաձայնությունն արտահայտելով ստորադաս դատարանի վերոգրյալ եզրահանգմանը, ըստ էության, արձանագրել է, որ նախաքննության մարմնի կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ նախաքննության պատշաճությունն ու համակողմանիությունն ապահովելու և եզրափակիչ դատավարական ակտի օրինականության վերաբերյալ դիմող Կ.Ստեփանյանի կասկածները փարատելու համար: Քննչական գործողության՝ պարտադիր տեսաձայնագրման ենթակա լինելու առումով վարույթն իրականացնող մարմնի պնդումն օրենսդրական կարգավորումներից չբխելու մասին ստորադաս դատարանի դիրքորոշման կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստարկել է, որ այն, ինքնին, վարույթն իրականացնող մարմնի որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու հիմք չէ, քանի որ քննչական գործողության դատավարական կարգի պահպանված լինելը դեռևս բավարար չէ հաստատելու անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ և 337-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմը⁸:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավադրույթի և շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաձեռնված քրեական վարույթի համակողմանիությունն ապահովելու նպատակով, նախաքննության մարմնի կողմից ձեռնարկված միջոցներն ու ձեռք բերված ապացույցները բավարար են վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների կապակցությամբ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու և դրա օրինականության վերաբերյալ դիմող Կ.Ստեփանյանի՝ վճռաբեկ բողոքում շարադրված կասկածները հերքելու համար:

15.1. Մասնավորապես, անդրադարձ կատարելով Ա.Նազարյանի արարքում վարույթն իրականացնող սուբյեկտի գործունեությանը միջամտելու հանցակազմի առկայության վերաբերյալ բողոք բերած անձի պնդմանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները բավարար են հերքելու Ա.Նազարյանի արարքում քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը:

Տվյալ դեպքում խնդրո հանցակազմի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է մեղքի ուղղակի դիտավորության ձևով: Օրենսդիրը հանցակազմի նշված տարրի պարտադիր հատկանիշ է դիտել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակը: Սուբյեկտիվ կողմի նշյալ առանձնահատկություններից ելնելով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթի հանրային մասնակցի կողմից իր իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգին միջամտելը ոչ բոլոր դեպքերում կարող է որակվել որպես քննությանը խոչընդոտել: Վճռաբեկ դատարանն արձանագրում

⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

է, որ արարքը քննարկվող հոդվածով կարող է որակվել, եթե նախաքննության ընթացքում հիմնավորվում է, որ անձը գիտակցել է իր գործողությանը վարույթն իրականացնող մարմնի գործունեությանը միջամտելու հանգամանքը և այդ կերպ նպատակ է հետապնդել խոչընդոտելու քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը, այլ կերպ՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելուն: Այս առումով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ նպատակի առկայության կամ բացակայության հարցը ստուգելիս, անհրաժեշտ է պատշաճ իրավական գնահատականի ենթարկել քրեական հետապնդման մարմնի գործունեությանը միջամտելու իրադրությունը բնութագրող հանգամանքները, արարքը կատարելու պահին անձի մոտ առկա հոգեֆիզիոլոգիական վիճակը և այլ գործոնների ամբողջությունը:

Սույն գործի փաստական տվյալների համակցության համակարգված վերլուծությունից երևում է, որ քննչական գործողության մասնակից անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանի փաստացի խնամքն իրականացրել է մայրը՝ Ա.Նազարյանը, ով երեխայի դասաժամերի ավարտին այցելել է ուսումնական հաստատություն՝ վերջինիս տուն տանելու նպատակով: Տեսնելով, որ ուսումնական հաստատության շենքը լքող համադասարանցիների շարքում բացակայում է իր որդին, դիմել է դասվարին և տեղեկացել, որ որդին դպրոցում է, սակայն այնտեղ գտնվելու պատճառի վերաբերյալ չի իրազեկվել: Այնուհետև, բարձրացել է դասասենյակ, սակայն երեխային չգտնելով՝ դիմել է տնօրենին, ով հայտնել է, որ երեխան այլ դասասենյակում մասնակցում է քննչական գործողության⁹:

Ա.Նազարյանի կողմից դրսևորած վարքագծի առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անչափահաս երեխայի գտնվելու վայրի և հանգամանքների վերաբերյալ տեղեկանալուն նախորդող իրադարձությունները՝ ծնողի անհատական հատկանիշներով պայմանավորված, ողջամտորեն կարող էին առաջացնել ընդհանուր հոգեբանական, զգացմունքային վիճակ՝ ունակ Ա.Նազարյանի մոտ բարձրացնելու երեխայի ֆիզիկական և հոգեկան բարօրության համարժեք պաշտպանություն ապահովելու զգացումը, որն էլ իր հերթին կարող էր հանգեցնել լարվածության, էմոցիոնալ բռնկվածության: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի վերոգրյալ հանգամանքները ողջամտորեն հերքում են Ա.Նազարյանի դրսևորած վարքագծի նպատակի ուղղվածության վերաբերյալ բողոքաբերի պնդումը և հաստատում վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումն առ այն, որ անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանի մասնակցությանը կատարվող քննչական գործողությանը միջամտելով՝ այդ թվում, քննչական գործողության իրավաչափության վերաբերյալ կարծիք արտահայտելով, Ա.Նազարյանի՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը, այն է՝ վարույթի համար

⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 119-121 և 213-219:

նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելուն խոչընդոտելու նպատակը չի հիմնավորվել:

15.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունը, թե քննչական գործողությանը միջամտությունն իրականացվել է իրավաչափի հիմքով, սույն գործով չի կարող դիտարկվել քննությանը խոչընդոտելու հանցակազմի բացակայության հիմնավորում: Տվյալ դեպքում խնդրո առարկա քննչական գործողությունն իրականացվում էր Ա.Նազարյանի կողմից ենթադրաբար հանցանք կատարելու փաստի առթիվ նախաձեռնված վարույթի ընթացքում և Ա.Նազարյանն այդ քննչական գործողության մասնակից չի հանդիսացել: Հետևաբար, քննչական գործողությունը դատավարական կարգի խախտմամբ կատարելու վերաբերյալ դիրքորոշման արտահայտման իրավաչափի եղանակը բացառապես վարույթն իրականացնող մարմնի գործողությունների բողոքարկման կամ այդ սպացույցի ձեռք բերման թույլատրելիությունը վիճարկելու դատավարական կառուցակարգերն են: Ուստի, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է բողոքի հեղինակի դիրքորոշումն առ այն, որ քննարկվող հանցակազմի իմաստով, քննչական գործողության կատարման դատավարական կարգի պահպանվածության հարցն Ա.Նազարյանի արարքի որակման համար նշանակություն չէր կարող ունենալ:

15.3. Մինևսյն ժամանակ, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական վարույթում առկա նյութերը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը հանգել է հիմնավոր հետևության առ այն, որ Ա.Նազարյանի գործողությունները տվյալ իրադրությունում չեն հանգեցրել անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանի՝ դատահոգեբանական փորձաքննությանը չներկայանալուն, իսկ չներկայանալու դիրքորոշումը վերջինիս կամահայտնության արդյունք է: Մասնավորապես՝ Կ.Ստեփանյանի կողմից կատարված տեսաձայնագրության գնության արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությունը, համաձայն որի՝ անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանը բազմաթիվ հարցադրումներին ի պատասխան հայտնել է, որ որևէ անձի հետ չի ցանկանում ներկայանալ փորձաքննությանը, ընդ որում՝ անչափահաս տուժողն իր դիրքորոշումն արտահայտել է նաև քրեական գործը քննող քննիչի և որպես ներկայացուցիչ ներգրավված Կ.Ստեփանյանի ներկայությամբ¹⁰, ողջամտորեն հերքում է Աննա Նազարյանի կողմից անչափահաս տուժող Անդրանիկ Նազարյանի վրա անօրինական ազդեցություն գործադրելու վերաբերյալ կասկածը:

16. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 3-ի որոշման օրինականության

¹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 204-209:

ու հիմնավորվածության, ըստ այդմ՝ դիմող Կ.Ստեփանյանի իրավունքի և օրինական շահի խախտման բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգման հետ:

Ոստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Կ.Ստեփանյանի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

17. Հաշվի առնելով արված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելով և դիմող Կ.Ստեփանյանի բողոքը մերժելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Ոստի ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դիմող Կարեն Աշոտի Ստեփանյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

28.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/0688/06/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

16 նոյեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Հովհաննես Ռեմի Ղամաթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի որոշման դեմ պաշտպաններ Բ.Ասլանյանի և Գ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի մայիսի 10-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 69105413 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 16-ի որոշումներով Հովհաննես Ռեմի Ղամաթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրք) 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով ու նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2013 թվականի մայիսի 16-ի որոշմամբ Հովհաննես Ղամաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է

ընտրվել կալանավորումը, որը հետագայում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշմամբ վերացվել է:

ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա.Մարուխյանի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշմամբ թիվ 69105413 քրեական գործով վարույթը կարճվել է ու Հ.Ղամարյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2. 2019 թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Կ.Կարապետյանը որոշում է կայացրել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա.Մարուխյանի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշումը վերանայելու վարույթ հարուցելու մասին:

Վերանայման վարույթի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Հ.Ավանյանի՝ 2021 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա.Մարուխյանի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշումը վերացվել է ու նախաքննություն կատարելու համար թիվ 69105413 քրեական գործն ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ա.Այվազյանի՝ 2021 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ, սույն քրեական գործին է միացվել Հ.Վարդանյանի ենթադրյալ սպանության դեպքի առթիվ հարուցված թիվ 13141121 քրեական գործը:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ Հ.Ղամարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

4. Պաշտպանների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 31-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Հ.Ղամարյանի պաշտպաններ Բ.Ավանյանը և Գ.Գևորգյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դրանով թույլ է տրվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Այսպես՝ բողոք բերած անձանց պնդմամբ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ ՍԴՌ-1453 որոշմամբ արտահայտված դիրքորոշման իմաստով կալանավորման եղանակով Հ.Ղամարյանի ազատության իրավունքի սահմանափակման անհրաժեշտ նախադրյալ է նրան ներկայացված մեղադրանքի օրինականության ստուգումը՝ քրեական հետապնդման մարմնի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու ընթացակարգային պահանջների պահպանվածության տեսանկյունից: Այդ առնչությամբ բողոքաբերները վերաբերելի իրավադրոյթների լույսի ներքո՝ վերլուծելով հիշյալ որոշման վերանայման վարույթը հարուցելու առիթը՝ որպես նոր երևան եկած վկայակոչված հանգամանքի՝ Ռ.Մադոյանին հայտնի դառնալու ժամանակահատվածի, համապատասխան վարույթի շրջանակներում նրա տված ցուցմունքի՝ արժանահավատության և անհայտ մնացած հանգամանքների բացահայտման համատեքստում, եզրահանգել են, որ վերանայման վարույթն ու արդյունքում գործի նորոգումը տեղի է ունեցել ոչ միայն քրեադատավարական ժամկետի խախտմամբ, այլև այնպիսի իրադարձությունների հաշվառմամբ, որոնք քրեական հետապնդման մարմնի վերացված որոշումը կայացնելու պահի դրությամբ օբյեկտիվ իրականությունում գոյություն չեն ունեցել: Ըստ բողոքի հեղինակների՝ հիշյալ եզրահանգումը բխում է ներկայացված նյութերի համեմատաբար ակնհայտ փաստերից, ուստի առանց քրեական հետապնդումը բացառող վերոգրյալ հանգամանքի քննարկման դատական վերահսկողությունը կրելու է ձևական բնույթ:

Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերները փաստարկել են, որ դատարան ներկայացված նյութերում բացակայում է Հ.Ղամարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը: Հիշյալ դիրքորոշումը հիմնավորվել է նրանով, որ բացառիկ վերանայման արդյունքում ստուգման ենթարկված քրեական հետապնդման մարմնի հիշյալ որոշումը վերացնելու պայմաններում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր կրկին որոշում կայացնելու Հ.Ղամարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, ինչը չի կատարվել:

6.1. Քննարկման առարկա դարձնելով Հ.Ղամարյանին ներկայացված մեղադրանքը՝ դրանում հիմնավոր կասկածի առկայության տեսանկյունից,

483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

բողոքի հեղինակները գտել են, որ նրա նկատմամբ հարուցված միջնորդության հիմնավորվածությունը հաստատող դատարան ներկայացված նյութերը բավարար չեն հաստատելու, որ վերջինս հիմնավոր կերպով է մեղադրվում ենթադրյալ հանցագործության կատարման մեջ:

Մասնավորապես, բողոքաբերները նշել են, որ ստորադաս դատարանները, հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելիս հիմնվել են այնպիսի փաստերի կամ տեղեկությունների վրա, որոնց հաշվառմամբ քրեական հետապնդման մարմինը Հ.Ղամարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել էր՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, ուստի այդպիսիք չեն կարող Հ.Ղամարյանի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության պայմանի՝ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատող փաստական տվյալներ հանդիսանալ: Մինևույն ժամանակ նշվել է, որ դատարան ներկայացված նյութերը համապատասխան եզրահանգման հիմքում չեն կարող դրվել նաև հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու տեսանկյունից բավարար փաստական տվյալներ չպարունակելու, որոշ դեպքում՝ որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության փաստարկմամբ:

Այս համատեքստում բողոքաբերները նշել են նաև, որ ստորադաս դատարանները հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելիս առավելապես հիմնվել են Ռ.Մադոյանի ցուցմունքի վրա, որը հակասական է և իրարամերժ:

6.2. Նշվածի հետ մեկտեղ, բողոքի հեղինակները քննարկման առարկա են դարձրել կալանավորման հիմքերի հիմնավորվածությունը՝ գտնելով, որ առկա չեն ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բավարար կլինեին հիմնավորելու Հ.Ղամարյանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտում նշված ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը, ըստ այդմ՝ մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը:

7. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 31-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով Հ.Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Հովհաննես Ղամարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա. «(...) [Մ]ի խումբ անձանց հետ նսիմական համաձայնությանը շահադիպական դրդումներով ուղղակի դիպավորությամբ կարարել է ապօրինաբար Ռաֆիկ Մադոյանին դիպավորությամբ կյանքից զրկելու՝

սպանության նախապարտավորությանն ուղղված գործողություններ, որպիսիք արտահայտվել են հետևյալում.

Հ.Ղամարյանը Ռ.Մադոյանի հետ ունեցած անբարյացկամ փոխհարաբերությունների պարճառով որոշել է սպանել նրան և հանցավոր մեղադրությունն իրականացնելու նպատակով դիմել է ընկերոջը՝ Սարգիս Զազյանին ու ազգական Դավիթ Զիրոյանին Ռ.Մադոյանի սպանության դիմաց խոստանալով 500.000 ԱՄՆ դոլար և առանձնապես Բալանիայում:

Ս.Զազյանն ու Դ.Զիրոյանն ընդունելով առաջարկը՝ ձեռնամուխ են եղել սպանության նախապարտավորությանը:

Այսպես.

Ս.Զազյանը 2012թ. հոկտեմբերին դիմել է նախկին ազատամարտիկ ընկերոջը՝ Վարուժան Քարիմյանին առաջարկելով ամսական 1000 ԱՄՆ դոլար վարձավարության դիմաց հետևել Ռ.Մադոյանին, ուսումնասիրել նրա ամենօրյա երթուղին, ընկերական և հարազատական կապերը, հաճախակի գրնվելու վայրերը՝ էլեկտրոնային կրիչով տրամադրելով Ռ.Մադոյանի և նրա հարազատների լուսանկարները, քնակության հասցեն, ավտոմեքենայի պերհամարանիշն ու մակնիշը, ինչպես նաև այլ տվյալներ:

Վ.Քարիմյանն ընդունելով առաջարկը, Ռ.Մադոյանի սպանությունը նախապարտավորելու ուղղակի դիտարկությամբ, այն պլանավորելու և իրականացնելու համար նպատակադր պայմաններ ստեղծելու նպատակով՝ 2013թ. փետրվարից ապրիլն ընկած ժամանակահատվածում հետևել է Ռ.Մադոյանին, ուսումնասիրել նրա ամենօրյա երթուղին, ընկերական և հարազատական կապերը, հաճախակի գրնվելու վայրերը, այդ մասին պարբերաբար հայտնել Ս.Զազյանին՝ ինչի դիմաց վերջինից ընդհանուր առմամբ ստացել է 3000 ԱՄՆ դոլար:

Դ.Զիրոյանն իր հերթին, նույն դիտարկությամբ, Հ.Ղամարյանի հետ նախնական պայմանավորվածության համաձայն Ռ.Մադոյանի սպանության կատարող գրնվելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունից ժամանել է Հայաստանի Հանրապետությունն ընթացիկ ծախսերը հոգալու համար Հ.Ղամարյանից ստանալով ընդհանուր 5500 ԱՄՆ դոլար: Սպանության կատարող գրնվելու համար դիմել է աներորդուն՝ Արմեն Սարգսյանին, ով իր հերթին դիմել է քննությամբ չպարզված ոմն Գևորգին: Վերջինս ուսումնասիրելով Ռ.Մադոյանի վերաբերյալ ստացած տվյալները և կատարման հնարավոր պայմանները՝ մերժել է առաջարկը՝ Ռ.Մադոյանի ԱՄԾ Երևան քաղաքի վարչության շենքի հարևանությամբ քնակվելու պարճառով:

Հանցավոր մեղադրությունն իրագործելուն ուղղված դիտարկյալ գործողություններն ավարտին հասցնելու նպատակով Դ.Զիրոյանը 2013թ. մայիսի սկզբներին դիմել է Մարտին Ծերունյանին: Վերջինս, խոստանալով գրնել սպանության կատարողի, երկու օր անց հանդիպել է քննությամբ դեռևս չպարզված անձի, ինչից հետո տալով նախնական դրական պարտախան որպես խոստացված գումարի վճարման երաշխիք պահանջել է Դ.Զիրոյանին մինչև հանցագործության ավարտը մնալ [Հայաստանի Հանրապետությունում]:

Սակայն հանցագործության վերաբերյալ սրացած տեղեկություններն իրացնելիս ՀՀ ոստիկանության աշխատակիցների ձեռնարկված միջոցառումների արդյունքում բացահայտվել ու 2013 թվականի մայիսի 10-ին կանխվել է Ռ.Մարոյանի սպանությունը, ինչի արդյունքում Հ.Ղամարյանի, Ս.Զազյանի, Դ.Զիրոյանի, Վ.Քարիմյանի, Ա.Սարգսյանի, Մ.Ծերունյանի և մյուսների նախապարտադրանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել՝ նրանց կամքից անկախ հանգամանքներով»²:

9. Սույն քրեական գործի շրջանակներում արդեն իսկ մեկ անգամ Հ.Ղամարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանավորումը, որը հետագայում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշմամբ վերացվել է³:

9.1. Քրեական հետապնդման մարմինը, Հ.Ղամարյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով դադարեցնելով, իր որոշմամբ արձանագրել է. «քրեական գործի նախաքննության ընթացքում կատարվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ, որոնց արդյունքում, սակայն, [Հ.Ղամարյանի ու մյուսների] կողմից Ռ.Մարոյանի սպանության նախապարտադրանքն ուղղված գործողություններ կատարելու հանգամանքը հասարարող փոխկապակցված հավասարի սպացույցների բավարար համակցություն ձեռք չի բերվել և սպառվել է դրանք ձեռք բերելու հնարավորությունը, ինչից հետևում է, որ [նրա] նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման»⁴:

10. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից դադարանին տրամադրված նյութերում առկա են բավարար փաստական տվյալներ, որոնք վկայում են մեղադրյալ Հովհաննես Ռեմի Ղամարյանի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքին, այսինքն առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքին, (...)»⁵:

11. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Մ]ինչդարական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող կալանավորման միջնորդությունների քննության ընթացքում դադարանը պետք է արձանագրի և գնահատման ենթարկի բացառապես այն «թերություններ»-ը, որոնց բացահայտման և հաստատման համար գործի փաստական հանգամանքների ու մեղադրանքի հիմքում դրված փաստերի և/կամ սպացույցների բովանդակային քննարկում ու վերլուծություն չի պահանջվում: Մինչդեռ սույն դեպքում առավել քան ակնհայտ է, որ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի՝ նոր երևան եկած հանգամանքների վարույթով թիվ 69105413 քրեական գործով քրեական

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 93-96:
³ Տե՛ս նյութեր, հատորներ 1, 2 և 3:
⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 21-24:
⁵ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 121-138:

հերասայդումը դադարեցնելու և վարույթը կարճելու որոշումը վերացնելու մասին 2021 թվականի հուլիսի 12-ի որոշման օրինականության ստուգումը պահանջում է գործի փաստական հանգամանքների և այդ որոշման հիմքում դրված փաստերի ու ապացույցների բովանդակային քննարկում և վերլուծություն:

(...) Թրեական գործի նյութերում առկա է Հ.Ղամարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2013 թվականի մայիսի 16-ի որոշում, որը Հ.Ղամարյանի և մյուսների նկատմամբ հարուցված քրեական հերասայդումը դադարեցնելու և թիվ 69105413 քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի հունիսի 29-ի որոշման վերացման պայմաններում բավարար է կալանավորման այդ պայմանն ապահովված լինելու փաստի արձանագրման համար:

(...) Գործի նյութերում առկա փաստական րվյալներն ու րեղելությունները (րեն, ի թիվս այնի, կասկածյալ Վ.Քարիմյանի՝ 2013 թվականի մայիսի 10-ի հարցաքննության և լրացուցիչ հարցաքննության արձանագրությունների, վկա Կ.Դալլաբյանի՝ 2013 թվականի մայիսի 10-ի հարցաքննության արձանագրության, րուժող Ռ.Մադոյանի՝ 2013 թվականի մայիսի 10-ի հարցաքննության և 2013 թվականի մայիսի 12-ի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունների, անձին ճանաչման ներկայացնելու մասին 2013 թվականի մայիսի 12-ի արձանագրության, կասկածյալ Վ.Քարիմյանի՝ 2013 թվականի մայիսի 11-ի լրացուցիչ հարցաքննության արձանագրության, խուզարկություն կատարելու մասին 2013 թվականի մայիսի 10-ի արձանագրության, կասկածյալ Մ.Ծերունյանի՝ 2013 թվականի մայիսի 11-ի հարցաքննության արձանագրության, կասկածյալ Գ.Պերրոյանի՝ 2013 թվականի մայիսի 14-ի հարցաքննության արձանագրության, զննում կատարելու մասին 2013 թվականի մայիսի 20-ի արձանագրության, վկա Մ.Քարիմյանի՝ 2013 թվականի մայիսի 21-ի հարցաքննության արձանագրության, զննում կատարելու մասին 2013 թվականի հունիսի 4-ի արձանագրության, վկա Ս.Խասիկյանի՝ 2013 թվականի հունիսի 5-ի հարցաքննության արձանագրության, վկա Մ.Ղարիբյանի՝ 2013 թվականի հունիսի 21-ի հարցաքննության արձանագրության, հեռախոսային խոսակցությունների գաղղրնալման ամիուիագրերի զննության մասին 2013 թվականի հունիսի 27-ի, 2013 թվականի հունիսի 28-ի և 2013 թվականի օգոստոսի 29-ի արձանագրությունների, վկա Յ.Էզրանյանի հարցաքննության արձանագրության, վկա Յ.Էզրանյանի և մեղադրյալ Վ.Քարիմյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 29-ի առերես հարցաքննության արձանագրության, վկա Յ.Էզրանյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 29-ի լրացուցիչ հարցաքննության արձանագրության, րուժող Ռ.Մադոյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ի և 2021 թվականի հունիսի 2-ի հարցաքննությունների և վերջինիս կողմից ներկայացված լագերային սկալտակի սարունակության զննության մասին 2021 թվականի հուլիսի 6-ի արձանագրությունների, վկա Կ.Հակոբյանի՝ 2021 թվականի հունիսի 29-ի հարցաքննության արձանագրության պարճենները, ինչպես նաև համապարասխան մասով [որոշմամբ] մեքերվածը] համակցության մեք հիմք են րայիս փաստելու, որ քննիչի միջնորդությունը քննելիս Առաջին արյանի դատարանն իր րրամադրության րակ բավարար ապացույցներ, փաստեր և

յրեղեկություններ է ունեցել մեղադրյալ Հ.Ղամարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով մեղսագրվող ենթադրյալ հանցանքը նրա կողմից կատարված լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևություն անելու համար, և ըստ էության եկել է ճիշտ եզրահանգման»⁶:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Հ.Ղամարյանի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության պայմանների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Կալանքից ազատված անձը չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին»:*

Մեջբերված քրեադատավարական նորմի մեկնաբանման շրջանակներում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ի ապահովումն անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքի՝ օրենսդիրը լրացուցիչ պայմաններ է նախատեսել կալանքից ազատված կամ այն անձի նկատմամբ նույն մեղադրանքով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը դատարան կրկին ներկայացնելու համար, ում վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է: Այսպես, անձին կալանավորելու միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել միայն բացառիկ դեպքում, **երբ ի հայտ են եկել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելիս** կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելիս, **և որոնք հիմնավորում են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը:**

Քննարկվող դեպքում կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող նոր էական հանգամանքներ ներկայացնելու օրենսդրական պահանջը ելնում է իրավաչափ այն գաղափարից, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման համատեքստում դատարանի կողմից չի կարող բավարարվել այն միջնորդությունը, որում ներկայացված՝ կալանավորման պայմանների և հիմքերի առկայության վերաբերյալ նույն հիմնավորումներն արդեն իսկ մեկ անգամ բավարար չեն գնահատվել նույն մեղադրանքով նույն անձի քննարկվող իրավունքը սահմանափակելու համար⁷:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Հովհաննես Ղամարյանը մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, Ռաֆիկ Մադոյանի

⁶ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 73-102:

⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վոլոդյա Սուքիասյանի գործով 2022 թվականի մարտի 4-ի թիվ ԵԴ/0591/06/20 որոշումը:

սպանության՝ ապօրինաբար դիտավորությանը կյանքից զրկելու նախապատրաստության համար նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 16-ի որոշմամբ ներգրավվել է որպես մեղադրյալ⁸,

– սույն քրեական գործի շրջանակներում արդեն իսկ մեկնանգամ Հ.Ղամարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանավորումը, որը հետագայում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշմամբ վերացվել էր, իսկ հարուցված քրեական հետապնդումը՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից դադարեցվել⁹,

– նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատավարական ակտի վերանայման վարույթի արդյունքներով Հ.Ղամարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա.Մարությանի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշումը վերացվել է¹⁰,

– նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Հ.Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին¹¹,

– Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ ներկայացված նյութերում պարունակվող փաստերը և տեղեկությունները բավարար են արձանագրելու նաև մեղսագրվող ենթադրյալ հանցանքում հիմնավոր կասկածի առկայության մասին վարույթն իրականացնող մարմնի հետևության հիմնավոր լինելը, նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Հ.Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, բավարարել է¹²,

– Վերաքննիչ դատարանը գտնելով, որ Առաջին ատյանի դատարանն օրինական և հիմնավորված որոշում է կայացրել վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ՝ արձանագրել է, որ. ա) գործի նյութերում առկա փաստերն ու տեղեկությունները բավարար են եզրահանգելու, որ Հ.Ղամարյանը հիմնավոր կերպով է մեղադրվում ենթադրյալ հանցագործության կատարման մեջ, բ) քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու որոշման վերացման իրավաչափության հարցը տվյալ դեպքում դուրս է վարույթային այս փուլում դատարանի առջև դրված խնդիրների շրջանակից, գ) Հ.Ղամարյանին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման բացակայության փաստարկը, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, հիմնազուրկ է¹³:

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 1-ին, 9-րդ և 9.1-րդ կետերը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

15. Սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումը կիրառելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Հ.Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, պատշաճ ուշադրության չեն արժանացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ և 285-րդ հոդվածի 6-րդ մասերով նախատեսված և կոնկրետ դեպքում կիրառման ենթակա քրեադատավարական ընթացակարգային առանձնահատկությունը:

Տվյալ դեպքում, վարույթային առանձնահատկությամբ պայմանավորված միջնորդությանը կից ներկայացված փաստական տվյալները, որոնց հաշվառմամբ վարույթն իրականացնող մարմինը հաստատում է հիմնավոր կասկածի առկայությունը, նախ և առաջ ենթակա է գնահատման՝ պարզելու թե արդյոք այդպիսիք հայտնաբերվել կամ առաջացել են Հ.Ղամարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերացնելուց հետո, որից հետո քննարկման առարկա դարձնել կալանքից ազատելուն հաջորդող ժամանակահատվածում ձեռք բերված փաստական տվյալների որակական կազմը: Այդ առումով հատկանշական է, որ նախքան Հ.Ղամարյանի նկատմամբ քրեական հետապնդումը նոր երևան եկած հանգամանքով նորոգելը կատարված քննության շրջանակներում վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանավորում, որը հետագայում վերացվել և քրեական գործի վարույթն արդարացման հիմքով կարճվել է:

Մինչդեռ, ըստ Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ գտնվող նյութերի՝ Հ.Ղամարյանի քննարկվող իրավունքի սահմանափակումը հայցող միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում պարունակվող տվյալները, բացառությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի ոստիկանական բաժանմունքի՝ դաժան հանցագործությունների գրասենյակի գրության, Կալիֆորնիա նահանգի Գերագույն դատարանի ակտի հայերեն թարգմանված օրինակներում, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունից ու ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունից ստացված գրություններում, Ռ.Մադոյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ի և 2021 թվականի հունիսի 2-ի, վկա Կ.Հակոբյանի՝ 2021 թվականի հունիսի 29-ի ցուցմունքներում, Ռ.Մադոյանի ներկայացված լազերային սկավառակի զննության արձանագրությունում ու Ս.Ջազյանի և Դ.Զիրոյանի սահմանափակումների վերաբերյալ տվյալներում առկա որոշակի տեղեկությունների, քրեական հետապնդման մարմնին Հ.Ղամարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերացնելիս հայտնի էին:

Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջնորդվող խափանման միջոցի հիմնավորվածությունը հաստատող այն փաստական հանգամանքները, որոնց առկայությունը քրեական հետապնդման մարմնի կողմից արդեն իսկ մեկ անգամ գնահատվել էին ոչ բավարար, սույն գործով՝ նույն մեղադրանքով Հ.Ղամարյանի ազատության իրավունքը սահմանափակելու համար, ի հակադրումը սույն որոշման 13-րդ կետում նշված սկզբունքի, չեն կարող դիտարկվել որպես բավարար փաստակազմ՝ քննարկվող ընթացակարգի շրջանակում Հ.Ղամարյանի կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Հետևապես, կալանքից ազատված անձի ազատության իրավունքի ապահովման երաշխիքի առումով խնդրո առարկա միջնորդությամբ ներկայացված՝ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ հիմնավորումները գնահատման պետք է ենթարկվեն ներկայացված կոյթերում պարունակվող այն փաստական տվյալների շրջանակներում, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին Հ.Ղամարյանի նկատմամբ կիրառված կալանավորման անհրաժեշտության բացակայության մասին եզրահանգում կատարելիս:

15.1. Նման պայմաններում, քննարկման առարկա դարձնելով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը թվարկված փաստական տվյալներում պարունակվող միջաբք տեղեկությունները թեև հայտնաբերվել են Հ.Ղամարյանի նկատմամբ կիրառված կալանավորումը վերացնելուն հաջորդող ժամանակահատվածում, սակայն այդպիսիք իրենց բողանդակությամբ բավարար չեն համոզմունք ձևավորելու, որ Հ.Ղամարյանը հիմնավոր կերպով է մեղադրվում ենթադրյալ հանցագործության կատարման մեջ:

Մասնավորապես՝ կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքի լույսի ներքո¹⁴ համադրելով միջնորդության հիմնավորվածությունը հաստատող՝ կալանքից ազատելուն հաջորդող ժամանակահատվածում ձեռք բերված փաստական տվյալները՝ Հ.Ղամարյանին առաջադրված մեղադրանքի որոշման մեջ շարադրված՝ Ռ.Մադոյանի սպանության նախապատրաստմանն ուղղված նրա գործողությունների հետ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ.

– Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական մարմինների տրամադրած փաստաթղթերի թարգմանված օրինակները, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներից ստացված գրություններն իրենց բովանդակությամբ առերևույթ փոխկապակցված չեն Հ.Ղամարյանին առաջադրված մեղադրանքում նկարագրված արարքի հետ, ուստի որևէ նշանակություն չեն կարող ունենալ միջնորդվող խափանման միջոցի պայմանի՝ հիմնավոր կասկածի առկայության գնահատման տեսանկյունից,

¹⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Երիսազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը և այդ որոշմամբ վկայակոչված որոշումները:

- տուժող Ռ.Մադոյանի, վկա Կ.Հակոբյանի ցուցմունքները, լագերային սկավառակի գննության արձանագրությունը և սահմանահատումների պատմությունն ինչպես ինքնին, այնպես էլ համակցությամբ չեն պարունակում հիմնավոր կասկածի չափանիշներին բավարարող փաստական տվյալներ առ այն, որ Հ.Ղամարյանը կատարել է իրեն վերագրվող հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն:

16. Նախորդ կետերում նշված հանգամանքներն իրենց համակցությամբ Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս եզրահանգելու, որ նույն մեղադրանքով Հ.Ղամարյանի ազատության իրավունքը կալանավորման եղանակով կրկին սահմանափակելու վարույթի շրջանակում նախաքննության մարմնի կողմից ներկայացված փաստական տվյալները բավարար չեն Հ.Ղամարյանին մեղազգրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարմանը նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված համարելու համար:

17. Անդրադարձ կատարելով բողոքի հեղինակների այն պնդմանը, որ քրեական հետապնդման մարմնի՝ 2015 թվականի հունիսի 29-ի որոշումը՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերացնելը տեղի է ունեցել դատավարական կարգի խախտմամբ, ուստիև առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, Վճռաբեկ դատարանը, քրեական վարույթի շրջանակներում խափանման միջոց կալանքի կիրառմամբ անձի ազատության իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության սահմանների վերաբերյալ իր նախադեպային իրավունքի հաշվառմամբ արձանագրում է, որ քննարկվող խափանման միջոցը կիրառելու միջնորդության քննարկման արդյունքում դատարանը պետք է ստուգի նաև կալանավորման ինքնուրույն պայմանի, մասնավորապես՝ սույն գործի փաստական հանգամանքներով պայմանավորված քրեական հետապնդումը դադարեցնելու և գործով վարույթը կարճելու որոշումը վերացնելու մասին դատավարական ակտի առկայությունը, իսկ այն վերացնելու իրավաչափության քննարկումը դուրս է վարույթային այս փուլում դատարանի առջև դրված խնդիրների շրջանակից: Վերոնշյալը հատկապես կարևոր է ներկայիս կարգավորումների պայմաններում, երբ նախատեսված է չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելու մասին որոշումը վիճարկելու ինքնավար ընթացակարգ¹⁵:

Մինևս սույն ժամանակ, հարկ է նշել, որ դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ այդ որոշումը վերացվել է ոչ պատշաճ, օրենքով չլիազորված սուբյեկտի կողմից կամ համաբնույթ դատավարական կարգի խախտմամբ: Ընդ

¹⁵ Տե՛ս 2020 թվականի հունիսի 4-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածը:

որում, այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա¹⁶: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ պաշտպանության կողմի վերաբերելի գնահատականը կառուցված է ներկայացված փաստակազմում առկա տեղեկությունների համադրման, վերլուծության, արժանահավատության գնահատման և վերաբերելի իրավադրույթների մեկնաբանման արդյունքում արված դատողությունների վրա:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում նաև բողոքաբերների այն մոտեցմանը, որ քրեական գործի վարույթը նորոգելու պայմաններում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր կրկին որոշում կայացնել Հ.Ղամարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը կառուցված է այն տրամաբանության վրա, որ բացառիկ վերանայման արդյունքում քրեական հետապնդումը դադարեցնելու և գործով վարույթը կաճելու որոշումը վերացնելու դեպքում գործում է «հակադարձ արդյունքի» կանոնը, այսինքն՝ այդ որոշման վերացման փաստի ուժով նախկինում հարուցված քրեական հետապնդումն ինքնաբերաբար նորոգվում է և անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կրկին կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

18. Ամփոփելով կատարված վերլուծությունը Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 16-րդ կետում արված եզրահանգումը, արձանագրում է, որ Հ.Ղամարյանի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության պայմանների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Նշված հետևության հաշվառմամբ և կրկնելով, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելն ինքնին բացառում է կալանավորման հիմքերի գնահատման հնարավորությունը¹⁷, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի՝ սույն որոշման 6.2-րդ կետում նշված փաստարկին անդրադառնալն առարկայագուրկ է:

19. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 135-րդ, 142-րդ և 285-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս

¹⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վահրամ Գևորգյանի գործով 2011 թվականի փետրավարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10, Արամ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 և սույն որոշմամբ վկայակոչված՝ Էդգար Եղիազարյանի գործով որոշումները:

¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Եղիազարյանի գործով վերը նշված որոշման 20-րդ կետը:

փոփոխելու կայացված դատական ակտերը, այն է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 31-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը բեկանելու, իսկ մեղադրյալ Հ.Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մերժելու:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Հովհաննես Ռեմի Ղամարյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 31-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը բեկանել:

Մեղադրյալ Հովհաննես Ռեմի Ղամարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ա.Այվազյանի միջնորդությունը՝ մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

սրորագրություն

Դատավորներ

սրորագրություններ

29.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/0112/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

24 նոյեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Սեդրակ Ռոբերտի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62229318 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ թիվ 62229318 քրեական գործը 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 190-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ Սեդրակ Ռոբերտի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2019 թվականի փետրվարի 19-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը (այսուհետ՝ նաև՝ Քննչական դեպարտամենտ) հաղորդագրություն է տարածել դեպարտամենտի վարույթում քննվող թիվ 62229318 քրեական գործով Ս.Քոչարյանին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ:

1.1. Դիմող Ս.Քոչարյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանը Քննչական դեպարտամենտի վերոնշյալ գործողության դեմ 2019 թվականի փետրվարի 27-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ միջնորդելով պարտավորեցնել ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտին հրապարակայնորեն հերքել վերը նշված հաղորդագրությունը և հրապարակայնորեն ներողություն խնդրել Ս.Քոչարյանից այդ հաղորդագրության մեջ տեղ գտած արտահայտությունների համար:

2. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը բավարարել է մասնակիորեն՝ ճանաչելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի հաղորդագրությամբ Ս.Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտումը:

3. Վերոգրյալ որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Ա.Արամյանը և ներկայացուցիչ Հ.Ալումյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշմամբ ներկայացուցիչ Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով թողնվել է առանց քննության: Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավոր չեն, կայացվել են քրեադատավարական օրենքի էական խախտումներով, որոնք հիմք են վիճարկվող որոշումները բեկանելու համար: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության մամուլի հաղորդագրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի իմաստով չի կարող դիտվել որպես «հեղափոխության մարմնի աշխարհակարգի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինների ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշում կամ գործողություն» և մամուլ հաղորդագրությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի կարող լինել:

Ինչ վերաբերում է 2019 թվականի փետրվարի 19-ի հաղորդագրության մեջ տեղ գտած արտահայտությունների համար մեղադրյալից հրապարակայնորեն ներողություն խնդրելուն, ապա բողոքաբերը փաստել է, որ ներկայացված պահանջն ինքնին դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումներից, ինչը, բողոքաբերի պնդմամբ, արձանագրել է նաև Առաջին աստիճանի դատարանը:

5.1. Անդրադառնալով հաղորդագրության բովանդակությանը՝ բողոքաբերը նշել է, որ դրանով թույլ չի տրվել Ս.Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտում: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ քննարկվող հրապարակման մեջ ըստ էության արձանագրվել է, որ նախաքննության փուլում գտնվող քրեական գործով Ս.Քոչարյանին առաջադրվել է մեղադրանք, շարադրվել է մեղադրանքի ձևակերպումը և առկա է ծանուցում առ այն, որ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

5.2. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ մերժելով դիմողի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանը, հիմնավորումները և պահանջը.

6. Դիմողի ներկայացուցիչ Հ.Ալումյանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ բողոքում մատնանշված մոտեցումները չեն բխում գործի փաստական հանգամանքներից և հակասում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 2-րդ կետին, 13-րդ հոդվածին, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք նորմերին:

6.1. Ըստ ներկայացուցչի, եթե Վճռաբեկ դատարանը քննի վերոնշյալ բողոքը, ապա պետք է մատնանշի, թե ի՞նչ դատավարական եղանակով կարող է անձը պաշտպանել իր անմեղության կանխավարկածը, քանի որ նման իրավիճակներում անձը չունի իր խախտված իրավունքի պաշտպանության ներպետական միջոց:

Ներկայացուցիչը նշել է, որ ՀՀ Սահմանադրությունը, Եվրոպական կոնվենցիան և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը պարտավորեցնում են պետությանն ապահովել, որպեսզի անձն ունենա տվյալ իրավունքի պաշտպանության միջոց: Հետևաբար, ըստ ներկայացուցչի՝ Ս.Քոչարյանին Քննչական դեպարտամենտի գործողությունների բողոքարկման հնարավորություն տրամադրելը Հայաստանի Հանրապետության պարտականությունն է, և ներկայացված բողոքի քննության արդյունքում, Վճռաբեկ դատարանը պարզապես կարող է հստակեցնել, թե կոնկրետ ի՞նչ ընթացակարգով պետք է անձը նմանօրինակ իրավիճակներում պաշտպանի իր իրավունքը ենթադրյալ խախտումից:

6.2. Վերոշարադրյալի հիման վրա՝ ներկայացուցիչը խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի հաղորդագրության համաձայն՝ «(...) «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, իր գործառնությունների իրականացման շրջանակներում միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության նորմերի հիման վրա հետևողական պայքար մղելով փորձաքննության անվտանգության դեմ ուղղված հանցավորության հետ, Քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործի շրջանակներում իրականացված լայնածավալ քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտել է առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու և հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներն օրինականացնելու հանցադեպեր, որոնց կազմակերպման հետ անմիջական առնչություն է ունեցել ՀՀ երկրորդ Մախազահ Ռոբերտ Բոչարյանի որդին՝ Ստեփան Բոչարյանը: Քրեական գործով հասարակված փաստական փյուջաների համաձայն՝ վերջինը կազմակերպել և ղեկավարել է իր հիմնադրած ՄՊ ընկերություններից մեկի պարասիանսարտ աշխարհակիցների կողմից օրենքով սահմանված, հարկման համար հիմք հանդիսացող հաշվարկում ակնհայտ կեղծ փյուջաներ մրցնելու և առանձնապես խոշոր չափերով եկամտային հարկ չվճարելու գործընթացը, որից հետո, նպատակ ունենալով խեղաթյուրել հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով եկամտի պետական բյուջե չվճարված հարկի ծագման աղբյուրը և իրական բնույթը, այն օրինականացրել է մի շարք բանկային փոխանցումների՝ այդ եկամուտները գույքի ձեռք բերմանն ուղղելու եղանակով: Մասնավորապես՝

երրորդ անձի կողմից անհատական տնտեսական ակտիվներից մեկում ներդրած, դեռևս ծագման աղբյուրով առանձին իրավական գնահատականի արժանի 5.300.000 ԱՄՆ դոլարն անհատուց սրանապու նպատակով՝ Սեդրակ Քոչարյանը ձեռնամուխ է եղել շինծու գործարքներով այդ գումարն իր հիմնադրած ընկերության անվամբ ձևակերպելուն և դրա միջոցով սրանապու: Ցանկանալով խոստովել դրանից բխող հարկային պարտավորությունները կատարելուց՝ վերջինը վերոհիշյալ ՄՊ ընկերության անունին հանձնարարել է կնքել 2 շինծու անհատուց փոխառության պայմանագրեր և դրանց վրա նաև հաշվապահական ձևակերպում, ինչի հետևանքով 5.300.000 ԱՄՆ դոլարը փոխանցվել է Սեդրակ Քոչարյանի անձնական հաշվեհամարին՝ իբրև վրձած փոխառության վերադարձ:

Դրա հետ մեկտեղ, իր հիմնադրած հիշյալ ընկերության անունին, օրենսդրության պահանջների խախտմամբ, որպես հարկային գործակալ պարտավոր լինելով պահել և ՀՀ պետական բյուջե փոխանցել Սեդրակ Քոչարյանի կողմից երրորդ անձից անհատուց որպես եկամուտ սրացած գումարից եկամտային հարկը, Սեդրակ Քոչարյանի կազմակերպմամբ և ղեկավարմամբ, պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկը նվազեցնելու նպատակով, ընկերության հարկման համար հիմք հանդիսացող համապատասխան ամփոփ հաշվարկում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ, որի հետևանքով չի վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 916.706.560 ՀՀ դրամի չափով հարկեր (տույժերով և տուգանքներով հանդերձ՝ 1.968.627.338 ՀՀ դրամ):

Դրանից հետո, նպատակ ունենալով իր և ընտանիքի մյուս անդամների հետ փոխկապակցված ընկերությունների միջև մի շարք գործարքների կնքմամբ խեղաթյուրել հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով հիշյալ եկամտի պետական բյուջե չվճարված հարկի գումարի իրական բնույթը և ծագման աղբյուրն ու այն ներդնել օրինական շրջանառության մեջ, Սեդրակ Քոչարյանն այն միախառնել է բանկային հաշվին եղած 5.682.960 ԱՄՆ դոլարի հետ և օրինականացրել է մի շարք բանկային փոխանցումների, փոխարկման, այդ եկամուտները «Բեսար Վեստերն Կոնգրես» իրականացրելով ձեռքբերմանն ուղղելու եղանակով:

Գործով ձեռք բերված, փոխկապակցված, հավասարի, բավարար սպացույցների համակցությամբ Սեդրակ Ռոբերտի Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես խոշոր չափերով հարկ չվճարելը կազմակերպելու և առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով սրացված եկամուտներն օրինականացնելու համար, իսկ նրա հիմնադրած ՄՊ ընկերության անունին Ալեքսան Սամսոնի Ոսկանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, ով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել: Նրանց նկատմամբ որպես խախտման միջոցներ ընտրվել են չեղանապու մասին պորտագրությունները:

Սեդրակ Քոչարյանի և նրա ընտանիքի անդամների բազմաթիվ անշարժ գույքերի և այլ ակտիվների ձեռքբերման օրինականությունը պարզելու ուղղությամբ

ձեռնարկվում են լայնածավալ քննչական գործողություններ, քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անալեզ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռով»²:

8. Դատախազի՝ ներկայացուցիչ Հ.Ալունյանին հասցեագրված 2019 թվականի մարտի 11-ի թիվ 7-27-19 գրության համաձայն՝ «(...) [Ն]ախաքննություն իրականացնող մարմնին մամուլի հաղորդագրություններ հրատարակելու կապակցությամբ որոշակի գործողությունների պարտադրելը, այդ թվում՝ բովանդակությունը հերքելուն կամ դրա հետ կապված հրատարակայնորեն ներողություն ինքրելուն պարտավորեցնելը, դուրս են դատախազությանը ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակից: (...) Ձեր կողմից ներկայացված միջնորդությունը (...) չի պարունակում քրեադատավարական օրենքով նախատեսված գործողություններ կատարելու կամ որոշումներ կայացնելու պահանջ, ուստի և չի կարող քննության առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով»³:

9. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի կարգով բողոքարկման ենթակա են պետական մարմինների և պաշտոնատար անձանց այն որոշումները և գործողությունները, որպիսիք կայացվել են օրենսգրքի 53-րդ, 55-րդ և 56-րդ հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում:

Տվյալ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի փոստացի մեկնաբանման պայմաններում, եթե ընդունենք, որ բողոքարկման ենթակա են միայն այն որոշումները և գործողությունները, որոնք ուղղակիորեն թվարկված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, սպա միգուցե, առանձին վերցրած, պետական մարմնի փոստացի հաղորդագրությամբ անմեղության կանխավարկածի հնարավոր խախտման փաստը չի կարող վիճարկվել նշված կարգով: Սակայն Դատարանը, հաշվի առնելով վերը նշված օրենսդրական կարգավորումները և դրա շուրջ արված իրավական մեկնաբանությունները, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող այդպես նեղ ընկալվել և դրանով իսկ վրանագել անձանց դատական պաշտպանության իրավունքը, քանի որ քննարկվող հոդվածի 1-ին մասի խնամարով «որոշում և գործողություն» եզրույթի տակ պետք է դիտել քրեական գործի շրջանակներում, գործի հետ կապված պետական իրավասու մարմնի ընդհանուր լիազորությունների մեջ մտնող ցանկացած որոշում և/կամ գործողություն, որով հնարավոր է խախտված լինի քրեական գործի այս կամ այն մասնակցի իրավունքները և շահերը: Ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 9-11:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 64-65:

օրենսգրքի 290-րդ հոդվածի համարերքարում պերք է դիարարկել նաև հենց այդ որոշումների և գործողությունների կարարանան ընթացքում և դրա հեր կապված առաջացած հերևանքների բողղբարկման հնարավորությունը: Այլ խոսքով՝ «սույն օրենսգրքով նախարեևված որոշումներ և գործողություններ» ձևակերպման տակ պերք է հասկանալ նաև վարույթն իրականացնող մարմնի՝ իր լիազորություններից բխող և դրա իրականացման ճանապարհին կարարվող այն գործողությունները, որոնք վերջինը կարարել է տվյալ գործի ընթացքում, դրա շրջանակներում և դրա կապակցությամբ:

Սույն իրավիճակում հարկ է նկարել, որ ինդրո առարկա հանդիսացող հաղորդագրությունը հրապարակվել է ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջում, որի բովանդակությունը կազմել է հենց վարույթն իրականացնող մարմնի և դեռ ավելին՝ իրենց թույլտվությամբ է այն հրապարակվել: (...)

(...) Գործի քննություն իրականացնող սուբյեկտը, ով ունի մեղադրանք առաջադրելու անվիճելի լիազորություն, իր այդ քայլով փորձել է հերքել հնարավոր այն կասկածները, որ առաջադրված մեղադրանքը շինծու է: Ուարի անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտումը հանդիսանում է քննիչի կողմից լիազորությունների իրականացման ճանապարհին իր իսկ գործողությունների արդյունքում առաջացած հերևանք, որը չի կարող անշար դիարվել վերջինի դարավարական լիազորություններից: Այսինքն, եթե քննիչը չունենար գործի քննություն իրականացնելու, մեղադրանք առաջադրելու լիազորություն, սպա բնական է, որ օբյեկտիվորեն չէր էլ կարող իր քայլերով խախտել անձի իրավունքը, իսկ մյուս կողմից այդ դեպքում կարող էր առաջանալ նախաքննական գաղտնիքի հրապարակման հարց, քանի որ դրա սահմանափակման բացարձակ իրավասությունը կրկին պարկանում է քննիչին: (...)

Եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, որ անմեղության կանխավարկածի խախտման հարցը չի կարող քննարկվել ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով, սպա, բողղր դեպքերում, այն ենթակա է դարական կարգով քննության, քանի որ դա բխում է անձի դարական պաշտպանություն սրանալու իրավունքից: (...)

Դարարանը գրնում է, որ հրապարակված հաղորդագրությունը պարունակում է մի շարք ձևակերպումներ, որոնց բովանդակությունը ողջամորեն վկայում է Սեղրակ Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտման մասին, քանի որ նշված տեղեկարվությունը զուսպ և նրբանկարորեն արված չեն, դարողություններում գոնե մեկ անգամ չի օգրագործվել «վարույթն իրականացնող մարմնի կարծում է», «ենթադրվում է», «ստերևույթ», «ամենայն հավանականությամբ» և նմանարիպ այլ արտահայտություններ: Փոխարենը օգրագործվել է հարարական մերքեր, որով կարծես՝ անձի մեղավորությունն արդեն ապացուցված է: Այսինքն՝ Դարարանի համար ընդունելի է պաշտպանական կողմի այն մրավախոսությունը, որ վերը նշված հաղորդագրությունը հանրության, մասնավորապես՝ ողջամիդ դիտրողի մուր կարող է առաջացնել այն հավարը, որ Սեղրակ Քոչարյանը մեղավոր է: Հարկանշական է, որ նշված հաղորդագրությունն օրերի ընթացքում լայն տարածում է արացել զանգվածային լրարվության ոլորտում

և հասանելի դարձել հանրության բոլոր շերտերին, ինչն ավելի է բարձրացնում անվտանգության կանխավարկածի խախտման հավանականությունը: (...)

Այսպիսով՝ Դատարանը, հաշվի առնելով վերը նշված մեկնաբանությունները, գալիս է այն եզրահանգման, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից Սեդրակ Քոչարյանի անվտանգության կանխավարկածը խախտվել է: Անդրադառնալով քննարկվող հաղորդագրությունը հրապարակայնորեն հերքել և Սեդրակ Քոչարյանից ներողություն խնդրել պարբերաբար մասով բողոքաբերի խնդրանքներին՝ Դատարանը գրնում է, որ այդ մասով բողոքը ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քրեական դատավարության շրջանակներում Դատարանն ինչպես ներողություն խնդրելու, այնպես էլ հրապարակավ հերքելու պարբերականություն սահմանելու իրավական հնարավորություն և լիազորություն չունի: Հետևաբար, հաշվի առնելով, որ Կոմիտեի կողմից կարող է ուղղակի ճանաչվել և արձանագրվել անձի իրավունքների խախտման փաստը՝ գրնում է, որ բարձրացված հարցերի քննարկումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներից:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ հիշյալ պահանջի չբավարարումը չի կարող որևէ կերպ վկայել խախտված իրավունքի վերականգնված չլինելու մասին, քանի որ սույն որոշմամբ արձանագրված անվտանգության կանխավարկածի խախտումը և դրա հրապարակայնացումը, այդ թվում՝ նաև՝ հենց ՋԼՄ-ների միջոցով, արդեն իսկ բավարար է խախտումը վերականգնելու համար: Իսկ վարույթն իրականացնող մարմինը ոչ մի դեպքում կաշկանդված չէ անվտանգության կանխավարկածի վերականգնումն էլ ավելի անհասկանալի համար որոշակի քայլեր ձեռնարկել, օրինակ՝ հանդես գալ լրացուցիչ հայտարարությամբ, հաղորդագրությունը վերաձևակերպել և այլն⁴:

10. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի որոշումը, արձանագրել է հետևյալը. «(...) Մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չեն կարող չհանդիսանալ նաև վարույթն իրականացնող մարմնի իր լիազորություններից բխող և դրանց իրականացման ընթացքում նրա կողմից, վերջինիս նախաձեռնությամբ կամ թողարկությամբ (համաձայնությամբ) կատարվող այն բոլոր գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքները և դրանց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է մինչդարական վարույթի ընթացքում մեղադրյալի անվտանգության կանխավարկածին, որպիսին հիմնարար իրավունք է, իսկ դրա խախտմանը հանգեցնող գործողության կամ անգործության բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում կարող է հանգեցնել անձի իր խախտված իրավունքների կամ ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքի արժեզրկման: (...) Վերաքննիչ դատարանը փաստում է,

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 84-98:

որ քրեական հետապնդման մարմնի անձի անմեղության կանխավարկածի խախտման հանգեցնող գործողությունների կամ անգործության մինչդարական վարույթի նկարմամբ դարական վերահսկողության առարկա հանդիսանալու վերաբերյալ Առաջին արյանի դարարանի (...) պարճատարանությունների ու եզրահանգման հեր ընդհանուր առմամբ չհամաճայնելու իրավաչաաի հիմքեր չկան: (...)

Այլ կերպ՝ Մեղրակ Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի բողոքն ըստ էության քննելով՝ Առաջին արյանի դարարանը թույլ չի տվել դարական սխալ նյութական կամ դարավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: (...)

Վերաքննիչ դարարանն արճանագրում է, որ իրավաչաաի հիմքեր չկան չհամաճայնելու Առաջին արյանի դարարանի հերևությանն առ այն, որ նշված հաղորդագրությանը Մեղրակ Քոչարյանի անմեղության կանխավարկածը խախտվել է: Այլ կերպ՝ Մեղրակ Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ Առաջին արյանի դարարանի հերևությունը ևս հիմնավոր է, այդ հարցում նույնպես թույլ չի տրվել դարական սխալ նյութական կամ դարավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա»⁵:

Վճռաբեկ դատարանի պատճատարանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ անձի անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման կապակցությանը քրեադատավարական ընթացակարգով իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմների հստակեցման, անմեղության կանխավարկածի խախտումը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու չափանիշների որոշակիացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու և իրավունքի զարգացման խնդիր: Ոստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ճևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարճրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք ստորադաս դատարանների կողմից ՀՀ ազգային անվտանգության ճատայության քննչական դեպարտամենտի՝ 2019 թվականի փետրվարի 19-ին տարաճած հաղորդագրության կապակցությամբ Մեղրակ Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտման հիմքով բերված բողոքը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնելը:

⁵ Տնն նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 73-97:

1. Անմեղության կանխավարկածը՝ որպես հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի հիմնարար իրավունք.

13. Եվրոպական կոնվենցիայի՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու սզարությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանման շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ, պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը⁶,

– անմեղության կանխավարկածի խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով⁷,

– անմեղության կանխավարկածը որպես քրեական գործի վարույթի դատավարական երաշխիք, ի թիվս այլի, որոշակի պահանջներ է սահմանում՝ կապված դատական իշխանության մարմինների կամ այլ հանրային պաշտոնատար անձանց կողմից կասկածյալի (մեղադրյալի, ամբաստանյալի) մեղավորության վերաբերյալ կանխակալ արտահայտությունների հետ⁸՝ շեշտադրելով վերջիններիս կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին⁹:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Matijasevic v. Serbia* գործով 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 23037/04, 48-րդ կետ:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Garycki v. Poland* գործով 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, 66-րդ կետ:

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Allenet de Ribemont v. France* գործով 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 35-36-րդ կետեր, *Nesták v. Slovakia* գործով 2007 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 65559/01, 88-րդ կետ:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Daktaras v. Lithuania* գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, 41-րդ կետ:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի խախտում է համարել դատախազի կողմից գործի վարույթը կարճելու որոշմամբ տրված հետևյալ ձևակերպումը. «հանցանքի կատարման պահին (դիմումատրոն) ևս կրել է (...) վնաս» և «գրկանքներ կրելով (դիմումատրոն) քավել է իր մեղքը»¹⁰:

14. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվող իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով»:

14.1. Մարդու իրավունքների կոմիտեն՝ նշված հոդվածի շրջանակներում նշել է, որ անմեղության կանխավարկածը ենթադրում է նաև իրավունք՝ արժանանալու այդ սկզբունքին համապատասխան վերաբերմունքի: Հետևաբար, այն պարտականություն է հանրային իշխանության բոլոր ներկայացուցիչների համար՝ ձեռնպահ մնալու վարույթի արդյունքը կանխորոշելուց¹¹:

15. ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: (...)»:

17. Անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ սահմանադրաիրավական և քրեադատավարական վերոնշյալ նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն *Արմեն Բադրասարյանի* գործով արձանագրել է, որ հանցագործության կատարման մեջ կասկածվողի կամ մեղադրվողի մեղքն ապացուցված կարող է համարվել միայն դատարանի՝ օրենքով սահմանված կարգով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այլ խոսքով՝ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորությունը կարելի է հաստատված համարել միայն այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ¹²:

18. Վերը վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը երաշխավորում է հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի՝ միջազգայնորեն ճանաչված հիմնարար իրավունքը՝

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Virabyan v. Armenia* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, 193-րդ կետ:

¹¹ Տե՛ս Human Rights Committee, General Comment 13, Article 14 (Twenty-first session, 1984), Compilation of General Comments and General Recommendations Adopted by Human Rights Treaty Bodies, U.N. Doc. HRI/GEN/1/Rev.1 at 14 (1994), կետ 7:

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Բադրասարյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԳ/0009/11/13 որոշման 14-րդ և 15-րդ կետերը:

համարվելու անմեղ մինչև մեղադրական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ սկզբունքի վրա են խարսխված քրեադատավարական առանցքը կազմող մի շարք ինստիտուտներ: Այդ պատճառով, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների կոմիտեն, այնպես էլ Վճռաբեկ դատարանը մշտապես կարևորել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանումը քրեական վարույթի ողջ ընթացքում՝ սկսած դրա ամենավաղ փուլից:

19. Սակայն, գործնականում անմեղության կանխավարկածը կարող է խախտվել՝ իր բնույթով *ընթացակարգային* և *կյուրթական* առումներով: Օրինակ՝ ընթացքի մեջ գտնվող վարույթի շրջանակներում անձի անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններ անելը, որը չի ազդում գործով վերջնական որոշման կայացման վրա, անմեղության կանխավարկածի *ընթացակարգային* խախտում է¹³: Մինչդեռ, անմեղության կանխավարկածի այնպիսի խախտումները, որոնք պաշտպանության կողմի ապացույցների անտեսմամբ, ազդում են դատական ակտի կամ այլ վերջնական որոշման բովանդակության վրա (ինչպես օրինակ՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով սույն որոշման 13.1-րդ կետում ներկայացված վճռի), իրենց բնույթով *կյուրթական* են¹⁴:

20. Հատկանշական է տարբերակել, որ եթե անմեղության կանխավարկածի կյուրթական բնույթի խախտումները կարող են թույլ տրվել, որպես կանոն, քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից, ապա ընթացակարգային բնույթի խախտումներ կարող են կատարել ինչպես հանրային մասնակիցները, այնպես էլ վարույթի մասնավոր մասնակիցները, ավելին՝ նույնիսկ վարույթի մասնակից չհանդիսացող պետական իշխանության ներկայացուցիչներ, մարմիններ, պաշտոնատար անձինք, զանգվածային լրատվության միջոցներ, այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Այսինքն՝ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ինչպես վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ առհասարակ քրեական դատավարության սուբյեկտի կարգավիճակ չունեցող անձանց կողմից:

21. Նման պայմաններում առաջ է գալիս անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անհրաժեշտությունը, որը նույնպես կարևորվում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինների կողմից: Այս առումով հատկանշական են Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի առկայությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Այս համատեքստում դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի այդ հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի առկայություն՝ Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի» բողոքի էությունը քննելու և համապատասխան

¹³ Տե՛ս Amal Clooney, Philippa Webb, *The Right to a Fair Trial in International Law*, Oxford University Press (2020), էջ 249:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույթով նախատեսված իրենց պարտականությունները¹⁵: Բացի այդ, դատարանը կարևորել է, որ 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ, ընդ որում՝ դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պետության գործողություններով կամ բացթողումներով¹⁶: Ավելին, հարկ է նաև հիշատակել, որ ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդամ պետություններին հորդորել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերանայել իրենց իրավական համակարգերը և, ըստ անհրաժեշտության, օրենսդրության կամ դատական որոշումների միջոցով ամրագրել անհրաժեշտ և պատշաճ միջոցներ՝ երաշխավորելու համար Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պաշտպանության արդյունավետությունը¹⁷:

Հետևաբար, վերոգրյալի հաշվառմամբ, կարևոր է որոշակիացնել անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու լեգիտիմ հնարավորությունների շրջանակը:

II. Անմեղության կանխավարկածի խախտման դեպքում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները.

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոստողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն

¹⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Petropavlovskis v. Latvia* գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, 91-րդ կետ:

¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Paul and Audrey Edwards v. The United Kingdom* գործով 2002 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46477/99, 96-97-րդ կետեր:

¹⁷ Տե՛ս Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածը, 4-րդ կետ:

իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: *Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձի պարիվը, արժանապարիվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարությունից սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:*

23. Գործնականում անմեղության կանխավարկածը կարող է խախտվել տարբեր եղանակներով: Ուստի, ելնելով պետություններին տրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների որոշակիացման թույլատրելի հայեցողության շրջանակից՝ կարևոր է քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ խախտված անմեղության կանխավարկածի կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելու ընթացակարգերը տարբերակել իրավունքի այլ ճյուղերով նախատեսված իրավական պաշտպանության հնարավորություններից:

Այս առումով քրեադատավարական գործիքակազմը, մասնավորապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը, կիրառելի է օրենսդրի կողմից սահմանված անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը կիրառելի է *«օրենսգրքով նախատեսված որոշումների [կայացման] և գործողությունների [կատարման]»* արդյունքում խախտված անմեղության կանխավարկածի կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելիս: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ հետագա դատական վերահսկողության առարկան քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումներն են և գործողությունները: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով կարող են բողոքարկվել վերոնշյալ սուբյեկտների՝ քրեական վարույթի շրջանակում կայացված այն որոշումներն ու կատարված այն գործողությունները, որոնք ենթադրաբար հակասում են քրեադատավարական օրենքի պահանջներին: Ուստի, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը կարող է կիրառելի լինել քրեադատավարական իրավահարաբերությունների շրջանակում թույլ տրված անմեղության կանխավարկածի խախտումների դեպքում:

Մինչդեռ, գործնականում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն *դատավարական* (դատավարական գործողություններով կամ դատավարական որոշումներով), այլ նաև *ոչ դատավարական* գործունեության (մամլո ասուլիսներին մասնակցելով,

հրապարակային արտահայտություններ, մամլո հաղորդագրություններ անելու) արդյունքում: Ըստ այդմ էլ, անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները պետք է տարբերակվեն՝ ելնելով այդ խախտման բնույթից և այն թույլ տվող անձի *ex officio* կարգավիճակից:

24. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անմեղության կանխավարկածի խախտման դեպքում մինչ քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ իրավական պաշտպանություն հայցելը, կարևոր է պատշաճ գնահատման ենթարկել, թե ա) արդյո՞ք անմեղության կանխավարկածը ենթադրաբար խախտելիս *ex officio* անձը հանդես է եկել որպես քրեադատավարական սուբյեկտ, բ) արդյո՞ք անմեղության կանխավարկածը ենթադրաբար խախտվել է քրեադատավարական բնույթ կրող, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգերի շրջանակներում: Նշվածի առումով պետք է նկատի ունենալ, որ անձի անմեղությունը խախտող պաշտոնատար անձի՝ քրեադատավարական սուբյեկտ լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգը գործադրելու համար: Այսպես, պետք է նկատի ունենալ, որ քրեադատավարական սուբյեկտները կարող են կատարել նաև ոչ դատավարական գործողություններ, օրինակ՝ քրեական վարույթն իրականացնող քննիչը կարող է հանրային հետաքրքրություն ներկայացնող գործով քննչական մարմնի անունից հարցազրույց տալ զանգվածային լրատվության միջոցներին և իր հայտարարություններով կասկածի տակ դնել հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղությունը: Մեկ այլ օրինակի դեպքում՝ համապատասխան քննչական մարմինը կարող է տեղեկատվություն հրապարակել իր պաշտոնական կայքէջում կամ սոցիալական ցանցի էջում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող գործով և ևս իր հայտարարություններով կասկածի տակ դնել հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղությունը: Նման դեպքերում, թեև անձի անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններն արվում են քրեադատավարական սուբյեկտի կամ մարմնի կողմից, սակայն հանցանքի կատարման վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու համար ոչ հարցազրույց տալը, ոչ էլ կայքէջում համապատասխան տեղեկատվություն տրամադրելը քրեադատավարական բնույթ չունեն, դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գործողություններ չեն: Հետևաբար, համանման իրավիճակներում անձն իր անմեղության կանխավարկածի խախտված իրավունքի կապակցությամբ իրավական պաշտպանություն չի կարող հայցել քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ:

Ուստի, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության քրեադատավարական կառուցակարգը կարող է անմեղության

կանխավարկածի խախտման դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ գործիքակազմ ծառայել միայն, եթե վերոհիշյալ իրավունքը ենթադրաբար խախտվել է վարույթն իրականացնող մարմնի դատավարական գործունեության ընթացքում վերջինիս կայացրած որոշումներով կամ կատարած դատավարական գործողություններով: Այս առումով, որպես օրինակ կարող է դիտարկվել *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործը, որտեղ դիմումատուին իր նկատմամբ գործի վարույթը կարճելու դատավարական որոշման մեջ տեղ գտած, իր անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումների կապակցությամբ իրավական պաշտպանություն էր հայցել քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ՝ դրանց իրավաչափությունը վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում¹⁸: Մեկ այլ օրինակ կարող է դիտարկվել *Մելինե Մարգարյանի* գործը, որտեղ անմեղության կանխավարկածի խախտում էր թույլ տրվել առաջին ատյանի դատարանի դատավճռով¹⁹:

25. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի համատեքստում, քննարկելով անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում իրավական պաշտպանության հնարավոր եղանակների հարցը, կայուն նախադեպային իրավունք է ձևավորել, որ իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցները կարող են արդյունավետ լինել: Մասնավորապես, մի շարք գործերով պատվի և արժանապատվության քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները, որոնք նյութական փոխհատուցման հետ մեկտեղ նախատեսում են իրավունքի խախտման փաստի ճանաչում և խախտման դադարեցում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գնահատվել են իբրև արդյունավետ Եվրոպական կոնվենցիայի իմաստով²⁰:

26. Հետևաբար, վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեադատավարական իրավահարաբերություններից դուրս, դատավարական բնույթ չկրող գործողություններով անձի անմեղության կանխավարկածի խախտման դեպքում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձն իրավական պաշտպանություն կարող է հայցել քաղաքացիական դատավարության ընթացակարգով: Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ մինչև մեղադրական դատական ակտի կայացումը և դրա օրինական ուժի մեջ մտնելը, անձի անմեղությունը կասկածի տակ դնող հայտարարությունները կամ գործողությունները կարող են դիտարկվել

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Virabyan v. Armenia* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, 82-95-րդ կետեր:

¹⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մելինե Մարգարյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0081/01/ 11 որոշումը, 19-25-րդ կետեր:

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Januškevičienė v. Lithuania* գործով 2019 թվականի սեպտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 69717/14, 58-62-րդ կետեր:

որպես միջամտություն՝ անձի պատվի և արժանապատվության նկատմամբ: Նման պայմաններում, վարույթն իրականացնող մարմնի ոչ դատավարական գործունեության կամ քրեական վարույթի շրջանակում ոչ դատավարական սուբյեկտների կողմից անձի անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում վերջինս կարող է օգտվել օրինակ՝ վիրավորանքի կամ գրպարտության համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, որոնք փոխհատուցման հետ մեկտեղ նախատեսում են նաև ներողություն խնդրելու, համապատասխան տեղեկությունը հերքելու հնարավորություն: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս առումով արդեն իսկ ձևավորվել է համապատասխան իրավակիրառ պրակտիկա, երբ անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ հայցվել է իրավական պաշտպանություն՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմի կիրառմամբ²¹:

27. Սույն գործի նյութերից երևում է, որ՝

- 2019 թվականի փետրվարի 19-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը հաղորդագրություն է տարածել դեպարտամենտի վարույթում քննվող քրեական գործով Ս.Քոչարյանին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ²²,

- Քննչական դեպարտամենտի գործողությունների դեմ Ս.Քոչարյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքին ի պատասխան՝ դատախազը 2019 թվականի մարտի 11-ի գրությամբ արձանագրել է, որ նախաքննություն իրականացնող մարմնին մամուլի հաղորդագրություններ հրապարակելու կապակցությամբ որոշակի գործողություններ պարտադրելը, այդ թվում՝ բովանդակությունը հերքելուն կամ դրա հետ կապված հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելը, դուրս են դատախազությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակից, և ներկայացված միջնորդությունը չի պարունակում քրեադատավարական օրենքով նախատեսված գործողություններ կատարելու կամ որոշումներ կայացնելու պահանջ, ուստի և չի կարող քննության առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով²³,

- Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ ճանաչելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի տարածած հաղորդագրությամբ Ս.Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտումը, նախ՝ անդրադարձել է կոնկրետ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված հետագա դատական վերահսկողության կիրառելիության հարցին՝ արձանագրելով, որ անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտումը քննիչի կողմից

²¹ Տե՛ս օրինակ՝ *Արս Մինասյանն ընդդեմ Արսեն Թորոսյանի*՝ թիվ ԵԴ/17717/02/18 գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

²² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետերը:

²³ Տե՛ս մանրամասն սույն որոշման 8-րդ կետը:

լիազորությունների իրականացման ճանապարհին իր իսկ գործողությունների արդյունքում առաջացած հետևանք է, որը չի կարող անջատ դիտվել վերջինի դատավարական լիազորություններից: Բովանդակային քննարկման առարկա դարձնելով հրապարակված հաղորդագրությունը՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ այն պարունակում է մի շարք ձևակերպումներ, որոնց բովանդակությունը ողջամտորեն վկայում է Ս:Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտման մասին, վերը նշված հաղորդագրությունը հանրության, մասնավորապես՝ ողջամիտ դիտորդի մոտ, կարող է առաջացնել այն հավատը, որ Ս:Քոչարյանը մեղավոր է: Անդրադառնալով քննարկվող հաղորդագրությունը հրապարակայնորեն հերքելու և Սեդրակ Քոչարյանից ներողություն խնդրելու պարտավորություն սահմանելու մասին բողոքաբերի խնդրանքներին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այդ մասով բողոքը ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քրեական դատավարության շրջանակներում դատարանն ինչպես ներողություն խնդրելու, այնպես էլ հրապարակավ հերքելու պարտականություն սահմանելու իրավական հնարավորություն և լիազորություն չունի: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը նշել է, որ եթե նույնիսկ պայմանականորեն ընդունվի, որ անմեղության կանխավարկածի խախտման հարցը չի կարող քննարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով, ապա, բոլոր դեպքերում, այն ենթակա է դատական կարգով քննության, քանի որ դա բխում է անձի դատական պաշտպանություն ստանալու իրավունքից²⁴,

– Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի որոշումը, արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չեն կարող չլինել նաև վարույթն իրականացնող մարմնի՝ իր լիազորություններից բխող և դրանց իրականացման ընթացքում նրա կողմից, վերջինիս նախաձեռնությամբ կամ թողտվությամբ (համաձայնությամբ) կատարվող այն բոլոր գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքները և դրանց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման²⁵:

28. Սույն որոշման 22-26-րդ կետերում վկայակոչված իրավանդումները և արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել այն հանգամանքը, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի կողմից հաղորդագրություն տարածելը վարույթն իրականացնող մարմնի՝ քրեադատավարական օրենքով նախատեսված լիազորությունների

²⁴ Տե՛ս մանրամասն սույն որոշման 9-րդ կետը:

²⁵ Տե՛ս մանրամասն սույն որոշման 10-րդ կետը:

շրջանակում կատարված գործողություն չէ, որի ուժով դրա օրինականությունը և հիմնավորվածությունը հնարավոր կլիներ վիճարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով: Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, թե «գործի հեր կապված պերական իրավասու մարմնի ընդհանուր լիազորությունների մեջ մերտող ցանկացած որոշում և/կամ գործողություն» պետք է քննարկման առարկա դարձվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ մոտեցումն ըստ էության վերացնում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանները, որն ուղղակիորեն հակասում է օրենսդրի՝ բողոքարկվող որոշման կամ գործողության՝ օրենսգրքով նախատեսված լինելու և ըստ այդմ՝ դատավարական բնույթ կրելու պահանջին:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կոնկրետ դեպքում, անգամ անմեղության կանխավարկածի սկզբունքի ենթադրյալ խախտում արձանագրելու դեպքում, դատարանի կողմից խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելն առաջացնելու էր որոշման կատարման անհնարինություն, քանի որ մամլո հաղորդագրության տեքստի հերքումը կամ դրա խմբագրումը դուրս է վարույթն իրականացնող մարմնի քրեադատավարական լիազորությունների շրջանակից, որպիսի հանգամանքը հաստատել է նաև Առաջին ատյանի դատարանը՝ ներողություն խնդրելուն պարտավորեցնելու մասով մերժելով բողոքը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, սույն որոշման 26-րդ կետում ներկայացված դիրքորոշման հաշվառմամբ, փաստում է, որ կոնկրետ դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց կարող էր լինել խախտված իրավունքների վերականգնման քաղաքացիաիրավական գործիքակազմի կիրառումը, այդ կերպ նաև երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը, որը դրվել էր Առաջին ատյանի դատարանի դատական ակտի պատճառաբանությունների հիմքում:

29. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի՝ 2019 թվականի փետրվարի 19-ին տարածած հաղորդագրության դեմ Սեդրակ Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտման հիմքով բերված բողոքը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնելը հիմնավոր չէ:

30. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի կողմից բարձրացված՝ սույն որոշման 5.1-ին և 5.2-րդ կետերում ներկայացված փաստարկներին:

31. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումը բեկանելու և փոփոխելու համար:

Միաժամանակ, վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացրած՝ դիմող Ս.Քոչարյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դիմող Սեդրակ Ռոբերտի Քոչարյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

30.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/2598/07/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

7 դեկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում 2020 թվականի օգոստոսի 21-ին հարուցվել է թիվ 58162520 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 223.3-րդ հոդվածի 1-ին մասով և 223.4-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ Անդրանիկ Փայլակի Սողոյանի կողմից շահագործվող «Տոյոտա Ռիդա» (Toyota Rida) մակնիշի 35 AT 084 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում 2020 թվականի օգոստոսի 24-ից մինչև նույն թվականի օգոստոսի 27-ն ընկած

ժամանակահատվածում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի սեպտեմբերի 25-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշումը բեկանելու և նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (1): Վճռաբեկ դատարանը 2022 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, դատարանի կիրառած դատավարական նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Այսպես, բողոքաբերն իր անհամաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բավարար չափով հիմնավորված և պատճառաբանված չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պնդմանը և նշել, որ այն պարունակում է խուզարկության կատարումը թույլատրելու ինչպես փաստական, այնպես էլ իրավական հիմնավորումները:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում ամբողջությամբ մեջբերել է նախաքննության մարմնի միջնորդությունը, արձանագրել հայցվող միջամտությամբ փնտրվող առարկաների քննության անկայությունը, ներկայացրել խուզարկություն կատարելու թույլտվություն տրամադրելու իրավական հիմնավորումները, նշել, թե միջնորդությունը հիմնավորող ինչ փաստաթղթեր են ներկայացվել, այնուհետև եզրահանգում կատարել միջնորդությունը բավարարելու հիմքերի առկայության մասին: Այսինքն, ըստ բողոքաբերի, սույն գործով Առաջին ատյանի դատարանը, մեջբերելով քննիչի հիմնավորումներն ու պատճառաբանությունները, համաձայնել է դրանց, դրանք գնահատել բավարար, որպիսի պարագայում բացակայել է դրանում նշված յուրաքանչյուր փաստարկին կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Այս համատեքստում բողոքի հեղինակը նշել է նաև, որ դատարանի կողմից կայացվող որոշումներին ներկայացվող՝ պատճառաբանված լինելու

պահանջն ինքնասպատակ չէ, և կախված կոնկրետ որոշման բնույթից, գործի հանգամանքներից՝ դրա աստիճանը կարող է տարբեր լինել, և նշվածը բխում է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, այնպես էլ ներպետական դատական պրակտիկայից:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշմանը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Ներկայացված միջնորդության համաձայն՝ «ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ-ում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում տեղեկություններ են ստացվել, որ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի բնակիչներ ուն Արուլը և Նարեկը 2020թ. հունիս ամսին՝ խարդախությամբ և վարսահությունը չարաշահելու եղանակով Երևան քաղաքի Միկոյան փողոցի բնակչից հափշտակել են մոտ 27.000 ԱՄՆ դոլար արժեք ունեցող 1 (մեկ) կգ. ոսկի, որից հետո վերջինս Կուրայքի մարզի Գեղադիր համայնքի երկու բնակիչների միջնորդությամբ դիմել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ՝ այսպես կոչված «քրեական հեղինակություն» հանդիսացող «Գեղադիրցի Գոքոր» մականունով անձին:

(...)

Բացի այդ, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ուն Սայաթը ա.թ. հուլիս ամսին հափշտակել է մոտ 4.000.000 ՀՀ դրամ արժողությամբ դիմակներ, որից հետո, 12.07.2020թ., վերջինիս և «Գեղադիրցի Գոքորի» կողմից ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ հանդիսացող Կուրայքի մարզի Ողջաբերդ գյուղի բնակչի միջև, նշված հարցի շուրջ, պարզաբանումներ են ընթացել, որի մասին տեղեկացել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող՝ այսպես կոչված «օրենքով գող» «Զսապ» մականունով անձը: Վերջինս, օգրվելով իր քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակից, ինքնությունը դեռևս չպարզված, բջջային (...) հեռախոսահամարն օգրագործող, անձի միջոցով իր անունից հրահանգել է «Գեղադիրցի Գոքորին» դադարեցնել պարզաբանումները ուն Սայաթի հետ՝ հետագայում վերը նշված խնդրին իր կողմից լուծելու պայմանով: «Գեղադիրցի Գոքորն» էլ իր հերթին հրահանգել է իր կողմից ղեկավարվող խմբավորման անդամ հանդիսացող անձին՝ ուն Սայաթին բերել իր մոտ, որից հետո նրան բաց է թողել, ինչի մասին տեղյակ է պահել բջջային (...) հեռախոսահամարն օգրագործող անձին:

Վերը նշված հարցի լուծմանը ներգրավված է եղել նաև «Զսապ» մականունով այսպես կոչված «օրենքով գողի» ազգականը:

(...)

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ այսպես կոչված «օրենքով գող» «Զասպ» մականունով անձը հանդիսանում է Անդրանիկ Փայլակի Սողոյանը:

Ըստ արագված տեղեկությունների Անդրանիկ Սողոյանի կողմից շահագործվում է Փայլակ Վահագանի Սողոյանի անվանը հաշվառված «Տոյոտա Ռիդա» (TOYOTA RIDA) մակնիշի 35 AT 084 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

[Նախաքննության մարմինը] նշել է, որ Անդրանիկ Փայլակի Սողոյանի կողմից շահագործվող «Տոյոտա Ռիդա» (TOYOTA RIDA) մակնիշի 35 AT 084 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում կարող են գրնվել հիշյալ հանգամանքների և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հեղափոխվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններին վերաբերելի փաստաթղթեր ու նոթարեպրեր, այդ թվում նաև բջջային հեռախոսներ, հեռախոսաքարտեր, հեռախոսակապի այլ միջոցներ, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ իրեր և առարկաներ, և միջնորդել թույլատրել խուզարկություն կատարել նշված բնակարանում:

Ծանոթանալով միջնորդությանը դադարանը գրնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պարճառարանությամբ.

(...)

Միջնորդությանը կից վարույթն իրականացնող մարմինն [Առաջին արյանի դիարարան է ներկայացրել քրեական գործ հարուցելու, վարույթ ընդունելու, քրեական գործի նախաքննությունը քննչական խմբին հանձնարարելու մասին որոշումների, ՀՀ ոստիկանության ԳՈԳՎ ՄՄԴՈԻՀԴՎ վարչության զեկուցագրի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի գրության, «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» ՕՀՄ իրականացնելու մասին որոշումների, արճանագրության, Ա.Սողոյանի անճնագրային րվյալների, դարվածության վերաբերյալ ճն 8 տեղեկանքի, ճՈ էլեկտրոնային ռեգիստրից արագված տրանսպորտային միջոցի հաշվառման րվյալների պարճենները:

Այսպիսով, [Առաջին արյանի դիարարանը փաստում է, որ ներկայացված նյութերով առկա են Անդրանիկ Փայլակի Սողոյանի կողմից շահագործվող (...) ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու համար բավարար հիմքերը» (2) :

8. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման համաճայն՝ «(...) Առաջին արյանի դադարանը որպես խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հիմք ընդունել է նախաքննության մարմնի ներկայացրած (...) նյութերը՝ գնահատման չենթարկելով դրանցում առկա րվյալները, ինչը բովանդակագրվել է քննարկվող քննչական գործողության նկարմամբ դարական վերահսկողության էությունը, այն դարճել է ճնական: Այլ խոսքով՝ Առաջին արյանի դադարանի որոշումը պարճառարանված չէ:

Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նաև նշել, որ բնակարանի խուզարկության դեպքում փնտրվող առարկաներն անհարականացնելն ունի առանցքային նշանակություն: Մինչդեռ, քննարկվող դեպքում խուզարկություն կատարելու թույլտվություն տրանալու մասին միջնորդությունը բավարարելով

Առաջին արյանի դատարանը որոշման ինչպես նկարագրական-պարճատարանական, այնպես էլ եզրակակիչ մասերում չի կոնկրետացրել, թե հարկկապես ինչ իրեր կամ առարկաներ հայրնաբերելու նպարակով է թույլարրվել խուզարկություն կարարել Ա.Սողոյանի կողմից շահագործվող ավրումեքենայում:

Հիմք ընդունելով վերագրյալը և նկարի ունենալով, որ Առաջին արյանի դատարանի որոշումը հիմնավորված ու պարճատարանված չէ, միջնորդությունը բավարարելով՝ [Առաջին արյանի] դատարանը չի մարաննշել, թե ինչ իրեր կամ առարկաներ հայրնաբերելու նպարակով է թույլարրվել խուզարկություն կարարել Ա.Սողոյանի կողմից շահագործվող ավրումեքենայում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բերված վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, իսկ դատարանի որոշումը պերք է բեկանել մերժելով քննիչի միջնորդությունը» (3):

9. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ թիվ 58162520 քրեական գործով վարույթը կարճվել է, և Անդրանիկ Փայակի Սողոյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով (4):

Վճռաբեկ դատարանի պատճատարանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պատճատարանված չլինելու հիմնավորմամբ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 278-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը քննում է քննչական (...) գործողություններ կարարելու (...) վերաբերյալ միջնորդությունները:

(...)

3. Դատարանի սույն հոդվածի առաջին մասով նահարետված դեպքերում ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն արուգում է գործի փաստական հանգամանքների բացահայրման և քրեական օրենքի կիրառման ճշրությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Դատական վերանայման իրավունքի համատեքստում դատարանների գործառույթային տարանջատվածության առնչությամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ (5) անդրադառնալով քննչական գործողություն կատարելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ վերանայման առանճնահատկություններին՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե առաջին ատյանի դատարանը լրիվ ծավալով քննության է առնում միջնորդությունը և կայացված որոշմամբ լուծում ներկայացված պահանջի հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, ապա վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանի կողմից միջնորդության առնչությամբ տրված լուծման հիմնավորվածությունն ու իրավաչափությունը՝ կայացնելով դատական ակտն անփոփոխ թողնելու, միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որոշում: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով, որպես կանոն, նախատեսված որոշումներից մեկը կայացնելիս, վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու՝ է եկել այս կամ այն հետևության, և ո՞ր իրավանքներով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա (6):

11.1. Մինևույն ժամանակ, անդրադառնալով քրեական հետապնդման մարմինների կողմից բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալուն՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը հանդիսանալով դատարանում վարույթ սկսելու հիմք, դատարանի որոշման համար առիթ, կանխորոշում է դատարանի կողմից գործի քննության սահմաններն առաջին ատյանի դատարանում, ինչպես նաև վերադաս դատական ատյաններում՝ հաշվի առնելով նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի միջնորդությունը քննելիս դատարանները կաշկանդված են դրանում նշված քննչական գործողության կատարման տեղով (վայրով), դրանում նշված առարկաների և այն սուբյեկտների շրջանակով, ում իրավունքների սահմանափակման թույլտվություն է հայցվում (7):

12. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ա.Սողոյանի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, Առաջին ատյանի դատարանը բավարարել է այն հիմնավորմամբ, որ ներկայացված նյութերում առկա են խուզարկություն կատարելու թույլտվություն տալու համար բավարար հիմքեր (8),

- նշված որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը որպես խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հիմք ընդունել է նախաքննության մարմնի ներկայացրած նյութերը՝ առանց գնահատման ենթարկելու դրանցում առկա փաստական տվյալները, ինչը բովանդակագրվել է քննարկվող քննչական գործողության նկատմամբ դատական վերահսկողության

էությունը: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը որոշմամբ չի կոնկրետացրել, թե ինչ իրեր կամ առարկաներ հայտնաբերելու նպատակով է թույլատրվել խուզարկություն կատարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ, Վերաքննիչ դատարանը բեկանել է վիճարկվող դատական ակտը՝ մերժելով նախաքննության մարմնի միջնորդությունը (9):

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը քննարկել է Ա.Սողոյանի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը և դատարան ներկայացված նյութերի հետազոտմամբ գտել է, որ դրանք բավարար են ներկայացված միջնորդությունը բավարարելու համար, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ, մերժել է նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդությունը՝ առանց ստուգման ենթարկելու խուզարկություն կատարելու փաստական հիմքերի առկայության առնչությամբ Առաջին ատյանի դատարանի հետևությունները: Փաստորեն, սույն գործով, խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնված է ոչ թե գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու վերլուծության վրա՝ *in concreto* փաստական հանգամանքների գնահատմամբ՝ հայցվող միջամտության՝ իր բնույթին, նպատակային նշանակությանն ու օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխանելու առումով, այլ զուտ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պատճառաբանված չլինելու վերաբերյալ հետևության վրա:

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննչական գործողություն, տվյալ դեպքում՝ բնակարանի խուզարկություն կատարելու վերաբերյալ ներկայացված միջնորդության և այդ միջնորդության քննության արդյունքում դատարանի կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը քրեադատավարական ինքնուրույն և տարբեր կառուցակարգեր են, մեկը մյուսով պայմանավորված չեն: Ուստի այն դեպքում, երբ միջնորդության հիմնավորվածությունը կասկածի տակ չի դրվում, ապացուցողական գործողություն կատարելու նկատմամբ դատական վերահսկողության արդյունքում կայացված դատական ակտի թերի կամ սխալ պատճառաբանված լինելու վերաբերյալ վերադաս դատարանի եզրահանգումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ այդ գործողության կատարման թույլտվություն հայցելու միջնորդությունն անհիմն համարելու և մերժելու համար: Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի

դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս և նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս ոչ թե պետք է առաջնորդվեր ձևական մոտեցմամբ և հիմք ընդուներ, որ վիճարկվող դատական ակտը պատճառաբանված չէ, այլ պարտավոր էր քննիչի ներկայացրած միջնորդությունը բավարարելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումը դատական ստուգման ենթարկել և իր եզրահանգումը կառուցել ստորադաս դատարանում ներկայացված միջնորդության և այն հիմնավորող նյութերի շրջանակներում, և միայն դրանց հիման վրա գնահատական տալ Առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությանը:

13.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, սույն որոշման 11.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանը քննիչի ներկայացրած միջնորդությունը բավարարելիս որոշման ինչպես նկարագրական-պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում չի կոնկրետացրել, թե հատկապես ինչ իրեր կամ առարկաներ հայտնաբերելու նպատակով է թույլատրվել խուզարկություն կատարել Ա.Սողոյանի կողմից շահագործվող ավտոմեքենայում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, որոշման նկարագրական-պատճառաբանական մասում ամբողջությամբ մեջբերելով քննիչի միջնորդությունը, հստակ նշել է, թե նախաքննության մարմինն ինչ առարկաներ փնտրելու համար է հայցում Ա.Սողոյանի կողմից շահագործվող ավտոմեքենայում խուզարկություն կատարելու թույլտվություն, ուստի Առաջին ատյանի դատարանի կողմից խուզարկության միջնորդության բավարարումը նշանակում է, որ դատարանը քրեական վարույթն իրականացնող քննիչին թույլատրել է խուզարկություն կատարել կոնկրետ այն առարկաները հայտնաբերելու նպատակով, որոնք մատնանշված են եղել միջնորդության մեջ, իսկ որոշման եզրափակիչ մասում դրանք չնշելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատական ակտն այդ հիմնավորմամբ բեկանելու և քննիչի միջնորդությունը մերժելու համար:

14. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պատճառաբանված չլինելու հիմնավորմամբ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Սակայն, հաշվի առնելով, որ թիվ 58162520 քրեական գործով վարույթը կարճվել է, և Ա.Սողոյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է

(10), ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Անդրանիկ Փայլակի Սողոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

- (1) Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:
- (2) Տե՛ս նյութեր, թերթեր 37-41:
- (3) Տե՛ս նյութեր, թերթեր 90-105:
- (4) Տե՛ս նյութեր, թերթ 162:
- (5) Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:
- (6) Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Էրիկ Մարգարյանի գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴ3/0045/01/13 և Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/01/15 որոշումները:
- (7) Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴ/1487/07/19 որոշումը:
- (8) Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
- (9) Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
- (10) Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԴ/1194/06/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

23 դեկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արշակ Սարգսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2021 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական առաջին վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 62233221 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Արշակ Սարգսի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ Արշակ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով՝ կալանքի սկիզբը հաշվելով 2021 թվականի նոյեմբերի 29-ից:

Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ քրեական գործից Ա.Հակոբյանի վերաբերյալ մասն անջատվել է և նույն թվականի ապրիլի 25-ին միացվել թիվ 62240621 քրեական գործին:

Հսկող դատախազի՝ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ՝ 2022 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ Ա.Հակոբյանին ներկայացված մեղադրանքը լրացվել, և նույն օրը նրան նոր մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու երկու դրվագ՝ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2022 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարել է մասնակիորեն, և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգել է 1 (մեկ) ամսով՝ սահմանավակելով ազգակցական կապի մինչև երկրորդ աստիճանի մեջ չգտնվող անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը: Նույն որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց գրավը՝ 562.000.000 (հինգ հարյուր վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

2.1. 2022 թվականի օգոստոսի 1-ին մեղադրյալ Ա.Հակոբյանն ազատվել է կալանքից:

3. Դատախազի և պաշտպանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել ու նախաքննության մարմնի միջնորդությունը մերժել՝ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառման անհրաժեշտության և հնարավորության հարցը թողնելով վարույթի համապատասխան հանրային մասնակիցների լուծմանը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Այսպես՝ բողոք բերած անձը, մատնանշելով ազատության իրավունքի վերաբերյալ քրեադատավարական մի շարք նորմեր և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, փաստել է, որ Վերաքննիչ դատարանը կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառմամբ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու հնարավորությունը քննարկելիս պատշաճ գնահատման չի արժանացրել մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու բարձր հավանականության մասին վկայող մի շարք հանգամանքներ և արդյունքում հանգել է անհիմն հետևության: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել քրեական վարույթի առանձնակի բարդությունը՝ պայմանավորված մեղսագրված արարքների առավել բարձր լատենտայնությամբ՝ այս համատեքստում նշելով, որ քրեական վարույթի տվյալ փուլում դեռևս անհրաժեշտ է կատարել որոշակի քննչական և վարույթային գործողություններ, իսկ ըստ քրեական վարույթի նյութերի՝ ենթադրյալ հանցանքների կատարմանն առերևույթ ներգրավված, ինչպես նաև քննության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններին տիրապետող անձանց մեծամասնությունը որոշակի փոխհարաբերությունների մեջ է գտնվում մեղադրյալ Ա.Հակոբյանի հետ: Բացի այդ, բողոքաբերը նշել է նաև, որ վերջինս տևական ժամանակ զբաղեցրել է պետական պաշտոններ, և նրան մեղսագրվում են իր իշխանական լիազորություններն օգտագործելով ենթադրաբար կատարված հանցանքներ:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ գնահատեր նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը, մեղսագրվող արարքների կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, ակնկալվող պատժի խստությունը:

5.1. Բողոք բերած անձը փաստարկել է, որ անձին կալանքի տակ պահելու և հետագայում դրա ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու հանգամանքով, ուստի նման պայմաններում դատարանի մատնանշած՝ մեղադրյալի 8 ամիս անազատության մեջ գտնվելու հանգամանքը որևէ կերպ չի կարող նվազեցնել վերջինիս կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունը:

5.2. Բողոքի հեղինակը հատկանշական է համարել նաև, որ ստորադաս դատարանի կողմից սահմանված գրավի գումարը կարճ ժամանակահատվածում վճարվել է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հնարավոր տեղեկություններին տիրապետող, Ա.Հակոբյանի մտերիմ անձանց կողմից, ինչը, ըստ բողոք բերած անձի, քրեական վարույթում առկա մյուս տվյալների հետ համակցված վկայում է Ա.Հակոբյանի և նրա մտերիմների զգալի ֆինանսական կարողության, դրանց շրջանառությանը

բազմաթիվ անձանց ներգրավվածության ու քրեական վարույթին խոչընդոտելու հնարավորության և բարձր հավանականության մասին:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ բավարարելով սույն քրեական վարույթով հսկող դատախազի հատուկ վերանայման բողոքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

7. Մեղադրյալ Ա.Հակոբյանի պաշտպան Տ.Աթանեսյանը ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար: Մասնավորապես՝ պաշտպանը նշել է, որ անհայտ անձանց ենթադրյալ հնարավոր հարցաքննության անհրաժեշտությունը չի կարող դրվել անձի կալանավորման ժամկետի երկարացման հիմքում, հատկապես երբ անձն ութ ամիս կալանավորված է եղել, և այդ ընթացքում նրան մեղադրող ցուցմունքներ չեն տրվել:

Անդրադառնալով բողոքաբերի՝ մեղսագրված արարքը դիտավորությանը կատարելու և գործի քննությանը խորնդոտելու պնդումներին՝ պաշտպանը գտել է, որ դրանք քննարկման ենթակա չեն, քանի որ դրանցից առաջինը խախտում է անձի անմեղության կանխավարկածը, իսկ երկրորդը վերացական է և չի բխում քրեական վարույթի նյութերից:

7.1. Բացի այդ, պաշտպան Տ.Աթանեսյանը նշել է, որ գրավի վճարման հանգամանքների վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկը նույնպես սույն դեպքում չի կարող քննարկման առարկա լինել, քանի որ դատական վերանայումը չի կարող տարածվել այն իրադարձությունների վրա, որոնք տեղի են ունեցել քննիչի միջնորդությունը ներկայացնելուց հետո:

8. Վերոշարադրյալի հիման վրա, պաշտպան Տ.Աթանեսյանը խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Արշակ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու երկու դրվագ՝ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել, և նրան մեղադրանք է ներկայացվել այն արարքների համար, որ նա. «1994-1997 թվականների ընթացքում ծառայելով ՀՀ ներքին գործերի նախարարությունում, իսկ 1997-2011 թվականների ընթացքում՝ ՀՀ ՊՆ ռազմական ուսրիկանությունում, սպա՝ 2011-2018 թվականների ընթացքում՝ ՀՀ ուսրիկանությունում, հանդիսանալով մշրապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2011-2017 թվականների ընթացքում տրիրապետել, օգրագործել, տրօրինել է նույն թվականների ընթացքում ենթադրարար պաշտոնական լիազորությունների չարաշահումներին և

հովանավորչոթյանն իր ներգրավվածոթյան, ինչպես նաև կոռուպչոն հանցավոր այլ գործոնեոթյան արոյունքոն սրացված գոյքը, որի իրական բնոյթը, ծագման աղբյորը, իրավոնքներն ու պարկանեղոթյունը թաքցրել, խեղաթյորել է փոխանցելոլ ու այլ գործոոթյուններոլ, այսինքն՝ պաշրոնեական դիրքն օգրագործելոլ օրինականացրել է հանցավոր ճանապարհոլ սրացված առանձնապես խոշոր չափերոլ գոյքը:

Բացի այդ, Արշակ Հակոբյանը 2013-2014 թվականների ընթացքոն ՀՀ ոարիկանոթյան պես Վրադիմիր Գասպարյանի հեսր նախնական համաձայնոթյանը խմբի կազմոն թաքցրել և խեղաթյորել է վերջինիս հանցավոր գործոնեոթյան արոյունքոն սրացված առանձնապես խոշոր չափերոլ գոյքի ծագման աղբյորը, իրավոնքներն ու պարկանեղոթյունը՝ օրինականացնելոլ այն:

Բացի այդ, ՀՀ ոարիկանոթյան պեսի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի 4218-Ս հրամանոլ նշանակվելոլ ՀՀ ոարիկանոթյան կազմակերպված հանցավորոթյան դեմ պայքարի գլխավոր վարչոթյան 4-րդ վարչոթյան պեսի տեղակալի, ինքը և 5-րդ բաժնի պեսի պաշրոնին և այդ պաշրոնոն պաշրոնավարելոլ մինչև 2018 թվականի մայիսի 10-ը, «Հանրային ծառայոթյան մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հանդիսանալոլ հայրարարարոն պաշրոնարար անձ, ոնեոնալոլ գոյքի և եկամոարների հայրարարագրման՝ րարեկան, ինչպես նաև պաշրոնեական պարրականոթյունները սրանձներո և դադարեցնելոլ դեպքոն հայրարարագիր ներկայացնելոլ պարրականոթյուն, 2017 թվականի պաշրոնը սրանձներո, նոյն թվականի րարեկան և 2018 թվականին պաշրոնը դադարեցնելոլ վերաբերյալ ՀՀ բարձրասրիճան պաշրոնարար անձանց էթիկայի հանձնաժոոլոլ ներկայացրած հայրարարագրերոն դիրավորոթյանը թաքցրել է հայրարարագրման ենթակա րվյալներ, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերոլ գոյքի չհայրարարագրմանը:

Այսպես.

Արշակ Հակոբյանը 1994-1997 թվականների ընթացքոն ծառայել է ՀՀ ներքին գործերի նախարարոթյունոն, իսկ 1997-2011 թվականների ընթացքոն ՀՀ ՊՆ ոազմական ոարիկանոթյունոն, ապա՝ 2011-2018 թվականների ընթացքոն ՀՀ ոարիկանոթյունոն և հանդիսացել մշրապես իշխանոթյան ներկայացոցչի գործառոթներ իրականացոող պաշրոնարար անձ, այսինքն՝ 1994-2018 թվականների ընթացքոն հանդիսացել է բացառապես պեսրական ծառայոթյուն իրականացոող պաշրոնարար անձ: Հիշյալ ողջ ժամանակահարվածոն Արշակ Հակոբյանը ՀՀ պաշրպանոթյան նախարարոթյունից, ՀՀ ոարիկանոթյունից, «Խ.Արոլյանի անվան հայկական պեսրական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ից սրացել է իր անվանը հաշվարկված և վճարված, ընդհանրը՝ 44.880.078 ՀՀ դրան օրինական եկամոար՝ աշխարավարձի և դրան հավասարեցված այլ վճարների րեսքոլ: Նոյն ժամանակահարվածոն Արշակ Հակոբյանի կինը՝ Անահիդ Մկրչյանը, ձեոնարկարիրական գործոնեոթյան արոյունքոն սրացել է 149.689.734 ՀՀ դրան եկամոար:

Նշված ժամանակահատվածում Արշակ Հակոբյանը, ձեռք է բերել և իր ու կնոջ՝ Անահիտ Մկրտչյանի անվամբ գրանցել Երևան քաղաքում և Կոտայքի մարզում գրավող անշարժ գույքեր, որոնց շուկայական արժեքները շեշտակիորեն գերազանցել են Արշակ Հակոբյանի սրացած օրինական եկամուրները:

Այսպես.

Արշակ Հակոբյանը 1994-2018 թվականների ընթացքում, ՀՀ ներքին գործերի նախարարությունում, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում և ՀՀ ոստիկանությունում պաշտոնավարման ընթացքում իր ներգրավվածությամբ րեղի ունեցած առերևույթ պաշտոնեական լիազորությունների չարաշահման, հովանավորչության, կոռուպցիոն հանցավոր այլ գործունեության արդյունքում ձեռք է բերել գումարներ, որից հետո՝ թաքցնելով և խեղաթյուրելով դրանց իրական բնույթն ու հանցավոր ծագումը, այդ գումարներով ձեռք է բերել փարբեր անշարժ և շարժական գույք, որոնք էլ փարբեր ձևական գործարքներով գրանցել է այլ անձանց անվամբ, այն է՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ օրինականացրել է հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Մասնավորապես.

2011 թվականի նոյեմբերի 24-ին կնքված առուվաճառքի պայմանագրով Արշակ Հակոբյանը ձեռք է բերել Կոտայքի մարզի Արովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի 23 հասցեում գրավող, 75.000.000 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքը, որի նկարումամբ գրանցվել է կնոջ՝ Անահիտ Մկրտչյանի սեփականության իրավունքը, իսկ առուվաճառքի պայմանագրում նշվել է գույքի մրացածին արժեք՝ 3.000.000 ՀՀ դրամ:

2012 թվականի հունիսի 2-ին և 2012 թվականի օգոստոսի 10-ին կնքված առուվաճառքի պայմանագրերով 120.000.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի 31 և նույն շենքի 8/2 հասցեներում գրավող անշարժ գույքերը, որոնց նկարումամբ գրանցվել է կնոջ՝ Անահիտ Մկրտչյանի սեփականության իրավունքը:

2013 թվականի հունվարի 15-ին Արշակ Հակոբյանը գործարքի կողմ հանդես եկած կնոջ՝ Անահիտ Մկրտչյանի հետ անշարժ գույքի առուվաճառքի, հաջորդող գրավի պայմանագրով անհար ձեռնարկարեր Վահե Հարությունյանից 204.250.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Հանրապետության փողոցի 51, 53 շենք 45 փարածք հասցեում գրավող անշարժ գույքը, որի արժեքից 81.700.000 ՀՀ դրամը վճարել է պայմանագիրը կնքելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած 122.550.000 ՀՀ դրամը վճարել է մինչև 2013 թվականի հուլիսի 15-ը:

Գիրակցելով, որ նվազ օրինական եկամուրների առկայության պայմաններում իր և կնոջ անվամբ հաշվառված են օրինական եկամուրները շեշտակիորեն գերազանցող արժեք ունեցող գույքեր, ինչը կարող է համապարասիան իրավասյահ մարմինների ուսումնասիրության առիթ և առարկա դառնալ, դրանց իրական բնույթը, ծագման աղբյուրը քողարկելու նպատակով, Արշակ Հակոբյանը 2014 թվականի ապրիլին կրկին ձեռնամուխ է եղել հանցավոր

ճանապարհով ձեռքբերված գույքերի նկատմամբ իրավունքները և դրանց իրական պարկանելությունը թաքցնելուն:

Մասնավորապես,

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցներով գնված, Երևան քաղաքի Հանրապետության փողոցի 51, 53 շենք 45 տարածք հասցեում գրնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և պարկանելիությունը թաքցնելու ու խեղաթյուրելու նպատակով 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված նվիրարվության ձևական պայմանագրով գույքն օտարվել է Արշակ Հակոբյանի դստերը՝ Արմինե Հակոբյանին, ով 2013 թվականի օգոստոսի 13-ին կնքված նվիրարվության պայմանագրով գույքն օտարել է մորը՝ Անահիտ Մկրտչյանին: Իր հերթին Անահիտ Մկրտչյանը 2014 թվականի ապրիլի 17-ին կնքված, ձևական ստովաճառքի պայմանագրով գույքն օտարել է Արշակ Հակոբյանի մորը՝ Անահիտ Արրահամյանին, իսկ 2014 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված համաձայնագրով նախորդ ստովաճառքի պայմանագիրը լուծվել է, ինչի արդյունքում վրլյալ գույքի նկատմամբ 2014 թվականի սեպտեմբերի 22-ին կրկին գրանցվել է Անահիտ Մկրտչյանի միանձնյա սեփականության իրավունքը:

Բացի այդ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցներով գնված, Երևան քաղաքի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի 31 և Նույն շենքի 8/2 հասցեներում գրնվող անշարժ գույքերի պարկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով հիշյալ գույքերի նկատմամբ գրանցվել է Արշակ Հակոբյանի կնոջ՝ Անահիտ Մկրտչյանի սեփականության իրավունքը: Այնուհետև 2014 թվականի ապրիլի 17-ին կնքված ձևական ստովաճառքի պայմանագրով Երևան քաղաքի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի 8/2 հասցեում գրնվող տարածքն օտարվել է Անահիտ Մկրտչյանի հորը՝ Ռաֆայել Մկրտչյանին, ով իր հերթին 2014 թվականի սեպտեմբերի 24-ին նվիրարվության պայմանագրով այն օտարել է Արշակ Հակոբյանի դստերը՝ Արմինե Հակոբյանին:

Բացի այդ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված, Կուրայքի մարզի Արովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի 23 հասցեում գրնվող անշարժ գույքի հանցավոր ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով Արշակ Հակոբյանը կազմակերպել է հիշյալ գույքն այլ անձանց ձևականորեն փոխանցելու գործընթաց: Այդ նպատակով, 2014 թվականի ապրիլի 16-ին նշված գույքը ձևական ստովաճառքի պայմանագրով օտարվել է Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, Արշակ Հակոբյանի մրերիմ Գավիթ Կարապետյանին: Այնուհետև՝ 2015 թվականի մայիսի 12-ին կնքված ձևական ստովաճառքի պայմանագրով գույքը փոխանցվել է Արշակ Հակոբյանի մեկ այլ մրերիմ Գագիկ Զոհրաբյանին, ով իր հերթին 2016 թվականի փետրվարի 26-ին կնքված նվիրարվության պայմանագրով գույքը հանձնել է Արշակ Հակոբյանի որդուն՝ Սարգիս Հակոբյանին, ում սեփականության իրավունքը վրլյալ գույքի նկատմամբ գրանցվել է 2016 թվականի մարտի 2-ին:

Բացի այդ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարարու պաշտոնատար անձ՝ Արշակ Հակոբյանը 2017

թվականին ներկայացրել է պաշտոնը սրանձներու, 2017 թվականի րարեկան, իսկ 2018 թվականին՝ պաշտոնը դադարեցներու հայրարարագրեր:

2017 թվականի պաշտոնը սրանձներու և րարեկան հայրարարագրերում Արշակ Հակոբյանը հայրարարագրել է 17.000.000 ՀՀ դրամ և 13.619.580 ՀՀ դրամին համարժեք 28.500 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, ինչպես նաև՝ 4.116.385 ՀՀ դրամ՝ որպես եկամուր՝ աշխատանքի վարձարրությունից: Ընդ որում, 17.000.000 ՀՀ դրամը և 13.619.580 ՀՀ դրամին համարժեք 28.500 ԱՄՆ դոլարն առկա են եղել նաև հարկային րարվա՝ 2017 թվականի վերջում, այսինքն՝ այդ ժամանակահատրվածում չեն ծախսվել:

Արշակ Հակոբյանի հետ փոխկապակցված անձի՝ նրա կնոջ՝ Անահիր Մկրտչյանի կողմից 2017 թվականին ներկայացված րարեկան հայրարարագրում վերջինիս կողմից հայրարարագրվել է 10.000.000 ՀՀ դրամ և 4.300.920 ՀՀ դրամին համարժեք 9000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, որոնց չափերը հարկային րարվա վերջում մնացել են նույնը, այսինքն՝ այդ ժամանակահատրվածում չեն ծախսվել: Անահիր Մկրտչյանը հայրարարագրել է նաև 8.472.928 ՀՀ դրամ եկամուր՝ որպես սրացված շահարածին:

Արշակ Հակոբյանի հետ փոխկապակցված մյուս անձը՝ որդին՝ Սարգիս Հակոբյանը, 2017 թվականին ներկայացված րարեկան հայրարարագրում հայրարարագրել է 8.472.928 ՀՀ դրամ եկամուր՝ որպես սրացված շահարածին:

Այսինքն՝ 2017թ. ընթացքում Արշակ Հակոբյանի և նրա հետ փոխկապակցված անձանց ընդհանուր եկամուրը կազմել է 65.982.741 ՀՀ դրամ, որից, սակայն, 44.920.500 ՀՀ դրամն առկա է եղել հարկային րարվա՝ 2017 թվականի վերջում, այսինքն՝ այդ ժամանակահատրվածում չի ծախսվել, հերևարար րարվա ընթացքում վերջինս կարող էր կարարել միայն 21.062.241 ՀՀ դրամի ծախս (65.982.741-44.920.500=21.062.241 ՀՀ դրամ):

Մինչդեռ, 2017 թվականի ընթացքում Արշակ Հակոբյանի անվանը գրանցվել է րրանսպորտային միջոց, որի արժեքը շեշրակիորեն գերազանցել է վերջինիս և նրա հետ փոխկապակցված անձանց սրացած օրինական եկամուրների չափը:

Մասնավորապես.

Արշակ Հակոբյանը 2017 թվականի օգոստոսի 22-ին 47.855.000 ՀՀ դրամին համարժեք 100.000 ԱՄՆ դոլարով, գնել է նույն թվականի արրադրության «Mercedes-Benz GLS 500 4matik» մակնիշի, WDC1668731A909431 նույնացման համարով րրանսպորտային միջոցը, սպա վճարվելիք գումարի իրական ընույթն ու հանցավոր ծագումը թաքցներու և խեղաթյուրելու նպարակով նախ կազմակերպել է կարարված առուվաճառքի հիշյալ գործարքը ձևականորեն՝ որպես նվիրարվություն ձևակերպելու գործընթացը, որից հետո ավրումերենայի դիմաց վճարվող գումարի ծագման աղբյուրը խեղաթյուրելու նպարակով 2017 թվականի օգոստոսի 23-ին կնքված օվերդրաֆրի րրամադրման ձևական պայմանագրով ավրումերենան գրավարրել է «Աներիարանկ» ՓԲ ընկերությունում, սրացել 47.855.000 ՀՀ դրամին համարժեք 100.000 ԱՄՆ դոլար վարկ, որը մարվել է նախքան պայմանագրով նախարեալված ժամկերի ավարրը: Այդ եղանակով Արշակ Հակոբյանը փասարացի թաքցրել է խեղաթյուրել է իր ոնեցած, հանցավոր

ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափի՝ 26.792.759 ՀՀ դրամ կանխիկ գումարի իրական հանցավոր ծագումը:

Այսպիսով, սույն քրեական գործով ձեռք բերված ապացուցողական գանգվածով, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համակցության համադրման և վերլուծության արդյունքում հաստատվել է, որ 1994-2018 թվականների ընթացքում հանդիսանալով պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, Արշակ Հակոբյանը զբաղվել է կոռուպցիոն գործունեությամբ, որի արդյունքում վերը նկարագրված եղանակներով հանցավոր ճանապարհով սրացված գույքն ու եկամուտներն օրինականացնելու, օրինական քաղաքացիական շրջանատության մեջ ներդնելու նպատակով, թաքցրել, խեղաթյուրել է ձեռք բերված գույքերի և վճարված գումարների իրական բնույթը և հանցավոր ծագումը, պարկանելիությունը, դրանց հաղորդել օրինական տեսք, մասնավորապես՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, վերը նկարագրված եղանակով օրինականացրել (վիացել) է հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 156.472.947 ՀՀ դրամը և 75.000.000 ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքը:

Բացի այդ, Արշակ Հակոբյանը 2013-2014 թվականների ընթացքում ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հետ խնդիր կազմում նախնական համաձայնությամբ օրինականացրել է վերջինիս կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներով գնված գույքը՝ թաքցնելով և խեղաթյուրելով գույքի ծագման աղբյուրը, իրավունքներն ու պարկանելիությունը՝ այդ կերպ նպատակ ունենալով օժանդակել վերջինիս, որպեսզի նա խուսափի կարտրած հանցանքների համար քրեական պարասխանավորությունից, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում.

Այսպես, Վլադիմիր Գասպարյանը, 1982-2018 թվականների ընթացքում զբաղեցնելով ներքին գործերի նախարարության Սևանի, Արմավիրի բաժինների պետի, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալի, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի, սպա՝ ՀՀ ոստիկանության պետի պաշտոնները, հանդիսանալով իշխանության ներկայացուցիչ, ինչպես նաև կազմակերպական-տնօրինական, վարչարարական գործառնություն իրականացնող պաշտոնատար անձ, 2008-2018 թվականների ընթացքում տիրապետել, օգտագործել, տնօրինել է 2000-2018 թվականների ընթացքում իր կարտրած հանցագործությունների՝ առանձնապես խոշոր չափերով վարման, առանձնապես խոշոր չափերով վարման փորձի, ծանր հետևանքներ առաջացրած պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական կեղծիքի դեպքերի և կոռուպցիոն հանցավոր այլ գործունեության արդյունքում սրացված առանձնապես խոշոր չափերով գումար: ՀՀ ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցնող Վլադիմիր Գասպարյանը, հանդիսանալով հայրարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձ, իր անվամբ թանկարժեք գույք հայրարարագրելու դեպքում իրավապահ մարմինների ուշադրության

կենտրոնում հայրնվելուց և հնարավոր պարասիանաարվությունից զերծ մնալու համար հանցավոր ճանապարհով սրացված գույքի մի մասի ծագումը թաքցնելու հարցում աջակցելու համար 2013 թվականին դիմել է իր անվրանգության պետի պարականությունները փաստացի կարարող, ՀՀ ոսրիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 4-րդ վարչության պետի տեղակալի, ինքը և 5-րդ բաժնի պետի պաշտոնը զբաղեցնող Արշակ Հակոբյանին, ում հանձնարարել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությունից ձեռք բերել րրանապորտային միջոցներ և դրանք հաշվառել իր անվամբ՝ թաքցնելու համար րրանապորտային միջոցների ձեռքբերման համար վճարվելիք դրամական միջոցների հանցավոր ծագումը, իրավունքները և իրական պարկանելիությունը:

Վլադիմիր Գասպարյանի կողմից հանցավոր ճանապարհով սրացված գումարներով ձեռքբերված րրանապորտային միջոցների իրավունքները և իրական պարկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով Արշակ Հակոբյանը 2013 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված առուվաճառքի պայմանագրով «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությունից 71.556.000 ՀՀ դրամով ձեռք է բերել «Mercedes-Benz G 500» մակնիշի, WDB4632361X204223 նույնացման համարի ավրումեքենան: Այնուհետև՝ 2014 թվականի հունվարի 10-ին կնքված առուվաճառքի պայմանագրով Արշակ Հակոբյանն «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությունից 80.200.000 ՀՀ դրամով ձեռք է բերել «Mercedes-Benz S 500L» մակնիշի, WDD2221821A0585564 նույնացման համարի ավրումեքենան: Եշված ավրումեքենաներն Արշակ Հակոբյանը հաշվառել է իր անվամբ՝ թաքցնելով դրանց համար վճարված 151.756.000 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումն ու իրական պարկանելիությունը:

Այսպիսով, Արշակ Հակոբյանը Վլադիմիր Գասպարյանի հետ նախնական հանձնայնությանը իմրի կազմում թաքցրել և խեղաթյուրել է վերջինիս հանցավոր գործունեության արդյունքում սրացված առանձնապես խոշոր չափերով՝ 151.756.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույքը՝ այդպիսով օրինականացնելով հանցավոր ճանապարհով սրացված այդ գույքը և նպատակ ունենալով օժանդակել Վլադիմիր Գասպարյանին, որպեսզի նա խուսափի կարարած հանցանքների համար քրեական պարասիանաարվությունից:

Բացի այդ, 2017 թվականի սեպտեմբերի 13-ի դրությամբ Արշակ Հակոբյանին համարել տեխականության իրավունքով պարկանել է առանձնապես խոշոր չափերով՝ 7.338.999 ՀՀ դրամ արժեքով Երևան քաղաքի Սոֆիայի փողոցի 40-րդ հասցեում /կադասրային ծածկագիր՝ 01-005-0368-0129-001/ գրնվող անշարժ գույքը: Բացի այդ, Արշակ Հակոբյանը 2017 թվականի օգոստոսի 22-ին ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք 47.855.000 ՀՀ դրամ արժեքով՝ նույն րարելի արարադրության «Mercedes-Benz GLS 500 4matic» մակնիշի, WDC1668731A909431 նույնացման համարով րրանապորտային միջոցը, որը ձևակերպվել է իրրև նվիրարվություն, իսկ 2017 թվականի հունիսի 9-ին նվիրարվության պայմանագրով օրարել է 2008 թվականի արարադրության

«Samand Soren 1.8» մակնիշի, NAACC1CF68F400848 նույնացման համարով տրանսպորտային միջոցը:

ՀՀ ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող Արշակ Հակոբյանը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով 2017 թվականի հուլիսի 1-ից ունենալով գույքի և եկամուտների հայտարարագրման պաշտոնը սրանձնելու, պաշտոնը դադարեցնելու հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն, 2017 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ բարձրաստիճանի պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած պաշտոնը սրանձնելու հայտարարագրում՝ «Առկա է անշարժ գույք պաշտոնը սրանձնելու օրվա դրությամբ» դաշտում, ինչպես նաև 2018 թվականի մայիսի 24-ին ներկայացրած՝ պաշտոնը դադարեցնելու հայտարարագրում՝ «Առկա է անշարժ գույք պաշտոնը դադարեցնելու օրվա դրությամբ» դաշտում, դիտարկորությամբ չի ներառել, թաքցրել է նկարագրված համարեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապարիկը գերազանցող՝ առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 7.338.999 ՀՀ դրամ արժեքով՝ Երևան քաղաքի Սոֆիայի փողոցի 40-րդ հասցեում գրնվող անշարժ գույքի վերաբերյալ հայտարարագրման ենթակա փյալները, որը հանգեցրել է նշված առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

Բացի այդ, Արշակ Հակոբյանը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով 2017 թվականի հուլիսի 1-ից ունենալով գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություն, 2018 թվականի մարտի 22-ին ՀՀ բարձրաստիճանի պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված տարեկան հայտարարագրում՝ «Հարկային տարում ձեռք է բերել շարժական գույք» և «Հարկային տարում օտարել է շարժական գույք» դաշտերում դիտարկորությամբ չի ներառել, թաքցրել է համապատասխանաբար առանձնապես խոշոր չափերով՝ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք 47.855.000 ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված՝ 2017 թվականի արտադրության «Mercedes-Benz GLS 500 4matik» մակնիշի, WDC1668731A909431 նույնացման համարով տրանսպորտային միջոցի և 2008 թվականի արտադրության «Samand Soren 1.8» մակնիշի, NAACC1CF68F400848 նույնացման համարով օտարված տրանսպորտային միջոցի՝ ընդհանուր առանձնապես խոշոր չափերով գույքի վերաբերյալ հայտարարագրման ենթակա փյալները, որը հանգեցրել է նշված առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը»:

10. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Մ]իջնորդությանը կից ներկայացված նյութերն, իրենց համակցության մեջ բավարար են (...) մեղսագրվող արարքին [մեղադրյալ Ա.Հակոբյանի] առերևույթ առնչությունը հասարակված համարելու համար:

Անդրադատնալով խափանման միջոց կիրառելու հիմքերին [Առաջին ատյանի դատարանն արձանագրում է հետևյալը.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 23-37 և 70-75:

(...) – Ա.Հակոբյանը պաշտոններ է զբաղեցրել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունում և ՀՀ ոստիկանությունում,

– Ա.Հակոբյանի նախկինում զբաղեցրած պաշտոններից բխող հեղինակությունը, անձանց որոշակի շրջանակի հետ ունեցած կապերը,

– շարունակում են իրականացվել քննչական և վարույթային գործողություններ՝ մեղաագրվող հանցանքների կատարման բոլոր հանգամանքները պարզելու, ձեռք բերված ապացույցներն սրուզելու ուղղությամբ,

– մեղադրյալին վերագրվող արարքների բնույթը, լայրենարայնությունն ու վրանգավորության աստիճանը:

Վերոգրյալ հանգամանքների հաշվառմամբ (...) [Առաջին արյանի դ]ատարանը գրնում է, որ սուկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ Արշակ Հակոբյանը, լինելով ազարության մեջ, հնարավոր է խոչընդորի քրեական վարույթին, այդ թվում՝ սայորինի կմիջամերի սպացուցման գործընթացին:

(...) [Առաջին արյանի դ]ատարանը փաստում է, որ կատարված քննչական գործողությունները բովանդակային առումով բավարար են վարույթ իրականացնող մարմնի կողմից գործադրած պարշաճ ջանասիրությունը հաստատված համարելու համար (...):

[Առաջին արյանի դ]ատարանն արձանագրում է, որ (...) մեղադրյալի նկարմամբ ընդրված կալանք իստիանման միջոցի ժամկետը ենթակա է երկարաձգման:

(...) [Հ]աշվի ստն[ելով] այն հանգամանքը, որ Ա.Հակոբյանը, ով ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունում և ՀՀ ոստիկանությունում զբաղեցրել է պաշտոններ, ունի բավականաչատի ազդեցություն և հեղինակություն իրեն վերագրվող հանցագործություններին ենթադրարար սոնչություն ունեցած անձանց նկարմամբ (...) [Առաջին արյանի դ]ատարանն արձանագրում է, որ անհրամժեչր է սահմանաստիակել մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը՝ բացառությամբ ազգակցական մինչև երկրորդ աստիճանի կապի մեջ գրնվող անձանց տեսակցելու և հաղորդակցվելու իրավունքի:

(...)

Քննելով միջնորդությունը և կից ներկայացված նյութերը՝ [Առաջին արյանի դ]ատարանն արձանագրում է հերկյալ կարևոր հանգամանքները.

– մեղադրյալը 8 ամիս գրնվում է անազարության մեջ,

– ըստ քննիչի միջնորդության՝ մեղադրյալի կողմից արդեն իսկ հարցաքննված անձանց նկարմամբ մեղադրյալի կողմից ազդեցություն գործադրելը բացակայում է,

– ըստ քննիչի՝ վարույթով բացակայում են մեղադրյալին ուղղակի մերկացնող ցուցմունքներ,

– խոչընդորման հիմքն սուկա է ինչպես ցուցումով ուղղակիորեն նշված անձանց, այնպես էլ օպերարիվ-հերաստուզական միջոցառումների արդյունքում ենթադրարար հայրնասերման ենթակա անձանց նկարմամբ,

– մեղադրյալը եկամուր չունի,

– մեղադրյալին մեղաազրվում է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 156.472.947 ՀՀ դրամի և 75.000.000 ՀՀ դրամով անշարժ գույքի, ենթադրաբար հանցավոր ճանապարհով սրացված գույքի օրինականացման հանցակազմ,

(...)

– ըստ մեղադրյալի խոսքերի՝ վերջինս երկար տարիներ զբաղեցրել է տարբեր պաշտոններ, ունի որոշակի հարգանք և ճանաչողություն:

Վերոգրյալ հանգամանքների հաշվառմամբ՝ Առաջին արյանի դժարարանի գնահատմամբ մեղադրյալի պատշաճ վարքագիծը կարող է ապահովվել վարույթի քննության ավարտի փուլում այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պայմաններում (...):

(...) Առաջին արյանի դժարարանի գնահատմամբ մեղադրյալի պատշաճ վարքագիծը վարույթի քննության ավարտի փուլում կարող է ապահովվել այլընտրանքային խափանման միջոցի գրավի կիրառման պայմաններում²:

11. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ հիմնավորված են Առաջին արյանի դատարանի հետևություններն այն մասով, որ Ա.Հակոբյանը կարող է խոչընդոտել մինչդարակյան վարույթում գործի քննությանը, որպիսի դիրքորոշումը պայմանավորված է մասնավորապես նյութերում առկա փաստերից բխող այն ենթադրություններով, որ.

ա) դեռևս առավել քան հավանական է քննվող քրեական գործի քննության շրջանակներում մեծածավալ վարույթային և քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը.

բ) մեղադրյալը նախկինում հանդիսացել է բարձրաստիճանի պաշտոնատար անձ, որպիսի պաշտոնից բխող հեղինակությունը և ունեցած կապերը բարձրացնում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ռիսկը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղաազրվող ենթադրյալ հանցագործությունների բնույթը (հանցանքները ուրնագում են ՀՀ-ում օրինական ձեռնարկարհրական գործունեությունը և ներդրումային քաղաքականությունը կարգավորող, ինչպես նաև պաշտոններ զբաղեցնելու համար սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ), դրանց վրանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ Ա.Հակոբյանին մեղաազրվում է միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների կատարում, որոնց համար որպես պատիժ նախատեսված է 2-4 և 6-12 տարի ժամկետով ազատազրկում, էական նշանակություն ունեն մեղադրյալի հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

(...) Անդրադառնալով գրավ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ Առաջին արյանի դատարանի հետևություններին Վերաքննիչ դատարանը փաստում է (...) [որ] մինչդարակյան վարույթում գրավ խափանման միջոցի կիրառումն օրենսդիրը վերապահել է վարույթն իրականացնող մարմնի

² Տե՛ս նյութեր, հատոր 10, թերթեր 30-46:

իրավասությանը, ուստի դատարանը, խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքում հանգելով եզրակացության, որ մեղադրյալի պարզաձ վարքագիծն ապահովել հնարավոր է նաև այնպիսի խափանման միջոցի կիրառմամբ, որը կիրառելու իրավասությունը վերապահված է վարույթն իրականացնող մարմնին, պարտավոր էր մերժել ներկայացված միջնորդությունը՝ այլ խափանման միջոցի կիրառման հայեցողությունը թողնելով քննիչին կամ դատախազին:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դատարանի հետևությանն այն մասով, որ մեղադրյալի պարզաձ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառմամբ, հարկապես հաշվի առնելով այն էական հանգամանքը, որ մեղադրյալն արդեն իսկ 8 ամիս գտնվել է կալանքի տակ»³:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք այլընտրանքային խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանի օրինական վարքագիծն ապահովելու հնարավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) [Կալանքի ժամկետը երկարաձգելը (...) թույլատրվում է] միայն դատարանի որոշմամբ՝ այն դեպքում, երբ անձի օրինական վարքագիծը չի կարող երաշխավորվել հարկադրանքի այլ միջոցներով»:

Նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝ (...)

3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

3. Խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները: (...):»:

Նույն օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար»:

13.1. Վկայակոչված իրավադրոյթների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ խափանման միջոցները, դասակարգվելով կալանավորման և կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման

³ Տե՛ս նյութեր, հատոր 12, թերթեր 1-24:

միջոցների, նպատակ ունեն ապահովելու քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը, և կիրառվում են միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ դրանցից որևէ մեկը: Ընդ որում՝ վերոնշյալ նպատակի իրականացման համար անհրաժեշտ և պիտանի խափանման միջոցի կոնկրետ տեսակի ընտրության հարցն օրենսդիրը վերապահել է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը՝ միաժամանակ երաշխավորելով մեղադրյալի պատշաճ վարքագիծը նրա իրավունքների հնարավոր նվազ սահմանափակմամբ ապահովելու հնարավորությունը: Մասնավորապես, օրենսդիրն ամրագրել է, որ անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի նվազագույնի սկզբունքով, այն է՝ չընտրի ավելի խիստ խափանման միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների աստիճանակարգությունում, ելնելով ներգործության բնույթից, աստիճանից և վրա հասնող հետևանքներից՝ կալանքը համարվում է ամենախիստը, քանի որ առավելագույն չափով է սահմանափակում մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, և որպես անձի ոչ պատշաճ վարքագծի կանխման վերջին հնարավոր միջոց (*ultima ratio*) պետք է կիրառվի այն բացառիկ դեպքերում, երբ կհիմնավորվի մեղադրյալի օրինական վարքագիծն այլընտրանքային խափանման միջոցներով երաշխավորելու անհնարինությունը: Այլ խոսքով՝ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ կհիմնավորի, իսկ դատարանն էլ պատճառաբանված որոշմամբ կհաստատի, որ միայն այդ խափանման միջոցի կիրառմամբ է հնարավոր հասնել խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին՝ այդ համատեքստում հաշվի առնելով մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

13.2. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված՝ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հավանական ձևերի մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁴: Ընդ որում՝ կալանավորման անհրաժեշտության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ

⁴ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱԳԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 որոշումները:

դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա⁵:

13.3. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղազգրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող նյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁶:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Արշակ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու երկու դրվագ՝ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել, և նրան մեղադրանք է ներկայացվել՝

ա) 1994 թվականից մինչև 2018 թվականն ընկած ժամանակահատվածում ենթադրաբար կոռուպցիոն հանցանքների արդյունքում ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով օրինականացնելու համար,

բ) 2013-2014 թվականների ընթացքում ՀՀ ոստիկանության պետ Վ.Գ.ասպարյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում վերջինիս ենթադրյալ հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու համար՝ քրեական պատասխանատվությունից խուսափելուն նրան օժանդակելու նպատակով,

գ) հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման, տարեկան ու պաշտոնի դադարեցման հայտարարագրերում հայտարարագրման ենթակա տվյալները դիտավորությամբ թաքցնելու համար, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը⁷,

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Պեյրոնյանի* գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԿԴ/0084/06/16 որոշման 13-րդ կետը, *mutatis mutandis*՝ Վալերի Հակոբյանի գործով 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԵԴ/0548/06/19 որոշումը:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահագն Պողոսյանի* գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ/0062/06/12 որոշումը:

⁷ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու մասին նախաքննության մարմնի միջնորդության քննության արդյունքում հաստատված է համարել մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքները կատարելու հիմնավոր կասկածը և վարույթն իրականացնող մարմնի կողմից պատշաճ ջանասիրություն դրսևորելը: Անդրադառնալով միջնորդության մեջ նշված՝ կալանավորման նպատակին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները բավարար են ողջամտորեն ենթադրելու, որ Ա.Հակոբյանը կարող է խոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի միջամտել ապացուցման գործընթացին: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ կալանքի տևողությունը, ժամկետի երկարաձգմանը նախորդող ժամանակահատվածում վարույթի մասնակիցների նկատմամբ ազդեցություն գործադրելու ու մեղադրական բնույթի ուղղակի ցուցմունքների բացակայությունը, ինչպես նաև գործում առկա մյուս տվյալները բավարար են եզրահանգելու, որ մեղադրյալ Ա.Հակոբյանի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոց գրավի ընտրությամբ և կիրառել է այն⁸,

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ իրավաչափ է առավել մեղմ խափանման միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակին հասնելու հնարավորության մասին Առաջին ատյանի դատարանի եզրահանգումը՝ հատկապես հաշվի առնելով մեղադրյալ Ա.Հակոբյանի՝ շուրջ ութ ամիս կալանքի տակ գտնվելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ միջնորդության քննության արդյունքում ստորադաս դատարանի կայացրած որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումներից, քանի որ խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների վարույթի շրջանակներում գրավ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության ու հնարավորության հարցը վերապահված չէ դատարանին: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը բեկանել է վիճարկվող դատական ակտը և մերժել նախաքննության մարմնի միջնորդությունը՝ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառման անհրաժեշտության ու հնարավորության հարցը թողնելով վարույթի համապատասխան հանրային մասնակցի լուծմանը⁹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-13.3-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանի օրինական վարքագիծն ապահովելու հնարավորության վերաբերյալ հետևության

⁸ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

հանգելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել սույն գործում առկա մի շարք հանգամանքներ:

Այսպես՝ տվյալ դեպքում պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկվել, որ մեղադրյալ Ա.Հակոբյանին մեղսագրվում են բարձր լատենտայնություն ունեցող առանձնապես ծանր և միջին ծանրության կոռուպցիոն բնույթի հանցագործություններ՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, որոնք ոտնձգում են այնպիսի կարևոր արժեքների դեմ, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետությունում օրինական տնտեսական գործունեությունը և պետական ծառայության սահմանված կարգը: Բացի այդ, հաշվի չի առնվել Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքների կատարման եղանակը, ենթադրյալ գործողությունների բնույթը: Այս առումով հատկապես ուշագրավ են ձեռնարկված քաղաքացիաիրավական գործարքների խառնված շրջապատույթը, իրականացված գործարքներում ներգրավված անձանց թիվը, վերջիններիս հետ մեղադրյալի ունեցած մերձավոր ու ազգակցական կապերը, մեղսագրվող հանցանքներից մեկը խմբի կազմում, պետական կառույցում առանցքային պաշտոն զբաղեցրած անձի հետ հանցակցությամբ կատարելը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ մեջբերված փաստական հանգամանքների համատեքստում ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել նաև Ա.Հակոբյանի անձը բնութագրող տվյալները: Այսպես՝ մեղադրյալը, լինելով ոստիկանության գնդապետ¹⁰, շուրջ քսանչորս տարի ծառայել է Հայաստանի Հանրապետության ուժային կառույցներում՝ 1994-1997 թվականների ընթացքում պաշտոններ զբաղեցնելով ՀՀ ներքին գործերի նախարարությունում, 1997-2011 թվականների ընթացքում՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում, 2011-2018 թվականների ընթացքում՝ ՀՀ ոստիկանությունում, իսկ վերջինիս մեղսագրվում են իր ծառայողական գործունեության ոլորտում ենթադրաբար կատարված հանցավոր արարքներ: Վերոնշյալը ողջամտորեն ենթադրում է որոշակի հեղինակություն, կապեր ու լծակներ ինչպես պետական համակարգի տարբեր օղակներում պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի ու շրջանակների նկատմամբ: Ուստի, այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես *Դավիթ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները¹¹, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքն այն մասին, որ ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, առանձնահատուկ դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա,

¹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթեր 42-44:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Համբարձումյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0700/06/18 որոշումը, կետ 16:

նրա հնարավորությունները խոչընդոտելու մինչդատական վարույթի բնականոն ընթացքին¹²: Այդ համատեքստում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առել օրինակ՝ անձի նախկինում ոստիկան հանդիսանալը և իր նախկին ծառայողական գործունեության հետ սերտ կապված հանցագործություն կատարելու մեջ մեղադրվելը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում գործի քննությանը միջամտելու հավանականությունը գնահատելու տեսանկյունից¹³:

16. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել մեղադրյալին մեղաագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, վերջինիս անձը, որոնք գործի նյութերից բխող տվյալների համատեքստում ողջամտորեն կարող էին վկայել, որ գործի քննության տվյալ փուլում առկա է մեղադրյալ Ա.Հակոբյանի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու բարձր հավանականության շարունակական ռիսկը, ինչը չի կարող չեզոքացվել այլընտրանք խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ այլընտրանքային խափանման միջոցի կամ խափանման միջոցների կիրառմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանի օրինական վարքագիծն ապահովելու հնարավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16.1. Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ որոշում կայացնելիս հաշվի են առել մեղադրյալ Ա.Հակոբյանի՝ ութ ամիս կալանքի տակ գտնվելու հանգամանքը, ապա Վճռաբեկ դատարանն այդ առնչությամբ հարկ է համարում նշել, որ խափանման միջոցի կիրառման տևողությունը դրա համաչափության գնահատման ինքնավար գործոն չէ և պետք է գնահատման ենթարկվի, հաշվի առնելով նաև գործի բնույթն ու բարդության աստիճանը: Անձի ոչ իրավաչափ վարքագիծը կանխարգելող միջոցների կիրառման համատեքստում այսպիսի մոտեցում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ ինքնին կանխարգելիչ միջոցների կիրառման տևողությունը բավարար չէ եզրահանգելու համար, որ այն համաչափ չէ¹⁴: Տվյալ դեպքում՝ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հակոբյանի՝ ութ ամիս կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը չի կարող համարվել վերջինիս ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոն:

¹² Տե՛ս Մարու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Neumeister v. Austria* գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, *Gabor Nagy v. Hungary* (No. 2) գործով 2017 թվականի ապրիլի 11-ի վճիռը, գանգատ թիվ 73999/14, կետ 70:

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khanzadyan v. Armenia* գործով 2014 թվականի մարտի 11-ի որոշումը, գանգատ թիվ 68571/11:

¹⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bulea v. Romania* գործով 2013 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 27804/10, կետ 62:

16.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 5.2-րդ կետում մատնանշած փաստարկին, հարկ է ընդգծել, որ բողոքաբերի պնդումը կառուցված է Առաջին ատյանի դատարանի դատական ակտին հաջորդող ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծության վրա, ուստի այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում պաշտպանի՝ սույն որոշման 7.1-րդ կետում ներկայացրած հակափաստարկին և ընդգծում, որ ստորադաս դատարանի որոշման իրավաչափության ստուգման դեպքում, դատական վերանայման ծավալը սահմանափակված է միջնորդության քննության ժամանակ հետագոտված՝ կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող փաստական տվյալների և վարույթի մասնակիցների արված պնդումների գնահատմամբ¹⁵, եթե առկա չէ դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական հանգամանք, հետևաբար բողոքաբերի հիշյալ փաստարկը տվյալ պարագայում չի կարող հաշվի առնվել:

17. Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու մասին միջնորդության քննության արդյունքում, Առաջին ատյանի դատարանը, հանգելով հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կիրառմամբ, իրավասու չէր կիրառել խափանման միջոց գրավը, քանի որ դրա կիրառման անհրաժեշտության և հնարավորության հարցի լուծումը դուրս է խափանման միջոցների դատական երաշխիքների շրջանակից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 3-րդ կետի, 288-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 3-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարաձգելու միջնորդությունը քննելիս, դատարանը, գտնելով որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել այլընտրանքային խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ, իրավասու է կալանքի փոխարեն կիրառել այլընտրանքային խափանման միջոց կամ դրանց համակցություն միայն այն դեպքում, երբ այդպիսի խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառման դեպքում դրա մեջ ներառված խափանման միջոցներից առնվազն մեկի ընտրության լիազորությունը վերապահված է դատարանին: Նման դեպքերում դատարանը քննիչի միջնորդությունը բավարարում է մասնակի և կիրառում համապատասխան խափանման միջոցը (օրինակ՝ տնային կալանք) կամ դրանց համակցությունը (օրինակ՝ տնային կալանք և գրավ): Իսկ այն դեպքերում, երբ դատարանը միջնորդության քննության արդյունքում գտնում է, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար ոչ միայն միջնորդվող կալանքի,

¹⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Դուրյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԳ/0052/06/14 որոշումը:

այլև իր իրավասությանը վերապահված խափանման միջոցի ընտրության անհրաժեշտությունը բացակայում է, ապա դատարանը պետք է մերժի քննիչի միջնորդությունը՝ առավել մեղմ խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառման հարցի լուծումը թողնելով վարույթի համապատասխան հանրային մասնակիցների հայեցողությանը:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները, հանգելով հետևության, որ մեղադրյալ Ա.Հակոբյանի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ, թույլ են տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումն ամբողջությամբ, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ գրավ կիրառելու մասով բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Արշակ Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը՝ ազգակցական կապի մինչև երկրորդ աստիճանի մեջ չգտնվող անձանց հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակման կիրառմամբ 1 (մեկ) ամսով երկարաձգելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի անհրաժեշտ է այդ մասով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 29-ի որոշումը թողնել անփոփոխ¹⁶, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 1 (մեկ) ամիս ժամկետին պետք է հաշվակցել Ա.Հակոբյանի՝ 2022 թվականի հուլիսի 29-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը, անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի գումարն անհրաժեշտ է վերադարձնել գրավատուներին:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ, և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Արշակ Սարգսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի

¹⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴԽ/0426/11/18 որոշումը:

5-ի որոշումը՝ ամբողջությամբ, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ գրավ կիրառելու մասով, բեկանել:

Մեղադրյալ Արշակ Սարգսի Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքի ժամկետը՝ ազգակցական կապի մինչև երկրորդ աստիճանի մեջ չգտնվող անձանց հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակման կիրառմամբ 1 (մեկ) ամիս ժամկետով երկարաձգելու մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 29-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 1 (մեկ) ամիս ժամկետին հաշվակցել 2022 թվականի հուլիսի 29-ից մինչև ազատ արձակվելը՝ 2022 թվականի օգոստոսի 1-ը, մեղադրյալ Արշակ Սարգսի Հակոբյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Գրավի գումարը վերադարձնել գրավատուներին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0046/01/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

27 դեկտեմբերի 2022 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Մկրտիչ Սահակի Բաբայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 17809215 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրքը)՝ 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ, 14-րդ կետերով, 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2015 թվականի դեկտեմբերի 24-ին Մկրտիչ Սահակի Բաբայանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ, 14-րդ կետերով, 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

2015 թվականի դեկտեմբերի 26-ին նախաքննության մարմնի որոշմամբ Մկրտիչ Բաբայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ դատարանի որոշմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Մ.Բաբայանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի սեպտեմբերի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճռով Մ.Բաբայանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով՝ ազատազրկում՝ 17 (տասնյոթ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Մ.Բաբայանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 21 (քսանմեկ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2015 թվականի դեկտեմբերի 24-ից: Մ.Բաբայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Լևոն Մելքոնյանը:

3. Ամբաստանյալ Լ.Մելքոնյանի և նրա պաշտպան Ա.Ջուվանովայի, ինչպես նաև ամբաստանյալ Մ.Բաբայանի պաշտպան Լ.Սիմոնյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ՝ 2021 թվականի հունվարի 25-ին և նույն թվականի փետրվարի 9-ին վճռաբեկ բողոքներ են ներկայացրել համապատասխանաբար պաշտպաններ Լ.Սիմոնյանը և Ա.Ջուվանովան: Պաշտպան Ա.Ջուվանովայի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 7-ի որոշմամբ

մերժվել է: Պաշտպան Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 նոյեմբերի 8-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանի որոշումն առերևույթ հակասում է բողոքում վկայակոչված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացրած որոշումներին, ինչպես նաև թույլ են տրվել ամբաստանյալ Մ.Բաբայանի իրավունքների հիմնարար խախտումներ: Ըստ բողոքաբերի՝ դատարանները սխալ են գնահատել գործով ձեռք բերված ապացույցները և ամբաստանյալ Մ.Բաբայանի մեղավորության վերաբերյալ իրենց հետևությունների հիմքում դրել են ենթադրություններ ու անթույլատրելի ապացույցներ: Ամբաստանյալ Մ.Բաբայանի՝ որպես կասկածյալ տված ցուցմունքը ստացվել է քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ, մասնավորապես անցկացվել է գիշերային ժամին, այն է՝ սկսվել է 25.01.2019 թվականին՝ ժամը 00:55-ին և ավարտվել է 04:40 ըոպե, թեև ձերբակալման արձանագրությունը կազմվել է նախորդ օրը՝ ժամը 19:40-ին: Նշյալ հանգամանքը հանգեցրել է նրան, որ ամբաստանյալ Մ.Բաբայանը, հոգնած և շփոթված վիճակում գտնվելով, ցուցմունքում նշել է իրականությանը չհամապատասխանող տվյալ:

6. Բողոքաբերի պնդմամբ՝ ամբաստանյալ Մ.Բաբայանի դիտավորությունն ուղղված է եղել ոչ թե տուժողին մահ պատճառելուն, այլ ավազակային հարձակում կատարելուն, և նրա արարքում, բացի տուժողի առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով հափշտակություն կատարելուն ուղղված գործողություններից, այլ գործողություններ առկա չեն: Ինչպես երևում է դատաքննությամբ հետազոտված՝ «Արաքս» բենզալցակայանի տեսալսկիկների գննության արձանագրությունից և նկարահանված տեսանյութերից, Մ.Բաբայանի արարքում բացակայում են տուժողին մահ պատճառելուն ուղղված գործողությունները, այսինքն՝ սպանության օրյեկտիվ կողմը: Դրա մասին է վկայում նաև Մ.Բաբայանի կողմից տուժողին պատճառած վնասվածքների ծանրության աստիճանը: Ինչպես երևում է գործի փաստական հանգամանքներից և Մ.Բաբայանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

որոշումից, վերջինս կրակայրիչ-ատրճանակի կոթով հարվածներ է հասցրել Ա.Մարտիրոսյանի գլխի և դեմքի շրջաններին:

Վերը նշվածից հետևում է, որ Մ.Բաբայանի գործողությունները՝ նրա կողմից տուժողին պատճառած վնասվածքները, որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես նրան մահ պատճառելուն ուղղված գործողություններ, քանի որ դրանք վերջինիս կյանքին վտանգ սպառնացող վնասվածքներ չեն եղել:

Բացի այդ, նույնիսկ եթե դատարաններն ապացուցված են համարել մյուս ամբաստանյալի արարքում սպանության հանցակազմի առկայությունը, ապա ամբաստանյալ Մ.Բաբայանի գործողությունները նման պայմաններում չէին կարող որակվել միևնույն հոդվածով, քանի որ տեղի է ունեցել հանցակցի սահմանազանցում: Գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր ամբաստանյալների մոտ տուժողին մահ պատճառելու նախնական համաձայնությունը:

6.1. Բողոք բերած անձի կարծիքով, ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը թույլ են տվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի խախտում: Մասնավորապես, սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ քրեական գործն Առաջին ատյանի դատարան է ուղարկվել 2016 թվականի սեպտեմբերի 22-ին, գործի քննությունը տևել է երեք տարի երեք ամիս, Վերաքննիչ դատարանը ներկայացված բողոքները վարույթ է ընդունել 2020 թվականի փետրվար ամսին, իսկ դատական ակտը կայացվել է տասը ամիս անց՝ այն դեպքում, երբ գործի քննությունն իրականացվել է վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, այն է՝ լավել են ներկայացված բողոքների հիմնավորումները և դրանց վերաբերյալ մեղադրողի պատասխանը:

7. Բողոքի հեղինակը պնդել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը Մ.Բաբայանի նկատմամբ պատիժ նշանակելիս ևս թույլ է տվել դատական սխալ: Որպես մեղմացնող հանգամանք հաշվի չառնելով այն, որ Մ.Բաբայանը մեղադրանքի մի մասով իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարվածի համար և տվել է խոստովանական ցուցմունքներ, Առաջին ատյանի դատարանը նշանակել է ակնհայտ խիստ պատիժ:

8. Բողոքաբերը նշել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը միջին ծանրության հանցագործություն է, և այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից մինչև դատավճի օրինական ուժի մեջ մտնելը անցել է հինգ տարի: Սույն դեպքում ամբաստանյալ Մ.Բաբայանին մեղազարկված վերոգրյալ արարքն ավարտվել է 2015 թվականի դեկտեմբերի 24-ին և նրա նկատմամբ մինչ օրս չկա օրինական ուժի մեջ մտած դատավճի, հետևապես Մ.Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝

քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբաստանյալ Մ.Բաբայանի մասով բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով ճանաչել վերջինիս անմեղությունն ու արդարացնել, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նշանակված պատժաչափը մեղմացնել, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Մ.Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Նախաքննության մարմնի որոշմամբ Մկրտիչ Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) *Մյուս, ուրիշի գույքն ավազակային հարձակման եղանակով համաշխարհային վերաբերյալ նահանական համաձայնության գալով իր ընկեր, Երևան քաղաքի Նոր Նորքի 2-րդ զանգվածի Մոլորովական փողոցի 22-րդ շենքի 23-րդ բնակարանի բնակիչ Լևոն Մելքոնյանի հետ, այդ նպատակով նախապես ձեռք են բերել դիմակ, հակազագ, ներծալովի դանակ, 2 զույգ բժշկական ձեռնոցներ և կրակայրիչ սպրճանակ, 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 04:50-ի սահմաններում, իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով գնացել են Երևան քաղաքի Մյանիկյան 20/1 հասցեում գրնվող «Արաքս» բենզալցակայանի մոտ, որտեղ Մ.Բաբայանը հագել է դիմակ և բժշկական ձեռնոցներ, վերցրել որպես զենք օգրագործվող այլ առարկա հանդիսացող կրակայրիչ-սպրճանակը, իսկ Լ.Մելքոնյանը հագել է հակազագն ու բժշկական ձեռնոցները, զինվել է որպես զենք օգրագործվող այլ առարկա հանդիսացող դանակով, որից հետո խմբով հարձակվել են «Արաքս» բենզալցակայանի աշխատակից, Երևան քաղաքի Մոլորովական 28/1 շենքի 36 բնակարանի բնակիչ Ավետիք Ազարի Մարտիրոսյանի վրա և պահանջել են գումար, սակայն հանդիպելով վերջինիս դիմադրությանը, ուրիշի գույքին փրանալու իրենց հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, գիբակցելով և փոխարացնելով միմյանց գործողությունները, վերջինիս շահադիմարական դրդումներով զուգորդված ավազակությամբ սպանելու դիմադրությամբ նրա նկատմամբ կիրառել են կյանքի համար վրանգավոր բռնություն, այն է՝ Մ.Բաբայանը քաշքշել է Ա.Մարտիրոսյանի զգեստից, ձեռքով փակել է նրա բերանն ու իր ձեռքին գրնվող որպես զենք օգրագործվող այլ առարկա հանդիսացող կրակայրիչ սպրճանակի կոթով բազմաթիվ*

հարվածներ է հասցրել ԱՄարտիրոսյանի գլխի և ղեմքի շրջաններին՝ պարճատել մարմնական վնասվածքներ, այդ կերպ թուլացնելով վերջինիս դիմադրությունը, իսկ ԼՄելքոնյանը, նշված գործողություններին զուգահեռ, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել ԱՄարտիրոսյանի ձախ ձեռքի և որովայնի շրջաններին, պարճատելով՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կրրած թափանցող, կրծքավանդակի մկանների, առպարային թոքամզի, սրբասպարկի, սրբի և ձախ թոքի վերին բլթի վնասումով, ձախ նախաբազկի շրջանի միմյանց հեղ հաղորդակցվող ծակած-կրրած վերքեր նախաբազկի առաջնային մակերեսի մկանների և փոքր րրամնաչափի երակների վնասումով, ձախ դասարակի ներասյին մակերեսի ծակած կրրած վերք՝ կյանքին վրանագ պատնացող մարմնական վնասվածքներ: Այդ պահին Մ.Բարայանը և ԼՄելքոնյանը նկարելով իրենց մոբեցող «Բրիցա» հյորանացային համալիրի աշխարակիցներին դիմել են փահտարի, իսկ ԱՄարտիրոսյանը րեղափոխվել է «Մուրք Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենրոն, որրեղ սրացած մարմնական վնասվածքներից նույն օրը ժամը 08:00-ի սահմաններում մահացել է: Բացի այդ, Մ.Բարայանը գործով չպարզված աղբյուրից և ժամանակահատվածում սպօրինի ձեռք է բերել և Երևան քաղաքի Նոր Նորքի Գայի պողոպայի 37-րդ շենքի 6-րդ բնակարանի, իր ննջաննայակի պահարանում սպօրինի կերպով պահել է ռազմամթերք հանդիսացող 24 հար 7,62 մմ րրամնաչափի և 1 հար 5,45 մմ րրամնաչափի փամփուշրներ, որոնք 24.12.2015թ. նշված հասցեում կարարված խուզարկոյայնր հայրնարերվել և առգրավվել են»²:

11. Ամբատանյալ Մ.Բարայանը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով և 235-րդ հողվածի 1-ին մասով իրեն մեղավոր է ճանաչել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հողվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ իր կողմից տուժողին կյանքից գրկելու ուղղոյայնր ոչ մի գործողոյայնր չի իրականացվել, առավել ևս իր և ԼՄելքոնյանի միջև որևէ պայմանավորվածոյայնր չի եղել՝ տուժողին կյանքից գրկելու վերաբերյալ³:

12. Առաջին ատյանի դատարանը դատավճռով արճանագրել է հետևյալը. «(...) [Վ]երլուճելով ամբատրանկայնր ԼՄելքոնյանի և Մ.Բարայանի դարարնոյայնր ու նախարնոյայնր ընթացքում րված ցուցմունքները, համադրելով դրանք դարարնոյայնր և նախարնոյայնր ընթացքում (...) ձեռք բերված և հերագրրված այլ սպացոյցների հեղ, գնահարելով դրանք վերաբերելիոյայնր, թոյլարերելիոյայնր, իսկ ամբողջ սպացոյցներն իրենց համակցոյայնր գործի լուճման համար բավարարոյայնր րեսանկյունից, իրենց համակցոյայնր մեջ դրանց բազմակողմանի, լրիվ և օրլեկրիվ քնոյայնր վրա հիմնված ներքին համղզմանը Դարարանը հարարրված է համարում, որ. (...) Ամբատրանյալ (...) Մ.Բարայանի կարարած հանցանքները համարարասիանում են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, ՀՀ քրեական

² Տն քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 179:

³ Տն քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 181:

օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին:

(...)

Դատարանն ամբաստանյալ Մ.Բարսյանի պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ չի արձանագրում, իսկ որպես պարասիանսարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք է դիտում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված հանցանքներն ալկոհոլի ազդեցության փակ կարարելը:

Հաշվի առնելով ամբաստանյալի պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքների բացակայությունը, պարասիանսարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքի առկայությունը Դատարանը հանգում է հետևության, որ նրա նկատմամբ պարիժ անհրաժեշտ է նշանակել ազատազրկման ձևով, որը նա պետք է կրի և որի կիրառմամբ կապահովվեն նրան ուղղելու, նոր հանցանքի կատարումը կանխելու և սոցիալական արդարությունը վերականգնելու ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակները և կապահովվեն ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պարասիանսարվության անհարականացման և պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները»⁴:

13. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալ (...) Մկրտիչ Բարսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչելը նպատակ է հետապնդում խուսափելու քրեական պարասիանսարվությունից և պարժից:

Այդ առումով Առաջին աստիճանի դատարանի հետևությունները հիմնավորված ու պարճատարանված են, իսկ քրեական գործի փաստական հանգամանքների մասին Առաջին աստիճանի դատարանի հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապարասիանելու և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով ամբաստանյալներ Լևոն Մելքոնյանին և Մկրտիչ Բարսյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չլինելու վերաբերյալ պաշտպանների փաստարկները քրեական գործի նյութերում իրենց հաստատումը չեն գրնում, հետևաբար չեն կարող հիմք հանդիսանալ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելու համար (...)»⁵:

13.1. Անդրադառնալով պաշտպանների կողմից վերաքննիչ բողոքներում նշված՝ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժների արդարացիության հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Տվյալ դեպքում Առաջին աստիճանի դատարանն ամբաստանյալ (...) Մկրտիչ Բարսյանի նկատմամբ պարիժ նշանակելիս՝ պարժի փեսակը և չափը որոշելիս,

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 193-194:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 146:

հաշվի է առել ոչ միայն կատարված հանցագործությունների բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, այլև նրա անձը:

(...) Որպես ամբաստանյալ Մկրտիչ Բաբայանի պարասիանսավորությունն ու պարիժը ծանրացնող հանգամանք՝ Առաջին աստիճանի դատարանը հաշվի է առել հանցանքներն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը, իսկ պարասիանսավորությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ չի արձանագրել, որպիսի պայմաններում եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալ Մկրտիչ Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, պարիժ պետք է նշանակել ազատազրկում 21 (քսանմեկ) տարի ժամկետով ստանց գույքի թոնազրավման»⁶:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Մ.Բաբայանի արարքում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտարկությամբ կատարվող մասնակցությունը դիտարկությամբ հանցագործությանը»:

Վճռաբեկ դատարանն Այիկ Մաթոնյանի և Ռաֆիկ Հարությունյանի գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ՝

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից,
2. գործողությունների համարեղությունը,
3. հանցակցության դիտարկությամբ բնույթը:

Հանցակցության սուաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն քանակով, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պարասիանսավորության ենթարկելու փարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը: Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համարեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 147:

կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համարելի ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում: Հանցակցության վերջին հարկանիշը գործունեության դիրավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիրավորյալ մասնակցությունը դիրավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հարակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիրավորյալ մեղքով և միայն դիրավորյալ հանցագործություններում (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի (...) 2-րդ մասը սահմանում է, որ կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համարելի (...): Եթե կատարողները երկու կամ ավելի անձինք են, ապա այդպիսի հանցակցությունը կոչվում է համակատարում, որի դեպքում հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է կատարի հանցագործության օբյեկտիվ կողմը: Համակատարում նշանակում է, որ երկու կամ ավելի անձինք անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը»⁷:

16. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծանրացնող հանգամանքներում՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարած սպանության համար:

Վճռաբեկ դատարանը Վայերի Բարայանի գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համարելի կատարելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համարելի կատարելու համար: Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ սպանությունը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված, երբ երկու և ավելի անձինք, գործելով սպանություն կատարելուն ուղղված համարելի դիրավորությունը, անմիջականորեն մասնակցել են փոժողին կյանքից զրկելու պրոցեսին՝ նրա նկատմամբ բռնություն կիրառելով, ընդ որում պարզադիր չէ, որ մահ առաջացնող մասսիվածքները պարճառված լինեն նրանցից յուրաքանչյուրի կողմից (օրինակ՝ մեկը հաղթահարում է փոժողի դիմադրությունը՝ զրկելով

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ալիկ Մաթևոսյանի և Բաֆիկ Հարությունյանի գործով 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-29-րդ կետերը:

նրան պաշտպանվելու հնարավորությունից, իսկ մյուսը պատրճառում է մասնացու վնասվածքներ,

(...) Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն համարելով մի խումբ անձանց կողմից սպանություն կատարելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետն ըստ էության տարբերություն չի դնում, թե խումբը սպանությունը կատարել է նահինական համաձայնությամբ, թե առանց նահինական համաձայնության:

Ինչպես առանց նահինական համաձայնության, այնպես էլ նահինական համաձայնությամբ խմբի կողմից սպանություն կատարելու դեպքում պարտադիր պայման է երկու կամ ավելի կատարողների՝ համակատարողների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը պետք է անմիջականորեն՝ լրիվ կամ մասամբ կատարի հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ գործողություններ:

Սպանության համակատարողներ են այն անձինք, ովքեր սպանության պրոցեսում գործել են համաձայնեցված, նրանց գործողությունները միավորված են միասնական դիրավորությամբ, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմը՝ ներառյալ րոժողի նկատմամբ ֆիզիկական բնությունը, կատարվել է հանցակիցներից յուրաքանչյուրի կողմից:

Փաստորեն, սպանության համարել կատարման րակ պետք է հասկանալ հանցակիցների փոխադարձ համաձայնությամբ հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումը: Ընդ որում, համարել կատարած սպանության դեպքում պարտադիր չէ, որ համակատարողները կատարեն միևնույն գործողությունները, նրանց գործողությունները կարող են րարբեր լինել:

(...) Ելնելով հանցանքը համարել կատարելու մասին ունեցած պայմանավորվածությունից՝ հանցակիցների միջև կարող է կատարվել դերաբաշխում: Այս դեպքում հանցակցի կողմից կատարվող գործողությունների ծավալը կարող է էսպես րարբերվել հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող մյուս հանցակցի գործողություններից, սակայն համակատարողների ունեցած մասնակցության ասրիճանն արարքի որակման համար նշանակություն չունի: Եթե իմքակային սպանության օբյեկտիվ կողմի կատարման դեպքում համակատարողների միջև կարող է դերաբաշխում կատարվել, սպա այդ հանցակազմի սոբյեկտիվ կողմի հետ կապված նույնը լինել չի կարող, քանի որ հանցակիցներից յուրաքանչյուրը գիրակցում և իմքի այլ անդամի կամ անդամների հետ համարել իրականացնում է հանրորեն վրանգավոր արարքը:

(...) Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցակազմի համար պարտադիր է ինչպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հարկանիշների առկայությունը՝ երկու կամ ավելի անձանց կողմից համարել րոժողին կյանքից զրկելու անմիջական գործողությունների կատարումը, այնպես

էլ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հարկանիշի առկայությունը՝ սպանությունը միասին կարարելու հանցակիցների գիտակցումը»⁸:

17. Սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Բաբայանի մեղքը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված արարքում հաստատված է, և այդ մասով բողոքաբերի պատճառաբանությունները հերքվում են, մասնավորապես, Մկրտիչ Բաբայանի և Լևոն Մելքոնյանի, որպես կասկածյալ և որպես մեղադրյալ տված ցուցմունքներով, տուժողի իրավահաջորդ Ազատ Մարտիրոսյանի, տուժողի ներկայացուցիչ Էդիկ Մելքոնյանի, վկաներ Աննա Ոսկանյանի, Նոնա Թամրազյանի, Սեյրան Գևորգյանի, Իշխան Վարդայանի, Մարիամ Դավթյանի, Արտյոմ Կիրակոսյանի, Հովհաննես Սևիկյանի, Վահե Աղանիկյանի, Արտաշես Հարությունյանի, Վահե Սարգսյանի, Գեղամ Դավթյանի, Արմենակ Համբարձումյանի, Աշոտ Միասնիկի Ղազարյանի, Հարություն Չեգելեզյանի, Արամ Վարդանյանի, Աշոտ Գուրգենի Ղազարյանի, Արթուր Վարդանյանի, դատաձգաբանական փորձաքննության թիվ 3696-15, դատագենետիկական փորձաքննության թիվ 200 և թիվ 201, դատաբժշկական փորձաքննության թիվ 1406, դատատեսաձայնագրային և դատադիմանկարային փորձաքննության թիվ 03381606, դատակենսաբանական փորձաքննության թիվ 502 եզրակացություններով, տուժող Ավետիք Ազատի Մարտիրոսյանի դիակի զննության արձանագրությունով, դեպքի վայրի՝ Երևան քաղաքի Մյասնիկյան 20/1 հասցեում գտնվող «Արաքս» ՄՊ ընկերությանը պատկանող բենզալցակայանի զննության արձանագրությունով, նույն բենզալցակայանին պատկանող՝ տեսանկարահանող համակարգերի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի ժամը 04:00-ից 05:00-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունները պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունով, նույն բենզալցակայանից առգրավված «Ֆիլա» ապրանքանիշի սպորտային բաճկոնի զննության արձանագրությունով, նույն բենզալցակայանի և դրա հարակից տարածքի զննության արձանագրությունով, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից առգրավված տուժող Ա.Մարտիրոսյանի հագուստների զննության արձանագրությամբ, Երևան քաղաքի Գայի պողոտայի 37-րդ շենքի 6-րդ բնակարանի խուզարկության արձանագրությունով, մեղադրյալ Լևոն Մելքոնյանի մասնակցությամբ կատարված՝ Երևան քաղաքի Մյասնիկյան 20/1 հասցեում գտնվող «Արաքս» ՄՊ ընկերությանը պատկանող բենզալցակայանի և դրա հարակից տարածքի զննության արձանագրությունով և զննության տեսաձայնագրությունը պարունակող լազերային սկավառակով, մեղադրյալ Մկրտիչ Բաբայանի մասնակցությամբ կատարված Երևան քաղաքի Մյասնիկյան 20/1 հասցեում գտնվող «Արաքս» ՄՊ ընկերությանը պատկանող բենզալցակայանի և դրա հարակից տարածքի զննության արձանագրությունով

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վսլերի Բաբայանի գործով 2009 թվականի օգոստոսի 21-ի թիվ ԵԲԲԴ/0512/01/08 որոշման 9-11-րդ կետերը:

և գննության տեսաձայնագրությունը պարունակող լազերային սկավառակով, «Ալեքս Գրուպ» ՍՊ ընկերությանը պատկանող՝ Երևան քաղաքի Նոր Նորքի 3-րդ զանգվածի Գայի պողոտա 16-րդ հասցեում գործող «Երևան Սիթի» սուպերմարկետի դեղատանն առկա տեսախցիկի տեսագրությունները պարունակող լազերային սկավառակի գննությունով⁹:

18. Անդրադառնալով բողոքարեթի՝ սույն որոշման 6-րդ կետում նշված փաստարկին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 15-16-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ արարքը որպես խմբի կողմից կատարված սպանություն որակելու համար, ամենևին պարտադիր չէ, որպեսզի տուժողի մահը վրա հասնի համակատարողներից յուրաքանչյուրի կողմից հասցված վնասվածքների արդյունքում, այլ բավարար է արձանագրել, որ նրանցից յուրաքանչյուրը կատարել է տուժողին կյանքից զրկելու օբյեկտիվ կողմը կազմող որոշակի գործողություն՝ այն գիտակցմամբ, որ գործում է խմբի մյուս անդամի հետ համատեղ, նրանց գործողությունները համաձայնեցված են և ուղղված միևնույն հանցավոր հետևանքին, նախատեսում է այդ հետևանքի վրա հասնելը, ցանկանում այն կամ գիտակցաբար թույլ տալիս: Սույն գործով Մ.Բաբայանը, թեև անմիջականորեն տուժողին մահ առաջացնող վնասվածքներ չի պատճառել, սակայն իր գործողություններով նպաստել է Լ.Մելքոնյանի կողմից այդպիսիք կատարելուն, մասնավորապես՝ քաշքշել է տուժողի զգեստից, փակել է բերանը և կրակայրիչ ատրճանակի կոթով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա գլխին և դեմքին՝ այդպիսով կոտորելով վերջինիս դիմադրությունը և զրկելով նրան պաշտպանվելու հնարավորությունից, իսկ Լ.Մելքոնյանը, նշված գործողություններին զուգահեռ, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Մարտիրոսյանի ձախ ձեռքի և որովայնի շրջաններին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքներ, որոնց արդյունքում տուժողը մահացել է:

19. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես սպացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝*

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...):

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի այն խախտումները, որոնք դրսևորվել են քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ»:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 179-192

Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արևեն Սարգսյանի* գործով որոշմամբ¹⁰, այնուհետև ներկայացված իրավական դիրքորոշումները զարգացնելով՝ *Սարիբեկ Հարությունյանի* գործով որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Ա] պացույցների ձեռքբերման գործընթացում էական չեն կարող համարվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի այն խախտումները, որոնցով չեն սահմանափակվել դատավարության մասնակիցների օրենքով երաշխավորված իրավունքները կամ այդ իրավունքներից նրանք չեն զրկվել, ինչպես նաև այն խախտումները, որոնք սրացված փաստական րվյալների հավաստիության վրա չեն ազդել կամ չէին կարող ազդել: Այլ խոսքով՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների արդյունքում սրացված սպացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սպացույցն անթույլատրելի ճանաչելը որպես իրավական հեղևանք, պետք է տեղի ունենա միայն քրեադատավարական օրենսդրության էական խախտման առկայության պարագայում: Հակառակ դեպքում սպացույցների թույլատրելիության հարցին կցուցաբերվի ձևական մոտեցում, ինչն էլ կհանգեցնի սպացուցողական նյութի անտեղի կորստի»¹¹:

19.1. Անդրադառնալով Մ.Բաբայանի՝ որպես կասկածյալ տված ցուցմունքը քրեադատավարական օրենսդրության էական խախտմամբ ձեռք բերված լինելու վերաբերյալ բողոքաբերի պնդումներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ. գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ Մ.Բաբայանը ձերբակալվել է 2015 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 19.40-ին, իսկ նրա՝ որպես կասկածյալ հարցաքննությունը սկսվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 00.55-ին, և ավարտվել 04.40-ին: 2015 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 20.00-ից 23.50-ն ընկած ժամանակահատվածում, հարցաքննվել է կասկածյալ Լ.Մելքոնյանը, իսկ 23.55-ից սկսած կատարվել են այլ դատավարական գործողություններ, մասնավորապես՝ կայացվել են մի շարք փորձաքննություններ նշանակելու մասին որոշումներ, որոնց ծանոթացվել է կասկածյալ Լ.Մելքոնյանը, ինչպես նաև Մ.Բաբայանը ծանոթացվել է որպես կասկածյալ իր իրավունքներին և հայտնել, որ չի ցանկանում պաշտպան ունենալ¹²:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համատեքստում, հիմք ընդունելով սույն որոշման 19-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն դեպքում թույլ չի տրվել

¹⁰ Տեն, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արևեն Սարգսյանի* գործով 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԲԲԴ/0295/01/08 որոշումը:

¹¹ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Սարիբեկ Հարությունյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ-0189/01/12 որոշման 20-րդ կետը:

¹² Տեն քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 157-183:

քրեադատավարական օրենսդրության այնպիսի էական խախտում, որը կհանգեցնի ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության, հետևաբար վերոնշյալի կապակցությամբ բողոքաբերի փաստարկներն անհիմն են:

19.2. Ինչ վերաբերում է սույն որոշման 6.1-րդ կետում մեջբերված՝ ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանների կողմից ողջամիտ ժամկետի խախտում թույլ տալու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով քննվող գործի ծավալը, քնույթն ու բարդությունը, հանցակիցների կողմից կատարված լինելու հանգամանքը, ինչպես նաև գործի քննության ընդհանուր տևողությունը, արձանագրում է, որ դրանք բավարար չափով հիմնավորված չեն:

20. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ.Բաբայանի արարքում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են¹³:

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Մ.Բաբայանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

22. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկարմանը կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապարասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նշված օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկարմանը նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարույլ մասի համապարասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:*

23. Մեջբերված նորմերի վերլուծությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Դավիթ Հովհաննիսյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(...) Պարիժ նշանակելու արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ*

¹³ Տե՛ս սույն որոշման 12-13-րդ կետերը:

հողվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկարումներ նշանակվում է արդարացի պարիժ: Նույն հողվածի 3-րդ մասի համաձայն՝ պարիժի փոփոխումը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վրանգավորության սպիտակումը և բնույթով, հանցավորի անձը բնութագրող փոփոխումով, այդ թվում՝ պարասիսանսարվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Պարիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր փոփոխումները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկարումներ նշանակում է այնպիսի պարիժ, որն անհրաժեշտ է և բավարար այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար»¹⁴:

24. Մեղքն ընդունելու և խոստովանական ցուցմունքներ տալու հանգամանքի նշանակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մերոք Սարգսյանի* վերաբերյալ որոշմամբ, ըստ որի՝ «(...) Անդրադարձնելով բողոքարկերի այն պնդմանը, թե ամբաստանյալ Ս.Սարգսյանի կողմից մեղքն ընդունելը և կատարածի համար զղջալը չի կարող դիտարկվել որպես նրա պարասիսանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք (...)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղքն ընդունելը կամ չընդունելը անձի սուբյեկտիվ իրավունքն է, որը նախատեսված և երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 21-րդ և 22-րդ հոդվածներով: Հերկաբար, մեղքը չընդունելը չի կարող պարիժ նշանակելիս հաշվի առնվել և **հակասակր մեղքն ընդունելը և կատարածի համար անկեղծորեն զղջալը ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում բարենպաստ քրեակրական նշանակություն ունեցող հանգամանք է և կարող է կատարել պարասիսանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքի դեր**: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղքն ընդունելը և կատարածի համար անկեղծորեն զղջալը, որպես մեղավոր անձի հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա լրիվ գիտակցել է իր արարքի հանրային վրանգավորությունը, զղջացել է դրա համար: Մեղքն ընդունելու պարագայում քրեական պարիժի նպաստակների իրացումը, այդ թվում՝ պարիժի ենթարկված անձին ուղղելու հավանականությունը, զգալիորեն բարձրանում է»¹⁵:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Բաբայանը մասնակիորեն ընդունել է մեղքը, մասնավորապես, որպես կասկածյալ տված ցուցմունքով ընդունել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարումը, այդ մասով տվել է խոստովանական ցուցմունքներ, որպես մեղադրյալ տված բոլոր ցուցմունքներում չի փոխել իր դիրքորոշումը, իսկ դատաքննության ընթացքում տված ցուցմունքով իրեն մեղավոր է ճանաչել

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Հովհաննիսյանի* գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0078/01/09 որոշման 10-րդ կետը:

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մերոք Սարգսյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշման 27-րդ կետը:

նաև նույն օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ¹⁶:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-24-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, սույն գործով պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ չարձանագրելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել գործի նյութերով հաստատվող այն հանգամանքը, որ Մ.Բաբայանը նախաքննության և դատաքննության ընթացքում մասնակիորեն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, ինչպես նաև 235-րդ հոդվածի 1-ին մասով, ընդունել է իր մեղքը, այդ մասերով տվել է խոստովանական ցուցմունքներ և զղջացել է կատարած արարքների համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ստորադաս դատարաններն ամբաստանյալի կողմից մեղքը մասնակիորեն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը և կատարվածի համար զղջալը չեն դիտարկել որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք և այդ առումով կայացրել են թերի պատճառաբանված դատական ակտեր, այդուհանդերձ, հաշվի առնելով կատարված արարքների հանրային վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը, պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքի առկայությունը (հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը), ինչպես յուրաքանչյուր հանցագործության համար առանձին, այնպես էլ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նշանակել են համաչափ պատիժ: Այլ կերպ՝ սույն գործի հանգամանքների համատեքստում վերլուծելով Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Մ.Բաբայանի նկատմամբ նշանակված կոնկրետ պատիժները և դրանք մասնակիորեն գումարելու արդյունքում նշանակված վերջնական պատիժը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննարկվող մեղմացնող հանգամանքը հաշվի չառնելն ըստ էության չի հանգեցրել անհամաչափ պատժի նշանակման:

Հետևաբար, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Մ.Բաբայանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված են:

¹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 178, 222, հատոր 2-րդ, թերթ 147, հատոր 13-րդ, թերթեր 181-184:

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Մ.Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

28. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը (...):*

Նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պարտականատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը:

(...):

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, սկոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը՝*

պարժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմանը՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

29. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել,

իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները¹⁷:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցանքն ավարտվել է 2015 թվականի դեկտեմբերի 24-ին¹⁸: Վերոնշյալ արարքը կատարելու մեջ Մ.Բաբայանի մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է **2019 թվականի դեկտեմբերի 25-ին**, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել **2020 թվականի դեկտեմբերի 9-ին**¹⁹: Նշված որոշման դեմ Մ.Բաբայանի պաշտպանը՝ 2021 թվականի հունվարի 25-ին բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ²⁰:

31. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ Մ.Բաբայանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով մեղաազրված արարքի՝ որպես միջին ծանրության հանցանքի համար նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրանալու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել, ուստի նրա նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ:

32. Մինևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքով ամբաստանյալին մեղաազրվող հացակազմերում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերոնշյալ փոփոխություններն ամբաստանյալ Մ.Բաբայանի նկատմամբ հետադարձ ուժով կիրառելու հնարավորության հարցին:

33. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սպանությունը՝

(...)

7) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

¹⁷ Վաղեմության ժամկետների կիրառման պայմանների վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անահիտ Մաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10, *Միրաժ Ղամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Սազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

8) շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև զուգորդված՝ շորթմանը, ավագակությամբ կամ բանդիտիզմով,

(...)

պարծիվում է ազատագրվեմանը՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմանը»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մպանությունը՝

(...)

8) մի խումբ անձանց կողմից, (...)

10) շահադիտական դրդումներով,

(...)

պարծիվում է ազատազրկմանը՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմանը»:

Մեջբերված նորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին խմբագրությամբ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սպանության՝ ավագակությամբ զուգորդված լինելու ծանրացնող հանգամանքը գործող քրեական օրենսգրքով վերացվել է, մինևույն ժամանակ շահադիտական դրդումներով սպանությունը՝ որպես ծանրացնող հանգամանք, պահպանվել է: Մ.Բաբայանին մեղադրանք է առաջադրվել շահադիտական դրդումներով, ավագակությամբ զուգորդված սպանության համար²¹: Այլ կերպ՝ շահադիտական դրդումները՝ որպես սպանության ծանրացնող հանգամանք, Մ.Բաբայանի մեղադրանքի ծավալում ընդգրկված են եղել, հետևաբար գործող քրեական օրենսգրքով կատարված փոփոխությունը որևէ կերպ ամբաստանյալի վիճակը չի բարելավում: Ընդհակառակը, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան, նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համեմատ, խստացվել է, այն է՝ **տասներկուսից քսան տարի ժամկետով ազատազրկման փոխարեն նախատեսվել է տասնչորսից քսան տարի ժամկետով ազատազրկում**: Այսինքն՝ Մ.Բաբայանին մեղազրկող հանցագործության համար նախատեսված պատիժը խստացվել է, ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կատարված փոփոխությունները չեն կարող հետադարձ ուժ ունենալ:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մ.Բաբայանը ենթակա է քրեական պատասխանատվության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, այն է՝ մի խումբ անձանց կողմից, շահադիտական դրդումներով սպանության համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում Մ.Բաբայանի մեղադրանքի ծավալից հանել սպանության՝ ավագակությամբ զուգորդված լինելու հանգամանքը՝ նկատի

²¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ունենալով, որ վերոնշյալ ծանրացնող հանգամանքն օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերացվել է:

34. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ավագակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վրանգավոր բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պարտվում է ազատազրկմանը՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմանը կամ առանց դրա:*

2. Ավագակությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, (...)

4) զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմանը, (...)

պարտվում է ազատազրկմանը՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմանը կամ առանց դրա (...):»

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ավագակությունը՝ բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը՝*

պարտվում է ազատազրկմանը՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Ավագակությունը, որը կատարվել է՝

(...)

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, (...)

5) զենքի կամ մարմնական վնասվածք պարճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմանը, (...)

պարտվում է ազատազրկմանը՝ հինգից տասը տարի ժամկետով (...):»

Ավագակության հանցակազմի նախկին և նոր խմբագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրական զարգացումների արդյունքում այն էական փոփոխությունների է ենթարկվել: Նախ՝ գործող քրեական օրենսգրքով ավագակությունը նախատեսվել է նյութական հանցակազմով: Այսպես՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածում ավագակությունը բնութագրվում է որպես **հափշտակություն**, որը կատարվել է բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, իսկ հափշտակությունը, նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն, *ուրիշի գույքն սպորինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելն է, որը համարվում է ավարտված, եթե հանցավորն այդ գույքն սպորինաբար **վնասողն է կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:***

Էական փոփոխություններ են կատարվել նաև ավագակության հանցակազմի ծանրացնող հանգամանքներում, մասնավորապես, նախատեսվել են ինչպես մի շարք նոր ծանրացնող հանգամանքներ (հղի կնոջ, անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ, առանձին դաժանությամբ կատարված), այնպես էլ որոշ ծանրացնող հանգամանքներ ընդհանրապես վերացվել են (առողջությանը ծանր վնաս պատճառելով կատարված):

Բացի այդ, որոշակի փոփոխություն է տեղի ունեցել ավագակության հանցակազմի սանկցիայում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան, նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի համեմատ, մեղմացվել է՝ *վեցից փասը* տարի ժամկետով ազատազրկման փոխարեն նախատեսվել է *հինգից փասը* տարի ժամկետով ազատազրկում:

35. Սույն գործի փաստերից հետևում է, որ Մ.Բաբայանն իր հանցակցի հետ միասին չի կարողացել հափշտակությունն ավարտին հասցնել, այլ կերպ՝ ավագակային հարձակման արդյունքում նրանց չի հաջողվել տիրանալ ուրիշի գույքին²², հետևաբար, ըստ գործող քրեական օրենսգրքով նախատեսված նոր կարգավորումների, հանցագործությունն ընդհատվել է հանցավորձի փուլում: Այսպիսով, Մ.Բաբայանին մեղսագրվող հանցավոր արարքը համապատասխանում է ավագակության փորձի հատկանիշներին՝ նախատեսված ՀՀ գործող քրեական օրենսգրքի 44-րդ և 252-րդ հոդվածներով:

Մինևույն ժամանակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժատեսակի ստորին շեմը մեղմացվել է՝ վեց տարի ժամկետով ազատազրկումից դառնալով հինգ տարի:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով նախատեսված՝ ավագակության հանցակազմում կատարված փոփոխությունները պատիժը մեղմացնող են, հետևաբար նոր քրեական օրենսգիրքը հետադարձ ուժ ունի: Այսպիսով, Մ.Բաբայանը ենթակա է քրեական պատասխանատվության 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով՝ հինգից տասը տարի ժամկետով ազատազրկման շրջանակներում:

36. Ընդհանրացնելով սույն որոշման 33-35-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Մ.Բաբայանին մեղսագրվող հանցավոր արարքները համապատասխանում են 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով (առանց ավագակությամբ զուգորդված ծանրացնող հանգամանքի) նախատեսված հանցակազմերի հատկանիշներին:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ամբաստանյալի քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, այն է՝ մեղքը մասնակիորեն ընդունելը և ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, ծանրացնող հանգամանքի առկայությունը՝ հանցանքն ակոհովի ազդեցության տակ կատարելը, կատարված հանցագործությունների բնույթն ու վտանգավորությունը, ինչպես նաև վերջինիս անձը բնութագրող տվյալները,

²² Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 193:

գտնում է, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով Մ.Բարայանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով, իսկ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով՝ ազատազրկում՝ 16 (տասնվեց) տարի ժամկետով:

Անդրադառնալով հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործով կիրառելի է նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոնը, քանի որ այն, գործող քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համեմատ, անձի համար, ընդհանուր առմամբ, նախատեսում է պատիժ նշանակելու առավել նպաստավոր կանոններ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ պետք է նշանակել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով:

Այսպես՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով նշանակված 16 (տասնվեց) տարի ժամկետով ազատազրկմանը պետք է մասնակիորեն գումարել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով Մ.Բարայանի նկատմամբ նշանակված 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումից 3 (երեք) տարին՝ ամբաստանյալ Մ.Բարայանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանելով ազատազրկում՝ 19 (տասնինը) տարի ժամկետով, իսկ պատժի կրման սկիզբը պետք է հաշվել 2015 թվականի դեկտեմբերի 24-ից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Մկրտիչ Սահակի Բարայանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել:

2. Մկրտիչ Սահակի Բարայանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական

հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով Մկրտիչ Սահակի Բաբայանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով Մկրտիչ Սահակի Բաբայանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 16 (տասնվեց) տարի ժամկետով: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Մկրտիչ Սահակի Բաբայանի նկատմամբ նույն օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ կետերով նշանակված 16 (տասնվեց) տարի ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ կետերով նշանակված 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումից 3 (երեք) տարին՝ Մկրտիչ Սահակի Բաբայանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանելով ազատազրկում՝ 19 (տասնինը) տարի ժամկետով:

Պատժի կրման սկիզբը հաշվել 2015 թվականի դեկտեմբերի 24-ից:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արտոագրություն

Դատավորներ

արտոագրություններ

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԴ/0752/06/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

25 հունվարի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Ավաթ Էբրահիմի Ամինի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2022 թվականի հուլիսի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 58225522 քրեական վարույթը:

Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ Ավաթ Էբրահիմի Ամինին ձերբակալվել է:

2022 թվականի հուլիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ.Երեմյանի որոշմամբ՝ թիվ 58225522 քրեական վարույթով Ավաթ Ամինի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

2022 թվականի հուլիսի 21-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչ Հ.Մարտիրոսյանը միջնորդություն է հարուցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Ավաթ Ամինիի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2022 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ Ա.Ամինիի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազ Հ.Երեմյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ հատուկ վերանայման բողոքը մերժել է՝ անվտանգ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 22-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը հատուկ վերանայման վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը, ներկայացված հատուկ վերանայման վճռաբեկ բողոքում մատնանշելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, ինչպես նաև քրեադատավարական իրավանորմեր, նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել միջազգային պայմանագրերի, քրեական և քրեադատավարական օրենքների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ մեղադրյալ Ա.Ամինիի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու նպատակով նախաքննական մարմինը միջնորդությանը կից դատարան է ներկայացրել բավարար փաստական տվյալների համակցություն, որոնցից ակնհայտ է մեղսագրվող հանցանքին նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածը: Սակայն ստորադաս դատարանները հաշվի չեն առել Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ արձանագրության» 11-րդ հոդվածի, Եվրոպայի խորհրդի 2005 թվականի մայիսի 16-ի՝ «Մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի, «Քաղաքացիական ավիացիայի մասին» միջազգային կոնվենցիայի (Չիկագոյի կոնվենցիա) 9-րդ հավելվածի 3.31-րդ կետի, ՀՀ քրեական օրենսգրքի

457-րդ հոդվածի 1-ին մասով և 469-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերը, որոնք պետք է կիրառվեն:

Ըստ բողոքաբերի՝ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել յուրաքանչյուր տրանսպորտային ընկերության կամ տրանսպորտային որևէ միջոցի սեփականատիրոջ կամ շահագործողի համար պարտականություն սահմանել ստուգելու, թե արդյո՞ք բոլոր ուղևորների մոտ կան ընդունող պետություն մուտք գործելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերը նշված պարտավորությունը կատարելու համար, «Քաղաքացիական ավիացիայի մասին» միջազգային կոնվենցիայի 9-րդ հավելվածի 3.31-րդ կետի հիմքով, ՀՀ սահմանապահ զորքերի ծառայողները, «Պետական սահմանի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ստուգում են Հայաստանի Հանրապետությունից ելք կատարող ուղևորների մոտ Ավստրիայի Հանրապետություն մուտք գործելու համար պատշաճ թույլտվության առկայությունը, առանց որի թույլ չի տրվում Ավստրիայի Հանրապետություն մուտք գործելու նպատակով ուղևորի՝ Հայաստանի Հանրապետությունից ելք կատարելու համար օդանավ նստեցումը: Այսինքն, Ավստրիայի Հանրապետություն մուտք գործելու պատշաճ թույլտվությունը անհրաժեշտ պայման է նաև օդային տրանսպորտով Հայաստանի Հանրապետությունից Ավստրիա մեկնելու նպատակով ՀՀ պետական սահմանը հատելու համար:

Պատշաճ թույլտվություն ունենալու վերաբերյալ կեղծ փաստաթղթով սահմանի հատումը համարվում է ՀՀ պետական սահմանի հատում՝ առանց պատշաճ թույլտվության:

Բողոքաբերը փաստել է, որ համաձայն գործի նյութերի՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ավաթ Ամինին Ավստրիայի Հանրապետություն մեկնելու համար ձեռք է բերել և հաշվառում իրականացնող աշխատակցին ու ՀՀ սահմանապահ զորքերի զինծառայողին ներկայացրել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կացության կեղծ քարտ, որով հիմնավորվում է Ավաթ Ամինին մեղսագրվող հանցանքին նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածը:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, կայացնել դրանց փոխարինող դատական ակտ՝ բավարարելով Ավաթ Ամինիի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Ավաթ Ամինիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում այն բանի համար, որ «(...) [Ն]ա առանց սահմանված փաստաթղթերի

և պարշաճ թույլտվության փորձել է ապօրինի հասրել ՀՀ պետական սահմանը, ինչպես նաև օգրագործել է իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ:

Այսպես.

Ավագ Ամինի դեռևս չպարզված ժամանակ և հանգամանքներում ձեռք է բերել պետական մարմնի կողմից արվող, իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ՝ իր անհատականացնող րվյալներով և լուսանկարով Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թիվ R 153020340 համարի կացության կեղծ քարտը, որը 2022 թվականի հուլիսի 19-ին ներկայացրել է «Զվարթոնց» օդանավակայանում հաշվառում իրականացնող աշխատակցին, որից հետո այն ներկայացրել է նաև ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի «Զվարթոնց» սահմանային վերահսկողության բաժնի ծառայողներին և այդ կերպ օգրագործելով իրավունք վերապահող նշված կեղծ փաստաթուղթը, ապօրինի առանց սահմանված փաստաթղթերի և պարշաճ թույլտվության, փորձել է հասրել ՀՀ պետական սահմանը և Երևան-Վիեննա թիվ 642 չվերթով մեկնել ՀՀ-ից, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով ՀՀ պետական սահմանի ապօրինի հասրումը չի իրագործվել, քանի որ բռնվել է ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից (...):»¹:

8. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Թ]ննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքները Ավագ Էրրահիմի Ամինի կողմից կատարելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցը՝ Դատարանը (...) արձանագրում է, որ միջնորդության հիմնավորվածությունը հասրարող նյութերում առկա չէ որևէ փաստական րվյալ, որով կհասրարվեր ՀՀ-ից ելքի համար թիվ R 153020340 կացության ակրի պարտադիր լինելու հանգամանքը: Ավելին՝ Քննիչն իր բացարրություններով ևս չկայակոչեց նաև որևէ օրենսդրական կամ նորմարիվ իրավական ակր, որով դեպի Մեծ Բրիտանիայի Թագավորություն Հայասրանի Հանրապետությունից ելքը կարգելվեր, եթե բացի վավեր անձնագրից առկա չլիներ պարտադիր համարվող որևէ փաստաթուղթ (րվյալ դեպքում թիվ R 153020340 կացության ակր): Ընդ որում վարույթի առարկային վերաբերող նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ավագ Ամինի ԻԻՀ անձնագիրը եղել է վավեր և նա հնարավորություն է ունեցել 2022 թվականի հուլիսի 15-ին Մեղրիի անցակետով անարգել մուրք գործել Հայասրանի Հանրապետություն:

Դատարանը հարկ է համարում նշել, որ այն պայմաններում, երբ չի հիմնավորվել ՀՀ-ից ելքի համար վավեր անձնագրից բացի այլ պարտադիր փաստաթղթի առկայության պահանջը, ապա օրարերկրյա պետություն մուրքի թույլտվություն պարունակող փաստաթուղթը կեղծված լինելու հանգամանքը թեև կարող է ինդիկներ առաջացնել այլ երկիր մուրք գործելու համար, այնուհանդերձ որևէ կերպ չի կարող դիարվել որպես ՀՀ-ից ելքի թույլտվություն պարունակող սահմանված փաստաթուղթ:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 26-27:

Վերագրյալի պայմաններում Դատարանն արձանագրում է, որ վարույթի առարկային վերաբերող նյութերը չեն պարունակում կասկածների արժանահավաստությունն ու բարեխղճությունը հավասարող բավարար փաստական փյուջաներ, որոնք համակցության մեջ թույլ կրային անկողմնակալ դիրորդին եզրակացնելու, որ Ավաթ Էբրահիմի Ամինին թիվ R 153020340 կացության ակտը օգրագործելով է փորձել ասորիսի հարել Հայասրանի Հանրասրտության պերական սահմանը:

Բացի այդ, Դատարանին չի ներկայացվել որևէ տեղեկություն, փաստ կամ սպացույց, որ թիվ R 153020340 կացության ակտը Ավաթ Էբրահիմի Ամինի կողմից ձեռք է բերվել Հայասրանի Հանրասրտության տարածքում:

Այսպիսով.

Դատարանն արձանագրում է, որ չի հաստատվում մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը (...)²:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Վ]երաքննիչ դատարանը համարելով արձանագրված փաստական հանգամանքները (...) արձանագրում է, որ սույն գործով չեն ներկայացվել համասպատասխան փաստեր և տեղեկություններ պարունակող փաստական փյուջաներ, որոնք (...) բավարար հիմք են տալիս ողջամիտ ենթադրություն անելու առ այն, որ դեպքը, որի կատարման մեջ մեղադրվում է Ավաթ Էբրահիմի Ամինին, իրական է և համընկնում է նրան վերագրվող ենթադրյալ հանցագործությունների դեպքին:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ են Առաջին սարյանի դատարանի հերտություններն առ այն, որ մեղադրյալ Ավաթ Էբրահիմի Ամինին առնչություն չունի իրեն վերագրվող հանցանքների կատարմանը: (...)»³:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Ա.Ամինիի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունները կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից գրկվել այլ կերպ, քան հերկյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր

² Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 47-55:

³ Տեն նյութեր, հատոր 2, թերթեր 44-56:

կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»:

12. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ *Վահրամ Գևորգյանի*⁴, *Հարություն Խաչատրյանի*⁵ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ⁶:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից⁷, ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԳ2/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԳ/0017/06/16 որոշումը, կետ 14:

⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԳԻ/0003/11/08 որոշումը:

կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ սպացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել⁸, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)⁹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

– Նախաքննության մարմինն Ավաթ Ամինիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով հարուցել է հանրային քրեական հետապնդում այն բանի համար, որ նա առանց սահմանված փաստաթղթերի և պատշաճ թույլտվության փորձել է ապօրինի հատել ՀՀ պետական սահմանը, ինչպես նաև օգտագործել է իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ¹⁰:

– Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ, որով կհաստատվեր Հայաստանի Հանրապետությունից ելքի համար թիվ R 153020340 կացության ակտի պարտադիր լինելու հանգամանքը: Վարույթի առարկային վերաբերող նյութերը չեն պարունակում կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը հավաստող բավարար փաստական տվյալներ, որոնք համակցության մեջ թույլ կտային անկողմնակալ դիտորդին եզրակացնելու, որ Ա.Ամինիին թիվ R 153020340 կացության ակտն օգտագործելով է փորձել ապօրինի հատել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը: Առաջին ատյանի դատարանը նշել է նաև, որ դատարանին չի ներկայացվել որևէ տեղեկություն, փաստ կամ ապացույց, որ թիվ R 153020340 կացության ակտն Ավաթ Էրրահիմի Ամինիի կողմից ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության տարածքում: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը

⁸ Այդ առումով մանրամասն տես, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06:

⁹ Տես Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով վերը նշված որոշումը, կետ 15:

¹⁰ Տես սույն որոշման 7-րդ կետը:

գտել է, որ չի հաստատվում մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը¹¹:

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատական ակտը, իր հերթին փաստել է որ իրավաչափ են Առաջին ատյանի դատարանի հետևություններն առ այն, որ մեղադրյալ Ա.Ամինին առնչություն չունի իրեն վերագրվող հանցանքների կատարմանը¹²:

14. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Ա.Ամինիի նկատմամբ կախնավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք հանգամանքներ:

Նախևառաջ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ Առաջին ատյանի դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Ա.Ամինիի առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նրան առաջադրված մեղադրանքին չի հաստատվում, պատշաճ ուշադրության չեն արժանացրել քննիչի կողմից միջնորդությանը կից դատարան ներկայացված հետևյալ փաստական տվյալները: Մասնավորապես.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի ծառայող Ռ.Գրիգորյանի կողմից ներկայացված «առերևույթ հանցանքի մասին հաղորդումը» և նույնաբովանդակ «զեկուցագիրը», որոնց համաձայն՝ 2022 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 03:30-ի սահմաններում, Երևան-Վիեննա թիվ 642 չվերթի ուղևորների հաշվառման ժամանակ ԻԻՀ քաղաքացի Ա.Ամինին հաշվառում իրականացնող աշխատակիցներին է ներկայացրել իր լուսանկարով և տվյալներով լրացված՝ թիվ R 153020340 սերիա համարի Միացյալ Թագավորության կացության կարգավիճակի քարտը, այնուհետև նույն փաստաթուղթը ներկայացրել է նաև սահմանային վերահսկողության ժամանակ, որտեղ փաստաթղթային ստուգման ընթացքում 6-րդ սահմանապահ խցիկի գինձառայող Էդվարդ Հակոբյանը պարզել է, որ նշված կացության քարտը կեղծ է: Հարցումային աշխատանքի ընթացքում Ա.Ամինին հայտնել է, որ նշված կացության քարտը ձեռք է բերել Թեհրան քաղաքում, ունի Ռեզայից 2000 ԱՄՆ դոլարի դիմաց¹³,

-«անձանց և փաստաթղթերը հատուկ ստուգման ենթարկելու» մասին թիվ 1/190701 ակտը, համաձայն որի՝ Ա.Ամինիի կողմից ներկայացված բրիտանական նմուշի կացության քարտն ամբողջությամբ կեղծ է¹⁴,

¹¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹³ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին թերթեր 14-15:

¹⁴ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին թերթեր 13:

–սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից Ա.Ամինիի վերաբերյալ սահմանահատումների պատմությունը, որի գննությամբ պարզվել է, որ վերջինս 2022 թվականի հուլիսի 15-ին «Մեդրի» անցակետով որպես հետիոտն մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն, իսկ 2022 թվականի հուլիսի 19-ին փորձել է Երևան-Վիեննա թիվ 642 չվերթով մեկնել Հայաստանի Հանրապետությունից, սակայն վերջինիս սահմանահատումը կասեցվել է, քանի որ ներկայացրել է կացության կեղծ քարտ¹⁵:

15. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, քննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված և գործում առկա փաստական տվյալների համակցությունը դատավարության տվյալ փուլում ողջամտորեն բավարար էր գալու այն եզրահանգման, որ մեղադրյալ Ավաթ Ամինին առնչություն ունի իրեն մեղսագրվող արարքներին: Մասնավորապես, այդ փաստական տվյալները բավարար են հիմնավորված ենթադրություն անելու, որ մեղադրյալ Ա.Ամինին կեղծ փաստաթղթի օգտագործմամբ փորձել է ապօրինի հատել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը: Այլ կերպ՝ առկա փաստական տվյալները բավարար էին փաստելու, որ առկա է մեղադրյալ Ա.Ամինիի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարման հիմնավոր կասկածը:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն փաստարկմանը, որ Ավաթ Ամինիի ԻԻՀ անձնագիրը եղել է վավեր և նա հնարավորություն է ունեցել 2022 թվականի հուլիսի 15-ին Մեդրիի անցակետով անարգել մուտք գործել Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև այն դատողությանը, որ օտարերկրյա պետություն մուտքի թույլտվություն պարունակող փաստաթուղթը որևէ կերպ չի կարող դիտվել որպես Հայաստանի Հանրապետությունից ելքի թույլտվություն պարունակող փաստաթուղթ, ապա դրանք Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ փուլում կարող էին քննարկման առարկա դառնալ այն պարագայում, եթե Ա.Ամինին Հայաստանի Հանրապետությունից փորձեր մեկնել ԻԻՀ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ առումով որևէ նշանակություն չի կարող ունենալ նաև այն փաստը, թե ներկայացված կացության քարտը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության, թե այլ երկրի տարածքում:

16. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Ա.Ամինիի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար, հիմնավոր չեն:

17. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտեր

¹⁵ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին թերթեր 16-18:

կայացնելիս, թույլ են տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի՝ հիմք է Առաջին աստիճանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 22-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը րեկանելու համար:

17.1. Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *Վճռաբեկ դատարանում հարուկ վերանայման արդյունքով Վճռաբեկ դատարանը լիազորված է ամբողջությամբ կամ որոշակի մասով դատական ակտը րեկանելուց հետո՝ րեկանված մասով կայացնել դրան փոխարինող դատական ակտ:*

Նման պայմաններում, անդրադառնալով հատուկ վերանայման արդյունքում դատական ակտը րեկանելուց հետո Վճռաբեկ դատարանի կողմից վարույթը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության փոխանցելու հնարավորությանը, հարկ է նշել, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը (...) կայացնում է նոր դատական ակտ» կարգավորման համատեքստում Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ թեև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում¹⁶:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ իրավական երաշխիքների կենսագործման նպատակով հատուկ վերանայման շրջանակներում վարույթը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության փոխանցելու անհրաժեշտությունը որոշ դեպքերում կարող է առաջ գալ նաև 2021 հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի՝ 400-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի շրջանակներում, ուստի Վճռաբեկ դատարանը վերահաստատում է Հրայր Հովսեփյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները և գտնում, որ դրանք

¹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը, կետ 27:

շարունակում են վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառելի լինել նաև նոր օրենսգրքով նախատեսված վերոնշյալ կարգավորման նկատմամբ:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վարույթը պետք է փոխանցել Առաջին ատյանի դատարան՝ կալանավորման հիմքերի մասով նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ավաթ Էբրահիմի Ամինիի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 22-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0577/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

10 փետրվարի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով դիմող Արտեմ Զավենի Խաչիկյանի ներկայացուցիչներ Վ.Հովհաննիսյանի և Ս.Խչեչյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է դիմող Արտեմ Զավենի Խաչիկյանի «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումը, որը քննարկման է ուղղարկվել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն:

Հիշյալ դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության վերոգրյալ վարչության ավագ դատախազ Տ.Ենոքյանի՝ 2020 թվականի հունիսի 16-ի գրությամբ, դիմող Արտեմ Խաչիկյանին տրվել է գրավոր պատասխան:

2. Վերոնշյալ գրության դեմ դիմող Ա.Խաչիկյանի բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև

Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմողի ներկայացուցիչներ Վ.Հովհաննիսյանի և Ս.Խչեյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մարտի 15-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշումը բեկանելու և դիմող Ա.Խաչիկյանի իրավունքների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Ըստ բողոքաբերի, Ա.Խաչիկյանի ներկայացրած դիմումի փաստական հիմնավորումները չեն պարունակում տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին, այլ կառուցված են թիվ 12125519 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշման իրավաչափության վերաբերյալ դիմողի դատողությունների վրա: Մինչդեռ, մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կայացրած որոշումների կամ կատարած գործողությունների կապակցությամբ դատավարության մասնակցի անհամաձայնությունը չի կարող դիտարկվել որպես հանցագործության մասին հաղորդում և առաջացնել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 180-րդ հոդվածով նախատեսված գործիքակազմի գործադրմամբ քննարկման ու լուծման ենթակա դատավարական իրավահարաբերություններ: Տվյալ դեպքում ենթակա է գործադրման վարույթն իրականացնող մարմնի գործողությունների բողոքարկման դատավարական կառուցակարգը, ինչից զրկված չի եղել նաև դիմողը, հետևաբար՝ դիմողի որևէ իրավունք չի խախտվել:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշումը և օրինական

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմանը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Դիմող Ա.Խաչիկյանի՝ «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումով ենթադրյալ հանցանքը փաստարկվել է նրանով, որ. «(...) 21.04.2020 թվականին ՀԿԳ քննիչ Ա.Կարասպետյանի կողմից, թիվ 12125519 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու և վարույթ ընդունելու մասին որոշման կայացումն իր մեջ պարունակում է [2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված] ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության (հանցագործությունների) հատկանիշները, այսպես (...) քրեական գործով ձեռք բերված ոչ մի այլ ապացույցներով չհիմնավորված մեղադրյալ Գ.Մաշադյանի ցուցմունքից քննիչը ենթադրություն է կատարել, որ եթե Գ.Մաշադյանը ցուցմունք է տալիս իր կողմից գույք հափշտակելը հերքելու վերաբերյալ, հիշյալ հանգամանքը բավարար է ենթադրելու, որ գույքի գաղտնի հափշտակությունը կատարվել է այլ անհայտ անձի կողմից: Քննիչի նման ենթադրությունը չի հիմնավորվում որևէ այլ ապացույցներով և չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու համար, հեղուկաբար կայացված որոշումը ոչ միայն օրինական չէ, այլև, իմ գնահատմամբ քննիչի այդ գործողություններում առկա են հանցագործության հատկանիշներ»²:

7.1. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Տ.Ենոքյանի՝ 2020 թվականի հունիսի 16-ի գրությամբ, դիմող Ա.Խաչիկյանին տրվել է պատասխան այն մասին, որ հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները բավարար չեն այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները գործադրելու համար³:

8. Առաջին ատյանի դատարանը, ստուգման ենթարկելով դիմողի՝ «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումի կապակցությամբ գրությամբ պատասխանելու իրավաչափության, ըստ այդմ իրավունքի խախտման հարցը՝ արձանագրել է հետևյալը. «(...) Ա.Խաչիկյանի հաղորդումը որպես քրեական գործ հարուցելու առիթ, կոնկրետ հանցագործության տարբեր պարունակող նախապարտավորող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվություն չի պարունակել, որպեսզի հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգով նյութ նախապարտավորելու և հեղուկաբար նաև [նույն օրենսգրքի] 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար: Այլ կերպ

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 14-17:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 18-19:

կոնկրետ դեպքում չի եղել նյութեր նախապարասարելու քրեադատավարական պարտականություն և հաջորդիվ նաև՝ քրեադատավարական անգործություն: Հերևարար, Ա.Խաչիկյանի հաղորդման հիման վրա նյութ չնախապարասարելը, արդյունքում՝ գրությանը պարասահանելն իրավաչափ է և բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության ու ՀՀ Վճռաբեկ դատարանի [վերաբերելի] որոշման րրամնաքանությունից: Ընդ որում դատասիագության կողմից գրությանը պարասահանելով չեն խախտվել բողոքաբեր, քրեական գործով րուծողի իրավահաջորդ Ա.Խաչիկյանի իրավունքները»⁴:

9. Վերաքննիչ դատարանը դիմող Ա.Խաչիկյանի ներկայացուցիչների բողոքը հիմնավորված ճանաչելով և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնելու վերջինիս իրավունքների խախտումը, իր դատական ակտի հիմքում դրել է հետևյալ դատողությունը. «(․․) Ա.Խաչիկյանը ՀՀ գլխավոր դատասիագին հաղորդում է ներկայացրել կոնկրետ անձի կողմից կոնկրետ հանցագործություն կատարելու մասին, այն վերացական և ընդհանուր բնույթի դիմում չէ:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որը ենթադրում է հանցագործության մասին հաղորդման ընդունում ու գրանցում, դրա մեջ արձանագրված փաստական րվյալների արուգում և պարճատաքանված որոշման կայացում, իսկ որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հողվածով նախարեալված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի րվյալներ կոնկրետ հանցագործության մասին, ինչը րվյալ դեպքում առկա է եղել: Այսինքն առկա է եղել քրեական գործ հարուցելու առիթ, որի պարագայում պետք է կատարվելին համապարասիան քրեադատավարական գործողություններ պարգելու քրեական գործ հարուցելու հիմքեր առկա են թե ոչ, այսինքն պետք է իրականացվեր հաղորդման նախնական արուգում որից հետո միայն հարավոր կլիներ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հողվածով նախարեալված որոշումներից որևէ մեկը:

ՀՀ գլխավոր դատասիագության ՀՀ հարուկ քննչական ծառայությունում մինչդարական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատասիագ Տ.Տնոքյանը բավարարվել է Ա.Խաչիկյանի կողմից ՀՀ գլխավոր դատասիագին հասցեագրված հաղորդմանը գրությանը պարասահանելով, որի արդյունքում խախտվել է վերջինիս արդար քննության իրավունքը»⁵:

Վճռաբեկ դատարանի պատճառաքանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք դիմող Ա.Խաչիկյանի իրավունքի

⁴ Տնն նյութեր, հատոր 1, թերթեր 41-47:

⁵ Տնն նյութեր, հատոր 2, թերթեր 44-51:

խախտման ու վարույթն իրականացնող մարմնին այն վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

Վկայակոչված իրավադրույթի բովանդակության հաշվառմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ պաշտոնատար անձինք գործունեություն ծավալելիս պարտավոր են խստորեն գործելու Սահմանադրությամբ կամ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, հակառակ պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի խախտում, ինչից որևէ բացառություն որևէ պետական մարմնի համար Սահմանադրությամբ նախատեսված չէ⁶:

12. Պայմանավորված սույն գործի փաստական հանգամանքներով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ քրեադատավարական համակարգում քննիչի ունեցած գործառնական դերը, լիազորությունների ու պարտականությունների ամբողջությունը սահմանող իրավադրույթների մեկնաբանությանը: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ *«քննիչ[ը] քննչական կոմիտեի, հակակոռուպցիոն կոմիտեի, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ [է], որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածն ընդհանուր գծերով բացահայտում է քննիչի կարգավիճակի առանձնահատկությունները: Մասնավորապես, վերոնշյալ դատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական վարույթի ընթացքում իրականացնում է նախաքննություն: ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ քննիչի գործառնությանը բխող լիազորությունները բովանդակող նորմերի համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ հիշյալ ընթացակարգում իր լիազորություններն իրականացնելիս քննիչը գործում է հարաբերական ինքնուրույնության պայմաններում. իրեն վերապահված վարությանին հնարավորություններն իրացնում է երկու ձևով՝ իր հայեցողությամբ և հսկող դատախազի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ: Նախաքննության համակողմանիությունն ապահովելու համար քննիչը լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, քրեական դատավարության խնդիրները լուծելու համար ընդունել անհրաժեշտ որոշումներ, օրենքին համապատասխան կատարել քննչական և վարությանին այլ գործողություններ: Մինևույն ժամանակ,

⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-766 որոշումը:

քննիչը պատասխանատու է նախաքննության համակողմանիության, դրա բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամկետին կատարելու, ինչպես նաև իր կիրառած հարկադրանքի միջոցների իրավաչափության համար:

13. Սույն որոշման 11-րդ կետում շարադրված դիրքորոշման լույսի ներքո գնահատման ենթարկելով նախորդ կետում՝ քննիչի կարգավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի կարգավիճակը նրա զբաղեցրած դիրքն է քրեական դատավարության համակարգում և դրանից բխող նրա լիազորությունների ու պարտականությունների ամբողջությունը: Մասնավորապես, քննիչը մինչդատական վարույթի հանրային մասնակիցների համակարգում առանցքային տեղ է զբաղեցնում, ում վերապահված է քրեական վարույթի ընթացքում քննություն իրականացնելու գործառույթը: Համապատասխան գործառույթը քննիչն իրացնում է վարութային հարաբերական ինքնուրույնության պայմաններում՝ քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների միջոցով, որոնք նրա կարգավիճակի հիմքն են կազմում: Միևնույն ժամանակ, այդ լիազորությունների կենսագործումը պետք է համապատասխանի դատավարական պահանջներին, որպիսի եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմի բովանդակությունից:

13.1. Վարութային հարաբերական ինքնուրույնությունը, լինելով քննիչի կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու վերապահված գործառույթի արդյունավետ և իրավաչափ կենսագործումը, ինչը ենթադրում է, որ քննիչը պետք է գործի արտաքին ներգործությունն ու ճնշումները բացառող երաշխիքների պայմաններում՝ օրենքով իրեն տրված լիազորությունների շրջանակում, որոնք անհրաժեշտ և բավարար են իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննչական համակարգի հարաբերական ինքնուրույնության սկզբունքի լիարժեք ապահովումն անհնար կլինի այն դեպքում, եթե քննիչի համար չապահովվի քրեական վարույթի ընթացքում օրենքի կիրառման (մեկնաբանման), ներքին համոզմամբ փաստերի և ապացույցների գնահատման, արդյունքում կայացրած որոշման ու կատարած գործողության կապակցությամբ հետապնդումներ թույլ չտալու երաշխիքը: Վարութային հարաբերական ինքնուրույնության հիմքը ձևավորող այդ երաշխիքը կոչված է ապահովելու քննիչի և հանրության (գործի արդարացի քննության իրավունքը կրողի) այն համոզմունքը, որ ի պաշտոնն գործելիս քննիչը չի հետապնդվի իր մասնագիտական գործունեության համար: Միայն այդպիսի երաշխիքի առկայության պայմաններում է հնարավոր բարձր պահանջներ ներկայացնել քննիչի մասնագիտական գործունեությանն ու հանրության մոտ ձևավորել քննիչի դատավարական գործունեության անաչառության նկատմամբ վստահություն: Այլ կերպ՝ հարաբերական ինքնուրույնության նախատեսումը և դրանից ածանցյալ ի պաշտոնն գործելիս հետապնդումների չենթարկվելու

երաշխիքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից բխող անհրաժեշտ և բավարար գործողություններ ձեռնարկելու ու քննչական համակարգի վարույթային ակտերի նկատմամբ հասարակության վստահության կարևոր նախապայմաններն են:

14. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի առարկայից և խնդիրներից դուրս չէ քրեական վարույթի շրջանակում քննիչի գործունեությունը, քանի որ նրա կողմից ձեռնարկվող միջոցներն ուղղակի ազդեցություն ունեն վարույթի ընթացքի ու արդարացիության վրա՝ ներառյալ բուն դատաքննությունը: Այս առումով հատկանշական են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ սակ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետի առնչությամբ: Մի շարք գործերով դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի համարելու համար բավական է, որ տվյալ իրավախախտումը Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից իր բնույթով «քրեական» համարվի, կամ որ կատարված իրավախախտման համար անձը ենթակա լինի պատժի, որն իր բնույթով և խստության աստիճանով ընդհանուր առմամբ պատկանում է «քրեական» ոլորտին⁷:

Այդ նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրության արժանացնել *Albert and Le Compte v. Belgium* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով մասնագիտական կարգապահական վարույթների նկատմամբ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետի տարածման առնչությամբ տրված գնահատականները: Մասնավորապես, այդ գործով դատարանն անհրաժեշտ չի համարել դրա վերաբերյալ որևէ որոշում կայացնել՝ հանգելով այն եզրակացության, որ նման վարույթները պատկանում են քաղաքացիական ոլորտին: Դատարանն ընդգծել է, սակայն, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկու ոլորտները՝ քաղաքացիական և քրեական, կարող են նաև փոխբացառող չլինել⁸: Այս հարցի շրջանակներում հարկ է փաստել, որ *Müller-Hartburg v. Austria* գործով, որը վերաբերում էր փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կիրառելի չի համարել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը: Դատարանը, հաշվի առնելով այն փաստը, որ կիրառելի կարգապահական նորմը վերաբերում էր ոչ թե հանրությանը, այլ հատուկ կարգավիճակ ունեցող մասնագիտական կոնկրետ խմբի

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Lutz v. Germany* գործով 1978 թվականի օգոստոսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 9912/82, 55-րդ կետ, *Öztürk v. Germany* գործով 1984 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 8544/79, 54-րդ կետ:

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Albert and Le Compte v. Belgium* գործով 1983 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7496/76, 30-րդ կետ:

անդամին, և որ դրա նպատակն էր ապահովել փաստաբանական միության անդամների կողմից նրանց մասնագիտական վարքագիծը կարգավորող որոշակի կանոնների պահպանումը, գտել է, որ այն ուներ ոչ թե քրեական, այլ կարգապահական տարրեր⁹:

15. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավարական գործունեության կապակցությամբ հետապնդման չենթարկվելու երաշխիքի բովանդակային սահմաններին՝ քրեական վարույթ նախաձեռնելու ընթացակարգի առումով:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի շրջանակում քննիչի կողմից իրականացված գործունեության մեջ հանցագործության հատկանիշների առկայության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է վարույթային ակտերի՝ քննիչի կարգավիճակի հետ համատեղելիության տեսանկյունից գնահատում: Նման մեկնաբանությունը հնարավորություն է տալիս իրավասու մարմնին՝ քննիչի կողմից ենթադրյալ հանցագործությունը կատարած լինելու մասին տվյալներ ստանալով, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելիս բացառել քննիչի մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում այդ կերպ ճնշումներ գործադրելու հնարավորությունը, ինչն ինքնին կոչված է կենսագործելու վարույթային հարաբերական ինքնուրույնության սկզբունքի էությունն ու նպատակները: Միևնույն ժամանակ, վարույթային հարաբերական ինքնուրույնությունը երաշխավորող նման կառուցակարգի իրավական նշանակությունն ուղղված է նաև հանրային գործիքակազմի խնայողությանը և արդարադատության շահերի համաչափ ապահովմանը:

Այս ընթացակարգի առումով, որպես կարգավիճակից բխող վարույթային ակտեր կարող են դիտարկվել այնպիսիք, որոնց կատարումը **պայմանավորված է քննիչի գործառույթի իրականացման անհրաժեշտությամբ՝** օրենսդրությամբ նրան **վերապահված լիազորությունների կատարման միջոցով:** Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, լիազորությունների իրացումը պետք է համապատասխանի օրենքների պահանջներին, ինչը բխում է սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներից: Վերոգրյալից բխում է այն տրամաբանությունը, որ եթե քննիչը լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է իր մասնավոր, անձնական շահով (*ultra vires*) կամ դա իրականացրել է օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ, ապա նման ընթացակարգը չի կարող առնչություն ունենալ քննիչի մասնագիտական գործունեության հետ և պետք է գնահատվի որպես քննիչի կարգավիճակից չբխող:

16. Այսպիսով, ամփոփելով կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի շրջանակում քննիչի կողմից իրականացվող գործունեության առթիվ քրեական վարույթի նախաձեռնումը

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Müller-Hartburg v. Austria* գործով 2013 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 47195/06, 42-49-րդ կետեր:

կախված է կայացված որոշման կամ կատարված գործողության՝ քննիչի կարգավիճակից առերևույթ չբխող լինելու հիմնավորումից: Այսինքն՝ քրեական վարույթի շրջանակում քննիչի կողմից իրականացվող ընթացակարգի առթիվ քրեական վարույթ կարող է նախաձեռնվել այն դեպքում, երբ առկա տեղեկություններով՝ փաստվող դեպքին, գործողությանը կամ անգործությանը ողջամտորեն կարող է տրվել քննիչի կարգավիճակի հետ կապված չլինելու, և միաժամանակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Մյուս կողմից էլ, հարկ է նկատել, որ շահագրգիռ անձինք իրենց հաղորդումը ներկայացնելիս պետք է հիմնավորեն վերոնշյալ չափանիշի առկայությունը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում արձանագրել, որ քրեական վարույթ նախաձեռնելու կառուցակարգը չի կարող գործադրվել, եթե հանցանքի մասին հաղորդումն առերևույթ բովանդակում է քրեական վարույթի շրջանակում քննիչի կայացրած (ընդունած) վարութային ակտերի՝ քրեադատավարական օրենքի պահանջներից չբխելը մատնանշող տվյալներ: Մասնավորապես՝ հանցանքի մասին հաղորդմամբ փաստվող դեպքը, գործողությունը կամ անգործությունը կարող են առերևույթ պարունակել գործով թույլ տրված դատավարական խախտումների մասին տվյալներ կամ կայացված որոշումների կամ կատարված գործողությունների առնչությամբ դատավարության մասնակցի տրված գնահատականներ: Նշվածը խնդրո հարցի համատեքստում չի կարող դիտարկվել որպես լեգիտիմ շահի պաշտպանության մեխանիզմ, քանի որ քննիչը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել վարութային գործողությունների և դատավարական ակտերի բովանդակության, այդ թվում՝ իրավական նորմերի տարբերվող մեկնաբանության կամ վերապահված լիազորությունների ու պարտականությունների կենսագործման կարգի խախտման համար, եթե բացակայում են սույն որոշմամբ մատնանշված անհրաժեշտ պայմանները:

Վերոգրյալը որևէ պարագայում չի կարող դիտվել որպես քննիչին տրամադրվող անձնական արտոնություն. քրեադատավարական կարգի խախտումը կարող է առաջացնել այլ իրավական հետևանքներ, օրինակ՝ դառնալ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- դիմող Ա.Խաչիկյանի՝ «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումը, բովանդակում է տեղեկություններ թիվ 12125519 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելն իրավաչափ չլինելը մատնանշող տվյալների առկայության մասին¹⁰,

- ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ավագ

¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատախազ Տ.Ենոքյանը գրությանը հայտնել է, որ «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումը չի համապատասխանում հանցագործության մասին հաղորդման որոշակիության բովանդակային չափանիշին, ուստի բացակայում է համապատասխան օրենսդրական կառուցակարգերը գործադրելու հիմքը¹¹,

– նշված գրության դեմ դիմող Ա.Խաչիկյանի բողոքի քննության արդյունքում, Առաջին աստիանի դատարանն արձանագրել է «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումի կապակցությամբ գրությամբ պատասխանելու իրավաչափությունը, ըստ այդմ՝ դիմողի իրավունքի խախտման փաստի բացակայությունը՝ իր դիրքորոշումը հիմնավորելով նրանով, որ հաղթահարված չէ հանցագործության մասին հաղորդման որոշակիության բովանդակային չափանիշը, հետևապես բացակայում է այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարական կարգավորումները գործադրելու հիմքը¹²,

– Վերաքննիչ դատարանը, որպես դիմող Ա.Խաչիկյանի ներկայացուցիչների բողոքը բավարարելու և իրավունքի խախտումն արձանագրելու հիմնավորում, նշել է, որ տվյալ դեպքում հաղթահարված է հանցագործության մասին հաղորդման որոշակիության բովանդակային չափանիշը, մասնավորապես՝ հաղորդում է ներկայացվել կոնկրետ անձի կողմից կոնկրետ հանցագործություն կատարելու վերաբերյալ, ինչը բավարար էր այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները գործադրելու համար¹³:

18. Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը, դիմումում նշված փաստերը համարելով բավարար՝ այն որպես առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում դիտարկելու, վարության միջոցներ ձեռնարկելու և դատավարական ակտկայացնելու համար, պատշաճ վերլուծության ու իրավական գնահատման չի ենթարկել ներկայացված դիմումի բովանդակությունը:

Այսպես՝ սույն գործի փաստական հանգամանքների շրջանակներում գնահատելով Ա.Խաչիկյանի դիմումը որպես առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում դիտարկելու և այն քննարկելուն, ստուգելուն ու լուծելուն ուղղված դատավարական կարգավորումները գործադրելու հնարավորությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմողի կողմից չեն ներկայացվել փաստական տվյալներ և չի փաստարկվել թիվ 12125519 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի դատավարական գործունեության այնպիսի դրսևորում, որին ողջամտորեն կարող էր տրվել քննիչի կարգավիճակից չբխելու, և միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Դիմողն իր փաստարկները հիմնավորել է միայն այն

¹¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

պատճառաբանությամբ, որ նախաքննության ընթացքում այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստի հայտնաբերման դեպքով նոր քրեական գործ հարուցելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը գործի փաստական հանգամանքների պատշաճ գնահատման արդյունք չէ: Մինչդեռ, ինչպես նշվել է սույն որոշման 16-րդ կետում, դատավարական գործունեության իրավաչափության առնչությամբ վարույթի մասնակցի տրված գնահատականն ինքնին չի կարող վկայել սույն որոշմամբ վկայակոչված չափանիշները հաղթահարված լինելու մասին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից Ա.Խաչիկյանի՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումին գրությամբ պատասխանելն իրավաչափ է:

Տվյալ դեպքում հայցվող իրավական պաշտպանությունն անմիջապես կապված է նախաքննության փուլում գտնվող քրեական գործով դատավարական գործունեության իրավաչափության գնահատման հետ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ դեպքում իրավական պաշտպանության անհրաժեշտ և պատշաճ գործիքակազմ պետք է դիտարկել բացառապես «անմիջական բողոքարկման» կամ «հետաձգված բողոքարկման» կառուցակարգը:

19. Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Ա.Խաչիկյանի իրավունքի խախտման ու վարույթն իրականացնող մարմնին այն վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմանը:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արտեմ Զավենի Խաչիկյանի ներկայացուցիչներ Վ.Հովհաննիսյանի ու Ս.Խչեյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշումը

բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

35.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0172/01/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2 մարտի 2023 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի և պաշտպան Զ.Հարությունյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվել է թիվ 69109715 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2015 թվականի նոյեմբերի 12-ին Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ավթանդիլ Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթում՝ 69105316 համարի ներքո ու նույն թվականի հունիսի 20-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով՝ գրավի չափ սահմանվելով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճռով Ա.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ու երկու դրվագ 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն զուտարելու միջոցով, Ա.Ավետիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ նշանակված պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 24 (քսանչորս) օրը և Ա.Ավետիսյանին թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 7 (յոթ) ամիս 6 (վեց) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով: Նույն դատական ակտով վճռվել է ներկայացված քաղաքացիական հայցը մասնակիորեն բավարարել, ու Ա.Ավետիսյանից հօգուտ տուժող «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բռնագանձել 1.912.600 (մեկ միլիոն ինը հարյուր տասներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացրել պաշտպանի բողոքը մերժելու, մեղադրողի բողոքը բավարարելու, Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու ու փոփոխելու մասին: Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է և Առաջին աստիճանի դատարանի կողմից հանցանքների համակցության կանոններով նշանակված պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 25 (քսանհինգ) օրն ու Ա.Ավետիսյանին թողնվել է կրելու ազատագրելու՝ 3 (երեք) տարի 7 (յոթ) ամիս 5 (հինգ) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է փաստացի արգելանքի վերցնելու պահից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ավետիսյանը և պաշտպան Զ.Հարությունյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել են վարույթ¹:

Վճռաբեկ դատարանը 2022 թվականի հունիսի 6-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Պաշտպան Զ.Հարությունյանի բողոքի փաստարկները.

5. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև դատարանի կիրառած նյութական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Այսպես՝ բողոքի հեղինակը նշել է, որ գործով առկա չէ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն Ա.Ավետիսյանի մեղավորության վերաբերյալ:

Մասնավորապես՝ բողոք բերած անձը փաստարկելով, որ առանց հանցակիցների բացահայտման և հանցանքի կատարման դրդապատճառը պարզելու անհնար է ողջամտորեն փաստել, որ նրանց գործողությունները համակարգվել են որևէ անձի կողմից, գտել է, որ անգամ Ա.Ավետիսյանին մեղազարգված գործողությունները հաստատված համարելու պայմաններում,

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

չի բացառվում կասկածն առ այն, որ Ա.Բաղդասարյանը մոլորության մեջ է գցել Ա.Ավետիսյանին՝ հայտարարելով, որ կապի մեջ է կատարողների հետ՝ Ա.Ավետիսյանից գումար կորզելու նպատակ հետապնդելով, ուստի, քանի դեռ այդ հավանականությունը բացառված չէ, անհնար է գալ այն եզրահանգման, որ Ա.Ավետիսյանը կազմակերպել է հանցանքի կատարում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, փաստարկվել է, որ սույն գործով քննություն չի կատարվել նաև ենթադրյալ համակարգչային սաբոտաժները մեկ միասնական դիտավորությամբ կատարված լինելու ուղղությամբ, ուստի, ըստ բողոքաբերի, մեկ միասնական դիտավորությունը հերքող փաստական տվյալների բացակայության պայմաններում Ա.Ավետիսյանի ենթադրյալ գործողությունները դիտվում են իբրև մեկ հանցագործություն:

Բացի այդ, նշելով, որ համակարգչային սաբոտաժը սուբյեկտիվ կողմից կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, բողոքի հեղինակը գտել է, որ գործում բացակայում է ինչպես նշված հանցանքը կատարելու, այնպես էլ ծանր հետևանք առաջացնելու ուղղակի դիտավորության մասին վկայող որևէ փաստական տվյալ:

Ծանր հետևանք առաջացնելու դիտավորության կապակցությամբ բողոք բերած անձը կրկնելով, որ ենթադրյալ հանցագործության հանցակիցները բացահայտված չեն, գտել է, որ չփարատված է կասկածն առ այն, որ Ա.Ավետիսյանը չի ցանկացել որևէ բացասական հետևանք առաջացնել տուժող կազմակերպությունների համար կամ առաջացած հետևանքները ենթադրյալ հանցակիցների ինքնուրույն որոշման և ընտրված մեթոդիկայի արդյունք են:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ, նյութական իրավունքի վերլուծության արդյունքում, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ ծանր հետևանքն առավել բարձր հասարակական վտանգավորության աստիճան կրող է և ըստ էության համարժեք է այնպիսի հանցավոր հետևանքի, ինչպիսին է մարդուն կյանքից զրկելը, բնապահպանական բնույթի աղետների և վթարների առաջացումը, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ոչնչացումը, գույքային վնասը և այլն: Ընդ որում, օրենսդրությամբ որոշակիացված չլինելու դեպքում գույքային վնասի՝ ծանր հետևանք դիտարկելու համար, անհրաժեշտ է վերջինիս դրամական արտահայտությունը համադրել տուժողի սոցիալական դրությանը:

Նշվածի հաշվառմամբ բողոքաբերը գտել է, որ կազմակերպության բնականոն գործունեության կազմալուծումը կամ գործարար համբավին վնաս պատճառելը՝ հիշյալ հանրորեն վտանգավոր հետևանքներին առերևույթ անհամարժեքության պատճառարանությամբ, չեն կարող դիտարկվել որպես ծանր հետևանք: Մինևույն ժամանակ, բողոքաբերը փաստարկելով, որ Ա.Ավետիսյանի ենթադրյալ հանցավոր արարքների հետևանքով պատճառված գույքային վնասի վերաբերյալ տվյալներ առկա են միայն «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դրվագով, նշել է, որ ներկայացված քաղաքացիական հայցում արձանագրված գույքային վնասը՝ 13.616.872 ՀՀ դրամը չի կարող գնահատվել որպես ծանր հետևանք, քանի որ վերաբերելի հարկային տարվա արդյունքով արձանագրված

հիշյալ ընկերությունների շրջանառությունն էապես գերազանցել է այն: Նշվածին համատեղ բողոքի հեղինակը գտել է նաև, որ տուժող ճանաչված ընկերությունների գործարար համբավին պատճառված վնասի վերաբերյալ պնդումն իրական չի կարող համարվել՝ ենթադրյալ հանցավոր արարքները կատարելուն հաջորդող ժամանակահատվածում հիշյալ ընկերությունների կողմից «հազար խոշոր հարկատուներ» ցուցակում ունեցած առաջխաղացման փաստարկմամբ:

5.1. Անդրադառնալով քաղաքացիական հայցին, բողոքաբերը նշել է, որ որպես պատճառված վնաս դիտարկված գույքային վնասի և ենթադրյալ հանցագործության միջև առկա չէ պատճառահետևանքային կապ:

5.2. Անդրադառնալով համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու մեղադրանքին, բողոքաբերը փաստարկել է, որ այն հիմնավորող ապացույցներից տուժող Ա.Թյությունջյանի ցուցմունքը՝ իր և ամբաստանյալի հոր միջև տեղի ունեցած հանդիպման և որդու դեմ չբողոքելու խնդրանքի վերաբերյալ, արժանահավատ չի կարող գնահատվել: Ըստ բողոքաբերի՝ քննարկվող մեղադրանքի տեսանկյունից դա ապացուցողական նշանակություն ունեցող միակ փաստական հանգամանքն է, որը չի համապատասխանում իրականությանը: Այս համատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ Աշոտ Ավետիսյանին գրավոր հարցման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը ներկայացվել է դատարան և միջնորդվել է նրան հարցաքննելու, ինչը ոչ իրավաչափ մերժվել է, ուստի խախտվել է մրցակցության դատավարական սկզբունքը:

Ինչ վերաբերում է համակարգչի գնմության արձանագրությանը, ապա այն չի հանդիսացել Ա.Ավետիսյանի անձնական օգտագործման համակարգիչը և օգտագործվել է նրա կողմից շահագործվող հանրային սննդի կետի հաճախորդների կողմից: Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի, որևէ անձի էլեկտրոնային փոստարկղ մուտք գործելու անհրաժեշտ տեղեկատվությունն ունենալու հանգամանքը չի կարող մեկնաբանվել որպես հանցավոր արարք, քանի որ անհնար է բացառել, որ նշվածը սխալմունքի արդյունքում է հայտնվել համակարգչում, հատկապես այն պայմաններում, երբ նույն համակարգչում բացակայում է համապատասխան տեղեկատվությանը տիրանալու պատվեր տալու և դրա դիմաց վճարելու վերաբերյալ հաղորդակցությունը: Բացի այդ, տուժողն իր ցուցմունքում հայտնել է նաև, որ որևէ անձ իր էլեկտրոնային փոստարկղ մուտք չի գործել, ինչը, ըստ բողոք բերած անձի, ևս ապացուցում է Ա.Ավետիսյանի անմեղությունը:

Ըստ բողոքաբերի՝ չի բացառվում նաև, որ ենթադրյալ պատվեր կատարողը հանդիսանա ավտոմատացված համակարգ, որը գործում է ինքնավար և չի պահանջում որևէ ֆիզիկական անձի ներգրավվածություն, ուստի ողջամիտ է խմբի գույություն չունենալու մասին ենթադրությունը:

6. Անդրադառնալով ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը, բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանն

առհասարակ գնահատման չի ենթարկել գործի քննության տևողությունը, ընտրված խափանման միջոցը փոփոխելուց հետո Ա.Ավետիսյանի դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ նա կազմել է ընտանիք, գտել է աշխատանք և դրսևորել պատշաճ վարքագիծ, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա ազդեցությունը, հատկապես այն պայմաններում, երբ Ա.Ավետիսյանի կինը հղի է: Ըստ բողոքաբերի, նշված հանգամանքները վկայում են հասարակությունում Ա.Ավետիսյանի վերահնտեզրված լինելու և նրան կրկին մեկուսացնելու անհրաժեշտության բացակայության մասին:

7. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը և ճանաչել ու հռչակել Ա.Ավետիսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

II. Ամրաստանյալ Ա.Ավետիսյանի բողոքի փաստարկները.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Բողոքաբերի պնդմամբ, իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու առնչությամբ Առաջին ատյանի դատարանի տրված լուծման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել իր առողջական վիճակը, ինչով պայմանավորված ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով, ազատության մեջ գտնվելու ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը, ամուսնանալը, աշխատելը, դրական բնութագրվելը, ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատիժը կրելու ազդեցությունը, հատկապես այն դեպքում, երբ կինը հղի է, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Նշվածի, ինչպես նաև գործի քննության տևողության հաշվառմամբ, բողոք բերած անձը եզրահանգել է, որ իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կհամապատասխանի օրինականության, արդարության և պատժի անհատականացման հիմնարար սկզբունքներին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքաբերը փաստարկել է, որ մեղքը չընդունելն ու պատճառված վնասը հատուցված չլինելը հակակշռող գործոններ չեն կարող դիտարկվել, քանի որ պաշտպանության իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս անձի:

9. Վերոգրյալի հաշվառմամբ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճռին:

Վճռարեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Ավթանդիլ Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «*«Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «Գոմ Մոսկվի» Երևանում» ՄՊ ընկերության տնօրեն Ա.Թյոյությունջյանի կողմից օգրագործվող՝ dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառին սպորինի տիրանալու և դրա միջոցով տվյալ փոստարկղով փոխանցվող տեղեկատվությանը հասանելիություն ստանալու նպատակով, 2015 թվականի հուլիսի 15-ին, dommoskvy@mail.ru փոստարկղի գաղտնաբառի սպորինի տիրանալու շուրջ նախնական համաձայնության է եկել borocomr@gmail.com էլեկտրոնային փոստարկղն օգրագործող անհայտ անձի հետ, ով համակարգչային տեխնիկայի կիրառմամբ սպորինի տիրացել է գումարի դիմաց 2015 թվականի հուլիսի 15-ին Ա.Ավետիսյանի կողմից օգրագործվող ttiigran@inbox.ru էլեկտրոնային փոստարկղին փոխանցել է dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղ մուտք իրականացնելու համար անհրաժեշտ տվյալ էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառը: Ա.Ավետիսյանն սպորինի տիրանալով համակարգչային տեղեկատվություն հանդիսացող dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառին հնարավորություն է ստացել սպորինի մուտք իրականացնել նշված փոստարկղ:*

Այսուհետև, Ա.Ավետիսյանը, ծրագրավորել է համակարգչային սարքում իրականացնելու միջոցով խախտել «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» ՄՊ ընկերությունների կողմից օգրագործվող www.vivarobet.am կայքի աշխատանքն ու կազմակերպել ընկերությունների բնականոն գործունեությունը: Համակարգչային սարքում իրականացնելուն ուղղված իր հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով, Ոսկրահնայում գտնվող իր ծանոթ Ա.Բաղդասարյանի օժանդակությամբ կազմակերպել և ղեկավարել է անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացնող մի խումբ անձանց կողմից գումարի դիմաց կայքի ուղեփակման ուղղված գործողությունները: Այսպես, Ա.Բաղդասարյանի միջոցով ստացած պատվերի շրջանակներում, 2015 թվականի նոյեմբերի 3-ին, նշված անհայտ անձինք, ժամը 15:00-ի սահմաններից մինչև նոյեմբերի 4-ը՝ ժամը 04:30-ն ընկած ժամանակահատվածում, DDoS տեսակի համակարգչային հարձակման են ենթարկել www.vivarobet.am կայքը, ինչի արդյունքում վրա են հասել Ա.Ավետիսյանի, Ա.Բաղդասարյանի և անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացրած անձանց դիտավորությամբ նախատեսված ծանր հետևանքները, այն է՝ տնական ժամանակով խախտվել է կայքը, որից օգրվող տրանսյակ հազարավոր հաճախորդներ գրկվել են հնարավորությունից օգրվել «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» ՄՊ ընկերությունների կողմից մատուցվող

ծառայություններից, ինչի հետևանքով ընկերությունների գործարար համքավին պարճառովել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է նշված ընկերությունների բնականոն աշխարանքը, որի հետևանքով երկու ընկերությունների 1.284 աշխարակից տրական ժամանակով մարնվել են պարապորդի: DDoS տեսակի համակարգչային հարճակումը դարարեցնելու դիմաց Ավերիայանը «Վիվաոո Բեթինգ» և «Վիվաոո Գեյմ» ՄՊ ընկերությունների գլխավոր տնօրեն Հ.Համբարճոմյանից պահանջել է վճարել 5.000 ԱՄՆ դոլար: Հ.Համբարճոմյանն առավել ծանր հետևանքներից խուսափելու նպարակով, համաճայնել է Ա.Ավերիայանին վճարել նրա պահանջած գումարը, որից 2015 թվականի նոյեմբերի 4-ին, 9-ին և 10-ին Ա.Ավերիայանն սրացել է ընդամենը 1.912.600 ՀՀ դրամին համարժեք 4.000 ԱՄՆ դոլար, այդ թվում նաև DDoS տեսակի համակարգչային հարճակումներ հերապայում չիրականացնելու համար:

Բացի այդ, Ա.Ավերիայանը ծրագրավորել է համակարգչային սարորաճ իրականացնելու միջոցով խափանել «Բնարերրորո» ՄՊ ընկերության www.sport.totogaming.am կայքի աշխարանքը և դիարավորությանը առաջացնելով ծանր հետևանքներ կազմալուծել ընկերության բնականոն գործունեությունը: Համակարգչային սարորաճ իրականացնելուն ուղղված իր հանցավոր մերադրությունն իրագործելու նպարակով, Ուկրաինայում գրնվող իր ծանոթ Ա.Բարդասարյանի օժանդակությանը կազմակերպել և դեկավարել է անմիջականորեն համակարգչային հարճակում իրականացնող մի խումը անճանց կողմից գումարի դիմաց կայքի ուղեփակման ուղղված գործողությունները: Այսպես, Ա.Բարդասարյանի միջոցով սրացած պարվերի շրջանակներում, 2015 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 09:25-ից մինչև ժամը 15:30-ն ընկած ժամանակահարվածում, նշված անհայր անճինք DDoS տեսակի համակարգչային հարճակման են ենթարկել www.sport.totogaming.am կայքը, ինչի արդյունքում վրա են հասել Ա.Ավերիայանի, Ա.Բարդասարյանի և անմիջականորեն համակարգչային հարճակում իրականացրած անճանց դիարավորությանը նախարեալված ծանր հետևանքները, այն է՝ տրական ժամանակով խափանվել է կայքը, որից օգրվող տրանյակ հազարավոր հաճախորդներ գրկվել են հնարավորությունից օգրվել ընկերության կողմից մարուցվող ծառայություններից, ինչի հետևանքով ընկերության գործարար համքավին պարճառովել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է ընկերության բնականոն աշխարանքը, որի հետևանքով ընկերության 419 աշխարակից տրական ժամանակով մարնվել են պարապորդի»²:

11. Առաջին առյանի դատարանը, Ա.Ավերիայանին մեղավոր ճանաչելով առաջադրված մեղադրանքում, արճանագրել է, որ «(...) [Թ/ույլարելի և արճանահավար սպացուցների համարդրման ու գնահարման արդյունքում [Առաջին արյանի] դարարանը գայիս է այն եզրահանգման, որ (...) [ս/պացուցված է Ա.Ավերիայանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենագրքի 254-րդ հորվածի 3-րդ մասի 2-րդ կերով, ՀՀ քրեական օրենագրքի 38-253-րդ հորվածի 3-րդ մասով և ՀՀ

² Տնն քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 261-315:

քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքները կարարելու մեջ»³:

11.1. Առաջին ատյանի դատարանն Ա.Ավետիսյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով հաշվի է առել. «[Ամբաստանյալի անձը, այն որ երիտասարդ է, ամուսնացած է, կարարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, կարարած հանցագործություններից հետո նրա դրսևորած վարքագիծը, այն, որ զերծ է մնացել նոր հանցագործություններ կարարելուց, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արարավորված չլինելու հանգամանքը, ինչպես նաև այն որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանն ունի առողջական խնդիրներ և նրա մոտ ախտորոշվել է երկկողմանի ԹՁԹԷ-պնևմոնիա, խրոնիկ սաթոմիդ բրոնխիտ սրացման շրջանում, ձախ նարարելի ինֆեկցված լիպոմա և ըստ բժշկական տեղեկանքի Ա.Ավետիսյանին հարկավոր է շարժուն կյանք, խուսափել գիրանայուց, չափից ավելի խոնավությունից, սուր և հիվանդածին օդից, անհրաժեշտ է բժշկական հսկողություն և անհատական ինստիտուտի կարիք, [ազատության մեջ գտնվելով] դրսևորել է պարզաձև վարքագիծ և դատարանի կանչով ներկայացել դատական նիստերին, բացի այդ Հայ-Ռուսական Համալսարանի ռեկտոր Ա.Գարբինյանի կողմից տրված բնութագրի համաձայն բնութագրվում է դրականորեն, ՀՌՀ ուսանողական խորհրդի նախագահի և ՀՌՀ ռեկտորի կողմից ունի արացած պարվորներ, պարասիանարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, (...)]»⁴:

12. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով, ի թիվս այլոց, ծանր հետևանք կարող է դիտարկվել նաև կազմակերպությունների բնականոն գործունեության կազմալուծումը: Այս համարեքարում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոյրո» ՍՊ ընկերությունների բնականոն գործունեությունը մեծապես պայմանավորված է եղել այդ ընկերությունների կողմից օգրագործվող ինտերնետային կայքերի անհատական աշխատանքով, որպիսի պայմաններում այդ կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումը և դրանց աշխատանքի տեսական խախտումը ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով պետք է դիտարկվեն որպես ծանր հետևանքներ, քանի որ դրանց արդյունքում կազմալուծվել է «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոյրո» ՍՊ ընկերությունների բնականոն գործունեությունը: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» ու «Ինտերլոյրո» ՍՊ ընկերությունների կողմից օգրագործվող ինտերնետային կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումը և դիտարկությանը դրանց աշխատանքի տեսական խախտումն Ա.Ավետիսյանի կողմից կազմակերպելու հանգամանքը հասարակում է Առաջին ատյանի դատարանի

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 58-115:

⁴ Տե՛ս նույն տեղում:

մեղադրական դատավճռի հիմքում դրված քրեական գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է Ա.Ավետիսյանին 2 (երկու) դրված ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղաագրված արարքները մեկ միասնական դիրավորությամբ կատարված լինելու վերաբերյալ պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկներին, ապա Վերաքննիչ դատարանը դրանք ընդունելի չի համարում նկարի ունենալով, որ Ա.Ավետիսյանի կողմից DDoS տեսակի համակարգչային հարձակումներ են կազմակերպվել տարբեր ինտերնետային կայքերի («www.vivarobet.am» և «www.sport.totogaming.am») վրա, որոնք իրենց հերթին օգտագործվել են տարբեր ընկերությունների կողմից («Վիվաոո Բեթինգ», «Վիվաոո Գեյմ» և «Իսպորտոր») ՄՊ ընկերություններ): Բացի այդ, սույն քրեական գործով ձեռք չի բերվել փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջություն ստ այն, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի մոտ առկա է եղել «www.vivarobet.am» և «www.sport.totogaming.am» կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումներ կազմակերպելու միասնական դիրավորություն և նպատակ: Այլ կերպ ասած՝ քրեական գործում բացակայում են տվյալներ այն մասին, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանը նախնական մրադրություն է ունեցել կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով»⁵:

13. Վկա, «Վիվաոո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակից Գ.Հակոբյանն իր ցուցմունքով, ի թիվս այնի, հայտնել է, որ «Avtandil» օգտահաշիվն օգտագործողն իրենց մշտական հաճախորդն է: Վերջինից բազմաթիվ դժգոհություններ են ստացել կայքէջի աշխատանքի հետ կապված, և կարգադրել է նրան հրավիրել իրենց ընկերության գրասենյակ: 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում հանդիպել է նշված օգտահաշվի օգտատեր Ավթանդիլ Ավետիսյանի հետ, որի ընթացքում վերջինս նաև գործնական առաջարկ է արել, ինչի մասին տեղեկացրել է գլխավոր տնօրեն Հ.Համբարձումյանին ու 2015 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 17-ի սահմաններում տեղի է ունեցել նրանց հանդիպումը, որից հետո ինքը ճանապարհել է Ա.Ավետիսյանին: Այդ ընթացքում Ա.Ավետիսյանը տեղեկացրել է, որ տվյալ պահին իրենց կայքէջը ենթարկվում է «DDoS» տեսակի համակարգչային հարձակման: Թեև այդ պահին իրենց կայքէջը լուրջ խափանումներով է աշխատել, չի կարևորել վերջինիս ասածը, սակայն հասկանալով, որ իրենք չեն կարողանում լուծել առաջացած խնդիրը, որոշել է Հ.Համբարձումյանին տեղեկացնել Ա.Ավետիսյանի հետ ունեցած հիշյալ գրույցի մասին: Հ.Համբարձումյանի հանձնարարությամբ կապ է հաստատել Ա.Ավետիսյանի հետ ու նրանից տեղեկացել հարձակում իրականացնելու վայրի և շարժառիթների վերաբերյալ, միննույն ժամանակ վերջինս հայտնել է, որ

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 109-133:

պատրաստական է օգնել, ավելացնելով նաև, որ հարձակումը կատարվում է լուրջ հաքերների կողմից և լավ կլինի վճարել նրանց պահանջված գումարը⁶:

13.1. Վկա, «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գլխավոր տնօրեն Հ.Համբարձումյանն իր ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից ղեկավարվող ընկերության աշխատակից Գ.Հակոբյանից տեղեկացել է, որ իրենց մշտական հաճախորդներից Ա.Ավետիսյանը գործնական առաջարկով ցանկանում է հանդիպել իր հետ: Հանդիպումից որոշակի ժամանակ անց Գ.Հակոբյանն իրեն հայտնել է, որ ըստ Ա.Ավետիսյանի՝ իրենց կայքէջի վրա իրականացվում է «DDoS» տեսակի համակարգչային հարձակում: Հասկանալով, որ իրենց մասնագետները չեն կարողանում լուծել խնդիրը, Գ.Հակոբյանին կարգադրել է կապվել Ա.Ավետիսյանի հետ՝ պարզելու թե վերջինս արդյո՞ք կարող է օգնել իրենց: Որոշակի ժամանակ անց Գ.Հակոբյանը տեղեկացրել է, որ Ա.Ավետիսյանին հայտնի է հարձակումը կազմակերպելու վայրը, շարժառիթները և նա պատրաստական է օգնելու: Մինչև ժամանակ, հայտնել է, որ կայքէջի բնականոն աշխատանքը վերականգնելու համար պահանջվել է 1-3 օր⁷:

13.2. Վկա, «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Հ.Վարդանյանն իր ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ «DDoS» տեսակի համակարգչային հարձակման հետևանքով կայքէջի բնականոն աշխատանքի վերականգնման համար պահանջվել է 1-3 օր⁸:

13.3. Ա.Ավետիսյանի և այլ անձանց միջև կատարված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ձայնագրառումներով լազերային սկավառակի զննության արձանագրության համաձայն՝ Ա.Ավետիսյանը, ի թիվս այլնի, 2015 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 18:02-ին, իր կողմից օգտագործվող 094-08-80-30 հեռախոսահամարից 099-66-99-61 հեռախոսահամարի բաժանորդի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսագրույց (հատվածներ հեռախոսագրույցից).

«[Ավթանդիլ]: - Ապե, Դու «Տուրո» Վիխդ ունես:

[Գուլարյան]: - Ապե, էն վահար հարցրել ես:

[Ավթանդիլ]: - Ապե, հիմա, որ «Տուրոյի» սայթը պարկցնենք, քո ջոզելով կկարանանք մեր վրա, որ դուրս գան պոկվենք, քո ջոզելով:

[Գուլարյան]: - Մարդ կպցնենք, ընենց անենք մեր վրա դուրս գան:

[Ավթանդիլ]: - Հա:

[Գուլարյան]: - Չեմ իմանում, դու էն պարպքը գովիր»⁹ :

Ա.Ավետիսյանը 2015 թվականի նոյեմբերի 9-ին՝ ժամը 17:22-ին, իր կողմից օգտագործվող 094-08-80-30 հեռախոսահամարից

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 48-50:

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 54-59 և հատոր 4-րդ, թերթեր 279-283:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 49-54:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 157-158:

380-97-90-43-572 հեռախոսահամարն օգտագործող Արման Բաղդասարյանի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսագրույց (հատվածներ հեռախոսագրույցից).

[Ավթանդի]: - սպե, էս թեմայով, հիշում ես, որ քեզ զանգել էի:

[Արման]: - Հա:

[Ավթանդի]: - Փողերը գցին, չբովին:

[Արման]: - Ո՛վ Վիվառոն:

[Ավթանդի]: - Հա, ձգձգում են սպե, չեն րայիս էլի:

(...)

[Ավթանդի]: - Ասենք եթե էլի փողը չբան ես իմ ջերից կբամ էլի էր փողը, եթե բան ս մեկ էլ պարկցնենք էլի, Տոբոն ու Գոբովինը:

[Արման]: - Հա, սաղ իրար հետ հա:

[Ավթանդի]: - Հա կամ մեկնումեկն էլի, կամ Տոբոն, Գոբովինը, մեկ ս, րարբերություն չկա: Հիմա կարաս րու իրանց սսես սսենք Տոբոն էլ պարկցնեն:

(...)

[Արման]: - (...) մի հար րու ինձի գրի էլ բանով, վայբերով կոնկրետ սայթը գրի էլի կամ sms:

[Ավթանդի]: - Ապե, վայբեր չունեմ, ցավը րանեմ, Facebook-ով հեսս կգրեմ¹⁰:

14. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է «Մլավմեդ» բժշկական կենտրոնի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի կազմված՝ իր կնոջ հղիության մեջ գտնվելու և ծննդաբերության ենթադրյալ ժամկետի՝ 2021 թվականի հունվարի 5-ին, վերաբերյալ տեղեկանքը¹¹:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմի ծանրացնող հանգամանքի՝ ծանր հետևանք առաջացնելու հատկանիշի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

I. «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին պատկանող «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփականան

¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 174-176:

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 65:

ուղղված գործողություններն Ա.Ավետիսյանի կողմից կազմակերպելու հիմնավորվածությունը:

Պաշտպանի բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն Ա.Ավետիսյանի կողմից «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները՝ օգտագործողների համար դրանք անհասանելի դարձնելը կազմակերպելու վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի կողմից հիշյալ ընկերությունների կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները կազմակերպելը հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Հ.Համբարձումյանի, Գ.Հակոբյանի, Տ.Փարսադյանի, Հ.Վարդանյանի, Կ.Գրիգորյանի, Ա.Խաչատրյանի, Մ.Խաչատրյանի ցուցմունքներով, դատահամակարգչատեխնիկական փորձաքննությունների եզրակացություններով, բջջային հեռախոսը, հեռախոսային խոսակցությունների վերահսկման արդյունքները և հեռախոսահամարների մուտքային ու ելքային հեռախոսագանգերի վերծանումները զննելու մասին արձանագրություններով, և իրելեն ու որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված փաստաթղթերով¹²:

Նշվածի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Ա.Ավետիսյանի քրեական պատասխանատվության հիմքը հանցանք կատարելն է, ուստի բողոքաբերի՝ սույն որոշման 5-րդ կետում նշված՝ Ա.Բաղդասարյանի՝ ի սկզբանե հանցակցելու մտադրություն չունենալու և մոլորության մեջ գցելով գումար հափշտակելու հավանական մտադրության փաստարկը ողջամիտ չի կարող գնահատվել, ընդ որում, ապացույցների բավարար համակցությամբ՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան, ապացուցված է Ա.Ավետիսյանի՝ Ա.Բաղդասարյանի միջոցով հանցանքների կազմակերպումն ու ղեկավարումը, ինչպես նաև միջնորդավորված՝ Ա.Բաղդասարյանի միջոցով, կատարող(ների) ի հետ կապի մեջ գտնվելը:

Հիշյալ կայքէջերի ուղեփակումները միասնական դիտավորությամբ կատարելու վերաբերյալ բողոքաբերի դիրքորոշման կապակցությամբ հարկ է նաև նշել, որ քրեական գործում առկա է արժանահավատ ապացույցների բավարար համակցություն¹³, հանցագործությունների իրական համակցությունը

¹² Տե՛ս քրեական գործ, հատորներ 1-5-րդ:

¹³ Ապացույցների բավարարության չափանիշների վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումը:

շարունակվող հանցագործությունից սահմանազատելու¹⁴ վերաբերյալ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան եզրահանգում անելու համար: Տվյալ դեպքում, կատարված արարքները թեպետ եղել են նման և ուղղված են եղել միևնույն օբյեկտի դեմ, սակայն գործի փաստական հանգամանքների ամբողջական վերլուծությունից հետևում է, որ Ա.Ավետիսյանը գործել է ոչ թե միասնական և նախնական դիտավորությամբ, այլ յուրաքանչյուր դեպքում կրկին ծագած դիտավորությամբ¹⁵:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկման արդյունքները զննելու մասին արձանագրությամբ արձանագրված փաստական տվյալները, համաձայն որոնց՝ «Vivarobet.am» կայքէջն ուղեփակելուց հետո, այն շահագործող ընկերությունների ներկայացուցչից պահանջվող գումարն ամբողջությամբ չստանալով Ա.Ավետիսյանը հետաքրքրվել է «sport.totogaming.am» կայքէջի ուղեփակման հնարավորությամբ, ընդ որում քննարկելով նաև ուղեփակվող կայքէջի այլ տարրերակ¹⁶, բացառում են համակարգչային սարքուսածներ կատարելը **նախապես** պլանավորված լինելու և միասնական հանցավոր մտադրության իրականացման ընդհանուր նպատակ ունենալու հանգամանքը: Ուստի, ամբաստանյալի մոտ մեկ միասնական դիտավորության առկայության մասին բողոքաբերի դիրքորոշումը չի բխում տվյալ գործի նյութերից:

16. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ավետիսյանի կողմից երկու դրվագ համակարգչային սարքուսած, այն է՝ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին պատկանող «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակումները կազմակերպելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը, հիմնավոր է:

II. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի արարքում համակարգչային սարքուսածի՝ դիտավորությամբ ծանր հետևանք առաջացնելու ծանրացնող հանգամանքի հատկանիշի առկայության հիմնավորվածությունը:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Համակարգչային տեղեկատվությունը կամ ծրագրերը ոչնչացնելը, ուղեփակելը (մեկուսացնելը) կամ ոչ պիտանի վիճակի բերելը, համակարգչային սարքավորումները շարքից դուրս բերելը կամ համակարգիչը, համակարգչային համակարգը, ցանցը կամ մեքենայական կրիչները վնասելը (սենզադուրը)՝*

3. Սույն հոդվածի առաջին (...) մասով նախատեսված արարքները, որոնք դիտավորությամբ առաջացրել են ծանր հետևանքներ»:

¹⁴ Այդ առնչությամբ առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հակոբ Մարտիրոսյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԿԴ-1/0006/01/15 որոշման 14-րդ կետը:

¹⁵ Շարունակվող հանցագործությանը բնորոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշների առնչությամբ, որոնցով այն տարանջատվում է հանցագործությունների իրական համակցությունից, առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հակոբ Մարտիրոսյանի գործով վերը հիշատակված որոշման 12-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 13.3-րդ կետը:

Մեջբերված իրավանորմի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմը նյութական է, և համակարգչային սաբոտաժը ենթակա է որակման քրեաիրավական նշված նորմով, եթե այդ արարքը դիտավորությամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Հետևաբար, քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայության կամ բացակայության հարցը ստուգելիս անհրաժեշտ է ոչ միայն հիմնական հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող գործողություններից մեկը կատարելու արդյունքում ծանր հետևանքների առաջացումը, այլև ծանր հետևանքների առաջացումն անձի դիտավորության մեջ ընդգրկված լինելը: Այլ կերպ՝ հանցավորը պետք է գիտակցի արարքի ծանր հետևանքներ առաջացնելու փաստը, նախատեսի համակարգչային սաբոտաժի միջոցով ծանր հետևանքներ առաջացնելը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրանք: Հետևաբար, քննարկվող որակյալ հանցակազմը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Մինևս այն ժամանակ, քննարկվող հանցանքն անձին կարող է մեղսագրվել միայն այն դեպքում, երբ հաստատվում է կատարված արարքի և վրա հասած հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

18. Սահմանադրական դատարանն իր որոշումներում և Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես կարևոր են համարել ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ օրենքում առկա գնահատողական բնույթ կրող եզրույթները կամ ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում, որը պետք է լինի հնարավորինս հստակ, որոշակի և հիմնավորված¹⁷:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական օրենսգրքում ամրագրված «ծանր հետևանքներ» եզրույթն անհրաժեշտ է սահմանազատել «հանցագործությամբ պատճառված վնաս» եզրույթից. ծանր հետևանքը յուրաքանչյուր դեպքում հանդիսանում է հանցագործությամբ պատճառված վնաս, սակայն հանցագործությամբ պատճառված վնասը միշտ չէ, որ կարող է գնահատվել որպես ծանր հետևանք, ուստի դատական ակտ կայացնելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարի գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ ծանր հետևանքի առկայության կամ բացակայության փաստը պատճառաբանված եզրահանգումների տեսքով արձանագրելու համար: Այլ կերպ, այն սահմանափակված է կոնկրետ իրավիճակով և յուրաքանչյուր դեպքում իրավակիրառ պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները,

¹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ- 947 որոշման 8-րդ կետը, 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ՍԴՈ-1561 որոշումը, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հմայակ Դավթյանի* գործով 2013 թվականի մայիսի 8-ի ՇԴ/0126/01/12, *Վարունյան Բայրայանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ/0001/01/17 և *Արմեն Վարդանյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԿԴ3/0013/01/18 որոշումները:

որոնց դեպքում հանրորեն վտանգավոր արարքի արդյունքում առաջացած հետևանքները կարող են գնահատվել որպես ծանր կամ ոչ ծանր:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածով նախատեսված հանցագործության ծանրացնող հանգամանքը՝ ծանր հետևանքը, կարող է կրել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթ:

Այդպիսի հետևանք կարող են համարվել, ի թիվս այլնի, արտադրական կամ այլ բնույթի վթարը, աղետը, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացումը, փոփոխությունը, ուղեփակումը (մեկուսացում) կամ պատճենահանումը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատանքի խաթարումը, հեղինակագրկումը, մարդու իրավունքների և ազատությունների ռոտահարումը, նշված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող այլ վնասը:

Նյութական վնասը կարող է արտահայտվել, օրինակ, անձանց առողջությանը վնաս պատճառելով (ֆիզիկական վնաս) կամ տեխնիկային կամ այլ գույքին վնաս պատճառելով (գույքային վնաս): Ընդ որում, նյութական վնասի դեպքում ծանր հետևանք կարող է համարվել առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը կամ համարժեք վտանգավորություն ներկայացնող վնասի այլ չափը¹⁸. հիշյալ շենը չգերազանցող վնասի դեպքում, համակարգչային սարքուածի հետևանքով պատճառված նյութական վնասի՝ ծանր հետևանքների առաջացման հարցը գնահատելիս, անհրաժեշտ է գույքային վնասի դրամային արտահայտությունը համադրել տուժողի սոցիալական դրությանը:

Գործնականում առանձնակի բարդություն է ներկայացնում կատարվածի արդյունքում ծանր հետևանքներ առաջացնելն արձանագրելն այն դեպքում, երբ այն ոչ նյութական բնույթ է կրում: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ինքնին համակարգչային սարքուածի յուրաքանչյուր դեպքում պատճառվում է որոշակի վնաս, սակայն անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված վնասի առկայությունը դեռևս բավարար չէ համակարգչային սարքուածը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է որպեսզի առաջացած հետևանքը լինի ծանր: Հետևաբար, ոչ նյութական վնասի դեպքում ծանր հետևանքների առաջացման հարցը գնահատելիս, անհրաժեշտ է հաշվի առնել համակարգչային տեղեկատվության արժեքավորությունը և դրա ծավալը, հասցված վնասի բնույթը, վնասակար հետևանքները վերացնելու համար պահանջված ժամանակի տևողությունը, տուժած օգտագործողների քանակը, հիմնարկների ու ձեռնարկությունների բնականոն գործունեության խափանման աստիճանը, ռոտահարված

¹⁸ Հարկ է նկատել, որ համապատասխան դիրքորոշումը համահունչ է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներին:

իրավունքների և ազատությունների բնույթը, դրանց ոտնահարման աստիճանն ու այլ հանգամանքները:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմինը գտել է, որ «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակման արդյունքում առաջացել են Ա.Ավետիսյանի և հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված ծանր հետևանքները՝ առաջադրված մեղադրանքում այդպիսիք ձևակերպելով հետևյալ կերպ. տևական ժամանակով խափանվել են «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերը, որոնցից օգտվող տասնյակ հազարավոր հաճախորդներ գրկվել են հնարավորությունից օգտվել «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Իստերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններից, ինչի հետևանքով ընկերությունների գործարար համբավին պատճառվել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է հիշյալ ընկերությունների բնականոն աշխատանքը, որի հետևանքով այդ կազմակերպությունների՝ համապատասխանաբար 1284 և 419 աշխատակից տևական ժամանակով մատնվել են պարապյուրդի¹⁹:

Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում ապացուցված է համարել «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմամբ դրանք շահագործող «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Իստերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար ծանր հետևանքներ առաջացնելու Ա.Ավետիսյանի դիտավորությունը՝ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում որպես ծանր հետևանքներ դիտարկելով այն, որ վերոհիշյալ կայքէջերի աշխատանքը տևական ժամանակահատվածով խափանվել է և կազմալուծվել վերոգրյալ կազմակերպությունների բնականոն գործունեությունը²⁰:

Վերաքննիչ դատարանն էլ իր համաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի այս դիրքորոշման հետ՝ ընդգծելով, որ քննարկվող հոդվածի իմաստով ծանր հետևանք կարող է դիտարկվել նաև կազմակերպության բնականոն գործունեության կազմալուծումը: Տվյալ դեպքում տուժող ընկերությունների բնականոն գործունեությունը պայմանավորված է եղել ուղեփակված կայքէջերի անխափան աշխատանքով, ուստի դրանց ուղեփակումը և աշխատանքի տևական խափանումը, պետք է դիտարկել որպես ծանր հետևանք, քանի որ դրա արդյունքում խաթարվել է հիշյալ ընկերությունների բնականոն գործունեությունը²¹:

20. Սույն որոշման 18-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով նախորդ կետում վկայակոչված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքում համակարգչային սարքոսածի՛ դիտավորությամբ ծանր հետևանքներ

¹⁹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը և քրեական գործի հատոր 13-րդ, թերթեր 58-115:

²¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

առաջացնելու որակյալ հանցակազմի հատկանիշների առկայությունն արձանագրելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել սույն գործով առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Ա.Ավետիսյանին մեղսագրված ծանր հետևանքների արտաքին հատկանիշների դրսևորման հետևյալ ձևերին՝

– «Վիվատո Բեթինգ», «Վիվատո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բնականոն գործունեության խաթարմանը,

– հիշյալ կազմակերպությունների գործարար համբավին ծանր վնաս պատճառված լինելուն²²:

Վերոհիշյալ փաստարկներից առաջինի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վիվատո Բեթինգ», «Վիվատո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործունեության անընդհատության խափանումը, ըստ Վճռաբեկ դատարանի, ինքնին բավարար չէ նրանց բնականոն գործունեությունը հաստատապես խաթարված համարելու համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, կազմակերպության բնականոն գործունեության բուն էությունը կանխորոշված է գործունեության, հետապնդվող իրավաչափ նպատակների և շահերի իրացման կայուն անհրաժեշտությամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ բնականոն գործունեությունը պետք է մեկնաբանել նեղ իմաստով՝ ներառելով մի կողմից պետության, մյուս կողմից աշխատակիցների, հաճախորդների և գործընկերների հանդեպ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը: Ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու հնարավորության բացակայության արդյունքում է խաթարվում կազմակերպության բնականոն գործունեությունը: Այլ խոսքով՝ կազմակերպության գործունեության անընդհատության խափանումը չի հավաստում բնականոն գործունեության խաթարումն այնքան ժամանակ, քանի դեռ չի հանգեցրել ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինության: Հակառակ մեկնաբանության պարագայում ստացվում է, որ կազմակերպության գործունեության անընդհատության խափանումը յուրաքանչյուր դեպքում ինքնաբերաբար հանգեցնում է կազմակերպության բնականոն գործունեության խաթարման, ինչն անընդունելի է: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր նման իրավիճակում վարույթն իրականացնող դատավարական սուբյեկտը, ելնելով գործի կոնկրետ փաստական հանգամանքներից, պարտավոր է ողջամտության սահմաններում գնահատել կազմակերպության գործունեության խափանման աստիճանը՝ հաշվի առնելով սույն որոշմամբ վկայակոչված չափանիշները: Եթե կպարզվի, որ հանցավոր գործունեության արդյունքում առաջացել է կազմակերպության ստանձնած

²² Տե՛ս սույն որոշման 19-րդ կետը:

պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինություն, ապա դա կարող է հիմք հանդիսանալ կազմակերպության բնականոն գործունեությունը խաթարված համարելու:

Տվյալ դեպքում, թեև Ա.Ավետիսյանի կողմից «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները կազմակերպելու հետևանքով տուժող ընկերությունները ժամանակավոր գրկվել են ծառայությունները մատուցելու հնարավորությունից, այնուամենայնիվ հիշյալ կայքէջերի ուղեփակումը տևել է՝ համապատասխանաբար մոտ 13 և 6 ժամ²³, վնասակար հետևանքները կարճ ժամանակահատվածում վերացվել են²⁴, իսկ կայքէջերի ուղեփակման հետևանքով հիշյալ ընկերությունների ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինության առաջացման մասին վկայող փաստական տվյալներ սույն քրեական գործում առկա չեն: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքում ձևակերպված՝ համակարգչային սաբոտաժի հետևանքով տուժող կազմակերպությունների բնականոն գործունեության խափանման աստիճանը բնութագրող փաստական տվյալներն ինքնին բավարար չեն եզրահանգելու, որ Ա.Ավետիսյանի գործողությունների արդյունքում խաթարվել է տուժող կազմակերպությունների բնականոն գործունեությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ առաջադրված մեղադրանքում որպես ծանր հետևանքը բնութագրող փաստական տվյալ մատնանշված՝ համակարգչային սաբոտաժի արդյունքում առաջացած՝ «Վիվառո Բեթինգ» ու «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ 1284 և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 419 աշխատակցի պարասպորդի, ինչպես նաև նշված ընկերությունների ծառայություններից օգտվելու հնարավորությունից գրկված տասնյակ հազարավոր հաճախորդների մասին հետևությունը, վարույթն իրականացնող մարմինը հիմնավորել է բացառապես հիշյալ ընկերությունների ներկայացուցիչների ցուցմունքներով և դիմումներով հայտնված տվյալներով²⁵: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինն իր այդ հետևությունը պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ չի հիմնավորել:

Վերոգրյալից ելնելով Վճռաբեկ դատարանը չափազանց ընդհանրական է համարում ստորադաս դատարանների կողմից հիմք ընդունած այն մոտեցումը, որ տուժող կազմակերպությունների կողմից շահագործվող հիշյալ կայքէջերի ուղեփակման և դրանց աշխատանքի տևական խափանման արդյունքում խաթարվել է այդ ընկերությունների բնականոն գործունեությունը, իսկ կազմակերպության բնականոն գործունեության խաթարումը որպես ծանր

²³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁴ Տե՛ս սույն որոշման 13.1-րդ և 13.2-րդ կետերը:

²⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 54-59, 68, 95-97, հատոր 2, թերթեր 71-72, 81, հատոր 4, թերթեր 279-283, 297 և հատոր 5, թերթեր 49-54:

հետևանք չդիտարկելու բողոքարկերի դիրքորոշումը²⁶ չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի պահանջներին²⁷:

Անդրադառնալով տուժող կազմակերպությունների գործարար համբավին պատճառված վնասը որպես ծանր հետևանք դիտարկելուն, Վճռաբեկ դատարանը նախ իր անհամաձայնությունն է հայտնում բողոքի հեղինակի այն պնդմանը, թե տուժողի գործարար համբավին պատճառված վնասն առհասարակ չի կարող գնահատվել որպես ծանր հետևանք²⁸: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործարար համբավին պատճառված վնասը կարող է գնահատվել որպես ծանր հետևանք, երբ այն համապատասխանի հեղինակության կորստի հարաբերականորեն բարձր աստիճանի: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ծառայության մատուցման անընդհատության խափանումը կարող է նաև վնասել շահույթ հետապնդող կազմակերպության հեղինակությանը, ինչը, սակայն ինքնին, գործարարության ոլորտում կազմակերպությանը տրված գնահատականների փոփոխության մասին վկայող այլ հանգամանքների բացակայության պայմաններում, չի կարող ազդել կազմակերպության գործարար հատկանիշների վրա այն աստիճան, որ գործարար համբավին պատճառված վնասը համարվի ծանր հետևանք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունն այս առնչությամբ չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին²⁹: Մասնավորապես, մեղադրանքի փաստական նկարագրությունը չի պարունակում այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեին հիմնավորված կերպով եզրահանգելու ծանր հետևանքի դրսևորման այդ ձևի առկայության մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե հիշյալ կազմակերպությունների գործարար հատկանիշներն ինչպիսի՞ փոփոխության են ենթարկվել և ինչպե՞ս է որոշվել, որ նրանց գործարար համբավին պատճառվել է ծանր հետևանք առաջացնող վնաս: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ յուրաքանչյուր դեպքում արարքում քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար պետք է փաստել ոչ միայն ծանր հետևանքի առկայությունը, այլև այն, թե տվյալ գործով կոնկրետ ինչու է վերջինս դրսևորվել:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ տուժող կազմակերպությունների գործարար համբավին պատճառված վնասը

²⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁷ Հարկ է նշել, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը, որոշակիացնելով համակարգչային սաբոտաժի արդյունքում առաջացած ծանր հետևանքների բնույթը՝ այդպիսին է դիտարկել նաև կազմակերպության գործունեության խաթարումը:

²⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

որպես ծանր հետևանք գնահատելու մասին մեղադրանքի կողմի հետևությունը հաստատող պատշաճ ապացույցների բավարար համակցություն սույն գործով առկա չէ:

Վերոգրյալ պայմաններում փաստելը, որ կայքէջերի ուղեփակման արդյունքում «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործարար համրավին պատճառով է ծանր հետևանք առաջացնող վնաս, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վտանգում է արդար դատաքննության պահանջի պահպանման երաշխիքը:

21. Այսպիսով, սույն որոշման 18-րդ կետում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 19-20-րդ կետերում ներկայացված փաստական տվյալներն ու դրանց տրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը, չհերքելով Ա.Ավետիսյանի ոչ իրավաչափ արարքների արդյունքում «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին որոշակի վնաս պատճառելու փաստը, մինևույն ժամանակ, արձանագրում է, որ սույն գործով չի հիմնավորվել, որ Ա.Ավետիսյանի՝ հիշյալ ընկերությունների կողմից շահագործվող կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունների արդյունքում առաջացել են այնպիսի հետևանքներ, որոնք կարող էին ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով գնահատվել որպես ծանր:

22. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակման արդյունքում ծանր հետևանքներ առաջացած լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

III. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևության հիմնավորվածությունը:

23. Պաշտպանի բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն Ա.Ավետիսյանի կողմից համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի կողմից համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են տուժող Ա.Թյությունջյանի ցուցմունքով, դյուրակիր համակարգիչը, էլեկտրոնային փոստարկղի նամակագրությունները, «facebook» սոցիալական կայքի՝ տուժող Ա.Թյությունջյանի անհատական էջի նամակագրությունը,

Ա.Թյությունջյանի հեռախոսահամարի ելքային ու մուտքային հեռախոսագանգերի վերծանումները գննելու մասին արձանագրություններով և իրեղեն ու որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված փաստաթղթերով³⁰:

Տուժող Ա.Թյությունջյանի ցուցմունքն անարժանահավատ գնահատելու բողոքաբերի պնդման առնչությամբ հարկ է նկատել նաև, որ հիշյալ ցուցմունքի արժանահավատությունը հավաստվում է տուժող Ա.Թյությունջյանի՝ «facebook» սոցիալական կայքի անհատական էջի նամակագրության և նրա հեռախոսահամարի մուտքային ու ելքային հեռախոսագանգերի վերծանումների գննությամբ արձանագրված տվյալների համակցությամբ, համաձայն որոնց՝ Ա.Թյությունջյանին միջնորդել են հանդիպել ամբաստանյալի ծնող Աշոտ Ավետիսյանի հետ, Աշոտ Ավետիսյանն իր կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարից զանգահարել է Ա.Թյությունջյանին³¹:

Նշվածի հետ մեկտեղ, բողոքաբերի՝ առգրավված դյուրակիր համակարգիչն անձանց անորոշ շրջանակի կողմից շահագործվելու փաստարկը ևս համոզիչ չի կարող գնահատվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ բողոքաբերի կողմից չեն մատնանշվել կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին այն, մինչդեռ, ըստ գործում առկա փաստական տվյալների, դյուրակիր համակարգիչն առգրավվել է Ա.Ավետիսյանի անձնական խուզարկությամբ³², որում բացված էլեկտրոնային փոստարկղում առկա է եղել «dommoskvy@mail.ru» էլեկտրոնային փոստարկղի վերաբերյալ պատվերը կատարված լինելու մասին հաղորդակցություն³³, իսկ այն առգրավված համակարգչում բացված փոստարկղում սխալմունքի արդյունքում հայտնվելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկը կառուցված է ենթադրության վրա:

Նախնական համաձայնությամբ կատարված լինելու վերաբերյալ չփարատված կասկածի մասին բողոքաբերի դիրքորոշումն անընդունելի գնահատելու Վճռաբեկ դատարանի եզրահանգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու գործառույթը կատարող ավտոմատացված համակարգը ևս մարդու գործողության արդյունք է, ով նպատակ է հետապնդում այդ կերպ կատարել համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ունեցող հակաիրավական արարք(ներ), և պայմանավորված վտանգավորության աստիճանով, արարքների որոշ դրսևորման ձևերը քրեական օրենքով նախատեսված են հանցավոր ճանաչվող արարքների շրջանակում:

24. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր է:

³⁰ Տե՛ս քրեական գործ, հատորներ 1-5-րդ:

³¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 171-172 և 189:

³² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 45:

³³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 90-91:

25. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղավոր ճանաչելով, թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը, համաձայն 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 397-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, սույն որոշման 16-րդ, 22-րդ և 24-րդ կետերում արված եզրահանգումների լույսի ներքո, մի կողմից նկատի ունենալով գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի ապահովման անհրաժեշտությունը³⁴, մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս փոփոխելու կայացված դատական ակտերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ տրված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը ստորադաս դատարանների դատական ակտերը փոփոխելն է:

25.1. Ուստի հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին առյուծի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի դատական ակտերը պետք է բեկանել, Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերադրակել նույն օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով:

Մինևույն ժամանակ, Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը վերադրակելու պայմաններում, առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, ուստի հաշվի առնելով վճռաբեկ վերանայման սահմանների³⁵ և քրեական հետապնդումը բացառող վերաբերելի հիմքի³⁶ առկայությամբ ձևավորված նախադեպային իրավունքը, ինչպես նաև այն, որ վերադրակված մեղադրանքով օրենքով սահմանված վաղեմության ժամկետները ենթակա են հաշվարկման 2015 թվականի նոյեմբերի 10-ից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն³⁷, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ

³⁴ Անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի առկայությամբ առավել մանրամասն տես Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշումը:

³⁵ Տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Միսիթար Էլոյանի և այլոց* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

³⁶ Տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Անահիթ Սաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳԿ/0022/01/10, *Սիրաժ Դամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ-2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

³⁷ Մանրամասն տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Սիրաժ Դամբարյանի և այլոց* գործով վերը նշված որոշման 21-րդ կետը և սույն որոշման 10-րդ կետը:

արարքների՝ որպես ոչ մեծ ծանրության հանցագործությունների³⁸ համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը³⁹ լրացել է 2017 թվականի նոյեմբերի 10-ին, իսկ այդ պահի դրությամբ, Ա.Ավետիսյանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ առկա չի եղել: Հետևաբար, վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

25.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի կողմից կատարված՝ 2003 ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի վրա, հետադարձության կարգով պետք է տարածել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները:

Մասնավորապես, նշված օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *«2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտնած եզրափակիչ դատավարական ակտ: (...):»*

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու համար վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, թե մինչև այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վերաբերյալ առկա է արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, թե ոչ: **Եթե նման ակտ առկա չէ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ**, այսինքն տարածվում է մինչև այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վրա:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պարճենահանելը կամ այլ կերպ դրան սպօրինի տիրանալը կամ համակարգչային կապի միջոցների օգտագործմամբ հաղորդվող տեղեկատվությունը որսալը՝*

(...)

³⁸ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

³⁹ Անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

3. Սույն հոդվածի առաջին (...) մասով նախատեսված արարքները, որոնք՝
(...)

2) կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
(...)

պարժվում են ազատագրվեանք՝ չորսից փաստ փարի ժամկետով»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն. «1. Համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված փյլայն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան փրհանալը, որը կատարվել է այդ փյլայն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով՝

(...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

(...)

6) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ

(...)

պարժվում է րուգանքով քանապարհիկից հիանապարհիկի չափով, կամ հանրային աշխատանքներով հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ րևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ փարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմանք՝ մեկից երեք փարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրվեանք՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվեանք՝ երկուսից հինգ փարի ժամկետով»:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը ներառում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալներ⁴⁰: Միաժամանակ, նախկին և գործող քրեական օրենսգրքերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ համակարգչային տվյալներին ապօրինի տիրանալու համար նախատեսված պատիժների համեմատական վերլուծության հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր ընդունված քրեական օրենսդրությունը համարվում է պատիժը մեղմացնող, քանի որ նշված արարքի համար որպես պատիժ նախատեսում է ազատագրվում՝ երկուցից հինգ տարի ժամկետով, մինչդեռ հանցանքը կատարելու պահին գործող օրենքով սահմանված էր ազատագրվում՝ չորսից տասը տարի ժամկետով: Հետևաբար, նոր օրենսդրության գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձի վրա:

⁴⁰ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանին 2003 թվականի ապրիլի 18-ի ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը պետք է որակել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

Պատժի նշանակման համաչափության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների⁴¹ լույսի ներքո ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, վերլուծելով Ա.Ավետիսյանի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հաշվի առնելով Ա.Ավետիսյանի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները, այն դիտարկելով ամբաստանյալի անձը բնութագրող այլ հանգամանքների, այն է՝ նախկինում դատապարտված չլինելու, դրական բնութագրվելու, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության⁴², ընտանեկան դրության⁴³ համատեքստում, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ նրա նկատմամբ այդ հոդվածով պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ հաշվի առնելով, որ Ա.Ավետիսյանին մեղսագրվող արարքը կատարվել է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ն ու Ա.Ավետիսյանի նկատմամբ՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը կիրառելու արգելքները բացակայում են, ուստի նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Ա.Ավետիսյանը նշանակված պատժից ենթակա է ազատման:

26. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավն անհրաժեշտ է վերացնել և գրավի գումարը վերադարձնել գրավատուին: Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի պահանջն առ այն, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող «Վիվատո Բեթինգ» և «Վիվատո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու պայմաններում, գույքի վրա դրված կալանքը պետք է վերացնել⁴⁴: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ

⁴¹ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Ռուզաննա Գևորգյանի* գործով 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0008/01/20 որոշման 24-րդ կետը և այդ որոշմամբ վկայակոչված վերաբերելի որոշումները:

⁴² Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

⁴³ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

⁴⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մթթուր Ասդրեսայանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0200/01/13 որոշման 20.2-րդ կետը:

դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով: Վերոգրյալով պայմանավորված, Վճռաբեկ դատարանը բողոքաբերի՝ սույն որոշման 5.1-րդ կետում մատնանշված փաստարկին անդրադառնալիս առարկայագուրկ է համարում:

Հաշվի առնելով, որ սույն գործով ձևավորված դատական ծախսերն առաջացել են համակարգչային սաքոտածի դրվագներով, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերի հարցն ընդգրկված չէ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում, հետևաբար քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում դատական ծախսերը ենթակա չեն բռնագանձման, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններում, դատական ծախսերն ամբաստանյալ Ա.Ավետիսյանի վրա չեն կարող դրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերադրակել նույն օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով ու 38-253-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի նկատմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ժամկետով:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին ազատել պատժից:

4. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացնել և վճարած գումարը վերադարձնել գրավատուին:

Տուժող «Վիվատո Բեթինգ» և «Վիվատո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին պատկանող անշարժ և շարժական գույքի վրա դրված կալանքը վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված՝ այն Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանից բռնագանձման ենթակա չլինելու հիմքով:

5. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/2848/07/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2 մարտի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ դիմող Հովհաննես Չամսարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 322-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58220318 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ փաստաբան Հովհաննես Չամսարյանի աշխատանքի վայրում՝ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 5-րդ հասցեում, խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, թույլատրվել է խուզարկություն կատարել Հովհաննես Չամսարյանի՝ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 5-րդ հասցեում գտնվող աշխատասենյակում՝ բացառապես միջնորդության մեջ նշված ենթադրյալ կեղծիք կատարելու հանգամանքը պարզելու նպատակով:

2. Հովհաննես Չամսարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հունվարի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը թողել օրինական ուժի մեջ:

3. Վերոնշյալ որոշման դեմ դիմող Հովհաննես Չամսարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹ և 2023 թվականի հունվարի 31-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

4. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավոր չեն, կայացվել են քրեադատավարական օրենքի էական խախտումներով, որոնք հիմք են վիճարկվող որոշումները բեկանելու համար: Մասնավորապես, բողոքաբերը, համակարգային վերլուծության ենթարկելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 3-րդ մասերի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթները, ինչպես նաև 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 225-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, փաստել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաբանի գրասենյակը խուզարկելը և նրա վստահորդի իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերն ու կրիչներն առգրավելն իրավաչափ չեն կարող համարվել, քանի որ վերջիններս կարող են պարունակել փաստաբանի՝ այլ վստահորդներին վերաբերող փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ: Բացի այդ, բողոքաբերի գնահատմամբ, միջին ծանրության հանցագործության բացահայտման հանրային շահը չի կարող գերակայել փաստաբանի՝ փաստաբանական գաղտնիքը պահպանելու հանրային շահի նկատմամբ:

5. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն ընդունել է այն հանգամանքը, որ ենթադրյալ կեղծ փաստաթղթերը և դրանք ենթադրաբար

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

կեղծելու համար անհրաժեշտ առարկաները ձեռք են բերվել իրավաբանական օգնության շրջանակներում: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գործում առկա փաստաթղթերը բավարար է համարել գնահատելու համար, որ փաստաբանի կողմից մատուցվել է ոչ իրավաչափ իրավաբանական օգնություն, որից էլ բխեցրել է այն, որ ոչ իրավաչափ իրավաբանական օգնություն տրամադրելու հիմքով պայմանավորված խուզարկություն կատարելը թույլատրելի է:

6. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշումը և փոփոխել այն՝ մերժելով նախաքննության մարմնի՝ Հ.Չամսարյանի աշխատասենյակում խուզարկություն կատարելը թույլատրելու մասին միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Վկա Իվան Ավանեսյանը, պատասխանելով քննիչ Օ.Առաքելյանի այն հարցին, թե ո՞րտեղ է գտնվում ապրանքային նշանի գրավադրման պայմանագրի բնօրինակը, նշել է. «*ապրանքային նշանի գրավադրման պայմանագրի բնօրինակը գտնվում է ԱՄՆ-ում մեր ներդրող ընկերության ղեկավարության մոտ, ես կկապվեմ նրանց հետ, որ այն ուղարկեն մեզ և այն կորսամադրեմ վարույթն իրականացնող մարմնին*»:²

7.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ «*(...) Նախաքննության ընթացքում Աշոտ Ափոյանը հաղորդում, ապա նաև ցուցմունք է տվել այն մասին, որ «Պարզև» ՄՊԸ-ի ներկայացուցիչները սպառնացել են վնասել իրեն և իր ընդհանրի անդամներին և «Աշտարակ կաթ» ՓԲ ընկերության Երևան քաղաքի Գրոյի 13 հասցեում գտնվող գործարան 2016թ. նոյեմբերի 16-ին ներխուժել են առանց իր զիջության և թույլտվության, որից հետո «Աշտարակ կաթ» ՓԲ ընկերության ապրանքային նշաններն օգտագործելու համար պարտասուրել են դրանց գրավադրման կեղծ պայմանագիր և իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն:*

(...)

Որոշում է կայացվել դատարանազրաբանական և դատարափաստաթղթաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին: Սրացվել է փորձագետի եզրակացություն, համաձայն որի՝ փորձաքննության ներկայացված ապրանքային նշանի գրավադրման պայմանագրում և դրան կից հավելվածում Աշոտ Ափոյանի անվան դիմաց կարարված ստորագրությունն ու «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի կնիքը կեղծված են, պարտասուրվել են մեկ այլ փաստաթղթից համակարգչային տեխնիկայի միջոցով՝ չափսերը փոփոխելով:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 15:

Որպես վկա հարցաքննվել է «Պարզև» ՓԲ ընկերության իրավաբանական ծառայություններ մատուցող փաստաբան Հովհաննես Չամսարյանը, ով չի բացառել իր կողմից վերոհիշյալ սպանությանն նշանի գրավադրման պայմանագիրը կազմելու հանգամանքը, միաժամանակ նշել է, որ հետագայում իրեն վերադարձրել են այդ պայմանագիրը կամ դրա պարճերը արդեն իսկ կողմերի վավերացումից հետո և իրեն հայրնի չէ, թե ինչ հանգամանքներում է այն վավերացվել (...)»³:

8. Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ քննարկելով փաստաբան Հ.Չամսարյանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը, գտել է որ. «(...) [Մ]իջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ ձեռք բերված փոխյալների համադրումը բավարար հիմք է տալիս գալու հետևության, որ քննիչի կողմից նշված հասցեում կարող են հայրնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ (...)»⁴:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները բավարար չափով պարճատարանված չեն և որպես կանոն պարունակում են ընդհանրական բնույթ կրող դատողություններ, դատական ակտը պարունակում է որոշակի անորոշություններ և հակասություններ:

(...) Առաջին ատյանի դատարանը նշելով, որ թույլատրելի է խուզարկությունը միջնորդության մեջ նշված ենթադրյալ կեղծիք կատարելու հանգամանքը պարզելու նպատակով, որևէ ձևով չի կոնկրետացրել, թե կոնկրետ ինչն է հանդիսանալու որոնման առարկան: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խուզարկության թույլտվության մասին միջնորդությունը վերաբերվել է փաստաբանի գրասենյակի խուզարկությանը, Առաջին ատյանի դատարանն ըստ էության չի նշել, թե արդյոք հաղթահարվել են փաստաբանի գրասենյակում խուզարկություն կատարելու վերաբերյալ սահմանափակումները: Այս հարցի կապակցությամբ վերաքննիչ դատարանն էության մեջ իր համաձայնությունն է հայրնում վերաքննիչ բողոքում նշված փաստարկներին:

Վերը նշված հանգամանքն օբյեկտիվորեն գրկում է Վերաքննիչ դատարանին Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ողջամիտ հետևության հանգելու հնարավորությունից, որպիսի հանգամանքը առերևույթ ենթադրում է, որ կայացված դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության: Մինչույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 07.05.2019 թվականի թիվ ՄԴՈ-1459 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289-րդ հոդվածի և 287-288-րդ հոդվածների իրավակարգավորումները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ փոխյալ պարագայում, վերաքննության սահմաններում սույն դատական գործի

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 4-5:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 43-45:

նյութերի հիման վրա պետք է անդրադառնալ Առաջին արյանի դատարանի որոշմանը՝ արված լուծման իրավաչափությանը և կայացնել համապատասխան դատական ակտ:

(...)

Վերաքննիչ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ Քննիչի կողմից «Խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» որոշմանը հարուցված միջնորդությանը և դրան կից ներկայացված փաստական տվյալները, բավարար են սույն որոշման 7-րդ կետում նշված իրավակարգավորումների և իրավական դիրքորոշումների չափանիշներով, հասարակած համարելու համապատասխան փաստաբանի աշխատանքակրում խուզարկություն կատարելու փաստական և իրավական հիմքի առկայության մասին ողջամիտ հետևության հանգեցնելու համար: Մասնավորապես, համապատասխան հարցաքննությունների արձանագրությունների և փորձագիտական եզրակացության պարզեցումներում առկա փաստական տվյալները, քրեական գործի քննության տվյալ փուլի և մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության տվյալ տեսակի շրջանակներում բավարար հիմք են տվել ենթադրելու, որ համապատասխան հասցեում գտնվող փաստաբանի աշխատանքակրում կարող են գտնվել ենթադրյալ «կեղծ» փաստաթղթերի նմուշներ կամ օրինակներ և ենթադրյալ «կեղծ» փաստաթղթեր ենթադրաբար կազմելու «գործիքներ»: Ի դեպ, հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում առկա իրավակարգավորումները և իրավական դիրքորոշումները, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ քննիչի միջնորդությանը նշված հանգամանքները չեն վերաբերվել փաստաբանական գործունեությանը, հետևաբար չեն մերժում փաստաբանի գրատանքակրում խուզարկություն կատարելու սահմանափակումների մեջ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Քննիչի կողմից ներկայացված և վերը նշված միջնորդությանը կրկնեպացված չէ համապատասխան կրիչների և համակարգիչների անձեռնմխելիությանը վերաբերվող չափանիշները, սակայն հաշվի առնելով որոնվող առարկաների առանձնահատկությունները, առերևույթ բավարար են փաստելու, որ դրանք չեն վերաբերվել իրավաչափ իրավաբանական օգնությանը: Մասնավորապես, ենթադրյալ կեղծ փաստաթղթեր և դրանք ենթադրաբար կեղծելու համար անհրաժեշտ առարկաներ հայտնաբերելու համար խուզարկություն կատարելը չեն վերաբերվել փաստաբանական գործունեությանը, այդ թվում իրավաչափ իրավաբանական օգնությանը:

Ներկայումս անհիմն են վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկները, որ տվյալ պարագայում բացակայել է համապատասխան խուզարկություն կատարելու փաստական հիմքը:

(...)

Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին արյանի դատարանի այն հետևությունը, որ Քննիչի միջնորդությունը համապատասխան խուզարկություն կատարելու վերաբերյալ, ենթակա է բավարարման, իրավաչափ է և բխում է սույն դատական գործի նյութերից: Սակայն, այնքանով, որքանով

Առաջին ասրյանի դատարանի որոշումը բավարար չստանալով հիմնավորված և պարզապես անարդարանալիս չէ և չի նշվել ու չի կոնկրետացվել թե ինչ առարկաներ, կամ փաստաթղթեր պետք է հայտնաբերվեն, ըստ էության չի պարզապես փաստարանի աշխատանքային խուզարկության սահմանափակումները հաղթահարված լինելու հանգամանքը, և չի նշվել, թե համապարասիան համակարգչի կամ այլ կրիչի մասով ինչ չափանիշներ են անհրաժեշտ առկա համապարասիան անձեռնմխելիությունը հաղթահարելու համար, հանգեցրել է Հ.Չամասրյանի քննարանի անձեռնմխելիության իրավունքի խախտման: Այսինքն, Կրիչի դեպքում վերը նշվածը բավարար է արձանագրելու, որ համապարասիան որոշում կայացնելիս Առաջին ասրյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ դատավարական իրավունքի խախտում, որը դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ, 225-րդ և 358-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառմանը, ինչն էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-398-րդ հոդվածների իմաստով՝ հիմք է բողոքարկված դատական ակտի քննարկելու և վերաքննիչ բողոքի պահանջին համապարասիանող նոր դատական ակտ կայացնելու համար: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկված դատական ակտը եղել է ժամանակավոր, այն կորցրել է իր իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել է իրավաբանորեն գոյություն ունենալուց, հետևաբար այն չի կարող քննարկվել»⁵:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք փաստաբանի աշխատանքային խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի քննարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ քննարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 89-106:

հողվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նասնակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անվտանգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

«Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ (2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետն ամրագրում է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը՝ առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից ոչ իրավաչափ միջամտության, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո:

12. Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանության համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Kruglov and others v. Russia* գործով անդրադարձել է իրավաբանների բնակարաններում (գրասենյակներում) կատարված խուզարկություններին և առգրավումներին, ինչպես նաև տեղեկատվություն պարունակող առգրավված էլեկտրոնային սարքերի պահմանը: Եվրոպական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ կատարված խուզարկություններից միայն մեկի դեպքում է դիմումատուները ցերեպակված եղել քրեական վարույթին, մնացած դեպքերում դիմումատուները քրեական վարույթում չեն ունեցել կասկածյալի կարգավիճակ, և վերջիններիս միակ կապը հանցագործությունների հետ եղել է դրանց վերաբերյալ հարուցված քրեական վարույթում ներգրավված անձանց իրավաբանական օգնություն տրամադրելը: Դրանից բացի, Եվրոպական դատարանը առանձնակի ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ վարույթն իրականացնող մարմինը պահանջվող տեղեկատվությունը չի փորձել ձեռք բերել փաստաբանների վատահորդներից (այլ աղբյուրից), որոնց նկատմամբ առկա են եղել քրեական վարույթներ: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ ազգային դատարանների խուզարկության որոշումները հիմնավորվել են բացառապես այն հանգամանքով, որ գործի նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ խուզարկության արդյունքում կարող են գտնվել գործին առնչվող փաստաթղթեր կամ առարկաներ: Այդուհանդերձ, այդ որոշումներում չի հստակեցվել՝ ինչ առարկաներ են դրանք, կամ ինչից է բխում հիմնավոր կասկածը: Ազգային դատարանները փաստաբանի արտոնագիր ունեցող իրավաբանների բնակարաններում և գրասենյակներում իրականացվող խուզարկության դեպքում բավարար երաշխիք են համարել

նախապես դատարանի խուզարկության որոշում ունենալը, չեն քննել պահանջվող տեղեկությունն այլ աղբյուրից ստանալու հնարավորությունը, ինչպես նաև սահմանված չեն եղել իրավաբանորեն արտոնյալ փաստաթղթերի գաղտնիությունը խախտելու թույլատրելիության վերաբերյալ կանոններ:⁶

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ իրավական ոլորտի մասնագետների նկատմամբ հետապնդումը և ոտնձգությունները խաթարում են Կոնվենցիայի համակարգի բուն առանցքը, ուստի փաստաբանների բնակարանների և գրասենյակների խուզարկությունը պետք է «առանձնահատուկ խիստ վերահսկողության» առարկա լինի⁷:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գրնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գրնելու և վերցնելու համար (...):»*

Վճռաբեկ դատարանը, Մեպոուի Թադևույանի և Միրուն Նասարյանի գործով որոշմամբ անդրադառնալով բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքին, նշել է, որ խուզարկության կատարման փաստական հիմք են «բավարար տվյալները», որոնց գնահատումը պետք է հանգեցնի ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա: Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել, և որպես այդպիսին, որպես կանոն, կարող են հանդես գալ քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին, ապա դրանք կարող են հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք բոլոր այն դեպքերում, երբ դրանք հնարավոր է գնահատման ենթարկել⁸:

⁶ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kruglov and others v. Russia* գործով 2020 թվականի փետրվարի 4-ի վճիռը, գանգատ թիվ 11264/04:

⁷ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Leotsakos v. Greece* գործով 2018 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30958/13, կետ 42:

⁸ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Մեպոուի Թադևույանի և Միրուն Նասարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման 22-23-րդ կետերը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կայարարելիս»:

Օրենսդիրը նման կարգավորումն ամրագրել է՝ հենց հաշվի առնելով արդար դատաքննության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ երաշխիքները, մասնավորապես, փաստաբանական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը և այն, որ հիմնարար իրավունքների պաշտպանության հարցում փաստաբանի ունեցած դերակատարմամբ է պայմանավորված նրանց պատկանող կամ վերջիններիս կողմից օգտագործվող շինություններում (տարածքներում) խուզարկության նկատմամբ հատկապես խիստ հսկողության նախատեսումը: Առհասարակ, փաստաբանին խուզարկելու արգելքն ուղղված է վստահորդի, այդ թվում՝ պաշտպանյալի իրավունքների իրականացման ապահովմանը, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր այն դեպքերում, երբ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործողությունների արդյունքում այն կարող է վտանգվել:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58220318 քրեական գործը⁹,

– նախաքննության մարմինը փաստաբան Հ.Չամսարյանին հարցաքննել է որպես վկա, վերջինս ցուցմունքով չի բացատրել իր կողմից ապրանքային նշանի գրավադրման պայմանագիրը կազմելու հանգամանքը՝ միաժամանակ նշելով, որ հետագայում իրեն վերադարձրել են այդ պայմանագիրը կամ դրա պատճենը արդեն իսկ կողմերի վավերացումից հետո և իրեն հայտնի չէ, թե ինչ հանգամանքներում է այն վավերացվել¹⁰,

– դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ ապրանքային նշանի գրավադրման պայմանագրում և դրան կից հավելվածում Աշոտ Ափոյանի անվան դիմաց կատարված ստորագրությունն ու «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերության կնիքը կեղծված են, պատրաստվել են մեկ այլ փաստաթղթից համակարգչային տեխնիկայի միջոցով՝ չափսերը փոփոխելով¹¹,

– նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Առաջին ատյանի դատարան՝ փաստաբան Հովհաննես Չամսարյանի աշխատանքի վայրում՝ Երևան քաղաքի Նալբանդյան

⁹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 25:

¹¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

փողոցի 5-րդ հասցեում, խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ¹²,

– Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ գտել է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ ձեռք բերված տվյալների համադրումը բավարար հիմք է տալիս գալու հետևության, որ քննիչի կողմից նշված հասցեում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, ուստի նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարել է, թույլատրել է խուզարկություն կատարել Հովհաննես Չամսարյանի՝ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 5-րդ հասցեում գտնվող աշխատասենյակում՝ բացառապես միջնորդության մեջ նշված ենթադրյալ կեղծիք կատարելու հանգամանքը պարզելու նպատակով,

– Հովհաննես Չամսարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ այնքանով, որքանով Առաջին ատյանի դատարանի որոշումը բավարար չափով հիմնավորված և պատճառաբանված չէ և չի նշվել ու չի կոնկրետացվել, թե ինչ առարկաներ կամ փաստաթղթեր պետք է հայտնաբերվեն, ըստ էության չի պատճառաբանվել փաստաբանի աշխատասենյակում խուզարկության սահմանափակումները հաղթահարված լինելու հանգամանքը, և չի նշվել, թե համապատասխան համակարգչի կամ այլ կրիչի մատով ինչ չափանիշներ են անհրաժեշտ առկա համապատասխան անձեռնմխելիությունը հաղթահարելու համար, խախտվել է Հ.Չամսարյանի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Այնուամենայնիվ Վերաքննիչ դատարանը հանգել է հետևության, որ փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու փաստական և իրավական հիմքերը նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ առկա են եղել¹³:

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայության վերաբերյալ հետևության հանգելիս հաշվի չեն առել այն հանգամանքները, որոնք միջազգային իրավական դրույթների և ձևավորված նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ չեն տալիս հաղթահարված համարելու փաստաբանի գրասենյակում խուզարկություն կատարելու սահմանափակումները:

Այսպես, թե՛ նախաքննության մարմինը և թե՛ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ փաստաբան Հ.Չամսարյանը սույն գործով ունեցել է վկայի դատավարական կարգավիճակ և իր առնչությունը հարուցված քրեական գործին կապված է եղել իր վստահորդի համար

¹² Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

պայմանագիր կազմած լինելու փաստով, ինչը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է փաստաբանի կողմից իրականացվող գործունեություն: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ իրականացված իրավաբանական օգնությունը ոչ իրավաչափ բնույթ է կրել: Վերաքննիչ դատարանի նման դատողության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ փորձաքննության արդյունքում պարզվել է, որ Ա.Ափոյանի ստորագրությունն ու կազմակերպության կնիքը կեղծված են, մինչդեռ Հ.Չամսարյանն իր ցուցմունքում նշել է, որ իր գործառույթն է եղել պայմանագիր կազմելը, իսկ դրա վավերացման գործընթացին վերջինիս առնչությունը հաստատող տվյալ նախաքննության մարմնի կողմից չի ներկայացվել:

Բացի այդ, վարույթն իրականացնող մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել անհրաժեշտ տեղեկություններն այլ աղբյուրներից ստանալու ուղղությամբ, մասնավորապես, վկա Ի.Ավանեսյանի հարցաքննությամբ պարզելով, որ ապրանքային նշանի գրավադրման պայմանագրի բնօրինակը գտնվում է ԱՄՆ-ում ներդրող ընկերության ղեկավարության մոտ և վերջինս հնարավորություն ունի վարույթն իրականացնող մարմնին տրամադրել պայմանագրի բնօրինակը, այն ստանալու համար գործնական քայլեր ձեռնարկելու փոխարեն՝ պայմանագիրը կեղծված լինելու հանգամանքը փորձել է պարզել փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն իրականացնելու միջոցով:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հանգելով խուզարկության փաստական հիմքի առկայության մասին հետևության, պատշաճ կերպով չի ապահովել հանցագործության բացահայտման հանրային շահի և փաստաբանի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի հավասարակշռումը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների պատճառաբանությունները հիմնավոր չեն:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը և հաշվի առնելով արձանագրված իրավունքի խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և սույն գործով ճանաչել դիմող Հ.Չամսարյանի իրավունքի խախտման փաստը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Վերաքննիչ դատարանը, խախտում արձանագրելով հանդերձ, չի բեկանել Առաջին ատյանի դատարանի որոշումը, ապա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն փաստարկմանը, որ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու քննիչի միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը կատարված լինելու փաստի ուժով չէր կարող բեկանվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել դիմող Հովհաննես Չամսարյանի իրավունքի խախտման փաստը:
3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0114/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

10 մարտի 2023 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Բաբկեն Շմիդտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում հարուցվել է թիվ 16193717 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ Բաբկեն Շմիդտի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 2-ի

որոշմամբ Բ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 6-ի որոշմամբ Բ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2018 թվականի մարտի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 17-ի դատավճռով Բ.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի մայիսի 14-ի որոշմամբ մեղադրողի բողոքը մերժել է, իսկ պաշտպանի բողոքը՝ բավարարել: Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 17-ի դատավճիռը բեկանել է, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել է Բ.Կարապետյանի անմեղությունը և արդարացրել՝ վնաս պատճառած արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելու հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է *Արամայիս Հակոբյանի*, *Արամայիս Մկրտչյանի* և այլոց գործերով Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներին տվել է չհիմնավորված և կամայական գնահատականներ, քանի որ ապացույցները վերլուծելիս չի դեկավարվել օրենքով սահմանված ապացույցների գնահատման սկզբունքով: Հարկ է նկատի ունենալ, որ Բ.Կարապետյանի մոտ ի սկզբանե եղել է դանակ և փոխադարձ կովի ժամանակ վերջինս գործադրել է այն: Տվյալ դեպքում ամբաստանյալ Բ.Կարապետյանն իրեն մեղսագրված գործողությունը կատարել է փոխադարձ վիճաբանության պայմաններում՝ պատասխան հարված հասցնելու նպատակով, ուստի այս պարագայում անհրաժեշտ պաշտպանության իրավիճակն իսպառ բացակայում է: Բ.Կարապետյանը, մտնելով վիճաբանության մեջ, նախապես լինելով զինված սուր կտրող-ծակող գործիք հանդիսացող դանակով, նպատակաուղղված հարվածներ է հասցրել տուժողներ Արսեն և Արթուր Պողոսյանների կարևոր կենսական օրգանների ուղղությամբ՝ վերջիններիս առողջությանը պատճառելով ծանր վնաս: Տուժող Արսեն Պողոսյանը ստացել է սուր կտրող-ծակող գործիքով երկու հարված՝ որովայնի շրջանի աջից կրծքավանդակի խոռոչ թափանցող, որն առաջացրել է առողջությանը ծանր վնաս, և որովայնի ձախ կեսի չթափանցող վիրավորումներ, որոնք առողջությանը պատճառել են միջին ծանրության վնաս, իսկ տուժող Արթուր Պողոսյանը հարված է ստացել մեջքի հատվածից, ինչի արդյունքում նրան պատճառվել է կրծքավանդակի շրջանի ծակած-կտրած թափանցող վիրավորում՝ ուղեկցված ձախակողմյան պնևմոթորաքստով, որը կրկին առաջացրել է առողջության ծանր վնաս: Մինչդեռ, Բ.Կարապետյանի մարմնական վնասվածքներն արտահայտվել են դեմքի և ձեռքի այրյունազեղումների, քերծվածքների և սալջարդի տեսքով, որոնք առաջացրել են առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Ավելին, համաձայն Արթուր Պողոսյանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության թիվ 1753/հ եզրակացության՝ վերջինիս վերքային խոռոչակն ունի հետևից առաջ, հորիզոնական ուղղությամբ, միջայինից դրսային ուղղություն և վերջանում է պլերալ խոռոչում, ինչը բացառում է այն հանգամանքը, որ ամբաստանյալն ընկած վիճակում է հարվածներ հասցրել տուժողներին:

Նշվածի կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ փոխադարձ կովի պայմաններում, տուժողների կողմից ոտնձգած օբյեկտի արժեքավորությունն անհամեմատելի է ամբաստանյալի կողմից ոտնձգած օբյեկտի արժեքավորությանը: Նման պարագայում ոչ թե առկա է ակնհայտ (խիստ, էական) անհամապատասխանություն՝ ոտնձգությամբ սպառնացող և պատճառված վնասների միջև, այլ առկա է իրավիճակ, երբ փոխադարձ հարվածների պայմաններում յուրաքանչյուրն ընտրել է իր նպատակն առավել արդյունավետ իրականացնելու նախընտրելի տարբերակը՝ նախապես գիտակցելով իր արարքի հանրային վտանգավորության բնույթը, նախատեսելով դրա վտանգավոր հետևանքները և ցանկանալով կամ գիտակցաբար թույլ տալով դրանց վրա հասնելը:

Հետևաբար, ըստ բողոքաբերի, տվյալ իրավիճակում անհրաժեշտ պաշտպանության վիճակի մասին խոսք լինել չի կարող:

6. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 14-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Բարեկեն Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «[Մա] կորող-ծակող գործիքով երկու անձի ստողջությանը դիտարկորությանը պատճառել է կյանքի համար վրանգավոր ծանր վնաս:

Այսպես.

2017 թվականի օգոստոսի 30-ին ժամը 01-ի սահմաններում, Կրուժող Արսեն Բագրասի Պողոսյանն իրեն պարկանող և իր կողմից վարվող «Նիսասն Բքսթրայլ» մակնիշի 35 GV 056 հաշվառման համարանիշի սև գույնի, թեթև մարդասարավորումեքենայով միայնակ վերադարձել է իր քնակության վայր՝ Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 127-րդ շենք և ավորումեքենան կայանել է բակում՝ փողոցում: Այդ պահին նշված բակում միայնակ գրնվող, հարևանությանը քնակվող շենքի քնակիչ Բարեկեն Շմիդրի Կարապետյանն Արսեն Բագրասի Պողոսյանին առաջարկել է ավորումեքենան կայանել այնպիսի դիրքով, որպեսզի չխոչընդորովի հնարավոր անցորդների ազար րեղաշարժը: Այնուհետև րեսնելով, որ Արսեն Պողոսյանը չի կարարում իր առաջարկը, նրան ասել է «լավ չես հասկանում», ինչին վերջինս պարասիանել է, որ «ինքը լավ չի հասկանում» և այդ հարցի շորջ վիճարանություն է առաջացել մի կողմից Բարեկեն Կարապետյանի, իսկ մյուս կողմից Արսեն Պողոսյանի և վերջիններիս կարճ ժամանակ անց միացած Արթուր Բագրասի Պողոսյանի միջև:

Նշված վիճարանության ընթացքում Բարեկեն Կարապետյանը երկու անձանց ստողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառելու դիտարկորությանը իր մոր գրնվող, քննությանը չհայրնարեքված սուր ծակող-կրրող գործիքով դանակով, հարվածներ է հասցրել Արսեն Պողոսյանի որովայնին դիտարկորությանը պատճառելով որովայնի շրջանի աջից ծակած-կրրած, կրծքավանդակի խոռոչ թափանցող և որովայնի ձախ կեսի ծակած-կրրած չթափանցող վիրավորումների ուղեկցված ենթամաշկի, սպրնակրոզի, կողային մկանների և առաջորովայնամզային ճարպաքջանքի վնասումների ձևով ստողջությանը ծանր վնաս կյանքին վրանգ սպառնացող:

Այնուհետև նույն դանակով հարվածել է Արթուր Պողոսյանի մեքքին, ինչի արդյունքում նրան դիտարկորությանը պատճառել է կրծքավանդակի շրջանի ծակած-կրրած թափանցող վիրավորմանն ուղեկցված ձախակողմյան պնևմոթորաքսով և աջ նսիսաքակի շրջանի գունագրկված րեղամասի ձևով

մարմնական վնասվածքներ, որոնք առաջացրել են առողջությանը ծանր վնաս կյանքին վրանգ սպառնացող (...)»²:

7.1. Ամբաստանյալ Բ.Կարապետյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ «2017 թվականի օգոստոսի 29-ի գիշերը՝ ժամը 24:00-ից ժամը 01:00-ի սահմաններում, միայնակ գրնվել է իրենց շենքի բակում վարսավիրական սրահի մուրակայքում: Այդ պահին սև գույնի ավրումեքենայով բակ է մտել Արսենը և ավրումեքենան կայանել է բակում՝ հենց փողոցի վրա ու իջել մեքենայից: Տեսել է, որ մեքենայի դիրքն անհարմար է, խանգարելու է մարդկանց ազատ շարժին: Մտրեցել է Արսենին և ասել, որ նա մեքենան նորմալ չի կայանել, ասել է, որ մի կողմ քաշի: Արսենն ասել է, որ կքաշի, սակայն մի քանի րոպե անց, տեսնելով, որ Արսենը չի ցանկանում մեքենան նորմալ կայանել, նրան ասել է, որ լավ չի հասկանում, մեքենան քաշի մի կողմ, քանի որ մարդկանց խանգարում է: Գրանից Արսենը վրդովվել է, ինչից իրենց միջև խռակակցություն և լեզվակոխիվ է սկսվել: Այդ ժամանակ Արսենն անակնկալ ձևով հարվածել է իրեն և կոխիվ ու քաշքշոց է սկսվել: Չի նկատել, թե որ կողմից, բայց անմիջապես իրենց է մտրեցել Արսենի տղայր Արթուրը և երկուսով միասին սկսել են ուրբերով և ձեռքերով ուժեղ ծեծի ենթարկել իրեն: Այդ ընթացքում չի կարողացել նրանց հարվածել, փորձել է միայն պաշտպանվել, սակայն չի սրացվել և բազմաթիվ ուժգին հարվածներ է սրացել, իրեն գցել են գետնին և առանց դադարեցնելու հարվածել են: Գոռացել է, ձայն է տվել, որպեսզի մարդիկ մտրեն, օգնեն, սակայն շրջակայքում մարդ չի եղել: Հասկանալով, որ իր կյանքին ու առողջությանը ռեալ վրանգ է սպառնում, իր գոռոցներին, որ չհարվածեն, չեն լսում, իսկ շրջակայքում մարդիկ չկան, որ բաժանեն, տեսնելով, որ այլ ելք չունի, ծեծը դադարեցնելու և պաշտպանվելու համար գրպանում ունեցած ծալովի դանակը հանելով հարմարեցրել և հարվածներ է հասցրել նրանց ուղղությամբ, սկզբում Արսենի, այնուհետև՝ Արթուրի ուղղությամբ: Իր կողմից դանակով նրանց ուղղությամբ հարվածներ հասցնելուց հետո նրանք դադարեցրել են իրենց գործողությունները և հեռացել: (...)

Պարասահանելով մեղադրողի և դադարանի հարցերին ամբաստանյալ Բարկեն Կարապետյանը հայրնել է, որ դանակն աջ ձեռքով հանել է աջ գրպանից, երկուսին էլ հարվածել է ընկած վիճակում (...)»³:

7.2. Տուժող Արսեն Պողոսյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ «դեպքի օրը՝ օգոստոսի 29-ը, եղբոր՝ Արթուրի ծննդյան օրն է եղել: Գրնվել են իրենց տանը, այնուհետև ծննդյան միջոցառումն ավարտելուց հետո, եղբորը ճանապարհելու նպատակով դուրս են եկել տանից: Հյուրերին ճանապարհել է ուրքով, իր մեքենան կայանված է եղել ավրումեքենայի մոտ: Ճանապարհելու ընթացքում ինչ-որ անձ բարձրաձայն խոսել է, մոտ է եղել և չի կարող հարակ ասել՝ հեռախոսով, թե՛ ոչ, ինքը զգուշացրել է, ինչից հետո վիճարանություն է եղել, ծեծկոտորք էղել է շար կարճ: Չի կարող հիշել՝ ով է

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 155-163:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 76:

ստաջինը հարվածել: Առաջին դիրողությունն ինքն է արել, ասել է՝ մի քիչ կամաց խոսացեք, ուշ ժամ է: (...)

Պարասխանելով դատարավարական կողմերի և դատարանի հարցերին՝ րոժող Արսեն Պողոսյանը մանրամասնել է, որ եղել է վիճարանություն, որի ժամանակ հարվածել են միմյանց, եղել է դանակահարություն, ինքն ընկել է գետնին: (...) Վիճարանության ընթացքում չի իմացել, թե ում հետ են կոխում, դա իմացել է գործի քննության ընթացքում, երբ առերեսում է կարարվել: Չի տեսել իր եղբայրը հարվածել է, թե ոչ և չի կարող ասել, թե իր հարվածից անձն ինչ վնասվածք կարող էր սրանսայ, եթե վեճը տևել է 2-3 րոպե: Կոխվել եղել է ձեռքերով:

Չի հիշում ստաջին հարվածողը ով է եղել: Ինքը հարված հասցրել է միայն ձեռքերով»⁴:

7.3. Տոժող Արթուր Պողոսյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ «(...) Գիշերն իր ընարանիքը մնացել է հայրական տանը, իսկ իր եղբայրը Արսեն Պողոսյանն իրեն ուղեկցել է րուն: Մութ է եղել, լուսավորություն չի եղել րողոցում: Անձանոթ մի տղամարդ բարձր խոսելիս է եղել, չեն նկարել հեռախոսով, թե՛ ոչ: Դրանից հետո Արսենը նրան զգուշացրել է, որ կամաց խոսի, ամստ է, բողբոջ լուսամուսները բաց են: Վիճարանություն է եղել, քաշքշուկ և կոխվ, որը տևել է մութ 2-3 րոպե: Դրանից հետո նկարել է, որ իր եղբայրը կուացել է, ընկնելիս է եղել, պստել է նրան: Հետո շոտ են եկել և տեսել են, որ անձանոթը, ով իրենց հայրնի չէր, արդեն գնացել է: Հասկացել է, որ հագուստը հետնամստում թաց է: Դրանից հետո հասկացել է, որ ինքն էլ է «ժակվել», թե ինչով չի տեսել:

Պարասխանելով դատարավարական կողմերի և դատարանի հարցերին՝ րոժող Արթուր Պողոսյանը մանրամասնել, որ քանի որ քաշքշուկ է եղել, չեն նկարել ով է ստաջինը հարվածել: Ուրքերով հարվածներ չի եղել, քանի որ այդ անձը գետնին չի ընկել: Վիճարանությունը սկսվել է երկկողմանի, այլ ոչ թե իր եղբոր կողմից»⁵:

7.4. Դատաբժշկական փորձաքննության թիվ 1753/հ եզրակացության համաձայն՝ «(...) Արթուր Բագրարի Պողոսյանի մարմնական վնասվածքները կրծքավանդակի շրջանի ծակած-կրրած թափանցող վիրավորման՝ ուղեկցված ձախակողմյան պնևմոթորաքսով և սջ նախարազկի շրջանի գունազրկված տեղամասի ձևով պարճատվել են ծակած-կրրած վերքը սուր ծակող-կրրող գործիքի, իսկ քերճվածքը՝ բութ, կոշտ ստարկայի ներգորճությամբ, հսարավոր է որոշման մեջ նշված ժամկետում և հանգամանքում, որոնք ստաջացրել են ստողջությանը ժանր վնաս՝ կյանքին վրանց սպտոնացող: (...) Համաձայն բժշկական փաստաթղթերի տվյալների՝ վերքային խողովակն ոնի հետրից ստաջ, հորիզոնական ուղղությամբ, միջայինից դրսային ուղղություն և վերջանում է պլրայ խողոցում: Ա.Պողոսյանը տարածության մեջ կարող էր գրնվել ցանկացած՝ վնասվածքների ստաջացումը չբացատող դիրքերում, վերոնշյալ վնասվածքներն սրանսայու պստին մարմնի տվյալ մակերեսներով ուղղված դեպի վնասվածք պարճատող ստարկան կամ գործիքը (...)»⁶:

⁴ Տեն քրեական գորճ, հատոր 4-րդ, թերթեր 77-78:

⁵ Տեն քրեական գորճ, հատոր 4-րդ, թերթեր 78-79:

⁶ Տեն քրեական գորճ, հատոր 4-րդ, թերթեր 81-82:

7.5. Դատաբժշկական փորձաքննության թիվ 1754/հ եզրակացության համաձայն՝ «(...) Արսեն Բագրատի Պողոսյանի մարմնական վնասվածքները՝ որովայնի շրջանի աջից ծակած-կրրած, կրծքավանդակի խոռոչ թափանցող և որովայնի ձախ կեսի ծակած-կրրած չթափանցող վիրավորումների՝ ողնեկցված ենթամանչկի, սպոնդիլոզի, կողային մկանների և առաջորովայնաձային ճարպաբջջանքի վնասումներով՝ պայրճառվել են սուր ծակող-կրրող գործիքի ներգործությամբ, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետում և հանգամանքում, որոնք առաջացրել են առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանց սպառնացող: (...) Համաձայն բժշկական փաստաթղթերի տվյալների՝ որովայնի ձախ կեսի վերքային խողովակն ունի առաջից հետք, ներքևից վերև, միջայնից դրսային ուղղություն և վերջանում է պլերալ խոռոչում: Ա.Պողոսյանը փարսածության մեջ կարող էր գտնվել ցանկացած վնասվածքների առաջացումը չբացատրող դիրքերում, վերոնշյալ վնասվածքներն սրանապու պահին մարմնի տվյալ մակերեսներով ուղղված դեպի վնասվածք պայրճառող առարկան կամ գործիքը (...)»⁷:

7.6. Դատաբժշկական փորձաքննության թիվ 1846/հ եզրակացության համաձայն՝ «(...) Բարկեն Շմիդտի Կարապետյանի մարմնական վնասվածքները՝ սրտրին կուպերի, ձախ ձեռքի միջնամարի շրջանների արյունազեղումների, դեմքի, կրծքավանդակի, ձախ ազդրի շրջանների փափուկ հյուսվածքների սայլարդների, ձեռնաթաթերի ծայիչների գերձգման, նախաբազուկների շրջանների քերծվածքների, ձախ ծնկի և աջ ուրնաթաթի շրջանների վերքերի ձևով հասցվել են մեկից ավելի բուֆ, կոշի առարկայով/ներով/ այդ թվում՝ ուրքերով, բռունցքներով, որոնք առաջացրել են առողջության թեթև վնաս, առողջության կարճապահ քայքայումով, նկատելի ունենալով վնասվածքների հետ անմիջական պարճատական կապի մեջ եղած հետևանքների փոփոխությունը՝ ոչ պակաս 6 օրից և ոչ ավելի, քան՝ 21 օր: Զանի որ նկատագրված վնասվածքները տեղեկարարական չեն, ուստի դատողություն անել վնասվածք պայրճառող գործիքի կամ առարկայի, ինչպես նաև հաջորդականության վերաբերյալ հնարավոր չէ: Բ. Կարապետյանը փարսածության մեջ կարող էր գտնվել ցանկացած վնասվածքների առաջացումը չբացատրող դիրքերում՝ վերոնշյալ վնասվածքներն սրանապու պահին մարմնի տվյալ մակերեսներով ուղղված դեպի վնասվածք պայրճառող առարկան կամ գործիքը (...)»⁸:

8. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանն սպացուցված է համարում այն, որ ամբաստանյալ Բարկեն Շմիդտի Կարապետյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք, որը որակված է ճիշտ, հետևաբար ամբաստանյալը քրեական պատասխանատվության և պարճի ենթակա է այդ հոդվածով:

(...) Դատարանը, վերլուծելով սույն քրեական գործով հասարարված փաստական հանգամանքները, հանգում է հետևության, որ ամբաստանյալ

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 82:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 82:

Բարկեն Կարապետյանի և տուժողներ Արսեն և Արթուր Պողոսյանների միջև տեղի է ունեցել փոխադարձ կոլի՝ հակամարտող կողմերի միջև ավերակներուսյի կայանման շուրջ առաջացած վիճարանության շարժառիթով ընդհարում, որի ընթացքում կողմերը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց՝ նպարակ ունենալով մեկը մյուսին վնաս պարճատել: Այսինքն, թե ամբարարանյալ Բարկեն Կարապետյանը, թե տուժողներ Արթուր և Արսեն Պողոսյանները հանդես են եկել որպես ուրնճգողներ և գործել են ոչ իրավաչափ, իսկ ամբարարանյալը դանակով հարվածներ հասցրել է փոխադարձ կոլի ընթացքում: Ընդ որում, ճեռք չի բերվել այնպիսի փարարական տվյալ, որը կվկայեր այն մասին, որ փոխադարձ կոլի ընթացքում կողմերի նպարակները և դրդարարճատները փոխվել են և հանգեցրել են նրանց վարքագծի փոփոխմանը և ամբարարանյալ Բարկեն Կարապետյանի համար անհրաճեչոր պաշտպանության վիճակի առաջացմանը:

Դարարանի նման հետևությունը բիում է նաև սույն քրեական գործի ըննության արդյունքում հարարարված հետևյալ փարարական հանգամանքներից.

– ամբարարանյալ Բարկեն Կարապետյանի և տուժողներ Արթուր և Արսեն Պողոսյանների միջև փոխադարձ վիճարանության և ճեճկոտութի ընթացքում ամբարարանյալը տուժողներին հարվածներ է հասցրել իր մուր եղած սուր կորող-ճակող գործիքով, մինչդեռ տուժողների մուր որևէ առարկա չի եղել,

– դարարճեչկան փորճարնության եզրակացությունների համաճայն՝ տուժող Արսեն Պողոսյանը սրացել է սուր կորող-ճակող գործիքով երկու հարված՝ որովայնի շրջանի աջից կրճքավանդակի խոռոչ թափանցող, որն առաջացրել է առողջությանը ճանր վնաս և որովայնի ճափ կեսի չթափանցող վիրավորումներ, որն առողջությանը պարճատել է միջին ճանրության վնաս, իսկ տուժող Արթուր Պողոսյանը հարված է սրացել մեչքի հարվածից, ինչի արդյունքում նրան պարճատվել է կրճքավանդակի շրջանի ճակած-կորած թափանցող վիրավորում՝ ուղեկցված ճափակողմյան պնևմոթորաքսով, որը կրկին անգամ առաջացրել է առողջությանը ճանր վնաս, մինչդեռ Բարկեն Շմիդի Կարապետյանի մարմնական վնասվածքներն արարահայրվել են դեմքի և ճեռքի արյունազեղումների, քերճվածքների և սալջարդերի տեսքով, որոնք առաջացրել են առողջության թեթև վնաս, առողջության կարճարև քայքայումով:

Այսպիսով, դարարանը, համարդելով տուժողներ Արթուր և Արսեն Պողոսյաններին ամբարարանյալի կողմից հասցված հարվածների քանակը և ուղղվածությունը, ամբարարանյալ Բարկեն Կարապետյանի սրացած վնասվածքների հետ գրնում է, որ չի հիմնավորվել, որ ամբարարանյալն իրեն մեղաագրվող արարքը կարարել է անհրաճեչոր պաշտպանության վիճակում, որպիսի հանգամանքը բացառում է նրա արարքն անհրաճեչոր պաշտպանության սահմանազանցմանը հանցագորճություն որակելու հարավորությունը:

(...)

Միևնույն ճամնակ դարարանը գրնում է, որ միայն այն հանգամանքը, որ փոխադարձ կոլի ընթացքում հակամարտող մի կողմից մասնակցել են երկու անճ՝ տուժողներ Արսեն և Արթուր Պողոսյանները, իսկ մյուս կողմից եղել է միայն ամբարարանյալ Բարկեն Կարապետյանը, դեռևս բավարար չէ հանգեղու

հետևության առ այն, որ վերջինը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

(...)

Դատարանը, (...) հաշվի առնելով ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, (...) գրնում է, որ ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով պետք է պարիժ նշանակել ազատազրկում, ինչը, դատարանի գնահատմամբ, բավարար է պարժի նպատակների իրացվելիությունն ապահովելու համար:

(...)

Դատարանը, ուսումնասիրելով ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի անձը, գրնում է, որ վերջինիս նկատմամբ ազատությունը սահմանափակելու ձևով կիրառման ենթակա քրեահրավական ներգործության միջոցն անմիջականորեն չպետք է ներգործի ամբաստանյալի նկատմամբ, քանի որ Դատարանի մոտ առկա է վարսահոություն և համոզվածություն առ այն, որ նշանակված պարժատեսակի կիրառման արդյունքում ակնկալվող պարժի նպատակների իրագործումը հնարավոր է նաև առանց ամբաստանյալին հասարակությունից մեկուսացնելու (...):⁹:

9. Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ձեռք չի բերվել փոխկապակցված ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը հիմք կրար, բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը, անվերապահ հետևություն անելու առ այն, որ ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանն իրեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքը չի կարարել անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

Վերաքննիչ դատարանը նախ արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն առ այն, որ ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանը րոժողներ Արթուր և Արսեն Պողոսյաններին դանակով հարվածներ է հասցրել փոխադարձ կովի ընթացքում, չի բիում սույն գործի փաստական հանգամանքներից: Մասնավորապես, գործի նյութերում առկա չեն ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորվող հարակ և համոզիչ փաստարկներ այն մասին, որ ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի և րոժողներ Արթուր և Արսեն Պողոսյանների միջև րեղի է ոնեցել փոխադարձ կով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ փոխադարձ կովի մասին իրենց ցուցմունքներում նշել են միայն րոժողները: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն առանց որևէ հիմնավորման առավել նշանակություն է րվել րոժողների ցուցմունքներին՝ անրեսելով այն հանգամանքը, որ վերջիններիս հակասական ցուցմունքները չեն հիմնավորվում որևէ այլ ապացույցով: Մինչդեռ,

⁹ Տեն քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 73-95:

դեպքի հանգամանքների մասին ամբաստանյալի հայրնաձ րեղեկություններն առաւել համոզիչ են և փաստարկւաձ: Ընդ որում, վիճարկւող դատարանն ակրից երևում է, որ Առաջին սարյանի դատարանը վիճարանությունն առաջանալու հանգամանքները գնահատելիս հիմք է ընդունել ամբաստանյալի ցուցմունքները՝ րուձողների ցուցմունքներն այդ մասով գնահատելով անարձանահաւաար, իսկ վիճարանությունն առաջանալուց հետո ամբաստանյալի և րուձողների գորձողությունները գնահատելիս արձանահաւաար է դիարել րուձողների ցուցմունքները:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դեպքի հանգամանքները սարզելիս և ամբաստանյալի ու րուձողների ցուցմունքների արձանահաւաարությունը գնահատելիս Առաջին սարյանի դատարանը հաշւի չի առել գորձում առկա օրյեկրիւ սաագոյցները: Մանաւորապես, գորձում առկա դատարձչկական փորձարանությունների եզրակացություններից երևում է, որ րուձող Արսեն Պողոյանի մուր առկա է միայն ձակաձ-կրրաձ մարմնական վնասաւաձքներ, իսկ րուձող Արթուր Պողոյանի մուր՝ ձակաձ-կրրաձ վնասաւաձք և րազկի քերձաւաձք: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ փոխադարձ կուլի ընթացքում հնարաւոր չէր րուձողների մուր րացի ձակաձ-կրրաձ մարմնական վնասաւաձքներից առկա լիներ միայն մեկ քերձաւաձք: Միևրեո, դատարձչկական փորձարանության եզրակացությունից երևում է, որ Բարկեն Կարապետյանի մուր առկա են րազմեսիւ վնասաւաձքներ, այդ թւում՝ սրորին կուլերի, ձախ ձեքի միջնամարի շրջանների սրյունազեղումներ, դեմքի, կրձքաւանդակի, ձախ ազրրի շրջանների փափուկ հյուաւաձքների սալջարդներ, ձեռնաթաթերի ձալիչների գերձգում, նախարազուկների շրջանների քերձաւաձքներ, ձախ ձնկի և աջ ուրնաթաթի շրջանների վերքեր:

Ամբաստանյալի և րուձողների ցուցմունքները համադրելով դատարձչկական փորձարանության եզրակացությունների հետ՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ առաւել իրարեսական են դեպքի հանգամանքների մասին ամբաստանյալի հայրնաձ րեղեկությունները:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ գորձի նյութերով չի հերքւում ամբաստանյալի հայրնաձ այն րեղեկությունները, որ առաջինը հարաւաձել է Արսեն Պողոյանը, որից հետո վերջինիս է միացել նաև Արթուր Պողոյանը, սալս ամբաստանյալին գցել են գետրին և հարաւաձներ հասցրել, և որ ամբաստանյալը ինդրել է դադարեցնել հարաւաձներն ու օգուություն է կանչել, որից հետո րեանելով, որ հարաւաձները չեն դադարում՝ ընկաձ վիճակում դանակով հարաւաձներ է հասցրել րուձողներին:

Միաձամանակ, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գորձով առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ րուձողներն ունեցել են շահագրգրաւձություն դեպքի իրական հանգամանքները չներկայացնելու համար, րանի որ միաձամանակ հանդիասցել են ուրնձգողներ Բարկեն Կարապետյանի նկարմամք, ինչի վերաքերյալ սույն գորձով նրանց նկարմամք առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետասնդում չիրականացնելու մասին որոշում:

Բնչ վերաբերում է Առաջին սայրանի դատարանի այն հետևությանը, որ փուժողների ցուցմունքները պայմանավորված են ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի՝ քրեական պարասխանարվությունը և պատիժը մեղմելու ցանկությամբ, սպանախ պետք է նշել, որ փուժողների ցուցմունքներն ամենևին չեն վկայում նշվածի մասին, բացի այդ՝ նման ցանկության դեպքում փրամարանական կլիներ, որ փուժողները հաստատեին ամբաստանյալի հայրնած րեղեկությունները, այլ ոչ թե րային խոսասիրողական և ամբաստանյալի ցուցմունքներից րարբերվող ցուցմունքներ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեն միջադեպի ընթացքում ամբաստանյալի կողմից գործադրվել է դանակ, և միջադեպի հետևանքով փուժողներին պարճատվել է առավել ծանր վնաս, քան ամբաստանյալին, սակայն հաշվի առնելով ամբաստանյալի նկարմամբ ուրնճություն կարարած անճանց քանակը, ուրնճության ինրենսիվությունը, րևողությունը, ժամանակը և իրարությունը՝ գրնում է, որ ուրնճության և պաշրպանության միջև ակնհայր անհամապարասխանություն չի եղել: Այսինքն՝ պաշրպանությունը համարժեք է եղել ուրնճությանը:

Վերը շարարվածի լույսի ներքո գնահատելով Բաբկեն Կարապետյանի գործողությունների իրավաչափությունը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ անճանց իմբի հարճակումից պաշրպանվելու համար ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանը դանակով վնաս պարճատելով փուժողներին, իրականացրել է իր կյանքի և առողջության իրավաչափ պաշրպանություն և ուրու չի եկել անհրաժեշր պաշրպանության ասհմաններից:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նաս նշել, որ եթե նույնակ Բաբկեն Կարապետյանի և Արսեն Պողոյանի միջև եղել է փոխարարճ կոիվ, սպա այդ կուլին Արթուր Պողոյանի միանալուց հերո Բաբկեն Կարապետյանը սրացել է անհրաժեշր պաշրպանության իրավունք, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դանտով Արսեն Պողոյանի հնարավորությունները շեշրակի ուժեղացել է: Վերոգրյալի հիմնն վրա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Բաբկեն Կարապետյանն Արթուր և Արսեն Պողոյանների առողջությանը ծանր վնաս է պարճատել անհրաժեշր պաշրպանության վիճակում և ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հողվածի 1-ին մասի համաճայն՝ այն հանցագործություն չի համարվում»¹⁰:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարճարցված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի կողմից առուժողների առողջությանը ծանր վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության թույլատրելի շրջանակներում կատարված լինելու և արարքն իրավաչափ դիտարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հողվածի համաճայն՝ «1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կարարվել է անհրաժեշր պաշրպանության վիճակում, այսինքն՝ պաշրպանվողի կամ մեկ այլ անճի կյանքը, առողջությունը և

¹⁰ Տեն քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 128-155:

իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վրանգավոր ուրնագությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ուրնագություն կարարողին վնաս պարճատելու միջոցով պաշարպանելիս, եթե թույլ չի արվել անհրաճելար պաշարպանության սահմանազանցում: (...)

4. Անհրաճելար պաշարպանության սահմանազանցում են համարվում դիրավորյալ այն գործողությունները, որոնք, պաշարպանվողի համար ակնհայտ, չեն համապարասիասնում ուրնագության բնույթին և վրանգավորությանը:

Անհրաճելար պաշարպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հարկասյես նախարետավաճ է սույն օրենագրքի հարունկ մասով»:

Մեքերվաճ նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Արարում Հակոբյանի գործով կայացվաճ որոշման շրջանակներում արճանագրելով հետևյալը. «(...) Անհրաճելար պաշարպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենագրքի 42-րդ հողվաճի մեկնարանման հիման վրա Վճռաբեկ դատարանը գարնում է, որ օրենքով ամրագրվաճ են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշարպանությունն իրավաչաի և հետևարար արարքի հանցավորությունը բացաող: Այսպես, անհրաճելար պաշարպանության իրավաչաիության պայմաններն են.

- ա) ուրնագության հանրային վրանգավորությունը.
 - բ) ուրնագության առկայությունը.
 - գ) ուրնագության իրական լինելը.
 - դ) վրանգ սպառնալը անճի, հասարակության, պետության շահերին.
 - ե) վնաս հասցնելը միայն ուրնագողին.
 - զ) պաշարպանության համարճերությունը ուրնագությանը:
- (...)

Անհրաճելար պաշարպանությունը համարճեր չէ ուրնագությանը, եթե պաշարպանության և ուրնագության միջև անհամապարասիասնությունն ակնհայտ է, այսինքն ուրնագողին հասցվում է այնպիսի ճանր վնաս, որը րվյալ պայմաններում անկասկաճ արդարացվաճ չէ: Ընդ որում, ուրնագության և պաշարպանության միջև եղաճ անհամապարասիասնությունը պետք է ակնհայտ լինի հենց իր պաշարպանությունն իրականացողի համար: Պաշարպանվողը պետք է գիրակցի, որ շաիից դուրս մեճ վնաս է հասցնում ուրնագողին, ինչն արդարացվաճ չէ րվյալ իրողությունում:

(...) Անհրաճելար պաշարպանության համարճերության գնահարման և որպես արդյունք՝ անհրաճելար պաշարպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման համար անհրաճելար է գնահարել ուրնագության վրանգավորության ասրիճանի և պաշարպանության միջև համապարասիասնությունը:

Օրենքը չի պահանջում, որ պաշարպանվողը կիրառի ուրնագողի կողմից կիրառվող միջոցներին հավասարագոր միջոցներ: Պաշարպանվողը կարող է գորճարել նաս առավել արդյունավետ միջոցներ:

Ուրնձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության ինտիմ լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

ա) պաշտպանվող բարիքի արժեքավորությունը և այն վնասի չափը, որ կարող էր հասցվել դրան,

բ) ուրնձգության ինտենսիվությունը ու հանկարծակիությունը,

գ) պաշտպանվողի և ուրնձգողի ֆիզիկական հնարավորությունները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական ուժը և այլն),

դ) ուրնձգողների և պաշտպանվողների քանակը,

ե) ուրնձգության իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն: (...)»¹¹:

12. Զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Անուշավան Թորոսյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հարկանիշներով: Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հարկանիշների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ուրնձգության բնույթն ու վրանգավորությունը որոշվում են ուրնձգության օբյեկտի արժեքավորությամբ, ուրնձգության ինտենսիվությամբ, պաշտպանվողի և ուրնձգողի ֆիզիկական հնարավորություններով, նրանց քանակով, ուրնձգության իրադրությամբ և այլն: Ուարի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ առկա է ակնհայտ (իմաստ, էական) անհամապատասխանություն ուրնձգությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև:

(...) Այլ կերպ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ո՛չ ուրնձգության բնույթից և վրանգավորությունից, ո՛չ էլ իրադրությունից:

(...)

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման սուբյեկտիվ հարկանիշների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է մեղքի դիմավորյալ ձևով»¹²:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Բ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա կտրող-ծակող գործիքով Արսեն և Արթուր Պողոսյանների առողջությանը դիտավորությամբ սպառնալ է ծանր վնաս¹³:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արյոյն Հակոբյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշման 27-28-րդ կետերը:

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Անուշավան Թորոսյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշման 15-16-րդ կետերը:

¹³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանը, վերլուծելով քրեական գործով հաստատված փաստական հանգամանքները, հանգել է հետևության, որ Բ.Կարապետյանի և տուժողների միջև ավտոմեքենայի կայանման շուրջ առաջացած վիճաբանության պատճառով տեղի է ունեցել փոխադարձ կոիվ, որի ընթացքում կողմերը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Այսինքն՝ թե ամբաստանյալը, թե տուժողները հանդես են եկել որպես ոտնձգողներ և գործել են ոչ իրավաչափ: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ գործով չի հիմնավորվել այն, որ Բ.Կարապետյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, հետևաբար բացառվում է նրա արարքն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցագործություն որակելու հնարավորությունը¹⁴:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ գործով ձեռք չի բերվել փոխկապակցված ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը հիմք կտար, բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը, անվերապահ հետևություն անելու առ այն, որ ամբաստանյալ Բ.Կարապետյանն իրեն մեղսագրվող արարքը չի կատարել անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ թեև միջադեպի ընթացքում ամբաստանյալի կողմից գործադրվել է դանակ, և միջադեպի հետևանքով տուժողներին պատճառվել է առավել ծանր վնաս, սակայն, հաշվի առնելով ամբաստանյալի նկատմամբ ոտնձգություն կատարած անձանց քանակը, ոտնձգության ինտենսիվությունը, տևողությունը, ժամանակը և իրադրությունը, ոտնձգության և պաշտպանության միջև ակնհայտ անհամապատասխանություն չի եղել: Այլ կերպ՝ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար ամբաստանյալ Բ.Կարապետյանն իրականացրել է իր կյանքի և առողջության իրավաչափ պաշտպանություն և դուրս չի եկել անհրաժեշտ պաշտպանության սահմաններից, ուստի նրա արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը¹⁵:

14. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործության դեպքը և հանգամանքներն ըստ էության հաստատվում են ամբաստանյալի և տուժողների՝ միմյանցից տարբերվող ցուցմունքներով: Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ Բ.Կարապետյանի և տուժողների միջև տեղի է ունեցել փոխադարձ կոիվ, ինչի արդյունքում ամբաստանյալը վերջինների առողջությանը պատճառել է ծանր վնաս, հիմնականում հիմնվել է տուժողների կողմից հայտնած փաստական տվյալների վրա: Միջդեպ, Վերաքննիչ դատարանը, արժանահավատության տեսանկյունից գնահատելով տուժողների և ամբաստանյալի ցուցմունքները, գտել է, որ գործի

¹⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

հանգամանքների վերաբերյալ ամբաստանյալ Բ.Կարապետյանի հայտնած տվյալներն ավելի արժանահավատ են, ուստի հաստատված է համարել, որ վերջինս իրեն մեղսագրվող արարքները կատարելիս գտնվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

Վճռաբեկ դատարանի համար ընդունելի են Վերաքննիչ դատարանի այն հետևությունները, որ դեպքի հանգամանքների մասին ամբաստանյալի հայտնած տեղեկություններն առավել համոզիչ են ու փաստարկված: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը վիճաբանությունն առաջանալու պատճառը գնահատելիս հիմք է ընդունել ամբաստանյալի ցուցմունքները, մինչդեռ վիճաբանությունն առաջանալուց հետո ամբաստանյալի և տուժողների գործողությունները գնահատելիս արժանահավատ է համարել տուժողների ցուցմունքները՝ առանց որևէ կերպ պատճառաբանելու վերոնշյալը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր կերպով փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները: Մասնավորապես, դրանցից հետևում է, որ տուժող Արսեն Պողոսյանի մոտ առկա են միայն ծակած-կտրած մարմնական վնասվածքներ, իսկ տուժող Արթուր Պողոսյանի մոտ՝ ծակած-կտրած վնասվածք և բազկի քերծվածք, այնինչ փոխադարձ կովի պայմաններում տուժողների մոտ դժվար թե բացի ծակած-կտրած մարմնական վնասվածքներից ընդամենը մեկ քերծվածք առկա լիներ: Ամբաստանյալ Բ.Կարապետյանի մոտ, ընդհակառակը, առկա են եղել բազմաթիվ վնասվածքներ, այդ թվում՝ ստորին կոպերի, ձախ ձեռքի միջնամատի շրջանների արյունազեղումներ, դեմքի, կրծքավանդակի, ձախ ազդրի շրջանների փափուկ հյուսվածքների սալջարդներ, ձեռնաթաթերի ծալիչների գերձգում, նախաբազուկների շրջանների քերծվածքներ, ձախ ծնկի և աջ ոտնաթաթի շրջանների վերքեր: Ավելին՝ գործում առկա փաստական տվյալներից հետևում է, որ ամբաստանյալը դանակով հարվածներ է հասցրել տուժողների կողմից մարմնական վնասվածքներ պատճառելուց հետո միայն:

Ուստի, Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ դատաբժշկական փորձաքննության եզրակացություններում առկա տվյալները համադրելով ամբաստանյալի ցուցմունքների հետ, փաստում է, որ գործի հանգամանքների վերաբերյալ վերջինիս հայտնած տվյալներն այն մասին, որ տուժողները երկուսով միասին ոտքերով ու ձեռքերով ծեծի են ենթարկել իրեն, իսկ ինքը փորձել է պաշտպանվել, ավելի արժանահավատ են և ըլիում են գործում առկա ապացույցներից:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ ամբաստանյալ Բ.Կարապետյանի և տուժողներ Արթուր և Արսեն Պողոսյանների միջև տեղի է ունեցել փոխադարձ կռիվ, սույն գործի նյութերով չի հաստատվում: Հետևաբար, բողոքաբերի փաստարկներն այս առումով ևս հիմնավոր չեն: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի գտահատմամբ՝ Վերաքննիչ դատարանը

հանգել է իրավաչափ հետևության առ այն, որ տուժողների գործողությունների արդյունքում ամբաստանյալ Բ.Կարապետյանի համար ստեղծվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակ:

16. Անդրադառնալով ոտնձգության և պաշտպանության համաչափության հարցին՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ դրանց միջև ակնհայտ անհամապատասխանություն չի եղել, և պաշտպանությունը համարժեք է եղել ոտնձգության բնույթին ու վտանգավորությանը: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործի փաստական տվյալների ամբողջությունը, մասնավորապես՝ ամբաստանյալի կողմից տուժողների առողջությանը *պարճատված վնասի բնույթը, հարվածների քանակն ու տեղակայումը, ինչպես նաև կիրառված հանցագործության գործիքը*: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ թեև օրենքի տեսանկյունից պաշտպանվողի համար թույլատրելի է ավելի մեծ վնաս պատճառել ոտնձգողին, քան սպառնում է իր կյանքին կամ առողջությանը, այնուամենայնիվ դրանց միջև չպետք է ակնհայտ անհամապատասխանություն լինի: Յուրաքանչյուր դեպքում պետք է պահպանվի անհրաժեշտ համաչափություն՝ ոտնձգության բնույթի ու վտանգավորության և պատճառված վնասի միջև:

Մինչդեռ, սույն դեպքում, ինչպես երևում է դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններից, տուժողների գործողությունների արդյունքում Բ.Կարապետյանի առողջությանը պատճառվել է *թեթև վնաս*, իսկ ամբաստանյալը տուժողների առողջությանը պատճառել է *ծանր մարմնական վնասվածքներ կյանքին վրանգ սպառնացող*: Ընդ որում, Արսեն Պողոսյանը ստացել է *երկու հարված*՝ որովայնի շրջանի աջից կրծքավանդակի խոռոչ թափանցող, որն առաջացրել է առողջությանը *ծանր վնաս*, և որովայնի ձախ կեսի չթափանցող վիրավորում, որն առողջությանը պատճառել է *միջին* ծանրության վնաս, իսկ Արթուր Պողոսյանը՝ կրծքավանդակի շրջանում թափանցող վիրավորում՝ *մեջքի հարվածում*, որը վերջինիս առողջությանը պատճառել է ծանր վնաս: Բացի այդ, Բ.Կարապետյանը վնասը պատճառել է սուր կտրող-ծակող գործիքի՝ դանակի գործադրմամբ, իսկ տուժողների կողմից որևէ առարկա չի գործադրվել: Այլ կերպ՝ սույն դեպքում պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ոտնձգության բնույթից և վտանգավորությունից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Բ.Կարապետյանը պաշտպանվել է մեկից ավելի անձանց ոտնձգությունից, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ ոտնձգողների քանակն ինքնին բավարար չէ գալու միանշանակ եզրահանգման առ այն, որ պաշտպանությունը եղել է իրավաչափ և անհրաժեշտ պաշտպանության սահմաններում: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության մասին հետևությունները պետք է կառուցվեն գործի հանգամանքների համակողմանի և մանրամասն վերլուծության վրա: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն

իր անհամաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ Արթուր Պողոսյանի կողմից կովին միանալուց հետո, Արսեն Պողոսյանի հնարավորություններն ամբաստանյալի նկատմամբ շեշտակի ուժեղացել են, քանզի սույն դեպքում վիճաբանող երկու կողմերի հարաբերակցությունն այնպիսին չի եղել, որ խոսք գնա ուժերի շեշտակի ավելացման մասին:

17. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Բաբկեն Կարապետյանի կողմից տուժողների առողջությանը ծանր վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության թույլատրելի սահմաններում կատարված լինելու և արարքն իրավաչափ դիտարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը չի բխում գործում առկա փաստական տվյալների համակցությունից:

18. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, վնաս պատճառած արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելու հիմքով Բ.Կարապետյանին արդարացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որը դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է գնահատման ենթարկի գործի նյութերը և հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Բաբկեն Շմիդտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

38.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՇԴ/0047/01/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

17 մարտի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Հայկ Վլադիմիրի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 1. 2021 թվականի հունիսի 8-ին Արմենուի Արայի Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 18157721 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 117-րդ հոդվածի և 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2021 թվականի հունիսի 9-ին Արմենուի Խաչատրյանը հիշյալ գործով ճանաչվել է տուժող:

2021 թվականի հուլիսի 8-ին քրեական գործով վարույթը կարճվել է և Հայկ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

2. Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2021 թվականի հուլիսի 8-ի որոշումը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2021 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ վերացվել է:

2021 թվականի սեպտեմբերի 2-ին թիվ 18157721 քրեական գործով վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2022 թվականի հունվարի 19-ին Հայկ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

2022 թվականի հունվարի 20-ին Հայկ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով:

3. 2022 թվականի փետրվարի 4-ին Արմենուհի Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 18151822 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի, 133-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 137.1-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմինը 2022 թվականի փետրվարի 5-ին որոշում է կայացրել թիվ 18151822 քրեական գործը թիվ 18157721 քրեական գործին միացնելու մասին գործին շնորհելով 18157721 համարը:

2022 թվականի փետրվարի 5-ին Արմենուհի Խաչատրյանը վերոնշյալ գործով ճանաչվել է տուժող:

2022 թվականի փետրվարի 7-ին Հ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել և կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 137.1-րդ հոդվածի 1-ին մասով և 133-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

4. 2022 թվականի փետրվարի 7-ին որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ Հայկ Հակոբյանին՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու նպատակով դատարան ներկայացնելու համար, ձերբակալելու մասին:

2022 թվականի փետրվարի 8-ին Հայկ Հակոբյանը ձերբակալվել է:

2022 թվականի փետրվարի 8-ին մեղադրյալ Հ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է:

5. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ ՇԴ/0008/06/22 որոշմամբ մեղադրյալ Հ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, որի ժամկետը նույն դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ երկու ամսով երկարացվել է:

6. Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ Հայկ Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

7. 2022 թվականի ապրիլի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

7.1. 2022 թվականի մայիսի 13-ին նշանակված դատական նիստում Առաջին ատյանի դատարանը քննարկել է Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու, փոփոխելու կամ անփոփոխ թողնելու հարցը, և նույն օրը կայացված որոշմամբ ամբաստանյալ Հայկ Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

8. Առաջին ատյանի դատարանը, 2022 թվականի հունիսի 27-ին քննության առնելով ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ ամբաստանյալի և նրա պաշտպանի միջնորդությունը, որոշել է այն բավարարել, ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխել և որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ դրա չափ սահմանելով 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

9. Շիրակի մարզի դատախազության դատախազ Ք.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 27-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

10. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարոյթ և սահմանվել վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 7-րդ, 135-137-րդ, 358-րդ հոդվածների պահանջները, կայացված դատական ակտով արձանագրված հետևություններն անհիմն են և չեն բխում գործով ձեռք բերված փաստական տվյալներից:

12 Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը, Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելով և որպես խափանման միջոց գրավը կիրառելով, իսկ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, անտեսել են կալանավորման հիմքերի վերաբերյալ

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, չեն ապահովել հանրային և մասնավոր շահերի համաչափ և հավասարակշռված պաշտպանությունը, և արդյունքում թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտում:

12.1. Բողոքաբերն ընդգծել է, որ ստորադաս դատարանները դատական ակտերով հաստատել են, որ սույն գործով առկա են կալանավորման՝ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու և քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հիմքերը, մինչույն ժամանակ, որպես դրանց հակակշիռ մատնանշել են ամբաստանյալի և տուժողի փաստացի հաշտվելու հանգամանքը, այն, որ տուժողը պարբերաբար քրեակատարողական հիմնարկում տեսակցություններ է ունեցել ամբաստանյալի հետ, այդ թվում երկարատև, հանձնուքներ է տարել նրան, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում էլ գրանցել են ամուսնությունը՝ օրինականացնելով իրենց փոխհարաբերությունները և ներկա պահին ցանկանում են համատեղ կյանք վարել՝ զբաղվելով երեք մանկահասակ երեխաների խնամքով: Արդյունքում ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել ենթադրաբար խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը, անտեսել են Հ.Հակոբյանին մեղսագրվող հանցագործությունների ծանրության աստիճանը և նրա հոգեբանական վերաբերմունքն իր արարքների և դրանց հետևանքների նկատմամբ:

12.2. Բողոք բերած անձը շեշտել է, որ Հ.Հակոբյանը սույն գործով իրեն վերագրվող արարքներից առաջինը 2021 թվականի մայիսի 30-ին կատարելուց հետո, դեռևս քրեական գործի նախաքննության փուլում, գտնվելով մեղադրյալի կարգավիճակում, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրված լինելու պայմաններում, 2022 թվականի հունվարի 30-ին կրկին կատարել է արարք, որն արտահայտվել է առանձնակի դաժանությամբ: Ու վտանգ կա, որ ամբաստանյալը հետագայում ևս նման վարքագիծ կդրսևորի, իսկ ինչ վերաբերում է դատարանների այն հետևությանը, որ ամբաստանյալը և տուժողը փաստացի հաշտվել են, տուժողը պարբերաբար քրեակատարողական հիմնարկում տեսակցություններ է ունեցել ամբաստանյալի հետ, այդ թվում երկարատև, հանձնուքներ է տարել նրան, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում էլ գրանցել են ամուսնությունը, և ներկա պահին ցանկանում են համատեղ կյանք վարել՝ զբաղվելով երեք մանկահասակ երեխաների խնամքով, ապա հարկ է արձանագրել, որ Հ.Հակոբյանը տուժողի հետ նույն տանը բնակվելով, փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելով հանդերձ, համատեղ կյանք վարելու և մանկահասակ երեխաների խնամքով զբաղվելու պայմաններում, արդեն իսկ երկու անգամ կատարել է քրեական օրենքով արգելված արարք, որոնցից մեկ դեպքով նրա նկատմամբ կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ տուժողի բողոքի բացակայության հիմքով:

12.3. Բողոքաբերը նշել է, որ նման պայմաններում խափանման միջոց գրավը չի կարող ապահովել Հ.Հակոբյանի պատշաճ վարքագիծը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ազատության մեջ գտնվելու պայմաններում, ինչպես

դատական նիստի ժամանակ հայտարարել է ամբաստանյալ Հ.Հակոբյանը, համատեղ բնակվելու է իր կողմից կատարված հանցագործության գոհի՝ տուժող Արմենուհի Խաչատրյանի հետ՝ միանշանակ հնարավորություն ստանալով գործի հանգամանքներն իր համար ցանկալի, բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու համար ազդել քրեական գործով անցնող անձանց վրա՝ ցուցմունքները փոխելու նպատակով:

13. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 27-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը, կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ ամբաստանյալ Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելով կալանավորումը:

Վճարելի բողոքի րնության համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

14. Հայկ Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*սա կնոջը՝ Արմենուհի Արայի Խաչատրյանին, առանձին դաժանությամբ ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու դիրավորությամբ, 2021 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Վարդ-Բաղ 4-րդ թաղամաս 1-ին միկրոշրջան 5-րդ շենքի 13-րդ բնակարանում կենցաղային հարցերի՝ երկրորդ բջջային հեռախոսահամար ունենալու, դավաճանելու շուրջ առաջացած վիճարանության ընթացքում Արմենուհի Խաչատրյանի հասցեին րվել է սեռական բնույթի հայհոյանքներ, ձեռքերով, ուրբերով և հարթասափով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս գլխի և մարմնի տարբեր հարվածներին, որից հետո կարարելով «Ծեծելով չես հասկանա, տաք վիճակում ավելի լավ կհասկանաս» արտահայտությունը, նախարեսելով իր արարքի առանձին դաժանության բնույթը, ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու ցանկությամբ գիրակցաբար բերել է մետաղյա շամփուրը, շիկացրել է էլեկտրական ջեռոցի վրա, Արմենուհի Խաչատրյանին հրամայել է հանել հագին եղած գիշերազգեստը, սպա ցուցաբերելով անգթություն և անողորություն, շիկացած մետաղյա շամփուրով բազմաթիվ, այն է՝ 20 և ավելի, հարվածներ է հասցրել Արմենուհի Խաչատրյանի մարմնի տարբեր հարվածներին՝ վերջինիս առողջությանը ձախ գազաթ-քունքային և ձախ ծոժրակային շրջանների փափուկ հյուսվածքների ուռածության, կրծքավանդակի, նարարելի, աջ ազդրի շրջանների արյունազեղումների, պարանոցի, կրծքավանդակի, աջ բազկի, աջ նախարազկի, նարարելի, ձախ ազդրի շրջանների 1-2-րդ սարիճանի պրվածքների ձևերով՝ պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճարև քայքայումով՝ այդ կերպ Արմենուհի Խաչատրյանին պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ տառապանք:*

Բացի այդ, Հայկ Վլադիմիրի Հակոբյանը կնոջը՝ Արմենուհի Արայի Խաչատրյանին, առանձին դաժանությանը ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ փառասպանք պատճառելու դիմադրությունը, 2022 թվականի հունվարի 30-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, կենցաղային հարցերի՝ դավաճանության շուրջ առաջացած վիճարկության ընթացքում Արմենուհի Խաչատրյանի հասցեին փվել է սեռական բնույթի հայտոյանքներ՝ հասցնելով նրան ծանր վիրավորանք, և կատարելով «Մի վերջդ է» արտահայտությունը, երկու անգամ ձեռքով հարվածել է նրա ձախ ձեռքի բազկի հարվածին, երկու անգամ թիկունքի ձախակողմյան հարվածին, սպա նահապետելով իր արարքի առանձին դաժանության բնույթը՝ ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ փառասպանք պատճառելու ցանկությանը, փարսաբի գրպանից հանել է դանակ և բազմաթիվ և չնչին մարմնական վնասվածքներ պատճառելու դիմադրությունը նշված դանակով հարվածներ է հասցրել կնոջ ձախ ուրբի ազդրի փարքեր հարվածներին՝ ստելով «հիմի ինչ օր կենեմ, ձեռն չես հանե օր տնեցինք չլեսն», այնուհետև բռնուցքով մեկ անգամ հարվածել է աջ աչքի շրջանում, սպա շարունակելով կնոջը մարմնական և հոգեկան փառասպանքներ պատճառել՝ խոհանոցից վերցրել է սրբիչը, որի մի մասով փակել է Արմենուհի Խաչատրյանի բերանը, իսկ մյուս մասը փաթաթել է պարանոցին և սեղմել, որից վերջինս սկսել է շնչահեղձ լինել, սպա դրսևորելով բացառիկ անգթություն և անողորություն՝ գիշերային հանգստի ժամին կնոջը քարշ փայլով փարել է շենքի շքամուրք, որտեղ շարունակել է սրբիչով սեղմել պարանոցը, և հարցնելով, թե պարսասը է վերջինս մեռնել՝ մոտեցրել է սարիճանահարթակին, բացառիկ վայրագությանը կնոջ աչքից հոտող արյունն իր իսկ ձեռքով փարածել է վերջինիս դեմքին: Դրանից հետո, կրկին քարշ փայլով, նրան փարել է բնակարանի խոհանոց, պահանջել է հանել հագին եղած հագուստները և շարունակելով դրսևորել դաժան և անմարդկային վերաբերմունք բացել է փան պարուհանը՝ սրիպելով կնոջը ձմեռային ցրտին կանգնել բաց պարուհանի դիմաց առանց հագուստների՝ միաժամանակ կատարելով «տեսնեք ինչքան կկարողանաս ցրտին դիմանաս» արտահայտությունը՝ այդ կերպ Արմենուհի Խաչատրյանին պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան փառասպանք: Հայկ Հակոբյանի գործողությունների հետևանքով Արմենուհի Խաչատրյանի առողջությանը պատճառվել է ձախից սրտրին կոպի, պարանոցի ա/3-րդի ձախ բազկի, ձախ ազդրի շրջանների արյունազեղումների, աջից պարանոցի շրջանների քերծվածքների, ձախ ազդրի շրջանի ծակած-կորած վերքի, աջ նահաբազկի շրջանի ճանկովածների ձևով թեթև վնաս, առողջության կարճապրև քայքայումով: Այնուհետև 2022 թվականի հունվարի 30-ից մինչ փետրվարի 2-ն ընկած ժամանակահատվածում Հայկ Հակոբյանը շարունակել է Արմենուհի Խաչատրյանին հոգեկան ուժեղ փառասպանք պատճառող իր գործողությունները, նրա նկարմամբ վար վերաբերմունք դրսևորել, ինչն արտահայտվել է Արմենուհի Խաչատրյանին սպորինի ազգաբանագրի գրկելով, որը կապված չէ առևանգելու հետ, այն է՝ ներսից կողպել է մուրքի դուռը, վերջինիս կամքին հակառակ պահել է փանը, արգելել որևէ մեկի հետ շփումը առանց իր ներկայության, սպառնալով

հեռանալու դեպքում սպանել Արմենուհի Խաչատրյանին և նրա հարազատների կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործադրել»¹:

15. Առաջին առյանի դատարանը 2022 թվականի հունիսի 27-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանը մեղադրվում է կյանքի և առողջության դեմ ուղղված դիտավորությանը կատարվող ենթադրյալ ծանր հանցանք կատարելու մեջ, որի համար նախատեսվում է պարիժ ազատագրվում երեքից յոթ տարի ժամկետով, դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող կոնկրետ արարքների առանձնահատկությունները, բնույթը, հանրային վրանգավորության աստիճանը, ենթադրաբար կատարման եղանակը, սպառնացող հնարավոր պարիժի խարությունը, ինչպես նաև ենթադրյալ հանցանքների կատարումից հետո մեղադրյալի դրսևորած վարքագիծը, արձանագրում է, որ դատավարության տվյալ փուլում շարունակվում է պահպանվել և չի վերացել այն մտավախությունը, որ ազատության մեջ գրնվելու դեպքում մեղադրյալ Հ.Հակոբյանը կարող է քրեական օրենքով չթույլատրված նոր ենթադրյալ արարք կատարել և խոչընդոտել գործի քննությանը՝ դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Սակայն դրա հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ դատավարության մասնակիցների (այդ թվում կնոջ) վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով քրեական գործի քննությանը խոչընդոտելու և նոր արարք կատարելու հավանականությունն էսպես նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ամբաստանյալը և տուժողը փաստացի հաշտվել են, տուժողը պարբերաբար քրեակատարողական հիմնարկում տեսակցություններ է ունեցել ամբաստանյալի հետ, այդ թվում երկարատև, հանձնություն է տարել նրան, բացի այդ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում էլ գրանցել են իրենց ամուսնությունը՝ օրինականացնելով իրենց փոխհարաբերությունները և ներկա պահին ցանկանում են համարել կյանք վարել՝ զբաղվելով երեք մանկահասակ երեխաների խնամքով, հեղևաբար Դատարանը գրնում է, որ նշված հանգամանքները, ինչպես նաև ամբաստանյալի խնամքին անչափահաս երեխաների առկայության, դրական բնութագրվելու, պարբերազմին մասնակցելու հանգամանքները իրենց համակցության մեջ իրապես կարող են դիտարկվել որպես ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու հարցի քննարկման իրավաչափ հիմք և ինքին բավարար են ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի փոփոխման համար, նկատի ունենալով, նաև այն, որ Դատարանի մոտ համոզմունք է ձևավորվել, որ ամբաստանյալը ազատության մեջ մնալու դեպքում կարող է դրսևորել պարշաճ վարքագիծ, իսկ կիրառված խափանման միջոցի նպատակը՝ ամբաստանյալի պարշաճ վարքագծի սպառնովումն է:

Ընդ որում Դատարանն արձանագրում է, որ թեև մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողություններից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ դատողությունները

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 54-55:

կրում են կանխատեսական և մոտավոր բնույթ, այնուամենայնիվ մեղադրյալի կողմից նման գործողության կատարումը պետք է գնահատման ենթարկվի քրեական գործում առկա փաստական փոխադրում, որպիսիք փոխադրում առկա են: Ընդ որում՝ քրեական գործի քննությանը խոչընդոտելու հավանականության առկայության և նոր ենթադրյալ հանցանք կատարելու մտավախության պայմաններում, Դատարանի համոզմամբ այլ խափանման միջոց գրավը ի գործ է ապահովել մեղադրյալի պարզաձև վարքագիծը:

Դատարանը, հաշվի առնելով վերևում թվարկված հանգամանքները, գրնում է, որ ազատությունից փաստացի զրկմամբ չպայմանավորված այլ խափանման միջոցը՝ գրավը, ի գործ է չեզոքացնելու ամբաստանյալի՝ ոչ պարզաձև վարքագիծ դրսևորելու նվազ հավանականությունը (...)²:

16. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին արյանի դատարանը, մեղադրյալ Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելով, դատական սխալ թույլ չի փնտել, իսկ բողոքաբերը ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա հիմնված այնպիսի փաստարկներ չի ներկայացրել, որոնցով կհիմնավորվի, որ մեղադրյալ Հ.Հակոբյանի հնարավոր ոչ իրավաստի վարքագծի կանխմանը հնարավոր չէ հասնել այլ կերպ, քան մեղադրյալ Հ.Հակոբյանին հասարակությունից մեկուսացնելով, նրա ազատության իրավունքն առավելագույն չափով սահմանափակելով:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանը փաստում է՝ որպեսզի Առաջին արյանի դատարանի վիճարկվող դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանը զերծ մնա Առաջին արյանի դատարանի ներքին անկախությունը սահմանափակելուց, բողոքաբերի կողմից պետք է ներկայացվեն այնպիսի ծանրակշիռ փաստական հանգամանքներ, որոնք թույլ կրան Վերաքննիչ դատարանին գալ հիմնավոր հետևության, որ Առաջին արյանի դատարանի կողմից ակնհայտ անարեալվել են ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցը լուծելիս գնահատման ենթակա հանգամանքներ: Մինչդեռ անհրաժեշտ է նկատել, որ Առաջին արյանի դատարանի հետևություններին բողոքաբերը հակադրել է մեղադրյալին մեղաազրված հանցավոր արարքների բնույթը, կատարման եղանակն ու վրանգավորության աստիճանը, այնինչ այդ հանգամանքներն ինքնին բավարար չեն արձանագրելու, որ դատարանում մեղադրյալի պարզաձև վարքագիծը կարող է ապահովել միայն խափանման միջոց կալանավորումը, իսկ բողոքաբերի կողմից չեն նշվել Հ.Հակոբյանի վարքագծի կամ նրա անձի վերաբերյալ այնպիսի ծանրակշիռ և իրական փաստական հանգամանքներ, որոնք հնարավորություն կտային գալ ողջամիտ և հիմնավոր հետևության առ այն, որ ամբաստանյալի կողմից քրեական օրենքով չթույլատրված նոր ենթադրյալ արարք կատարելու և գործի քննությանը դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն

² Տե՛ս կոլոթեր, հատոր 1, թերթեր 79-88:

գործադրելու ճանապարհով խոչընդոտելու դիակն այնքան բարձր է, որ գրավը չի կարող այն չեզոքացնել, և որ Առաջին արյանի դատարանը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելով գրավը՝ թույլ է տվել դատական սխալ:

Ադրադատության Բողոքաբերի այն պնդմանը, որ ազատության մեջ գրավելու պայմաններում Հ.Հակոբյանը համարել է քննվելու է տուժող Ա.Խաչատրյանի հետ և իրականությունն իր համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու համար վերջինս հնարավոր է ազդի քրեական գործով անցնող անձանց վրա, Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դատարանի այն հետևությունը, որ դատավարության մասնակիցների (այդ թվում կնոջ) վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով քրեական գործի քննությանը խոչընդոտելու և նոր արարք կատարելու հավանականությունն էսպես նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ամբաստանյալը և տուժողը փաստացի հաշտվել են, տուժողը պարբերաբար քրեակարարողական հիմնարկում տեսակցություններ է ունեցել ամբաստանյալի հետ, այդ թվում երկարատև, հանձնարարներ է տարել նրան, բացի այդ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում էլ գրանցել են իրենց ամուսնությունը՝ օրինականացնելով իրենց փոխհարաբերությունները և ներկա պահին ցանկանում են համարել կյանք վարել՝ զբաղվելով երեք մանկահասակ երեխաների խնամքով: Վերոգրյալի հաշվառմամբ փաստելով, որ խափանման միջոց կիրառելու հիմքի/երի առկայության փաստը դեռևս չի նշանակում, որ ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է կիրառվի հենց կալանավորումը, քանի որ այդ նույն հիմքով/երով հնարավոր է կիրառել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված որևէ այլ խափանման միջոց, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այս առումով ևս Բողոքաբերի պնդումները հիմնավոր չեն:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը Վերաքննիչ դատարանը գրնում է, որ նման պայմաններում վերաքննիչ բողոքի փաստարկները բավարար չեն որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող և գործի լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի և ողջամիտ ժամկետում քննության պարզավորություն կրող Առաջին արյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Առաջին արյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, գործով ըստ էության կայացրել է ճիշտ լուծող դատական ակտ, որը բեկանելու իրավաստի հիմքեր չկան, գրնում է, որ Առաջին արյանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ դատախազ Բ.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը՝ մերժել (...)³:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 7-րդ մասի

³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 39-42:

համաձայն՝ «Այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մերնելը դատարան քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մերնելը կայացված դատարան սկզբերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

18. Վերոշարադրյալ հոդվածների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական սկզբերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությունը գնահատելիս դեկավարվել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով, հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

20. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են փայխա ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել միջնարարական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանաարվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկարմանը դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...):»:

20.1. Մեքերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁴:

20.2. Ընդ որում, Վճռաբեկ դատարանն *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության

⁴ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

օրենսդրությունը սահմանել է կայանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն սպաստվող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կայանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են սպացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կայանքի տակ չգրնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կայանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխանակներ⁵:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոչընդոտումների կամ անանորդկային կամ նախարացնող վերաբերմունքի կամ պատժի»:

22. Այս համատեքստում մասնավոր անձանց կողմից դրսևորած վերաբերմունքի առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարբերաբար նշել է, որ 3-րդ հոդվածը կիրառելի է դիտավորյալ վատ վերաբերմունք ներառող գործերում, ինչպես օրինակ՝ բռնաբարությունը, սեռական ոտնձգությունը կամ բռնությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը կամ վնասվածքները՝ պատճառված կովի ընթացքում, որը ենթադրում է վարքագիծ՝ ունակ տուժողի մոտ առաջացնելու նսեմացման կամ նվաստացման զգացումներ⁶:

23. «Խոչընդոտումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավագործության ներքո ցանկացած գրնվող տարածքում խոչընդոտումների դեպքերը կանխելու համար»:

24. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ նաև Միջազգային դաշնագիր) 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոչընդոտումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նախարացնող վերաբերմունքի կամ պատժի»:

25. Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ Միջազգային դաշնագրով խոչընդոտման և վատ վերաբերմունքի արգելքը կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե գործողությունները կատարվել են «պաշտոնատար անձանց» կամ «պետության

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճուղուրյանի* գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nicolae Virgiliu Tanase v. Romania* գործով 2019 թվականի հունիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 41720/13, կետեր 115 և 119:

անունից հանդես եկող այլ անձանց» կամ «մասնավոր անձանց կողմից» կամ «խրախուսելով, պատվիրելով, հանդուրժելով կամ արգելված գործողություններ կատարելով»⁷: Այսինքն՝ վատ վերաբերմունքի արգելքը միայն չի սահմանում նեգատիվ պարտավորություն պետության ներկայացուցիչների համար չներգրավվելու այդպիսի վերաբերմունքի մեջ: Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություններ իր իրավագործության ներքո պաշտպանելու անհատներին մասնավոր անձանց գործողություններից⁸:

26. Ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման ու պատշաճ քննության ապահովման՝ պետության պոզիտիվ պարտավորությունների համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն.

– ընտանեկան բռնության բոլոր գործերով արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո ստանձնած՝ պետության պարտավորության առանցքային բաղադրիչ է: Հատուկ ջանասիրություն է պահանջվում ընտանեկան բռնության գործերը քննելիս, և ներպետական ընթացակարգերում պետք է հաշվի առնվի ընտանեկան բռնության առանձնահատուկ բնույթը⁹,

– իշխանությունները կրում են պարտավորություն՝ ձեռնարկելու պաշտպանության միջոցներ ընտանիքի անդամի կամ զուգրնկերոջ կողմից անձի անձնական անձեռնմխելիության դեմ լուրջ խախտումները կանխարգելելու ուղղությամբ¹⁰,

– անձնական և ընտանեկան կյանքին իշխանությունների միջամտությունը կարող է անհրաժեշտ լինել որոշակի հանգամանքներում պաշտպանելու տուժողի առողջությունն ու իրավունքները կամ կանխելու քրեական արարքները¹¹,

– իրական և անմիջական սպառնալիքի վտանգը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով ընտանիքում բռնության կոնկրետ համատեքստը: Այս իրավիճակում, ոչ միայն հասարակության ընդհանուր պաշտպանությունն ապահովելու, այլև ամենից առաջ ընտանիքում բռնության հաջորդական դրվագների կրկնությունը հաշվի առնելու պարտավորության հարց է առաջ գալիս¹²,

⁷ Տե՛ս HRC, General Comment No. 20, 1992, կետ 13:

⁸ Տե՛ս HRC, General Comment No. 31, “Nature of the General Legal Obligation Imposed on States Parties to the Covenant”, UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.13 (26 May 2004), կետ 8:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Volodina v. Russia* գործով 2019 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41261/17, կետ 92:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *M. and Others v. Italy and Bulgaria* գործով 2012 թվականի հուլիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 40020/03, կետ 105, 31 և *Opuz v. Turkey* գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 176:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Opuz v. Turkey* գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 144, և *Eremia v. the Republic of Moldova* գործով 2013 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 3564/11, կետ 52:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Talpis s v. Italy* գործով 2017 թվականի մարտի 2-ի վճիռը, գանգատ թիվ 41237/14, կետ 122:

– անգամ այն դեպքերում, երբ իշխանությունները բացարձակ անգործության մատնված չեն եղել, այդուհանդերձ, կգնահատվի, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չեն կատարել՝ այն առումով, որ ձեռնարկված միջոցները չեն կանխել տուժողի նկատմամբ հետագա բռնարարքները¹³:

27. Միևնույն ժամանակ, ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելման ու պատշաճ քննության պետության պոզիտիվ պարտականությունների համատեքստում անդրադառնալով կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառության իրավաչափությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի լույսի ներքո թույլատրելի համարվելու համար ազատությունից ցանկացած զրկում պետք է օրինական լինի թե՛ ներպետական օրենսդրությամբ, թե՛ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասում կալանավորման՝ սպառնիչ ամրագրված հիմքերի տեսանկյունից: Անգամ այս համատեքստում, 2-րդ հոդվածի ներքո կյանքի պաշտպանության պոզիտիվ պարտավորությունը կարող է առաջ բերել ներպետական օրենսդրական շրջանակին ներկայացվող որոշակի պահանջներ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն ընձեռելու առումով, եթե կոնկրետ հանգամանքները պահանջում են դա: Միևնույն ժամանակ, ցանկացած միջոց, որը կհանգեցնի ազատությունից զրկման, պետք է բավարարի ներպետական օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված առանձնահատուկ պայմաններին ու դրանից բխող նախադեպային իրավունքին:

28. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի ներքո «վերաբերելի և բավարար» պատճառ համարվող՝ հետագա հանցագործությունների ռիսկը պետք է լինի իրատեսական, իսկ միջոցը՝ համապատասխան՝ գործի հանգամանքների և մասնավորապես, անձի նախապատմության ու անհատականության լույսի ներքո:

29. Կոնվենցիոն վերոնշյալ հիմքի ներքո կալանավորման որոշումներին անդրադառնալիս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև կալանքը չի կարող երբևէ օգտագործվել որպես բացառապես կանխարգելիչ միջոց, փաստերն ու կանխարգելիչ գործառնական միջոցներ ձեռնարկելու հնարավոր անհրաժեշտության առումով որևէ ռիսկի գնահատումը կարող են հաշվի առնվել հետագա հանցագործությունների ռիսկի (նախապատմության և մահվան ռիսկի կանխատեսման) համատեքստում¹⁴:

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Volodina v. Russia* գործով 2019 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41261/17, կետ 86, ինչպես նաև *Bevacqua and S. v. Bulgaria* գործով 2008 թվականի հունիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 71127/01, կետ 83, *Opuz v. Turkey* գործով 2009 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետեր 166-67, *Eremia v. the Republic of Moldova* գործով 2013 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 3564/11, կետեր 62-66 և *B. v. the Republic of Moldova* գործով 2013 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61382/09, կետ 53:

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kurt v. Austria* գործով 2021 թվականի հունիսի 15-ի վճիռը (ՄՊ), գանգատ թիվ 62903/15, կետեր 184-188:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Հայկ Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրանք է առաջադրվել՝ առանձին դաժանությամբ ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար (երկու դրվագ)¹⁵,

– Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի հունիսի 27-ի որոշմամբ արձանագրել է, որ մեղադրյալին վերագրվող կոնկրետ արարքների առանձնահատկությունները, բնույթը, հանրային վտանգավորության աստիճանը, ենթադրաբար կատարման եղանակը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը, ինչպես նաև ենթադրյալ հանցանքների կատարումից հետո մեղադրյալի դրսևորած վարքագիծը հաշվի առնելով՝ դատավարության տվյալ փուլում շարունակվում է պահպանվել և չի վերացել այն մտավախությունը, որ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Հ.Հակոբյանը կարող է քրեական օրենքով չթույլատրված նոր ենթադրյալ արարք կատարել և խոչընդոտել գործի քննությանը՝ դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Մինևսույն ժամանակ, ըստ Առաջին ատյանի դատարանի, դատավարության մասնակիցների (այդ թվում կնոջ) վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով քրեական գործի քննությանը խոչընդոտելու և նոր արարք կատարելու հավանականությունն էլսպես նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ամբաստանյալը և տուժողը փաստացի հաշտվել են, վերջինը պարբերաբար քրեակատարողական հիմնարկում տեսակցություններ է ունեցել ամբաստանյալի հետ, այդ թվում երկարատև, հանձնուքներ է տարել նրան, բացի այդ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում էլ գրանցել են ամուսնությունը՝ օրինականացնելով իրենց փոխհարաբերությունները և ներկա պահին ցանկանում են համատեղ կյանք վարել՝ զբաղվելով երեք մանկահասակ երեխաների խնամքով: Արդյունքում, դատարանը եզրահանգել է, որ այլ խափանման միջոց գրավն ի գորու է սպահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը¹⁶,

– Վերաքննիչ դատարանն, իր հերթին, 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ արձանագրել է, որ մեղադրյալին մեղսագրված հանցավոր արարքների բնույթը, կատարման եղանակն ու վտանգավորության աստիճանն ինքնին բավարար չեն արձանագրելու, որ դատարանում մեղադրյալի պատշաճ վարքագիծը կարող է սպահովել միայն խափանման միջոց կալանավորումը: Անդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված այն պնդմանը, որ ազատության մեջ գտնվելու պայմաններում Հ.Հակոբյանը համատեղ բնակվելու է տուժող Ա.Բսաչատրյանի հետ և իրականությունն իր համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու համար վերջինս հնարավոր է ազդի քրեական գործով անցնող անձանց վրա՝ Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնել Առաջին

¹⁵ Տնն սույն որոշման 14-րդ կետը:

¹⁶ Տնն սույն որոշման 15-րդ կետը:

ատյանի դատարանի այն հետևությանը, որ դատավարության մասնակիցների (այդ թվում կնոջ) վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով քրեական գործի քննությանը խոչընդոտելու և նոր արարք կատարելու հավանականությունն էապես նվազել է՝ պայմանավորված ամբաստանյալի և տուժողի փաստացի հաշտվելու մասին վկայող վերոնշյալ հանգամանքներով¹⁷:

31. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-29-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու իրավաչափության վերաբերյալ հետևության հանգելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, ամբաստանյալի և տուժողի հաշտվելը դիտարկելով իբրև դատավարության մասնակիցների (տվյալ դեպքում կնոջ) վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով քրեական գործի քննությանը խոչընդոտելու և նոր արարք կատարելու հավանականությունն էապես նվազեցնող հանգամանք՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Հայկ Հակոբյանին մեղսագրվող ենթադրյալ արարքներից երկրորդը կատարվել է այն ժամանակ, երբ վերջինս արդեն իսկ մեղադրվել է ընտանիքում բռնության գործադրման առաջին արարքը կատարելու մեջ, և վերջինիս նկատմամբ ընտրված է եղել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Ավելին, ամբաստանյալի ու տուժողի հաշտվելու հանգամանքին վճռորոշ նշանակություն տալով՝ ստորադաս դատարանները անտեսել են այն հանգամանքը, որ 2022 թվականի հունվարի 19-ին Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է տուժողի հետ հաշտվելու հիմքով, ինչին, սակայն, օրեր անց հաջորդել է հանցագործության մասին տուժողի նոր հաղորդումը՝ Հ.Հակոբյանի կողմից 2022 թվականի հունվարի 30-ին իր նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ:

Անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից վկայակոչված մեկ այլ հանգամանքին՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում տուժողի և ամբաստանյալի ամուսնությունը գրանցելուն, իրենց փոխհարաբերություններն օրինականացնելուն ու համատեղ կյանք վարելու ցանկությանը՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանների հետևությանն առ այն, որ այդ հանգամանքը կարող էր նշանակություն ունենալ ամբաստանյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկի նվազեցման առումով:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 16-րդ կետը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները նշված հանգամանքներն իբրև Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու հիմնավորվածությունը պայմանավորող գործոններ դիտարկելիս, հաշվի չեն առել, որ ամբաստանյալին մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարելիս վերջինս փաստական ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվել տուժողի հետ՝ բնակվելով նույն տանը և վարելով համատեղ կյանք:

Արդյունքում, տուժողի հետ հաշտվելու հանգամանքն իբրև վճռորոշ գործոն դիտարկելիս՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել Հ.Հակոբյանին մեղսագրվող ենթադրյալ արարքների՝ որպես ընտանիքում բռնության դեպքերի առանձնահատկությունները, մասնավորապես, գնահատման առարկա չեն դարձրել այն հանգամանքը, թե կոնկրետ գործի փաստական հանգամանքների պայմաններում տուժողի հետ հաշտվելը, վերջինիս հետ հարաբերություններն օրինականացնելը և համատեղ բնակվելու ցանկություն հայտնելը որքանով են օբյեկտիվորեն նվազեցնում վերջինիս վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու և քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու ռիսկերը:

32. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով ամբաստանյալ Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը, հաշվի չեն առել և պատշաճ վերլուծության չեն ենթարկել վերոնշյալ հանգամանքները, որոնք համակցության մեջ ծանրակշիռ էին՝ եզրահանգելու, որ ամբաստանյալի կողմից դատարանում գործի քննությանը խոչընդոտելու և քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու բարձր հավանականությունը շարունակում է առկա լինել և չի կարող չեզոքացվել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցների կիրառմամբ:

33. Վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լինի ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենա պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ¹⁸ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ իրավիճակում Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ այնպիսի ծանրակշիռ և իրական փաստական հանգամանքների բացակայության վերաբերյալ, որոնք հնարավորություն կտային գալ Հ.Հակոբյանի կողմից քրեական օրենքով չթույլատրված նոր ենթադրյալ արարք կատարելու և գործի քննությանը դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն

¹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արման և Արքա Մադաթյանների* գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱՐԴ/0152/01/19 որոշումը:

գործադրելու ճանապարհով խոչընդոտելու բարձր ռիսկի վերաբերյալ ողջամիտ և հիմնավոր հետևության, հիմնավոր չէ:

34. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 135-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել են վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը բեկանելու համար:

35. Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 14-ին կայացրել է եզրափակիչ դատական ակտ, որով լուծվել է նաև ընտրված խափանման միջոցի հարցը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու իրավական հնարավորությունը բացակայում է¹⁹: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Հայկ Վլադիմիրի Հակոբյանի վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունիսի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

¹⁹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՇԴ/0047/01/22 քրեական գործը:

39.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԴ/0137/01/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

22 մարտի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Ժիրայր Խաչիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 2021 թվականի փետրվարի 4-ին հարուցվել է թիվ 86150621 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 223.1-րդ հոդվածի 1-ին մասի, 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի և 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում 2021 թվականի մայիսի 5-ին հարուցվել է թիվ 69104321 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 5-րդ կետերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ, վերոնշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 86150621 համարի ներքո:

2021 թվականի մայիսի 7-ին Ժիրայր Խաչիկի Բրուտյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 7-ի որոշմամբ Ժ.Բրուտյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշմամբ մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Պաշտպաններ Հ.Բաբայանի և Ռ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2021 թվականի մայիսի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշումը՝ կալանավորման մասով, բեկանել է, նախաքննության մարմնի միջնորդությունը մերժել է, մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացրել է, և նրան ազատել է կալանքից:

4. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

5. 2021 թվականի հուլիսի 21-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ժ.Բրուտյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի որոշումը բեկանվել է և օրինական ուժ է տրվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշմանը:

7. 2021 թվականի դեկտեմբերի 25-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ժ.Բրուտյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

7.1. 2021 թվականի դեկտեմբերի 25-ին Ժ.Բրուտյանը հայտնաբերվել և տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ:

8. 2022 թվականի հունվարի 12-ին որոշում է կայացվել թիվ 86150621 քրեական գործից Ժիրայր Բրուտյանի, Հարություն Թորոսյանի և Արթուր Բարոյանի վերաբերյալ մասն անջատելու մասին՝ գործին շնորհելով 69100422 համարը:

9. 2022 թվականի հունվարի 27-ին Ժ.Բրուտյանի և մյուսների վերաբերյալ թիվ 69100422 քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ

ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

9.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանների միջնորդությունը՝ մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ անազատության հետ չկապված այլ խափանման միջոցի, այդ թվում՝ գրավի կիրառման վերաբերյալ, մերժվել է:

9.2. 2022 թվականի մայիսի 22-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել պաշտպան Ռ.Հակոբյանի միջնորդությունը, որով խնդրել է Ժ.Բրուտյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխել անազատության մեջ պահելու հետ չկապված այլ խափանման միջոցով՝ չհեռանալու մասին ստորագրությամբ կամ գրավով:

10. 2022 թվականի հունիսի 17-ին քրեական գործը վերամակագրվել է մեկ այլ դատավորի:

10.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2022 թվականի հունիսի 27-ին որոշում է կայացրել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին, որով արձանագրվել է, որ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն ընտրված է ճիշտ, այն փոփոխելու կամ վերացնելու հիմքերը բացակայում են:

10.2. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ պաշտպան Ռ.Հակոբյանի միջնորդությունը՝ ամբաստանյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու մասին, մերժվել է:

11. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ ամբաստանյալ Ժ.Բրուտյանի պաշտպաններ Հ.Բարայանի և Ռ.Հակոբյանի հատուկ վերանայման բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը բեկանվել և փոփոխվել է, պաշտպան Ռ.Հակոբյանի միջնորդությունը բավարարվել է մասնակիորեն, ամբաստանյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է՝ նրան կալանքից անմիջապես ազատելով: Ամբաստանյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ կիրառվել է գրավ՝ 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև համակցված կերպով կիրառվել է Հայաստանի Հանրապետությունից բացակայելու արգելքը:

12. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի

16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դրանով թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը նշել է, որ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ շարունակում են առկա լինել Ժ.Բրուտյանին կալանքի տակ պահելու պայմանները և հիմքերը, մասնավորապես՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի կիրառումը անհրաժեշտ է վերջինիս փախուստը ու նրա կողմից հանցանք կատարելը կանխելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

Բողոքի հեղինակը նշել է, որ Ժ.Բրուտյանը, ըստ քննությանը ձեռք բերված տվյալների, առերևույթ ունենալով «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում, որոնց անդամների հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ, գործով ամբաստանյալի կարգավիճակ ունեցող անձինք, առերևույթ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մեջ ներգրավված անձինք են, հետևաբար բարձր է ռիսկն առ այն, որ Ժ.Բրուտյանը, ազատության մեջ գտնվելով, կարող է խոչընդոտել գործի հանգամանքների պարզմանը՝ այդ անձանց հետ պայմանավորվելով ցուցմունքներ չտալու կամ իրենց ձեռնառու ցուցմունքներ տալու հանգամանքների շուրջ:

Բողոքաբերը նշել է, որ կազմակերպված հանցավոր խմբերի վերաբերյալ գործերով առավել բարձր է ռիսկը, որ ազատության մեջ գտնվելու պայմաններում անձը կարող է ազդեցություն գործադրել վկաների, մյուս մեղադրյալների կամ համախոհների վրա, կամ այլ կերպ խոչընդոտել քննությանը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ սույն քրեական գործով դատաքննությանը որևէ ապացույց դեռ չի հետազոտվել և դեռևս պետք է հարցաքննվեն վկաները, ինչպես նաև ամբաստանյալները, ուստի մեծ է հավանականությունն առ այն, որ Ժ.Բրուտյանի նկատմամբ անազատության մեջ պահելու հետ չկապված որևէ խափանման միջոց կիրառելու պարագայում վերջինս կխոչընդոտի գործի քննությանը կամ ամբաստանյալների վրա ազդեցություն կգործադրի:

Ըստ բողոքաբերի՝ վերոնշյալ եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առկա է իր վրա դրված պարտականությունները չկատարելու՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու բարձր վտանգ, ինչը համադրելով գործում առկա տվյալների, Ժ.Բրուտյանին վերագրվող արարքի և քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը բնորոշ վարքագծի կանոնների

հետ՝ հիմք է տալիս գալու այն եզրահանգման, որ Ժ.Բրուտյանի պատշաճ վարքագիծը վարույթի քննության տվյալ փուլում այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պայմաններում ապահովվել չի կարող:

Բացի այդ, Ժ.Բրուտյանին մեղսագրված առանձնապես ծանր հանցագործության համար նախատեսված պատժի խստությունը (ազատագրելում՝ ութից տասներկու տարի ժամկետով) ծանրակշիռ գործոն է նրա կողմից փախուստի դիմելու և քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ռիսկը բարձր գնահատելու համար:

Բողոքաբերն ընդգծել է, որ Ժ.Բրուտյանի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականության մասին են վկայում նաև հետևյալ հանգամանքերը՝

– «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունենալը,

– Հայաստանի Հանրապետության և այլ երկրների տարածքներում լայն քրեական կապեր ունենալը:

Անդրադառնալով քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկին՝ բողոքաբերը փաստարկել է, որ առերևույթ «օրենքով գողի» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունենալով պայմանավորված, Ժ.Բրուտյանը կարող է շարունակել քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելը:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

15. Ամբաստանյալ Ժ.Բրուտյանի պաշտպան Հ.Բաբայանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ բողոքում հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի կողմից դատական սխալ թույլ տրված լինելու հանգամանքը:

Ըստ պաշտպանի՝ առկա է շարունակական կալանավորման հիմքերի՝ առնվազն էական նվազում, որպիսի պայմաններում, անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոցներն ի գորու են չեզոքացնել այդ հիմքերը:

Պաշտպանը փաստել է, որ Ժ.Բրուտյանը միջնորդությունը քննելու օրվա դրությամբ արդեն մոտ ինը ու կես ամիս գտնվել է նախնական կալանքի տակ, իսկ քրեական գործն Առաջին ատյանի դատարան մուտքագրվելուց հետո (մոտ 9 ամիս) նշանակվել են յոթ դատական նիստեր, որից կայացել են ընդամենը 4-ը:

Ըստ պաշտպանի՝ մինչ այս պահն առկա չէ որևէ փաստական հանգամանք, որ Ժ.Բրուտյանը խոչընդոտել կամ մտադրված է խոչընդոտել գործի քննությանը: Բացի այդ, Ժ.Բրուտյանը թաքնվելու մտադրություն չի ունեցել, իսկ

քրեական վարույթն իրականացնող մարմինը որևէ խնդիր չի ունեցել վերջինիս ներկայությունը քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարմանը ծանուցագրով ապահովելու ուղղությամբ:

Բացի այդ, պաշտպանը փաստել է, որ մեղադրանքի կողմը, չբողոքարկելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը, համաձայնվել է, որ այլևս առկա չէ նոր արարք կատարելու ենթադրյալ հիմքը, սակայն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը վճռաբեկ բողոքում գտել է, որ առկա է, ի թիվս այնի, նաև այդ հիմքը, ինչը չի բխում դատական ակտի բողոքարկման դատավարական տրամաբանությունից:

Պաշտպանը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի հետևություններն առ այն, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազատության մեջ մնալու դեպքում ամբաստանյալ Ժ.Բրուտյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, չեն բխում գործի կյութերից, դրանք վերացական են և ընդհանրական:

16. Վերոշարադրյալի հիման վրա, պաշտպան Հ.Բաբայանը խնդրել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի՝ հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

17. Ժիրայր Բրուտյանին ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2011թ. «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող «Աֆո» մականվամբ Ռաֆայել Խոյեցյանի, «Խոյ» մականվամբ Ռաֆիկ Խոյեցյանի և «Զուպ Լենինականսկի» մականվամբ Անդրանիկ Սողոյանի, «Արո Շահումյանսկի» մականվամբ Ալեքսանդր Մակարյանի, «Պաշի Կոլա Սուրո Լենինականսկի» մականվամբ Սուրեն Ավետիսյանի, «Մանեթի Կոլա Մամո» մականվամբ Սամվել Հարությունյանի, «Հասան» մականվամբ Ալյան Ուսոյանի կողմից «թագադրվելով», ստացել է «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ և «գողական աշխարհում» հայրնի դառնալով որպես «Ժիրո Շահումյանսկի» և հանդիսանալով քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորման՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապարասխանում պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ սնօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ սնօրինական օգուր կամ

այլ առավելություն սրանայր, 2020թ. փետրվարի 22-ի դրությամբ շարունակելով պահպանել «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում՝ դրա կողմից հերասպնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու, մասնավորապես՝ հանցագործություն կատարելու համար քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ հանդիսացող անձանց տալով հանձնարարություններ:

Իրենց հերթին, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ հանդիսացող անձինք, սրանայրվ և կատարելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հերասպնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու մասին «Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հանձնարարությունները, մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը:

Այսպես.

«Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ժիրայր Բրուդյանը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում պահվող, նույն հիմնարկում այսպես կոչված «զոն նայողի» գործառույթներն իրականացնող «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող «Կիլիկիացի Հարութիկ» մականվամբ Հարություն Թորոյանին 2020թ. փետրվարի 22-ից հետո, քննությամբ դեռևս չպարզված օրը, հանձնարարել է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող, «քրեական հեղինակության»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, այսպես կոչված «զոն նայող» Սմբար Ավրայանին իր անունից հրահանգել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն ծեծի ենթարկելու միջոցով «պարծել» ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի թիվ 3-րդ տեղամասի կայանավոր Սամվել Բրնդյանին՝ «Կաժ» մականվամբ Աշոտ Պետրոյանի սպանության համար, սակայն Սմբար Ավրայանը հրաժարվել է կատարել «Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հանձնարարությունը: Շարունակելով իր հանցավոր մտադրությունը՝ «Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ժիրայր Բրուդյանն իր հանձնարարությունը չկատարելու համար նախաձեռնել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքում «զոն նայողի», քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Սմբար Ավրայանին փոխարինելու գործընթաց: Մասնավորապես՝ Ժիրայր Բրուդյանը ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքում «զոն նայողի», քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Սմբար Ավրայանի կողմից իր հանձնարարությունը չկատարելու համար հանձնարարել է «Կիլիկիացի Հարութիկ» մականվամբ հայրնի Հարություն Թորոյանին

«Արևմալիր» քրեակարարողական հիմնարկի երրորդ մասնաշենքում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոններով առաջնորդվող, «իրենց խոսքը պահող նորմալ մարդ» գրնել: Իր հերթին «Կիլիկիացի Հարություն» մականվամբ հայրնի «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ոնեցող Հարություն Թորոսյանը ժիրայր Բրուսյանի հանձնարարության կարարմանը ներգրավել է ՀՀ ԱԾ «Արևմալիր» ՔԿ հիմնարկում պահվող, նույն հիմնարկի 6-րդ մասնաշենքի պայես կոչված «զոն նայող» «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ոնեցող Արթոր Բարոյանին, ով երաշխավորել, սպա առաջարկել է քրեակարարողական հիմնարկում պահվող «Պզե» մականվամբ Գևորգ Գևորգյանի թեկնածությունը: «Պզե» մականվամբ հայրնի Գևորգ Գևորգյանը, կրելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման վարքագծի կանոնները և ընդունելով «ժիրո Շահունյանսկի» մականվամբ հայրնի ժիրայր Բրուսյանի «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, ինչպես նաև Հարություն Թորոսյանի՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակը, ժամանակավորապես սրանձնել է «Արևմալիր» ՔԿ հիմնարկի երրորդ մասնաշենքում պայես կոչված «զոն նայողի» գործառույթները և 20 օրվա ընթացքում երեք անգամ ծխախոտի, ուրելիքի և այլնի տեսքով «դրսից բերված գրեֆներ» է բաժանել քրեակարարողական հիմնարկի 3-րդ մասնաշենքում պահվող կալանավորված և դարապարտված անձանց, նույն մասնաշենքում պահվող կալանավորված և դարապարտված անձանց հանձնարարել է 2021թ.-ի հունվարի 18-ին և հունվարի 24-ին իրականացնել անկարգություններ՝ դրանով իսկ փաստացի իր անդամակցությունն ոնենալով քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը՝ «գողական աշխարհին»¹:

18. Առաջին առյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման համաձայն. «(...) Դարարանն արձանագրում է, որ շարունակվում են առկա լինել ամբաստանյալ ժ.Բրուսյանին կալանքի տակ պահելու պայմանները և հիմքերը: Մասնավորապես, դարարանը փաստում է, որ շարունակվում է առկա լինել հիմնավոր կասկած առ այն, որ ամբաստանյալ ժ.Բրուսյանն առջություն ոնի իրեն մեղաագրված արարքին, բացի այդ, Դարարանը, հաշվի առնելով ամբաստանյալ ժ.Բրուսյանին մեղաագրված արարքի բնույթը և հանրային վրանգավորության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործով դարարանությունը չի սկսվել, դեռևս չեն հարցաքննվել վկաները, գրնում է, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազարության մեջ մնալու դեպքում ամբաստանյալի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը (...)»²:

19. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դարարանը փաստում է, որ Առաջին առյանի

¹ Տն նյութեր, հատոր 1, թերթեր 26-29:

² Տն նյութեր, հատոր 1, թերթեր 47-70:

դատարանը, ղեկավարվելով 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև նաև՝ Նոր օրենսգրք) 483-րդ հոդվածի 5-րդ մասով՝ բողոքարկող դատական ակտը կայացրել է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն, որ սույն գործով վիճարկվող դատական ակտն Առաջին աստիճանի դատարանը կայացրել է 2022 թվականի [սեպտեմբերի 15-ին], արձանագրում է, որ դրա դատական արտագույն վերաքննիչ արյանում պետք է իրականացվի 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգով, այն է՝ Նոր օրենսգրքի կանոններով:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Միջնորդության քննության (սուսջին արյան) և դրա արդյունքում կայացված դատական ակտի վերանայման (վերաքննիչ արյան) միջև առկա նման հակասական իրավիճակը սահմանափակում է արդյունավետ վերանայում իրականացնելու՝ Վերաքննիչ դատարանի հնարավորությունը, ուստի թեև սույն բողոքի քննությունն իրականացնելիս որպես վերաքննիչ դատարանում բողոքի քննության ընթացակարգային կառուցակարգ հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը, այնուամենայնիվ, Առաջին աստիճանի դատարանի հետևությունների իրավաչափության գնահատման համար հիմք են ընդունվում մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող ՀՀ քրեական դատավարության հին օրենսգրքի իրավակարգավորումները (ստորև ներկայացված վերապահմամբ), ինչպես նաև Հին և Նոր քրեական դատավարության օրենսգրքերի կիրառված կամ կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի արտահայտած վերաբերելի իրավական դիրքորոշումները:

(...) Առաջին աստիճանի դատարանի հետևություններն առ այն, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազարության մեջ մնալու դեպքում ամբաստանյալ Ժ.Բրուսյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, չեն բխում «օբյեկտիվ չափանիշներից»՝ գործի նյութերից, դրանք վերացական և ընդհանրական, մեծամասամբ նաև կարծրաբերային են:

Տվյալ պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Բողոքի պահանջներից առաջինը՝ ամբաստանյալ Ժ.Բրուսյանի կալանավորումը վերացնելու վերաբերյալ, հիմնավոր է, ենթակա է բավարարման, (...):

Ավելին, եթե անգամ Վիճարկվող որոշումը կայացնելու պահին առկա էին ամբաստանյալ Ժ.Բրուսյանի կողմից ոչ պարզաձև վարքագիծ դրսևորելու՝ վարույթի պարզաձև իրականացմանը խոչընդոտելու և փախուստի դիմելու ռիսկեր, դատական վարույթում, երբ ապացույցների ձեռքբերման գործընթացն այլևս ավարտվել էր, ինչպես ազարության, այնպես էլ անազարության մեջ գրնվելիս Ժ.Բրուսյանը մշրապես դրսևորել էր պարզաձև վարքագիծ, այդ ռիսկերն էականորեն նվազել էին, կարող էին զսպվել կալանքի այլընտրանքային խափանման միջոցների համակցված կիրառմամբ: Այլ կերպ՝ նման ռիսկեր արձանագրելու պարագայում

Առաջին արյանի դադարանը կարող էր և պարտավոր էր դարձյալ ՀՀ նախկին քրեական դադարավարության օրենսգրքի նորմերի կիրառմամբ պարզաճ կարգով քննության առնել ամբաստանյալ Ճ.Բրուտյանի նկատմամբ կալանքի այլընտրանքային խափանման միջոցներ, օրինակ՝ գրավ և/կամ չեռանապու մասին ստորագրություն կիրառելու հնարավորությունը, ինչն ըստ էության չի արել:

(...)

Վերաքննիչ դադարանը նաև արձանագրում է, որ գործի ընթացքն սպաստովելու ուղղությամբ Առաջին արյանի դադարանը չի ցուցաբերել անհրաժեշտ ջանասիրություն, կայացրած որոշման մեջ ցույց չի տվել Ճ.Բրուտյանի շարունակական կալանավորման համար առկա «վերաբերելի և բավարար» պարճառները, որի պայմաններում ամբաստանյալ Ճ.Բրուտյանը, առանց բավարար անհրաժեշտության և պարզաճ հիմնավորման, տևական ժամանակ «խնքնաբերական» գտնվել է կալանքի տակ:

(...)

Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դադարանը, պաշտպան Ռ.Հակոբյանի ներկայացրած Միջնորդությունը մերժելով և ամբաստանյալ Ճ.Բրուտյանին կալանավորելու ժամկետն ըստ էության երկարաճգելու վերաբերյալ չպարճատարանված և չհիմնավորված որոշում կայացնելով, թույլ է տվել դարական սխալ՝ դադարավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի (գործի) ելքի վրա՝ հանգեցնելով ամբաստանյալ Ճ.Բրուտյանի անճանական ազատության և անճեռնմխելիության իրավունքների ոչ համաչափ սահմանափակման:

Նման հետևության հանգեղիս՝ Վերաքննիչ դադարանը ղեկավարվում է նաև այն կանխավարկածով, որ անճի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց պետք է կիրառվի (երկարաճգվի) բացառիկ դեպքերում, երբ ազատությունից զրկելու հետ չպայմանավորված (այլընտրանքային) խափանման միջոցներն ի գործ չլինեն զայել անճի, տվյալ դեպքում՝ ամբաստանյալ Ճ.Բրուտյանի հնարավոր ոչ պարզաճ վարքագիծը:

(...)

Սույն որոշմամբ հանգեղով հետևության, որ կալանքը դարական վարություն ամբաստանյալ Ճ.Բրուտյանի պարզաճ վարքագիծն սպաստովող այլևս ոչ պիտանի միջոց է, առկա է վերագրվող հանցանքը կարարելու հիմնավոր կասկածը՝ Վերաքննիչ դադարանը հարկ է համարում անդրադառնալ ամբաստանյալ Ճ.Բրուտյանի նկատմամբ այլընտրանքային պիտանի խափանման միջոցի կամ միջոցների կիրառության հարցին, դրա անհրաժեշտությանը:

(...)

Վերաքննիչ դադարանը փաստում է, որ ամբաստանյալ Ճ.Բրուտյանի պարզաճ վարքագիծը հնարավոր է սպաստովել 10.000.000 ՀՀ դրամի չափով գրավ սահմանելու և համակցված չբացակայելու արգելք կիրառելու պայմաններում: Ընդ որում, գրավի կիրառմամբ հնարավոր է զայել միաճամանակ երկու՝ արդարադարությանը չխոչընդորտելու և դադարանից փախուստի դիմելու ռիսկերը, սպա չբացակայելու արգելքով՝ միայն դադարանից խուսափելու ռիսկը:

Գրավ կիրառելիս և դրա չափը սահմանելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում ամբաստանյալ Ճ.Բրուտյանին վերագրվող արարքի ծանրությունը (ստանձնապես ծանր հանցագործության կատարում), ինչպես նաև վերագրված արարքի փաստական կողմը և դրանում Ճ.Բրուտյանի ենթադրյալ դերակատարությունը: Վերաքննիչ դատարանի համոզմամբ գրավն անհրաժեշտ է սահմանել 10 միլիոն ՀՀ դրամի չափով, որն ակնհայտ անհամարժեք չէ Ամբաստանյալի պաշտպանական թիմի կողմից առաջարկված 6 միլիոն ՀՀ դրամ չափին:

(...)

Թեև Բողոքի համաձայն՝ ՀՀ քաղաքացիության փաստը հաստատող ամբաստանյալ Ճ.Բրուտյանի անձնագիրը գրնվում է վարույթ իրականացնող համապատասխան մարմնի տրամադրության ներքո, սակայն Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ճ.Բրուտյանի արդերկրում կայուն կապեր ունենալու վերաբերյալ փաստական փյույակների առկայությունը, գրնում է, որ գրավի հետ համակցվածությամբ անհրաժեշտ է կիրառել մեկ այլ խափանման միջոց՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու արգելքը (...)³:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «8. Մինչև սույն օրենսգրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգային կառուցակարգ հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ճ.Բրուտյանի պաշտպան Ռ.Հակոբյանի միջնորդությունը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն

³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 43-81:

այն մասին, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում կիրառված գրավը և երկրից բացակայելու արգելքը կարող են լինել արդյունավետ միջոց՝ զսպելու ազատության մեջ գտնվելու դեպքում ժիրայր Բրուտյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

22. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ սուկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

23. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի սուկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

23.1 Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում ձևավորել է մոտեցում առ այն, որ փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես հնարավոր պատժի ծանրության վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի ապացույցների վրա հիմնվելով, որոնք կամ կհաստատեն այդ վտանգի ամկայությունը, կամ կհաստատեն, որ վտանգն այնքան փոքր է, որ արդյունքում դրանով անհնար է հիմնավորել նախնական կալանքը⁴:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ փախուստի վտանգը պետք է գնահատել՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, որոնք կվերաբերեն տվյալ անձի կերպարին, բարոյականությանը, մշտական բնակության վայրին, մասնագիտությանը, ունեցվածքին, ընտանեկան և տարատեսակ այլ կապերին այն երկրի հետ, որում նա ենթարկվում է քրեական հետապնդման⁵:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Panchenko v. Russia* գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 106:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Becciev v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/09, կետ 58:

Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով վարույթը խոչընդոտելու հիմքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ կազմակերպված հանցավոր գործունեությանը կամ հանցախմբերին առնչվող գործերով կալանավորված անձին ազատ արձակելու դեպքում նրա կողմից գործով վկաների կամ գործով անցնող այլ կասկածյալների վրա ճնշում գործադրելու կամ վարույթն այլ կերպ խոչընդոտելու ռիսկը հաճախ հատկապես բարձր է⁶:

24. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կարարանը (...) խախտման միջոց կարող է/ կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են սրախ ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճատների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կարարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանաւրվութունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խախտման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...):»:

24.1. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խախտման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Stvrtecky v. Slovakia* գործով 2018 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 55844/12, կետ 61:

տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁷:

24.2. Ընդ որում, Վճռաբեկ դատարանն *Արամ Ճուղոյանի* գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն սպառնալից մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգրնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաձև վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխանակներ»⁸:

24.3. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղազրկվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող նյութ հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի

⁷ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճուղոյանի* գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁹:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Ժիրայր Բրուտյանին ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու համար¹⁰,

– Առաջին ատյանի դատարանը մերժել է ամբաստանյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունը, գտնելով, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազատության մեջ մնալու ղեպքում ամբաստանյալի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը՝ հաշվի առնելով Ժ.Բրուտյանին մեղսագրված արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործով դատաքննությունը չի սկսվել, վկաները դեռևս չեն հարցաքննվել¹¹,

– Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ մեղադրյալ Ժ.Բրուտյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել 10.000.000 ՀՀ դրամի չափով գրավ սահմանելու և համակցված՝ չբացակայելու արգելք կիրառելու պայմաններում, արձանագրել է, որ օբյեկտիվ չափանիշներից չեն բխում Առաջին ատյանի դատարանի հետևություններն առ այն, որ մեծ է ազատության մեջ մնալու ղեպքում ամբաստանյալ Ժ.Բրուտյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը¹²:

26. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 22-24.3-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի և երկրից բացակայելու արգելքի համակցված կիրառմամբ ամբաստանյալ Ժ.Բրուտյանի պատշաճ վարքագիծն ապահովելու հնարավորության վերաբերյալ հետևության հանգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել սույն գործում առկա մի շարք հանգամանքներ: Մասնավորապես՝

– ամբաստանյալ Ժ.Բրուտյանին մեղսագրվում է ծանրացնող հանգամանքով կատարված առանձնապես ծանր հանցագործություն, որը պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով,

– ամբաստանյալ Ժ.Բրուտյանին մեղսագրվող՝ կազմակերպված հանցավորության դրսևորում հանդիսացող արարքը, օժտված է բարձր

⁹ Տեն Վճռաբեկ դատարանի՝ Վահագն Պողոսյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԳ-1/0062/06/12 որոշումը:

¹⁰ Տեն սույն որոշման 17-րդ կետը:

¹¹ Տեն սույն որոշման 18-րդ կետը:

¹² Տեն սույն որոշման 19-րդ կետը:

լատենտայնությամբ, և ոտնձգում է այնպիսի կարևոր արժեքի դեմ, ինչպիսին է հասարակական անվտանգությունը,

– մեղագրվող ենթադրյալի անցագործությունում անձի դերակատարությունը. այն, որ ըստ առաջադրված մեղադրանքի՝ ամբաստանյալ Ժ.Բրուտյանն իրականացրել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման ղեկավարում,

– արտերկրում կայուն կապեր¹³, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և այլ երկրների տարածքներում լայն քրեական կապեր¹⁴ ունենալու վերաբերյալ փաստական տվյալների առկայությունը,

– ամբաստանյալ Ժ.Բրուտյանը ենթադրաբար հանդիսանում է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող անձ¹⁵, որպիսի հանգամանքը ևս էական նշանակություն ունի վերջինիս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը գնահատելիս¹⁶:

Նշված հանգամանքները, գործի նյութերից բխող մյուս հանգամանքների համատեքստում, հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր: Ընդ որում, անհրաժեշտ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալի խափանման միջոցի հարցը լուծելիս սույն գործով դատաքննությունը դեռևս չէր սկսվել, որևէ ապացույց դատաքննությամբ չէր հետազոտվել, իսկ Ժ.Բրուտյանին մեղսագրվում է հանցավոր արարք, որը ենթադրաբար կատարվել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման այլ անդամների հետ համատեղ: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը բավարար հիմքեր է ունեցել ենթադրելու, որ Ժ.Բրուտյանը, մնալով ազատության մեջ, կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը:

Այլ կերպ ասած, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում Առաջին ատյանի դատարանի՝ ամբաստանյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի կանխման առումով կալանավորման անհրաժեշտության մասին եզրահանգումը հիմնավոր է և բխում է գործի՝ գնահատման ենթակա տվյալների ամբողջությունից:

Այս առումով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև կրկնել նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս, Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լինի ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենա պատճառաբանվածության առավել բարձր աստիճան: Հակառակ մոտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, կարող է իր բացասական

¹³ Տե՛ս սույն որոշման 19-րդ կետը:

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ժիրայր Բրուտյանի* գործով 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԴ/0279/06/21 որոշման 16-րդ կետը:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ «Օրենքով գող»-երի հանրային վտանգավորության վերաբերյալ տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ashlarba v. Georgia* գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 45554/08, կետ 23:

ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը¹⁷:

26.1. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ժ.Բրուտյանի կալանքի տակ գտնվելու տևողության վերաբերյալ պաշտպան Հ.Բարայանի փաստարկին¹⁸, ապա Վճռաբեկ դատարանն այդ առնչությամբ հարկ է համարում նշել, որ խափանման միջոցի կիրառման տևողությունը դրա համաչափության գնահատման ինքնավար գործոն չէ և պետք է գնահատման ենթարկվի հաշվի առնելով նաև գործի բնույթն ու բարդության աստիճանը: Անձի ոչ իրավաչափ վարքագիծը կանխարգելող միջոցների կիրառման համատեքստում այսպիսի մոտեցում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ ինքնին կանխարգելիչ միջոցների կիրառման տևողությունը բավարար չէ եզրահանգելու համար, որ այն համաչափ չէ¹⁹: Տվյալ դեպքում՝ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ժ.Բրուտյանի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը չի կարող համարվել վերջինիս ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոն:

26.2. Անդրադառնալով ամբաստանյալ Ժ.Բրուտյանի անձը բնութագրող տվյալներին²⁰ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք, սույն որոշմամբ արձանագրված փաստական տվյալների պայմաններում, ողջամտորեն չեն կարող դիտարկվել որպես բավարար հակակշռող գործոններ՝ Ժ.Բրուտյանի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը չեզոքացնելու համար:

27. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ժ.Բրուտյանի կողմից քրեական օրենքով նախատեսված հանցանք կատարելու հիմքի առկայության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին²¹, ապա Վճռաբեկ դատարանը գրկված է նշված հարցին անդրադառնալու հնարավորությունից՝ հաշվի առնելով, որ այդ հիմքի բացակայությունը հաստատող՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ, դատախազը հատուկ վերանայման վերաքննիչ բողոք չի ներկայացրել, ինչի մասին իրավացիորեն նշել է նաև պաշտպան Հ.Բարայանը՝ վճռաբեկ բողոքի պատասխանում²²:

28. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում կիրառված գրավը և երկրից բացակայելու արգելքը կարող են լինել արդյունավետ միջոց՝ զսպելու ազատության մեջ

¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արման և Արքա Մարտիրոսյանների* գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԲԳ/0152/01/19 որոշումը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

¹⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bulea v. Romania* գործով 2013 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 27804/10, կետ 62:

²⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 43-81:

²¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

գտնվելու դեպքում Ժիրայր Բրուտյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը, հիմնավոր չէ:

29. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել են վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը կայացնելիս թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմանը²³՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի գումարն անհրաժեշտ է վերադարձնել գրավատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ժիրայր Խաչիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Գրավի գումարը վերադարձնել գրավատուին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

²³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18, Ավաթ Ամինիի գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

40.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԴ/1241/01/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

24 մարտի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ մեղադրյալ Վասակ Մկրտիչի Գագանճյանի պաշտպան Ա.Մանուկյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2022 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով ավագ դատախազ Խ.Երեմյանը հաստատել է թիվ 69116422 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունն ըստ մեղադրանքի՝ Վասակ Մկրտիչի Գագանճյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, և մյուսների ու վարույթի նյութերն ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. 2022 թվականի օգոստոսի 25-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ ստանձնել է թիվ ԵԴ/1241/01/22 քրեական գործի վարույթը և

նախնական դատական լուսմների ընթացքում, քննության առնելով մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու կամ խափանման միջոց կիրառելու հարցը՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը երկարաձգել է 3 (երեք) ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Վ.Գազանճյանի և նրա պաշտպան Ա.Մանուկյանի հատուկ վերանայման բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը(այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ հատուկ վերանայման բողոքները մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին աստիճանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Վ.Գազանճյանի պաշտպան Ա.Մանուկյանը հատուկ վերանայման վճռաբեկ բողոքներ է բերել, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և սահմանվել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը, մատնանշելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, քրեադատավարական իրավանորմեր, նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, այն է՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը սույն դատական վարույթով իրավասու դատարան չէր, քանի որ մինչդատական վարույթում միացված վարույթներից մեկը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ուստի այն քննելու իրավասությունը պատկանում էր Հակակոռուպցիոն դատարանին:

Վերոնշյալի հիման վրա բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը 2022 թվականի օգոստոսի 25-ին թիվ ԵԴ/1241/01/22 դատական վարույթը ստանձնելուց հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նախնական դատալուսմների ընթացքում պարտավոր էր որոշում կայացնել թիվ ԵԴ/1241/01/22 դատական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին, ինչը, սակայն, չի արել: Հետևաբար, բողոքաբերը հանգել է հետևության, որ մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը երեք ամիս ժամկետով երկարաձգելու մասին 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը կայացվել է ոչ իրավասու դատարանի կողմից:

Բացի այդ, բողոքները նշել է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ ընդդատության կանոնի խախտումը հատուկ վերանայման բողոքի շրջանակներում ենթակա չէ քննության՝ անհամատեղելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված սկզբունքի հետ:

6. Արդյունքում, բողոքները եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և անվերապահորեն դատական ակտը բեկանելու հիմք են հանդիսանում:

Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, կայացնել նոր դատական ակտ՝ Վ.Գազանճյանին ազատելով կալանքից:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանը, նախնական դատական լուումների ընթացքում, քննության առնելով մեղադրյալ Վասակ Գազանճյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու կամ խափանման միջոց կիրառելու հարցը, 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է՝ «(...) Բնատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Վասակ Գազանճյանի կողմից ազատության մեջ հայտնվելու դեպքում փախուստի դիմելու բարձր հավանականությունը շարունակում է առկա լինել և խափանման միջոցի կիրառման մյուս հիմքի՝ սպացուցման գործընթացին խոչնդորելու հավանականության առկայության պայմաններում, այլընտրանքային խափանման միջոց գրավի, այդ թվում՝ Վասակ Գազանճյանին սեփականության իրավունքով պարկանոդ՝ 84.600.000 ՀՀ դրամ արժողությամբ ք. Երևան, Նորք-Մարաշ 6-րդ փողոց, 2-րդ նրբ., թիվ 18 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի գրավադրմամբ, չի կարող սպահովվել վերջինիս պատշաճ վարքագիծը քրեական վարույթի քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծն սպահովվելու նպատակով անհրաժեշտ է երկարացնել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի՝ կալանավորման ժամկետը՝ 3 ամիս ժամանակով (...):»¹:

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումն անփոփոխ թողնելով, նշել է՝ «(...) Անդրադատնալով հարուկ վերանայման բողոքի փաստարկին առ այն, որ թիվ ԵԴ/1241/01/22 դատական վարույթով 2022 թվականի սեպտեմբերի 14-ի դատական նիստը շարունակելով առանց մեղադրյալ Դավիթ Թադևոսյանի պաշտպանի, վերջինիս, այսինքն՝ դատավարական ինքնուրույն սուբյեկտ հանդիսացող անձին զրկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի վերաբերյալ դատավարական դիրքորոշում հայտնելու հնարավորությունից,

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 62:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նշված փաստարկեր որևէ կերպ կասկածի տակ չի դնում մեղադրյալ Վասակ Մկրտիչի Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը երեք ամսով երկարացնելու մասին Առաջին ասրյան դատարանի հետևությունների իրավաչափությունը, հաշվի առնելով, որ վերջինիս պաշտպանական իրավունքի խախտում Առաջին ասրյանի դատարանի կողմից թույլ չի տրվել:

(...) Անդրադառնալով պաշտպանական կողմի փաստարկներին առ այն, որ մեղադրյալ Վասակ Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը երեք ամսով երկարացնելու մասին 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը կայացվել է ընդդատության վերտիչյալ կանոնների խախտմամբ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թեև օրենսդիրն ընդդատության կանոնների խախտումը նախատեսել է որպես դատական ակտի անվերսպահ բեկանման հիմք, ինչպես նաև հնարավորություն տվել վերաքննիչ դատարանին նման խախտման առկայության դեպքում ի շահ մեղադրյալի դուրս գալ բողոքի հիմքերի սահմաններից, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նշված իրավակարգավորումները վերաբերելի են բացառապես վերաքննությանը, ըստ այդմ նաև վերաքննիչ բողոքին:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանք ըստ էության դուրս են գրնվում հատուկ վերանայման ինստիտուտի խնդիրների սահմաններից, հաշվի առնելով այն էական հանգամանքը, որ օրենսդիրը հարակ տարանջատում է դրել ինչպես «վերաքննություն» և «հարուկ վերանայում», այնպես էլ «վերաքննիչ բողոք» և «հարուկ վերանայման բողոք» հասկացությունների միջև: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, հարուկ վերանայման կառուցակարգի շրջանակներում ներկայացված փաստարկների գնահատման իրականացումն անթույլատրելի է և այս փուլում դրանց գնահատումը կարող է հետագայում կանխորոշիչ դեր ունենալ գործն ըստ էության քննության առնող դատարանի եզրահանգումների համար:

Վերոշարադրյալի հիման վրա, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Վասակ Մկրտիչի Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը 3/երեք/ամիս ժամկետով երկարացնելով՝ Առաջին ասրյանի դատարանը թույլ չի տրվել դատական սիսալ, այդ թվում նաև քրեադատարակական օրենքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ գործի էլքի վրա, և գործով կայացրել է ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ (...):»²:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական

² Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 12-29:

հարցը հետևյալն է. արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իրավասու էր Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը 3 (երեք) ամիս ժամկետով երկարաձգելու մասին որոշում կայացնել, այն դեպքում, երբ Վ.Գազանճյանին մեղսագրվել է նաև կոռուպցիոն բնույթ ունեցող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանք:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) ձևավորել է կայուն նախադեպային իրավունք առ այն, որ դատարանը ցանկացած դեպքում պետք է լինի *«օրենքի հիման վրա սրտեղծված»:* Տվյալ արտահայտությունն արտացոլում է իրավունքի գերակայության սկզբունքը, որը ներհատուկ է Եվրոպական կոնվենցիայով և կից Արձանագրություններով սահմանված պաշտպանության համակարգին³: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով *«օրենքը»* ներառում է ոչ միայն դատական մարմինների կազմավորումն ու իրավասությունը նախատեսող օրենսդրությունը⁴, այլ նաև ցանկացած այլ նորմ, որի խախտումը ոչ օրինական կդարձնի մեկ կամ մի քանի դատավորների մասնակցությունը գործի քննությանը⁵:

«Օրենքի հիման վրա սրտեղծված» եզրույթը վերաբերում է ոչ միայն ինքնին դատարանի առկայության իրավական հիմքին, այլ նաև դրա համապատասխանությանն այն կարգավորող նորմերին⁶ և յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանի կազմին⁷: Հետևաբար, եթե ներպետական օրենսդրության կիրառելի նորմերին համապատասխան ամբաստանյալի

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jorgic v. Germany* գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 74613/01, կետ 64, *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Lavents v. Latvia* գործով 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58442/00, կետ 114:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorguiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/04, կետ 68, *Pandjikidze and Others v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ, գանգատ թիվ 30323/02, կետ 104:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sokurenko and Strygun v. Ukraine* գործով 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 29458/04 and 29465/04, կետ 24:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Buscarini v. San Marino* գործով 2000 թվականի մայիսի 4-ի որոշումը:

գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, ապա 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով այդ դատարանը չի համարվում «օրենքի հիման վրա ստեղծված»⁸:

11.2. Պարզելու համար, թե արդյոք խախտվել է օրենքի հիման վրա ստեղծված դատարան ունենալու պահանջը, Եվրոպական դատարանը կիրառում է գնահատման եռաստիճան թեստ: Այսպես, Եվրոպական դատարանը նախ գնահատում է, թե արդյոք կոնկրետ դեպքում դատարանի (դատական կազմի) ձևավորումն ունեցել է իրավական հիմքեր: Այնուհետ դատարանն անդրադառնում է այն հարցին, թե արդյոք իրացված է «*օրենքի հիման վրա ստեղծված դատարան*» սկզբունքով նախատեսված այն երաշխիքը, որ դատարանի կազմավորումը չպետք է կախված լինի գործադիր իշխանությունից, և չի կարող նաև միայն կախված լինել դատական իշխանության հայեցողությունից: Եվ, ի վերջո, Եվրոպական դատարանը քննարկում է, թե արդյոք թույլ է տրվել **ներպետական օրենքի էական խախտում**: Եվրոպական դատարանն ընդգծում է, որ, որպես կանոն, դատական մարմինների կազմավորման և իրավասության վերաբերյալ դրոյթների անտեսումը խախտում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը: Ուստի, յուրաքանչյուր դեպքում Եվրոպական դատարանը քննարկում է, թե արդյոք պահպանվել է վերաբերելի ներպետական օրենքը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ընդհանուր այն սկզբունքը, որ առաջին հերթին ազգային դատարանները պետք է մեկնաբանեն ներպետական օրենսդրությունը, Եվրոպական դատարանը կասկածի տակ չի դնում այդ մեկնաբանությունը, քանի դեռ թույլ չի տրվել ներպետական օրենքի էական խախտում⁹:

11.3. Վերոգրյալի հետ մեկտեղ, Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները հավասարապես տարածվում են նաև 5-րդ հոդվածի վրա¹⁰: Մասնավորապես, գործերից մեկով Եվրոպական դատարանը փաստել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «դատարան» եզրույթը պետք է մեկնաբանել որպես մարմին, որն ունի անկախության և անկողնակալության այն որակները, որոնք պահանջվում են 6-րդ հոդվածում նշված «դատարանից»¹¹:

⁸ Տե՛ս Մարո իրավունքների եվրոպական դատարանի՝ *Lavents v. Latvia* գործով 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58442/00, կետ 114, *Pandjikidze and Others v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 30323/02, կետ 104, *Posokhov v. Russia* 2003 թվականի մարտի 4-ի վճիռը, գանգատ թիվ 63486/00, կետ 39, *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *DMD GROUP, a.s. v. Slovakia* գործով 2010 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 19334/03, *Coëme and Others v. Belgium* 2000 թվականի հունիսի 22-ի վճիռը, գանգատներ թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 and 33210/96, կետ 98, *Lavents v. Latvia* գործով 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58442/00, կետ 114):

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Stephens v. Malta (no. 1)* գործով 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռը, գանգատ թիվ 11956/07, կետ 95, *R.M.D. v. Switzerland* գործով 1997 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 19800/92, կետ 42:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ali Osman Özmen v. Turkey* գործով 2016

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը հաստատել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ դատարանը ցանկացած դեպքում պետք է լինի «օրենքի հիման վրա ստեղծված»: Հակառակ դեպքում, օրենսդրության հիման վրա չստեղծված մարմինը գուրկ կլինի ժողովրդավարական հասարակությունում անհատական բողոքներ քննելու համար պահանջվող լեգիտիմությունից¹²:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Արդարադատությունը, դատախազական հսկողությունը, նախաքննությունը, հետաքննությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»:*

Վերոշարադրյալ իրավադրույթների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմնի կողմից իր գործի քննության իրավունքն ունի հիմնարար նշանակություն, արտահայտվում է գործերի քննության պատշաճ ենթակայության և ընդդատության կանոնների պահպանմամբ և կազմում է արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը: Ընդ որում, վերահաստատելով *Գևորգ Հարությունյանի* և *Դավիթ Հակոբջանյանի* գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դրանցից պատշաճ ընդդատության կանոնների պահպանումը հիմնարար իրավական արժեք է և բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ասպեկտներով պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն,

թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 42969/04, կետ 87:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *BAŞ v. TURKEY* գործով 2020 թվականի մարտի 3-ի վճիռը, գանգատ թիվ 66448/17, կետ 266:

և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել¹³:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանը՝ 2022 թվականի օգոստոսի 25-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/1241/01/22 քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին¹⁴,

- Առաջին ատյանի դատարանը, նախնական դատական լսումների ընթացքում, քննության առնելով մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու կամ խափանման միջոց կիրառելու հարցը, 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը երկարաձգել է 3 (երեք) ամիս ժամկետով¹⁵,

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, նշել է, որ գործով ընդդատության կանոնների խախտման հարցն ըստ էության դուրս է գտնվում հատուկ վերանայման ինստիտուտի խնդիրների սահմաններից: Դատարանն արձանագրել է, որ մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը 3 (երեք) ամիս ժամկետով երկարացնելով, Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել դատական սխալ, այդ թվում նաև՝ քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ գործի ելքի վրա, և գործով կայացրել է ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ¹⁶:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկվել գործի փաստական հանգամանքները՝ անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմնի կողմից իր գործի քննության հիմնարար իրավունքն ապահովելու համար:

Մասնավորապես, Վ.Գազանճյանին մեղսագրված ենթադրյալ հանցագործություններից մեկը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված, նույն օրենսգրքի հավելված N 1-ի համաձայն, կոռուպցիոն հանցանք է: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը, նախնական դատալսումների ընթացքում, անդրադառնալով վարույթի ընդդատության հարցին, պետք է քննարկման առարկա դարձներ այն ըստ ընդդատության

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10, *Գավիթ Հակոբջանյանի* գործով 2023 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԴ/0077/06/20 որոշումները:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

փոխանցելու հարցը՝ ղեկավարվելով այդպիսի պահանջ սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262 -րդ հոդվածի 2-րդ և 263-րդ հոդվածի 1-ին մասերով: Նման պայմաններում, Առաջին ատյանի դատարանի կողմից Վ.Գազանճյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցի լուծումը կարող էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 3-րդ մասով քննարկման առարկա դարձվել միայն դրա անհետաձգելի անհրաժեշտությունը հիմնավորելու դեպքում:

Մինչդեռ, տվյալ դեպքում, Առաջին ատյանի դատարանը, նախնական դատախոսների ընթացքում, քննարկման առարկա չի դարձրել վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հարցը, փոխարենը քննարկել է Վ.Գազանճյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու շարունակականության հարցը՝ առանց դրա անհետաձգելի անհրաժեշտությունը հիմնավորելու, և շարունակել է գործի քննությունը՝ նշանակելով դատական նիստեր¹⁷ այն դեպքում, երբ Վ.Գազանճյանին մեղսագրվող կոռուպցիոն բնույթի հանցանքով քրեական վարույթը ենթակա էր քննության բացառապես համապատասխան մասնագիտացում ունեցող հակակոռուպցիոն դատարանի կողմից: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը լիազորված չէր քննելու մեղադրյալ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը երկարաձգելու հարցը, քանի որ սույն վարույթով չէր հանդիսանում «օրենքի հիման վրա ստեղծված»՝ իրավասու դատարան:

15. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ գործով ընդդատության կանոնների խախտման հարցն ըստ էության դուրս է գտնվում հատուկ վերանայման ինստիտուտի խնդիրների սահմաններից, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նշված փաստարկին և արձանագրում, որ անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը, չի կարող դուրս գտնվել հատուկ վերանայման ինստիտուտի սահմաններից՝ ելնելով այդ իրավունքի հիմնարար նշանակությունից և դրա՝ արդար դատաքննության իրավունքի ելակետը հանդիսանալու հանգամանքից:

16. Հետևաբար, վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իրավասու չէր Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը 3 (երեք) ամիս ժամկետով երկարաձգելու մասին որոշում կայացնել, այն դեպքում, երբ նրան մեղսագրվել էր նաև կոռուպցիոն բնույթ ունեցող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանք:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ Վ.Գազանճյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված

¹⁷ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/1241/01/22 քրեական գործը:

կալանավորման ժամկետը 3 (երեք) ամիս ժամկետով երկարաձգելու մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ չեն:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում, դատական ակտ կայացնելիս, ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտում, ինչը սույն օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Սակայն հաշվի առնելով, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ քրեական գործն ըստ մեղադրանքի Վ.Գազանճյանի ըստ ընդդատության ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան և Վասակ Գազանճյանը գտնվում է ազատության մեջ¹⁸, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտերի բեկանումը չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել Վ.Գազանճյանի իրավունքի խախտման փաստը, իսկ ստորադաս դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել:
2. Ճանաչել Վասակ Մկրտիչի Գազանճյանի իրավունքի խախտման փաստը:
3. Մեղադրյալ Վասակ Մկրտիչի Գազանճյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման օրը:

Նախագահող

ստորագրություն

Դարավորներ

ստորագրություններ

¹⁸ Տե՛ս նյութեր, հատոր 6-րդ, թերթեր 24-24:

41.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

SԴ/0044/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

5 ապրիլի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ ամբաստանյալ Իվան Նիկոլայի Միխայիլովի պաշտպան Մամիկոն Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերի քննիչ Խ.Գրիգորյանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90754518 քրեական գործը:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ Իվան Միխայիլովը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ մեղադրյալ Իվան Միխայիլովի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. 2019 թվականի մայիսի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Իվան Միխայիլովը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Ի.Միխայիլովի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Ի.Միխայիլովի պաշտպան Մ.Մանուկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Ի.Միխայիլովի պաշտպան Մ.Մանուկյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճարելի դատարանը 2023 թվականի մարտի 15-ի որոշմամբ սահմանել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

7.1. Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը, որով Իվան Միխայիլովը մեղադրվում է, նախատեսում է պատասխանատվություն այն դեպքում, երբ անձը խուսափում է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, մինչդեռ սույն դեպքում Իվան Միխայիլովն ինքն է դիմել այլընտրանքային ծառայության անցնելու խնդրանքով, որպիսի հանգամանքը բացառում է վերջինիս գործողությունները որպես ծառայությունից խուսափել դիտարկելու հնարավորությունը:

7.2. Բողոքաբերը նշել է, որ Իվան Միխայիլովը չի խուսափում Հայաստանի Հանրապետության առջև իր պարտքը կատարելուց, նպատակ չի հետապնդում ընդհանրապես ազատվել ծառայությունից, այլ հանդիսանալով մոլորկանների կրոնի հետևորդ՝ ցանկանում է ընտրել իր կրոնական համոզմունքներին չհակադրվող ծառայության տեսակը՝ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը, որը պատրաստ է կատարել պատվով: Ու թեև իրեն

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնել թույլատրելու դիմումը վարչական ակտով մերժվել է, այդուհանդերձ ստեղծվել է մի իրավիճակ, երբ ՀՀ քաղաքացին, կրոնական համոզմունքներից դրդված, ցանկանում է անցնել այլընտրանքային աշխատանքային ծառայության, սակայն տվյալ դեպքում այդ իրավունքի իրացումը դիտարկվում է որպես զինվորական ծառայությունից խուսափել, ինչն ավելի քան անարդար է և ոչ իրավաչափ, քանի որ Իվան Միխաիլովն ինքնակամ է դիմել այլընտրանքային ծառայության անցնելու խնդրանքով, իսկ այլընտրանքային ծառայությունը հավասարեցվում է զինվորական ծառայությանը և դիտվում է որպես պետության առջև ունեցաց պարտավորության կատարում: Այլ խոսքով՝ եթե Իվան Միխաիլովը մտադիր լիներ խուսափել ծառայությունից, ապա վերջինս չէր դիմի այլընտրանքային ծառայության անցնելու խնդրանքով:

7.3. Բողոքաբերը նշել է, որ Իվան Միխաիլովի՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու դիրքորոշումը ոչ մի կերպ չէր կարող և չի կարող դիտարկվել որպես ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, վարժական հավաքից կամ գորավարժանքից խուսափել, հետևաբար վերջինիս նկատմամբ ընդհանրապես չպետք է հարուցվեր սույն քրեական գործը, իսկ հարուցված քրեական գործը ենթակա էր կարճման՝ հանցակազմի բացակայության հիմքով:

7.4. Բողոքաբերը նշել է նաև, որ Իվան Միխաիլովը ունի առողջական լուրջ խնդիր՝ սրտի արատ, որի համար վերջինիս պարբերաբար տրվել է տարկետում, մինչդեռ վերջին հետազոտության արդյունքում նա անհասկանալի կերպով ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար՝ սահմանափակումներով:

7.5. Բողոքաբերը, կասկածի տակ դնելով բժշկական հետազոտության արդյունքները՝ գտնում է, որ Իվան Միխաիլովին զինվորական ծառայության ներգրավելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել վերջինիս առողջության համար: Բողոքաբերը նշել է, որ վերոնշյալի կապակցությամբ իր կողմից միջնորդություն է ներկայացվել Առաջին ատյանի դատարան՝ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, սակայն միջնորդությունը մերժվել է:

7.6. Բողոքաբերը նշել է նաև, որ սույն քրեական գործի քննության ընթացքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, մասնավորապես՝ թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալի իրավունքը, քանի որ իրեն հասկանալի լեզվով մեղադրական եզրակացության թարգմանությունն ամբաստանյալը ստացել է միայն 2021 թվականի հունվարի 18-ին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: Իսկ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում սույն գործը քննվել և ավարտվել է ամբաստանյալի՝ թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքի խախտումով: Այսինքն, Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Իվան Միխաիլովը զրկված է եղել առաջադրված մեղադրանքին իրեն հասանելի և հասկանալի լեզվով ծանոթանալու հնարավորությունից: Արդյունքում

տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմնարար սկզբունքի խախտում, ինչը, անկախ իր հետևանքից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով, սույն գործով կայացված դատավճիռը բեկանելու հիմք է:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմնի որոշմամբ Իվան Միխայիլովին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ նա «2014 թվականի մարտի 3-ին կցագրվելով Դիլիջանի զինկոմիսարիատում և կանգնելով զինվորական հաշվառման 2018 թվականի ամստային գորակոչին ներկայացել է Դիլիջանի զինկոմիսարիատ, անցել բժշկական հետազոտություններ և Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 13-ի եզրակացության համաձայն, ՀՀ Կառավարության 404-Ն որոշմամբ հաստատված ցանկի 26-րդ հոդվածի «Բ» կետի հիմքով ճանաչվել է զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի, որից հետո պարտավոր լինելով 2018 թվականի ամստային գորակոչին ներկայանալ Դիլիջանի զինկոմիսարիատ և գորակոչվել ՀՀ զինված ուժեր՝ չի ներկայացել և խուսափել է ժամկետային զինվորական ծառայության 2018 թվականի ամստային գորակոչից՝ այդ ծառայունից ազատվելով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում»²:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռի համաձայն՝ «(...) Դատարանը դատաքննությանը հետազոտված սպացույցներով հաստատված համարեց, որ Տավրուշի մարզի Դիլիջան քաղաքի բնակիչ, 28.07.1998թ. ծնված Իվան Նիկոլայի Միխայիլովը 2014 թվականի մարտի 03-ին Դիլիջան քաղաքի զինկոմիսարիատի կողմից անցել է բժշկական համապարասխան հետազոտություններ և սահմանված կարգով համապարասխանաբար արացել է 10 և 5 ամիս ժամանակով փարկետումներ: 2018 թվականի մայիսի 16-ին Ի.Միխայիլովը հերթական անգամ ներկայացել է Դիլիջանի զինկոմիսարիատ և անցել սահմանված բժշկական հետազոտություններ, նրա մոտ ախտորոշվել է «Մրդի ուրթի խանգարում» վերիորոքային ուրթմավարի միգրացիա, փորոքային-83 ԷԲՍ/օր, ժամային մինչև 11 ԷԲՍ-Ա, վերիորոքային-4 ԷԲՍ/օր, ՊԲ ԻՆՏ.-0.13-0.18 /Խոլյեր ԷՍԳ/ և 13.07.2018թ. Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից, ՀՀ կառավարության թիվ 404 որոշմամբ հաստատված ցանկի 26 հոդվածի «դ» կետի՝ սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 236:

Ապա, 14.07.2018թ. Բվան Միխաիլովը այլընտրանքային աշխարանքային ծառայության անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել, որը 16.07.2018թ. մուտք է արվել Դիլիջանի գինկոմիսարիատ, որից հետո 17.07.2018թ. վերջինիս անձնական գործը սահմանված կարգով Դիլիջանի գինկոմիսարիատից ուղարկվել է ՀՀ գինկոմիսարիատ կոմիսարիատը՝ այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի քննարկմանը: 2018 թվականի օգոստոսի 07-ին այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը «Պարտադիր գինկոմիսարիատի ծառայությունն այլընտրանքային ծառայությանը փոխարինելու և այլընտրանքային ծառայության անցնողների ծառայության վայրը փոխելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով քննարկել և մերժել է՝ դիմումի սկսնակը անհիմն լինելու պարճառով: Դրանից հետո Դիլիջանի գինկոմիսարիատի կողմից Բվան Միխաիլովին ծանուցագիր է հասցեագրվել՝ 11.08.2018թ.՝ ժամը 09:00-ին, անձնագրով գորակոչային տեղամաս ներկայանալու և ՀՀ Զինված ուժեր գորակոչվելու համար, սակայն վերջինիս հարազարները ծանուցագիրը չեն սրացել, և Միխաիլովը չի ներկայացել գինկոմիսարիատը՝ այդպիսով խուսափելով ժամկետային գինկոմիսարիատի ծառայության 2018 թվականի ամսուային գորակոչից՝ այդ ծառայությունից ազարվելու համար ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

(...)

Այսինքն՝ Բվան Նիկոլայի Միխաիլովը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված արարք: (...)»³:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 11-ի որոշման համաճայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը, պարշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում արուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված սպացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր սպացույց գնահարելով թույլարելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությանը՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկլարվարվելով օրենքով, ներքին համոզմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով ամբարարանյալ Բվան Միխաիլովի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հերևության:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբարարանյալ Բվան Նիկոլայի Միխաիլովի պաշտպան Մամիկոն Մանուկյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին արյանի դատարանի դատարավճիրը (...)»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կողմից խախտվել է արդյո՞ք

³ Տն քրեական գործ, հատոր 3, թերթեր 41-45:

⁴ Տն քրեական գործ, հատոր 5, թերթեր 108-128:

մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալ Իվան Միխայիլովի իրավունքը:

13. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

(...)

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

14. Իրեն հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նշել է, որ մեղադրյալը, ով չի կարողանում հասկանալ կամ խոսել դատավարության լեզվով, իրավունք ունի ստանալու թարգմանչի անվճար ծառայություն կամ վարույթի փաստաթղթերի կամ արձանագրությունների թարգմանություններ, ինչը նրան անհրաժեշտ է՝ օգտվելու համար արդար դատաքննության իրավունքից⁵:

14.1. *Կաննահինսկին ընդդեմ Ավստրիայի* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը չի ենթադրում քրեական դատավարությունում առկա բոլոր նյութերի, ապացույցների կամ պաշտոնական փաստաթղթերի գրավոր թարգմանություն: Թարգմանչի օգնությունը պետք է ապահովվի այնքանով, որ մեղադրյալը տեղեկացվի իր դեմ առկա գործի մասին և կարողանա կազմակերպել իր պաշտպանությունը⁶:

14.2. *Կուսկանին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի՝ թարգմանչական ծառայություններից օգտվելու անհրաժեշտության ստուգման համար, դատավորը պետք է խորհրդակցի դիմումատուի հետ և պետք է համոզված լինի, որ գործի լուսման ժամանակ թարգմանչի բացակայությունը չի վնասի դիմումատուի լիարժեք ներգրավվածությանը նրա համար վճռորոշ գործում⁷:

15. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 15-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luedicke, Bekacem and Koc v. Germany* գործով 1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6210/73, 6877/75, 7132/75, կետ 48:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kamasinski v. Austria* գործով 1989 դեկտեմբերի 19-ի վճիռը, 9783/82, կետ 74:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cuscani v. the United Kingdom* գործով 2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 32771/96, կետ 38:

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե սպահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի րհրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին սպահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին սպահովել թարգմանությունը: (...):»:

15.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հասարակելով մեղադրական եզրակացությունը դատախազը գործն ուղարկում է այն դատարան, որին գործն ընդարպյա է:

3. Միաժամանակ, դատախազը մեղադրյալին, իսկ միջնորդության դեպքում նաև պաշտպանին, րոժողին և դատավարության այլ պարշաձ մասնակիցներին սորոագրությանը հանձնում է մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հասարակած պարձենները: Եթե մեղադրական եզրակացության մեջ կամ դրան կցված հավելվածներում կարարվել են փոփոխություններ, սպա մեղադրական եզրակացությունը ներկայացվում է միայն վերջին խմբագրությամբ: Եթե դատախազի որոշմամբ մեղադրական եզրակացությունը փոփոխվել է, սպա ներկայացվում է նաև դատախազի համապարասիան որոշման պարձենը:

4. Քրեական դատավարության լեզվին չրհրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից սորոագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հասարակած թարգմանությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական նիստի նախապատրաստական մասը» խորագիրը կրող 42-րդ գլխում զետեղված 323-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նախագահողը հարցնում է ամբաստանյալին, թե նրան հանձնված է արդյոք մեղադրական եզրակացության պարձենը և երբ է հանձնված: Եթե նշված փաստաթուղթը հանձնված չէ, դատական նիստը հետաձգվում է երեք օրով ամբաստանյալին հանձնելով մեղադրական եզրակացության պարձենը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ «Դատավձիոր բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե (...) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգրվելու ամբաստանյալի իրավունքը»:

16. Վերոնշյալ նորների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, դատական պաշտպանության իրավունքի համատեքստում որպես անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի երաշխիք, քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին իրավունք է վերապահել քրեական դատավարության ընթացքում հանդես գալ իր նախընտրած լեզվով՝ միաժամանակ սահմանելով դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց թարգմանչի ծառայություններով սպահովելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, բացառությամբ, երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին սպահովել թարգմանությունը:

17. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախադեպային իրավունքում ձևավորած իր դիրքորոշումն առ այն, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը պետք է ապահովվի դատավարության բոլոր փուլերում: Քրեական դատավարության լեզվի սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմինն պարտավորեցնում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց ոչ միայն պարզաբանել իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը, այլև դրա իրականացումն ապահովել այնպես, որ չսահմանափակվեն և գործնականում իրագործվեն ինչպես գործի քննության ցանկացած փուլում իրենց նախընտրած լեզվով հանդես գալու, այնպես էլ՝ մյուս բոլոր այն իրավունքները, որոնք փոխկապակցված են այդ իրավունքի հետ և երաշխավորված են օրենքով⁸:

18. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքի համատեքստում Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների լրացուցիչ երաշխիքների շարքում քրեադատավարական օրենսդրությունն առանձնացնում է տվյալ անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն իրենց համար հասկանալի լեզվով տրամադրելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը: Հանձնման ենթակա փաստաթղթերի ներքո պետք է հասկանալ ոչ թե քրեական գործում առկա բոլոր փաստաթղթերը, այլ միայն նրանք, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ ենթակա են հանձնման և անհրաժեշտ ու բավարար են անձի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից⁹:

18.1. Վճռաբեկ դատարանը մեղադրյալի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման տեսանկյունից ընդգծելով մեղադրական եզրակացության կարևորությունը, *Սուրեն Նալբանդյանի* գործով փաստել է, որ «*Մեղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել*

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նսիրա Գելաշվիլու* գործով 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07, *Գևորգ Խաչատրյանի* և *Սամվել Քրմոյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0059/01/14 որոշումները:

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սուրեն Խաչատրյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ 21/32-313-17 որոշման 24-րդ կետը:

և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում»¹⁰:

19. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ նախընտրելի լեզվով հանդես գալու անձի իրավունքը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման նախադրյալ է, որն ապահովում է վերջինիս՝ գործնականում իրատեսական և իրագործելի լինելը: Քննարկվող իրավունքի օրենսդրական երաշխիքների չապահովումը քրեադատավարական օրենքի էական խախտում է, որը նախատեսված է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ):

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Ի.Միխայիլովը քրեական դատավարության լեզվին չի տիրապետում և այդ պատճառով, ինչպես մինչդատական վարույթի ընթացքում, այնպես էլ Առաջին ստյանի և Վերաքննիչ դատարաններում, հայերենից-ռուսերեն և ռուսերենից-հայերեն թարգմանություն կատարելու համար վարույթն իրականացնող մարմինները ներգրավել են թարգմանիչ,

– մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը Ի.Միխայիլովին հանձնվել է միայն այն բանից հետո, երբ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի դատական նիստի ժամանակ պաշտպանը հայտարարել է, որ Ի.Միխայիլովը մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը չի ստացել¹¹,

– Վերաքննիչ դատարանը, պարզելով, որ մեղադրական եզրակացության՝ ռուսերեն լեզվով թարգմանությունը Ի.Միխայիլովին չի հանձնվել, և այդպիսին քրեական գործում առկա էլ չէ, նույն օրը՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կայացած դատական նիստում որոշել է գործի քննությունը հետաձգել՝ մինչև հիշյալ փաստաթուղթն ամբաստանյալին հանձնելը,

– մեղադրական եզրակացության՝ ռուսերեն թարգմանված և վավերացված օրինակը Վերաքննիչ դատարանը պաշտպանության կողմին հանձնել է 2021 թվականի հունվարի 18-ին¹²:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մեղադրական եզրակացության թարգմանված օրինակը մեղադրյալ Ի.Միխայիլովին չհանձնելու արդյունքում վերջինս զրկվել է իր պաշտպանության իրավունքը լիարժեք իրացնելու հնարավորությունից և խախտվել է նրա՝ թարգմանիչի ծառայություններից օգտվելու և իրեն հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքը:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սուրեն Նալբանդյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԲԲԴՉ/0144/01/09 որոշման 24-րդ կետը:

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 45:

¹² Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 6:

Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում ինչպես քրեական հետապնդման մարմնի, այնպես էլ Առաջին ատյանի դատարանի նման մոտեցումը, հատկապես այն պայմաններում, երբ Առաջին ատյանի դատարանի համար ակնհայտ է եղել Ի.Միխայիլովի կողմից դատավարության լեզվին չտիրապետելու հանգամանքը, որի մասին է վկայում այն, որ Առաջին ատյանի դատարանը թարգմանիչ ներգրավելու մասին որոշում է կայացրել:

22. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ: Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև Ի.Միխայիլովի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից վերոգրյալ դատավարական խախտումներին Վերաքննիչ դատարանի կողմից անդրադարձ չկատարելու փաստը, հատկապես այն պայմաններում, երբ պաշտպանը Վերաքննիչ դատարանի դատական նիստում մատնանշել է իր պաշտպանյալի՝ վերը նշված իրավունքը խախտված լինելու հանգամանքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել է մեղադրյալ Ի.Միխայիլովի՝ մայրենի լեզվից և թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքը:

23. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ի.Միխայիլովի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում ստորադաս դատարանը պետք է ապահովի օրենսդրությամբ նախատեսված բոլոր երաշխիքների իրագործման հնարավորությունը և գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հանգի համապատասխան հետևության:

24. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ի.Միխայիլովին մեղսագրվող արարքի հիմնավորվածության վերաբերյալ վճռաբեկ բողոքի հեղինակի փաստարկներին¹³, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ,

¹³ Տե՛ս սույն որոշման 7-7.5-րդ կետերը:

361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Իվան Նիկոլայի Միխայիլովի վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Իվան Նիկոլայի Միխայիլովի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

42.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0034/13/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

6 ապրիլի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 5-ի որոշման դեմ դատապարտյալ Արտուշ Մերյոժայի Շահնազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով Արտուշ Մերյոժայի Շահնազարյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 296-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետով է 10 (տասը) ամիս ժամկետով, և թույլատրվել է նշված ժամկետում այն վճարել մաս առ մաս՝ ամսական 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

1.1. ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի պետը 2020 թվականի հոկտեմբերի 28-ին միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)

պրոբացիայի շահառու Արտուշ Շահնագարյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով սահմանված՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանը՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի պետի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի միջնորդությունը և դատապարտյալ Ա.Շահնագարյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով նշանակված՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանք պատժատեսակը փոխարինել է 2.200 (երկու հազար երկու հարյուր) ժամ հանրային աշխատանքներ պատժատեսակով:

3. Դատապարտյալ Ա.Շահնագարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ սակ Վերաքննիչ դատարան) 2022 թվականի հունվարի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Շահնագարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ և 74-րդ հոդվածների դրույթերը՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել և կիրառել վերոնշյալ իրավական նորմերը, ինչի արդյունքում կայացվել է սխալ դատական ակտ: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը քննության առնելու ժամանակ հայտնել է, որ մեկնել է արտագնա աշխատանքի, նոր է վերադարձել, պատրաստվում է տուգանքն ամբողջությամբ վճարել և խնդրել է տրամադրել լրացուցիչ 10 օր ժամանակ: Իսկ 2021 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով սահմանված տուգանքը՝ 500.000 ՀՀ դրամը, ամբողջությամբ վճարել է, որի վճարման մասին

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

անդորրագրի բնօրինակը նույն օրը ներկայացրել է՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն: Սակայն Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տուգանքը վճարելու պարտավորությունը այլևս եղել է դադարած, իսկ տուգանք պատիժը՝ փոփոխված, հետևաբար այն վճարելը եղել է առարկայագուրկ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունվարի 5-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին աստիճանի դատարանը 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ արձանագրել է, որ «(...) ՀՀ Լոռու մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դադարանը 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով ամբաստանյալ Արտուշ Սերյոժայի Շահնազարյանին մեղապարտ է ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պարիժ է նշանակել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի հիման վրա նշանակված տուգանքի վճարումը տարածամեկտրվել է 10 (տասը) ամիս ժամկետով, և թույլատրվել է նույն ժամկետում այն վճարել մաս առ մաս՝ ամսական 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Դատապարտյալ Ա.Շահնազարյանն իր նկատմամբ նշանակված տուգանքից վճարում չի կատարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գրնում է, որ դատապարտյալ Ա.Շահնազարյանն իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց չարամբորեն խուսափել է:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ քննությանը հասարարվեց դատապարտյալ Ա.Շահնազարյանի կողմից իր նկատմամբ նշանակված տուգանքի վճարումից խուսափելը՝ Դատարանը գրնում է, որ ներկայացված միջնորդությունը պեպք է բավարարել և ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատապարտյալ Ա.Շահնազարյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դադարանի կողմից 28.08.2020թ. դատավճռով նշանակված տուգանքը՝ 500.000 ՀՀ դրամը՝ փոխարինել հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատարժի դիմաց (...)»²:

7.1. Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով սահմանված տուգանքը՝ 500.000 ՀՀ դրամը, դատապարտյալ Ա.Շահնազարյանը 2021 թվականի նոյեմբերի

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 80-81:

29-ին ամբողջությամբ վճարել է և վճարման մասին անդորրագրի պատճենը ներկայացրել Վերաքննիչ դատարան³:

8. Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունվարի 5-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին արյանի դատարանը վիճարկվող որոշումը կայացնելիս համակցության մեջ պատշաճ գնահատել է գործի նյութերը, ինչի արդյունքում բավարարելով դատապարտյալ Արյուշ Շահնազարյանի նկատմամբ նշանակված տուգանք պարիտի հանրային աշխատանքներով փոխարինելու մասին միջնորդությունը՝ հանգել է իրավաչափ հետևության: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ գործում առկա փաստական փյույվները բավարար են փաստարկված դատողություն անելու այն մասին, որ դատապարտյալ Արյուշ Շահնազարյանը չարամորթեն խուսափել է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատավճռի կայացումից հետո՝ դատապարտյալ Արյուշ Շահնազարյանը չի կատարել որևէ վճարում, սահմանված ժամկետում տուգանքի վճարման անհնարինության հանգամանքի վերաբերյալ չի ներկայացրել որևէ հիմնավոր պարճատարանություն: Անդրադատնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ վիճարկվող դատական ակտը կայացնելուց տասն օր անց դատապարտյալը վճարել է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը, հերևարար նրան պետք է ազարել քրեական պարասիանաարվությունից իրադրության փոփոխման հիմքով, սպա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տուգանքը վճարելու պարտավորությունը այլևս եղել է դադարած, իսկ տուգանք պարիտի փոփոխված, հերևարար այն վճարելը եղել է առարկայազուրկ (...)⁴:

Վճռաբեկ դատարանի պատճատարանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք դատապարտյալ Ա.Շահնազարյանի նկատմամբ նշանակված տուգանք պատճատեսակը հանրային աշխատանքներ պատճատեսակով փոխարինելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ «Տուգանքը դրամական տուգանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հարուկ մասով նախարեալված դեպքերում և սույն օրենսգրքով նախարեալված սահմաններում՝ պարիտ նշանակելու պահին Հայասրանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի (այսուհետը՝ նվազագույն աշխատավարձ) երեսնապարիկից երեքհազարապարիկի չափով (...):»:

³ Տեն նյութեր, հատոր 2, թերթ 7:

⁴ Տեն նյութեր, հատոր 2, թերթեր 31-36:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով տուգանքը վճարելու անհնարինության դեպքում՝ հանրային աշխատանքների երեք ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց, իսկ տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքը գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ: Տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարվող հաշվարկի արդյունքում ժամային արժեքները կլորացնելը կատարվում է դատապարտյալի օգրին (...)»:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

– Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Ա.Շահնազարյանի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ, 2021 թվականի նոյեմբերի 19-ի դատական նիստի ընթացքում քննության առնելիս, Ա.Շահնազարյանը խնդրել է տրամադրել լրացուցիչ մեկ ամիս ժամանակ՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով նշանակված տուգանքը վճարելու համար⁵,

– Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի պետի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի միջնորդությունը, և դատապարտյալ Ա.Շահնազարյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով նշանակված տուգանք պատժատեսակը փոխարինել է հանրային աշխատանքներ պատժատեսակով՝ պատճառաբանելով, որ դատապարտյալ Ա.Շահնազարյանը չարամտորեն խուսափել է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց⁶,

– 2021 թվականի նոյեմբերի 29-ին դատապարտյալ Ա.Շահնազարյանն ամբողջությամբ վճարել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով սահմանված տուգանքը, որի վճարման մասին անդորրագրի պատճենը ներկայացրել է Վերաքննիչ դատարան⁷,

– Վերաքննիչ դատարանը 2022 թվականին հունվարի 5-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է իրավաչափ հետևության: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ գործում առկա տվյալները բավարար են փաստարկված դատողություն անելու այն մասին, որ

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, դատական նիստի արձանագրություն, թերթ 79:

⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 7.1. կետը:

դատապարտյալ Ա.Շահնագարյանը չարամտորեն խուսափել է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատավճռի կայացումից հետո, դատապարտյալ Ա.Շահնագարյանը չի կատարել որևէ վճարում, սահմանված ժամկետում տուգանքի վճարման անհնարինության հանգամանքի վերաբերյալ չի ներկայացրել որևէ հիմնավոր պատճառաբանություն: Անդրադառնալով վիճարկվող դատական ակտը կայացնելուց տաս օր անց դատապարտյալի կողմից տուգանքը վճարելու հանգամանքին, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տուգանքը վճարելու պարտավորությունը այլևս եղել է դադարած, իսկ տուգանք պատիժը՝ փոփոխված, հետևաբար այն վճարելը եղել է առարկայագուրկ⁸:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված իրավական նորմերի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո, Ա.Շահնագարյանի գործով ի հայտ է եկել նոր փաստական հանգամանք: Մասնավորապես, Ա.Շահնագարյանը 2021 թվականի նոյեմբերի 29-ին ամբողջությամբ վճարել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով սահմանված տուգանքը և վճարման մասին անդորրագրի պատճենը ներկայացրել է Վերաքննիչ դատարան: Վերոնշյալ հանգամանքը, սակայն, հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելիս:

13. Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 2021 թվականի նոյեմբերի 29-ին Ա.Շահնագարյանի կողմից 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը վճարելու փաստով, վերջինս ամբողջությամբ կրել է իր նկատմամբ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով նշանակված պատիժը: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշման կայացումից հետո առաջացել է այնպիսի փաստական հանգամանք, որի հաշվառմամբ բողոքարկվող դատական ակտը դարձել է ոչ իրավաչափ:

Վերոնշյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատական ակտի իրավաչափության վրա ազդող փաստական հանգամանքի առկայությունը, որը ստորադաս դատարանի թերացման արդյունք չէ, որպես դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք նախատեսվել է նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով⁹:

14. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Շահնագարյանի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ, 372-րդ, 378-րդ, 387-րդ հոդվածները:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս պատշաճ չի գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, որի արդյունքում թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պրոբացիայի շահառու Արտուշ Շահնագարյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով սահմանված՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի պետի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ին միջնորդությունը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Արտուշ Սերյոժայի Շահնագարյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 5-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Դատապարտյալ Արտուշ Շահնագարյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի դատավճռով սահմանված՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի պետի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի միջնորդությունը, մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

43.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/2640/07/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

11 մայիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով դիմող Արա Միքայելի Մինասյանի ներկայացուցիչ Տ.Ղազարյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հուլիսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչությունում հարուցվել է թիվ 69104518 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով ու 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 2-ի որոշումներով Արա Միքայելի Մինասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ բավարարվել է ՀՀ քննչական կոմիտեի հիշյալ վարչության պետի տեղակալի միջնորդությունն ու թույլատրվել ՀՀ Կենտրոնական բանկից առգրավել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում մեղադրյալ Արա Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող որոշակի փաստաթղթեր ու առարկաներ:

3. Ա.Մինասյանի ներկայացուցիչ Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հոկտեմբերի 30-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը բեկանելու և բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության առգրավման թույլտվություն ստանալու վերաբերյալ հիշյալ միջնորդությունը մերժելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Այսպես, ըստ բողոք բերած անձի՝ ազատության իրավունքի ու բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանության իրավական ռեժիմի սահմանափակման իրավաչափության պայմանի՝ հիմնավոր կասկածի գնահատման սահմանները չեն կարող նույնը լինել, վերջինիս դեպքում այն ենթակա է փոփոխման՝ նվազման կարգով:

Հիմք ընդունելով վերը շարադրված դիրքորոշումը՝ բողոքաբերը գտել է, որ միջնորդությանը կից ներկայացված տվյալների համակցությունը, հայցվող միջամտության իրավաչափությանն առաջադրվող հիշյալ պայմանի գնահատման շրջանակներում, բավարար են ենթադրելու, որ Ա.Մինասյանը հիմնավոր կերպով է մեղադրվում ենթադրյալ հանցագործությունների կատարման մեջ: Նշվածի հետ մեկտեղ, բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

կիրառելու միջնորդության քննության արդյունքում հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ դատարանի եզրահանգումը չի կարող դիտարկվել որպես վերաբերելի փաստարկ՝ Ա.Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող փաստաթղթերը և առարկաներն առգրավելու միջնորդությունը մերժելու համար:

5.1. Միննույն ժամանակ, բողոքի հեղինակը, համադրելով ներկայացված վերաքննիչ բողոքի հիմնավորումներն ու վիճարկվող դատական ակտի պատճառաբանական մասը, եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Մասնավորապես՝ անդրադառնալով ենթադրաբար հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի հարցին, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը ոչ իրավաչափորեն հիմնավորել է այնպիսի փաստարկմամբ, որը ներկայացված չի եղել վերաքննիչ բողոքում: Ըստ բողոքաբերի՝ վերաքննիչ վերանայման սահմանները կանխորոշված էին բացառապես առգրավվող առարկաների ու դրանց գտնվելու վայրի որոշակիության հարցի քննությամբ: Նշվածի հետ մեկտեղ, փաստարկվել է, որ վիճարկվող դատական ակտը չի համապատասխանում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանն անդրադարձ չի կատարել Առաջին աստիանի դատարանի դատական ակտի որոշակիության կապակցությամբ վերաքննիչ բողոքի փաստարկին:

6. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումն ու օրինական ուժ տալ Առաջին աստիանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշմանը:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Արա Մինասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ նա. «(...) 2004 թվականի մարտի 19-ից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը գրաղեցնելով օրենքով սահմանված՝ սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող առևտրային կազմակերպություն հանդիսացող «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության րնօրենի պաշտոնը, փաստաթղթեր կեղծելու, կեղծ փաստաթղթեր օգտագործելու ու խաբարիտությամբ առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու միասնական դիրավորությամբ, 2016 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության պետական պարվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Ա.Միլիարույանի, մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական

գծով րեղակալ Թ.Գրիգորյանի օժանդակությամբ և բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հանցակցությամբ հասիչրակել է ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 426.343.650 ՀՀ դրամը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

Ա.Մինասյանը, ՀՀ առողջապահության նախարարության ու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության միջև 2016 թվականի րետրվարի 1-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով անվճար բժշկական և սպասարկման ծառայությունների մատրուցման մասին» պայմանագրի շրջանակներում ընդգրկված «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական րիաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցներից հարկացվող գումարները հասիչրակելու դիրավորությամբ, Թ.Գրիգորյանին ու Ա.Միլիորոյանին հանձնարարել է կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով ԲԿ-ի պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անվամբ բացել արացիոնար բուժման վերաբերյալ կեղծ հիվանդության պատմագրեր և կազմված կեղծ րեղեկությունները ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն: Թ.Գրիգորյանն ու Ա.Միլիորոյանը, իսկ վերջիններիս հանձնարարությամբ՝ մեծահասակների պոլիկլինիկայի և ընդհանուր թերապևտիկ բաժանմունքի բուժական անձնակազմը, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անուններով լրացրել են արացիոնար հետազոտման վերաբերյալ թվով 2145 կեղծ ուղեգրեր, որից հետո բժշկական կենտրոնի արացիոնարում բացել են նույն քանակի անձանց անուններով հիվանդության պատմագրեր, լրացրել «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկներ ու դրանցում ակնհայտ կեղծ րեղեկություններ ներառել շահառուների արացիոնար բուժում անցնելու, բուժման պլանի, լաբորատոր-գործիքային հետազոտությունների, առկա ախորոշումների վերաբերյալ: Այնուհետև, հիվանդության պատմագրերի և «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկների հիման վրա Ա.Միլիորոյանը, Ա.Մինասյանի հանձնարարությամբ, 2016 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պարվիրարո՝ ՀՀ առողջապահության նախարարությանն է ներկայացրել նշված՝ իրականությանը չհամապատասխանող րեղեկություններով «Պետական պարվերի շրջանակներում կարարված աշխատանքներն ըստ բյուջերային ծրագրերի և բժշկական ծառայությունների րեսակների» ակնհայտ կեղծ րասարաթողթ հանդիսացող ամասկան կարարողական հաշվերվություններ: Ներկայացված կարարողական հաշվերվությունների հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական րիաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից հարկացված 426.343.650 ՀՀ դրամը րոհանցել է իր անմիջական դեկավարման ներքո գրնվող իրավարանական անձ հանդիսացող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»

ԲԿ ՓԲ ընկերության ինքնուրույն հաշվեկշիռ, ինչպիսի գործողություններով էլ Ա.Մինասյանը, Թ.Գրիգորյանի և Ա.Միլիտոսյանի օժանդակությամբ, ՀՀ պետական բյուջեի միջոցներից համաչափել է առանձնապես խոշոր չափերով՝ 426.343.650 ՀՀ դրամը, որը փնտրիսել է իր հայեցողությամբ»²:

8. Բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանությունը սահմանափակող քննչական գործողությունը թույլատրող Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) Քրեական վարույթն իրականացնող մարմինը միջնորդել է թույլատրել ՀՀ Կենտրոնական բանկից սրանապ հետևյալ տեղեկությունները և առգրավել հետևյալ փաստաթղթերը՝ 2004 թվականի մարտի 19-ից մինչև տեղեկատվության տրամադրման օրն Ա.Մինասյանի (...) անվան բանկային հաշիվների, այդ հաշիվներով գումարային շարժի, վճարային միջոցներով բանկերում կանխիկացումներ կատարելու, ինչպես նաև կատարված բոլոր գործարքների ու դրանց վերաբերող բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները և փաստաթղթերը, անհատական բանկային պահպարեղիում (պահպարեղիներում) պահվող իրերը, գումարը, փաստաթղթերը, էլեկտրոնային տեղեկատվություն պարունակող կրիչները՝ ՀՀ տարածքում գործող որ բանկում էլ որ դրանք գրանվեն, հաշվի առնելով այն, որ պահանջվող տեղեկությունները քրեական գործով ունեն կարևոր ապացուցողական նշանակություն, որոնք անհրաժեշտ են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման, հանցավոր արարքի դրդապատճառներն ու նպատակը պարզելու համար:

(...) Քննարկելով հարուցված միջնորդությունը, (...) ուսումնասիրելով թիվ 69104518 քրեական գործի նյութերը, [Առաջին ատյանի դատարանը գրնում է, որ (...) հարուցած միջնորդությունը հիմնավորված և փաստարկված է, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներն ապահովելու տեսանկյունով, քնում է միջազգային իրավունքի ու ներկայական օրենսդրության պահանջներից (...): Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը թույլատրել է միջնորդությամբ նշված սուբյեկտից առգրավել պահանջվող տեղեկատվությունը»³:

9. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել և նախաքննության մարմնի միջնորդությունը մերժել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Մերկայացված նյութերում առկա «ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգից» տպագրված տեղեկատվությունից ընդամենը երևում է, որ Ա.Մինասյանը 2004 թվականի մարտի 19-ից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը հանդիսացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության փնտրեն: Միևնույն ժամանակ ենթադրյալ խախտումների մասին որոշակի տվյալներ պարունակում է միայն ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հուլիսի 23-ի գրությամբ կից ներկայացված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում իրականացված ուսումնասիրության

² Տնն նյութեր, հատոր 1, թերթեր 16-18:

³ Տնն նյութեր, հատոր 1, թերթեր 29-34:

միջանկյալ տեղեկանքը, որում նշված են բժշկական կենտրոնում կատարված որոշակի ուսումնասիրությունների արդյունքներ, սակայն դրանում նույնիսկ առկա չէ Ա.Մինասյանի կողմից նշված ենթադրյալ խախտումներին ինչ-որ կերպ առնչություն ունենալու մասին որևէ նշում: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ միայն նշված տեղեկանքը բանկային գաղտնիքի սահմանափակման ինքնուրույն հիմք չէր կարող հանդիսանալ, քանի որ միջնորդությանը կից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն նշված տեղեկանքում ներկայացված տվյալները գնահատելու, դրանում առկա ենթադրյալ խախտումները հաստատված համարելու և հիմնավոր կասկածի նվազագույն շեմը հաղթահարելու համար:

Ինչ վերաբերում է դատարան ներկայացված մյուս փաստաթղթերին, սպա դրանցից ընդամենը երևում է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում կատարված ենթադրյալ հանցագործության դեպքով քրեական գործ է հարուցվել և այդ գործի շրջանակներում Ա.Մինասյանը, ում նկարումն էր հայտարարվել է հետախուզում, ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ միջնորդությանը կից ներկայացված նյութերով չէր հաստատվում Ա.Մինասյանի կողմից իրեն մեղազգրվող հանցագործությունները կատարած լինելու հանգամանքը, ուստի Ա.Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները արանալու թույլտվություն տալը չէր կարող համարվել իրավաչափ:

Այս առումով հարկ է ընդգծել նաև, որ «ՀՀ դատական համակարգ» ծրագրից երևում է, որ նշված մեղադրանքով Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը 2018 թվականի նոյեմբերի 4-ին հիմնավոր կասկածի բացակայության հիմքով մերժել է Արա Մինասյանի նկարումն էր կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը, իսկ Վերաքննիչ և ՀՀ Վճռաբեկ դատարանների կողմից այդ որոշումն ուժի մեջ թողնելուց հետո վարույթն իրականացնող մարմինը փոփոխել և լրացրել է մեղադրյալին առաջադրված մեղադրանքը (...): (...) Այսինքն՝ սկզբնական մեղադրանքի մասով, որով բանկային գաղտնիքի սահմանափակումը բավարարվել է, հիմնավոր կասկածը հերքվել է»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանությունը սահմանափակող քննչական գործողության կարգադրման իրավաչափության պայմանի հստակեցման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 63-71:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Ա.Մինասյանի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի ունեցած միջամտության իրավաչափության պայմանի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և մինչև 2021 թվականի հունիսի 30-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, (...) կարող են սրանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:*

Մինչև 2021 թվականի հունիսի 30-ը գործող խմբագրությամբ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան»:*

Վերը շարադրված իրավադրույթների բովանդակության հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում արձանագրել է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն օրենսդիրն ընդգրկել է սահմանափակ մատչելի տեղեկությունների շարքում՝ նախատեսելով դրանց պահպանության որոշակի իրավական ռեժիմ: Նշված իրավական ռեժիմի կարևորագույն բաղկացուցիչ մասն են կազմում այդ տեղեկությունների բացահայտման հնարավորությունը նախատեսող իրավական նորմերը:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է ընդգծել, որ բանկային փաստաթղթերում ներառված տեղեկատվությունը հանդիսանում է անհատի վերաբերյալ անձնական տվյալ, ուստի դրա բացահայտման դեպքում միջամտություն է տեղի ունենում անձնական կյանքը հարգելու իրավունքին: Այդ պարագայում, երբ հավասարակշռության է բերվում բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության օգտագործմամբ հանցագործությունը բացահայտելու հանրային շահը, ու բանկային գաղտնիքի պահպանման մասնավոր շահը, հարկավոր է հաշվի առնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները⁵:

⁵ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0015/07/13 և *Կարեն Հարությունյան և այլոց* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՎԳ/0223/07/14 որոշումները:

Այդ համատեքստում, հարկ է վկայակոչել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումներն այն մասին, որ յուրաքանչյուր դեպքում, երբ ներպետական իրավասու մարմիններին տրվում է թույլատրելի հայեցողության այնպիսի շրջանակ, որի շնորհիվ հնարավոր է միջամտել Եվրոպական կոնվենցիայով պաշտպանված որևէ իրավունքի իրացմանը, անհատին հասանելի ընթացակարգային երաշխիքները հատկապես կարևոր են որոշելու համար, թե արդյո՞ք պատասխանող պետությունն իր նորմատիվային դաշտն ամրագրելիս գործել է իրեն վերապահված թույլատրելի հայեցողության սահմաններում: Չնայած Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի պարունակում ընթացակարգային որևէ բացահայտ պահանջ, հարկավոր է, որ միջամտություն ենթադրող միջոցների հանգեցնող որոշումների կայացման գործընթացը լինի արդար և իրականացվի այնպես, որ պահպանվեն Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանված անհատի շահերը⁶:

Վերոնշյալ նկատառումներով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը *Կարեն Հարությունյան և այլոց* գործով նշել է, որ օրենսդիրը, երաշխավորելով բանկային գաղտնիքի պահպանումը, սահմանափակել է այս խումբ տեղեկությունների գաղտնիությունը քննչական գործողությունների կարգադրմամբ սահմանափակելու դատարանին վերապահված հայեցողության լուսանցքի շրջանակը, այն առումով, որ դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության հարցը⁷: Այսինքն, բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության առգրավման նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը մշտապես պայմանավորված է քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի հետ, որի բացակայությունը նաև բացառում է մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու հնարավորությունը:

11.1. Վերահաստատելով և զարգացնելով ձևավորված դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ քննչական գործողության քննարկվող տեսակն իրականացնելու թույլտվության միջնորդությունը լուծելիս, հիմնավոր կասկածի առկայության հարցի ստուգման առարկան չի կարող ներառել կալանքի կիրառման իրավաչափության ստուգման նույնանման առարկային բնորոշ բոլոր տարրերը: Այսպես, թեև երկու դեպքում էլ հիմնավոր կասկածի գնահատման պահանջը միտված է միևնույն նպատակին՝ անձի հիմնարար իրավունքի կամայական սահմանափակումը կանխելուն, սակայն այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել հիմնավոր կասկածի առկայությունը, նույն բովանդակությունը չեն կարող ունենալ:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Buckley v. the United Kingdom* գործով 1996 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 20348/92, 76-րդ կետ, *Tanda-Muzinga v. France* գործով 2014 թվականի հուլիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 2260/10, 68-րդ կետ և *M.S. v. Ukraine* գործով 2017 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 2091/13, 70-րդ կետ:

⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Հարությունյան և այլոց* գործով վերը նշված որոշման 22-րդ կետը:

Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն անձի ազատության իրավունքը սահմանավակող՝ կալանավորում խափանման միջոցի, անհատի վերաբերյալ անձնական տվյալների հավաքագրումը, ինչպիսիք են բանկային գաղտնիքով պահպանվող տեղեկությունները, ունի անձի իրավունքների նկատմամբ համեմատաբար նվազ միջամտություն: Հետևաբար, իրավունքի նկատմամբ իրականացվող հնարավոր ներգործության բնույթով, աստիճանով և վրա հասնող հետևանքներով պայմանավորված, առաջադրված համաչափության պայմանի՝ հիմնավոր կասկածի գնահատման սանդղակը ողջամտորեն պետք է տարբերակել կալանավորման կիրառման ու բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանության սահմանավակումը հայցող միջնորդությունների քննության ժամանակ:

Բանկային գաղտնիքով պաշտպանված տեղեկությունների հավաքագրման պարագայում հիմնավոր կասկածի հաստատման չափանիշի տարբերակման դիրքորոշումը համահունչ է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիմքում ընկած մոտեցմանը, այն առումով, որ պետության թույլատրելի հայեցողության շրջանակը որոշելու համար դատարանը հաշվի է առնում անհատի անձնական կյանքին առնչվող տեղեկությունների բնույթը⁸:

Ավելին, Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ հիմնավոր կասկածի չափանիշների տարբերակման տրամաբանությունն արտացոլված էր նաև նախորդ կետում վկայակոչված կարգավորումների պայմաններում, երբ դատարանի որոշման հիման վրա բանկային գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ առարկաների առգրավումը սահմանավակված էր վերահսկվող անձանց կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակով: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով, անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմը տարբեր է:

Մինևույն ժամանակ, հարկ է նկատել նաև, որ տեղի ունեցած օրենսդրական զարգացումների արդյունքում նախատեսված է ֆիզիկական անձին վերաբերող՝ բանկային գաղտնիքով պաշտպանված տեղեկությունների հասանելիության ռեժիմ, մասնավորապես, 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ քրեական վարույթով կարող են առգրավվել ֆիզիկական անձին վերաբերող բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաները, եթե նրա վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

11.2. Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների առգրավման դեպքում հիմնավոր կասկածի առկայությունը գնահատելու չափանիշին, Վճռաբեկ դատարանն արձանագրում

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *G.S.B. v. Switzerland* գործով 2015 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 28601/11, 93-րդ կետ:

է, որ կալանքի կիրառումն արդարացնելու պարագայում, հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատման սահմանների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումները նույնությամբ չեն կարող կիրառվել բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմի սահմանափակումը հայցող միջնորդության նկատմամբ: Վերջինիս դեպքում կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքները որակական հատկանիշների առումով կարող են նվազ լինել. միջամտությունը հայցող միջնորդությանը կից պահանջվում է փաստական հանգամանքների այնպիսի ծավալի ներկայացում, որքանով դա անհրաժեշտ է ողջամտորեն ենթադրելու, որ առկա են մեղսագրված ենթադրյալ հանցանքին առնչությունը վկայող փաստեր:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Ա.Մինասյանը որպես մեղադրյալ է ներգրավվել մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու, դրանք օգտագործելու և խարդախության եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակության համար: Մեղսագրվող ենթադրյալ արարքները դրսևորվել են հետևյալ կերպ. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Մինասյանի հանձնարարությամբ և վերջինիս հետ հանցակցությամբ ընկերության մի խումբ աշխատակիցներ, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով բժշկական կենտրոն դիմած՝ «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի շահառուների անվամբ կազմել են ստացիոնար բուժման վերաբերյալ կեղծ բժշկական փաստաթղթեր, «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» ձևաթղթերում լրացրել ակնհայտ կեղծ տեղեկություններ: Այնուհետև, Ա.Մինասյանի հանձնարարությամբ նշված փաստաթղթերի հիման վրա, 2016 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, կազմվել և ՀՀ առողջապահության նախարարություն են ներկայացվել պետական պատվերով կատարված աշխատանքների մասին՝ իրականությանը չհամապատասխանող ամսական հաշվետվություններ: Ներկայացված հաշվետվությունների հաշվառմամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հիշյալ բժշկական կենտրոնի հաշվեկշիռն է փոխանցել «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված 426.343.650 ՀՀ դրամը, որը տնօրինվել է Ա.Մինասյանի հայեցողությամբ՝

– բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններն առգրավելու թույլտվություն ստանալու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդության քննության արդյունքում, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ հայցվող միջամտությունը հիմնավորված է, հետապնդում է իրավաչափ

⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նպատակ և բխում է վերաբերելի իրավական կարգավորումներից: Արդյունքում, նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է ու թույլատրվել՝ ՀՀ Կենտրոնական բանկից առգրավել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում Ա.Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող՝ բանկային հաշիվների, այդ հաշիվներով գումարային շարժի, վճարային միջոցներով բանկերում կանխիկացումներ կատարելու, ինչպես նաև կատարված բոլոր գործարքների ու դրանց վերաբերող բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները և փաստաթղթերը, անհատական բանկային պահատեղիում (պահատեղիներում) պահվող իրերը, գումարը, փաստաթղթերն ու էլեկտրոնային տեղեկատվություն պարունակող կրիչները¹⁰,

– Վերաքննիչ դատարանը գտել է, որ միջնորդությանը կից ներկայացված փաստական տվյալները բավարար չեն համոզմունք ձևավորելու, որ Ա.Մինասյանը հիմնավոր կերպով է մեղադրվում ենթադրյալ հանցագործությունների կատարման մեջ, որի բացակայությունը բացառում է բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմի սահմանափակման հնարավորությունը: Մասնավորապես, միջնորդությանը կից նյութերում ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկություններ են պարունակվում միայն ՀՀ առողջապահության նախարարի կողմից ներկայացված՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում կատարված ուսումնասիրությամբ կազմված միջանկյալ տեղեկանքում, որը, սակայն չի բովանդակում ենթադրաբար կատարված խախտումներին Ա.Մինասյանի առնչությունը վկայող տվյալներ: Մինևույն ժամանակ, ներկայացված փաստակազմը բավարար չէ հիշյալ տեղեկանքում արձանագրված տվյալները գնահատման ենթարկելու համար՝ ենթադրյալ իրավախախտումները հաստատված համարելու և հիմնավոր կասկածի նվազագույն շեմը հաղթահարելու տեսանկյունից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է նաև, որ «ՀՀ դատական համակարգի տվյալների կենտրոն» համակարգում արտացոլված տվյալների համաձայն՝ Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով հիմնավոր կասկածի բացակայությունը, մերժել է այն մեղադրանքով Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը, որով սույն գործով հայցվել է իրավունքի սահմանափակումը¹¹:

14. Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ հետևության հանգելիս, հաշվի չի առել ներկայացված միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում առկա այն հանգամանքները, որոնք բանկային գաղտնիքի

¹⁰ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

սահմանափակման իրավական առանձնահատկությամբ պայմանավորված թույլ են տալիս հաղթահարված համարելու Ա.Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության առգրավումը թույլատրելու իրավաչափությանն առաջադրվող խնդրո պայմանը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է սույն գործի փաստական տվյալներում առկա այն տեղեկատվությամբ, որ 2016 և 2017 թվականներին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ու ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի միջև կնքվել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման մատուցման պայմանագրեր, որոնց շրջանակներում բժշկական բնույթի ծառայություններ են մատուցվել նաև «Գետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի շրջանակներում: Նշված ժամանակահատվածում Ա.Մինասյանը զբաղեցրել է հիշյալ բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնը: ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ստուգման արդյունքներով կազմված միջանկյալ տեղեկանքում արձանագրվել են հիշյալ ծրագրով բժշկական ծառայությունների մատուցման գործընթացում թույլ տրված մի շարք խախտումներ: Մասնավորապես՝ վերը նշված ծրագրի շրջանակներում 2016 թվականին փաստացի կատարված բուժօգնության դեպքերից 3027 ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2145 դեպքով մատուցված բժշկական ծառայությունները փոխհատուցման ենթակա չեն: Հայտնաբերվել են բժշկական օգնության և սպասարկման չհիմնավորված դեպքեր, որոնցով կատարվել են վերահաշվարկներ՝ փոխհատուցման ենթակա գումարի նվազեցման առումով: 2017 թվականին ևս փաստացի կատարված բուժօգնության դեպքերից 350 ուսումնասիրությամբ արձանագրվել է փոխհատուցման ոչ ենթակա 244 դեպք: Արձանագրվել է նաև վերահաշվարկման ենթակա դեպք¹²:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ միջնորդությանը կից ներկայացված փաստական հանգամանքները, մասնավորապես՝ փոխհատուցման ոչ ենթակա դեպքերի թվաքանակը, դրանց հարաբերակցությունն ուսումնասիրված դեպքերի թվաքանակին, վերը նշված ժամանակահատվածում Ա.Մինասյանի՝ բժշկական ընկերության տնօրեն հանդիսանալը, հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա են մեղազգրված ենթադրյալ հանցանքներին Ա.Մինասյանի առնչությունը վկայող փաստեր:

14.1. Անդրադարձ կատարելով ստորադաս դատարանի պնդմանն առ այն, որ ներկայացված փաստակազմը բավարար չէ հիշյալ տեղեկանքում արձանագրված՝ ենթադրյալ իրավախախտումները հաստատելու համար, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝

¹² Տե՛ս, նյութեր, հատոր 1, թերթեր 3-12:

անձի իրավունքի սահմանափակումը հայցող միջնորդությունը քննելիս, դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք պարունակում են քրեական գործի ըստ էության քննությանը բնորոշ արդարադատության իրականացման գործընթացի տարրեր¹³: Մինչդեռ, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված միջանկյալ տեղեկանքում արձանագրված խախտումների հաստատումը պահանջում է գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծություն, ինչը դուրս է վարությանի այս փուլում դատարանի առջև դրված խնդիրների շրջանակից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի փաստարկին առ այս, որ հիմնավոր կասկածի բացակայությունն արձանագրվել է նաև նույն մեղադրանքով Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննության արդյունքում, հարկ է ընդգծել, որ սույն գործով հայցվող միջամտության իրավաչափությանը ներկայացվող պահանջին մեխանիկորեն վերագրվել են կալանավորման կիրառման դեպքում հիմնավոր կասկածի ստուգման առարկայի շրջանակն ընդգրկող տարրեր: Մինչդեռ, ինչպես արդեն իսկ արձանագրվել է, նշված դեպքերում հիմնավոր կասկածը գնահատելու չափանիշները չեն կարող նույնացվել, ուստի, Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում բողոքաբերի՝ այս կապակցությամբ ներկայացված փաստարկեր:

14.2. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի դիրքորոշմանն առ այս, որ ստորադաս դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարում, քանի որ վիճարկվող դատական ակտով ենթադրյալ հանցանքներ կատարելու մասին վկայող փաստերի առկայության հարցին անդրադարձ է կատարվել դիմողի ներկայացուցչի կողմից բարձրացրած՝ հայցվող միջամտության՝ օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխանելու հարցը քննության առնելու շրջանակներում:

Անդրադարձ կատարելով վիճարկվող դատական ակտի պատճառաբանված չլինելու վերաբերյալ բողոքի հեղինակի պնդմանը, հարկ է նկատել, որ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության առգրավումը կարգադրած դատական ակտի օրինականության ստուգման արդյունքում ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելն արդեն իսկ առարկայագուրկ է դարձրել առգրավվող առարկաներն ու դրանց գտնվելու վայրը որոշակիացված չլինելու հարցի քննարկումը:

14.3. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ առգրավվող առարկաների ու դրանց գտնվելու վայրի որոշակիության հարցին՝ հաշվի առնելով նաև, որ այդ հարցը բարձրացված է եղել վերաքննիչ բողոքում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին

¹³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը:

ատյանի դատարանի դատական ակտն այս առումով բավարար չափով որոշակիացված է: Մասնավորապես՝ թույլատրվել է ՀՀ Կենտրոնական բանկից առգրավել Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն ծավալող բանկերում՝ Ա.Մինասյանի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը՝ հստակեցնելով դրանց շրջանակը:

15. Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Մինասյանի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի ունեցած միջամտության իրավաչափության պայմանի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և մինչև 2021 թվականի հունիսի 30-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների առգրավումը կարգադրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, Ա.Մինասյանի քննարկվող իրավունքի սահմանափակումը հայցող միջնորդությունը քննելիս պատշաճ գնահատման և վերլուծության է ենթարկել գործի փաստական հանգամանքների ամբողջությունը, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշմանը¹⁴:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արա Միքայելի Մինասյանի ներկայացուցիչ Տ.Ղազարյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

¹⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0209/06/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

25 մայիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումների դեմ Էդգար Գառնիկի Դավթյանի պաշտպան Հ.Ալոմյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2016 թվականի ապրիլի 1-ին հարուցվել է թիվ 61202016 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ, Էդգար Գառնիկի Դավթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ մեղադրյալ Է.Դավթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել

է մեղադրյալի նկատմամբ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպան Ն.Պետրոսյանի միջնորդությունը:

3. Մեղադրյալ Է.Դավթյանի պաշտպաններ Ն.Պետրոսյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2016 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ, պաշտպանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

5. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի հունիսի 7-ի որոշմամբ, մեղադրյալ Է.Դավթյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալի նկատմամբ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանների միջնորդությունը:

6. Մեղադրյալ Է.Դավթյանի պաշտպան Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունիսի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 7-ի որոշումը:

7. Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

8. 2016 թվականի դեկտեմբերի 28-ին Է.Դավթյանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան):

9. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 30-ի դատավճռով Է.Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ու դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Վերոնշյալ դատավճռի դեմ Է.Դավթյանի պաշտպան Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 30-ի դատավճռի թողել է անփոփոխ, և «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Է.Դավթյանին ազատել է նշանակված պատիժը կրելուց: Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշման

դեմ ամբաստանյալ Էդ.Դավթյանի և նրա պաշտպան Ն.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է¹:

10. Եվրոպական դատարանը, հիմք ընդունելով *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգաբանների* գործով ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարությունը, 2020 թվականի սեպտեմբերի 3-ին որոշում է կայացրել Է.Դավթյանի գանգատն իր կողմից քննվող գործերի ցանկից հանելու մասին²:

11. Որպես նոր հանգամանք վկայակոչելով *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգաբանների* գործով Է.Դավթյանին վերաբերող մատուլ Եվրոպական դատարանի որոշումը՝ Է.Դավթյանի պաշտպան Հ.Ալումյանը 2020 թվականի դեկտեմբերի 18-ին բողոքներ է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

12. 2021 թվական մարտի 24-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումների՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելու և պաշտպանի ներկայացրած բողոքները Վճռաբեկ դատարանի վարույթ ընդունելու մասին³: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Պաշտպան Հ.Ալումյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգաբանների* գործով Է.Դավթյանին վերաբերող մատուլ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը, բողոքներ է ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ խնդրելով հարուցել նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ, վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումները, բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը, նախաքննության մարմնի միջնորդությունները ճանաչել անհիմն և մերժել, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ե.Կիրակոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 21-ի միակողմանի հայտարարության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության իշխանությունները սույն գործի առնչությամբ ընդունում են, որ

¹ Տե՛ս քրեական գործ թիվ ԱԲԴ/0064/01/16, datalex.am դատական տեղեակտվական համակարգ:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգաբանների» գործով Էդ.Դավթյանին վերաբերող մատուլ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը, գանգատ թիվ 56724/12:

³ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 9-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

րեղի է ոնեցել դիմումարուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կերով անհագրված իրավունքների խախտում և առաջարկում են պարոն Էդգար Դավթյանին վճարել 600 (վեց հարյուր) եվրո՝ իր կրած ցանկացած և անբողջ վնասի դիմաց:

Վերոնշյալ գումարն ազարված կլինի գանձման ենթակա ցանկացած հարկից և կփոխարկվի Հայասրանի Հանրապետության դրամի վճարման օրը գործող փոխարժեքով՝ գործը իր քննվող գործերի ցանկից հանելու մասին Դատարանի որոշումը ծանուցելու օրվանից երեք ամսվա ընթացքում: Վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հերո՝ մինչև վճարման օրը, Կառավարությունը պարտավորվում է վերոնշյալ գումարների նկարմամբ պարզ րոկոսադրույք հաշվարկել՝ չկարարման ժամանակահարվածում Եվրոպական կենարոնական քանկի սահմանած լոմբարդային ռեպոյի րոկոսադրույքի չափով՝ գումարած երեք րոկոսային կեր: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում (...)⁴:

15. Եվրոպական դատարանը, հիմք ընդունելով Է.Դավթյանին և մյուսներին կպանավորելու համար ներպետական դատարանների կողմից հիմնավոր և բավարար հիմքեր չներկայացնելու վերաբերյալ բողոքներով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված խախտման մասին ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարությունները, Լեոնիկ Ասարյանն ընդդեմ Հայասրանի և 8 այլ գանգարների գործով 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է.

«(...) Կառավարությունն ընրունել է, որ խախրվել են դիմումարուների՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կերով երաշխավորված իրավունքները: Այն առաջարկել է դիմումարուներին վճարել (...) ներկայացված գումարները և Դատարանին առաջարկել է գանգարները հանել քննվող գործերի ցուցակից Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կերի «գ» ենթակերին համապարասիան:

(...)

Դատարանը նշում է, որ 37-րդ հոդվածի 1-ին կերի «գ» ենթակերը հնարավորություն է րայիս գործը քննվող գործերի ցուցակից հանելու, եթե՝

«...Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պարճատով գանգարի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

Այսպիսով, Դատարանը կարող է 37-րդ հոդվածի 1-ին կերի «գ» ենթակերի համնճայն գանգարները հանել գործերի ցուցակից՝ պարասիանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիմնն վրա, նույնիսկ եթե դիմումարուները ցանկություն են հայրնում, որ գործի քննությունը շարունակվի (րե՛ս, Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի (նախնական առարկություններ) ՄՊ] Tahsin Acar v. Turkey (preliminary objections) [GC] վճիոր, թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI):

Դատարանը սահմանել է հարակ և ծավալուն նախադեպային իրավունք այն բողոքների առնչությամբ, որոնք վերաբերում են ներպերական դատարանների կողմից կայանքի համար համապարասիան և բավարար պարճատներ

⁴ Տե՛ս, նյութեր հատոր 2-րդ, թերթ 136:

չներկայացնելուն (տե՛ս, օրինակ, Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 629/11, §§ 48 և այլն, 2016 թվականի հոկտեմբերի 20):

Հաշվի առնելով Կառավարության հայտարարությունների մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաև առաջարկվող փոփոխարուցման գումարը, որը համապատասխանում է համանման գործերով շնորհված գումարներին՝ Դատարանը համարում է, որ գանգառների քննությունը շարունակելն այլևս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ Դատարանը բավարարված է համարում այն պայմանը, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգառների քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ):

Ի վերջո, Դատարանն ընդգծում է, որ եթե Կառավարությունը չկատարի իր միակողմանի հայտարարությունների պայմանները, գանգառները կարող են վերադառնալ ընդգրկվել քննվող գործերի ցուցակում՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան (տե՛ս, Յոսիպովիչն ընդդեմ Սերբիայի (որոշում) [Josipovic v. Serbia (dec.)], թիվ 18369/07, 2008 թվականի մարտի 4):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է գործերը հանել քննվող գործերի ցուցակից՝ կապված կարանքի համար համապատասխան և բավարար պարճատների բացակայության վերաբերյալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքների հետ: (...)»⁵:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուսչին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգառների* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումները նոր հանգամանքով վերանայելու համար:

17. Եվրոպական կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգառը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՛

ա. դիմողը մրտդիր չէ հետամուտ լինել իր գանգառին,

բ. վեճն արդեն կարգավորվել է,

գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պարճատով գանգառի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգառի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգառների» գործով Էդ. Դավթյանին վերաբերող մատով 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը, գանգատ թիվ 56724/12:

2. Դատարանը կարող է որոշել գանգապը վերաբին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գրնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա»:

17.1. Եվրոպական դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 62Ա¹ կանոնի համաձայն՝ «1. (Ա) Եթե գանգապաբերը մերժում է Դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնով սահմանված բարեկամական կարգավորման պայմանները, Բարձր պայմանավորվող կողմը կարող է Դատարան ուղարկել ինդրանք քննության ենթակա գործերի ցուցակից գանգապը հանելու վերաբերյալ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի:

(Բ) Նման ինդրանքն ուղեկցվում է հայտարարությամբ, որով պարասիանող պետությունը հարակ հասկանալի կերպով պետք է ընդունի, որ գանգապաբեր անձի գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում՝ միաժամանակ իր վրա վերցնելով պարտականություն հարուցելու գանգապաբեր անձին պարճանոված վհասները, և, եթե անհրաժեշտ է, նաև ձեռնարկելու միջոցներ խախտման հետևանքները վերացնելու համար (...):»:

17.2. Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները՝

– գանգատի բնույթը,

– նմանատիպ գործերով Եվրոպական դատարանի կողմից նախկինում կայացված վճիռների կատարման համատեքստում Կառավարության կողմից ձեռնարկված միջոցների բնույթը, շրջանակը և դրանց ազդեցությունը խնդրո առարկա գործի վրա,

– միակողմանի հայտարարությամբ գիջումների բնույթը, մասնավորապես՝ Եվրոպական կոնվենցիայի խախտման ճանաչումը և նման խախտման համար համապատասխան փոխհատուցման վճարումը,

– խնդրի առնությամբ համապատասխան կամ «հստակ և ծավալուն» նախադեպային իրավունքի առկայությունը, այլ կերպ՝ արդյոք բարձրացված հարցերը նույնական են Եվրոպական դատարանի կողմից նախկինում կայացված վճիռներով որոշված հարցերի հետ,

– այն եղանակը, որով Կառավարությունը մտադիր է փոխհատուցում տրամադրել դիմումատուին, և արդյոք դա հնարավոր է դարճնում վերացնել ենթադրյալ խախտման հետևանքները⁶:

17.3. Վերջին հանգամանքի առնությամբ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ վճռով Եվրոպական կոնվենցիայի խախտում արճանագրելու դեպքում, պետությանը խախտումը վերացնելուն և մինչև խախտումը եղած վիճակը վերականգնելուն պարտավորեցնելու սկզբունքը կիրառելի է նաև միակողմանի

⁶ Տեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tahsin Acar v. Turkey* գործով 2003 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26307/95, կետեր 75-77:

հայտարարության դեպքում⁷: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ գործի վերաբացումը որոշակի հանգամանքներում մինչև խախտումը եղած վիճակը՝ *restitutio in integrum*, վերականգնելու առավել արդյունավետ, եթե ոչ միակ միջոցն է⁸: Այսինքն՝ Եվրոպական դատարանը կարևոր է համարում, որ գործի վերաբացման առումով ներպետական օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունները Կառավարության միակողմանի հայտարարությունը հաստատելու մասին որոշման դեպքում համարժեք լինեն վճռի կայացման դեպքում նախատեսված հնարավորություններին⁹:

17.4. Եվրոպական դատարանը որոշ դեպքերում չի ընդունել պետության միակողմանի հայտարարությունն այն պատճառով, որ ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ ներպետական մակարդակով գործի վերաբացման հնարավորություն: Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության դեմ գործերից մեկով կայացված վճռով Եվրոպական դատարանը չի հաստատել Ռուսաստանի Դաշնության Կառավարության միակողմանի հայտարարությունը՝ իրավունքի խախտման փաստն ընդունելու և արդարացի փոխհատուցում տրամադրելու մասին՝ նշելով, որ Կառավարությունը չի պարտավորվել վերաբացել գործի քննությունը ներպետական մակարդակում կամ երաշխավորել նոր դատավարություն՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ապահովմամբ: Միննույն ժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գործով վկայակոչվող իրավունքի խախտման բնույթն այնպիսին է, որ դիմողի արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքները չեն կարող վերացվել առանց գործի վերաբացման, իսկ ներպետական օրենքը հնարավորություն է տալիս գործի վերաբացում միայն դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի խախտում գտնելու դեպքում: Արդյունքում, Ռուսաստանի Դաշնության Կառավարության միակողմանի հայտարարությունը չի ընդունվել, քանի որ գանգատը քննման ենթակա գործերի ցանկից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշման հիմքով գործի վերաբացման վերաբերյալ կարգավորում ներպետական օրենքը չի նախատեսել¹⁰:

17.5. Համանման կերպով, մի շարք գործերով Եվրոպական դատարանը չի հաստատել Կառավարության միակողմանի հայտարարությունը՝ նշելով,

⁷ Տեն, Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cereale Flor S.a. And Rosca v. Moldova* գործով 2017 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատներ թիվ 24042/09 և 3159/10, կետեր 28:

⁸ Տեն, Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Davydov v. Russia* գործով 2014 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 18967/07, կետ 27, *Malininas v. Lithuania* գործով 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 10071/04, կետ 43, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, կետ 263:

⁹ Տեն, *mutatis mutandis*, Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Igranov and others v. Russia* գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 42399/13 և այլ, 26-րդ կետ:

¹⁰ Տեն Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Rozhin v. Russia* գործով 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 50098/07, կետ 23:

որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ գործի վերաբացման հնարավորություն¹¹:

17.6. Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդունելի է համարում ոչ միայն ներպետական օրենքում բարեկամական կարգավորումը կամ միակողմանի հայտարարությունը հաստատելու մասին դատարանի որոշումը որպես գործի վերաբացման հիմք ուղղակի նախատեսելը¹², այլ ձևավորված իրավակիրառ պրակտիկայում ներպետական օրենքի մեկնաբանությունն այն հաշվով, որ հնարավոր լինի գործի վերաբացումը միակողմանի հայտարարության հիմքով¹³:

17.7. Այսպես, օրինակ, Վրաստանի դեմ գործերից մեկով, Եվրոպական դատարանը, անդրադառնալով դիմումատուի այն առարկությանը, որ Կառավարության միակողմանի հայտարարության դեպքում չի կարողանա պահանջել կրկնակի քննություն և այդպիսով ամբողջական վերականգնել իր հեղինակությունը, նախ փաստել է, որ քրեական վարույթի վերաբացման համատեքստում ներպետական օրենքի համապատասխան դրույթը հստակ նախատեսում է, որ ոչ միայն դատարանի վճիռը, այլև Եվրոպական կոնվենցիայի դրույթի խախտման մասին եզրակացություն պարունակող որոշումը կարող է գործի վերաբացման հիմք լինել: Հաշվի առնելով Եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաև Եվրոպական դատարանի կանոնակարգով սահմանված ընթացակարգերը՝ Եվրոպական դատարանն արդյունքում եզրահանգել է, որ միակ հնարավոր որոշումը, որը կարող է հղում պարունակել Եվրոպական կոնվենցիայի որևէ դրույթի խախտման՝ Կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա գործը ցուցակից հանելու որոշումն է¹⁴:

18. Վերոնշյալ կոնվենցիոնալ նորմի, Եվրոպական դատարանի կանոնակարգի 62Ա¹ կանոնի, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից բխում է, որ միակողմանի հայտարարությունը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ պետությունը հստակ ճանաչում է Եվրոպական կոնվենցիայի կոնկրետ դրույթի կամ դրույթների խախտումը և պարտականություն է ստանձնում միջոցներ ձեռնարկել խախտման հետևանքները վերացնելու և (կամ) մինչև խախտումը եղած վիճակը վերականգնելու համար: Ինչպես բխում է Եվրոպական դատարանի

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Vojtěchová v. Slovakia* գործով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 59102/08, 26-28-րդ կետեր, *Hakimi v. Belgium* գործով 2010 թվականի հունիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 665/08, 29-րդ կետ, *Davydov v. Russia* գործով 2014 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 18967/07, 31-32-րդ կետեր:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Eroglu and Akdemir v. Turkey* գործով 2019 թվականի ապրիլի 2-ի որոշումը, գանգատ թիվ 6337/10:

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tabagari v. Georgia* գործով 2013 թվականի հունիսի 18-ի որոշումը, գանգատներ թիվ 70820/10 և 60870/11, *Mazanashvili v. Georgia* գործով 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 19882/07, *Vashakidze v. Georgia* գործով 2014 թվականի հունվարի 28-ի որոշումը, գանգատ թիվ 41359/08, *Manukian v. Georgia* գործով 2016 թվականի մայիսի 3-ի որոշումը, գանգատ թիվ 49448/08:

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Taktakishvili v. Georgia* գործով 2013 թվականի հունիսի 18-ի որոշումը, գանգատ թիվ 46055/06, կետ 22:

նախադեպային իրավունքի վերլուծությունից, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին որոշում կայացնելու հիմքը, ի թիվս այլնի, պետության կողմից Եվրոպական կոնվենցիայի խախտման փաստի ճանաչումն է, և այդ խախտման հետևանքները վերացնելու հանձնառություն ստանձնելը: Հետևաբար, Եվրոպական կոնվենցիայի որևէ դրույթի խախտման մասին հղում պարունակող, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը, ինչպես և վճռի պարագայում, հավասարապես պարտավորեցնում է պետությանը միջոցներ ձեռնարկել խախտման հետևանքները վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ գործը վերաբացելու եղանակով, ուստի այդ որոշման հիման վրա գործի վերաբացման հնարավորության բացառումն անհամատեղելի կլինի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

19. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 426.1-ին հոդվածի համաձայն՝ *«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով ստաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր հանգամանքների հերևանքով դատական ակտերը վերանայվում են հերևակալ դեպքերում.*

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը. (...):»:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք է ոչ միայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռով, այլ նաև որոշմամբ հիմնավորված անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը: Սույն որոշման 17-18-րդ կետերում ներկայացված իրավական դիրքորոշման հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը ևս հիմք է նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու համար:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգատների* գործով Եվրոպական դատարանի 2020

թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումները նոր հանգամանքով վերանայելու համար:

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Եվրոպական դատարանի՝ *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգաբանների գործով* 2020 թվականի սեպտեմբերի 3-ին կայացված որոշումը հիմք է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի և 2016 թվականի հունիսի 7-ի որոշումները և դրանք օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի և 2016 թվականի հունիսի 20-ի որոշումները բեկանելու համար:

23. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:*

24. *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.*

1. *վճարել նշանակված փոխհատուցումը,*

2. *անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝*

– *դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,*

– *հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (restitutio in integrum), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համատեղելի այլ միջոցներով սպասովել իր պարանձամ պարտավորությունների կատարումը,*

3. *ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նանսատրիկ խախտումներն սպագայում»¹⁵:*

25. *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքննելու մասին»* Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով *restitutio in integrum*՝ հնարավորինս սպահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես՝ վերլուծել իրենց

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ժիրայր Սեֆիլյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Եվրոպական կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ.

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Եվրոպական կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որը լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

26. Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝ կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաբացումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից (i)-ը, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից գրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: *Այդ չափանիշի բավարարման համար պետք է լինի ուղիղ պարճատահերևանքային կասկ հայտնաբերված խախտման և գումար կողմի համար առաջացած շարունակական բացասական հետևանքների միջև:*

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, (ii) խմբում ներառված չափանիշերը նպատակաուղղված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաբացումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, ապա դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն՝ կազմակերպելու իր պաշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստացված

հայտարարությունների կամ այն նյութերի վրա, որոնք տուժող կողմը հնարավորություն չի ունեցել ստուգել: **Նման թերությունները պետք է լինեն այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած առաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ**¹⁶:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Մոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չհուսիտել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի էլքի վրա: (...)»:*

27.1. Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «*(...) [Ի]րավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անհուսիտ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պարզաձև մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական աստիճանների իրավական հարակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ արեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անհուսիտ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»¹⁷:*

28. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մոտեցումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմքը՝ որպես նոր հանգամանք, միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումն է: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միակողմանի հայտարարության հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Եվրոպական դատարանի որոշումը չպետք է միանշանակ կերպով դիտարկվի որպես գործերի վերաբացման անվերապահ հիմք: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ներպետական դատարանը պետք է գնահատի, թե արդյոք գործով կայացված վերջնական դատական ակտի բեկանումը *restitutio in integrum* ապահովելու լավագույն միջոցն է:

¹⁶ Stn Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights:

¹⁷ Stn ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՈ-1099 որոշման 6-րդ կետը:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ե.Կիրակոսյանի՝ 2020 թվականի փետրվարի 21-ի միակողմանի հայտարարության համաձայն՝ Կառավարությունն ընդունել է, որ տեղի է ունեցել դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված իրավունքների խախտում և առաջարկել են Է.Դավթյանին վճարել 600 (վեց հարյուր) եվրո¹⁸,

- Եվրոպական դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ, հիմք ընդունելով Էդգար Դավթյանին և մյուսներին կալանավորելու համար ներպետական դատարանների կողմից հիմնավոր և բավարար հիմքեր չներկայացնելու վերաբերյալ բողոքներով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված խախտման մասին ՀՀ Կառավարության միակողմանի հայտարարությունները, որոշել է գանգատների այս մասը Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան հանել իր գործերի ցուցակից¹⁹,

- Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 30-ի դատավճռով Է.Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ու դատապարտվել ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով: Վերոնշյալ դատավճռի դեմ Է.Դավթյանի պաշտպան Լ.Ալոմյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, դատավճիռը թողել է անփոփոխ, և «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Է.Դավթյանին ազատել է ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելուց: Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Է.Դավթյանի և նրա պաշտպան Ն.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է²⁰:

30. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 23-28-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկված որոշումները վերաբերել են Է.Դավթյանի շարունակական կալանքին, սակայն քրեական գործի ըստ էության քննության արդյունքում նրա նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության

¹⁸ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ վերջինս ազատվել է պատժի կրումից:

Տվյալ պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգարների* գործով 2020 թվականի սեպտեմբերի 3-ին կայացված որոշմամբ արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման բացասական հետևանքները սույն բողոքի քննության պահի դրությամբ դիմումատուն չի շարունակում կրել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Է.Դավթյանի շարունակական կալանքի վերաբերյալ դատական ակտերը եղել են ժամանակավոր և դրանց բեկանումը չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը:

Վերոգրյալի համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Եվրոպական դատարանի՝ *Լեոնիկ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի և 8 այլ գանգարների գործով* 2020 թվականի սեպտեմբերի 3-ին կայացված որոշումը հիմք չէ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի և 2016 թվականի հունիսի 7-ի որոշումները, դրանք օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի և 2016 թվականի հունիսի 20-ի որոշումները բեկանելու համար:

Վերոգրյալի հետ մեկտեղ անհրաժեշտ է փաստել, որ համանման պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ մերժել է *Մուրադիսանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 5-ի վճռի հիման վրա հարուցված վերանայման վարույթի շրջանակներում նոր հանգամանքի հիմքով Արարատ Մուրադիսանյանի նախնական կալանքի վերաբերյալ որոշումների բեկանման պահանջով ներկայացված վճռաբեկ բողոքը²¹: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որը վերահսկողություն է իրականացնում Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ, 2018 թվականի հունիսի 7-ի թիվ CM/ResDH(2018)191 բանաձևով քննարկել է Հայաստանի վերաբերյալ կայացված ընդհանուր թվով յոթ վճիռների, այդ թվում՝ *Մուրադիսանյանն ընդդեմ Հայաստանի* վճռի կատարման ընթացքը և արձանագրել, որ նշված գործերով անհատական միջոցառումներն իրականացված են, արդարացի փոխհատուցումները վճարված են և մեղադրյալներից ոչ մեկը չի գտնվում մինչդատական կալանքի տակ, նրանք դատապարտվել կամ ազատ են արձակվել: Արդյունքում հիշյալ

²¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Մուրադիսանյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ-01/13 որոշումը:

գործերի կատարման նկատմամբ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հայտարարվել է փակված²²:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 397-րդ, 398-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Էդգար Գառնիկի Դավթյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքները մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

²² Տես քանոնը հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016808a08a7:

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0376/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

26 մայիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արթուր Նորիկի Գյուլսագարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2001 թվականի հոկտեմբերի 7-ին Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ կետի և 232-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12211801 քրեական գործը:

2001 թվականի հոկտեմբերի 27-ին որոշում է կայացվել Արթուր Նորիկի Գյուլսագարյանին 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ և 210-րդ հոդվածներով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2001 թվականի հոկտեմբերի 27-ի

որոշմամբ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել է հետախուզում:

2004 թվականի օգոստոսի 10-ին որոշում է կայացվել Ա.Գյուլնազարյանին 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ և 210-րդ հոդվածներով մեղսագրված արարքները 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 317-րդ հոդվածին համապատասխանեցնելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետի տեղակալ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի և պաշտպան Հ.Ապրեսյանի միջնորդությունը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Գյուլնազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով, մերժվել է:

Քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Ա.Գյուլնազարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 317-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի մարտի 4-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը փոփոխվել, լրացվել է և նա ներգրավվել է որպես մեղադրյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի դատախազության դատախազ Ա.Վարդանյանի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշմամբ պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը՝ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի և պաշտպան Հ.Ապրեսյանի միջնորդությունը մասնակիորեն մերժելու վերաբերյալ քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ, մերժվել է:

2. Մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի և պաշտպան Հ.Ապրեսյանի միջնորդությունը մասնակիորեն մերժելու վերաբերյալ քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի և դատախազ Ա.Վարդանյանի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշումների դեմ պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ բավարարել է, վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել Ա.Գյուլնազարյանի իրավունքների խախտումը:

3. Դատախազ Ա.Վարդանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը թողնելով օրինական

ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 3-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և չպատճառաբանված, այն կայացնելիս թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ սույն գործով նախաքննություն իրականացնող քննիչի և մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի վիճարկվող որոշումները պատկանում են այն որոշումների թվին, որոնց օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը հնարավոր է միայն գործի ըստ էության քննության ժամանակ, ինչն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանման համար: Ընդ որում՝ դրանց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, չէր կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, հետևաբար՝ ստորադաս դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ արձանագրելով դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտման փաստը:

5.1. Բողոքաբերն անդրադարձել է նաև մեղադրյալ Ա.Գյուլնազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու առնչությամբ ստորադաս դատարանների եզրահանգումներին:

6. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ մերժելով մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Տվյալ դեպքում բողոքով վիճարկվում է ոչ թե մեղադրյալ Արթուր Գյուլնազարյանի մեղավորության կամ անմեղության հարցը, այլ գործի քննության ներկա փուլում վերջինի*

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

նկարումամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը:

Այսինքն՝ սույն բողոքով խոսք է գնում, որ հնարավոր է մեղադրյալ Արթուր Գյուլնազարյանի նկարումամբ քրեական հետապնդումը վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով չդադարեցնելու արդյունքում խախտված լինի վերջինի իրավունքները և օրինական շահերը, ինչն էլ օբյեկտիվորեն պետք է արժանանա դատական պաշտպանության: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է քննարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի ընթացակարգով, քանի որ առարկայազուրկ է այդ հարցի քննարկումը վերապահել բացառապես գործի ըստ էության քննության սահմաններում:

Այլ կերպ ասած, երբ ինդիքը վերաբերում է անձի նկարումամբ քրեական հետապնդումն օրենսդրությամբ նախատեսված հիմքերով դադարեցնելու, կոնկրետ այս իրավիճակում՝ վաղեմության ժամկետների հնարավոր անցած լինելու մասին, ապա Դատարանի համար որևէ կերպ ընդունելի չէ նշված հարցի քննարկումը, պարզումը և դատական պաշտպանությունն իրականացնել միայն գործի ըստ էության քննության ժամանակ: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ անկախ քրեական գործի քննության փուլից՝ քրեական գործ չի կարող հարուցվել, քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործով վարույթն էլ ենթակա է կարճման, եթե, ի թիվս այլնի, անցել են վաղեմության ժամկետները:

(...) Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ 2020 թվականի փետրվարի 28-ի ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի պետի տեղակալ Ա.Արրահամյանի որոշմամբ մեղադրյալ Արթուր Գյուլնազարյանի իրավունքների և օրինական շահերի խախտում է տեղի ունեցել, ուստի Հ.Ապրեսյանի բողոքը ենթակա է բավարարման (...):»²:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանի կողմից կատարվել է ներկայացված նյութերի լրիվ օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, իսկ վարույթն իրականացնող մարմնի թույլ տրված խախտումների վերաբերյալ հետևությունները լիարժեք հիմնավորված են և բխում են ներկայացված նյութերի համակցությունից:

(...)

Միևնույն ժամանակ անդրադառնալով դատախազի վերաքննիչ բողոքի այն փաստարկներին, թե բողոքը ենթակա չէր քննության մինչդարձական վարույթի նկարումամբ դատական վերահսկողության շրջանակներում, քանի որ դրանում արժարժվող հարցերը մտնում էին քրեական գործի ըստ էության լուծման հարցերի մեջ, ապա Վերաքննիչ դատարանն այդ եզրահանգումը ևս ընդունելի չի համարում:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քննարկման առարկա է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 146-159:

հանգամանքի առկայությունը: Ընդ որում հարկանշական է, որ դա եղել է այնպիսի հանգամանք, որի հերքման կամ հաստատման համար հարկավոր չէր գործի ըար էության լուծում (այդպիսիք կարող էին լինել օրինակ քրեական հետապնդումը բացառող ռեարիլիրացիոն հիմքերը): Մինտյն ժամանակ պերք է նշել, որ այդ հարցի քննարկումը դարավարության ավելի ուշ փուլում՝ դարարանում գործն ըար էության քննելիս, անհար չէր լինի բայց կհանգեցներ անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, քանի որ մինչև ըար էության լուծող դարական ակրի օրինական ուժի մեջ մրնելը, անձը շարունակելու էր կրել քրեական հետապնդման ենթարկվելու սահմանափակումները (...)³:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ մեղադրյալ Ա.Գյուլնագարյանի կողմից հայցվող իրավական պաշտպանությունը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա:

10. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հերարքնության մարմնի աշխարակցի, քննիչի, դարախազի, օպերարիվ-հերախուզական գործողություններ իրականացնող մարմինների սույն օրենսգրքով նախարեաված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դարարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշրպանի, րուժողի, քրեական դարավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախրվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դարախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դարարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հերարքնության մարմնի, քննիչի և դարախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախարեաված դեպքերում (...):»

10.1. Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկայի շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանը մշակել է հետևյալ սկզբունքը. **գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից գատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն**

³ Տնն կյութեր, հատոր 2, թերթեր 50-63:

ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման⁴:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի և պաշտպան Հ.Ապրեսյանի միջնորդությունը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Գյուլնազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով, մերժվել է:

– Դատախազ Ա.Վարդանյանի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշմամբ պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը՝ քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ, մերժվել է⁵:

– Առաջին ատյանի դատարանը քննիչ Ա.Աբրահամյանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի և դատախազ Ա.Վարդանյանի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշումների դեմ պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը բավարարել է, վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել Ա.Գյուլնազարյանի իրավունքների խախտումը:

Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ վիճարկվել է ոչ թե մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի մեղավորության կամ անմեղության հարցը, այլ գործի քննության ներկա փուլում վերջինի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն՝ բողոքը վերաբերում է նրան, որ հնարավոր է մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով չդադարեցնելու արդյունքում խախտված լինեն վերջինի իրավունքները և օրինական շահերը, ինչն էլ օբյեկտիվորեն պետք է արժանանա դատական պաշտպանության: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ բողոքը ենթակա է քննարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի ընթացակարգով⁶:

– Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը: Անդրադառնալով դատախազի վերաքննիչ բողոքի այն փաստարկներին, թե բողոքը ենթակա չէր քննության մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, քանի որ դրանում արծարծվող հարցերը մտնում էին քրեական գործի ըստ էության լուծման հարցերի մեջ, Վերաքննիչ դատարանն այդ եզրահանգումն ընդունելի չի համարել: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ քննարկման առարկա է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական գործով վարույթը և քրեական

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարուժան Մանուկյանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0060/11/10 որոշման 16-րդ կետը, *«Էլիբա Էսլե»*, *«Էլիբա Էսլե»* և *«Պրեսարիժ լենդ» ՄՊԸ-ների* գործով 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ԵԴ/0957/11/19 որոշման 11.1-րդ կետը, *Վանիկ Ասարյանի* գործով 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ԵԴ/0732/11/20 որոշման 10.1-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը: Վերաքննիչ դատարանը հատկանշական է համարել, որ այդ հանգամանքի հերքման կամ հաստատման համար հարկավոր չէր գործի ըստ էության լուծում: Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ այդ հարցի քննարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, անհնար չէր լինի, բայց կհանգեցնէր անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, քանի որ մինչև ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, անձը շարունակելու էր կրել քրեական հետապնդման ենթարկվելու սահմանափակումները⁷:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-10.1-րդ կետերում վկայակոչված իրավակարգավորման և իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ըստ էության քննության առնելով պաշտպան Հ.Ապրեայանի բողոքը, դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներից:

Նախ հարկ է նշել, որ Առաջին ատյանի դատարանն ընդհանրական ձևակերպում է տվել առ այն, որ «բողոքով խոսք է գնում, որ հնարավոր է մեղադրյալ Արթուր Գյուլնազարյանի նկարմամբ քրեական հետապնդումը վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով չդադարեցնելու արդյունքում խախտված լինի վերջինի իրավունքները և օրինական շահերը, ինչն էլ օրյեկտիվորեն պետք է արժանանա դատական սպաշտպանության», իսկ Վերաքննիչ դատարանը չի մատնանշել, թե վիճարկվող որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի կոնկրետ ո՞ր իրավունքների կամ օրինական շահերի անհամարժեք սահմանափակման էր հանգեցնելու, ինչպես նաև քրեական հետապնդման ենթարկվելու ի՞նչ սահմանափակումներ էր մեղադրյալ Ա.Գյուլնազարյանը տվյալ դեպքում շարունակելու կրել:

Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով սույն որոշման 10.1-րդ կետում նշված սկզբունքով, գտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ քննիչի որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, ինքնին չի հանգեցնում անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք այնպիսի սահմանափակման, որ այդ հանգամանքով պայմանավորված վիճարկվող որոշումը դիտարկվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա: Այլ հարց է, որ անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումից աժանցվող, նախաքննության մարմնի որոշ վարույթային ակտերի (օրինակ՝ անձի անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու իրավունքները սահմանափակող կամ այլ վարույթային ակտերի) բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս կարող է հանգեցնել անձի իրավունքների և

⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, ինչը, սակայն, հիմք է նախաքննության մարմնի այդպիսի կոնկրետ վարույթային ակտերը, այլ ոչ թե քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությունը մերժելու մասին քննիչի որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու համար:

Այսպիսով, քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությունը մերժելու մասին քննիչի որոշման վիճարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, ինքնին չի հանգեցնում անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Իսկ անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումից ածանցվող նախաքննության մարմնի այլ վարույթային ակտերի (որոնք առանձին կարող են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա լինել) միջամտությունը անձի իրավունքներին և օրինական շահերին՝ անկախ միջամտության ինտենսիվությունից, ի հակադրումն սույն որոշման 10.1-րդ կետում նշված սկզբունքի, չի կարող դիտարկվել որպես չափանիշ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությունը մերժելու մասին քննիչի որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստուգելու համար:

12.1. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննիչ Ա.Աբրահամյանի վիճարկվող որոշումը գործի նախնական քննության փուլում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում չի կարող բողոքարկվել դատարան, քանի որ նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև դրա բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է և չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

12.2. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ քննիչի վիճարկվող որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չհանդիսանալու պայմաններում, գնահատման ենթակա չէ նաև դատախազի՝ 2020 թվականի մարտի 26-ի որոշումը⁸:

13. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի կողմից հայցվող իրավական պաշտպանությունը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, իրավաչափ չէ:

14. Վերոգրյալ պայմաններում, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 5.1-րդ կետում բարձրացված փաստարկներին:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Մասիս Բաղիրյանի գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ԵՄԴ/0004/11/16 որոշման 12-րդ կետը, Մասվել Ղազարյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0018/11/17 որոշման 21-րդ կետը:

են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումները բեկանելու և փոփոխելու համար: Միաժամանակ, վերոշարադրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ մեղադրյալ Ա.Գյուլնազարյանի պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը, պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումները բեկանել և փոփոխել: Արթուր Նորիկի Գյուլնազարյանի պաշտպան Հ.Ապրեսյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

46.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0864/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

16 հունիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Ռուստամ Մաքսիմի Սահակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի և հունիսի 30-ի որոշումների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 14896719 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար այն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

2019 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 09192019 քրեական գործը:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ Ռուստամ Մաքսիմի Սահակյանը թիվ 09192019 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, և նույն թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի որոշումներով Ռուստամ Սահակյանը թիվ 14896719 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2019 թվականի նոյեմբերի 27-ին թիվ 09192019 ու 14896719 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 14896719 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ Ռ.Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 14896719 քրեական գործով վարույթը կասեցվել է:

2019 թվականի դեկտեմբերի 21-ին Ռ.Սահակյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին:

Նույն օրը թիվ 14896719 քրեական գործով վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի, 2020 թվականի հունվարի 31-ի, փետրվարի 10-ի, մարտի 23-ի, 24-ի և 31-ի, ապրիլի 27-ի ու 30-ի և մայիսի 26-ի որոշումներով թիվ 15965619, 10888519, 17891319, 14980319, 13780119, 14178120, 17897819, 16184220, 13199920, 14179320, 16897719, 13861720, 10175320, 17181820, 13865520 ու 49156320 քրեական գործերը միացվել են թիվ 14896719 քրեական գործին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի որոշմամբ մեղադրյալ Ռ.Սահակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Ռ.Սահակյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել քսանմեկ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, երեք դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ութ դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2020 թվականի օգոստոսի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ, վեց դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողների հետ հաշտվելու հիմքով:

2.1. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2021 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով Ռ.Սահակյանին մեղավոր է ճանաչել տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, և յուրաքանչյուր դրվագով նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով, երեք դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս ժամկետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս ժամկետով, ութ դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ռ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2020 թվականի մարտի 31-ից:

Նույն դատավճռով վճռվել է նաև Ռ.Սահակյանից հօգուտ տուժողներ Վ.Փախանյանի, Մ.Գրիգորյանի, Ա.Շեկոյանի, Օ.Զաքարյանի, Ա.Մելքումյանի, Է.Մանուկյանի, Մ.Շահբազյանի, Մ.Վանյանի և Լ.Նիկոյանի բռնագանձել համապատասխանաբար 600.000 (վեց հարյուր հազար), 250.000 (երկու հարյուր հիսուն հազար), 400.000 (չորս հարյուր հազար), 489.500 (չորս հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր), 100.000 (հարյուր հազար), 110.000 (հարյուր տասը հազար), 300.000 (երեք հարյուր հազար), 400.000 (չորս հարյուր հազար), 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ և 65.000 (վաթսուհինգ հազար) ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ՝ որպես հանցագործությանը պատճառված վնասի հատուցում:

3. Ամբաստանյալ Ռ.Սահակյանի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետև՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի ապրիլի 28-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու ու փոփոխելու մասին: Ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ մեկ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով՝ ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով:

3.1. Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունիսի 30-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու մասին: Ամբաստանյալ

Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով՝ ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում՝ 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով:

Նույն որոշմամբ տուժողներ Մ.Գրիգորյանի, Ա.Մելքունյանի, Օ.Զաքարյանի, Է.Մանուկյանի, Մ.Վանյանի և Ա.Շեկոյանի քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:

Վերաքննիչ դատարանի դատավոր Մ.Հարությունյանը Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 30-ի որոշման կապակցությամբ մնացել է հատուկ կարծիքի:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մայիսի 2-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներին:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոք բերած անձը մի շարք քրեադատավարական նորմերի համադրված վերլուծությամբ փաստարկել է, որ ստորադաս առյանի դատական ակտի վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանը կարող է կայացնել գործն ըստ էության լուծող միայն մեկ դատական ակտ՝ գործի քննությունն ավարտելուց հետո՝ խորհրդակցական սենյակ հեռանալով: Վերաքննիչ դատարանի գործառույթի իրացման նման կարգը չի կարող փոփոխվել և դրանից տարբերվող կարգով դատական ակտ չի կարող կայացվել: Վերաքննիչ դատարանի դատական ակտը կարող է վերանայվել բացառապես Վճռաբեկ դատարանի կողմից, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը սեփական դատական ակտը չի կարող վերանայել: Սեփական դատական ակտում փոփոխություններ կատարելու միակ դատավարական եղանակն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի անհստակությունների լուծումն է:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված դիրքորոշման լույսի ներքո՝ բողոքաբերն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունիսի 30-ի որոշմամբ փաստացի վերանայել է իր կողմից կայացված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը, այն դեպքում, երբ գործող դատավարական կարգավորումները չեն նախատեսում բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտը վերանայելու հնարավորություն՝ անկախ նրանից քրեական գործը շարունակում է գտնվել Վերաքննիչ դատարանի վարույթում, թե ոչ:

Արդյունքում, բողոքի հեղինակը, համաձայնվելով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, այդուհանդերձ արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը բողոքների քննության արդյունքում գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելուց հետո քննելով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ հիշյալ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը, չի հանդիսացել «օրենքի հիման վրա ստեղծված»՝ իրավասու դատարան:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի որոշումը և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել, ինչպես նաև բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 30-ի որոշումը՝ կայացնելով նոր դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Արագացված դատական քննության արդյունքով ամբաստանյալ Ռ.Սահակյանը տասնհինգ դրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, երեք դրված՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ութ դրված՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղավոր է ճանաչվել հետևյալ արարքների համար. «(...) *[Ուրիշի գույքի գաղտնի համալրակություն կատարելու դիտարկություններ, 2019 թվականի սեպտեմբերի 21-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, գրնվելով Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 48ա հասցեում գործող «Ձկնանոց» կոչվող տաղավարում, աշխատակից Իգոր Յուրիի Աղաբալյանից պարսիկեր է ձուլ, որից հետո օգրվելով վերջինիս գրառված լինելու հանգամանքից՝ սպորինի մուտք է գործել պահեստարան համարվող՝ որպես դրամարկղ ծառայող դարակ և այնտեղից գաղտնի, անհատույց, սպորինի, շահադիտական նպատակով համալրակել է Իգոր Յուրիի Աղաբալյանի նպատակնող ընդհանուր 520500 ՀՀ դրամ արժողությամբ խոշոր չափերով գույքը,*

այն է՝ 1500 ՀՀ դրամ արժողությամբ դրամապանակը, դրանում գրնվող 238000 ՀՀ դրամին համարժեք 500 ԱՄՆ դոլար գումարը, 75000 ՀՀ դրամին համարժեք 10000 ՌԴ ռուբլի և 206000 ՀՀ դրամ կանխիկ գումարը:

Բացի այդ, Ռուսարամ Մաքսիմի Սահակյանը, 2019 թվականի հոկտեմբերի 3-ին՝ ժամը 17:20-ի սահմաններում, ուրիշի գույքի զգալի չափերի համախառնություն կապարտելու դիմումներով, գնումներ կապարտելու պատրվակով մուտք է գործել Երևան քաղաքի Զ.Մարկավազ փողոցի 123 հասցեում գործող հագուստի խանութ և այնտեղից գաղտնի, անհատույց, շահադիրական նպատակով համախառնել է Անահիտ Պարսամյանին պարկանոց 12000 ՀՀ դրամ արժողությամբ դրամապանակը, որի մեջ եղել է զգալի չափերի հասնող 388000 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, Ռուսարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կապարտելու դիմումներով, 2019 թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 14:00-ն ընկած ժամանակահատվածում, օգրվելով Կոմիտաս 16 շենքի 113 տարածքում գրնվող «Աֆրոդիտե» գեղեցկության սրահում Լուսինե Հակոբի Երկոյանի զբաղված լինելու հանգամանքից և անուշադրությունից, սրահում առկա բազմաթիվ վրա դրված Լուսինե Երկոյանի պայուսակից գաղտնի, անհատույց, շահադիրական նպատակով համախառնել է վերջինիս պարկանոց խոշոր չափերով 553600 ՀՀ դրամ արժողությամբ գույք, այն է՝ 483600 ՀՀ դրամին համարժեք 15000 ՌԴ ռուբլի ու 70000 ՀՀ դրամ կանխիկ գումար:

Բացի այդ, Ռուսարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կապարտելու դիմումներով, 2019 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 16:55-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում, մուտք է գործել Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գործող «Թրավել գիդ» ՍՊ ընկերության գրասենյակ և օգրվելով գրասենյակի աշխատակցի անուշադրությունից՝ սրահի պահարանի վրայից գաղտնի, անհատույց, շահադիրական նպատակով համախառնել է Սամսոն Սողոմոնյանին պարկանոց ընդհանուր խոշոր չափերով 1140034 ՀՀ դրամի գույք՝ 30000 դրամ արժողության ձեռքի պայուսակը, դրանում առկա 1025000 ՀՀ դրամ գումար, 72000 ՀՀ դրամին համարժեք 150 ԱՄՆ դոլար, 8034 ՀՀ դրամին համարժեք 50 վրացական լարի և 5000 ՀՀ դրամ արժողությամբ դրամապանակը:

Բացի այդ, Ռուսարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կապարտելու դիմումներով, 2019 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 11:25-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Մարյան 228 հասցեում գործող խանութ-սրահ և օգրվելով աշխատակցուհի Մարիամ Գրիգորյանի անուշադրությունից՝ սրահում առկա սեղանի վրայից գաղտնի, անհատույց, շահադիրական նպատակով համախառնել է վերջինիս պարկանոց զգալի չափերի՝ 235000 ՀՀ դրամ արժողությամբ «Ալֆոն 7» մոդելի բջջային հեռախոսը:

Բացի այդ, Ռուսարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կապարտելու դիմումներով, 2019 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Ագաթանգեղոս 7 հասցեում գործող «Դեմին» շաքարման պարագանների խանութ-սրահ և օգրվելով

խանութի աշխատակցուհի Անահիտ Սահակյանի անուշադրությունից՝ սրահում առկա սեղանի վրայից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով վերցրել է վերջինիս պարկանոց զգայի չափերի՝ ընդհանուր 390000 ՀՀ դրամ արժողությամբ «Այֆոն 7+» մոդելի բջջային հեռախոսը:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2019 թվականի հոկտեմբերի 29-ին՝ ժամը 11:30-ից մինչև ժամը 12:00-ն ընկած ժամանակահատվածում, մուտք է գործել Երևան քաղաքի Կոբյուն 5 հասցեում գործող կահույքի սրահ և օգրվելով սրահի աշխատակցուհի Նարինե Գասպարյանի անուշադրությունից՝ սրահում առկա աթոռի վրայից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է վերջինիս պարկանոց՝ 15000 ՀՀ դրամ արժողությամբ դրամապանակը և դրանում առկա 50000 ՀՀ դրամ գումարը, ընդհանուր՝ զգայի չափերի 65000 ՀՀ դրամի չափով գույք:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2019 թվականի նոյեմբերի 2-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, որպես հաճախորդ մուտք է գործել Երևան քաղաքի Թումանյան 1 անց. 2/1 հասցեում գործող իմոբիլիտի արտադրամաս և այնտեղից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է Վարսիկ [Մանուկյանին] պարկանոց 5000 ՀՀ [դրամ արժողությամբ] դրամապանակը, դրանում առկա 108000 ՀՀ դրամ գումարը, 5000 ՀՀ դրամին համարժեք եվրո գումարը և ԱՄԵ դրոլար գումարը, ընդհանուր՝ 118000 ՀՀ դրամի չափով գույք:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2019 թվականի սեպտեմբեր ամսին մուտք է գործել Երևան քաղաքի Սայաթ-Նովա 31 հասցեում գործող «Համեմունք» խանութ-սրահ և օգրվելով աշխատակցուհի Սուսի Էօրտեքյանի անուշադրությունից՝ ապօրինի մուտք գործելու եղանակով խանութի դրամարկղից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է 28000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝ Արմեն Պողոսյանին պարձատելով զգայի չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2019 թվականի հոկտեմբեր ամսվա վերջին կամ նոյեմբեր ամսվա սկզբին, մուտք է գործել Երևան քաղաքի Բաղրամյան 2 հասցեում գործող «SS Թոյս» խանութ-սրահ և օգրվելով աշխատակցուհի Սիրուշ Անտոնյանի անուշադրությունից՝ ապօրինի մուտք գործելու եղանակով խանութի դրամարկղից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է 38000 ՀՀ դրամ կանխիկ գումար՝ Հասմիկ Դարբինյանին պարձատելով զգայի չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2019 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, մուտք է գործել Հովհաննես Դազարյանին պարկանոց՝ Երևան քաղաքի Մաշտոցի 19/9 հասցեում գործող կոշիկի խանութ և օգրվելով սրահի աշխատակցուհու անուշադրությունից՝ խանութի դրամարկղի

վրայից գաղտնի, անհատույց, շահադիտական նպատակով հափշտակել է ընդհանուր 36200 ՀՀ դրամ արժողոթյալը թվով երկու դրամանպանակ՝ Հովհաննես Ազարյանին պարճատելով զգալի չափերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուստամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությանը, 2019 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, մուք է գործել Երևան քաղաքի Մորովական 24/33 հասցեում գործող Կրեմլական ապրանքների խանութ-արահ և օգրվելով արահի աշխատակից Վարադար Մրեհանյանի գրաղվածության հանգամանքից՝ ապրինի մուք գործելու եղանակով փորճել է գաղտնի, անհատույց, շահադիտական նպատակով հափշտակություն կատարել, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում՝ այլ անճանց խանութ-արահ եղումար անելու պարճատով, հանցանքն ավարտին չի հասցրել և առանց որևէ բան հափշտակելու հեռացել է:

Բացի այդ, Ռուստամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությանը, 2019 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 10:10-ի սահմաններում, մուք է գործել Երևան քաղաքի Մորովական 24/263 հասցեում գործող միդգ-բանջարեղենի խանութ-արահ և օգրվելով խանութի աշխատակից Զինա Մարոյանի գրաղվածության հանգամանքից՝ ապրինի մուք գործելու եղանակով խանութի դրամարկից գաղտնի, անհատույց, շահադիտական նպատակով հափշտակել է 40000 ՀՀ կանխիկ գումար՝ Ալիսան Շարաթյանին պարճատելով զգալի չափերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուստամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությանը, 2019 թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 13:30-ից մինչև 19:00-ն ընկած ժամանակահատվածում, մուք է գործել Երևան քաղաքի Սայաթ-Նովա թաղամասի 1/4 հասցեում գործող հագուարի խանութ-արահ և օգրվելով խանութի աշխատակից Ռոզա Գրիգորյանի անուշադրությունից՝ վերջինիս պայուսակից գաղտնի, անհատույց, շահադիտական նպատակով հափշտակել է 5000 ՀՀ դրամ արժողոթյալը դրամանպանակը և դրանում առկա 16000 ՀՀ դրամ գումարը, ընդհանուր՝ 21000 ՀՀ դրամ գումարի չափով գուք:

Բացի այդ, Ռուստամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությանը, Ռոզա Գրիգորյանից նախապես հափշտակված դրամանպանակում առկա, վերջինիս անունով «Բնեկրանկ» ՓԲ ընկերության բանկային քարտով, ապրինի մուք գործելու եղանակով՝ 2019 թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 17:46-ին, Երևան քաղաքի Խոդյակով 161/2 հասցեում րեղակայված «Կոնկրեթանկ» ՓԲ ընկերության բանկումարից կանխիկացրել է Ռոզա Գրիգորյանին պարկանող 250000 ՀՀ դրամ գումարը:

Բացի այդ, Ռուստամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությանը, 2019 թվականի նոյեմբերի 19-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, մուք է գործել Երևան քաղաքի Վիլոսի 37/5 հասցեում գործող «Ճարեղիկ» խանութ-արահ և օգրվելով Ալլա Մերոնյանի անուշադրությունից՝ վերջինիս պայուսակից և խանութ-արահից գաղտնի,

անհատույց, շահադիպական նպատակով համախառնել է 50000 ՀՀ դրամ գումար և 50000 ՀՀ դրամ գումարի չափով փարքեր փոստակի օժանդակներ՝ Ալյա Մելքոնյանին պարձատելով զգալի չափերի՝ 100000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կատարելու դիտարկությանը, 2019 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Փարպեցու 16 հասցեում գործող «Մակգաֆֆին» արձարան և օգրվելով խանութի աշխատակցուհի Զուլիեյրա Վերիլյանի անուշադրությունից՝ արձարանի բարի վրայից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով համախառնել է վերջինիս պարկանոց զգալի չափերի՝ 60000 ՀՀ դրամ արժողությամբ «Բսիստմի Մ5» մոդելի բջջային հեռախոսը:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կատարելու դիտարկությանը, 2020 թվականի մարտի 15-ին՝ ժամը 14:15-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Ագարոսյան 25 հասցեում գործող «Դուրսյ Դանշոֆ» խանութ-արահ և օգրվելով խանութի աշխատակցուհի Անուշ Մանանյանի անուշադրությունից՝ սպորինի մուտք գործելու եղանակով խանութ-արահի դրամարկից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով համախառնել է 200000 ՀՀ կանխիկ գումար՝ Մարինե Մանանյանին պարձատելով զգալի չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կատարելու դիտարկությանը, 2020 թվականի մարտի 19-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Վ.Վաղարշյան 19 հասցեում գործող «Շոպեյր» հագուստի խանութ և օգրվելով խանութի աշխատակցուհի Ռեբեկա Մինասյանի անուշադրությունից՝ խանութի դրամարկի վրայից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով համախառնել է վերջինիս պարկանոց զգալի չափերի՝ 200000 ՀՀ դրամ արժողությամբ «Ալֆոն 7+» մոդելի բջջային հեռախոսը:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կատարելու դիտարկությանը, 2020 թվականի մարտի 12-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, բաց դռնով մուտք է գործել Երևան քաղաքի Դ.Վարուժան 28 հասցեում գործող «Աարդիկ» բժշկական կենտրոնի բուժքույր Մարինա Վանյանի աշխատասենյակ և օգրվելով վերջինի սենյակում չինելու հանգամանքից՝ սեղանի վրայից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով համախառնել է վերջինիս պարկանոց՝ 400000 ՀՀ դրամ արժողությամբ «Սամսոնգ 9+» մոդելի բջջային հեռախոսը՝ Մարինա Վանյանին պարձատելով զգալի չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի համախառնություն կատարելու դիտարկությանը, 2020 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 14:45-ից մինչև 14:55-ն ընկած ժամանակահատվածում, սպորինի մուտք է գործել Երևան քաղաքի Անդրանիկի 5/7 հասցեում գործող «Սամվել Սարգսյան և ընկերներ» ՍՊ ընկերության ղեկավար փարիչ Հասմիկ Տալինյանի

աշխատասնյակ և օգրվելով Հասմիկ Տարինցյանի քացակայրթյունից՝ վերջինիս պայտասակից գաղրնի, սնհարույց, շահաղիարական նպարակով հաիշարակել է 80000 ՀՀ կանիիկ գումար, 47800 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար և 10600 ՀՀ դրամին համարժեք 20 ելրո՝ Հասմիկ Տարինցյանին պարճատելով զգալի չաիերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղրնի հաիշարակրթյուն կարարելու դիարավորությամք, 2020 թվականի մարրի 28-ին՝ ժամը 17:40-ից մինչև ժամը 18:20-ն ընկած ժամանակահարվածում, մուք է գորժել Երևան քաղաքի Գ.Լուսավորիչ 12 հասցեի 126 րարածքում գորժող «Ակվարիում» խանութ-արահ և օգրվելով խանութի աշխարակից Վահե Մուրաղյանի անուշաղրրությունից՝ խանութի սեղանի վրայից գաղրնի, սնհարույց, շահաղիարական նպարակով հաիշարակել է վերջինիս պարկանող 50000 ՀՀ դրամ արժողությամք «Այֆոն 6» մողելի բջջային հեռախոսը՝ Վահե Մուրաղյանին պարճատելով զգալի չաիերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղրնի հաիշարակրթյուն կարարելու դիարավորությամք, 2020 թվականի մարրի 20-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, մուք է գորժել Երևան քաղաքի Թումանյան 22 հասցեում գորժող «Անրակ» խանութ-արահ և օգրվելով խանութի աշխարակցուի Անաս Ծեկոյանի անուշաղրրությունից՝ խանութի սեղանի վրայից գաղրնի, սնհարույց, շահաղիարական նպարակով հաիշարակել է վերջինիս պարկանող 400000 ՀՀ դրամ արժողությամք «Սամսունգ Գալաքսի Էս 10+» մողելի բջջային հեռախոսը՝ Անաս Ծեկոյանին պարճատելով զգալի չաիերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղրնի հաիշարակրթյուն կարարելու դիարավորությամք, 2020 թվականի փերրվարի 9-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, մուք է գորժել Երևան քաղաքի Շիրազի 26/2 հասցեում գորժող խաղայիքների խանութ-արահ և օգրվելով Օֆելիսա Զաքարյանի անուշաղրրությունից՝ խանութի սեղանի վրայից գաղրնի, սնհարույց, շահաղիարական նպարակով հաիշարակել է վերջինիս պարկանող՝ 489900 ՀՀ դրամ արժողությամք «Այֆոն 11» մողելի բջջային հեռախոսը՝ Օֆելիսա Զաքարյանին պարճատելով զգալի չաիերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղրնի հաիշարակրթյուն կարարելու դիարավորությամք, 2020 թվականի մարրի 16-ին՝ ժամը 17:40-ի սահմաններում, մուք է գորժել Երևան քաղաքի Բահակյան 36 հասցեում գորժող «Բիք» նկարչական պարագաների խանութ և օգրվելով խանութի աշխարակիցների անուշաղրրությունից՝ Էմիլիա Մանուկյանի պայտասակից գաղրնի, սնհարույց, շահաղիարական նպարակով հաիշարակել է վերջինիս պարկանող՝ 110000 ՀՀ դրամ արժողությամք «Նոկիա» մողելի բջջային հեռախոսը՝ պարճատելով զգալի չաիերի գուքային վնաս:

Բացի այդ, Ռուարամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գուքի գաղրնի հաիշարակրթյուն կարարելու դիարավորությամք, 2020 թվականի փերրվարի 10-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, մուք է գորժել Երևան քաղաքի Սարյան 28/4 հասցեում գորժող «Ակոս» արամնարուժարան և օգրվելով կլինիկայի բուժքույր

Վարդուհի Փահանյանի անուշադրությունից՝ սրահում առկա սեղանի վրայից գաղտնի, անհատույց շահադիպական նպատակով հափշտակել է վերջինիս պարկանոց՝ 600000 ՀՀ դրամ արժողությամբ «Այֆոն 11 մաքս» մոդելի բջջային հեռախոսը՝ Վարդուհի Փահանյանին պարձատելով խոշոր չափի գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2020 թվականի փետրվարի 7-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, մուտք է գործել Երևան քաղաքի Գայի 9 հասցեում գործող մթերային խանութ և օգտվելով խանութի աշխատակցուհի Մուսաննա Վարդանյանի անուշադրությունից՝ սպորինի մուտք գործելու եղանակով խանութի սրահի դրամարկղից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է 40000 ՀՀ դրամ գումար՝ Սամվել Թենեքեջանին պարձատելով գույքային վնաս:

Բացի այդ, Ռուսրամ Մաքսիմի Սահակյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2020 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 13:40-ի սահմաններում, չկողպված դռնից սպորինի մուտք է գործել «Հրազդան ԲԿ» ՓԲԸ-ի թերապևտիկ բաժանմունքի աշխատակիցների համար նախատեսված հանդերձարան և այնտեղից գաղտնի, անհատույց, շահադիպական նպատակով հափշտակել է նույն հիմնարկի բուժքույր, Հրազդան քաղաքի բնակչուհի Մարգարիտա Շահբազյանի դրամապանակը, որի մեջ եղել է 200000 ՀՀ դրամ գումար և 101920 ՀՀ դրամին համարժեք 12000 ՌԴ ռուբլի գումար՝ Մարգարիտա Շահբազյանին պարձատելով ընդհանուր 301920 ՀՀ դրամի չափով գույքային վնաս»²:

7.1. Ռ.Սահակյանին մեղադրանք առաջադրելու մասին նախաքննության մարմնի՝ 2020 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ և մեղադրական եզրակացությամբ ակնհայտ տեխնիկական վրիպակի արդյունքում տուժող Հ.Տատինցյանի դրվագով որպես հանցանքի կատարման օրը նշվել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ը, մինչդեռ քրեական գործով հաստատվել է, որ տվյալ դրվագով հափշտակությունը կատարվել է 2019 թվականի դեկտեմբերի 23-ին³: Ընդ որում, նույն տեխնիկական վրիպակն առկա է նաև Առաջին ատյանի դատարանի դատավճռում:

7.2. Առաջին ատյանի դատարանն Ռ.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել. «(...) [Ամբաստանյալ Ռուսրամ Մաքսիմի Սահակյանի անձը, այն, որ նա առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել և զղջացել է կարարածի համար:

(...) [Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ռուսրամ Մաքսիմի Սահակյանի պարասխանարկությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է համարում այն, որ իր դրսևորած վարքագծով արժանացել [է] րուժողներից մի մասի ներողամտությանը և վերջիններս նրա նկատմամբ որևէ բողոք և պահանջ չեն ներկայացրել, զղջացել է կարարած արարքների համար և ընդունել մեղքը,

² Տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 161-168:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 237, 240 և 261-264:

ինչը որպես մեղավոր անձի հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա լրիվ գիրակցել է իր արարքների հանրային վրանգավորությունը և զղջացել է դրանց համար:

[Առաջին արյանի դատարանն ամբաստանյալ Ռուսրամ Մաքսիմի Սահակյանի պարասխանարկությունը և պարիժը ծանրացնող հանգամանք է դիտարկում հանցագործությունների ռեցիդիվը, քանի որ կարարել է դիտարկողյալ հանցանքներ և դատվածությունն ունի նախկինում դիտարկորոշյալ կարարված հանցանքի համար, որն օրենքով սահմանված կարգով մարված կամ հանված չէ»⁴:

8. Վերաքննիչ դատարանը բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում Առաջին ատյանի դատարանի դատավճռի իրավաչափության ստուգման արդյունքում կայացված դատական ակտով արձանագրել է. «Մույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ Ռուսրամ Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ի թիվս այլնի 15 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված հանցանքներ կարարելու համար: Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված հանցանքներից վերջինը Ռուսրամ Սահակյանը կարարել է 2020 թվականի մարտի 28-ին (Վահե Մուրադյանի դրվագը), սակայն հարկ է նկատել, որ ամբաստանյալին սույն քրեական գործով մեղաազրվում է ի թիվս այլնի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախարեալված միջին ծանրության հանցագործություն, որը Ռուսրամ Սահակյանը կարարել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ին (Հասմիկ Տիրանցյանի դրվագը): Եզվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ սույն քրեական գործի շրջանակներում Ռուսրամ Սահակյանին մեղաազրված արարքներից վերջինը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախարեալված արարքը, կարարվել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ին, արձանագրում է, որ մինչև այդ կարարված հանցագործությունների վաղեմության ժամկետներն ընդհարվել են 2020 թվականի դեկտեմբերի 23-ին կարարված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախարեալված միջին ծանրության հանցագործությամբ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ 15 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված արարքներով Ռուսրամ Սահակյանի նկարմամբ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման:

(...) Անդրադառնալով պաշտպանի այն պնդմանը, որ դատարանին են ներկայացվել ամբաստանյալի 2006 և 2010 թվականներին ծված երեխաների ծննդյան վկայականները, մեր հիվանդությունները հասարարող փաստաթղթերը, ինչին ընդհանրապես անդրադարձ չի կարարվել՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ թեև Առաջին արյանի դատարանը նշված հանգամանքներին անդրադարձ չի կարարել և դրանք առանձին չի արձանագրել որպես ամբաստանյալի

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 161-168:

պարասիանսարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք, այնուամենայնիվ Ռուսարամ Սահակյանի նկարմանը նշանակել է արդարացի և համաչարի պարիժ՝ հաշվի առնելով նրա անձը, մյուս պարասիանսարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, նրա կարարած հանցանքների բնույթը և վրանգավորության աստիճանը:

Ավելին՝ Վերաքննիչ դարարանը, հաշվի առնելով ամբարարանյալի կարարած հանցագործությունների քանակը, բնույթը, վրանգավորության աստիճանը, Ռուսարամ Սահակյանի արարքում հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը, գրնում է, որ Առաջին արյանի դարարանն ամբարարանյալի կողմից ազարագրկման ձևով նշանակված պարիժը կրելու նպարակահարմարության հարցը քննարկելիս հանգել է ճիշտ հերևության: Իսկ Ռուսարամ Սահակյանի անձը և նրա պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքները, այդ թվում նաև ինսամքին անչարահաս երեխաների և հիվանդ մոր առկայությունը, բավարար չեն գալու ռոջամիտ հերևության, որ ամբարարանյալի նկարմանը նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նսահարեալված պարժի նպարակների իրագործմանը:

(...) Վերաքննիչ դարարանը գրնում է, որ Ռուսարամ Սահակյանին մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (Ջուլիեղա Վեքիյանի դրվագով) Ռուսարամ Սահակյանի նկարմանը քրեական հերասպնդումը պերք է դարարեցնել ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կերի հիմքով, այն է՝ րուժողը հաշվվել է ամբարարանյալի հեր:

(...) Վերաքննիչ դարարանը գրնում է, որ Առաջին արյանի դարարանի դարավճիտը պարժի մասով պերք է բեկանել և փոփոխել և ամբարարանյալի նկարմանը նշանակված վերջնական պարժից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (Ջուլիեղա Վեքիյանի դրվագով) Ռուսարամ Սահակյանի նկարմանը նշանակված պարժի մասնակի գոմարված մասը՝ 3 սախ ժամկերը»⁵:

8.1. Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունիսի 30-ին կայացրած դատական ակտը պատճառարանել է հետևյալ կերպ. «(...) Վերաքննիչ դարարանը 2022 թվականի սարիլի 28-ի որոշմամբ մերժել է [ամբարարանյալ Ռ.Սահակյանի նկարմանը վաղեմության ժամկերն անցնելու հիմքով քրեական հերասպնդումը դարարեցնելու մասին պաշտպանի] միջնորդությունը (...):

Վերաքննիչ դարարանն արձանագրում է, որ րվյալ դեպքում ամբարարանյալ Ռուսարամ Սահակյանին առաջարկված մեղարարանքի մասը վերացնելու, փոփոխելու, լրացնելու և կրկին մեղարարանք առաջարկելու, որպես մեղարարյալ ներգրավելու մասին որոշումներում և մեղարարական եզրակացությունում նշված է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նսահարեալված՝ Հասմիկ Տարինցյանի դրվագով արարքը կարարել է 2020 թվականի դեկերեմբերի 23-ին, միևրդեռ նշված դրվագով քրեական գործ հարուցելու որոշմամբ նշված է, որ րվյալ

⁵ Տեն քրեական գործ, հատոր 17-րդ, թերթեր 55-77:

դեպքը կարարվել է 2019 թվականի դեկտեմբերի 23-ին: Բացի այդ, տուժողը նույնպես ցուցմունքներով նշել է, որ դեպքը տեղի է ունեցել 2019 թվականի դեկտեմբերի 23-ին:

Հաշվի առնելով նշվածը՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ ամբաստանյալի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներով վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցին:

(...) Բխարավճիորը կամ այլ վերջնական որոշում կայացնելուց հետո մինչև այդ պահը տվյալ քրեական գործով վարույթն իրականացնող մարմին է համարվում այն դատարանը, ում մուր գրնվում է տվյալ քրեական գործը: Այլ խուքով՝ մինչև այդ պահը քրեական գործը համարվում է տվյալ դատարանի վարույթում գրնվող: Նշվածի համարեքարում արացվում է, որ եթե դատարանները քրեական գործով կայացրել են որոշում, ապա մինչև տվյալ քրեական գործն այդ դատարաններից եքրագրելը և համապարասիան սրորարաս դատարան ուղարկելը՝ քրեական գործը համարվում է տվյալ դատարանի վարույթում գրնվող: Ընդ որում՝ նշվածի մասին է վկայում նաև այն, որ վերջնական դատական ակտը կայացնելուց հետո՝ մինչև դրա օրինական ուժի մեջ մրնելը և/կամ ի կարար աժելը, տվյալ քրեական գործով բոլոր միջնորդությունները (օրինակ կարճաժամկետ մեկնում) ներկայացվում են հենց այդ դատարանին:

(...) Վերոգրյալի հիման վրա հաշվի առնելով, որ օրենսդիրը վաղեմության ժամկետը հաշվարկում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճոի օրինական ուժի մեջ մրնելու պահը, հերևարար մինչև դատավճոի օրինական ուժի մեջ մրնելը՝ վաղեմության ժամկետը լրանալու օրվա դրությամբ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անձին քրեական պարասիանաարվույթունից ազարելու պարասկանույթուն կրում է այն դատարանը, ում վարույթում գրնվում է քրեական գործը»⁶:

Վերաքննիչ դատարանի դատավոր Մ.Հարությունյանը Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 30-ի որոշման կապակցությամբ մնացել է հատուկ կարծիքի՝ գտնելով, որ գործի վաստական հանգամանքի կրկնակի քննությունը չի բխում Վերաքննիչ դատարանի գորժառույթից: Հիշյալ որոշմամբ արձանագրված հանգամանքը կարող էր քննության առարկա հանդիսանալ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ կամ այն դիտարկվեր որպես ենթադրյալ դատական սխալ, որ կարող է ուղղվել բացառապես վերադաս դատարանի կողմից⁷:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

9. Մույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավասու էր քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն

⁶ Տն քրեական գործ, հատոր 17-րդ, թերթեր 78-90:

⁷ Տն քրեական գործ, հատոր 17-րդ, թերթեր 91-92:

անցած լինելու հիմքով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել, այն դեպքում, երբ Առաջին առյուծի դատարանի դատավճռի վերանայման արդյունքում կայացրել էր եզրափակիչ դատական ակտ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անսպառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակում «դատարան» հասկացությունն ընկալվում է տվյալ եզրույթի բովանդակային իմաստով՝ բնորոշվելով իր դատական, այն է՝ իր իրավասության շրջանակում իրավական նորմերի հիման վրա և սահմանված կարգով իրականացված ընթացակարգերի արդյունքում համապատասխան հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործառնությունը⁸:

Այն պետք է նաև համապատասխանի մի շարք այլ պահանջների, մասնավորապես՝ ցանկացած դեպքում պետք է լինի «օրենքի հիման վրա սրբեղծված»: Տվյալ արտահայտությունն արտացոլում է իրավունքի գերակայության սկզբունքը, որը ներհատուկ է Եվրոպական կոնվենցիայով և կից Արձանագրություններով սահմանված պաշտպանության համակարգին⁹: «Օրենքի հիման վրա սրբեղծված» արտահայտությունը ներառում է ոչ միայն դատարանի գոյության իրավական հիմքը, այլև դատարանի կողմից դրա գործունեությունը կարգավորող նորմերը պահպանելը¹⁰:

10. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 6-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 10) վերջնական որոշում՝ քրեական վարույթ

⁸ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Belilos v. Switzerland* գործով 1988 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 10328/83, կետ 64, *Coëme and Others v. Belgium* գործով 2000 թվականի հունիսի 22-ին վճիռը, գանգատ թիվ 32492/96 և այլ, կետ 99, *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 43:

⁹ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jorgic v. Germany* գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 74613/01, կետ 64, *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41:

¹⁰ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorguiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճռը, գանգատ թիվ 4313/04, կետ 68, *Pandjikidze and Others v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ, գանգատ թիվ 30323/02, կետ 104:

իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «(...) [Դ]ատարանը, սպարավոր [է] պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները»:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4. Դատարանի իրավասությունը, նրա կողմից քրեական դատավարության իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին գործերի կամ անձանց կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով:

(...)

6. Քրեական գործով դատարանի դատավճիռը և այլ որոշումներ կարող են վերանայել միայն համապարաստիան վերադաս դատարանները՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-719 որոշմամբ ընդգծելով քրեական արդարադատության իրականացման գործընթացում դատական ակտի ինքնուրույն դերը, արձանագրել է, որ տարբեր առյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական առյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական առյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական առյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Յուրաքանչյուր դատական առյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում¹¹:

10.1. Քրեադատավարական օրենսդրության համակարգային վերլուծությունից ելնելով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական համակարգի յուրաքանչյուր առյանում դատական վարույթն ավարտվում է վերջնական (եզրափակիչ) դատական ակտի կայացմամբ: Օրենսդիրը սահմանել է դատական յուրաքանչյուր վարույթի ընթացքը եզրափակող դատական ակտի բովանդակությունը բացահայտող տարրերը, այդ կերպ, եռաստիճան դատական համակարգի պայմաններում հստակեցնելով ոչ միայն յուրաքանչյուր առյանի դատարանի իրավասության շրջանակը, այլև դատական առյանների միջև առկա գործառույթային կապը:

Քրեական գործով դատական վարույթը եզրափակող դատական ակտում իրենց լուծումն են ստանում այդ վարույթին բնորոշ և վերջնական լուծում պահանջող հարցեր: Դատական համակարգի յուրաքանչյուր առյանում քրեական գործի վարույթն ավարտող՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակումից հետո, այդ ակտով վերջնական լուծման ենթակա

¹¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետը:

որևէ հարց նույն դատարանը կրկին քննարկել ու լուծել չի կարող: Այսինքն՝ քրեական գործով դատական վարույթի ընթացքն ավարտող դատական ակտի կայացմամբ տվյալ դատարանում քրեական գործի վարույթն ավարտվում է: Դրանից հետո դատարանն իրավասու է անդրադառնալ միայն դատական ակտի կատարմանը և դատական ակտի անհատակությանը վերաբերող հարցերին: Քրեական արդարադատության իրականացման այս կարգը որոշակի իրավիճակով պայմանավորված չի կարող փոփոխվել: Հակառակ մոտեցումը չի բխում դատական ատյանների գործառնությունների տարանջատման ապահովման պահանջներից, ինչպես նաև բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունից, համաձայն որի՝ **մի օգակի ենթադրյալ ապօրինի վարքագծի վիճարկումը պետք է հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին**¹²:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ յուրաքանչյուր դատական ատյանում քրեական արդարադատության իրականացման կարգի հստակ կանոնների, ինչպես նաև՝ քրեական գործի վարույթը եզրավակող դատական ակտի փոփոխման կանոնների պահպանումը հիմնարար իրավական արժեք է ու բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Հետևաբար, քրեական արդարադատության իրականացման ընթացքում դատական ակտով թույլ տված դատական սխալները կարող են ուղղվել միայն վերանայման գործառնությունը կրող ատյանի կողմից՝ քրեադատավարական օրենքով սահմանված՝ բողոքարկման ընթացակարգով:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանն արագացված դատական քննության արդյունքով ամբաստանյալ Ռ.Սահակյանի վերաբերյալ կայացրել է մեղադրական դատական ակտ¹³,

– վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում Առաջին ատյանի դատարանի դատավճռի իրավաչափության ստուգման արդյունքում 2022 թվականի ապրիլի 28-ին կայացված դատական ակտով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների համար հաշվարկվող վաղեմության ժամկետն ընդհատվել է Ռ.Սահակյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 23-ին նույն օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքի կատարմամբ, որպիսի պայմաններում պաշտպանի համապատասխան միջնորդությունը ենթակա է մերժման¹⁴,

– հիշյալ դատական ակտը հրապարակվելուց հետո՝ 2022 թվականի հունիսի 30-ին Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս սույն որոշման 2.1-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

հիմքով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ պատճառաբանելով, որ քանի դեռ քրեական գործը գտնվում է Վերաքննիչ դատարանում, այդ գործով քրեական հետապնդումը բացառող հանգամանքի կիրառման պարտականությունը կրում է Վերաքննիչ դատարանը, իսկ քրեական գործի նյութերից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով արարքը կատարվել է ոչ թե 2020 թվականի դեկտեմբերի 23-ին, այլ 2019 թվականի դեկտեմբերի 23-ին: Դատարանի նման լիազորության վերաբերյալ եզրահանգումը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է հետևյալ կերպ. վերջնական դատական ակտ կայացնելուց հետո՝ մինչև դրա օրինական ուժ ստանալը կամ ի կատար ածելը կամ գործն այդ դատարանից ելքագրելը և համապատասխան դատարան ուղարկելը, քրեական գործը համարվում է դատարանի վարույթում գտնվող, և որպես հետևանք՝ վարույթն իրականացնող մարմին է հանդիսանում տվյալ դատարանը¹⁵:

12. Սույն որոշման 9-10.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունիսի 30-ի որոշմամբ փաստացի վերանայել է վերաքննիչ դատարանում սույն քրեական գործի վարույթն եզրափակող իր իսկ կողմից կայացված դատական ակտը, ինչն անթույլատրելի է քրեական արդարադատության իրականացման կարգի անփոփոխելիության, իսկ որպես արդյունք՝ դատարանների միջև գործառույթների տարանջատման ապահովման տեսանկյունից:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, Առաջին ստյանի դատարանի դատավճռի օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում, 2022 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ արձանագրել է, որ ամբաստանյալ Ռ.Սահակյանին տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով վերագրված հանցանքների համար հաշվարկվող վաղեմության ժամկետն ընդհատվել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ին, և այդ օրվանից հաշվարկելու պայմանում, քրեական հետապնդումը բացառող հանգամանքը՝ վաղեմության ժամկետն անցած լինելը, առկա չէ: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի նշված որոշմամբ՝ քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի կիրառման հարցում թույլ տված հնարավոր սխալի առկայության հարցը կարող էր քննարկման առարկա դարձվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի՝ վերադաս դատարանի կողմից վերանայելու ընթացակարգով:

Մինչդեռ, տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ վարույթում գործն ըստ էության լուծող եզրափակիչ որոշում կայացնելուց հետո կայացված դատական ակտով, արձանագրելով, որ վերջնական որոշմամբ քրեական

¹⁵ Տե՛ս սույն որոշման 3.1-րդ կետը:

հետապնդումը բացառող հանգամանքի կիրառման հարցում հանգել է գործի փաստական հանգամանքներից չբխող եզրահանգման, կայացրել է համապատասխան բովանդակությամբ նոր դատական ակտ: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը սույն քրեական գործով վերջնական որոշում կայացնելուց հետո չէր կարող քննարկել ամբաստանյալ Ռ.Սահակյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը և փաստացի վերանայել իր եզրափակիչ ակտը, քանի որ այդ ակտի կայացմամբ Վերաքննիչ դատարանում սույն քրեական գործի վարույթն այդքանով ավարտված էր:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ վերջնական որոշում կայացնելուց հետո քրեական գործը գտնվել է Վերաքննիչ դատարանում, որը շարունակել է հանդես գալ որպես վարույթն իրականացնող մարմին, հետևաբար կարող է լուծել քրեական հետապնդման դադարեցման հիմքերին վերաբերող իրավահարաբերությունները, Վճռաբեկ դատարանն այդ կապակցությամբ հայտնում է իր անհամաձայնությունը և արձանագրում, որ նման մոտեցումը չի բխում քրեական դատավարության իրականացման կարգին վերաբերող պահանջներից: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերանայելու արդեն իսկ կայացված ակտով լուծման ենթակա, տվյալ դեպքում, քրեական հետապնդումը դադարեցնելուն վերաբերող հարցը: Հարկ է ևս մեկ անգամ վերահաստատել, որ դատարանում քրեական գործի վարույթի ընթացքն ավարտող, որ նույնն է՝ եզրափակիչ դատական ակտով լուծման ենթակա որևէ հարցի կապակցությամբ թույլ տված սխալի լուծման իրավասությունը միայն տվյալ դատարանի դատական ակտի վերանայման գործառույթը կրող վերադաս դատարանի տիրույթում է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման արդյունքում եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո, Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերանայել իր վերջնական դատական ակտը և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող

իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայրնասրերելով քրեական հերասպնորումը բացառող հանգամանքներ, լուծում է սմբասարանյալի նկարմնասր քրեական հերասպնորումը դադարեցնելու հարցը»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն¹⁶՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությանր կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նահասրեակված ստավելագոյն սպարիժը չի գերազանցում երկու րարի ժամկետով ազարագրկումը (...):»:

Նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մնձն ազարվում է քրեական սպարասիանասրվությունից, եթե հանցանքն ավարված համարելու օրվանից անցել են հերկյալ ժամկետները.

1) երկու րարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարված համարելու օրվանից մինչև դարավճոի օրինական ուժի մեջ մրներու սահր:

4. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դարից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու սահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական սպարասիանասրվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարված համարելու օրվանից անցել է րասը րարի, իսկ ծանր կամ ստանձնասպես ծանր հանցանքն ավարված համարելու օրվանից՝ քսան րարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհարված չի եղել նոր հանցագործությանր: (...):»

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գողությունը, որը կարարվել է զգալի չահերով՝ սպարժվում է րուզանքով՝ նվազագոյն աշխարավարձի հարյուրասպարիկից չորսհարյուրասպարիկի չահով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազարագրկմանր՝ ստավելագոյնը երկու րարի ժամկետով»:

14. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթն ու քրեական հետասպնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետասպնդում չի կարող իրականացվել,

¹⁶ Մնձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական սահանջի համաձայն՝ ամբաստանյալ Ռ.Մարգարյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու սահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նահատեակված՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական սպարասիանասրվությունից ազատելու իրավական կարգավորումը:

իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները¹⁷:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- ամբաստանյալ Ռ.Սահակյանը մեղսագրված վերջին արարքը կատարել է 2020 թվականի մարտի 28-ին¹⁸,

- ամբաստանյալ Ռ.Սահակյանը՝ 2019 թվականի նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում գտնվել է հետախուզման մեջ¹⁹,

- Առաջին աստիճանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է 2021 թվականի օգոստոսի 10-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2022 թվականի ապրիլի 28-ին²⁰: Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ 2022 թվականի հոկտեմբերի 26-ին բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ²¹:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ Ռ.Սահակյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված տասնհինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքների՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքների համար նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը, ամբաստանյալ Ռ.Սահակյանի՝ 1 (մեկ) ամիս 8 (ութ) օր ժամկետով հետախուզման մեջ լինելու հանգամանքով պայմանավորված, նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով, լրացել է **2022 թվականի մայիսի 5-ին** և այդ օրվա դրությամբ, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել, ուստի վերջինիս նկատմամբ, տասնհինգ դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի պահանջն առ այն, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողներ

¹⁷ Վաղեմության ժամկետների կիրառման պայմանների վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ասահիր Մաղաթեյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10, *Միրաժ Ղամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրասր Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիսյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ և 7.1-րդ կետերը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 1.1-րդ և 1.2-րդ կետերը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 2.1-րդ և 3-րդ կետերը:

²¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

ՄԳրիգորյանի, Ա.Մելքունյանի. Օ.Զաքարյանի, Է.Մանուկյանի, Մ.Վանյանի և Ա.Շեկոյանի քաղաքացիական հայցերը պետք է թողնել առանց քննության: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով²²:

17. Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքով ամբաստանյալին մեղսագրվող՝ ծանրացնող հանգամանքներում գողության հանցակազմում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերոնշյալ փոփոխություններն ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ հետադարձ ուժով կիրառելու հնարավորության հարցին:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Գողությունը, որը կատարվել է՝

(...)

2) խոշոր չափերով,

3) պահեպարան կամ շինություն սպորինի մուտք գործելով՝

(...)

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրասպարիկից հազարասպարիկի չափով, կամ ազատազրկմանը երկուսից հինգ տարի ժամկետով»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ « (...) 2. Գողությունը, որը կատարվել է՝

(...)

3) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմանը կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով կամ

4) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով քսանասպարիկից հիսնասպարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմանը՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմանը՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմանը՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Մեջբերված նորմերի համադրված վերլուծությունը նախ ցույց է տալիս, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ

²² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Աղդեսայանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0200/01/13 որոշումը:

հողվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված՝ գողության որակյալ հանցակազմերը համապատասխանում են 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հողվածի 2-րդ մասի՝ համապատասխանաբար 4-րդ և 3-րդ կետերին: Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հողվածի 2-րդ մասի սանկցիան, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 2-րդ մասի համեմատ, մեղմացել է՝ նախատեսում է նաև ազատազրկումից առավել մեղմ այլընտրանքային պատժատեսակներ՝ ազատության սահմանափակումը և կարճաժամկետ ազատազրկումը, որոնք նախատեսված չէին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքով: Հետևաբար, նոր քրեական օրենսգրքը մեղմացնում է ամբաստանյալին վերագրվող արարքի պատժելիությունը և այդ մասով հետադարձ ուժ ունի:

18. Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով ամբաստանյալ Ռ.Սահակյանին երեք դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված 177-րդ հողվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հողվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերով, 34-177-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ութ դրվագ՝ 177-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղսագրվող նշված հանցավոր արարքները գործող իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ռ.Սահակյանին մեղսագրվող հանցավոր արարքները համապատասխանում են երեք դրվագ՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հողվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 254-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետով, 44-254-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ութ դրվագ 254-րդ հողվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցակազմերի հատկանիշներին:

19. Անդրադառնալով ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործով կիրառելի է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հողվածով սահմանված կանոնը, քանի որ այն, գործող քրեական օրենսգրքի 76-րդ հողվածով սահմանված կարգավորումների համեմատ, անձի համար նախատեսում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու առավել նպաստավոր կանոն: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պատիժ պետք է նշանակել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հողվածի կարգով՝ համապատասխան հողվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից ոչ պակաս²³:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ չնայած երեք դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի

²³ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հողվածի 5-րդ մասի կարգավորումները որպես անձի վիճակն այլ կերպ բարելավող նորմ հետադարձ ուժով կիրառելու դեպքում կրկին առկա է հանցագործությունների ռեցիդիվ: Հետադարձ ուժով կիրառման իրավական հիմքը տե՛ս, հիշյալ օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքի 9-րդ հողվածը:

177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ նշանակված ազատագրկման պատժի ժամկետը պակաս է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, սակայն կաշկանդված լինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ դրվագներով մեղսագրված արարքները 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքին համապատասխանեցմելու արդյունքում Ռ.Սահակյանի նկատմամբ չի կարող նշանակվել ավելի խիստ պատժաչափ քան սահմանված է եղել Առաջին ատյանի դատարանի դատավճռով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ամբաստանյալի քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, կատարված հանցագործությունների բնույթն ու վտանգավորությունը, ինչպես նաև վերջինիս անձը բնութագրող տվյալները²⁴, գտնում է, որ երեք դրվագ՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Ռ.Սահակյանի նկատմամբ յուրաքանչյուր դրվագով պետք է պատիժ նշանակել ազատագրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս ժամկետով, 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետով՝ ազատագրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատագրկում՝ 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս ժամկետով և ութ դրվագ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատագրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Անդրադառնալով հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործով կիրառելի է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոնը, քանի որ այն, գործող քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համեմատ, անձի համար, ընդհանուր առմամբ, նախատեսում է պատիժ նշանակելու առավել նպաստավոր կանոններ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ պետք է նշանակել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով:

Այսպես՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետով նշանակված 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրկմանը պետք է մասնակիորեն գումարել երեք դրվագ՝ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով նշանակված 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս ժամկետով ազատագրկումից՝ 2 (երկու) ամիսը, 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նշանակված 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս ժամկետով ազատագրկումից՝ 2 (երկու) ամիսը, ութ դրվագ

²⁴ Տե՛ս, սույն որոշման 7.2-րդ և 8-րդ կետերը:

254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով նշանակված 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումից՝ 2 (երկու) ամիսը՝ անբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ պատժի կրման սկիզբը պետք է հաշվել 2020 թվականի մարտի 31-ից:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի անհատականացման գործընթացում սույն գործով արձանագրված՝ անբաստանյալի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների և նրա անձը բնութագրող տվյալների համակցությունը, չեն կարող ողջամտորեն նվազեցնել անբաստանյալ Ռ.Սահակյանի անձի և նրա կատարած արարքների հանրային վտանգավորության աստիճանն ու 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի²⁵ կիրառման հիմք հանդիսանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռուստամ Մաքսիմի Սահակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունիսի 30-ի որոշումը բեկանել:

2. Ամբաստանյալ Ռուստամ Մաքսիմի Սահակյանի վերաբերյալ տասնհինգ դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, երեք դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ութ դրվագ՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռն ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել:

Ռուստամ Մաքսիմի Սահակյանի նկատմամբ տասնհինգ դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական

²⁵ Անձի վիճակը վաղաքարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ անբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Երեք դրվագ՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Ռ.Սահակյանի նկատմամբ յուրաքանչյուր դրվագով պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս ժամկետով, 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս ժամկետով ու ութ դրվագ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ռուստամ Մաքսիմի Սահակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետով նշանակված 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարել երեք դրվագ՝ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով նշանակված 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս ժամկետով ազատազրկումից՝ 2 (երկու) ամիսը, 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նշանակված 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս ժամկետով ազատազրկումից՝ 2 (երկու) ամիսը, ութ դրվագ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ յուրաքանչյուր դրվագով նշանակված 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումից՝ 2 (երկու) ամիսը և ամբաստանյալ Ռ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Պատժի կրման սկիզբը հաշվել 2020 թվականի մարտի 31-ից:

Տուժողներ Մարիամ Գրիգորյանի, Ալլա Մելքունյանի, Օֆելյա Զաքարյանի, Էմիլիա Մանուկյանի, Մարինա Վանյանի և Աննա Շեկոյանի քաղաքացիական հայցերը թողնել առանց քննության:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռն ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

47.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՄԴ/0006/13/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

30 հունիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով դատապարտյալ Գարուն Համլետի Ասրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Գարուն Համլետի Ասրյանը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 25-ի դատավճռով դատապարտվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 300.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Գարուն Ասրյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված 300.000 ՀՀ դրամի չափով տուգանքի վճարման համար սահմանվել է մեկ տարի ժամկետ՝ պարտավորեցնելով յուրաքանչյուր ամիս վճարել նվազագույնը 25.000 ՀՀ դրամ:

2. Գատավճիորը ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնում ստացվել է 2021 թվականի մայիսի 3-ին, սակայն մինչև 2021 թվականի հունիսի 2-ը դատապարտյալ Գ.Ասրյանը չի ներկայացել պրոբացիայի ծառայություն:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ դատապարտյալ Գ.Ասրյանին հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

2021 թվականի հուլիսի 26-ին Գ.Ասրյանը ներկայացել է ՀՀ ոստիկանության Գորիսի բաժին և նույն օրը ոստիկանության աշխատակցի ուղեկցությամբ ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմին, որտեղ նրան պարզաբանվել են տուգանքի վճարման կարգն ու պայմանները, իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը՝ դրանք չկատարելու դեպքում:

3. 2021 թվականի հուլիսի 28-ին ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմինը միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Գ.Ասրյանի նկատմամբ նշանակված՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին, քանի որ վերջինս նշանակված տուգանք պատժատեսակից որևէ վճարում չի կատարել:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի հիշյալ միջնորդությունը մերժվել է՝ այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալը ժամկետային գինձառայող է:

4. 2022 թվականի օգոստոսի 19-ին պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ Գ.Ասրյանից տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետև՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը մերժվել է:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետև՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 13-ի որոշմամբ վարույթ է ընդունվել և սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, մասնավորապես, սխալ են մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ, 9-րդ, 59-րդ հոդվածների, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 28-րդ հոդվածի դրույթները:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերն ընդգծել է, որ «հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով» դրույթը դատապարտյալ Գ.Ասրյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ վերջինիս կողմից հանցանքը կատարելու պահին՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին, գործող կարգի համաձայն անձի վիճակը բարելավող օրենսդրության հետադարձ ուժի հարցում սահմանափակումներ նախատեսված չէին: Հետևաբար, դատապարտյալի նկատմամբ կիրառելի է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնը, ըստ որի՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապարասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

8. Բողոքաբերը նշել է, որ թեև տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու իրավական ընթացակարգ ՀՀ նախկին քրեական օրենսգրքով սահմանված չէր, սակայն նշված կարգավորումը պետք է դիտարկել որպես հանցանք կատարած անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող օրենք՝ նկատի ունենալով նաև, որ տվյալ ընթացակարգը դուրս է պատիժների համակարգից և ինքնին պատժատեսակ չի համարվում:

Բողոքաբերի կարծիքով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքով տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն այլևս հանրային աշխատանքներով չի փոխարինվում, իրավակիրառողին այլ տարբերակ չի մնում, քան հանրային աշխատանքների փոխարեն նշանակել ազատագրելու՝ նկատի ունենալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Հետևաբար, պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված նոր ընթացակարգն անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող օրենք է, քանի որ ինքնին այլընտրանք է դառնում ազատության իրավունքի սահմանափակմանը, ինչն ավելի մեծ արժեք է:

8.1. Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ եթե իրավակիրառողը՝ տվյալ դեպքում դատարանը, այն դիրքորոշմանն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ պայմաններն անձի իրավական վիճակը բարելավող են, և ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված տուգանքը վճարելուց

խուսափելու դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելու իրավակարգավորումներն այլևս չեն գործում, ապա այս համատեքստում ևս դատարանը պետք է կիրառեր նոր քրեական օրենսգրքով նախատեսված ընթացակարգը և տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու որոշում կայացներ. այն չկիրառելով՝ դատարանը հարկադրված է լինելու ազատագրկման ձևով պատիժ նշանակել՝ հիմք ընդունելով այն, որ հանրային աշխատանքներով փոխարինելու կառուցակարգն այլևս չի գործում:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ Մյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ մերժվել է պրոբացիայի ծառայության Մյունիքի մարզային մարմնի՝ 2021 թվականի հուլիսի 28-ի միջնորդությունը՝ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին, այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալը հանդիսանում է ժամկետային զինծառայող:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում դրա չափին համարժեք գույք բռնագանձելու իրավակարգավորումը որպես անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք դիտարկելու պայմաններում, տուգանք պատժատեսակի կատարումը գործնականում դառնալու է անհնարին՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը հանցանք կատարած անձանց նկատմամբ, մինչդեռ քրեական օրենսդրությունում այս փոփոխության կատարումը ոչ թե նման նպատակ է հետապնդում, այլ կոչված է տուգանքի դատապարտված անձի վիճակն առանց այլ կերպ վատթարացնելու ապահովել նշված պատժատեսակի կատարումը:

10. Արդյունքում բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը՝ կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով Գ.Ասրյանի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակին համարժեք գույք բռնագանձելու միջնորդությունը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

11. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի մարտի 25-ի դատավճռով Գարուն Համլետի Ասրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ որպես պատիժ է նշանակվել տուգանք՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապարիկի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ Գարուն Ասրյանի նկատմամբ նշանակված՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապարիկի չափով տուգանքի համար սահմանվել է 1 (մեկ) տարի ժամկետ՝ Գարուն Ասրյանին պարտավորեցնելով յուրաքանչյուր ամիս վճարել նվազագույնը 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

2021 թվականի ապրիլի 27-ին դատարվճիորը մերել է օրինական ուժի մեջ: Փաստորեն, Գարուն Ասրյանը դատարարվել է րուգանքի երեք հարյուրապարհիկ՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չաիով և յուրաքանչյուր ամիս նս պարարավոր էր վճարել 25.000 ՀՀ դրամ: Դատարանն արձանագրում է, որ Գարուն Ասրյանը նշանակված րուգանքից որևէ մաս չի վճարել:

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խարացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենսդրությունը հերադարձ ուժ չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «Տուգանքը վճարելուց խուսաիելու դեպքում րնագանձվում է դատարանի որոշած րուգանքի չաիին համարժեք գույք, եթե այդպիսին սուկա է: Եթե այդպիսի գույք սուկա չէ, ապա րուգանքը փոխարինվում է ազարագրկմամբ՝ ազարագրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխարավարձի դիմաց»:

Դատարանն արձանագրում է, որ նշված նորմի կիրառումը Գարուն Ասրյանի նկարմամբ անթույլարելի է, քանի որ այն ուղակիորեն վարթարացնում է վերջինիս վիճակը, քանի որ նրա կողմից հանցանքը կատարվել է 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի կիրառման ժամանակ, որով այդպիսի կառուցակարգ նախատեսված չի եղել (...):»:

12. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Գարուն Ասրյանի կողմից հանցավոր արարք կատարելու ժամանակ գործող 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և նույն թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մերած Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետև նսն 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրք) 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պարժելիությունը որոշվում են դս կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խարացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքը հերադարձ ուժ չունի»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մերած ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետև նսն՝ 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրք) 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը, պարժելիությունը և քրեաիրավական այլ հերևանքները որոշվում են դս կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խարացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենսդրությունը հերադարձ ուժ չունի»:

¹ Տես նյութեր, թերթ 31:

2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնազանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին սուկա է: Եթե այդպիսի գույք սուկա չէ, սպա տուգանքը փոխարինվում է ազատազրկմանը՝ ազատազրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց» (2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նման կառուցակարգ նախատեսված չի եղել):

Առաջին ասրյանի դատարանի որոշման վերը նշված հիմնավորումները դիտարկելով վերոգրյալ իրավական նորմերի լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այդ հիմնավորումներն ամբողջությամբ բխում են դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր չհամարելով դատախազի վերաքննիչ բողոքի փաստարկները, հարկ է համարում նշել, որ հանցավոր արարքի համար նշանակված պարժի փոխարինման հարցերը հանդիսանում են այդ արարքի քրեաիրավական հետևանքներ, որպիսի պայմաններում հանցանք կատարած անձի համար այդ քրեաիրավական հետևանքները վարժարացնող օրենքը չի կարող ունենալ հետադարձ ուժ:

Անհուփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ անհուփոփ թողնելով Առաջին ասրյանի դատարանի որոշումը (...)²:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված տուգանքի չափին համարժեք գույք բռնազանձելու վերաբերյալ կարգավորումն անձի վիճակը վատթարացնող դիտարկելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգրք) 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խարացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ «4. Դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով տուգանքը վճարելու անհնարինության դեպքում՝ հանրային աշխատանքների երեք ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց, իսկ տուգանքը վճարելուց չարանորոն խուսափելու դեպքում՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու

² Տե՛ս նյութեր, թերթեր 86-87:

համար կատարված հաշվարկի արդյունքը գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, սպա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ: Տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարվող հաշվարկի արդյունքում ժամային արժեքները կորացնելը կատարվում է դատաստատարչայի օգրին»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «8. Եթե դատաստատարչայի ի վիճակի չէ անհատադ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, սպա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում՝ առավելագույնը 1 տարի, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Եթե տուգանքը նշանակելուց հետո դատաստատարչայի նյութական վիճակի վարթարացման հետևանքով նա գրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից, սպա դատարանը, հաշվի առնելով դատաստատարչայի դիրթորոշումը՝

- 1) երկարաձգում է տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 1 տարով,
- 2) նշանակում է հանրային աշխատանքներ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկելով հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով:

(...)

11. Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին առկա է: Եթե այդպիսի գույք առկա չէ, սպա տուգանքը փոխարինվում է ազատագրկմանը՝ ազատագրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց»:

15. Մեջբերված նորմերի համեմատական վերլուծությունից երևում է, որ նախկին և գործող խնբագրությամբ քրեական օրենսգրքերում տուգանքը չվճարելու դեպքում նախատեսվել են տարբերվող իրավակարգավորումներ: Մասնավորապես, ՀՀ նախկին քրեական օրենսգրքով տուգանքը չվճարելու դեպքում այն փոխարինվում էր **հանրային աշխատանքներով**՝ երեք ժամը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց՝ տուգանքը վճարելու **անհնարինության դեպքում**, և հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց՝ տուգանքը վճարելուց **չարանորոեն խուսափելու դեպքում**:

ՀՀ գործող քրեական օրենսգրքով տուգանքը չվճարելու դեպքում օրենսդիրը նախատեսել է քննարկվող պատժատեսակի կատարումն ապահովող տարբեր մեխանիզմներ՝ պայմանավորված այն հանգամանքով՝ առկա է տուգանքը վճարելու անհնարինություն, թե խուսափում: Մասնավորապես, տուգանքը վճարելու **անհնարինության** դեպքում կան երկարաձգվում է դրա վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը մեկ տարով, կան նշանակվում են հանրային աշխատանքներ: Մինչդեռ, դատաստատարչայի կողմից տուգանքը վճարելուց **խուսափելու** դեպքում օրենսդիրը, նախքան տուգանքն այլ պատժատեսակով փոխարինելը, նախատեսել է տուգանքի չափին **համարժեք գույք բռնագանձելու հնարավորություն**, եթե այդպիսին առկա է: Գույքի բացակայության դեպքում տուգանքը փոխարինվում է ազատագրկմանը՝ երեք օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

16. Անդրադառնալով տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու կարգավորմանը՝ անհրաժեշտ է փաստել, որ այն, ըստ էության, նորոյթ է հայրենական քրեական օրենսդրությունում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկվող ինստիտուտը նախնառաջ միտված է ապահովելու տուգանք պատժատեսակի պատշաճ կատարումը, ընդ որում՝ անձի իրավունքներին հնարավորինս նվազ միջամտությամբ: Այսպէս՝ տուգանքի չափին համարժեք գույքի բռնագանձումն *ինքնին պարժարեսակ չէ և ընդգրկված չէ* քրեական օրենսդրությամբ սահմանված *պարժի համակարգում, չունի պարժիչ բնույթ*, քանի որ դրա միակ նպատակը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատժի կատարումն ապահովելն է: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հատկապէս կարևորում է բռնագանձվող գույքի և տուգանքի չափի միջև համաչափության ապահովման՝ օրենսդրորեն ամրագրված երաշխիքը, ըստ որի՝ տուգանքը վճարելուց խուսափելու դէպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին *համարժեք* գույք:

16.1. Քննարկվող ինստիտուտը դիտարկելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորման համատեքստում, ըստ որի՝ տուգանքը վճարելուց խուսափելու դէպքում այն *միանգամից փոխարինվում էր մեկ այլ պարժարեսակով՝ հանրային աշխատանքներով*, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ բռնագանձման պարագայում պատժատեսակի փոփոխություն, որպէս այդպիսին, տեղի չի ունենում: Այլ կերպ՝ նախքան չվճարված տուգանքն ավելի խիստ պատժատեսակով փոխարինելը, օրենսդրորեն նախատեսվել է *միջանկյալ հնարավորություն՝ րուգանքի կարարումն ապահովող ինքնուրույն գորժիք*, որը թույլ է տալիս համնելու դատարանի դատավճռով նշանակված պատժի կատարմանը՝ անձի իրավունքների համեմատաբար նվազ սահմանափակման արդյունքում:

Այս առումով, համեմատության մեջ դիտարկելով հանրային աշխատանքներ պատժատեսակը և տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու կարգավորումը, անհրաժեշտ է արձանագրել, որ հանրային աշխատանքները թե՛ նախկին, թե՛ գորժող քրեական օրենսգրքերով նախատեսված են որպէս *հիմնական պարժարեսակ*, ընդ որում պատժի համակարգի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն *ավելի խիստ պարժիժ է, քան րուգանքը*: Այսպէս՝ ՀՀ գորժող քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածով նախատեսված պատժի համակարգում պատժատեսակներն ունեն հստակ տրամաբանական դասավորվածություն, մասնավորապէս, համակարգված են նվազ խիստ պատժից դեպի առավել խիստը հաջորդականությամբ, իսկ ինչպէս նախկին, այնպէս էլ գորժող քրեական օրենսդրությամբ *րուգանքը նախորդում է հանրային աշխատանքներին*: Միևնույն ժամանակ, եթե տուգանքն օրենսդրորեն սահմանվում է որպէս դրամական տուժանք, որն արտահայտվում է *դարապարբայի գույքային իրավունքների սահմանափակմամբ*, ապա հանրային աշխատանքները, ըստ էության, հարկադրական բնույթ ունեցող, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում իրականացվող, չվարձատրվող աշխատանքներ են, որոնք արտահայտվում են *անձի ֆիզիկական*

ազատության որոշակի առումով սահմանափակմամբ: Բացի այդ, տուգանքի համեմատությամբ հանրային աշխատանքներ պատժատեսակի ավելի խիստ լինելու մասին է վկայում նաև այն, որ թե՛ նախկին, թե՛ գործող քրեական օրենսդրությամբ տուգանքը չվճարելու դեպքում նախատեսված են այն հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ կառուցակարգեր:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 15-16.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կատարված փոփոխությունն ըստ էության **պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է**, քանի որ թույլ է տալիս տուգանքն անմիջաբար չփոխարինել ավելի խիստ պատժատեսակով, հետևաբար նշված փոփոխությանը պետք է հետադարձ ուժ տրվի:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև գործող քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված արարքների դեպքում, եթե դատապարտյալը խուսափում է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց, դատարանը համապատասխան միջնորդության քննարկման արդյունքում պետք է տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ դատական ակտ կայացնի: Համապատասխան գույքի բացակայության դեպքում միայն նշանակված տուգանքը կարող է փոխարինվել հանրային աշխատանքներով՝ նախկին դատավարական ընթացակարգերին համապատասխան, քանի որ գործող քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգավորումը՝ տուգանքի չափին համարժեք գույքի բացակայության դեպքում այն ազատագրկմամբ փոխարինելը, անձի համար ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող է, ուստի հետադարձ ուժ չի կարող ունենալ:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մերժել է Գ.Ասրյանից տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի՝ 2022 թվականի օգոստոսի 19-ի միջնորդությունը՝ ընդգծելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված նորմի կիրառումը դատապարտյալի նկատմամբ անթույլատրելի է, քանի որ այն ուղղակիորեն վատթարացնում է վերջինիս վիճակը: Մասնավորապես, Գ.Ասրյանի կողմից հանցանքը կատարվել է 2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի գործողության ժամանակ, որով այդպիսի կառուցակարգ նախատեսված չի եղել³:

Վերաքննիչ դատարանը մերժել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ներկայացված բողոքը՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորումներն ամբողջությամբ բխում են օրենքով սահմանված կարգավորումներից և ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար⁴:

³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-17-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և դրանց վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների այն դիրքորոշումը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված իրավակարգավորումն անձի վիճակը վատթարացնող է՝ *միայն այն պարճառաբանությամբ, որ պրայիսի կառուցակարգ 2003 թվականի սպրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չի եղել*, չի կարող հիմնավոր համարվել:

Մասնավորապես, ստորադաս դատարանները վերոնշյալ նորմը չեն դիտարկել նախկին քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների համատեքստում, որոնց համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ կատարված փոփոխություններն *ընդհանուր սումամբ անձի համար պարասահանարվությունը մասնակիորեն մեղմացնող են*, քանի որ թույլ են տալիս նշանակված տուգանքն անմիջաբար չփոխարինել ավելի խիստ պատժով՝ հանրային աշխատանքներով՝ նախատեսելով միջանկյալ գործիքակազմ: Այլ կերպ՝ բռնագանձման ինստիտուտի կիրառմամբ, անձի նկատմամբ դատարանի դատավճռով նշանակված տուգանքն այլ՝ ավելի խիստ պատժատեսակով չի փոխարինվում, քանի որ բռնագանձումն ինքնին պատժատեսակ չէ և դուրս է պատժի համակարգից: Ընդհակառակը, դրա կիրառմամբ դատապարտյալի պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացվում է:

19.1. Վերոշարադրյալ դատողությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կարգավորումն անձի վիճակը վատթարացնող դիտարկելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

20. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված իրավակարգավորումն անձի իրավական վիճակը բարելավող է և դրան պետք է հետադարձ ուժ տրվի ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, քանի որ արարքի կատարման պահին գործող նշված նորմով անձի վիճակը բարելավող օրենսդրության հետադարձ ուժի հարցում որևէ սահմանափակում նախատեսված չէր՝ ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի⁵, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն եզրահանգմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված նորմն անձի վիճակը բարելավող է: Այսպես՝ հիմք ընդունելով սույն որոշման 16.1-17-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուգանքի չափին

⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ փոփոխությունն ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող կարգավորում է:

Երկրորդ՝ քրեական օրենսդրության հետադարձ ուժի կանոնը նախկին քրեական օրենսգրքի համապատասխան կարգավորումների համեմատ խստացվելու պարագայում, դրան հետադարձ ուժ չտալու վերաբերյալ բողոքաբերի փաստարկը Վճռաբեկ դատարանի համար ևս ընդունելի չէ:

Այսպես՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածում ամրագրված են քրեական օրենսդրության հետադարձ ուժի ընդհանուր կանոնները, որոնց հիման վրա «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել են 2022 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ դրվող 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-9-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու հետևանքով հանցավորության լրիվ կամ մասնակի վերացումը, պատժի մեղմացումը կամ հանցանք կատարած անձի վիճակի այլ կերպ բարելավումն ապահովվում է՝ հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված կանոնները: Այլ կերպ՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու և դրանով ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահից՝ 2022 թվականի հուլիսի 1-ից, ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված հետադարձության կանոններն անմիջական գործողություն են ստացել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական օրենսդրության հետադարձությունը սահմանող նորմը քրեական օրենսգրքի գործողության ընդհանուր կանոն է, որն անմիջականորեն սկսում է գործել քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահից՝ անկախ այն հանգամանքից՝ վերոնշյալ կանոնը նախկին քրեական օրենսդրության համեմատ խստացվել, թե մեղմացվել է:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8-8.1-րդ կետերում մեջբերված փաստարկներին առ այն, որ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելու իրավակարգավորումներն այլևս չեն գործում, իրավակիրառողին այլ տարբերակ չի մնում, քան հանրային աշխատանքների փոխարեն ազատագրվում նշանակել՝ նկատի ունենալով նախկին քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված նոր ընթացակարգն անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող օրենք է, քանի որ ինքնին այլընտրանք է դառնում անձի ազատության իրավունքի սահմանափակմանը, ինչն ավելի մեծ արժեք է, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը. հանցանքը նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում կատարվելու

դեպքում, ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանված՝ տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կարգավորումը ոչ թե այլընտրանք է դառնում ազատագրկմանը, ինչպես փաստարկել է բողոք բերած անձը, այլ միջանկյալ գործիք է, որը թույլ է տալիս դատարանի դատավճռով նշանակված տուգանքն անմիջաբար չփոխարինել հանրային աշխատանքներով: Ուստի, հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուգանքի չափին համարժեք գույքի բացակայության դեպքում այն պետք է փոխարինվի հանրային աշխատանքներով՝ նախկինում գործող դատավարական ընթացակարգերին համապատասխան:

22. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկման առարկա դարձնել չվճարված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կարգավորումը Գ.Ասրյանի նկատմամբ կիրառելու հնարավորության հարցը:

Թեև սույն որոշման շրջանակներում կատարված վերլուծությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված կարգավորումն ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է, այնուամենայնիվ դրա կիրառելիության հարցը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկման ենթարկվի կոնկրետ գործի փաստական տվյալների համատեքստում, քանի որ հնարավոր են այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, որոնց ուժով ընդհանուր առմամբ մեղմացնող կարգավորումը կոնկրետ դեպքում ոչ միայն այդպիսի նշանակություն չունենա, այլ հակառակը՝ որևէ կերպ վատթարացնի անձի վիճակը:

Այսպես՝ սույն գործի փաստերից հետևում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնի միջնորդությունը՝ Գ.Ասրյանի նկատմամբ նշանակված 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին, մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալը ժամկետային զինծառայող է⁶: Այլ կերպ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է, որ առկա է Գ.Ասրյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ օրենսդրական արգելք:

Մասնավորապես, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գրնվող զինծառայողների նկատմամբ»*: Ընդ որում, զինվորական ծառայության մեջ գրնվող անձի նկատմամբ հանրային աշխատանքներ նշանակելու արգելք նախատեսված է նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասով:

⁶ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշման 15-17-րդ կետերում կատարված վերլուծությունից հետևում է, որ նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում հանցանք կատարելու դեպքում տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու ինստիտուտն ըստ էության միջանկյալ գործիք է, որը թույլ է տալիս դատարանի դատավճռով նշանակված տուգանքն անմիջապես չփոխարինել հանրային աշխատանքներով, այսինքն՝ դատարանը պետք է նախ և առաջ քննարկի տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու հարցը, իսկ այդպիսի գույքի բացակայության փաստը հաստատվելու դեպքում՝ տուգանքը փոխարինի հանրային աշխատանքներով: Ուստի, եթե ի սկզբանե առկա է նշանակված տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներով փոխարինելու անհնարինություն, ապա բռնագանձման ինստիտուտն անձի համար ձեռք է բերում վատթարացնող բնույթ, հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, չի կարող հետադարձ ուժ ունենալ:

23. Այսպիսով, սույն որոշմամբ կատարված վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թեև սխալ է հիմնավորել այն, սակայն կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է ներկայացված վճռաբեկ բողոքը մերժել և Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 359-րդ, 361-րդ, 363-րդ, 385-386-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Գարուն Համլետի Ասրյանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0088/01/08

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕԱՆՅԱՆԻ

21 հուլիսի 2023 թվական

ք. Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշման դեմ Մելիք Հովսեփի Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռով Մելիք Հովսեփի Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

2. 2008 թվականի օգոստոսի 16-ին պաշտպան Մ.Առուստամյանը բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ խնդրելով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և իր պաշտպանյալին արդարացնել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննություն:

2008 թվականի սեպտեմբերի 1-ին Վերաքննիչ քրեական դատարանում ստացվել է Մ.Գրիգորյանի դիմումը, որով վերջինս խնդրել է իր պաշտպանի

կողմից բերված վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության: Նույնաբովանդակ դիմում է ներկայացրել պաշտպան Մ.Առուստամյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ քրեական գործով վերաքննիչ վարույթը կարճվել է:

2.1. 2019 թվականի մարտի 22-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռի հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ ՄԳրիգորյանի բողոքը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2019 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ՝ ՄԳրիգորյանի բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելը մերժել է՝ բողոքը ոչ պատշաճ անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

2.2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշմամբ, Առաջին աստիճանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ հիմնարար խախտման հիմքով ՄԳրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

3. 2022 թվականի ապրիլի 28-ին ՄԳրիգորյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշման դեմ, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

4. Բողոք բերած անձը, հղում կատարելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 21-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման մասին ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին, նշել է, որ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ դատավարական և նյութական իրավունքի խախտումներ, որոնք իր համար առաջացրել են ծանր հետևանքներ:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի վճռաբեկ բողոքը քննվում է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է դատավարական նորմերի խախտմամբ, ինչպես նաև Եվրոպական դատարանի կողմից՝ 2008 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումների անտեսմամբ:

Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ իր նկատմամբ կայացված դատավճռի հիմքում դրված են եղել բացառապես ոստիկանության ներկայացուցիչների ցուցմունքները, նախաքննության և դատաքննության ընթացքում որևէ վերաբերելի և թույլատրելի այլ ապացույց չի ներկայացվել, իսկ ստորադաս դատարանը հաշվի չի առել իր կողմից տրված արդարացնող ցուցմունքները, ինչպես նաև այն, որ Ազատության հրապարակում տեղի ունեցող խաղաղ հավաքին, որին մասնակցել է նաև ինքը, միջամտել են ապօրինի կերպով:

5. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի՝ հիմնարար խախտման հիմքով բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Քրեական գործով կազմված մեղադրական եզրակացության համաձայն՝ Մելիք Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ն]ա անմիջական մասնակցություն է ունեցել 2008թ. փետրվարի 19-ին կայացած ՀՀ նախագահի հերթական ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, և երբ Երևանի Ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային, միջոցառումների մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագանների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրականացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008թ. մարտի 1-ին ժ. 07-ի սահմաններում հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել արուզելու նրանց մոտ զենքի և ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը հրապարակային միջոցառման մի շարք մասնակիցներ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողներին դիմադրություն ցույց տալու նպատակով հարձակվել են նրանց վրա, իսկ Մ.Գրիգորյանը չենթարկվելով վերջիններիս օրինական պահանջներին, իրեն մոտենալու դեպքում ձեռքին եղած մեղադրանքով հարվածելու եղանակով բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել ՀՀ ոստիկանության

Մալաթիայի բաժնի աշխատակիցներին՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետք»²:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռով ապացուցված է համարվել, որ ՄԳՐի գորյանը, չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, իրեն մոտենալու դեպքում ձեռքին եղած մետաղաձողով հարվածելու եղանակով բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել իրենց ծառայողական պարտականությունները կատարող ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցներին³:

7.1. Առաջին ատյանի դատարանն իր կողմից հաստատված հանգամանքների հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցներ Արման Կիրակոսյանի, Գեորգի Այվազյանի, Մարատ Թելոյանի, Սմբատ Հակոբյանի՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքները⁴:

8. Վերաքննիչ դատարանը 2022 թվականի մարտի 24-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ հիմնարար խախտման հիմքով ՄԳՐի գորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժել է՝ նշելով հետևյալը. «(...) [Վ]երաքննիչ բողոքում դատապարտյալը բարձրացրել է զուր գործով ապացույցների պարզ վերազնափաստման հարց՝ նշելով, որ Դատավճռի հիմքում դրվել են բացառապես ոստիկանության ծառայողների միակողմանի ցուցմունքները, իսկ սրտուստիկանա դատարանը հաշիվ չի առել իր կողմից փրված իրեն արդարացնող ցուցմունքները:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատապարտյալի վերաքննիչ բողոքում վկայակոչված ենթադրյալ խախտումը չունի առավել ծանր բնույթ, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը: Այլ կերպ ասած՝ դատապարտյալի վերաքննիչ բողոքում չի վկայակոչվել այնպիսի ենթադրյալ հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքում վկայակոչված՝ Մուշեղ Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի, Դավիթ Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներին, ինչպես նաև Վահե Ղազարյանի վերաբերյալ թիվ ԵԶԲԴ/0198/01/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմանը, սպա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այդ գործերի և սույն գործի փաստական հանգամանքներն ունեն էական տարբերություններ, հերևաբար՝ այդ դատական ակտերի սովորությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ սույն գործով դատապարտյալ Մելիք

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 182-186:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 323-324:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Գրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքում վկայակոչված հիմնարար խախտման հիմքերի բավարարությունը փաստելու համար: Այսպես՝

– վերաքննիչ բողոքում վկայակոչված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանը՝ որպես դատարանում գործի քննության ընթացքում պաշտպանության իրավունքի խախտում և, ըստ այդմ, արդարադատության պարզաճ իրականացման համար խոչընդոտ են դիարկել այն հանգամանքը, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել դատարան հրավիրելու իրենց վկաներին և սպացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի րակ էին դնում ոսրիկանության աշխարակիցների կողմից ներկայացված րվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը,

– սույն գործով դատասպարտյալի կողմից հիմնարար խախտման հիմքով բերված վերաքննիչ բողոքում որևէ փասարակ առկա չէ առ այն, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել սրորադաս դատարան հրավիրելու իրենց վկաներին:

Անհրոհելով վերագրյալը՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատասպարտյալ Մելիք Գրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքում վկայակոչված չեն հիմնարար խախտման բավարար հիմքեր, որպիսի պայմաններում հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:(...)»⁵:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև քարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք ՄԳրիգորյանի կողմից Առաջին առյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ հիմնարար խախտման հիմքով բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դարվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապարասիան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ րեղ են գրել հիմնարար թերույթուններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դարվի կամ քրեական դարավարության կարգով պարժվի այն հանցագործության կասակցությանը, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատասպարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապարասիան:

⁵ Տեն քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 22-30:

2. Նախորդ կերի որոյթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պերոյթյան օրենքին և քրեական դատարարոյթյանը համապարասիան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր րացահայրված րասարեր, կամ նախորդ րնության ժամանակ րեղ են գրել էական թերոյթոններ, որոնք կարող էին աղղել դրա արղոյնքի վրա (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրոյթյան 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանոյթոնները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրոյթոնը և թույլատրեն գործով վարոյթի վերսկում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիրոյթյան սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատոյթյան իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ⁶:

Միննոյն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ 7-րդ արձանագրոյթյան 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացոյթոնը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լորջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարոյթյան ամբողջականոյթոնը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործոյթյան համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացոյցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրոյթյան Բացատրական զեկոյցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի րնությանը՝ հօգուր դարասպարված անձի, և դարական սկրի ցանկացած այլ րոփոխոյթյանը՝ ի շահ դարասպարոյթյաի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման րնոյթը նախևառաջ ենթակա է զնահատման՝ պարզելու համար, թե արդոյթը թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդոյթը գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատոյթյան պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրոյթյան 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «աղղեն գործի ելքի վրա»՝ կամ հօգուտ անձի, կամ հակառակը⁷:

⁶ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

⁷ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019

10.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

10.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Նույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

10.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն»:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»⁸:

10.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ, ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճառահերևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատասարտելուն, նրա նկարնամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից բուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճառով մասսը հարուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեսանցի կայացված

թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

⁸ Տես, Վճռաբեկ դատարանի՝ Մկրտիչ Սարգսյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

դատարանի սկզբի դերն ու նշանակությունը: Մասնավորապես այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատարանի սկզբը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատարարություն է այնպիսի արարքի համար, որը արացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»⁹:

11. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկասի ու անաչտ դատարանի կողմից որոշամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:(...)»:

11.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանի ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով¹⁰ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– որոշելու համար, թե արդյո՞ք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյո՞ք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և արդյո՞ք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Իլյումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ¹¹,

– չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին¹²,

– Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

⁹ Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

¹¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետերը, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, կետեր 199-200:

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով նշված վճիռը, կետ 206 :

գտել է, որ այդ վարոյթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹³:

11.2. Միևնույն ժամանակ, անդրադառնալով նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների համակցությանը, Եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրել է նաև, որ՝

ա) առկա չեն բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք թույլ կտան եզրակացնել, որ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի կազմակերպիչները և մասնակիցները, բռնի մտադրություններ են ունեցել, և որ տվյալ հավաքը խաղաղ չի եղել¹⁴,

բ) առանց բավարար հիմնավորման և ակնհայտորեն առանց ցրելու մասին նախազգուշացման, ինչպես նաև չհիմնավորված և չափից ավելի ուժի օգտագործմամբ Ազատության հրապարակի հավաքը ցրելն անհամաչափ միջոց է եղել, որը իշխանությունների կողմից հավաքների ազատությունը սահմանափակելիս անցել է ողջամտության սահմանները¹⁵,

գ) դիմումատուների դատապարտումը կապված է եղել նրանց՝ ընդդիմության կողմից դեկավարվող բողոքի շարժմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հետ: Հետևաբար, դատարանը ենթադրել է, որ փաստերի ամբողջությունը, որոնց վրա հիմնված էին վերջիններիս քրեական հետապնդումը և դատապարտումը, վիճելի հիմքերով կարող են համարվել որպես իրենց՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի նկատմամբ «միջամտություն»¹⁶,

դ) խաղաղ հավաքների ազատությանը վիճարկվող միջամտությունը կարող էր որակվել որպես ակնհայտ կամայական և համապատասխանաբար՝

¹³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, կետ 64, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվական դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, կետ 83, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, կետ 165:

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 233:

¹⁵ Տե՛ս նույն վճիռը, կետ 248:

¹⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 49021/08, կետ 129, *Jhangiryan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատներ 44841/08 և 63701/09, կետ 123, *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, կետ 234:

անօրինական, Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի նպատակների համար¹⁷:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ՄԳրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, անմիջական մասնակցություն ունենալով Երևան քաղաքի Ազատության հրապարակում ընթացող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որոնց ընթացքում՝ 2008 թվականի մարտի 1-ին ժամը 07:00-ի սահմաններում նշյալ միջոցառումների մասնակիցներից, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու շրջանակներում, ոստիկանության աշխատակիցները պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի և ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, և միջոցառման մի շարք մասնակիցներ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողներին դիմադրություն ցույց տալու նպատակով հարձակվել են նրանց վրա, ՄԳրիգորյանը, չենթարկվելով վերջինների օրինական պահանջներին, իրեն մոտենալու դեպքում ձեռքին եղած մետաղաձողով հարվածելու եղանակով բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցներին՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ¹⁸,

- Առաջին ատյանի դատարանը 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռով սպացուցված է համարել, որ ՄԳրիգորյանը բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել ոստիկանության աշխատակիցներին՝ իր դատական ակտի հիմքում դնելով վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցներ Արման Կիրակոսյանի, Գեորգի Այվազյանի, Մարատ Թեղոյանի, Սմբատ Հակոբյանի՝ նախաքննության և դատաքննության ժամանակ տված ցուցմունքները¹⁹,

- Վերաքննիչ դատարանը, 2022 թվականի մարտի 24-ի որոշմամբ, մերժելով Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ հիմնարար խախտման հիմքով ՄԳրիգորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը, նշել է, որ բողոքում չի վկայակոչվել այնպիսի ենթադրյալ հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ բողոքում վկայակոչված՝ Եվրոպական դատարանի վճիռների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի որոշման

¹⁷ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով վճիռը, կետ 132, *Jhangiryan v. Armenia* գործով վճիռը, կետ 126, ինչպես նաև *Hakobyan and Others v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 34320/04, կետ 107:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ և 7.1-րդ կետերը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

և ՄԳրի գորյանի վերաբերյալ գործի փաստական հանգամանքների միջև առկա են էական տարբերություններ, ինչից էլ բխում է, որ հիշյալ դատական ակտերի առկայությունն ինքնին հիմք չէ ՄԳրի գորյանի կողմից բերված վերաքննիչ բողոքում վկայակոչված հիմնարար խախտման հիմքերի բավարարությունը փաստելու համար: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերը հիշյալ դատական ակտերով՝ արդարադատության պատշաճ իրականացման համար խոչընդոտ է դիտարկվել այն հանգամանքը, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու իրենց վկաներին և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը, մինչդեռ սույն գործով ՄԳրի գորյանի կողմից հիմնարար խախտման հիմքով բերված վերաքննիչ բողոքում որևէ փաստարկ առկա չէ առ այն, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռնվել ստորադաս դատարան հրավիրելու իրենց վկաներին²⁰:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11.2.-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս, նախորդ դատաքննության ընթացքում հիմնարար խախտումների առկայության հարցը փոխկապակցելով միայն բողոքում՝ պաշտպանության կողմի՝ իրենց վկաներին հրավիրելու և ապացուցողական զանգվածում նրանց ցուցմունքները ներառելու վերաբերյալ փաստարկ չներկայացնելու հետ, համակողմանի քննության չի արժանացրել բողոքաբերի կողմից վկայակոչված՝ ինչպես բացառապես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների հիման վրա մեղադրական դատական ակտ կայացնելու, այնպես էլ Ազատության հրապարակում կատարված իրադարձությունների խաղաղ բնույթ կրելու վերաբերյալ այն փաստարկները, որոնց կապակցությամբ Եվրոպական դատարանն արդեն իսկ տվել է իր՝ վերը մեջբերված գնահատականները, և որոնք Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, առերևույթ կարող էին վկայել հիմնարար խախտման առկայության մասին:

14. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՄԳրի գորյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ հիմնարար խախտման հիմքով բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

15. Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, մերժելով ՄԳրի գորյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը վարույթ ընդունելը, թույլ է տվել

²⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սխալ մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը՝ չի պահպանել այն, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռի դեմ ՄԳրիգորյանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

16. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մելիք Հովսեփի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԻ/0001/07/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական սպայար
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

28 հուլիսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի հետաքննիչ Ս.Սարգսյանի՝ 2020 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ, հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 86161720 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. 2020 թվականի նոյեմբերի 23-ից թիվ 86161720 քրեական գործի նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում:

3. Նախաքննության մարմինը 2021 թվականի հունվարի 18-ի որոշմամբ միջնորդություն է հարուցել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով թույլատրել խուզարկություն կատարել Արթուր Ռաֆիկի

Բաղդասարյանի՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի որոշմամբ նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդությունը մերժվել է:

5. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատախազը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մարտի 15-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ: Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները, անհիմն մերժելով նախաքննության մարմնի՝ բնակարանում խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը, թույլ են տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և խախտել է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

7.1. Բողոքաբերը փաստարկել է, որ խուզարկության փաստական հիմքը կազմող տվյալների առկայության պայմաններում, Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը փաստացի գրկել են քրեական հետապնդման մարմիններին՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները ձեռնարկելու հնարավորությունից՝ սահմանելով օրենքով չնախատեսված ժամկետային սահմանափակումներ: Անդրադառնալով խուզարկության փաստական հիմքը կազմող տվյալների ձեռք բերման և այդ քննչական գործողության կատարման միջև ժամանակային կարճ խզման դեպքում խուզարկության արդյունավետությանը՝ բողոքաբերը փաստել է, որ քրեագիտության մեջ լայն տարածում գտած այդ մոտեցումը ինքնին հիմք չէ ներկայացված միջնորդությունը մերժելու համար: Իբրև հիմնավորում՝ բողոքաբերը նշել է նաև, որ իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ վարույթի հետագա փուլերում կատարված կամ կրկնակի խուզարկությունները եղել են արդյունավետ: Բողոքաբերը նաև ընդգծել է, որ

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

քննչական գործողությունների արդյունավետությունը, հանցագործությունների քննության մեթոդիկան և առանձին քննչական գործողությունների տակտիկան ակնհայտորեն դուրս են քննչական գործողություններ կատարելու միջնորդությունը քննարկող դատարանի վերահսկողության շրջանակներից:

7.2. Բողոքաբերը փաստել է, որ օրենսդրությամբ իրավաչափորեն նախատեսված չէ որևէ ժամկետ, որի ընթացքում քրեական հետապնդման մարմինները պարտավոր են խուզարկություն կատարելու միջնորդություն ներկայացնել դատարան, իսկ ստորադաս դատարանների կողմից խուզարկության կատարման արդյունավետության և ժամանակավրեպության պատճառաբանություններով վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը մերժելը ստեղծում է լրացուցիչ արհեստածին բարդություններ՝ քրեական գործերի արդյունավետ քննության տեսանկյունից:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ա.Բաղդասարյանի՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. «Բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» նախաքննության մարմնի որոշման համաձայն՝ «Անհայտ անձը դեռևս չպարզված հանգամանքներում և ժամանակահատվածում, իրացնելու նպատակով սպորինի պարասարել և լավաշի մեջ թաքցրել է առանձնապես խոշոր չափերի հասնող 3.53 գրամ հասարարուն քաշով «Հերոին» տեսակի թմրամիջոց և առանձնապես խոշոր չափերի հասնող 1.35 գրամ հասարարուն քաշով «Մեթամֆետրամին» տեսակի թմրամիջոց, որն էլ սպորինի իրացրել է քաղաքացի Օնիկ Մուշեղի Վարդանյանին, վերջինս էլ իր կնոջ՝ Գոհար Ռուբենի Վարդանյանի միջոցով սպորինի իրացրել է քաղաքացի Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանին: Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանը նշված թմրամիջոցները սպորինի փոխադրել է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկ և ցանկացել հիմնարկի հանձնարների ընդունման և հանձնման կետի միջոցով փոխանցել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի ցմահ դատապարտյալ Էդուարդ Վոլոդիայի Ավալյանին: Ցմահ դատապարտյալ Էդուարդ Վոլոդիայի Ավալյանը չի կարողացել սպորինի ձեռք բերել նշված թմրամիջոցները՝ իր կամքից անկախ հանգամանքներում, քանի որ 2020 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 11:45-ի սահմաններում նշված թմրամիջոցները հիմնարկի հանձնարների ընդունման և հանձնման կետում զննության ժամանակ հայրնաբերվել և վերցվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի աշխատակիցների կողմից: Դեպքի առթիվ 2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ

կերպով, 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 86161720 քրեական գործը (...):

Նախաքննությանը պարզվել է, որ Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանը բնակվում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում:

Նկատի ունենալով, որ Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանի Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում հնարավոր է թաքցված լինի թմրանյութեր, առանց դեղատրուների վաճառքը արգելված դեղահատեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարներ և քրեական գործին հետաքրքրող այլ իրեր և առարկաներ, որոնց հայտնաբերումը հնարավոր կլինի բացառապես խուզարկության միջոցով, ուստի (...) միջնորդություն հարուցել Արմավիրի մարզի առաջին արջանի ընդհանուր իրավասության դադարան՝ թույլատրելու 2021 թվականի հունվարի 18-ից 21-ն ընկած ժամանակահատվածում խուզարկություն կատարել Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանի Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում: Միջնորդության բավարարման դեպքում խուզարկության կատարումը հանձնարարել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի աշխատակիցներին»:

10. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հունվարի 18-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Մխրրատնայով խուզարկության արդյունավետության հարցին՝ Դատարանը արձանագրում է, որ թմրանյութերը ՀՀ ԱԵ «Արմավիր» ՔԿ հիմնարկի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է 26.10.2020թ., քրեական գործը հարուցվել է 20.11.2020թ., այն Քննիչի վարույթում է գրնվում 2020թ. նոյեմբերի 23-ից, միջնորդությանը կից խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը հիմնավորող սպացույցներից ամենաուշը ձեռք է բերվել 2020թ. նոյեմբերի 4-ին, երբ դեռ հարուցված չի եղել քրեական գործ, իսկ խուզարկություն կատարելու թույլտվություն սրանապու վերաբերյալ միջնորդությունը դադարան է բերվել 2021թ. հունվարի 18-ին՝ դեպքը հայտնաբերելուց գրեթե 3 ամիս անց (ոչ մի սպացույց չի ներկայացվել, որը ձեռք բերված կլինի գրեթե 2 ամիս իրականացված նախաքննության ընթացքում): Բացի այդ՝ 2020թ. հոկտեմբերի 26-ին դեպքի վերաբերյալ բացարժեղություն է վերցվել այն անձից, ում բնակարանում պետք է խուզարկություն իրականացվի: Այսինքն՝ խուզարկության հանկարծակիությունը, անկանխարեեսելիությունը, որով պայմանավորված է այդ քննչական գործողության արդյունավետությունը, չովյալ պարագայում բացակայում է: Հետևաբար՝ Դատարանը գրնում է, որ Արթուր Ռաֆիկի Բաղդասարյանը ունեցել է բավարար ժամանակ և տեղեկություն իր տանը ենթադրաբար պահվող փնտրվող թմրանյութերը կամ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին հետաքրքրող առարկաները տեղափոխելու, թաքցնելու և այլն, ուստի խուզարկությունը ժամանակավրեպ է՝ այլևս չկա ողջամիտ կասկած, որ նրա բնակարանում կարող է հայտնաբերվել փնտրվող առարկաները, հետևապես

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-4:

այդ քննչական գործողությունը կլինի կամայական, կկրի ձևական բնույթ, ինչն անթույլատրելի է:

Դատարանը արձանագրում է նաև, որ Քննչի կողմից Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է քրեադատարանական օրենքի խախտմամբ. այն է՝ չի նշել խուզարկություն կատարելու օրը և թե ում կողմից է այն իրականացվելու, ինչը վերը նշված մյուս հանգամանքների հետ համակցության մեջ ևս վկայում է միջնորդության անհիմն ու ոչ նպատակային լինելու մասին:

Այսպիսով՝ Դատարանը գրնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային վարչության ՀՎԳ քննիչ Գ.Գաբրիելյանի՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասի 6/2-րդ շենքի 22-րդ բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն արանալու միջնորդությունը անհիմն է և ենթակա է մերժման: (...)»³:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանի համար թեև ընդունելի է բողոքարկերի այն պնդումը, որ ՀՀ քրեական դատարանության օրենսգիրքը նյութերի նախապարասարման փուլում բնակարանի խուզարկություն կատարելու կարգ չի նախատեսում, իսկ նյութերի նախապարասարման ընթացքում բացարձակություն է վերցվել Արթուր Բաղդասարյանից, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ենթադրյալ դեպքը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 26-ին, որպիսի պայմաններում, եթե անգամ թմրանյութեր, առանց դեղատոմսի վաճառքն արգելված դեղահարեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված զոմաբույր իրականում գրնվել են Արթուր Բաղդասարյանի մոտ, ապա ողջամտորեն քիչ է հավանականությունը, որ դրանք դեպքից ամիսներ անց դեռևս գրնվում են նրա մոտ, այն էլ այն պայմաններում, երբ Արթուր Բաղդասարյանը, դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 26-ին տալով բացարձակություն, ողջամտորեն տեղեկացվել է իրականացվող վարույթի մասին, ուստի դրանից հետո անարամսարանական է, որ վերջինը կարող է ամիսներ շարունակ իր բնակության վայրում պահել փնտրվող առարկաները:

(...)

Ինչ վերաբերում է դատարանի այն եզրահանգմանը, որ միջնորդությունը ներկայացվել է քրեադատարանական օրենքի խախտմամբ, քանի որ չի նշվել խուզարկություն կատարելու օրը և, թե ում կողմից է այն իրականացվելու, ապա Վերաքննիչ դատարանի համար թեև ընդունելի է բողոքարկերի այն պնդումը, որ միջնորդության մեջ նշել է այն ժամկետը, որի ընթացքում պետք է իրականացվեր խուզարկությունը, ինչպես նաև նշել է, թե ում կողմից այն պետք է իրականացվեր, սակայն նշվածը դեռևս բավարար չէ փաստելու, որ խուզարկության կատարումը ժամանակավրեպ չէ և դրա կատարման արդյունքում բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաները:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 35-41:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ներկայացված նյութերի շրջանակներում առաջին աստիճանի դատարանի կողմից կայացվել է օրինական և հիմնավորված որոշում և թույլ չի տրվել այնպիսի դատավարական իրավունքի խախտում, ինչը հիմք կհանդիսանա տվյալ դատական ակտը բեկանելու համար: (...)»⁴:

Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Արթուր Բաղդասարյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անվտանգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 12-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Բնակարանի զննումը, այնպեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 66-70:

միջոցների գործադրմանը մուտք գործելը այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ քրեական դատավարության ընթացքում կարող են կարարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշումներ»:

Նույն օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մուր գրնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կարարում դրանք գրնելու և վերցնելու համար:

2. Խուզարկություն կարող է կարարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կարարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայրնաբերելու համար:

3. Բնակարանի խուզարկությունը կարարվում է միայն դատարանի որոշմամբ»:

14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի մեկնաբանությանը, կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից պետք է լինի արդարացված, այսինքն՝

– պետք է կատարվի «օրենքին համապատասխան»,

– հետապնդի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված մեկ կամ մի քանի օրինական նպատակ,

– այդ նպատակներին հասնելը պետք է լինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»⁵:

14.1. Վճռաբեկ դատարանը Յաշա Խաչատրյանի գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Ինչ վերաբերում է այս կամ այն քննչական գործողությունը կարարելու անհրաժեշտությանը, սպա իրավասու սուբյեկտը, ելնելով գործի համար նշանակություն ունեցող պարզման ենթակա հանգամանքներից, համապատասխան քննչական գործողության կարարման փաստական և իրավական հիմքերի առկայությունից, ինքն է որոշում, թե երբ և ինչ քննչական գործողություն է հարկավոր կարարել՝ սպահովելու համար քրեական դատավարության բնականոն շարժը: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկությանը, սպա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նված քննչական գործողությունը կարարելու թույլտվություն սրանալու միջնորդությանը դիմել դատարան, եթե գրնում է, որ առկա են բավարար րվյալներ, որոնք հանգեցնում են ողջամիր ենթադրության առ այն, որ րվյալ բնակարանում կարող են հայրնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ,

⁵ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smirnov v. Russia* գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 37, *Kolesnichenko v. Russia* գործով 2009 թվականի ապրիլի 9-ի վճիռը, գանգատ թիվ 19856/04, կետ 30:

փաստաթղթեր, հերախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ»⁶:

14.2. Վճռաբեկ դատարանը *Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «*Բնակարանի խուզարկության կատարման (...) փաստական հիմք են «բավարար տվյալները»*: Այլ խոսքով՝ տվյալների առկայությունն ինքնին խուզարկության կատարման փաստական հիմք չէ, քանի դեռ չի համապատասխանում բավարարության վերաբերյալ պահանջին: *Տվյալների բավարարության տեսանկյունից գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները*: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավասար տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա (...)⁷:

14.3. Վերահաստատելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քննչական գործողությունների կատարման նպատակն ընդհանրապես և խուզարկության նպատակը՝ մասնավորապես, գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվության ստացումն ու ճշմարտության բացահայտումն է: Վճռաբեկ դատարանը նաև ընդգծում է, որ խուզարկությունը քննչական գործողությունների շարքում առանձնանում է իր անհետաձգելի բնույթով, ինչից հետևում է, որ խուզարկության արդյունավետությունը, որպես կանոն, ենթադրում է, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ հայտնաբերելու վերաբերյալ բավարար տվյալների, այլ կերպ՝ խուզարկության փաստական հիմքի առկայության դեպքում այն պետք է իրականացվի անհապաղ: Սակայն այս քննչական գործողության կատարման հապաղումն ինքնին չի չեզոքացնում գործի համար նշանակություն ունեցող և որոնվող առարկաները, փաստաթղթերը կամ այլ օբյեկտները հայտնաբերելու հավանականությունը հիմնավորող փաստակազմի առկայությունը: Հետևաբար, նախաքննության մարմնի կողմից քննարկվող քննչական գործողության կատարմանն ուղղված միջոցներ անհապաղ չձեռնարկելը, այդ թվում՝ համապատասխան թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան քրեական գործ հարուցելուց տևական ժամանակ անց դիմելը, չի կարող ինքնին

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Յաշա Խաչատրյանի* գործով 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴ/3084/07/19 որոշման 14.1-րդ կետը:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԾԴ/0073/07/15 որոշման 22-24-րդ կետերը:

հիմք հանդիսանալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու համար: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի հիման վրա խուզարկությունը դատում է անհետաձգելի քննչական գործողությունների շարքին, սակայն չի բացառում դրա կատարումը քրեական գործի քննության հետագա փուլերում: Բացի այդ, անհապաղությունը որոշվում է՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ որևէ ժամկետ, որի ընթացքում քրեական հետապնդման մարմինները պարտավոր են խուզարկություն կատարելու միջնորդություն ներկայացնել դատարան: Ասվածից հետևում է, որ խուզարկության փաստական հիմքը կազմող տվյալների ձեռք բերման և խուզարկության կատարման ակնկալվող ժամանակի միջև որոշակի ժամանակահատվածի առկայության հանգամանքն ինքնին հիմք չէ ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից մերժելու համար, եթե դատարան ներկայացված նյութերը բավարար են հանգելու հետևության, որ բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքը շարունակում է գոյություն ունենալ⁸:

14.4. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով անձի կողմից գործի քննության մասին տեղյակ լինելու պարագայում անձի բնակարանում խուզարկության հանկարծակիության և արդյունավետության հարցին, կրկնում է, որ անձի բնակարանում խուզարկություն կատարելու հանկարծակիությունը՝ գործի քննության մասին անձի տեղեկացվածության համատեքստում, խուզարկության իրավաչափությունը գնահատելու չափանիշ չէ, քանի որ, նախ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձը տարբեր աղբյուրներից կարող է տեղեկանալ քրեական գործի հարուցման և քննության մասին, այդ թվում՝ ինչպես իր, այնպես էլ այլ անձանց կողմից բացատրություն տալու կամ հարցաքննվելու արդյունքում, երկրորդ՝ այդ անձը քրեական գործի հարուցման և քննության մասին տեղեկացված չլինելու պայմաններում անգամ կարող է կանխատեսել քրեական գործ հարուցված լինելու հավանականությունը, ուստի բնակարանում չպահել դեպքի պարզման համար նշանակություն ունեցող որևէ առարկա կամ փաստաթուղթ, մինչդեռ գործի քննության մասին անձի տեղեկացվածությունն ինքնին բավարար չէ՝ բացառելու ողջամիտ հավանականությունն առ այն, որ անձի բնակարանում խուզարկության կատարմամբ կարող են հայտնաբերվել քննիչի միջնորդության մեջ նշված առարկաները, փաստաթղթերը կամ այլ օբյեկտները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու հիմքում չեն կարող դրվել այդ քննչական գործողության հանկարծակիությունը և արդյունավետությունը կասկածի տակ առնող այս կամ այն հանգամանքը (այդ թվում՝ գործի քննության մասին անձի տեղեկացվածությունը), եթե

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Շահինյանի գործով 2023 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԴ/0364/07/20 որոշման 14.1-րդ կետը:

դրանով չի բացառվում բնակարանի խուզարկության կատարմամբ որոնվող օբյեկտները հայտնաբերելու ողջամիտ հավանականությունը (չի չեզոքացվում խուզարկության կատարման փաստական հիմքը): Հետևաբար բնակարանի խուզարկության հանկարծակիության և արդյունավետության հարցերը դատական ստուգման առարկա կարող են հանդիսանալ միայն այնքանով, որքանով դրանք կոնկրետ դեպքում ունակ կլինեն չեզոքացնելու (խսպառ բացառելու) խուզարկության կատարման արդյունքում որոնվող օբյեկտները հայտնաբերելու ողջամիտ հավանականությունը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խնդրո առարկա քննչական գործողության նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակում, դատարանը գնահատում է անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը՝ անձի բնակարանում խուզարկությամբ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ կամ այլ օբյեկտներ հայտնաբերելու հավանականությունը, այլ ոչ թե անխուսափելիությունը հաստատող փաստական տվյալների բավարարության տեսանկյունից⁹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Ա.Բաղդասարյանի բնակության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի որոշմամբ մերժվել է: Առաջին ատյանի դատարանը խուզարկությունը ժամանակավրեպ է համարել՝ փաստելով, որ Ա.Բաղդասարյանը ունեցել է բավարար ժամանակ և տեղեկություններ իր տանը ենթադրաբար պահվող թմրամիջոցները կամ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին հետաքրքրող առարկաները տեղափոխելու և թաքցնելու համար, հետևապես այդ քննչական գործողությունը կլինի կամայական, կկրի ձևական բնույթ, ինչն անթույլատրելի է: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ խուզարկության հանկարծակիությունը, անկանխատեսելիությունը, որով պայմանավորված է այդ քննչական գործողության արդյունավետությունը, տվյալ պարագայում բացակայում է¹⁰:

– Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է, որ Ա.Բաղդասարյանը, դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 26-ին տալով բացատրություն, ողջամտորեն տեղեկացվել է իրականացվող վարույթի մասին, հետևապես անտրամաբանական է, որ վերջինս կարող է ամիսներ շարունակ իր բնակության վայրում պահել փնտրվող առարկաները¹¹:

16. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.4-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հովհաննես Շահինյանի* գործով վերը հիշատակված որոշման 15-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 3-րդ, 4-րդ, 10-րդ կետերը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 11-րդ կետերը:

ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Բաղդասարյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք հանգամանքներ: Մասնավորապես՝ անդրադառնալով ստորադաս դատարանների՝ կոնկրետ դեպքում խուզարկության արդյանուվետության բացակայության մասին եզրահանգման հիմքում դրված այն պատճառաբանությանը, որ Ա.Բաղդասարյանը, դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 26-ին տալով բացատրություն, ողջամտորեն տեղեկացվել է իրականացվող վարույթի մասին, ինչը բացառում է հանկարծակի և արդյունավետ խուզարկություն կատարելու հնարավորությունը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վերոնշյալ հանգամանքներն ինքնաբերաբար չեն չեզոքացնում խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը: Այլ կերպ՝ խուզարկության փաստական հիմքը կազմող տվյալների առկայության պայմաններում, նախաքննության մարմնի կողմից անձի բնակարանում խուզարկության կատարումը թույլատրելու մասին միջնորդությունը ենթադրյալ հանցագործության դեպքից հետո անհապաղ դատարան չներկայացնելն ինքնին բավարար հիմք չէ միջնորդությունը մերժելու համար: Միևչդեռ, ստորադաս դատարանները, հիմք ընդունելով բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայությունը չբացառող հանգամանքները, ոչ իրավաչափորեն սահմանափակել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ միջոցը ձեռնարկելու՝ քրեական հետապնդման մարմնի հնարավորությունը: Արդյունքում, ստորադաս դատարանները, խուզարկություն կատարելու փաստական հիմքի առկայությունն ըստ էության կասկածի տակ չառնելով, դրա կատարման անհրաժեշտությունը ոչ իրավաչափորեն պայմանավորել են այդ քննչական գործողության կատարման բացառապես դրական արդյունքով, այն է՝ որոնվող առարկաները, փաստաթղթերը կամ այլ օբյեկտները հայտնաբերելու անխուսափելիությամբ:

16.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ քննչական գործողությունների արդյունավետությունը, հանցագործությունների քննության մեթոդիկան և առանձին քննչական գործողությունների կատարման մարտավարությունը դուրս են քննչական գործողության կատարումը թույլատրելու՝ վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության շրջանակներում դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերի, այլ կերպ՝ դատական վերահսկողության առարկայի շրջանակներից:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արթուր Բաղդասարյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիանի դատարանը նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելով, իսկ Վերաքննիչ

դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 225-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

19. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու արդյունքում Ա.Բաղդասարյանի բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին բողոքաբերի խնդրանքին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակիորեն. անհրաժեշտ է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով՝ նոր քննության¹²՝ նկատի ունենալով, որ բարձրագույն դատական ատյանի կողմից հիշյալ միջնորդության հնարավոր բավարարումը կգրկի Ա.Բաղդասարյանին՝ իր բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ դատական ակտի իրավաչափությունը դատավարության որևէ փուլում վերադաս դատական ատյանում վիճարկելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

¹² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

50.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0153/01/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2023 թվականի օգոստոսի 9-ին

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ դատապարտյալ Ահարոն Ռաֆիկի Անտոնյանի պաշտպան Ա.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի դատավճռով Ահարոն Անտոնյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 38-34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մասնակիորեն բավարարվել է, դատավճիռը բեկանվել ու փոփոխվել է, և ամբաստանյալ Ա.Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, պայմանականորեն չի կիրառվել, ու սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ա.Անտոնյանի վարքագծի նկատմամբ հսկողությունը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Գեղարքունիքի մարզային մարմնի վրա:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք չի ներկայացվել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

2. Դատապարտյալ Ա.Անտոնյանը 2021 թվականի փետրվարի 23-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) միջնորդություն է ներկայացրել՝ մինչև երեք ամիս ժամանակով Հայաստանի Հանրապետության սահմանը հատելը թույլատրելու մասին, որին դատավոր Ա.Դանիելյանը 2021 թվականի մարտի 11-ին պատասխանել է գրությամբ:

3. Հիշյալ գրության դեմ պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ թողել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Անտոնյանի պաշտպան Ա.Հակոբյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 օգոստոսի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է դատական սխալի, որն ազդել է գործի ելքի վրա, խաթարել է արդարադատության բուն էությունը և խախտել է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Բողոքաբերի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանը բոլոր դեպքերում պետք է քննության առներ միջնորդությունը, որի արդյունքում պետք է կայացներ այն բավարարելու կամ մերժելու մասին որոշում: Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, գրությամբ պատասխանելով միջնորդությանը, դրսևորել է անգործություն, որի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել է դատապարտյալ Ա.Անտոնյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատարանի մատչելիության իրավունքը:

6. Բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով վերաքննիչ բողոքն ու իրավական գնահատական չտալով 2021 թվականի մարտի 11-ի գրությանը և Առաջին ատյանի դատարանի կողմից

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

դրսևորաձ անգործությանը, Ա.Անտոնյանին գրկել է իր իրավունքների և ագատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքից:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերաձ անձը խնդրել է բավարարել վճռաբեկ բողոքը՝ ամբողջությամբ բեկանելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը, և Ա.Անտոնյանին թույլատրել ժամանակավորապես՝ մինչև երեք ամիս ժամկետով, հատել Հայաստանի Հանրապետության սահմանը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Դատապարտյալ Ա.Անտոնյանը 2021 թվականի փետրվարի 23-ին Առաջին ատյանի դատարան ներկայացրաձ միջնորդության եգրավակիչ հատվաձում նշել է հետևյալը. «(...) [Մ]իջնորդում եմ՝ ինձ՝ Ահարոն Ռաֆիկի Անրոնյանիս, թույլարրել, ժամանակավորապես, մինչև երեք ամիս ժամանակով հարել Հայասարանի Հանրապետության սահմանը, Ռուսասարանի Դաշնություն արտագնա աշխատանքի մեկնելու համար»²:

9. Առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Դանիելյանը 2021 թվականի մարտի 11-ի թիվ Ե-2057/21 գրությանը նշել է. «Ի պարասիսն Գեղարքունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանում 2021 թվականի փետրվարի 23-ին արացվաձ Ձեր միջնորդության՝ հարնում եմ Ձեզ, որ դարական սկրերը կարարելու փուլում դարարանն օձրվաձ չէ ագարագրկման դարասարրվաձ անձին, ում նկարմամբ ՀՀ քրեական օրենագրքի 70-րդ հողվաձի կիրաումամբ ագարագրկման ձևով նշանակվաձ պարիձը պայմանականորեն չի կիրաումել, Հայասարանի Հանրապետությունից մեկնելու թույլրվություն րարու լիագորությունը»³:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դարավարության օրենագրքի 376.1-րդ հողվաձի (...) դրությների ուսումնասիրությունից հերևում է, որ դրանցով Առաջին արյանի դատարանի 2021 թվականի մարտի 11-ի գրության (որոշման) բողոքարկում նախարեալաձ չէ: Միևնույն ժամանակ, նշվաձ հողվաձի 8-րդ կերի լույսի ներքո հարկ է նաև արձանագրել, որ ՀՀ քրեական դարավարության օրենագրքի որևէ այլ դրությով նույնպես նախարեալաձ չէ այդ գրության (որոշման) ՀՀ վերաքննիչ քրեական դարարան բողոքարկելու հնարավորություն: Կիրաումելով մեկնարանման expression unius կանոնը, որի համաձայն սպաոիչ ցանկում որևէ րարր չներաումելը պերք է մեկնարանել դրա բացաուման իմաստով՝ Վերաքննիչ դարարանը փաստում է, որ Առաջին արյանի դարարանի 2021

² Տն քրեական գորձի նյութեր, հատոր 1-ին, թերթ 2:
³ Տն քրեական գորձի նյութեր, հատոր 1-ին, թերթ 43:

թվականի մարտի 11-ի գրությունը (որոշումը) վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում, այսինքն այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

(...)

[Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին աստիճանի դատարանի 2021 թվականի մարտի 11-ի գրության (որոշման) դեմ դատապարտյալ Ահարոն Ասրոնյանի պաշտպան Անժելիկա Հակոբյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ այն բերվել է գրության (որոշման) դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալ Ա.Ասրոնյանի միջնորդության վերաբերյալ գրության (որոշման)՝ վերաքննության կարգով բողոքարկելու դատավարական կարգ չլինելու պատճառաբանությամբ, դատապարտյալ Ա.Ասրոնյանի պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի որոշումը:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ դատարաններն առաջին աստիճանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական արյան են»:

12.1. Դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

– անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության՝ կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

⁴ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 57:

– դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի՝ վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

– դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

– դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

– ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

– դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

– նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն⁵:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

13.1. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) անձի արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690, 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936, 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՌ-1192 և 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՌ-1257 որոշումները:

կապակցությամբ նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ, և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև⁶:

13.2. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝

– դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները,

– անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության կարևորագույն իրավունքների սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է իրավաչափ նպատակ հետապնդի և չպետք է անհամարժեք լինի նշված իրավունքի բուն էությանն ու նշանակությանը: Այլ կերպ՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում պետք է պահպանել կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռություն՝ բացառելով անհամաչափ խիստ միջոցներով հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունը⁷:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության

⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Philis v. Greece* գործով 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, գանգատներ թիվ 12750/87, 13780/88, 14003/88, կետ 59, *De Geouffre de la Pradelle v. France* գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 12964/87, կետ 28, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 229, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Գրիգորյանի* գործով 2018 թվականի հունվարի 12-ի թիվ ԵԿԴ/0026/01/17 որոշման 16-րդ կետը:

օրենսգրքի՝ «Դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովումը» վերտառությամբ 429-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը դատարանի կողմից քննելիս, դատապարտյալն իրավունք ունի մասնակցել դատական նիստին և Կալ ցուցմունքներ, ներկայացնել ապացույցներ, հարուցել միջնորդություններ և հայտնել բացարկներ, ծանոթանալ գործի բոլոր նյութերին, բողոքարկել դատարանի գործողությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝
«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

(...)

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

15. Վերլուծելով մեջբերված իրավանորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի ապահովումն դատական ակտի կատարման ընթացքում ծագող հարցերի լուծման փուլում դատապարտյալի իրավունքների պաշտպանության՝ քրեադատավարական օրենքը, ի թիվս այնի, նախատեսում է, որ դատապարտյալն իրավունք ունի **բողոքարկել դատարանի որոշումները**: Վերոշարադրյալ նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, ի ապահովումն նաև այս փուլում անձի դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման, նախատեսել է դատավճռի կատարման առնչությամբ ծագող հարցերի լուծման արդյունքում կայացած՝ անձի իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտի վերաքննիչ բողոքարկման հնարավորություն:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– դատապարտյալ Ա.Անտոնյանը փորձաշրջանի ընթացքում միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թույլատրել մինչև երեք ամիս ժամանակով հատել Հայաստանի Հանրապետության սահմանը⁸,

– Առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Դանիելյանը միջնորդությանը պատասխանել է գրությամբ՝ նշելով որ դատական ակտերը կատարելու փուլում դատարանն օժտված չէ դատապարտյալին Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլություն տալու լիազորությամբ⁹,

– Ա.Անտոնյանի պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ գրության (որոշման)՝ վերաքննության կարգով բողոքարկելու դատավարական կարգ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ¹⁰:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն առանց քննության է թողել

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

պաշտպան Ա.Հակոբյանի բողոքն այն դեպքում, երբ քրեադատավարական օրենքը նախատեսում է դատավճիռն ի կատար ածելու փուլում առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնարավորություն: Արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել են Ա.Անտոնյանի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքները, և վերջինս զրկվել է իր միջնորդությանը գրությամբ պատասխանելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվություն տալու լիազորություն չունենալու մասին Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը վիճարկելու և այն վերադաս դատարանի կողմից ստուգման ենթարկելու հնարավորությունից:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալ Ա.Անտոնյանի միջնորդության վերաբերյալ գրության (որոշման)՝ վերաքննության կարգով բողոքարկելու դատավարական կարգ չլինելու պատճառաբանությամբ դատապարտյալ Ա.Անտոնյանի պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 429-րդ հոդվածների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0244/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորների՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2023 թվականի օգոստոսի 25-ին

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Ալբերտ Արթուրի Բոշյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի ապրիլի 15-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 15160817 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 8-ի որոշմամբ Ալբերտ Արթուրի Բոշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 8-ի որոշմամբ Ալբերտ Բոշյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2017 թվականի հունիսի 13-ին Ա.Բոշյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության բաժին: 2017 թվականի հունիսի 14-ին նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Ա.Բոշյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2017 թվականի սեպտեմբերի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետև՝ նաև Առաջին ատյանի դատարան), կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2019 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճռով Ա.Բոշյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Ա.Բոշյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետև՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է՝ Ա.Բոշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ և արդարացրել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 2-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննության սահմաններից և առանց ապացույցների հետազոտում իրականացնելու, գնահատել է գործով ձեռք

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

բերված ապացույցները, որի արդյունքում դատողություններ է արել արարքի սխալ որակման վերաբերյալ:

5.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ նույն վիճաբանության մյուս երեք մասնակիցների՝ Ա.Եղոյանի, Ռ.Գրիգորյանի և Մ.Բաբայանի նկատմամբ արագացված դատաքննության կարգով արդեն իսկ ոչ արդարացման հիմքով կայացվել է դատական ակտ, որը մտել է օրինական ուժի մեջ: Բացի այդ, ինչպես մյուս ամբաստանյալները, այնպես էլ Ա.Բոշյանը, մեղսագրվող արարքներում իրենց մեղավոր են ճանաչել և միջնորդել են գործի քննությունն իրականացնել արագացված կարգով, պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

5.2. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը բողոքի սահմաններից կարող է դուրս գալ միայն այն պայմաններում, երբ առանց ապացույցների հետազոտման, ակնհայտ փաստերի առկայությամբ կարող է հետևություններ անել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայության մասին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի և բողոքը քննելու ժամանակ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, չհետազոտելով որևէ ապացույց, Ա.Բոշյանի նկատմամբ կայացրել է արդարացման դատական ակտ:

6. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 26-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Ալբերտ Բոշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Մյա 2017թ. սպրիլի 6-ին՝ ժամը 00:00-ի սահմաններում, ընկերոջ՝ Մակիչ Բաբայանի հետ այցելել է Երևան քաղաքի Տերյան փողոցի 105/1 հասցեում գործող «18 սլյուս» ակումբ՝ զվարճանալու, որի ընթացքում այլոհող են գործածել: Ժամը 05.20-ի սահմաններում ակումբի սանհանգույցի դիմաց նույն ակումբի այցելու Մակիչ Բաբայանը երկար հայացք է նետել Արամ Եղոյանի կողմ, ինչը վերջինիս դուր չի եկել ու հերազա պարզաբանումների համար դուրս են եկել ակումբի մուտքի դիմաց: Այդ ընթացքում վերջիններիս են միացել նաև Արամ Եղոյանի ընկեր Ռաֆիկ Գրիգորի Գրիգորյանն ու Մակիչ Բաբայանի ընկեր Ալբերտ Արթուրի Բոշյանը:

Արդեն ակումբի մուտքի առջև իրեն երկար նայելու կապակցությամբ Արամ Եղոյանը պարզաբանում է պահանջել Մակիչ Բաբայանից, որն արտահայտվել է հեղկյալ արտահայտությամբ՝ «Այե, երկար ես նայում», իսկ Մակիչ Բաբայանը պարտասխանել է «Երկար եմ նայում, որ ջոգեմով է դեմս կանգնած», որի արդյունքում Ալբերտ Բոշյանը չնչին ստիթն օգտագործելով, իր անձի առավելությունը ներկաների մոտ ընդգծելու մոլուցքով փարված, Ռ.Գրիգորյանի կողմից հարվածներ

արանապուց հետո ինքն էլ իր հերթին սկսել է ձեռքերով հարվածներ հասցնել վերջինիս, իսկ Մակիչ Բարսայանը՝ Արամ Եղոյանին, այնուհետև Արամ Եղոյանը ուրքով հարվածել ու գետնին է փայտել Մակիչ Բարսայանին, իսկ Ռաֆիկ Գրիգորյանը՝ Ալբերտ Բոշյանին, սկսել են ուրքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել գետնին ընկած Ալբերտ Բոշյանին ու Մակիչ Բարսայանին, որը նկատել է «18 պլուս» ակումբում որպես ղոնասպան աշխատող Կամո Կիրակոսյանն ու գործով չպարզված մի աղջիկ, ովքեր փորձել են հանդարտեցնել վիճաբանողներին, սակայն նրանց մտր առաջացել է վախի մթնոլորտ, որից հետո օգնության են կանչել ակումբում եղած հաճախորդներին, ովքեր դուրս են եկել ակումբից, փորձել են հանդարտեցնել վիճաբանողներին, սակայն վերջիններս սեփական անձը վեր դասելով հասարակության մեջ սահմանված հանընդհանուր ճանաչում արացած բարոյական և իրավական նորմերից, կուպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ ցույց են րվել իրենց արհամարհական վերաբերմունքը հասարակության՝ ակումբի հաճախորդների և աշխատակիցների նկատմամբ, ակումբի հաճախորդների և աշխատակիցների ներկայությունն անարևելելով ու նրանց մտր վախի մթնոլորտ սրելով, շարունակել են իրենց խուլիգանական գործողություններն ու այն դադարեցրել են միայն րարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 3-րդ հարուկ գումարտակի աշխատակիցների միջամրությունից հետո, ովքեր դեպքի վայրից բերման են ենթարկել վիճաբանության մասնակիցներին»²:

8. Առաջին առյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Մինչ դատաքննությունը սկսելն ամբաստանյալներ Արամ Հայկի Եղոյանը, Ռաֆիկ Գրիգորի Գրիգորյանը, Մակիչ Կարապետի Բարսայանը և Ալբերտ Արթուրի Բոշյանը միջնորդել են դատական քննությունն անցկացնել արագացված կարգով: Ի պատասխան Դատարանի հարցերին՝ ամբաստանյալները հայտարարել են, որ միջնորդությունը ներկայացրել են կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել են պաշտպանների հետ, գիրակցում են արագացված կարգով դատական քննություն անցկացնելու կարգը և հերևանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, իրենք համաձայն են մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրենց ճանաչում են մեղավոր:

(...)

Առաջադրված մեղադրանքն ամբաստանյալի կողմից ընդունելու և դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում Դատարանն սպացուցված է համարում ամբաստանյալ Ալբերտ Արթուրի Բոշյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված և դատավճռի 1.7-րդ կետում նկարագրված հանցավոր արարքի կատարումը, և փաստում է, որ վերջինս իր կատարած արարքի համար ենթակա է պարծի:

(...)

Վերոգրյալի ամիոփմանը Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ալբերտ Արթուրի Բոշյանն իր կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 199-200:

3-րդ մասի 1-ին կերով նախարեալած հանգալոր արարքի համար ենթակա է ազարագրկման՝ 2 (երկու) րարի 6 (վեց) ամիս ժամկերով, ինչն համաչաաի է կարարված արարքին, ինչպես նաև անիրաժեշր և բալարար՝ սոցիալական արդարությունը վերականգնելու, ամբարանյալին ուղղելու և նրա կողմից նոր հանգանքի կարարումը կանխելու համար (...)³:

9. Առաջին առյանի դատարանի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Բոշյանի վերաքննիչ բողոքի համաձայն՝ «(...) Խնդրում եմ հաշվի առնել, որ ես ինձ առաջադրված մեղադրանքը ընդունել եմ, գղջացել եմ կարարածիս համար, նախկինում եղել եմ դարասպարված, սակայն 2013 թ. Համաներման սկրի կիրառմամբ ազարվել եմ պարժի կրումից: Գրնում եմ, որ դարարանը չպերք է նախկին իմ դարվածությունը հաշվի առնել և ռեցիդիվի կանոններով սպարիժ նշանակել, քանի որ համաներման կիրառման դեպքում դարվածությունը վերացվել է:

(...) Հաշվի առնելով գորժի կոնկրետ հանգամանքները, պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պարասխանարվությունն ու սպարիժը ժանրացնող հանգամանքների բացակայությունը, գրնում եմ, որ իմ նկարմամբ ազարագրկման ձևով նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելով րվյալ գորժով հնարավոր է համնել ՀՀ քր. Օր. 48-րդ հողվածով նախարեալած պարժի նպարակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պարժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագորժությունների կանխմանը: (...):

Այսպիսով, գրնում եմ, որ դարավճողով նշանակված պարիժն անարդարացի է ակնհայր խիսր լինելու պարձառով, այն չի համասպարասխանում ինձ վերագրվող հանցագորժության ժանրությանը և իմ անձին (...)⁴:

10. Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով և փոփոխելով Առաջին առյանի դատարանի դատավճիողը, արձանագրել է հետևյալը. «(...) Ինչպես երևում է մեղադրանքի փասարական կողմի նկարագրությունից, մինչև Ռաֆիկ Գրիգորյանից դեմի շրջանում բողմնքների հարվածներ սրանալը հասարակական կարգի խախրմանը միրված կամ ոչ իրավաչաաի որևէ այլ վարքագժի դրսևորում ամբարանյալ Ա.Բոշյանի կողմից չի դրսևորվել, այրպիսին նրան չի մեղասգրվել: Միևնույն ժամանակ, մեղադրանքի փասարական կողմը չի ներառում ամբարանյալ Ա.Բոշյանի կողմից հասարակական կարգի խախրմանը միրված կամ որևէ այլ ոչ իրավաչաաի վարքագժի դրսևորման կոնկրետ դրսևորում՝ Ռաֆիկ Գրիգորյանի կողմից ուրքով հարվածելու միջոցով գերին րասպարվելուց և գերին ընկած վիճակում ուրքերի ու ձեռքերի հարվածներ սրանալու ընթացքում, ընդուպ մինչև ոարիկանների միջամրությունը ժեժկրուքի դարարեցվելը: Փոխարենը մեղադրանքի փասարական կողմի նկարագրության մեջ ներառվել են ընդհանուր բնույթի վերացական ձևակերպումներ, ինչպիսիք են. «(...) Արերոր Բոշյանը չնչին առիթն օգրագորժելով, իր անձի առավելությունը

³ Տն քրեական գորժ, հատոր 8, թերթեր 131-135:

⁴ Տն քրեական գորժ, հատոր 9, թերթեր 2-8:

ներկաների մուր ընդգծելու մոլուցքով Գրիգորյանի կողմից հարվածներ սրանալուց հետո ինքն էլ իր հերթին սկսել է ձեռքերով հարվածներ հասցնել վերջինիս, (...) փորձել են հանդարտեցնել վիճարանողներին, սակայն վերջիններս սեփական անձը վեր դասելով հասարակության մեջ սահմանված հանրահանուր ճանաչում սրացած բարոյական և իրավական նորմերից, կուպիր կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ ցույց են տվել իրենց արհամարհական վերաբերմունքը հասարակության՝ ակումբի հաճախորդների և աշխատակիցների նկատմամբ, ակումբի հաճախորդների և աշխատակիցների ներկայությունն անտեսելով ու նրանց մուր վախի մթնոլորտ սրելով, շարունակել են իրենց խուլիգանական գործողությունները (...):

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Բոշյանի կողմից Ռուֆիկ Գրիգորյանից հարվածներ սրանալուց հետո իր հերթին նրան հարվածելուն, ապա նշվածը հանգեցնում է հենց նրան, որ ամբաստանյալ Ա.Բոշյանի վարքագիծը (պարասահան հարվածը) ուղղված է եղել կոնկրետ անձի՝ Ռուֆիկ Գրիգորյանին, և պայմանավորված է եղել հենց վերջինիս հակաօրինական վարքագծով:

Դրա հետ մեկտեղ, ինչպես հետևում է սույն որոշման 4-6-րդ կետերում մեջբերվածների համադրումից, վիճարանությունն ու ծեծկոտուքն առաջացել է ոչ թե ամբաստանյալ Ա.Բոշյանի, այլ մյուսների ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով, և նրա մուր խուլիգանական դրոշմների առկայության մասին դատողություն անելու հիմքեր չկան:

(...) [Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Բոշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ մեղավոր ճանաչելով՝ Առաջին սույնի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հենց միայն առաջադրված մեղադրանքի ձևակերպումն ու դրանում ներառված փաստական հանգամանքներն ինքնին բացառում են ամբաստանյալ Ա.Բոշյանին վերագրված արարքում խուլիգանության հանցակազմի առկայելիքի կողմը բնութագրող հատկանիշները:

Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների և դրանց՝ սույն որոշման 8-րդ կետում շարադրված մեկնաբանման լույսի ներքո Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում Առաջին սույնի դատարանը ոչ միայն իրավասու էր, այլև՝ պարտավոր էր անդադրառնալ մեղադրանքի փաստական հանգամանքների իրավաբանական որակմանը, որպիսի մուրեցումը *mutatis mutandis* բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արսեն Մերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0002/01/13 որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումներից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Բոշյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ, և նրան դատապարտելով 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման՝ Առաջին սույնի դատարանը թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչն իր հերթին հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ

հողվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի խնամարով՝ դատավարության իրավունքի վերոնշյալ խախտումն ինքնին հանդիսանում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, և բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններից վերադաս դատարանի կողմից դուրս գալու համար օրենսդրի կողմից նախատեսված սահմանափակ դեպքերից մեկը (...):

Այլ կերպ՝ Առաջին աստիճանի դատարանի կողմից սույն գործով թույլ են արվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա բեկանելու բողոքարկված դատական ակտը, ճանաչելու ամբաստանյալ Ա.Բոշյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հանցակազմի բացակայության հիմքով դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու (...)⁵:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ամբաստանյալ Ա.Բոշյանին վերագրված արարքում խուլիզանության հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների բացակայության հիմքով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը բեկանելու և փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի համաձայն՝ «1.Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պարիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազապագրկումը:

(...) 2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 106-117:

3. Դատարանը, գրնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ (...):»:

Նույն օրենսգրքի 375.3-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. Դատավորը հարցեր է փոխ ամբաստանյալին համոզվելու համար պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի պաշտպան), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:

4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են սույն օրենսգրքի 375.1 հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

5. Դատարանը արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված սպացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում (...):»:

Արագացված դատական քննություն կիրառելու հիմքերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Շողակաթ Ամիրխանյանի և Գառնիկ Ֆարմանյանի գործով որոշման շրջանակներում, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ համաձայնվելն է: Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ⁶:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտեր վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Շողակաթ Ամիրխանյանի և Գառնիկ Ֆարմանյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշման 22-րդ կետը:

1) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ստյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը. (...)»:

14. Վերաքննության գործառույթային առանձնահատկությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է ստորադաս ատյանի դատական ակտի հիմնավորվածությունն ու իրավաչափությունը: Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում, այլև նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները: Միաժամանակ որպես մասնավոր շահի նկատմամբ հակակշիռ, հանրային և մասնավոր շահերի արդյունավետ հավասարակշռության ապահովման անհրաժեշտություն՝ Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, եթե առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանման հիմք (կամ անձի նկատմամբ խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր կիրառելու դեպքերում): Ընդ որում, ինչպես հետևում է վերոգրյալից, վերաքննիչ դատարանի՝ վերանայման սահմաններից դուրս գալու սույն հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում⁸:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

– ամբաստանյալ Ա.Բոշյանը, համաձայնվելով իրեն առաջադրված մեղադրանքի հետ, միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով, միաժամանակ հայտարարելով, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատական քննությունն անցկացնելու կարգը և հետևանքները:

– Առաջին ստյանի դատարանը, արագացված կարգի կիրառմամբ, ապացուցված է համարել ամբաստանյալ Ալբերտ Բոշյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սվևրլանա Գրիգորյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշումը:

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Մարունցի* գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0001/11/10, *Գեղամ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11, *Արթուր Խորշոռյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԴ/0065/01/11, *Բլլարիոն Նունուշյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՇԴ/0070/01/13, *Լուկաշ Վերանյանի* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0074/01/17, *Հենրիկ Բարսեղյանի ու Արման Մարջանյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0259/01/16, *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 և *Նվեր Մանուկյանի* գործով 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ ԵԴ/0605/11/19 որոշումները:

արարքի կատարումը և փաստել, որ վերջինս իր կատարած արարքի համար ենթակա է պատժի⁹:

– Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ա.Բոշյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել իր նկատմամբ տուգանք նշանակելու կամ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով¹⁰:

– Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը դուրս է եկել բողոքի սահմաններից, արձանագրելով, որ Ա.Բոշյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումն ու դրանում ներառված փաստական հանգամանքներն ինքնին բացառում են վերջինիս վերագրված արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների առկայությունը:

Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում Առաջին ատյանի դատարանը ոչ միայն իրավասու էր, այլև՝ պարտավոր էր անդրադառնալ մեղադրանքի փաստական հանգամանքների իրավաբանական որակմանը¹¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ Ա.Բոշյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումն ու դրանում ներառված փաստական հանգամանքներն ինքնին բացառում են վերջինիս վերագրված արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ պատասխան հարված հասցնելը և վիճաբանության ու ծեծկոտուքի նախաձեռնող չլինելը խուլիգանության հանցակազմը բացառող անվերապահ հիմքեր չեն: Հետևաբար, միայն գործի բոլոր հանգամանքների և ապացույցների հետազոտման արդյունքում հնարավոր կլիներ Ա.Բոշյանին վերագրվող արարքում սուբյեկտիվ կողմի առկայության կամ բացակայության վերաբերյալ հիմնավոր հետևություն անել: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արագացված դատական քննության պայմաններում, երբ ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարվում, արարքում հանցակազմի բացակայությունը պետք է կասկած չհարուցի: Մինչդեռ, սույն դեպքում Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ Ա.Բոշյանին մեղսագրված արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ, չի բխում վերջինիս առաջադրված մեղադրանքի ձևակերպումից, իսկ այդ հարցի վերջնական պարզումը՝ առանց գործում առկա ապացույցների հետազոտման, հնարավոր չէ:

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

17. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, օրենքով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում, իրավասու չէր դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

18. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր անդրադառնալ մեղադրանքի փաստական հանգամանքների իրավաբանական որակմանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը չի բխում *Արևեն Սերոբյանի և Էդվարդ Պեպրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումից¹²:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Բոշյանին վերագրված արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների բացակայության հիմքով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճռի օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 26-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու հիմք է:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, պետք է քննության առնի ամբաստանյալի վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ալբերտ Արթուրի Բոշյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևեն Սերոբյանի և Էդվարդ Պեպրոսյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0002/01/13 որոշումը:

օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Ալբերտ Արթուրի Բոշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

52.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/0040/01/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

25 օգոստոսի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Արամ Ալբերտի Արաբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ ոստիկանության կիրեռհանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 254-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58160118 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշմամբ Արամ Ալբերտի Արաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Ա.Արաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 25-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է:

2019 թվականի դեկտեմբերի 25-ին մեղադրյալ Ա.Արաբյանը հայտնաբերվել է և նախաքննության մարմնի նույն օրվա որոշմամբ քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ մերժվել են նախաքննության մարմնի՝ մեղադրյալ Ա.Արաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու և պաշտպան Ա.Հոբոսյանի՝ մեղադրյալի նկատմամբ գրավ կիրառելու մասին միջնորդությունները:

2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ Ա.Արաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ Ա.Արաբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2020 թվականի դեկտեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

3. 2021 թվականի մարտի 24-ի դատական նիստի ընթացքում, ամբաստանյալ Ա.Արաբյանը և պաշտպան Ա.Հոբոսյանը միջնորդություն են ներկայացրել Ա.Արաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացնելու վերաբերյալ, որն Առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ մերժվել է:

4. Ամբաստանյալ Ա.Արաբյանի պաշտպան Ա.Հոբոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մայիսի 31-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 24-ի որոշումը և վերացրել ամբաստանյալ Ա.Արաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը:

5. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունվարի 24-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճարելի դատարանի մի շարք որոշումներ, գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ չի նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու, վերացնելու կամ այն վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումների, այդ թվում՝ դատական քննության փուլում կայացված որոշումների բողոքարկման հնարավորություն:

Բողոքաբերը նշել է, որ բողոքարկման և դատական վերանայման արգելքը, որը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից, չի վտանգում դատական պաշտպանության իրավունքը, որի կոնվենցիոնալ մեկնաբանությունները թույլատրում են դրա այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում արդար դատաքննության իրավունքն ու դրա բաղադրիչներից դատարանի մատչելիությունը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, դատական քննության փուլում, անտեսելով այդ հանգամանքը, քննության է առել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ բողոքն ու որոշում կայացրել բողոքը բավարարելու և խափանման միջոցը վերացնելու մասին:

6.1. Բողոքաբերն իր բողոքում անդրադարձել է նաև ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու հիմքերի բացակայության, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված լինելու պահանջին չհամապատասխանելու հարցերին:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 24-ի որոշմանը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության նախապատրաստական փուլում քննելով ամբաստանյալ Ա.Արաբյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ Ա.Արաբյանի և վերջինիս պաշտպանի միջնորդությունը, արձանագրել է. «(...) Դատարանը գրնում է, որ սույն գործով շարունակում է արդիական լինել ամբաստանյալ Ա.Արաբյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի առկայությունը, (...)

դատարանը գտնում է, որ պաշտպանական կողմի միջնորդությունը անհիմն է և ենթակա չէ բավարարման (...)²:

9. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) նվազել է Արամ Արաբյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը, ուստի պետք է բեկանել Առաջին արյանի դատարանի 2021 թվականի մարտի 24-ի որոշումը, և վերացնել Արամ Արաբյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը (...)³»:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ Արամ Արաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Ամբաստանյալ Արամ Ալբերտի Արաբյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացվել է⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից Ա.Արաբյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու միջնորդությունը դատական քննության փուլում մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննության կարգով քննության առնելը:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 376.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտնած դատական ակտերը.

2) առաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին արյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 36-39:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 87-9:

⁴ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, Արամ Արաբյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0040/01/21 քրեական գործը:

4) առաջին ատյանի դատարանների՝ կայանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում խուզարկության, ազդարկման, բժշկական հասարարությունում անձանց տեղափոխման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ասհմանափակման, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ոնեցող աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման իրավասափությունը հասարարելու մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հերաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հերախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կասակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կասակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես մեջբերված, այնպես էլ որևէ այլ հոդվածով դատական քննության փուլում կայացված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու, վերացնելու կամ այն վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ:

Կիրառելով մեկնաբանման *expression unius* կանոնը, որի համաձայն՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատական քննության ընթացքում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, գործի դատական քննության փուլում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը պայմանավորված է տվյալ խափանման միջոցի՝ անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտության աստիճանով, ինչպես նաև վերադաս դատական ատյանի կողմից առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործի քննության բնականոն ընթացքին անհարկի չմիջամտելու անհրաժեշտությամբ⁵:

13.1. Ընդ որում հարկ է նկատել, որ վերոնշյալ դիրքորոշումը բխում է նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արման և Արքա Մադաթյանների* գործով 2020 թվականի մայիսի 26-ի որոշման 18.1-րդ կետը:

օրենսգրքի կարգավորումներից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 352-րդ հոդվածը սահմանելով դատական վերանայման կառուցակարգերը և դրանցում ընդգրկված բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը՝ **դատական քննության փուլում** բացակայելու արգելք խափանման միջոցի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորություն չի նախատեսում՝ այդպիսով պահպանելով վերոնշյալ որոշումների վերաքննիչ բողոքարկման առարկա չհանդիսանալու մոտեցումը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի ՄՂՈ-1690 որոշմամբ⁶, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Կարասպետյանի* գործով⁷ արտահայտված իրավական դիրքորոշումները սույն դեպքում կիրառելի չեն, քանի որ դրանք վերաբերում են ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումը **մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության** առարկա դիտարկելու հնարավորությանը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանը, դատական քննության ընթացքում, 2021 թվականի մարտի 24-ի որոշմամբ մերժել է Ա.Արաբյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ ամբաստանյալ Ա.Արաբյանի և պաշտպան Ա.Հոբոսյանի միջնորդությունը⁸:

– Վերաքննիչ դատարանը 2021 թվականի մայիսի 31-ին քննության առնելով ամբաստանյալ Ա.Արաբյանի պաշտպան Ա.Հոբոսյանի վերաքննիչ բողոքը՝ բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մարտի 24-ի որոշումը և Ա.Արաբյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացրել է⁹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատական քննության փուլում կայացված՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում, ամբաստանյալ Ա.Արաբյանի և վերջինիս պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման է

⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 30-ի թիվ ՄՂՈ-1690 որոշումը:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Կարասպետյանի* գործով 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ-2/0009/11/19 որոշումը:

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ենթարկել պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 24-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և վերացրել Ա.Արաբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը: Ընդ որում, հարկ է նկատել, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե օրենքով տվյալ որոշման բողոքարկման ընթացակարգ նախատեսված չլինելու պայմաններում ինչն է հիմք ընդունել՝ վերաքննիչ բողոքն ըստ էության քննության առնելու համար:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Ա.Արաբյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին դատական քննության փուլում կայացված՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննության կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

17. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը բողոքաբերի՝ սույն որոշման 6.1-րդ կետում նշված փաստարկներին անդրադառնալն առարկայագուրկ է համարում:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Սակայն, հաշվի առնելով, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 19-ին կայացրել է եզրափակիչ դատական ակտ¹⁰, որով լուծվել է նաև խափանման միջոցի ընտրության հարցը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու իրավական հնարավորությունը բացակայում է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

19. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արամ Ալբերտի Արաբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ,

¹⁰ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արամ Ալբերտի Արաբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0003/09/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

1 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ Հայկ Մարսելի Կարապետյանի պաշտպան Է.Թումասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում 2019 թվականի ապրիլի 25-ին հարուցվել է թիվ 22100419 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 131-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

1.1. Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Հ.Պողոսյանը 2019 թվականի ապրիլի 30-ին միջնորդություն է ներկայացրել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի մայիսի 3-ից մինչև նույն թվականի մայիսի 25-ը ներառյալ 077-75-43-75 բջջային հեռախոսահամարով կատարվող հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ դատախազի միջնորդությունը բավարարվել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ մեղադրյալ Հայկ Կարապետյանի պաշտպան Է.Թումասյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշված որոշման դեմ պաշտպան Է.Թումասյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2021 թվականի մարտի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճարելի դատարանը 2023 մարտի 15-ի որոշմամբ սահմանել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտումներ, ինչպես նաև բողոքարկվող որոշումը հակասում է Վճարելի դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

6. Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ հեռախոսային խոսակցությունները լսելու թույլտվություն ստանալու միջնորդությունն Առաջին ատյանի դատարան ներկայացրել է ոչ պատշաճ սուբյեկտ: Ըստ բողոքաբերի՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի և նույն օրենսգրքի 241-րդ հոդվածի միջև առկա է հակասություն՝ իրավական նորմերի կոլիզիա, որը պետք է լուծվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ, որպիսի հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է:

6.1. Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ՝ հեռախոսային խոսակցությունները լսելու թույլտվություն ստանալու միջնորդությունը դատարան անձամբ ներկայացնելու դատախազի լիազորության բացակայության մասին է վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի ձևակերպումը, որում հստակ տարանջատվում են՝ «միջնորդությունը ներկայացրած անձ» և «դատախազ» սուբյեկտները: Բողոքաբերը փաստել է, որ քննարկվող քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությամբ դատարան դիմելը դուրս է դատախազի սահմանադրական գործառույթներից:

7. Բողոքաբերն անդրադարձել է նաև խնդրո առարկա քննչական գործողության կատարման հիմքում դրված փաստական հանգամանքներին՝ նշելով, որ այդպիսիք բավարար չեն եղել: Մասնավորապես, բողոք բերած

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

անձը փաստել է, որ դատախազի միջնորդության հիմքում դրվել է այն հանգամանքը, որ ստացվել են օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ Հ.Կարապետյանն ու նրա ընտանիքի անդամները, լինելով տուժող Ն.Հակոբյանի համազուգիներ, դեպքից հետո ներգործություն են ունեցել նրա վրա, որից հետո վերջինս նախաքննության ընթացքում փոխել է իր ցուցմունքները: Ըստ բողոքաբերի՝ վերոնշյալ հանգամանքը բավարար չէ տուժողի անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիության իրավունքին միջամտությունը թույլատրելու համար:

Ավելին, բողոքաբերի պնդմամբ՝ տուժող Ն.Հակոբյանը չի փոխել իր ցուցմունքները, այլ երրորդ անգամ փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելիս, լրացրել և մանրամասնել է նախկինում իր հայտնած տվյալները: Անդրադառնալով ստացված օպերատիվ տեղեկություններին՝ բողոքաբերը փաստել է, որ դրանք ինքնին բավարար չեն հեռախոսային խոսակցությունները լսելու թույլտվություն տալու համար:

7.1 Վերոգրյալից բացի, բողոքաբերն ընդգծել է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումների համատեքստում, հեռախոսային խոսակցությունները լսելու քննչական գործողությունը պետք է կիրառվի որպես վերջին և ծայրահեղ միջոց, երբ որևէ այլ եղանակով հնարավոր չէ ստանալ ակնկալվող ապացույցը: Բողոք բերած անձի պնդմամբ՝ ի հակադրություն տվյալ մոտեցման, ոչ դատախազը, ոչ ստորադաս դատարանները չեն անդրադարձել այդ հարցին և չեն պատճառաբանել անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիության իրավունքը սահմանափակող խիստ միջոցի կիրառման անհրաժեշտությունը: Իր այս դիրքորոշումը բողոքաբերը հիմնավորել է նաև այն հանգամանքով, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը հեռախոսային խոսակցությունները վերահսկելու օպերատիվ միջոցառման իրականացումը թույլատրում է միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ դրանք պետք է անցկացվեն, կասկածվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու մեջ, և եթե անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելը ողջամտորեն անհնարին է այլ եղանակներով: Բողոքաբերը նաև նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը բավարար չափով պատճառաբանված չեն:

8. Բողոքի հեղինակը նաև փաստել է, որ դատախազը, չունենալով օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու լիազորություն, դատարանին միջնորդել է թույլատրել դրա կատարումը: Իր այս փաստարկը բողոք բերած անձը հիմնավորել է նրանով, որ դատախազն իր միջնորդության նկարագրական-պատճառաբանական մասում հղում է կատարել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին, ինչպես նաև եզրափակիչ մասում նշել է, որ քրեական գործի ապացուցողական զամբյուղն անհրաժեշտ է լրացնել, որը հնարավոր է «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելով:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքները խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշումը՝ մերժելով դատախազի կողմից ներկայացված միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքերը.

10. Դատախազ Հ.Պողոսյանի միջնորդության համաձայն. «(...) Մույն քրեական գործով սպարշած իրավական ընթացակարգերի շրջանակներում ձեռք բերված սպացույցները վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելու արդյունքում կարելի է փաստել, որ սուկա է քրեական գործի սպացուցողական զամբյուղում սպացույցներ ավելացնելու անհրաժեշտություն, որը հնարավոր կլինի լրացնել «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելով:

Վերոգրյալից ելնելով և նկատի ունենալով, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տուժող Նաիրա Հակոբյանի բջջային հեռախոսահամարով կարարվող հեռախոսային խոսակցություններում կարող են պարունակվել քրեական գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ, մասնավորապես՝ Հայկ Կարասյեւյանի կամ վերջինի հարազարների կողմից տուժող Նաիրա Հակոբյանի վրա սպորինի ազդեցություն գործադրելու, միջարեւի հանգամանքները իրականում տեղի ունեցածից տարբերվող կերպով ներկայացնելու, ինչպես նաև Հայկ Կարասյեւյանին վերագրվող ենթադրյալ հանցանքի և դրա կարարման հանգամանքների վերաբերյալ, ինչի արդյունքում հնարավոր կլինի ձեռք բերել սպացույցներ ու այդ կերպ սպահովել քրեական գործի նախաքննության լրիվությունը»²:

11. Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ բավարարելով դատախազի վերոգրյալ միջնորդությունը, նշել է. «(...) [ՀՀ քրեական դատարարության] օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝

«(...) 3. Նախաքննության և հետաքննության նկարումամբ դատարարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև

(...)

5) դիմել դատարան մեղադրյալի նկարումամբ կալանքը որպես խախտման միջոց ընդրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով. (...)»:

Դատարանը հաշվի առնելով միջնորդությամբ վկայակոչված պարճատարանությունները, գրնում է, որ 077-75-43-75 բջջային հեռախոսահամարով կարարվող հեռախոսային խոսակցությունների

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 25-28:

վերահսկումը կարող է պարունակել քրեական գործով սպացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ (...)³:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշման համաձայն՝ «(...) [Վ]երաքննիչ դատարանը գրնում է, որ տվյալ դեպքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակելու պայմանները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, մասնավորապես, 2019 թվականի մայիսի 3-ից մինչև մայիսի 25-ը ներառյալ գործով տուժող Նաիրա Հակոբյանի՝ 077-75-43-75 բջջային հեռախոսահամարով կարավորող հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը բավարարում է «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության» և հերաստվող նպատակի համապատության պահանջներին, իսկ պաշտպան Է.Թումասյանի կողմից վերաքննիչ բողոքում բերված պարճատարանությունները հերքվում են նաև հերկյալով:

– ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազն իրավասու է հեռախոսային խոսակցությունները լսելու միջնորդությամբ դիմելու դատարան, իսկ ինչ վերաբերում է նույն 241-րդ հոդվածին, սպա այն ըար էության չի հակասում օրենսգրքի 53-րդ հոդվածի իրավակարգավորումներին, առավել ևս, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն՝ դատավարական հարկադրանք կիրառելու մասին միջնորդությունը քննարկման դատական նիստին իրավունք ունի մասնակցել դատախազը, եթե անհրաժեշտ է համարում անձամբ պաշտպանել միջնորդությունը, ով նաև իրավունք ունի հեր վերցնելու ներկայացված միջնորդությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքտից, այն նորմատիվ իրավական ակտի դրոյթներից, ի կարարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, սպա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը:

Կոնկրետ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը՝ ընդհանուր, իսկ նույն օրենսգրքի 241-րդ հոդվածը՝ հատուկ մասի նորմ է:

– Թեև դատախազ Հ.Պողոսյանն իր որոշումը վերնագրել է «Հեռախոսային խոսակցությունները վերահսկելու թույլտվություն սրանալու միջնորդություն

³ Տե՛ս կոլոթեր, հատոր 1-ին, թերթեր 33-35:

հարուցելու մասին», սակայն որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. «Միջնորդություն հարուցել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ 2019թ-ի մայիսի 03-ից մինչև մայիսի 25-ը ներառյալ թույլատրել լսել և ձայնագրատել 077-75-43-75 բջջային հեռախոսահամարով կապարվող հեռախոսային խոսակցությունները» և ներկայացված միջնորդությունը քրեական գործով համապարասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի պահանջներին:

– Ինչպես դատախազ Հ.Պողոսյանի կողմից ներկայացված միջնորդությունը, այնպես էլ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը հիմնավորված ու պարզապարսպված է, պայմանավորված գործի լուծման համար բավարարության փաստակցունից անհրաժեշտ ապացույցներ արանալու անհրաժեշտությամբ և գործի փաստական փյուռներով առ այն, որ դեպքից հետո մեղադրյալ Հայկ Կարապետյանի ընտանիքի անդամները փորձում են ապօրինի ներգործություն ունենալ րուժող Նաիրա Հակոբյանի վրա:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի սահմանափակման վերաբերյալ դատախազի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ առաջին արյանի դատարանի որոշումը իրավաչափ ու հիմնավորված է, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ պաշտպան Է.Թումասյանի վերաքննիչ բողոքը՝ մերժել⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ թեև պաշտպան Է.Թումասյանը սույն գործով բողոք բերելու իրավունք ունեցող անձ չէ, քանի որ թե՛ վերաքննիչ, թե՛ վճռաբեկ բողոքներում չի հիմնավորել, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ իր պաշտպանյալ Հայկ Կարապետյանի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն, ինչը Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմք է⁵, սակայն, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Հ.Կարապետյանի պաշտպան Է.Թումասյանի վերաքննիչ բողոքն ըստ էության քննության է առել և իր որոշման մեջ շարադրել ըստ այդմ հիմնավորումներ, ինչպես նաև ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառնությանից՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ստորադաս դատարանների դիրքորոշումն առ այն, որ մինչդատական վարույթի օրինականության

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 106-118:

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արա Շահնազարյանի գործով 2022 թվականի հունիսի 30-ի թիվ Բ-3683/20 որոշումը:

նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն իրավասու է հետախոսային խոսակցությունները լսելու միջնորդությամբ դիմել դատարան:

15. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

(...)

2) հսկողություն է իրականացնում մինչդատարանական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

(...)

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական դեկլարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև՝

(...)

5) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ «(..)

3. Քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Քննիչը պարտախանարվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար:

4. Քննիչը, մասնավորապես, լիազորված է՝

(...)

24) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Խոսակցությունների լսման և ձայնագրատման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է դատարանին միջնորդություն հարուցելու մասին պարձառաքանակաճ որոշում, որում նշվում են քրեական գործը և հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների

լանան և ձայնագրատման տեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան: (...):»:

16. ՀՀ Սահմանադրական դատարանն (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) իր թիվ ՍԴՌ-844 որոշմամբ նշել է, որ. «(...) ԼԴխարահասզությունն օրենքով նախատեսված ղեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հեղափոխության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդարական վարույթում դատարանի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատարանության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի սպասումում սահմանադրական վերոհիշյալ պարականության կատարման, մինչդարական վարույթում հսկողություն իրականացնելիս դատարանը պարահասանարու է հեղափոխության և նախաքննության լրիվության, օրենկրիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատարանության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժրված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու (ուղղորդելու) հեղափոխության մարմնի, քննիչի դատավարական գործունեությունը, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, «բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերթվարկյալ գործառույթները դատարանին իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինակահարումները վերացնելու նպարակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տարվում հեղափոխության մարմնին, քննիչին կամ օպերարիվ-հեղափոխական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերացնելով նաև վերջիններիս որոշումները (...):»⁶:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴՌ-1236 որոշմամբ արտահայտվել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «(...) Եթե հեղափոխության, նախաքննության իրականացումը պետական իրավասու մարմնների՝ **օրենքով նախատեսված** բացառիկ լիազորություն է, սպա այդ գործունեության նկատմամբ հսկողության (դատավարական հսկողության) իրականացումը դատարանության սահմանադրական գործառույթն ու պարականությունն է: Վերջինիս դեպքում օրենսդիրը նկարի է ունեցել, որ հեղափոխության և նախաքննության նկատմամբ դատարանական հսկողության գործառույթը ոչ թե գերատեսչական հսկողության բովանդակություն ունի, այլ կոչված է օրենքով նախատեսված միջոցներով սպասուկելու քրեական գործերով վարույթի օրինականությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում: Նկարի է առնվում նաև, որ քրեական գործով դատարանության փուլում պետական մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրականացման բացառիկ իրավունքը նույնպես վերապահված է դատարանին,

⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՌ-844 որոշման 8-րդ կետը:

ով սպարասիանսարու է հեարաքննության և նաիաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմննիության և արդյունավետության համար, ինչն էլ իրավական կարևոր նաիասարրյալ է այդ մեղաարանքը դատարանում արդյունավետ պաշտպանելու և քրեական գործով արդար դատաքննություն իրականացնելու համար:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ գործատությանի սյդաիսի տարանջատումը համահունչ է ՀՀ Սահմանադրության [2005թ. փոփոխություններով] 5-րդ հոդվածի, 89-րդ հոդվածի 7-րդ կետի և 103-րդ հոդվածի պահանջներին և կարևոր երաշիսք է հանցավոր ուրնագություններից մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից⁷:

17. Դատախազի լիազորություններն ամրագրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի վերոշարադրյալ նորմի վերլուծությունից բխում է, որ հետաքննության և նաիաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազի լիազորությունների ներքո քրեադատավարական օրենքը նաիատեսում է նաև ապացույցների ձեռքբերմաննուղղված քննչական գործողություններ կատարելու, այն է՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանում խուզարկություն կատարելու համար դատարանին միջնորդությամբ դիմելու իրավասություն: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախքան «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ ՀՕ-129-Ն ՀՀ օրենքի ընդունումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ կետերի, 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է իր վարույթ ընդունել քննիչի և հետաքննության մարմնի հարուցած քրեական գործերը, անձամբ քննել գործը լրիվ ծավալով՝ նաիաքննության ընթացքում ընդունելով անհրաժեշտ որոշումներ և իրականացնելով քննչական ու այլ դատավարական գործողություններ: Սակայն «Դատախազության մասին» 2007 թվականի ՀՀ օրենքի ընդունմամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թվականի փետրվարի 22-ի վերոնշյալ օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում, դատախազության կողմից նաիաքննություն իրականացնելու իրավասությունը վերացվեց: Այսինքն, օրենսդրորեն ամրագրվեց այն գաղափարը, որ քննություն, մասնավորապես՝ քննչական գործողություններ կատարելու և դրանց արդյունքում ապացույցներ ձեռքբերելու իրավասությունն ունեցող միակ դատավարական սուբյեկտը՝ քննիչն է, իսկ դատախազը կարող է հսկել քննիչի կողմից կատարվող քննչական գործողությունների օրինականությունը, այլ ոչ թե անձամբ կատարել դրանք:

⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՌ-1236 որոշման 6-րդ կետը:

Հետևաբար քննչական գործողությունների կատարումը դուրս է դատախազի՝ հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում, ուստիև մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական գործառույթի սահմաններից:

17.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազին ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ անմիջականորեն կատարելու իրավասություն վերապահելու պարագայում, կատարվի մի իրավիճակ, երբ այդ գործողությունների օրինականության համար պատասխանատու սուբյեկտն ինքն է անձամբ կատարելու դրանք, ինչը համատեղելի չէ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի հետ և կարող է կասկածի տակ դնել դրա արդյունավետ իրացումը: Դատախազի կողմից քննչական գործողությունների կատարման թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան անձամբ դիմելը վտանգում է նաև քննիչի՝ որպես նախաքննության իրականացման համար պատասխանատու սուբյեկտի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատավարական ինքնուրույնությունը՝ հակասելով քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքին: Ընդ որում, հարկ է փաստել, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ վերոհիշյալ գաղափարն արտացոլված է նույն օրենսգրքի 241-րդ հոդվածում, որն իբրև հեռախոսային խոսակցությունները լսելու միջնորդություն հարուցելու մասին որոշում կայացնելու միակ սուբյեկտ նախատեսել է քննիչին:

Մյուս կողմից՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը ենթադրում է, որ դատախազն օժտված է քննիչի կողմից կատարվող գործողությունների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու և այդ գործառույթի ապահովման անհրաժեշտությունից բխող ցուցումներ և հանձնարարություններ տալու իրավասությամբ:

17.2. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ բացառապես գործառույթից բխող գործողություններ կատարելու իրավասություն ունենալու գաղափարն օրենսդիրն առավել հստակ ամրագրել է 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որը հարկադրանքի միջոցներ կիրառելու, կալանքի ժամկետը երկարաձգելու, քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով դատարան դիմելու իրավասությունը վերապահել է քննիչին, իսկ դատախազին լիազորել է հետ վերցնել համապատասխան միջնորդությունը կամ մասնակցել դրա քննության դատական վարույթին՝ հետևողականորեն իրացնելով «գործառույթ-սուբյեկտ-լիազորություն» եռամիասնական շղթան: Այս մտտեցումը բխում է քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքից և արտացոլում է դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակը:

18. Վերոշարադրյալի հաշվառմամբ անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ և 241-րդ հոդվածներում տեղ գտած

տարբերվող իրավակարգավորումներին և կիրառելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավական նորմի մեկնաբանման կանոնը, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը*, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննչական գործողությունների իրականացման նպատակով, անմիջականորեն դատախազի կողմից դատարան միջնորդություններ ներկայացնելու իրավասություն նախատեսող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը չի արտահայտում օրենսդրի կամքը՝ այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ 2007 թվականի փետրվարի 22-ի վերոնշյալ օրենքով, օրենսդիրը վերացրել է անմիջականորեն դատախազի կողմից նախաքննություն կատարելու իրավասությունը՝ այդպիսով քրեական դատավարությունում դատախազի կարգավիճակը համապատասխանեցնելով նրա սահմանադրական գործառույթներին:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ բավարարել է 2019 թվականի մայիսի 3-ից մինչև նույն թվականի մայիսի 25-ը ներառյալ տուժող Ն.Հակոբյանին պատկանող բջջային հեռախոսահամարով կատարվող հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու մասին դատախազ Հ.Պողոսյանի միջնորդությունը⁸,

– Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, նշել է, որ ինչպես դատախազ Հ.Պողոսյանի կողմից ներկայացված միջնորդությունը, այնպես էլ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը հիմնավորված ու պատճառաբանված են՝ պայմանավորված գործի լուծման համար բավարարության տեսանկյունից անհրաժեշտ ապացույցներ ստանալու հանգամանքով և գործի փաստական տվյալներով առ այն, որ դեպքից հետո մեղադրյալ Հ.Կարապետյանի ընտանիքի անդամները փորձում են ապօրինի ներգործություն ունենալ տուժող Ն.Հակոբյանի վրա⁹:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ իր որոշմամբ դատախազ Հ.Պողոսյանի միջնորդությունը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ այդ որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, դատախազին դիտարկել են համապատասխան քննչական գործողություն կատարելու միջնորդությամբ դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտ՝ անտեսելով այն հանգամանքը, որ դա չի բխում վերջինիս՝ որպես

⁸ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող սուբյեկտի սահմանադրական գործառույթից:

21. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դիրքորոշումն առ այն, որ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն իրավասու է հեռախոսային խոսակցությունները լսելու միջնորդությամբ դիմելու դատարան, հիմնավոր չէ:

22. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ դատախազ Հ.Պողոսյանի միջնորդությունը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ այն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանը, խուզարկությունը թույլատրող դատական ակտի ոչ իրավաչափությունն արձանագրելիս, *Հովհաննես Չամսարյանի* գործով արդեն իսկ ձևավորել է համապատասխան իրավակիրառ պրակտիկա, երբ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու քննիչի միջնորդությունը բավարարելու մասին դատական ակտը՝ կատարված լինելու փաստի ուժով չի բեկանվել¹⁰: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում բողոքաբերի՝ սույն որոշման 7-8-րդ կետերում նշված փաստարկների անդրադառնալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել:
2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հովհաննես Չամսարյանի* գործով 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/2848/07/19 որոշման 15-րդ կետը:

դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 4-ի որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0163/01/12

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

1 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամվել Հրաչի Դավթյանի պաշտպան Կարեն Հակոբյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռով Սամվել Հրաչի Դավթյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 222-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 35-175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 183-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ հանցանքների համակցությամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 (տասնհինգ) տարի ժամկետով՝ անձնական գույքի բռնագրավմամբ, բայց

ոչ ավել քան 229.985.750 ՀՀ դրամը և 221.825 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը:

Նույն դատավճռով մեղավոր են ճանաչվել նաև Արտուշ Ռուբիկի Հակոբյանը, Դավիթ Սուրենի Գալստյանը, Արթուր Գրիշայի Մանուկյանը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ ամբաստանյալ Ս.Դավթյանի պաշտպան Կ.Հակոբյանի, ամբաստանյալ Ա.Մանուկյանի և վերջինիս պաշտպան Ռ.Սաֆարյանի, ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Հ.Արսենյանի և ամբաստանյալ Դ.Գալստյանի պաշտպան Ս.Ոսկանյանի վերաքննիչ բողոքները մերժվել են:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ Ս.Դավթյանի պաշտպան Կ.Հակոբյանի, Դ.Գալստյանի պաշտպան Ս.Ոսկանյանի, Ա.Հակոբյանի պաշտպան Հ.Արսենյանի և Ա.Մանուկյանի պաշտպան Ռ.Սաֆարյանի վճռաբեկ բողոքները, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ, վարույթ ընդունելը մերժվել է:

3.1. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ, նոր հանգամանքի հիմքով դատապարտյալ Սամվել Դավթյանի բերած բողոքը բավարարվել է. նրա վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը՝ բեկանվել ու փոփոխվել է, Ս.Դավթյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակված արարքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ Ս.Դավթյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 14 (տասնչորս) տարի 9 (ինը) ամիս ժամկետով՝ անձնական գույքի բռնագրավմամբ, բայց ոչ ավել քան՝ 229.985.750 (երկու հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը և 221.825 (երկու հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր քսանհինգ) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը: Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնվել են անփոփոխ:

4. Սամվել Դավթյանի գանգատների հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), հանդես գալով Կոմիտեի կազմով, *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի մարտի 1-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Ս.Դավթյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածի նյութաիրավական ու ընթացակարգային հայեցակետերի և 6-րդ հոդվածի խախտման փաստը:

5. 2022 թվականի հունիսի 29-ին Սամվել Դավթյանի պաշտպան Կարեն Հակոբյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ¹:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը դատական նիստում քննության առնելու մասին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

6. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը փաստել է, որ *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը նոր հանգամանք է՝ սույն գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը վերանայելու համար:

Բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Ս.Դավթյանի՝ Կոնվենցիայի 3-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում, հետևաբար չեն կարող շարունակել օրինական ուժի մեջ մնալ այն դատական ակտերը, որոնք կայացվել են Կոնվենցիայի խախտմամբ, դրանք անօրինական դատական ակտեր են:

6.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Սամվել Դավթյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռն ու այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Սամվել Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«Նա, 2011 թվականի մայիսի սկզբին անդամագրվել է անձանց նկարումսր ավազակային հարձակումներ կատարելու նպատակով Արարուշ Հակոբյանի և Գուրգեն Հայրապետյանի կողմից արեղծված և ղեկավարվող, (...) զինված, կայուն կազմակերպված խմբին քանդակային, սպա քանդակի կազմում մասնակցել է 2011 թվականի մայիսից օգոստոսն ընկած ժամանակահատվածում Արամ Ղազազյանի, Էդուարդ Բեզրյանի, Աղվան Գրիգորյանի, Նասրուլեոն Ազիզյանի և նրանց ընդհանրությունների անդամների նկարումսր կատարված ավազակային հարձակումներին, որի ընթացքում նաև առանց համաձայնագրի նպատակի սպորինի փրկացել են Էդուարդ Բեզրյանի և Աղվան Գրիգորյանի ավերումեքենաներին, սպա*

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 9-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

մասնակցել է 2011 թվականի սեպտեմբերի լույս 23-ի գիշերը բանդայի կողմից կարարվելիք ավազակային հարձակման նախապարաստությունը: Բացի այդ, առանց իրացնելու նպատակի սպորինի ձեռք է բերել և իր մոտ պահել խոշոր չափի 1 գրամ հասարարուն քաշով ափիոն քրեակալի թմրամիջոց:

Այսպես.

Արարուշ Հակոբյանի ղեկավարած բանդայի անդամներ Գուրգեն Հայրասպետյանը, Դավիթ Գալստյանը, Սամվել Դավթյանը և ինքնությունը քննությանը չպարզված երկու անձ, Գուրգեն Հայրասպետյանի գլխավորությամբ 2011 թվականի մայիսի 17-ին՝ ժամը 04:00-05:00-ի սահմաններում, ավազակային հարձակմամբ առանձնապես խոշոր չափերի գույք համախառնելու նպատակով հանդիպել են Երևանի Մալաթիա թաղամասում, սպա Գուրգեն Հայրասպետյանը հարձակման մասնակիցներին բաժանել է իր կողմից բերված պայտասկում գրավող դիմակները, ձեռնոցները, ինքնաձիգները և սարձանակները: Այնուհետև բանդայի անդամները հյուրասենյակի ելքուպարտուհանը պրոտրակահանի միջոցով բացելու եղանակով սպորինի մոտք են գործել Արոմ Ավետրիքի Դազազյանի Երևան քաղաքի Դանիել Վարուժան փողոցի 48 փուն, որպետ նախապես վերցված կաշուն ժապավեններով կապել են Արոմ Դազազյանին և նրա ընթանիքի անդամներին, սպա հրազեն հանդիսացող երկու ինքնաձիգի և երկու սարձանակի գործարարմամբ վերջինիս և նրա ընթանիքի անդամների կյանքի ու առողջության համար վրանգավոր քննություն գործարարելու սպառնալիքով համախառնել են 1200 ԱՄԵ դոլար և 50.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ինչպես նաև քրեակալի քրեակալի նսյա գարդեր, այլ թանկարժեք իրեր ու առարկաներ Արոմ Դազազյանին պարձարուելով առանձնապես խոշոր չափերի ընդհանուր 24.190.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ավազակային հարձակմամբ մասնակցած բանդայի անդամները համախառնված գումարը կիսել են միմյանց միջև, իսկ նսյա գարդերը և մյուս իրերը իրացրել է Գուրգեն Հայրասպետյանը, սպա դրանց վաճարքից գույքած գումարը բաժանել է բանդայի անդամներին:

Նպատակ ունենալով շարունակել հանցավոր գործունեությունը՝ այն է՝ ավազակային հարձակումներ կարարելը, ինչպես նաև հարձակումներից հետո թաքնվելու, հարձակումների ժամանակ օգրագործվող հրազենները և փամիռուչները թաքնելու, համախառնվածը հանգիստ պայմաններում բաժանելու նպատակով բանդայի անդամները նույն ժամանակահատվածում վարձակալել են Կոտայքի մարզի Պղզնի-2 1-ին թաղամասի 1-ին փողոցի 26 ամառանոցը:

Բացի այդ, Արարուշ Հակոբյանի և Գուրգեն Հայրասպետյանի կողմից ղեկավարած բանդայի անդամները Դավիթ Գալստյանը, Սամվել Դավթյանը, Արման Դալլաքյանը և ինքնությունը քննությանը չպարզված ևս երկու անձ, Գուրգեն Հայրասպետյանի գլխավորությամբ 2011 թվականի հունիսի 01-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում նույն եղանակով դիմակավորված և զինված, հրազեն հանդիսացող երկու ինքնաձիգով, երեք սարձանակով, ավազակային հարձակմամբ առանձնապես խոշոր չափի գույք համախառնելու նպատակով քրեակալի պարտուհանը վրայից անցնելով, սպա քրեակալի քրեակալի միջոցների գործարարմամբ պարտուհանը

բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել Էդուարդ Բեգոյանի Երևանի Ալան, Աճառյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 26/6 առանձնատուն, որտեղ իրենց հետ նստասպես վերցված կաշուն ժապավեններով կապել են փանը գրնվող անձանց: Այնուհետև, հայր և որդի Էդուարդ ու Կարեն Բեգոյանների առողջության համար վրանգավոր բնության գործադրելով՝ նրանց ծեծի ենթարկելով, այդ թվում՝ իրենց մուր եղած զենքերով հարվածներ հասցնելով, ինչպես նաև նույն հրազեններով վերջիններին և նրանց ընտանիքի անդամների կյանքի և առողջության համար վրանգավոր բնության գործադրելու ապտոնալիքով հաիշտակել են 25.000 ԱՄՆ դոլար և 5.300.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ինչպես նաև փարբեր փեսակի ոսկյա զարդեր, այլ թանկարժեք իրեր ու առարկաներ՝ պարճատելով ընդհանուր 221.825 ԱՄՆ դոլարի և 5.300.000 ՀՀ դրամի առանձնապես խոշոր չափի գույքային վնաս: Ավագակային հարճակման ընթացքում քանդայի անդամները հաիշտակել են նաև ոսկյա զարդերի, գումարների պարտնակությամբ մեղադրյալ չիրկիզվող պահարանը, որը տեղափոխել են նույն փան ավտոբնակում կայանված, տուժողներին պարկանող «Նիսան Պարրոլ» մակնիշի 22 ՍՍ 221 համարանիշի ավտոմեքենայի մեջ և առանց հաիշտակելու նպարակի ապօրինի տիրանալով նշված ավտոմեքենային՝ դրանով դիմել են փախուստի: Հերագայում ավտոմեքենան թողել են Երևանի Ֆրունզե փողոցի 6/8 շենքի հերանամասում:

Վերը նշված ավագակային հարճակման ժամանակ Արման Դավաքյանը, կարարելով քանդայի կազմում իրեն հարկացված դերը, Գուրգեն Հայրապետյանի հանձնարարությամբ հարճակման ամբողջ ընթացքում գրնվելով Բեգոյանների առանձնատան մուր, դիրարկել-հսկել է փարածքը և ոսդիոկապի միջոցով տեղեկություններ հադորդել Գուրգեն Հայրապետյանին:

Ավագակային հարճակմանը մասնակցած քանդայի անդամները հաիշտակված չիրկիզվող պահարանը բացել են էլեկտրական սղոցով կորելու եղանակով, որտեղից հայրնաբերված կանխիկ գումարը բաժանել են միմյանց միջև, իսկ հաիշտակված ոսկյա զարդերն ու մյուս իրերն իրացրել է Գուրգեն Հայրապետյանը և դրանց վաճառքից գոյացած գումարը բաժանել քանդայի անդամներին:

Հերագա հանցագործությունների կարարումը հեշտացնելու նպարակով քանդայի անդամները ավագակային հարճակման ընթացքում հաիշտակված գումարներով գնել են «Սերսերես» մակնիշի 60 00 086 համարանիշի ավտոմեքենան:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ քանդայի անդամներ Գուրգեն Հայրապետյանը, Դավիթ Դավարյանը և Սամվել Դավթյանը, քանդայի դեկավար Արրուջ Հակոբյանի կազմակերպմամբ 2011 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում, ավագակային հարճակմամբ առանձնապես խոշոր չափերի գույք հաիշտակելու նպարակով դիմակավորված, տեխնիկական միջոցների գործադրմամբ պարտուհանը բացելու եղանակով, ապօրինի մուտք են գործել Աղվան Երվանդի Գրիգորյանի Երևանի Նոյ թաղամասի 72 տուն, որտեղ իրենց հետ նստասպես վարցված կաշուն ժապավեններով կապել են փանը գրնվող անձանց, ապա հրազեն հանդիսացող սարճանակներով և ինքնաճիգով վերջինին

ու նրա ընտանիքի մյուս անդամների կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելով՝ իրենց մուր եղած զենքերով հարվածներ հասցնելով, ինչպես նաև վրանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով համաշարակել են 9.700 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, ինչպես նաև տարբեր տեսակի ոսկյա զարդեր՝ պարճառելով ընդհանուր 27.000.000 ՀՀ դրամի առանձնապես խոշոր չափի գույքային վնաս: Այդ թվում համաշարակել են նաև, ոսկյա զարդերի, գումարի պարունակությամբ մեքենայի չիրկիզվող պահարանը, որը տեղափոխել են Աղվան Գրիգորյանին պարկանոց «ԲՄՎ-Х5» մակնիշի 01 SO 009 համարանիշի ավտոմեքենայի մեջ և առանց համաշարակելու նպատակի սպորինի փրանսալով նշված ավտոմեքենային՝ դրանով դիմել են փահուսարի: Հետագայում ավտոմեքենան թողել են Երևանի Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի 50/1 փան մուրակայքում:

Բանդայի անդամները համաշարակված չիրկիզվող պահարանը տեղափոխել են Պրդնիում գրնվող վարձակալած ամառանոց, որտեղ էլեկտրական սրոցով կորելու եղանակով բացել են պահարանը և միմյանց միջև բաժանել պահարանում եղած կանխիկ գումարը: Համաշարակված ոսկյա զարդերը կրկին իրացրել է Գուրգեն Հայրապետյանը և դրանց վաճառքից գոյացած գումարը բաժանել է բանդայի անդամներին:

Իրենց կողմից կարարված հանցագործությունների հետքերը թաքցնելու նպատակով բանդայի անդամները հանձնել են Պրդնիում գրնվող ամառանոցը և վարձակալել են Երևանի Ամառանոցային փողոցի 1-ին նրբանցքի 20 փունը:

Իրագործելով հանցավոր դիտարկությունը՝ Արարոշ Հակոբյանի և Գուրգեն Հայրապետյանի կողմից ղեկավարած բանդայի անդամները Դավիթ Գալպարյանը, Սամվել Դավթյանը և Արման Դավթյանը, Գուրգեն Հայրապետյանի և Արարոշ Հակոբյանի անմիջական գլխավորությամբ ու մասնակցությամբ 2011 թվականի օգոստոսի 21-ին ժամը 05:00-ի սահմաններում, ավազակային հարձակմամբ առանձնապես խոշոր չափերի գույք համաշարակելու նպատակով դիմակավորված, պարզամբի բաց դռնից սպորինի մուտք են գործել Նասրյուն Ազիզյանի Երևանի Կիլիկիա թաղամասի Չայկինայի փողոցի 57 փուն, որտեղ հրազեն հանդիսացող ինքնաձիգով և սարճանակներով վերջինիս և նրա ընտանիքի անդամների կյանքի ու առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով համաշարակել են 35.000 ԱՄՆ դոլար, 3.000.000 ՀՀ դրամ և 3.000 եվրո կանխիկ գումար, ինչպես նաև տարբեր տեսակի ոսկյա զարդեր, թանկարժեք նկարներ, այլ իրեր ու առարկաներ՝ պարճառելով ընդհանուր 173.495.750 ՀՀ դրամի առանձնապես խոշոր չափի գույքային վնաս:

Ավազակային հարձակման ժամանակ Արման Դավթյանը, կրկին կարարելով բանդայի կազմում իրեն հարկացված դերը, Գ.Հայրապետյանի հանձնարարությամբ հարձակման ամբողջ ընթացքում գրնվելով Նասրյուն Ազիզյանի առանձնապես մուր, դիտարկել-հսկել է տարածքը և ոստիոկայի միջոցով տեղեկություններ հաղորդել Գուրգեն Հայրապետյանին, սպա վերջինիս հրահանգով և սպորինի մուտք է գործել Նասրյուն Ազիզյանի փուն և օգնելով մյուսներին իր մուր եղած դանակով կորելու միջոցով, շրջանակներից հանել է

նկարները և դուրս բերել դրանք Կնից, որից հետո բանդայի անդամները դիմել են փախուստի:

Բանդայի անդամները հափշտակված կանհիփ կոմսարը բաժանել են միմյանց միջև, իսկ ոսկյա զարդերն ու նկարները կրկին իրացրել է Գուրգեն Հայրապետյանը:

Այնուհետև Գուրգեն Հայրապետյանը հերթական ավազակային հարձակման համար 2011 թվականի սեպտեմբերին հավաքագրել է բանդայի նոր անդամներ Արթուր Մանուկյանին և Քյարամ Անոյանին, վերջիններս Գուրգեն Հայրապետյանի գլխավորությամբ, ինչպես նաև բանդայի անդամներ, բանդայի կողմից նախկինում կատարված ավազակային հարձակումների մասնակիցներ Մամվել Դավթյանի և Դավիթ Գալարյանի հետ նախապարստարել են Երևան քաղաքի Չարենցի 47 րան բնակիչ Կարեն Ջինանյանի և նրա ընտանիքի անդամների նկարումներ առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով ավազակային հարձակման կատարումը: Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով բանդայի անդամները րեական ժամանակ դիրարկել են հարձակման օբյեկտ հանդիսացող Կունը և շրջակայքը, սպա 2011 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում, իրենց հետ վերցնելով ավազակային հարձակումը կատարելու համար անհրաժեշտ 9 մմ փրամնաչափի ինքնաշեն արձանակ-գնդացիրը, 5,45 մմ փրամնաչափի «ԱԿ-74» րեսակի «ԱՎ 312939» համարի ինքնաձիգը, 7,62 մմ փրամնաչափի «SO2-49» րեսակի «ԻԲՍ-Ե 1105» համարի թմբուկավոր արձանակը, 9մմ փրամնաչափի «Մակարով» րեսակի «ԱԿ 3540 Պ» համարի արձանակը, 7,62 մմ փրամնաչափի «SS» րեսակի «ՕԳ 34» համարի արձանակը, «Բրու Յ Օ6» րեսակի «7-012348» համարի մարտական ձևափոխված հրազեն հանդիսացող ձայնագրային արձանակը և դրանցից կրակոցներ արձակելու համար նախատեսված, ռազմամթերք հանդիսացող փամփուշտները, ինչպես նաև դիմակներ, ձեռնոցներ և կաշուն ժապավեն գնացել են նշված թաղամաս: Լրացուցիչ դիրարկումների արդյունքում, արեղծված իրավիճակից ելնելով, հարձակումը չեն իրականացրել, դրա կատարումը հետաձգել են այլ օրվա, սակայն հանցագործությունն ավարտին չեն կարողացել հասցնել, քանի որ նույն օրը բանդան բացահայտվել և վնասագերծվել է իրավասյակ մարմինների կողմից:

2011թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 06:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Մյանսիկյան պողոտայի 57 հասցեում րեղակայված շինության մուրակայքում բանդայի անդամներ Արթուր Մանուկյանը և Գուրգեն Հայրապետյանը հետապնդվել են ռարիկանության աշխատակիցների կողմից, որի ընթացքում վերջինս իր կողմից վարած «Մերսեդես» մակնիշի 60 ՕՕ 086 համարանիշի ավրումեքենայով ենթարկվել է վթարի: Այնուհետև, դուրս գալով վթարված ավրումեքենայից, Գուրգեն Հայրապետյանը և Արթուր Մանուկյանը դիմել են փախուստի՝ վազելով մուրակա բլրի վրա: Արթուր Մանուկյանը փախուստն սպահովելու նպատակով իր մուր եղած հրազեն հանդիսացող 7,62 մմ փրամնաչափի «SO2-49» րեսակի «ԻԲՍ-Ե 1105» համարի թմբուկավոր սարձանակից արձակել է կրակոց: Այնուհետև, սարձանակը նետել է մուրակա թփերում և փորձել է թաքնվել, սակայն րեղում վնասագերծվել է իրեն հետապնդող ռարիկանության աշխատակիցների կողմից,

իսկ Գուրգեն Հայրասպետյանը, փախուստի ընթացքում բարձրանալով հարակից ժայռի վրա, վայր է ընկել և մահացել:

Սույն քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է նաև, որ (...) Սամվել Դավթյանը քննությանը չպարզված անձից և հանգամանքներում, առանց իրացնելու նպատակի, իր գործածման համար ապօրինի ձեռք է բերել և հագին եղած սպորտային համազգեստի բաձկնի աջ գրպանում պահել խոշոր չափի 1 գրամ հասարարուն քաշով ափիոն տեսակի թմրամիջոց, որը հայրնաբերվել է 2011 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ աշխատակիցների կողմից վերջինիս անձնական խուզարկության ժամանակ: (...)»²:

8. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Բեյարարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հետազոտելով և գնահատելով ապացույցներն իրենց համակցությամբ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ապացուցված է համարում ամբարանյալներին՝ սույն դատավճռի ներածական մասում շարադրված մեղադրանքների ձևակերպմամբ (...) առաջադրված մեղադրանքներով նախարեալված հանցանքները կատարելը և գրնում է, որ վերջիններս կատարած հանցավոր արարքների համար ենթակա են պարծի: (...)»³:

9. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, 2015 թվականի մայիսի 12-ի որոշմամբ փաստել է. «(...) Բերլուծելով գործի փաստական րվյալները, գնահատելով ինչպես յուրաքանչյուր ապացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբարանյալներին/ (...) մեղաագրված արարքները որակված են ճիշտ և նրանք պետք է քրեական պատասխանատվության և պարծի ենթարկվեն:

(...)

Բերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով դատական սկր կայացնելիս ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի կողմից դատավարական նորմերի այնպիսի խախտումներ թույլ չեն րրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

(...)

Բիճարկվող դատական սկրը բեկանելու և վերջիններիս նկարմամբ արդարացման դատական սկր կայացնելու, ինչպես նաև գործը նոր քննության ուղարկելու հիմքեր չկան: (...)»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

I. Ներպերական դատական սկրերի վերանայումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով

² Տեն քրեական գործ, հատոր 16-րդ, թերթեր 352-354:
³ Տեն քրեական գործ, հատոր 39, թերթեր 4-106:
⁴ Տեն քրեական գործ, հատոր 41-րդ, թերթեր 79-206:

Եվրոպական դատարանի՝ 2022 թվականի մարտի 1-ի վճիռն արդյո՞ք ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի և 2019 թվականի նոյեմբերի 7-ի⁵ որոշումները վերանայելու հիմք է:

11. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 426.1-ին հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին աստիճանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (...):»

12. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

13. Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի մարտի 1-ի վճռով, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– «Դատարանը եզրակացնում է, որ իշխանության մարմինները չեն կարողացել արդյունավետ քննություն իրականացնել դիմումատուի հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի հանգամանքների առնչությամբ⁶,

– Դատարանը գրնում է, որ Կստավարությունը չի կարողացել արժանահավասար քննարկություն ցուցաբերել դիմումատուին հասցված վնասվածքների առնչությամբ: Մասնավորապես չի հաստատվել, որ նրա վնասվածքները հասցվել են ուժի գործադրման հետևանքով, որը խիստ անհրաժեշտ է եղել պայմանավորված նրա վարքագծով (որն վերևում հիշարկված Բույիդի գործը, § 100): Հետևաբար Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուն ենթարկվել է անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի՝ 3-րդ հոդվածի խնամարով,

⁵ Տե՛ս սույն որոշման 3.1-րդ կետը:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատներ թիվ 54261/13 և 18361/16, կետ 11:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատներ թիվ 54261/13 և 18361/16, կետ 13:

– Դատարանը վկայակոչում է 6-րդ հոդվածի համաձայն սահմանված իր նախադեպային իրավունքի սկզբունքները՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը ձեռք բերված ցուցմունքները քրեական վարչություն որպես սպացույց թույլատրելու առնչությամբ (տե՛ս Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Gefgen v. Germany [GC]], թիվ 22978/05, § 166, ՄԻԵԴ 2010 և Իբրահիմը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Ibrahim and Others v. the United Kingdom [GC]], թիվ 50541/08 և եւս 3-ը, § 254, 2016 թվականի սեպտեմբերի 13): Սույն գործով դիմումնադրոն հանցագործության կատարումը խտարովանել է իր նկատմամբ ցուցաբերված վար վերաբերմունքի արդյունքում: Այն փաստը, որ դիմումնադրոն խտարովանել է ԶԳՎ քննիչին, այլ ոչ թե ոստիկանության ծառայողներին, որոնք վար վերաբերմունք են ցուցաբերել իր հանդեպ, Դատարանի կարծիքով, վճռորոշ չէ (համեմատելք Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Harutyunyan v. Armenia] թիվ 36549/03, § 65, ՄԻԵԴ 2007-III): Դատարանները հետազայում դիմումնադրոն մեղավոր ճանաչելիս հիմնվել են այդ խտարովանական ցուցմունքի վրա: Այս փաստը դիմումնադրոի դատական քննությունն ամբողջությամբ դարձրել է անարդար՝ անկախ ինդրո առարկա ցուցմունքի սպացուցողական արժեքից և անկախ նրանից, թե դրա օգրագործումը որոշիչ է եղել դիմումնադրոի դատապարտումն սպահովելու համար, թե՛ ոչ (տե՛ս վերևում հիշարակված՝ Գեֆգենի գործը, § 166)»⁸:

Արդյունքում, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով տեղի են ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական ու ընթացակարգային հայեցակետերի, ինչպես նաև 6-րդ հոդվածի խախտումներ⁹:

14. Հիմք ընդունելով Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական ու ընթացակարգային հայեցակետերով, ինչպես նաև 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման փաստի արձանագրումը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2022 թվականի մարտի 1-ի վճիռը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի և 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշումները վերանայելու հիմք է:

II. Ներպերական դատական արյանների կողմից կայացված ակրերի բեկանման ու փոփոխման հիմքերը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով 2022 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատներ թիվ 54261/13 և 18361/16, կետ 16:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով 2022 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատներ թիվ 54261/13 և 18361/16, կետեր 14 և 17:

Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք Առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք է:

16. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

Սկոցցարին և Ջունյան ընդդեմ Բուրյայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շտկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարելի են Դատարանի վճիռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետք»¹⁰:

Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պարասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...)»¹¹:

17. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում, պետությունը, արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ, պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*» ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա¹²:

18. Հաշվի առնելով *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման նախորդ կետի վերլուծության լույսի ներքո գնահատելով *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* վճռով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիշյալ վճիռը հիմք է Ս.Դավթյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Այլ կերպ, արձանագրված խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

19. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս վերանայելու ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի և 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշումները, բեկանելու Ս.Դավթյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումն ու գործն ուղարկելու Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը պետք է վերացնի *Դավթյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումներն ու յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգի համապատասխան հետևության:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Դավթյանին պետք է անհապաղ ազատ արձակել համապատասխան քրեակատարողական հիմնարկից:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Ս.Դավթյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

23. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 415.1-րդ,

¹² Տե՛ս *Բագրայր և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը, *Մուշեղ Սաղաթելյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵՔԲԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08 որոշման 28-39-րդ կետերը:

418-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի և 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Սամվել Հրաչի Դավթյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

3. Սամվել Հրաչի Դավթյանին անհապաղ ազատ արձակել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

55.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԿԴ/0184/11/11

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

1 սեպտեմբերի 2023 թվական

ք. Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով դիմող Շուշանիկ Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի բացառիկ վերանայման բողոքները՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2010 թվականի դեկտեմբերի 30-ին, Սլավիկ Ժորժիկի Ոսկանյանի մահվան դեպքի առթիվ, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզային քննչական բաժնում հարուցվել է թիվ 19133410 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ Շուշանիկ Ոսկանյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմինը 2011 թվականի օգոստոսի 30-ին որոշում է կայացրել թիվ 19133410 քրեական գործով վարույթը կարճելու ու

Մարզպետունի Մինասյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Վերոնշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Շ.Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարությանի և Կ.Թումանյանի բողոքը՝ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Վ.Մուրադյանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ մերժվել է:

2. Տուժողի իրավահաջորդ Շ.Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարությանի և Կ.Թումանյանի բողոքը՝ նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2011 թվականի օգոստոսի 30-ի և դատախազի՝ բողոքը մերժելու մասին 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումների դեմ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2012 թվականի մարտի 15-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարությանի և Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2012 թվականի մայիսի 7-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Շ.Ոսկանյանի գանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), հանդես գալով Կոմիտեի կազմով, *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2023 թվականի հունվարի 24-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական դրույթների խախտման փաստը:

6. Որպես նոր հանգամանք վկայակոչելով *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բացառիկ վերանայման բողոքներ են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 16-ի որոշմամբ դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բացառիկ վերանայման բողոքի հիման վրա հարուցվել է Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշման բացառիկ վերանայման վարույթ, իսկ 2023 թվականի հունիսի 26-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման բանավոր ընթացակարգ:

Բացառիկ վերանայման բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջները.

Վճռաբեկ բողոքները քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2023 թվականի հունվարի 24-ին *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճիռը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշումը վերանայելու համար:

7.1. Վերոշարադրյալի հիման վրա, դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը խնդրել է բեկանել ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 7-ի որոշումներն ու վարույթը փոխանցել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը գտել է, որ Եվրոպական դատարանի կողմից 2023 թվականի հունվարի 24-ին *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը՝ վիճարկվող դատական ակտերը բեկանելն ու գործն այդ մասով Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելն է:

8.1. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է նոր հանգամանքի հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշումը, վերանայման արդյունքում բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 7-ի որոշումները, և վարույթը փոխանցել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Բացառիկ վերանայման բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմնի՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2011 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ արձանագրվել է, որ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Սլավիկ Ժորժիկի Ոսկանյանի մահվան առնչությամբ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժիշկ Մարգարետունի Մինասյանի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, վնասվածքը պատճառվել է ինքնավնասման միջոցով և որևէ անձի գործողություններում չկա հանցակազմ, ուստի անհրաժեշտ է քրեական գործի վարույթը կարճել

և քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով¹:

10. Առաջին ատյանի դատարանը, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, 2012 թվականի մարտի 15-ի որոշմամբ արձանագրել է, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, իսկ Շուշանիկ Ոսկանյանի ներկայացուցիչների պատճառաբանությունները դատարանը գնահատել է որպես իրադարձությունների և դատավարական գործողությունների յուրովի, սուբյեկտիվ մեկնաբանում²:

11. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ արդեն իսկ Կրվել է լիարժեք և սպառիչ պարասխան և արձանագրվել է, որ նախաքննական մարմնի կողմից անձի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն, որի արդյունքում կայացրել է օրինական, հիմնավորված ու պարճառաբանված որոշում, որպիսին բեկանելու հիմքերը բացակայում են (...)»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

1. Ներպետական դատական ակտերի վերանայումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական դրույթների մասով խախտում արձանագրելու փաստը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշումը վերանայելու համար:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Բացառիկ վերանայումը կիրառվում է այն դեպքում, երբ (...) նոր հանգամանքի (...) հիմքով բողոքարկվում է սույն օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բացառիկ վերանայման վարույթներն են՝

1) նոր հանգամանքներով վարույթը.

(...)

2. Բացառիկ վերանայման ենթակա են՝

(...)

2) մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, (...) կամ վարույթը կարճելու իրավաչափությունը.

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 1-15:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

3) սույն մասի (...) 2-րդ կեր[ով] նախատեսված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտնող որոշումը»:

Նույն օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքներով բողոք կարող է բերվել հետևյալ հիմքերով.

(...)

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնող վճռով կամ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, (...)»:

14. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը⁴:

15. Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները կիրառել է սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի՝ 2023 թվականի հունվարի 24-ի վճռով արձանագրել է. «(...) 2010 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև իր մահվան օրը՝ 2010 թվականի հոկտեմբերի 24-ը, Ոսկանյանը եղել է կալանավորված և հետևաբար գրվել է Հայաստանի իշխանությունների հսկողության տակ: Կողմերը չեն վիճարկում այն փաստը, որ նրա մահվանը հանգեցրած վարակն առաջացել է մաշկի տակ թոք ինքնաներարկելու պարճառով: Անկախ դրանից՝ հաշվի առնելով, որ Ս.Ոսկանյանը այդ ժամանակ գրվել է ներպետական մարմինների հսկողության տակ, Դատարանը կոչված է քննելու, թե արդյոք իշխանություններն ամեն բան արել են ողջամրության սահմաններում, բարեխղճորեն և ժամանակին՝ փորձելու համար կանխել մահացու ելքը:

Ս.Ոսկանյանի բժշկական քարտի համաձայն՝ նա առաջին անգամ բժշկական օժանդակություն է ինդրել 2010 թվականի հոկտեմբերի 18-ին: Այնուամենայնիվ, նրան հիվանդանոց տեղափոխելու որոշումը կայացվել է միայն 2010 թվականի հոկտեմբերի 24-ին, բայց նրա կյանքը փրկելու համար արդեն շատ ուշ է եղել (...):

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Վիրաբյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Մեֆիլյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, Բագրատ և Նարինե Նալբանդյանների գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, Արայիկ Զայանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Հրաչյա Մուրադյանի գործով 2017 թվականի հունիսի 30-ի, Դավիթ Ավետիսյանի գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՄԴՅ3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

Բժշկական փաստաթղթերից պարզվել է, որ 2010 թվականի հոկտեմբերի 21-ին բժիշկ Ե.-ն կալանավայրի ղեկավարությանն ահազանգել է Ս.Ոսկանյանի վարթարացող առողջական վիճակի մասին, և նույն օրը քաղաքացիական հիվանդանոցից հրավիրվել է վիրաբույժ՝ բժիշկ Ա.-ն: Այնուամենայնիվ, ի տարբերություն Ս.Ոսկանյանի բժշկական քարտում առկա այլ բժշկական գրառումների, որոնք պարունակում են բողոքների մանրամասն նկարագրությունը, օբյեկտիվ ուսումնասիրությունը և նշանակված բուժումը՝ բժիշկ Ա.-ի այցի վերաբերյալ գրառումը որևէ նման նկարագրություն չի պարունակում, ինչը կասկած է հարուցում, թե արդյոք նա իրապես գննել է Ս. Ոսկանյանին այդ այցի ընթացքում, թե՛ ոչ: Այդ կասկածները վերահաստատվել են այն ժամանակ, երբ հետազայում բոլոր դապարժկական փորձագետները հաստատել են, որ անհրաժեշտ բուժումը հիմնականում վիրաբուժական բնույթ է կրել, և որ նույնիսկ թերապևտը պետք է անհրաժեշտ համարել Ս.Ոսկանյանի փոխադրումը հիվանդանոց՝ հաշվի առնելով նրա կլինիկական վիճակը, հետևապես վիրաբույժը՝ առավել ևս: Հետևաբար չի կարելի համարել, որ անհրաժեշտ վիրաբուժական միջամերության նպատակով Ս.Ոսկանյանին հիվանդանոց փոխադրելը փոխհարուցվել է կալանավայրի ղեկավարության կողմից կազմակերպված այս այցով:

Քննության ընթացքում պարզվել է, որ արդեն իսկ 2010 թվականի հոկտեմբերի 19-ին առկա են եղել ավելի լուրջ ախտահարման՝ գազային փրահարի նշաններ, որն առաջացրել է վարակի բուժման համար շրտապ հոսպիտալացման անհրաժեշտություն, որով հնարավոր կլինել կանխել հիվանդության բացասական ելքը:

Չնայած հետագա փորձագիտական զեկույցում նշվել է, որ չի կարելի որոշակիորեն ասել, որ հնարավոր կլինել փրկել Ս.Ոսկանյանի կյանքը, եթե նա արագած լինել անհրաժեշտ բուժումը, երկրորդ փորձագիտական խումբը նույնպես եզրակացրել է, որ Ս.Ոսկանյանի առողջական վիճակը պահանջում է հոսպիտալացում և վիրաբուժական միջամերություն: Ամեն դեպքում նախորդ փորձագիտական խմբի զեկույցի հիմնավորվածությունը կայանքի տակ գրնվելիս Ս.Ոսկանյանի բուժման բավարար լինելու վերաբերյալ եզրահանգումների մասով, երբեք կասկածի տակ չի դրվել: Փաստորեն լրացուցիչ դատական փորձաքննություն նշանակելու միակ նպատակը եղել է հանգուցյալի մարմնից վերցված նմուշներում էթիլային սպիրտի առկայության հետ կապված անհամապատասխանությունները պարզելը:

Թեև Դատարանը պարշաճ կերպով է հաշվի առնում Կառավարության փաստարկը՝ մասամբ հիմնվելով երկրորդ փորձագիտական խմբի եզրակացության վրա այն մասին, որ Ս.Ոսկանյանի ինքնավնասման վարքագիծը և վերքերի ոչ պարշաճ հիգիենան կարող էին նպաստել վարակի անկանխատեսելի զարգացմանը և տրամադրված բուժման անարդյունավետությանը, այն չի գրնում, որ այդ հանգամանքները որոշիչ են եղել սույն գործի բուն էության համար հետևյալ պարճառներով: Վարակված վերքի մասին հաղորդման առաջին իսկ օրվանից բանրի ղեկավարությունը ըստ էության իրազեկված է եղել այդ հարցերի մասին: Ավելին և որն ավելի կարևոր է, փորձագիտական զեկույցներից

և համապարասիան բժշկական փաստաթղթերից պարզ է դառնում, որ 2010 թվականի հոկտեմբերի 19-ին և դրան հաջորդող օրերի ընթացքում Ս.Ոսկանյանի կլինիկական ծանր վիճակը պետք է որ կասկածի տակ չընկնի նրա հրապարակապատասխանության անհրաժեշտությունը՝ լուրջ և արագ տարածվող վարակի՝ գազային փրակարի հիմքով, որի վրա այլևս ազդեցություն չի ունեցել անցկացվող բուժումը: Այդ առումով դիտարկման արձանագրությունն ինքնին վկայում է խիստ տարածված և նկատելի վարակի և հյուսվածքի վնասվածքի մասին:

Հաշվի առնելով փորձագիտական խմբի միասնական եզրակացությունը Ս.Ոսկանյանին ցուցաբերած թերի բուժօգնության մասին՝ Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով վարակի անկտավարելիության աստիճանը՝ բանարի ղեկավարությունը պետք է գիտակցեր ինչ վրանգ է սպառնում նրա կյանքին նրա ուշացած տեղափոխմամբ հիվանդանոց: Քանի որ Դատարանի քննության առարկան է պարզել, թե արդյոք ներպետական մարմինները կարարել են դիմումարտուի ամուսնու կյանքը պաշտպանելու իրենց պարտականությունը նրան պարզա՞ն և ժամանակին բուժում փոխանդրելու միջոցով, վերոհիշյալ դիտարկումները Դատարանին հնարավորություն են տալիս եզրակացնել, որ ներպետական մարմինների վարքագիծը ծանր հիվանդ կալանավորված անձի նկատմամբ ենթադրում է արգելանքի տակ պահվող անձանց կյանքը պաշտպանելու պետության պարտավորության խախտում:

Դրանից հետևում է, որ պատասխանող պետությունը չի պաշտպանել Ս.Ոսկանյանի կյանքը կալանքի տակ գրնվելու ժամանակ:

Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական կողմի խախտում:

Ինչ վերաբերում է ներպետական մարմինների կողմից անցկացված քննությանը, Դատարանը նշում է, որ իշխանության մարմինները մի շարք քննչական գործողություններ են ձեռնարկել Ս.Ոսկանյանի մահվան հանգամանքները պարզելու համար:

Այնուամենայնիվ, չնայած դատաբժշկական փորձաքննությանը ձեռք բերված ապացույցներին այն մասին, որ Ս.Ոսկանյանի հիվանդության մահացու ելքը կարելի էր կանխել, եթե վերջինս արագա՞ծ լիներ համապարասիան բուժում և ժամանակին տեղափոխված լիներ հիվանդանոց, քննությունը սահմանափակվել է բժիշկ Մ.-ին անձնական քրեական պատասխանատվության ենթարկելու հարցով և չի ուսումնասիրել ավելի վաղ հիվանդանոց չտեղափոխելու պատճառը և չի հայտնաբերել պատասխանատուներին, հարկապես եթե հաշվի առնենք բժիշկ Մ.-ի հայրաբարություններն այն մասին, որ վերջինս հաղորդել է Ս.Ոսկանյանի առողջության անհանգստացնող վիճակի մասին կալանավարի ղեկավարությանը և իր վերադասներին:

Դատարանը, հետևաբար, գտնում է, որ քննության եզրակացությունները հիմնված չեն եղել բոլոր կարևոր տարրերի մանրամասն և օբյեկտիվ վերլուծության վրա: Արդյունքում քննությունը լիովին չի պարզել Ս.Ոսկանյանի մահվան բոլոր հանգամանքները՝ դրանով մեղավորներին պատասխանատվության չենթարկելով:

Հետևաբար Դատարանը գրնում է, որ իշխանության մարմինները չեն կարողացել իրականացնել Ս.Ոսկանյանի մահվան համապարասխան և արդյունավետ քննություն: Ոստիկանական ավերորդ է քննել քննության մյուս հարցերը:

Այսպիսով տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային կողմի խախտում⁵:

16. Հաշվի առնելով նախորդ կետում ներկայացված փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական դրույթների մասով խախտում արձանագրելու փաստը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական արյանների կողմից կայացված դատական սկզբի բեկանման հիմքը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական դրույթների մասով խախտումը, հիմք է դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարտիյանի և Կ.Թումանյանի բողոքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի մայիսի 7-ի որոշումները բեկանելու համար:

18. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարելի են Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ»⁶:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով 2023 թվականի հունվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 623/13, կետեր 20-33:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000

Մեյքուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պարասիանող պետության վրա պարավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հարուցում փրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասիանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...):»⁷:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բացառիկ վերանայման արդյունքով իրավասու դատարանն ամբողջությամբ կամ մասնակի րեկանում է բողոքարկվող դատական ակտը վարույթը փոխանցելով համապարասիան արորարաս դատարան կամ դադարեցնելով քրեական հետապնդումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կարճելով վարույթը:

20. Դատական ակտի վերաբացումը կամ գործի նոր քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են դիմող Շ.Ոսկանյանի ամուսնու՝ Ս.Ոսկանյանի մահվան պատճառներին, ինչպես նաև այդ հանգամանքների կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությանը:

Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում և փաստել, որ պետության կողմից չի պաշտպանվել Ս.Ոսկանյանի կյանքը կալանքի տակ գտնվելու ժամանակ, ինչպես նաև իշխանության մարմինները չեն կարողացել

⁷ թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

⁷ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

իրականացնել Ա.Ոսկանյանի մահվան համապատասխան և արդյունավետ քննություն:

22. Մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 16-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Եվրոպական դատարանի՝ *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման (նյութաիրավական և ընթացակարգային դրույթների մասով) բացասական հետևանքները սույն բողոքների քննության պահի դրությամբ դիմումատուն շարունակում է կրել, ինչը միայն վճռով՝ որպես արդար փոխհատուցում սահմանված գումարի վճարմամբ չի կարող շտկվել, ուստի, տվյալ դեպքում «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու տեսանկյունից, անհրաժեշտ է դիմող Շ.Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարությանի և Կ.Թումանյանի բողոքի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում արձանագրված խախտումը վերացնելու անհրաժեշտ համարժեք միջոց կիրառելու նպատակով վարույթը պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

23. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի մայիսի 7-ի դատական ակտերը պետք է բեկանել ու վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ *Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2023 թվականի հունվարի 24-ի վճռով արձանագրված՝ դիմողի ամուսնու՝ Սլավիկ Ոսկանյանի մահվան պատճառների և հանգամանքների կապակցությամբ իրականացված քննության ընթացքում թույլ տրված՝ արդյունավետ քննություն իրականացնելու նյութաիրավական և ընթացակարգային պահանջների խախտումը վերացնելու անհրաժեշտ համարժեք միջոցը կիրառելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ, 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 361-րդ, 362-րդ, 363-րդ, 401-403-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 22-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Բացառիկ վերանայման արդյունքում դիմող Շուշանիկ Ոսկանյանի ներկայացուցիչներ Է.Մարությանի և Կ.Թումանյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 7-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0026/01/12

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Տ.ՍԱՖԱՐՅԱՆԻ

1 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննության առնելով Վարդան Հայկի Մարտիրոսյանի պաշտպան Տ.Սաֆարյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի մարտի 15-ին Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) ստացվել է թիվ 58207711 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Վարդան Հայկի Մարտիրոսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով ու 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով, և մյուսների:

Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Վարդան Մարտիրոսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում: Նույն դատավճռով Վ.Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ

քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով ու 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ, հանցանքների համակցության կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջնական պատիժ է նշանակվել ազատագրելում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ մաքսանենգության առարկա հանդիսացող գույքի բռնագրավմամբ:

2. Վ.Մարտիրոսյանի պաշտպան Տ.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2014 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

3. Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Վ.Մարտիրոսյանի պաշտպան Տ.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

4. Վ.Մարտիրոսյանի զանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), հանդես գալով Պալատի կազմով, *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2021 թվականի հունիսի 15-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Վ.Մարտիրոսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի ու 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումների փաստը:

5. Որպես նոր հանգամանք վկայակոչելով *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Վ.Մարտիրոսյանի պաշտպան Տ.Սաֆարյանը 2021 թվականի դեկտեմբերի 15-ին նոր հանգամանքի հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 16-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի հունիսի 28-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը դատական նիստում քննության առնելու մասին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքաբերը, վկայակոչելով *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռի շրջանակներում Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները՝ փաստարկել է, որ տվյալ վճիռի համաձայն՝ խախտվել է Վ.Մարտիրոսյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 9-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

դրա տարրերից՝ նախքան մեղավորությունն օրենքին համապատասխան սպացուցված լինելն անմեղ համարվելու իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ այն փաստը, որ անմեղության կանխավարկածի խախտումը տեղի է ունեցել գործի դատական քննության նախապատրաստական փուլում, հիմք է պնդելու, որ Վ.Մարտիրոսյանի վերաբերյալ քրեական գործով դատաքննությունը կրել է ձևական բնույթ, քանի որ Առաջին ատյանի դատարանն արդեն իսկ Վ.Մարտիրոսյանի մեղավորությունը համարել է որպես հաստատված փաստ:

Արդյունքում, բողոքի հեղինակը, գնահատելով արձանագրված խախտման բնույթը, գտել է, որ նշյալ գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումը վերացնելու պատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է վերանայել ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշումը, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի մարտի 27-ին որոշում է կայացրել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին, որի եզրափակիչ մասում նշվել է. «Ամբաստանյալ (...) Վարդան Հայկի Մարտիրոսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-215 հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215 հոդվածի 2-րդ մասով քրեական սպասարսխանսարվության ենթարկելու համար թիվ ԵՄԴ/0026/01/12 քրեական գործը նշանակել դատական քննության (...)»²:

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճռի համաձայն՝ «(...) [Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված սպացուցները, վերլուծելով և գնահատելով դրանք իրենց համակցությամբ, սպացուցված է համարում (...) ամբաստանյալ Վարդան Հայկի Մարտիրոսյանի մեղավորությունը կատարած արարքների մեջ, որոնք նսխասրեալված են ՀՀ քրեական օրենսգրքի 34-215 հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215 հոդվածի 2-րդ մասով:

(...)

Ամբաստանյալ Վարդան Հայկի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում պետք է ճանաչել անսպարս և արդարացված, հաշվի առնելով այն, որ մեղադրողը հրաժարվեց

² Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 17-18:

Վարդան Հայկի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքից»³:

10. Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում Առաջին ատյանի դատարանի դատավճռի իրավաչափության ստուգման արդյունքում կայացված դատական ակտով արձանագրել է. «(...) [Վ] երլուծելով գործի փաստական րվյալները, գնահատելով ինչպես յուրաքանչյուր սպացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Վարդան Հայկի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով մեղաագրված արարքները որակված են ճիշտ և նա պետք է քրեական պարասիանասարվության և պարծի ենթարկվի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ [Առաջին արյանի] դատարանն ամբաստանյալ Վարդան Հայկի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով մեղաագրված արարքների քրեահրավակյան որակման հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևարար վիճարկվող դատական ակրը /որով արդեն իսկ ամբաստանյալ Վարդան Հայկի Մարտիրոսյանը մեղավոր է ճաննաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով/ րեկանելու և վերջինիս նկարմամբ արդարացման դատական ակր կայացնելու հիմքեր չկան»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

I. Երպերական դատական ակրերի վերանայումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև րարճրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վարդան Մարտիրոսյանն ընդրեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուծի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում արձանագրելու փաստը, Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 426.1-րդ հոդվածի համաճայն՝ «1. Նոր երևան եկած, կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուծի մեջ մրած դատական ակրը:

2. Նոր երևան եկած, կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակրը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակրերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաճայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակրերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

³ Տն քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 48-98:

⁴ Տն քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 103-148:

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնող կամ որոշմամբ հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված է/ համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող փոխառյալ միջազգային դատարանի որոշմամբ՝ դրա/ ուժի մեջ մտնելու պահից (...)»:

13. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտնող վճիռը, որով հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը⁵:

14. Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով, Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները կիրառել է սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի 2021 թվականի հունիսի 15-ի վճռով արձանագրել է. «(...) [Եվրոպական դատարանը նշում է, որ ինչ վերաբերում է 2012 թվականի մարտի 27-ի որոշմանը, ապա (...) [ա]յդ որոշումը կայացվել է դիմումարուի գործով դատաքննության սկզբում՝ Վարչական շրջանի դատարանի կողմից, որը կոչված էր ըստ էության որոշում կայացնելու դիմումարուին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ և պետք է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերեր բառերի ընտրության հարցում: Այնուամենայնիվ, Վարչական շրջանի դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին իր որոշման մեջ նշել է, որ դա անում է «[դիմումարուին] (...) քրեական պարասխանավորության ենթարկելու համար»: [Եվրոպական դատարանը համարում է, որ այդպիսի բացահայտ և անվերապահ հայտարարությունը, ընդ որում, արված նույն դատավորի կողմից, որը, ի վերջո, դիմումարուի մեղավորության վերաբերյալ որոշում է կայացրել, լիովին կարող էր հիմք վրա ընկալելու, որ Վարչական շրջանի դատարանը դիմումարուի

⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Վիրաբյանի գործով՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Սեֆիլյանի գործով՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների գործով՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, Բագրատ և Նարինե Նալբանդյանների գործով՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, Արայիկ Զալյանի գործով՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Հրաչյա Մուրադյանի գործով՝ 2017 թվականի հունիսի 30-ի, Դավիթ Ավերիսյանի գործով՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

մեղավորությունը համարել է որպես հասարակական փաստ, և որ դատաքննության նպատակը պարզապես գործի նախապես որոշված ելքը հասարակելն է եղել:

[Եվրոպական դատարանը պարբարար է դիտարկել այն հավանականությունը, որ Վարչական շրջանի դատարանն իր որոշումը ոչ պարզաճ շարադրելիս պարզապես րեհնիկական սիսալ է թույլ րվել: Այնուամենայնիվ, Վարչական շրջանի դատարանը երբևէ չի ընդունել, որ նման սիսալ է թույլ րվել կամ դատաքննության որևէ փուլում փորձ չի արել այն շրկել: Արդյաի շրկում չի կարարվել նաև Վերաքննիչ դատարանի կամ որևէ այլ ներպետական մարմնի կողմից, և վիճարկվող որոշումը ենթակա չի եղել բողոքարկման:

Այն փասարը, որ ի վերջո դիմումարուն մեղավոր է ճանաչվել և դատապարարվել չորս րարի վեց ամիս ժամկետով ազարագրկման, չի կարող բացատել նախքան իր մեղավորությունն օրենքին համապարասիսան սպացուցված լինելն անմեղ համարվելու նրա սկզբնական իրավունքը: Բնչպես պարբերարար նշվել է [Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, 6-րդ հողվածի 2-րդ կետով կարգավորվում է քրեական վարույթն իր ամբողջության մեջ՝ «անկաի քրեական վարույթի ելքից:

Հերևարար [Եվրոպական դատարանը գրնում է, որ 2012 թվականի մարրի 27-ի որոշման ձևակերպմամբ խախարվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը»⁶:

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Վարդան Մարրիրոայանն ընդդեմ Հայասրանի գործով տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հողվածի 2-րդ կետի խախտում:

15. Հաշվի առնելով նախորդ կետում ներկայացված փաստերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարդան Մարրիրոայանն ընդդեմ Հայասրանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հողվածի 2-րդ կետի խախտում արձանագրելու փաստը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական ատյանների կողմից կայացված ակտերի բեկանման ու փոփոխման հիմքերը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վարդան Մարրիրոայանն ընդդեմ Հայասրանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հողվածի 2-րդ կետի խախտումը, հիմք է Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վարդան Մարրիրոայանն ընդդեմ Հայասրանի գործով 2021 թվականի հունիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 13610/12, կետեր 87-90:

քրեական դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանելու համար:

17. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կարարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

Սկոցգարին և Ջոնսրան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասիանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով րամատրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընարել ընդհանուր և/կամ անհրատեչություն դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրատեչ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ րալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հեղևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազար է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձնած իր պարտավորությունների կարարման միջոցների ընարության հարցում պայմանով, որ դրանք համարելելի են Դատարանի վճռի մեջ րել գրած եզրակացությունների հեղ»⁷:

Մելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճռով պարասիանող պետության վրա պարտավորություն է դրվում դարարելել խախտումը և դրա հեղևանքների համար այնպիսի հարուցում րամատրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից սուաջ սուկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասիանող պետությունն ազար է վճիռը կարարելու միջոցների ընարության հարցում (...)»⁸:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քնության արդյունքում կայացնում է դարական սկղ սույն օրենսգրքով նախարետված ընդհանուր կարգով:

2. Աղ վարույթի արդյունքում կայացված դարական սկղում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դարական սկղի եզրակակիչ մասը, միայն եթե ծանրակիռ փասարակների մարնանշմաթ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախարետված հանգամանքներն ըար էության չէին կարող աղել գործի ելքի վրա (...)»:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու

⁷ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

⁸ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՄԴՈ-1099 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասն անփոփոխ թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիռ փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի ազդում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ նոր հանգամանքն ըստ էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, դրա հիման վրա գործի կրկին քննությունը չի կարող ծառայել «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակառի իրավական որոշակիության սկզբունքին⁹:

20. Դատական ակտի վերաբացումը կամ գործի նոր քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

21. Վճռաբեկ դատարանը, անմեղության կանխավարկածի սկզբունքը քննարկելիս հատուկ ուշադրության է արժանացրել դրա բովանդակային սահմաններին՝ ընդգծելով, որ ինչպես Եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների կոմիտեն, այնպես էլ Վճռաբեկ դատարանը մշտապես կարևորում են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանումը քրեական վարույթի ողջ ընթացքում՝ սկսած դրա ամենավաղ փուլից¹⁰:

Եվրոպական դատարանի դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանը ձևավորել է կայուն նախադեպային իրավունք առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը մարմնավորում

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՄԴՈ-1099 որոշման 6-րդ կետը:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սեդրակ Քոչարյանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ԵԴ/0112/11/19 որոշման 18-րդ կետը:

է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որն արդար դատաքննության ընդհանուր հասկացության մասն է կազմում ու տարածվում է քրեական ողջ վարույթի նկատմամբ՝ անկախ քրեական հետապնդման արդյունքից, և ոչ միայն մեղադրանքի բուն էության քննության նկատմամբ¹¹: Որպես դատավարական երաշխիք բուն քրեական դատավարությունում՝ անմեղության կանխավարկածը, ի թիվս այլնի, պահանջում է, որպեսզի դատարանի անդամներն իրենց պարտականությունները կատարելիս չսկսեն գործել նախաձևավորված այն կարծիքով, թե մեղադրյալը կատարել է հանցանքը, որի կատարման մեջ մեղադրվում է. ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը¹²:

21.1. Եվրոպական դատարանի՝ անմեղության կանխավարկածի խախտում արձանագրող վճիռների կատարման պրակտիկայի ուսումնասիրությունը, ցույց է տալիս, որ *Matijašević v. Serbia*, *Mugoša v. Montenegro* և *Garycki v. Poland* գործով վճիռների, որոնցով անմեղության կանխավարկածի խախտումն արձանագրվել է դիմումատուների՝ կալանավորման վերաբերյալ որոշումների ձևակերպմամբ¹³, կատարման գործընթացում ձեռնարկված անհատական բնույթի միջոցառումը ներառել է միայն վճռով՝ որպես արդար փոխհատուցում սահմանած գումարի վճարում: Մասնավորապես, ներպետական իշխանությունները փաստել են, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումն ազդեցություն չի ունեցել թե՛ դատաքննության ընթացքի, թե՛ դրա ելքի արդյունքների վրա: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որը վերահսկողություն է իրականացնում Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ, համապատասխանաբար թիվ CM/ResDH(2007)95, CM/ResDH(2017)141 և CM/ResDH(2013)163 բանաձևերով քննարկել է նշված գործերով վճիռների կատարման ընթացքը և արձանագրել այդ գործերով ձեռնարկված անհատական միջոցառումների բավարար լինելը: Արդյունքում հիշյալ գործերի կատարման նկատմամբ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հայտարարվել է փակված¹⁴:

22. Նախորդ կետում շարադրված վերլուծությունները համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում անմեղության կանխավարկածին հակասող ձևակերպումը կատարվել է քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս կայացված որոշմամբ, այսինքն՝ այն դատարանի կողմից, որը, գործի

¹¹ *Stü, mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Phillips v. the United Kingdom* գործով 2001 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 41087/98, կետ 40, *Minelli v. Switzerland* գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 8660/79, կետ 30:

¹² *Stü, mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Barberà, Messegué and Jabardo v. Spain* գործով 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետ 77:

¹³ *Stü* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mugoša v. Montenegro* գործով 2016 թվականի հունիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 76522/12, *Matijašević v. Serbia* գործով 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 23037/04 և *Garycki v. Poland* գործով 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02:

¹⁴ *Stü* բանաձևերը հետևյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/eng?i=001-81554>, <https://hudoc.exec.coe.int/eng?i=001-173897> և <https://hudoc.exec.coe.int/eng?i=001-141107>:

ըստ էության քննության արդյունքում Վ.Մարտիրոսյանի նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ: Նշվածը փոխկապակցելով *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում դրա կապակցությամբ Եվրոպական դատարանի գնահատականի հետ, ըստ որի՝ Առաջին ատյանի դատարանի բացահայտ և անվերապահ հայտարարությունը լիովին կարող էր հիմք տալ ընկալելու, որ դատարանը Վ.Մարտիրոսյանի մեղավորությունը համարել է որպես հաստատված փաստ, և որ դատաքննության նպատակը պարզապես գործի նախապես որոշված ելքը հաստատելն է եղել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումն իր քննությով լուրջ կասկած է հարուցում Առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննության ելքի արդյունքների կապակցությամբ:

Ինչ վերաբերում է դատական վերանայման արդյունքին, որով Վ.Մարտիրոսյանի մեղավորությունը համարվել է ապացուցված, այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով կարգավորվում է քրեական վարույթն իր ամբողջության մեջ՝ անկախ քրեական վարույթի ելքից:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 17-21-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները և նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում *«restitutio in integrum»* հնարավորինս ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ համարժեք միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է՝ այդ կերպ երաշխավորելով արդար դատաքննության իրավունքը:

24. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2021 թվականի հունիսի 15-ի վճիռը, որով արձանագրվել է Վ.Մարտիրոսյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, հիմք է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանելու և գործն այդ մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշումը՝ նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Վարդան Հայկի Մարտիրոսյանի մասով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

57.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Մ-5739

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

29 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

քննության առնելով Ներսես Անդրանիկի Կարապետյանի (ծնված՝ 1985 թվականի մայիսի 12-ին Երևան քաղաքում, ՀՀ քաղաքացի, հաշվառված է Երևան քաղաքի Մարգարյան փողոցի 2-րդ նրբանցք, տուն 4, 25 բնակարանում) վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը ճանաչելու մասին ՀՀ արդարադատության նախարար Գ.Մինասյանի միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Լարինսկի քաղաքային դատարանի՝ 2020 թվականի հունիսի 22-ի դատավճռով Ներսես Անդրանիկի Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով - 228.1-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ: ՌԴ քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 4-րդ մասի «դ»

կետով նրա նկատմամբ որպես պատիժ է նշանակվել ազատագրկում՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով, իսկ ՌԴ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով - 228.1 հոդվածի 4-րդ մասի «դ» կետով՝ ազատագրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով: ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցագործությունների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ներսես Անդրանիկի Կարապետյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրկում՝ 12 (տասներկու) տարի ժամկետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում: Նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը:

Ներսես Անդրանիկի Կարապետյանը դատապարտվել է հետևյալ արարքների կատարման համար. «Ներսես Անդրանիկի Կարապետյանը կարարել է թմրամիջոցների ապօրինի իրացում՝ տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցերի (ներառյալ «Բնտերնետ» ցանցը) օգտագործմամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման փորձ, տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցերի (ներառյալ «Բնտերնետ» ցանցը) օգտագործմամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով և միևնույն ժամանակ հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կանքից անկախ հանգամանքներով:

Ն.Ա.Կարապետյանը, դրամական միջոցների կարիք ունենալով, ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ը ավելի սրույգ ժամը դապարանը չի պարզել, գրնվելով չպարզված վայրում, «Բնտերնետ» ցանցի միջոցով հանցավոր համաձայնության է եկել չպարզված անձի հետ, որի նկատմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վարույթում, թմրամիջոցների համարել իրացման շուրջ: Ընդ որում, հանցակիցները միմյանց միջև դերերը բաշխել են հեղիկյալ կերպ. չպարզված անձի դերը, որի նկատմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վարույթում, կայանում էր պայմանական վայրերում գաղտնարանային ներդրվածքներում տեղադրված կշռաբաշխված թմրամիջոցը Ն.Ա.Կարապետյանին տրամադրելու մեջ: Ն.Ա.Կարապետյանի դերը կայանում էր չպարզված անձի կողմից, որի նկատմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վարույթում, տրամադրված թմրամիջոցն ապօրինի ձեռքբերելու, գաղտնարանային վայրերում թմրամիջոցը տեղադրելու, իմրի մասնակից՝ չպարզված անձին կարարված ներդրվածքների հասցեները հայրներու մեջ՝ անձանց անորոշ շրջանակին թմրամիջոցն «Բնտերնետ» ցանցի միջոցով հետագա իրացման նպարակով: Իրացնելով համարել հանցավոր դիտավորությունը՝ Ն.Ա.Կարապետյանը սրույգ չպարզված ժամի, սակայն ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ի ժամը 08:00-ն, գրնվելով սրույգ չպարզված վայրում, խոշոր չափերով թմրամիջոցն ապօրինի իրացման շահադիտական դրոմներից ելնելով՝ չպարզված անձից, որի նկատմամբ

քրեական գործն առանձնացված է առանձին վարույթում, սրացել է նյութ, որն իր կազմում պարունակել է թմրամիջոց՝ N-մեթիլէֆեդրոնի ածանցյալը, որը ներառված է Ցանկ I «ՌԴ-ում հսկողության ենթակա թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում», 6,68 գրամից ոչ պակաս ընդհանուր ծավալով, ինչը ՌԴ Կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 1-ի «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 228-րդ, 228.1, 229-րդ հոդվածների նպատակներով՝ թմրամիջոցների և հոգեմեար նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը հասարարելու մասին» թիվ 1002 որոշման համաձայն համարվում է խոշոր չափ, թմրամիջոցն անձանց անորոշ շրջանակին, այդ թվում և «Իսրերներ» ցանցի միջոցով հետագա իրացման նպատակով՝ գաղութարանային վայրերում թմրամիջոցը տեղադրելու ճանապարհով: Շարունակելով թմրամիջոցների սպորինի իրացմանն ուղղված հանցավոր դիրավորությունը չպարզված անձի հետ համարել, որի նկատմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վարույթում, Ն.Ա.Կարասյետյանը, շահադիրական դրդումներից ելնելով իրեն հասած հանցավոր դերի համաձայն, ստույգ չպարզված ժամի, սակայն ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ի ժամը 08:00-ն, ժամանել է Կրասնոդարի երկրամասի Լարինսկ քաղաք, որտեղ Կրասնոդարի երկրամաս, քաղաք Լարինսկ, Վորոշիլովի փ. թիվ 5, 20, 26, Դելեգատակայայի փ. թիվ 72/2, Բ.Խմելիցկու փ. 147, Գվարդեյսկայայ փ. թիվ 9, 10, 15, 19, 40, 41, 42, 54, 58, Լուչեգարնի նրք. թիվ 2 հասցեներում գրավող տնարիություններին հարող տարածքներում իրականացրել է թմրամիջոցով գաղութարանային ներդրվածքներ, որը պարունակում է Ցանկ I «ՌԴ-ում հսկողության ենթակա թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում» ներառված N-մեթիլէֆեդրոնի ածանցյալը, 6,68 գրամից ոչ պակաս ընդհանուր ծավալով, 15 պոլիմերային փաթեթով՝ փաթեթված կարմիր գույնի մեկուսիչ ժապավենով հետևյալ քաշերով՝ 0,40գ, 0,48գ, 0,46գ, 0,37գ, 0,42գ, 0,42գ, 0,42գ, 0,44գ, 0,50գ, 0,44գ, 0,45գ, 0,45գ, 0,47գ, 0,47գ, 0,49գ, (համաձայն փորձագետի 2019 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 17/4-5906 եզրակացության), ինչը համաձայն ՌԴ Կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 228-րդ, 228.1, 229-րդ և 229.1 հոդվածների նպատակներով՝ թմրամիջոցների և հոգեմեար նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմեար նյութեր պարունակող բոյսերի կամ դրանց մասերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը հասարարելու մասին» թիվ 1002 որոշման, համարվում է տվյալ տեսակի թմրամիջոցի խոշոր չափ, այդպիսով սպորինի իրացրել է խոշոր չափերի թմրամիջոց: 2019 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 09:00-ից 09:45-ն ընկած ժամանակահատվածում Լարինսկի շրջանի Ռուսաստանի ՆԳՆ ԹՀԲ հարցերով բաժնի աշխատակիցների կողմից դեպքի վայրի զննությունն անցկացնելուց հետո Կրասնոդարի երկրամասի Լարինսկ քաղաքի Վորոշիլովի փ. թիվ 5, 20, 26, Դելեգատակայայի փ. թիվ 72/2, Բ.Խմելիցկու փ. 147, Գվարդեյսկայայ փ. թիվ 9, 10, 15, 19, 40, 41, 42, 54, 58, Լուչեգարնի նրք. թիվ 2 հասցեներում գրավող տնարիություններին հարող

րարածքում հայրնաքելել և աղղրալվել է նյութ, որն իր կազմում պարունակել է 6,68 գրամ ընդհանուր ծալալով N-մեթիլէֆեդրոնի ածանցյալ, և ալալիսով նշված թմրամիջոցը հանալել է ալորինի շրջանառութլոնից:

Ինքը՝ Ն.Ա.Կարաալելլանը, դրամական միջոցների կարիք ունենալով, ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ը, ալելի սրույգ ժամը դալարանը չի պարզել, գրնալելով սրույգ չպարզված վալրում, «Բնաերներ» ցանցի միջոցով հանցալոր համաձայնութլան է ելել չպարզված անձի հեղ, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, թմրամիջոցների համալրեղ իրացման շուրջ: Ընդ որում, հանցալիցները միմյանց միջն դերերը քաշիել են հեղրյալ կերալ. չպարզված անձի դերը, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, կալանում էր պալմնական վալրերում րեղաղրված՝ գաղրնալրանալին ներղրվածքներում կշոաքաշիալված թմրամիջոցը Ն.Ա.Կարաալելլանին րրամաղրելու մեղ: Ն.Ա.Կարաալելլանի դերը կալանում էր չպարզված անձի կողմից, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, րրամաղրված թմրամիջոցն ալորինի ձեռքբերելու, գաղրնալրանալին վալրերում թմրամիջոցը րեղաղրելու, իմբի մանակից՝ չպարզված անձին, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, րեղաղրված ներղրվածքների հաացները հալրնելու մեղ՝ անձանց անորոշ շրջանակին թմրամիջոցն «Բնաերներ» ցանցի միջոցով հեղրալա իրացման նալարալով: Շարունակելով իրագործել իր թմրամիջոցների ալորինի իրացման հանցալոր դիլրալորութլոնը՝ Ն.Ա.Կարաալելլանը սրույգ չպարզված ժամին, ալկալն ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ի ժամը 08:00-ն, գործելով անձանց իմբում ալն չպարզված անձի հեղ նաինական համաձայնութլամբ, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, շահաղիլրական դրղումներից ելնելով, գրնալելով սրույգ չպարզված վալրում, չպարզված անձից, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացված է առանձին վալրութլոն, ալրացել է գաղրնալրանալին ներղրվածքում ալկա նյութը, որն իր կազմում պարունակել է թմրամիջոց՝ N-մեթիլէֆեդրոնի ածանցյալը, որը ներառված է Ցանկ I «ՌԴ-ում հակողութլան ենթակա թմրանյութերի, հոգեներգործոն նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում», 2,79 գրամից ոչ պակաս ընդհանուր ծալալով, 6 պղիմեղալին րաթեթով՝ րաթեթված կարմիր գույնի մեկուսիչ ժալալելնով, ինչը ՌԴ Կառալարութլան 2012 թվականի հոկտեմբերի 1-ի «Ռոաաալրանի Դաշնութլան քրեական օրենագրքի 228-րդ, 228.1, 229-րդ հողվածների նալարալնելում՝ թմրամիջոցների և հոգենեղ նյութերի զգալի, իոշոր և առանձնալեա իոշոր չալիերը հաալարելու մասին» թիվ 1002 որղղման համաձայն համալրում է իոշոր չալի: Շարունակելով թմրամիջոցների ալորինի իրացմանն ողղված համալրեղ հանցալոր դիլրալորութլոնը՝ Ն.Ա.Կարաալելլանը, իրեն հասած հանցալոր դերի համաձայն, գործելով շահաղիլրական դրղումներից ելնելով, անձնական հարալրացման նալարալով, չպարզված անձի հեղ համալրեղ, որի նկալրմամբ քրեական գործն առանձնացվել է առանձին վալրութլոն, միասնական դիլրալորութլամբ, սրույգ չպարզված ժամին, ալկալն ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 1-ի ժամը

08:00-ն, ժամանել է Լաբինսկ քաղաքի Պրիվոկզայնայա փ., ր. 38 հասցեում գրնվող տեղանքի հարվածը՝ մեկուսիչ ժապավենի 6 կորոնով փաթեթավորված 6 պոլիմերային փաթեթի իրացման նպարակով, դրա կազմում թմրամիջոց՝ N-մեթիլէֆեդրոնի ածանցյալը պարունակող նյութով, որը ներառված է Ցանկ I «ՌԴ-ում հսկողության ենթակա թմրանյութերի, հոգենագործուն նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում», 2.79 գրամ ընդհանուր ծավալով, թմրամիջոցների սպորինի իրացման նպարակով, գաղտնարանային ներդրվածքներ իրականացնելու ճանապարհով և «Բնրերներ» ցանցի միջոցով անձին, որի նկարմամբ քրեական գործն առանձնացվել է առանձին վարույթում, հաղորդագրությունների հեղազա ուղարկման նպարակով, որոնք պարունակում են թմրամիջոց պարունակող գաղտնարանային ներդրվածքների տեղանքի հարվածների գրնվելու վայրի մասին տեղեկատվությունը՝ անձանց անորոշ շրջանակին «Բնրերներ» ցանցի միջոցով թմրամիջոցի հեղազա իրացման նպարակով: Սակայն Ն.Ա.Կարապետյանը և չպարզված անձը, որի նկարմամբ քրեական գործն առանձնացվել է առանձին վարույթում, իրենց հանցավոր դիրավորությունը չեն կարողացել ավարտին հասցնել իրենցից անկախ հանգամանքներից ելնելով, քանի որ Ն.Ա.Կարապետյանը ձերբակալվել է ուրիկանության աշխարակիցների կողմից, ինչի հետ կապված նշված նյութը, որն իր կազմում պարունակել է թմրամիջոց, չի մրել սպորինի շրջանառության մեջ, այլ առգրավվել է Ն.Ա.Կարապետյանից ուրիկանության աշխարակիցների կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին ժամը 08:00-ից մինչև 08:35-ն ընկած ժամանակահատվածում, նրա անձնական գնություն անցկացնելու ընթացքում Լաբինսկ քաղաքի Պրիվոկզայնայա փ., ր. 3/8 հասցեում գրնվող տեղանքի հարվածում»:

2. Դատապարտյալ Ն.Կարապետյանի վերաքննիչ բողոքի հիման վրա Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի վերաքննիչ որոշմամբ Ն.Կարապետյանի նկատմամբ Կրասնոդարի երկրամասի Լաբինսկի քաղաքային դատարանի՝ 2020 թվականի հունիսի 22-ի դատավճիռը փոխվել է, ՌԴ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետին համապատասխան՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանք ճանաչվել է հանցագործությունների երկու դրվագներով հանցագործության բացահայտմանն ու հետաքննությանն ակտիվորեն նպաստելը: Նույն որոշմամբ Ն.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացվել է և ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով պատիժ է նշանակվել ազատագրկում՝ մինչև 10 (տասը) տարի 10 (տասը) ամիս ժակետով, իսկ ՌԴ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 228.1 հոդվածի 4-րդ մասի «դ» կետով՝ ազատագրկում՝ մինչև 9 (ինը) տարի 10 (տասը) ամիս ժակետով: ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցագործությունների համակցությամբ պատիժների մասնակի գումարման եղանակով, Ն.Կարապետյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրկում՝ 11 (տասնմեկ) տարի 6 (վեց) ամիս ժակետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում:

3. Կրասնոդար երկրամասի դատախազ Ս.Վ.Տարեղսկու վճռաբեկ միջնորդագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան 2022 թվականի մայիսի 19-ին որոշմամբ արձանագրել է, որ «Ն.Ա.Կարապետյանի արարքի որակման վերաբերյալ որպես հետևանք հանցագործությունների համակցությամբ դատապարտյալին նշանակված պարիժը վկայում է քրեական օրենքի խախտումների մասին, որոնք չեն վերացվել վերաքննության կարգով գործը քննելիս, ընդ որում, հանդիսանում են էական, գործի ելքի վրա ազդող:

Ելնելով դատարանի կողմից պարզված և դատական նիստում հետազոտված ապացույցներով հաստատված՝ գործի փաստական հանգամանքներից՝ դատապարտյալի բոլոր գործողությունները ենթակա են որակման ՌԴ ՔՕ 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 228.1 հոդվածի 4-րդ մասի «դ» կետով»:

Արդյունքում, ՌԴ ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանը դատապարտյալ Ն.Կարապետյանի նկատմամբ Կրասնոդար երկրամասի Լաբինսկի քաղաքային դատարանի՝ 2020 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և Կրասնոդարի երկրամասային դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի վերաքննիչ որոշումը փոխել է, դատապարտյալ Ն.Կարապետյանի՝ ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով որակված գործողությունները վերադասակարգել է ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ներսես Կարապետյանի նկատմամբ պատիժ նշանակելով ազատազրկում՝ 9 (ինը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում:

4. ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Գեորգիևսկի քաղաքային դատարանի՝ 2023 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Ռուսաստանի պատիժների կատարման դաշնային ծառայության տնօրենի տեղակալի միջնորդագրի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ներսես Անդրանիկի Կարապետյանին պատիժը կրելու համար ՀՀ փոխանցելու մասին, բավարարվել է, և վերջինս 2023 թվականի օգոստոսի 16-ին տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն՝ հետագա պատիժը կրելու համար:

5. ՀՀ արդարադատության նախարար Գ.Մինասյանը 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Ներսես Անդրանիկի Կարապետյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը «Դատապարտյալների փոխանցման մասին» Ստրասբուրգի կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածների հիման վրա ՀՀ տարածքում ճանաչելու մասին միջնորդություն է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան:

Միջնորդության հիմքը, փաստարկները և պահանջը.

6. ՀՀ արդարադատության նախարար Գ.Մինասյանը, վկայակոչելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

499⁸-րդ հոդվածի 1-ին մասը, գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի (անցումային դրույթների) 26-րդ մասը, միջնորդել է Ներսես Անդրանիկի Կարապետյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը ճանաչել՝ Հայաստանի Հանրապետությունում դրա կատարումն ապահովելու նպատակով:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումներ և եզրահանգումը.

7. Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և նյութերը, գտնում է, որ դատապարտյալ Ներսես Անդրանիկի Կարապետյանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը ենթակա է ճանաչման և կատարման հետևյալ պատճառաբանությամբ:

8. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դատավճռի կատարման (պատժի հետագա կրման) նպատակով դատապարտյալների փոխանցման վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում կնքված՝ «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Ստրասբուրգի կոնվենցիա) և 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում կնքված՝ «Պատժի հետագա կրման համար ազատագրվման դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Մոսկվայի կոնվենցիա):

Ստրասբուրգի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մի կողմի րարածքում դատապարտված անձը, սույն կոնվենցիայի դրույթներին համապարասխան, կարող է փոխանցվել մեկ այլ կողմի՝ պարիժը կրելու համար»:*

Նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Սույն հոդվածի համաձայն դատապարտյալը կարող է փոխանցվել միայն հետևյալ երկու պայմանների սովայության դեպքում,*

ա) րվյալ անձը Կարարող պետության քաղաքացի է,

բ) դատավճիռը վերջնական է,

գ) փոխանցման մասին ինդրանքն արանալու պահին պարիժը կրելու համար դատապարտյալին մնացել է առնվազն վեց ամիս ժամկետ, կամ պարժի ժամկետն անասհմանասիակ է,

դ) փոխանցումը համաձայնեցված է դատապարտյալի հետ, կամ երկու Կողմերից որևէ մեկը, ելնելով դատապարտյալի րարիքից, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, անհրաժեշտ է համարում փոխանցումը համաձայնացնել նրա օրինական ներկայացուցչի հետ,

ե) գործողությունը կամ անգործությունը, որի համար դատավճիռ է կայացվել, հանցագործություն է համարվում ըար Կարարող պետության օրենսդրության կամ այրպիսի կհամարվեր, եթե հանցագործությունը կարարվեր այդ պետության րարածքում,

զ) Դատապարտող և Կարարող պետությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ: (...):»:

Ստրասբուրգի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կատարող պետության իրավասու մարմինները պետք է շարունակեն դատավճռի կատարումն անմիջապես կամ դատական կամ վարչական որոշման հիման վրա՝ 10-րդ հոդվածում սահմանված պայմաններով կամ դատական կամ վարչական ընթացակարգերի միջոցով փոխարկեն դատավճիռն այդ պետության որոշման՝ դրանով դատապարտող պետության կողմից նշանակված պարժամիջոցը փոխարինելով կատարող պետության օրենքով միևնույն արարքի համար նախատեսված պարժամիջոցով՝ 11-րդ հոդվածով սահմանված պայմաններով»:

Նույն կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կատարումը շարունակելու դեպքում կատարող պետությունը պարտավոր է ղեկավարվել դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պարժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

2. Եթե պարժամիջոցի բնույթը և տևողությունը չեն համապատասխանում կատարող պետության օրենսդրությանը, կամ եթե այդ է պահանջում վերջինի օրենսդրությունը, ապա կատարող պետությունը կարող է պարժամիջոցը դատական կամ վարչական որոշմամբ հարմարեցնել (համապատասխանեցնել) իր օրենսդրությամբ նման բնույթի հանցագործությունների համար նախատեսված պարժին կամ այլ պարժամիջոցների:

Պատժի կամ պարժամիջոցի բնույթը հնարավորության դեպքում պետք է համապատասխանեն կատարման ենթակա դատավճռով սահմանված պարժի կամ պարժամիջոցի բնույթին: Այն իր բնույթով և պարժի ժամկետով չի կարող խարսցնել դատապարտող պետության կողմից նշանակված պարժամիջոցը և ոչ էլ գերազանցել կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված պարժի առավելագույն ժամկետը»:

Նույն կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավճռի փոխարկման դեպքում կիրառվում են Կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը: Դատավճիռը փոխարկելիս իրավասու մարմինը.

ա) պետք է հաշվի առնի Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռում որոշակիորեն արտահայտված կամ պարզ չարտահայտված փաստերի հատարումը.

բ) չի կարող ազատազրկման հետ կապված պարժամիջոցը փոխարինել դրամական տուգանքով.

գ) հաշվարկելու է դատապարտյալի կրած ազատազրկման ամբողջ ժամանակահատվածը.

դ) չի կարող խարսցնել դատապարտյալի քրեաիրավական վիճակը, ինչպես նաև չի կարող հաշվի առնել Կատարող պետության օրենսդրությամբ տվյալ հանցագործության կամ հանցագործությունների համար նախատեսված նվազագույն պարիժը»:

Մոսկվայի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռի կատարման պետությունը սպասելով է պարժի կրման շարունակությունը իր օրենսդրությամբ համապատասխան չվարթարացնելով դատապարտյալի վիճակը: Մյուս

Պայմանավորվող կողմի վճռի կարարման մասին հարցի քննարկման ընդդարությունը որոշվում է Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ:

Դարարարությաը նշանակված պարիժը կրում է վճռի կայացման պերության դարարանի վճռի հիման վրա: Ազարագրկման ձևով պարժի ժամկերում հաշվվում է վճռի կայացման պերությունում կրած պարժի ժամկերը: Վճռի կարարման պերության դարարանը, ելնելով կայացրած վճռից, որոշում է ընդունում դրա կարարման մասին համաձայն իր պերության օրենքի սահմանելով ազարագրկման այնպիսի ժամկեր, ինչպիսին նշանակվել է վճռով:

Եթե վճռի կարարման պերության օրենսդրությամբ տվյալ արարքի համար ազարագրկման առավելագույն պարժաչաիր պակաս է, քան նշանակվել է վճռով, ապա դարարանը սահմանում է ազարագրկման առավելագույն պարժաչաիր, որը նախարեակված է այդ պերության օրենսդրությամբ: (...):»:

9. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դատական ակտերի ճանաչման և կատարման վերաերյալ իրավահարաերությունները կարգավորվում են նաև 2002 թվականի հոկտեմերի 7-ին Քիշնևում կնքված՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաերությունների մասին» կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Քիշնևի կոնվենցիա):

Քիշնևի կոնվենցիայի 109-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սույն Կոնվենցիայով նախարեակված պայմաններով ճանաչում և կարարում է մյուս Պայմանավորվող կողմերի դարարանների կայացրած դարավճիռները մի Պայմանավորվող կողմի դարարանի կողմից դարարարված և պարիժը չկրած անձի հանձնման դեպքում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում քրեական պարախասարվության երթարկելու համար, ինչպես նաև մի Պայմանավորվող կողմի կողմից դարավճիռը ի կարար աժվելու համար անձին հանձնելը մերժելու դեպքում, որը կայացվել է մյուս Պայմանավորվող կողմի դարարանի կողմից:

2. Դարավճիռների ճանաչումը և կարարումը իրականացվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրության հիման վրա, որի տարածքում պերք է ճանաչվեն և կարարվեն դարավճիռները»:

Նշված կոնվենցիայի 111-րդ հոդվածի համաձայն «1. Դարավճռի ճանաչման և կարարման վերաերյալ միջնորդությունը քնավում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու դարարանի կողմից նրա ներպերական օրենսդրության համարարասիան:

(...)

3. Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու դարարանը, հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու դարարանի կայացրած դարավճռի հիման վրա, ներպերական օրենսդրության համարարասիան, սահմանում է նույն պարիժը, որը նշանակված է դարավճռով:

4. Եթե Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ տվյալ արարքի համար պարժի առավելագույն ժամկերը ավելի քիչ է, քան նշանակված դարավճռով,

սպա դատարանը սահմանում է պարժի առավելագույն ժամկետը, որը հայցվոր Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նախատեսված է միևնույն արարքի համար:

5. Դատավճիռ կայացրած հայցող Պայմանավորվող կողմի փարածքում պարժի կրած մասը պարժի ժամկետի մեջ հաշվարկվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան, որը քննել է դատավճիռի ճանաչման վերաբերյալ միջնորդությունը: Միաժամանակ որոշում է դատավճիռի կատարման կարգի մասին հարցը:

6. Պարժի կիրառվում է այն դեպքերում, եթե նախատեսված է հայցվող և հայցող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ»:

10. 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն՝ «1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-րդ, 54.2-րդ, 54.3-րդ և 54.4-րդ գլուխների դրույթները ուժը կորցրած չեն ճանաչվում»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54.3-րդ գլխում գետեղված՝ 499⁸-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օրարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օրարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կապված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

3. Օրարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչում են՝

1) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օրարերկրյա պետության բարձրագույն դատական մարմինը. (...)»

Նույն օրենսգրքի 499⁹-րդ հոդվածի համաձայն՝ «1. Օրարերկրյա պետության դատարանի դատավճիռի ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելիս սույն օրենսգրքի 499⁸-րդ հոդվածի երրորդ մասով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանները պարզում են, թե որքանով են պահպանված համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այն պայմանները, որոնք ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու հիմք են:

Այդ պայմանների պահպանված լինելը, ինչպես նաև տվյալ միջազգային պայմանագրով դատավճիռի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի բացակայությունը հիմք են օրարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու որոշում կայացնելու և ի կատար ածման ներկայացնելու համար:

2. Օրարերկրյա պերության դատարանի դատավճռի ճանաչումը կարող է մերժվել Հայասրանի Հանրապերության միջազգային պայմանագրով նախարեսված հիմքերով՝ նկարի ոնենալով նաև կիրառվող միջազգային պայմանագրի վերաերյալ սահմանված կարգով Հայասրանի Հանրապերության արված հայրարարությունները կամ վերապահումները, ինչպես նաև, եթե՝

1) արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայասրանի Հանրապերության օրենքով քրեորեն պարժելի չէ,

2) դատավճռով որպես պարիժ նախարեսված է մահապարիժ»:

2022 թվականի հոլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 168-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը, որոշում կայացնելով օրարերկրյա պերության դատարանի դատավճիռը ճանաչելու մասին, նույն որոշմամբ լուծում է նաև դատապարտյալին վերագրվող հանցանքները Հայասրանի Հանրապերության օրենսդրությանը համապարասխանեցնելու հարցը:

2. Օրարերկրյա պերության դատարանի դատավճիռը Հայասրանի Հանրապերությունում ճանաչում են՝

1) Հայասրանի Հանրապերության վճռարեկ դատարանի քրեական պալատը, եթե ճանաչման ենթակա դատավճիռը կայացրել է օրարերկրյա պերության բարձրագույն դատական մարմինը.

(...):

3. Որոշման մեջ նշվում է՝

1) դատավճիռը կայացրած դատարանի անվանումը, դատավճռի կայացման վայրը և ժամանակը.

2) Հայասրանի Հանրապերության րարածքում դատապարտյալի բնակության վերջին վայրը.

3) դատապարտյալին վերագրվող արարքների նկարագրությունը, օրարերկրյա պերության իրավական այն նորմերը, որոնց համապարասխանում են նկարագրված արարքները.

4) Հայասրանի Հանրապերության քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնց համապարասխանում են նկարագրված արարքները.

5) նշանակված պարիժը (հիմնական և լրացուցիչ) և պարժաչաիրը, պարժի չկրած մասը, որը դատապարտյալը պերք է կրի Հայասրանի Հանրապերությունում, պարժի կարարման սկիզբը և ավարրը:

4. Եթե Հայասրանի Հանրապերության քրեական օրենսգրքով րվյալ հանցանքի համար ազարագրկում պարժարեսակի առավելագույն ժամկերը նվազ է օրարերկրյա պերության դատարանի դատավճռով ազարագրկման նշանակված պարժաչաիրից՝ դատապարտյալի նկարմամբ որպես պարիժ է նշանակվում համապարասխանեցման արդյունքում կիրառված հոդվածի ասնկցիայով ազարագրկման համար նախարեսվող առավելագույն ժամկերը:

5. Եթե Հայասրանի Հանրապերության քրեական օրենսգրքով րվյալ հանցանքի համար ազարագրկում պարժարեսակի նվազագույն ժամկերն ավելի է օրարերկրյա պերության դատարանի դատավճռով ազարագրկման

նշանակված պարժաշափից՝ դատապարտյալի նկարմամբ որպես պարիժ է նշանակվում օտարերկրյա պետության դատարանի դատավճռով ազատագրված նշանակված պարժաշափը:

6. Եթե Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով րվյալ հանցանքի համար ազատագրվում պարժարեսակ սահմանված չէ՝ դատապարտյալի նկարմամբ նշանակվում է համապարասխանեցման արդյունքում կիրառված հողվածի սանկցիայով նախարեսակված այն պարիժը և այն չափով, որի նկարմամբ հնարավոր է առավելապես հասնել պարժի նպարակների իրացմանը»:

11. ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՄԴՈ-1134 որոշմամբ նշել է, որ ինչպես «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիան, այնպես էլ «Պատժի հետագա կրման համար ազատագրված դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիան, նախատեսելով պայմանագրի կողմ հանդիսացող պետության տարածքում դատապարտված անձին պատժի կատարման (հետագա կրման) նպատակով պայմանագրի կողմ հանդիսացող մեկ այլ պետությանը փոխանցելու հնարավորություն, սահմանում են նաև դատավճռի կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման ընթացքում իրավասու մարմինների իրավագործության սահմանները, այդ թվում՝ նաև դատավճռով նշանակված պատժը փոխելու առումով: Դիտարկվող երկու միջազգային պայմանագրերն էլ դատավճռի կատարման պետությանը պարտավորեցնում են պատժի կատարումն ապահովելիս ղեկավարվել համապատասխան օտարերկրյա պետության կողմից կայացված դատավճռով կիրառված պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ, ինչպես նաև իրավասություն են վերապահում փոփոխության ենթարկել դատավճռով նշանակված պատժի ժամկետն այն դեպքում, երբ դատավճռի կատարման պետության ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափն ավելի մեղմ է, քան դատավճռի կայացման պետության դատարանի կողմից նշանակված պատժաչափը: Ակնհայտ է, որ դատավճռի կատարման պետությունը չի կարող ապահովել փոխանցված դատապարտյալի նկատմամբ դատավճռի կայացման պետության կողմից սահմանված պատժի կատարումը կամ հետագա կրումն առանց ճանաչելու օտարերկրյա դատարանի դատավճիռը և առանց այն ներպետական օրենսդրությանը համապատասխանեցնելու: Այսպիսով, դատավճռի կատարման պետության կողմից իրականացվող պատժի կատարման (հետագա կրման) ապահովման գործընթացը ներառում է երեք բաղադրիչ՝ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչում, օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ներպետական օրենսդրությանը համապատասխանեցում և դատավճռի ի կատար ածում:

Նշված որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ Ստրասբուրգի կոնվենցիան նախատեսում է օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման երկու եղանակ, որոնք նախատեսված

են համապատասխանաբար՝ 10-րդ և 11-րդ հոդվածներում. **դատավճռի կատարման շարունակության ապահովման միջոցով դատավճռի ճանաչում և փոխարկման կամ կոնվերսիայի միջոցով դատավճռի ճանաչում:** Համապատասխան կոնվենցիոն դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ դատավճռի փոխարկումն ավելի լայն իրավագործության շրջանակներ է նախատեսում դատավճռի կատարման պետության դատարանի համար, քան դատավճռի կատարման շարունակության ապահովումը: Դատավճռի կատարումը շարունակելու դեպքում դատավճռի կատարման պետությունը պարտավոր է ղեկավարվել դատավճռի կայացման պետության կայացրած դատավճռի իրավական բնույթով և տևողությամբ: Դատավճռի կատարման պետությունը կարող է պատժամիջոցը դատական կամ վարչական որոշմամբ հարմարեցնել (համապատասխանեցնել) իր օրենսդրությամբ նման բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատժին կամ այլ պատժամիջոցներին միայն երկու դեպքում՝ եթե պատժամիջոցի բնույթը և տևողությունը չեն համապատասխանում վճռի կատարման պետության օրենսդրությանը կամ եթե այդ է պահանջում վերջինիս օրենսդրությունը: Իսկ դատավճռի փոխարկման պարագայում կիրառվում են դատավճռի կատարման պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը:

Դատավճռի կատարման պետության դատարանի իրավագործությունը միայն սահմանափակված է այն մասով, որ վերջինը չի կարող խստացնել դատապարտյալի քրեաիրավական վիճակը, չի կարող հաշվի առնել ներպետական օրենսդրությամբ տվյալ հանցագործության համար նախատեսված նվազագույն պատիժը, ինչպես նաև չի կարող ազատազրկման հետ կապված պատժամիջոցը փոխարինել դրամական տուգանքով: Ստրասբուրգի կոնվենցիայի 9-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը սահմանում է, որ դատավճռը փոխարկվում է դատական կամ վարչական ընթացակարգերի միջոցով՝ դատապարտող պետության կողմից նշանակված պատժամիջոցը փոխարինելով կատարող պետության օրենքով միննույն արարքի համար նախատեսված պատժամիջոցով:

Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի կատարման (հետագա կրման) նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս, դատարանի իրավագործությունը սահմանափակված է փոխանցման պահին գործող քրեական օրենքով: Այլ խոսքով՝ պատժի պայմանները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճռը, այդ թվում՝ նշանակված պատժի մասով, պետք է համապատասխանեցվի դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին¹:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի *Գարեգին Հովսեփյանի* գործով 2013 թվականի ապրիլի 18-ի որոշման

12. Վերոշարադրյալի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ներպետական օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ համապատասխան հիմքերի և պայմանների առկայության պարագայում, ճանաչել և կատարել օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը՝ միաժամանակ նախատեսելով նաև դատավճռի կատարումն ապահովելու նպատակով դատավճիռը Կատարող պետության օրենսդրությանը համապատասխանեցնելու լիազորություն:

Մինևույն ժամանակ, միջազգային պայմանագրերը (Ստրասբուրգի, Մոսկվայի և Քիշնևի կոնվենցիաները) Կատարող պետությանը պարտավորեցնում են դատավճիռը ճանաչելիս և պատժի կատարումն ապահովելիս ղեկավարվել Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռով սահմանված պատժամիջոցի իրավական բնույթով ու տևողությամբ, ինչպես նաև փոփոխության ենթարկել դատավճռով նշանակված պատժի ժամկետն այն դեպքում, երբ Կատարող պետության ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափն ավելի մեղմ է, քան Դատապարտող պետության դատարանի կողմից նշանակված պատժաչափը: Այս դեպքում համապատասխանեցում կատարող իրավասու մարմինը սահմանում է ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

13. Սույն կյուրթերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ներսես Անդրանիկի Կարապետյանը, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցերի (ներառյալ «Ինտերնետ» ցանցը) օգտագործմամբ, խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացում և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցերի (ներառյալ «Ինտերնետ» ցանցը) օգտագործմամբ, խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման փորձ կատարելու համար Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Լաբինսկի քաղաքային դատարանի՝ 2020 թվականի հունիսի 22-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով - 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և հանցանքների համակցությամբ դատապարտվել է ազատազրկման 12 (տասներկու) տարի ժամկետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում: Նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է Ն.Կարապետյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ից կալանքի տակ գտնվելու ժամկետը²,

- Դատապարտյալի բողոքի հիման վրա Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի վերաքննիչ որոշմամբ Ն.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատժը մեղմացվել է, և հանցանքների համակցությամբ Ն.Կարապետյանի նկատմամբ

¹ 15-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 11 (տասնմեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում³,

– Դատախազի վճռաբեկ միջնորդագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշմամբ դատապարտյալի՝ ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով որակված արարքները վերաորակվել են ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ն.Կարապետյանի նկատմամբ պատիժ նշանակելով ազատազրկում՝ 9 (ինը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի կրումը խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում⁴,

– ՀՀ արդարադատության նախարարությունը, Ներսես Կարապետյանին պատիժը կրելու համար փոխանցելու հարցը քննարկելիս, ՌԴ-ին երաշխավորել է, որ «Դատապարտված անձանց փոխանցելու մասին» Ստրասբուրգի կոնվենցիայի 10-րդ հոդվածում շարադրված պայմաններին համապատասխան, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու է բարձր անվտանգային գոտու ուղղիչ հիմնարկում⁵:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմեղմ (հոգեներգործուն) նյութ, դրանց պարասպորտի կամ դրանց համարժեք նյութ (անսպորգ) կամ դրանց ածանցյալ սպորինի արտադրելը, պարասպորելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տրեյդինգը, առաքելը, փոխադրելը, գովազդելը կամ դրանք սպորինի իրացնելը կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմեղմ (հոգեներգործուն) նյութ, դրանց պարասպորտի կամ դրանց համարժեք նյութ (անսպորգ) կամ դրանց ածանցյալ սպորինի ձեռք բերելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:*

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնասկան համաձայնությանը,

(...)

3) խոշոր չափերով,

(...) պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Նույն օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցափորձ է համարվում դիտարկվող սյն գործողությունը կամ անգործությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն և պարունակում է սույն օրենսգրքի Հարույկ մասով նախատեսված հանցակազմի հարկանիշներ, սակայն անձի դիտարկվողության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվում փոխյալ հանցակազմի որևէ հարկանիշի բացակայության»:*

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁵ Տե՛ս նյութեր, թերթ 55:

15. Սույն որոշման 13-րդ կետում նշված փաստական տվյալները վերլուծելով սույն որոշման 8-12-րդ կետերում մեջբերված միջազգային պայմանագրերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պահպանված են Ստրասբուրգի, Մոսկվայի և Քիշնևի կոնվենցիայով նախատեսված այն պայմանները, որոնք ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու հիմք են, ինչպես նաև բացակայում են դատավճռի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերը, մասնավորապես.

- Ներսես Անդրանիկի Կարապետյանը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է,

- արարքը, որի համար նա դատապարտվել է, հանցագործություն է համարվում ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և քրեորեն պատժելի է,

- նրա նկատմամբ կայացված դատավճիռը վերջնական է,

- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ,

- փոխանցման մասին խնդրանքն ստանալու պահին պատիժը կրելու համար դատապարտյալին մնացել է վեց ամսից ավելի ժամկետ:

Նշված պայմանների պահպանված լինելը, ըստ Վճռաբեկ դատարանի, հիմք է Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը ճանաչելու և կատարման ներկայացնելու համար:

16. Հաշվի առնելով Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռով հաստատված փաստերը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ներսես Անդրանիկի Կարապետյանի կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Ներսես Կարապետյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշմամբ նշանակված պատիժը՝ 9 (ինը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, գերազանցում է նույն արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված առավելագույն՝ 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկում պատիժը, և հիմք ընդունելով «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածը, «Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածը և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի 111-րդ հոդվածը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել Ներսես Կարապետյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը, Ներսես Կարապետյանի կողմից Ռուսաստանի

Դաշնության քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 4-րդ մասի «դ» կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով կատարած արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերին և որպես պատիժ սահմանել ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված առավելագույն պատժաչափը՝ ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով: Սահմանված պատժի ժամկետի մեջ անհրաժեշտ է հաշվակցել Ն.Կարապետյանի՝ Ռուսաստանի Դաշնությունում կրած պատժի մասը և պատժի սկիզբը հաշվել 2019 թվականի հոկտեմբերի 10-ից:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Դատապարտյալների փոխանցման մասին», «Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին», «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիաները և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ, 499⁹-րդ հոդվածներով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 168-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ արդարադատության նախարար Գ.Մինասյանի միջնորդությունը բավարարել: Ներսես Անդրանիկի Կարապետյանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշումը ճանաչել:

2. Ռուսաստանի Դաշնության ընդհանուր իրավասության Չորրորդ վճռաբեկ դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի՝ 2022 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Ներսես Անդրանիկի Կարապետյանի կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-ին հոդվածի 4-րդ մասի «դ» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով կատարած արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերին և պատիժ սահմանել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով: Սահմանված պատժի ժամկետի մեջ հաշվակցել Ներսես Անդրանիկի Կարապետյանի՝ Ռուսաստանի Դաշնությունում կրած պատժի մասը և պատժի սկիզբը հաշվել 2019 թվականի հոկտեմբերի 10-ից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

58.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0060/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

29 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 267.1-րդ հոդվածի 1-ին մասի և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58229018 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2. Նույն գործով որպես մեղադրյալ են ներգրավվել նաև Արթուր Գուրգենի Հարությունյանը և Արթուր Սարգսի Սայունցը:

3. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Ալեքսանդր Բաղդազյույանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է

և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. 2019 թվականի ապրիլի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

5. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի փետրվարի 1-ի դատավճռով Ալեքսանդր Բաղդազյույանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով, գույքի՝ մաքսանենգության առարկայի՝ 197.58 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցի բռնագրավմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների համաձայն՝ հանցանքների համակցությամբ, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նշանակված 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկմանը գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 3-րդ մասով նշանակված՝ 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկում պատժից 1 (մեկ) տարին և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով, գույքի՝ մաքսանենգության առարկայի՝ 197.58 գրամ «Ափիոն» տեսակի թմրամիջոցի բռնագրավմամբ: Ալեքսանդր Բաղդազյույանի նկատմամբ կիրառված կալանավորում խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

5.1. Նույն դատավճռով դատապարտվել է նաև Արթուր Հարությունյանը, իսկ Արթուր Սայունցի մասով գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել՝ վերջինիս մահվան կապակցությամբ:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 1-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Ա.Բաղդազյույանի պաշտպան Մ.Բաղայանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: Ամբաստանյալ Ա.Բաղդազյույանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

7. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 31-ի որոշմամբ ընդունվել է

վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Բողոքի հեղինակը, վերլուծելով գործի հանգամանքները, փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործը ողջամիտ ժամկետում քննելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն ու *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, անհիմն կերպով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

8.1. Բողոքի հեղինակը գտել է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը սահմանափակել է ամբաստանյալի և պաշտպանի իրավունքները: Ըստ բողոքաբերի՝ գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ ամբաստանյալ Ա.Բաղդասյանը և նրա պաշտպան Մ.Բաղդասյանը դատաքննությունը ձգձգելու համար կանխամտածված խոչընդոտներ են ստեղծել: Այդ պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ ամբաստանյալը չարաշահում է իր իրավունքները և փաստել քննությունը ձգձգելու պաշտպանության կողմի նպատակը, դատաքննությունը համարել է ավարտված և շարունակել է վարույթի բնականոն ընթացքը՝ գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումը բացառելու նպատակով:

8.2. Բողոքաբերը նշել է, որ թեև ամբաստանյալը 2021 թվականի փետրվարի 1-ին կայացած դատական նիստում պնդել է, որ ունի առողջական խնդիրներ և ի վիճակի չէ ցուցմունք տալու, այնուամենայնիվ նա որևէ կերպ չի վիճարկել դատական նիստից առաջ բժշկական հետազոտում անցած լինելու հանգամանքը, ինչը Վերաքննիչ դատարանի կողմից անհիմն կերպով կասկածի տակ է դրվել:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 1-ի դատավճիռին:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Ալեքսանդր Բաղդազյուլյանին մեղադրանք է առաջադրվել այն քանի համար, որ «նա կարարել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն, ինչպես նաև օժանդակել է նշված թմրամիջոցը առանց իրացնելու նպատակի ձեռքբերման փորձին:

Այսպես՝

Արթուր Սայունցը առանց իրացնելու նպատակի Իրանի Բայանական Հանրապետությունից առանձնապես խոշոր չափերով «սափոն» փեսակի թմրամիջոց սպորինի ձեռք բերելուն օժանդակելու և թմրամիջոցն իր կազմակերպմամբ մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխելու շուրջ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից 19-ը ընկած ժամանակահատվածում համաձայնության է եկել Ալեքսանդր Բաղդազյուլյանի հետ: Այնուհետև Արթուր Սայունցը թմրամիջոց ձեռք բերելու շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերել իրանական +98-905-549-13-23 հեռախոսահամարն օգտագործող, ինքնությունը չգարգված ումն «Ալիի» հետ, համաձայնեցրել ձեռք բերվելիք թմրամիջոցի փեսակը, քանակը և գինը, որից հետո՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին, Ալեքսանդր Բաղդազյուլյանին հայտնել է այդ մասին, հրահանգել նրան «Մեղրի» սահմանային անցակետով անցնել ԻԻՀ, հանդիպել վերոհիշյալ «Ալիին», նրանից ձեռք բերել թմրամիջոցը: Միաժամանակ Արթուր Սայունցը Ալեքսանդր Բաղդազյուլյանին է փոխանցել թմրամիջոցի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը՝ 100.000 ՀՀ դրամ, և հրահանգել թմրամիջոցը թաքցնել կոշիկների մեջ՝ մաքսային հսկողության ժամանակ չբացահայտվելու համար:

Բացի այդ, նկատի ունենալով, որ Ալեքսանդր Բաղդազյուլյանը վարստող է, նրան Մյունխի մարզի Գորիս քաղաքից «Մեղրի» սահմանային անցակետ հասցնելու և հետ վերադարձնելու համար Արթուր Սայունցը պայմանավորվել է նաև Արթուր Հարությունյանի հետ, ում նույնպես հայտնել է Ալեքսանդր Բաղդազյուլյանի միջոցով ԻԻՀ-ից առանց իրացնելու նպատակի թմրամիջոց ձեռք բերելու մտադրության մասին և սրացել այդ հարցում իրեն օժանդակելու Արթուր Հարությունյանի համաձայնությունը:

2018 թվականի դեկտեմբերի 20-ին Արթուր Սայունցի ցուցումով Արթուր Հարությունյանը Ալեքսանդր Բաղդազյուլյանի կողմից շահագործվող ՎԱԶ 2110 մակնիշի 35 SZ 549 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով վերջինին տեղափոխել է ՀՀ պետական սահմանի «Մեղրի» անցակետ, որտեղից Ալեքսանդր Բաղդազյուլյանը հետիոտն անցել է ԻԻՀ Արթուր Սայունցի ասած «Ալիի» հետ հանդիպելու համար, սակայն հանդիպումը չի հաջողվել: Տեղեկանալով այդ մասին Արթուր Սայունցը պայմանավորվածություն է ձեռք բերել իրանական +98-914-757-71-61 հեռախոսահամարն օգտագործող, ԻԻՀ Ալամդար քաղաքում գրավող ինքնությունը չգարգված ումն «Ալիի» հետ և կարճ տեքստային հաղորդագրությամբ նրա տվյալները փոխանցել է Ալեքսանդր Բաղդազյուլյանին ու հրահանգել է նրան գնալ Ալամդար, ներկայանալ Սևակի անունից և ձեռք բերել թմրամիջոցը: Նույն օրը՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին, Ալեքսանդր Բաղդազյուլյանը

գնացել է Ալանդար, Արթուր Սայունցի ուղարկած փվյալներով կապ հաստատել ինքնուրույնը չպարզված անձի հետ, 100.000 ՀՀ դրամով Արթուր Սայունցի համար ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 197,58 գրամ «սիֆոն» տեսակի թմրամիջոց՝ երկու փաթեթով: Այնուհետև նշված թմրամիջոցով փաթեթներն իր հետ տեղափոխել է հայ-իրանական պետական սահման և Արթուր Սայունցի կազմակերպմամբ մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, կոշիկների մեջ պահելով, թմրամիջոցն սայորինի տեղափոխել է Եվրասիական տնտեսական միության մաքսային և ՀՀ պետական սահմանով: Այնուհետև Ալեքսանդր Բաղդասյանը հանդիպել է «Մեդրի» անցակետի մուր իրեն սպասող Արթուր Հարությունյանին, ավերակներն ստանալով տեղավորել թմրամիջոցով փաթեթները, որից հետո միասին ուղևորվել են Գորիս՝ թմրամիջոցը Արթուր Սայունցին փոխանցելու համար: Մյուսօրի մարզի Քաջարան քաղաք չհասած Ալեքսանդր Բաղդասյանը և Արթուր Հարությունյանը բռնվել և բերման են ենթարկվել ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից, ինչի արդյունքում Արթուր Սայունցն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցրել առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով նշված թմրամիջոցը ձեռք բերելը»²:

11. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրության ուսումնասիրությամբ պարզ է դառնում հետևյալը.

– Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի նոյեմբերի 9-ին դատաքննության փուլը հայտարարել է ավարտված և անցում է կատարել դատական վիճաբանությունների փուլին: Պաշտպան Մ.Բաղդասյանը միջնորդել է պաշտպանական ճառի նախապատրաստվելու համար ժամանակ տրամադրել, ինչն Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է³:

– 2020 թվականի դեկտեմբերի 3-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է՝ պաշտպանների բացակայության պատճառով⁴:

– 2020 թվականի դեկտեմբերի 18-ին նշանակված դատական նիստը պաշտպան Մ.Բաղդասյանի միջնորդության հիման վրա հետաձգվել է՝ նկատի ունենալով վերջինիս վատառողջ լինելը⁵:

– 2021 թվականի հունվարի 14-ի դատական նիստի ժամանակ պաշտպան Մ.Բաղդասյանը միջնորդել է վերսկսել դատաքննությունը՝ նշելով, որ ամբաստանյալ Ա.Բաղդասյանը ցուցմունք տալու ցանկություն ունի: Դատաքննությունը վերսկսվել է, սակայն ամբաստանյալը հայտնել է, որ պատրաստ չէ ցուցմունք տալու, պետք է խորհրդակցի պաշտպանի հետ, ինչին ի պատասխան, դատարանն առաջարկել է ամբաստանյալին ժամանակ տրամադրել՝ պաշտպանի հետ խորհրդակցելու համար, որին պաշտպան Մ.Բաղդասյանը առարկել է, հայտարարելով, որ մեկ օրում չի կարող, ծավալուն գործ է, ամբողջ քրեական գործը պետք է վերցնի և հանդիպի պաշտպանյալին: Ա.Բաղդասյանը և նրա պաշտպանը միջնորդել են հետաձգել դատական

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 252-254:
³ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 69:
⁴ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 18, 69:
⁵ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 34 -35, 36:

նիստը: Հիշյալ միջնորդությունը Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է⁶:

– 2021 թվականի փետրվարի 1-ի դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը նշել է, որ ջերմում է, ունի բարձր զարկերակային ճնշում, ի վիճակի չէ ցուցմունք տալ, և խնդրել է հետաձգել դատական նիստը: Նախագահող դատավորը հայտարարել է, որ քրեակատարողական հիմնարկից, ինչպես նաև դատարանում ամբաստանյալի առողջական վիճակը հետազոտած բժշկից ճշտել է, որ ամբաստանյալը չի ջերմել, վատառողջ չէ և ի վիճակի է ցուցմունք տալու: Ամբաստանյալը, չվիճարկելով մինչև դատական նիստը բժշկական հետազոտում անցած լինելու հանգամանքը, այնուամենայնիվ պնդել է, որ ի վիճակի չէ ցուցմունք տալու: Նախագահող դատավորն արձանագրել է, որ ամբաստանյալը չարաշահում է իր իրավունքներն ու մերժել է դատական քննությունը հետաձգելու մասին պաշտպանի միջնորդությունը: Այնուհետև դատարանը դատաքննությունը համարել է ավարտված՝ անցնելով դատական վիճաբանությունների փուլին: Ի պատասխան պաշտպան Մ.Բաղդազյանի այն հայտարարությանը, որ պատրաստ չէ պաշտպանական ճառին և դատարանը սահմանափակել է իր պաշտպանյալի իրավունքները, նախագահող դատավորն արձանագրել է, որ դեռևս 2020 թվականի նոյեմբերի 9-ին, դատաքննությունն ավարտվելուց հետո, պաշտպան Մ.Բաղդազյանի միջնորդությամբ ժամանակ է տրամադրվել ճառին պատրաստվելու համար, դրանից հետո չորս դատական նիստ է նշանակվել և պաշտպան Մ.Բաղդազյանը շուրջ երեք ամիս ժամանակ է ունեցել ճառին պատրաստվելու համար: Նախագահող դատավորը նշել է, որ պաշտպան Մ.Բաղդազյանը ևս թույլ է տալիս իր իրավունքների չարաշահում: Այնուհետև ամբաստանյալ Ա.Բաղդազյույանն է հայտնել, որ պատրաստ չէ պաշտպանական ճառին: Նախագահող դատավորն արձանագրել է, որ ամբաստանյալը և պաշտպանը հրաժարվել են օգտվել ճառի իրավունքից: Ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը վերջին խոսք ևս չի ասել, նշելով, որ կօգտվեք այդ իրավունքից, եթե իրեն տրվեք ցուցմունք տալու հնարավորություն: Դրանից հետո դատարանը գործի քննությունը համարել է ավարտված և հեռացել է խորհրդակցական սենյակ՝ դատական ակտ կայացնելով⁷:

11.1. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է. «(...) *Վերլուծելով ու գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները և գործի նյութերն իրենց համակցությամբ, դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչպես նաև դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմանը, դատարանը հաստատել է համարում, որ*

– *Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով ու ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 3-րդ մասով և*

⁶ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 51, 69:

⁷ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 67, 69:

որակվում են որպես Եվրասիական տնտեսական միության մարասիխն սահմանով և Հայաստանի Հանրապետության պետական սահմանով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մարսանենգություն ու առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու փորձի օժանդակում: (...)»⁸:

12. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանի կողմից անհիմն կերպով սահմանափակվել է ամբաստանյալ Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանի ցուցմունք տալու իրավունքը, ինչը հանդիսանում է վերջինիս արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին, մեղադրյալին կամ ամբաստանյալին պարտավոր է ընձեռնել հասարակորոշյուն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ Առաջին արյանի դատարանի կողմից դատական նիստի ընթացքում արձանագրված տվյալներն առ այն, որ ՔԿՀ-ից, ինչպես նաև բժշկից սրացված տվյալների համաձայն ամբաստանյալի մուր առկա չեն առողջական խնդիրներ, հիմնավորված չեն և հաստատված չեն որևէ փաստական տվյալով:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ոչ դատական նիստի արձանագրությունից, ոչ կայացված դատական ակտից ըստ էության հասարակոր չէ պարզել դատական նիստի ընթացքում ամբաստանյալին բժշկական հետազոտության ենթարկելու հանգամանքը: Առաջին արյանի դատարանը բավարարվել է քանակոր արձանագրությամբ առ այն, որ ՔԿՀ-ից ճշտել է այն մասին, որ ամբաստանյալն առողջական խնդիրներ չի ունեցել, ինչպես նաև բժշկը հայտնել է ամբաստանյալի մուր առողջական խնդիրների բացակայության մասին (դատական նիստի արձանագրությամբ չի բացահայտում, թե ինչ պայմաններում է Առաջին արյանի դատարանը բժշկից նման տեղեկատվություն սրացել և ինչ փաստական հիմք է առկա առողջական խնդիրների բացակայության վերաբերյալ եզրահանգման համար): Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, Առաջին արյանի դատարանի քանակոր պարզաբանումը տվյալ պարագայում չէր կարող համարվել բավարար փաստարկ՝ դատական քննության ամենախոցելի սուբյեկտի՝ ամբաստանյալի ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման համար:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանի կողմից սույն գործով թույլ է տրվել քրեատարավարական օրենքի այնպիսի խախտում, որն իր բնույթով էական է, հանգեցրել է օրինականության ու մրցակցային դատավարության սկզբունքների խախտման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի համաձայն հիմք է հանդիսանում բողոքարկված դատական ակտը բեկանելու համար:

⁸ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթեր 70-94:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը նաև արձանագրում է, որ Առաջին արդյանի դատարանի թույլ տրված դատական սխալը հանգեցրել է նրան, որ ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա դրանք վերացնելու ու գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ կայացնելու հնարավորությունն ըստ էության բացակայում է: (...)»⁹:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը սահմանափակել է ամբաստանյալ Ալեքսանդր Բաղդազյույանի և նրա պաշտպանի իրավունքները:

14. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

14.1 ՀՀ Սահմանադրական դատարանը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կապակցությամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի քննությունը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամակայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան¹⁰:

14.2. Վենետիկի հանձնաժողովն անդրադառնալով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին՝ նշել է, որ դատական վարույթի տևողությունը, անշուշտ, ազդում է այդ վարույթի կողմերից առնվազն մեկի շահերի վրա. իրավամբ, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ ողջամիտ ժամկետի պահանջի գերազանցումը կարող է հանգեցնել Եվրոպական կոնվենցիայի այլ կարևոր դրույթների (ընթացակարգային) խախտումների¹¹:

14.3. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր հերթին նշել է, որ արդարադատության իրականացման չափազանց երկար ձգձգումները

⁹ Տե՛ս նյութեր, հատոր 8, թերթեր 132-156:

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-1074 որոշման 6-րդ կետը:

¹¹ Տե՛ս European Commission For Democracy Through Law (Venice Commission), report on the effectiveness of national remedies in respect of excessive length of proceedings, Study no. 316/ 2004, 3 April 2007, CDL-AD (2006) 036rev, կետ 19:

ներկայացնում են լուրջ վտանգ, մասնավորապես՝ իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից¹²:

15. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) ողջամիտ ժամկետում (...) դատաքննության իրավունք»:

15.1. Մեկնաբանելով անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

– դատարանն իրազեկ է այն դժվարություններին, որոնք ձգձգում են գործերի քննությունն ազգային դատարանների կողմից և որոնք պայմանավորված են բազմապիսի հանգամանքներով: Այնուամենայնիվ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որ գործերը քննության առնվեն ողջամիտ ժամկետում. Եվրոպական կոնվենցիան ընդգծում է առանց այնպիսի ձգձգումների արդարադատություն իրականացնելու կարևորությունը, **որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը**¹³,

– պետությունները պարտավոր են ստեղծել այնպիսի իրավական համակարգ, որ դատարանները համապատասխանեն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, ներառյալ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը¹⁴,

– քրեական գործերով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է ապահովել, որ անձինք մեղադրված չլինեն չափազանց երկար, և որոշվի մեղադրանքի հիմնավորվածությունը¹⁵,

– քրեական գործերում այն ժամկետը, որի նկատմամբ կիրառելի է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ընդգրկում է նշված վարույթն ամբողջությամբ՝ ներառյալ բողոքարկման վարույթը¹⁶,

– վարույթի տևողության ողջամտությունը որոշվում է գործի այն հանգամանքների լույսի ներքո, որոնք պահանջում են ընդհանուր գնահատում¹⁷,

¹² Stn Council of Europe, Committee of Ministers, Interim Resolution ResDH (97) 336, 11 July 1997:

¹³ Stn Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *H. v. France* գործով 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10073/82, կետ 58:

¹⁴ Stn Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zimmermann and Steiner v. Switzerland* գործով 1983 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 8737/79, կետ 29:

¹⁵ Stn Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Wemhoff v. Germany* գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 2122/64, կետ 18, *Kart v. Turkey* գործով 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 8917/05, կետ 68:

¹⁶ Stn Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Konig v. Germany* գործով 1978 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6232/73, կետ 98, *V. v. The United Kingdom* գործով 1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 24888/94, կետ 109:

¹⁷ Stn Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boddaert v. Belgium* գործով 1992 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12919/87, կետ 36:

– որոշելիս, թե արդյո՞ք քրեական վարույթի տևողությունը ողջամիտ է եղել, թե ոչ, պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը, դիմումատուի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները¹⁸: Չնայած նրան, որ գործը կարող է որոշակի բարդության լինել, չեն կարող չպարզաբանված անգործության երկար ժամանակահատվածները համարվել «ողջամիտ»¹⁹: Դիմումատուի վարքագիծն օբյեկտիվ փաստ է համարվում, որը չի կարող վերագրվել Պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելիս, թե արդյո՞ք վարույթի տևողությունը գերազանցում է ողջամիտ ժամկետը, թե ոչ (օրինակ՝ *Eckle v. Germany* գործով դիմումատուներն ավելի ու ավելի էին դիմում այնպիսի գործողությունների, որոնք հավանաբար կճգճգեին վարույթը, ինչպիսին է դատավորներին կանոնավոր բացարկ հայտնելը. այս գործողությունների որոշ մասը կարող էր նույնիսկ ենթադրել կանխամտածված կերպով խոչընդոտների ստեղծում)²⁰:

16. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա սրբեղծված անկախ և անսաշտ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով»:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում:

2. Դատարանում գործի քննության տևողության ողջամիտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևողության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Konig v. Germany* գործով 1978 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6232/73, կետ 99, *Neumeister v. Austria* 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, կետ 21, *Frydender v. France [GC]* գործով 2000 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 30979/96, կետ 43, *Pedersen and Baadsgaard v. Denmark* գործով 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 49017/99, կետ 45, *Aganikyan v. Armenia* գործով 2018 թվականի ապրիլի 5-ի վճիռը, գանգատ թիվ 21791/12, կետ 31:

¹⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Adiletta and others v. Italy* գործով 1991 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատներ թիվ 13978/88 14236/88 14237/88, կետ 17:

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Eckle v. Germany* գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 82:

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանաձև՝ գործի քննության միջին ուղենիշային տրոհությունը: (...)»:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) դատարանի կողմից իր գործի (...) ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նախագահողը նախապարտապարտում և ղեկավարում է դատարանի նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու քրեական գործի արդարացի քննությունը և պահպանելու սույն օրենսգրքի այլ պահանջներ, ինչպես նաև դատարանի նիստին ներկա գրավող անձանց պարզաձև վարքագիծը»:

17. Սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն այն մասին, որ ողջամիտ ժամկետում դատաքննության սկզբունքը մարդու հիմնարար իրավունքներից է²¹: Այն անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից է և միտված է հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն ու անձի իրավունքների, շահերի առնչությամբ իրավական վեճը հանգուցալուծելուն և վերջնական դատական ակտ կայացնելուն: Ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի երաշխավորումն ապահովում է նաև սոցիալական արդարության վերականգնումը, նպաստում հանցագործությունների կանխմանը և խափանմանը, հանցավորոտնձգություններին արդյունավետորեն հակազդելու պետության կարողությունների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը: Հետևաբար, նախնական քննություն և դատական քննություն իրականացնող իրավասու մարմինները պետք է անհրաժեշտ ջանասիրություն դրսևորեն՝ ողջամիտ ժամկետում անձի դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ²²:

18. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վարույթի տևողության ողջամտությունը որոշելիս յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- գործի բարդությունը,
- շահագրգիռ անձի վարքագիծը,
- շահագրգիռ անձի համար գործի տևական քննության հետևանքները,
- գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունավետությունը,

²¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Դավլաբյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԼԴ/0082/13/09 որոշման 18-րդ կետը, *Արմեն Միմոնյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ/0012/13/09 որոշման 17-րդ կետը:

²² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Սյվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշման 19-րդ կետը:

– գործի քննության ընդհանուր տևողությունը²³:

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված չափանիշներից՝ շահագրգիռ անձի (մեղադրյալի, պաշտպանի, օրինական ներկայացուցչի, տուժողի, տուժողի իրավահաջորդի, նրա ներկայացուցչի) վարքագիծը որոշ դեպքերում կարող է էական ազդեցություն ունենալ գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման հարցում, ուստի ենթակա է առանձին գնահատման: Ըստ այդմ, անհրաժեշտ է գնահատման ենթարկել, թե դատավարության տևողությունը ձգձգող պատճառներն ընդհանուր առմամբ արդյո՞ք ձևավորվել են դատավարության մասնակցի դրսևորած վարքագծի արդյունքում: Այսպես, հարկ է պարզել, թե արդյո՞ք դատական նիստերը հետաձգվել են պատշաճ ծանուցված լինելու պայմաններում նշված դատավարության մասնակիցների՝ դատական նիստերին պարբերաբար չներկայանալու պատճառներով, արդյո՞ք դրանք եղել են հարգելի, թե անհարգելի, արդյո՞ք նշված դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվել և իրենց դատավարական պարտականությունները կատարել են բարեխղճորեն, թե՛ իրենց վարքագծով կանխամտածված խոչընդոտներ են ստեղծել, որոնք հավանաբար կձգձգեին գործի վարույթը²⁴: Վերջինի առումով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք անձը չարաշահել է իր դատավարական իրավունքները (*«abuse of rights»*): Որպես օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ անձի վարքագիծը հանգեցնում է դատական նիստերի պարբերաբար հետաձգման (այդ նպատակով անձը ներկայացնում է միջնորդություն՝ դատական նիստը հետաձգելու և գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ, ընդ որում՝ որոշ դեպքերում՝ ամբողջությամբ գործի նյութերին նախաքննության ավարտին ծանոթացած լինելու պայմաններում, ներկայացնում է բացարկի և ինքնաբացարկի միջնորդություններ, հանդես գալիս հայտարարություններով, փոխում կամ հրաժարվում պաշտպանից, խախտում դատական նիստի կարգը, անհարգալից վերաբերմունք դրսևորում դատարանի նկատմամբ): Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իրավական պաշտպանության միջոցներից բարեխղճորեն, իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտվելը չի կարող գնահատվել որպես շահագրգիռ սուբյեկտների կողմից գործի քննությունը դանդաղեցնող վարքագծի դրսևորում:

20. Վճռաբեկ դատարանը նաև ընդգծում է, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանան այն գործերը, որոնք հնարավորինս սեղմ ժամկետում քննության չառնելու դեպքում էապես վնաս կհասցվի արդարադատության շահերին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այդ առումով

²³ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0016/01/14 որոշման 20-րդ կետը:

²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Eckle v. Germany* գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 82:

կարող են ուշադրության արժանանալ, մասնավորապես, դատական կազմի փոփոխության կամ այլ հիմքով դատական քննությունը վերսկսված գործերը:

21. Վճռաբեկ դատարանը նաև կարևորում է դատարանի կողմից գործի քննության արագությունն ապահովելու համատեքստում գործով նշանակված դատական նիստերի հաճախականության, ինչպես նաև գործի քննության անհարկի ձգձգումները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցառումների արդյունավետության գնահատումը (ինչպես օրինակ՝ ապացույցների հետազոտման արդյունավետ կարգի սահմանումը, ապացույցների հետազոտման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, գործի պատշաճ քննության համար անհրաժեշտ փաստական տվյալների ժամանակին ստացումը): Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ դատական նիստը նախագահողը պետք է ձեռնարկի ողջամտորեն անհրաժեշտ միջոցառումներ՝ գործի քննությունը հնարավորինս սեղմ ժամկետում ավարտելու համար:**

22. Անփոփելիվ վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող դրույթները և դրա գնահատման վերաբերյալ մշակված չափանիշները նպատակ ունեն շահագրգիռ անձին պաշտպանելու երկարատև անորոշ իրավական վիճակից և ապահովելու արդարադատության իրականացումն առանց ձգձգումների՝ երաշխավորելով գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը՝ ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ հասարակության համար:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի նոյեմբերի 9-ին դատաքննության փուլը հայտարարել է ավարտված և անցում է կատարել դատական վիճաբանությունների փուլին: Պաշտպան Մ.Բաղայանը միջնորդել է պաշտպանական ճառին նախապատրաստվելու համար ժամանակ տրամադրել, ինչն Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է:

– 2020 թվականի դեկտեմբերի 3-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է պաշտպանների բացակայության պատճառով:

– 2020 թվականի դեկտեմբերի 18-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է պաշտպան Մ.Բաղայանի միջնորդության հիման վրա՝ վերջինիս վատառողջ լինելու պատճառով:

– 2021 թվականի հունվարի 14-ի դատական նիստի ժամանակ պաշտպան Մ.Բաղայանը միջնորդել է վերսկսել դատաքննությունը՝ նշելով, որ ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը ցուցմունք տալու ցանկություն ունի: Դատաքննությունը վերսկսվել է, սակայն ամբաստանյալը հայտնել է, որ պատրաստ չէ ցուցմունք տալ, պետք է խորհրդակցի պաշտպանի հետ, ինչին ի պատասխան, դատարանն առաջարկել է ժամանակ տրամադրել՝ պաշտպանի հետ խորհրդակցելու համար, որին պաշտպան Մ.Բաղայանն առարկել է և հայտարարել, որ մեկ օրը բավարար չէ, գործը ծավալուն է, քրեական գործն ամբողջությամբ պետք է վերցնի և հանդիպի իր պաշտպանյալին:

Ա.Բաղդազյույանը և նրա պաշտպանը միջնորդել են հետաձգել դատական նիստը: Հիշյալ միջնորդությունը Առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է:

– 2021 թվականի փետրվարի 1-ի դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը նշել է, որ ջերմում է, ունի բարձր զարկերակային ճնշում, ի վիճակի չէ ցուցմունք տալ, և խնդրել է հետաձգել դատական նիստը: Նախագահող դատավորը հայտարարել է, որ քրեակատարողական հիմնարկից, ինչպես նաև դատարանում ամբաստանյալի առողջական վիճակը հետազոտած բժշկից ճշտել է, որ ամբաստանյալը չի ջերմել, վատառողջ չէ և ի վիճակի է ցուցմունք տալու: Ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը, չվիճարկելով մինչև դատական նիստը բժշկական հետազոտում անցած լինելու հանգամանքը, այնուամենայնիվ պնդել է, որ ի վիճակի չէ ցուցմունք տալ: Դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալը չարաշահում է իր իրավունքներն ու մերժել է դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը: Այնուհետև դատարանը դատաքննությունը համարել է ավարտված՝ անցնելով դատական վիճաբանությունների փուլին: Դատական վիճաբանությունների փուլում պաշտպան Մ.Բաղդազյանը և ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը նշել են, որ պատրաստ չեն պաշտպանական ճառին, ամբաստանյալ Ա.Բաղդազյույանը հրաժարվել է նաև վերջին խոսքից: Նախագահող դատավորը դա գնահատել է որպես իրավունքի չարաշահում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դեռևս 2020 թվականի նոյեմբերի 9-ին դատաքննությունն ավարտվելուց հետո, նշանակված չորս դատական նիստերը հետաձգվել են և պաշտպան Մ.Բաղդազյանը շուրջ երեք ամիս ժամանակ է ունեցել ճառին պատրաստվելու համար: Նախագահող դատավորը, արձանագրելով, որ ամբաստանյալը և պաշտպանը հրաժարվել են օգտվել իրենց իրավունքից, գործի քննությունը համարել է ավարտված և հեռացել է խորհրդակցական սենյակ՝ դատական ակտ կայացնելու²⁵:

– Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն կերպով սահմանափակվել է ամբաստանյալ Ա.Բաղդազյույանի՝ ցուցմունք տալու իրավունքը, ինչը հանդիսանում է վերջինի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս: Վերաքննիչ դատարանը նշել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն ամբաստանյալին պարտավոր է ընձեռել հնարավորություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու իր պաշտպանության իրավունքը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի կողմից դատական նիստի ընթացքում արձանագրված տվյալներն առ այն, որ քրեակատարողական հիմնարկից, ինչպես նաև բժշկից ստացված տվյալների համաձայն՝ ամբաստանյալի մոտ առկա չեն առողջական խնդիրներ, հիմնավորված չեն և հաստատված չեն որևէ փաստական տվյալով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի

²⁵ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

կողմից թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որը հանգեցրել է օրինականության ու մրցակցային դատավարության սկզբունքների խախտման²⁶:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-22-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

24.1. Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ ամբաստանյալ Ա.Բաղդազյուլյանը և պաշտպան Մ.Բադալյանն իրենց վարքագծով կանխամտածված խոչընդոտներ են ստեղծել դատական քննությունը ձգձգելու նպատակով: Մասնավորապես, նշվածի մասին են վկայում Առաջին ատյանի դատարանի կողմից դատական վիճաբանությունների փուլում պաշտպանի միջնորդությամբ պաշտպանական ճառին նախապատրաստվելու համար ժամանակ տրամադրելուց հետո նշանակված դատական նիստին պաշտպանի չներկայանալու, շուրջ մեկ ամիս անց նշանակված նիստին ամբաստանյալ Ա.Բաղդազյուլյանի կողմից ցուցմունք տալու ցանկությամբ պայմանավորված դատաքննությունը վերսկսելու միջնորդություն ներկայացնելու հանգամանքները: Ավելին, նշված միջնորդությունը բավարարելուց և դատաքննությունը վերսկսելուց հետո Ա.Բաղդազյուլյանը հրաժարվել է ցուցմունք տալուց՝ պատճառաբանելով, որ պետք է խորհրդակցի պաշտպանի հետ: Խորհրդակցության համար ժամանակ տրամադրելու դատարանի առաջարկը չընդունելուց հետո, Առաջին ատյանի դատարանը բավարարել է պաշտպանական կողմի միջնորդությունը և նիստը հետաձգել տևական ժամանակով: Հաջորդ դատական նիստին ամբաստանյալը դարձյալ ցուցմունք չի տվել՝ պատճառաբանելով, որ առողջական խնդիրներ ունի: Արդյունքում, դատական նիստերը շուրջ երեք ամիս ձգձգելուց հետո պաշտպանական կողմն այդպես էլ ճառով հանդես չի եկել, իսկ ամբաստանյալը ցուցմունք չի տվել, չնայած որ այդպիսի հնարավորություն Առաջին ատյանի դատարանի կողմից նրանց ողջամտորեն ընձեռվել է:

24.2. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված տվյալները հիմնավորված չեն և որևէ փաստական տվյալով հաստատված չեն, ապա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ թեև ամբաստանյալը պնդել է, որ ի վիճակի չէ ցուցմունք տալու, այնուամենայնիվ նա որևէ կերպ չի վիճարկել դատական նիստից առաջ բժշկական հետազոտում անցած լինելու հանգամանքը, ինչը Վերաքննիչ դատարանի կողմից անհիմն կերպով կասկածի տակ է դրվել:

²⁶ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

25. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ Վերաքննիչ դատարանը, նշելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն կերպով սահմանափակվել է ամբաստանյալ Ա.Բաղդազյուլյանի՝ ցուցմունք տալու իրավունքը, ինչը հանդիսանում է վերջինի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, ինչպես նաև եզրահանգելով, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն ամբաստանյալին պարտավոր է ընձեռել հնարավորություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու իր պաշտպանության իրավունքը, աստեղծել է միջազգայնորեն ճանաչված այն կանոնները, որ դատավարության մասնակիցները, այդ թվում նաև ամբաստանյալը, երաշխավորված իրավունքներից պետք է օգտվեն բարեխղճորեն: Իսկ դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքներից բարեխղճորեն օգտվելու պարտականությունը ենթադրում է նաև համապատասխան դատավարական գործողությունն օրենքով սահմանված փուլում կամ ժամանակին իրականացնելու պահանջի պահպանում՝ այն բացառությամբ, որ կներկայացվեն սահմանված կարգից շեղվելու ողջամիտ և օբյեկտիվ պատճառներ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Բաղդազյուլյանը ցուցմունք տալու իր իրավունքից օգտվելու լիարժեք հնարավորություն ունեցել է նաև դրա իրացման համար քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դատաքննության ընթացքում, երբ հետազոտվել են ապացույցները, սակայն չի ցանկացել օգտվել իր իրավունքից, միայն նշել է, որ պնդում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքը²⁷:

26. Այսպիսով, պաշտպանական կողմի վարքագիծը՝ դատական վիճաբանությունների փուլում նիստին պաշտպանի չներկայանալը, դատական նիստերը տևական ժամանակով հետաձգելու միջնորդություններ պարբերաբար հարուցելը, այդ թվում՝ ցուցմունք տալուն պատրաստվելու համար քրեական գործի նյութերը ծավալուն լինելու պատճառաբանությամբ, այն դեպքում, երբ պաշտպանական կողմը նախաքննության ավարտից ի վեր ծանոթ է եղել քրեական գործի որք նյութերին, ակնհայտորեն վկայում է պաշտպանական կողմի՝ ցուցմունք տալու իրավունքից օգտվելու պատրվակով դատական նիստերն անհարկի ձգձգելու, դրանով իսկ գործի քննության ողջամիտ ժամկետները խախտելու և իրենց իրավունքներից ոչ բարեխղճորեն օգտվելու՝ այդպիսիք չարաշահելու մասին:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, աստեղծելով վերը մեջբերված իրավական կարգավորումները և դրանցից բխող՝ իրավունքի չարաշահման արգելքն ու արդարադատության պատշաճ կազմակերպման համատեքստում այն բացառելու անհրաժեշտությունը, անհիմն կերպով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

28. Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, գործի քննության ողջամիտ ժամկետներն ապահովելու համատեքստում, իրավացիորեն արձանագրել է,

²⁷ Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթեր 137-138:

որ ամբաստանյալը չարաշահում է իր իրավունքներն ու մերժել է դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ ամբաստանյալի և պաշտպանի միջնորդությունը՝ դատաքննությունը համարելով ավարտված, անցել է դատական վիճաբանությունների փուլին: Դատական վիճաբանությունների փուլում ամբաստանյալը և պաշտպանը չեն ցանկացել օգտվել ճառի, իսկ ամբաստանյալը՝ նաև վերջին խոսքի իրավունքից՝ պատճառաբանելով, որ ճառերով հանդես կգան միայն ցուցմունք տալուց հետո, ինչից ելնելով դատարանը գործի քննությունն իրավաչափորեն համարել է ավարտված և հեռացել է խորհրդակցական սենյակ՝ դատավճիռ կայացնելու:

29. Վճռաբեկ դատարանը սույն որոշման 20-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման համատեքստում հարկ է համարում նաև փաստել, որ միայն Առաջին ատյանի դատարանում գործի քննությունը տևել է շուրջ երկու տարի և դատական կազմի փոփոխության հիմքով դատական քննությունը երկու անգամ վերսկսվել է (գործը նախ եղել է դատավոր Հ.Մելիսյանի²⁸, ապա դատավոր Մ.Շահվերդյանի²⁹, որից հետո՝ դատավոր Ն.Օհանյանի³⁰ վարույթում):

30. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը սահմանափակել է ամբաստանյալ Ա.Բաղդազյույանի և նրա պաշտպան Մ.Բադալյանի իրավունքները, հիմնավոր չէ:

31. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ, 43-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործի ելքի վրա, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ հաշվի առնելով, որ Ա.Բաղդազյույանի անմեղության վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկները քննարկման առարկա չեն դարձվել³¹:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ա.Բաղդազյույանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝ կալանավորման հիմքերը շարունակում են պահպանվել, հետևաբար այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ,

²⁸ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթ 4:

²⁹ Տե՛ս նյութեր, հատոր 5, թերթ 4:

³⁰ Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթ 2:

³¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Ալեքսանդր Հովհաննեսի Բաղդազյույանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

59.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0062/06/22

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

29 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Բորիս Հրանտի Բախշիյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշման դեմ պաշտպաններ Ա.Սարգսյանի և Ե.Սարգսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2022 թվականի հունվարի 25-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 340-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով, հարուցվել է թիվ 61200322 քրեական գործը:

1.1. 2022 թվականի հունվարի 31-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ են հարուցվել ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ ՀՀ Սյունիքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև ազատությունից զրկելու համաձայնություն տալու համար:

1.2. 2022 թվականի հունվարի 31-ին Բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է թիվ ԲԴԽ-11-Ո-Ք-1 որոշումը՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սյունիքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության

դատարանի դատավոր Բորիս Բախշիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ:

1.3. 2022 թվականի հունվարի 31-ին Բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է թիվ ԲԴԽ-11-Ո-Ք-2 որոշումը՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշիյանիին ազատությունից զրկելու համաձայնություն տալու վերաբերյալ:

2. 2022 թվականի հունվարի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 61200522 քրեական գործը:

2.1. 2022 թվականի փետրվարի 1-ին թիվ 61200322 և թիվ 61200522 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ որին շնորհվել է 61200322 համարը:

2.2. 2022 թվականի փետրվարի 1-ին թիվ 61200322 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել Բորիս Բախշիյանին:

3. 2022 թվականի փետրվարի 1-ին նախաքննության մարմինը կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և մեղադրյալ Բ.Բախշիյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշմամբ մեղադրյալ Բ.Բախշիյանի պաշտպաններ Ե.Սարգսյանի և Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 7-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Ա.Սարգսյանը և Ե.Սարգսյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 27-ի որոշմամբ ընդունվել են վարույթ՝ Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքները քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

7. Պաշտպան Ա.Սարգսյանը գտել է, որ իր պաշտպանյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որոշումը կայացվել է հիմնավոր կասկածի և կալանավորման հիմքերի բացակայության պայմաններում:

7.1. Ըստ պաշտպանի՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է հետևյալ պատճառներով՝

- Վերաքննիչ դատարանի դատողություններն առ այն, որ դատարան մուտք եղած գործերի բաշխման՝ մակագրման, գործընթացի խախտման վերաբերյալ որևէ փաստական տվյալ չի ներկայացվել և դատարանի նախագահի կողմից գործերի ձեռագիր մակագրման գործընթացն օրինական է, պաշտպանական կողմի գնահատմամբ չեն համապատասխանում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Գործերի բաշխման գործընթացում սուբյեկտիվ միջամտության առկայությունը առավել ևս նման գործով, երբ ակնհայտ է դատավոր Բ.Բախշյանի նկատմամբ ճնշում գործադրելու, նրա օրինական գործունեությունն արհեստականորեն որպես հանցավոր որակելու և դատավորին պատժելու միտումը, չի կարող գնահատվել որպես օրենքի հիման վրա ստեղծված անաչառ դատավորի կողմից քննված, երբ դատավորի ընտրությունն իրականացվել է դատարանի նախագահի կողմից: Այդ հանգամանքները առնվազն ողջամիտ կասկած են հարուցում:

- Տվյալ գործով, ի թիվս այլ պայմանների, կարևոր է, որ օրենքով սահմանված կարգով հաղթահարված լինեն դատավորի անձեռնմխելիության երաշխիքները, ինչը, սակայն, առերևույթ տեղի չի ունեցել:

- Բ.Բախշյանին առաջադրված մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակյալ հատկանիշը՝ ծանր հետևանքը, առերևույթ բացակայում է:

7.2. Բողոքաբերը նշել է նաև, որ Բ.Բախշյանին կալանավորելու պայմանը՝ հիմնավոր կասկածն առ այն, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն, ընդհանրապես բացակայում է:

7.3. Բողոքաբերը համոզմունք է հայտնել, որ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը՝ կալանավորման հիմքերի մասով նույնպես հակասում են միջազգային և ներպետական օրենսդրությանը, ՄԻԵԿ-ի և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին և իրենցից ներկայացնում են անձի ազատության հիմնարար իրավունքի ապօրինի սահմանափակում: Այսպես, Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումների մեջ որպես կալանավորման հիմք նշված է միայն գործի քննությանը խոչընդոտելը: Սակայն վերոնշյալ դատողությունները կրում են վերացական, զուտ ձևական բնույթ և հիմնված չեն միջնորդությանը կից ներկայացված ապացույցների վրա: Բ.Բախշյանի կողմից քննությանը խոչընդոտելու վտանգի առկայության վերաբերյալ պնդումն Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը հիմնավորել են այն հանգամանքով, որ Բ.Բախշյանը զբաղեցրել է քննիչի, դատախազի, ապա դատավորի պաշտոն և ունի համապատասխան լծակներ՝ գործով անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու համար: Մինչդեռ Առաջին

ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի այս եզրահանգումները կրում են վերացական բնույթ, ընդամենը ենթադրություններ են և չեն բխում գործի նյութերից: Ընդհակառակը, Բ.Բախշիյանը համապատասխան դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ պատրաստակամություն հայտնելով կազմակերպել իր աշխատակիցների և իր հարազատների հարցաքննության ներկայանալը:

7.4. Պաշտպանը գտել է, որ Բ.Բախշիյանի կողմից իրավական համակարգում պաշտոններ զբաղեցնելը պետք է մեկնաբանվի ոչ թե որպես քննությանը խոչընդոտելու հիմք, այլ հակառակը, նա երկար տարիներ իրավական համակարգում աշխատելով՝ առերևույթ հարգալից վերաբերմունք կցուցաբերի իրականացվող քննությանը և զերծ կմնա ցանկացած քայլից, որը կարող է մեկնաբանվել որպես ազդեցություն:

7.5. Պաշտպանն ընդգծել է, որ դատավոր Բ.Բախշիյանի նկատմամբ իրականացվող գործընթացն իր գնահատմամբ իրականում քողարկված հետապնդում է, որի նպատակն է ճնշել դատավորի անկախությունը: Այդ գործընթացն առերևույթ հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներին:

7.6. Վերոգրյալի հիման վրա, պաշտպան Ա.Սարգսյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները՝ մերժելով վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը և ազատ արձակելով Բ.Բախշիյանին:

8. Պաշտպան Երեմ Սարգսյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական, բացակայում են ոչ միայն կալանավորման հիմքերը, այլ անգամ հիմնավոր կասկածը:

8.1. Պաշտպան Ե.Սարգսյանը, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 2-րդ մասը, նշել է, որ օրենքն ուղիղ նախատեսում է, որ առանց հարգելի պատճառի ամբաստանյալի չներկայանալու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ այն փոխարինվել ավելի ծանրով, ինչն էլ դատավոր Բ.Բախշիյանը կատարել է: Այլ հարց է, որ կարող են լինել անձինք, որոնք կարծում են, որ դատավոր Բ.Բախշիյանը գուցե պետք է անմիջապես չփոխեր Նվեր Մկրտչյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը և չկալանավորեր նրան, սակայն դրանք ընդամենը կարծիքներ են, որոնք որևէ պարագայում չեն կարող նշանակել, որ Նվեր Մկրտչյանի կալանավորումն ապօրինի է, առավել ևս՝ ակնհայտ ապօրինի:

8.2. Պաշտպան Ե.Սարգսյանը նշել է, որ մեղադրանքի կողմն արհեստականորեն ծանրացրել է Բ.Բախշիյանին մեղսագրվող արարքը, դրանում նշելով, թե իբրև Նվեր Մկրտչյանի ակնհայտ ապօրինի կալանավորումն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ նա 14 օր ապօրինի գտնվել է անազատության մեջ, որի ընթացքում առերևույթ կազմակերպված խմբի կողմից վերջինիս հարկադրվել է հրաժարվել գործով ցուցմունք տալուց: Մինչդեռ, Նվեր Մկրտչյանը ոչ թե 14, այլ 13 օր է մնացել կալանքի տակ:

Եվ բացի այդ, ակնհայտ է, որ անզգուշությամբ ծանր վնաս պատճառվելու վերաբերյալ մեղադրանքի կողմի որակումը չի համապատասխանում դատարան ներկայացված նյութերին, ինչպես նաև Բ.Բախշիյանին վերագրվող արարքի փաստական կողմն առերևույթ վկայում է արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության մասին, որն իր բնույթով միջին ծանրության հանցագործություն է և այդ դեպքում մեղադրանքի կողմը չէր կարող Բ.Բախշիյանին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան:

8.3. Պաշտպանը նշել է, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 478-րդ հոդվածով, անձին ապօրինի կալանավորելու հանցագործության որակյալ հատկանիշները հատակ սահմանված են, դրանք են՝ անզգուշությամբ ինքնասպանության հանգեցնելը, անզգուշությամբ հոգեկան խանգարման հանգեցնելը կամ անզգուշությամբ առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը: Իսկ սույն դեպքում որպես անզգուշությամբ առաջացած ծանր հետևանքներ որակված 14 օր կալանքի տակ գտնվելը կամ ցուցմունք տալուց հրաժարվելուն հարկադրելը չեն հանդիսանում որպես արարքը որակյալ դարձնող հանգամանքներ:

8.4. Պաշտպան Ե.Սարգսյանը համոզմունք է հայտնել, որ դատավոր լինելը և երկար տարիներ իրավապահ մարմիններում աշխատելը, հեղինակություն ունենալն առաջին հերթին խոսում են այն մասին, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալը չի դրսևորի ոչ պատշաճ վարագիծ: Ավելին, խնամքին երեք մանկահասակ երեխաներ և մշտական բնակության վայր ունենալը, նախկինում դատապարտված չլինելը ևս վկայում են այն մասին, որ նրա նկատմամբ կարող էր կիրառվել անազատության մեջ գտնվելու հետ չկապված այլ խափանման միջոց, սակայն դատարանն անտեսել է այս էական հանգամանքները:

8.5. Վերոգրյալի հիման վրա, պաշտպան Ե.Սարգսյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները, մերժել քննիչի միջնորդությունը և վերացնել Բ.Բախշիյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Բորիս Բախշիյանը ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով որպես մեղադրյալ է ներգրավվել այն բանի համար, որ «*Մ/ա, հանդիսանալով ՀՀ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր և իր վարույթում քննվող թիվ ՄԴ3/0087/01/21 քրեական գործով իրականացնելով արդարադատություն և որպես դատավոր այլ լիազորություններ, ակնհայտ ապօրինի կալանավորել է նույն գործով ամբաստանյալ Նվեր Համբարձումի Սկրոջյանին, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:*

Այսպես.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված թիվ 58225921 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի՝ Արմեն Ռոբերտի Անդրեասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մանվել Վրեժիկի Փարամազյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագ, 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ չորս դրվագ, Նվեր Համբարձումի Մկրտչյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Վազգեն Ռուշանի Ազարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Զոհրապ Տիգրանի Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագ, ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագ, Արամ Ռոբերտի Գասպարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-149-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով, 38-308-րդ հոդվածի 1-ին մասով և 144-րդ հոդվածով՝ երկու դրվագ և Հայկ Մերուժանի Եղիազարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 2021թ. հոկտեմբերի 26-ի որոշմամբ թիվ ՄԴՅ/0087/01/21 համարով ընդունվել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանի վարույթ, վերջինիս 2021թ. նոյեմբերի 5-ի որոշմամբ նշանակվել է դատական քննության, իսկ 2021թ. դեկտեմբերի 3-ին նշանակվել է հերթական դատական նիստ:

2021թ. դեկտեմբերի 3-ին թիվ ՄԴՅ/0087/01/21 քրեական գործով րեղի ունեցած դատական նիստում պարզելով, որ ամբաստանյալներ Հայկ Եղիազարյանը, Նվեր Մկրտչյանը, ինչպես նաև պաշտպաններ Արմեն Մեղրոնյանը, Էդգար Արամյանը և Յուրա Ավայանը դատական նիստին չեն ներկայացել, Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշիյանը, ամբաստանյալ Հայկ Եղիազարյանի բացակայությունը համարել է հարգելի, այլ գործով դատավարական գործողության մասնակցելու պարճատարանությամբ դատական նիստին չներկայացած պաշտպան Յուրա Ավայանի բացակայության հարգելիության և նրա նկատմամբ դատական սանկցիա կիրառելու հարցի քննարկումը հերաձգել է մինչև հաջորդ դատական նիստը՝ վերջինիս մասնակցությամբ քննարկելու համար, իսկ պաշտպաններ Արմեն Մեղրոնյանի և Էդգար Արամյանի բացակայության հարգելիությունը նույն ծավալով չի քննարկել: Այնուհետև, դատական քննության պարտադիր մասնակիցների բացակայության, հերևարար դատական նիստը շարունակելու անհնարինության և անթույլարելիության պայմաններում, դատավոր Բորիս Բախշիյանն իր նախաձեռնությամբ քննարկման առարկա է դարձրել միայն մեկ դատական նիստից բացակայած ամբաստանյալ Նվեր Մկրտչյանի նկատմամբ ընտրված խախտման միջոց չհետանալու մասին ստորագրությունը փոփոխելու և որպես խախտման միջոց կալանավորումը կիրառելու հարցը, և քննարկմամբ պարզել, որ ըստ պաշտպանի կողմից ներկայացված դիմումի՝ Նվեր Մկրտչյանի բացակայությունը պայմանավորված է պաշտպանի

բացակայության պայմաններում դատական նիստին չմասնակցելու, նույն է թե՛ իր պաշտպանությունը բացառապես պաշտպանի միջոցով իրականացնելու, դատական վարույթին առանց պաշտպանի չմասնակցելու ցանկությանը և լսել կողմերի դիրքորոշումներն այն մասին, որ Նվեր Մկրտչյանին կալանավորելու հիմքեր չկան, առկա են վերջինիս կողմից դատական նիստերին ներկայանալու ապահովելու այլընտրանքային՝ նվազ խիստ հարկադրանքի միջոցներ, այդ թվում՝ վերջինիս բերման ենթարկելը և բացի այդ, Նվեր Մկրտչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու հարցը նրա և նրա պաշտպանի բացակայությամբ քննարկելը խախտում է արդար դատաքննության իրավունքը, վարույթի մրցակցությունը, դրանում զենքերի հավասարությունը, ամբաստանյալի՝ լավելու, իրեն ազատությունից զրկելու հարցի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու իրավունքը:

Այնուհետև, դատավոր Բորիս Բահշիյանը Նվեր Մկրտչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը քննարկելիս նշված սկզբունքները և ամբաստանյալի՝ լաված լինելու և դիրքորոշում ներկայացնելու իրավունքն ապահովելու ակնհայտ և իրական հնարավորության, դատական նիստից Նվեր Մկրտչյանի բացակայությունը դատական վարույթին առանց պաշտպանի չմասնակցելու նրա ցանկությանը պայմանավորված լինելու պայմաններում, նույն դատական նիստից բացակայող դատական քննության այլ պարտադիր մասնակիցների բացակայության անհարգելիությունը չքննարկելով կամ դրա քննարկումն ու նրանց նկատմամբ ավելի մեղմ միջոցի՝ դատական սանկցիայի կիրառման հարցի քննարկումը հեղափոխելով նրանց ներկայությամբ քննարկելու համար, ինչպես նաև իր վարույթում քննված այլ՝ թիվ ՄԴ3/0014/01/20 քրեական գործով երբեք դատական նիստին ներկայացած և ընտրված խափանման միջոցի պայմաններում հակահրավակական վարքագիծ դրսևորած ամբաստանյալին դատական նիստին ներկայացնելու համար պաշտոնական ծանուցումից բացի այլ միջոցներ գործադրելուց և դրանք արդյունք չբերելուց հետո նրա նկատմամբ որպես խափանման միջոց չհեռանալու մասին արտադրությունը կիրառած լինելով, այսինքն՝ գիտակցելով, որ Կվյալ դեպքում կալանավորումը դատական նիստերին Նվեր Մկրտչյանի ներկայությունն ապահովելու վերջին ծայրահեղ միջոց չի հանդիսանում, հետևաբար, վերջինիս կալանավորելու հիմքերը բացակայում են, խախտելով ՀՀ Սահմանադրության 27-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածների, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(80)11 հանձնարարականի 9-րդ կետի, թիվ (2006) 13 հանձնարարականի 4-րդ և 7-րդ կետերի, ԵԽԽՎ թիվ 2077 (2015) բանաձևի 1-ին կետի, «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն արանդար կանոնների («Տոկիոյի կանոններ») 6.1-րդ կետի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1295, ՄԴՈ-827, ՄԴՈ-1421 որոշումներում, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Գարսիա Ալվան ընդդեմ Գերմանիայի, Լեյդգովն ընդդեմ Գերմանիայի, Օջալանն ընդդեմ Թուրքիայի գործերով վճիռներում և Արամ Ճուղուրյանի վերաբերյալ գործով ՀՀ

վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-132/07 որոշմամբ արքայազնուհի իրավական դիրքորոշումներից բխող պահանջները և բացահայտ խախտելով ամբաստանյալի լավամբ լինելու իրավունքը, ակնհայտ սպորինի որոշում է կայացրել Նվեր Համբարձումի Մկրտչյանի նկարմամբ ընդգրկված խախտման միջոց չհեռանալու մասին արտագրությունը փոփոխելու և կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու մասին, ինչի հետևանքով վերջինս 14 օր սպորինի գրավել է անազարության մեջ, որի ընթացքում առերևույթ կազմակերպված խմբի կողմից վերջինիս հարկադրվել է հրաժարվել գործով ցուցմունք տրամադրելու²:

9.1. Կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու մասին նախաքննության մարմնի միջնորդության համաձայն՝ «(...) Քննությանը ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա սույն է հիմնավոր կասկած, որ ՀՀ Մյունխի մարզի առաջին սպորինի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված չթույլատրված արարք, այն է՝ սպորինի կալանավորելը, որն անգուցությունը առաջացրել է ծանր հետևանքներ և սույն են վերջինիս ազատությունից զրկելու՝ կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու հիմքեր:

Այսպես.

(...)

2021թ. դեկտեմբերի 17-ի (...) դատական նիստում մեղադրողի կողմից մեղադրական եզրակացությունը հրապարակվելուց հետո դատարանը որոշել է սպացուցների հետազոտման հաջորդականությունը՝ սահմանելով, որ ամբաստանյալների հարցաքննությունը պետք է կատարվի մյուս բոլոր սպացուցները հետազոտելուց հետո: Սակայն, ամբաստանյալ Մանվել Փարամանգյանի նկարմամբ որպես խախտման միջոց կիրառված կալանավորումը փոփոխելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը քննարկելիս, քննարկման առարկա է դարձրել սպացուցների հաջորդականությունը փոփոխելու և ամբաստանյալ Նվեր Մկրտչյանին հարցաքննելու հարցը, որին մեղադրողը և Նվեր Մկրտչյանի պաշտպանն առարկել են, իսկ Նվեր Մկրտչյանը հայտնել է, որ դրա դեմ չի առարկում և պարտադր է ցուցմունք տալ: Պաշտպանի դիրքորոշումը հարակեցնելու համար դատական նիստն ընդմիջվելուց հետո կողմերի դիրքորոշումները մնացել են նույնը և դատարանը հետաձգելով միջնորդության քննարկումը, անցել է Նվեր Մկրտչյանի հարցաքննությանը: Նվեր Մկրտչյանը հրաժարվել է ցուցմունք տրամադրելուց և հարցերին պատասխանելուց, պատասխանել է միայն մեկ հարցի՝ նշելով, որ իր նկարմամբ ազդեցություն չի գործադրվել և չի գործադրվի: Հարցաքննությունից հետո Նվեր Մկրտչյանը միացել է Մանվել Փարամանգյանի նկարմամբ որպես խախտման միջոց ընդգրկված կալանավորումը փոփոխելու վերաբերյալ միջնորդությանը:

Վերոգրյալ փաստերի համակցությունը կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու հիմքերի և դրա կիրառման դատավարական

² Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 1-4:

կարգի բաղադրիչը հանդիսացող դադարավարական երաշխիքների վերաբերյալ իրավակարգավորումների համարեքսպում վկայում են, որ դադարավոր Բորիս Բախշյանը, դադարական նիստին Նվեր Մկրտչյանից բացի, նաև Հայկ Եղիազարյանի, Նվեր Մկրտչյանի պաշտպան Յուրա Ավայանի և Հայկ Եղիազարյանի պաշտպաններ Արմեն Մելքոնյանի և Էդգար Արամյանի բացակայության, հեղուաբար, դադարական նիստը շարունակելու անհնարինության և անթույլարելիության, Նվեր Մկրտչյանի բացակայությունը վերջինիս պաշտպանի բացակայությամբ պայմանավորված լինելու և առանց վերջինիս դադարական նիստին մասնակցել չցանկանալու, նույնն է, թե՛ վարույթին առանց պաշտպանի մասնակցելու ցանկության բացակայությամբ պայմանավորված լինելու մասին փաստական փյալախներ ունենալու պայմաններում, իր նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձնելով ամբաստանյալ Նվեր Մկրտչյանի նկարմամբ ընարված խախանման միջոցը փոփոխելու հարցը, և լսելով կողմերի դիրքորոշումն այն մասին, որ նրա նկարմամբ ընարված խախանման միջոցը փոփոխելու հարցի քննարկումը առանց նրա բացակայության պարճատները վերջնական պարզելու անթույլարելի է, խախտում է պաշտպանության իրավունքը, ամենակիսար խախանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են և նախքան այդ անհրաճեչը է գործարել դադարավարական հարկադրանքի ալելի մեղմ միջոց, որոշում է կայացրել վերջինիս նկարմամբ ընարված խախանման միջոցը փոփոխելու և կալանավորումը որպես խախանման միջոց կիրառելու մասին: Դադարանը նման որոշում է կայացրել անարեսելով, որ ամբաստանյալ Նվեր Մկրտչյանի կողմից դադարական նիստին ներկայանալու պարարականությունը չկարարելը, ըար վերջինիս պաշտպանի դիմումի, պայմանավորված է առանց պաշտպանի դադարական վարույթին մասնակցել չցանկանալու հանգամանքով, ուղակիորեն ուրնահարելով ամբաստանյալի՝ դադարանի առջև կանգնելու և լավելու իրավունքը և դադարական ակրում իրականությանն ուղակիորեն հակասող փյալախներ մարցնելով այն մասին, թե իբր Նվեր Մկրտչյանի բացակայությունն է պաշտպանների կողմից ներկայացված միջնորդությունները չքննարկելու պարճատ դարձել այն դեպքում, երբ դադարական նիստից բացակայել են նաև դադարավարության այլ մասնակիցներ, առանց որոնց դադարական նիստը շարունակվել չէր կարող: Դադարավոր Բորիս Բախշյանի կողմից ամբաստանյալ Նվեր Մկրտչյանին ակնհայր ապորինի կալանավորելու մասին են վկայում ոչ միայն այն հանգամանքը, որ դադարավարության մասնակիցների կողմից վերջինիս համար ակնհայր է դարձվել կալանավորման հիմքերի բացակայությունը, փյալ դեպքում կալանավորումը որպես վերջին՝ ծայրահեղ միջոց չհանդիսանալու հանգամանքն ու նախքան այդ ալելի մեղմ հարկադրանքի միջոց կիրառելու հնարավորությունն ու անհրաճեչությունը, այլ նաև այն, որ վերջինս դադարական նիստին պաշտպան Յուրա Ավայանի բացակայությունը, դրա պարճատների համարեքսպում համարելով անհարգելի, վերջինիս նկարմամբ դադարական ասնկցիա կիրառելու հարցի քննարկումը հեղաձգել է՝ այն վերջինիս ներկայությամբ քննարկելու և բացակայության պարճատների մասին պարգաբանում սրանալու համար, իսկ պաշտպաններ Արմեն Մելքոնյանի և Էդգար Արամյանի բացակայությունն

արձանագրելուց հետո դրա պարճառները, դարական սանկցիա կիրառելու անհրաճեչություն հարցն առհասարակ չի քննարկել և միայն Նվեր Մկրտչյանին կարանավորելուց հետո արձանագրելով, որ Արմեն Մելքոնյանը ներկայացել է, պարզունակ հարցումը ճշրել է բացակայության պարճառն ու բավարարվել դրանով:

Ավելի պարճ դարավոր Բորիս Բախշյանը, դարական նհարին ներկայանալու պարականությունը չկարարելու պարճառով, առանց այլ միջոցների կիրառման կարանավորել է Նվեր Մկրտչյանին այն դեպքում, երբ դարական նհարին չներկայացած այլ անճանց բացակայության և նրանց նկարմամբ դարական սանկցիա կիրառելու հարցն ընդհանրապես չի քննարկել, իսկ Յուրա Ավայանի նկարմամբ որպես հարկադրանք անհամեմարելիորեն ավելի մեղմ միջոցի սանկցիայի կիրառման համար անհրաճեչր է համարել վերջինից պարզարանումներ և ապացույցներ սրանալը և նույն սանկցիան չի կիրառել նաև հաջորդ դարական նհարում այն դեպքում, երբ վերջինս որևէ ապացույց չի ներկայացրել:

Դարավոր Բորիս Բախշյանը Նվեր Մկրտչյանին կարանավորելիս վերջինիս լավելու իրավունքը բացահայր կերպով իսխարել է ոչ միայն հենց այդ պահին՝ կարանավորելու մասին որոշումը կայացնելով վերջինիս բացակայությամբ և առանց այդ կապակցությամբ նրա և նրա պաշրպանի փասարկները լսելու, այլև նրանով, որ վերջինս իր բացակայությամբ նման որոշում կայացվելուց հետո 14 օր գրավելով անազարության մեջ, անհապաղ չի կանգնել դարարանի առջև այն դեպքում, երբ դարական իրավունքը պարականություն է ապահովել ազարությունից գրկված և դարարանի րրամնդության րակ գրվող անճի անհապաղ առավելագույնը 72 ժամվա ընթացքում դարարանի առջև կանգնելու իրավունքը:

Նվեր Մկրտչյանի կարանավորման ապօրինությունն ակնհայր է ոչ միայն նրան կարանավորելու, այլ նաև այն վերացնելու մասին դարավոր Բորիս Բախշյանի որոշումից: Բանն այն է, որ 2021 թվականի դեկրեմբերի 17-ին կայացված նհարում Նվեր Մկրտչյանի նկարմամբ ընրրված իսխանման միջոց կարանավորումը վերացվել է այն պայմաններում, երբ վերջինս պնդել է, որ իր բացակայությունը պայմանավորված է եղել առանց պաշրպանի դարական նհարին ներկայանալու ցանկության բացակայությամբ և առողջական վիճակով, որի վերարերյալ որևէ փասարթոդթ դարարանը չի էլ պահանջել: Այսինքն՝ բացարճակապես միևնույն փասարական րվյալների պայմաններում դարարանը 14 օր անց Նվեր Մկրտչյանի նկարմամբ իսխանման միջոց կարանավորումը կիրառելը համարել է ոչ անհրաճեչր:

Ավելին, Նվեր Մկրտչյանին ակնհայր ապօրինի կարանավորելու մասին է վկայում նաև դարավոր Բորիս Բախշյանի որպես դարավոր գործունեության պրակրիկան, որը թույլ է րպիս պնդել, որ նա, անբասարանյալի բացակայության շար ավելի ակնհայր անթույլարելիության և ոչ պարշաճ վարքագիծ դրսևորելու մասին ուղղակիորեն վկայող փասարական րվյալների պայմաններում ամենաիսիար իսխանման միջոցը կարանավորումը չի կիրառել:

(...)

[Բնարավոր Բորիս Բախշիյանը մի դեպքում երբեք դատարան չներկայացած և գորացրվելու մասին դատարանին չհայտնած ամբաստանյալի նկարմամբ որպես խափանման միջոց է կիրառել չհեռանալու մասին ստորագրությունն ու նրան բերման ենթարկելու մասին որոշում կայացրել այն դեպքում, երբ դատարանը նաև հեռախոսագնացեր ունենալու միջոցով անհաջողության մատնված ջանքեր է գործադրել ամբաստանյալի ներկայությունն ասպահովելու ուղղությամբ և քրեական գործում առկա է ամբաստանյալի պատշաճ վարքագիծն ասպահովելու անհնարինության, հեղուարար ի սկզբանե ընտրված խափանման միջոցը փոփոխելու և ավելի պիտանի խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության մասին նրա նկարմամբ հսկողություն իրականացնող մարմնի դիմումը, մյուս դեպքում՝ Նվեր Մկրտչյանի նկարմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը փոփոխելու և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում է կայացրել վերջինիս կողմից գործով առաջին դատական նիստին չներկայանալուց հետո՝ առանց վերջինիս բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու կամ այլ՝ կալանավորումից ավելի նվազ խիստ միջոց ձեռնարկելու այն դեպքում, երբ դատավարության բոլոր մասնակիցներն են արձանագրել Նվեր Մկրտչյանի իրավունքների խախտման փաստը, իսկ Նվեր Մկրտչյանի բացակայությունը պայմանավորված է եղել առանց իր պաշտպանի դատական նիստին մասնակցել չցանկանալու հանգամանքով և բացի այդ, դատական նիստը նաև այլ մասնակիցների բացակայության պատճառով անհնար էր:

Նշված հանգամանքները վկայում են, որ Նվեր Մկրտչյանին կալանավորելու անօրինականությունը՝ նրան կալանավորելու հիմքերի բացակայությունը և դրա դատավարական կարգի խախտումը դատավոր Բորիս Բախշիյանի համար եղել են ակնհայտ և վերջինս նշված արարքն առերևույթ կատարել է ուղղակի դիտարկությամբ: Այսօրինի կալանավորվելու արդյունքում Նվեր Մկրտչյանը 14 օր գրնվել է այսօրինի անազարության մեջ, որի ընթացքում նրա նկարմամբ առերևույթ կատարվել է ծանր հանցագործություն, այն է՝ կազմակերպված խմբի կողմից վերջինիս հարկադրվել է քրեական գործով ցուցմունք փախուց խուսափել:

Այսպիսով, քրեական գործով ձեռք բերված փաստական փյույաններն առերևույթ վկայում են, որ ՀՀ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանը իր վարույթում քննվող թիվ ՄԴ3/0087/01/21 քրեական գործով ամբաստանյալ Նվեր Համբարձումի Մկրտչյանի կողմից իր պաշտպանությունը բացառապես պաշտպանի միջոցով իրականացնելու և առանց իր պաշտպանի ներկայության դատական վարույթին մասնակցել չցանկանալու պատճառաբանությամբ միայն մեկ դատական նիստից բացակայելու պայմաններում, ընդամենը ամբաստանյալի բացակայությունը և նրա կողմից դատավարական պարտականությունը չկատարելու փաստն արձանագրելով, միաժամանակ դատական նիստից դատարանի գնահատմամբ անհարգելի պատճառաբանությամբ կամ ակնհայտորեն առանց պատճառաբանության բացակայող դատավարության այլ մասնակիցների

նկարումաք հարկատրանքի միջոց կիրառելու հարցի քննարկումը հեարաձգելով նրանց ներկայությունը քննարկելու համար կամ ընդհանրապես չքննարկելով, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի իր համար ակնհայտ բացակայությանը և կոպտորեն ու ակնհայտ խախտելով անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը քննարկելիս մրցակցությունն ու կողմերի հավասարությունը, ուրնահարելով ամբասարանյալի՝ դատարանի առջև կանգնելու և լավելու, իր ազատության իրավունքը սահմանափակելու հարցի կապակցությանը դիրքորոշում արտահայտելու իրավունքը, ակնհայտ ապօրինի կալանավորել է ամբասարանյալ Նվեր Համարձումի Մկրրչյանին, ինչի հեարևանքով վերջինս 14 օր ապօրինի գրնվել է անազատության մեջ, որի ընթացքում առերևույթ կազմակերպված իմքի կողմից վերջինիս հարկատրվել է հրաժարվել գործով ցուցմունք րալուց:

Հեարևար, Բորիս Հրանրի Բահշիյանի նկարումաք կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայման հանդիսացող հանցանք կատարելու հիմնավոր կասկածն առկա է:

Կատրված նախաքննությանը պարզվել է նաև, որ 2021 թվականի դեկտեմբերի 4-ին Նվեր Մկրրչյանը րեդափոխվել է «Գորիս» քրեակատարողական հիմնարկ, որից հեարո 2021թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 21:58 րուպեին, նույն հիմնարկի կալանավոր Հրայա Կարենի Բաղայանը զանգահարել է նույն քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Դավիթ Մեերի Անանյանին, հայրնել, որ ՔԿՀ կարանրինային բաժանմունք է րեդափոխվել մի անձ, որից հեարո գրույց է ծավալվել այդ անձի «բարոյագուրկ» վարքագծի գործով ցուցմունք րալու մասին: Հրայա Բաղայանի և Դավիթ Անանյանի հեռախոսագրույցից, մասնավորապես դրանում քրեակատարողական հիմնարկ րեդափոխված անձի ցուցմունքի իսար համաոոր ներկայացումից ակնհայտորեն պարզ է, որ խոսքը վերաբերում է Նվեր Մկրրչյանին: Խոսակցության ընթացքում Հրայա Բաղայանը Դավիթ Անանյանը հայրնել է, որ այդ մասին րեդեկացնում է, որպեսզի վերջինս սաի թե ինչ արլի: Խոսակցությունն ավարտվում է, երբ Դավիթ Անանյանը նշում է, որ հեռախոսով խոսել պեար չէ: Այնուհեարև, 2021թ. դեկտեմբերի 10-ին՝ ժամը 18:26-ին դատապարտյալ Դավիթ Անանյանին է զանգահարել «Գորիս» ՔԿՀ 8-րդ խցի կալանավոր Կարեն Ներսիսյանը և հայրնել, որ 4 օր կարանրինում գրնվելուց հեարո իրենց խուց են րեդափոխել քաջարանցի Նվերին, որից հեարո Դավիթ Անանյանը հայրնել է, որ վերջինս քաղաքապեարերի գործով է և հարցրել, թե Կարեն Ներսիսյանից բացի ովքեր են գրնվում նույն խցում: Պարզելով, որ թիվ 8 խցում է գրնվում նաև Մուրո անունով անձը՝ Մուրիկ Գագիլի Գերգյանը, Դավիթ Անանյանը Կարեն Ներսիսյանից պահանջել է հեռախոսը փոխանցել նրան և վերջինիս հեար այլ բնույթի խոսակցությունից հեարո հայրնել, որ նրանց մուր մարդ են րեդափոխել և պահանջել ոչինչ չձեռնարկել՝ մինչև ինքը չասի, թե ինչ և ինչպես պեար է անել:

Բացի այդ, «Դրավարան էլ էմ» փասարքանական գրասենյակի փասարքան Ներեսա Խաչարրյանը նուրթերի նախապարտարանն ընթացքում բացարտություն, իսկ հարուցված գործով որպես վկա ցուցմունք է րվել այն

մասին, որ Նվեր Մկրտչյանն իր պաշտպան Յուրա Ավայանի հետ ծանոթացել և վերջինիս օգնությանն է դիմել իր միջոցով: Հիշում է, որ Յուրա Ավայանի կողմից նրա պաշտպանությունն արանձնելուց հետո՝ 2021թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին Երևան քաղաքի Բյուզանդի 1 շենք 49 փարսաք հասցեում գրավող իրենց գրասենյակ է գնացել Նվեր Մկրտչյանը, խուճապահար մտրեցել իրեն և ասել, որ ինքը Յուրայի հետ խոսի, որպեսզի վերջինս դատարանն նիստում հայտարարի, որ քրեական գործով հանցագործության մասին հաղորդումն ինքը՝ Նվերը, չի գրել: Իր հարցին, թե ինչու է նման բան ինդրում, Նվեր Մկրտչյանը պարսպախանել է, որ Քաջարան քաղաքում խոսակցություններ են շրջանառվում, որ Մանվել Փարամազյանն իր պարճատով է կալանավորվել: Ինքը պարզաբանել է, որ եթե հանցագործության մասին հաղորդումն ինքն է արդարաբե, ապա Յուրան նման բան չի կարող հայտարարել, որից հետո Նվեր Մկրտչյանը հայրնել է, որ իրեն «քսիվներ» են հասնում՝ ապառնալով իրեն և իր ընտանիքի անդամներին, ուստի վահեներում է և այդ պարճատով չի ցանկանում ներկայանալ դատարանն նիստերին:

2021 թվականի դեկտեմբերի 17-ի դատարանն նիստում որպես խախանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելուց հետո Նվեր Մկրտչյանը զանգահարել է իրեն և պարզելով, որ Գորիս քաղաքում է, ինդրել է հանդիպել: Հանդիպման ընթացքում իր այն հարցին, թե ինչու է դատարանն նիստում միացել Մանվել Փարամազյանին գրավով կալանքից ազատելու միջնորդությանը, Նվեր Մկրտչյանը պարսպախանել է, որ դա ուրիշ պարմություն է: (...):

Վերը նշված բովանդակության իր ցուցմունքները պնդել է նաև Նվեր Մկրտչյանին ստերես:

(...) Բորիս Հրանտի Բահշիյանին վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանր հանցագործություն, որի համար որպես պարիժ նախատեսված է մինչև 8 փարի ժամկետով ազատագրվում և որն իր բնույթով կապված է արդարադատության պարշած կազմակերպման՝ արդար դատաքնության իրավունքի ակնհայտ խախարման հետ և դրսևորվել է անձին ակնհայտ ապօրինի կալանավորելով, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Վերը ներկայացված փաստերը՝ այն, որ Նվեր Համբարճումի Մկրտչյանը դատավոր Բորիս Բահշիյանի կողմից ստերևույթ ակնհայտ ապօրինի կալանավորվել է, որից հետո «Գորիս» քրեակարարողական հիմնարկում գնվելու ընթացքում ստերևույթ կազմակերպված խնթի կողմից նրան հարկադրվել է հրաժարվել ամբարարանյալ Մանվել Փարամազյանի դեմ ցուցմունք փալուց, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի դատարանն նիստում առանց որևէ հանգանմանքի փոփոխության նույն դատավորի որոշմամբ վերջինս ազատ է արձակվել կալանքից, այնուհետև ապացույցների հետազոտման հաջորդականություն սահմանելուց հետո ներկայացված՝ Մանվել Փարամազյանի նկարմամբ ընտրված խախանման միջոց կալանավորումը փոփոխելու մասին միջնորդությունը քննելու համար դատավոր Բորիս Բահշիյանի կողմից ապացույցների հետազոտման հաջորդականությունը փոփոխվել է բացառապես Նվեր Մկրտչյանի հարցաքնության համար, որի

ժամանակ վերջինս ոչ միայն հրաժարվել է ցուցմունք տալուց, հարցերին պարասխանելուց, ավելին՝ պարասխանել է միայն իր նկարմամբ ազդեցություն գործարդելու մասին հարցին և հերքել այդ փաստն այն դեպքում, երբ նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել հակառակի մասին և իր նկարմամբ գործարդված ապտնայիքի մասին հայտնել այլ անձանց, այլ նաև միացել ներկայացված միջնորդությանը, հիմնավոր կասկած են առաջ քաշում նաև այն մասին, որ վերոնշյալ գործողությունները եղել են փոխկապակցված, նախապես պլանավորված և ուղղված են եղել հենց ամբաստանյալ Մանվել Փարամազյանի համար բարենպաստ հետևանքներ առաջացնելուն: Այդ մրահողությունն ավելի է հիմնավորվում նաև նրանով, որ Նվեր Մկրտչյանին կալանավորելու մասին ակնհայտ ապօրինի որոշումը դարավոր Բորիս Բախշյանը պարճառարանել է իրականությանը չհամապարասխանող այլ փաստերի շարքում նրանով, որ գործով ամբաստանյալ Մանվել Փարամազյանը գրնվում է արգելանքի տակ և դարական նիարը չի կայացել հենց Նվեր Մկրտչյանի բացակայության պարճառով այն դեպքում, երբ գործով բացակայել են նաև դարավարության այլ մասնակիցներ, ում ներկայությունը դարական նիարը շարունակելու համար պարտադիր էր: Այսինքն՝ դարավորը Նվեր Մկրտչյանի բացակայության հետևանքները կապել է հենց նրա հետ, որ Մանվել Փարամազյանը շարունակում է գրնվել անագարության մեջ:

Բացի այդ, Բորիս Բախշյանը հանդիսանում է պաշտոնարար անձ՝ իշխանության ներկայացուցիչ, գրադեցում է ինքնավար պաշտոն, նրա դեկավարությանը են աշխատում հայեցողական և այլ հանրային պաշտոն գրադեցող և դարավորի լիազորությունների իրականացմանն օճանդակող գործունեություն իրականացող անձինք, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ կարարված հանցագործությունների մասին:

Նկարի ունենալով, որ գործի նախաքննությունը գրնվում է դեռ խիար սկզբնական փուլում, երբ դեռևս հարցաքննված չեն վերը նշված հանգամանքների և դրանց փոխկապակցության, նախնական պլանավորվածության մասին վկայող հնարավոր տեղեկություններ ունեցող անձինք և հաշվի առնելով Բորիս Բախշյանի, որպես իշխանության ներկայացուցի դիրքը, ներկայացված փաստերը հիմնավոր կասկած են հարուցում այն մասին, որ Բորիս Բախշյանն ազարության մեջ գրնվելով, կարող է խոչընդորել մինչդարական վարությունը քրեական գործի քննությանը դեռևս չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործարդելու ճանապարհով: Վարույթի ներկա՝ սկզբնական փուլում հիմնավոր է կասկածը նաև այն մասին, որ Բորիս Բախշյանն ազարության մեջ գրնվելով կարող է խոչընդորել գործի քննությանը նաև իր տրամադրության տակ գրնվող գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով: Նույն փաստերը հավասարապես վկայում են նաև, որ առկա է նաև հիմնավոր կասկած ազարության մեջ մնալու դեպքում Բորիս Բախշյանի կողմից քրեական օրենագրքով չթույլարված՝ գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթերը ոչնչացնելու հետ կապված նոր արարք կարարելու կապակցությամբ:

Եվ վերջապես, թեև վերագրվող արարքի ծանրության աստիճանն ինքնին հիմք չէ կալանավորման հիմքերն առկա համարելու համար, սակայն էական նշանակություն ունի դրանք գնահատելիս, ինչը Տիգրան Պետրոսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման համարեքսպոնտ՝ գործի վերը նշված հանգամանքներն ու դրանցից բխող ռիսկերը համակցության մեջ գնահատելիս, թույլ է տալիս պնդել, որ առկա է նաև հիմնավոր կասկած, որ ազարության մեջ մնալու դեպքում Բորիս Բախշյանը կթաքնվի քննությունից: (...)»³:

10. Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Դատարանն արձանագրում է, որ սույն միջնորդությանը կից ներկայացվել են Բարձրագույն դատական խորհրդի 2022թ. հունվարի 31-ի թիվ ԲԴԽ-11-Ո-Բ-1 որոշումը՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սյունիքի մարզի առաջին արջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշյանի նկարմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու հարցի վերաբերյալ և Բարձրագույն դատական խորհրդի 2022թ. հունվարի 31-ի թիվ ԲԴԽ-11-Ո-Բ-2 որոշումը՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սյունիքի մարզի առաջին արջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշյանին ազարությունից զրկելու համաձայնություն տալու հարցի վերաբերյալ:

(...) Դատարանն արձանագրում է, որ սույն միջնորդությամբ հաղթահարման ենթակա դատավորի անձեռնմխելիության հարցը լուծված է՝ համաձայն Բարձրագույն դատական խորհրդի 2022թ. հունվարի 31-ի թիվ ԲԴԽ-11-Ո-Բ-1 և ԲԴԽ-11-Ո-Բ-2 որոշումների:

(...) Ներկայացված նյութերն իրենց համակցության մեջ առերևույթ վկայում են հետևյալի մասին:

Թիվ ՄԴ3/0087/01/21 քրեական գործով 2021թ. դեկտեմբերի 3-ին ունեցած դատական նիստին չեն ներկայացել ամբաստանյալներ Հայկ Եղիազարյանը, Նվեր Մկրտչյանը: Ամբաստանյալ Հայկ Եղիազարյանի բացակայությունը դատավոր Բորիս Բախշյանը համարել է հարգելի, միևնույն ժամանակ, իր նախաձեռնությամբ, քննարկման առարկա է դարձրել ամբաստանյալ Նվեր Մկրտչյանի նկարմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու մասին պորտագրությունը փոփոխելու հարցը: Լսելով կողմերի կարծիքներն, ի թիվս այլնի, այն մասին, որ բացառիկ խափանման միջոցի կիրառման համար անհրաժեշտ պայմանները բացակայում են, նշված հարցի քննարկումը Նվեր Մկրտչյանի բացակայության պայմաններում խախտում է վերջինիս պաշտպանության իրավունքը, ինչպես նաև, լսելով մեղադրող կողմի դիրքորոշումն առ այն, որ բացառիկ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է, որոշում է կայացրել Նվեր Մկրտչյանի նկարմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու պորտագրությունը փոփոխելու և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-28:

Դատարանն արձանագրում է, որ Նվեր Մկրտչյանի նկարմանը կալանավորումը որպես խախանման միջոց կիրառելու մասին որոշումն ի կատար ածելուց հետո, ըստ ներկայացված նյութերի, առկա է ողջամիտ ենթադրություն առ այն, որ վերջինիս նկարմանը առերևույթ կազմակերպված խմբի կողմից դրսևորվել է սպորինի ազդեցություն, ինչի հետևանքով նա հրաժարվել է ցուցմունք րալուց:

Այնուհետև՝ ըստ ներկայացված նյութերի՝ 2021թ. դեկտեմբերի 17-ին նույն գործով րեղի ունեցած դատական նիստի ընթացքում դատավոր Բ.Բախշյանը, լսելով կողմերին, որոշում է կայացրել Նվեր Մկրտչյանի նկարմանը որպես խախանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու և որպես խախանման միջոց չհետևանալու մասին արոքագրություն և գրավ կիրառելու մասին:

Նույն դատական նիստում դատարանը որոշել է սպացուցների հետազոտման հաջորդականությունը՝ սահմանելով, որ ամբաստանյալների հարցաքննությունը պետք է կատարվի մյուս բոլոր սպացուցները հետազոտելուց հետո: Այնուհետև, ամբաստանյալ Մանվել Փարամազյանի նկարմանը որպես խախանման միջոց կիրառված կալանավորումը փոփոխելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը քննարկելիս, սեփական նախաձեռնությամբ, քննարկման առարկա է դարձրել սպացուցների հաջորդականությունը փոփոխելու և ամբաստանյալ Նվեր Մկրտչյանին հարցաքննելու հարցը, որին մեղադրողը և Նվեր Մկրտչյանի պաշտպանն առարկել են, իսկ Նվեր Մկրտչյանը հայրնել է, որ դրա դեմ չի առարկում և պարրաստ է ցուցմունք րալ: Այնուհետև դատավոր Բորիս Բախշյանը հետաձգել է ամբաստանյալ Մանվել Փարամազյանի և Արմեն Անդրեասյանի նկարմանը որպես խախանման միջոց կիրառված կալանավորումը փոփոխելու վերաբերյալ պաշտպանի միջնորդության քննարկումը, փոփոխել է սպացուցների հետազոտման հաջորդականությունը և անցել է Նվեր Մկրտչյանի հարցաքննությանը: Նվեր Մկրտչյանը հրաժարվել է ցուցմունք րալուց և հարցերին պարասխանելուց և նշել է, որ իր նկարմանը ազդեցություն չի գործադրվել և չի գործադրվի և միացել է Մանվել Փարամազյանի և Արմեն Անդրեասյանի նկարմանը որպես խախանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու վերաբերյալ միջնորդությանը:

(...)

Այսպիսով, Նվեր Մկրտչյանին իր նախաձեռնությամբ կալանավորելը, հաջորդ դատական նիստին կալանավորում խախանման միջոց փոխելը, Մանվել Փարամազյանի և Արմեն Անդրեասյանի նկարմանը ընտրված կալանավորման միջնորդության ժամանակ Նվեր Մկրտչյանի կողմից ցուցմունք րալու պարրաստականության մասին րեղեկանալը, սեփական նախաձեռնությամբ սպացուցների հետազոտման հաջորդականություն փոփոխելը, Նվեր Մկրտչյանի՝ ցուցմունք րալուց հրաժարվելուց հետո Մանվել Փարամազյանի և Արմեն Անդրեասյանի նկարմանը ընտրված խախանման միջոց փոփոխելն այն պայմաններում, երբ Նվեր Մկրտչյանի նկարմանը կալանքը կրելու ընթացքում առերևույթ կիրառվել է սպորինի ազդեցություն, իրենց համակցության մեջ անաստ դիրորդի մոք օբյեկտիվ, արժանահավատ և հիմնավոր կասկած

կարող է առաջացնել առ այն, որ մեղադրյալ Բ.Բախշիյանն առերևույթ իր լիազորություններն ուղղակի դիտավորությամբ ենթադրաբար օգտագործել է անձին ազատությունից զրկելու նպատակով, որի արդյունքում ամբաստանյալ Նվեր Մկրտչյանը գրավել է անազատության մեջ, որի ընթացքում առերևույթ կազմակերպված խմբի կողմից վերջինիս հարկադրվել է հրաժարվել գործով ցուցմունք փախուց, հետևաբար սույն գործի քննության շրջանակներում հիմնավոր կասկածի նկատարակյալ շեղը հաղթահարված է:

(...)

Անդրադառնալով կայանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման հիմքերին, Դատարանն արձանագրում է, որ սույն միջնորդության շրջանակներում Քննիչի կողմից, ըստ էության, ներկայացվել է խափանման միջոց կիրառելու երեք հիմք՝

1. թաքնվել վարույթ իրականացնող մարմնից,

2. խոչընդոտել մինչդարական վարույթում գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով,

3. կատարել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք:

Անդրադառնալով Քննիչի կողմից ներկայացված առաջին հիմքին՝ Դատարանն արձանագրում է, որ առնվազն սույն թվականի հունվարի 31-ից մեղադրյալը տեղյակ է եղել իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման մասին, սակայն սույն միջնորդության մի քանի օր փակառի դատարանի քննության ժամանակ մասնակցել է բոլոր նիստերին, հետևաբար, Դատարանի գնահատմամբ՝ վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու Քննիչի ենթադրությունն անհիմն է և բացակայում է:

Ինչ վերաբերում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ենթադրությանը, Դատարանն արձանագրում է հետևյալը:

Բորիս Բախշիյանը 2020 թվականից զբաղեցրել է Սյունիքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, իր ներկայացրած փոխյաների համաձայն՝ երկար տարիներ զբաղեցնում է տարբեր պաշտոններ ՀՀ իրավապահ համակարգում, նրա ղեկավարությամբ են աշխատում հայեցողական և այլ հանրային պաշտոն զբաղեցնող և դատավորի լիազորությունների իրականացմանն օժանդակող գործունեություն իրականացնող անձինք, ովքեր կարող են փորձառություններ ունենալ կատարված ենթադրյալ հանցագործության մասին: Վերոնշյալը ենթադրում է հսկայական ազդեցություն և լծակներ ինչպես պետական համակարգի տարբեր օղակներում պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի ու շրջանակների նկատմամբ: Բ.Բախշիյանին մեղադրվում է իր ծառայողական գործունեության ոլորտում ենթադրաբար կատարված հանցավոր արարք (ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդված) և Դատարանը գրնում է, որ սույն գործի հետ հնարավոր առնչություն ունեցող անձինք մեղադրյալից ենթադրաբար

գրնվել են կամ գրնվում են ծառայողական կամ այլ բնույթի կախվածության և ենթակայության հարաբերությունների մեջ: Դապարանն արձանագրում է, որ Բ.Բահշիյանի՝ երկար փարիներ զբաղեցրած պաշտոնը, ունեցած դիրքն ու հեղինակությունը, հսկայական ազդեցությունը, կապերն ու լծակները, ինչպես նաև նրան մեղաագրվող հանցագործության բնույթը վկայում են դապարության փոխյալ փոխում գործի քննությանը միջամրելու, դապարության մասնակիցների նկարմամբ հնարավոր անօրինական ազդեցություն դրսևորելու ռիսկի առկայության մասին:

(...)

Անդրադատնայով Քննիչի ներկայացրած երրորդ հիմքին՝ քրեական օրենսգրքով չթույլարված արարք կարարելուն, սպա Դապարանն արձանագրում է, որ Քննիչի ենթադրությունը բիւեցվում է խախանման միջոց կիրառելու՝ գործի քննությանը խոչընդորելու հիմքից: Դապարանն արձանագրում է, որ նշված հիմքերը մեկը մյուսից բիւեցնելը չի բիւում ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման փրամաքանությունից: Հերևարար Քննիչի նշված դարողությունը Դապարանը գնահարում է չիմնավորված, իսկ խախանման միջոց կիրառելու փոխյալ հիմքը՝ բացակայող: (...)»⁴:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշման համաձայն՝ «(...) Անդրադատնայով բողոքարերների այն փասարակին և պահանջին, համաձայն որի (...) Բորիս Բահշիյանի վերաբերյալ գործը նախագահող դարավոր Դավիթ Արդամանյանին հանձնելիս չեն պահպանվել օրենքով սահմանված կարգերը, այդ թվում՝ գործերի բաշխանն և դարավորների պարահական բնրրության սկզբունքը (...), Բորիս Բահշիյանի վերաբերյալ գործը քննող դարարանը՝ դարավոր Դավիթ Արդամանյանի նախագահությամբ, չի հանդիսանում «օրենքի հիման վրա արեղծված դարարան», (...) Վերաքննիչ դարարանը հարկ է համարում նշել, որ գործերի բաշխանն կարգի խախարման վերաբերյալ որևէ փասարական փոխյալներ չեն ներկայացվել, գործերի բաշխանն Համակարգչային ծրագրի բացակայության պարագայում՝ գործերը դարավորների միջև օրենքով սահմանված կարգով՝ հավասարաչափ բաշխում է դարարանի նախագահը, իսկ վերջինիս կողմից առերևույթ խախարում կարարելու վերաբերյալ որևէ փասարական փոխյալ չի ներկայացվել: Նշված փրամաքանությամբ՝ պերք է ինքնարացարկ հայրնել ՀՀ-ում գործող յուրաքանչյուր դարավորի, ինչն իուսցիոնալ, անհիմն մուրեցում է: Դարավորի պարարականությունների մեջ չի մրնում դարարանի նախագահի կողմից գործերի բաշխանն ընթացակարգի «վերահսկման» գործառույթը, իսկ վերջինիս կողմից առերևույթ խախարումներ կամ հակաիրավական արարք կարարելու դեպքում՝ արարքին պերք է փրվի համապարահան իրավական գնահարական: Այս համարեքարում՝ պաշտպանի հերևությունները և եգրահանգումները բիւում են նրա սուբյեկտիվ ընկալումներից, անհիմն են և անատարկայական: Աուսչին սարյանի ընդհանուր իրավասության դարարանի դարավոր Դ.Արդամանյանի ինքնարացարկի որևէ հիմք և դրա պարշած հիմնավորում ևս ներկայացված չէ (...):

⁴ Տեն կույթեր, հատոր 6, թերթեր 60-77:

Պաշտպանների կողմից բերված հաջորդ փաստարկը վերաբերում է նրան, որ (...) սույն չէ դատավոր Բորիս Բախշիյանին ազատությունից զրկելու՝ ԲԴԽ համաձայնությունը տալու վերաբերյալ օրինական որոշում:

(...) [Հարկ է նշել, որ որպես դատարան հանդիսացող Բարձրագույն դատական խորհրդի որոշումների օրինականության ստուգման գործառնությունը առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը չունի, իսկ պաշտպանների փաստարկներն առ այն, որ դատարանը պարտավոր էր անդրադարձնալ այդ որոշման առերևույթ ընթացակարգային խախտումներին, անհիմն են:

(...)

Բողոքարկների փաստարկը, համաձայն որի (...) անզգոշությամբ ծանր վնաս պարճատվելու վերաբերյալ մեղադրանքի կողմի որակումը չի համապատասխանում դա հիմնավորելու նպատակով դատարան ներկայացված նյութերին, ինչպես նաև Բորիս Բախշիյանին վերագրվող արարքի փաստական կողմն առերևույթ վկայում է արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության մասին, որն իր բնույթով միջին ծանրության հանցագործություն է և այդ դեպքում մեղադրանքի կողմը չէր կարող Բորիս Բախշիյանին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան (...) ևս անհիմն է: Նախ՝ միջին ծանրության առերևույթ հանցանք կատարելու պարագայում՝ համապատասխան պայմանների և հիմքերի առկայության դեպքում, որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու որևէ օրենսդրական արգելք կամ սահմանափակում սույն չէ: Ինչ վերաբերում է արարքին տրված որակմանը, սպա այս առումով՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ (...) մինչդեռ փաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված ենթադրյալ հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր:

(...) [Հարկ է փաստել, որ ներկայացված նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս անաչառ դիտորդին եզրակացնելու, որ Բորիս Բախշիյանը հնարավոր է, որ կատարած լինի իրեն վերագրվող արարքները:

Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ կասկածը հիմնավորող փաստերը պարբերաբար չէ, որպեսզի բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը հիմնավորելու համար:

(...)

Անդրադարձնալով բողոքարկի կողմից նշված կալանավորման հիմքերի բացակայության հանգամանքին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել հետևյալը. (...) օրենսդիրը խափանման միջոցի հիմքերի առկայության

մասին խոսելիս օգրագործում է «կարող է», «ենթադրելու, որ ... կարող է» բառերը և կապակցությունները և դրանով իսկ ընդգծել, որ խախտման միջոց ընարելու մասին որոշում կայացնելիս Օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված գործողությունները ոչ թե պետք է արդեն տեղի ունեցած լինեն, այլ դիակ կա կամ հավանականություն կա, որ եթե խախտման միջոց չկիրառվի, սպա դրանք տեղի կունենան:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Բ.Բախշիյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով: Այսինքն՝ վերջինս մեղադրվում է արդարադատության դեմ ուղղված ծանր հանցագործություն կատարելու համար, որի պարագայում որպես պարիժ նախատեսվում է ազատագրվում՝ երեքից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: (...) Բորիս Բախշիյանին մեղաագրվող ենթադրյալ հանցանքի ծանրությունը և հետևարար նակ, ակնկալվող պարիժի հատությունը, ինչպես նակ առերևույթ հանցանքի հանրային վրանգավորության բնույթն ու սարիճանը, կատարման եղանակը, առաջացած հանրորեն վրանգավոր հետևանքները հանդիսանում են կարևոր տարրեր և գործի նյութերից բիող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս Վերաքննիչ դատարանին հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության վերաբերյալ:

(...) [Անդրադատնալով կալանավորման՝ որպես խախտման միջոցի կիրառման հիմքերին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին տայանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշված՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործարելու եղանակով մինչդարական վարություն գործի քննությանը խոչընդորելու հավանականությունը բարձր է:

Բորիս Բախշիյանը 2020 թվականից զբաղեցրել է Սյունիքի մարզի առաջին տայանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, նրա դեկավարությամբ աշխատում են անձիք, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ կատարված ենթադրյալ հանցագործության մասին: Բ.Բախշիյանը՝ իր զբաղեցրած պաշտոնից բիող հեղինակությունը, կապերը և լծակները կարող է օգրագործել և ազդեցություն գործել քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ՝ իր օգրին բարենպաստ ցուցմունքներ տալու, նրանց ցուցմունքները ներդաշնակելու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համարեքարում: Հարկ է նշել նակ, որ դատավարության սկզբնական փուլում՝ երբ չեն պարզվել առերևույթ հանցավոր արարքի կատարման շարժառիթներն ու նպատակները, դրան հավանական ներգրավված անձանց շրջանակը՝ Բ.Բախշիյանի կողմից գործի քննությանը խոչընդորելու և դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործարելու հավանականության դիակը բավականաչափ բարձր

է և այն չի կարող չեզոքացվել ազատության սահմանափակման հետ չկապված խափանման միջոցների կիրառմամբ:

Ներկայացված ապացույցների և փաստական փյախյների հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեծ է հավանականությունն առ այն, որ Բ.Բախշիյանը կարող է խոչընդոտել մինչդարական վարությամբ գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անտրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

(...)

Հաշվի առնելով մեղադրյալ Բորիս Բախշիյանի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու բարձր հավանականության մասին վկայող սույն որոշման մեջ շարադրված հանգամանքները Վերաքննիչ դատարանը գրնում է, որ փյախյ դեպքում կալանավորումից բացի այլ խափանման միջոցների կիրառմամբ հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին (...)⁵:

11.1. 2022 թվականի հունիսի 13-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Բորիս Հրանտի Բախշիյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողվել է անփոփոխ: Նույն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում Բ.Բախշիյանն արդարացվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է⁶:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար են Բորիս Բախշիյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի, ինչպես նաև կալանավորման հիմքի առկայությունը հաստատելու համար:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 8, թերթեր 53-84:

⁶ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՍԴԴ/0082/01/22 քրեական գործը:

կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...) գ) անձի օրինական կայանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»

14. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ *Վահրամ Գևորգյանի*⁷, *Հարություն Խաչատրյանի*⁸ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ⁹:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝
– հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴՉ/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱԵԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից¹⁰, ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Մինևույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել¹¹, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս, վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմը առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴԿ/0003/11/08 որոշումը:

¹¹ Այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խուչարյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06:

հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունն ակնհայտորեն վկայում է զենքի գործադրման բացակայության, բայց միևնույն ժամանակ առերևույթ փաստում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին)¹²:

14.1. Կալանավորման հիմքերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով¹³:

14.2. Ընդ որում, Վճռաբեկ դատարանն Արամ Ճուղուրյանի վերաբերյալ որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգործելով, կարող է դրսևորել ոչ պարզաձ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ

¹² Տնն Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Եղիազարյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 15:

¹³ Տնն, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կայանավորման կիրառման հիմքում բոլոր ղեկավարում պետք է դրվեն որոշ փաստական փոխանակումներ»¹⁴:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– նախաքննության մարմինը Բորիս Բախշիյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով¹⁵,

– նախաքննության մարմինը մեղադրյալ Բ.Բախշիյանի նկատմամբ կայանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացրել, որն Առաջին աստանի դատարանի որոշմամբ բավարարվել է: Առաջին աստանի դատարանը գտել է, որ սույն գործի հետ հնարավոր առնչություն ունեցող անձինք մեղադրյալից ենթադրաբար գտնվել են կամ գտնվում են ծառայողական կամ այլ բնույթի կախվածության և ենթակայության հարաբերությունների մեջ: Դատարանն արձանագրել է, որ Բ.Բախշիյանի՝ երկար տարիներ զբաղեցրած պաշտոնը, ունեցած դիրքն ու հեղինակությունը, հսկայական ազդեցությունը, կապերն ու լծակները, ինչպես նաև նրան մեղսագրվող հանցագործության բնույթը, վկայում են դատավարության տվյալ փուլում գործի քննությանը միջամտելու, դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր անօրինական ազդեցություն դրսևորելու ռիսկի առկայության մասին¹⁶:

– Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված ենթադրյալ հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ներկայացված նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս անաչառ դիտորդին եզրակացնելու, որ Բ.Բախշիյանը հնարավոր է, որ կատարած լինի իրեն վերագրվող արարքը: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է, որ կասկածը հիմնավորող փաստերը պարտադիր չէ, որպեսզի բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը հիմնավորելու համար: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը բարձր է: Բ.Բախշիյանը 2020 թվականից զբաղեցրել է Սյունիքի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, նրա ղեկավարությամբ աշխատում են անձինք, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ կատարված ենթադրյալ հանցագործության մասին: Բ.Բախշիյանը՝ իր զբաղեցրած պաշտոնից բխող

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճողոթյանի* գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 2.2-րդ և 9-րդ կետերը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

հեղինակությունը, կապերն ու լծակները կարող է օգտագործել և ազդեցություն գործել քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ՝ իր օգտին բարենպաստ ցուցմունքներ տալու, նրանց ցուցմունքները ներդաշնակելու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համատեքստում: Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ դատավարության սկզբնական փուլում՝ երբ չեն պարզվել առերևույթ հանցավոր արարքի կատարման շարժառիթներն ու նպատակները, դրան հավանական ներգրավված անձանց շրջանակը՝ Բ.Բախշիյանի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության ռիսկը բավականաչափ բարձր է և այն չի կարող չեզոքացվել ազատության սահմանափակման հետ չկապված խափանման միջոցների կիրառմամբ¹⁷:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.2-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Բ.Բախշիյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, չեն արձանագրել մեկ առանցքային հանգամանք:

Այսպես. ներկայացված միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը որևէ փաստական տվյալ չեն պարունակում Բ.Բախշիյանին ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրված արարքի որակյալ հատկանիշը՝ ծանր հետևանքք, առերևույթ առկա լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված:

16.1. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավասու մարմինը սույն գործով դատարանին ներկայացրել է համոզիչ փաստեր և տեղեկություններ առ այն, որ Բ.Բախշիյանը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու մեջ, այսինքն մի արարքի ենթադրյալ կատարման մեջ, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով: Սակայն, ենթադրյալ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով որակելու դեպքում քրեական հետապնդման մարմինը պետք է ներկայացներ նաև արարքի որակյալ հատկանիշի՝ անզգուշությամբ

¹⁷ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

ծանր հետևանքներ առաջացնելու, առկայության վերաբերյալ կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, մինչդեռ այդպիսիք չեն ներկայացվել: Այս համատեքստում անդրադառնալով նախաքննության մարմնի այն պնդումներին, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում, առերևույթ կազմակերպված խմբի կողմից, Նվեր Մկրտչյանին հարկադրվել է հրաժարվել ամբաստանյալ Մանվել Փարամազյանի դեմ ցուցմունք տալուց, սպա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դա հիմնավորող տվյալներ նախաքննության մարմնի ներկայացրած նյութերում առկա չեն: Մասնավորապես. «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կալանավորներ Դավիթ Անանյանի, Հրաչյա Բադալյանի, Կարեն Ներսիսյանի և Սուրիկ Գևորգյանի հետախուսային խոսակցություններում չկան փաստական տվյալներ առ այն, որ կազմակերպված խմբի կողմից Նվեր Մկրտչյանին հարկադրվել է հրաժարվել ամբաստանյալ Մանվել Փարամազյանի դեմ ցուցմունք տալուց: Իսկ ինչ վերաբերում է վկա Ներսես Խաչատրյանի ցուցմունքին, սպա այն վերաբերում է Նվեր Մկրտչյանին կալանավորելուն նախորդող ժամանակաշրջանին և նույնպես որևէ փաստական տվյալ՝ կալանավայրում ենթադրաբար տեղի ունեցած իրադարձությունների մասին, չի պարունակում:

16.2. Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ թե՛ Առաջին ատյանի դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը փաստացի չեն արձանագրել, որ ներկայացված միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը որևէ փաստական տվյալ չեն պարունակում Բ.Բախշչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրված արարքի որակյալ հատկանիշը՝ ծանր հետևանքը, առերևույթ առկա լինելու մասին:

16.3. Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածը հիմնավորող տվյալներ վարույթն իրականացնող մարմինը ներկայացրել է դատարան¹⁸, և այդ առումով Առաջին ատյանի դատարանի որոշումը, ինչպես նաև այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի դատական ակտը հիմնավորված են:

17. Անդրադառնալով բողոքաբերների կողմից նշված՝ կալանավորման հիմքերի բացակայության հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանն հիմնավոր է համարում ստորադաս դատարանների այն պատճառաբանությունները, որ Բ.Բախշչյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը բարձր է: Այս առումով ստորադաս դատարաններն իրավացիորեն փաստել են, որ.

– Բ.Բախշչյանը 2020 թվականից զբաղեցրել է Մյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, նրա ղեկավարությամբ աշխատում են անձիք, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ կատարված ենթադրյալ հանցագործության մասին:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

- Բ.Բախշիյանը՝ իր գրադեցրած պաշտոնից բխող հեղինակությունը, կապերը և լծակները կարող է օգտագործել և ազդեցություն գործել քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ՝ իր օգտին բարենպաստ ցուցմունքներ տալու, նրանց ցուցմունքները ներդաշնակելու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համատեքստում:

- Դատավարության սկզբնական փուլում՝ երբ չեն պարզվել առերևույթ հանցավոր արարքի կատարման շարժառիթներն ու նպատակները, դրան հավանական ներգրավված անձանց շրջանակը՝ Բ.Բախշիյանի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության ռիսկը բավականաչափ բարձր է և այն չի կարող չեզոքացվել ազատության սահմանափակման հետ չկապված խափանման միջոցների կիրառմամբ:

18. Անդրադառնալով բողոքաբեր Ա.Սարգսյանի այն փաստարկին որ Բ.Բախշիյանի վերաբերյալ գործն Առաջին ատյանի դատարանի դատավորին հանձնելիս չեն պահպանվել գործերի բաշխման և դատավորների պատահական ընտրության սկզբունքը, ապա Վերաքննիչ դատարանն իրավացիորեն նշել է, որ գործերի բաշխման կարգի խախտման վերաբերյալ փաստական տվյալներ չեն ներկայացվել, գործերի բաշխման համակարգչային ծրագրի բացակայության պարագայում՝ գործերը դատավորների միջև օրենքով սահմանված կարգով՝ հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը, իսկ վերջինիս կողմից առերևույթ խախտում կատարելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ չի ներկայացվել:

19. Ինչ վերաբերում է բողոքաբեր Ե.Սարգսյանի այն փաստարկին, որ Բ.Բախշիյանին վերագրվող արարքի փաստական կողմն առերևույթ վկայում է արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մասին, որն իր բնույթով միջին ծանրության հանցագործություն է և այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը չէր կարող Բ.Բախշիյանին կալանավորելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան, ապա Վերաքննիչ դատարանն իրավացիորեն փաստել է, որ միջին ծանրության առերևույթ հանցանք կատարելու պարագայում՝ համապատասխան պայմանների և հիմքերի առկայության դեպքում, որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու որևէ օրենսդրական արգելք կամ սահմանափակում առկա չէ:

20. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Բ.Բախշիյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունները ևս հիմնավոր են:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ չեն տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք իրենց

ընտյթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են դատական ակտերը բեկանելու համար:

22. Ինչ վերաբերում է սույն որոշման 16.2-րդ կետում արձանագրված հանգամանքին, ապա դա հիմք է մեղադրյալի իրավունքը խախտված լինելու փաստն արձանագրելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել Բ.Բախշիյանի իրավունքի խախտման փաստը, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Բորիս Հրանտի Բախշիյանի իրավունքի խախտման փաստը:
3. Մեղադրյալ Բորիս Հրանտի Բախշիյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

60.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0039/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

10 հոկտեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունիսի 3-ի որոշման դեմ Կարո Հակոբի Եղևուկյանի պաշտպան Տ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործի դատական քննության ընթացքում՝ 2022 թվականի մայիսի 12-ի նիստում, արձանագրային որոշմամբ մերժել է ամբաստանյալ Կարո Հակոբի Եղևուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու մասին պաշտպան Տ.Հայրապետյանի միջնորդությունը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի հունիսի 3-ի որոշմամբ պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ բողոքարկվող դատական ակտը վերաքննիչ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Տ.Հայրապետյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի

սեպտեմբերի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ հիմնավորումներով.

4. Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 40-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածները, գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական օրենքի խախտում, որով գրկել է Կ.Եղնուկյանին իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից:

Բողոքաբերը, վերլուծության ենթարկելով իրավամեկնաբանման *expression unius* կանոնը, գտել է, որ սույն գործով սահմանահատումների արգելքը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Բացի այդ, ըստ բողոքաբերի, բողոքարկված դատական ակտը չի կարող բողոքարկվել դատավճռի հետ միասին, քանի որ դատավճիռը կարող է կայացվել մի քանի տարի անց, որի դեպքում սահմանահատումների արգելքի կապակցությամբ բողոքարկումը կլինի ոչ արդյունավետ:

5. Բողոքաբերը գտել է նաև, որ դատարանն անհիմն սահմանափակել է Կ.Եղնուկյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Մասնավորապես, 2019 թվականին Կ.Եղնուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելուց հետո, նոր որոշում չկայացնելու և դրա մասին չտեղեկացնելու պայմաններում, առանց անհրաժեշտության և պատճառաբանության կրկին կիրառել է արգելքը, այդպիսով թույլ տալով լիազորությունների չարաշահում և օրենքով չսխախտեսված լիազորության կիրառում:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 3-ի որոշումը և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության կամ բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և որոշում կայացնել Կ.Եղնուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու մասին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության փուլում քննարկելով ամբաստանյալ Կ.Եղնուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու մասին պաշտպան Տ.Հայրապետյանի միջնորդությունը, մերժել է այն, նշելով,

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

որ գործի քննության ներկա փուլում Դատարանը գտնում է, որ հնարավոր է Կ.Եղնուկյանը հետագա դատական նիստերին ներկայանալուց խուսափի, ուստի անհրաժեշտ է պահպանել սահմանահատումների արգելքը²:

8. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքը, նշել է. «(...) *Ինչպես հետևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի՝ վերը մեջբերված դրույթների ուսումնասիրությունից, դրանցով առաջին ասրյանի դատարանի վարույթում գրնվող քրեական գործով ամբասարանյալի սահմանահատումների նկարմամբ արգելքը վերացնելու միջնորդությունը վարույթն իրականացնող դատարանի կողմից մերժելու վերաբերյալ որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն նախարեալված չէ: Միևնույն ժամանակ, նշված հոդվածի 8-րդ կերի լույսի ներքո հարկ է նսն արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ դրույթով նույնպես նախարեալված չէ այդ որոշման ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքարկելու հնարավորություն: Ոսարի կիրառելով մեկնարանման expression unius կանոնը, որի համաձայն սպատիչ ցանկում որևէ րարր չներառելը պերք է մեկնարանել դրա բացառման իմաստով՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ առաջին ասրյանի դատարանի վարույթում գրնվող քրեական գործով ամբասարանյալի սահմանահատումների արգելքը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին այդ դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախարեառում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ (...)*»³:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից Կ.Եղնուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպան Տ.Հայրապետյանի կողմից բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը:

10. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 376.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ասրյանի դատարանների՝ գործն ըսր էության լուծող օրինական ուժի մեջ չմրած դատական ակրերը.

2) առաջին ասրյանի դատարանների՝ գործն ըսր էության լուծող օրինական ուժի մեջ մրած դատական ակրերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են րրվել նյութական կամ դատավարական

² Տն քրեական գործ, հավելված, թերթեր 8-9:

³ Տն քրեական գործ, հավելված, թերթեր 26-28:

իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ասյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ասյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ասյանի դատարանների՝ կայանքը որպես խախտման միջոց ընկերելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազատաման, բժշկական հասարակությունում անձանց տեղափոխման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման իրավաստությունը հասարակելու մասին որոշումները.

5) առաջին ասյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կասկակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կասկակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

11. Վճռաբեկ դատարանը, Արամ Արարյանի գործով կայացված որոշմամբ, վերլուծության ենթարկելով սույն որոշման նախորդ կետով մեջբերված քրեադատավարական նորմն արձանագրել է հետևյալը՝ «(․․) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես մեջբերված, այնպես էլ որևէ այլ հոդվածով դատական քննության փուլում կայացված՝ ստորագրություն չհեռանալու մասին խախտման միջոց ընկերելու, վերացնելու կամ այն վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ:

Կիրառելով մեկնաբանման *expression unius* կանոնը, որի համաձայն՝ սպառնիչ ցանկում որևէ փարթ չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատական քննության ընթացքում ստորագրություն չհեռանալու մասին խախտման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ասյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, գործի դատական քննության փուլում ստորագրություն չհեռանալու մասին խախտման միջոցի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը պայմանավորված է փյվյալ խախտման միջոցի՝ անձի իրավունքների նկատմամբ նվազ

միջամերության ասրիհանով, ինչպես նաև վերադաս դարական արյանի կողմից առաջին արյանի դարարանի քրեական գործի քննության քնականոն ընթացքին անհարկի չմիջամերելու անհրաժեշտությամբ:

(...) Ընդ որում հարկ է նկարել, որ վերոնշյալ դիրքորոշումը քիտում է նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի կարգավորումներից: Մասնավորապես, ՀՀ քրեական դարավարության նոր օրենսգրքի 352-րդ հոդվածը սահմանելով դարական վերանայման կառուցակարգերը և դրանցում ընդգրկված բողոքարկման ենթակա դարական ակրերի շրջանակը՝ դարական քննության փուլում բացակայելու արգելք խախտման միջոցի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորություն չի նախարեսում՝ այդպիսով պահպանելով վերոնշյալ որոշումների վերաքննիչ բողոքարկման առարկա չհանդիսանալու մոքեցումը (...)⁴:

12. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1690 որոշմամբ⁵, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Կարապետյանի* գործով⁶ արտահայտված իրավական դիրքորոշումները սույն դեպքում կիրառելի չեն, քանի որ դրանք վերաբերում են ստորագրություն չհեռանալու մասին խախտման միջոցն ընտրելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումը **մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության** առարկա դիտարկելու հնարավորությանը:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանը, դատական քննության ընթացքում, 2022 թվականի մայիսի 12-ի որոշմամբ մերժել է ամբաստանյալ Կ.Եղևուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու մասին պաշտպան Տ.Հայրապետյանի միջնորդությունը⁷:

– Վերաքննիչ դատարանը 2022 թվականի հունիսի 3-ին պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության⁸:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես ստորագրություն չհեռանալու մասին խախտման միջոցի վերաբերյալ կայացված որոշումը, այնպես էլ այդ խախտման միջոցի կիրառման հետևանքը հանդիսացող՝ սահմանահատումների արգելքի վերացման միջնորդությունը մերժելու մասին որոշումը դատական քննության փուլում չեն հանդիսանում վերաքննիչ բողոքարկման առարկա:

⁴ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Արարյանի* գործով 2023 թվականի օգոստոսի 25-ի թիվ ԵԳ/0040/01/21 որոշումը:

⁵ Տեն ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 30-ի թիվ ՄԴՈ-1690 որոշումը:

⁶ Տեն Վճռաբեկ դատարանի՝ *Լուսինե Կարապետյանի* գործով 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԳ-2/0009/11/19 որոշումը:

⁷ Տեն սույն որոշման 7-րդ կետը:

⁸ Տես սույն որոշման 8-րդ կետը:

Ուստի, Վերաքննիչ դատարանը, Կ.Եղնուկյանի սահմանահատումների արգելքը վերացնելու մասին պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով հանգել է իրավաչափ հետևության՝ կայացնելով հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ:

15. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Կ.Եղնուկյանի պաշտպան Տ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն իրավաչափ է:

16. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 5-րդ կետում մեջբերված փաստարկներին անդրադառնալու հնարավորությունից:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարո Հակոբի Եղնուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հունիսի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

61.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0203/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԻԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

10 նոյեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնում 2019 թվականի հոկտեմբերի 2-ին հարուցվել է թիվ 12871819 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, և նույն թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ալեքսանյանի որոշմամբ ընդունվել է վարույթ:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ թիվ 12871819 քրեական գործի վարույթը կարճվել է՝ Էմանուել Թումանյանի, Արմեն Կուզիկյանի և մյուսների նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ հանցակազմի, և ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ դիմողի բողոքի բացակայության հիմքերով:

1.2. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ա.Զիչոյանի՝ 2020 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ,

նախաքննության մարմնի վերոգրյալ որոշման դեմ դիմողներ Ա.Կուզիկյանի և Է.Թումանյանի ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի կողմից ներկայացված բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Նախաքննության մարմնի և դատախազի վերոգրյալ որոշումների դեմ դիմողների ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել դիմողներ Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի իրավունքների խախտումները:

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը բավարարվել է, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցվել է վերացնել դիմողների իրավունքների խախտումները:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ դատախազի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ալսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ՝ Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մայիսի 30-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանների դատական ակտերը օրինական և հիմնավոր չեն, դրանք կայացվել են քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, որն ազդել է գործի ելքի վրա:

6. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարաններն ուշադրություն չեն դարձրել քրեական գործ հարուցելու մասին որոշման բովանդակությանը, որտեղ արձանագրված է նաև, որ վիճաբանության ընթացքում Ռոման Տերբալյանը, Արթուր Հոսեփյնը, Էմանուել Թումանյանը և Արմեն Կուզիկյանը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ցավ: Բողոքաբերի պնդմամբ՝ վարույթն իրականացնող մարմինը քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ արձանագրել է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների, մասնավորապես՝ օբյեկտիվ կողմի առկայությունը, որով հստակ ընդգծել է քրեական գործի սահմանները ոչ միայն կոնկրետ արարքով (*in rem*), այլև անձանց շրջանակով (*in personam*), ինչն էլ նշանակում է, որ նկարագրված

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

դեպքի առթիվ նշված անձանց արարքներին իրավաբանական գնահատական տալու որևէ սահմանափակում չէր կարող լինել:

6.1. Բողոքաբերը փաստել է, որ քրեական գործի նախաքննությամբ չի հիմնավորվել վերը նշված անձանց գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը, սակայն հաստատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության հանգամանքը, և քանի որ վերը նշված բոլոր անձինք իրենց ցուցմունքներով և դիմումներով դիրքորոշում են հայտնել իրենց հարվածներ հասցնող անձանց նկատմամբ բողոք չունենալու մասին և համաձայնություն են տվել ոչ արդարացնող հիմքով իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ, որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով:

6.2. Անդրադառնալով Առաջին ատյանի ատարանի այն պնդմանը, որ Է.Թումանյանը և Ա.Կուզիկյանն իրենց դիրքորոշումները ենթադրաբար հայտնել են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի առնչությամբ, որը որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսում է նաև բռնություն գործադրելը, բողոքաբերն այն հիմնագուրկ է համարել՝ այն հիմնավորմամբ, որ նշված հոդվածով նախատեսված հանցակազմը դասվում է հանրային մեղադրանքի գործերի շարքին, որի պայմաններում դիրքորոշում պարզելու անհրաժեշտություն առկա չէր:

6.3. Մինևույն ժամանակ, ըստ բողոքաբերի, վարույթն իրականացնող մարմինը զրկված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական գործ հարուցելու հնարավորությունից, քանի որ առկա է եղել քրեական գործի վարույթը բացառող հանգամանք՝ դիմողների դիրքորոշումը բողոք չունենալու վերաբերյալ: Ավելին, բողոքաբերը փաստել է, որ անգամ բողոքի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չէր կարող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական գործ հարուցել, քանի որ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ են հանցագործության նոր դեպք և հանցավոր արարք կատարած նոր անձ:

7. Վերոգրյալից բացի, բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանների դատական ակտերը բավարար չափով պատճառաբանված չեն, դատական ակտերում տեղ գտած հետևությունները հիմնված չեն դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, ստորադաս դատարանները չեն պարզաբանել, թե ինչու են եկել նշված հետևության, և որ իրավանորմերով են ղեկավարվել նման որոշում կայացնելիս:

8. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումները՝ նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքերը.

9. Վկաներ Ռոման Տելբարյանը և Արթուր Հոսեինը ցուցմունքներ են տվել այն մասին, որ վիճաբանության բոլոր մասնակիցները միմյանց հարվածել են և հարվածներ են ստացել²:

9.1. Է.Թումանյանը հայտնել է, որ վիճաբանության մասնակիցները փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց³:

9.2. Ա.Կուզիկյանը որպես վկա հարցաքննվելիս իր ցուցմունքում նշել է, որ տեսնելով իր ընկեր Էմանուելին անձանոթ տղայի հետ վիճելիս՝ մոտեցել է, փորձել է բաժանել, որի ընթացքում հարվածել է և հարվածներ է ստացել⁴:

9.3. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին նախաքննության մարմինը ստացել է Է.Թումանյանի, Ա.Կուզիկյանի և մյուսների կողմից ներկայացված դիմումները, որտեղ վերջիններս նշել են, որ վիճաբանության մասնակիցների նկատմամբ բողոք չունեն և միաժամանակ դեմ չեն ու չեն առարկում, որ իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի՝ ոչ արդարացնող հիմքով⁵:

10. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման համաձայն. «(...) *Գլխորդ է փաստել, որ վարույթն իրականացնող մարմինը, քրեական գործով ձեռք բերված ապացույցների շրջանակներում հասարարված չի համարել էմանուել Թումանյանի, Ռոման Տելբարյանի, Արմեն Կուզիկյանի և Արթուր Հոսեինի կողմից խուլիգանություն կարարելու հանգամանքը, սակայն միաժամանակ հասարարված է համարել այն հանգամանքը, որ վերը նշված վիճաբանության ընթացքում վերջիններս հարվածներ են հասցրել միմյանց մարմնի րարբեր մասերին, հերևարար վերջիններիս արարքները պարունակում են ՀՀ քրեական օրենագրքի 118-րդ հոդվածով նախարելաված հանցակազմը, այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ [վերջիններս] վարույթն իրականացնող մարմնին դիմումներ են ներկայացրել այն մասին, որ միմյանց դեմ բողոք չունեն և միաժամանակ դեմ չեն և չեն առարկում, որ իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի ոչ արդարացնող հիմքով, վերջիններիս նկատմամբ ՀՀ քրեական դատարարության օրենագրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կերով չի կարող քրեական հետապնդում իրականացվել՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով (...)*»⁶:

11. Առաջին ատյանի դատարանը՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ բավարարելով դիմողների ներկայացուցիչ Թ.Բադդասարյանի բողոքը, նշել է. «(...) Վարույթն իրականացնող մարմինը 2020 թվականի դեկտեմբերի 24-ին որոշում է կայացրել, ի թիվս այլ անձանց՝ Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի նկատմամբ ՀՀ քրեական դատարարության օրենագրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կերով քրեական հետապնդում չիրականացնել վերջիններիս արարքներում

² Տեն նյութեր, հատոր 1-ին, էջեր 115-120:

³ Տեն նյութեր, հատոր 1-ին, էջ 124:

⁴ Տեն նյութեր, հատոր 1-ին, էջ 111-112:

⁵ Տեն նյութեր, հատոր 1-ին, էջեր 122 և 124:

⁶ Տեն նյութեր, հատոր 1-ին, թերթեր 126-140 և հատոր 2-րդ, թերթեր 1-5:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով, որից հետո հաստատված համարելով վերջիններիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքում առկա հանցակազմը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով քրեական հետապնդում չի իրականացրել՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով, այն դեպքում, երբ կոնկրետ չի պարզվել ով ում է ծեծել, կոնկրետ որ անձանց արարքների մեջ է առկա առերևույթ ծեծի հանցակազմի հատկանիշները, ով կամ ովքեր են հանդիսանում ենթադրյալ տուժողները, կոնկրետ ով կամ ովքեր կարող էին բողոք ներկայացնել մասնավոր գործի շրջանակներում, որ չեն ներկայացրել: Վարույթն իրականացնող մարմինը ընդհանրական ձևով նշել է, որ վերջիններիս նկատմամբ հաստատված է համարում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքի հանցակազմը, այն դեպքում, երբ վերջիններիս չի պարզաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով իրենց վերագրվող արարքի էությունը, որի պայմաններում վերջիններս հնարավորություն կունենային դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնելու, քանի որ անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝ հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի առջև սպացուցել իր անստորագրությունը:

Ինչ վերաբերում է Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի կողմից հայտնած դիրքորոշումներին, մասնավորապես՝ հարվածներ հասցնող անձանց դեմ բողոք չունենալուն, սպա Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման մեջ, որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսում է նաև բռնություն գործադրելու տարրեր, որի պայմաններում ենթադրվում է, որ վերջիններս հայտնել են անման դիրքորոշում վերը նշված հոդվածի շրջանակներում:

(...)

Այսպիսով, Դատարանը փաստում է, որ 2019 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ալեքսանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելով, խախտել է Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի իրավունքները և օրինական շահերը, մասնավորապես՝ անստորագրության կանխավարկածի սկզբունքը և արդար դատաքննության իրավունքը, ուստի հաշվի առնելով վերը նշվածը, Դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և այն պետք է բավարարել (...)⁷:

⁷ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 79-89:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, Առաջին սայրանի դատարանի որոշման վերը նշված հիմնավորումները դիտարկելով վերոգրյալ իրավական նորմերի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գտնում է, որ այդ հիմնավորումներն ամբողջությամբ բխում են դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի են նաև Վերաքննիչ դատարանի համար:

Վերոգրյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 2019 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Ալեքսանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելով, խախտել է Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի իրավունքները և օրինական շահերը, մասնավորապես՝ անվերջության կանխավարկածի սկզբունքը և արդար դատաքննության իրավունքը (...)»⁸:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք տուժողի բողոքի բացակայության հիմքով Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ վերջիններիս իրավունքների ու օրինական շահերի խախտված լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 33-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կարարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 118-րդ

⁸ Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 54-63:

հողվածով (...) նախարեակված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան րուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ անբասարանյալի հետ նրա հաշրվելու դեպքում ենթակա են կարճման (...):»:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական հետապնդումը բացառող հանգամանքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ տվյալ նորմը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հողվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել,

բ) բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը,

գ) ենթադրյալ հանցանք կատարած անձը չի առարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ⁹:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Է.Թումանյանը, Ա.Կուզիկյանը, Ռ.Տելբարյանը և Ա.Հոսեիսը որպես վկա հարցաքննվելիս ցուցմունքներ են տվել այն մասին, որ վիճաբանության բողոք մասնակիցները միմյանց հարվածել են և հարվածներ են ստացել¹⁰,

– 2019 թվականի դեկտեմբերի 20-ին նախաքննության մարմինը ստացել է Է.Թումանյանի, Ա.Կուզիկյանի և մյուսների կողմից ներկայացված դիմումները, որտեղ վերջիններս նշել են, որ վիճաբանության մասնակիցների նկատմամբ բողոք չունեն և միաժամանակ դեմ չեն ու չեն առարկում, որ իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի՝ ոչ արդարացնող հիմքով¹¹,

– նախաքննության մարմինը, 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ Է.Թումանյանի, Ա.Կուզիկյանի և մյուսների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հողվածով տուժողի բողոքի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելով, արձանագրել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված է համարվել վերջիններս կողմից վիճաբանության ընթացքում միմյանց հարվածներ հասցնելը, և միևնույն ժամանակ վարույթն իրականացնող մարմինն վերջիններս դիմումներ են ներկայացրել այն մասին, որ միմյանց դեմ բողոք չունեն և չեն առարկում, որ իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի՝ ոչ արդարացնող հիմքով¹²,

⁹ Տեն Վճռաբեկ դատարանի՝ Արման Մակարյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0182/11/13 որոշումը, 13-րդ կետ, *mutatis mutandis*, Վահագն Եղիազարյանի գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԴ/0012/11/13 որոշումը:

¹⁰ Տեն սույն որոշման 9-9.2-րդ կետերը:

¹¹ Տեն սույն որոշման 9.3-րդ կետը:

¹² Տեն սույն որոշման 10-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը, 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը բավարարելով, նշել է, որ նախաքննության մարմնի վերոգրյալ որոշմամբ խախտվել են Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի իրավունքներն ու օրինական շահերը, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը և արդար դատաքննության իրավունքը¹³,

- Վերաքննիչ դատարանը, մերժելով դատախազի վերաքննիչ բողոքը և Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշումը թողնելով անփոփոխ, ընդունելի է համարել Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի իրավունքների ու օրինական շահերի խախտված լինելու մասին¹⁴:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավաբանությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ այդ որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, անտեսել են այն հանգամանքը, որ խուլիգանության դեպքի առթիվ հարուցված քրեական գործով որպես վկա հարցաքննվելիս միմյանց փոխադարձաբար հարվածներ հասցնելու և հարվածներ ստանալու փաստը հայտնել են հենց իրենք՝ վիճաբանության մասնակիցները, այդ թվում՝ Է.Թումանյանը և Ա.Կուզիկյանը: Ընդ որում, նախաքննության մարմնին հասցեագրված իրենց դիմումներում վիճաբանության մասնակիցները փաստացի հայտնել են, որ *վիճաբանության մյուս մասնակիցների դեմ բողոք չունեն և չեն ստարկում, որ իրենց նկարմամբ քրեական հետապնդում չիրականացվի՝ ոչ արդարացնող հիմքով*:

17.1. Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի մասնակցությամբ վիճաբանության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված քրեական գործով քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների գնահատման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել միայն վիճաբանության մասնակիցների կողմից միմյանց հարվածներ հասցնելու, այսինքն՝ դիմողներ Է.Թումանյանի և Ա.Կուզիկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու հանգամանքը, ինչի կապակցությամբ կողմերը հայտնել են, որ միմյանց նկատմամբ բողոք չունեն և դեմ չեն, որ իրենց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի ոչ արդարացնող հիմքով: Մինչդեռ վերջին հանգամանքը գրկել է վարույթն իրականացնող մարմնին հետագա քննություն իրականացնելու հնարավորությունից, քանի որ ՀՀ

¹³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ արարքի կապակցությամբ քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, որի պարագայում բողոքի բացակայությունը քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

18. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից ներկայացված և Վերաքննիչ դատարանի կողմից ընդունելի համարված այն դիրքորոշմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի հանցակազմը որպես օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսում է նաև բռնություն գործադրելու տարրեր և ենթադրվում է, որ դիմողների դիրքորոշումը ներկայացվել է տվյալ հոդվածի շրջանակներում, ապա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն պնդմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի առնչությամբ քննվող գործը դասվում է հանրային հետապնդման գործերի շարքին, որոնց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված վարույթը բացառող՝ բողոքի բացակայության հանգամանքը կիրառելի չէ, ուստի այդ պայմաններում բողոքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դիրքորոշում պարզելը առարկայագուրկ կլիներ:

19. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ տուժողի բողոքի բացակայության հիմքով Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ վերջիններիս իրավունքների ու օրինական շահերի խախտված լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ բավարարելով դիմողների ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը, իսկ Վերաքննիչ դատարանը, 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ այն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 183-րդ հոդվածների պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել և փոփոխել, նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ դիմողներ Էմանուել Թումանյանի և Արմեն Կուզիկյանի ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը՝ մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումները բեկանել և փոփոխել:

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ալեքսանյանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ դիմողներ Էմանուել Թումանյանի և Արմեն Կուրիկյանի ներկայացուցիչ Թ.Բաղդասարյանի բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

62.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԵԴ/1424/01/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԻԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

10 նոյեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ դատապարտյալ Միշա Արմենի Մուրադյանի պաշտպան Հ.Անանյանի՝ հիմնարար խախտման հիմքով բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի ապրիլի 26-ի դատավճռով ամբաստանյալ Միշա Արմենի Մուրադյանը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրք) 258-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Նույն դատավճռով Մ.Մուրադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

2. Դատախազ Վ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 26-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, ամբաստանյալ Մ.Մուրադյանին մեղավոր է ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, ամբաստանյալ Մ.Մուրադյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժին՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկմանը, գումարվել է 258-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ տուգանքը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով և տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3. Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ Մ.Մուրադյանի պաշտպան Հ.Անանյանի վճռաբեկ բողոքը՝ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ, վարույթ ընդունելը մերժվել է:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ դատապարտյալ Մ.Մուրադյանի պաշտպան Հ.Անանյանի բացառիկ վերանայման բողոքի հիման վրա հարուցվել է բացառիկ վերանայման վարույթ և սահմանվել է բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներ, ինչը հանգեցրել է դատական սխալի:

Ըստ բողոքաբերի՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ ՀՀ գործող քրեական օրենսգրք) 335-րդ հոդվածի 4-րդ մասը, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի, այլևս որպես պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմ չի սահմանում զենք-զինամթերքը հանձնելու «կամովին» պայմանը, ինչպես նաև չի պայմանավորում անձի արարքում այլ հանցակազմի առկայությամբ:

Բողոքաբերն արձանագրել է, որ քրեական գործ հարուցելու պահից մինչև Մ.Մուրադյանի կողմից ինքնակամ ներկայանալը և ինքնաձիգը հանձնելը որևէ փաստաթուղթ առկա չէ առ այն, թե որտեղ է պահել այն մինչև ներկայացնելը, այլ կերպ ասած՝ մինչև իրավասու մարմինների կողմից դրա գտնվելու վայրի մասին տեղեկություն ունենալը Մ.Մուրադյանը հանձնել է ինքնաձիգը: Եթե

նույնիսկ ընդունվի, որ իրավապահ մարմինները կասկած են ունեցել, որ կրակ արձակողը եղել է Մ.Մուրադյանը, ապա դա չի կարող մեկնաբանվել որպես զենքի գտնվելու վայրի մասին տեղեկություն կամ իմացություն:

5.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Մ.Մուրադյանին վերագրվող խուլիգանությունն ավարտվել է 2021 թվականի մայիսի 11-ին, հետևաբար լրացել է տվյալ արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը, Մ.Մուրադյանի նկատմամբ կիրառել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմը՝ նրան ազատելով այդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից և պատժից:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Միշա Մուրադյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) 2021 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, դիրավորությանը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելով, Երևան քաղաքի Նար-Դոս փողոցի 4-րդ շենքի դիմաց իր մոտ սպորինի պահվող ինքնաձիգից դեպի օդ կայարարել է կրակոցներ և հեռացել:

Այսպես.

2021 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, Միշա Արմենի Մուրադյանն իր սնվամբ հաշվառված և իր կողմից շահագործվող BMW X6M մակնիշի 80 XX 008 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ժամանել է Երևան քաղաքի Նար-Դոս փողոցի 4-րդ շենքի դիմաց, որտեղ դիրավորությանը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելով, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, խախտելով քրեաօրենսգրքով սահմանվող անձանց անորոշ, վերջիններիս մոտ առաջացնելով վախի և տարածապահ զգացողություն, քննությանը դեռևս չպարզված հանգամանքներում ձեռք բերված և իր մոտ ուղղակի դիրավորությանը սպորինի պահվող «AKM» տեսակի «ՍՊ 4005» գործարանային համարի 7.62 մմ /7.62x39/ տրանսպարենտ ինքնաձիգով կրակոցներ է արձակել օդ և հեռացել»¹:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 26-ի դատավճռի համաձայն՝ «(...) Դատարանը գայիս է այն եզրահանգման, որ Միշա Մուրադյանն իր մոտ ուղղակի դիրավորությանը սպորինի պահվող «AKM» տեսակի, «ՍՊ 4005» գործարանային համարի, 7.62 մմ տրանսպարենտ ինքնաձիգով կրակոցներ է արձակել օդ:

Այսինքն՝ հիմնավոր կասկածից վեր սպացուցողական չափանիշով հաստատվում է, որ Միշա Մուրադյանը կայարարել է արարք, որը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 238-241:

համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներին:

Անդրադառնալով հնարավոր այն հարցադրմանը, թե արդյոք սույն դեպքում կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը՝ Դատարանը հարկ է համարում նշել հետևյալը:

(...)

Տվյալ դեպքում Դատարանը նկատում է, որ թեև 2021 թվականի մայիսի 11-ին Միշա Մուրադյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին և իրավապահներին է հանձնել «AK-74» փետասկի, 1967 թվականի արտադրության, «ՍՊ 4005» գործարանային համարի ինքնաձիգն իր պահուսակով, սակայն վերջինն այդ հրազենը միայն պասիվ կերպով իր մոտ չի պահել, այլ նաև հասարակական վայրում բացահայտորեն կիրառել է: Եվ այդ դեպքում ողջամիտ է այն կասկածը, որ Միշա Մուրադյանը շար լավ հասկացել է, որ անձնական ավտոմեքենայով նման բացահայտ գործողություններ կատարելը, ամենայն հավանականությամբ, չի կարող գաղտնի մնալ և վաղ թե ուշ հասու է դառնալու իրավապահ մարմիններին:

Այլ կերպ ասած՝ զենքով նման բացահայտ գործողություն կատարելուց (կիրառումից) հետո դրա հանձնումը չի կարող հանդիսանալ քննարկվող հոդվածով քրեական պարասխանարվությունից ազատող հանգամանք: Հսկառակ մտրեցման դեպքում յուրաքանչյուր ոք կարող է անխոչընդոտ կերպով ցուրբեր վայրերում հրազեն գործարել՝ հարակ իմանալով, որ դրանից անմիջապես հետո համապարասխան առարկայի հանձնումն իրեն կազարի հնարավոր քրեադատարական հետևանքներից: Մինչդեռ նման իրադրությունը չի բխի օրենսդրի կողմից քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից:

Այսինքն՝ Դատարանը գայիս է այն հետևության, որ տվյալ դեպքում վերը նշված հոդվածով նախատեսված խրախուսական նորմը Միշա Մուրադյանի նկարումն կիրառելի չէ (...)²:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Բ]ննարկելու Մ.Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի (2003 թվականի ապրիլի 18-ի) 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքները ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապարասխանացնելու հարցը և փաստելով, որ 2022 թվականի հուլիսի 1-ի ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով Մ.Մուրադյանին մեղսագրված արարքների հանցավորությունը չի վերացել, բացի այդ, բացակայում են «ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի 6-րդ հոդվածի կիրառման հիմքերը, այն է՝ Մ.Մուրադյանի նկարումն նշանակված պարժարեաակն ու պարիժն ավելի խիար չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապարասխան հոդվածով նախատեսված առավել խիար պարժարեաակից կամ պարժի առավելագույն ժամկետից, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 77-106:

Մ.Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի (2003 թվականի ապրիլի 18-ի) 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքները ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապարասիանասցնելու հիմքերը բացակայում են (...)³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ սույն գործով բողոքը վարույթ է ընդունվել Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման գործառույթների իրացման նկատառումներով, ինչը դատական սխալի հետ մեկտեղ, ուղակիորեն նշվել է բողոքաբերի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում: Այս առումով, հարկ է նշել, որ ընդունվել և ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որում տեղի են ունեցել բազմաթիվ բովանդակային փոփոխություններ, որպիսի պայմաններում նշված ոլորտում իրավունքի զարգացման միտումը հրամայական է դարձնում նորույթ հանդիսացող քրեաիրավական նորմերի, սույն դեպքում՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի մեկնաբանումը, որի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր:

Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ սույնարևույթ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Միշա Արմենի Մուրադյանի նկատմամբ կիրառելի է արդյոք ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ որ չպերք է Հայասրանի Հանրապերության իրավազորության շրջանակներում կրկին դարվի կամ պարժվի այն արարքի համար, որի համար նա օրինական ուժի մեջ մրած դարավճոով արդարացվել կամ դարասպարվել է:*
(...)

3. Անձի վիճակի բարելավման պահանջով վարույթը եզրափակող սկրի վերանայումը կրկին դարվել չէ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Բացառիկ վերանայման վարույթներն են՝*

(...)

2) հիմնարար խախրման հիմքով վարույթը.

(...)

2. Բացառիկ վերանայման ենթակա են՝

1) օրինական ուժի մեջ մրած դարավճիրը (...).

³ Տնն քրեական գործ, հատոր 3, թերթեր 52-65:

(...)

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «2. Հիմնարար խախտման հիմքով բողոք կարող է բերվել միայն հօգուտ Կրկնայ մեղադրյալի՝ հետևյալ հիմքերով.

1) քրեական հետապնդումը բացառող ակնհայտ հանգամանքի առկայության պայմաններում կայացվել է օրինական ուժի մեջ է մտել մեղադրական դատաւճիռ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «1. Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրոյթների ուժով ենթակա է ազատման քրեական պարասխանարկությունից»:

12.1. Քրեադատավարական նախկին նորմերի համատեքստում անդրադառնալով «հիմնարար խախտման» բնույթին՝ Վճռաբեկ դատարանը Մկրտիչ Մարգարյանի գործով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վերջինս ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրվում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին⁴:

12.2. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՌ-1431 որոշմամբ՝ ընդգծելով հետևյալը. «(...) /Հիմնարար խախտումը պետք է պարճատահետևանքային կապի մեջ գտնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: (...) /Արդարադատության հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատասպարարվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»⁵:

12.3. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը դատական ակտերի բացառիկ վերանայման կառուցակարգի շրջանակներում որպես դրա տեսակ

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մկրտիչ Մարգարյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՄԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

նախատեսել է նաև հիմնարար խախտման հիմքով վարույթը, որի առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ ի տարբերություն վերանայման այլ կառուցակարգերի, բացառիկ վերանայման վարույթով հիմնարար խախտման հիմքով բողոքարկման դեպքում առկա է ասիմետրիա՝ ի շահ մեղադրյալի, քանի որ հիմնարար խախտման հիմքով բողոք կարող է բերվել միայն հօգուտ մեղադրյալի:

Անդրադառնալով հիմնարար խախտման հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է հիմնարար խախտման հիմքով բողոք բերելու սպառիչ հիմքեր, որոնցից մեկն էլ հանդիսանում է քրեական հետապնդումը բացառող ակնհայտ հանգամանքի առկայության պայմաններում մեղադրական դատավճռի կայացված և օրինական ուժի մեջ մտած լինելը:

13. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը՝ պարտվում է (...):*

(...)

5. Սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պարասխանարվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում»:

13.1. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի կիրառման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հուսիկ Բաղդասարյանի* գործով որոշման շրջանակներում՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ *«(...) Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պարասխանարվությունը մեղմանցող հանգամանք»⁶:*

Վերահաստատելով և զարգացնելով *Հուսիկ Բաղդասարյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը *Հրանտ Հարությունյանի* և *Բեգլար Հովհաննիսյանի* գործով որոշմամբ

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հուսիկ Բաղդասարյանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱԳԴ-2/0059/01/08 որոշման 20-րդ կետը:

արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի սպորինի պահվող զենքի և նորմում թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործադրմանը անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վրանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վրանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը հոդվածում նշված առարկաների անօրինական շրջանառությունից մարդու և հասարակության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար հոդվածում նշված առարկաների հանձնման դեպքում ապահովվում է փոխյալ հանցագործության օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում վերանում հանցանք կատարած անձի հանրային վրանգավորությունը:

(...)

Քննարկվող հոդվածում նշված առարկաների հանձնումը կարող է համարվել կամուխին, եթե անձը, գիրակցելով դրանք սպորինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, այդուհանդերձ, հանձնում է քննարկվող առարկաները կամ հայրնում դրանց գրավելու վայրի մասին: Քննարկվող առարկաներն սպորինի պահելու իրական հնարավորություն անձը կարող է ունենալ, եթե, օրինակ, վարույթն իրականացնող մարմինն հայրնի չէ զենքի գոյության մասին, կամ բացակայում են դրա բացահայտման օբյեկտիվ հնարավորության մասին վկայող հանգամանքները, և անձը ողջամտորեն գիրակցում է դա: Հետևաբար սպորինի պահվող զենքի գործադրմանը հանրորեն վրանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո զենքը հանձնած անձը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով չի կարող ազատվել քրեական պարասխանասարվությունից, քանի որ զենքի գործադրման փաստը վարույթն իրականացնող մարմիններին հաստատապես հայրնի լինելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը չի բխի քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սպորինի զենքով հանրորեն վրանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո անձի կողմից զենքը հանձնելը կարող է գնահատվել որպես անձի պարասխանասարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել պարիժ նշանակելիս (...)»⁷:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի գործով 2015

14. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի համաձայն՝ «1. Այօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ուազմամթերք, սկոսափող հրազենի փամփուշ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առարելը կամ կրելը՝

պարժվում է (...):

(...)

4. Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գրնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազարվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախարեալված քրեական պարասխանարվությունից: Եթե անձի փարացի կարարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պարասխանարվության այդ հանցագործության համար»:

14.1. Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով քննարկվող խրախուսական նորմում տեղի ունեցած բովանդակային փոփոխությունները, հարկ է համարում վերանայել և զարգացնել նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի բովանդակությունն էապես տարբերվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի բովանդակությունից: Այսպես, եթե նախկին իրավակարգավորումների պայմաններում անձն ազատվում էր քրեական պատասխանատվությունից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները **կամուլին հանձնելու** դեպքում, ապա գործող իրավակարգավորումների դեպքում անձը կազատվի քրեական պատասխանատվությունից, եթե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածում նշված առարկաները **հանձնի մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գրնվելու վայրի մասին իմանալը**:

Այսպիսով, նոր իրավակարգավորումների պայմաններում քննարկվող խրախուսական նորմի կիրառման տեսանկյունից, օրենսդիրն այսուհետ կարևորում է օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող հանգամանքները (իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գոնվելու վայրի մասին իմանալը) այլևս էական նշանակություն չտալով զենքը կամավորաբար հանձնելու վերաբերյալ հանցանք կատարած անձի սուբյեկտիվ ընկալմանը (այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը զիտակցելուն): Նման պայմաններում, կիրառելով նյութական նորմի տառացի մեկնաբանման կանոնը, այլևս էական նշանակություն չունի նաև զենքի գործադրմամբ որևէ արարք կատարած լինելու փաստը, եթե զենքը հանձնելու պահին իրավասու մարմինները դրա գոնվելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն:

Դրա հետ մեկտեղ, իրավասու մարմինների կողմից նշված առարկաների գտնվելու վայրի մասին իմանալուց հետո, հանցանք կատարած անձի կողմից դրանք նույնիսկ կամովին հանձնելու պարագայում, վերջինս չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից՝ քննարկվող խրախուսական նորմի ուժով:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

– Առաջին ատյանի դատարանը 2022 թվականի ապրիլի 26-ի դատավճռով հաստատված է համարել, որ Մ.Մուրադյանն իր մոտ ուղղակի դիտավորությամբ ապօրինի պահվող «AKM» տեսակի, «ՄՊ 4005» գործարանային համարի, 7.62 մմ տրամաչափի ինքնաձիգով կրակոցներ է արձակել օդ: Այսինքն՝ Մ.Մուրադյանը կատարել է արարք, որը համապատասխանում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

Անդրադառնալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի կիրառելիության հարցին՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ թեև 2021 թվականի մայիսի 11-ին Մ.Մուրադյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին և իրավապահներին է հանձնել «AK-74» տեսակի, 1967 թվականի արտադրության, «ՄՊ 4005» գործարանային համարի ինքնաձիգն իր պահունակով, սակայն վերջինս այդ հրագները միայն պասիվ կերպով իր մոտ չի պահել, այլ նաև հասարակական վայրում բացահայտորեն կիրառել է: Այդ դեպքում, ըստ Առաջին ատյանի դատարանի, ողջամիտ է այն կասկածը, որ Մ.Մուրադյանը շատ լավ հասկացել է, որ անձնական ավտոմեքենայով նման բացահայտ գործողություններ կատարելը, ամենայն հավանականությամբ, չի կարող գաղտնի մնալ և վաղ թե ուշ հայտնի է դառնալու իրավապահ մարմիններին: Այլ կերպ զենքով նման բացահայտ գործողություն կատարելուց (կիրառումից) հետո դրա հանձնումը չի կարող հանդիսանալ քննարկվող հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք:

Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը եկել է այն հետևության, որ տվյալ դեպքում վերը նշված հոդվածով նախատեսված խրախուսական նորմը Մ.Մուրադյանի նկատմամբ կիրառելի չէ⁸:

– Քննարկելով Մ.Մուրադյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանացնելու հարցը և փաստելով, որ 2022 թվականի հուլիսի 1-ի ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով Մ.Մուրադյանին մեղսագրված արարքի հանցավորությունը չի վերացել, բացակայում են «ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի օրենքի 6-րդ հոդվածի կիրառման հիմքերը, այն է՝ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատժատեսակն ու պատիժն ավելի խիստ չէ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված առավել խիստ պատժատեսակից կամ պատժի առավելագույն ժամկետից, Վերաքննիչ

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դատարանը գտել է, որ Մ.Մուրադյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքը քրեական գործող օրենսգրքին համապատասխանացնելու հիմքերը բացակայում են⁹:

16. Քննարկելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասը հետադարձ ուժով կիրառելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. *Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ սպարիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ:*

(...)

4. *Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով:*

Անդրադառնալով քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմաններին, մասնավորապես՝ հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող, հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրության մեկնաբանմանը, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակներում ընդգծել է, որ նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե դրանով արարքը դադարում է հանցագործություն համարվել (լրիվ ապաքրեականացում) կամ հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում):

Նոր օրենքը համարվում է պատիժը մեղմացնող, եթե հոդվածի սանկցիայով նախատեսված՝ ա) պատժի նվազագույն կամ առավելագույն չափերն իջեցվում են, բ) պատժատեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, գ) պարտադիր լրացուցիչ պատժատեսակը վերացվում է կամ վեր է ածվում ֆակուլտատիվի, դ) նախատեսվում է երկընտրելի առավել մեղմ պատժատեսակ:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է համարվում այն օրենքը, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, *քրեական սպարախանարվությունից կամ սպարիժից ազատելու հիմքերի և պայմանների հեր կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է սրեղծում հանցանք կատարած անձի համար:* Նման իրավիճակները կարող են բազմազան լինել և վերաբերել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին, այդ թվում՝ պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կարգին¹⁰:

17. Վճռաբեկ դատարանի մեջբերված դիրքորոշումից հետևում է, որ նոր ընդունված քրեական օրենսդրությամբ հանցանք կատարած անձի համար քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վաղարշակ Գալոյանի վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ին կայացված թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշման 19-րդ կետը:

պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմանների նախատեսումը դիտարկվում է որպես *հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք*: Ընդ որում, եթե 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի հետադարձ ուժի հարցում որևէ սահմանափակում նախատեսված չէր, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի միայն օրենքով նախատեսված դեպքում: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական օրենսգիրքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորություն նախատեսվել է միայն դատվածության մարման ժամկետների դեպքում՝ դատապարտված անձի վիճակը բարելավող մասով:

Ուստի, ստացվում է մի վիճակ, երբ նոր քրեական օրենսդրությամբ կատարված փոփոխություններով քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող կոնկրետ նորմի կիրառման շրջանակներն ընդլայնվելու, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական նորմը որպես իմպերատիվ դիտարկվելու, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից իմպերատիվ կերպով ազատում նախատեսող նոր նորմ սահմանելու դեպքերում դրանց չի կարող հետադարձ ուժ տրվել, քանի որ օրենքով նման հնարավորություն չի նախատեսվել: Վճռաբեկ դատարանի համոզմամբ նման կարգավորումը չի կարող համահունչ լինել ինչպես քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին, մասնավորապես՝ արդարության սկզբունքին, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 7-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին և դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կողմից ձևավորած նախադեպային դիրքորոշումներին:

Այսպես՝ Եվրոպական դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է ոչ միայն ավելի խիստ քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը, այլև անուղղակի կերպով՝ ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքը՝ ընդգծելով, որ ավելի մեղմ պատիժ նախատեսող քրեական օրենքի կիրառությունը դարձել է քրեական իրավունքի հիմնարար սկզբունք, անգամ եթե այն ընդունվել է հանցանքի կատարումից հետո:

Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ ավելի ծանր պատիժ նշանակելու դեպքում, ելնելով միայն այն հանգամանքից, որ այդ պատիժը նախատեսված է եղել հանցանքը կատարելու պահին, անուշադրության կմատնվեն նախքան մեղադրական դատավճռի կայացումը մեղադրյալի համար տեղի ունեցած բարենպաստ օրենսդրական փոփոխությունները՝ *շարունակելով*

կիրաատել պատրիժներ, որոնք տվյալ պետության և վերջինիս հասարակության կողմից արդեն իսկ համարվում են չափազանց ծանր¹¹:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության սկզբունքի, ինչպես նաև միջազգային-իրավական կարևորագույն փաստաթղթերով երաշխավորված մարդու հիմնարար իրավունքների հետևողական կենսագործումն ապահովելու նկատառումներից ելնելով, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու և զարգացնելու քրեական օրենքի հետադարձ ուժի պայմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերլուծության ենթարկել քրեական պատասխանատվության և քրեական պատժի հարաբերակցության առանձնահատկությունները: Այսպես՝ քրեական պատասխանատվությունը բարդ և բազմաբովանդակ երևույթ է, որի էության, բովանդակության և ծավալների առումով դոկտրինալ աղբյուրներում մինչ այժմ միասնական ընդունված որևէ սահմանում առկա չէ: Մինևույն ժամանակ, կարելի է փաստել, որ քրեական պատասխանատվությունը ծագում է հանցանք կատարելու փաստով և ենթադրում է անձի պարտականությունը՝ կրելու պատասխանատվություն իր կատարած հանցանքի համար, արտահայտվում է պետության կողմից անձի արարքին տրվող բացասական գնահատականով և, որպես կանոն, եզրափակվում դատարանի դատավճռով անձի նկատմամբ քրեական պատժի նշանակմամբ:

Վերոնշյալից հետևում է, որ քրեական պատասխանատվությունը շատ ավելի լայն երևույթ է և իր մեջ, ի թիվս այլևի, ներառում է նաև հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատիժը, այլ կերպ՝ քրեական պատասխանատվությունը և պատիժը հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս: Ընդ որում, թեև քրեական պատասխանատվության իրագործման հիմնական ձևը հենց քրեական պատիժն է, այնուամենայնիվ, շատ դեպքերում քրեական պատասխանատվությունը կարող է իրագործվել՝ առանց վերոնշյալ փուլին հասնելու, օրինակ՝ քրեական պատասխանատվությունից ազատում նախատեսող նորմերի կենսագործման արդյունքում, մինչդեռ պատիժը քրեական պատասխանատվության սահմաններից դուրս գոյություն ունենալ չի կարող:

Այսպիսով, պետք է փաստել, որ պատիժն առավել համընդգրկուն երևույթի՝ քրեական պատասխանատվության, բաղկացուցիչ մասն է միայն, դրա տարրերից և իրագործման փուլերից մեկը, հետևաբար քրեական պատասխանատվությունից իմպերատիվ կերպով ազատում նախատեսող նորմի կիրառման բոլոր հիմքերի և պայմանների առկայության դեպքում դատարանը չի հասնում անձի նկատմամբ պատիժ նշանակելու փուլին և դրանով իսկ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացը եզրափակվում է:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scoppola v. Italy* գործով 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 10249/03, 103-109-րդ կետեր:

19. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու պահանջը հավասարապես պետք է կիրառելի լինի նաև քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նորմերի պարագայում: Մասնավորապես, եթե օրենսդիրը եզրափակիչ դատավարական ակտի բացակայության պայմաններում երաշխավորել է պատիժը մեղմացնող քրեական օրենսդրությանը հետադարձ ուժ տալու հնարավորությունը՝ առանց որևէ բացառության, ապա վերոնշյալն առավել ևս պետք է կիրառելի լինի՝ իր բովանդակությամբ և ծավալով ավելի լայն և համընդգրկուն երևույթի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու նկատմամբ:

Հակառակ պարագայում կատարվի, որ քրեական պատասխանատվության բաղադրիչ հանդիսացող պատժի մեղմացման ցանկացած դեպքում քրեական օրենքը հետադարձ ուժ ունի (օրինակ՝ հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի փոփոխության կամ այլընտրանքային ավելի մեղմ պատիժ նախատեսվելու դեպքում և այլն), մինչդեռ քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նոր օրենքի պարագայում պետք է կիրառվեն արարքի կատարման պահին գործող կարգավորումները, և անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի, ինչն անընդունելի է:

Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ տվյալ իրավիճակում կանտեսվեն հանցանք կատարած անձի համար տեղի ունեցած բարենպաստ օրենսդրական փոփոխությունները, և անձը կենթարկվի քրեական պատասխանատվության՝ չնայած որ պետությունը, անձին ինպերատիվ կերպով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ նոր կարգավորում նախատեսելով, արդեն իսկ համանման դեպքերում *անձին քրեական պարասխանատվության ենթարկելը չափազանց ծանր է համարել:*

20. Ընդհանրացնելով սույն որոշման 16-19-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կատարված փոփոխությունների արդյունքում քրեական օրենսդրությամբ քրեական պատասխանատվությունից ազատում նախատեսող նորմի կիրառման շրջանակներն ընդլայնվում են, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական նորմը դիտարկվում է որպես ինպերատիվ, ինչպես նաև նախատեսվում է քրեական պատասխանատվությունից անվերապահ կերպով ազատում նախատեսող նոր նորմ, ապա վերոնշյալ փոփոխությանը, որպես ըստ էության պատիժը մեղմացնող օրենսդրության, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է հետադարձ ուժ տրվի:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ թեև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում խոսք է գնում *պարտիժը մեղմացնող* օրենքին հետադարձ ուժ տալու մասին, այնուամենայնիվ, նույն հոդվածի 6-րդ մասում օրենսդիրն օգտագործում է *«պարասխանատվություն»* եզրույթը՝ ընդգծելով, որ *պարասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող* և

միաժամանակ *մասնակիորեն խախտող* օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը *մեղմացնում է պատասխանատվությունը*: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեջքերված նորմերը փոխարացնում են միմյանց և արտահայտում են օրենսդրի կամքը՝ դրանք մեկնաբանելու համակցված կերպով, այն է՝ պատժի մեղմացման շրջանակներում դիտարկելով նաև պատասխանատվության մեղմացումը և հակառակը:

Վերոնշյալի համատեքստում դիտարկելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը հետադարձ ուժով կիրառելիության հարցը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն ըստ էության նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատելու իմպերատիվ հիմք, այն է՝ համապատասխան առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն անվերապահ կերպով ազատվում է քրեական պատասխանատվությունից, ուստի վերոնշյալ նորմը, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հետադարձ ուժ ունի:

21. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած Մ.Մուրադյանի նկատմամբ կիրառելի է եղել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը:

Այսպես, սույն գործում առկա չէ փաստական տվյալ այն մասին, որ Մ.Մուրադյանի կողմից ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնում «ԱԿ-74» տեսակի, 1967 թվականի արտադրության, «ՍՍ 4005» գործարանային համարի ինքնաձիգն իր պահուսակով հանձնելու պահի դրությամբ, իրավասու մարմիններն իմացել են ինքնաձիգի և պահուսակի գտնվելու վայրի մասին: Այլ կերպ, Մ.Մուրադյանն ինքնաձիգը իր պահուսակով, հանձնել է մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին տեղեկանալը:

Հետևաբար, Միշա Արմենի Մուրադյանի նկատմամբ կիրառելի է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը:

22. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող ակնհայտ հանգամանքի առկայության պայմաններում, Միշա Արմենի Մուրադյանի վերաբերյալ այդ մասով կայացվել և օրինական ուժի մեջ է մտել մեղադրական դատավճիռ:

23. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Մ.Մուրադյանին վերագրվող խուլիգանությունն ավարտվել է 2021 թվականի մայիսի 11-ին, հետևաբար լրացել է տվյալ արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը¹², ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մ.Մուրադյանի վերաբերյալ մեղադրական

¹² Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2023 թվականի մայիսի 5-ին, որպիսի պայմաններում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացած չի եղել և անձը նշված հիմքով ենթակա չէ այդ մասով քրեական պատասխանատվությունից ազատման:

24. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ է տրվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ չի կիրառվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասը: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, անհրաժեշտ է Մ.Մուրադյանի վերաբերյալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշումը վերանայել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել և այդ մասով Մ.Մուրադյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 407-408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշումը հիմնարար խախտման հիմքով վերանայել:

2. Բացառիկ վերանայման արդյունքում դատապարտյալ Միշա Արմենի Մուրադյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 26-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը բեկանել:

3. Միշա Արմենի Մուրադյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա լինելու հիմքով:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

63.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ/0129/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

15 նոյեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով Վրեժ Վաղինակի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի մարտի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 41100620 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ Վրեժ Վաղինակի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Վրեժ Ստեփանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ թիվ 41100620 քրեական գործից անջատվել է Վրեժ Ստեփանյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 41100620/1 համարը:

2020 թվականի հոկտեմբերի 23-ին թիվ 41100620/1 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի հունվարի 25-ի դատավճռով Վրեժ Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով Վ.Ստեփանյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ 185-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Վ.Ստեփանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Պատժի սկիզբը հաշվվել է 2020 թվականի հուլիսի 12-ից: Վ.Ստեփանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Տուժող Արթուր Ալավերդյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ: Վճռվել է Վ.Ստեփանյանից հօգուտ տուժողի բռնագանձել 892.000 (ութե հարյուր ինսուսներկու հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցում:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի մայիսի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Վ.Ստեփանյանի պաշտպան Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Վ.Ստեփանյանը ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Նրան թողնվել է կրելու ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության համար նշանակված՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ՝:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝

Վճարելի դատարանը 2023 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ սահմանել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը նշել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ գողություն կատարելու նպատակով մուտքի դռան փականը վնասելու միջոցով բնակարան ապօրինի մուտք գործելն ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի դիսպոզիցիայում:

Բողոք բերած անձն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից բավարար չափով քննարկման և վերլուծության առարկա չեն դարձվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 185-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշները, ինչի արդյունքում դատարանը հանգել է անհիմն հետևության առ այն, որ գույքի վնասման կամ ոչնչացման գործողություններն ընդգրկված են ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի դիսպոզիցիայում, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով չպետք է որակվեն:

Բողոքաբերը փաստարկել է, որ գողություն կատարելու նպատակ ունեցող անձը, որոշակի գույք վնասելիս կամ ոչնչացնելիս, բոլոր դեպքերում գործում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ՝ գիտակցում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելու համար վնասում է գույքը, նախատեսում է դրա արդյունքում տուժողին վնաս պատճառելը և ցանկանում է դա, կամ առնվազն գիտակցաբար թույլ է տալիս:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում, չի ապահովվի մարդու իրավունքների քրեաիրավական լիարժեք պաշտպանությունը, և, օրինակ, 10.000 ՀՀ դրամ արժեքով գույքը հափշտակելու համար 1.000.000 ՀՀ դրամ արժեքով գույքը ոչնչացնելու (վնասելու) դեպքում քրեական օրենքի պաշտպանության տակ է առնվելու բացառապես հափշտակված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ կրած ավելի մեծ գույքային վնասը քրեաիրավական պաշտպանությունից դուրս է մնալու, ինչը, բնականաբար, հիմնավորված չէ:

6. Վերագրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի՝ Վ.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով անմեղ ճանաչելու և արարքում հանցակազմի բացակայության հիմքով արդարացնելու մասով, բեկանել՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

(...)

Տվյալ դեպքում, դատարանը հասարակած համարելով Վրեժ Սրեպիանյանին առաջադրված մեղադրանքն ամբողջ ծավալով, գրնում է, որ րոտող Արթուր Արավերդյանի ներկայացված քաղաքացիական հայք ենթակա է քավարարման: (...)³:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 19-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Առաջին արյանի դատարանի դատավճիռը, հանգում է այն հերկության, որ Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը պերք է քավարարել մասնակիրեն՝ դատավճիռը բեկանել և փոփոխել, ամբասարանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հողվածի 1-ին մասով ճանաչել անաեղ և արդարացնել հերկյալ պարճատարանությամբ:

(...)

Վերաքննիչ դատարանը, արուգելով սույն գորճի փասարական հանգամանքների բացահայրման և քրեական օրենսգրքի կիրառման ճշրությունը, գալիս է այն հերկության, որ գորճի փասարական հանգամանքները բացահայրված են ճիշր, սակայն քրեական օրենքը կիրառելիս դատարանը թոյլ է րվել դատական սիսլ՝ ամբասարանյալ Վ.Սրեպիանյանի արարքը բացի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 3-րդ մասի 1.1-րդ կերից՝ հանցագորճությունների համակցությամբ որակելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հողածի 1-ին մասով:

Այսպես, առանճասարան մուրքի դոան ներքին փականը րեղահան անելու միջոցով բնակարան սպօրինի մուրք գորճելով կարարված գողությունը որակելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հողվածի 1-ին մասով, համարելով, որ Վ.Սրեպիանյանը ուրիշի գուրը վասսել է անուղղակի չկոնկրետացված դիրավորությամբ, նախաքննության մարմինը և Առաջին արյանի դատարանը հաչվի չեն առել այն հանգամանքը, որ մուրքի դոան ներքին փականը րեղահան անելու միջոցով դուռը բացելը հանդիսացել է բնակարան սպօրինի մուրք գորճելու միջոցը կամ եղանակը, առանց որի ամբասարանյալը չէր կարող բնակարան մուրք գորճել: Վերջինիս դիրավորությունը որևէ կերպ ոողղված չի եղել դոան փականը վասսելուն, այլ դրա միջոցով նա ցանկացել է բացել դուռը և գողություն կարարելու նպարակով սպօրինի մուրք գորճել բնակարան:

Հերևարար, բնակարանի մուրքի դոան փականը վասսելու միջոցով այարեղ սպօրինի մուրք գորճելը և գողություն կարարելը ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 3-րդ մասի 1.1-րդ կերի դիսպօրիցիսյում և այն ուրիշի գուրը դիրավորությամբ վասսելու համար քրեական պարասիանարվություն նախարեսող ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հողվածի 1-ին մասով լրացուցիչ որակում չի պահանջում:

Դոան փականը րեղահան անելիս պարճատված վասսի փոխիարուցման պահանջ կարող է ներկայացվել քաղաքացիական դատավարության կարգով:

(...)

³ Տեն քրեական գորճ, հատոր 5-րդ, թերթեր 64-73:

Այսպիսով, պաշտպան Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով ամբաստանյալ Վ.Սյրեհանյանի վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, դատավճիռը բեկանել և փոփոխել, ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել անմեղ ու արդարացնել՝ արարքում հանցակազմի բացակայության պարճատարանությամբ (...)⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելով գույքի գաղտնի հափշտակության և ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմերի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ոստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման և իրավունքի զարգացման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ուրիշի գույքի վնասումն ընդգրկված է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելով գողության հանցակազմի դիսպոզիցիայում, հետևաբար ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով լրացուցիչ որակում չի պահանջում:

11. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Գողություն է համարվում ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը»:*

Նույն օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի համաձայն՝ *«Գողությունը, որը կատարվել է՝ (...)*

1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,

(...) պարճվում է ազատագրվմանը՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմանը կամ առանց դրա»:

12. Վճռաբեկ դատարանը բնակարան ապօրինի մուտք գործելով գողության հատկանիշների մեկնաբանմանն անդրադարձել է *Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի* վերաբերյալ գործով որոշման շրջանակներում, որտեղ, ի թիվս այլնի, վերլուծության է ենթարկել բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակների առանձնահատկությունները՝ ընդգծելով հետևյալը. *«(...) [Բ] նակարան մուտք գործելը կարող է կատարվել հանցավորի կողմից ինչպես ֆիզիկական, այնպես էլ տեխնիկական միջոցներով կամ տարատեսակ սարքերով, գաղտնի կամ բացահայտ եղանակով բնակարան ներթափանցելով: Ինչ վերաբերում է բնակարան մուտք գործելու ապօրինությանը, սպա այն ենթադրում է, որ հանցավորը հայտնվում է ուրիշի բնակարանում առանց համապատասխան*

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 40-53:

իրավական հիմքերի, բնակարանի տիրոջ կամքին հակառակ, մասնավորապես առանց նրա թույլտվությունը կամ համաձայնությունը ստանալու կամ նրա կամքն ընդհանրապես անտեսելով: Այսպես ներթափանցումը կարող է իրականացվել ինչպես գաղտնի, այնպես էլ բնութային գործադրելով, դրա սպառնալիքով կամ խաբեության միջոցով, այն է՝ հանցավորի կողմից բնակարանի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի բնակարան մուտք գործելու թույլտվությունը կամ համաձայնությունը ձեռք բերելը՝ վերջինիս մոլորության մեջ գցելու արդյունքում (օրինակ՝ ներկայանում է որպես իշխանության կամ սպասարկման ծառայության ներկայացուցիչ, էլեկտրաէներգիայի կամ գազի մատակարարման կազմակերպության աշխատակից, վերանորոգող-փականագործ և այլն): Ընդ որում, բնակարան սպորինի մուտք գործելու վերոնշյալ եղանակներն արարքի քրեաիրավական որակման վրա որևէ կերպ չեն ազդում (...)⁵:

13. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի պայմաններում գողության՝ բնակարան սպորինի մուտք գործելու եղանակներն օրենսդրորեն կոնկրետացված չեն և կարող են ամենատարբեր դրսևորումներն ունենալ՝ գաղտնի կամ բացահայտ, սպառնալիքի միջոցով կամ բռնության գործադրմամբ, խաբեությամբ, գույքը ոչնչացնելով կամ վնասելով և այլն: Ընդ որում, վերոնշյալ եղանակները կարող են լինել ինչպես ոչ հանցավոր, այնպես էլ հանցավոր՝ պարունակելով այլ հանցակազմի հատկանիշներ:

Այս տեսանկյունից կարևոր է ընդգծել, որ թեև բնակարան սպորինի մուտք գործելու եղանակները հանցակազմի որակման վրա որևէ ազդեցություն չունեն, այնուամենայնիվ, եթե մուտք գործելը դրսևորվում է հանցակազմի ինքնուրույն հատկանիշներ պարունակող արարքով, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցության կանոններով: Վերոնշյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ կոնկրետ հանցավոր եղանակը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայում կամ ծանրացնող հանգամանքներում ընդգրկված չէ, դրա բաղկացուցիչ մասը չէ, ուստի դուրս է հանցակազմի շրջանակներից և ինքնուրույն քրեաիրավական գնահատական է պահանջում (օրինակ՝ նման իրավիճակ կարող է առաջանալ նաև խարդախության և կեղծ փաստաթուղթ օգտագործելու, սպանության և սպորինի կերպով հրազեն կրելու կամ պահելու և այլ հանցակազմերի պարագայում):

Հետևաբար, այս համատեքստում անդրադառնալով բնակարան սպորինի մուտք գործելով գողության և ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմերի համակցման հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված գողության հանցակազմը՝ ընդհանրապես, և դրա որակյալ՝ բնակարան սպորինի մուտք գործելով տեսակը՝ մասնավորապես, չեն բովանդակում

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Հակոբյանի և Արրակ Գրիգորյանի* գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԲԳ/0063/01/17 որոշման 10-12-րդ կետերը:

այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հանցանքն ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով կատարելը, այլ կերպ՝ վերոնշյալ եղանակն ընդգրկված չէ գողության հանցակազմի դիսպոզիցիայում, դրա շրջանակներից դուրս է, ուստի չի կարող դիտարկվել որպես գողության բաղկացուցիչ մաս և կլանվել նշված հանցակազմում:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ եթե ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունը գուցողվել է ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, որն իր մեջ պարունակում է տվյալ հանցակազմի բոլոր հատկանիշները, կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցության կանոններով:

14. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 254-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը պատժվում է (...):

2. Գողությունը, որը կատարվել է՝

(...)

3) տեխնիկական միջոցի, հարույ կարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով,

(...) պատժվում է տուգանքով՝ քասնասպարիկից հինասպարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:՝

3. Գողությունը, որը կատարվել է՝

(...)

2) բնակարան ապօրինի մուտք գործելով,

(...) պատժվում է ազատագրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:՝

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պարճատել՝

պատժվում է տուգանքով՝ տասնասպարիկից երեսնասպարիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սրարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավրանգ այլ եղանակով,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

4) կատարվել է ուսասյական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված արելություն, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

5) կատարվել է խուլիգանական դրոշմներով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝ պարժվում է ազատագրկնամք՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախարելաված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամք առաջացրել է պարմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկայի ոչնչացում կամ վնասում՝ պարժվում է ազատագրկնամք՝ չորսից ութ տարի ժամկետով»:

14.1. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի, ՀՀ գործող քրեական օրենսգրքով գողության հանցակազմում (նաև՝ ավագակության և կողոպուտի դեպքում) նախատեսվել է նոր ծանրացնող հանգամանք, որն ավելի խիստ պատասխանատվություն է սահմանում գողությունը որևէ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը **ոչնչացնելով, վնասնելով կամ շրջանցնելով** կատարելու դեպքում: Մասնավորապես, օրենսդրի կողմից առավել վտանգավոր են գնահատվել գողության այն դրսևորումները, երբ հանցավորն ուրիշի գույքին տիրանալու համար որոշակի ֆիզիկական արգելք է հաղթահարում՝ ընդհուպ մինչև ոչնչացնում կամ վնասում է այդ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը:

Վերոգրյալից հետևում է, որ, այսպես կոչված կտրանքը, նախատեսվելով որպես ծանրացնող հանգամանք, ընդգրկվել է գողության հանցակազմում, դարձել դրա որակյալ տեսակի բաղկացուցիչ մասը: Այլ կերպ՝ նշված դեպքում գործունենք բաղկացական հանցագործության հետ, քանի որ հանցագործության եղանակը հանցակազմի ինքնուրույն հատկանիշներ պարունակող հանցավոր արարք է:

Այսպես՝ բաղկացական հանցագործությունների դեպքում հանցակազմի ինքնուրույն հատկանիշներ պարունակող արարքն ուղղակիորեն նկարագրված է բուն հանցագործության դիսպոզիցիայում կամ դրա որակյալ տեսակ(ներ)ում, դրա բաղկացուցիչ մասն է կազմում, ուստի դրանք, իրենց ներքին միասնությամք պայմանավորված, դիտարկվում են որպես մեկ հանցագործություն (բաղկացական հանցագործությունների օրինակ է ավագակությունը, մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները և այլն): Բացառություն են կազմում, սակայն, այն դեպքերը, երբ հանցագործության մաս կազմող հանցանքի համար օրենքով ավելի խիստ կամ հավասար պատիժ է նախատեսված, քան ամբողջ հանցագործության համար: Նման դեպքերում արարքները որակվում են առանձին՝ համակցության կանոններով, ինչն

ուղղակիորեն բխում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հետևյալ իրավակարգավորումից՝ «*Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պարաստիանապրկության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պարիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է Կրկյակ հանցանքը*»:

15. Սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարզելու համար, թե ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով կատարված գողության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ և 264-րդ հոդվածների համակցությամբ, թե միայն 254-րդ հոդվածով, անհրաժեշտ է համեմատական վերլուծության ենթարկել վերոնշյալ նորմերի քրեաիրավական սանկցիաները: Մասնավորապես, եթե կատարվածն իր մեջ պարունակում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի հասարակ տեսակը, ապա այն կլանվում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի մեջ և ինքնուրույն քրեաիրավական գնահատական չի պահանջում: Մինչդեռ, եթե կատարվածն իր մեջ պարունակում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որևէ ծանրացնող հանգամանք, ապա հանցանքները պետք է որակվեն համակցության կանոններով, քանի որ դրանց դեպքում, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի համեմատ, ավելի խիստ պատիժ է նախատեսված:

15.1. Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ եթե բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունը զուգորդվում է ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, որն իր մեջ պարունակում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները, ապա կատարվածը պետք է որակվի միայն 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, մինչդեռ, ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ նախատեսված ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով, արարքները պետք է որակվեն հանցագործությունների համակցության կանոններով:

16. Սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Առաջին ստյանի դատարանը հաստատված է համարել ամբաստանյալ Վ.Ստեփանյանի մեղավորությունն իրեն մեղազգրվող՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով ու սույն օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքները կատարելու մեջ⁶:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ բնակարանի մուտքի դռան փականը վնասելու միջոցով այնտեղ ապօրինի մուտք գործելը և գողություն

⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կատարելն ընդգրկված է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի դիսպոզիցիայում, և այն ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ որակում չի պահանջում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել և փոփոխել է, ամբաստանյալ Վ.Ստեփանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել է անմեղ ու արդարացրել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ⁷:

17. Վերոշարադրյալ փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ուրիշի գույքի վնասումն ընդգրկված է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված՝ բնակարան ապօրինի մուտք գործելով գողության հանցակազմի դիսպոզիցիայում, հետևաբար ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով լրացուցիչ որակում չի պահանջում, հիմնավոր չեն:

Մինևսյն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի, ՀՀ գործող քրեական օրենսգրքով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը **ոչնչացնելով կամ վնասելով** կատարված գողությունը, նախատեսվելով որպես ծանրացնող հանգամանք, արդեն իսկ ընդգրկվել է գողության հանցակազմում և դարձել դրա որակյալ տեսակի բաղկացուցիչ մասը:

18. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պարճատել՝*

պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսպարիկից հարյուրասպարիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկնամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով

(...):»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն գլխում զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնասպարիկից հինգհարյուրասպարիկը չգերազանցող գումարը (արժեքը) (...):»*:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար, որը **խոշոր չափերի** գույքային վնաս է պատճառել, իսկ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ պատճառված գույքային վնասի խոշոր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամից մինչև 5 միլիոն ՀՀ դրամը:

⁷ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

19. Մեջբերված իրավակարգավորումներից հետևում է, որ ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի, որի պարտադիր հատկանիշ է **զգայի չափերի** (30.000 ՀՀ դրամից 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը) վնասի պատճառումը, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է **խոշոր չափերի** (500.000 ՀՀ դրամից 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը) գույքային վնասի պատճառումը: Մինևույն ժամանակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը **ոչնչացնելով կամ վնասելով** կատարված գողության պարագայում, օրենսդիրը պատճառած գույքային վնասի նվազագույն չափ չի սահմանել⁸:

20. Սույն գործի փաստական հանգամանքներից բխում է, որ Վ.Ստեփանյանին մեղազգրվել է գողության ընթացքում տուժողի գույքին 60.000 ՀՀ դրամի չափով վնասի պատճառում:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալը գնահատման ենթարկելով սույն որոշման 18-19-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումները լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժողի գույքին 60.000 ՀՀ դրամի չափով վնաս պատճառելու արարքը շարունակում է մնալ հանցավոր և համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Սակայն, նշված հոդվածի և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիաների համեմատական վերլուծությունը⁹ վկայում է այն մասին, որ նոր օրենքն այդ արարքի համար առավել խիստ պատիժ է նախատեսում, հետևաբար, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, համաձայն որի՝ *«Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խարսցնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վարդաբանող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի»*, այն չի կարող հետադարձ ուժ ունենալ¹⁰: Հետևաբար, ամբաստանյալ Վ.Ստեփանյանին մեղազգրված արարքները ենթակա են որակման հանցանքների համակցությամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

22. Վերոնշյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Վ.Ստեփանյանի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության հարցը:

⁸ Նույնպիսի մոտեցում օրենսդիրը որդեգրել է նաև, օրինակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես *«Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամրելու»* հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսելով *«գույքը ոչնչացնելու կամ վնասելու»* հատկանիշը:

⁹ Տե՛ս սույն որոշման 14-րդ և 18-րդ կետերը:

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նորայր Հովհաննիսյանի գործով 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԴ-0721/01/20 որոշման 19-րդ կետը:

Մասնավորապես, 1998 հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայրնասրերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պարասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից (...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...):»¹¹:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դիտավորյալ հանցագործություն է, որի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում երկու տարին, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, նշված հոդվածով սահմանված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

23. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

¹¹ Անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ ամբաստանյալ Վ.Ստեփանյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական կարգավորումը:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Վ.Ստեփանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող արարքն ավարտվել է առավելագույնը **2020 թվականի մարտի 3-ին**¹² և **2022 թվականի մարտի 3-ի** դրությամբ վերջինիս նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

25. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 22-23-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Ստեփանյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Վ.Ստեփանյանին արդարացնելով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ Վ.Ստեփանյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով անցել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, ուստի անհրաժեշտ է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ ամբաստանյալ Վ.Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 19-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ամբաստանյալ Վ.Ստեփանյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի պահանջն առ այն, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է փոփոխել նաև քաղաքացիական հայցի մասով. տուժող Ա.Ալավերդյանի կողմից ներկայացված և ամբողջությամբ բավարարված քաղաքացիական հայցի գումարից պետք է հանել գույքը վնասելու հետ կապված 60.000 (վաթսու հազար) ՀՀ դրամ գումարը՝ այդ մասով քաղաքացիական հայցը թողնելով առանց քննության: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի

¹² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով¹³:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 367-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վրեժ Վաղինակի Ստեփանյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և քաղաքացիական հայցի մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 19-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Ամբաստանյալ Վրեժ Վաղինակի Ստեփանյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

3. Ամբաստանյալ Վրեժ Վաղինակի Ստեփանյանին թողնել կրելու 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նշանակված՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատագրվումը՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Վրեժ Վաղինակի Ստեփանյանից հօգուտ տուժող Արթուր Ալավերդյանի բռնագանձել 832.000 (ութ հարյուր երեսուններկու հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցում: Գույքը վնասելու հետ կապված 60.000 (վաթսու հազար) ՀՀ դրամի չափով քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

¹³ Տե՛ս նաև Վճռաբեկ դատարանի՝ *Ռուսլամ Սահակյանի* գործով 2023 թվականի հունիսի 16-ի թիվ ԵԴ/0864/01/20 որոշման 16-րդ կետը:

64.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0009/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Գ.ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

մասնակցությամբ դատախազ՝
տուժող՝
տուժողի ներկայացուցիչ՝
ամբաստանյալներ՝

Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ
Գ.ՎԻՐԱԲՅԱՆԻ
Կ.ՏՈՆՈՅԱՆԻ
Հ.ՄՈՎՍԻՍՅԱՆԻ
Ա.ԱՐՄԵՆՅԱՆԻ
Հ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

պաշտպան՝

2023 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Հովհաննես Նեզուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2004 թվականի ապրիլի 23-ին զենք պահելու կասկածանքով Գրիշա Յաշայի Վիրաբյանը բերման է ենթարկվել Ոստիկանության Արտաշատի բաժին:

Գ.Վիրաբյանի կողմից ոստիկանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու փաստի առթիվ նույն օրը Արարատի մարզի դատախազությունում հարուցվել է թիվ 27203404 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

1.1. 2004 թվականի մայիսի 3-ին Գրիշա Վիրաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

1.2. 2004 թվականի օգոստոսի 11-ին թիվ 27203404 քրեական գործով որոշում է կայացվել Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի աշխատակիցների վերաբերյալ վարույթը՝ հանցակազմի բացակայության և վնաս պատճառած արարքը քրեական օրենքով օրինաչափ համարվելու հիմքով, կարճելու մասին:

1.3. 2004 թվականի օգոստոսի 17-ին Գ.Վիրաբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

1.4. 2004 թվականի օգոստոսի 30-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի կողմից որոշում է կայացվել՝ Գ.Վիրաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ. «Կատարած հանցագործության ընթացքում Գ.Վիրաբյանի առողջությանը նույնպես միջին ծանրության վնաս է պատճառվել, նրա ամորձին վնասվել, վիրահատվել և հեռացվել է, որը անբուժելի է, և փաստորեն զրկանքներ կրելով՝ նա քավել է իր մեղքը, իսկ նման պայմաններում նպատակահարմար չէ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել»:

1.5. 2004 թվականի նոյեմբերի 12-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին աստանի դատարանի որոշմամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ Գ.Վիրաբյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

1.6. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին աստանի դատարանի որոշման դեմ Գ.Վիրաբյանի վերաքննիչ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2004 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ մերժվել է:

1.7. Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2005 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել է և նյութերն ուղարկել նույն դատարան նոր քննության:

1.8. Նոր քննության արդյունքներով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի մարտի 3-ի որոշմամբ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ Գ.Վիրաբյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը թողնվել է առանց բավարարման:

1.9. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ բողոքարկվող դատական ակտը՝ անսխալ:

2. Գ.Վիրաբյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 40094/05) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Վիրաբյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 3-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման փաստը:

3. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, Գ.Վիրաբյանի ներկայացուցիչ Ա.Սիրունյանը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել, որի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ հարուցվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 12-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի մարտի 3-ի որոշումները բեկանվել են, և գործն ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

4. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 22-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը վերացվել է, և սահմանվել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝

քրեական գործի վարույթը վերսկսելու պայմաններում վերացնել Գ.Վիրաբյանի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 10-ի վճռում նշված իրավունքների և ազատությունների խախտումները:

4.1. Վերոնշյալ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 22-ի որոշումը բեկանվել և փոփոխվել է, ՀՀ դատախազությունը պարտավորեցվել է վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ թույլ տրված՝ Գ.Վիրաբյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

5. 2014 թվականի օգոստոսի 19-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնակատարի կողմից որոշում է կայացվել թիվ 27203404 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը վերացնելու մասին:

5.1. 2014 թվականի օգոստոսի 21-ին քրեական գործով կարճված վարույթը վերսկսվել է:

5.2. 2014 թվականի սեպտեմբերի 1-ին դատախազի կողմից որոշում է կայացվել նաև թիվ 27203404 քրեական գործով Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի աշխատակիցների վերաբերյալ վարույթը կարճելու մասին 2004 թվականի օգոստոսի 11-ի որոշումը վերացնելու վերաբերյալ:

5.3. ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից 2004 թվականի ապրիլի 23-ին Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ 2016 թվականի մայիսի 10-ին հարուցվել է թիվ 62212316 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

5.4. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Գ.Վիրաբյանը ճանաչվել է տուժող:

5.5. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 17-ի և փետրվարի 20-ի որոշումներով Հովհաննես Նեգոսի Մովսիսյանը և Արմեն Ռազմիկի Արսենյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

5.6. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 10-ի որոշմամբ մեղադրյալներ Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և քրեական գործով վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

5.7. Վերոնշյալ որոշումը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վերացվել է:

6. 2018 թվականի փետրվարի 20-ին քրեական գործը, ըստ մեղադրանքի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան): Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և ազատվել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

7. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ մերժելով բողոքները:

8. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ, որը 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ փոխվել է բանավոր ընթացակարգի:

8.1. 2021 թվականի հունվարի 27-ին հրավիրված դատական նիստում Վճռաբեկ դատարանը Եվրոպական կոնվենցիային կից թիվ 16 արձանագրության հիման վրա որոշել է խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ հետևյալ հարցով. *խոչընդոտման կամ դրան հավասարեցված հանցանքներով միջազգային իրավունքի արդյունքների վկայակոչմամբ քրեական պարասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառումն արդյո՞ք համահունչ կլինի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական օրենսդրությամբ քրեական պարասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառման պահանջ նախատեսված չէ:*

9. Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը (այսուհետ՝ նաև Մեծ պալատ) 2022 թվականի ապրիլի 26-ին Վճռաբեկ դատարանին է տրամադրել «Ըստ էության խոչտանգման քննության արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման և պատժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ» թիվ P16-2021-001 խորհրդատվական կարծիքը (այսուհետ՝ նաև Խորհրդատվական կարծիք), որի հայերեն թարգմանությունը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 28-ին:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներին վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ազատելով քրեական պատասխանատվությունից, խախտել են Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրով ամրագրված՝ խոշտանգման դեպքում վաղեմության ժամկետների կիրառման անթույլատրելիության վերաբերյալ նորմերը:

11. Վերլուծելով «Բողոշանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի դրույթները, ինչպես նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումները բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանների կողմից տրված մեկնաբանությունները հանգեցնում են պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման, քանի որ Եվրոպական դատարանի վճիռները Եվրոպական կոնվենցիայի անբաժան մաս են և ենթակա են կիրառման Հայաստանի Հանրապետությունում՝ որպես միջազգային պայմանագրից բխող նորմատիվ ակտեր:

12. Բողոքաբերը նշել է, որ խոշտանգումների արգելքն ամրագրված է մարդու իրավունքներին և մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում և ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք՝ *jus cogens* նորմ, ինչը նշանակում է, որ այն պարտադիր է բոլոր պետությունների համար, նույնիսկ եթե այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր, և որ միջազգային կամ ներպետական որևէ այլ կանոն չի կարող հակասել *jus cogens* սկզբունքին: Բողոքաբերը փաստարկել է, որ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բացարձակ արգելքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև պետության կողմից նման դեպքերի պատշաճ քննության իրականացում, իսկ նման արարքներ կատարողների նկատմամբ համարժեք պատժի կիրառում՝ երաշխավորելով վերջինիս անխուսափելիությունը: Վերոնշյալ արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, համաներում, ինչպես նաև անպատժելիության հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելը, բողոքաբերի պնդմամբ, ուղղակիորեն հանգեցնում են պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման:

13. Բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը Եվրոպական կոնվենցիայի օրգանական մասն է կազմում, ինչից էլ հստակ հետևում է, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու կոնվենցիոն արգելք է սահմանված: Ուստի, բողոքաբերի պնդմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով այդ գործերով վաղեմության ժամկետներ չպետք է կիրառվեն, և դա չի կարող հանգեցնել

ամբաստանյալների իրավունքների և օրինական շահերի խախտման, չի կարող առաջացնել իրավական անորոշություն:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը և ամբաստանյալների նկատմամբ նշանակել կատարած արարքների համաչափ պատիժ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հանգամանքները.

I. Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռը.

15. Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը, վերահաստատելով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ իր նախադեպային իրավունքում բազմիցս արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է. «*Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանվում են ժողովրդավարական հասարակությունների ամենասիմարար արժեքները: Նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպես, օրինակ՝ սահաբեկության և կազմակերպված հանցագործության դեմ պայքարում Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշորանգումները և անանորդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պարիժը անկախ զոհի պահվածքից (տե՛ս Labita v. Italy [GC], թիվ 26772/95, §119, ՄԻԵԿ 2000-IV, և Chahal v. the United Kingdom, 1996 թվականի նոյեմբերի 15, §79, Զեկոյցներ 1996-V): 3-րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ սզգհ կյանքին պատնասող արտակարգ դրության դեպքում (տե՛ս Selmouni v. France [GC], թիվ 25803/94, §95, ՄԻԵԿ 1999-V, և Assenov and Others v. Bulgaria, 1998 թվականի հոկտեմբերի 28, §93, Զեկոյցներ 1998-VIII)»²:*

15.1. Կոնկրետ գործով Եվրոպական դատարանը գտել է, որ. «*(...) [Թ] է՝ Կատավարության և թե՛ ներպետական մարմինների կողմից դիմումատուի վնասվածքների առումով արված բացառությունը խիստ կասկածելի է և անսովորական: Միևնույն ժամանակ, այն նշում է, որ հետաքննության բոլոր փուլերում դիմումատուին ներկայացրել է համապարասիան և մանրամասն նկարագրություն այն մասին, թե ով է իր նկատմամբ վար վերաբերմունք ցուցաբերել և ինչպես է դա տեղի ունեցել: Նրա պնդումները համապարասիանում էին տարբեր բժշկական արձանագրություններում առկա նրա վնասվածքների նկարագրությանը (...):*

Վերոնշյալը հաշվի առնելով Դատարանը չի կարող դիմումատուի վնասվածքների վերաբերյալ Կատավարության բացառությունը համարել

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 148:

բավարար և համոզիչ, և հետևաբար, այն եզրակացնում է, որ նրա վնասվածքները վերաբերելի են վար վերաբերմունքի այն դրսևորումներին, որոնց մասով մարմինները պարասիանսարու էին»³:

15.2. Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ. «(...) [Ի]մնումարուն ենթարկվել է առանձնապես դաժան վար վերաբերմունքի, որը նրան պարճատել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տատապանք: Մասնավորապես, նրա ամորճիներին շարունակաբար հասցվել են հարվածներ ուրբերով, ձեռքերով և մերսդական սուարկաներով: Այս վնասվածքները երկարարև հետևանքներ թողեցին նրա առողջության վրա, քանի որ նրա ձախ ամորճին այնպես էր պարովել, որ այն արիպված հետացվեց: Այնուհետև նրան, ձեռնաշղթաներով ձեռքերը մեջքին կապած, ծեծի էին ենթարկել, և նա սրացել էր հարվածներ կրճքավանդակին և կողոսկրերին: Այս գործի հանգամանքներից կարելի է լուրջ հետևություններ անել, որ դիմումարուի նկարմամբ մարտրաբար է ցուցաբերվել վար վերաբերմունք նրան պարճելու կամ սհարելելու նպարակով, կամ էլ երկուսը միասին: Հաշվի առնելով վար վերաբերմունքի բնույթը, սարիճանը և նպարակը Դարարանը գրնում է, որ այն կարելի է բնորշել որպես խոշարանգումների ենթարկելու գործողություններ (ընէս Selmouni, վերևում մեջբերված, §§96-105, և Salman, վերևում մեջբերված, §115) »⁴:

Արդյունքում Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում:

15.3. Անդրադառնալով վատ վերաբերմունքի մասին պնդումների շուրջ արդյունավետ քննություն իրականացնելու վերաբերյալ հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է. «Դարարանը վերահասարարում է, որ երբ անհարը ենթարաբար պնդում է այն մասին, որ նրա նկարմամբ 3-րդ հոդվածի խախարմամբ ցուցաբերվել է իսիար վար վերաբերմունք ոարիկանության կողմից կամ Պետության այլ նման գորճակախների կողմից, սապա այդ դրույթով, որը ընթերցվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաճայն Պետության հիմնական պարականության մասին դրույթի հետ հետկյալ կերպ՝ «իբենց իրավագորության ներքո գրնվող յուրաքանչյուրի համար սպահահովում են այն իրավունքներն ու ազարությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի (...)», [ախտողակի կերպով պահանջվում է արդյունավետ պաշտոնական հետարնության իրականացում (ընէս Assenov and Others, վերևում մեջբերված, §102, և Labita, վերևում մեջբերված, §131)»⁵:

15.4. Եվրոպական դատարանը, ընդունելով հանդերճ, որ նշված գործով քրեական վարույթը հարուցվել է դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորման հենց նույն օրը, և սկսվել է հետաքննություն, այնուամենայնիվ նշել է, որ. «(...) [Թ]րեական գործի հանգամանքները բացատապես հիմնվել են իրարարճությունների մասին ոարիկանների կողմից տրամսարված տարբերակի վրա, ներառյալ հանցագործություն կարարած

³ Տեն նույն տեղում, կետեր 154-155:

⁴ Տեն նույն տեղում, կետ 157:

⁵ Տեն նույն տեղում, կետ 161:

ենթադրյալ անձանց և նրանց այն գործընկերների կողմից տրամադրված տրեդելությունների վրա, ովքեր բոլորը որոշակիորեն ներգրավված էին 2004 թվականի ապրիլի 23-ի իրադարձություններում՝ չլսելով նույնիսկ դիմումատուին կամ որևէ այլ վկայի: Ավելին, հենց սկզբից իրադարձությունների մասին այս տարբերակը համարվել է հաստատված փաստ (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ §34 մեջ նշված դատաբժշկական փորձաքննություն կարգադրելու մասին քննիչի որոշումը) և ամբողջ հետաքննությունը իրականացվել է այդ կանխավարկածով: Անհրաժեշտ է նշել, որ նախկինության տարբերակը քննիչի կողմից հենց այդպես ընդունվել է այն ժամանակ, երբ նա նույնիսկ իր տրամադրության փակ չի ունեցել դիմումատուի մասնավորների բնույթի և հաստատվող պարճանների մասին դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները: Արդյունքում, դիմումատուն դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված նախկինները երբեք չեն համարվել հաստատվող կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ, իսկ նախկինության աշխարակից Հ.Մ-ի դեպքում որպես տուժող⁶:

15.5. Եվրոպական դատարանը, կասկած հայտնելով, որ հետաքննություն իրականացնող մարմնի միակ նպատակն է եղել դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը և դրա շուրջ ապացույցներ հավաքելը, նշել է, որ. «Հետաքննություն իրականացնող մարմինները հետաքննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևիցե բացարժեքություն այն մասին, թե ինչու են նրանք համարում նախկինների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները ոչ վստահելի: Վար վերաբերմունքի մասին իր պնդումների առումով ամբողջական հետաքննություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պարճելու մասին դիմումատուի բազմաթիվ պահանջները անբեկել են, կամ դրանց տրվել է մակերեսային պատասխան (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ §54): Այսպիսով, պարզվում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տրվել են նախկինների կողմից տրամադրված վկայությանը և դրանով կարելի է ասել չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվությունը և անկախությունը»⁷:

15.6. Անդրադառնալով իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին Գ.Վիրաբյանի պնդումների շուրջ քննությանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ քննության ընթացքում առկա են եղել մի շարք էական բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնք կարող էին վտանգել դրա վստահելիությունը և արդյունավետությունը⁸:

15.7. Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) [Վ] այդ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առումով մարմինների կողմից ձեռնարկված հետաքննությունը եղել է անարդյունավետ, ոչ պարշաճ և միանգամայն թերի: Դրանով հաստատվող չի եղել տալ հավաստի եզրակացություններ և արձանագրել գործի փաստերը: Իրավասու մարմինները

⁶ Տե՛ս նույն տեղում, կետ 165:

⁷ Տե՛ս նույն տեղում, կետ 167:

⁸ Տե՛ս նույն տեղում, կետեր 171-177:

բավականաչափ բարեխիղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պարծելու հանցագործներին»⁹:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական նորմի խախտում:

15.8. Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Գ.Վիրաբյանի նկատմամբ վատ վերաբերմունքը դրսևորվել է քաղաքական դրդապատճառներով՝ Եվրոպական դատարանը նշել է, որ. «(...) [Բ]իմունմարտի պնդումները ստուգելու որևէ օբյեկտիվ եղանակ չկա: Ճշմարիտ է, որ դիմումարտուի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ձերբակալումը սուր քննադատությունների և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Այրուհանդերձ, դա բավարար չէ եզրակացնելու, որ վայր վերաբերմունքը, որպես այդպիսին, նույնպես պայմանավորված է եղել քաղաքական դրդապատճառներով: Գայտելով գործի հանգամանքներից՝ չի կարելի բացառել, որ դիմումարտուի նկատմամբ վայր վերաբերմունք է ցուցաբերվել՝ ուստի կանոնադրության ծառայող Հ.Մ.-ին պատճառած վնասվածքի համար վրեժ լուծելու նպատակով: Չի կարելի բացառել նաև, որ ուստի կանոնադրության ծառայողների բռնի վարքագիծը պայմանավորված է եղել դիմումարտուի հետ առերեսման փաստով կամ ուստի կանոնադրության բռնի ուժի գործադրման պատճառներով, որոնք հնարավոր չէ բացառել: Թեև նման գործողությունները պետք է արժանանան անվերապահ դատապարտման և որևէ պարագայում չպետք է արդարացվեն կամ ներվեն, Գայտարանը չի կարող հիմնավոր կասկածից վեր եզրակացնել, որ դիմումարտուի նկատմամբ դրսևորված վայր վերաբերմունքը պայմանավորված է եղել իր քաղաքական հայացքներով»¹⁰:

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցված 14-րդ հոդվածի նյութաիրավական կողմը չի խախտվել:

15.9. Այնուհետև, անդրադառնալով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) [Բ]ռնությանը ուղեկցվող միջադեպեր հետաքննելիս պետական մարմինները լրացուցիչ պարզավորություն են ստանձնում. այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ քաղաքական ցանկացած դրդապատճառ բացահայտելու և պարզելու, թե արդյո՞ք տարբերվող քաղաքական համոզմունքների նկատմամբ անհանդուրժողականությունն իր դերն է ունեցել այդ դեպքերում: Այդ պարզավորությունը չկատարելը և քաղաքական նկատառումներով պայմանավորված բռնությունը որևէ քաղաքական երանգ չունեցող գործերի հետ նույն հիմքով քննելը կնշանակի աչք փակել այն գործողությունների վրա, որոնցով խախտվում են հիմնարար իրավունքները: Էսպես տարբեր իրավիճակները կարգավորելու եղանակների միջև տարբերակում չկատարելը կարող է հանգեցնել չհիմնավորված վերաբերմունքի, որը չի համապատասխանում Կոնվենցիայի

⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 178:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, կետ 214:

14-րդ հոդվածին (ընդ համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others v. Bulgaria*, թիվ 43577/98 և 43579/98, §158, 2004 թվականի փետրվարի 26, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, §69):

(...) [Բ]աղաքական դրդապարճառների սովորական փաստի սպառնուցումը չափազանց դժվար է գործնականում: Բռնի գործողության քաղաքական հնարավոր երանգները հետաքննելու պարասխանող Պետության պարտականությունը ենթադրում է հնարավոր, սակայն ոչ ծայրահեղ ջանքերի գործադրում: Պետական մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան քայլերը վկայություններ հավաքելու ու սպառնալու, ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցներն օգտագործելու և ամբողջովին հիմնավորված, անկողմնակալ և օբյեկտիվ որոշումներ ընդունելու համար բաց չթողնելով որևէ կասկածելի փաստ, որը կարող է մարնանշել քաղաքական նկատարողներով բռնությանը (ընդ համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others*, վերևում մեջբերված, §159, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, §69)»¹¹:

15.10. Վերագրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) [Բ]խնումնադրոն բազմաթիվ առիթներով հետաքննության մարմիններին պնդել է, որ իր նկատմամբ դրսևորված վար վերաբերմունքը կապված է ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին իր մասնակցության հետ, և ունի քաղաքական դրդապարճառներ և պահանջել, որ այս հանգամանքը հետաքննվի, իսկ մեղավորները պարժվեն (...): Երկու այլ վկաներ այս պնդումը հիմնավորող փաստարկներ են ներկայացրել (...): Վերջապես Դատարանը նկատում է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը նշել է ձերբակալման պարճառների բացակայությունը (...):

Հաշվի առնելով վերոնշյալը Դատարանը համարում է, որ հետաքննության մարմիններն ունեին հավասարի և բավարար տեղեկություններ, որոնց հիման վրա ակնհայտ էր դատում նախնական արուգում և, կախված արդյունքից, դիմումնադրուի նկատմամբ դրսևորված վար վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապարճառների հետաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը:

Արդուհանդերձ, պետական մարմինները գրեթե ոչինչ չեն արել այս տեղեկությունները արուգելու համար: Ուարիկանության միայն երկու աշխատակիցներից՝ Ա.Մ-ից և Ռ.Ս-ից էին հարցրել, թե արդյոք իրենք տեղյակ են եղել դիմումնադրուի քաղաքական պարկաննելիության մասին, սակայն սա չի կարող համարվել նման լուրջ պնդումը հետաքննելու իրական փորձ և պարզապես ձևական բնույթ է կրում (...): Այլ հարցեր չեն րրվել, իսկ ուարիկանության մյուս աշխատակիցները, այդ թվում Հ.Մ-ն և Ա.Կ-ն, ում դիմումնադրոն ուղղակիորեն մարնանշել է որպես իր նկատմամբ բռնի գործողություններ կարարելուց առաջ և հետո քաղաքական տեսանկյունից անհանդուրճողական հայրարարություններ արած անձանց, նույնիսկ չեն հարցաքննվել այդ պնդումների առնչությամբ: Ոչ մի

¹¹ Տե՛ս նույն տեղում, կետեր 218-219:

վորձ չի կարարվել՝ պարգելու դիմումարուի ձերբակարման հանգամանքները, այդ թվում՝ բազմաթիվ անճշտություններ և ձերբակարման հարավոր քաղաքական երանգը մարանանշող այլ տարրեր, իսկ ներկայացված նյութերից ոչ մի եզրակացություն չի արվել: Ուարի Դարարանը եզրակացում է, որ պերական մարմինները չեն կարարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հեր դիարարկվող 14-րդ հոդվածի համաձայն սրանձնած իրենց պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել բոլոր հարավոր քայլերը՝ պարգելու, թե արդյոք դիմումարուի նկարմամբ դրսևորված վար վերաբերմունքը ցուցաբերվել է իարականության հիմքով»¹²:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցված 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմը:

II. Սույն գործով Հովհաննես Նեգուսի Մովսիսյանին և Արմեն Ռազմիկի Արսենյանին առաջադրված մեղադրանքները.

16. Հ.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի համաձայն՝ «2004թ. սպրիլի 23-ին՝ ժամը 17:40-ին, հրագեն պահելու կասկածանքով ուրիկանության Արտաշարի բաժին է բերման ենթարկվել Արարարի մարզի Շահունյան գյուղի բնակիչ Գրիշա Յաշայի Վիրաբյանը: Բերման ենթարկվելիս ուրիկանության աշխարակիցների օրինակյան պահանջներին Գրիշա Վիրաբյանի կողմից չենթարկվելու կասակցությամբ նահասպարարարվող նյութերի շրջանակներում բաժնի վարչական շենքի երկրորդ հարկում գրնվող քրեական հերախուզության բաժանմունքի հիմգերորդ աշխարասենյակում բանավեճ է սկսվել Գրիշա Վիրաբյանի ու ուրիկանության Արտաշարի բաժնի քրեական հերախուզության բաժանմունքի պեր Հովհաննես Մովսիսյանի միջև: Այդ ընթացքում Գրիշա Վիրաբյանը աշխարասենյակի սեղանի վրա դրված բջջային հեռախուսի լիցքավորման սարքով հարվածել ու վնասել է Հովհաննես Մովսիսյանի աջ աչքը:

Գրիշա Վիրաբյանի նված գործողության համար վերջինիս պարծելու նպարակով ուրիկանության Արտաշարի բաժնի քրեական հերախուզության բաժանմունքի պեր Հովհաննես Մովսիսյանը նույն բաժնի քրեական հերախուզության բաժանմունքի օպեր լիագոր Արմեն Արսենյանի հեր՝ գիրակցելով և լրացնելով մեկը մյուսի գործողությունները, «Ուրիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նահարետված ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերի բացակայության պայմաններում, սկիսայրորեն դուրս գալով իրենց լիագորությունների շրջանակից և, տվյալ դեպքում չունենալով ֆիզիկական ուժ գործադրելու լիագորություն, բնություն գործադրելով Գրիշա Վիրաբյանի նկարմամբ, բաժնի աշխարասենյակներից մեկում ձեժի են ենթարկել նրան՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով ամորձիներին և մարմնի այլ մասերին՝ վերջինիս առողջությանը պարճատելով միջին ծանրության

¹² Տես նույն տեղում, կետեր 222-224:

մարմնական վնասվածք՝ փոշրի հեղուկամարմնային հեմատոմայի, ձախակողմյան հեմատոցելի, ձախ ամորձու պարովածքի, աջ սրունքի արյունազեղման ձևով:

Հովհաննես Մովսիսյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պարճատվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պարճատվել նրա Իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Մահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլարելիության նրա իրավունքը, էական վնաս է պարճատվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ ռաբիկանությունը»¹³:

16.1. Ա.Արսենյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «2004թ. ապրիլի 23-ին՝ ժամը 17:40-ի սահմաններում, գրնվելով ռաբիկանության Արաւաշարի բաժնի վարչական շենքում, տեղեկացել է, որ հրագեն պահելու կասկածանքով ռաբիկանության Արաւաշարի բաժնի բերման ենթարկված Արաւաշարի մարզի Շահումյան գյուղի բնակիչ Գրիշա Վիրաբյանի կողմից ռաբիկանության աշխատակիցների օրինական պահանջներին չենթարկվելու կապակցությամբ նախապարտաարվող նյութերի շրջանակներում բաժնի վարչական շենքի երկրորդ հարկում գրնվող քրեական հետախուզության բաժանմունքի հինգերորդ աշխատասենյակում բանավեճ է տեղի ունեցել նրա ու ռաբիկանության Արաւաշարի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանի միջև: Այդ ընթացքում Գրիշա Վիրաբյանը աշխատասենյակի սեղանի վրա դրված բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածել ու վնասել է Հովհաննես Մովսիսյանի աջ աչքը:

Գրիշա Վիրաբյանի նշված գործողության համար վրեժխնդիր լինելու անձնական շարժառիթով և մարմնական վնասվածք պարճատելու դիտարկողությամբ, ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 56-րդ, 57-րդ հոդվածների համաձայն հետաքննության մարմնի աշխատակից, ռաբիկանության Արաւաշարի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպեր լիազոր Արմեն Արսենյանը նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանի հետ՝ գհրակցելով և լրացնելով մեկը մյուսի գործողությունները, «Ռաբիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերի բացակայության պայմաններում, ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից և, տվյալ դեպքում չունենալով ֆիզիկական ուժ գործադրելու լիազորություն, բռնություն գործադրելով Գրիշա Վիրաբյանի նկատմամբ, բաժնի աշխատասենյակներից մեկում ծեծի են ենթարկել նրան՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով ամորձիներին և մարմնի այլ մասերին՝ վերջինիս առողջությանը պարճատելով միջին ծանրության մարմնական վնասվածք՝ փոշրի հեղուկամարմնային հեմատոմայի, ձախակողմյան հեմատոցելի, ձախ ամորձու պարովածքի, աջ սրունքի արյունազեղման ձևով:

¹³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 288-289:

Արևեն Արևենյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պատճառվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պատճառվել նրա Իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը, էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ ոստիկանությունը»¹⁴:

III. Սույն գործով ստորադաս դատարանների դիրքորոշումները.

17. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով արձանագրել է, որ. «(...) Դատարանն ապացուցված է համարում, որ Հովհաննես Մովսիսյանի ու Արևեն Արևենյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պատճառվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պատճառվել նրա իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը, էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ ոստիկանությունը:

Այսպիսով, դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Հովհաննես Նեգոսի Մովսիսյանը որպես պաշտոնատար անձ՝ դիրավորությամբ կատարել է բռնությամբ զուգորդված այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից և էական վնաս պատճառել անձի իրավունքներին ու պետության օրինական շահերին, որպիսի արարքի համար նա պետք է պարասխանատրության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ամբաստանյալ Արևեն Ռազմիկի Արևենյանը որպես պաշտոնատար անձ՝ դիրավորությամբ կատարել է բռնությամբ զուգորդված այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից և էական վնաս պատճառել անձի իրավունքներին ու պետության օրինական շահերին, որպիսի արարքի համար նա պետք է պարասխանատրության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

(...)

Դատարանն անդրադառնալով կատարածի համար Հովհաննես Մովսիսյանին և Արևեն Արևենյանին քրեական պարասխանատրության ենթարկելու հարցին, արձանագրում է, որ՝ (...) [այն [պատճառատարությունը], որ պետք է (...) ՄԻԵԴ-ի [«Մոկանտո ընդդեմ Ռումինիայի» գործով (գանգարներ թիվ 10865/09, 45886/07 և 32431/08)] որոշմամբ հայտնված դիրքորոշման հիմքով քրեական գործի վարույթը շարունակել, ինչը և կատարվել է նախաքննական մարմնի կողմից, և այն դրվել

¹⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 289-290:

է նաև մեղադրական եզրակացության հիմքում, դապարանն անթույլատրելի է համարում, քանի որ ինչպես դապարանագի որոշմամբ, այնպես էլ նախաքննական մարմնի կողմից չեն պարզաբացարձակվել, թե նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ինչ չափով և ինչ հիմքերով են կիրառելի Հայաստանի Հանրապետությունում նախաքննություն կատարելու համար և ինչու չպետք է կիրառվի ՀՀ ներպետական օրենքը՝ ՀՀ քրեական դապարանության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը:

Դապարանը գրնում է, որ նախաքննական մարմնի կողմից չհիմնավորված կերպով է կիրառվել ՄԻԵԳ-ի նշված որոշումը, որի կիրառմամբ անարեւելել են հետևյալ հանգամանքները, այսպես.

ՄԱԿ 1994 դեկտեմբերի 10-ի «Ֆոշտանգումների և այլ դաժան, անանդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պայտրի դեմ» Կոնվենցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը, չի պարունակում որևէ դրույթ այն մասին, որ վաղեմության ժամկետներ կիրառելն արգելվում է և միայն խոշտանգումների դեմ պայտրի կումիրեն Կոնվենցիայի իր մեկնաբանություններում, որոնք, ըստ էության, կրում են խորհրդավակյան բնույթ, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար 2012 թվականին և 2017 թվականին կատարված մոնիթորինգի և դիտարկումների արդյունքով (...) ափսոսանք է հայտնում առ այն, որ թեև նախորդ դիտարկումներում, առաջարկություններում արձանագրել էր (տես՝ CAT/C/ARM/CO/3, կետ 10), սակայն դեռևս գործող օրենսդրությունը ասեն դեպքում պահպանում է վաղեմության ժամկետները (...) խոշտանգումների գործերով, և անձինք, ովքեր դապարանարվել են այդ հոդվածներով օգրվում են համաներման կիրառումից: (...): Թերևս 2012 թվականի մոնիթորինգից հետո խոշտանգումների և այլ դաժան, անանդկային կամ նվաստացնող վերաբերմունքին վերաբերվող օրենսդրական բացը լրացնելու համար ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել է լրացում և սահմանվել է առանձին հոդված խոշտանգման վերաբերյալ՝ 309.1-րդ հոդվածը՝ այսինքն Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը, կարևորելով կումիրեի դիտարկումներն ու առաջարկները, ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածից բացի լրացում է կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ 309.1 խոշտանգում հոդվածով, որն իր դիտարկիցիայով էսպես արբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածից, այսինքն՝ սահմանվել է նոր հանցարեսակ: Ընդ որում, օրենսդիր մարմինը, սահմանելով խոշտանգման մասին հոդվածը, որևէ անդրադարձ չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածին և ՀՀ քրեական դապարանության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, այսինքն՝ դրանցում որևէ փոփոխություն չի կատարել այն դեպքում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում սպառիչ թվարկված են հանցագործության այն տեսակները, որոնց նկարմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չեն կամ կիրառելի են սահմանափակումով, ինչը նշանակում է, որ օրենսդրական որևէ սահմանափակում չկա ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում չթվարկված մյուս հանցագործությունների նկարմամբ, այդ թվում՝ խոշտանգում կատարած անձանց նկարմամբ վաղեմության ժամկետը կիրառելու և այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ

վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից պորտագրվել է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան, որում որևէ սահմանափակում չկա խոչընդոտումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք ցուցաբերած անձանց կողմից հանցագործություն կատարելու դեպքում նրանց նկատմամբ վաղեմության ժամկետներ, ներում կամ համաներում չկիրառելու համար և միայն այն, որ ՄԻԵԴ-ն իր որոշմամբ այդ մասին՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը չհրադարեցնելու, անձի նկատմամբ ներում կամ համաներում չկիրառելու համար դիրքորոշում է հայտնել, դեռևս բավարար չէ, որ այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ենթակա լինի պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ ՀՀ իրավական համակարգ ինկորպորացված չէ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումները, ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ և այդ դիրքորոշումը կիրառելու համար անհրաժեշտ է կամ օրենսդրական միջամտություն՝ ներպետական օրենքում՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխության կատարում կամ գոնե բարձրագույն դատական մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո նախադեպային որոշման կայացմամբ այն համապարտադիր վարքագծի կանոնի ճանաչում: Տվյալ դեպքում առկա չէ ոչ մեկը, ոչ էլ մյուսը, և վաղեմության ժամկետն անցնելու հիմքով պայմանավորված քրեական պատասխանատվությունից ազատելու ներպետական իրավական նորմի՝ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերի նշված հոդվածների առկայությունը տվյալ պայմաններում ՀՀ իրավական համակարգին հայրնի միակ կիրառման ենթակա վարքագծի կանոնն է: Ճիշդ է, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայի դրույթները վավերացման փաստի ուժով պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները որևէ իրավադրոյթով չեն կարող հավասարեցվել այդ միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված հոդվածներին և ճանաչվել դրանց ուղղակի կիրառելիությունը: Դատարանը չի կարող նաև առաջնորդվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածով և առաջնայնությունը տալ նախադեպին, քանի որ *MOCANU AND OTHERS v. ROMANIA* (Applications nos. 10865/09, 45886/07 and 32431/08) գործի կողմ Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսացել:

Պետք է նշել, որ ըստ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ՀՀ վավերացված պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»: Տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի և մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի նորմերի միջև ուղղակի հակասությունը բացակայում է:

Դապարանը նաև արձանագրում է, որ եվրոպական դապարանի վերը նշված որոշումն անվերապահ կիրառելով՝ անբեռավել է՝ ինչպես ՀՀ սահմանադրությամբ սահմանված անձի իրավիճակը վարթարացնող օրենքների ու իրավական ակտերի հետադարձ ուժ չունենալու մասին դրույթը, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այդ թվում նաև մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով սահմանված անձի իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի պահանջները:

(...)

Այս պարագայում էթե նույնիսկ ընդունենք, որ եվրոպական դապարանի որոշումն կիրառելի է Հայաստանի Հանրապետությունում, ապա նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե այդ որոշմամբ արբանապարված դիրքորոշման կիրառման դեպքում արդյոք չեն խախտվում մեղադրյալներ Հովհաննես Նեգոսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները և օրինական շահերը, քանի որ նրանց կողմից հանցագործությունը կարարվել է դեռևս 2004 թվականի ապրիլ ամսին, իսկ ՄԻԵԴ-ի որոշումը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 17-ին և էթե նշված որոշմանը, որը անձի վիճակը վարթարացնող իրավական ակտ է, հետադարձ ուժ է տրվում, արդյոք այդ դեպքում չեն խախտվում ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը և Կոնվենցիայով սահմանված անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Դապարանը գրնում է, որ նախաքննական մարմնի կողմից ՄԻԵԴ-ի որոշումը կիրառելով վերը նշված հիմքով նույնպես խախտվել են ամբաստանյալներ Հովհաննես Նեգոսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, այսինքն ՄԻԵԴ-ի որոշմամբ արբանապարված դիրքորոշումը սույն քրեական գործին վերաբերելի չէ»¹⁵:

18. Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, գտել է, որ. «(...) [Ամբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանին և Արմեն Արսենյանին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով կարարված արարքների համար քրեական պարասահմանադրությունից ազատելու վերաբերյալ Արարարի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դապարանի պարձատարանությունները օրինական և հիմնավորված են, իսկ ՀՀ օրենսդրության վերոնշյալ պահանջների անբեռնամբ ամբաստանյալների նկարմամբ վաղեմության ժամկետների չկիրառումը կհանգեցնի նրանց իրավունքների և

¹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 236-257:

օրինական շահերի խախտման և կարող է առաջացնել իրավական անորոշություն ու որակվել որպես կամայականություն»¹⁶:

IV. Սույն գործով Վճռաբեկ դատարանի դատական նիստում կողմերի հայտնած դիրքորոշումները.

19. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 27-ի դատական նիստի ընթացքում պատասխանելով դատարանի հարցերին, ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը հայտնել է, որ արարքը կատարելու պահին խոշտանգման հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չի եղել, ուստի Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով, այն է՝ պաշտոնական լիազորություններն անցնելը, որի հատկանիշները նույնականացվում են խոշտանգման հետ: Պատասխանելով դատարանի այն հարցերին, թե արդյո՞ք ներպետական օրենսդրությունը նախատեսում է կոնկրետ արարքի նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելու արգելք, և թե արդյո՞ք վաղեմության ժամկետի կիրառումը չի հանգեցնի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի իրավունքների խախտման՝ դատախազը վկայակոչել է *Արդյուսամեար Յամանն ընդդեմ Թուրքիայի և Օկկալին ընդդեմ Թուրքիայի* գործերով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները և նշել, որ առկա են միջազգային իրավունքի նորմեր, որոնք արգելք են սահմանել վաղեմության ժամկետների կիրառման համար կոնկրետ ժամանակահատվածում:

19.1. Նույն նիստում, ամբաստանյալների շահերի պաշտպան Հ.Սուքիասյանը, դատարանի հարցերին պատասխանելով, նշել է, որ դատախազը վկայակոչում է միջազգային պայմանագրեր, բայց Հայաստանի Հանրապետությունը չունի կնքած միջազգային պայմանագիր, որի դրույթները գործում են մեր ներպետական օրենսդրության փոխարեն: Պաշտպանը հավելել է, որ առկա է Եվրոպական դատարանի դիրքորոշում, որը խորհրդատվական բնույթ ունի: Վկայակոչելով օրինականության սկզբունքը՝ պաշտպանը նշել է, որ 2004 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում խոշտանգումը հանցագործություն չի եղել, և խոշտանգման դեպքերով վաղեմության կիրառման արգելք չի եղել: Պաշտպանը նշել է, որ 2014 թվականի Եվրոպական դատարանի վճռի գործողությունը չպետք է տարածվի դրանից 10 տարի առաջ տեղի ունեցած դեպքի վրա:

19.2. Ամբաստանյալները դատական նիստի ընթացքում դիրքորոշում չեն արտահայտել:

19.3. Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դատական նիստի ընթացքում տուժող Գ.Վիրաբյանը, անդրադառնալով դատարանի այն հարցին, թե ի՞նչ դիրքորոշում ունի բողոքարկվող դատական ակտերը բեկանելու և ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելու պահանջի առնչությամբ,

¹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 89-168:

պատասխանել է, որ ներել է ամբաստանյալներին, վերջիններիս նկատմամբ որևէ բողոք և պահանջ չունի, թողնում է դատարանի հայեցողությանը:

V. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը.

20. Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա ստացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի Խորհրդատվական կարծիքի ուղենիշային նշանակության հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել Խորհրդատվական կարծիքում ներկայացված եզրահանգմանն ու դրա հիմքում ընկած փաստարկումներին:

20.1. Մեծ պալատն իր խորհրդատվական կարծիքում հիմնվել է ինչպես խոշտանգման արգելքի համընդհանուր պարտադիր նորմի և պետությունների համապատասխան պարտավորությունների միջազգային իրավական բովանդակության բացահայտման, այնպես էլ «*չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով*» սկզբունքի համատեքստում քրեական օրենքի կանխատեսելիության պահանջի վերլուծության վրա:

20.2. Մասնավորապես, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանին ուղղված դիմումը ձևակերպելիս Վճռաբեկ դատարանը հիմնվել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա, նախքան նույն կոնվենցիայի 7-րդ հոդվածին հղումով տրված կոնկրետ հարցին անդրադառնալը, Եվրոպական դատարանը նպատակահարմար է համարել վերահաստատել իր նախադեպային իրավունքը 3-րդ հոդվածի ներքո՝ վաղեմության ժամկետների մասով՝ այնքանով, որքանով դա առնչվում է Խորհրդատվական կարծիքին՝ արձանագրելով հետևյալը. «*Դատարանն ի սկզբանե նշում է, որ այն ընդունել է, որ միջազգային իրավունքում խոշտանգման արգելքը արացել է jus cogens կամ համընդհանուր պարտադիր նորմի կարգավիճակ (տես՝ Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Al-Adsani v. the United Kingdom [GC]], թիվ 35763/97, §§ 60-61, ՄԻԵԴ 2001-XI): Բացի այդ, կարելի է հիշեցնել, որ Մոկանուն և այլք [[Mocanu and Others v. Romania] (...)] ([GC] [ՄՊ], թիվ 10865/09 և luu 2-ը] գլխավոր գործով (...) վճռում (...) Դատարանը վճռել է հետևյալը.*

«(...) [Պ]երական պաշտոնապար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վարք վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետի հիմքով, և նաև, որ այդ գործերով չպետք է թույլատրվեն համաներումների ու ներումների կիրառումը (տես՝ Աբդուլսամետ Զամանն ընդդեմ Թուրքիայի [Abdulsamet Yaman v. Turkey], թիվ 32446/96, § 55, 2004 թվականի նոյեմբերի 2), (...) [Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի [Mocanu and Others v. Romania] գործը ([GC] [ՄՊ], թիվ 10865/09 և luu 2-ը, § 70), և [««1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռումինիայի» [Association «21 December 1989» and Others v. Romania], թիվ 33810/07 և 18817/08, § 144, 2011 թվականի մայիսի 24]): Ավելին, վաղեմության ժամկետը կիրառելու կարգը պետք է համապետելի լինի Կոնվենցիայի պահանջներին: Հետևաբար դժվար է ընդունել ոչ ձկուն վաղեմության ժամկետները առանց բացառությունների ընդունման (տես՝

mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով) Ռոմանն ընդդեմ Ֆինլանդիայի [Roman v. Finland], թիվ 13072/05, § 50, 2013 թվականի հունվարի 29)»:

Փաստերի հիման վրա գտնելով, որ համապատասխան քննությունը հիմնականում կարճվել է քրեական պարասխանաարվության վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով՝ Դատարանը վճռել է, որ դժվար է համարել, որ (2-րդ հոդվածից և) 3-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարասարվորությունները կատարվել են այն դեպքում, երբ քննությունը կարճվել է իշխանությունների անգործության հետևանքով առաջացող՝ քրեական պարասխանաարվության վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (լրեն՝ վերևում հիշարակված՝ Մոկանտուն և այլք գործը, §346):

Հերևարար Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախարեալված ընթացակարգային երաշխիքները խախտվել են այն դեպքերում, երբ վաղեմության ժամկետները կիրառվել են իշխանությունների կողմից արագ և պարզաճ ջանասիրությամբ չգործելու արդյունքում (լրեն, ի թիվս այլ վճիռների, Բարին և այլք ընդդեմ Թուրքիայի [Bati and Others v. Turkey], թիվ 33097/96 և 57834/00, §§ 97 և 145-147, ՄԻԵԴ 2004-IV (քաղվածքներ). վերևում հիշարակված՝ Արդուսամեր Յամանի գործը § 59, Եսիլը և Սեվիմն ընդդեմ Թուրքիայի [Yesil and Sevim v. Turkey], թիվ 34738/04, §§ 38-42, 2007 թվականի հունիսի 5, Էրդողան Յիլմազը և այլք ընդդեմ Թուրքիայի [Erdogan Yilmaz and Others v. Turkey], թիվ 19374/03, § 57, 2008 թվականի հոկտեմբերի 14, Էրդալ Ասլանն ընդդեմ Թուրքիայի [Erdal Aslan v. Turkey], թիվ 25060/02 և 1705/03, §§ 75-79, 2008 թվականի դեկտեմբերի 2, Պադուրեթը ընդդեմ Մոլդովայի [Paduret v. Moldova], թիվ 33134/03, § 75, 2010 թվականի հունվարի 5, Կարազոզը և այլք ընդդեմ Թուրքիայի [Karagoz and Others v. Turkey], թիվ 14352/05 և ևս 2-ը, §§ 53-55, 2010 թվականի հուլիսի 13, Սավինն ընդդեմ Ուկրաինայի [Savin v. Ukraine], թիվ 34725/08, §§ 70-71, 2012 թվականի փետրվարի 16, Ուգուրն ընդդեմ Թուրքիայի [Ugur v. Turkey], թիվ 37308/05, § 105, 2015 թվականի հունվարի 13 և Բարովոլունն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 9183/09, § 42, 2021 թվականի հունիսի 15):

Հարկ է նաև հիշեցնել, որ Դատարանը գտել է, որ րեդի է ոնեցել 3-րդ հոդվածի խախտում այն դեպքում, երբ քրեական հերասպնդման համար վաղեմության ժամկետը լրացել է խոչրանգման քնույթի արարքները կամ վար վերարերմունքի այլ ձևեր ներպերական իշխանությունների կողմից անհամարժեքորեն պակաս ծանր հանցանք որակելու հետևանքով, ինչը հանգեցրել է ավելի կարճ վաղեմության ժամկետների կիրառման և հանցանքը կարարող անձին թույլ է րվել խուսափել քրեական պարասխանաարվությունից (լրեն, ի թիվս այլ վճիռների, վերևում հիշարակված՝ Պադուրեթի գործը, § 75, Վելեվն ընդդեմ Բուղարիայի [Velev v. Bulgaria], թիվ 43531/08, § 61, 2013 թվականի սարիլի 16, Օ.Ռ.-ն և Լ.Ռ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրասպերության [O.R. and L.R. v. the Republic of Moldova], թիվ 24129/11, §§ 73-74, 2018 թվականի հոկտեմբերի 30):

Ավելին, մի քանի ստիթներով Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախարեալված երաշխիքները չեն սպահովվել հիմնականում ներպերական

իրավունքում խոչընդոտում համարվող արարքների պատշաճ պարիժ սպահովող համապատասխան դրույթների բացակայության պատճառով (տե՛ս Չեսարոնու ընդդեմ Իտալիայի [Cestaro v. Italy], թիվ 6884/11, § §§ 218-226, 2015 թվականի ապրիլի 7, Ացոլինսան և այլք ընդդեմ Իտալիայի [Azzolina and Others v. Italy], թիվ 28923/09 և 67599/10, § 149-165, 2017 թվականի հոկտեմբերի 26, Չիրինոն և Ռեննեն ընդդեմ Իտալիայի [Cirino and Renne v. Italy], թիվ 2539/13 և 4705/13, §§ 106-112, 2017 թվականի հոկտեմբերի 26, և Բլեյրը և այլք ընդդեմ Իտալիայի [Blair and Others v. Italy], թիվ 1442/14 և ևս 2-ը, § 118-134, 2017 թվականի հոկտեմբերի 26): Այդ առնչությամբ Դատարանը նաև նշել է, որ Կոմիտեի հանձնարարների նկատմամբ կիրառվել է վաղեմության ժամկետների մասին դրույթը, «մի հանգամանք, որն ինքնին [հակասում է] խոչընդոտումներին կամ վար վերաբերմունքի այլ ձևերին վերաբերող նախատեսային իրավունքին» (տե՛ս վերևում հիշատակված՝ Արդուսամետր Յամանի գործը, § 55, վերևում հիշատակված՝ Չեսարոյի գործը, § 208, վերևում հիշատակված՝ Չիրինոյի և Ռեննենի գործը, § 110, և վերևում հիշատակված՝ Բլեյրը և այլք գործը, § 118-134):

Դատարանը հաշվի է առնում այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ խոչընդոտումների կամ վար վերաբերմունքի այլ ձևերի գործերով վճիռները կատարելու ընթացքում՝ անդամ պետությունների ներպետական համակարգերում վաղեմության ժամկետի վերաբերյալ դրույթի առկայության պատճառով: Այնուամենայնիվ, այն նշում է, որ մի շարք անդամ պետություններ ձեռնարկել են փարքեր միջոցներ՝ այս խնդիրը լուծելու և այդպիսով նման արարքներ գործող պետական պաշտոնատար անձանց անսպարժելիությունը կանխելու համար: Այսպես՝ մի քանի անդամ պետություններ, այդ թվում՝ Թուրքիան, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան և այժմ Հայաստանը փոփոխություններ են կատարել իրենց օրենսդրության մեջ՝ չեղարկելով վաղեմության ժամկետի կիրառումը խոչընդոտման բնույթի արարքների նկատմամբ: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Իտալիայում, որպեսզի քրեական վարույթների իրականացումն անհնար չդառնա վաղեմության ժամկետները լրանալու հիմքով, 2020 թվականին օրենքում կատարվել է փոփոխություն, որով նախատեսվում է, որ առաջին արյանի դատարանի վճիռից հետո վաղեմության ժամկետը կասեցվում է քրեական վարույթի մնացած ամբողջ ժամանակահատվածում:

Դատարանը նշում է, որ Վիրաբյանի գործով (վերևում հիշատակված) այն գրել է, որ Կոմիտեի է ունեցել 3-րդ հորվածի խախտում այն հիմքով, որ դիմումատուն ենթարկվել է խոչընդոտման, և որ իշխանությունները չեն իրականացրել ենթադրյալ վար վերաբերմունքի արդյունավետ քննություն: Այդուհանդերձ, Դատարանի կարծիքով՝ անընդունելի կլինի, եթե ազգային իշխանությունները Կոմիտեի 3-րդ հորվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունները չկատարելու համար հարուցեն Կոմիտեի 7-րդ հորվածի երաշխիքների հաշվին, որոնցից մեկն այն է, որ քրեական իրավունքը չպարք է մեկնաբանվի լայնորեն՝ ի վնաս մեղադրյալի (տե՛ս Մյումյուն ընդդեմ Բուլղարիայի [Myumyun v. Bulgaria], թիվ 67258/13, § 76, 2015 թվականի նոյեմբերի 3, վերջին պահանջի մասով հղումներ կատարելով Բաշկայան և Օկտոբրյուն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Başkaya and

Okşuoğlu v. Turkey [GC] գործին, թիվ 23536/94 և 24408/94, § 36, ՄԻԵԴ 1999 IV. (...) [*Կոնոնով* ընդդեմ *Լատվիայի [ՄՊ]* [*Kononov v. Latvia [GC]*], թիվ 36376/04, ՄԻԵԴ 2010] գործը, § 185 և *Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի [ՄՊ]* [*Del Rio Prada v. Spain [GC]*], թիվ 42750/09, § 78, ՄԻԵԴ 2013):

Մասնավորապես և սույն խորհրդարկական կարծիքի նպատակներով հարկ է նշել, որ Դատարանի նախատեսային իրավունքի ներկա վիճակից չի բխում, որ Կոնվենցիայի համաձայն Պայմանավորվող կողմից պահանջվում է չկիրառել կիրառելի վաղեմության ժամկետը և այդպիսով արդյունավետորեն վերականգնել լրացած վաղեմության ժամկետը: Վարույթը վերսկսելու համարեքսպում Դատարանը ճանաչել է, որ կարող են լինել իրավիճակներ, երբ դե յուրե կամ դե ֆակտո հնարավոր չէ վերսկսել այն միջադեպերի քրեական գործով քննությունները, որոնք կապված են Դատարանի կողմից քննվող գանգաբանների հետ: Եման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, այն գործերի դեպքում, երբ հանցանքը կատարող անձինք արդարացվել են, և նրանց նկատմամբ չի կարող իրականացվել դատական քննություն նույն հանցանքի համար, կամ այն գործերի դեպքում, երբ քրեական վարույթը չի կարող իրականացվել՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Իսկապես, վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով կարճված քրեական վարույթները վերսկսելը կարող է առաջացնել ինտիրներ իրավական որոշակիության խնամարով և հետևաբար կարող է ազդել մեղադրյալի Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքների վրա (տես *Տաշեմիրն ընդդեմ Թուրքիայի (որոշում)* [*Taşdemir v. Turkey (dec.)*], թիվ 52538/09, § 14, 2019 թվականի մարտի 12)»¹⁷:

20.3. Անդրադառնալով Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին՝ Եվրոպական դատարանը վերահաստատել է իր նախադեպային իրավունքի վերաբերելի ընդհանուր սկզբունքները՝ այդ հոդվածի շրջանակներում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջների մասով: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ. «(...) [Կ] անհատներին իրենց հասկացության շրջանակը զգալիորեն կախված է ինտրոտ առարկա օրենքի բովանդակությունից, այն ոլորտից, որն այն պետք է ընդգրկի, և այն անձանց թվից և կարգավիճակից, որոնց այն ուղղված է: Օրենքը, սակայն, կարող է համարվել որպես կանխատեսելիության պահանջը բավարարող, նույնիսկ եթե Կոնվենցիայի անձը ստիպված է համապատասխան իրավաբանական խորհրդարկությունն արանալ գնահատելու համար (այնքանով, որքանով որջաներորեն հնարավոր է Կոնվենցիայի հանգամանքներում) այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել Կոնվենցիայի գործողությունը: Սա հարկապես վերաբերում է մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց, որոնք սովոր են մեծ զգուշավորություն ցուցաբերել իրենց աշխատանքը կատարելիս: Այս առումով ակնկալվում է, որ վերջիններս հարույկ ուշադրությամբ պետք է գնահատեն այն

¹⁷ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետեր 59-66:

ոխակերը, որոնք ի հայտ են գալիս նմանատիպ գործողությունների արդյունքում (յրեն Վասիլիաուսկասն ընդդեմ Լիտվայի [ՄՊ] [Vasiliauskas v. Lithuania [GC]], թիվ 35343/05, § 157, ՄԻԵԴ 2015, և թիվ P16-2019-001 խորհրդարանական կարծիքը, § 61):

(...)

Դատարանը նաև վերահասարարում է, որ մի քանի առիթներով այն վճռել է, որ վաղեմությունը կարող է սահմանվել որպես հանցանքը կատարած անձի հանցանքի կատարման օրվանից որոշակի ժամկետը լրանալուց հետո քրեական հետապնդման չենթարկվելու կամ չդատապարտվելու՝ օրենքով սահմանված իրավունք: Վաղեմության ժամկետները, որոնք Պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգերին բնորոշ հարկանիշ են, ծառայում են մի քանի նպատակների, այդ թվում՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովմանը, մեղադրյալի իրավունքների խախտումների կանխարգելմանը, ինչը կարող է խաթարվել, եթե դատարաններից պահանջվի որոշումներ կայացնել այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք ժամանակի ընթացքում կարող են դառնալ ոչ ամբողջական (յրեն (...) [Բոյեմին և այլք ընդդեմ Բելգիայի [Coume and Others v. Belgium], թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, ՄԻԵԴ 2000-VII.], § 146):

Վերոնշյալ գործում Դատարանը կոչված է եղել որոշել, թե արդյոք դեռևս չլրացած վաղեմության ժամկետները երկարաձգելու մասով օրենսդրական փոփոխություններն առաջացրել են խնդիրներ 7-րդ հոդվածի մասով: Դատարանն ընդունում է, որ վաղեմության ժամկետի երկարաձգումն իրապես երկարաձգել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում րվյալ հանցանքների մասով կարող են հարուցվել քրեական հետապնդումներ, և հերևարար բացասաբար է ազդել դիմումատուների վիճակի վրա՝ մասնավորապես խաթարելով նրանց ակնկալիքները: Այդուհանդերձ, սա չի հանգեցնում 7-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման, քանի որ այդ դրույթը չի կարող մեկնարանվել որպես դատավարական իրավունքի անմիջապես կիրառման միջոցով վաղեմության ժամկետների երկարաձգումն արգելող դրույթ, որի դեպքում համապատասխան հանցանքների նկարմամբ երբեք չի կիրառվում վաղեմության ժամկետի սկզբունքը (նույն տեղում՝ § 149): Այդ եզրակացությանը հանգեղիս Դատարանը կարևորել է այն փաստը, որ ներպետական դատարանը հետևել է համընդհանուր ընդունված այն սկզբունքին, որ դատավարական նորմերն անմիջապես կիրառվում են ընթացքի մեջ գրնվող վարույթների նկարմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարակորեն նախատեսված է հակառակը (tempus regit actum սկզբունք) (նույն տեղում, § 148):

Դատարանն այնուհետև հիմնվել է այս եզրահանգումների վրա և եզրակացրել, որ վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերը չեն սահմանել հանցանքները և դրանց համար նախատեսված պարիժները և կարող են ընկալվել որպես գործի գնահատման համար սահմանված պարզ նախապայման՝ 7-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքը ճանաչելով որպես ակնհայտ անհիմն (յրեն Պրևիտին ընդդեմ Իտաղիայի (որոշում) [Previti v. Italy (dec.)], թիվ 1845/08, § 80, 2013 թվականի փետրվարի 12, որի դեպքում դիմումատունն բողոքել

է, որ չի կարողացել օգտվել ավելի բարենպաստ վաղեմության ժամկետներից, որոնք ներդրվել են, երբ իր քրեական գործը եղել է ընթացքի մեջ Գերագույն դատարանում): Այս եզրահանգումը հետագայում հաստատվել է մի շարք նմանատիպ գործերում, այդ թվում՝ Բիագիոլին ընդդեմ Սան Մարինոյի (որոշում) [Biagioli v. San Marino (dec.)] (թիվ 8162/13, § 90, 2014 թվականի հուլիսի 8, որի դեպքում ընդունվել է օրենք, որը, ի տարբերություն դիմումատուի կողմից հանցանքը կատարելու ժամանակահատվածի, պահանջել է որոշակի հանգամանքներում կասեցնել վաղեմության ժամկետը, և որը տարածվել է դիմումատուի գործի նկատմամբ) և Բորչեան ընդդեմ Ռոմինիայի (որոշում) [Borcea v. Romania (dec.)] (թիվ 55959/14, § 64, 2015 թվականի սեպտեմբերի 22, որի դեպքում դիմումատուն՝ քրեական վարույթով մեղադրյալը, չի կարողացել օգտվել իրեն վերագրվող հանցանքի մասով ավելի նպաստավոր վաղեմության ժամկետներ սահմանող օրենսդրական փոփոխություններից):

Այսպիսով, ինչպես երևում է վերևում ամփոփ ներկայացված որոշումներից, դեռևս չլրացած վաղեմության ժամկետը երկարաձգող օրենսդրական փոփոխությունները չեն համարվել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում:

Այդուհանդերձ, ի տարբերություն այդ գործերի, Դատարանը գրել է, որ վերջին գործում, որի դեպքում դիմումատուները դատաստատվել են վաղեմության ժամկետը լրացած հանցանքի համար, տեղի է ունեցել 7-րդ հոդվածի խախտում (տե՛ս Անտիան և Խոսպենիան ընդդեմ Վրաստանի [Antia and Khupenia v. Georgia], թիվ 7523/10, §§ 38-43, 2020 թվականի հունիսի 18) (...):

(...) [Ինչպես կարելի է տրամաբանորեն եզրակացնել Դատարանի վերոնշյալ եզրահանգումներից, այն դեպքում, երբ քրեական սպասարասանատվությունը վերականգնվել է վաղեմության ժամկետն անցնելուց հետո, այն կհամարվի անհամարելի 7-րդ հոդվածով ամրագրված՝ օրինականության (Nullum crimen, nulla poena sine lege (չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով)) և կանխարեւելիության հիմնական սկզբունքների հետ (...): Դրանից հետևում է, որ այն դեպքում, երբ ներպետական իրավունքով սահմանված հանցանքի համար կարող է կիրառվել վաղեմության ժամկետների մասին դրույթը, և վաղեմության ժամկետը լրանալու հիմքով կարող է բացառվել քրեական սպասարասանատվությունը, 7-րդ հոդվածի համաձայն՝ օրինական իրավական հիմքերի բացակայության պարճառով քրեական հետապնդումն այդ հանցանքի մասով բացառվում է: Այլ վճիռ կայացնելը հավասարազոր կլինի «քրեական իրավունքն ի վնաս մեղադրյալի հետադարձ ուժով կիրառելը» ընդունելուն (շեշտադրումն ավելացված է) (տե՛ս (...)) [Դեյ Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի [ՄՊ] [Del Rio Prada v. Spain [GC]], թիվ 42750/09, ՄԻԵԴ 2013], § 78 »¹⁸:

20.4. Վերոգրյալի համատեքստում, ի վերջո, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) Դատարանին չի ներկայացվում նախքան քննվող գործով վաղեմության ժամկետն անցնելը վաղեմության ժամկետի՝ օրենսդրությամբ

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետեր 68 և 72-77:

սահմանված երկարաձգման հարցը, այլ ներկայացվում է իրավիճակ, երբ հայցող դատարանը պետք է որոշի, թե արդյոք ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն կիրառի փաստը փարի վաղեմության ժամկետը, թե ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդեն գոյություն ունեցող դրույթը, որը նախատեսում է այդ դրույթում սահմանված հանգամանքներում վաղեմության ժամկետը չկիրառելու բացառությունները: Հաշվի առնելով վերևում՝ 70-րդ և 71-րդ պարբերություններում շարադրված ընդհանուր նկարագրումները՝ առաջին հերթին և առավելապես հենց ազգային դատարանը պետք է իր ներպետական սահմանադրական և քրեական իրավունքով նախատեսված նորմերի համարեքստում որոշի, թե արդյոք ազգային իրավական համակարգում իրավաբանական ուժ ունեցող միջազգային իրավունքի կանոնները, փյլյալ դեպքում՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (տե՛ս վերևում՝ 34-րդ պարբերությունը), կարող են նախատեսել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով քաղականապես հարակ և կանխատեսելի իրավական հիմքեր՝ եզրակացնելու, որ փյլյալ հանցանքի նկարագրի վաղեմության ժամկետների մասին դրույթը չի կիրառվում»¹⁹:

20.5. Մեծ պալատի խորհրդատական կարծիքին կից ներկայացված համընկնող առանձին կարծիքում Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դատավոր Ա.Հարությունյանը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված խոշտանգման արգելքի, դրանց հիման վրա գործող պայմանագրային մարմինների՝ Խոշտանգումների դեմ կոմիտեի և Եվրոպական դատարանի՝ խոշտանգման նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման արգելքի վերաբերյալ որոշումների, 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի վերլուծության հիման վրա եզրակացրել է, որ. «(...) ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պետությունից պահանջվում է սպասիովել, որ խոշտանգման բնույթի բոլոր արարքներն իր քրեական իրավունքով համարվեն հանցանքներ: 1993 թվականի սեպտեմբերին Հայաստանը վավերացրել և միացել է ՄԱԿԽԴԿ-ին, մինչդեռ ԽԴԿ-ի կողմից ներկայացված նկարագրումներում նշվում է, որ մինչև 2004 թվականն այն չի կարարել 4-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը:

Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է. «Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական հանցանքներ կարարած անձանց նկարագրի, եթե այդ պայմանագրերով սահմանված է վաղեմության ժամկետների կիրառման արգելք»:

ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պահանջվում է քրեականացնել խոշտանգումը՝ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով: Հայաստանի կողմից այս պարտավորությունը չկարարելը չի կարող լինել 75-րդ հոդվածի 6-րդ մասը չկիրառելու պարճառ: Ի վերջո «Միջազգային պայմանագրերի իրավունքի

¹⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 78:

մասին» Վիեննայի կոնվենցիայի 26-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսվում է, որ ՄԱԿԻԴ-ի նման պայմանագրերը պետք է բարեխղճորեն կատարվեն, և որ «պետությունը չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները որպես պայմանագիրը չկատարելու արդարացում»: Միջազգային արդարադատության մշտական պալատը (ՄԱՄՊ) ևս ընդունել է դա «Լեհաստանի քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը» փաստաթղթում, որով այն վճռել է, որ «որևէ պետություն չի կարող իր սեփական Սահմանադրությանը հղում կատարել ի վնաս այլ պետության՝ միջազգային իրավունքով կամ գործող պայմանագրերով սրանձնած իր պարտավորությունները կատարելուց խուսափելու նպատակով»:

Թեև սույն գործով դրան հակասող որևէ ներպետական դրույթ նույնիսկ գոյություն չունի, այդպիսի դրույթի բացակայությունը ևս չի կարող համարվել պետության կողմից իր պարտավորությունները չկատարելու արդարացում:

Ինչ վերաբերում է 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ չափանիշին, մասնավորապես, որ վաղեմության ժամկետը պետք է սահմանվի համապատասխան պայմանագրում, սպա ճիշտ է, որ ՄԱԿԻԴ-ն հստակ չի սահմանափակում այս հարցին: Այդուհանդերձ, ԽԴԿ-ն վերահասարակել է, որ խոչընդոտման նկատմամբ չպետք է կիրառվեն ժամանակակից սահմանափակումներ, ինչպես նշվել է Հայաստանի վերաբերյալ 2012 թվականի իր եզրակասկիչ դիտարկումներում:

(...)

Խոչընդոտման արգելքի *jus cogens* նորմը գերակայում է վաղեմության ժամկետների մասին ազգային դրույթների նկատմամբ: Հետևաբար, որպես արգելքի *jus cogens* բնույթի բացասական ազդեցության հետևանք, վաղեմության ժամկետ նախատեսող ցանկացած օրենք ի սկզբանե հակասում է միջազգային իրավունքի նորմերին և երբեք չի կարող օրինականորեն կիրառվել:

Այդպիսով, չի առաջանում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառելիության հարց, քանի որ երբեք չի եղել վաղեմության ժամկետներ նախատեսող որևէ գործող օրենք. վաղեմության ժամկետներ չկիրառելը, ի սկզբանե, խոչընդոտման արգելքի և դրանց առնչվող ժամկետների *jus cogens* նորմի համաձայն եղել է օրինական և կանխատեսելի՝ որպես ազգային օրենսդրության մաս:

Նույնիսկ եթե ազգային իրավունքի համաձայն քրեական հետապնդումը հնարավոր չի եղել վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, դա նշանակություն չունի, քանի որ այդ օրենքը երբևէ իրավական ուժ չէր կարող ունենալ»²⁰:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ արարքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու իրավաչափության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, Ե բաժին:

սպահովման խնդիր: Ոստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուաջին* իրավական խնդիրը հետևյալն է. արդյո՞ք ներպետական կանոնակարգումները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և այդ պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավարար իրավական հիմքեր է նախատեսում խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու համար:

I. Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը.

23. 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, սպաս կիրառվում են պայմանագրի նորմերը (...):»*

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, սպաս կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (...):»*

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:*

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում սահմանված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:*

24. ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Խտադրության և մարդկության անկրանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկարմամբ վադեմության ժամկետներ չեն կիրառվում: Վադեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկարմամբ, եթե այդ պայմանագրերով վադեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով [խոշարանգումը] նախատեսված հանցանք կատարած անձանց նկարմամբ վադեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ հանցանքի կատարման պահից»:

2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված, 2001 թվականի հունիսի 10-ից ուժի մեջ մտած և 2004 թվականի ապրիլ ամսվա դրությամբ գործող խմբագրությամբ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ոստիկանության գործունեության սկզբունքներն ամրագրող 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու սզարությունները, պարիլն ու արժանապարվությունը հարգելու, մարդասիրության և հրասարակայնության սկզբունքների վրա (...):»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոստիկանության աշխարակցի կողմից մարդուն խոշարանգումների, դաժան կամ նրա արժանապարվությունը նվաստացնող վերաբերմունքի ետարկելը կամ նրա նկարմամբ բնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պարասահանաարվություն՝ օրենքով սահմանված կարգով»:

25. Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ նախ՝ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը՝ ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական փոփոխությունների տեքստով պայմանավորված որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է դիտարկում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը: Դեռ ավելին, ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում ՀՀ Սահմանադրությունը կոլիզիան լուծում է հօգուտ միջազգային պայմանագրերի կարգավորումների:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածն իր հերթին ուղակի կարգավորում էր նախատեսում առ այն, որ օրենսգիրքը հիմնվում է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այնպես էլ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:

25.1. Ինչ վերաբերում է վադեմության ժամկետների կիրառման արգելք սահմանող քրեաիրավական նորմին, սպա օրենսդիրը, ելնելով այն

հանգամանքից, որ ՀՀ միջազգային պայմանագրերը կազմում են ներպետական իրավական համակարգի անբաժան մասը, իրավաչափորեն նախատեսել է, որ նորմում թվարկված կոնկրետ հանցակազմերից բացի, վաղեմության ժամկետները չեն կիրառվում նաև միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքների կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված: ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ նորմը օրենսգրքի ընդունումից ի վեր որևէ օրենսդրական փոփոխության և լրացման չի ենթարկվել: Այսինքն՝ օրենսդիրն ի սկզբանե՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունման օրվանից՝ 2003 թվականի ապրիլի 18-ից ի վեր, հստակ իրավական հիմք է նախատեսել այդ պահին վավերացված կամ հետագայում վավերացվելիք միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում առանձին հանցանքների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու համար: Այսպիսով, թեև ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված հանցակազմերի ցանկում խոշտանգումը կամ դրան հավասարեցված այլ արարքներ նախատեսված չեն, սակայն նորմի գործողության շրջանակը չի սահմանափակվում նշված հանցակազմերով, քանի որ այն ուղղակիորեն **նախատեսում է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց** նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու օրենսդրական հնարավորությունը: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2015 հունիսի 9-ին ընդունված ՀՀ օրենքով 309.1-րդ հոդվածով խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող հատուկ նորմը ևս ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված հանցակազմերի ցանկում չի ընդգրկվել:

II. Խոշտանգման արգելքը՝ որպես *jus cogens* նորմ՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում.

26. 1969 թվականի մայիսի 23-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 2005 թվականի մայիսի 17-ին վավերացված՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր (*jus cogens*) նորմին հակասող պայմանագրերը» վերտառությամբ 53-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին: Սույն Կոնվենցիայի նպատակների համար ընդհանուր միջազգային պարտադիր նորմն այն նորմն է, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով»:

Նույն կոնվենցիայի՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նոր նորմի (*jus cogens*) առաջացումը» վերտառությամբ 64-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի

պարտադիր նոր նորմ, սպա ցանկացած պայմանագիր, որը հակասում է այդ նորմին, անվավեր է և դադարում է»:

26.1. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի վերոնշյալ դրույթներից բխում է, որ միջազգային իրավունքի համապարտադիր կամ *jus cogens* նորմը հիմնարար իրավական նորմ է, որից որևէ շեղում չի թույլատրում: *Jus cogens* նորմը միջազգային իրավական համակարգում ունի այն նույն դերակատարումը, ինչ իրավունքների սահմանադրական երաշխիքներն ազգային իրավական համակարգում:

27. Համամարդկային արժեքների պաշտպանության՝ որպես Հայաստանի Հանրապետության համար *jus cogens* պարտավորության գաղափարը հստակ ամրագրված է նաև 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության նախաբանում, համաձայն որի՝ Հայ ժողովուրդը, ի շարս այլ նպատակների և սկզբունքների, ՀՀ Սահմանադրությունն ընդունել է նաև՝ «հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Ինչպես փաստել է ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՈ-1680 որոշմամբ, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության նախաբանում ևս այս հավաստիքի արձանագրումը «համամարդկային արժեքներ» սահմանադրական եզրը Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ է: Նույն որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի՝ համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը պահանջում է նաև համամարդկային արժեքների պաշտպանությանը և պահպանությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանձնառությունը, և որ ՀՀ Սահմանադրությամբ հիմնված և երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավագործության համակարգը կոչված է ապահովելու, ի թիվս Սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների, նաև Սահմանադրության նախաբանի իմաստով «համամարդկային արժեքների» պաշտպանությունը, որն առաջնահերթությամբ սահմանադրական հրամայական լինելուց բացի՝ նաև *jus cogens* նորմերով պարտավորություն է ցանկացած պետության համար²¹:

28. 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 1993 թվականի հունիսի 23-ին վավերացված՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշորանգունների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապարկությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պարծի»:

²¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՈ-1680 որոշումը:

29. 1984 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության կողմից 1993 թվականի սեպտեմբերի 13-ին վավերացված՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավագործության ներքո գրնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար»:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն սպասուկում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգումը կիրառվել է իր իրավագործության ներքո գրնվող ցանկացած տարածքում»:

29.1. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն, կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանված կարգով անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ներկայացված զեկույցների առնչությամբ իր՝ 2003 թվականի մայիսի 27-ի թիվ CAT/C/CR/30/5 և թիվ CAT/C/CR/30/4 եզրափակիչ դիտարկումներում անդամ պետություններին պարտավորեցրել է **բացառել վաղեմության ժամկետների մասին դրույթի կիրառումը խոշտանգմանն առնչվող հանցագործությունների նկատմամբ**²²: Խոշտանգումների դեմ կոմիտեն իր այս դիրքորոշումը հետևողականորեն զարգացրել է նաև անդամ պետությունների ներկայացրած զեկույցների վերաբերյալ իր հետագա եզրափակիչ դիտարկումներում²³:

30. Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականի սեպտեմբերի 13-ին վավերացրել է նաև 1989 թվականի փետրվարի 1-ին ուժի մեջ մտած՝ «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիան, որի 1-ին հոդվածի համաձայն՝ «*Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխմանն նպատակով արեղծվում է Եվրոպական կոմիտե (այսուհետև՝ Կոմիտե) (...)*»:

31. Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալն (այսուհետ՝ նաև Տրիբունալ) իր՝ դեռևս 1998 թվականի դեկտեմբերի

²² Տե՛ս, Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/CR/30/5, 2003 թվականի մայիսի 27, կետ 7-րդ, ենթակետ (գ), Սլովենիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/CR/30/4, 2003 թվականի մայիսի 27, կետ 6:

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, բաժին Ա, կետ 3:

10-ին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգման արգելքը ձեռք է բերել *jus cogens* նորմի կարգավիճակ՝ բնորոշելով այն որպես միջազգային իրավունքի համապարտադիր նորմ, որից որևէ շեղում չի թույլատրվում: Մասնավորապես, վերոնշյալ որոշման համաձայն՝ այն, որ խոշտանգումն արգելված է միջազգային իրավունքի համապարտադիր նորմով, իր ազդեցությունն ունի միջպետական և անհատական մակարդակներում: Տրիբունալի գնահատմամբ՝ միջպետական մակարդակում այն ծառայում է խոշտանգումը թույլատրող ցանկացած օրենսդրական, վարչական կամ դատական ակտի միջազգայնորեն ապալեգիտիմացմանը: Նշված որոշման համաձայն՝ մի կողմից՝ խոշտանգումների դեմ արգելքի *jus cogens* բնույթով պայմանավորված, խոշտանգումներ նախատեսող պայմանագրերը կամ սովորության կանոններն առոչինչ և անվավեր են լինելու ի սկզբանե (*ab initio*), մյուս կողմից՝ անընդունելի են լինելու պետության ձեռնարկած քայլերը՝ ուղղված խոշտանգումները թույլատրելուն կամ դրանց համար ներում շնորհելուն կամ ենթադրյալ մեղավորներին համաներման մասին օրենքներ ընդունելու միջոցով պատասխանատվությունից ազատելուն: Նույն վճռում Տրիբունալն արձանագրել է, որ եթե անգամ ստեղծվի նման իրավիճակ, ազգային կարգավորումները, որոնք կխախտեն ընդհանուր սկզբունքը և ցանկացած այլ վերաբերելի պայմանագրային դրույթ, միջազգայնորեն իրավական ճանաչում չեն ստանա: Վերոնշյալ վճռում արված կարևոր արձանագրում է այն, որ խոշտանգման համար ենթադրյալ մեղավորները, ովքեր օգտվում են այդ ազգային կարգավորումներից, այնուամենայնիվ, ենթակա են պատասխանատվության, քանի որ անկախ ներպետական օրենսդիր կամ դատական իշխանության մարմինների կողմից խոշտանգումների արգելքի սկզբունքի խախտում թույլ տալուն, անհատները շարունակում են կրել այդ սկզբունքը պահպանելու պարտականությունը: Քննարկվող վճռում նշվել է նաև, որ անհատական, այսինքն՝ քրեական պատասխանատվության մակարդակում, խոշտանգումների արգելքի՝ միջազգային հանրության շրջանում ստացած *jus cogens* բնույթի հետևանքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր պետություն իրավագործ է քննելու խոշտանգման դեպքերը, հետապնդել և պատժել կամ արտահանձնել խոշտանգումների մեջ մեղադրվող անձանց, ովքեր իր իրավագործության տակ գտնվող տարածքում են: Նույն վճռում, իբրև այլ հետևանք, նաև փաստվել է, որ խոշտանգումների վրա չեն կարող տարածվել վաղեմության ժամկետները²⁴:

32. 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «*Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նախարացող վերաբերմունքի կամ պարծի*»:

²⁴ Տե՛ս նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի՝ *the Prosecutor v. Anto Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ J/L/PIU/372-E վճիռը, կետեր 155-157:

32.1. Այն, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում, բազմիցս շեշտադրվել է Եվրոպական դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորած նախադեպային իրավունքում: Մասնավորապես, *Ջելիլովի ընդդեմ Հունաստանի* գործով վճռում դատարանն արձանագրել է, որ 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և դրան կից 1-ին և 4-րդ արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը չի նախատեսում բացառության վերաբերյալ որևէ կանոն, դրանից շեղում թույլատրելի չէ նաև 15-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անգամ ազգի գոյությանը վտանգ սպառնացող արտակարգ դրության դեպքում²⁵:

32.2. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե անձը վստահելի հայտարարություն է անում այն մասին, որ ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ այլ պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության պարտականություն: Ման քննությունը պետք է ունակ լինի բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու մեղավոր անձանց: Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում կլինի ոչ արդյունավետ և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատիժ²⁶:

32.3. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zelilof v. Greece* գործով 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42:

²⁶ Տե՛ս, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *Asenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 102, *Labita v. Italy* գործով Մեծ պալատի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, կետ 131, *Bekos and Koutropoulos v. Greece* գործով 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53, *Okkali v. Turkey* գործով 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 52067/99, կետ 65:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու չափանիշներն են՝

ա) քննություն իրականացնող մարմինները պետք է լինեն անկախ և անաչառ²⁷,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ արագությամբ²⁸, քննությունը պետք է լինի արագ և մանրամասն, այսինքն՝ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է գործադրեն յուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա²⁹,

գ) քննություն իրականացնող մարմինները պետք է օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ³⁰, նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլնի՝ սկանառենների հարցաքննությունը և բժշկական ապացույցները³¹,

դ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներն ապահովելու համար³²,

ե) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը³³, քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների

²⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 21594/93, կետեր 91-92, *Mehmet Emin Yuksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 40154/98, կետ 37, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետեր 83-84:

²⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikheev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, զանգատ թիվ 77617/01, կետ 109:

²⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 24760/94, կետ 103, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136:

³⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. the UK* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, զանգատ թիվ 24746/94, կետեր 125-130, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136, *Amine Guzel v. Turkey* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, զանգատ թիվ 41844/09, կետ 39:

³¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanrku v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, զանգատ թիվ 23763/94, կետ 104, *Gul v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, զանգատ թիվ 22676/93, կետ 89:

³² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134:

³³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 137, *mutatis mutandis*, *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 21594/93, կետ 92, *Ognyanova and Choban v. Bulgaria* գործով 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, զանգատ թիվ 46317/99, կետ 107, *Khadzhaliev and Others v. Russia* գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, զանգատ թիվ 3013/04, կետ 106:

պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը³⁴:

32.4. Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ընդունել է, որ միջազգային իրավունքում խոշտանգման արգելքը ստացել է *jus cogens* կամ համընդհանուր պարտադիր նորմի կարգավիճակ: Ընդ որում, խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականության համատեքստում, Եվրոպական դատարանը, մասնավորապես արձանագրել է, որ պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետի հիմքով, և նաև, որ այդ գործերով չպետք է թույլատրվի համաներումների ու ներումների կիրառումը³⁵: Այսպես, Եվրոպական դատարանը, հղում կատարելով *Լորենս Դյուսարդին ընդդեմ Ֆրանսիայի գործով* 1991 թվականի սեպտեմբերի 2-ի և *Աբդուլասամեյր Յամանն ընդդեմ Թուրքիայի գործով* 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճռին, *Օլկային ընդդեմ Թուրքիայի գործով* 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճռում վերահաստատել է, որ երբ պետության ներկայացուցիչը մեղադրվում է հանցագործությունների մեջ, որոնք խախտում են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, քրեական գործի վարույթը և պատժի նշանակումը չպետք է սահմանափակված լինեն ժամկետով³⁶:

III. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցմանն ուղղված գործընթացը և դատական պրակտիկան.

33. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցմանն ուղղված դատական պրակտիկայի մեկնարկը տրվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ, որում, անդրադառնալով Ա.Գզոյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտմանը, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է խոշտանգման բացարձակ արգելքի գաղափարը և ենթադրյալ խոշտանգման դեպքի առթիվ պետության կողմից արդյունավետ քննություն իրականացնելու պոզիտիվ պարտականությունը³⁷: *Սվեպլանաս*

³⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123:

³⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետ 59:

³⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Okkali v. Turkey* գործով 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 52067/99, կետ 76:

³⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշումը:

Գրիգորյանի գործով 2011 թվականի մայիսի 11-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամրագրել է վատ վերաբերմունքի վերաբերյալ վստահելի հայտարարության առնչությամբ քննություն իրականացնելու իրավասու մարմինների պարտականությունը³⁸: Վճռաբեկ դատարանն իր հետագա որոշումներում ևս հետևողականորեն կիրառել է Եվրոպական դատարանի մշակած չափանիշները³⁹:

34. Քննարկվող ոլորտում օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը, ի թիվս այլնի, պայմանավորված էր ոչ միայն ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և ներպետական օրենսդրությամբ խոշտանգման համար քրեական պատասխանատվության ոլորտում գործող իրավակարգավորումների միջև ներդաշնակեցումն ապահովելու կարևորությամբ, այլ նաև Եվրոպական դատարանի վճիռների կատարման պահանջով: Այսպես, Հայաստանի վերաբերյալ մի շարք վճիռներում (օրինակ՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նայրանդյանն ընդդեմ Հայաստանի, Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* և *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործերով) Եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ ըստ այդմ պարտավորեցնելով ՀՀ իշխանություններին գործուն քայլեր ձեռնարկել խոշտանգումների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Նշված վճիռների կայացմանը հաջորդել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից Եվրոպական դատարանի վճիռների հետևողական կատարման ապահովման նպատակով ներպետական դատական ատյանների կողմից կայացված դատական ակտերի վերանայումն ու գործերի վերաբացումը⁴⁰:

35. Խոշտանգումների դեմ Կոմիտենի իր 2012 թվականի զեկոյցում նախ *ողջունել է Հայաստանի Հանրապետության կողմից 2006-2011 թվականների ընթացքում խոշտանգման և խտրական քննության արարքներն արգելող միջազգային և տարածաշրջանային կարևորագույն փաստաթղթերի վավերացումը, կարևորել է ներպետական համապատասխան օրենսդրության ընդունման և միջազգային չափանիշների ներդաշնակեցման հարցը, մինևույն ժամանակ կոչ է արել քրեականացնել խոշտանգման հանցակազմը, օրենսդրական երաշխիքներ*

³⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սվևրյանա Գրիգորյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԳ/0281/01/10 որոշումը:

³⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարդգեզ Գասպարիի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԳ/0190/11/16, *Արթուր Հակոբյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ՄԳ2/0006/11/16, *Արևրդ Հակոբջանյանի և Գագիկ Կարասպետյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0172/11/17, *Էրիկ Եղիսյանի* գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴ1/0030/11/16, *Արմեն Հովհաննիսյանի* գործով 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ԵԴ/0558/01/18 որոշումները:

⁴⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Բագրատ և Նարինե Նայրանդյանների* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Բագրատ և Արևիկ Նայրանդյանների* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Արայիկ Զալյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Արիս Հովհաննիսյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԿԳ/0062/11/12 որոշումները:

ստեղծել ձերբակալված և կալանավորված անձանց նվազագույն իրավունքների պահպանման համար, նախատեսել խոշտանգումների գոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման, այդ թվում՝ ռեաբիլիտացիայի ինստիտուտը, ուժը կորցրած ճանաչել խոշտանգման հանցագործության կամ դրան հավասարեցված արարքների համար քրեական օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետի, ներման, համաներման կիրառումը⁴¹:

36. Օրենսդրության՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանեցման գործընթացի մեկնարկը, ըստ էության, տրվեց 2015 հունիսի 9-ին «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-69-Ն և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-70-Ն օրենքների ընդունմամբ, որոնցով համապատասխանաբար նախատեսվեց խոշտանգման հանցակազմը և նախատեսվեց խոշտանգման դեպքերի համար հանրային մեղադրանքի ռեժիմ:

37. Խոշտանգման ենթադրյալ դեպքերով արդյունավետ քննության ապահովմանն ուղղված միջոցառումներից կարելի է առանձնացնել նաև ձերբակալված և կալանավորված անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործող մեխանիզմի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Այսպես, 2015 թվականի դեկտեմբերին 21-ին ընդունվեց ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191 օրենքը, որով ձերբակալված կամ կալանավորված անձին պաշտպանի և պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանի հետ տեսակցության հնարավորություն ընձեռվեց նաև ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին: Բացի այդ, կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կալանավորված անձանց հնարավորություն ընձեռվեց սեփական միջնորդության հիման վրա, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, աշխատանքային օրերին և ժամերին առանձին, անարգել տեսակցել տվյալ քրեական գործով որպես պաշտպան չներգրավված այլ փաստաբանի հետ՝ իրավական այլ ոլորտներում իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

38. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-214-Ն օրենքով նախատեսվեց խոշտանգումների գոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման, այդ թվում՝ ռեաբիլիտացիայի ինստիտուտը⁴²:

39. 2018 թվականի հունվարի 16-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-69-Ն օրենքով հավելյալ դատավարական

⁴¹ Տե՛ս, Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄՄԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/ARM/CO/3, 2012 թվականի հուլիսի 6, կետ 10:

⁴² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածը:

երաշխիքներ նախատեսվեցին *de facto* ազատությունից զրկված անձանց համար, այդ թվում՝ հրավիրելու փաստարան, իր պահանջով ենթարկվելու բժշկական հետազոտման: Վերոնշյալ կարգավորումները պահպանվել են նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

40. 2018 թվականի մարտի 7-ին ընդունվեց «Ներման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց, որ ներում չի շնորհվում խոշտանգման համար դատապարտված անձին:

41. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրվեց խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ ներում, համաներում կիրառելու արգելքը:

42. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- խոշտանգման արգելքը միջազգային իրավունքի համապարտադիր՝ *jus cogens* նորմ է, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և վերջինիս իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային պայմանագրերում՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրում, «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոնվենցիայում, Եվրոպական կոնվենցիայում, որոնք 2002 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից եղել են վավերացված,

- խոշտանգման նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառման արգելք նախատեսելու պահանջ ուղղակիորեն նախատեսված է վերոնշյալ կոնվենցիաների հիման վրա գործող մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում: Այսպես, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի նկատմամբ մշտադիտարկում իրականացնող Խոշտանգումների դեմ կոմիտեն դեռևս 2003 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում արձանագրել է խոշտանգմանն առնչվող հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը կիրառելու արգելքը: Պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը վաղեմության ժամկետի հիմքով դադարեցնելու ոչ իրավաչափությունն արձանագրել է նաև Եվրոպական դատարանը Մեծ պալատի խորհրդատավական կարծիքում վկայակոչված՝ *Արդուլասմեար Յամանն ընդդեմ Թուրքիայի* գործով դեռևս 2004 թվականի նոյեմբերի 2-ին կայացրած վճռում, որտեղ դատարանը հղում է կատարել Խոշտանգումների դեմ կոմիտեի 2003 թվականի եզրափակիչ դիտարկումներին,

- միջազգային պայմանագրային մարմինների դիրքորոշման՝ այդ պայմանագրերի բաղկացուցիչ մասը լինելու առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ կոնվենցիոնալ համակարգի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ Եվրոպական կոնվենցիան ոչ միայն պահանջում է մասնակից պետություններից պահպանել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, այլ նաև ստեղծում է դատական մարմին, որը Եվրոպական կոնվենցիայի 19-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 1-ին մասի ուժով իրավասու է վեր հանել Եվրոպական կոնվենցիայի խախտումները վերջնական վճիռներում, որոնց պետությունները պարտավորվել են հետևել: Բացի այդ, այն ստեղծում է վճիռների կատարման նկատմամբ վերահսկողական մեխանիզմ Նախարարների կոմիտեի պատասխանատվության ներքո (Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետ): Նման մոտեցումը, Եվրոպական դատարանի գնահատմամբ, ընդգծում է վճիռների արդյունավետ կատարման կարևորությունը⁴³: Ընդ որում, Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրոյթների մեկնաբանմանն ու կիրառմանը: Այս առումով հարկ է նշել, որ հենց ինքը՝ Եվրոպական դատարանը շեշտել է, որ իր վճիռները, ըստ էության, ծառայում են ոչ միայն Եվրոպական դատարանին հասցեագրված վեճերի լուծմանը, այլև ընդհանուր առմամբ կոչված են «պարզաբանելու, պաշտպանելու և զարգացնելու» Եվրոպական կոնվենցիայով սահմանված կանոնները՝ դրանով իսկ նպաստելով պետությունների՝ որպես պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունները կատարելուն: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ թեև կոնվենցիոնալ համակարգի առաջնային նպատակը անհատական օգնություն տրամադրելն է, վերջինիս առաքելությունը, նաև ընդհանուր շահերից ելնելով, հանրային քաղաքականության հարցեր որոշելն է՝ դրանով իսկ բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր չափանիշները և ընդլայնելով մարդու իրավունքների իրավաբանական պրակտիկան անդամ-պետությունների համայնքում⁴⁴,

- միջազգային պայմանագրային մարմինների դիրքորոշման՝ անդամ պետությունների համար ունեցած իրավաբանական ուժի առնչությամբ Վճռաբեկ դատարանը տեղին է համարում հիշատակել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրի կիրառման սպասեղվման նպատակով ստեղծված՝ Մարդու իրավունքների կոմիտեի առնչությամբ Արդարադատության միջազգային դատարանի այն դիրքորոշումը, որ դատարան դիմելիս անհրաժեշտ է կարևորել և պատշաճորեն հաշվի առնել միջազգային պայմանագրի ողջամիտ կիրառումը մշտադիտարկելու

⁴³ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Verein Gegen Tierfabriken Schweiz (vgt) v. Switzerland (No. 2)* գործով 2009 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 32772/02, կետ 84:

⁴⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Karner v. Austria* գործով 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 40016/98, կետ 26:

նպատակով հատուկ ստեղծված անկախ մարմինների կողմից ընդունված մեկնաբանությունը, եթե այդպիսիք ստեղծվել են⁴⁵:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), նշելով, որ. «(...) [Այն իրավական նորմերը, որոնց վերաբերյալ իրենց պաշտոնական դիրքորոշումն են հայտնում պայմանագրային մարմինները, Կողմ պետությունների համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտավորություններ են, և հետևաբար պայմանագրային մարմինների կողմից իրենց պաշտոնական դիրքորոշումը հայտնելն ավելին է, քան զուր առաջարկությունները, որոնք կարող են հեշտությամբ անարեալել, քանի որ Կողմ պետությունը համաձայն չի եղել ԽԴԿ-ի կողմից ընդունված մեկնաբանության կամ փաստերի նկարմամբ որևէ կիրառման հետ: Ավելին, Կողմ պետությունները չեն կարող ուղղակի անարեալել դրանք, այլ պետք է բարեխղճորեն (*bona fide*) հաշվի առնեն դրանք: Մյուս կողմից, նրանք զրկված չեն մանրամասն ուսումնասիրելուց հետո համապարասիան գործի վերաբերյալ ճիշտ իրավական դիրքորոշումը չարահայտելու հիմքով դրանք մերժելու իրավունքից: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի եզրահանգումներին ընդհանրապես չարձագանքելը կարող էր համարվել ԲԶԻՄԴ-ով սրանձնած պարտավորությունների խախտում: Իրավական հերևանքն այն է, որ անդամ պետություններն սրանձնում են ՄԻԿ-ի վերջնական կարծիքները բարեխղճորեն հաշվի առնելու պարտավորություն»⁴⁶,

– 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված, ինչպես նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը պետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերն ուղղակիորեն դիտարկում էր որպես ներպետական իրավական համակարգի՝ գերակայությամբ օժտված բաղկացուցիչ մաս,

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը 75-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ուղղակիորեն նախատեսում էր Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և վավերացվելիք պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու իրավական հիմք:

43. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

– Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքը տեղի է ունեցել 2004 թվականի ապրիլի 23-ին⁴⁷,

– վերոնշյալ դեպքի առնչությամբ Եվրոպական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով ճանաչել է

⁴⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, բաժին Ե, կետ 1:

⁴⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս սույն որոշման 16–16.1-րդ կետերը:

Գ.Վիրաբյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված նյութական և ընթացակարգային իրավունքների խախտման փաստը⁴⁸,

- Առաջին ատյանի դատարանը Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղավոր է ճանաչել իրենց մեսագրվող արարքները կատարելու մեջ: Այս անդրադառնալով վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու հարցին՝ փաստել է, որ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան վաղեմության ժամկետի կիրառման արգելք չի նախատեսում, և որ միայն խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն է կոնվենցիայի իր մեկնաբանություններում, որոնք, դատարանի գնահատմամբ խորհրդատվական բնույթ են կրում, ավստսանք հայտնել, որ թեև նախորդ դիտարկումներում, առաջարկություններում արձանագրել էր, սակայն դեռևս գործող օրենսդրությունն ամեն դեպքում պահպանում է վաղեմության ժամկետները խոշտանգումների գործերով: Առաջին ատյանի դատարանը նաև եզրահանգել է, որ խոշտանգումների նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելու արգելքը նախատեսված չէ նաև Եվրոպական կոնվենցիայում և միայն այն, որ Եվրոպական դատարանն իր՝ *Մոկսանոն ընդդեմ Ռուսիայի* գործով որոշմամբ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը չդադարեցնելու, անձի նկատմամբ ներում կամ համաներում չկիրառելու համար դիրքորոշում է հայտնել, դեռևս բավարար չէ, որ այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ենթակա լինի պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումներն ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ և այդ դիրքորոշումը կիրառելու համար անհրաժեշտ է կամ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխության կատարում կամ գոնե բարձրագույն դատական մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո նախադեպային որոշման կայացմամբ այն որպես համապարտադիր վարքագծի կանոնի ճանաչում: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի դրույթները վավերացման փաստի ուժով պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար, սակայն Եվրոպական դատարանի որոշումները որևէ իրավադրույթով չեն կարող հավասարեցվել այդ միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված հոդվածներին և ուղղակիորեն կիրառվել: Առաջին ատյանի դատարանի գնահատմամբ՝ վերը նշված որոշման կիրառմամբ անտեսվել է անձի վիճակը վատթարացնող օրենքների ու իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը: Եթե անգամ Եվրոպական դատարանի որոշումն կիրառելի լիներ Հայաստանի Հանրապետությունում, ապա նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշման կիրառման դեպքում արդյոք չեն խախտվում Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները և օրինական շահերը, քանի որ նրանց մեղսագրվող արարքը կատարվել է

⁴⁸ Տե՛ս սույն որոշման 15-15.10-րդ կետերը:

դեռևս 2004 թվականի ապրիլ ամսին, իսկ Եվրոպական դատարանի որոշումը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 17-ին⁴⁹,

– Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ համաձայնվելով արտահայտված դիրքորոշումների հետ⁵⁰:

44. Սույն գործի փաստերի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող արարքը կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու բավարար իրավական հիմքի առկայությանը, արձանագրում է, որ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող արարքը կատարելու օրվա՝ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասն ուղղակիորեն նախատեսել է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության կողմից այդ պահի դրությամբ վավերացված միջազգային պայմանագրերով նման արգելքի առկայությանը, ապա պետք է փաստել, որ դեպքից առաջ՝ դեռևս 1993 թվականին, Հայաստանի Հանրապետության կողմից արդեն իսկ վավերացված են եղել խոշտանգման արգելքը նախատեսող՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անարդյկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան և Եվրոպական կոնվենցիան, որոնցով խոշտանգման դեպքերի համար վաղեմության ժամկետներ նախատեսված չեն եղել: Դեռևս 1998 թվականի դեկտեմբերի 10-ին նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալը՝ *the Prosecutor v. Anto Furundzija* գործով որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգման դեպքերի վրա չեն կարող տարածվել վաղեմության ժամկետները: Իսկ արդեն 2003 թվականին, խոշտանգման դեպքերի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումը բացառելու պահանջը հստակեցվել էր Խոշտանգման դեմ կոմիտեի փաստաթղթերում, որոնց վկայակոչմամբ դեռևս 2004 թվականին համանուն դիրքորոշում էր ձևավորել նաև Եվրոպական դատարանը: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ, 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում առկա է եղել խոշտանգման դեպքերի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական արգելք:**

45. Միջազգային իրավունքի նորմերի անմիջական կիրառության առնչությամբ, Վճռաբեկ դատարանը տեղին է համարում հիշատակել Եվրոպական դատարանի՝ *Կոնտոլին ընդդեմ Լապվիայի գործով* արտահայտած իրավական դիրքորոշումը, որում Եվրոպական դատարանի Մեծ պալատը,

⁴⁹ Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

⁵⁰ Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

վերանայելով Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում արձանագրելու մասին Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 24-ի որոշումը, դատապարտելու համար բավականաչափ հստակ իրավական հիմքերի առկայության տեսանկյունից Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի չի համարել 1993 թվականին ներառական օրենսդրությամբ քրեականացված՝ 1944 թվականին կատարված պատերազմական հանցագործության համար 2000 թվականին դիմումատուի դատապարտումը պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող միջազգային իրավունքի նորմերի հիման վրա⁵¹: Անդրադառնալով վաղեմության ժամկետների կիրառման խնդրին, Եվրոպական դատարանը կարևոր է համարել այն հարցի քննարկումը, թե *արդյո՞ք նախքան դիմումատուի դատապարտումը որևէ պահի միջազգային իրավունքով նման արարքի համար վաղեմության ժամկետներ սահմանված եղել են, թե ոչ: Արդյունքում, հաշվի առնելով այն, որ միջազգային իրավունքում ո՞չ 1944 թվականին և ո՞չ էլ դրանից հետո վաղեմության ժամկետներ նախատեսված չեն եղել, և որ այդպիսիք նախատեսված չեն եղել ներպետական օրենքով, Եվրոպական դատարանը գրել է, որ դիմումատուի դատապարտումը ժամկետանց չի եղել*⁵²:

45.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերը հիշատակված՝ *Կոնոնովն ընդդեմ Լատվիայի գործով* Եվրոպական դատարանն անդրադաճրել է այն հարցին, թե արդյո՞ք դիմումատուի համար կարող էր կանխատեսելի լինել, որ համապատասխան արարքները պատերազմական հանցագործություններ են, և արդյո՞ք վերջինս դրանց համար կարող էր դատապարտվել: Այս հարցի առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ կանխատեսելիության գաղափարի շրջանակը մեծապես կախված է խնդրո առարկայի բովանդակությունից, ոլորտից, որի վրա այն տարածվում է, և այն անձանց շրջանակից և կարգավիճակից, ում այն ուղղված է: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք պետք է առավել բարձր աստիճանի զգուշավորություն ցուցաբերեն իրենց աշխատանքն իրականացնելիս, և վերջիններից կարելի է ակնկալել, որ հատուկ ուշադիր կլինեն իրենց գործունեությունից բխող հնարավոր ռիսկերը գնահատելիս: Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ համապատասխան արարքների պատերազմական հանցագործություն լինելու հանգամանքը հիմնված միջազգային իրավունքի վրա, 1944 թվականին կարող էր դիմումատուի՝ որպես մարտական իրավիճակում հայտնված երիտասարդ զինծառայողի համար բավականաչափ կանխատեսելի լինել՝ մարդու միջազգային հիմնարար իրավունքներին հետևելու պահանջի ուժով, չնայած այն հանգամանքին, որ 1926 թվականի քրեական օրենսգիրքը որևէ հղում չէր պարունակում միջազգային իրավունքին և պատերազմի կանոններին և որ

⁵¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Kononov v. Latvia* գործով 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04, կետեր 196-199:

⁵² Տե՛ս նույն տեղում, կետեր 232-233:

այդպիսիք պաշտոնապես հրապարակված չէին ԽՍՀՄ-ում կամ Լատվիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում⁵³:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով ամբաստանյալները ոստիկանության աշխատակիցներ են եղել, իսկ 2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում էր, որ *ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոչընդոտման, դատան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և ստուգացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով*: Հետևաբար, սույն գործով ամբաստանյալների՝ որպես ոստիկանների համար բավականաչափ հստակ է եղել խոչտանգումների, դատան կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը, քանի որ այն ուղղակիորեն նախատեսված է եղել իրենց մասնագիտական գործունեությանն առնչվող հիմնական նորմատիվ իրավական ակտում:

46. Անփոփելիվ վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը նախատեսելով որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և վավերացնելով խոչտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային փաստաթղթերը, հստակ հանձնառություն է ստանձնել օրենսդրորեն և գործնականում արդյունավետ մեխանիզմներ նախատեսել խոչտանգումների և դրանց հավասարեցված արարքների քրեականացման, դրանց վերաբերյալ դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Այս հանձնառությունը ստանձնելու և այն հետևողականորեն իրականացնելու ապացույցը Հայաստանի Հանրապետության կողմից խոչտանգումների դեմ պայքարի ոլորտի հիմնական միջազգային կոնվենցիաների վավերացումն է, ներպետական օրենսդրության զարգացումներն ու համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը:

Այնքանով, որքանով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքն ուղղակիորեն ամբագրում էր միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք, իսկ Հայաստանի Հանրապետությունը խոչտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային պայմանագրերի վավերացմամբ պարտավորվել է հետևել նաև այդ պայմանագրերի դրույթների մեկնաբանությանն ու կիրառությանն ուղղված՝ կոնվենցիոնալ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում ամրագրված պահանջներին, հետևաբար Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային իրավունքի

⁵³ Տե՛ս նույն տեղում, կետեր 235-239:

նորմերի հիման վրա կարելի է փաստել, որ առնվազն ՀՀ քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա՝ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, առկա էր խոշտանգման կամ դրան հավասարեցված վերաբերմունքի դեպքում վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելք, որը կարող էր սույն գործով ամբաստանյալների համար կանխատեսելի լինել իրենց մեղաագրվող արարքը կատարելու օրվա՝ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ:

Սույն որոշման 43-րդ կետում վկայակոչված՝ Եվրոպական դատարանի վճիռների նշանակության վերաբերյալ վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, որ Եվրոպական դատարանի որոշումներով արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ դրանք ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ անդամ-պետությունների պարտականությունը՝ իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Եվրոպական կոնվենցիայով, ենթադրում է անդամ-պետությունների պարտականությունը՝ երաշխավորել այդ իրավունքներն ու ազատություններն այն մեկնաբանությամբ, որ դրանց տվել է Եվրոպական դատարանը՝ որպես կոնվենցիոնալ դրույթների մեկնաբանության իրավագործությամբ օժտված մարմին: Ընդ որում, վերոշարադրյալից բխում է, որ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով Եվրոպական դատարանի վճիռը պարտադիր է ոչ միայն կոնկրետ գործով պատասխանող պետության, այլ առհասարակ Եվրոպական կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր պետության համար արձանագրված խախտման ուժով անդամ-պետությունների համար առաջացնում է *erga omnes* պարտավորություն՝ հետևել Եվրոպական դատարանի ընդհանուր նախադեպային իրավունքին: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի այս դիրքորոշումը հակասում է կոնվենցիոնալ համակարգի և այդ համակարգի ներսում Եվրոպական դատարանի որոշումների դերի ու նշանակության վերաբերյալ Եվրոպական դատարանի արտահայտած՝ սույն որոշման 43-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներին:

47. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներպետական կանոնակարգումները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և այդ պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավարար իրավական հիմքեր է նախատեսում խոշտանգման կամ դրան հավասարեցված այլ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով ամբաստանյալներ Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանն իրենց մեղսագրվող արարքի համար ենթակա են քրեական պատասխանատվության:

Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի նկատմամբ պատժ նշանակելու նպատակահարմարությունը.

48. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանը և Արմեն Արսենյանը ենթակա են պատժի:

49. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Պատրիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արդահայրվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:*

2. Պատրի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատրի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

50. Վերահաստատելով խոշտանգման համար ինչպես քրեական պատասխանատվության, այնպես էլ պատժի անխուսափելիության կարևորությունը խոշտանգման դեպքերի արդյունավետ քննության՝ պետության պոզիտիվ պարտականության համատեքստում, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սույն գործի առանձնահատկություններին:

50.1. Նախ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացման շրջանակում դատական պրակտիկայում առաջին անգամ ուղենիշային նշանակություն ունեցող դիրքորոշում է արտահայտում խոշտանգում և դրանց հավասարեցված այլ արարքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ:

50.2. Երկրորդ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալների կողմից Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ վարույթը՝ 2004 թվականի օգոստոսի 11-ին կարճվելուց հետո մոտ մեկ տարի անց, սպառելով ներպետական պաշտպանության իրավական միջոցները, Գ.Վիրաբյանը 2005 թվականի մայիսի 11-ին դիմել է Եվրոպական դատարան: Գ.Վիրաբյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման փաստն արձանագրող Եվրոպական դատարանի վճիռը կայացվել է յոթ տարի անց՝ 2012 թվականի հոկտեմբերի 2-ին: Ներպետական դատավարական ընթացակարգերի կիրառմամբ Եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռը պետք է հանգամանքի հիմքով գործի վերաբացման արդյունքում միայն երկու տարից անց՝ 2014 թվականի սեպտեմբերի 1-ին, դատախազի կողմից որոշում

է կայացվել 2004 թվականի օգոստոսի 11-ի վերոնշյալ որոշումը վերացնելու մասին: Եվ մոտ ևս երկու տարի անց՝ 2016 թվականի մայիսի 10-ին հարուցվել է քրեական գործ՝ 2004 թվականի ապրիլի 23-ին Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ: Նախաքննության ընթացքում Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել, ապա որոշում է կայացվել նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով, որից հետո այդ որոշումը վերացվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից: Միայն երկու տարի անց՝ 2018 թվականի փետրվարի 20-ին, քրեական գործը՝ ըստ մեղադրանքի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին աստիճանի դատարան: Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարաններում գործը քննվել է շուրջ երկու տարի: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: 2021 թվականի հունվարի 27-ին հրավիրված դատական նիստում Վճռաբեկ դատարանը որոշել է ամբաստանյալներ Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի գործով խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Եվրոպական դատարան: Եվրոպական դատարանի Մեծ պալատը 2022 թվականի ապրիլի 26-ին Խորհրդատվական կարծիք է տրամադրել Վճռաբեկ դատարանին, որի հայերեն թարգմանությունը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 28-ին:

Վերագրյալից հետևում է, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող դեպքից անցել է գրեթե 20 տարի: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ քրեական վարույթի տևական ժամանակը պայմանավորված է եղել ոչ թե ամբաստանյալների վարքագծով, այլ սույն գործի քննության առանձնահատկություններով, այդ թվում՝ տուժողի կողմից Եվրոպական դատարան դիմելուց և Եվրոպական դատարանի վճիռը ստանալուց հետո գործի վերաբացման երկարատև դատավարական ընթացակարգերը կիրառելով, գործի վերաբացումից հետո Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին որպես մեղադրյալ ներգրավելուց հետո կրկին քրեական հետապնդումը դադարեցնելով, ապա այն նորոգելով, իրավական խնդրի կարևորությամբ և բարդությամբ պայմանավորված՝ վճռաբեկ վարույթի տևողությամբ, որը ներառել է խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով Եվրոպական դատարան դիմելն ու դրան հաջորդող իրավական գործընթացը: Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ այս ողջ ժամանակահատվածում ամբաստանյալների կողմից գործի ձգձգմանն ուղղված որևէ վարքագիծ չի դրսևորվել:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ողջամիտ ժամկետում

գործի քննության իրավունքի խախտման համար հնարավոր փոխհատուցում է դիտարկել պետության կողմից պատժի հստակ և չափելի մեղմացումը⁵⁴:

51. Ուստի, վերոշարադրյալի հետ մեկտեղ հաշվի առնելով այն, որ Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանն այլևս ոստիկանության համակարգում չեն աշխատում, ինչպես նաև, որ Վճռաբեկ դատարանում դռնբաց դատական նիստի ընթացքում տուժող Գ.Վիրաբյանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ամբաստանյալների նկատմամբ որևէ բողոք և պահանջ չունի, պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում ամբաստանյալների նկատմամբ պատժի նշանակումն այլևս չի կարող ծառայել իր նպատակներին⁵⁵: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին ներկայացված մեղադրանքը պատշաճ հետազոտվել է ստորադաս դատարաններում, ինչի արդյունքում վերջինները մեղավոր են ճանաչվել իրենց մեղսագրվող արարքը կատարելու մեջ և նրանց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ: Ուստի, *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճռով ոչ նյութական վնասի համար սահմանված փոխհատուցման հետ մեկտեղ սույն գործով տուժող Գ.Վիրաբյանը ձեռք է բերել նաև իրեն պատճառված նյութական վնասի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով հատուցում պահանջելու իրավունք:

52. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանը և Արմեն Արսենյանը ենթակա չեն պատժի:

53. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ստյանի դատարանը, 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելով, իսկ Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ստյանի դատարանի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ միջազգային պայմանագրի և քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է՝ սույն օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ամբաստանյալներին քրեական պատասխանատվությունից ազատելու մասով բեկանելու և փոփոխելու համար: Մինևույն ժամանակ, սույն որոշման 50-52-րդ կետերում կատարված վերլուծության հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս

⁵⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Beck v. Norway* գործով 2001 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 26390/95, կետ 27, *Ohlen v. Denmark* գործով 2005 թվականի փետրվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 63214/00, կետ 27:

⁵⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արփինև Մայությունի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԿԴ/0207/01/14 որոշումը:

դատարանների դատական ակտերը՝ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղավոր ճանաչելու մասով, պետք է թողնել անփոփոխ՝ առանց վերջիններիս նկատմամբ պատիժ նշանակելու:

53. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ, 81-րդ, 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Հովհաննես Նեգոսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռի եզրափակիչ մասի 1-ին և 3-րդ պարբերություններում «և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, նրան ազատել քրեական պարսպախանալությունից» բառերը փոխարինել «առանց պատիժ նշանակելու» բառերով:

2. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արտրագրություն

Դատավորներ

արտրագրություններ

65.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԴ/0536/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Դ.ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

27 դեկտեմբերի 2023 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ ամբաստանյալ Վահե Գազիկի Սարգսյանի պաշտպան Գ.Թավադյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի ապրիլի 4-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 267.1-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, հարուցվել է թիվ 58207719 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Վահե Գազիկի Սարգսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Վահե Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Վ.Սարգսյանի

նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Վ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2019 թվականի հուլիսի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ Վ.Սարգսյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց է ընտրվել գրավը:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի դատավճռով ամբաստանյալ Վ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է նախնական կալանքի տակ գտնվելու 10 (տասը) ամիս 9 (ինը) օրը, և Վ.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 7 (յոթ) ամիս 21 (քսանմեկ) օր ժամկետով:

3. Դատախազ Գ.Հովակիմյանի, ամբաստանյալ Վ.Սարգսյանի պաշտպաններ Կ.Սարգսյանի և Գ.Թավադյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի մայիսի 31-ի որոշմամբ պաշտպանների բողոքը մերժել է, իսկ դատախազի բողոքը՝ մասնակիորեն բավարարել, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի դատավճիռը քննել և փոփոխել է, ամբաստանյալ Վ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված 7 (յոթ) տարի ժամկետով ազատազրկմանը հաշվակցվել է Վ.Սարգսյանի նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ 10 (տասը) ամիս 9 (ինը) օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 1 (մեկ) ամիս 21 (քսանմեկ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Վ.Սարգսյանի պաշտպան Գ.Թավադյանը:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Վ.Սարգսյանի պաշտպան Գ.Թավադյանի վճռաբեկ բողոքն

ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մարտի 27-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչն իր բնույթով էական է և ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ քրեական գործով դատաքննության ընթացքում հետազոտվել են խուզարկությանն առնչվող համապատասխան փաստաթղթերը, բայց այդպես էլ չի հրապարակվել ու հետազոտվել որևէ փաստաթուղթ կամ փաստական տվյալ, որից կրթներ, որ խուզարկության ենթակա մեքենան Վ.Սարգսյանին բերման ենթարկելուց անմիջապես հետո կնիքվել է, այն էլ՝ ընթերակների ներկայությամբ: Ստորադաս դատարանները դատական ակտում պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել խուզարկությանը նախորդող հանգամանքների համակցությունը, որոնք հնարավորություն կտային պատշաճ երաշխավորելու վարույթի արդարացիությունը:

Միևնույն ժամանակ, բողոք բերած անձն ընդգծել է, որ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարելու Վ.Սարգսյանի մեղավորությունն իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ:

5.1. Բացի այդ, բողոքաբերը, անդրադառնալով Վ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածների կիրառելիությանը, փաստել է, որ Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հարցերի կապակցությամբ նույնպես եկել է սխալ եզրահանգման:

Այսպես՝ Վերաքննիչ դատարան է ներկայացվել Վ.Սարգսյանի կնոջ մահվան փաստը հաստատող վկայականը, և որևէ կերպ հաշվի չի առնվել, որ երեք անչափահաս երեխաները, որոնցից մեկը մանկուց հաշմանդամ է, մնացել են միայն ամբաստանյալի խնամքին:

Միաժամանակ, բողոքի հեղինակը փաստարկել է, որ վերաքննիչ բողոքը քննության առնելուց հետո, ի հայտ են եկել նոր հանգամանքներ, մասնավորապես՝ Վ.Սարգսյանի հոր՝ Գագիկ Սարգսյանի մոտ 2022 թվականի հուլիսի 11-ին ախտորոշվել է «Գլխուղեղի սուր իշեմիկ կաթված», իսկ նրա մայրը՝ Գայանե Կիրակոսյանը, 2022 թվականի հուլիսի 15-ին ենթարկվել է վիրահատության:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Այսպիսով, առկա բոլոր հանգամանքների ու, հատկապես, վերոնշյալ նոր հանգամանքի պայմաններում, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր առնվազն քննարկման առարկա դարձնել տվյալ պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառելիության հարցը:

5.2. Բողոքաբերը նշել է նաև, որ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով Վ.Սարգսյանին մեղսագրվող արարքի համար նախատեսված սանկցիայի՝ ազատագրկման ձևով պատժի նվազագույն չափը նվազել է՝ յոթից դառնալով վեց տարի:

Մինևույն ժամանակ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, Վ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ բացասական հետևության գալով, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ պատշաճ գնահատման չի ենթարկել Վ.Սարգսյանի ընտանեկան դրությունը, խնամքին երեք անչափահաս երեխաների, հաշմանդամ երեխայի, հաշմանդամ եղբոր ու տարեց հոր առկայությունը, և նշանակված պատժի հնարավոր ազդեցությունը նրա ընտանիքի կյանքի պայմանների վրա, ինչպես նաև ամբաստանյալի առողջական վիճակը:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը, ճանաչել և հռչակել Վ.Սարգսյանի անմեղությունն առաջադրված մեղադրանքում, կամ դատական ակտը բեկանել պատժի մասով և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան կամ գործն ուղարկել նոր քննության՝ պարտավորեցնելով քննարկման առարկա դարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառելիության հարցը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նախաքննության մարմնի կողմից Վահե Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն/ա գործով չչարզված հանգամանքներում ինքնությունը չչարզված անձից իրացնելու նպատակով սպորինի ձեռք է բերել և «Մերսեդես S» մակնիշի, O1AA107 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում սպորինի պահել է առանձնապես խոշոր չափերով՝ 1.31 գրամ հասարարուն քաշով «մեթամֆետրամին» տեսակի թմրամիջոց:

Այսպես՝ Վահե Սարգսյանը քննությանը դեռևս չչարզված հանգամանքներում իրացնան նպատակով սպորինի ձեռք բերելով առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 1.31 գրամ քաշով «մեթամֆետրամին» տեսակի թմրամիջոց, այն բաժանել է 2 չափաբաժինների՝ 0.91 և 0.4 գրամ քաշերով, որոնք տեղադրել է երկու առանձին պոլիէթիլենային փաթեթների մեջ, այնուհետև դրանք «մեթամֆետրամին» և «կոկաին» տեսակի թմրամիջոցների հետքեր պարունակող էլեկտրական կշեռքի հետ սպորինի պահել է իր կողմից շահագործվող «Մերսեդես S» մակնիշի, O1AA107 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում և 2019 թվականի սպրիլի 4-ին փոխադրել «Ռիցար» հյուրանոցային համալիրի բակային

րարածք, որրեղ բռնվել է ՀՀ ԱԱԾ աշխարակիցների կողմից, իսկ ավրոմեքենայի խուզարկությանը հայրնարերվել է վերոնշյալ թմրամիջոցները և էլեկրոնային կշեռքը»²:

8. Առաջին առյանի դատարանը, Վ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերաորակելով 268-րդ հոդվածի 3-րդ մասով, արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը, գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահարելով թույլարրելիության վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությանը գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմանը, գրնում է, որ ամբարարանյալ Վահե Սարգսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չախանիչներին համապարասիան, ապացուցված չէ:

(...)

Քրեական գործի դարարնության ընթացքում հերագրված ապացույցներով, մանավորապես՝ ամբարարանյալ Վ.Սարգսյանի, վկաներ Յու. Մինասյանի, Վ.Համբարձոմյանի ցուցմունքներով, ինչպես նաև դարարնությանը հերագրված մյուս ապացույցներով հիմնավորվել է միայն այն հանգամանքը, որ Վահե Սարգսյանն ապօրինի կերպով ձեռք է բերել և պահել 1.31 գրամ հարարուն քաշով առանձնապես խոշոր չախի մեթամֆետրամին րեսակի թմրամիջոցը, սակայն այն իրացնելու հանգամանքի վերաբերյալ որևէ փաստական րվյալ քրեական գործում առկա չէ:

(...)

Թմրամիջոցի իրացումը դրա ցանկացած եղանակով օգարումն է: Ապօրինի իրացման րակ պերք է հասկանալ թմրամիջոցի՝ հարուցմանը կամ անհարույց այլ անձանց հանձնելու, փոխանցելու ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրարություն, փոխանակում, փոխարվություն, պարքի մարում, ուրիշի ներարկում և այլն: Հարկանշական է, որ առյն գործով հերագրված ապացույցները, մանավորապես՝ ամբարարանյալ Վահե Սարգսյանի, վկաներ Յուրի Մինասյանի և Վաչագան Համբարձոմյանի ցուցմունքները, հիմնականում պարունակում են րեղելություններ՝ հայրնարերված թմրամիջոցը Վ.Սարգսյանին պարկանելու, այն իր օգրագործմանն նպարակով պահելու վերաբերյալ, ըար վերոհիշյալ անձանց ցուցմունքների՝ հերքվել է Վահե Սարգսյանի կողմից թմրամիջոց իրացնելու նպարակը:

(...)

Դատարանը, գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահարելով թույլարրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությանը գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմանը, ամբարարանյալի մեղավորության մասին չփարարված բոլոր կասկածները նրա օգրին մեկնարանելով, հանգում

² Տն քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 23-24:

է հետևության, որ առանց թմրամիջոց իրացնելու հանգամանքը հավասարող ապացույցի առկայության հիմնավորված և պարճատարանված չեն ամբաստանյալ Վահե Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը կատարելու վերաբերյալ մեղադրանքի կողմի հետևությունները, գործով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել Վահե Սարգսյանի կողմից խոշոր չափերով թմրամիջոց իրացնելու մեղադրանքը հաստատված համարելու վերաբերյալ:

Վերը նշված փաստական փյույթների և իրավական դիրքորոշումների հիման վրա դադարանը հաստատված է համարում միայն Վահե Սարգսյանի կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու և պահելու հանգամանքը՝ առանց իրացնելու նպատակի, ուստի նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից ենթակա է վերատրակման ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

(...)

Անդրադառնալով քրեական պարասխանաբովությանը և պարծին, դադարանը գրնում է, որ վերոհիշյալ հանցանքի կատարման համար ամբաստանյալ Վահե Սարգսյանը ենթակա է քրեական պարասխանաբովության և պարծի, որը նա պետք է կրի:

(...)

Որպես ամբաստանյալ Վահե Սարգսյանի անձը բնութագող փյույթներ դադարանը հաշվի է առնում, որ նա ամուսնացած է, ունի բարձրագույն կրթություն: Ամբաստանյալի պարասխանաբովությունը և պարիծը մեղմացնող հանգամանք դադարանը հաշվի է առնում, որ նա ֆիզիկապես վարատող է՝ ունի աթերոսկլերոզ, արորին վերջույթների աթերոսկլերոտիկ ախարահարում ձախ զարային զարկերակի արենոզով (75-80 տոկոս), ինչպես նաև իշեմիայի արենոկարդիա, լեղաբարային հիվանդություն, ենթասարամոքսային գեղձի դիֆուզ փոփոխություններ, շագանակագեղձի գոյացություն-արենոմա 1.4սմ, հեպատոմեգալիա, բացի այդ, Վահե Սարգսյանի ինսուլինի տակ են գրնվում մինչև 14 տարեկան անչափահաս երեք երեխան, հաշմանդամ եղբայրը, հիվանդ հայրը և թոշակատու մայրը: Ամբաստանյալի պարասխանաբովությունը և պարիծը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Հաշվի առնելով ամբաստանյալի կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, դրա կատարման եղանակը, հանցավոր մրադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսերած վարքագիծը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը և այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դադարանը գրնում է, որ ամբաստանյալ Վահե Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի

3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար ենթակա է պարժի ազատագրվելու ձևով»³:

9. Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ամբաստանյալ Վ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով արձանագրելով հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը, պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում վերլուծելով և գնահատելով դատաքննության ընթացքում հերագործված գործով ձեռք բերված ապացույցներն իրենց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, գրնում է, որ սույն գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալ Վ.Սարգսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղաագրված արարքում վերջինի մեղավորությունը հիմնավորված համարելու և Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալին մեղաագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով վերատրակելու մասին հերևությունները ոչ իրավաչափ ճանաչելու համար:

(...)

05.04.2019թ. խուգարկություն կատարելու մասին արձանագրության համաձայն՝ խուգարկություն է կատարվել Վահե Սարգսյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի 01 AA 107 հաշվառման համարանիշի ավրումեքենայում: Խուգարկության ընթացքում մեքենայի հերևի արահի աջ նստարևից հայրնաբերվել է «CAL» գրառմամբ էլեկտրական կշեռք՝ ապիրակալուն փոշենման զանգվածի հերքերով:

Մեքենայի առջևի արահի աջ նստարևից հայրնաբերվել է 1,1 և 0,59 գրամ քաշերով ապիրակ կրորներ, ապիրակ փոշենման զանգված: Դատարքիմիական փորձագերի՝ 05.04.2019թ.-ին արագված թիվ 185Բ-19 եգրակացության համաձայն՝ Վահե Սարգսյանի կողմից շահագործվող ավրումեքենայից հայրնաբերված և փորձաքննության ներկայացված 1-ին զիպում սուկա՝ 0,91 և 2-րդ զիպում սուկա 0,4 գրամ քաշերով բյորեղային զանգվածները (ընդհանուր 1,32 գրամ քաշով) հանդիսացել են «մեթամեքերամին» րեսակի թմրամիջոց:

Փորձաքննության ներկայացված էլեկտրական կշեռքի վրա սուկա են «մեթամեքերամին» և «կոկաին» րեսակի թմրամիջոցի հերքեր:

Տրքիկորքիմիական փորձագերի՝ 17.06.2019թ.-ին արագված թիվ 199 եգրակացության համաձայն՝ Վահե Սարգսյանից վերցված մագի փորձանմուշում հայրնաբերվել են կանաքիտիդների խմբին պարկանող թմրակալորներ, որոնց օգրագործման ժամանակահարվածը համապարասիսնում է մինչև 2

³ Տն քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 98-119:

ամսվա վաղեմության: Մագի փորձանմուշում հայրնաբերվել են նաև կոկաին րեասակի թմրամիջոցի հետքեր:

(...)

Սույն գործի նյութերում առկա է նաև որպես այլ փաստաթուղթ սպացույց ճանաչված ՀՀ ԱԱԾ Երևանի քաղաքային վարչության 4-րդ բաժնի պետ Հ.Վիրաբյանի կողմից 01.04.2019թ. կազմված զեկուցագիրը, համաձայն որի՝ Վահե Գագիկի Սարգսյանը զբաղվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Վ.Սարգսյանի կողմից շահագործվող մեքենայից առանձնապես խոշոր չափի (ընդհանուր 1,32 գրամ քաշով)՝ «մեթամֆետրամին» րեասակի թմրամիջոց հայրնաբերելը, «մեթամֆետրամին» և «կոկաին» րեասակի թմրամիջոցի հետքեր պարունակող կշեռքի առկայությունը, Վ.Սարգսյանից վերցված մագի նմուշի փորձաքննության արդյունքում դրանում «մեթամֆետրամին» րեասակի թմրամիջոց չհայրնաբերելը, ինչպես նաև վկա Հ.Ազոյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, վերջինի և Վահե Սարգսյանի առերես հարցաքննության արձանագրությունը, ՀՀ ԱԱԾ Երևանի քաղաքային վարչությունից սրացված՝ Վահե Գագիկի Սարգսյանի նկարմամբ նրա կողմից օգրագործված 091-20-90-95 քջջային հեռախոսահամարի «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում իրականացված գաղտնալսումների արդյունքները պարունակող լազերային սկավառակի գնության արձանագրությունը, համաձայն որի Վ.Սարգսյանը թմրանյութերի ապօրինի իրացման շուրջ բազմաթիվ խոսակցություններ է ունեցել րարքեր անձանց հետ, իրենց համակցության մեջ բավարար են գալու այն ողջամիտ եզրահանգման, որ հասարակված և սպացուցված է Վ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը, այն է՝ Վահե Սարգսյանը գործով չչարզված հանգամանքներում ինքնությունը չչարզված անձից իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և «Մերսեդես S» մակնիշի, 01AA107 հաշվառման համարանիշի ավրումեքենայում ապօրինի պահել է առանձնապես խոշոր չափերով՝ 1.31 գրամ հասարարուն քաշով «մեթամֆետրամին» րեասակի թմրամիջոց:

(...)

Անդրադատնալով Վ.Սարգսյանի կողմից շահագործվող մեքենայի խուզարկության իրավաչափության մասին պաշտպաններ Վ.Սարգսյանի և Գ.Թավադյանի կողմից բերված վերաքննիչ բողոքում արված պարճատարանություններին առ այն, որ թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում չի պարզվել, թե Վահե Սարգսյանին բերման ենթարկելուց միջև խուզարկության կարարումը շուրջ 12 ժամ որբել է պահվել խուզարկման ենթակա «Մերսեդես» մակնիշի ավրումեքենան, երբ է այն կնիքվել, միջև կնիքվելն ինչ է արվել, ով կամ ովքեր են մուրք ունեցել այնրեղ, ինչ են րեղադրել այդ ավրումեքենայում (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է հերկյալը:

Ամբաստանյալ Վ.Սարգսյանի կողմից շահագործվող «Մերսեդես S» մակնիշի OIAA107 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի խուզարկության արձանագրության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ավտոմեքենան գտնվել է «Ռիզար» հյուրանոցային համալիրի ստորգետնյա ավտոկայանատեղիի ավտոբեկուղիի մեկում, ավտոմեքենայի բոլոր դուռերը, շարժիչի ծածկույթը, բեռնատեղիքը կնիքված են եղել ՀՀ ԱԱԾ N-27 կնիքով, դուռերը գտնվել են փակ վիճակում: Հարկ է փաստել, որ խուզարկության իրականացման հետ կապված ամբաստանյալ Վ.Սարգսյանի, ինչպես նաև խուզարկությանը մասնակից այլ անձանց, այդ թվում ընթերակաների կողմից որևէ դիտարկություններ կամ առարկություններ չեն կատարվել: Վ.Սարգսյանը հայտնել է, որ իր իրերից ոչինչ չէր պակասել:

(...)

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Վահե Սարգսյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս գնահատման է ենթարկում նրա կողմից կատարված հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ Վահե Սարգսյանի կատարած հանցանքը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, այդ թվում՝ նրա գործողությունների բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, այն, որ ամբաստանյալն ունի բարձրագույն կրթություն, պարասպանարվությունը և պարտիժը մեղմացնող հանգամանքները՝ ամբաստանյալը ֆիզիկապես վատառողջ է, երկրորդ խմբի հաշմանդամ, ունի աթերոսկլերոզ, սրտին վերջույթների աթերոսկլերոտիկ ախտահարում՝ ձախ զարպյին զարկերակի սրեկոզով (75-80 տոկոս), ինչպես նաև իշեմիայի սրենոկարդիա, լեղաքարային հիվանդություն, ենթասարանքային գեղձի դիֆուզ փոփոխություններ, շագանակագեղձի գոյացություն-ադենոմա 1.4սմ, հեպատոմեգալիա, բացի այդ, Վահե Սարգսյանի ինամքի տակ են գտնվում մինչև 14 տարեկան անչափահաս երեք երեխան (ամբաստանյալ Վահե Սարգսյանի կինը՝ Անուշ Արթուրի Մխիթարյանը 2022 թվականի մարտի 10-ին մահացել է, հինք՝ ՔԿԱԳ գործակալության պետի կողմից տրված Մահվան մասին պետական վկայականը), հաշմանդամ եղբայրը, հիվանդ հայրը և թոշակառու մայրը, պարասպանարվությունն ու պարտիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, և գալիս է եզրահանգման, որ նրա նկատմամբ պետք է նշանակվի պատիժ ազատազրկման ձևով հոդվածի սանկցիայի նվազագույնի չափով՝ 7 (յոթ) տարի ժամկետով (...)⁴:

10. 2023 թվականի փետրվարի 22-ին Վճռաբեկ դատարան է ստացվել ամբաստանյալ Վ.Սարգսյանի և նրա պաշտպան Գ.Թավադյանի՝ ի լրումն վճռաբեկ բողոքի ներկայացված դիմումը, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը ներկայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում Վ.Սարգսյանի և նրա հաշմանդամ դստեր մոտ բժշկական հետազոտությունների արդյունքում ի

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 135-168:

հայտ են եկել ախտորոշված նոր հիվանդություններ, և առկա է անհապաղ վիրահատական միջամտության կարիք:

Մասնավորապես, Վ.Սարգսյանի մոտ բժշկական հետազոտությունների արդյունքում, բացի 2-րդ կարգի հաշմանդամության համար հիմք հանդիսացած հիվանդություններից, ի հայտ են եկել ախտորոշված նոր հիվանդություններ՝

ա) գլխի բարորակ ուռուցք՝ չափերը 2.1 0.6.2.3-ի, «Լիպոմա»,

բ) ներալոգիա-ներապատալոգիական խնդիրներ,

գ) ողնաշարի միջոդային ճողվածք,

դ) որովայնի հատված՝ հետվիրահատական ընդլայնվող ճողվածք (գրիժա),

ե) լեղապարկ-պատերի հաստացում, քարեր,

զ) շականագեղձ-ընդլայնվող աղեւտմա,

է) ԼՈՌ-շնչառական խնդիր՝ միջնապատի ծռության հետևանք:

Վ.Սարգսյանի հաշմանդամ երեխայի մոտ ախտորոշվել են հետևյալ նոր հիվանդությունները.

ա) լեղապարկի դիսգիներզիա,

բ) վահանաձև գեղձի վրա հայտաբերվել է կոլոդ, կիստա՝ պերիտոնոպարադուալ արտահայտված անոթավորմամբ⁵:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք Վ.Սարգսյանի արարքում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմեդ (հոգեներգործուն) նյութեր սպորինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք սպորինի իրացնելը*

(...)

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կարարվել են՝

(...)

2) *առանձնապես խոշոր չափերով՝*

պարժվում են ազատագրվմանը յոթից տասնհինգ տարի ժամկետով գույքի բռնագրավմանը կամ առանց դրա»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ գործող քրեական օրենսգրք) 393-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմեդ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստում կամ դրանց համարժեք նյութ (անսալոգ) կամ դրանց ածանցյալ*

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 90-104:

սպորինի արրարդեյր, պարրասարեյր, վերամշակեյր, ձեռք բերեյր, պահեյր, րեղափոխեյր, առարեյր, րարածեյր, գովազդեյր կամ դրանք սպորինի իրացնեյր կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմեյր (հոգեներգործուն) նյութ, դրանց պարրասարուկ կամ դրանց համարժեք նյութ (անսալոգ) կամ դրանց ածանցյալ սպորինի ձեռք բերեյր՝

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նահասարեալած արարքը, որը կարարվել է՝

(...)

2) առանձնասպես խոշոր չափերով՝

պարժվում է ազարազրկմամբ՝ վեցից րասներկու րարի ժամկեյրով»:

12.1. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեալած հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Մարրիկ Բոլյանի գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Իրացման նպարակի րակ պեյր է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութերի րարածման ցանկացած եղանակ, պր թվում նաս նախնական պարվերով: Իրացման նպարակի մասին կարող են վկայել ինչպես ձեռք բերողի (պրացողի, սպտողի) հեյր համապարասիան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները. թմրամիջոցներ ձեռք բերեյր և պահեյր դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնարիքյան դրանք իրացնելու անվիճելի սպացույց չէ. դս պեյր է գնահարել միայն իրացման նպարակի մասին վկայող այլ րվյալների հեյր համակցության մեջ»⁶:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է՝

– Վ.Մարգյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջարվել այն բանի համար, որ նս, գործով չպարզված հանգամանքներում, ինքնությունը չպարզված անձից, իրացնելու նպատակով, սպորինի ձեռք է բերել և «Մերսեդես S» մակնիշի 01AA107 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում սպորինի պահել է առանձնասպես խոշոր չափերով՝ 1.31 գրամ հաստատուն քաշով «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց⁷,

– Առաջին առյանի դատարանն արձանագրել է, որ Վ.Մարգյանի մեղավորությունը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջարված մեղադրանքում «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշին համապատասխան սպացուցված չէ, արդյունքում նրա արարքը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի

⁶ Տեն Վճռաբեկ դատարանի՝ Մարրիկ Բոլյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-135/07 որոշումը:

⁷ Տեն սույն որոշման 7-րդ կետը:

3-րդ մասի 2-րդ կետից վերադարձվել է նույն օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով⁸,

- Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Վ.Սարգսյանին մեղավոր ճանաչելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, փաստել է, որ գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են՝ վերոնշյալ արարքում ամբաստանյալ Վ.Սարգսյանի մեղավորությունը հաստատված համարելու համար⁹:

14. Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Վ.Սարգսյանի մեղավորությունը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում հաստատված համարելով, եկել է իրավաչափ եզրահանգման: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վ.Սարգսյանի մեղքը հիմնավորվում և այդ մասով պաշտպանի վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները հերքվում են գործում առկա ապացույցների բավարար համակցությամբ, մասնավորապես՝ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում իրականացված գաղտնալսումների արդյունքները պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությամբ, համաձայն որի՝ Վ.Սարգսյանը թմրամիջոցների ապօրինի իրացման շուրջ բազմաթիվ խոսակցություններ է ունեցել տարբեր անձանց հետ, վկա Հ.Ազոյանի նախաքննական ցուցմունքներով, որոնք վերջինս պնդել է նաև ամբաստանյալ Վ.Սարգսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ, Վ.Սարգսյանի կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի 01 AA 107 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ ավտոմեքենայից առանձին փաթեթներով հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի (ընդհանուր՝ 1,32 գրամ քաշով) «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, «մեթամֆետամին» և «կոկաին» տեսակի թմրամիջոցի հետքեր պարունակող կշեռք, դատաքիմիական փորձաքննության՝ 2019 թվականի ապրիլի 5-ի թիվ 185Բ-19 եզրակացությամբ, տոքսիկոլոգիական փորձաքննության՝ 2019 թվականի հունիսի 17-ի թիվ 199 եզրակացությամբ, որի համաձայն՝ Վ.Սարգսյանից վերցված մազի նմուշի փորձաքննության արդյունքում «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց չի հայտնաբերվել, ինչպես նաև որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երևանի քաղաքային վարչության 4-րդ բաժնի պետ Հ.Վիրաբյանի՝ 2019 թվականի ապրիլի 1-ի զեկուցագրով, համաձայն որի՝ Վ.Սարգսյանը զբաղվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Սարգսյանի արարքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

հողվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են:

15.1. Միևնույն ժամանակ, անդրադառնալով ամբաստանյալ Վ.Սարգսյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 393-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ կետին համապատասխանեցնելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխան հողվածի սանկցիայում ազատագրկման ձևով պատժի նվազագույն և առավելագույն ժամկետները միաժամանակ նվազեցվել են, այն է՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված՝ **յոթից տասնհինգ** տարի ժամկետով ազատագրկման փոխարեն ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսվել է ազատագրկում՝ **վեցից տասներկու** տարի ժամկետով, հետևաբար ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն վերոնշյալ փոփոխությունը հետադարձ ուժ ունի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Վ.Սարգսյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը պետք է որակել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 393-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման տեսանկյունից հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

17. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հողվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող գոյակները, պարասխանատվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

18. Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ *դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պարիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի գոյակների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պարիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պարիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ՀՀ քրեական օրենսգրքն ինչպես*

հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վրանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պարճատված վնասի չափը, պարասխանաարվությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն¹⁰:

18.1. Անդրադառնալով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու կարևորությանը՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ *պարասխանաարվության և պարժի անհարակաճացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հանրային վրանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցությունը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, սեռը, դատվածությունը և այլն): Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստել է հանցավորի ընտանեկան դրությունը, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պարժի ազդեցությունը, նրա խնամքին այլ անձանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղն ու դիրքը, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագիրը և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը¹¹:*

19. Սույն գործով Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս գնահատման է ենթարկել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես, այն, որ ամբաստանյալն ունի բարձրագույն կրթություն, ֆիզիկապես վատառողջ է, նրա խնամքի տակ են գտնվում մինչև 14 տարեկան երեք երեխաները (ամբաստանյալի կինը՝ Անուշ Մխիթարյանը, 2022 թվականի մարտի 10-ին մահացել է), հաշմանդամ եղբայրը,

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՄԴԳ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԳ/0093/01/12, Վանյա Բեգյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13, Արամյայի Հովհաննեսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0014/01/14, Միկո Հովհաննեսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0039/01/15 որոշումները:

¹¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հազարապետ Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11, Սերոբ Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԳ/0109/01/12, Մելյոս Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12, Ջոն Շիրվանյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0091/01/14 որոշումները:

հիվանդ հայրը և թոշակառու մայրը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակվի պատիժ ազատազրկման ձևով՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ ընդգծելով, որ այն բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից¹²:

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 17-18.1-րդ կետերում մեջբերված իրավանորմի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում եկել է սխալ եզրահանգման: Մասնավորապես, ստորադաս դատարանը բավարար վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի ընտանեկան դրությունը, խնամքին այլ անձանց առկայությունը և նշանակված պատժի հնարավոր ազդեցությունը նրա ընտանիքի կյանքի պայմանների վրա, ինչպես նաև ամբաստանյալի առողջական վիճակը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել այն, որ Վ.Սարգսյանի կինը 2022 թվականի մարտի 10-ին դժբախտ պատահարի արդյունքում մահացել է, և մինչև 14 տարեկան երեք երեխաները մնացել են ամբաստանյալի խնամքին, ընդ որում, երեխաներից մեկը մանկուց հաշմանդամ է, որի մոտ, ըստ ամբաստանյալ Վ.Սարգսյանի և նրա պաշտպան Գ.Թավադյանի՝ 2023 թվականի փետրվարի 22-ին Վճռաբեկ դատարան ներկայացրած դիմումի, ախտորոշվել է նաև լեղապարկի դիսգինեզիա, իսկ վահանաձև գեղձի վրա հայտաբերվել է կոռոզ կիստա՝ պերիտոդոլյար արտահայտված անոթավորմամբ¹³: Բացի այդ, ամբաստանյալի խնամքի տակ են գտնվում նաև նրա հաշմանդամ եղբայրը, հիվանդ հայրը և թոշակառու մայրը:

Ամբաստանյալ Վ.Սարգսյանը նույնպես ֆիզիկապես վատառողջ է, մասնավորապես՝ երկրորդ խմբի հաշմանդամ է, ունի աթերոսկլերոզ, ստորին վերջույթների աթերոսկլերոտիկ ախտահարում ձախ զստային զարկերակի ստենոզով (75-80 տոկոս), ինչպես նաև իշեմիայի ստենոկարդիա, լեղաքարային հիվանդություն, ենթաստամոքսային գեղձի դիֆուզ փոփոխություններ, շագանակագեղձի գոյացություն-ադենոմա՝ 1.4 սմ, հեպատոմեգալիա: Մինևույն ժամանակ, ըստ ամբաստանյալ Վ.Սարգսյանի և նրա պաշտպան Գ.Թավադյանի՝ 2023 թվականի փետրվարի 22-ին Վճռաբեկ դատարան ներկայացրած դիմումի, ամբաստանյալի մոտ ախտորոշվել են նաև՝ գլխի բարորակ ուռուցք, ներալոգիա-ներապատալոգիական խնդիրներ, ողնաշարի միջոդային ճողվածք, հետվիրահատական ընդլայնվող ճողվածք (գրիժա),

¹² Տե՛ս, սույն որոշման 9-րդ կետը:

¹³ Տե՛ս, սույն որոշման 10-րդ կետը:

լեղապարկի պատերի հաստացում, քարեր, շականագեղձի ընդլայնվող աղենումա, շնչառական խնդիրներ¹⁴:

Վերոնշյալ փաստական տվյալները վկայում են, որ ազատագրկման ձևով պատժի փաստացի կրումն անխուսափելիորեն ծանր հետևանքներ կառաջացնի ամբաստանյալի և նրա ընտանիքի համար:

21. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա՝ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, վերջինիս անձը բնութագրող տվյալները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, էականորեն նվազեցնում են կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և հիմք տալիս եզրահանգելու, որ ազատագրկման ձևով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու հնարավոր է հասնել պատժի նպատակների իրացմանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման տեսանկյունից ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

22. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով պետք է պատիժ նշանակել ազատագրկում՝ վեց տարի ժամկետով:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված 6 (վեց) տարի ժամկետով ազատագրկմանը պետք է հաշվակցել Վ.Սարգսյանի նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ 10 (տասը) ամիս 9 (ինը) օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատագրկում՝ 5 (հինգ) տարի 1 (մեկ) ամիս 21 (քսանմեկ) օր ժամկետով:

Մինևույն ժամանակ, Վ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, պետք է պայմանականորեն չկիրառել¹⁵ և, սույն որոշման 18-18.1-րդ կետերում կատարված վերլուծության հաշվառմամբ, սահմանել փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

Վերաքննիչ դատարանի դատական ակտը մնացած մասով պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ,

¹⁴ Տե՛ս, սույն որոշման 10-րդ կետը:

¹⁵ Անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վահե Գագիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մայիսի 31-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել:

2. Վահե Գագիկի Սարգսյանի նկատմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկմանը հաշվակցել Վահե Գագիկի Սարգսյանի նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ 10 (տասը) ամիս 9 (ինը) օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 1 (մեկ) ամիս 21 (քսանմեկ) օր ժամկետով:

3. Վահե Գագիկի Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման վրա:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մայիսի 31-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

66.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՏԳ/0117/01/11

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահուությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դատապարտյալներ՝*

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Գ.ՄԴԴԵՍՅԱՆԻ
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Մ.ՄԻԻԹԱՐՅԱՆԻ
Հ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

1 սեպտեմբերի 2023 թվական

ք.Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով տուժող Արտակ Նազարյանի իրավահաջորդներ Հասմիկ Հովհաննիսյանի և Ծովինար Նազարյանի՝ բացառիկ վերանայման բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի մայիսի 7-ի դատավճռով, Հակոբ Խորենի Մանուկյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 360-րդ հոդվածի 2-րդ մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով, 375-րդ հոդվածի 1-ին մասով, 375-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոններով՝

նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, դատապարտվել է ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով:

Վահագն Վլադիմիրի Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-375-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Ադիբեկ Հրայայի Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Մխիթար Մանվելի Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Հարություն Կիրակոսի Կիրակոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: Կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի՝ «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նա ազատվել է պատժից:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Մանուկյանի պաշտպաններ Հ.Գևորգյանի և Ա.Ղասաբողյանի, ամբաստանյալ Վ.Հայրապետյանի պաշտպան Լ.Պողոսյանի, տուժողի իրավահաջորդ Ծ.Նազարյանի ու վերջինիս ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մայիսի 7-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Մանուկյանի պաշտպաններ Հ.Գևորգյանի, Ա.Ղասաբողյանի, տուժողի իրավահաջորդ Ծ.Նազարյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2022 թվականի նոյեմբերի 8-ին *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրել է վճիռ, որով արձանագրվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 2-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական պահանջների խախտումներ:

5. 2023 թվականի մայիսի 8-ին տուժողի իրավահաջորդներ Հ.Հովհաննիսյանը և Ծ.Նազարյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 16-ի որոշմամբ հարուցվել է Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման բացառիկ վերանայման վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման բանավոր ընթացակարգ:

Վճարելի բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

6. Բողոքաբերները փաստել են, որ *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը նոր հանգամանք է՝ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը վերանայելու համար:

Բողոքաբերները նշել են, որ Եվրոպական դատարանն արձանագրել է տուժող Արտակ Նազարյանի՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտումներ, որոնք էլ նոր հանգամանք են Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշումը բեկանելու և վարույթը համապատասխան ստորադաս դատարան փոխանցելու համար:

6.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Հակոբ Մանուկյանի, Վահագն Հայրապետյանի, Ադիբեկ Հովհաննիսյանի, Մխիթար Մխիթարյանի, Հարություն Կիրակոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը և գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան կամ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Հակոբ Խորենի Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*ԼՍԻ ծառայելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի 1-ին հրաձգային գումարսկում որպես գումարսկի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, կոչումով կապիտան, զորամասի հրամանատարի 15.07.2010թ. թիվ 0218 հրամանի համաձայն նշանակված լինելով զորամասի պաշտպանական շրջանում տեղակալված «Լոյս», «Հաճն» և թիվ 12 «Ղոզլու» կոչվող մարտական հենակետերում որպես նշված հենակետերի պարասիանատու, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է ենթակա անձնակազմի շրջանում անատարկելի հեղինակություն ձեռք բերելու, իր անձի թվացյալ կարևորությունն ու գերակայությունը ցուցադրելու, շեշտելու նպատակով, չարաշահելով իշխանությունը և անցնելով պաշտոնական լիազորությունների սահմանը բռնություն է գործադրել իր նկատմամբ սպորտդրոյալ, նույն գումարսկի 2-րդ հրաձգային վաշտի 1-ին դասակի հրամանատար, թիվ 12 «Ղոզլու» կոչվող մարտական հենակետի սպագ, լեյտենանտ Արտակ Մինարի Նազարյանի նկատմամբ, որը կատարվել է ենթակա անձնակազմի ներկայությամբ զուգորդված զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ վերջինիս պարվի և արժանապարտության անպարկեշտ ձևով պարբերական բնույթ կրող սպորտցմամբ:*

Այսպես, 2010թ. հուլիսի 18-ին «Ղոզլու» կոչվող մարտական հենակետ բերված դիզ. վառելիքը սրանալիս լեյտենանտ Արտակ Նազարյանը հենակետում դրա համար նախատեսված համապարասիան տարայի բացակայության պատճառով

դրա մի մասը լցրել է կապիտան Հակոբ Մանուկյանի կողմից հենակետ բերված հյուրի պոլիէթիլենային շի մեջ, որով սովորաբար վերջինս ջուր է խմել: Հակոբ Մանուկյանը տեղեկանալով այդ մասին հենակետի գինձառայողների ներկայությամբ սեռական բնույթի հայտնաբերում էր վրել Արարակ Նազարյանի հասցեին և պարտադրել, որ մինչև հաջորդ օրը լեյտենանտ Արարակ Նազարյանն իրեն վերադարձնի նույնաման շի սպառնալով, որ չվերադարձնելու դեպքում գինձառայողների շրջանում կհեղինակագրվի, սակայն մերժել է շիջը բերելու նպատակով հենակետից բացակայելու վերաբերյալ վերջինիս խնդրանքը:

Իրեն ենթակա անձնակազմի շրջանում հեղինակագրվելու մերավախությունից դրդված, հայրնվելով անեյանելի դրության մեջ լեյտենանտ Արարակ Նազարյանը 19.07.2010թ. ժամը 17:00-ից 18:00-ի սահմաններում, առանց համապատասխան թույլտվության, գնացել է Տավուշի մարզի Չինարի գյուղ որպեսզի գնելով պահանջված շիջը, ժամը 20:00-ից 21:00-ի սահմաններում վերադարձել է հենակետ:

Տեղեկանալով, որ լեյտենանտ Արարակ Նազարյանն առանց թույլտվության բացակայել է հենակետից Հակոբ Մանուկյանը նույն օրը ժամը 23:00-ի սահմաններում սեռական բնույթի հայտնաբերում էր վրել Արարակ Նազարյանի հասցեին և ձեռի ենթարկել նրան բռնուցքներով հարվածներ հասցրել վերջինիս գլխին, մարմնի վարքեր մասերին:

Հակոբ Մանուկյանի կողմից դրսևորած վարքագծից ելնելով լեյտենանտ Արարակ Նազարյանը սեռական բնույթի հայտնաբերում էր վրել նրա հասցեին, ինչի կապակցությամբ Հակոբ Մանուկյանը խախտելով ՀՀ անվտանգության սպառնալուսն ուղղված մարտական հերթապահություն կրելու ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 0250, 0135 հրամաններով հաստատված «ՀՀ Պետական սահմանի մարտական դիրքերում մարտական հերթապահության կազմակերպման և անցկացման կանոնադրության» պահանջները, մարտական հերթապահության հետ չկապված իր անձնական կարիքների համար, առանց վերադաս հրամանատարությանը գեկուցելու և համապատասխան թույլտվություն ստանալու, հենակետի անձնակազմից Արման Մասցականյանին և Գարեգին Մայրաթյանին ուղարկել է «Լույս» կոչվող մարտական հենակետի «Ղոզրու» կոչվող մարտական հենակետ կանչելու «Լույս» մարտական հենակետի ավագ, լեյտենանտ Վահագն Հայրապետյանին և նրա ներկայությամբ իր հասցեին տված հայտնաբերի համար պարզաբանում պահանջել լեյտենանտ Արարակ Նազարյանից:

Հակոբ Մանուկյանի գործողությունների արդյունքում նվազել է նշված երկու մարտական հենակետերի մարտական պարտապահությունը, ՀՀ Պետական սահմանի պահպանությունն իրականացվել է ոչ լիարժեք, այսինքն Հայաստանի Հանրապետության վրա անասկնյալ հարձակումը ժամանակին հայրնաբերելու և դրան դիմակայելու իրական սպառնալիք է պրեդիկել:

Սրանալով պարզաբանումների Հակոբ Մանուկյանը նույն օրը ժամը 24:00-ի սահմաններում Վահագն Հայրապետյանի հետ «Ղոզրու» կոչվող մարտական հենակետի գինձառայողների ներկայությամբ այդ հենակետում որպես ճաշարան օգտագործվող հարվածում կրկին ձեռի է ենթարկել Արարակ Նազարյանին:

սեռական բնույթի հայիոյանքներ տալով նրա հասցեին, բռնուցքներով, ուրբերով, ծնկով հարվածներ հասցնելով վերջինիս դեմքին և մարմնի տարբեր մասերին:

Հետագա օրերի ընթացքում նույնպես Հակոբ Մանուկյանը մշտապես Արտակ Նազարյանի հետ խոսել է արհամարհական տոնով, նրա հասցեին արել անպարկեշտ արդարահայրություններ, պարբերաբար ծաղրել ենթակա անձնակազմի ներկայությամբ անպարկեշտ ձևով ստորացնելով վերջինիս պատիվն ու արժանապատվությունը:

2010թ. հուլիսի 22-ից 25-ն ընկած ժամանակահատվածում «Դոզլու» մարտական հենակերի տարածքում վիճարանություն և ծեծկոտուք է տեղի ունեցել լեյտենանտ Արտակ Նազարյանի և շարքային Միխիթար Միխիթարյանի միջև, որի ընթացքում վերջինս բարձրաձայն սեռական բնույթի հայիոյանքներ է արել Արտակ Նազարյանի հասցեին, հարվածներ հասցրել վերջինիս: Վիճարանության ձայներ լսելով Հակոբ Մանուկյանը դուրս է եկել հենակերի գեղնասրահից, տեսել շարքային Միխիթար Միխիթարյանին և լեյտենանտ Արտակ Նազարյանին միմյանց քաջքելիս և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ իր անձի կարևորությունն ու ենթակա անձնակազմի նկատմամբ իր գերակայությունն ի ցույց դնելու նպատակով, ցուցաբերելով իշխանության անգործություն, որպես գումարտակի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ, իր անմիջական պարտականությունները կատարելու փոխարեն, խախտելով ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 135-136-րդ հոդվածների, ՀՀ Պաշտպանության նախարարի թիվ 0250, 0141 հրամանների և ՀՀ ՊՏ դաստիարակչական աշխատանքների վարչության պետի 10.06.2004թ. թիվ «5» կարգադրության պահանջները բավարարվել է ընդամենը նրանով, որ դիմելով լեյտենանտ Արտակ Նազարյանին ասել է. «Նազարյան, պե՛րք ա խառնվե՛ս» և, սրանստով վերջինիս բացասական պատասխանը, առանց որևէ միջոց ձեռնարկելու, հեռացել է դրանից հեռո նույնպես որևէ քայլ այդ ուղղությամբ չանելով:

Բացի այդ քաջարեղյակ լինելով լեյտենանտ Արտակ Նազարյանի մարմնի վրա սոկա արյունազեղումների, նրա ծայրահեղ ճնշված հոգեվիճակի մասին, ինչպես նաև տեղեկացված լինելով, որ լեյտենանտ Արտակ Նազարյանը ծառայողական հարցերի հետ կապված խնդիրներ ունի ենթակա անձնակազմից մի շարք ժամկետային զինծառայողների հետ և գիրակցելով, որ սրեղծված իրավիճակում նա կարող է ինքն իրեն վնաս հասցնել անտեսելով վերը թվարկված կանոնագրքի, հրամանների և կարգադրության ուղղակի պահանջներով որպես գումարտակի հրամանատարի ԱՀՏՍ գծով տեղակալ իր վրա դրված պարտականությունները, ցուցաբերել է իշխանության անգործությունն ոչինչ չի ձեռնարկել սրեղծված իրավիճակը շրկելու, ենթակա զինծառայողներին կարգի հրավիրելու և հնարավոր ու կանխարեսելի բացասական հետևանքները կանխելու ուղղությամբ:

Հակոբ Մանուկյանի կողմից տվյալ պարագայում դրսևորած անգործությունն առաջացրել է էական վնաս, այն է՝ խաթարվել է հենակերում մարտական ծառայության կրման բնականոն ընթացքը, մարտական հենակերում ծառայություն իրականացնող զինծառայողների շրջանում վարկաբեկվել և հեղինակագրկվել է հենակերի ավագ, լեյտենանտ Արտակ Նազարյանը, մարտական հենակերում

րիրել է անատոջ բարոյահոգեբանական մթնոյոր, զինատայողների միջանձնային հարաբերոյուններ:

2010թ. հոյիսի 26-ին ժամը 23:30-ի սահմաններում հենակերի ծխարանում 2-րդ վաշրի հրամանատար, ալագ լեյրենանար Գագիլ Որումյանի հասցեին Արուակ Նագարյանի կողմից հայոյանք րալու կապակցոյամբ ժալալաժ պարզարանան ընթացքում կապիրան Հակոբ Մանուկյանը դարձյալ սեռական բնոյթի հայոյանքներ է րալել լեյրենանար Արուակ Նագարյանի հասցեին, ապրակել վերջինիս դրանոլ իսկ սրորացնելոլ նրա պարիլն ու արժանապարլոյունը:

Հակոբ Խորենի Մանուկյանի կողմից վերը նկարագրալաժ գործողոյուններն առաջացրել են ժանր հերևանք, այն է՝ լեյրենանար Արուակ Նագարյանը, չկարողանալոլ կանիել վերջինիս կողմից իր նկարմանք դրսևրալաժ գործողոյունները, ինչպես նաս չհանրորժելոլ իր անձի նկարմանք համաժատայող սպայի կողմից դրսևրալաժ վարքագիծը բնոյունը, պարլի և արժանապարլոյունի սրորացումը, 27.07.2010թ. ժամը 07:50-ի սահմաններում թիլ 12, «Ղոզլու» կոչվող մարրական հենակերի դիպուկահարի կրակակերի մոր իրեն անրակցալաժ «ԱԿ-74» րեսակի 1093977 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել իր բերանի իոոոչի շրջանում և սրացաժ հրագենային վնասալաժքից րեղում մահացել (...):»¹

7.1. Վահագն Վլադիմիրի Հայրապետյանին մեղադրանք է առաջադրալել այն բանի համար, որ «[Ն]ա ժատայելոլ ՀՀ ՊՆ թիլ 21127 գորանասի 1-ին հրաձգային գումարակում որպես 2-րդ վաշրի 2-րդ դասակի հրամանատար, կոչումոլ լեյրենանար, 2010թ. հոյիսի 16-ից ժատայոյուն նշանակալաժ լինելոլ ՀՀ ՊՆ թիլ 21127 գորանասի կողմից սպասարկվող «Ղոյ» կոչվող մարրական հենակերում որպես հենակերի ալագ, նոյն թալականի հոյիսի 19-ին ժամը 23:30-ի սահմաններում, գումարակի հրամանատարի ԱՀՏԱ գծոլ րեղակալ, կապիրան Հակոբ Խորենի Մանուկյանի կանչոլ եկել է թիլ 12, «Ղոզլու» կոչվող մարրական հենակեր, որրեղ նոյն օրը ժամը 24:00-ի սահմաններում, կապիրան Հակոբ Խորենի Մանուկյանին օժանդակելոլ, վերջինիս հեր հենակերի անձնակազմի ներկայոյունը բնոյուն է գորժարել նոյն վաշրի 1-ին դասակի հրամանատար, «Ղոզլու 12» մարրական հենակերի ալագ, կոչումոլ լեյրենանար Արուակ Նագարյանի նկարմանք, բոունքներոլ անկանոն հարալաժներ հացրել վերջինիս դեմքին և մարմնի մյուս հարալաժներին, ինչն առաջացրել է ժանր հերևանք, այն է՝ իր անձի նկարմանք համաժատայակից սպաների կողմից դրսևրաժ անհարգակից վերաբերմնալի, ժաղրանքի և բնոյունի դրսևրումներից դրոլաժ լեյրենանար Արուակ Նագարյանը 27.07.2010թ. ժամը 07:50-ի սահմաններում թիլ 12, «Ղոզլու» կոչվող մարրական հենակերի դիպուկահարի կրակակերի մոր իրեն անրակցալաժ «ԱԿ-74» րեսակի 1093977 համարի ինքնաձիգից մեկ կրակոց

¹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 10, թերթեր 353-356:

է արձակել իր բերանի խոռոչի շրջանում և սրացած հրագենային վնասվածքից րեղում մահացել (...)²:

7.2. Ադիբեկ Հրաչյայի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «[Ն]ա ծառայելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի 1-ին հրաձգային գումարակազմի 2-րդ վաշտի 1-ին դասակում՝ որպես հրաձիգ-նոնակազմի օգնական, կոչումով շարքային, 2010թ. հուլիսի 16-ից զորամասի հրամանատարի թիվ 0218 հրամանի համաձայն մարտական հերթապահության ընդգրկված լինելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի կողմից սպասարկվող «Ղոզլու» կոչվող մարտական հենակետում այնպեղ իր համար արտոնյալ պայմաններ սպահովելու համար և իր նկարմամբ պետ հանդիսացող նույն հենակետի սվագ, 1-ին դասակի հրամանատար, լեյտենանտ Արտակ Նազարյանի կողմից իր ծառայողական պարտականությունները պարզաճ կատարելու հնարավորությունից զրկելու նպատակով, վերջինիս նկարմամբ պարբերաբար բռնություն է գործադրել, հայիոյանքներ րվել նրա հասցեին անպարկեշտ ձևով վիրավորելով նրա պարիմն ու արժանապարկությունը:

Այսպես, 2010թ. հուլիսի 22-ին ցերեկը հենակետի ճաշարանի դիմաց, երբ լեյտենանտ Արտակ Նազարյանը, կատարելով իր ծառայողական պարտականությունները, շարքային Ադիբեկ Հովհաննիսյանին անպարկեշտ արտահայտություն անելու կապակցությամբ դիտողություն է արել, վերջինս վիճաբանել է նրա հետ և հայիոյանքների զուգորդմամբ ծեծի ենթարկել նրան սյրյախտով ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն գործադրելով Արտակ Նազարյանի նկարմամբ: Նույն օրը երեկոյան հենակետին հարակից աղբյուրի մոտ լվացվելու ժամանակ Ադիբեկ Հովհաննիսյանը մոտեցել է Արտակ Նազարյանին և հայրնել, որ ինքը պիտի լվացվի: Այդ ժամանակ Արտակ Նազարյանը, կատարելով իր ծառայողական պարտականությունները, փորձել է կարգի հրավիրել նրան, իսկ վերջինս սեռական բնույթի հայիոյանքների զուգորդմամբ ծեծի է ենթարկել Արտակ Նազարյանին ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն գործադրելով վերջինիս նկարմամբ:

2010թ. հուլիսի 25-ին ժամը 22:00-ի սահմաններում հենակետի դիտակետում, նույն օրը ժամը 18:00-ին գերնատրակի դիմաց չնչին սոխթով րեղի ունեցած վիճաբանության կապակցությամբ, Ադիբեկ Հովհաննիսյանն իր գերակայությունն ի ցույց դնելու և լեյտենանտ Արտակ Նազարյանի որպես պետ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու և այդ հարցում նրա կամքը ճնշելու նպատակով դարձյալ ծեծի է ենթարկել վերջինիս ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն գործադրելով նրա նկարմամբ:

Շարքային Ադիբեկ Հովհաննիսյանի վերը թվարկված գործողությունները պարճատել են ծանր հետևանք 27.07.2010թ.-ին ժամը 07:50-ի սահմաններում լեյտենանտ Արտակ Նազարյանը, չիմանալով իր նկարմամբ գործադրված

² Տե՛ս քրեական գործի կոյթեր, հատոր 10, թերթ 357:

բռնություններին և ծաղրոծանասկին, իրեն ամրակցված «ԱԿ-74» րեասակի 1093977 համարի ինքնաձիգի փողաբերանը իր բերանի խոռոչում դնելով կրակ է արձակել, որից րեղում մահացել է: (...)»³:

7.3. Մխիթար Մանվելի Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն րանի համար, որ «[Մ]ա ծառայելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակում որպես 1-ին ջոկի ավագ հրաձիգ, կոչումով շարքային, 2010թ. հուլիսի 16-ից զորամասի հրամանատարի թիվ 0218 հրամանի համաձայն մարտական հերթապահության ընդգրկված լինելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի կողմից սպասարկվող «Գոզլու» կոչվող մարտական հենակետում, որպես դիրորդ, հենակետի ավագ, լեյտենանտ Արտակ Նազարյանի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հասարակորությունից զրկելով դրանով իսկ ինքնահասարակելու և իր համար հենակետում արտոնյալ պայմաններ սպահովելու նպատակով նույն թվականի հուլիսի 22-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ցերեկային ժամերին, երբ հենակետի ավագ, լեյտենանտ Արտակ Նազարյանը, մրնելով ճաշարան, ցանկացել է ճաշել, շարքային Մխիթար Մխիթարյանը թույլ չի տվել Արտակ Նազարյանին նստել սեղանի շուրջ և արհամարհանքով դիմելով վերջինիս ստել է. «Նազարյան, վրայիցդ հուր է գալիս, գնա լվացվիր»: Երբ Արտակ Նազարյանը, կատարելով իր ծառայողական պարտականությունները, դիրորդություն է արել Մխիթար Մխիթարյանին փորձելով կարգի հրավիրել նրան, վերջինս սեռական բնույթի հայտոյանքներ է տվել նրա հասցեին, սպա նաև գերնասրնակի դիմաց ծեծի ենթարկել նրան:

Նույն հերթափոխի ընթացքում 17.07.2010թ.-ից 27.07.2010թ. ընկած ժամանակահատվածում լեյտենանտ Արտակ Նազարյանի կողմից բջջային հեռախոսի մարտկոցի ինքնաշեն լիցքավորման սարքավորումն ուզելու կասակցությամբ, շարքային Մխիթար Մխիթարյանը կրկին սեռական բնույթի հայտոյանքներ է տվել Արտակ Նազարյանի հասցեին, ծեծի ենթարկել նրան ծառայողական պարտականությունները կատարելու կասակցությամբ բռնություն գործարդելով նրա նկարում:

Մխիթար Մանվելի Մխիթարյանի գործողություններն անգոռնությամբ առաջացրել են ծանր հետևանք, այն է՝ լեյտենանտ Արտակ Մինարի Նազարյանը, չկարողանալով կանխել իր նկարում դրսևորված գործողությունները, ինչպես նաև չհանդուրժելով իր անձի նկարում ենթակայի կողմից դրսևորած վարքագիծը՝ բռնությունը, պարտի և արժանապարտության արորացումը, 27.07.2010թ. ժամը 07:50-ի սահմաններում թիվ 12 «Գոզլու» կոչվող մարտական հենակետի դիպուկահարի կրակակետի մուր իրեն ամրակցված «ԱԿ-74» րեասակի 1093977 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել իր բերանի խոռոչի շրջանում և արացած հրազենային վնասվածքից րեղում մահացել (...)»⁴:

7.4. Հարուրիկ Կիրակոսի Կիրակոսյանին մեղադրանք է առաջադրվել այն րանի համար, որ «[Մ]ա ծառայելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի 1-ին հրաձգային

³ Տն քրեական գործի նյութեր, հատոր 10, թերթեր 358-359:

⁴ Տն քրեական գործի նյութեր, հատոր 10, թերթեր 359-360:

գումարակազմի 2-րդ վաշտի 1-ին դասակում որպես դիպուկահար, կոչումով շարքային, 2010թ. հուլիսի 16-ից զորամասի հրամանատարի թիվ 0218 հրամանի համաձայն մարտական հերթապահության ընդգրկված լինելով ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի կողմից սպասարկվող «Ղոզլու» կոչվող մարտական հենակետում, նույն թվականի հուլիսի 23-ին ժամը 15:00-ի սահմաններում հենակետի գեղնատրամակում տեսնելով, որ լեյտենանտ Արտակ Նազարյանը քնած է, դիտարկելով նրա հանգիստը խանգարելու նպատակով սկսել է բարձրաձայն բղավել: Երբ լեյտենանտ Արտակ Նազարյանը, իր հանգիստը խանգարելու կապակցությամբ, կարարելով իր ծառայողական պարտականությունները, դիտողություն է արել վերջինիս Հարթիկ Կիրակոսյանը հայտնաբերել է, րվել Արտակ Նազարյանի հասցեին, ուրքով հարվածել, գցել է գեղնատրամակի հարակին, որից հետո ընկած վիճակում մի ձեռքով սեղմել է Արտակ Նազարյանի պարանոցը, իսկ մյուս ձեռքով հարվածներ հասցրել վերջինիս գլխին այդպիսով ծառայողական պարտականությունները կարարելու կապակցությամբ բռնություն գործադրելով իր անմիջական պետի լեյտենանտ Արտակ Նազարյանի նկատմամբ (...):»⁵:

8. Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի մայիսի 7-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Ապացուցված է Հսկոր Խորենի Մանուկյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու մեջ և նա ենթակա է քրեական պարասխանաբարության նշված հոդվածների սանկցիաներով: (...) Ապացուցված է Վահագն Վլադիմիրի Հայրապետյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-375-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու մեջ [և] նա ենթակա է քրեական պարասխանաբարության նշված հոդվածի սանկցիայով (...) Ապացուցված է Ադիբեկ Հրաչյայի Հովհաննիսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարք կատարելու մեջ [և] նա ենթակա է քրեական պարասխանաբարության նշված հոդվածի սանկցիայով: (...) Ապացուցված է Ադիբեկ Հրաչյայի Հովհաննիսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարք կատարելու մեջ [և] նա ենթակա է քրեական պարասխանաբարության նշված հոդվածի սանկցիայով: (...) Ապացուցված է Հարթիկ Կիրակոսի Կիրակոսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու մեջ [և] նա ենթակա է քրեական պարասխանաբարության նշված հոդվածի սանկցիայով»⁶:

9. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ փաստել է. «(...) [Վերաքննիչ դատարանը (...) հանգում է այն հետևության, որ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հիմնավորված և

⁵ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 10, թերթեր 360-361:

⁶ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 23, թերթեր 90-135:

հասարարվաճ են գործին վերաբերվող փոհկաարկցվաճ, հասարի սարացուցների քավարար սաճողջությանը, քրեական գործի հնչաես նասարնությունը, սյնաես էլ դատարնության ընթացքում քրեարարավարական օրենքի էական հասարումներ, որոնք գործին մասնակցող սնճանց օրենքով երաշխավորվաճ հրավունքներից գրկելու կաճ դրանցում սահանասիակելու կաճ այլ ճանասարիով հոշընորել են գործի հանգամանքների քազմակողմանի, լրիվ և օբյեկրիվ հերագորումնը, ազրել են կաճ կարող են ազրել գործով ճիշր որոշում կայացնելու վրա, թույլ չեն րրվել և գործի փասարական հանգամանքների մասին դատարանի դատավճոճում շարարրվաճ հերությունները բիում են քրեական գործով ճեռք բերվաճ սարացուցներից, սաճարանյալների նկարմանը կիրառվել է քրեական սյն օրենքը, որը ենթակա էր կիրառման (...)⁷:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

I. Ներակերական դատարանի սկրերի վերանայումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև քարճրացվաճ առաջին հրավական հարցը հետևյալն է. Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեճ Հայասարանի գործով Եվրոպական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիոն արդյոճ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը վերանայելու հիմք է:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվաճի համաճայն՝ «1. Բացարիկ վերանայման վարույթներն են՝

1) նոր հանգամանքներով վարույթը.

(...)

2. Բացարիկ վերանայման ենթակա են՝

1) օրինական ուճի մեջ մրաճ դատավճիոը, (...).

(...)

3) սույն մասի 1-ին և 2-րդ կերերով նասարեալաճ դատարանի սկրերի վերանայման արդյունքով վերաքննիչ կաճ Վճռաբեկ դատարանի կայացրաճ և օրինական ուճի մեջ մրաճ որոշումը»:

Նույն օրենսգրքի 403-րդ հոդվաճի համաճայն՝ «1. Նոր հանգամանքներով քողրք կարող է բերվել հերկյալ հիմքերով.

(...)

5) Հայասարանի Հանրասկերության մասնակցությամք գործող միջազգային դատարանի ուճի մեջ մրաճ վճոճով կաճ որոշմանը հասարարվել է Հայասարանի Հանրասկերության միջազգային սարմանագրով նասարեալաճ հրավունքի հասարման փասարը, (...):»

12. Մեջբերվաճ նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական սկտի վերանայման հիմք է նան Հայաստանի Հանրասկետության մասնակցությամք գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուճի մեջ մտաճ վճիոը, որով հիմնավորվել է սնճի՝ Հայաստանի

⁷ Տեն քրեական գործի նյութեր, հատոր 26, թերթեր 1-200:

Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

13. Այսպես, *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է սույն գործով տուժող Արտակ Նազարյանի՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտումներ: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի՝* 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճռով արձանագրել է, որ տեղի են ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական⁸ և դատավարական⁹ պահանջների խախտումներ:

14. Հիմք ընդունելով *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից անձի՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համապատասխան իրավունքի խախտման փաստի արձանագրումը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական արյանների կողմից կայացված ակտերի բեկանման հիմքերը.

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մայիսի 7-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմք է:

16. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «*Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են*»:

Սկոցցարին և *Ջունյանն ընդդեմ Իտալիայի* գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «*(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասիսանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շրջելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ*

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Հովհաննիսյանը* և *Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատներ թիվ 2169/12 և 29887/14, կետ 156:

⁹ Տե՛ս նույն վճիռը, կետ 187:

պերությունը ազար է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձսած իր պարավորությունների կարարման միջոցների ընարության հարցում պայմանով, որ դրանք համարեղելի են Դարարանի վճոի մեջ րեղ գրած եզրակացությունների հեար»¹⁰:

Մելչուկը և Ասկերն ընդրեալ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախարում արձանագրած Դարարանի վճոով պարասիանող պերության վրա պարավորություն է դրվում դարարեցնել խախարումը և դրա հերևանքների համար այնպիսի հարուցում րրամնարել, որ հնարավորինս վերականգնվի խախարումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործականում հնարավոր չէ, ապա պարասիանող պերությունն ազար է վճիոր կարարելու միջոցների ընարության հարցում (...)»¹¹:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բացառիկ վերանայման արդյունքով իրավասու դարարանն ամբողջությամբ կամ մասնակի բեկանում է բողոքարկվող դարական ակրը վարույթը փոխանցելով համապարասիան սրորադաս դարարան կամ դարարեցնելով քրեական հերասարումը, իսկ անհրաժեշտության դեարում՝ նակ կարճելով վարույթը:

2. Բացառիկ վերանայում իրականացնող դարարանն իրավասու է չբեկանելու բողոքարկվող դարական ակրը, միայն եթե ծանրակշիո փասարարկների մարանանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 403-րդ հոդվածով նասարեալսած հանգամանքներն ըար էության չէին կարող ազղել վարույթի արդյունքի վրա: (...)»:

18. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՄԴՌ-1099 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրավակիչ մասն անփոփոխ թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիո փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի ազղում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեարում, երբ նոր հանգամանքն ըստ էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, դրա հիման վրա գործի կրկին քնությունը չի կարող ծառայել իր «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

19. Դատական վարույթի վերաբացումը կամ գործի նոր քնությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու

¹⁰ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիոր, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

¹¹ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիոր, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաքացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել ինդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաքացմամբ:

20. Գործի վերաքացումը Եվրոպական դատարանի կողմից ևս գնահատվում է որպես «*restitutio in integrum*»-ը հնարավորինս ապահովելու միջոց: Ընդ որում, Եվրոպական դատարանը, հղում կատարելով Հանձնարարականին և համարելով, որ վարույթի վերսկսումը կարող է տեղի ունենալ «բացառիկ» հիմքերով, այդպիսիք է համարում հատկապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման դեպքերը, երբ գործի քննությունն իրականացվել է արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում շեշտել է, որ այս դեպքում հատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաքացումն ու գործի նոր քննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ: Եվրոպական դատարանի համար կայուն պրակտիկա է դարձել նաև գործերի վերաքացման վերաբերյալ դրույթներն ընդգրկել վճռի մեջ¹²:

Այսպիսով, Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցման համաձայն՝ համապատասխան անհատական միջոցառումների կիրառումը, մասնավորապես գործի վերաքացումն անհրաժեշտ է և ըստ այդմ, մինչև խախտումը եղած իրավիճակի վերականգնումը՝ հնարավոր, որպես կանոն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում¹³:

¹² Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ի թիվս այլոց, *Gencel v. Turkey* գործով 2003 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 53431/99, *Ceylan v. Turkey* գործով 2005 հոկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 46454/99, *Bracci v. Italy* գործով 2005 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 36822/02, *Somogyi v. Italy* գործով 2004 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 67972/01:

¹³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Մուրադխանյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ/01/13, *Գրիշա Վիրաբյանի* գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ/05/13 և *Կարինե Համբարձումյանի* գործով 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0121/01/10 որոշումները:

21. Եվրոպական դատարանը Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի գործով արձանագրել է հետևյալը.

«(...) Կ) Նյույթաիրավական պահանջը

131. Ա.Նազարյանը մահանալու ժամանակ եղել է Հայաստանի զինված ուժերի սպա, որն ուներ լեյտենանտի կոչում:

132. Դիմումատուները կասկածի տակ են դրել քրեական գործով քննության պաշտոնական եզրակացությունն ստ այն, որ Ա.Նազարյանն ինքնասպանություն է գործել, և պնդել, որ նրան սպանել են (տե՛ս վերևում՝ 101-րդ պարբերությունը): Այդ կասկածից չազատվելու նպատակով քննության մի շարք սխալներ և անճշտություններ, որոնք ամփոփվել են ավելի վաղ (տե՛ս մասնավորապես վերևում՝ 104-րդ պարբերությունը): Միևնույն ժամանակ իրենց դիրարկումներում դիմումատուները կարծես թե չեն բացատրել, որ Ա.Նազարյանն ինքնասպանություն է գործել (տե՛ս վերևում՝ 102-րդ պարբերությունը)՝ պնդելով, սակայն, որ ոչ մի վարկած սպանություն կամ ինքնասպանություն, վերջնականապես չի հաստատվել ներպետական մարմինների կողմից (տե՛ս վերևում՝ 103-րդ պարբերությունը):

133. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն սպացուցի կիրառելի չափանիշը «հիմնավոր կասկածներից վեր» է (տե՛ս վերևում՝ նշված 123-րդ պարբերությունում բերված նախադեպային իրավունքը): Այն նշում է, որ քրեական գործով քննության ընթացքում մի շարք լուրջ անճշտություններ են եղել Ա.Նազարյանի մահվան հետ կապված մի քանի կարևոր հանգամանքների մասով, ինչպիսիք են, օրինակ, նրա դիակի հայտնաբերման վայրը (տե՛ս վերևում՝ 10-րդ և 15-րդ պարբերությունները): Անճշտություններ են եղել նաև դատական սպացուցների առկայությամբ, այդ թվում՝ դիակի հանգամանակ Ա.Նազարյանի մարմնի վնասվածքների նույնականացման, դիակի հանգամանակ արձանագրությանը կցված լուսանկարների քանակի (տե՛ս վերևում՝ 37-րդ պարբերությունը) և պարկուճի համարի վերաբերյալ, որը հայտնաբերվել է դեպքի վայրում և ներկայացվել է հրազենագիտական, հետքաբանական և մարմնահետքերի համակցված փորձաքննության (տե՛ս վերևում՝ 17-րդ և 35-րդ պարբերությունները), որոնք բոլորը բացառվել են ներպետական վարույթի ընթացքում (տե՛ս վերևում՝ 66-րդ և 67-րդ պարբերությունները) և Կառավարության կողմից իրենց դիրարկումներում (տե՛ս վերևում՝ 112-րդ պարբերությունը) որպես «տեխնիկական» կամ «մեխանիկական» սխալների արդյունք:

134. Հաշվի առնելով այն անզուգույթությունը, որով իրականացվել է քննությունը, և բավարար բացատրությունների բացակայությունը կապված դրա եզրակացությունների վերաբերյալ մի շարք լուրջ անհամապատասխանությունների հետ (տե՛ս ստորև՝ 163-167-րդ պարբերությունները), դիմումատուներին կարելի է ներել պաշտոնական վարկածը լրջորեն կասկածի տակ դնելու և մերածելու համար, որ քննությունը կարող է թաքցնել ավելի չարաքաասիրի բացատրություն, օրինակ՝ սպանություն (տե՛ս վերևում՝ հիշարակված՝ Բեկերի [Beker] գործը, § 52): Այնուամենայնիվ, Դատարանի ներկայացրած նյութը թույլ չի տալիս «ողջամիտ կասկածից վեր» հաստատել այն վարկածը, որ Ա.Նազարյանի կյանքը դիրարկության են խլել (տե՛ս, ի հակադրություն դրա, վերևում՝ հիշարակված՝ Բեկերի [Beker] գործը,

§§ 45-54 և Լապշինն ընդդեմ Ադրբեյջանի [Lapshin v. Azerbaijan], թիվ 13527/18, §§ 110-20, 2021 թվականի մայիսի 20, րե՛ս նաև *mutatis mutandis* Միժիգարովան ընդդեմ Սլովակիայի [Mizhigárová v. Slovakia], թիվ 74832/01, § 89, 2010 թվականի դեկտեմբերի 14): Այսպիսով, Ա.Նազարյանի սպանության վերաբերյալ ցանկացած պնդում կրի զուր ենթադրական բնույթ (րե՛ս *mutatis mutandis*, Արդուլլահ Յիլմազն ընդդեմ Թուրքիայի [Abdullah Yilmaz Yilmazv. Turkey], թիվ 21899/02, § 59, 2008 թվականի հունիսի 17, վերևում հիշարակված Դուրդուի [Durdu] գործը, §§ 59-61, և վերևում հիշարակված՝ Նանա Մուրադյանի [Nana Muradyan] գործը, §§ 130-31):

135. Պաշտոնական վարկածի համաձայն՝ Ա.Նազարյանն ինքնասպանություն է գործել վերադասի և նրա հրամանատարության րակ գրնախղ ժամկետային զինժառայողների կողմից վար վերաբերմունքի և ոյրնձգոյթոյննների հեյրևանքով (րե՛ս վերևում, մասնավորապես՝ 52-րդ և 68-րդ պարբերոյթոյննները): Ինչպես նշվել է վերևում, պետրոյթոյնը պարասահանարվոյթոյն է կրում րուժողի մահվան համար, որին ինքնասպանոյթոյն են հասցրել զինվորական ժառայոյթոյն ընթացքում՝ նրան ենթարկելով ժաղրոժանակի և նրա նկարմանը վար վերաբերմունք ցուցաբերելով (րե՛ս վերևում՝ 122-րդ պարբերոյթոյնը):

(...)

139. Կառավարոյթոյնը պնդել է, որ բացի քրեական օրենսդրոյթոյն համապարասահան րոյթոյններից՝ ներպետական օրենսդրոյթոյնը պարունակում է Հայասրանի զինված ուժերում ինքնասպանոյթոյնների կանխարգելման վերաբերյալ համապարասահան իրավական դաշր (րե՛ս վերևում՝ 108-րդ պարբերոյթոյնը):

140. Այնուամենայնիվ, Դարարան ներկայացված կոյթում չկա որևէ բան, որը ենթադրում է, որ համապարասահան ժամանակաշրջանում զինված ուժերում գոյոյթոյն է ոնեցել հոգեբանական վիճակի գնահարման և աշակցոյթոյն որևէ համակարգ, այդ թվում՝ զինվորական ժառայոյթոյն ընթացքում նաինական և հերագա հոգեբանական վիճակի զնման, ինքնասպանոյթոյնների կանխարգելման և հոգեբանական օգնոյթոյն առկայոյթոյն մասով (համեմարե՛ք և հակադրե՛ք վերևում հիշարակված՝ Բոյչենկոյի [Boychenko] գործը, §§ 40-56 և 86):

141. Դարարանն այս կապակցոյթամբ նշում է, որ Կառավարոյթոյն կողմից ներկայացված միակ համապարասահան փասարթոյթը եղել է «Ինքնասպանոյթոյն կանխարգելման և առողջ բարոյական միջավայրի սպահովման նպարակով ժառայող անձակագմի հեր աշխարելու մեթոդական ուղեցոյցը» (ուղեցոյցը րե՛ս վերևում՝ 108-րդ պարբերոյթոյնը): Դարարանը, այնուամենայնիվ, դիրարկում է, որ սոյն փասարթոյթը, որը հասարարվել է 2004 թվականին չպարզված օրը, Պաշրպանոյթոյն նախարարոյթոյն չպարզված սրորարաժանման պերի կողմից, ըար էոյթան, Պաշրպանոյթոյն նախարարոյթոյն աշխարակագմում աշխարող պաշրոնայի կողմից րրված ուղեցոյցների լրակագմ է (համարե՛ք, օրինակ, վերևում հիշարակված՝ Բոյչենկոյի [Boychenko] գործը, § 40): Ավելին, չկա որևէ սպացոյց այն մասին, որ որևէ ջանք է գորժարվել այդ ուղեցոյցները գորժանակնում կիրառելու համար:

142. Դատարանը նաև դիտարկում է, որ բովանդակության առումով ուղեցույցը նկարագրում է ինքնասպանության մասով արված հետազոտությունը, այդ թվում՝ դրա հնարավոր պարճատները և արտաքին նշաններն ու բնորոշ ախարանիչները, որոնք դրսևորվում են ինքնասպանություն գործելու վրանգի վրակ գրնվող անճանց կողմից: Այն նաև սահմանում է այն չափորոշիչները, որոնք պետք է հաշվի առնվեն ինքնասպանության կանխարգելման նպարակով՝ ծառայող անճակագվի սրացիոնար բուժման, այդ թվում՝ ինքնասպանության փորճ կարարած կամ այն կարարելու մրարդության մասին հայարարարած ծառայող անճակագվի շրաս պրացիոնար բուժման անհրարճելրության հարցի վերարերյալ որոշում կայացնելիս: Պարզ չէ սակայն, թե կոնկրետ ում է ուղղված ուղեցույցը՝ բուժանճակագվին, գորանասերի հրաննարարական կագվին, թե այլ անճանց:

143. Ի վերջո, ինքնասպանությունների կանխարգելման նպարակով ուղեցույցը, *inter alia*, առաջարկում է արեղծել մի ծառայություն, որը չի ընդգրկվում գորանասերի անճակագվում, որը կուսումնասիրի ինքնասպանությունների դեպքերը և կղեկավարվի բժշկի կամ «հոգերան-սպայի» կողմից: Այնուամենայնիվ, ոչինչ չի վկայում այն մասին, որ այս հանճարարականը կարարվել է 2004 թվականին ուղեցույցը ներկայացնելուց հետո:

(...):

144. (...) Դատարանը դիտարկում է, որ ոագվական ուժերում հոգերանական աջակցության որևէ համակարգի բացակայության պայմաններում Ա.Նագարյանին որևէ հոգերանական աջակցություն չի տրվել՝ չնայած նրա հոգերանական խոցելի վիճակին և ինքնասպանության ռիսկի ակնհայտ նշաններին (...): Ավելին, չունենալով գնված ուժերում ինքնասպանությունների կանխարգելման հետ կապված կանոնակարգեր՝ պարասիանարու անճինք չեն արացել որևէ հրահանգ կամ ուղեցույց, թե ինչպես վարվել իրավիճակի հետ (...):

Համասպարասիանարար, առկա նյութերի հիման վրա Դատարանը գրնում է, որ պարասիանող պերությունը չի կարարել Կոնվենցիայի 2-րդ հորվածով նասիարեակված իր դրական պարրավորությունը՝ ճեռնարկելու համասպարասիան միջոցներ, որոնք կարող էին օգրագործվել Ա.Նագարյանի կյանքը պաշրպանելու համար:

145. Դատարանը հաջորդիվ կրնի, թե արդյոք մարմիններն իմացել են կամ պետք է իմանային Ա.Նագարյանի ինքնասպանություն գործելու իրական և անմիջական ռիսկի առկայության մասին, և եթե այո, արդյոք նրանք արել են այն ամենը, ինչ կարելի էր ողջամերության սահմաններում ակնկալել նրանցից՝ այդ ռիսկի նյութականանալուց խուսափելու համար (...):

146. Դատարանն ի սկզբանե նշել է, որ սույն գործում չկա որևէ սպացույց, որը ցույց է տալիս, որ Ա.Նագարյանը երբևէ տառասել է հոգեկան խանգարումով (...) կամ ոնեցել է ինքնասպանության փորճի կամ ինքնամասման պարմություն:

147. Այրոհանդերճ, Դատարանը նշում է, որ թե՛ քրեական, թե՛ ծառայողական քնության ընթացքում միանշանակ հասարարվել է, որ Ա.Նագարյանը դարճել է ծառայակիցների, այդ թվում՝ իր անմիջական վերարասի և նրա

հրամանատարության տակ գրնվող ժամկետային զինծառայողների կողմից մշտական վար վերաբերմունքի և նվաստացման գոհ (...): Մասնավորապես քննությանը եզրակացվել է, որ Ա.Նազարյանի հնքնասպանությունն ուղղակիորեն կապված է իր ծառայակիցների կողմից ցուցաբերված վար վերաբերմունքի և նվաստացման հետ (...):

148. Ավելին, սուկա նյութերից երևում է, որ բազմաթիվ ծառայակիցներ և ժամկետային զինծառայողներ րեղյակ են եղել Ա.Նազարյանի ծառայակիցների, այդ թվում՝ իր հրամանատարության տակ գրնվող ժամկետային զինծառայողների կողմից Ա.Նազարյանին նվաստացնելու և վար վերաբերվելու հետևանքով սրեղծված նրա ցածր բարոյահոգեբանական վիճակի մասին, որն հնքնին սկիզբ է առել իր վերադասի՝ կապիտան Հ. Մ.-ի կողմից այլ անձանց ներկայությամբ իր նկատմամբ վար վերաբերմունքից (...):

149. Մասնավորապես ներքին քննության արդյունքների համաձայն՝ կապիտան Հ.Մ.-ն, լինելով Ա.Նազարյանի անմիջական հրամանատարը, անձնակազմի ներկայությամբ հարձակվել է նրա վրա՝ «դրանով իսկ ուրնահարելով նրա արժանապատվությունը և ուզվնարազայում սրեղծելով անստողջ բարոյական մթնոլորտ», ինչի հետևանքով Ա.Նազարյանը ենթարկվել է վար վերաբերմունքի իր հրամանատարության տակ գրնվող ժամկետային զինծառայողների կողմից: Այդ իրավիճակը թարքվել է հրամանատարությունից, ինչի հետևանքով Ա.Նազարյանն հնքնամեկուսացվել է, և նրա հոգեբանական վիճակի խաթարումը հասել է կրիտիկական սարիճանի (...):

150. Այնուհերև քրեական գործով քննությամբ պարզվել է, որ 2010 թվականի հուլիսի 26-ի դրությամբ ուզվնարազայի զինծառայողներին «սկնհայր է դարձել», որ Ա.Նազարյանը կարող է հնքն իրեն վսասել, ինչի պարճատով կապիտան Հ. Մ.-ն հրամայել էր, որ Ա.Նազարյանի հնքնսաճիգից հանեն զարկանը (րեն վերևում՝ 52-րդ պարբերությունը): Սակայն նոյնիսկ մինչ այդ՝ 2010 թվականի հուլիսի 19-ին, այսինքն՝ միջադեպից ամենստուր մեկ շարթ ստաջ, կապիտան Հ. Մ.-ն և սվազ լեյրենսնար Վ. Հ.-ն նման կասկածներ են ոնեցել այն միջադեպից հերտ, որի ժամանակ Ա.Նազարյանի քիթն արնսհոսել է նրանց կողմից հարճակման ենթարկվելուց հերտ (...): Հերևար Դսարանը գրնում է, որ ամենստուր 2010 թվականի հուլիսի 26-ին Ա.Նազարյանի վերադասները գիյրեին կամ պերք է իմանային, որ կս իրական և անմիջական վրանգ, որ նս կարող է հնքնասպանություն գործել:

151. Պարզվում է, որ գորմասի հրամանատարական կազմը րեղյակ չի եղել, թե ինչ իրավիճակում է հայրնվել Ա.Նազարյանը հաշվի առնելով, որ ոչ կապիտան Հ.Մ.-ն, ոչ սվազ լեյրենսնար Վ.Հ.-ն ոչինչ չեն գեկուցել իրենց վերադասներին: Իրավիճակին րեղյակ մյուս զինծառայողները (...), այդ թվում՝ 2010 թվականի հուլիսի 26-ի կեսօրին ճաշարսնում գրոյցի ժամանակ ներկս գրնվող զինծառայողները (...) որևէ պսհի չեն գեկուցել գորմասի հրամանատարական կազմին, որ Ա.Նազարյանի մոյր նկարվել է հոգեկան լուրջ խանգարում, և որ հնարավոր է՝ նս ոնեցել է հնքնասպանության մրքեր: Միննոյն ժամանակ, հաշվի առնելով համսպարսսիսան պսհին ուզվնական ուճերում հոգեբանական վիճակի

գնահատման և աջակցության որևէ համակարգի բացակայությունը, որի մասին վերևում նշվել է (...), պարզ չէ, թե ինչ միջոցներ, եթե այդպիսիք կան, զորամասի հրամանատարական կազմը կարող էր ձեռնարկել, եթե նրանք տեղյակ լինեին իրավիճակի մասին (...):

152. Ամեն դեպքում, եթե անգամ բարձրագույն հրամանատարությունը տեղյակ չէր այդ մասին, ապա կասիդան Հ.Մ.-ն՝ ռազմաբազայի համար պարասիսանսարու անձը և Ա.Նազարյանի անմիջական հրամանատարը, հարակ տեղյակ լինելով վերջինիս ծայրահեղ խոցելի հոգեբանական վիճակի և այն հավանականության մասին, որ նա կարող էր վնասել ինքն իրեն հիմնականում իր կողմից գործադրված բնության հետևանքով, ոչ միայն չի զեկուցել այդ մասին, այլև միջոցներ չի ձեռնարկել Ա.Նազարյանի կյանքին սպառնացող վրանագից խուսափելու համար: Ավելին, կասիդան Հ.Մ.-ն 2010 թվականի հուլիսի 26-ի կեսօրին կրկին նվաարացրել է Ա.Նազարյանին սպառնալով էլ ավելի նվաարացնել նրան՝ «պարվի դատարան» կազմակերպելու միջոցով (...): Համենայն դեպս առկա նյութերից ոչինչ չի վկայում այն մասին, որ որևէ այլ բան ևս տեղի է ունեցել 2010 թվականի հուլիսի 26-ի կեսօրին տեղի ունեցած ակնհայտ խուսակցության և հաջորդ առավոտվա միջև ընկած ժամանակահատվածում, երբ Ա.Նազարյանին մահացած են գրել:

153. Վերջապես, Կառավարության պնդումներից պարզ չէ, թե արդյոք Հ.Մ.-ի՝ Ա.Նազարյանի ինքնաձիգից զարկանը հանելու հրամանը, նրանց կարծիքով, համապարասիսան արձագանք էր վերջինիս ծայրահեղ հոգեկան խանգարման և ինքնասպանության մտադրության նշաններին: Կառավարությունը նույնիսկ ենթադրել է, որ նման հրամանը հակասում է ակրիվ մարտական հերթասպասության կանոններին (...): Ավելին, Հ. Մ.-ն ոչ մի քայլ չի ձեռնարկել՝ սպահովելու, որ իր հրամանն իրականում կատարվել է:

154. (...) Դատարանը գրնում է, որ պետությունը չի կատարել համապարասիսան քայլեր ձեռնարկելու իր դրական պարտավորությունը՝ Ա.Նազարյանի կյանքը գինվորական ծառայության ընթացքում պաշտպանելու համար:

155. (...) Հաշվի առնելով վերոնշյալ (...) շարադրված եզրակացությունները՝ Դատարանը եզրակացնում է, որ պետությունը չի ձեռնարկել համապարասիսան և արդյունավետ միջոցներ՝ կանխելու Ա.Նազարյանի կյանքին սպառնացող ակնհայտ վրանագի նյութականացումը:

(...) Հերևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական պահանջի խախտում:

ii) Դատարանական պահանջը

157. Դատարանը վերահասարարում է, որ 2-րդ հոդվածով նախատեսված դատարանական պահանջին համապարասիսանությունը գնահատվում է մի քանի էական պարամետրերի՝ քննչական միջոցառումների համարժեքության, քննության արագության, մահացածի ընտանիքի ներգրավվածության և քննության անկախության հիման վրա:

Այս տարրերը փոխկապակցված են, և դրանցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, ինքնանպարակ չէ: Դրանք չափորոշիչներ են, որոնք համարել

հնարավորություն են տալիս գնահատել քննության արդյունավետության սարիճանը (ընդ վերևում հիշատակված՝ Մուսթաֆա Թունքը և Ֆեյրե Թունքը ընդդեմ Թուրքիայի [Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey], § 225): Հաշվի առնելով սա՝ Դատարանը կարողանալի ուսումնասիրել այդ տարրերը սույն գործով իրականացված քրեական գործով քննության մասով սկսած դրա արագությունից:

1) Քննության արագությունը

158. Դատարանը նշում է, որ Ա.Նազարյանի մահվան մասին Պաշտպանության նախարարությունը տեղեկացվել է անմիջապես դեպքի օրը՝ 2010 թվականի հուլիսի 27-ին, և որ Քննչական ծառայությունն իր նախաձեռնությամբ օպերատիվ կերպով քննություն է սկսել՝ սույն օրը ձեռնարկելով նախնական քննչական միջոցառումներ (ընդ վերևում՝ 8-11-րդ պարբերությունները):

159. Ա.Նազարյանի ծառայակիցների նկարմամբ քրեական հետապնդման և դատապարտման պարճառ դարձած քննությունն ավարտվել է մեկ տարվա ընթացքում, այսինքն՝ մտրավորապես 2011 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին (ընդ վերևում՝ 51-րդ և 52-րդ պարբերությունները), և դատարանների կողմից գործի քննությունն ավարտվել է 2013 թվականի սեպտեմբերին (ընդ վերևում՝ 75-րդ պարբերությունը), այսինքն՝ հետագա երկու տարվա ընթացքում:

160. Այդ հանգամանքներում Դատարանը գրնում է, որ քննությունն իրականացվել է անհրաժեշտ բարեխղճությամբ, և քննությունն անհիմն չի ձգձգվել:

2) Քննության համապատասխանությունը

161. Ի սկզբանե պետք է դիտարկել, որ մարմինները մի շարք քննչական միջոցառումներ են ձեռնարկել տվյալ իրադարձություններին առնչվող ապացույցներ հավաքելու համար: Իրոք, ինչպես նշել է Կառավարությունը (ընդ վերևում՝ 113-րդ պարբերությունը), մարմինները հարցաքննել են մեծ թվով վկաների, ձեռնարկել են տարբեր քննչական միջոցառումներ, այդ թվում՝ դեպքի օրը՝ ապացույցներ ապահովելու նպատակով, և նշանակել են մի շարք դատաբժշկական փորձաքննություններ:

162. Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերևում, քննության արդյունավետությունը չի կարող գնահատվել միայն կազմված զեկույցների, հարցաքննված վկաների կամ ձեռնարկված այլ քննչական միջոցառումների թվով: Քննության եզրակացությունները պետք է հիմնված լինեն բոլոր համապատասխան տարրերի մանրակրկիտ, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա (ընդ վերևում՝ 126-րդ պարբերությունը), ինչը, Դատարանի կարծիքով, չի եղել Ա.Նազարյանի մահվան հանգամանքների քննության դեպքում հաջորդող պարճառններով:

163. Դատարանը նշում է, որ Պաշտպանության նախարարության կողմից 2010 թվականի հուլիսի 27-ի առավոտյան զորամասի հրամանատարական կազմից սրացված դեպքի մասին հաղորդման և դեպքի վայրի մասով դեպքի վայրի զննության արձանագրության միջև կա անհամապատասխանություն այն առումով, որ առաջինը հայրնում է, որ Ա.Նազարյանն ինքն իրեն կրակել է խրամապում, իսկ վերջինս նշում է, որ դին հայրնաբերվել է թիվ 12 ռազմաբազայի տրամաձքում գրնվող քարի կողքին (ընդ վերևում՝ 10-րդ և 15-րդ պարբերությունները): Կառավարությունն այդ կապակցությամբ հայրնել է, որ կասիդան Հ. Մ.-ն, Ա. Մկ.-ն, Գ. Մ.-ն, Հ. Ն.-ն,

Ա. Հ.-ն, Ա. Մ.-ն և Մ. Մ.-ն վկայի իրենց ցուցմունքներում պնդել են, որ նրանք դին րեանել են քարի կողքին, ինչպես նշված է հանցագործության վայրի զննության արձանագրության մեջ, և որ Ա. Գ.-ն պարզարանել է հարցը դատարանության ընթացքում հարցարնալելիս (րենս վերևում՝ 112-րդ պարբերությունը): Դատարանը դիարարկում է, այնուամենայնիվ, որ կասիրան Հ. Մ.-ի, Ա. Մկ.-ի, Գ. Ա.-ի, Հ. Ն.-ի, Ա. Հ.-ի, Ա. Մ.-ի և Մ. Մ.-ի՝ Դատարան ներկայացրած ցուցմունքներում ոչինչ չկա, որից կարելի էր ենթադրել, որ նրանց հարուկ հարցրել են դիակի գրնալելու վայրի մասին: Պարզ չէ, թե գորամասի որ հրամանատարն է այդ հաղորդումն ուղարկել Պաշտպանության նախարարություն: Ամեն դեպքում Կառավարության կողմից նշված բոլոր վկաներից միայն նույն գորամասի հրամանատար ԱԳ.-ն էր, որին հարցրել են դատարանության ընթացքում րվյալ անհամապարասիանության մասին (րենս վերևում՝ 65-րդ պարբերությունը): Ոչինչ չի վկայում այն մասին, որ Կառավարության կողմից վկայակոչված մյուս վկաները դատարանության ընթացքում հասարարել են դեպքի վայրի վերաբերյալ իրենց ենթադրյալ մինչդարական ցուցմունքները:

164. Դատարանն այնուհերև նշում է, որ դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ քննիչն առգրավել է 78-09 համարները կրող պարկուձ, որը հայրնարբերվել է գերնին՝ դիակի մուր (րենս վերևում՝ 15-րդ պարբերությունը): Այնուհերև պարկուձը և Ա.Նազարյանի ինքնաձիգը ներկայացվել են համակցված հրազենագիրական, հերքարքանական և մարնահերքերի դատարժկական րորձարննության (րենս վերևում՝ 17-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, համակցված հրազենագիրական, հերքարքանական և մարնահերքերի րորձարննության ավարրից հերր րրված զեկույցում նշվում էր րորձագերներին ներկայացված պարկուձի նույնականացման մեկ այլ համար, այն է՝ 60-78 (րենս վերևում՝ 35-րդ պարբերությունը): Կառավարությունը երկու թվերի միջև եղած անհամապարասիանությունը բացարբել է որպես «մեխանիկական սխալ» պնդելով, որ քննիչը ջրջել է պարկուձը, և դրա վրա նշված 60 թիվը նման է եղել 09-ին (րենս վերևում՝ 112-րդ պարբերությունը): Դատարանը, սակայն, դիարարկում է, որ այս բացարրությունը գործի նյութերում որևէ րեղ չկա: Հերևարար և որևէ հինմավոր սպացույցի բացակայության դեպքում, քննության ընթացքում հավարված դարահրազենագիրական սպացույցների հեր կասված նման կարևոր անձչրության վերաբերյալ Կառավարության առաջարկված բացարրությունը չի կարող բավարար համարվել:

165. Համաձայն դիահերձման եզրակացության՝ մարմնի վրա հայրնարբերվել են մի շարք ոչ հրազենային վնասվածքներ, այդ թվում՝ աջ այրի, սրորին ծուրի քերժվածքներ և մասրորդային գործրնթաց, աջ ձեքի վերին հարվածում կասրուկներ և կրժքավանդակի ձախ կողմի, ձախ ձեքի վերին հարվածի, ձախ ձեքի արմունկի, ձախ ձեքի նախարազկի, ձախ ազրրի և աջ ձեքի դասարակի հինզերրորդ մարի ջրջանում քերժվածքներ (րենս վերևում՝ 37-րդ պարբերությունը): Դատարանը դիարարկում է, որ այդ վնասվածքների մասով համապարասիան բացարրություն չի րրվել: Այն նաս նշում է, որ դատարանության ընթացքում դատարժկական րորձագերը վկայել է, որ դիահերձման ժամանակ աջ

դասարակի հինգերորդ մասի հաստատում էրբեր քերծվածք չի հայրնաբերվել, և որ դիախերձման արձանագրության մեջ այդ վնասվածքի մասին նշումը եղել է «մեխանիկական սխալ»-ի արդյունք (տե՛ս վերևում՝ 67-րդ պարբերությունը): Իր հերթին Կառավարությունը հիմնվել է դարաբժշկական փորձագետի վկայության վրա՝ նշելով, որ այդ առումով թյուրիմացություն է եղել, որը բխում է փորձագետի սխալից (տե՛ս վերևում՝ 112-րդ պարբերությունը): Թեև դիախերձման ընթացքում հայրնաբերված վնասվածքի անբետումը կամ դրա մասին չիշարակելը որոշ չափով կարող է դիտարկվել որպես հավանական սցենար, այնուամենայնիվ, Դարարանը դժվարանում է պարկերացնել, թե ինչպես կարող է դիախերձման արձանագրությունում հարակորեն նշված լինել մարմնի կոնկրետ մասի կոնկրետ վնասվածքի մասին, որն առաջացել է «մեխանիկական սխալի» արդյունքում, եթե իրականում փորձագետի կողմից նման վնասվածք չի հայրնաբերվել:

Բացի այդ, դիախերձման արձանագրության վերջում նշվել է, որ կցվել է տասնհինգ լուսանկար, մինչդեռ, ինչպես ցույց են տվել դիմումատուները դարաբնության ընթացքում (տե՛ս վերևում՝ 66-րդ պարբերությունը), արձանագրությանը կցվել է ընդամենը տասնվեց լուսանկար: Այս փաստը նույնպես բացատրվել է որպես սխալ (տե՛ս վերևում՝ 66-րդ և 112-րդ պարբերությունները):

166. Դարարանը նաև նշում է, որ դեպքի վայրի զննության ընթացքում քննիչը մի շարք գործողություններ է կատարել Ա.Նազարյանի ինքնաձիգով, այն է՝ հանցագործության մեջ կասկածվող գործիքով: Մասնավորապես նա հանել է պահոնակը և դարարկել այն, արձակել փորձական կրակոց և փակել ձգանի պաշտպանիչը (տե՛ս վերևում՝ 15-րդ պարբերությունը): Արդյունքում ինքնաձիգը չի ներկայացվել դարախրագենագիտական, հետքաբանական և մարնախերքի փորձաբնության այն նախնական վիճակում, որով այն հայրնաբերվել է դեպքի վայրում, այդ թվում՝ առկա մարնախերքերով: Իհարկե, ինչպես նշված է հրագենագիտական, հետքաբանական և մարնախերքերի համակցված փորձաբնության արձանագրությունում, ներկայացված ինքնաձիգի «մակերեսի որոշ մասերի» վրա հայրնաբերվել են միայն «քրորիքի և ճարպի հետքեր», որոնք համապատասխան չեն համեմատական փորձաբնությանը (տե՛ս վերևում՝ 35-րդ պարբերությունը): Այսինքն՝ քննիչի գործողությունները փորձագետների համար անհնարին են դարձրել իրենց հանձնված ինքնաձիգի վրա հայրնաբերել մարնախերքեր, այդ թվում՝ Ա.Նազարյանին պարկանող մարնախերքեր: Կառավարությունը բացատրել է քննիչի գործողությունները դեպքի վայրի զննության ժամանակ, մասնավորապես պահոնակի հետագումը և փորձական կրակոցը որպես անվրանագության նկատառումներ (տե՛ս վերևում՝ 112-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, նման փաստարկը ողջամտորեն չի կարող ընդունվել հանցագործության վայրի քննության համատեքստում:

167. Բացի այդ, թեև ի վերջո եզրակացություն արվեց, որ Ա.Նազարյանն ինքնասպանություն է գործել՝ իր ինքնաձիգից կրակոց արձակելով բերանին (տե՛ս վերևում՝ 52-րդ պարբերությունը), այնուամենայնիվ, քննությանը չի բացատրվել այն փաստը, որ ոչ մի փանիուշը չի բացակայել այն պահոնակից, որով լիցքավորված է եղել նրա ինքնաձիգը: Մասնավորապես դեպքի վայրի

զննության արձանագրության համաձայն՝ քննիչը առգրավել է երեսուն փամփուշոջ րարողունակությանը պահունակ, որի մեջ հայրնաբերվել է նաև քսանինը փամփուշոջ րացի լիցքաթափունն արդյունքում դուրս եկած փամփուշոջներից (րենն վերևում՝ 15-րդ պարբերությունը): 2010 թվականի հուլիսի 28-ի հրազնագիտական, հեղքաքանակական և մարնահեղքերի համակցված փորձաքննություն նշանակելու մասին իր որոշման մեջ քննիչը փորձագետներից պահանջել է, inter alia, պարզել, թե արդյոք երեսուն փամփուշոջ րարողունակությանը պահունակը կարող էր լիցքավորված լինել երեսունմեկ փամփուշոջով, ինչին ի պարասիան՝ փորձագետներն իրենց արձանագրությունում դրական են պարասիանել (րենն վերևում՝ 17-րդ և 35-րդ պարբերությունները): Անտամենայնիվ, քննության ընթացքում վերջնականապես չի պարզվել, թե արդյոք րվյալ պահունակն իրականում լիցքավորված է եղել երեսունմեկ փամփուշոջով այն ժամանակ, երբ Ա.Նազարյանի երեք պահեստային պահունակները, որոնք ավելի վաղ առգրավվել էին քննիչի կողմից, յուրաքանչյուրն ակնհայտորեն լիցքավորված է եղել երեսուն փամփուշոջով (րենն վերևում՝ 13-րդ պարբերությունը):

168. Դարարանը դիարարկում է, որ քննության սկզբնական օրերին և որոշ դեպքերում՝ հաջորդ օրերին, վկաների կողմից մինչդարական ցուցմունքների մեծ մասը արացվել է վկաներից, այդ թվում՝ հեղազայում մեղադրվող անձանցից, որոնք գրնվում էին զինվորական կալանքի րակ «ներքին ծառայության կանունները» իսպարելու համար (րենն վերևում՝ 19-րդ, 20-րդ, 21-րդ, 25-րդ և 30-րդ պարբերությունները): Չնայած 2010 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին Ա.Նազարյանի ծառայակիցների կարգապահական մեկուսացման առնչությամբ փաստաթղթային սպացույցներ րրամնադրելու Դարարանի կոնկրետ պահանջին՝ Կտավարությունն ընդամենը րրամնադրել է Ա. Գ.-ի 2010 թվականի հուլիսի 27-ի և 28-ի հրամանների պարճենները, որոնցից միայն վերջինն էր վերաբերում թիվ 12 ռազմաքազայի անձնակազմի կարգապահական մեկուսացմանը րարբեր ժամկետներով, որոնք րարանվում են երեքից րասը օր (րենն վերևում՝ 26-րդ պարբերությունը): Չնայած այդ փաստին՝ Կտավարությունը չի վիճարկել, որ 2010 թվականի հուլիսի 28-ի հրամանի համաձայն զինծառայողների զինվորական կալանքից հեղր զինծառայողների մեկուսացման առնվազն երկու դեպք է գրանցվել (րենն վերևում, մասնավորապես՝ 25-րդ և 30-րդ պարբերությունները): Դարարանը նաև դիարարկում է, որ դարարնության ընթացքում ներկայացվել են որոշակի սպացույցներ, որոնք թույլ են րային ենթադրել, որ զինծառայողների զինվորական կալանքը րենել է շար ավելի երկար, քան 2010 թվականի հուլիսի 28-ի հրամանում նշված ժամկետը (րենն վերևում, օրինակ՝ 64-րդ պարբերությունում դարարնության ընթացքում Ա. Մկ.-ի կողմից րրված վկայությունը), և որ հավանաքար կալանքի րակ գրնվելու ընթացքում զինծառայողների նկարմամբ վար վերաբերմունք է ցուցաբերվել (րենն վերևում՝ 57-րդ և 61-րդ պարբերությունները): Չնայած դրան՝ Մարզային դարարանը մերժել է երկրորդ դիմումարուի պահանջը, այն է՝ չընդունել Ա.Նազարյանի ծառայակիցների զինվորական կալանքի ժամանակ ձեռք բերված վկայի ցուցմունքները՝ առանց որևէ կոնկրետ պարճատարանության (րենն վերևում՝ 68-րդ պարբերությունը):

169. Առկա են դիմումատուների կողմից բարձրացված և հետագայում Կառավարության կողմից քննարկված մի շարք այլ խնդիրներ (տե՛ս վերևում՝ 104-րդ և 112-րդ պարբերությունները), ինչպես, օրինակ՝ դեպքի վայրի զննության արձանագրության սխալ ամսաթիվը (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերությունը) և Ա.Նազարյանի՝ դատաբժշկական փորձաքննության ընթացքում հետազոտված արյան նմուշում ալկոհոլի առկայության հիմնավոր բացատրության բացակայությունը (տե՛ս վերևում՝ 37-րդ պարբերությունը):

170. Դատարանի կարծիքով, այնուամենայնիվ, արդեն մանրամասնորեն քննված կուպիթ թերությունները (տե՛ս վերևում՝ 163-168-րդ պարբերությունները) բավարար են, որ այն լքջորեն կասկածի տակ դիմ ներպետական մարմինների կողմից իրականացվող քննության համապարասխանությունը: Հերևարար կարիք չկա լրացուցիչ ուսումնասիրել կողմերի կողմից իրենց ներկայացրած փաստաթղթերում քննարկված մյուս տարրերը:

3) Մահացածի հարազատների մասնակցությունը քննությանը

171. Դատարանը նշում է, որ քննության սկզբից առաջին դիմումատուին շնորհվել է տուժողի կարգավիճակ, և նրան հաջորդել է երկրորդ դիմումատու (տե՛ս վերևում՝ 14-րդ պարբերությունը), և ոչինչ չի վկայում այն մասին, որ դիմումատուները չեն տեղեկացվել քննության ընթացքում ձեռնարկվող քայլերի մասին (տե՛ս, ի հակադրություն դրա, վերևում հիշարակված՝ Բոյչենկոյի [Boychenko] գործը, § 99): Բացի այդ, քննության ավարտից հետո դիմումատուներին տրամադրվել են գործի ամբողջ նյութերը (տե՛ս վերևում՝ 51-րդ պարբերությունը):

172. Դիմումատուները մասնավորապես բողոքել են, որ մարմինները մերժել են Ա.Նազարյանի ձեռագրի նմուշները պարունակող փաստաթղթերի պարձենները տրամադրելու վերաբերյալ առաջին դիմումատուի պահանջը, քանի դեռ քննությունն ընթացքի մեջ էր (տե՛ս վերևում՝ 106-րդ պարբերությունը):

173. Դատարանը վերահասարարում է, որ քանի որ խոսքը մահացածների ընտանիքների համար քննության մատչելիության և բավարար հանրային վերահսկողության առկայության մասին է, ուստի ընթացակարգային պարավորությունը դիմումատուներից չի պահանջվում շարունակական հետաքննության ընթացքում ունենալ ուղիղ քննության գործերին կամ բոլոր փաստաթղթերի պարձեններին հասանելիությունը, կամ, որ նրանց հետ խորհրդակցեն կամ տեղեկացնեն յուրաքանչյուր քայլի մասին (տե՛ս Գյուրտեկինը և այլք ընդդեմ Կիպրոսի [Gürtekin and Others v. Cyprus] (որոշում), թիվ 60441/13 և մյուս 2 թվերը, § 29, 2014 թվականի մարտի 11, հաջորդող հղումների հետ միասին):

174. Դատարանը դիտարկում է, որ 2010 թվականի հոկտեմբերի 28-ին առաջին դիմումատուն քննիչից պահանջել է տրամադրել փաստաթղթերի պարձեններ, որոնք պարունակում են Ա.Նազարյանի ձեռագրի նմուշները, այդ թվում՝ նրա նոթարարարում եղած նմուշները, որը կասկարան Հ. Մ.-ն վերցրել էր նրա գրպանից դեպքի օրը և ներկայացրել քննիչին մտրավորապես երկու շաբաթ անց (տե՛ս վերևում՝ 9-րդ և 31-րդ պարբերությունները): Առաջին դիմումատուն այդ պահանջի հետ կասկած նշել է, որ մտրարի է այդ փաստաթղթերը ներկայացնել արդասասինանում գրնվող դատաձեռագրարանական փորձագետներին իր որդու

նորոգումները գրառումների իսկությունը վիճարկելու նպատակով (տե՛ս վերևում, մասնավորապես՝ 40-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ քննիչը մերժել է առաջին դիմումարտուի խնդրանքը՝ հղում կատարելով ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին և 201-րդ հոդվածի 1-ին մասին (տե՛ս վերևում՝ 84-րդ, 85-րդ և 41-րդ պարբերությունները):

175. Դատարանը նշում է, որ վստահությունը գործող ներկայացրած քրեական դատավարության օրենսդրության համաձայն փուլերի իրավունք ունեցող քննության ավարտից հետո ուսումնասիրելու գործի նյութերի ամբողջությունը (ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, տե՛ս վերևում՝ 84-րդ պարբերությունը), և քննիչը որոշել է, թե արդյոք հրապարակի քննությանն առնչվող տեղեկությունները, թե՛ ոչ (ՔԴՕ-ի 201-րդ հոդվածի 1-ին մաս, տե՛ս վերևում՝ 85-րդ պարբերությունը): Այն նաև նշում է, որ երբ առաջին դիմումարտուի կողմից զանգայրը ներկայացվել է Սահմանադրական դատարան, պարզվել է, որ ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 201-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ նշել է, որ 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննիչի լիազորությունները բացարձակ չեն և պետք է իրականացվեն՝ ելնելով հետաքննության շահերից (տե՛ս վերևում՝ 88-րդ պարբերությունը):

176. Կառավարությունը պնդել է, որ քննիչը չի գրել, որ քննության շահերից է բխում Ա.Նազարյանի ձեռագրի նմուշները պարունակող փաստաթղթերի բացահայտումը, քանի որ դրանք վերաբերում էին վկաներին և մեղադրյալներին, որոնց առնչությամբ քննությունը դեռ ընթացքի մեջ էր (տե՛ս վերևում՝ 115-րդ պարբերությունը): Դատարանը, սակայն, նշում է, որ քննիչը 2010 թվականի նոյեմբերի 4-ի իր որոշման մեջ այն հիմք չի ընդունել: Փաստորեն, քննիչը չի վկայակոչել քննության շահերին առնչվող որևէ կոնկրետ հիմք, այլ վկայակոչել է ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 201-րդ հոդվածի 1-ին կետը՝ ներկայացնելու, որ քննության ընթացքում հավաքված տեղեկությունները նախքան քննության ավարտը ենթակա չեն բացահայտման (տե՛ս վերևում՝ 41-րդ պարբերությունը):

177. Դատարանը վերահասարարում է, որ հանրության կամ փուլերի հարազատների կողմից անհրաժեշտ հասանելիությունը կարող է ապահովվել ընթացակարգի այլ փուլերում (տե՛ս վերևում հիշարակված՝ Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի [Giuliani and Gaggio], § 304): Այնուամենայնիվ, սույն գործի հանգամանքներում դիմումարտուների համար օբյեկտիվորեն անհնար կլինեին ձեռք բերել դատական փորձագիտական ապացույցներ, առավել ևս արտերկրից, գործի նյութերը նրանց տրամադրելու ժամանակ ընկած կարճ ժամանակահատվածում, այսինքն՝ 2011 թվականի հունիսի վերջին, և այն ժամանակ, երբ մեղադրական եզրակացությունը վերջնական տեսքի է բերվել 2011 թվականի օգոստոսի սկզբին (տե՛ս վերևում՝ 51-րդ և 52-րդ պարբերությունները), իսկ դրանից կարճ ժամանակ անց գործն ուղարկվել է գործը քննող դատարան: Ուստի այն փաստը, որ նրանց ի վերջո տրամադրվել են պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ նորոգումները, այլևս չէր կարող շրկել իրավիճակը:

178. Դատարանը գրնում է, որ այս հանգամանքներում Ա.Նազարյանի նոթաարևարդ, որը պարունակում էր իր կողմից գրված ինքնասպանության մասին գրություն, առգրավվել է նրա մահից անմիջապես հետո կապիտան Գ. Մ.-ի կողմից (որեն վերևում՝ 9-րդ պարբերությունը), մեղադրյալներից մեկի և վարս վերաբերմունք ցուցաբերած հանցագործություն կատարած հիմնական անձի կողմից, ինչպես նաև վերադարձվել է միայն երկու շաբաթ անց (որեն վերևում՝ 32-րդ պարբերությունը), դիմումատուների համար իրավաչափ է համարվել, որպեսզի վերջիններս վիճարկեն, թե արդյոք նոթաարևարդի հետ ներկայացված ինքնասպանության մասին գրառումը պարունակող պարտադրված թուղթն իրոք գրված է եղել Ա.Նազարյանի, այլ ոչ թե ուրիշի կողմից: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերևում, արտերկրում դատաձեռնագրաբանական փորձագետի եզրակացությունն սրանապու համար անհրաժեշտ նյութեր տրամադրելու պահանջը մերժվել է առանց որևէ կոնկրետ պարճառաբանության, և հարցը չի կարող շրկվել այն բանից հետո, երբ դիմումատուները քննության ավարտին կարողացել են ծանոթանալ գործի նյութին:

179. Այլևհն, Դատարանը նշում է, որ ոչ Մարգալին դատարանը, ոչ Վերաքննիչ դատարանը (որեն վերևում՝ 71-րդ և 72-րդ պարբերությունները) չեն բավարարել դիմումատուների կողմից դատաքննության ընթացքում ներկայացված որևէ ինտրանք կամ փաստարկ (որեն վերևում՝ 56-րդ, 66-րդ և 68-րդ պարբերությունները):

180. Այս հանգամանքներում Դատարանը գրնում է, որ դիմումատուների ներգրավվածությունը ընթացակարգին չի ապահովվել այն չափով, որքանով անհրաժեշտ էր նրանց օրինական շահերը պաշտպանելու համար (որեն Ցինցարսաձեն ընդդեմ Վրաստանի [Tsintsabadze v. Georgia], թիվ 35403/06, § 76, 2011 թվականի փետրվարի 15, և Ալիևան և Ալիևն ընդդեմ Ադրբեջանի [Aliyeva and Aliyev v. Azerbaijan], թիվ 35587/08, § 70, 2014 թվականի հուլիսի 31):

4) Քննության անկախությունը

181. Ի վերջո, դիմումատուները բողոքել են, որ Ա.Նազարյանի մահվան գործով քննությունն անկախ չի եղել, քանի որ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության քննիչներն աշխատում էին Պաշտպանության նախարարությունում (որեն վերևում՝ 105-րդ պարբերությունը):

182. Դատարանը վերահասարարում է, որ 2-րդ հոդվածով չի պահանջվում, որ քննության համար պարասիսանապու անձինք և մարմինները պետք է օգրվեն բացարձակ անկախությունից, այլ այն, որ նրանք պետք է բավականաչափ անկախ լինեն այն անձանցից և կառույցներից, որոնց պարասիսանապուությանը, ամենայն հավանականությամբ, անդրադարձ է կատարվելու (որեն վերևում հիշարակված՝ Ռամսահայր և այլք [Ramsahai and Others], §§ 343-44):

183. Այս առնչությամբ Դատարանը դիարարկում է, որ թեև րվյալ պահին Պաշտպանության նախարարության քննչական ծառայությունն ընդգրկված էր Պաշտպանության նախարարության կառուցվածքում, այնուամենայնիվ, այն իր սպարարից դուրս առանձին մարմին էր (որեն վերևում՝ 87-րդ պարբերությունը): Հետևարար Պաշտպանության նախարարության քննչական ծառայության քննիչներն ասրիճանակարգային ենթակայության սկզբունքներով զինորական

կառույցի մաս չեն կազմել: Միայն այն փաստը, որ պաշտպանության նախարարը իրականացրել է քննչական ծառայության ընդհանուր կառավարումը և հասարարել նրա աշխատավարձերի չափերն ու աշխատակիցների թիվը, բավարար չէ նրա քննիչների կանոնադրական կամ ինստիտուցիոնալ անկախությունը կասկածի փակ դնելու համար:

184. Բացի այդ, Դատարանը նշում է, որ ոչինչ չի ենթադրում, որ Ա.Նազարյանի մահվան հանգամանքների քննությունն իրականացնող քննիչը որևէ կապ կամ աշխատանքային հարաբերություններ է ունեցել գորամասի զինծառայողների, այդ թվում՝ Կոլյալ իրադարձություններին ներգրավված անձանց հետ (որեն վերևում հիշարակված, *mutatis mutandis*, Մուսթաֆա Թունքը և Ֆեջիրե Թունքն ընդդեմ Թուրքիայի [Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey], § 238): Ոչինչ չի վկայում այն մասին, որ քննիչի վարքագիծն անկողմնակալության բացակայության ակնհայտ ապացույց էր, ինչպես օրինակ՝ քննությունն ավարտելու համար անհրաժեշտ բոլոր քննչական քայլերը չկատարելը (նույն տեղում, § 227, հաջորդող հղումների հետ միասին):

185. Այս համարեքարում Դատարանը գրնում է, որ սույն գործով Պաշտպանության նախարարության վեցերորդ կայագորային քննչական ծառայության կողմից իրականացված քրեական գործով քննությունը բավականաչափ անկախ է եղել:

5) Եզրակացությունը

186. Հաշվի առնելով իր վերոնշյալ եզրակացությունները (որեն վերևում՝ 170-րդ և 180-րդ պարբերությունները)՝ Դատարանը գրնում է, որ այս գործով իրականացված քննությունը բավականաչափ մանրակրկիտ չի եղել և չի կարողացել ապահովել դիմումատուների ներգրավվածությունը դրանում բավարար չափով՝ նրանց շահերը պաշտպանելու և նրանց իրավունքներն արդյունավետորեն իրացնելու հնարավորություն ընձեռնելու համար:

187. Այստեղից հետևում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական պահանջի խախտում: (...)¹⁴:

22. Սույն որոշման 7-9-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 16-20-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և իրավական դիրքորոշումների, Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թեև Եվրոպական դատարանը սույն գործով արձանագրել է նյութական և քրեադատավարական իրավունքի խախտումներ, որոնցով լքջորեն կասկածի տակ է դրվել ներպետական մարմինների կողմից իրականացվող քննության համապատասխանությունը, սակայն, միննույն ժամանակ Եվրոպական դատարանը կասկածի տակ չի դրել ստորադաս դատարանների դատական ակտերով հաստատված՝ սույն գործով դատապարտված անձանց հանցավոր արարքների հիմքում ընկած փաստական

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի գործով 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատներ թիվ 2169/12 և 29887/14:

հանգամանքները, ինչպես նաև դատապարտյալների արարքներին տրված քրեաիրավական գնահատականները:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները վերաբերել են՝

– սույն վարույթի քննության առարկա դեպքերի ժամանակահատվածում զինված ուժերում հոգեբանական վիճակի գնահատման և աջակցության, այդ թվում՝ զինվորական ծառայության ընթացքում նախնական և հետագա հոգեբանական վիճակի գնման, ինքնասպանությունների կանխարգելման և հոգեբանական օգնության առկայության մասով, որևէ համակարգի բացակայությանը¹⁵,

– պետության կողմից Ա.Նազարյանի կյանքը զինվորական ծառայության ընթացքում պաշտպանելու համար համապատասխան քայլեր ձեռնարկելուն ուղղված իր դրական պարտավորությունը չկատարելուն¹⁶,

– Ա.Նազարյանի կյանքին սպառնացող ակնհայտ վտանգի նյութականացումը կանխելուն ուղղված համապատասխան և արդյունավետ միջոցներ չձեռնարկելուն¹⁷,

– քրեական գործով քննության ընթացքում մի շարք լուրջ անճշտությունների առկայությանը՝ կապված Ա.Նազարյանի դիակի հայտնաբերման վայրի, դիահերձման ժամանակ նրա մարմնի վնասվածքների նույնականացման, դիահերձման արձանագրությանը կցված լուսանկարների քանակի և դեպքի վայրում հայտնաբերված պարկուճի համարի հետ, որոնք բացատրվել են ներպետական վարույթի ընթացքում որպես «տեխնիկական» կամ «մեխանիկական» սխալների արդյունք¹⁸:

– արձանագրված կոպիտ թերությունների հիման վրա ներպետական մարմինների կողմից իրականացվող քննության համապատասխանությունը լրջորեն կասկածի տակ դնելուն¹⁹:

Բացի այդ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ իրականացված քննությունը բավականաչափ մանրակրկիտ չի եղել և չի կարողացել բավարար չափով ապահովել դիմումատուների ներգրավվածությունը դրանում՝ նրանց շահերը պաշտպանելու և նրանց իրավունքներն արդյունավետորեն իրացնելու հնարավորություն ընձեռնելու համար²⁰:

Մինևս ժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ քրեական գործով քննությունն իրականացվել է անհրաժեշտ բարելավողությամբ, անհիմն չի ձգձգվել, բավականաչափ անկախ է եղել²¹:

¹⁵ Տե՛ս նույն վճիռը, կետ 140:

¹⁶ Տե՛ս նույն վճիռը, կետ 154:

¹⁷ Տե՛ս նույն վճիռը, կետ 155:

¹⁸ Տե՛ս նույն վճիռը, կետ 133:

¹⁹ Տե՛ս նույն վճիռը, կետ 170:

²⁰ Տե՛ս նույն վճիռը, կետ 186:

²¹ Տե՛ս նույն վճիռը, կետեր 160 և 185:

Անդրադառնալով Ա.Նազարյանի՝ ինքնասպանություն կատարելու վարկածը դիմումատուների կողմից կասկածի տակ դնելու և «կատարված սպանությունը» նախաքննության մարմնի կողմից թաքցնելու վերաբերյալ դիմումատուների պնդումներին, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ ներկայացրած նյութը թույլ չի տալիս «ողջամիտ կասկածից վեր» հաստատել այն վարկածը, որ Ա.Նազարյանի կյանքը դիտավորյալ են խլել, և Ա.Նազարյանի սպանության վերաբերյալ ցանկացած պնդում կկրի զուտ ենթադրական բնույթ²²:

23. Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճռով արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հակոբ Մանուկյանի, Վահագն Հայրապետյանի, Ադիբեկ Հովհաննիսյանի, Մխիթար Մխիթարյանի և Հարութիկ Կիրակոսյանի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը և նրանց վերաբերյալ գործի կրկին քննությունը որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, չի նպաստի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության և թույլ տրված հնարավոր դատական սխալների վերացման անհրաժեշտության միջև արդարացի հավասարակշռության ապահովմանը և չի կարող ծառայել իր «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու նպատակին, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին: Այլ խոսքով՝ տվյալ դեպքում ստորադաս դատարանների դատական ակտերի բեկանումը չի վերականգնի մինչև խախտումը եղած իրավիճակը:

24. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ *Հովհաննիսյանը և Նազարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, որով արձանագրվել են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական պահանջների խախտումներ, սույն գործով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2013 թվականի մայիսի 7-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը բեկանելու հիմք չէ:

Ուստի, Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման վերանայման արդյունքում տուժող Ա.Նազարյանի իրավահաջորդներ Հասմիկ Հովհաննիսյանի և Ծովինար Նազարյանի բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

²² Տե՛ս նույն վճիռը, կետ 134:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տուժող Արտակ Նազարյանի իրավահաջորդներ Հ.Հովհաննիսյանի և Ծ.Նազարյանի բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Բացառիկ վերանայման արդյունքում բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ

2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XIV



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

